ԼԵՌ ԿԱՄԱՐ

1915.info



ԼԵՌ ԿԱՄՍԱՐ

Ֆելիեպոններ

1964-1965թթ.

Էդիթ Պրինտ

ՀՏԴ 821.19-7Լեռ Կամսար
ԳՄԴ 84(5Հ)-7
Լ 404

Գիրքը հրատարակվում է Լեռ Կամսարի ծոռներ Վահագն և Վան Պետրոսյանների հովանավորությամբ և նվիրվում է հեղինակի ծննդյան 130-ամյակին:

Խմբագրումը և
ծանոթագրությունները՝ **Քրիստինե Հովհաննիսյանի**
Կազմող՝ **Վանուհի Թովմասյան**
Կազմը՝ **Գևորգ Մշեցի-Ջավրուշյանի**

Լեռ Կամսար
Լ 404 ԾԵՐՈՒԿՆԵՐԻ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ. ՖԵԼԻԵՏՈՆՆԵՐ 1964-1965/ Լեռ Կամսար.- Եր.: Էդիթ Պրինտ, 2018.- 704 + 8 էջ:

Ժողովածուն ընդգրկում է Լեռ Կամսարի կյանքի վերջին երկու տարիների (1964-1965 թթ.) երգիծական մանրապատումները:

բարեգործարար 1915.info նպատակ

ՀՏԴ 821.19-7Լեռ Կամսար
ԳՄԴ 84(5Հ)-7

ISBN 978-9939-75-296-9

© Վանուհի Թովմասյան, 2018



ԿԱԶՄՈՂԻ ԿՈՂՄԻՑ

Սովետական Միության փլուզումից հետո, երբ այլևս արգելանք, գրաքննություն և սոցիալիստական գաղափարախոսության շեփորահարում չկար, 2000 թվականից սկսած անկախ Հայաստանում իրար հետևից լույս աշխարհ եկան Լեռ Կամսարի հետևյալ ժողովածուները՝

1. Կարմիր օրեր, Երևան, «Նաիրի», 2000,
2. Սաստիկ կոմունիստներ, Երևան, «Զանգակ», 2001,
3. Մահապուրծ օրագիր, Երևան, «Լուսաբաց հրատարակչատուն», 2008,
4. Խաղք ու խայտառակ աշխարհ, Երևան, «Հայաստան», 2008,
5. Սոցիալիզմի Սահարա, Երևան, «ՀԳՄ հրատարակչություն», 2009,
6. Բանտիս օրագիրը, Երևան, «Ամարաս», 2010,
7. Թատերախաղեր, Երևան, «Էդիթ Պրինտ», 2013,
8. Հալոցք, Երևան, «Էդիթ Պրինտ», 2013,
9. Չապրած օրեր, Երևան, «Փրինթինֆո», 2016,
10. Միայնակը, Երևան, «Էդիթ Պրինտ», 2018:

Դրանք հիմնականում անտիպ օրագրություններն են և թատերակների երկու ժողովածու:

Միայն «Խաղք ու խայտառակ աշխարհն» է քաղաքական ֆելետոնների վերահրատարակություն:

Նախապատվությունը օրագրություններին էր տրվել, քանի որ դրանք, առանց բացառության, անտիպ էին. Կամսարն օրագրերը գրում էր հետագա սերունդների համար, իսկ ֆելիետոնները հեղինակում էր՝ ենթադրելով, որ դրանք կտպագրվեն իր կենդանության օրոք:

«Ես եթե ինձ համարեմ ջաղացի առու, ապա պիտի ասեմ, որ մինչև օրս բանեցնում էի երկու ջաղաց. նյութ էի տալիս սովետական թերթերին և գրում էի ինձ համար:

Այժմ, որովհետև սովետական թերթերն ինձ այլևս չեն տպագրում, «ջուրն» ամբողջովին շուռ եմ տվել իմ սեփական «ջաղացի» վրա ու սովետական կարգերը լցնելով վրան՝ «աղում» եմ ամբողջ կարողությամբս»,- գրում է նա 1959թ. օրագրության մեջ:

Սակայն գրողի տան արխիվում հայտնաբերվեցին նաև բազում անտիպ ֆելիետոններ, որոնք չէին հաղթահարել սովետական գրաքննության արգելքը և դուրս էին մնացել խորհրդային ժամանակահատվածում տպագրված ժողովածուներից: Երգիծաբանի ծննդյան 130-ամյակի կապակցությամբ ներկայացվում է այդ երգիծապատումների մի մասը:

Ժողովածուն ընդգրկում է Լեռ Կամսարի կյանքի վերջին երկու տարվա ստեղծագործությունները (1964-1965թթ.), որոնք մեծամասամբ անտիպ գործեր են և նախատեսված են եղել 1965թ. լույս տեսած, հետագայում արգելված «Մարդը տանու շորերով» ժողովածուի համար: Որպեսզի այդ թվականների ստեղծագործական պատկերը լիարժեք և ամբողջական լինի, գիր-

քը համալրվել է նաև այդ տարիներին ստեղծված և նախկինում տպագրված այլ ֆելիետոններով:

Ի դեպ, գրքի վերնագիրը ևս առնչություն ունի «Մարդը տանու շորերով» ժողովածուի հետ. այն տպագրելու ժամանակ Կամսարը առաջարկել էր նաև «Ծերուկների մանկապարտեզ» տարբերակը:

Շնորհակալություն բոլոր նրանց, ովքեր աջակցել են այս գրքի հրատարակմանը:

Վանուհի Թովմասյան

«Երբ փխուր ըլլամ՝ Լեռ Կամսարը կը կարդամ, որ խնդամ՝կը խնդամ, որ չլամ. կը խնդամ՝լալով, լալով կը խնդամ, լալու համար կը խնդամ»:

«Առանց Լեռ Կամսարներու, կտրակարանները չէին գրուեր»:

Պողոս Սնապեան

ՍԱՐԵՐԷՆ ՎԵՐ ԿԱՆԳՆԱԾ ԳՐԱԳԷՏԸ՝ ԼԵՌԸ

Առանց ներքին քաջութեան ու սկզբունքի մը կամ սկզբունքներու անտեղիտալիօրէն կառչած մնալու զօրութեան, ընդհանրապէս ըմբռնելի չէ եղած ու ըմբռնելի չէ որեւէ արուեստագէտ, մանաւանդ քննադատ, առաւել եւս երգիծաբան:

Այս արդէն բիւրեղացած ձեւակերպումը իր կարգին կ՚անձնաւորէ Լեռ Կամսար երգիծաբանը, որ ապրած բոլոր իրաւակարգերուն տակ պահեց գրողի իր անկախութիւնը ու արժանիքի նոյն կնիքով երկնած գրական անթիւ-անհամար գործերու հետ, նաեւ անկախութեան թանկարժէք կտակ մը ձգեց յետնորդներուն:

Բոլոր նշանաւոր երգիծաբաններուն պէս, Լեռ Կամսար իր տեսադաշտին մէջ ունէր կեանքին ամբողջութիւնը եւ այդ ամբողջութեան վրայ որոշիչ դերեր կատարած հերոսները, քաղաքական, կուսակցական, կրօնական, ընկերային թէ ընտանեկան գործօններ, որոնց յայտ եւ յաճախ միայն իր կողմէ կռահուած թաքուն թերութիւնները բռնած՝ անցաւ սպիտակ թուղթին առջեւ ու իր սուր գրիչով ու նոյնքան սուր ծաղրով պատկերացուց բոլորը ու բոլորին հետ իր ժամանակը, ծննդավայր Վանէն մինչեւ Արարատեան աշխարհը ու մինչեւ ցրտաշունչ Սիպերիաները:

Անկաշառ ու անշահախնդիր բնաւորութիւն, ան երբեք զիջումներու չգնաց եւ այդ արժանիքներուն պատճառով իր կեանքին լիութեան առնուազն քառասուն տարիներուն շրջապատուած եղաւ կուսակցական ու պետական վերնախաւին թշնամիներով ու դատապարտուեցաւ երբեմն լռութեան, յաճախ հալածանքի, նաեւ բանտարկութեան, անգամ աքսորի, բայց այդ անյոյս պայմաններուն մէջ անգամ պահեց անարատ մարդու իր անսասան հպարտութիւնը, ըսել է՝ գրողի իր կոչումը:

Ինչպէս միշտ պատահած է արուեստագէտներու կեանքին մէջ, նաեւ Լեռ Կամսարի պարագային, հալածիչներու առաջին շարքին կը գտնուէին իր ծաղրին ենթակայ պետական ու կուսակցական աթոռներու բազմած հերթական պաշտօնատարները, նաեւ իշխանաւորներուն շուքին գոռգոռացող անողնայար մանկլաւիկները, ինչպէս նաեւ ստրկահաճութեամբ մանր-մունր աթոռակներ գրաւած մանրամանր արարածները, որոնց այս արեւին տակ ապրելու ոճը եղած է ամբարիշտներու աչքին հաճոյ դառնալու քստմնելի եղանակը...

Մանրամասնելով՝ ըսինք, որ Լեռ Կամսարի գրականութեան մէջ,

արդարութեան ու մաքրութեան լոյսերուն ներքեւ խարանուած են կեղծաւորներուն կեղծիքը, քծնող բնաւորութիւններուն քծինքը, ստորաքարշներուն ստորնութիւնները, պոռոտախօսներուն բարբաջանքները, վերջապէս կեանքի բնականոն ընթացքը խաթարող վերնախաւի վնասարարներուն, թէ անոնց կողմէ հովանաւորուած բոլոր ապարդիւն խնկարկուները:

Լեռ Կամսար բոլոր պատճառները ունէր, մարդակերպները տուած էին իրեն պատճառներուն ահարկուները, որ չհաւատար գրականութեան մայր երակներուն առկայութեան, արդարութեան, ազնուութեան, ճշմարտութեան, նաեւ աստուածաբաններուն, բարոյախօսներուն ու փիլիսոփաներուն ձեւակերպած արժէքներուն, մինչեւ իր օրը ապրած հռչակաւոր մարդոց ազնիւ դաւանանքներէն ոչ մէկուն, բայց երեւի անոնց հանդէպ ունեցած փորձառական կասկածներով չի վերջանար մարդ էակի մը կեանքը, չի կնքուիր ճակատագիր մը, այդ բոլորէն անկախ կայ ներքին կլիմային մէջ խմորուած ուրիշ ճշմարտութիւններ, որոնց ղօղանջները տարբեր բան կը յուշեն, կը յուշեն ներաշխարհային պեղումներով բիւրեղացած ճշմարտութիւններ կտակելու տենդ մը, որ կը հակակշռէ երկրային ու երկնային բոլոր չարութիւններն ու պատուհասները:

Նման ներաշխարհներով օժտուածներուն առիթով է, որ մարդ կը տարուի քաղցրօրէն յիշել յաւիտենական ճշմարտութիւններ, կրկնել, ըսել, որ առանց նմաններուն կտակարանները չէին գրուեր կամ կտակարանային որքան գոյներ կը խամրէին սաղմնային վիճակի մէջ, որքան ձեւեր, կշռոյթներ...

Ամբողջ երեք տասնամեակներու ընթացքին, Լեռ Կամսար տղամարդկային իր սկզբունքներուն անդաւաճան մնաց ու արու գրիչին ուխտեալ հաւատարիմ, գրեց ու գրեց, ցուրտին, մութին, հալածանքի տակ, անօթութեան ճիրաններուն, անընդհատ, ձեռագիրներուն մէկ մասը վստահելով հարազատներուն ու միւս մասը թաղելով հողին տակ, երբեմն մեղուի փեթակներուն մէջ, խոտի դէզերու արանքներուն, առանց մեծ յոյս կապելու անոնց տպագրական բախտին:

Վերջապէս ինքն էր, ինքն է, սարերէն վեր կանգնած գրագէտը, Լեռը...

Պօղոս Մնապեան

«Ազդակ» գրական-«Ազդակ» արուեստի 2009, թիւ 11-12

ԼԵՌ ԿԱՄՍԱՐ ԵՐԳԻԾԱԲԱՆԻՆ ՍԷԳ ՃԱԿԱՏԻՆ ԴԻՄԱՑ

Քիչերու վերապահուած է, անտարակոյս, ըլլալ քաջարի ու վեհ, նաեւ հաւատարիմ իրենց իսկ ստեղծած ու դաւանած սկզբունքներուն հանդէպ:

Հազուագիւտ են այն անհատները, որոնց կեանքի իւրաքանչիւր պահն անգամ շաղախուած ըլլայ ամբողջ ազգի մը կենարար բաղադրամասերուն հետ:

Ի վերուստ օժտեալ եւ վեհափառ արժանիքներով բաբախուն հայորդիներուն է պատկանած հզօր իրաւունքը՝ ազգը փրկելու խորթութիւններէ եւ ստապատիր վարքագիծերէ:

Աւելին. հայ գրական կեանքին ծառայութեան կոչուած տիտաններն են միայն, որոնք կերտած են իրենց ամրակուռ պատուանդանը, գեղարուեստական շունչին տալով իւրովի հմայք ու պայծառ մտածողութեամբ՝ խարսխուած հնչեղութիւն:

Իրօք, գրականութիւն մը, որ նուիրական է իր էութեամբ, հայաբորբ՝ իր կիրքով ու խանդով, տեսլահար՝ իր պարունակով, անընսպառ՝ իր մարդկայնական զգացողութեամբ ու մանաւանդ՝ ժողովուրդի մը ներքին ձայնին ու առանձնայատկութեան հաւատաւոր, նոյնքան ուժական ու թելադրական:

Ահաւասիկ տիպար մը մեծասքանչ, գրագէտ մը տոհմաբարբառ, մեծն երգիծագիր Լեռ Կամսար:

Արդարեւ,

Ո՛չ միայն ողջունելի, այլ նաեւ՝ գերազանցապէս հպարտառիթ նախաձեռնութիւն մըն է «Ազդակ» գրական - «Ազդակ» արուեստի վերոյիշեալ հրատարակութիւնը, որ կը վայելէ անոր խմբագիրին՝ Պօղոս Սնապեանի կենդանի շունչն ու գրականագիտական ճարտարութիւնը:

Լեռ Կամսար երգիծաբանին նուիրուած այս բացառիկը խորքին մէջ, քաջասիրտ մտաւորականին եւ ազնուարիւն հայուն հանդէպ ցուցաբերուած երախտագիտական արտայայտութիւն մըն է գրչեղբօր կողմէ՝ յանուն պատմական ճշմարտութիւններու հաստատագրումին, մեծահոգի ու իրաւ մտաւորականի վեհապանծ արժէքին վերացայտումին՝ առաւելաբար երգիծագիրին դառնութեամբ յագեցած կեանքին ու պերճախօս գրական հայեացքներուն ամբողջ տեսադաշտը ընդգծելի դարձնելու տեսակէտէ:

Այո՛, առանց վարանումի, շփոթի եւ երկմտանքի պէտք է հաստատել, որ Լեռ Կամսարի նման մտաւորական անհատականութիւններու նպաստը մեծ է եղած հայ ժողովուրդի վերջին հարիւրամեայ պատմութեան թաւալքին առընթեր ու առ յաւէտ պիտի մնայ իբրեւ այդպիսին:

Երգիծական գրականութիւն մը, որուն կենսաւիշը անպայման որ կը սնանի Յակոբ Պարոնեաններու, Երուանդ Օտեաններու եւ Նշան Պէշիկթաշլեաններու գրական վաստակով, յախուռն կերտուածքով, իմաստասէր

կազմաւորումով բայց մանաւանդ զուարթախոհ եւ տաղանդաւոր ըլլալու իրականութեամբ:

Յիրաւի, հայ գրական կեանքի երգիծական անդաստանին մէջ եզակի երեւոյթ մըն է Լեռ Կամսար, որուն ամբողջ գրականութիւնը տեսակ մը մարտահրաւէրներու, հաւաքական գուպարներու եւ ազգային գաղափարական աշխարհայեացքներու շտեմարանը կը կազմէ:

Այս առումով, անոր մշակած գրականութիւնը վեր է ամէն սնոտիապաշտ եւ խնկարկու փորձութիւններէ: Հաստատ ու անկաշկանդ է ան իր գրական ոճաւորումներուն մէջ, ուղղամիտ է եւ անաչառ իր բոլոր քննարկումներուն ընթացքին, իսկ ամէնէն էականը եւ նշանակալիցը՝ լուրջ ու գիտակից է ան իր քննադատական մօտեցումներուն մէջ, միշտ սրամիտ ու տեսլապաշտ:

Փաստօրէն, Լեռ Կամսարի գրական վաստակին մաս կազմող որեւէ բնագաւառ անպայման որ իւրայատկութիւն մը կ'ընդգրկէ իր մէջ: Այլ խօսքով, ան իր հեգնանքով խարազանեց ապիկար եւ ամօթալի վարքագիծերը՝ համայնավարութեան լուծին ենթակայ եւ ստորաքարշ հայորդիներուն, որոնց համար կտոր մը հացն ու պիղծ մաշկերու փրկութիւնը, մեծահոգի հայորդիներու մահուան ու անասելի տառապանքին պատճառ կը դառնային:

Լեռ Կամսարի երգիծախառն եւ սուր սլաքներուն թիրախ դարձան այն բոլոր քաղաքական այլասերումները, որոնց հեղինակները կը պատկանէին տարբեր կուսակցութիւններու, խմբաւորումներու եւ հաւաքականութիւններու:

Այս իմաստով, անոր գրականութիւնը պատուաբեր է բոլոր անոնց համար, որոնք տէր կանգնեցան գաղափարախօսական ու ազգային իրենց հակումներուն, իսկ աղէտաբեր՝ բոլոր անոնց, որոնք երբեմնի իրենց կուսակցական ու ազգային գաղափարախօսութենէն զիջելով՝ ինկան համայնավար փորձութիւններու եւ քծնանքին գիրկը:

Ան եղաւ անզիջող ու անվեհեր՝ սահմռկեցուցիչ ժամանակներուն մէջ անգամ: Ո՛չ մէկ ատեն անարգեց ինքզինք, մնաց ինքնավստահ, եւ ընդհակառակը, պաշտպանեց եւ տէր կանգնեցաւ իր ազգային սկզբունքներուն, եւ ամէն քայլափոխի արիաբար ու առանց ցուցամոլութեան բարձրագոռ կարկաչեց ազգի վեհութիւնն ու մարդկային արժանիքները:

Լեռ Կամսար յաղթեց իր մեծադիր ԳՈՒՊԱՐԸ եւ իր կամքին ուժգնութեամբ ճեղքեց մառախլապատ մարդոց հոգիներն ու սին բարբաջանքները: Ան կերտեց իր մարդկայնական վեհապանծ նկարագիրը, գրականագիտական իր հայեացքներուն տուաւ իւրայատուկ ընկալչութիւն, երգիծական գրականութեան օղակեց իր վսեմ մտաւորականի կոչումը, իսկ գեղարուեստական շունչին տուաւ խոնարհութեան եւ ազնուութեան տարբեր համ մը, Լեռ Կամսարեան անխառն աւիւն եւ ապահովաբար ազգակերտ առանձնայատկութիւն:

Այսօր, վերանկախ հայրենիքի երկնակամարին տակ արդեօք կը ծածանի՞ անոր պարզած դրօշին անաղարտ կենսունակութիւնը: Հայրենիքի տարածքին կը տողանցե՞ն անոր կոթողային եւ հրաշափառ ժայռակերտ պատկերները: Նորահաս սերունդին կը փոխանցուի՞ն նման տիտաններու

հոգեկերտուածքային բարեմասնութիւնները:

Հապա սփիւռքեան մեր իրականութեան մէջ պայծառատիպ նման անհատականութիւններու նուիրուած լսարաններ կը կազմակերպուին: Իր էութեամբ անկրկնելի Լեռ Կամսարեան ծանօթացման առիթներ կը մատուցուին, գրական երեկոներու, թէ ընթերցման պահերու ընդմէջէն՝ երախտագիտական զգացումներու փայլքեր կ'արտաբերուին:

Իրօք, ծարաւը կ'ապրինք առաքելատիպ նման մտաւորականներու կեանքին ու վաստակին նուիրուած ազգակերտ նախաձեռնութիւններու:

Յատկանշական է, ընթերցման մղող այս հրատարակութիւնը, բնականաբար, արժանի էր գունազարդ կամ աւելի ձեռնտու տպագրական արհեստագիտութեան բարիքը վայելելու, նաեւ թարգմանուելու:

Այս պարագային, փափաքելին կը մնայ այն, որ հայ վարժարաններուն մէջ «հիւրընկալուի» այս հրատարակութիւնը, գէթ ազգակերտման ճանապարհին ողջ իմաստը կենդանութեամբ մատուցելու համար:

Բացառաբար, Լեռ Կամսարեան անշահախնդրութիւնը, ժողովրդասիրութիւնը, յառաջդիմութիւնն ու ազգապահպանումը այս կը պահանջէ բոլորէս:

Համբիկ Պիլալեան, 23 փետրուար, 2010
Անդրադարձ «Ազդակ» գրական-«Ազդակ» արուեստի 2009, թիւ 11-12 առիթով

Ժամանակակիցներս եթէ հոգեբուժարան տանին, կարելի է դարմանուիլ աղօթքի պէս անգիր սորվելով ինչ որ ըսած է Լեռ Կամսար:

Յակոբ Պալեան

ՏԱՌԱՊՈՂ ՄԱՐԴԸ ԵԹԷ ԾԻԾԱՂԻԼ ՉԳԻՏՆԱՅ, Չ'ԱՊՐԻՐ

Լեռ Կամսարի մասին արտայայտուողներ եղած են, բայց ան գրեթէ անծանօթ մըն է Հայաստան եւ սփիւռք: Յաւակնութիւնը չունիմ անոր գործերը ներկայացնելու, մանաւանդ որ բոլորը դեռ չեն հրատարակուած: Աքսորուած, չարչարուած, բայց իր լեզուն երբեք գրպանը չդրած ինքնատիպ երգիծագիր մըն է Լեռ Կամսար:

Իր կացութեան մէջ գտնուող մը փուլ պիտի գար, յոռետես պիտի դառնար: Բայց ինք շարունակած է իր ժամանակը եւ մարդիկը դիտել սրամտութեամբ, ժպիտի իմաստութեամբ: Եթէ իր երգիծանքը խոշորացոյցով դիտենք, յոռետես կը դառնանք: Ինչպէս բոլոր մեծերը, երգիծագիր, արուեստագէտ, ան ուրուագծելով պատմութիւն կը գրէ, աւելի ճիշդ կը բերէ պատմութեան դասը, պատգամը: Ճպուռի պէս շատախօս չէ:

Ժամանակակիցներս եթէ հոգեբուժարան տանին, կարելի է դարմանուիլ աղօթքի պէս անգիր սորվելով ինչ որ ըսած է Լեռ Կամսար, նոյնիսկ երբ Կուլակի քաղաքացի էր:

«*Եթէ մարդն աշխարհ է գալիս, մի բան չի վերցնում անցեալից եւ մի բան չի թողնում ապագային, ապա դրան դուրս պիտի գլորել մարդկային շարքից՝ որպէս շինութեան համար անյարմար կլոր քար*»:

Լեռ Կամսար չէ աւելցուցած՝ սպառողական ընկերութեան մեծամասնութիւնը: Նոյն գիծին վրայ կը շարունակէ.

«*Այն մարդիկ, որոնք իրենց կեանքում միայն չարիք են գործել, ինչ քաշով աշխարհ են մտնում, նոյն քաշով էլ աշխարհից հեռանում են: Այսինքն, մեռնում են հարիւր տոկոսով:*

«*Կան դրան հակառակ մեռնողներ էլ, որոնք աւազի վրայ հոսող առուակի նման ճանապարհին ամբողջովին ծծուում են շրջապատից, եւ համարեա ոչինչ չի մնում գերեզման դրուելու համար*»:

Այսինքն ոմանք յետնորդներու յիշողութեան մէջ չկան, պիտի չըլլան, մինչ ուրիշներ պիտի ապրին ապրողներու հետ, արհամարհելով ժամանակը: Իմաստուն Լեռ Կամսար: Ադրադառնալով մարդկութեան պատմութեան կարմիր գիծին, երբ արիւն հոսած է մեծ գաղափարներու համար, ինչպէս ազատութեան, կ'ըսէ: Լեռ Կամսար պատմութիւնը կը կարդայ առանց քնանալու եւ քնացնելու:

«*Արդեօք մարդու էութեան մէջ կա՞յ ազատութեան տենչ: Ո՛չ: Կայ ստրկութեան տենչ: Ապացոյցն այն է, որ ազգերը, ազատուելով միապետական*

բռնակալ լծից, դառնում են հանրապետական, ու իրենք կամովին իրենց գլխին մի բռնակալ են դնում՝ այն անուանելով նախագահ:

«Ուրեմն, աւելի վատ: Միապետութեան ժամանակ ազգը կարող էր արդարանալ, թէ բռնապետը նստել է իր կամքին հակառակ, հիմա՞ ինչով պիտի արդարանայ»:

Բայց մարդկութեան բնութեան մաս կը կազմէ երազներու ետեւէ վազել, նոյնիսկ առանց հաւատալու: Նաեւ ընտանեկան եւ հանրային կեանքի մէջ: Հատորի մը չափ իմաստութիւն կայ հետեւեալ խօսքերուն մէջ.

«Իսկական սէրը երեւան է գալիս ամուսնութեան մէջ՝ վերմակի տակ, իսկ քաղաքական կեանքում՝ գաղտնի քուէարկութեան ժամանակ:

«Մեր պետական քուէարկութիւնը թէեւ «գաղտնի» է կոչուում, բայց քաղաքացին ու պետութիւնը «պառկում» են ապակեայ վերմակի տակ...

«Այդ պատճառով էլ «կանգում» տեղի չի ունենում, եւ մերձեցումը դառնում է անպտուղ»:

Այսինքն ժողովրդավարութիւնը ժողովուրդին կամքը չ'արտայայտեր, այլ հզօրներու համար շղարշ է ան: Յաջորդող միտքերը աւելի հարազատութեամբ կը պատկերացնեն կացութիւնը: Կը կարդանք.

«Հանրապետական երկրներում, էն որ նախագահի թեկնածուն ընկնում է ընտրողի եռեւից, աղաչանք պաղատանք է անում, սուտումուտ խոստումներ է տալիս, ժողովրդի ոտքն է համբուրում, որ ընտրուի, էդ հօ նրա համար չի, որ ուզում է ժողովրդի հոգսը իր շալակը վերցնել: Էդ նրա համար է, որ ինքն է ուզում ելնել ժողովրդի շալակը, իշխանութիւն ձեռք բերել, ուտել, խմել, արտասահմանում պտուտ գալ»:

Այսինքն ժողովրդավարութիւնը ընտրութենէն առաջ է, ընտրութենէն ետք՝ աւատապետութիւն: Եւ թատրոնը կը կրկնուի: Այդպէս էր ժողովրդական ժողովրդավարութիւններու մէջ: Լեռ Կամսար զանոնք կը դատէ.

«Մեզ մօտ կառավարութիւնը պէտք է ընտրուի ժողովրդի քուէով: Եւ երբ վերջինս տեսնի՝ իր խփած մեխը ծուռ գնաց, անմիջապէս ձեռքի աքցանով քաշի հանի եւ նոր մեխ խփի: Սակայն մեզ մօտ կառավարութիւնը ինքն իր ձեռքով մեխը խփում է ժողովրդի գլխին ու ոչ մի աքցան չի տալիս նրա ձեռքը երբեւիցէ այդ իսկապէս ծռուած մեխը հանելու համար»:

Իր կենսագրութեան փորձը կը ցանկայ փոխանցել.

«Իմ կեանքի նաւը բոլշեւիկեան խութին զարնուեցաւ եւ խորտակուում է: Բեռնաթափուել է պէտք: Ու ես ծովն եմ նետում ամէնից առաջ իմ բոլոր իդէալները, ձգտումները, ընդունակութիւնները ու եռանդը: Կտակիս մէջ ասում եմ.

«- Մարդիկ, որքան ուժ ունէք՝ հեռու փախէք կոմունիզմից. Դա մարդկային տեսակի ազատութիւնների դամբարան է: Մարդը ծնուում է իր, եւ ոչ մասսայի համար: Մասսան յիմար ոչխարի հօտ է ուժեղ անհատի ձեռքին: Օրինակ՝ Լենինն ու Ստալինը: Նրանք իրենց մեռած վիճակով անգամ ղեկավարում են մասսային:

«Այնքան ոչխար է մասսան»:

Արդարեւ, շոյուած մասսան ասպանդակ է, որուն վրայ կոխելով ուրիշներ կը թռին նոյն մասսայի քամակը: Քանի մը տողով տասնամեակներու պատմութիւնը կ'ամփոփուի:

«Կոմունիստները մարդու մտածողութեան ծառի բոլոր ճիւղերը կտրում ու նրանց տեղը պատուաստում են կոմունիզմի չոր շիւը, սկսում ջրել անվերջ ծառը եւ տակը նստած պտղի են սպասում:

«Նրանք մոլեգին վերջ են տալիս աշխարհում գոյութիւն ունեցող բոլոր գաղափարներին եւ թողնում մէկը միայն մարդկային երջանկութեան համար, անգիտանալով, որ մարդն երջանիկ է այն ժամանակ միայն, երբ ազատ է մտածում:

«Չէ՞ք հաւատում, հարցրէք մարդկութեանը»:

Պատմութեան դառն դասը կը շարունակուի.

«Լենինից առաջ կային միամիտ մարդիկ, ինչպէս օրինակ Մարքս ու Էնգելսը, սրանք հաւատում էին սոցիալիզմի բերած բարիքներին, սակայն Լենինը իր գոյութեամբ ցոյց տուեց, որ սոցիալիզմը միայն գնդակահարութիւն է, աւեր ու արցունք, որ փոխանակ համայնավարութեան՝ անհատի բացարձակ բռնապետութիւն է»:

Լեռ Կամսար զաւեշտ եւ ծաղրանկար կը ստեղծէ կուրութիւնը դարմանելու համար:

«Ես սկսել եմ լուրջ կերպով մտածել այն մասին, թէ սոցիալիզմը մարդկանց գլխումն է գոյանում, թէ մօրուքում:

«Նրա երեք ստեղծողներն էլ մօրուքաւոր են՝ Մարքս, Էնգելս, Լենին:

«Մարքսի մօրուքը խոմ տնաքանդութիւն է:

«Էլի լաւ է, որ Լենինը սոցիալիզմը «շինեց», եթէ Էնգելսը շինէր կամ Մարքսը իրենց ահարկու մօրուքներով, մարդիկ պիտի խճճուէին մէջը եւ յաւիտեանս դուրս չգային:

«Եւ Լենինը փառք է, փոքրիկ մօրուք ունի, յամենայնդէպս մարդկութիւնը յոյս ունի մի օր ազատուել նրանից:

«Հետաքրքիր է, եթէ մի մարդասէր սափրիչ իր ժամանակին սափրէր երեքի էլ մօրուքները, մենք այս օրին կ'ընկնէ՞ինք թէ ոչ...»

Արդարեւ, տառապող մարդը եթէ ծիծաղիլ չգիտնայ, չ'ապրիր: Նոյն նշդրակով կը շարունակէ.

«Իդէալը գեղեցիկ է, բայց մէջը փուչ: Մարդկութեան այն մասը, որին չբաւարարեց այս իդէալը, սկսեց այլ իդէալներ որոնել կեանքում եւ իր որոնումների մէջ անգամ փոքրացաւ, որ հասաւ մինչեւ... սոցիալիզմ:

«Այսինքն, եթէ ես ու դու հաւասարապէս կուշտ ենք՝ ուրեմն երջանիկ ենք: Այս տեսանկիւնով՝ աշխարհում երջանիկ են աւանակները միայն, որոնք ընկած են առուոյտի արտի մէջ եւ ուտում են ըստ իրենց սրտամոքսի տարողութեան: Եւ մարդկանցից էլ նրանք միայն, որոնք ընկած են անծայրածիր խոհանոցում:

«Հարց. ներկայ կապիտալիստը, որ հասել է արդէն այդ սրտամոքսային իդէալին, երջանիկ զգո՞ւմ է իրեն արդեօք:

«Բոլորովին:

«Ամէնադժբախտ մարդը:

«Նա գիշեր ցերեկ տանջուում է այն ցաւով, թէ ինչ անել, որ իր ստեղծած բոլոր բարիքները ինքը միայն ուտի ու բախուում է անյաղթահարելի արգելքի՝ իր ստամոքսը փոքր, իր բարիքները անծայր:

«Բարդ հասկացութիւն է երջանկութիւնը, շատ բարդ:

«Երջանկութիւնը շաքար չի որ միայն ճակնդեղով շինուի:

«Երջանկութիւնը մեղր է, որի վրայ մեղուն աշխարհի բոլոր ծաղիկների վրայ է թառում, այն պատրաստելու համար»:

Եւ վերջապէս կը հասնինք կենսափորձի եզրակացութեան, բայց անոր հետեւելու իսկական քաջութիւն պէտք է: Մտածենք Լեռ Կամսարի հետ:

«Ժողովո՛ւրդ: Ես քառասունչորս տարի սոցիալիզմի դէմ պայքարելով գնում եմ դէպի կապիտալիզմ՝ դուք էլ ետեւս ընկած հետեւում էք ինձ:

«Այսօր մի վատ բան լսեցի:

«Ասում են, որ կապիտալիզմն էլ ճնշում է անհատի ազատութիւնը:

«Ասում են՝ սոցիալիզմը սրով է հպատակեցնում մարդկանց, իսկ կապիտալիզմը՝ փողով: Այս պայմաններում դէպի կապիտալիզմ գնալը նշանակում է ջրից դուրս գալ, ընկնել ջրհեղեղ:

«Իսկ աշխարհում այս երկու սիստեմներից զատ ուրիշ չկայ, ինչ անել:

«Յայտարարում եմ.

«Ժողովուրդ, մեր նաւը փշրուեց, ու մենք գնում ենք ջրի տակ: Ով կարող է, թող մի աշխարհայեացքի բեկորի ձեռք ձգած՝ իր կեանքն ազատի: Ես լողում եմ դէպի Ռոպէնզոնի կղզին»:

Դեռ կան *Ռոպէնզոնի կղզիներ*, ուր կարելի է ըլլայ երթալ, անոնք գնուած են «կապիտալիզմ»ի կողմէ... ամառանոցներ կամ դղեակներ շինելու համար:

Ինչո՞ւ Լեռ Կամսարի միտքերը «տիսերթացիայի» նիւթ չեն ըլլար...

Յակոբ Պալեան,

11 Սեպտեմբեր, 2013

1964

ԽԵՆԹԻ ԵՐԱԶ

Ես նոր եմ խենթացել: Առաջ ես վերին աստիճանի խելոք մարդ էի, ու ամեն շարժումս չափված, ձևված էր միլիմետրի ճշտությամբ:

Ցանում էի ճակնդեղ և նշանակում հաշվեմատյանում, թե քանի ցենտներ բերք պիտի տա: Նշանակվածից մի գրամ ավելի կամ պակաս չէի ընդունում: Ավելին թողնում էի հողի մեջ, պակասը ուժ գործադրելով էի հանում:

Ուռկանս գցում էի ծով՝ ձուկ բռնելու: Քաշելիս հաշվում էի. եթե պլանից ավելի էր ընկնում, բաց էի թողնում նորից ծով:

Կարգ, եղբա՛յր, կարգ է պետք պահպանել, ես անկարգություն տանել չեմ կարող:

Պատահում էր, որ ոչխարներս գալիս էին մոտս և խնդրում թույլ տալ երեք գառ ծնել:

- Չհամարձակվե՛ք,- ասում էի ես:- Ձեզ զիջելով՝ թույլ տվեցի, որ զույգ ծնեք, հիմա, բարությունիցս օգտվելով, ուզում եք երեքը ծնել:

Ես չէի կարող նրանց խնդիրը կատարել, որովհետև նախապես մատյանում նշել էի, թե զույգ ծնելիս իմ հոտը որքան կաթ պիտի տա, այդ կաթից որքան պանիր պիտի շինեմ, որքան մածուն, որքան կարագ ու թան: Երեք գառ ծնելիս այս բոլոր հաշիվներս պիտի իրար խառնվեին, և անել դրության մատնվեի:

Հիշում եմ մի դեպք:

Կամեցա Սևանի ծովից կետ բռնել, բայց ինձ ասացին՝ Սևանում կետ չկա: Ասացի.

- Ես ինձ մոտ նշել եմ, հապա՛ թող համարձակվի չլինել, ես նրանց ցույց կտամ...

Պետք է ասել՝ ես իմ բարեկամն ու թշնամին ճանաչում էի: Երբ կովերս շատ կաթ էին տալիս, երբեք շնորհակալություն չէի հայտնում նրանց, ես պատվո տախտակին էի բարձրացնում կթվորին:

Ինչո՞ւ: Գուցե կարծեք՝ որովհետև կովը ծանր է, ու չէի՞ կարող պատվո տախտակին բարձրացնել: Բոլորովին էլ ո՛չ: Ուղղակի

կարծում էի, որ կաթնատվության հարցում կովը երկրորդական տեղ է բռնում: Կովի բացակայության դեպքումն իսկ լավ կթվորն այդքան կաթ կստանա...

Աճի պլանից զատ՝ ես իմ անասուններին տվել էի նաև անկման պլան: Այդ պլանը մեծանում ու փոքրանում էր՝ նայած հնձած խոտի քանակությանը: Այն տարին, երբ խոտի պլանը չէր կատարվում, և կերի պակաս էր զգացվում, ես անկման պլան չէի տալիս, միայն պիտի աճեին: Եթե թույլ տայի, առանց բացառության բոլոր անասուններս պիտի սատկեին:

Խելք է պետք, խելք:

Պատահում էր, որ տնտեսական գործերից հոգնած՝ ուզում էի նորանոր աշխարհներ ման գալ, մի փոքր թարմանալ:

Նստում էի կարուսել, որը պտտվում էր մի պտղատու այգում: Տանձ, խնձոր, շլոր, ծիրան:

Նրանք, ովքեր կարուսելի վրա չէին, նկատում էին, որ ես պտտվում եմ միշտ միևնույն պտուղների շուրջ: Ուստի, նրանց չարանենգ հերյուրանքը հերքելու համար կարուսելս շուռ էի տալիս և սկսում պտտվել՝ սկսելով պտուղների մյուս ծայրից՝ ծիրանից, գնալով դեպի տանձ: Բայց հակառակորդներս այնքան էին կուրացել, որ նորից իրենց հերյուրանքը կրկնում էին: Այն ժամանակ սկսում էի պտուղները մեջ մեկ տեսնել՝ ստեղծելով ապշեցուցիչ բազմազանություն:

Պոլեմիկայի մեջ ես անհաղթելի էի: Որպեսզի նույն բանը չլինի, անուններն էի փոխում՝ տանձին կոչելով խնձոր, խնձորին՝ տանձ:*

Եվ այսպես ընդարձակում էի գիտելիքներիս սահմանները: Եթե այսպես չվարվեի, որտեղից պիտի գլխումս այսքան իմաստություն կուտակեի...

Երևակայեցեք, որ այն ժամանակվա իմ գիշերվա երազներն էլ էին այսպես պլանաչափ, չափած, ձևած:

Դրանք այնքան նման էին իրականությանը, որ հաճախ, չկարողանալով երազն ու իրականությունը տարբերել իրարից, գնում էի ապրելու երազներումս:

Ա՜խ, ինչ երջանիկ օրեր էին...

Հիմա ես խենթ եմ: Աշխարհումս ոչ մի կայուն բան չեմ տեսնում,

* Պոլեմիկա (polemikos) - հուն. բանակռիվ:

ամեն ինչ շարժվում է առանց իմ կամքի։ Երկրագունդն իր առանցքի շուրջը պտտվում է՝ առանց հաշվի առնելու, թե ես իր վրա կա՞մ, թե՝ չկամ։ Առաջ այդպես չէր։

Անցյալները լուր առա, թե անասուններս, իմանալով, որ ես խելագարվել եմ, հետևաբար ազատ են իրենց ուզածն անելու, սկսել են անհաշիվ բազմանալ և կաթի մեջ խեղդել երկիրը։ Մարդ է պետք, որ տեսնի այս բոլորը, և սիրտը չպայթի…

Ես խենթացել եմ՝ առանց որևէ բարձրագույն դպրոց ավարտելու։ Ուրիշ խոսքով՝ ինքնուս խենթ եմ։

Իմ ոչ մի ասածի մեջ միտք չկա։

Եթե արթուն ժամանակս այսքան անմիտ եմ, ձեզ եմ թողնում երևակայել, թե ինչ կլինեմ իմ երազներում։

Այնտեղ չկա բան, որ հնարավոր չլինի։

Որպեսզի գաղափար կազմեք, թե ինչ բան է խեթի երազը, ես ձեզ կպատմեմ այն երազը, որ տեսա հենց այս գիշեր։ Ինչպես ասում են՝ «տաք-տաք»։

Մենք ութսուն հոգի չծնված երեխաներ էինք և պատրաստվում էինք աշխարհ գալ։ Չգիտեինք, թե ինչ է աշխարհը, այդ պատճառով սիրտ չէինք անում ծնվել՝ առանց նրա մասին լրացուցիչ տեղեկություններ հավաքելու։

Ունեինք մեր հետախույզները, որոնք ամեն օր նորանոր տեղեկություններ էին բերում աշխարհի անցուդարձից։

Մենք ուզում էինք ծնվել որպես մարդ։ Բայց եկողները պատմում էին, որ դա անհնար է։ Պիտի կա՞մ ֆրանսիացի ծնվես, կա՞մ անգլիացի, կա՞մ գերմանացի։ Վերջապես մի որևէ ազգության պիտի պատկանես։ Երբ այս հողի վրա ընտրություն էինք կատարում, մի խումբ ազգասերներ հայ ծնվելու բուռն փափագ հայտնեցին։ Երբ նրանց հայտնեցին, որ հայ ծնվելիս թուրքերը պիտի նրանց կոտորեն, ավելի տաքացան իրենց որոշման մեջ, որովհետև ազգի համար զոհվելն ավելի էին գերադասում, քան ապրելը։ Միայն վախենում էին, որ հանկարծ թուրքերն իրենց չկոտորեին։ Ստույգն իմանալու համար ուղարկեցին մի հայի, որը չվերադարձավ։

Մեզ ասում էին. «Ոչ միայն մի ազգի մեջ պիտի ծնվեք, այլ այդ

ազգության մեջ եղող բազմաթիվ կուսակցություններից էլ մեկի մեջ պիտի մտնեք, հետո տարբեր դավանանքներ ու կրոններ ունենաք»։

Լսելով այս բոլորը՝ ինձ աշխարհը պատկերանում էր որպես մի կոշիկ՝ բազմաթիվ կրկնակոշիկների մեջ խրված։ Եվ այդ այն ժամանակ, երբ ես աշխարհ գալ կուզեի ոտաբոբիկ...

Մեզանից տասը հոգուց բաղկացած մի խումբ համայնավարական էր, ուզում էր ապրել մեկը բոլորի, բոլորը մեկի համար և բուռն պատրաստության մեջ էր ժամ առաջ ծնվելու համար։ Միայն չգիտեին, թե իրենց մարմնի մասերից ո՞րը թողնեն, ո՞րը վերցնեն հետները։ Ի՞նչն էր պետք գալու աշխարհում։

- Թեթև՛, թեթև՛ բռնեցեք ձեր բեռը, որովհետև ճանապարհը երկար է, քաշող ուժ էլ չկա,- ասում էին եկողները։

Խորհուրդ էին տալիս գլուխ չվերցնել հետները, որովհետև, ասում էին՝ կան համայնական գլուխներ, որոնք բոլորի մասին մտածում են։ Մեկնողները, լսելով հանդերձ այս խորհուրդը, այնուամենայնիվ նախազգուշության համար մի-մի փոքրիկ գլուխ վերցրին հետները։

Պատրաստությունները վերջացնելով՝ խումբն աշխատեց մի մայր ճարել, որը համաձայներ տասին միասին ծնել։ Մեկին առաջարկեցին, սաստիկ նեղացավ՝ ասելով.

- Ինչո՞ւ, իմ արգանդը հանրակացարա՞ն է։

Երկրորդ մայրը պատասխանեց.

- Ամենայն սիրով կծնեի ձեզ, որովհետև տասը միանգամից ծնելով՝ մեկեն «հերոս մայր» կդառնայի, բայց չեմ կարող, որովհետև ընդամենը երկու ստինք ունեմ երկու երեխայի համար։ Ուզում եք՝ հերթի կանգնեք, զույգ-զույգ ծնեմ։*

Ձեռնտու չէր պայմանը։ Կոլեկտիվն անբաժանելի էր։

Այնուհետև ինչ մոր առաջարկեցին, մեկից ավելի չէր ծնում։ Մի չբերի հետ էլ խոսեցին՝ մեկն էլ չծնեց։

Խումբը շվարեց-կանգնեց։

Նրանք ասում էին.

- Լա՜վ, ենթադրենք համաձայնեցինք՝ մեկ-մեկ ծնվեցինք, կարո՞ղ ենք արդյոք միասին մեռնել։

Պարզվեց, որ այդ էլ հնարավոր չէր, որով նրանց ծնունդն

---

* Հերոս մայր, հերոսուհի մայր - պատվավոր կոչում, որ ՍՍՀՄ-ում շնորհվում էր տասից ոչ պակաս երեխա ունեցող մայրերին։

անիմաստ էր դառնում։ Եթե հավիտենական կյանքում միասին չպիտի լինեին, մի կարճ, անցավոր կյանքի համար, իհարկե, չարժեր ծնվել։ Եվ նկատի ունենալով, որ երկու հավիտենական կյանք կա՝ մեկը ծնվելուց առաջ, մեկը մեռնելուց հետո, գերադասեցին բնավ չծնվել և այս հավիտենականում միասին լինել։

Այս խմբից զատ՝ մեզ մոտ կար մի այլ ընկերավարական խմբակ, որը, արհամարհելով բոլոր խոչընդոտները, աշխարհ եկավ։

Ստույգ լուր չառանք նրանց մասին, միայն կողմնակի լսեցինք, որ տարբեր ազգությունների մեջ ծնված լինելու համար իրար դեմ պատերազմի են դուրս եկել ու չեն մեռել «բոլորը մեկի համար», այլ ամեն մեկն իր համար…

Գալով ինձ՝ այս բոլորը տեսնելով՝ շվարել-մնացել էի։ Չէի իմանում՝ ծնվելը թե չծնվել։ Ախր, հավիտենական կյանքը շատ է ձանձրալի։ Մարդ ոնց որ թոշակառու լինի։ Թոշակ ստացողը, եթե ծեր է լինում, էլի ոչինչ, կմեռնի, ձանձրույթից կազատվի, բայց ախր, շատ էի երիտասարդ, մինչև ճրբ ձանձրանայի։

Այդ պատճառով, առանց երկար մտածելու, վերցրի սեփական գլուխս ու աշխարհ եկա՝ մտածելու և ապրելու։

Բայց երանի գլուխս չէի վերցրել հետս։ Կյանքի մեջ ինձ անհամար տառապանքներ բերեց։ Ոչ՛ կարողացա սևին սև ասել, ո՛չ սպիտակին՝ սպիտակ։ Ստիպում էին ծիածանի բոլոր յոթ գույներին միայն «կարմիր» անունը տալ։

Ասացե՛ք խնդրեմ, ո՞ր նկարիչը կարող է այս երփներանգ աշխարհը մի գույնով պատկերել…

Խոսում եմ Աստծու հետ կլոր սեղանի շուրջ

Աստվա՛ծ, չնեղանաս՝ շատ ես ջղային։ Արժե՞ր, որ դու ընդամենը մեկ խնձորի համար զրկեիր մարդուն անմահությունից, մեռցնեիր նրան ու հող դարձնեիր։

Տե՛ս, Անգլիան բռնեց Նապոլեոն Բոնապարտին՝ աշխարհի այդ ամենամեծ ոճրագործին, ու փոխանակ սպանելու՝ Սուրբ Հեղինե կղզին աքսոր ուղարկեց[1]։

Կարգն է այդպես։ Այն պետությունը, որ աքսորավայր ունի, հանցավորին չի սպանում, այլ ուղարկում է աքսոր, որ այնտեղ

առանց շտապելու, կամաց-կամաց, իր ցանկության համաձայն պատժվի։

Ուրիշ բան է, եթե մեկը մի շտապ հանցանք է գործում և անմիջապես պիտի պատժվի։

Ստալինը, օրինակ, շտապ հանցավորներին գնդակահարում էր, իսկ դանդաղներին՝ աքսորում։

Այն պետությունները, որոնք ընդարձակ աքսորավայրեր ունեն, նրանց գնդակահարություն չի սազում։

Անգլիան բոլոր օվկիանոսներում ամայի կղզիներ ունի, Ռուսաստանը մի այնպիսի Սիբիր ունի, որ եթե ամբողջ աշխարհն էլ հանցավոր դառնա, կտեղավորվի։ Հունաստանը կղզիներ ունի Միջերկրականում, դրանք, ճիշտ է, մի քիչ փոքր են, բայց եթե երկու կղզի միացնի իրար, մի մեծ հանցավոր կարող է պատժել։ Դու՝ որպես աստվածություն, նույնպես մեծ պետություն ես, տիրապետում ես տիեզերքին, որտեղ կան անհամար դատարկ մոլորակներ, որոնք դարերով անիմաստ պտտում են երկնային այս կամ այն մարմնի շուրջ։ Բռնիր նրանց և հանցավոր լցրու մեջը, թող պատժվեն, մեռցնելու ինչ կարիք կա։

Բանտն ու աքսորը գրականությանն էլ են օգուտ։

Բայրոնն իր «Շիլիոնի կալանավորով»[2] հռչակ ստացավ։ Ստեփան Զորյանը՝ իր Արշակավանի պատմությամբ[3]։ Զեմ խոսում Սուրբ Հեղինե կղզու մասին, որը համարյա բանաստեղծների իննսուն տոկոսին ապրեցրեց։

Եթե հանցանքը համարենք համաշխարհային չարիք, և մարդիկ ուզեն, թե չուզեն պիտի գործեն, ապա որոշ պետություններ զրկված են այդ հնարավորությունից։

Մարդիկ ուզում են մի հանցանք գործել, բայց որովհետև աքսորավայր չունեն, ստիպված կուլ են տալիս։

Ալբանիան ոչ աքսորի իր հանցավորին։ Շվեյցարիան, Ֆինլանդիան։

Երբ Իսլանդիայի ճտին հասնում է, իր հանցավորին դնում է նավ, մի երկու փաթ պտտեցնում է կղզու շուրջը և ներս առնում։

Երբ պետություն ես ստեղծում, պարտավոր ես նրան տնամերձ աքսորավայր տալ։

Աստվա՛ծ, ես անցնում եմ օրակարգի երկրորդ հարցին: Դա աշխարհի ջեռուցման հարցն է: Դու Աստված ես, պետք է ամբողջ աշխարհը հավասար տաքացնես, դու քաղսովետ չես, որ մի նորակառույց տաքացնես, մյուսը՝ ոչ:

Տաքությունը կարևոր ազդակ է և աշխուժացնում է պետություններին:

Ինչո՞ւ պիտի Աֆրիկան, Լատինական Ամերիկան իրենց մեջքը կիզիչ արևին դարձրած տաքանան և սկսեն իրար կոտորել, ինչո՞ւ Իսլանդիան, Շվեդիան, Նորվեգիան գիպսի մեջ անշարժանան ու պատերազմի համն էլ չտեսնեն: Երկիրը պտտվում է, չէ՞, իր առանցքի շուրջը, այնպես պտտեցրո՛ւ, որ բոլոր պետություններն էլ հավասարապես տաքանան:

Հյուսիսային երկրները սահմանային վեճ չունե՞ն: Ունեն, ուզում են իրար հետ կռվել, բայց ձեռները քցմա՛ծ են, զենք չեն կարող բռնել:*

Տարիներ առաջ Շվեդ-Նորվեգիան իրարից բաժանվեցին[4]. իսկի մարդ իմացավ: Թերթի մեջ հայտարարություն իսկ չտպեցին, որ նրանց հեռավոր բարեկամներն իմանային և առանձին-առանձին նամակ գրեին: Մինչդեռ մեզանում ամենահասարակ մարդն էլ, որ մեռնում է, հայտարարություն է տալիս, որ իրեն նամակ չգրեն:

Ես զարմացա այդ երկու երկրների այդպես անաղմուկ բաժանման վրա: Կարծես երկու ամուսիններ լինեին, որոնք, ձանձրացած միասին պառկելուց, առանձին մահճակալի էին անցնում...

- Պատճա՞ռը:

- Երկրի սառնությունը:

Աստվա՛ծ, ես մի ուրիշ բանի վրա էլ եմ կասկածում:

Առաջները Ֆրանսիան և Գերմանիան առավոտները, երբ վեր էին կենում, բարև, բարի լույսի փոխարեն իրար պատերազմ էին հայտարարում: Բայց ի՞նչ պատահեց, որ վերջում կամա՛ց իրար մոտեցան, բարեկամացան ու մտերմացան: Այնքան, որ հիմա արդեն իրար ականջին փսփսալով են խոսում, որ մարդ չլսի...

Ճի՛շտն ասա, խոմ այդ երկրների կլիման չե՞ս փոխել:

Եթե արել ես, ասա՛, մի՛ վախեցիր: Ես էլ եմ համաձայն, որ այդպիսի տաք երկրները երբեմն էլ սառեն:

* Քցմել - թմրել, ընդարմանալ:

Ուշադրություն, Աստվա՛ծ, ես անցնում եմ իմ երրորդ օրակարգին։

Մեզ մոտ մեր բոլոր շարժումները մասնագիտություն են պահանջում, և ամեն մասնագիտության համար կուրսեր են բացված։ Մասնագիտություն մի մայթից մյուսն անցնելու, աջից քայլելու, կերակուր եփելու ու, մանավանդ, այդ կերակուրը հաճախորդին մատուցելու։

Առաջները, չնայած նրան, որ կերակուրն ավելի համեղ էր եփվում, բայց որովհետև մատուցողները որակավորված չէին, ճաշողները սոված էին դուրս գալիս ճաշարանից։ Ինչու որ ճաշն ինքնին վերցրած ոչինչ է, խնդիրը նրա մատուցման ձևի մեջ է։ Ձևն իմացար՝ մախոխն էլ բոզբաշ** է։*

Արդ, եթե մեզ մոտ մի փողոց ավլողն էլ մասնագետ է, ինչպե՞ս ես դու կարողացել դարեր շարունակ Աստված մնալ՝ առանց աստվածային որևէ կուրս ավարտած լինելու։ Դու, ախր, ամբողջ տիեզերքն ես ղեկավարում։ Երկրի վրայի բոլոր աստվածները սովորեցին. Մասիս, Օլիմպոս բարձրացան, դու մնացիր Ադամի տարվա կավե մարդ շինող Աստված։ Հապա փորձի՛ր, թե կարող ես հիմա մի կավե մարդ շինել։ Հիմա մարդիկ քարից մետաքս են ստանում, փայտից՝ պողպատ։

Ո՞վ է տեսել, որ աշակերտն ավելի ուսյալ լինի, քան ուսուցիչը։ Եթե մարդն այնուամենայնիվ հիմա քեզ լսում ու քո կամքը կատարում է ծնվելով ու մեռնելով, կգա ժամանակ, որ ո՛չ կծնվի, ո՛չ կմեռնի։ Անկախության դար է հիմա, բոլոր ազգերն անկախություն ստացան։ Հապա հրամայիր մի աֆրիկական պետության, թե մեռի՛ր։ Տեսնենք կմեռնի՞։ Նրանք հա՞յ են, որ հանուն քրիստոնեության մեռնեն։

Ինչ եմ ուզում ասել, Աստվա՛ծ։

Ուզում եմ ասել, որ պիտի մտնես, մի տեղ սովորես։

Տիեզերք կառավարողն առնվազն մի համալսարան ավարտած պետք է լինի։ Չուզեցինք աստիճաններ՝ ո՛չ դոկտոր, ո՛չ պրոֆեսոր, ո՛չ գիտության թեկնածու։ Գեթ մի հասարակ համալսարանի դիպլոմ ունեցիր։

---

* Մախոխ - 1. ձավարով և զանազան համեմունքներով պատրաստվող ջրիկ կերակուր՝ ապուր (մսով կամ առանց մսի), 2. փոխ. ոչ սննդարար և անհամ կերակուր։

** Բոզբաշ - ոչխարի մսով ու զանազան համեմունքներով պատրաստվող ջրալի կերակուր։

Մեզանում շատ տգետներ աստիճան ունեն, իսկ դու, որ «ամենագետ» ես, ոչ մի աստիճան չունես: Բոլոր կուլտուրական երկրներում աստվածաբանական կուրսեր կան, մտիր մի տեղ, սովորիր:

Ափսոս, մեզ մոտ չկան նման կուրսեր. եթե լինեին, կարող էիր ծննդականդ, բնութագիրդ ու չորս լուսանկար ներկայացնելով մտնել՝ ստանալով ձրի ճաշ, բնակարան և արտահագուստ:

Այս բոլորը ես ոչ թե խոսում էի, այլ ուրիշի գրածը կլոր սեղանին դրած՝ գլխիկոր կարդում էի:

Երբ վերջացրի ընթերցումս և գլուխս բարձրացնելով կամեցա Աստծու երեսը նայել՝ տեսնելու համար, թե նա ինչ կասի, մեկ էլ տեսա՝ Աստված... չկար:

Մի կնոջով բազմակնություն

(ոչ երեխաների համար)

Երբ ես արբունքի հասա, ճակատս ձեռքիս մեջ առած՝ մտածեցի՝ ամուսնանամ, թե՞ չամուսնանամ:

Պետք էր մտածել, որովհետև ես այնպիսի կատու չէի, որ ինձ գցած մսի կտորը սուս ու փուս տանեի, մի պատի տակ կրծեի ու դրանով էլ բավարարվեի:

Ես՝ որպես «մասունք բանի», կյանքումս քերականական որևէ օրենքով ո՛չ խոնարհվել եմ, ո՛չ հոլովվել:

Դեմ եմ եղել սեփականության, որպեսզի ուրիշի հաշվին անսահմանափակ մսխեմ: Մի տարի մեր սովխոզի նախագահը բարի մարդ էր, ասում էր՝ այգու պտուղներից ինչքան կուզեք կերեք, տարեք: Բայց ես պտղին ձեռք չերկարեցի: Երկրորդ նախագահը շատ խիստ էր, արգելեց այդ բանը: Արգելե՞ց, այդ նշանակում էր՝ պետք է ուտեի և տանեի, որովհետև ես սիրում էի միայն արգելված պտուղներ ուտել:

Ստալինի ժամանակ անվերջ քննադատում էի մեր ռեժիմը (իհարկե մտքիս մեջ): Բայց երբ եկավ Խրուշչովը[5], մեկեն վերջ տվեցի:

Հիմա ասում եմ՝ պսակվեմ:

Լավ: Պիտի խնդրեմ մի աղջկա ձեռք (ինչը պատիվ չի բերի ինձ), դրան համաձայն կլինեն աղջիկը, նրա ծնողները, իմ ծնողները, զաքսը, բարեկամներս: Ասեք խնդրեմ, այսքան մարդու թույլ տված բանի մեջ համ կա՞:

Կինը, որ չգցես թամբիդ ետև ու ձիուդ մտրակես, ասել է՝ գործ ունես մի քաղված, մի քիչ էլ թոռոմած էակի հետ:

Ո՛չ, ես այդ մարդը չեմ:

Ասում եմ այս, հետն էլ մտածում. «Լա՛վ, խոմ չեմ կարող գավակիս տասը կին մեկեն շարել: Արի՛ մի տնամերձ կին առնեմ, հետո սկսեմ կոլխոզից հափշտակել»:

Ու պսակվեցի:

Ճիշտ է, կինս շատ էր փոքր, բայց լավ մշակելիս կարող էր մեծ արդյունք տալ, ինչպես սովորաբար տնամերձերը:

Երբ մեր մեղրամիսն անցավ, ես ուշացած ճամփորդի նման վեր թռա ու սկսեցի հետապնդել ուրիշների կանանց:

Տեսնելով այս բանը՝ կինս մեկ համբերեց, երկու համբերեց ու մի օր էլ լաց եղավ ու ասաց.

- Ֆլա՛ն ջան, արի՛ պարկեշտ ապրենք:

- Եթե այդ պարկեշտության մեջ մտնում են օտարի կանայք, համաձայն եմ:

- Մտնում են,- ասաց:

- Ինչպե՞ս:

- Այսպես: Տեսնում եմ, որ դու առանց ուրիշների կանանց չես կարող ապրել. դու տանը նստիր, ես կդառնամ ուրիշի կին: Այն էլ ոչ թե մեկի կամ երկուսի, այլ անսահմանափակ, որքան քեզ հարկավոր կլինի:

Ես մի պահ երևակայեցի կնոջս ուրիշների գրկում ու անսահման սեր զգացի դեպի նա:

- Համաձայն եմ, սկսի՛ր,- ասացի:

Եվ սկսեց ու կարճ ժամանակից ութ մարդու ցուցակ ներկայացրեց ինձ:

Ութ օտարի կնոջ հետ, որպիսի՞ բախտավորություն...

Բայց միայն այդ ինձ չէր բավարարում. ես ուզում էի իմանալ, թե իր ութ մարդիկ գիտե՞ն, որ ինքն ապրում է նաև ինձ հետ:

- Օ՜, ո՛չ, ո՛չ,- պոռաց կինս սարսափած,- բոլորն էլ կատաղած

գազաններ են, եթե իմանան, ինձ էլ, քեզ էլ սրի կքաշեն որպես անբարոյականների։

- Ուրախ եմ,- ասացի,- հիմա հանգստացա։

Եվ երևակայեցեք, այդ օրվանից ես դադարեցի օտար կանանց ետևից վազել։ «Ինչ գործս է,- ասում եմ ինքս ինձ,- ես հանգիստ կնստեմ տանը, թող կինս վազի»։

- Ութ մարդ,- ասում եմ,- մեկն էլ ես՝ ինը։ Այդքան մարդկանց կինն ինձ այնքան շատ է, որ մեկն էլ կարող եմ ուրիշին տալ...

Լեգենդար քույրեր

Ասում են՝ ժամանակով Արևելյան և Արևմտյան Գերմանիաները մի հորից ու մի մորից ծնված քույրեր են եղել[6]։ Տեղի է ունեցել մի Երկրորդ համաշխարհային պատերազմ, Սոցիալիզմն ու Կապիտալիզմը ներս են մտել երկիրը, մեկին մի քույրն է առել, մյուսին՝ մյուսը, պատ են քաշել արանքում ու առանձին ապրել[7]։

Սոսկալի հակառակորդներ են եղել երկու բաջանաղները և չեն թողել խեղճ քույրերին, որ գեթ երազներում իրար մեկ անգամ տեսնեն, իրենց կարոտն առնեն։

Երկար ա՛խ ու վա՛խ քաշելուց հետո վերջապես մի օր հաջողվում է նրանց տեսակցությունը՝ հետևյալ հանգամանքներում։

Մի երեկո Արևելյան Գերմանիան գնում է իր հարևան Հոլանդիա, մարդ է ուղարկում և կանչում Արևմտյան Գերմանիային, որ գա այնտեղ, իրար տեսնեն։

Արևմտյան Գերմանիան նախ սարսափում է այս մտքից, հետո կամաց-կամաց սիրտ առնելով, գիշերն իր տեղաշորի մեջ մի խոտե բարձ պառկեցնելով՝ կամացուկ դուրս է գալիս տնից և քայլերն ուղղում դեպի Հոլանդիա։

Իրար տեսնելիս՝ քույրերը փաթաթվում են, ու Արևմտյան Գերմանիայի ուշքը գնում է։ Լավ էր, որ Գերմանիաների հարևանները բարի պետություններ էին։ Հոլանդիան, Բելգիան, Դանիան, Լյուքսեմբուրգն անմիջապես թափվում, գալիս են, ափով ջուր են առնում օվկիանոսից, լցնում են գլխին, մինչև հա-հա, հիվանդը ուշքի է գալիս։

Նստել են երկու հարազատ քույրեր ու արտասվալի աչքերով

իրար են նայում։ Վերջում Արևելյանն ասում է.

- Քո՛ւյր իմ, ինչ եմ արել քեզ, որ ինձ չես ճանաչում, հետս չես խոսում, և ով էլ ինձ ճանաչում է, դիվանագիտական հարաբերությունները խզում ես հետը։

- Այդ ե՞ս եմ անողը, անողի աչքը քոռանա... Անհասկացողի ձեռք եմ ընկել։ Ինքն իրենից վատ, իր նման մի վատ ընկեր էլ գտել է, առավոտից մինչև իրիկուն իրար հետ քրս-փրս։

- Դա՞ ով է։

- Ֆրանսիան։

- Լավ, հապա մեր վերջն ինչ է լինելու։ Մինչև վերջ հեռվից իրար կարո՞տը պիտի քաշենք,- հարցնում է Արևելյանը։

- Աղջի՛կ, ես ինչ անեմ, ես ուզո՞ւմ եմ՝ այդպես լինի։

Ու նորից գրկախառնվում ու լաց են լինում։

Այս տեսարանին ներկա Գերմանիայի հարևանները, բան չհասկանալով, կանգնած նայում էին զարմացած։

Հոլանդիայի կնոջը հայտնի էր պատճառը։ Նա ասում է.

- Սոցիալիզմն ու Կապիտալիզմը նրանց առևանգել են։

- Վա՜խ, աչքս քոռանար,- ասում է Դանիան ու ավելացնում,- թող փախչեն Դանիա, ես նրանց կպահեմ, իմ երկիրն իսկական թաքստոց է՝ Սկագերակ, Գաթեգաթ, Մեծ Զունդ, Փոքր Զունդ[8]. մարդ կարա՞ գտնի։

- Շնորհակալ ենք,- ասացին Գերմանիաները,- Սոցիալիզմն ու Կապիտալիզմը ամեն տեղ թափանցում են։

- Ինչո՞ւ, նրանք մարդ չե՞ն։

- Արտաքուստ՝ այո՛, բայց ներքուստ՝ ո՛չ։

- Ափսո՜ս,- ասացին բոլոր հարևանները միաբերան,- երանի ներքուստ մարդ լինեին, արտաքուստ՝ ոչ...

Հայհոյանքի էությունը[9]

Կյանքի քերականության մեջ սերը բաղաձայն է, ատելությունը՝ ձայնավոր։

Սիրող մարդը շոյում է իր կնոջ գլուխը, փայփայում, գգվում, համբուրում, և ոչ մի շշուկ։

Կույր մարդն անգամ չի իմանում՝ ինչ անցավ, ինչ դարձավ

մարդ ու կնոջ միջև։

Իսկ ատելությունը... Պատկառելի հեռավորությամբ կանգնում է մարդը կնոջից հեռու՝ աչքերը խոժոռած, ճակատը կնճռած, բղավում ու հայհոյում է կնոջն այնքան բարձր, որ անգամ փողոցի անցորդները լսեն։

Նման դեպքերում նրանց վերևի ու ներքևի հարկում ապրող հարևանների տղամարդիկ սովորաբար դառնում են իրենց կանանց՝ ասելով.

- Տեսնում ես՝ ես ինչ բարի մարդ եմ. ո՛չ այսպես գոռգոռում եմ վրադ, ո՛չ հայհոյում։

Բայց որպեսզի զինաթափենք բոլոր հայհոյող մարդկանց և ցույց տանք, որ նրանք կռվում են փուչ փամփուշտներով, եկեք վերլուծենք հայհոյանքի էությունը։

Հայհոյանքները երեք համակարգության են բաժանվում՝ որակական, սեռական և անասնական։

Որակականներն են՝ հիմար, տխմար, ապուշ։

Սեռականները՝ ես քո մոր կամ կնոջ այսինչն այնինչ անեմ... Հայհոյանք՝ հատուկ միայն անկիրթ մարդկանց։

Երրորդ տեսակի հայհոյանքն այն է, որ մարդուն տալիս են կենդանիների անուններ՝ շուն, էշ կամ ավանակ։

Այժմ քննենք, թե ինչ են ներկայացնում դրանք իրենցից։

Հիմար, տխմար, ապուշը որակական ածականներ են, որոնք անհրաժեշտ են ամեն մի իմաստուն մարդու։ Եթե չլինեին հիմարներ, մարդն ինքզինքն ո՞ւմ հետ պիտի համեմատեր իմաստուն երևալու համար։

Կունենայինք լույսի գաղափարը, եթե գոյություն չունենար խավարը, կամ բարության գաղափարը, եթե չլինեին աշխարհում չարերը, կամ սոցիալիզմի գաղափարը, եթե չլիներ կապիտալիզմը։

Ուրեմն, դա հայհոյանք չէ։

Անցնենք սեռականին։

Որպեսզի մարդը կարողանա առհասարակ որևէ կնոջ այսինչն այնինչ անել, նա անպայման պիտի սիրի այդ կնոջը. այլապես դա հնարավոր չէ։ Իսկ եթե սիրեցիր, հայհոյանքը կդառնա փաղաքշանք, որ մեծ բավականություն կպատճառի հայհոյվող կնոջը...

Մնաց կենդանական հայհոյանքը։

Շունը, էշը, ավանակը։

Մի՞թե Աստված այս կենդանիներին իր բարկացած ժամանակ որպես անպատվություն ստեղծեց։ Ո՛չ, Աստված իր ստեղծագործության ժամանակ շատ հանգիստ էր և շանն ու ավանակին ստեղծեց մարդուն հավասար իրավունքով։ Որպես գոյական անուններ։

Իսկ գոյականը, երբ ածականաբար գործածվի, մի՞թե կդառնա անպատվություն։

Այս մեկ։

Երկրորդ՝ մարդիկ կան, որոնք իրենց շներին սիրում են իրենց երեխաների պես և նրանց ներկայությունը անպատվություն չեն համարում։

Սիրելի էակով կարելի՞ է հայհոյել մարդուն։

Օրինակ՝ մի սիրահարված մարդու կարելի՞ է հայհոյել, թե ես քո սիրած աղջկան քեզ հետ պսակեմ...

Երրորդ՝ որպեսզի մարդուն էշ կամ ավանակ դարձնես, նախ նրանց համաձայնությունը պիտի առնես։ Կուզե՞ն արդյոք իրենց շարքերում ունենալ մարդուն։

Կամ ի՞նչ իմանանք, որ նրանք էլ իրար վրա բարկանալիս «մարդ» չեն անվանում իրար։ Այն մարդը, որ ծխում, խմում, գոյություն չունեցող աստված պաշտում և պատերազմներ է մղում։

Իսկ խեղճ, միամիտ ավանակն ի՞նչ է անում որ. ուտում է և անախորժ ձայնում։

Ճիշտ է, նրա ձայնը անախորժ է, բայց խոմ մեր բոլոր երգիչների ձայները ախորժալուր չե՞ն։

Այնպես որ, հայհոյանքը՝ որպես վրիժառության զենք, միանգամայն անզոր է։ Գոռգոռում են, ահագին էներգիա են սպառում, հետո հանգստանում՝ կարծելով, թե իրենց վրեժն առան։

Ինքնախաբեություն։

Երանի չէ՞ր, որ պետություններն էլ իրենց վիճելի հարցերը այսպիսի հայհոյանքներով լուծեին։

Փոխանակ ատոմային պատերազմի՝ կանգնեին, իրար շուն, էշ, ավանակ անվանեին։ Բայց աշխարհը չկործանեին։

Խոմ ավանակ ասելով մարդը չդառնա՞վ իսկապես ավանակ։

Մենք էլ անունով մեզ քրիստոնյա ենք անվանում։

Է՛, իրոք քրիստոնյա՞ ենք։

Երեք ազգեր... մեկ բնակարանում

Սեր, սեր...

Կա՞ աշխարհում մի անկարելի բան, որ դու կարելի չդարձնես։

Անտոնիոս զորավարը Հռոմից ուղարկված էր Եգիպտոսը հողին հավասարեցնելու։

Եկավ Անտոնիոսը, տեսավ Կլեոպատրա թագուհուն, սիրահարվեց ու մոռանալով իր ազգն ու հայրենիքը՝ ամուսնացավ հետը ու փոխանակ Եգիպտոսը հողին հավասարեցնելու՝ Եգիպտոսի վրա մի երկրորդ հարկ բարձրացուց...

Հիշեցեք Շամիրամի և Արա Գեղեցիկի պատմությունը։

Եթե Արան կամենար օգտագործել իր գեղեցկությունը, ինչ եք կարծում, այսօր Ասորեստանի տերը չէ՞ինք լինի։

Այսօր, որ ՄԱԿ-ում համաձայնություն չկա, այդ բոլորը գեղեցիկ կնոջ բացակայությունից է։

Թող աշխարհի երկու տերերից մեկը տղա լիներ, մյուսը՝ աղջիկ, տեսնենք՝ ատոմային պատերազմ կպատահե՞ր։

Այն մարդը, որի ընտանիքի մասին պիտի պատմեմ ստորև, մի բարձրաստիճան թուրք սպա էր։

1918 թվականին Տաճկաստանի կողմից պատվիրակ էր ուղարկված՝ Հայաստանի կառավարության հետ բանակցելու։ Մի հայ աղջկա տեսավ, սիրահարվեց ու մնաց Երևանում։

Աղջիկն ասում է.

- Ես թուրք չեմ առնի։
- Կհայանամ,- պատասխանում է սպան։
- Դու մահմեդական ես։
- Կմկրտվեմ ու քրիստոնյա կդառնամ։

Այնուհետև աղջիկն ինչ ուզեց, սպան դարձավ, ու վերջապես ամուսնացան։ Երբ առաջին երեխան ունեցան, սպայի սերը դեռ տաք էր։ Կինն ասաց՝ հայի անուն պիտի դնեմ, մարդն ասաց՝ դի՛ր։

Կոչեցին Հմայակ, կանչեցին Համիկ։

Մինչև այստեղ նրանց ամուսնության գործերը համերաշխ գնացին։

Բայց մի օր էլ կինը նկատեց, որ հայրը որդուն ոչ թե Համիկ, այլ Համիդ է կանչում։

- Չհամարձակվե՛ս,- գոռաց կինը և սպառնագին ձեռքն իրենց նախնական սիրուն տարավ՝ կրակելու մարդու վրա, բայց ավա՜ղ, այդ զենքը չգտավ մեջքին կապած։

Մարդը, սակայն, չուզենալով իր չսիրելու իրավունքից այդքան շուտ օգտվել, ասաց աղաչական.

- Սիրելի՛ս, «Համիկը» հինգ տառ ունի. չորսը թող հայերեն լինի, մեկը՝ թուրքերեն։

Կինն ինքզինքը զգաց խաբված և հազիվ կարողացավ արտասանել նվաղաձայն.

- Աստվա՜ծ իմ, իմ սիրելի որդին, իմ հոգու հատոր Համիկը դառնա Համի՞դ, ուրեմն և սուլթան Համիդ՝ հայկական կոտորածների հեղինակը...

Բայց չէ՛, արդեն ուշ էր, և կինը չէր կարող իր կատարած սխալն ուղղել։ Սիրել էր մարդուն շատ տաք՝ առանց հաշվի առնելու, որ տաք սերը տաք օդի նման վերև է բարձրանում՝ տեղ տալով ցուրտ օդին։

Ու անհամաձայնությունը, որ նոր էր ոտքի կանգնել նրանց մեջ, սկսեց քայլել։ Անգամ՝ առանց բռնելու...

Մայրը կանչում էր որդուն՝ «հաց» ուտելու, հայրը կանչում էր «էքմեք»* ուտելու։

Ու խեղճ երեխան շվարած չէր իմանում՝ որին լսեր, և օրերով մնում էր անոթի...

- Ա՛յ տնաքանդ,- ասում է կինը մարդուն,- գեթ տեղական թուրքերի «չորագը»** կերցրու տղայիդ։ Ո՛չ այս, ո՛չ այն, հանկարծ՝ «էքմեք»։

Ու սպառնաց մարդուն.

- Երկրորդ երեխայիս այնպիսի թունդ հայկական անուն պիտի դնեմ, որ չկարողանաս թուրքացնել։

- Ի՞նչ կդնես։

- Հայկ Նահապետ կդնեմ, քաջ Վարդան Մամիկոնյան, Մովսես Խորենացի, Մովսես Կաղանկատվացի[10], Թովմա Մեծոփեցի[11]... տեսնենք՝ դու ո՞նց կթուրքացնես։

---

* Էքմեք (ekmek) - թրք. հաց։

** Չորագ (çörək) - թրք. չուրեկ հացի մի տեսակ։

- Դի՛ր, դի՛ր, դի՛ր,- ասաց մարդը բարձրաձայն ու հետո մտքի մեջ շարունակեց. «Դի՛ր, ես մի հարվածով կթուրքացնեմ...»:

Ու կինը գործի անցավ:

Վերցնելով Զամչյանի «Հայոց պատմությունը»[12]՝ ինչքան հայկական անուն գտավ, մի երեխա բերեց՝ վրան դնելու համար:

Վերջում Զամչյանն էլ վերջացավ, բայց կինը շարունակում էր բերել:

Այնքան որ զայրացած էր:

Կինն այսպես էր գործում, բայց մարդն էլ քնած չէր:

Նա սպասեց, սպասեց ու մի օր էլ, երբ կինը բացակայում էր տանից, մի մոլլա բերեց ու բոլոր «հայկ նահապետներին», «քաջ վարդաններին» ու «մովսես խորենացիներին»... թլպատեց:

Բարեբախտաբար երեխաներից երեքը աղջիկներ էին, եթե նրանք էլ, Աստված ոչ անի, տղա լինեին, ողջ տնով կիսլամանային...

Երբ կինը տուն վերադարձավ, տեսավ պատահածը, բայց ինչ կարող էր անել, տունը քանդվել պրծել էր: Տանը քրիստոնյա երեխաներ թողած՝ դուրս եկավ, վերադարձին մուսուլման գտավ:

Գործը դատարան գնաց, բայց դատավորի օգնությունը կնոջը եղավ այն, որ աղջիկներին մորը հասցրեց ու ամուսիններին իրարից բաժանեց:

Նրանց բնակարանը բաղկացած էր մեկ, բայց մեծ սենյակից: Միջնորմով կտրեցին, երկու մասի բաժանեցին սենյակը՝ մի մասը դարձնելով Հայաստան, մյուսը՝ Տաճկաստան:

Այնուհետև նախկին կնոջ սիրտը կոտրած էր, նա երկրորդ անգամ չամուսնացավ, բայց սպան ամուսնացավ, մի ադրբեջանցի թուրք կին առավ և շարունակեց նրանից երեխաներ ունենալ:

Բայց այստեղ էլ սկսվեց մի ուրիշ անախորժություն:

Ճիշտ է, երկու ամուսիններն էլ թուրք էին, բայց կինը՝ որպես ադրբեջանցի, շիա աղանդին էր պատկանում, իսկ սպան՝ սուննի[13]:

Ու ամեն տարի շախսեյ-վախսեյի[14] ժամանակ կինը, երբ կուրծքը ծեծում, «հասան վա՛յ» ասում և լաց էր լինում, մարդը կանգնած ծիծաղում էր նրա վրա ու տնազում:

Մահմեդական պիտի ծնված լինել՝ հասկանալու համար, թե ինչպիսի անթույլատրելի բան է դա:

Թուրք կինը չդիմացավ այս կրոնական վիրավորանքին և բա-

ժանվեց մարդուց: Սենյակը, թեև կիսված, բայց էլի մեծ էր:

Երկրորդ անգամ միջնորմով բաժանեցին այն, որով մի մասը դարձավ Տաճկաստան, մյուսը՝ Պարսկաստան:

Դրան գումարած նաև կողքի Հայաստանը, ստացվեց Հայաստան, Տաճկաստան և Պարսկաստան... մի սենյակի մեջ:

Այստեղ միայն վատն այն էր, որ արանքներում Մասիս չկար, այդ պատճառով հաճախ ընդհարվում էին այս մի սենյակի ազգերը...

Ձմերուկի, բնակարանի և ամուսնության մասին[15]

Որպեսզի գնածդ ապրանքը ետ չվերադարձնես կամ փոխանակություն չկատարես, պետք է ապրանքագետ լինես ու ճանաչողություն ունենաս: Մի հատկություն, որ ես չունեցա:

Ձմերուկ եմ առնում, բերում տուն՝ խակ, ոնց որ սապոն: Անծանոթ մարդու եմ պատահում, կարծում եմ, թե դա մի անողնաշար, օպորտունիստ* և լիբերալ** անկուսակցական է, բայց երբ կտրում եմ, տեսնում եմ գրպանում մի զիլ կարմիր... կուստոմս:

Երբ խանութ ես մտնում կոշիկ առնելու, վաճառողը, պատիվ իրեն, նստեցնում է քեզ աթոռին, հագցնում, թույլ տալիս խանութում երկու փաթ գնալ-գալ: Երբ որևէ գանգատ չհայտնեցիր, նոր խանութից դուրս է անում քեզ:

Բայց քաղսովետն իր բնակարանները բաժանելիս երբեք նախապես չի հագցնում հաճախորդին, շուռ-մուռ չի տալիս, ետևից-առջևից չի նայում, փոնթերը չի ուղղում, այլ ժամաշապիկի նման հագցնում, ուղարկում է:

Ո՛չ, ես սխալ ասացի. անգամ չի հագցնում, այլ դնում է ստացողի թևի տակ, թե տար հագի՛ր:

Այդ պատճառով էլ այսօր Շահումյանի հրապարակի մեկ անկյունը դարձել է բնակարան փոխողների հավաքավայր. օրերով, ամիսներով այնտեղ կանգնած՝ միայն «փոխում» են: Որովհետև քաղսովետը չի փոխում այն: Ասում է. «Ես ձմերուկ չեմ ծախում, որ կտրեմ տամ»:

Այս կողմից զարմանալի զիջող ու մարդասեր վերաբերմունք

---

* Օպորտունիստ (opportunist) - պատեհապաշտ:

** Լիբերալ (liberal) - լատ. ազատական, լիբերալիզմի կողմնակից:

ունի զագսը: Առածդ կնոջը ուզում ես նույն բոպեին վերադարձրու, ուզում ես տար, տարիներ գործածիր, նոր վերադարձրու, միշտ ետ է ընդունում և նորի հետ պսակում:

Հնում այսպես չէր, գիտեք:

Հնում ձմերուկ էին ծախում բացառապես մասնավորները և անպայման կտրում տալիս: Հետն էլ այնպես քաղցր ժպտում, որ եթե անգամ ձմերուկը անհամ դուրս գար, նրա քաղցր ժպիտը հիշելիս կքաղցրանար:

Հիմա՝ ո՛չ: Հիմա «սետկան» է վաճառում, և ծախողը հարցիդ չի էլ պատասխանում ու երեսիդ անգամ չի նայում, այլ կողքինիդ նայում և քեզ պատասխանում է.*

- Ապրանքս այս է, կուզես տար, կուզես մի տար...

Եվ գնելիս քաղցր ձմերուկն անգամ դառնանում է նման վերաբերմունքը հիշելիս:

Այստեղ, սակայն, ինձ զարմացնում է մի բան: Ինչո՞ւ հնում մարդիկ ո՛չ բնակարան էին փոխում, ո՛չ կին:

Արդյոք հին մարդիկ ռեզի՞ն էին, որ լայն բնակարանի մեջ բացվում, իսկ նեղի մեջ կծկվում էին, կամ ամուսնական սերն այնքան ջերմ էր, որ հալվում-ձուլվում էին իրար, ի՞նչ է:

Ո՛չ այս, ո՛չ այն:

Հին մարդը բնակարանը ինքն էր կառուցում՝ նախապես վերցնելով իր ընտանիքի չափը ու նախատեսելով իր ծնունդների թիվը: Իսկ քաղսովետը բնակարաններ բաժանելիս նկատի ունի միայն մեռնողներին:

- Եթե կուզես լայնանալ, մեռի՛ր,- ասում է նա,- ուրիշ ճանապարհ չկա:

Գալով ամուսնությանը՝ նրանք ամուսնանում էին անպայման եկեղեցում և խորանի առջև երդվում, որ եթե իրենց ամուսինը կաղանա, կուրանա, անդամալույծ դառնա, տեր են: Իսկ ներկայիս ամուսնացողը ոչ մի պարտավորություն հանձն չի առնում: Տանում տուն, կաղացնում, կուրացնում, բերում, ետ է տալիս, և զագսն ընդունում է:

---

* Սետկա (сетка) - ռուս. ցանց: Այստեղ՝ պտուղ-բանջարեղենի կրպակ-տաղավար, որն այդ անունն էր ստացել մետաղական ցանցատիպ պատեր ունենալու համար, որ կոլխոզ-սովխոզներից բերված գյուղմթերքը շուտ չփչանար (ծնթ.՝ Վ.թ.):

Այսպիսի երդում եթե ներկայիս զագսին պետք չէ, բնակարանային վարչությանը, սակայն, սաստիկ պետք է։

Նա բնակարան բաժանելիս պիտի երդվեցնի ստացողին, որ եթե կտուրը ծակվի, ու անձրևը վայր չռռա գլխին, եթե դռների բռնակները քաշելիս ձեռքը մնան, պատուհանները չփակվեն, դռները չբացվեն, պարկետները Այվազովսկու ծովանկարների նման ելնեն ու իջնեն, տեր է։*

Այո՛, բնակարանները պետք է բաժանվեն եկեղեցական օրենքներով։

Եկեղեցին դարեր շարունակ թաղել է մարդկանց՝ տալով միայն մի գերեզման։

Պատահե՞լ է դեպք, որ մեռելը դժգոհի կամ կամենա փոխանակել այն։

Մեզ կմնա միայն ցանկանալ, որ պետություններն էլ անհատ մարդկանց հետևելով մի Շահումյան անկյուն ճարեն և երկրների խաղաղ փոխանակության մեթոդին անցնեն, ոչ թե ուրիշի դուռը ջարդեն ու ներս մտնեն։

Ներս մտնեն ու բնավ դուրս չգան։

Փոխադարձ համաձայնությամբ անգամ Ալբանիան իր երկիրը կարող էր փոխել... Չինաստանի հետ։

Ինչ կա որ։

Քարտեզի առջև[16]

Քթի մազ որ ասում են, դա իմ թոռն է։ Ինքը՝ թիզ ու կես, լեզուն՝ գազ ու կես։

Առջի օր մի համաշխարհային քարտեզ առա, փակցրի պատիս։ (Դե, անհարմար է ներկա պահին, երբ աշխարհն իրար է խառնվել, չունենալ նրա քարտեզը)։

Նա բռնել է փեշս, թե.

- Պապի՛, սա ինչ է։

- Աշխարհի քարտեզ։

- Այս կապույտ տարածությունն ինչ է։

- Ջուր է, մյուսները՝ ցամաք։

* Պարկետ (parquet) - ֆր. մանրահատակ։

- Ինչո՞ւ ցամաքն այսպես քիչ է, իսկ ջուրը՝ շատ։

- Չգիտեմ։ Աստվածն է ստեղծել այսպես։ Երեք մասը՝ ջուր, մեկ մասը՝ ցամաք։

- Մանկապարտեզի խոհարա՞ր է այդ Աստվածը։ Եթե այո, ավելի խղճով է։ Մեր մանկապարտեզի խոհարարն ապուր եփելիս մի ափ բրնձին մի դույլ ջուր է լցնում։ Աստվա՞ծն էլ մեր մանկապարտեզի նման փլավքամիկ չունի։ Ինչո՞ւ աշխարհը չի քամում, ջուրը թափում։

- Նրա շահն էլ այդ ջուրն է։ Այն կաթը, որ առավոտը խմեցիր, ջուր չէ՞ր։ Հիմա ի՞նչ անջուր բան կա, որ աշխարհն անջուր լինի։

Թոռս մատը տարավ նախ մեծ պետությունների վրա, ապա Աֆրիկայի ու Հարավային Ամերիկայի փոքրիկ, գույնզգույն ներկված պետությունների վրա ու հարցրեց.

- Ինչո՞ւ գույներն այստեղ մեծ ու տարածական են, իսկ այս երկու տեղերը լցված են բազմաթիվ գույներով և մարդու աչքը խտղտում են։

Չիմացա՝ ինչ ասեմ։ Եթե ասեի՝ դրանք մանր պետություններ են, պիտի ուզենար գիտնալ, թե պետությունն ի՞նչ բան է, ու ես կընկնեի գլխացավանքի մեջ։

Ուստի, կարճ կապելու համար ասացի.

- Բալի՛կ ջան, երբ սպանդանոցում մեծ անասուն են մորթում, նրա մանրիկ կտորտանքները, ասենք՝ ջիգյարը, պլոճիկը, փորի կտորտանքներն ածում են մի հաստ աղիքի մեջ և խանութներում վաճառում։ Ես նրա հայերեն անունը չգիտեմ, բայց ռուսերեն «աբրեզկա» են ասում։*

- Քարտեզի վրա էլ են «աբրեզկա» ասում։

- Ո՛չ։ Քարտեզի վրա մեկին անվանում են Աֆրիկա, մյուսին՝ Լատինական Ամերիկա։

- Իսկ դրանք ո՞ւմ կտորտանքներն են։

- Մեծ պետությունների։

- Մեծ պետություններն էլ են իրար մորթում։

- Այն էլ ո՞նց։ Ուղիղ մեջտեղից կիսում են։ Սա տեսնո՞ւմ ես։ Սրա անունը Գերմանիա է՝ մեջտեղից կիսված։ Սրան ասում են Կորեա՝ մեջտեղից կիսված[17], Հնդկաչին՝ մեջտեղից կիսված[18]։

Թոռս մատը տարավ Մադագասկարի վրա և հարցրեց.

- Սա ինչո՞ւ չեն լցրել Աֆրիկայի մեջ։

* Աբրեզկա - ռուս. ***обрезок*** (կտոր, կտորտանք) բառի աղավաղված ձևը։

- Դա ոսկոր է, ջուրն են նետել:
- Իսկ սա՞,- մատը Իսլանդիա կղզու վրա դնելով՝ հարցրեց Թոռս:
- Դա ոսկոր չէ, այլ սառած միս: Եթե տաքացնես, կփափկի:
- Ուրեմն, այդ քո ասած պետություններն էլ մեզ նման սառած միս են ուտում,- ասաց Թոռս ու հանկարծ խոսակցության տոնը փոխելով հարցրեց.- պապի՛, կյանքումդ թարմ միս կերե՞լ ես:
- Շա՛տ:
- Դա էլ սառածի նման անհամ է:
- Չէ՛, իհարկե:
- Երանի՜ քեզ...

Վերջաբան

Երբ աշակերտները մոտեցան Հիսուսին և հարցրին.

- Վարդապե՛տ, ի՞նչ անենք, որ մեր հոգին փրկվի, և մենք Աստծու արքայությունը ժառանգենք:

Այն ժամանակ Հիսուսը բռնեց Թոռանս պես մի երեխայի թևից և բերելով նրանց մոտ՝ ասաց.

- Ձեր հոգին փրկելու համար այս երեխայի նման անմեղ պիտի լինեք[19]:

Ներկայիս մենք, իհարկե, հոգու անմահությանը չենք հավատում և այդ մասին չենք մտահոգված: Բայց, երևակայեցեք, մարմնի փրկության համար էլ երեխայի նման անմեղ պետք է լինել:

Այս րոպեիս եթե դուք աշխարհը հանձնեք Թոռանս, վստահեցնում եմ ձեզ, որ բոլոր վիճելի հարցերը մի րոպեում կհարթի:

Ի՞նչ կանի:

Ասեմ:

Նախ և առաջ աշխարհը կլցնի փլավքամիկը և ջրերը կթափի:

Տձև, լայն ու նեղ, կարճ ու երկար պետությունները կլցնի մի կաթսայի մեջ, կհալի, կհունցի սեղանի վրա և փախլավայի նման հավասարամեծ կկտրատի, որոնք կլինեն տարածությամբ հավասար ու բովանդակությամբ էլ փախլավայի նման քաղցր:

Շատ մեծ մեխերով ամեն ազգ կմեխի իր երկրին, իսկ մեխ չճարելու դեպքում մի մեծ պետություն կնստեցնի փոքրի կրծքին, որ քամին չտանի:

Թե չէ ինչ է ներկայիս աշխարհի վիճակը։

Կոնգոն փռած հատակին՝ բազմաթիվ ազգեր շրջապատած շախմատ են խաղում վրան[20]։

Շա՛խ են ասում, զինվորը խրում նրա քիթը, մատ ասում և զինվորը մտցնում բերանը։

Վաղը, եթե հանկարծ Կոնգոն փոնգտա, գիտեք՝ ինչ կստացվի Ա.Ֆրիկայում...

Օրվա նոթեր

(մանրապատում)

Շատ երկար հերթի կանգնելով՝ ձեռք բերեցի մի մորթված հավ։

Տուն վերադառնալիս, փողոցի անցման տեղում ինձ վրա խոյացավ մի սրընթաց ավտո և սպառնաց տակովն անել։

Ես, շփոթված առաջին առթիվ, կամեցա փրկել հավս և այն նետեցի հանդիպակաց մայթին։

Երբ, հրաշքով ազատված, շարունակում էի ճանապարհս, մեկը ետևիցս ասաց.

- Այ քեզ հիմար մարդ, մեռած հավին ազատում է, իր կենդանի մարմինը վտանգի է ենթարկում։

«Հիմարը դո՛ւ ես,- ասացի ես մտքիս մեջ,- այդ հավն առնելու համար հինգ ժամ հերթի եմ կանգնել. մինչդեռ մայրս ինձ աշխարհ բերելու համար բոլորովին հերթի չի կանգնել...»։

Ես ամենից շատ սիրում եմ կանանց աչքերը, իսկ նրանք ամբողջ ամառ ման են գալիս սև ակնոցով։

Ստիպված ձմեռը սիրում եմ նրանց աչքերը, իսկ ամառը՝ ինչ պատահի...

Երևանի գեղեցիկ զբոսայգիներից մեկում որպես հուշարձան՝ տնկել են գաջից շինված երկու ձեռքեր՝ մատներից երկուսը ծալած, մյուսները տնկած։

Առաջին անգամ եմ տեսնում մարմնի որևէ մաս անմահացած։

Եթե անմահության այս ձևը ընդունելության արժանանա ժողովրդից, պետք է սպասել, որ այսուհետև արձանները պիտի գետնին պառկեն և իրենց ոտները վեր ցցեն։ Ոտներ, որոնք փախչելու ժամանակ մարդուն ավելի պիտանի են, քան ձեռները։ Իսկ մատը մարդուն պետք է գալիս միայն ընտրությունների ժամանակ։ Չեմ վիճում այս երևույթի լավ և վատ կողմերի վրա։ Միայն առաջարկում եմ՝ եթե մարմնի առանձին անդամները պիտի անմահանան, առաջին առթիվ զբոսայգում պետք է տնկել մարդու մարմնի այն անդամը, որից գոյանում է մարդկությունը և ընդհանրապես ամբողջ կենդանական աշխարհը...

Գնացել էի Պետհրատ՝ դիրեկտորին տեսնելու։

Բաց եմ անում դուռը՝ չկա. Մոսկվա է գնացել։ Տեղակալի դուռն եմ բացում՝ չկա, բաժնի վարիչի դուռը՝ չկա։

«Երևի այս հիմնարկն էլ որոշ ավտոբուսների նման երթևեկում է առանց տոմսավաճառի»,- մտածում եմ ես ու ետ դառնում։

Վերջնահաշիվ

Աստվա՛ծ, այսօր քո վերջին օրն է։ Կա՛մ պիտի գոյություն ունենաս, կա՛մ գոյություն չունենաս։

Բավակա՛ն է խաղացնես մարդկանց։

Իմ վերջին օրերն եմ ապրում և շուտով մեռնելու եմ։ Պիտի իմանամ՝ երկի՞նք եմ գնալու, թե՞ մնալու եմ երկրի վրա։

Եթե իրոք գոյություն չունես, մի՛ վախենա, պարզ ասա՛։ Գոյություն չունեցող բաներն ավելի են հարգի մեզ մոտ, քան գոյություն ունեցողները։

Եվ վերջապես ո՞ւմ է հարկավոր այս անորոշությունը։ Մեկը հավատում է, մյուսը չի հավատում, և դրա համար քաշքշում են իրար։

Հետո առաջ է գալիս կեղծիքը։

Ռուսաստանը բաց ճակատով քեզ չի հավատում։ Իսկ Ամերիկան որպես թե հավատում է։ Բայց ստում է Ամերիկան։ Եթե իրոք հա-

վատար, չէր շարունակի իր ստորերկրյա պայթեցումները: Աղոթելիս կասեր. «Աստվա՛ծ, Ռուսաստանի հոգին ա՛ռ», և դու կառնեիր:

Քո՝ «Աստծո՞ւն, թե՞ մամոնային» հարցին ինչո՞վ է պատասխանում Ամերիկան. իր միլիոնատերերով: Ռոկֆելերը միայն վաթսուն միլիարդ փող ունի: Էլ Աստված ինչ գործ ունի այդտեղ:

- Մամոնային և միայն մամոնային,- պատասխանում է Ամերիկան:

Ես բութ մատս Աստծու ճտին էի սեղմել: Տեսնելով, որ թաքնվելու այլևս հնար չունի, գոյություն ունեցավ:

- Ինչո՞ւ էիր թաքնվում,- հարցնում եմ:

- Ա՛յ տղա, ամաչում եմ իմ ստեղծած աշխարհին նայելիս: Ես այսպիսի բան չէի նախատեսել: Ես աշխարհը ստեղծեցի միայն երկու մարդու համար: Սխալվեցի, Ադամ-Եվային դուրս արի դրախտից, գնացին իրենց գլխու բազմացան, աշխարհը դարձրին «օբշչի» բնակարան և սկսեցին կռվել իրար հետ: Եթե ես առաջուց իմանայի, ինչո՞ւ, քաղսովետի չափ չկայի: Չէի կարող ազգերը բնակեցնել այնպիսի մեկուսացված բնակարաններում, որ իրար երես չտեսնեին:*

- Երկու մարդով աշխարհ կլինի,- նկատեցի ես:

- Երկու մարդն ինձ համար դեռ շատ էր: «Գիտելիք» ընկերության դասախոսություններին երկու մարդ էլ չեն ներկայանում: Կա՛մ մի Ադամ է գալիս, կա՛մ մի Եվա: Իսկ դասախոսությունը բեղմնավորելու համար երկու մարդ միշտ անհրաժեշտ է,- ասաց Աստված ու ավելացրեց,- աշխարհն էլ մի բանի նման չէ: Մի բուռ ցամաք լողում է լայնածավալ օվկիանոսում: Կարծես ձեր ճաշարանների մակարոնները լինեն ապուրի մեջ լողալիս: Տձև, տձև: Խեղճ մարդիկ, մի ձեռք կոստյում կարելիս տասն անգամ նկատողություն են անում դերձակին, բայց դարեր շարունակ հագնում են իմ կարած աշխարհը, և ոչ մի նկատողություն: Ասում ես՝ գոյություն ունեցիր. որ գոյություն ունենամ, նրանց ձեռքից կպրծնեմ:

- Աստվա՛ծ, արի միանանք, մի նոր աշխարհ ստեղծենք,- ասացի:

- Արի ստեղծենք,- ասաց Աստված:

- Մի աշխարհ, ուր ազգերը սիրով ապրեն:

- Համաձայն եմ:

- Ուժեղ սիրում են միմյանց միայն մարդն ու կինը. ազգերը ստեղծենք տարբեր սեռերից ու իրար հետ պսակենք,- ասացի:

---

* Օբշչի *(общий)* - ռուս. ընդհանուր:

- Մարդ ու կին չե՞ն կռվում, չե՞ն բաժանվում իրարից,- ասաց Աստված։

- Կբռնանանք, չենք թողնի։

- Բռնանաս, իր ամուսնուն սեր կկեղծի, տակից այլ պետությունների սերը կվայելի։ Քի՞չ կան նման պետություններ։

- Ստեղծենք որպես եղբայրներ։

- Կայենը Աբելի եղբա՞յրը չէր, որ զարկեց նրան, սպանեց։

- Ստեղծենք որպես հայր, մայր և որդի։

- Բաֆֆու Սամվելը միևնույն սրով չսպանե՞ց իր հորն էլ, մորն էլ,- ասաց Աստված ու ավելացրեց,- դժվար է, շատ դժվար է մարդ ստեղծելը։

- Արի բոլորովին մարդ չստեղծենք։ Կապիկ ստեղծենք։

- Չի լինի. վերջում այդ կապիկից մարդ կառաջացնեն գիտնականները և մեզ կխայտառակեն։

Այստեղ երկուսս էլ անճրկեցինք ու շվարած իրար երեսի էինք նայում, երբ հանկարծ մի լույս ծագեց գլխումս։

- Աստվա՛ծ,- ասում եմ,- այս աշխարհից միայն սատանան կարող է գլուխ հանել, արի այս գործը հանձնարարենք նրան։

- Խելոք բան ասացիր,- ասաց Աստված,- միայն այստեղ էլ մի ուրիշ վախ կա։

- Ինչ։

- Կամենալով հաստատուն մնալ իր նոր պաշտոնին՝ մեզ կուղարկի դժոխք։

- Երբե՛ք, սատանաներն այդքան անազնիվ չեն լինում։ Չէ՞ որ մենք հանձնվում ենք ինքնակամ։

- Շատ լավ,- ասաց Աստված,- ես երեկոյան սատանայի հետ կխոսեմ։

Մեր բանակցությունը վերջացած էր, ես շնորհակալություն հայտնեցի Աստծուն ուշադրության համար և նրան երկինք թոցրի։

Մարդը զանազան դիրքերով

Իմ մեծ թոռն իր դասերը պատրաստում է միայն փորի վրա պառկած։

Մեռա ասելով.

- Ա՛յ տղա, գրասեղանիդ առջև կարգին նստի՛ր, պարապի՛ր։

Ջեղավ ու չեղավ։

Ասում եմ.

- Ախր, գիտությունը ծուռ կարմատավորվի մեջդ, և եթե մեծանաս, դասախոս դառնաս, այլևս չես կարող կանգնած խոսել։

Եվ իրոք. փորին պառկած՝ ջրի պես ասում է դասը, երբ դառնում է կռնակին, բան չի հիշում...

Տեսնենք՝ տարեվերջի քննություններին ուսուցիչը, հաշվի առնելով նրա առանձնահատկությունը, կհամաձայնի՞ պառկած քննել տղային։

Բայց օրենքով պետք է հաշվի առնի։ Նրան գիտություն է պետք, նրա ի՞նչ հաշիվն է, թե այդ գիտությունը ինչ դիրքով է ներկայանում իրեն։

Կամ գիտությունը, որ պառկի, կդառնա տգիտությո՞ւն։

Մարդիկ էլ կան, որոնք միայն աթոռի վրա են մեծ, աթոռը տակից քաշեցիր, կդառնան աներևույթ։

Գրիգոր Հարությունյանը[21] տասնյոթ տարի Հայաստանի Աստվածն էր... աթոռի վրա։ Աթոռը տակից քաշեցին, դարձավ մի հետ ընկած կոլխոզի նախագահ, վերջում էլ ամոթից մեռավ։

Նմանապես Մացակ Պապյանը[22]։

Փողոցում ում պատահեիր, Մացակ Պապյանի մոտից էր գալիս կամ Մացակ Պապյանի մոտ էր գնում։ Վերջինս, երբ վեր կացավ աթոռից և գոգից թափեց իշխանությունը, ինքն էլ մոռացավ իրեն...

Վերցնենք Մոլոտովին[23]։

Մի ժամանակ Ռուսաստանի բոլոր ճամփաները դեպի Մոլոտովն էին տանում, իսկ հիմա այդ ճանապարհի վրա «մարդաբոյ» խոտ է բուսել...

Այս նույն բանը գոյություն ունի նաև պետությունների կյանքում։ Պետությունը, նայած իր նստվածքին, լինում է խաղաղասեր կամ պատերազմասեր։

Եթե Ամերիկային Ամերիկայում նկարես, նա սաստիկ չար է, պատերազմասեր ու գիշեր-ցերեկ պատրաստվում է Ռուսաստանի վրա հարձակվել։

Բայց երբ այդ նույն Ամերիկան հյուր է լինում Մոսկվայում, ճաշերին ու նախաճաշերին բաժակ վերցնելիս, ոչ թե շուկայի, այլ տանու մեղր է ծորում նրա շուրթերից։

Խաղաղասեր, խաղաղասեր։

Նրանք իրար հանդիպելիս պինդ սեղմում են իրար ձեռքը և կամենում են գրկախառնվել, բայց ավա՜ղ, նրանց սրտերի վրա բուսած «սոցիալիզմն» ու «կապիտալիզմը» ֆիզիկապես թույլ չեն տալիս այդ անելու։ Հենց որ այդ սկզբունքները կպչում են իրար, երկուստեք ճիչ են արձակում ցավից։

Բայց ուզում են, սրտանց ուզում են այդ ու չեն կարողանում։

Այս երևույթը ես տեսել եմ կյանքումս։ Մի հարևան ունեինք, խելագարի նման սիրում էր իր կնոջը, բայց չէր կարող գրկել նրան, որովհետև կրծքին մի մեծ խոց կար բուսած։ Եվ մարդն իր սերը հագեցնում էր երկրորդական, երրորդական բաներով։

Կուլտուրական կապեր էր հաստատում կնոջ հետ, չվաճառվող ապրանքների առևտուր, գիտական փորձի փոխանակում և այլ այսպիսի բաներ, որոնք, բոլորը մեկտեղ հավաքած, մի տաք համբույր չարժեին։

Այժմ մարդիկ են մոտենում ինձ և հարցնում են.

- Ի՞նչ պիտի լինի այս աշխարհի դրությունը, պատերազմո՞վ պիտի վերջանա գործը, թե՞ խաղաղությամբ։

- Եթե ուզում եք աշխարհը փրկել պատերազմից,- ասում եմ,- աշխատեցեք այնպես անել, որ ոչ մի պետություն իր երկրում չնստի, այլ միշտ որպես հյուր ման գա աշխարհում և բաժակաճառ արտասանի։ Իսկ դա խաղաղությունից էլ դենն է, դա քաղաքական քնքշություն է։

Պատերազմի դեպքում ատոմային ռումբից պաշտպանվելու համար ես ինձ համար ապաստարան չեմ շինել, դրանք անօգուտ բաներ են։ Ամենալավ ապաստարանը պետությունների կազմակերպած ընդունելություններին մասնակցելն է։

Այնտեղ կուշտ կուտես, կյանքդ էլ կազատես։

ԲԱՆՋԱՐԱՊԱՏՈՒՄ

թվագրվել է 1965-ին Հայր

Անմեղ մեղավոր

Ես փոքր եմ եղել, չեմ հիշում, բայց ասում են, որ Երևանի բնակչությունը մի ժամանակ բանջար է կերել։

Այս տգեղ սովորության դեմ դուրս են եկել մարդիկ, հիմնարկներ, բայց այնուամենայնիվ, երևանցին մի տեղից բանջար է ճարել ու գաղտնի կերել։

Երևանի բնակչությունը վերջնականապես դադարեց բանջար ուտելուց այն ժամանակ, երբ հանդես եկավ «Պտուղբանջարառը»։

Այո՛, դրա հիմնադրումից այս կողմ ժողովուրդն այլևս բանջարի երես չտեսավ...

Բայց երևակայեցեք, գտնվեցին մարդիկ, որոնք, այս հիմնարկը դատարան քարշ տալով, մեղադրեցին բանջարավաճառության մեջ։

Երբ դատարան բերեցին «Պտուղբանջարառին», խեղճ հիմնարկը վախից կես էր դարձել. իր երկար անունից մնացել էր համարյա միայն «բանջարը»։

Նրան մեղադրեց դատախազը, մեղադրեց դատավորը։ Երբ մեղադրանքները վերջացան, ու խոսք տվեցին մեղադրյալին, նա իր վերջին խոսքում շուռ եկավ դեպի հանդիսականներն ու ասաց.

- Ժողովո՛ւրդ, ես այսքան տարվա հիմնարկ եմ, թող մեկը ձեզանից դուրս գա և ասի՝ ես իմ օրում երբևիցե բանջար վաճառե՞լ եմ։

Սրա վրա ժողովուրդը ձեռքը խղճին դրեց ու բղավեց ամեն կողմից.

- Ո՜չ, ո՜չ, դա զրպարտություն է, պատժե՛լ չարախոսին։

Եվ որովհետև դատարանը ժողովրդական էր, ուստի բոլոր մեղադրողներն իրենց խոսքերը ետ վերցրին, ու «Պտուղբանջարառը», որ վախից իր անվան «պտուղը» դեն էր գցել, այդ էլ կցեց «բանջարին» ու արդարացած, մեծ շուքով դուրս եկավ դատարանից։

Հետո էլ լսեցի, որ նաև պարգևատրվել է իր «անբասիր գործունեության» համար...

Անհիմն կասկածներ

Բայց չար մարդիկ դրանով չհանգստացան։ Հիմա էլ լուր տարածեցին, թե «Պտուղբանջարառը» իր խանութներում գաղտնի բանջար է վաճառում։

Ժողովրդի այս կասկածները փարատելու համար, այս երկար անվան տեր հիմնարկը բռնեց իր փակ կրպակները «սետկաների» վերածեց, որ բոլորն էլ տեսնեն, որ մեջը ոչ մի բանջար չկա։

Այստեղ էլի մի երկրորդ անգամ էլ պարզերես դուրս եկավ հիմնարկը, և չարախոսները պապանձվեցին։

Իսկ թե դրա համար էլ վարձատրվեց կամ ոչ, այդ չեմ կարող ասել...

Չբռնված փախստականը

Մի օր քաղաքից դուրս ման եմ գալիս։ Տեսա՝ մի կապ սոխ միլիցիայով բերման էր ենթարկվում՝ յոթ կոպեկով կոլխոզի խանութում ծախվելու համար։

Կալանավոր սոխը, երբ շուկային էր մոտենում, աջ նայեց, ձախ նայեց, մեկեն փախավ մասնավոր շուկա։

Մինչև պահակները ետևից վազեցին և սկսեցին կրակել, նա արդեն մասնավոր շուկայում ծախել էր իրեն հիսուն կոպեկով...

Ի՞նչ է սովորույթը

Մարդ որ մի բան սովորեց, էլ չես կարող ետ պահել։

Կենդանիների մեջ էլ կա այս բանը։

Ժամանակով հայրս մի ավանակ ուներ. երբ ծախեց այն, կենդանին, իր նոր տիրոջ ախոռը թողած, ամբողջ երկու տարի մեր ախոռն էր վազում՝ իր հին տեղը։

Նման մի բան էլ Աբովյան փողոցում պատահեց։ Այնտեղ՝ «Կավկազ» ճաշարանի անկյունում, մի սետկա էր դրված, որտեղից մարդիկ երկար ժամանակ գնում էին իրենց ձուն ու ձմերուկը։

Հանկարծ վերացվեց այդ սետկան ու տարվեց ճաշարանի բակը։

Այս անգամ էլ սետկային վարժված հաճախորդները, երբ ձվի

կամ ձմերուկի պետք էին ունենում, անցնում էին բակը և օրերով հերթի կանգնում անվաճառող ու ամայի սետկայի առջև։

Այնուհետև ուր փախցրին, ժողովուրդը միշտ հետևեց սետկային...

Մարդկային բնազդ

Մի կին սետկայի առջևով միամիտ անցնելիս տեսավ այնտեղ մի կապ համեմ, ու վախից լեզուն կապվեց։

Նա ամեն բան երևակայում էր, բայց չէր երևակայել, որ սետկայում բանջար կարող էր վաճառվել։

Կնոջը հիվանդանոց տանելով՝ բազմությունը սկսեց մեղադրել վաճառողին.

- Ինչպե՞ս կարելի է,- ասում էին,- առանց նախապես զգուշացնելու՝ հանկարծ համեմ դնել ծախելու...

Հրաշքների աշխարհում[24]

Մարդկային մի՛տք, մարդկային մի՛տք, ի՞նչ գյուտ ասես, որ չարեցիր։ Թռար տիեզերք, իջար ծովերի անդունդը, քարերից մետաքս սարքեցիր, կապրոնից՝ գուլպա։

Մի՛ գյուտ մնաց անելու, եթե այն էլ հաջողվեց, բոլոր գործարանները կարող են գոգնոցները արձակել և նստել պատրաստի սեղանին։

Այդ մեկ գյուտը խաղաղությունն է։

Դարեր ամբողջ մարդիկ աշխատեցին սովորել իրար չկոտորել՝ չկարողացան։ Ու մարդկությունը քե՛զ է նայում, ո՛վ քսաներորդ դար։

Բռնի՛ր այն ազգի ձեռքը, որ, իր հարևան ազգին գետին տապալած, ուզում է մորթել։

Ձե՛զ եմ դիմում, ո՛վ տիեզերագնացներ. երկնքից իջե՛ք, նախ բարեկամանա՛ք իրար հետ, նոր տիեզերք թռչենք։ Որովհետև առանց տիեզերքի կարող ենք ապրել, իսկ առանց բարեկամության՝ ոչ։

Այսքանը հոդվածիս առաջաբանը։

Հիմա անցնեմ բուն նյութին։

Մտնելով միչուրինյան այգին[25]՝ անշուշտ դուք զարմացել եք՝ տեսնելով միևնույն ծառի վրա պատվաստված տանձն ու խնձորը։

Այդ ծառը ո՛չ տանձենի կարող ես անվանել, ո՛չ խնձորենի, այլ «Միացյալ Արաբական Պետության» նման մի խառնանուն պիտի տաս:

Զարմանալի է, չէ՞, նույն ծառի վրա երկու տեսակ պտուղ:

Իսկ դու ինչքա՜ն պիտի զարմանաս, եթե քեզ պատմեմ մի մարդու մասին, որի կեսը քրիստոնյա է, կեսը՝ մահմեդական...

Այդ պատահեց այսպես:

Մի չորեքշաբթի օր, երբ Երևանի Զորավոր եկեղեցու միակ քահանան, իր հոգևոր պարտականությունները վերջացրած, պատրաստվում էր դուրս գալ եկեղեցուց և անցնել իր մարմնավոր պարտականությունների կատարմանը, եկեղեցի մտավ քառասունին մոտ մի հաղթանդամ մարդ ու ասաց.

- Տե՛ր հայր, ես առաջ քրիստոնյա էի, բայց համարելով այդ ավելորդ՝ հրաժարվեցի, հիմա սաստիկ պետք ունեմ այդ հավատին, խնդրում եմ ինձ նորից քրիստոնյա մկրտես:

- Այո՛, բայց մկրտության ավազանը փոքր է, այն շինված է նորածինների համար, իսկ դու՝ հաղթանդամ...

- Ոչինչ, մաս-մաս մկրտի՛ր, նախ՝ ձեռները, հետո՝ ոտները, գլուխը և այլն: Գործածածդ ավելորդ մեռոնի ծախսը կվճարեմ:

- Մարմնիդ բոլոր անդամների համար պիտի առանձին աղոթեմ:

- Դրա ծախսն էլ ինձ վրա:

- Բայց դու ինձ չասացիր, թե ինչը ստիպեց քեզ վերստին Քրիստոսի գիրկը դառնալու,- հարցրեց քահանան:

- Տե՛ր հայր,- պատասխանեց մարդը,- ես ուտող-խմող՝ ռոճիկս քիչ. դրա համար ուր գնում եմ, պակասորդ եմ տալիս և նկատողություն ստանում: Տասը տարվա մեջ վաթսունհինգ նկատողություն եմ ստացել, ութսուներեք նախնական նախազգուշացում, նույնքան էլ վերջնական նախազգուշացում՝ գրքույկում նշանակելով հանդերձ:

- Եվ ո՞չ մի պատիժ:

- Ոչ միայն չեմ պատժվել, այլև առաջ եմ քաշվել ավելի պատասխանատու պաշտոնների: Ես մարմնավոր իշխանություններից չեմ վախենում և կարող եմ երջանիկ ապրել, բայց չէ՞ որ ի վերջո պիտի մեռնենք և երկնային ահեղ դատաստանի առաջ կանգնենք: Իսկ այնտեղ դատավորը ո՛չ կնկատի, ո՛չ կնախազգուշացնի, այլ ուղղակի դժոխք կուղարկի: Իսկ եթե որպես քրիստոնյա մեռնեմ, մինչև

յոթանասունյոթերորդ հանցանքները կներվեն ինձ, նրանից ավելին էլ մի կերպ կանցկացնեմ։

- Շատ լավ, որդի՛ս,- ասաց քահանան,- որ այդպես է, եկ հանցանքներդ խոստովանիր՝ մկրտեմ։

- Ես բերանացի չեմ կարող հիշել բոլոր հանցանքներս, ցուցակը տանն եմ թողել, տունս էլ շատ հեռու է։

- Խոստովանիր որքան հիշում ես։

- Իմ առաջին հանցանքը սկսվեց թռչնաբուծական ֆերմայում։ Ութսուն հազար ձու տվեցին ինկուբատորում դնելու, ուր օրենքով քսանմեկ օր պիտի վառվեին վառարանները։ Ես, խնայողական ռեժիմ գործադրելով, տասնհինգ օրվա մեջ վերջացրի ձվերը և վառարանները ժամկետից վեց օր շուտ հանգցնելով՝ խնայած դրամը դրի գրպանս։

- Հետո՞։

- Հետո ասացի՝ նկատողությունս տվեք, անցնեմ ածան հավերի ցեխը։

Տվեցին։ Անցա։ Մի տարվա մեջ բոլոր հավերին աքլորիզացիայի ենթարկեցի, ու ֆերման ձվարկությունից դադարեց։

Ճիշտ է, հավերը այլևս չէին ածում, բայց ֆերմայում աշխատող բոլոր կանայք յուրաքանչյուր տարի անխափան մի-մի երեխա էին... ածում։

- Բարոյական բնույթի հանցանքները մի՛ խառնիր տնտեսականին։

- Առաջ բարոյակա՞նը պատմեմ, թե՞ տնտեսականը։ Ախր դրանք այնքան անբաժանելի են իրարից, որ հնար չէ բաժանել։ Դառնում ես մի խանութի դիրեկտոր, ուր լիքը կանայք են և ապրանքներ։ Ինչպե՞ս դրանք զատ-զատ վայելես։

Քահանան ժխտական շարժեց գլուխը և ասաց.

- Ես համախառն հանցանքին չեմ կարող թողություն տալ։ Քրիստոսը գողերին ներում է, բայց շատ կին ունեցողին՝ ոչ։ Այդ հանցանքի թողությունը մահմեդական կրոնը միայն կարող է քեզ տալ, որտեղ բազմակնությունը արտոնված է։ Ես քո կես մասը կմկրտեմ որպես քրիստոնյա, մյուս կեսդ էլ տար, թող մոլլան մկրտի մահմեդական։

- Եթե այդ հնարավոր է, դեմ չեմ։

Ու քահանան անցավ մկրտության տեխնիկային, վերջացրեց ու ճամփու դրեց մոլլայի մոտ։

Մարդը դեռ եկեղեցուց չէր հեռացել, երբ քահանայի միտքը հանկարծ մի բան ընկավ և ետ կանչեց կես քրիստոնյային։

- Գիտես ինչ, որդի՛,- ասաց քահանան,- մահմեդական դառնալու համար պետք է թլպատվել։ Զգույշ կենալու ես, որ հանկարծ քրիստոնեական մասը մահմեդականության հետ չթլպատվի...

Ֆինանսական վիշտ

Չգիտեմ՝ ո՞ր անվան կրճատումն է, բայց այսօրվա իմ հերոսին բոլորը Մնո են կանչում։

Ի՞նչ սովորություն է կրճատել անունը, չեմ հասկանում...

Եթե պետք կար նրա մի բանը կրճատելու, այդ նրա շատ երկար հասակը պիտի լիներ, և ոչ անունը։

Մեզ մոտ ոչ թե կրճատում են անունները, այլ ամենաերկար անունների վրա էլ այնքան ածականներ ու պատվանուններ են շարում, որ ասես բազմաթիվ ուղտերից կազմված քարավան լինի՝ անապատի ճամփան բռնած...

Մոտ չեմ Մնոյին։ Լսել եմ նրա մասին միայն, որ կնոջ հետ շատ վատ հարաբերության մեջ է և մի անգամ մինչև իսկ մահափորձ է արել նրա կյանքի դեմ։

Բայց այսօր, երբ թաղային բժիշկը քննեց անկողնում պառկած նրա կնոջը և հայտնեց, որ նրա օրերը հաշվված են, գույնը գցեց հանկարծ Մնոն, սաստիկ սփրթնեց ու բժշկի հետևից մինչև հիվանդանոց գնաց՝ ամբողջ ճանապարհին աղերսելով, որ ամեն միջոցով աշխատի կնոջ կյանքը որքան կարելի է երկարացնել։

Այնքան, որ բժիշկը, դառնալով Մնոյին, ասաց.

- Ես այսքան տարվա բժիշկ եմ, առաջին անգամ եմ տեսնում այսպես սիրող ամուսին։

Բայց բժիշկը չգիտեր, որ Մնոյի սարսափն առաջացել էր ոչ թե դեպի կինն ունեցած սիրուց, այլ այն մտքից, թե եթե հանկարծ կինը մեռնի, ինչո՞վ թաղի, երբ կոպեկ չկա գրպանում։

Ոչ էլ սրտում՝ երբևէ կոպեկ ունենալու հույս։

Ուստի, իր վերաբերմունքն անմիջապես փոխեց կնոջ վերաբեր-

մամբ և սկսեց գործածել արտակարգ քնքշություն, մինչև վերջապես մի տեղից ճարի պահանջված գումարը։

Բայց չափից ավելի քնքշանքն էլ ուներ իր անհարմարությունը։

Կինը կարող էր կարծել, որ Մնոն իսկապես էր իրեն սիրում և... չուզենար մեռնել։

Այնպես, որ ընկել էր երկու քարի արանքը՝ չիմանալով ինչ անել։

Բայց ամեն պարագային պետք էր փողի մասին մտածել։ Ինչ մտածել։ Բոլորս էլ գիտենք, որ փող ձեռք բերելու ամենակարճ ճանապարհը գողությունն է։

Մի բան, որից սարսափում էր Մնոն։

Ընդամենը մի առավելություն ուներ իր կյանքում, այն էլ վրա՞ տար։

Բայց «հարկ զօրէնս լուծանէ»* ասում է գրաբար։ Ճա՞րն ինչ։

Մնոն գրաբար մտածեց, աշխարհաբար գործողության անցավ։

Մոտեցավ բանկից գումար ստացող և դուրս եկող մի ծանոթի, նրա հետ ավտոբուս մտավ և սեղմելով նրան՝ ձեռքը նրա գրպանը սահեցրեց...

Ու թաղման ծախսը պատրաստ էր։

Բայց սատանայական բան։ Հիմա էլ կինը չէր մեռնում։

Եվ ոչ միայն չէր մեռնում, այլ օրը օրին կազդուրվում էր ու քիչ անց արդեն վեր կացավ անկողնուց միանգամայն առողջ։

Մնոն էլ անհարմար համարեց կնոջն ասել, որ իր թաղման ծախսը պատրաստ է։

Եթե ասեր, հավանաբար, կինը վեր չկենար անկողնուց։ Որովհետև հազիվ ճարվի մեկը, որ թաղման ծախս ունենա ու չհամաձայնի մեռնել։ Դա մեզ մոտ համարվում է անլուր շռայլություն։

Մնոն այս հարվածն էլ տարավ։ Բայց իր գողության փաստը տանջում էր իրեն։ Նա որոշեց գտնել իր ծանոթին, որից վերցրել էր փողը, և նույն ճանապարհով ետ վերադարձնել։

Երկրորդ անգամ նրա հետ ավտոբուս մտավ, բայց առաջին կորստից խրատված մարդը հիմա ձեռքը պինդ գրպանին էր սեղմում։ Այնպես որ ավելի հեշտությամբ Մնոն հանեց գրպանից, քան տեղը դրեց։

Այս ես ասում եմ ի լուր բոլոր ազնիվ գողերի, որ իմանան՝ փողը

* Հարկ զօրէնս լուծանէ - կարիքը զանց է առնում օրենքը։

տեղը դնելն ավելի դժվար է, քան այն հանելը։

Այստեղ ես վերջացնում եմ իմ պատմությունը։

Սրանից դենը ինձ չի հետաքրքրում, թե ինչպես է ապրում Մնոն իր կնոջ հետ։

Հավանաբար, կնոջից իր վրեժը լուծելու համար հետագային ինքը մեռնի՝ նրան անել կացության մատնելու համար։

Հիմա։

Ինչո՞ւ արեցի ձեզ այս պատմությունը։

Ասեմ։

Մեզ մոտ, ճիշտ է, քաղաքական հանցավորներ գոյություն չունեն, բայց մեր բանտերը մինչև առաստաղ լեցուն են քրեականներով։

Քրեականներ, որոնք քաղաքական իմաստ ունեն։

Մի երկրում այսքան գո՞ղ։

Այն դատավորները, որոնք դատել ու դատապարտել են այս բոլորին, քննե՞լ են, թե նրանցից որն է գողացել ապրելու համար, որը թաղվելու։

Կամ եթե ապրելն արգելված է, թաղվե՞ն էլ է հանցանքների կարգն անցել։

Բանտարկվածների մեջ չկա՞ն այնպիսի ծառայողներ, որոնք պետական միջոցները գողանում են իրենց կանանց թաղելու համար։

Իսկ եթե կան, պետությունը ինչո՞ւ է վախենում նրանցից, չէ՞ որ երբ նրանց կանայք առողջացած վեր կենան, մնոները գողացված փողը էլի կվերադարձնեն պետությանը։

Կամ եթե ծառայողը վարձատրվի այնքան, որ բավականանա նրան թե՛ ապրելու, թե՛ մեռնելու համար, էլ ինչո՞ւ պիտի գողանա։

Մեր առջև, ապրելուց ու մեռնելուց զատ, ուրիշ ճանապա՞ր էլ կա։

Ասացե՛ք։ Ո՞վ պիտի այս ֆինանսական կնճիռները սրբի մեր ժողովրդի ճակատից…

Դուք կարդացե՞լ եք Վիկտոր Հյուգոյի «Թշվառները»։

Այնտեղ Ժան Վալժանը՝ որպես ազնիվ գող, փառաբանվում է բոլոր տասը հատորներում։

Այնտեղ կա մի եպիսկոպոս, որ գողության դեմ պայքարում է՝ թույլ տալով, որ իր ննջարան մտած գողը հավաքի-տանի իր ունե-

ցած բոլոր արծաթեղենը։

Նա սուտ քուն է ձևացնում, որ գողը չվախենա իրեն կողոպտելուց։

Դրա համար էլ այսօր Ֆրանսիայում գողությունը վերացած է։

Ինչո՞ւ չհետևենք նրա օրինակին։

Ամենօրյա մահկանացուն[26]

Եթե մարդը լուրջ կերպով է աշխարհ գալիս և կյանքի մեջ որևէ իմաստ է գտնում, նա իր կյանքում մի անգամ ծնվում, մի անգամ էլ մեռնում է։ Իսկ այն մարդը, որ կատակով է գալիս աշխարհ և նրանում ոչ մի լուրջ բան չի նկատում, մի անգամ ծնվում, տարվա 365 օրերում իրար հետևից մեռնում է, դեռ նահանջ տարում էլ մի անգամ ավելի։

Երկրորդ տեսակի մարդկանցից է Օֆելյայի ամուսին Սարգիսը։ Նրա համար աշխարհը մի գինու կարաս է, իսկ ինքը՝ լողվոր այդ կարասում։

Օրական ութ ժամ աշխատում, մնացյալ ժամանակ խմում է, իր տան հասցեն կորցնում։

Սարգսի կինն ինչքա՞ն լավատես պետք է լինի, որ կարծի, թե ոտների վրա օրորվող իր ամուսինը, բազմաթիվ «անցումներից» ողջանդամ ազատված, տուն պիտի վերադառնա։ Անցումներ, որոնք հաճախ պահանջում են երկու աչքի տեղ չորս աչք։

Այնպես որ, ամեն առավոտ, երբ կինը մարդուն ճամփու էր դնում, մտքի մեջ սկսում էր նրա թաղման պատրաստությունը տեսնել՝ հանկարծակիի չգալու համար։

Գեղեցիկ կին էր Օֆելյան։ Երբ հարցնում էին՝ մարդ ունե՞ս, պատասխանում էր.

- Հաստատ չեմ կարող ասել. եթե «սալամաթ» տուն վերադարձավ, ունեմ, եթե մեքենայի տակ ընկավ, ջախջախվեց, չունեմ։ Երեկոյան հայտնի կանի...*

Այս վիճակում Սարգիսը, երևակայեցեք, չորս երեխա ուներ։ Թե ինչպե՞ս է ժամանակ գտել այդքան երեխայի տեր դառնալու, չգիտեմ։

Սարգիսը տուն էր մտնում՝ հայհոյանքը շուրթերին։ Կնոջ վրա

* Սալամաթ (բրբ.) - այստեղ՝ անվնաս։

սաղ տեղ չէր թողնում: Իսկ մենք գիտենք, որ սերն է երեխա ծնում և ոչ հայհոյանքը:

Նշանակում է՝ Սարգիսն իր ամուսնական կյանքում չորս անգամ սիրել է իր կնոջը: Եթե այո, դա քիչ բան չէ՝ համեմատած այն կանանց հետ, որոնք մի անգամ էլ չեն սիրվում...

... Ու Օֆելյային պատկերանում էր՝ իր ամուսինը տուն է գալիս մեքենայի տակ ճխլված գանգով, ոտները ծնկներից կոտրված... տուն չի գալիս, այլ ընկած է փողոցի պատի տակ, և միլիցիան տիրոջն է փնտրում, որ հանձնի նրան:

Տեր էր կանգնում, ինչ աներ:

Թաղման համար բժշկի վկայականին էր վազում և հերթ կանգնում այն սգավորների հետևը, որոնք նույն խնդրով էին բժշկի եկել:

Երբ հերթը Օֆելյային էր հասնում, բժիշկն ասում էր.

- Մեռածին պիտի անատոմիկում ուղարկեմ հերձելու, որպեսզի վկայական տամ:

- Ինչ ես ասում, բժիշկ, այն ժամանակ իսկապես պիտի մեռնի ամուսինս:

- Իսկ հիմա իսկապես չի՞ մեռել:

- Ո՛չ, մի քանի տոկոս հույս ունեմ, որ կենդանի տուն կգա:

- Թեական մեռելին ես չեմ վկայի, երբ հաստատ մեռնի, արի՛:

- Նա ամեն օր է մեռնում, բժի՛շկ, ես ժամանակ ունե՞մ գալու: Նախապես վկայականը տվե՛ք, երբ մեռավ, թաղեմ:

- Նախապես վկայական չենք տալիս:

- Այն ժամանակ վկայական մի տվեք. մահվան աբոնեմենտ* տվեք, ամեն օր մեկը կտրեմ ու թաղեմ: Ես զբաղված կին եմ, խղճացե՛ք ինձ:

- Ա՛յ կին,- ասում է վերջում բարեհոգի բժիշկը,- մենք կյանքի մեջ միայն մի անգամ ենք մեռցնում մարդուն. առբաժինը** մեզ խիստ նկատողություն է անում, մենք կարո՞ղ ենք նույն մարդուն տարեկան 365 անգամ մեռցնել:

Եթե մարդը մի անգամ ծնվի ու 365 անգամ մեռնի, էլ աշխարհում մա՞րդ կմնա...

---

* Աբոնեմենտ - բաժանորդագիր:

** Առբաժին - առողջապահության բաժին:

Օրենքով մեկ մահ, մեկ ծնունդ է։

Օֆելյան բժշկի մոտից ելնում է, միլիցիա գնում (իհարկե միշտ երևակայությամբ), թե.

- Իմ մարդը ամեն օր մեքենայի տակ է ընկնում, վերցրեք նրա անձնագիրը։

- Պետք է վարորդների անունները տաս, որ առաջին հերթին նրանց պատասխանատվության կանչենք,- ասում են։

- Բայց դեռ չի ընկել։

- Սպասի՛ր թող ընկնի։ Մենք չենք կարող ավանսով ձերբակալել բոլոր վարորդներին։

Միլիցիայում էլ այսպես են ասում։

Մնում է թաղման բյուրոն. տեսնենք նա՞ ինչ է ասելու։

Իսկ նա ասում է.

- Մենք մարդուն այդքան գերեզման հատկացնել չենք կարող։ Մի քիչ էլ սպասի՛ր, մինչև կրեմատորիան պատրաստ լինի։ Այն ժամանակ կայրենք...*

Կինը ճիչ է արձակում «այրելու» վրա ու տուն վազում իրենից կախվածն անելու, իսկ դրսի գործերը թողնելու բախտի բերմանը։

Իսկ ինչ անելիք ունի կինը իր մեռած կամ մեռնելիք ամուսնու վրա, եթե ոչ նստել և դառնապես ողբալ նրա անդառնալի կորուստը։

Սատանայական բան...

Այստեղ էլ են տվյալներ պետք։

Կինը հաստատ պիտի իմանա, թե իր ամուսնու ո՞ր մասն է ընկել մեքենայի տակ, որ այն ողբա։ Վերջապես մի կոնկրետ անդամ, որովհետև սգավորների մոտ ընդունված չէ համախառն վիշտ։

Հուսահատված այս բոլոր դժվարություններից՝ կինը թողնում է՝ ամուսնու դիակը մնա անթաղ ու հոտի...

Ա՜խ գինի, գինի։ Ինչե՞ր չես անում դու։

Բայց երևակայեցեք՝ օրական մեկ-երկու թաս խմողին գինին զվարթացնում և հետաքրքիր է դարձնում։

Մեր նախկին վարչապետ Խրուշչովը նույնպես խմող էր, բայց չափավոր։

* Կրեմատորիա - դիակիզարան։

Իր ամբողջ կյանքում թափառեց աշխարհում, ո՛չ մեքենայի տակ ընկավ, ո՛չ էլ Անգլիայի կամ Ֆրանսիայի պատի տակ գիշերեց։

Երբ իր պաշտոնից ընկավ, հարբած չէր։

Ի՞նչ է, միայն հարբելի՞ս է մարդ ընկնում...

Երկիրն ազդում է երկրի վրա

Մեզ ծանոթ երկու դրախտ գոյություն ունի. մեկը երկրի վրա է, մյուսը՝ երկնքում։

Այդ դրախտները կառուցված են այնպես, որ մարդը չկարողանա երկուսն էլ վայելել։

Երկրի վրա դրախտ վայելողն իրավունք չունի վայելել նաև երկնայինը, և ընդհակառակը։

Մեզ մոտ համարյա բոլոր մարդիկ գերադասում են երկրային դրախտը։ Իսկ այդ դրախտ տանող միակ ճանապարհը գողությունն է, որը ընթացիկ բառով «փափախ» է կոչվում։

Մի մարդ միայն հրաժարվեց գողությունից, որ երկնային դրախտին արժանանա։

Այդ մարդը մտավ խանութ՝ աշխատելու, բայց որովհետև ո՛չ թերաչափեց, ո՛չ թերակշռեց, դիրեկտորը մյուս օրը դուրս արեց նրան՝ ասելով.

- Ազնիվ մարդ մեզ պետք չէ։ Ազնվությամբ դո՞ւ ապրես, բաժնի վարի՞չն ապրի, ե՞ս ապրեմ, թե՞ իմ վերադասը։

Գնաց դատավոր դարձավ մարդը։

Երբ մարդասպանը, կաշառքը վերցրած, դատարան էր մտնում և ասում նրան.

- Ա՛ռ քո կաշառքը, ինձ ազատիր, գնամ նորանոր սպանություններ կատարեմ, մարդը կաշառքը չէր վերցնում և նրան գնդակահարության էր դատապարտում։ Մարդասպանը վճռաբեկ բողոք էր ներկայացնում Գերագույն դատարան և բողոքում, որ դատավորը կաշառք չի վերցնում։

Եվ ի՞նչ։ Այս անլուր հանցանքի մեջ բռնված դատավորին կանչում և ասում էր Գերագույն դատարանը.

- Էհ՛ե, բարեկամ։ Այդ որտե՞ղ ես։ Առանց կաշառքի ե՞ս ապրեմ, դո՞ւ ապրես։ Գրի՛ր, քո դիմումի համաձայն՝ քեզ ազատեմ։

Հետո պահեստապետ դարձավ մարդը՝ շարունակելով ձեռք չմեկնել այնտեղի ապրանքին։

Կանչեց վերադասը և ասաց.

- Քո այդ վարմունքով ե՞ս բնակարան կառուցեմ, դո՞ւ բնակարան կառուցես, իմ վերադա՞սը, քո ստորադա՞սը։ Հետո էլ ե՞ս ավտոմոբիլ գնեմ, դո՞ւ գնես, մեր վերադասն ու ստորադա՞սը գնեն... Ձեղա՛վ, գրի՛ր, համաձայն քո դիմումի՝ քեզ ազատեմ։

Այսպես այդ մարդն ուր գնաց աշխատելու, իր դիմումի համաձայն ազատվեց։

Եվ որովհետև անգործ մնալով՝ սովամահության դատապարտվեց, այդ պատճառով գրեց Աստծուն, որ իր դիմումի համաձայն՝ իր հոգին առնի։

Հարգեց Աստված նրա դիմումը և հոգին առավ։

Պետք էր տեսնել, թե ինչպե՞ս էր երկինք շտապում՝ երկնային դրախտը գնալու համար։

Երկնքում եղավ կարճ դատաստան։ Մարդը, փաստերով ապացուցելով իր արդար լինելը, խնդրեց իրեն ընդունել երկնային դրախտ։

Այն ժամանակ Աստված օրորեց իր գլուխը՝ ասելով.

- Ավա՜ղ սիրելիս, սա այլևս նախկին դրախտը չէ։ Մեր դրախտը հիմա սովխոզ է դարձել և այնտեղ էլ ապրելու համար պիտի գողանալ։

- Ես չեմ գողանա,- ասաց մարդը։

- Այն ժամանակ դժոխք պիտի գնաս։ Հիմա նախ արդար մարդ գոյություն չունի, իսկ եթե ճարվում են այնուամենայնիվ քեզ նման շշմածներ, նրանք էլ դժոխք են գնում։

- Դժոխք կերթամ, բայց չեմ գողանա։ Ցույց տուր դժոխքի ճամփան։

Աստված մի հրեշտակ կանչեց, որ մարդուն տանի հանձնի սատանային, դառնա։

Սատանան դժվարությամբ ընդունեց նրան՝ ասելով.

- Ջուր տեղը դու էլ չգողացար։ Ըստ նոր կարգադրության՝ արդարները դժոխքին են հանձնվում։ Բայց որովհետև հիմա այլևս արդար մարդ չի մնացել, ես դժոխքի իմ բաժանմունքները փակեցի, միայն մի կպրի կարաս եմ տաքացնում՝ քեզ նման մոլորված մարդ-

կանց տանջելու։ Ուզո՞ւմ ես, մտիր կարասը, կուպրն արդեն եռում է։

Մտավ։ Ու չնայած անլուր տանջանքին, էլի չհամաձայնեց գողանալ։

Պիտի ասեք՝ դժոխքում ի՞նչ կար՝ ի՞նչ գողանար։ Այդպես չէ։ Ասֆալտապատման համար գալիս էին նրանից թանկ գնով կուպր էին ուզում, չէր տալիս։ Ասում էր՝ ավելի լավ է այդ կպրի մեջ տապակվեմ, քան գողանամ, ծախեմ...

Եվ չծախեց։

Արդ, տեսնո՞ւմ եք ինչ դարձավ աշխարհը։ Փոխանակ երկիրը երկնքից արդարություն և մաքրություն սովորելու՝ երկինքը երկրի բոլոր կեղտերը յուրացուց։ Այնպես, որ մաքուր մնաց մի դժոխք, մի կպրի կարաս, մի ազնիվ մարդ ամբողջ աշխարհում։

Իսկ մի մարդու համար դժոխք պահելը մեծ ծախս է նստում Աստծու վրա։

Այդ պատճառով էլ աշխատում են այդ միակ մարդուն գողություն սովորեցնել։

Իսկ այդ կարող է անել միայն կինը։

Հիշեց Աստված Ադամ-Եվայի պատմությունը և մտածեց դժոխքի Ադամին մի Եվա տալ, որ խաբի իր մարդուն, իսկ ինքը բարկանալով երկուսին էլ դուրս վռնդի դժոխքից և դռները փակի ընդմիշտ։

Աշխարհի երկրորդ ստեղծագործությունը

Այս գիշեր աչքս հազիվ էի փակել, մեկ էլ տեսա՝ երկու հրեշտակ հայտնվեցին, թե՝ Աստված քեզ շտապ կանչում է։

Վեր կացա, գնացի։ Ի՞նչ անեի, Աստծու հրամանը կարելի՞ է չկատարել։

Գնացի, տեսնեմ՝ երկինքն իրար է անցել։

- Ի՞նչ է պատահել, Տե՛ր Ամենակալ,- ասում եմ։

- Ա՛յ տղա,- ասում է Տերը,- ամերիկյան ընտրությունները շուտով վերջանալու են, հավանաբար Գոլդուոտերն[27] ընտրվի, այն ժամանակ՝ աշխարհի վերջ։ Մենք պետք է երկրորդ աշխարհ ստեղծելու պատրաստություն տեսնենք։

Ասացի.

- Շատ ճիշտ ես մտածել, Տե՛ր, բայց չպետք է խուճապի մատնվել։

Աշխարհ ստեղծելը փոխնորդ փոխել չէ, որ շաբաթը մեկը հագնես։ Աշխարհը պետք է լինի հավիտենական։

Եվ սկսեցի շարադրել իմ տեսակետը։

- Աստվա՛ծ,- ասում եմ,- դու քո առաջին ստեղծագործությունը շատ լավ սկսեցիր, բայց սխալ վերջացրիր, այդ պատճառով էլ այսօր կործանվում է աշխարհը։

Դու Ադամ-Եվա ստեղծեցիր, դրեցիր դրախտի մեջ, որ ուտեն-խմեն ու միայն իրար սիրեն։ Ահա դրանով էլ պետք է վերջացնեիր ամեն բան։ Դա կլիներ իդեալական աշխարհ։ Մնացածն ինչ արեցիր, սխալ արեցիր։

Ինչ կարիք կար խնձորի պատմությունը մեջ գցել և պատմական ասպարեզ քաշել սատանային։ Ինչո՞ւ վռնդվեին Ադամ-Եվան դրախտից, ինչո՞ւ մահկանացու դառնային և անվերջ ծնեին-մեռնեին, ծնեին-մեռնեին։ Դա պարզապես ջուր ծեծել է նշանակում։ Գիտես քո այդ չմտածված արարքիդ պատճառով կյանքը որքան բարդացավ և ինքն իր մեջ խճճվեց։

Ամենից առաջ՝ ինչ կարիք կար, որ մարդիկ բազմանային։ Մի զույգ Ադամ-Եվայի ներկայությունը նորություն էր աշխարհում, իսկ նրանց կրկնությունը՝ անիմաստ բան։ Մի բանը մի քանի անգամ կրկնում են, որ հասկանալի դառնա, իսկ աշխարհի առաջին զույգը պարզ ասաց, որ «մենք ստեղծված ենք միայն իրար սիրելու համար»։ Սեր։ Աշխարհի միակ հասկանալի բանը։

Մարդկային զույգերի անմիտ կրկնությունից առաջ եկան ազգեր, որոնց կարիքը ոչ ոք չէր զգացել։ Առաջ եկան և սկսեցին իրար կոտորել։ Ստեղծվեց երկու օրենք. մեկով արգելվեց, որ մարդը մարդուն սպանի, մյուսով թույլ տրվեց, որ ազգը ազգ բնաջնջի։

Եթե աշխարհում գոյություն ունենար միայն մի Ադամ և մի Եվա, նրանք հասկացողություն չէին ունենա ամուսնական անհավատարմության մասին։ Աշխարհում կլիներ մի կին, մի տղամարդ. ո՞ւմ հետ պիտի անհավատարիմ լինեին։

Չէր լինի տգեղի և գեղեցիկի գաղափար։ Դու կարող էիր առաջին զույգին ստեղծել ամենաայլանդակ կերպարանքով, և նրանք կզմայլեին իրար երես նայելիս, որովհետև իրենցից զատ ուրիշը չէր լինի, որ նրանց հետ համեմատվեին։

Այն ժամանակ չէին լինի ազգեր, դրա հետ միասին գոյություն

չէին ունենա «ազգասիրություն» և «ազգի դավաճանություն» հասկացողությունները, որոնց պատճառով ներկայումս գովաբանվում ու պախարակվում են մարդիկ։

Աշխարհում չէր լինի պրոլետար ու բուրժուա. կլիներ երկու հիմնական դասակարգ՝ արական և իգական, իրար անհրաժեշտ, իրար սիրելի, ու Ադամը Եվայի վրա հարձակվելիս ձայն չէր տա, թե պրոլետարնե՛ր բոլոր երկրների, միացե՛ք։

Որքա՜ն, որքա՜ն ավելորդ գաղափարներ են կապված մարդկության բազմանալու հետ։

Օրինակ՝ «բարություն», «չարություն», «ազնվություն», «գողություն», «կաշառակերություն», «մարդասիրություն»։ Մանավանդ, «մարդասիրությունը»։

Մարդիկ «մարդասեր» են անվանում իրենց միայն նրա համար, որ մարդկանց կոտորեն։ «Հավասարություն» են ասում, որ անհավասար ապրեն։ Իրենք ուտեն՝ մյուսները նայեն...

Աստվա՛ծ, ամեն ինչի քիչն է լավ։

- Կեցցե՛ս,- գոռաց Աստված՝ հանկարծ ինքն իր մեջ ելած, ես՝ իմ հոգին, ճիշտ ես ասում։ Երկրորդ աշխարհը պիտի ստեղծեմ քո ասածի համաձայն։ Փառասեր էի, շատացրի մարդկանց, որ շատ փառավորվեմ։ Բայց ի՞նչ արժեք ունի մարդ արարածի տված փառքը։ Ամբողջ երեսուն տարի Ստալինին փառաբանեց ռուս ժողովուրդը, հետո էլ դիակը գերեզմանից հանեց ու այրեց[28]։

Ապա կանչեց մի Սերովբե և մի Քերովբե։ Սերովբեին պատվիրեց անմիջապես աշխարհ իջնել և սրել ռուսների ու ամերիկացիների հարաբերություններն այնքան, որ սկսեն ատոմային պատերազմ, իսկ Քերովբեին պատվիրեց ցեխ շաղախել, որ Ադամ-Եվա ստեղծի երկրորդ աշխարհի համար։

Այն ժամանակ ես ասացի.

- Տե՛ր Ամենակալ, կարիք չկա նորից ցեխոտվել։ Առաջին ստեղծագործությանը ցեխից շինեցիր առաջին մարդուն, որովհետև պատրաստի մարդիկ գոյություն չունեին աշխարհում։ Հիմա, փառք Աստծու, դու հայր ես և ունես որդի։ Բեր Մարիամին հայտարարիր քո օրինական ամուսինը, պսակիր Քրիստոսին, և դրախտում կապրեք միայնակ։ Քրիստոսը կունենա օրինական ծնողներ, ձեր հարսը, հանձինս քո և Մարիամի, կունենա սկեսրայր ու սկեսուր, և վերջ։

- Ամբողջովին համաձայն եմ քեզ հետ,- ասաց Աստված,- այդպես էլ կանեմ:

Ու խորին շնորհակալություն հայտնելով ինձ՝ ճամփու դրեց:

Հիմա մեն-մենակ երկնքից վայր եմ իջնում և մտքիս մեջ պատկերացնում ապագա աշխարհը՝ իմ ցույց տված կազմով:

...Ու հանկարծ ձեռքս խփում եմ ճակատիս՝ ասելով.

- Ինչ արեցի ես, ինչ արեցի... Աստծու տունն իմ ձեռքով քանդեցի: Վաղը պիտի մի ջահել հարս բերի, իր պառավ կինը նայի հարսին և սկսի խանդել:

Ինչ կլինի խեղճ Աստծու դրությունը:

Դրախտն անմիջապես դժոխքի կփոխվի: Եվ դրա պատճառը կլինեմ ես:

Ուստի հաջորդ առավոտվա իմ աղոթքում խնդրեցի Աստծուն չիրագործել մեր ծրագրած աշխարհը և սպասել իմ լրացումներին...

Սեր և ատելություն

Այս զույգ զգացմունքները պետք է որ միասին ծնված լինեն մարդու սրտում:

Այո՛, միասին են ծնունդ առել, բայց հավասար զարգացում չեն ունեցել: Ատելությունը մղոնանոց քայլերով առաջ է գնացել, իսկ սերը, համարյա միևնույն տեղը կանգնած, գետինն է դոփել:

Ինչ է սերը:

Սերը զուտ ամուսնական հասկացողություն է, որ իրար է կապում ամուսնացած զույգերին: Դրանից զատ գոյություն ունեցող որդեսիրությունը, ազգասիրությունը, մարդասիրությունը սիրո երկրորդական լրացումներն են, որոնք կարող են լինել և չլինել:

Սերն ընդհանրապես թե՛ բառապաշարով, թե՛ գործողության ազատություններով շատ աղքատ ու պրիմիտիվ է եղել:

Իր ծագումից մինչև այսօր դարեր շարունակ մարդը կնոջ կա՛մ հոգուն է մեռել, կա՛մ ջանին մատաղ եղել: Այն էլ միայն ամուսնության առաջին տարիներին:

Մի՞թե խղճուկ կարողության տեր սերը երբևէ կարող է մրցել օրը օրին հզորացող ատելության հետ:

Ատելությունը քաղաքակրթվել, եկել հասել է ատոմային ռումբի,

իսկ սերը ապրում է իր երանելի քարե կացնի ու նետ-աղեղի դարում։

Հոգուդ մեռնեմ, ջանիդ մատաղ...

Ատելությունն առանց սուր քաշելու էլ, միայն հայհոյելով կարող է բնաջնջել իր հակառակորդին։

Նա կարող է քո բոլոր դավանած սկզբունքների մի ծայրից բռնել, մյուս ծայրից դուրս գալ...

Դե եկ ու պատասխան տուր։

Մեր երկիրը, համեմատած տիեզերքի մյուս մեծ մոլորակների հետ, մի փոքր գավառական մոլորակ է։

Ինչ պատասխան պիտի տա սերը, եթե մի օր վերադաս մոլորակից ռևիզիա գա՝ իր գործերն ստուգելու։*

*Հանձնաժողովը պիտի մտնի ատելության զինանոցը, տեսնի այնտեղ մեծ կալիբրի թնդանոթներ, բնաջնջող գնդացիրներ, հրթիռներ ու ատոմային ռումբեր՝ կազմ ու պատրաստ ամենայն րոպե աշխարհը շուռ տալու, իսկ սիրո զինանոցում... Հոգուդ մատաղ։ Պետք չէ՞ր, որ սերն էլ մի փոքր զենք ունենար, ասենք՝ մի փշտով**, մի տապանչա***, ... որ պատահած տեղը վախեցներ այն աղջկան, որ մերժում է տղայի սիրո առաջարկությունը։*

Ինչ եք կարծում, ռևիզիան, տեսնելով, որ սերը իր ծնած օրից ոչ մի նոր քայլ չի արել, իսկ ատելությունը այսպիսի բարձունքների է հասել, չի՞ փակի սիրո բաժանմունքը երկրի վրա՝ որպես անհեռանկար զգացմունքի։

Կփակի՛։

Կփակի ու զարկ կտա ատելությանը։

Սիրող մարդ ու կնոջ արանքում կտեղադրի մի այնպիսի հեռազարկ թնդանոթ, որ սիրող զույգերը չհամարձակվեն մի քայլ իսկ իրար մոտենալ։

Ա՜խ, ուր էր, որ այսպիսի մի խիստ քննություն կատարվեր աշխարհում, և շարքից հանվեին բոլոր այն ավելորդ զգացմունքներն ու կյանքի գործոնները, որոնք իզուր տեղ են գրավում։ Անունով կան, ամանում չկան։

Օրինակ՝ վերցնենք ազնվությունը։

---

* Ռևիզիա ***(ревизия)*** - ռուս. վերստուգում։

** Փշտով - հին տիպի միհարվածանի ատրճանակ։

*** Տապանչա - դաբանչա (tabanǧa) - թրք. հին ձևի ատրճանակ։

Ներկայումս ի՞նչ խոսք կարող է լինել ազնվության մասին, երբ աշխարհը ծփում է գողության և կաշառակերության մեջ։

Եթե անգամ ճարվի մի ազնիվ մարդ, արժե՞ դրա համար երկու հոգիանոց շտատ պահել։*

Ո՛չ։ Ձուլի՛ր անազնվության մեջ, թող կորչի։ Մենք չենք կարող այդքան գերածախս տալ։

Եթե Աստված հաջողի, այդպիսի մի ռևիզիա գա աշխարհ, ես նրա ուշադրությունը կհրավիրեմ հիմարության և իմաստության վրա։

Ցույց կտամ մարդկանց գործած անսահման հիմարությունները և կասեմ.

- Հապա՛, ցո՛ւյց տուր մի խելոք բան, որ անում է մարդը։

Հանձնաժողովին կտանեմ, կկանգնեցնեմ փողոցում պառկած մի մարդու գլխին ու կասեմ.

- Այս մարդն ունի վեց անձից բաղկացած ընտանիք, ինքն առնում է օրական երեք ռուբլի աշխատավարձ, վեց ռուբլով մի լիտր օղի է առնում խմում, թավալվում է փողոցի պատի տակ կամ, գլուխը պատերին զարկելով, օրորվելով տուն գնում։

Կասեմ՝ խմելը դեռ ոչինչ, խմողը, իր գլուխը պատերին զարկելով, հույս կա, որ մի օր ուղղվի, իսկ ի՞նչ կասեք այն մարդուն, որ, պապիրոսը բերնին օրնիբուն, փստացնում է։

Փստացնում է փակ սենյակում՝ թունավորելով իր երեխաների շնչած օդը և հետո էլ իր ծխնելույզ բերանով մոտենում է՝ համբուրելու կնոջը...

*Ի՞նչ համ պիտի ունենա այդ «կապչոննի»** համբույրը՝ այդ էլ դուք ասացեք։*

Հետո հանձնաժողովին կտանեմ ստադիոն և կասեմ.

- Նայեցե՛ք, տասը հազար մարդ կրկնակի գնով տոմսեր է գնել և եկել բացօթյա, անձրևի տակ նստել թամաշա է անում այն մի քանի երիտասարդներին, որոնք ոտքով գլորում են ֆուտբոլ կոչվող մի գունդ, որը լցված է... օդով։

Կասեմ՝ եթե օդը, այս ու այն կողմ թռչելով, տասը հազար մարդ է գրավել, հապա քանի՞ հարյուր հազար մարդ պիտի գրավեր, եթե

---

* Շտատ ***(штат)*** - ռուս. հաստիք՝ պաշտոնի՝ ծառայողի հաստատուն տեղ, դրույք։

** Կապչոննի ***(копченный)*** - ռուս. ծխահարած։

գնդակի մեջ, օդի փոխարեն, լիներ մի մսխալ խելք...

Կամ՝ խելքն արդյո՞ք այդքան մարդ կհավաքեր իր շուրջը։

Հազիվ թե։

Հիմարությունը մագնիսի պես իրեն է քաշում մարդկությանը, իսկ իմաստությունը ընկել է Ռոբինզոն Կրուզոյի անմարդաբնակ կղզին, մեն-մենակ...

Ապացո՞ւյց։

Ապացույցն այն է, որ հիմարությունն ու ատելությունը միացած պատերազմներում դեմ դեմի են կանգնեցնում միլիոնավոր դեռ կյանքը չճաշակած երիտասարդների և գետին թավալեցնում արնաշաղախ, իսկ իմաստությունն ու մարդասիրությունը միացած մինչև օրս չեն կարողացել մի մեռած մարդու կենդանություն պարգևել։

Այս տեսնելով՝ ինչ եք կարծում, հանձնաժողովը չի՞ փակի իմաստության բաժինը և կյանքի ղեկը հանձնի հիմարությանը։

Այդպես էլ կանի, որովհետև աշխարհը անկելանոց չէ։ Այնտեղ պիտի գոյություն ունենան միայն կենսունակ գաղափարներ։

Այսինքն՝ ատելությունը, հիմարությունը, գողությունն ու կաշառակերությունը։

Խոսքս վերջացնելուց առաջ պետք է ասեմ, որ շատ քիչ խելք է հարկավոր առհասարակ։

Ապացույցն այն է, որ Ռուսաստանի ամբողջ երկու հարյուր վաթսուն միլիոն բնակչությունը, իր գլխի դռները կողպած, տասնմեկ տարի Խրուշչովի գլխով մտածեց, երեսուն տարի՝ Ստալինի...

Հոդվածների վերնագրերը

Մեր թերթերը միօրինակությունից խուսափելու համար աներևակայելի ջանքեր են թափում, որ իրենց հոդվածների վերնագրերը զանազանակերպ լինեն։

Եթե մի վերնագիր բաղկացած է հինգ տառից, տառերից մեկը գրվում է կանգնած, մեկը՝ կռնակի վրա պառկած, մյուսը՝ բերանքսիվայր, չորրորդը՝ ծունկի եկած, հինգերորդը՝ գլխիվայր կախված։ Եվ ընդհանրապես այն տպավորությունն է գործում ընթերցողի վրա (եթե կա այդպիսին), որ այդ վերնագիրը գժանոցից

* Մսխալ- ծանրության հին չափ, որ հավասար է մեկուկես գրամի:

փախած ճճան ծամերով մի կին է՝ իր բոլոր շորերը շրջոնք-շիտակ** հագած։*

Ինչն է պատճառն այս երևույթի։

Պատճառն այն է, որ այդ հոդվածներն իրենց անհետաքրքրության պատճառով չեն կարդացվում, ու խմբագիրներն այդ հոդվածների վրա ուշադրություն հրավիրելու համար արտառոց վերնագրով են մատուցում չընթերցողին։ Իսկ այդ նմանում է այն բանին, որ մի անհետաքրքիր օրիորդ իր վրա ուշադրություն հրավիրելու համար, ասենք, վեր կենա, զոա։

Ախր, չէ՞ որ գեղեցկությունը տարօրինակության մեջ չի կայանում։

Եվ վաղը, եթե Մեսրոպ Մաշտոցը հարություն առնի, գա մեր թերթերի վերնագրերը վերծանելու, անկարելիության կբախվի և կերթա՝ մի նոր տեսիլքով երկրորդ անգամ հայերեն տառեր ստեղծելու՝ եղածը համարելով անհույս։

Եթե մեր թերթերի խմբագիրները վերնագրերի վրա թափած ավելորդ ջանքերի մի քառորդը հոդվածների բովանդակության վրա թափեին, վերնագրերն իրենց կարգի կբերեին և համեստ արտաքինով կկանգնեին հոդվածների գլխին։

Եթե թերթերի հոդվածները համարենք գրականություն, գրականությունն էլ՝ կյանքի հայելին, պիտի սխալվենք, որովհետև կյանքի վերնագրերն այդքան այլանդակ չեն։

Իսկ եթե այլանդակությունը պիտի գերադասվի միատեսականությունից, ինչո՞ւ այդպիսի արտոնություն վայելեն միայն թերթերի վերնագրերը և ոչ ընդհանրապես մարդկային կյանքը։

Վերցնենք պետական կազմը։

Եթե հոդվածն ունի իր վերնագիրը, երկիրն էլ ունի իր վարչապետը։

Ինչո՞ւ Խրուշչովն ամբողջ տասնմեկ տարի կառավարեց երկիրն առանց որևէ փոփոխության։ Նրա միակ փոփոխությունն այն էր, որ մեր գյուղատնտեսությունը դարձնում էր մերթ իր աջ, մերթ ձախ կողքի վրա՝ մեկի անունը դնելով կոլխոզ, մյուսինը՝ սովխոզ։

Ու այսպես անվերջ իր աջ ու ձախ կողքերին շուռ գալուց հոգնած՝

---

* Ճճան (բրբ.) - գլխի մազերը անխնամ խոնված՝ խճճված։

** Շրջոնք- շիտակ (բրբ.) - թարս ու շիտակ։

այժմ էլ մեր գյուղատնտեսությունը կռնակի վրա է պառկած՝ ուժ չունենալով տեղից շարժվելու: Եվ հետո, բազմազան լինելու համար կոլխոզն ու սովխոզն էլ քիչ են: Հարկավոր են բազմաթիվ «խոզ»-եր, որպեսզի դրանցից որևէ մեկը մեր ժողովրդին կերակրի:

Իսկ Խրուշչովը՝ ո՛չ: Ժամացույցի ճոճանակի նման՝ կոլխոզ-սովխոզ, սովխոզ-կոլխոզ:

Խրուշչովը, սակայն, մի խնդրում պետք եղածից բազմազան էր:

Ինչպես մի ժամանակ Աստված, այնպես էլ Խրուշչովն «ամեն տեղ» էր՝ Անգլիա, Ֆրանսիա, Ինդոնեզիա, Եգիպտոս, Ամերիկա, Շվեդիա, Նորվեգիա:

Միայն ափսոս Մեքքա[29] և Մեդինա[30], կամ Երուսաղեմ[31] չանցավ մուղդուսի* կոչվելու համար:

Բայց սրանով չկարծեք, թե ես միօրինակության կողմնակից եմ:

Ո՛չ: Ես ուզում եմ, որ երկրում ընտրություններին երկու թեկնածու լինի, և ժողովուրդը դրանցից մեկին ձայն տա: Եվ ոչ թե մի մարդ ինքն իրեն ընտրի ու ցմահ նստի:

Չորս տարին մի անգամ աթոռից վեր կենալն առողջապահական տեսակետից էլ օգտակար է. տեխնիկական աշխատողին դյուրություն կընձեռվի, որ նա վարչապետի տակի ներքնակի մթելը լվանա, մեջի բուրդը չբխի, փափկացնի: Թե չէ ինչ են մեր վարչապետների տակի ներքնակները: Անվերջ նստելուց քարացել են, դարձել են քեչա:

Զրույց մի ափ հողի հետ

Զարմացա՞ք՝ կարդալով այս վերնագիրը:

Ո՛չ, մի՛ զարմացեք. գրականության մեջ դա սովորական երևույթ է:

Գրականության մեջ մեռելներն են խոսում, սարերն են խոսում, քարերն են խոսում:

Ինչո՞ւ մի ափ հողը չպիտի խոսի:

Շեքսպիրի գլուխգործոց «Համլետի» մեջ դրամայի գաղտնիքը բաց է անում մի մեռած մարդ՝ Համլետի հայրը:

Եթե այդ մեռած մարդը չլիներ, մենք մինչև այսօր էլ չէինք իմանա, թե ով սպանեց Համլետի հորը:

---

* Մուղդուսի - Երուսաղեմ ուխտի գնացածին տրվող պատվանուն:

Եվ հատկանշական է այն, որ այդ հայտնությունը մեռյալը կատարել է ոչ թե ծածուկ, անկյուններում, այլ հրապարակով, բեմի վրա, հազարավոր հանդիսատեսների ներկայությամբ, և ոչ մեկը չի ասել՝ սուտ է։

Տասնյակ տարիներ հայ բանաստեղծները, Հայկական հարցը ոտանավորի վերածած, դրել են մեծ պետությունների առջև և խնդրել են իրենց խոսքն ասել ու չեն ասել, մինչև որ մի բանաստեղծ էլ հուսահատված դիմել է Հայաստանի լեռներին՝ ասելով.

Անխղճորեն մեզ դատում են,

Խոսե՛ք, Հայաստանի լեռներ...

Այն ժամանակ լեռները չխոսեցին, որովհետև դեռ չէր կատարված թուրքահայերի բնաջնջումը։

Եթե բանաստեղծն այդ եղեռնից հետո ստիպեր լեռներին խոսել, ես հավատացած եմ, որ նրանք պիտի խոսեին...

Նրանք խոմ մեծ պետություն չեն։

Էլ չեմ խոսում մեր ժողովրդական հեքիաթների մասին, որտեղ ամեն անշունչ առարկա, բացի մարդուց, խոսում է։

Մեջ չեմ բերում առակագրքեր, որոնց մեջ բոլոր անասունները դարձել են ասուն։

Այնպես որ, ես շատ եմ խնդրում հավատալ ինձ։ Ինձ, որ ամբողջ կյանքում միայն ճշմարտությունն եմ գրել և ոչ մի սուտ երբեք։

Արդ այսպես ձեզ հավատացնելուց հետո, ես սկսում եմ իմ զրույցը հողի հետ։

- Բարև Ձեզ, Դուք որտեղի՞ հողն եք։

- Գերեզմանոցի։

- Ինչ լավ պատահեցինք։ Վաղուց էի ուզում պատահել մեկին, որ ինձ տեղեկություններ տար մեռելների կենցաղի մասին։

- Խնդրեմ, պատրաստ եմ։ Բոլոր մեռելներն իմ տնվորներն են։ Ես եմ տեղավորում։

- Մի՞թե։ Իսկ ինչպե՞ս է Ձեզ մոտ բնակարանային վիճակը։ Դուրս մնացող մեռելներ կա՞ն։

- Բոլորովին։ Ձեզ մոտ բնակարանային կրիզիս է այն պատճառով, որ ընտանիքները չեղած անդամներ են ավելացնում իրենց թվին՝ երեք սենյակ ստանալու համար։ Այնտեղ, ընդհակառակը, մեռնողներն իրենց ընտանիքի իսկական անդամներին իսկ չեն ու-

զում իրենց հետ գերեզման բերել: Դրա համար մեզ մոտ այդպիսի հարց գոյություն չունի:

- Մեզանում կապիտալիստներ կան, որ միայն ոսկի են դիզում, դրանք որ մեռնում են, չեն կամենում թաղվել ոսկու հանքերում:

- Ոսկի դիզողները բոլորը փոշմանել են: Ասում են. «Մեզ զրկելու փոխարեն՝ ավելի լավ էր ապրեինք»:

- Երբ մեռնում են, ասենք, մի դաշնակցական ու մի բոլշևիկ, դրանք կարողանո՞ւմ են կողք-կողքի պառկել:

- Շատ սիրով:

- Անգամ կռնա՞կ իրար չեն դարձնում:

- Բոլորովին:

- Ինչ լավ տեղ է այդ գերեզմանը, երանի շուտ մեռնեի... Ուրեմն, այդ երկու կուսակցություններն ասում են՝ մենք հա՛յ ենք:

- Այո՛:

- Այդ համերաշխությունը տեսնելու համար ես շտապ պիտի մեռնեմ, էլ համբերել չեմ կարող:

- Մեզ մոտ առհասարակ ոչ մի թշնամանք գոյություն չունի: Երևակայեցեք՝ թուրքերը չեն կոտորում հայերին:

- Չեմ հավատում:

- Ազնիվ խոսք: Մեզ մոտ բացառված է պատերազմն ու սպանությունը: Ո՛չ գողություն, ո՛չ ավազակություն: Ազգային հարց գոյություն չունի, բոլորը մեռնում են որպես մարդ:

- Իսկ ի՞նչ լեզվով են խոսում:

- Նրանք չեն խոսում:

- Ինչպե՞ս...

- Նրանք իրենց լռությամբ ավելի շատ բան են հասկացնում իրար, քան ձեր Խրուշչովը իր երկար ճառերով:

- Մեղա՛ քեզ...

- Այդպես է:

- Մի ժամանակ մեզ մոտ բոլոր խոսողներին բռնում էին: Արդ եթե Ձեզ մոտ էլ մեկը կամենա մյուսին բռնել, ի՞նչ պիտի անի, երբ նրանք չեն խոսում:

- Մեզ մոտ չեն բռնում:

- Հապա Ձեր բանտերը ինչո՞վ եք լցնում:

- Մենք բանտեր չունենք: Բոլորը մեռնում են կատարյալ ազատության մեջ:

- Ոչ էլ աքսոր:

- Ոչ էլ աքսոր:

- Եթե այդպես է, դա արդեն արքայություն է: Էլ ինչու են մեռելները ձգտում երկնային արքայության:

- Հիմա ոչ մի մեռել չի հավատում արքայությանը, և որոշել են՝ վերջին դատաստանին, ինչքան էլ փողերը հնչեն, իրենք տեղից չշարժվեն:

- Գրողներ կան Ձեզ մոտ:

- Կան:

- Երբ Ձեզ մոտ մեռելները չեն խոսում, նրանք ինչ լեզվով են գրում:

- Լռության լեզվով:

- Լռության լեզվով կգրվի:

- Նրանք մաքուր, չգրված թուղթը դնում են կազմի մեջ, իրենց անունները գրում վրան և լույս են ընծայում:

- Իսկապե՞ս: Երևակայում եմ, թե ինչպես սիրով պիտի սպառի ընթերցողը նման իմաստալի գրքերը... Գրախանութների վարիչներն ուրախանո՞ւմ են Ձեզ մոտ:

- Ինչու՞ ուրախանան:

- Որովհետև ազատվում են չվաճառվող գրքերից:

- Իսկ երբ չի վաճառվում, ինչու՞ են տպում:

- Տպում են, որ գրողն ապրի:

- Դե մեզ մոտ այդպիսի հարց չի կարող լինել, որովհետև այնտեղ բոլորն էլ մեռած են, և ոչ մի հոնորար, ինչքան էլ մեծ լինի, չի կարող ապրեցնել մեկին:

- Ա՜յ մարդ, ասա իսկապես արքայություն է Ձեզ մոտ, էլի: Հիմա մի բան ասեմ. եթե հողի երեսի աշխարհն այսպես գարշելի է, մարդիկ իրար կոտորում, թալանում, գողանում, մեծ վեպեր են գրում, իսկ Ձեզ մոտ այդպես հրաշալի, խաղաղ մեռնում են, լավ չի՞ լինի, որ շուռ տանք հողը այնպես, որ հողի երեսի մարդիկ գետնի տակն անցնեն, իսկ տակի մարդիկ երես բարձրանան, և մեր ամոթալի դեմքը ծածկվի: Սա նման է այն բանին, որ մի դերձակ վերարկու

կարի՝ աստառը մետաքս, երեսը մեշոկ*: Վերջապես ամոթ է, չէ՞: Ուրիշ մոլորակից եթե մարդիկ գան, չե՞ն ասի. «Էս ինչ հիմար մարդիկ են, որ իրենց ներկայանալի երեսը դրել են հողի տակ, գարշելի մասը՝ հողի երեսին»:

- Այդ չի կարելի:

- Ինչո՞ւ:

- Որովհետև կենդանի մարդու կյանքը ժամանակավոր է, իսկ մեռելներինը՝ հավիտենական: Ժամանակավոր կյանքը, ինչքան էլ անտանելի լինի, մի կերպ կարելի է տանել, մարդիկ կասեն՝ կմեռնենք, կպրծնենք: Իսկ եթե հավիտենական կյանքը անտանելի լինի, մեռելը ինչի՞ վրա հույս պիտի դնի:

- Ճիշտ ես ասում: Համոզվեցի: Իսկ չի՞ կարելի ժամանակավոր տեղափոխություն: Մեռելն ու կենդանին կարճ ժամանակով փոխարինեն իրար, հետո էլի իրենց տեղերն անցնեն:

- Այդ ինչի՞ համար:

- Հարցեր կան, որ կենդանությանը անկարելի է լուծել: Այս րոպեիս մեր աշխարհը երկու թշնամի բանակների է բաժանված, ու կամենում են ատոմային պատերազմ: Գիտեն, որ դա աշխարհի կործանումն է, ուզում են հաշտվել, խաղաղ ապրել, չեն կարողանում: Երկու թշնամիներ կարող էին ժամանակավոր մեռնել, գետնի տակ խաղաղության դաշն կնքել, ելնել հողի երես, ապրել:

- Ժամանակավոր հաշտություն նրանք հարբելով էլ կարող են կնքել. բոլոր հարբածներն իրար եղբայրներ են, բայց երբ խելքներն եկավ գլուխները, էլի պիտի կռվեն:

- Ճիշտ է:

- Հապա՛:

- Ա՜խ, այդ գլուխը, գլուխը... մարդու տունն իր գլուխն է քանդել:

- Չե՞ք կարող ազատվել նրանից:

- Մի թեթև հույս կա: Հիմա մարդկությունը ֆուտբոլի է անցել և իր ամբողջ ուժը կենտրոնացրել է իր ոտների մեջ: Հուսով եմ՝ շատ շուտով գլուխը, պատճառաբանելով, որ հիվանդ ու ծեր է, հրաժարականը ներկայացնի մարդուն...

---

* Մեշոկ ***(мешок)*** - ռուս. պարկ, այստեղ՝ կոպիտ, ամուր գործվածք, քաթան:

Արդյունաբերական տոնախմբություն

Մի ժողովուրդ, ինչքան էլ արգավանդ հողի վրա ապրի, որքան էլ պարարտանյութ գործածի, եթե ազգային տոներ չունի, աղքատ է ու անոթի։

Կլիման էլ չի օգնի։ Տեսար գարնանը լավ եղանակ արեց, բույսերն աճեցին, աշնանը մեկ էլ ցուրտ քամին տվեց ու ցրտահարվեցին։

Ազգային տոները, միայն ազգային տոներն են շենացնում, բարիքներով լցնում աշխարհը։

Ինչո՞ւ էին մարդիկ առաջ աղքատ ապրում, որովհետև ունեին ընդամենը մի մնայուն տոն, երկու էլ՝ թեական։

Մնայուն տոնը Նոր տարին էր, որ կապված էր արեգակնային համակարգության հետ, երկու էլ թեական տոներ ունեին, որոնք կախված էին Քրիստոսի Ծնունդից և Հարությունից։

Որ տարին Մարիամը ծնում էր, ծնունդ էին տոնում, իսկ Մարիամի ստերջ տարին՝ միայն Հարություն։

Հարությունը մնայուն էր համեմատաբար, որովհետև հոգու հետ էր կապված, հոգին էլ՝ անանցույթ։ Մեռածը, եթե կամենա, օրական տասն անգամ էլ հարություն կարող է առնել։ Դա ստուգման ենթակա բան չէ, և պետական վերահսկողությունը այստեղ ասելիք չունի…

Մեր կառավարությունը, սակայն, գիտակցելով տոների արժեքը, բռնեց տարվա երկու օրերից մեկը տոն հայտարարեց։

Տոն՝ հոկտեմբերյան հեղափոխության, տոն՝ նոյեմբերյան հեղափոխության, տոն՝ դեկտեմբերյան հեղափոխության։

Տոն՝ հրետանու օրվա, տոն՝ ավիացիայի օրվա, տոն՝ գնդացիրի, երկար հրացանի, կարճ հրացանի, ատրճանակի ու փշտովի։

Տոն՝ Առաջին ինտերնացիոնալում Լենինի արտասանած ճառի, տոն՝ Երկրորդ ինտերնացիոնալում արտասանած ճառի, և Երրորդ, Չորրորդ, Հինգերորդ, Վեցերորդ ինտերնացիոնալներում արտասանելիք ճառերի, որտեղ պիտի արտասաներ, եթե ողջ լիներ…

Տոն՝ կոլխոզի, տոն՝ կոլխոզից սովխոզին անցնելու, տոն՝ սովխոզից նորից կոլխոզին վերադառնալու։

Մի հատ էլ «զապասի» տոն՝ տոնելու այն ժամանակ, երբ կոլխոզը նորից կամենա սովխոզի վերածվել։*

---

* Զապաս *(запас)* - ռուս. պաշար, այստեղ՝ պահեստային։

Եթե չլինեին այս տոները, մեր ոչ մի գործարան, ոչ մի հիմնարկ ու ձեռնարկ իր պլանը չէր կատարի, և տարին կփակվեր վնասով։

Տոները պատճառ են դառնում, որ բոլոր աշխատավորները նախատոնական միջոցներ ծավալեն և իրենց տարեկան պլանները կատարեն հարյուր, երեք հարյուր տոկոսով՝ տալով արտապլանային արտադրանք և աշխատելով երկրորդ տարվա հաշվին։

Այդ պատճառով էլ ահա այսօր երկրում առատություն է։

Չէ, տոները շատ լավ բան են։ Դրանց միակ պակասությունն այն է, որ աշխատանքային օրերին բանվորները մի փոքր ծուլանում են, լավ չեն աշխատում՝ հույսը դնելով տոների վրա։

Նրանք ասում են.

- Ինչ կարիք կա աշխատելու, քանի որ տոնին պիտի «գերակատարենք»։

Մի պակասություն, սակայն, որ չի իջեցնում տոների արժեքը։

Տոնախմբությունն այսպես արժեվորելիս, պետք չէ մոռանալ նաև անհատական սեկտորը։

Տոներն անհատ քաղաքացու տունն էլ են լցնում ամեն տեսակ բարիքով։

Անհատի հիմնական տոները նրա երեխաների ծնունդներն են։

Տարվա մեջ միայն ցամաք հաց վաստակող ընտանիքի հայրն ինչքան էլ քարսիրտ լինի, իր երեխայի ծննդյան օրը ցամաք հացի հետ կուտի նաև պանիր, եթե ունի, իսկ եթե չունի, հացը կուտի, հույս կհայտնի, որ ապագայում պանիր էլ կունենա։

Տոնն առհասարակ այնպիսի բան է, որի ժամանակ շատ դժվար է աղքատ լինել. մարդ գետինն է մտնում։

Զբեր կանայք անգամ, այդ օրը ամոթից... ծնում են։

Զինաթափություն և ժնևի կոնֆերանսը[32]

Երբեմն, երբ մի գյուղացու սայլը խրվում է ցեխի մեջ... Էհե, էս ո՞ւր գնացի։ Կարծում էի՝ առաջվա ժամանակներն են, ու գյուղացին սայլ ունի...

Զեղավ, նորից եմ սկսում։

Երբեմն, երբ մի վարորդի ավտոն խրվում է ցեխի մեջ, ասենք, հիմա ցեխ էլ չկա, բայց ենթադրենք։

Ուրեմն, երբեմն, երբ մի վարորդի ավտոն խրվում է ցեխի մեջ, ու անկարեկից մարդիկ ուսը դեմ են տալիս հանելու, միայն «հա՛, հա՛» են բղավում և ուժ չեն գործադրում այն հաշվով, որ ավտոն տեղից բոլորովին չշարժվի, բայց ցույց տան, որ ուզում են հանել։

Ահա եթե հիմա մի սայլ գոյություն ունենար, այդ սայլը պիտի հիշեցներ, բայց որովհետև չկա, ավտոն է հիշեցնում Ժնևի զինաթափման կոնֆերանսը։

Զինաթափությունը ցեխի մեջ է խրված. տասնութ պետություններ լծված ուզում են դուրս քաշել ցեխից, «հա՛, հա՛» են բղավում, բայց հարցն իր տեղից չի շարժվում։

Իսկ ե՞ս։ Ես մի գիշերվա մեջ զինաթափեցի։

Չեմ մեղադրում տասնութ պետություններին, գուցե իրականում իրոք դժվար է զինաթափվել, բայց երազին ինչ է եղել, չե՞ն կարող քնել և երազի մեջ գլուխ բերել այդ գործը։

Ես գլուխ բերեցի այն մի շատ կարճ երազի մեջ։

Այսպես՝ երազումս Մարս մոլորակն իր գոյության չգիտեմ քանիամյակն էր տոնում, և բոլոր մոլորակների պետություններին տոնախմբության էր կանչել։

Մեր մոլորակից միայն մեծ պետությունները գնացին։ Փոքրերին չտարան, որովհետև դրանց մեջ կային բազմաթիվ աֆրիկյան նորաստեղծ պետություններ՝ ընդամենը մեկ տարեկան, իրենց վարտիքները տակավին ինքնուրույն հանել-հագնելու անընդունակ։

- Կարող են մոլորակը կեղտոտել,- ասին։

- Հիմա պատրաստվում են գնալու մեծ պետությունները։

Հագան իրենց տոնական զգեստները, ծովերի վրայից բոլոր նավերը ներս բերեցին, մի թեթև նախաճաշեցին ու վաղուց չգործածված, ժանգոտված կողպեքները դնելով իրենց պետությունների դռներին՝ դուրս եկան։

Ահա քեզ աշխարհ՝ առանց մեծ պետության։

Երևակայո՞ւմ եք։

Ոնց որ կատուն տանից հեռանա, մկները, իրենց ծակից դուրս գալով, ազատ սկսեն հոտոտել ամեն ինչ, այնպես էլ մանր պետությունները սկսեցին աշխարհի չորս կողմը խլվլալ։

Այդ միջոցին ես ձայն տվի Ալբանիային.

- Այ՛ տղա, այստե՛ղ արի։

Երբ եկավ, Անգլիայի պատուհանը ցույց տալով՝ ասացի.

- Կարո՞ղ ես պատուհանից ներս մտնել:

- Ինչու չէ, ոտներս բարձրացրո՛ւ, մտնեմ,- ասաց Ալբանիան:

Բարձրացրի ու պատվիրեցի.

- Կմտնես ներս, նրա բոլոր զենքերը դուրս կթափես:

Եվ իսկապես էլ, մտավ ու սկսեց թափել: Նա դուրս էր թափում, ես կրում-լցնում էի օվկիանոս:

Ալբանիան ներսից բղավեց.

- Մսի դանա՞կն էլ տամ:

- Եթե սուր է, տո՛ւր,- ասացի:

Զանցավ կես ժամ, բոլոր մեծ պետությունները զինաթափված էին:

Ալբանիան, շորերը թափ տալով, հարցրեց.

- Եթե վերադառնամ, խոմ ինձ վնաս չի՞ սպառնա:

- Էլ ի՞նչ վնաս: Կդառնան մազը կտրած, ուժասպառ Սամսոն[33]: Կուզենաս վեր կկենաս, գլխներին կնստես:

Այս միջոցին երկնքից ոտնաձայներ լսեցի:

- Ամեն պետություն իր տե՛ղը,- հրամայեցի, ինքս էլ թաքնվեցի:

Տեսնեմ՝ մեծ պետությունները ցած իջան և առանց տուն մտնելու՝ հավաքվեցին Ժնև՝ շարունակելու իրենց «նիստերը»...

Չկարողացա համբերել: Ներս մտա ու ասացի.

- Վե՛ր կացեք, ամեն ինչ վերջացած է, ես ձեզ արդեն զինաթափել եմ:

- Ո՞նց,- վեր թռան տեղներից:

- Այդպես,- ասացի:

- Ի՞նչ իրավունքով:

- Կամեցա օգնած լինել ձեզ:

- Դու գիտե՞ր՝ ի՞նչն էր մեր նպատակը:

- Ձեր նպատակը զինաթափվելը չէ՞ր:

- Ո՛չ:

- Հապա ի՞նչը, անվերջ զինաթափության նիստ գումարելը:

- Այո՛:

- Եվ բնավ չզինաթափվելը:

- Այո՛:

- Դե առաջուց ասեիք, ես ի՞նչ իմանայի:

- Նախ հարցնում են, նոր են զինաթափում:

- Զիմացա:

- Զիմացար, հիմա իմացիր: Հիմա ո՞վ է մեղավոր...

- Դուք: Եթե ձեր մտքում զինաթափություն չկար, թող նախապես հայտարարեիք, նոր զինաթափվեիք:

- Ինչ իմանայինք:

- Զիմացաք, տուժեցիք:

- Վա՛յ մեզ,- ասացին մեծ պետությունները՝ գլխներին տալով,- դե արի, առանց պատերազմի ապրիր այս անատակ* աշխարհում...

Ու խեղճացած տները քաշվեցին:

Գրականություն և... կաթ

Մեր խանութներում ծախվող կաթերին ո՛չ լավ կարող եմ ասել, ո՛չ վատ:

Երբեմն լինում են շատ պինդ, երբեմն՝ ամբողջովին ջուր:

Հարցը հետաքրքիր է, և ես զբաղված եմ այդ հարցով:

Եվ գտել եմ, որ այդ երևույթն առաջ է գալիս ոչ թե կովերի կաթի յուղայնությունից, այլ կախված է այն բանից, թե ինչ ճանապարհով է այդ կաթը գյուղերից քաղաք գալիս:

Եթե կաթի ցիստերնը անջրդի ճանապարհով է քաղաք գալիս, որակով է լինում, իսկ եթե ավտոյի ճանապարհին անվերջ աղբյուրներ են հոսում, ամառվա կիզիչ արևին վարորդն էլ է ծարավում, իր բերած կաթն էլ: Ու ամեն աղբյուրին վայր է իջնում, ինքը խմում, խմեցնում է նաև իր բերած կաթին:

Իսկ եթե ավտոյի ճանապարհը Զանգվի կողքով է գալիս, կաթը դառնում է ոչ թե ջուր, այլ ջրհեղեղ...

Ասում են՝ կա մի չափիչ գործիք, որ մտցնում են կաթի մեջ՝ իմանալու համար, թե նրա ո՞ր տոկոսն է կաթ, ո՞րը ջուր:

Ես շատ աշխատեցի այդ գործիքը ձեռք բերել, չճարեցի:

Այդ պատճառով էլ առավոտները վեր կենալիս նայում եմ Զանգվի ընթացքին:

Եթե ջուրը նվազ է գալիս, կնշանակի այդ օրվա կաթը ջրիկ է, եթե վարար է հոսում, ամանն առած՝ խանութ եմ վազում, ինչու որ այդ օրվա կաթը պինդ է լինում:

---

* Անատակ - անկարող, անընդունակ, այստեղ՝ տաղտկալի, ձանձրալի:

Ամենալավ չափիչը:

Ասեմ նաև, որ ջրիկ կաթերն էլ տարբեր համեր են ունենում՝ աղի, թթու, գազային, նայած թե ինչ աղբյուրի ջուր է խառնվում:

Այս կաթին շատ նման է նաև գրականությունը:

Գրականությունն իր սկիզբն առնում է տարբեր խորքերից և հոսում է մինչև մեր օրերը:

Երբ խանութում երբեմն անարատ կաթ է լինում, գրականության մեջ բնավ զուտ արվեստ չի լինում. հոսում է միշտ՝ խառնված որևէ գաղափարախոսության:

Իսկ աշխարհում ինչքան ազգ, այնքան գաղափարախոսություն: Անգամ ինչքան մարդ, այնքան գաղափարախոսություն:

Եթե գրականությունը հոսում է Թուրքիայի միջով, պանիսլամիզմի համ է տալիս, եթե անցնում է Պաղեստինով, Աստվածաշունչ է հոտում, եթե Հին Հռոմով՝ քրիստոնեություն: Եթե Ռուսաստանով՝ սոցիալիզմ:

Վերջին երկու գաղափարախոսություններն էլ ունեն իրենց ենթագաղափարախոսությունները:

Քրիստոնեության մեջ են մտնում կաթոլիկությունը, բողոքականությունը, լուսավորչականությունը, ուղղափառությունը, հունադավանությունը և այլն:

Էլ չեմ ասում՝ լուսավորչականությունն էլ բաժանվում է դաշնակցական և ռամկավար քրիստոնեությունների արտասահմանում: Սոցիալիզմն էլ ունի իր լենինիզմը, տրոցկիզմը[34], տիտոյական սոցիալիզմը[35], չինականը, բոլշևիկյանն ու մենշևիկյանը:

Սև գա գրականության արևին. հոսելով այսքան անհաշիվ գաղափարախոսությունների միջից՝ էլ «կաթի» հա՞մ կմնա մեջը...

Հիշեցնում է մի վերարկու, որին ամեն մարդ մի կարկատան է կպցրել ու հագել այնպես, որ վերարկուի սկզբնական կտորը չերևա:

Կամ նման է մի ստանդարտ կոշիկի, որ ամեն հագնող իր ոտներին է հարմարեցրել:

Անգամ տղամարդու կոշիկը՝ կանացի բարձրակրունկի վերածել:

Հետո էլ ասում են «գրականության պատմություն»:

Ու չեն ասում՝ ո՞ր գրականության պատմություն:

Եթե ինձ հարցնելու լինեք՝ ի՞նչ է անխառն գրականությունը, ես կասեմ.

- Գրականությունը պարապ-սարապ մարդկանց ժամանցի համար գրված մասլահաթ* չէ, գրականությունը գիտություն է, մարդագիտություն, որը մաթեմատիկայից ավելի ճշտություն է պահանջում:

Գրականությունը միայն երկու անգամ երկուսը չորսին հավասարն է:

Այն երկու անգամ երկուսները, որոնք հավասար են լինում հինգի, վեցի, յոթի, գրականություն չեն:

Ինչո՞ւ թվաբանության մեջ այդքան ճշտապահ լինել, իսկ մարդաբանության մեջ՝ սանձարձակ:

Այն գրողը, որ գրականությունը կգունազարդի, կպատժվի այնպես, ինչպես այսօր սովետական գրողներն են պատժվում:

Լսեցիք, որ գրախանութներում նրանց գրքերը հավաքում են, վառում...

«Կուլտուրական կապ»

Կյանքիս մեջ շատ անգամ եմ սիրահարվել, բայց երբեք ինքս ինձ չեմ կորցրել: Միշտ իմացել եմ, որ իմ անունը Արամ Թովմասյան է, հասցես՝ Թումանյան 15[4]:

Միայն վերջերս, երբ Չերեմուշկայում** ինձ տուն տվեցին, կորցրեցի հասցես ու նորից վերադարձա իմ հին տունը[36]:

Դե, Չերեմուշկան այնպիսի մի թաղամաս է, ուր իրենց հասցեները կորցնում են ոչ միայն սիրահարվածները, այլև կանանց ի սրտե ատողները, նրանց ոխերիմ թշնամիները:

Հիմա պատմեմ իմ վերջին սիրահարության մասին:

Սա ոչ թե սիրահարություն էր, այլ երկնային որոտ ու կայծակ, երկրաշարժ, թայֆուն, հարյուրավոր դիակներ, հազարավոր անօթևաններ...

Նա աղջիկ չէր սովորական իմաստով, նա մի կուռք էր, որին պետք էր պաշտել լենինյան մասշտաբով, ու եթե Ստալինին վերջում չայրեին՝ պետք կլիներ պաշտել նաև ստալինյան մասշտաբով:

---

* Մասլահաթ (maslahat) - արաբ. զրույց, խոսակցություն, հիմնականում՝ աննյութ:

** Չերեմուշկա - ռուս. ***черёмушка*** բառի աղավաղված ձևը, այստեղ՝ բնակելի թաղամասի անվանում:

Ամեն բանով ինձանից բարձր: Բոյ, բուսաթ, գեղեցկություն, կրթություն:

Այստեղ էր ահա, որ ինքս ինձ իսպառ մոռացա: Ո՛չ անուն, ո՛չ հասցե:

Հիմա դուք ինձ այն հարցրեք, թե ես ինչպե՞ս սիրտ արի գնալ այդ աղջկա ձեռքը խնդրել...

Երևակայեցեք գնացի ու խնդրեցի:

Խնդրեցի, բայց սև լիներ այդ օրը... Էլ աշխարհում լուտանք չմնաց, որ գլխիս չթափեր:

- Դու,- ասում է,- ճիճո՛ւ, զեռո՛ւն, ինչպե՞ս համարձակվեցիր սիրո շոշափուկներդ դեպի իմ բարձրությունը կարկառել: Հեռացի՛ր անմիջապես, եթե ոչ...

Ես, որ եկել էի նրա մոտ «լինելու կամ չլինելու համար», իմացա, որ այլևս չկամ: Բայց չհեռացա, որովհետև այլևս... ոտներ չունեի:

- Օրիո՛րդ,- ասացի,- ես չեմ եկել քո ձեռքը խնդրելու: Քավ լիցի: Ես եկել եմ քեզ հետ կուլտուրական կապ հաստատելու:

- Ծո, համբա՛ռ,- գոռաց աղջիկը,- դու ի՞նչ կուլտուրա ունես, որ ի՞նչ կապ հաստատես:

- Կուլտուրական կապը հենց ինձ նման անարժանների հետ են կապում: Թուրքիան ի՞նչ կուլտուրա ունի: Իր ողջ կյանքում միայն հայ է ջարդել: Եվ օրական երեք անգամ էլ խոնջանն* արձակում՝ նամազ է անում: Բայց տե՛ս, Ռուսաստանը նրա արտաքին գործերի մինիստրին Մոսկվա կանչեց ու կուլտուրական կապ հաստատեց հետը: Եվ այս այն Ռուսաստանը, որ ունի հզոր ինդուստրիա և աշխարհի միակ տիեզերագնաց պետությունն է համարվում: Ո՛չ, օրիո՛րդ, կուլտուրական կապը կապ չունի քաղաքակրթության հետ, դա մի սովորություն է, որ անկախ ամեն բանից՝ պետությունները կապում են պարզապես քաղաքավարությունից դրդված: Այս րոպեիս Սովետական Միությունը Ամերիկայի հետ պատերազմական վիճակի մեջ է, բայց նրանք իրար հետ կուլտուրական կապ ունեն հաստատած: Թուրքիան ջարդուփշուր արեց սովետական տաղավարը Իզմիրում, ամեն օր իր սահմանապահները հարձակվում են սահմանի վրա ու ռուս սահմանապահներին սպանում: Օրենքով Ռուսաստանը Թուրքիային պատերազմ պիտի հայտարարեր: Բայց

* Խոնջան- անդրավարտիքի կամ վարտիքի կապ:

տեսնո՞ւմ ես, կանչում և նրա հետ կուլտուրական կապ է հաստատում։

- Ռուսաստա՞ննն էլ է քեզ նման սիրահարվել Տաճկաստանին,- հարցրեց աղջիկը։

- Կարծես, այդպիսի մի բան կա,- ասացի,- որովհետև այն Ռուսաստանը, որի հզորությունից դողում է ողջ աշխարհը, միշտ ժպտում է Թուրքիայի երեսին...

Մեր մեջ տիրեց լռություն։ Ես խզեցի։

- Օրիո՛րդ ջան,- ասում եմ,- հոգուդ մատաղ, ինձ հետ կուլտուրական կապ հաստատիր։

- Ո՛չ մի կապ իմ և քո միջև,- վճռական ասաց աղջիկը։- Ես տեղափոխվում եմ քաղաքից, և մենք այլևս իրար չենք տեսնի։

- Հենց լավն էլ այդ է։ Կուլտուրական կապի իմաստն էլ հենց այն է, որ կողմերը այլևս իրար չհանդիպեն...

Մեռնողի հուշատետրից

Մարդի՛կ։

Երբ աշխարհ եք գալիս, վերցրեք ցուցակը, մեկ-մեկ պահանջեք ձեր ծնողներից այն բոլոր հատկությունները, որոնք պետք են գալիս այս աշխարհում ապրելու համար։

Որովհետև դուք չգիտեք՝ աշխարհում ինչ է սպասում ձեզ, այդ պատճառով հետևեցեք վերցրեք ամեն ինչ։

Եթե իմանայիք, որ կյանքում դատավոր պիտի դառնաք, հարկ չէր լինի ձեզ ծանրաբեռնել ավելորդ բաներով. հետևեցեք կբերեիք միայն կաշառակերություն և փառավոր կապրեիք։ Եթե պիտի պահեստապետ լինեք, կբերեք գողություն, եթե ստորադաս պիտի լինեք՝ քծնություն, եթե չեկիստ՝ անգթություն, եթե արդյունաբերական ապրանքների խանութում գործակատար՝ չափելիս կտորը ձգելու առաքինություն։

Աշխարհ է, ո՞վ գիտի։ Գուցե մի երկրի առաջնորդ դառնաս։

Ա՛յն ժամանակ միայն կարող ես ոչինչ չվերցնել հետդ։ Անշարժ կկանգնես, ամբողջ երկիրը քեզ կպաշտի։

Բայց զգուշացնում եմ ձեզ, պաշտվելիս աշխատեք անհատ չլինել, հետո կարող են ձեզ մեղադրել «անհատի պաշտամունքի» մեջ, ձեր դիակն այրեն կամ պաշտոնազուրկ անեն։

Մարդի՛կ։

Զլինեմ, չիմանամ, որ հետներդ սեփական կարծիք բերեք։ Այն չեք արտահայտի և ձեր մեջ փակված գերեզման կտանեք…

Եթե արտասահմանյան անձնագիր ունեք և ծնվելուց հետո ուզում եք հեռանալ մեր երկրից, ձեզ հետ բերեք միայն ազնվություն և ձեր քրտինքով ապրելու գիտակցություն։

Բացի մեր երկրից՝ ամեն տեղ, ով աշխատում, նա՛ է ապրում։

Միայն մեր երկրում է, որ միայն չաշխատողն է ուտում։ Այստեղ բոլորը մեկի համար են, իսկ այնտեղ՝ յուրաքանչյուր ոք իր համար։

Եթե պիտի ամուսնանաք և կին ունենաք, ասեմ՝ հետներդ ինչ պիտի բերեք։

Հավասար քանակությամբ լաց ու ծիծաղ, որպեսզի ձեր դժբախտության ժամանակ լաց լինեք, բախտավորվելիս ծիծաղեք։

Իմ կինը մոռացել է իր հետ ծիծաղ բերել, որի հետևանքով ինչ պատահի, միայն լաց է լինում և իր օրն անիծում։

Ես էլ թարսի պես լացն եմ մոռացել, ու մենք ո՛չ կարող ենք միասին ծիծաղել, ո՛չ լաց լինել։

Մենք հիսուն տարվա ամուսիններ ենք, և երբ ուզում ենք ապրել, քշում ենք դեպի մեր անցյալի հուշերը։

Հիսուն տարի մարդ կարո՞ղ է միայն դժբախտ կամ բախտավոր լինել։

Ո՛չ։ Մի օր դժբախտ, մյուս օրը բախտավոր։ Անգամ եթե հաշվի առնենք, որ քառասունյոթ տարի ապրելով սովետական կարգերում՝ դժբախտ ենք եղել, բայց հիսունից եթե հանենք քառասունյոթ, էլի տակը կմնա երեք տարի, երբ ապրել ենք բախտավոր։

Իմ կինն այդ երեք տարում էլ է լաց եղել ու անիծել իր բախտը։

Գուցե կարծեք, թե այն պատճառով, որ ես արժանավոր ամուսին չեմ։

Ո՛չ։ Արժանավոր էլ լինեի, նա չէր խնդա, քանի որ չգիտի՝ ինչ բան է ծիծաղը։

Երբ մտովի գնում ենք դեպի մեր անցյալը, նա իրար է հավաքում միայն դժբախտություններ և բերում, վրան լաց լինում, իսկ ես բերում եմ ուրախալի դեպքեր ու ծիծաղում։

Եթե այս բանն առաջուց իմանայի, ես էլ հետս միայն արտասուք կբերեի ու կնստեինք դեմ-դեմի, կուլայինք։

Բայց ես կյանքի վրա այլ հայացք ունեմ: Ըստ իմ համոզման՝ կյանքը ծիծաղ է: Ով կյանքում լաց է լինում, նշանակում է՝ ձայնը տալիս է մահվան:

Նույն ծաղկից մեղուն մեղր է բերում, իսկ օձը՝ թույն:

Հիմա մերն է: Նույն անցյալից ես ծիծաղ եմ բերում, իսկ իմ կինը՝ լաց:

Մարդու կենդանությանը այդ էլի ոչինչ: Բայց մենք ծեր ենք ու վաղը պիտի մեռնենք: Նա իմ մահվան վրա լաց պիտի լինի, իսկ ես փոխարենը հատուցելու համար արցունք չունեմ:

Ծիծաղեմ: Այն ժամանակ պիտի ասեն այս մարդը խելագարվել է:

...Թող ասեն: Ավելի լավ: Նշանակում է ես այնքան էի սիրում կնոջս, որ վշտից խելագարվել եմ:

Վշտի ծիծաղ:

Ինչ վատ բան է:

Համեմատական կենդանաբանություն

Օրենքով մարդը նույնպիսի գազան է, ինչպես բոլոր մյուս գազանները: Բայց չգիտես ինչպես, իրեն մի կերպ դուրս է դրել գազանների շարքից և գրվում է առանձին սյունակի մեջ: Բայց եթե վաղը մյուս օրը կենդանիների արքան՝ Առյուծը, մի ահեղ հրաման տա՝ բոլոր գազանները, շարք մտած, իրեն ներկայանան հաշվառման, հետաքրքիր է՝ մարդը ո՞ր երկու գազանների մեջտեղը կկանգնի: Գայլի՞, աղվեսի՞՝ իբրև ոչխար ու հավ ուտողի, թե՞ վագրի, բորենու:

Բայց որ կենդանու ետև էլ կանգնելու լինի, նրանց մեջ մտերմություն չի լինի: Այնպես, ինչպես հարուստ մեծատան ու չքավորի միջև:

Վագրն ու բորենին, մարդու հետ համեմատած, չքավոր գազաններ են: Օրական մի նապաստակ են ուտում, այն էլ եթե ձեռքներն ընկնի:

Իսկ այդ կողմից մարդն իսկական կուլակ է: Ուտելու համար*

---

* Կուլակ ***(кулак)*** - ռուս. հարուստ գյուղացի, որն իբրև թե շահագործում և կեղեքում էր չունևորներին:

պահում է ոչխարի հոտեր ու կովի նախիրներ, այդ բավական չէ, վայրի որսից էլ է օգտվում՝ կտրելով խեղճ գազանների օրապահուստը։

Մարդը երկու տեսակ գազանություն է իրեն թույլ տալիս։ Ոչխարներին մորթում է իր ֆիզիկական գոյությունն ապահովելու համար, հետո էլ պատերազմներում սպանում է իր նմաններին, այն էլ՝ սպանություն սպանության համար։ Ինչպես գրականության մեջ ասում են՝ գեղարվեստ գեղարվեստի համար։

Կենդանական շարքի մեջ երկու տեսակ գազանություն կատարողին ինչպե՞ս կարելի է միայն մի անգամ գազանություն կատարողի շարքը դասել։

Շարքից դուրս կգան գայլն ու բորենին և նախանձով կնայեն մարդուն՝ այդ կուլակ գազանին, և իրենց կզգան ողորմելի։

Կարո՞ղ են չքավոր գազանները երբևիցե նմանվել մարդուն։

Ո՛չ։ Կատարյալ մարդ լինելու համար պիտի իմանալ նաև կեղծել։ Ինքզինքնին մարդասեր անվանել ու մարդկանց կոտորել։

Ճիշտ է, աղվեսը խաբեբա է, բայց ոչ այդ աստիճան։

Մարդ գազանը սպանության ժամանակ անաչառ է։ Բոլշևիկը Սիբիրում աքսորվածներին շարքով կանգնեցնում է, ամեն տասից մեկին սպանում։ Հետո՝ իննից մեկին, ութից՝ մեկին, մինչև շարքում մնա մեկ կալանավոր, դրան էլ մեկ անգամից երկու անգամ է սպանում, որ չմեղադրեն՝ ասելով՝ կողմնապահություն է անում, իր բարեկամ ծանոթներին սպանում է, իսկ անծանոթին՝ խնայում։

Կատվից զատ՝ ոչ մի կենդանի իր որսին չի տանջում ուտելուց առաջ։ Բայց բոլշևիկ մարդը տասնհինգ օր շարունակ իր ծերունի զոհին մի ոտքի վրա կանգնեցնում է, հետո նրանից ստորագրություն վերցնում, որ ինքն օտարերկրյա պետության լրտես է, ու սպանում։

Իսկ կատուն իր զոհից ստորագրություն չի վերցնում, թե մուկ է. տանջում, տանջում է՝ ուտում։

Հետքրքիր է, եթե գազաններն էլ կամենային սոցիալիզմ կառուցել իրենց երկրում, պիտի հաջողե՞ին, թե՞ ոչ։

Բորենուն կարգեին իրենց պահեստապետ, իրենք մտնեին կոլխոզ, որս անեին ու բերեին լցնեին պահեստը։ Աշնանը բորենին ի՞նչ աշխօր պիտի տար աշխատավորներին։ Մանավանդ, եթե Առյուծին

էլ իրենց պետպարտավորությունները տային։

Գազանները որովհետև լեզու չունեն, խոսքով չեն կարող հավասարություն, եղբայրություն և ազատություն հռչակել։ Նրանցը գործն է։ Իսկ գործով էլ չեն իրականացվում նման գաղափարները։

Ո՞վ պիտի լիներ նրանց Լենինը, ո՞վ Ստալինը։ Հարցեր, որոնք սպասում են պատասխանի։

Նամակ Աստծուն

Սիրելի՛ Աստված։ Սա յոթերորդ նամակն եմ գրում քեզ, բայց պատասխան չեմ ստանում։ Առաջինը գրեցի յոթներորդ երկինք՝ կարծելով, թե դու այնտեղ կլինես՝ այնտեղ չէիր։ Երկրորդ նամակը գրեցի վեցերորդ երկնքի հասցեով, էլի պատասխան չստացա։ Այսպես մինչև առաջին երկինք։ Ո՞ւր ես դու, չլինի՞ երկնքից հեռացել ես։ Եթե այո, խնդրում եմ ինձ ուղարկել քո նոր հասցեն, որովհետև քեզ գրելու շատ կարևոր բաներ ունեմ։

Սիրելի՛ Աստված, ես նոր իմացա, որ դու իսկապես ամենագետ ես։ Այն ժամանակ, երբ դու Հոր, Որդու և Սուրբ Հոգու հետ մի միասնություն կազմեցիր և սկսեցիր պաշտվել, ես ծիծաղում էի քեզ վրա։ Ասում էի՝ մարդ ֆլ իրեն տված փառքը երեք մասի բաժանի։ Բայց հիմա, որ տեսնում եմ՝ Ռուսաստանի աստվածները մենակ պաշտվելու համար մեղադրվում են անհատի պաշտամունքի մեջ և հալածվում, մինչև անգամ մեռնելուց հետո այրվում են, նայում եմ քեզ և ասում. «Ա՛յ, խելոք Աստված, ցանկացավ քիչ, բայց հավիտյանս պաշտվել»։

Կոմունիստական Ռուսաստանն իր սկզբնավորումից մինչև այսօր երեք աստված է ունեցել՝ Լենինը, Ստալինը և Խրուշչովը։

Այս երեք աստվածները միատեսակ աշխարհ եկան, բայց տարբեր վերաբերմունքի հանդիպեցին իրենց պաշտողների կողմից։

Ամենամեծ աստվածը՝ Լենինը, որ ստեղծեց իր «նոր աշխարհը»՝ այն քաոսի վերածելով, պաշտվեց գերազանց. անգամ պաշտվում է իր մահվանից հետո՝ մինչև այսօր։ Ջնսեմացավ իր փառքն անգամ այն ժամանակ, երբ ինքը չկար, և իր տեղը կենդանի աստվածներ էին նստած։

Ստալինի ժամանակ ժողովուրդը մի փառք Ստալինին էր տա-

լիս, երկու փառք՝ նրա գլխի վրայից մեռած Լենինին։ Ու Ստալինը, տրվող երեք փառքերին էլ տիրանալու համար, մի լոզունգ բաց թողեց՝ ասելով. «Ստալինն այսօրվա Լենինն է», որով Լենինը բաժանվեց երկու օրերի միջև՝ կեսը այսօրվա, կեսը երեկվա։*

Բայց խնդիրը փառքի շատության և քչության մեջ չէ։ Ռուսաստանում փառքն այնքան էժան է, որ ձիերն էլ են փառավորվում։ Ինձ զարմացնում է այն խտրությունը, որ պաշտողները դրեցին Լենինի ու Ստալինի միջև։

Լենինը փառավորվելիս նույնպիսի անհատ էր, ինչպես Ստալինը։ Ինչո՞ւ մեռնելիս Լենինի դիակը չայրեցին, իսկ Ստալինինն այրեցին։ Ինչո՞ւ Ստալինի անունը չեն տալիս, բայց առավոտից երեկո՝ Լենին, Լենին, Լենին։

*Արդյոք նրա՞ համար, որ Ստալինը շատ մարդ գնդակահարեց։ Սխալ է։ Լենինը Ստալինից ավելի մարդ կոտորեց։ Հարյուրհազարավոր մարդիկ քաղաքացիական կռիվներում ընկան, իսկ գերիներին լցրին բանտերը և ամեն գիշեր դաշտեր փոխադրելով՝ «ռասխոդ»** արին։ Մարդիկ կարծես աղբ լինեին, որ, ավտոները լցրած, տանում էին դաշտերը պարարտացնելու։ Այն մարդուն, որը Ստալինի գնահատությամբ աշխարհի ամենաթանկ արարածն է։ (Դե արի ու մի տրաքիր։ Քեզ չեմ ասում, Աստվա՛ծ. ես տրաքեմ՝ բավական է)։*

Չէ՛, Աստված, այս խտրության մեջ մի գաղտնիք կա, որ ես անգիտանում եմ։

Աստվա՛ծ, այս րոպեիս Լենինն էլ, Ստալինն էլ երկնքում են. չե՞ս կարող այդ գաղտնիքն իրենցից իմանալ։ Հարցրու. «Երկուսդ էլ հավասարամեծ անհատներ էիք. ինչո՞ւ մեկն անհատի պաշտամունքով մեղադրվի, հալածվի, իսկ մյուսը՝ ոչ»։

Ասեմ անմիջապես, որ Աստված լինելը խաթա բան է։ Միշտ վտանգի ենթակա։ Քեզ չեն կարող, իհարկե, մեղադրել անհատի պաշտամունքի մեջ, որովհետև դու կոլեկտիվ անհատ ես, բայց դու այնուամենայնիվ աշխատիր չմեռնել։ Մեռնելուց հետո պաշտողները միշտ մի բան կգտնեն հետևիցն ասելու։

Դու հին Աստված ես, և տարիներ շարունակ մարդկանց հոգին

---

* Լոզունգ (Losung) - գերմ. կարգախոս, նշանաբան։

** Ռասխոդ ***(расход)*** - ռուս. ծախս, սպառում։

առել ես։ Ճիշտ է, պիտանի մարդկանց ձեռք չես տվել, առել ես ծեր, զառամած, բանի պետք չեկող մարդկանց հոգիները, բայց էլի, չարալեզու մարդիկ կարող են քեզ բամբասել։

Ինչպես գիտես, «սատկած իշուն գին չկա»։

Գտի՛ր, գտի՛ր անպատճառ Լենինին և Ստալինին և պատճառն իմանալով՝ ինձ գրի՛ր, որ ես իմ ապշությունից դուրս գամ։

Ի դեպ, չգիտեմ նրանք արքայությո՞ւն գնացած կլինեն, թե՞ դժոխք։

Կանչի՛ր սատանային, թող կպրի կարասները մանրակրկիտ խուզարկության ենթարկի և գտնելով այդ նախկին աստվածներին՝ քեզ ներկայացնի։

Է՜, Աստվա՛ծ, ժամանակներն ինչքա՜ն են փոխվել։ Մի ժամանակ գոյություն ունեին միայն մի Աստված, մի դրախտ։ Իսկ հիմա ո՛չ աստվածներին թիվ կա, ո՛չ նրանց շինած դրախտներին։

Հիմա բոլշևիկների ոտ դրած տեղը դրախտ է դառնում։ Այս կարգով դրախտ դարձան աշխարհի բազմաթիվ երկրներ։ Գերմանիայի, Կորեայի, Հնդկաչինի՝ կես մասերը, իսկ Չեխոսլովակիան, Հունգարիան, Լեհաստանը և այլ պետություններ՝ ամբողջությամբ։

Այցելի՛ր երկիր՝ տեսնվենք, Աստվա՛ծ։ Ինձ թույլ չեն տալիս՝ վախենալով, որ երկինք գալով՝ կարող եմ «ապաստան խնդրել» ու այլևս չվերադառնալ երկիր...

Գույժի հաղորդումը

Նորածնին չպետք է հաղորդել, որ մարդը մահկանացու է։

Ի՞նչ կարիք կա։

Մահը թող մի տեղ թաք կենա, երեխան ապրի, մեծանա, ծերանա, զառամի ու այլևս չկարողանա շարժվել ու ցավերից նեղված՝ ինքը մահին փնտրի։ Այն ժամանակ թող մահն իր թաքստոցից դուրս գա և ասի.

- Ի՞նչ տաս՝ քո հոգին առնեմ։

Մարդը թող խեղճանա և ասի՝ փող չունեմ։

Մահն էլ ասի.

- Լավ, քո հոգին ձրի կառնեմ։

Այն ժամանակ մարդը հավետ երախտապարտ կմնա մահվանը

և իր բարերարը համարելով նրան՝ կօրհնի։

Այս այն ժամանակ, եթե մեռնողը իրոք աղքատ է։ Իսկ եթե հարուստ ու ժլատ մարդ է, ի նկատի առնելով, որ մեռնելը ձրի է, օրական մի տասն անգամ կմեռնի։

Ախր շատ վատ բան է, երբ մարդն առաջուց իմանում է, որ ինքը պիտի մեռնի։

Դառնում է «մահվան կամերայում» բանտարկված հանցագործ։ Բանալին ամեն անգամ դռան ծակի մեջ անց կացնելուն հուշտ պիտի լինի՝ կարծելով՝ եկել իրեն գնդակահարության են տանում։

Մարդը, երբ իմանա, որ վաղ թե ուշ պիտի մեռնի, հող դառնա, իրեն ամեն տեսակ մոլության կտա։ Կհարբի, ուրիշների կանանց ետևից կվազի, կգողանա, ավազակ կդառնա ու չի ամաչի, որովհետև գիտի, որ այդ բոլոր մոլություններն իր հետ գերեզման պիտի տանի։

Մի աղջիկ կար, բոլոր սիրահարների սիրո առաջարկները մերժում էր՝ ասելով.

- Ես իմ նամուսը հողի մեջ չեմ դնի։

Մեռավ աղջիկը, ու նրա նամուսը դրին հողի մեջ...

Նոր հիմա գլխին խփում է. էլ ինչ օգուտ, եղածը եղած է։

Ասում է.

- Ավելի լավ էր նամուսս հողի երեսին թողնեի, քան թե գետնի տակ։

Այդպես է։ Ոչ միայն նամուսը, այլև առհասարակ ամենայն տեսակ թանկագին բան դուրսը թողնելու է։

Չեք կարդացել բաղնիքների պատերի վրա. «Լողանալիս զարդեղենները տալ գանձապահին՝ պահելու»։

Եվ վերջապես կյանքում ոչ մեկը բարեկամի մահը բարեկամին չի հայտնի մեկ անգամից։

Նախ «ծանր» կհիվանդացնի, հետո նոր կմեռցնի։

Սովետական տոները

Իմ գետնահարկ տան կողքին բարձրացված է սահմանապահ զորամասի քառահարկ մեծ շենքը[37], ուր ապրում են քառասուն ռուս և հայ ընտանիքներ։

Շենքն ունի, իհարկե, իր պարետը։ Զարմանալի կերպով, սա

քառասունհինգ տարվա հարևանության ընթացքին չիմացա՝ նա ազգով հայ է, թե՞ ռուս: Նախ՝ մի աչքը կապույտ է, մյուսը՝ սև: Երկրորդ՝ հայերը Սիմոնյան են կանչում, ռուսները՝ Սիմոնով: Դե արի ու իմացիր, հայ է, թե՞ ռուս: Ազգանվան առաջամասը կայուն է, իսկ վերջավորությունը անասունի պոչի նման շարժական՝ մեկ դեպի հայ, մեկ դեպի ռուս: Այնպես որ նա կարող է շատ հաջող ամառներն իր ազգանվան վրա թառած ճանճերը քշել...

Եվ սա մոտավորապես այն է, որ ասում են «ձևով ազգային, բովանդակությամբ միջազգային»: Մի լոզունգ, որի իմաստը, եթե թարգմանելու լինենք, նշանակում է՝ ձևով հայերն ու ադրբեջանցիները կարող են իրար կոտորել, բայց բովանդակությամբ եղբայրներ լինել...

Այսքանը Սիմոնյանի (որովհետև ես հայ եմ) ազգանվան մասին:

Հիմա գանք նրա անձնավորությանն ու պատմենք՝ ի՞նչ է նշանակում մի շենքի պարետ լինել:

Գիտեք անշուշտ, որ Սովետական Միությունում երկու օրերից մեկը տոն է: Այդ տոներին շենքերի ճակատները պիտի զարդարված լինեն երկրի առաջնորդների պատկերներով, պլակատներով ու կարմիր դրոշակներով:

Այսքանը վար առնել ու մյուս օրը դարձյալ տեղը շարել, իհարկե, հեշտ բան չէ և բանվորական աշխատանքի ութ ժամերի մեջ չի կարելի գլուխ բերել: Այդ պատճառով Սիմոնյանն աշխատում է գիշեր-ցերեկ:

Ամբողջ երեսուն տարի Ստալինի պատկերը շենքի ճակատին ելավ-իջավ, ինչպես բանուկ տան վերելակ:

Եվ գիտեք դա ինչպիսի վտանգավոր գործ է...

Ստալինի նկար՝ վերջին մոդայով սրած բեղերով: Մի մազ տեղից խախտեցիր՝ մեծ առաջնորդի դեմ մահափորձ կնշանակեր, պատիժը՝ գնդակահարություն:

Իմ՝ աքսորում եղած ժամանակ նկատեցի, որ աքսորականների մեծամասնությունը նկարիչներ էին: Գաղտնիքը: Գաղտնիքը հետևյալն է: Ամբողջ երեսուն տարի նկարելով առաջնորդի բեղերը՝ նկարիչներից ոմանք հիմարաբար կարծել էին, թե Ստալինն էլ մյուս մահկանացուների նման ծերանում է, մի երկու հատ սպիտակ մազ էին դրել նրա սեփ-սև բեղերի մեջ...

Պատասխանատու բան է Ստալինի որևէ բանի հետ գործ ունենալը։ Սիմոնյանը ինչպես բարձր պատերից վար առնի ու կախի մեծ առաջնորդի նկարը, որ բեղերի սրվածքը անաղարտ մնա։

Պլակատների վրա զանազան լոզունգներ գրելու համար պետությունը Սիմոնյանին թոփերով կարմիր կտավ է բաց թողնում, որը հնանալիս ծառայում է նրա տնային կարիքներին։ Եթե բանն այսպես է, պարզ է, որ պարետի համար ձեռնտու չէ, որ լոզունգները համառոտ գրվեն։ Օրինակ՝ «Կեցցե՛ Սովետական Միության Կոմունիստական Պարտիան» լոզունգը գրվում է նաև կարճ՝ «Կեցցե՛ ՍՄԿՊ»։ Բայց նա կարճ ձևից չի օգտվում, որովհետև նրա ընտանիքը բազմանդամ է, և «Կեցցե՛ ՍՄԿՊ»- ից իսկի մի երեխայի լիֆչիկ* էլ չի կարվի։

Սիմոնյանը, ամբողջապես տարվելով պլակատների տեխնիկայով, չի նայում նրանց քաղաքական իմաստին։ Իրար հակասող պլակատները կախում է կողք-կողքի, որ իրար ջրեն։

Օրինակ՝ ինչպես կարելի է «Կեցցե՛ խաղաղություն» պլակատը կախել «Կորչի՛ կապիտալիզմ» պլակատի կողքին։ Շենքը հսկայական է, կարող է նրա մի ծայրին մեկը փակցնել, մյուս ծայրին՝ երկրորդը։ Որովհետև խաղաղությամբ երբեք «կապիտալիզմը» չի կորչում, այն կորցնելու միակ միջոցը պատերազմն է։

Կարո՞ղ եք երևակայել՝ աշխատանքով այսքան ծանրաբեռնված մարդը ժամանակ է ունեցել տասը երեխա ունենալու։

Եթե ընդունենք անգամ, որ այդքանից միայն կեսն է իրենից, էլի մեծ բան է։

Կինն էլ դերձակուհի։ Զբաղված միայն հին պլակատներն ու նկարները լվանալով ու իր երեխաների տակի շորեր կարելով։

Դերձակուհին բախտավոր էր նրանով, որ սովետական լոզունգներն էլ, նկարներն էլ շուտ են հնանում։ Այնքան, որ չի հասցնում դրանք բոլորը շորի վերածել։

Նրա բոլոր երեխաների շապիկները, վարտիքները, լիֆչիկները, բաճկոնները, հետո՝ անկողնի մթերները, պորտերը**, սավանները, դոշակները պլակատից, նկարներից ու դրոշակներից են կարված։

---

* Լիֆչիկ - երեխայի ժիլետատիպ ներքնաշոր, որի կողքերի կոճակներից ռետինով ամրացնում էին ձմեռային գուլպաները (ծնթ.՝ Վ.թ.)։

** Պորտ (բրբ.) - այստեղ՝ վերմակի՝ բոլորաձև կտրվածք ունեցող երեսը։

Սոցիալիզմի հիմնադիրների՝ Մարքսի և Էնգելսի մորուքները օգտագործում է որպես դոշակի միճան: Ասես դրանց թավ մորուքներն Աստված տվել է, որ Սիմոնյանների երեխաները փափուկ դոշակների վրա պառկեն:*

Հնացած պատկերների մեջ կային նաև Ստալինի նկարները, բայց, ինչպես ասացի, դրանց հետ զգույշ պետք էր վարվել ու պետք չէր երևուստ տեղ գործածել: Դրա համար էլ առաջնորդի կտավներից իր համար ինտիմ շորեր էր կարում՝ անմիջապես մարմնին կպած: Եվ հատկապես մարմնի այն մասին կպած, որ ամենաբարբարոս խուզարկության ժամանակ իսկ չհայտնաբերի խուզարկու ձեռքը...

Պետք էր տեսնել տիկին Սիմոնյանի լվացքը, որ փռում էր բակի կողմի պատշգամբի ճաղերին և կապված պարաններին:

Ամբողջովին սոցիալիստական գործոններից էր բաղկացած՝ շապիկ-վարտիքի վերածված, կամ անկողնի երեսների:

Ինչքան էլ լվացարարը «պռտեր», այնուամենայնիվ պլակատների տառերը ամբողջովին չէր կարելի ջնջել: Կիսով չափ կարդացվում էին: Հետևաբար, դրանց նայողների երեսներին էլի կանչում էին «Կեցցե՛ համաշխարհային հեղափոխությունը», միայն մի փոքր նվաղած ձայնով:

Սիմոնյանների լվացքը ուշի-ուշով կարդացող յուրաքանչյուրը կնկատի, որ տիկին Սիմոնյանը լավ դերձակուհի է, բայց դպրոցի երես չի տեսել: Եթե տեսել է, այնտեղ քերականություն չի սովորել, որովհետև տողադարձի մասին գաղափար չունի:

Երևակայեցեք:

«Պրոլետարներ բոլոր երկրների, միացե՛ք»-ը տողադարձելիս «պրոլ»-ն իր մի տարեկան տղայի շապիկի վրա է գրել, «ետար»-ը՝ չորս տարեկան աղջկա շրջազգեստի, իսկ «ներ»-ը կարկատան է դրել մի բարձի երեսին:

Այս տեսակ անգրագետ տողադարձելիս հնա՞ր է, որ աշխարհի բոլոր պրոլետարներն իրար միանան:

Անկարելի է:

Ի՞նչ իմանանք, որ եթե մինչև այսօր պրոլետարներն իրար չեն

---

* Միճան, միջան (բրբ.) - 1. բրդի կտորներ, որից անկողին են պատրաստում, 2. անկողնու մեջ լցված բուրդը:

միացել, այսպիսի անգրագետ դերձակուհիների պատճառով չէ...

Զո՞ւր է Լենինն ասել՝ սովորե՛լ, սովորե՛լ, սովորե՛լ։

Եթե ոչ երեք անգամ, գեթ մի անգամ ասելով, իմ կարծիքով, մարդը «սովորելու» է։

Ապահարզան[38]

Առավոտյան լույսը չբացված՝ Հովասափը կանգնեց գլխիս.

- Վե՛ր կաց։ Ես դատարան եմ գնում՝ կնոջիցս բաժանվելու։ Հիմնարկում ասա՝ այսօր Հովասափը չի գալու։

- Ի՞նչ է պատահել,- հարցրի՝ անկողնումս նստելով։

- Կինս անհավատարիմ է։

- Փաստեր ունե՞ս։

- Սիրեկանի հետ բռնեցի։

- Մե՞կ սիրեկանի։

- Այո՛։

- Եվ դու ընդամենը մի սիրեկանի համար ուզում ես բաժանվե՞լ կնոջիցդ։

- Բաժանվելու համար քանի՞ սիրեկան է հարկավոր,- հարցրեց վաղեմի ընկերս ապշած։

- Քանի սիրեկա՞ն։ Դե սպասի՛ր, շորերս հագնեմ, քեզ կասեմ։

Հագնվելուց հետո հարցրի.

- Դիմումը ներկայացրե՞լ ես դատարանին։

- Այո՛։

- Գնա՛, հե՛տ վերցրու։

- Ինչո՞ւ։

- Որովհետև մեր դատարաններին բաժանելու իրավունք չի տրված, նրանք միայն հաշտեցնում են։

- Այդ ինչպե՞ս։ Իրար ատող ամուսինների սրտի մեջ սեր են ծնեցնում։

- Այո՛։

- Ինչպե՞ս...

- Եթե ասես՝ չեմ կարող սիրել կնոջս, նրանք կասեն. «Ոչինչ, մենք քեզ կսովորեցնենք սիրել»։ «Ա՛յ այսպես,- կասի դատավորը՝ գրկելով կնոջդ, ու հետո կհարցնի.- այսպես չե՞ս կարող անել»։ Եթե

ասես՝ ոչ, կնոջդ կհանձնի իր աջ կողմում նստած ատենակալին ու կասի. «Ձահել ես, ա՛ռ, մի կարգին սիրի՛ր, թո՛ղ սովորի»։ Եթե աջակողմյան ատենակալի սերն էլ բավարար չլինի, ձախակողմյանին կհանձնի, որով քո՝ միայն մեկ սիրեկան ունեցող կինը կդառնա միանգամից երեք սիրեկանի տեր։ Մեկն էլ տանն ունի, ուրեմն՝ չորս սիրեկան։ Այն ժամանակ կհաշտվե՞ս։

- Ո՛չ, վճռաբեկ բողոք կներկայացնեմ։

- Վճռական բողո՞ք։ Շատ աղեկ։ Բողոքիդ ընթացք կտան և գործդ մի այլ դատարան կփոխադրեն լսելու, ուր նստած են էլի երեք մարդ և նույն մեթոդով քեզ սիրել կսովորեցնեն, որով քո կնոջ սիրեկանների թիվը և՛ս երեք հոգով կավելանա։ Թե քանի հոգի կդառնա, էն էլ դու հաշվի՛ր։ Մի՛ մեղադրիր խեղճ դատավորներին. նրանց ձեռքին ճար չկա, ուզեն-չուզեն պիտի հաշտեցնեն։

- Գերագույն դատարան կդիմեմ։

- Դրանով էլ վերջնականապես հողը գլխիդ կտաս։ Այնտեղի կոլեգիաների անդամներին ո՛չ թիվ կա, ո՛չ համրանք։ Այնքան պիտի քեզ ցույց տան, թե ինչպես պիտի սիրես, որ առնես քո կնոջն ու փախչես։

- Գերագո՞ւյնն էլ բաժանելու իրավունք չունի։

- Չունի, չունի։ Ամուսնությունը մեզ մոտ քաղցկեղ է։ Միայն մահը կազատի մարդուն անառակ կնոջից։ Այնպես որ, սիրելի՛ Հովասափ, բավարարվի՛ր կնոջդ մի սիրեկանով, և ձնագնդի նման նրան մի՛ գլորիր բազմաթիվ սիրեկանների գիրկը, որ թավալի ու անվերջ մեծացնի նրանց թիվը։

- Այդ բոլորը կատարվելու է հրապարակայնորե՞ն։

- Ո՛չ, փակ նիստում։

- Հետագային որտե՞ղ պիտի հանդիպի կինս այդ դատավորներին։

- Հետո իրենք կայցելեն ձեզ՝ ստուգելու՝ իրար սիրո՞ւմ եք, թե՞ ոչ։ Եթե սխալներ տեսնեն, տեղում կուղղեն ու կերթան։

- Այս բոլորն անում են անվճա՞ր։

- Ո՞նց անվճար։ Նրանք քո ծառա՞ն են, որ անվճար քեզ սիրել սովորեցնեն։ Իրենց հասանելիք գումարը կառնեն քեզանից։

- Այդ եղավ Հայաստանի քրդերի արածը. մտնում են հայի տուն,

ուտում, հետո դիշ քիրասի են առնում։*

- Գործիք են մաշում, հապա չառնեն։

- Եթե այդպես է, ուրեմն, դատավորն իմ դիմումը հետ չի տա։

- Մի երկրորդ դիմում կգրես, թե կնոջս սիրեկանը մեռավ, և մենք այժմ համաձայնության ենք եկել՝ իրար հետ ապրելու։ Ի դեպ, ո՞վ է քո կնոջ այդ սիրեկանը։

- Կաշեգործ Սպիրիդոնը։

- Այդ թզո՞ւկը։ Վա՛յ տնաշեն, դրան էլ մարդ ես հաշվում։ Նրա սիրածն ինչ պիտի լինի։ Ամեն սիրող ամուսին իր սիրո ճոխ սեղանից մի մսի կտոր կգցի սեղանի տակ նման խեղճերի համար։ Կինդ կարող էր սիրեկան ընտրել մի շատ խոշոր, մարմնեղ մարդու։ Բայց նա խնայել է քեզ և ընտրել մի թզուկի, որ դու անգամ ամաչես դրա մասին խոսել...

Խրուշչովի անկումը[39]

Վերջերս Ռուսաստանը շատ անխնա է վերաբերվում իր աստվածների հետ։

Խրուշչովն ինչ էր արել, որ նրան հանկարծ պաշտոնանկ արին։

*Ընդամենը տասնմեկ տարվա աստված, առողջ, հուժկու։ Ամբողջ աշխարհն էր սասանեցում իր ճառերով։ Ո՞վ է տեսել կոշիկն առանց ծակվելու դեն գցեն։ Առաջ այսպես չէր Ռուսաստանը։ Լենինին դեռ մինչև օրս էլ կարկատում՝ հագնում է։ Ստալինին այրեցին միայն մահվանից հետո։ Սաղ-սալամաթ** Խրուշչովին ինչպե՞ս կարելի է չպաշտել։ Նա տասնմեկ տարի ճառ խոսեց, մի այդքան էլ չխոսած ճառ տարավ իր հետ, այդ որտե՞ղ պիտի խոսի։ Եվ վերջապես, ինչպե՞ս կարելի է պաշտոնանկ անել մեկի, երբ նրա բոլոր ճառերը չեն վերջացել։*

Տեսնո՞ւմ եք՝ պաշտոնանկության ինչպիսի անթույլատրելի ձև է որդեգրել Ռուսաստանը։ Իր առաջնորդին հանում ուղարկում է հեռու տեղ՝ աթոռը տակից քաշում է։ Զորավար և ռազմական մինիստր Ժուկովին ուղարկեցին Բուլղարիա և աթոռը տակից քաշեցին, Խրուշչովին ուղարկեցին Սոչի, պաշտոնանկեցին։

---

* Դիշ քիրասի (diş kirasi) - թրք. ատամի վարձ։

** Սաղ- սալամաթ (sag selamet) - թրք. ողջ- առողջ։

Սրանից հետո ո՞ր հիմար առաջնորդն է, որ մի տեղ գնալիս իր աթոռը հետը չի տանի…

Խրուշչովին՝ իբրև ծերի, հանգստյան կոչեցին և թոշակավորեցին։ Բայց մեզ մոտ, համաձան օրենքի, թոշակառուն չի զրկվում կիսով չափ աշխատելու իրավունքից։ Եթե, ասենք, թոշակառու ուսուցիչն արտոնված է օրական երկու ժամ դասախոսել, Խրուշչովը որպես նախկին վարչապետ, իրավունք չունի՞ օրական երկու ժամ կառավարելու Ռուսաստանը։

Ներկա պայմաններում երկու ժամում կարելի է աշխարհը կործանել։ Կնստի աշխարհը կկործանի՝ կքաշվի։

Հիմա շատերը զարմանում են, թե այդքան ճառերի նյութ որտեղից էր ճարում Խրուշչովը։ Այդ հարցին պատասխանելու համար անցնենք Հին Հռոմ։ Այնտեղ Ներոնը մի բանաստեղծություն գրելու համար այրեց Հռոմը։ Իսկ Հռոմն իր մեծությամբ ինչ էր՝ համեմատած աշխարհի մեկ վեցերորդ մաս կազմող լայնածավալ Ռուսաստանի հետ։

Խրուշչովը քարուքանդ էր անում ողջ երկրի գյուղատնտեսությունը, որպեսզի իր երկար ճառերով ցույց տար, թե ինչպես կարելի է վերակառուցել։

Իսկ եթե Խրուշչովն իր ճառերը ոտանավորների վերածեր, քանի՞ հատորներ կկազմեր։

Նրան նշանակած թոշակը անբավարար է, դրանով չի կարելի ապրել։ Եթե առաջուց նրան հայտնվեր, թե պաշտոնանկվելու է, նա իր գլխի ճարը տեսած կլիներ։

Ման էր գալիս ողջ աշխարհով մեկ և բազմաթիվ պետությունների միլիոններով վարկ էր տալիս։ Չէ՞ր կարող պայմանավորվել վարկառու պետությունների հետ, որ պաշտոնանկվելու դեպքում վարկի կեսն իրեն հանձնեին ապրելու։ Նա կարող էր ողջ Ռուսաստանը վարկով բաժանել, հետո գնալ, կեսը ետ առնել և այդ կես Ռուսաստանի վրա ցմահ թագավորել։

Զգիտեմ, նրա պաշտոնանկությունը ոչ միայն իմ, այլև աշխարհի վրա վատ ազդեց։

Երևակայեցեք մի ութսուն տարեկան ջաղացպան, որ իր ջաղացում ամբողջ ութսուն տարի լսել է ջրաղացի չխկչխկոցը, հանկարծ լռի։

Խեղճ մարդ…

Գնա՛ց իր ձեռքով փետրած Բուլգանինի[40], Մոլոտովի կողքին արևկող արած նստելու Ռուսաստանի պատի տակ՝ աշխարհից մոռացված։

Իրերի այս վիճակում, ամերիկյան ռադիոն շարունակում է «պարոն Խրուշչով» անվանել նրան։

Սև գա այդպիսի «պարոնի» գլխին…

Նրանք կարծում են՝ իրենց նախագահներն են, որ ամեն տեսակ վիճակում, աթոռից ընկնելուց հետո էլ մնում են որպես մարդ, որպես պարոն։

Ռուս նախագահները փուչիկ են. գահի վրա ուռչում են որքան ուժ ունեն, ընկան՝ կդառնան ոտ սրբելու լաթ։

Խրուշչովը նոր է գահընկեց եղել ու դեռ թաց է։ Մի քիչ չորանա՝ նրան էլ Ստալինի նման կայրեն, աշխարհում քիչ տեղ բռնելու համար։

Ես եթե ՄԱԿ-ին անդամ լինեի, պիտի առաջարկեի մի Սուրբ Հեղինե կղզի առանձնացնել հեռավոր օվկիանոսներից մեկում, այս թշվառներին այնտեղ զետեղելու համար։ Նապոլեոն Բոնապարտի անվան մի Սուրբ Հեղինե կղզի։

Ռուսաստա՛ն, ի՞նչ էիր, ի՞նչ դարձար։

Ցարերից ազատվեցիր, ցարուկների ձեռքն ընկար։ Մարմնով՝ փոքր, չարագործությամբ՝ ահեղ…

Մորուքի փիլիսոփայություն

Անհերքելի փաստ է, որ բոլոր ձրիակերները, գոյություն չունեցող Աստծու գոյությունը բոլոր ապացուցողները, անիրագործելի գաղափարներ քարոզող բոլոր վարդապետները երկար և թավ մորուք են ունենում։ Եվ այն ստեղծարար ձեռները, որ բնությունը տվել է մի օգտակար բան շինելու համար, գործածում են այդ անպետք մորուքները հարդարելու, կոկելու համար։

Էջմիածնում մի կարճ ու կուզ վարդապետ կար, որ քայլելիս գետինն ավլում էր իր երկար մորուքով։

Այս մարդն իր մորուքը ղեկավարելուց հետո եթե կամենար մի այլ արհեստով զբաղվել, կհաջողե՞ր։ Ո՛չ, իհարկե։ Կամենար խոհա-

բար լինել, իր մորուքը հրդեհի կմատներ, հրշեջի խոսք անգամ չէր կարող լինել։

Զարմանում եմ, որ քահանաները, որոնք նույնպես մորուք են թողնում, ինչպե՞ս են ամուսնանում։ Նրանց կանայք երևի գիշերները հաստ դիմակ են հագնում, մազերի ծակոցից ազատ լինելու համար։ Մի հանգամանք, որ գալիս է կնոջն ազատելու իր մարդուն հավատարիմ ամուսին լինելու պարտականությունից։

Քահանայի կինը կարող է դիմակավորել որևէ կնոջ, դնել իր մարդու ծոցը և գնալ ածիլվածների մոտ՝ մարդահոտ առնելու...

Այսքանը Աստուծո արքայությունը քարոզողների մասին։ Հիմա գանք այն վարդապետների մորուքին, որոնց քարոզած սկզբունքները հասարակ աչքով անտեսանելի են, մտքի համար էլ՝ անիմանալի։

Կամ բժշկական լեզվով ասած՝ քառասունմեկ աստիճան ջերմություն ունեցող հիվանդի զառանցանք։

Այդ զառանցանքը սոցիալիզմն է, որ քարոզեցին Մարքսն ու Էնգելսը՝ իրենց կզակներին կրելով համապատասխան թավ ու երկար մորուքներ, պահելով իրենց սկզբունքների հետ ուղիղ հարաբերակցություն։ Շատին՝ շատ, քչին՝ քիչ։ Այսինքն՝ որքան քարոզած վարդապետությունը անհեթեթ, մորուքն այնքան երկար։ Հարց. քանի որ սոցիալիզմի հիմնադիրները գերմանացիներ էին, ինչո՞ւ իրենց սեփական երկրում չգործադրեցին այդ նորահարս վարդապետությունը, տվեցին Լենինին, որ Ռուսաստանում գործադրի։

Մարդ էլ ամուսնանա ու անգամ մի գիշեր հետը չպառկած կնոջը տա ուրիշին, որ տանի բախտավորվի...

Հարցին պատասխանում եմ։

Գերմանիան ամբողջովին լցված է ծանրախոհ փիլիսոփաներով, մեծ գրողներով ու հռչակավոր կոմպոզիտորներով։ Գերմանիան այն երկիրն է, ուր ապրել ու գործել են կանտեր, հեգելներ, գյոթեներ ու բեթհովեններ։

Գերմանիան մի պարկ է՝ ճխտված միայն իմաստությամբ, որ մի ասեղի տեղ անգամ չի թողնում հիմարությանը։ Բնական է, որ սոցիալիզմի նման մեծ հիմարությունն այնտեղ չէր տեղավորվի։

Իսկ Ռուսաստանը։ Դափ-դատարկ. հիմարություն ածի, որ լցվի։

Կրոնական ամեն ձևի աղանդներ՝ դուխոբորներ[41], մոլոկաններ[42], պրիգուններ[43], ճորտատիրություն, ցարիզմ, հետամնացություն։

Թեև այս հետամնացությունը վերացնելու համար Պետրոս Մեծը «պատուհան» բաց արեց Եվրոպայի վրա[44], բայց այդ պատուհանի ապակիները հետագայում այնքան մնացին առանց սրբելու, որ այլևս Եվրոպայի լույսը չէր թափանցում Ռուսաստան, ու մութն այնտեղ այնքան խտացավ, որ ծնունդ տվեց սոցիալիզմի։

Նշանակալից է այն, որ Մարքսն իր վարդապետությունը լիառատ Լենինին տվեց՝ Ռուսաստան տանելու, բայց զլացավ հետն էլ մի քանի մազ տալ իր մորուքից։

Եվ դա պատահական չէր։

Ուրիշ բան է հնարել մի թեորիա, ուրիշ՝ այդ թեորիան գործի վերածել։

Թեորիային խիստ հարկավոր է երկար մորուք, իսկ այդ թեորիան գործի վերածողին՝ ոչ։

Թեև Լենինը, Ռուսաստան գալով, իր հետ մի կիսամորուք բերեց կզակին, որ այնուամենայնիվ գործածեր, եթե դրա կարիքը զգացվեր, բայց դա էլ ավելորդ էր։ Այն մարդը, որ գնում է մի լայնածավալ երկիր հրդեհելու, ոչ մի մորուք չպիտի ունենա։ Դա վտանգավոր է։

Լենինը, Ռուսաստան գալով, պառկեցրեց երկիրը և սոցիալիզմ լցրեց ժողովրդի բերանը…

Այս դեղից բնակչության կեսն անմիջապես մեռավ քաղաքացիական կռիվներում, մյուս կեսն էլ կիսահիվանդ ման է գալիս՝ խելռած, գլուխը երերացնելով, ծառին ու պատին կառչելով։

Լենինի հաջորդ Ստալինը, որը բոլորովին մորուք չէր պահում, փորձեց մնացյալ բնակչությանը կոտորել իր թավ բեղերի օգնությամբ և հաջողեց։ Նա իր բեղերով սպանեց մոտ քսան միլիոն մարդ։

Գուցե հարցնեք, թե ինչն էր պատճառը, որ մորուքը թողած՝ բեղերի գործածությանն անցավ։

Նա բեղերի անցավ նրա համար, որ պատմության դատաստանից ազատվի։ Բեղերը բաղկացած են երկու հատվածից՝ մեկը դեպի աջ ականջը ոլորված, մյուսը՝ դեպի ձախ ականջը։

Երբ ոճրագործը երկու մասից է բաղկացած, ապագա պատմագիրների կարծիքների մեջ բնավ միասնություն չի լինի. մեկը պիտի աջակողմը պաշտպանի, մյուսը՝ ձախակողմը։ Այնպես, ինչպես պատահեց մեր Վասակ Սյունիի հետ։ Մի մասը պատմաբաններից

նրան հայրենիքի դավաճան է համարում, մյուսը՝ հայրենասեր[45]:

Իսկ շատ հետո, Ստալինից հետո, երբ եկավ Խրուշչովը, իր բեղն էլ, մորուքն էլ հավասարապես ածիլեց, և ցույց տվեց, որ անմազ դեմքով էլ կարելի է ժողովրդին շատ լավ տանջել...

Սա մի ուրախալի փորձ էր, որ ցույց տվեց, որ սրանից հետո կանայք էլ կարող են երկրի առաջնորդներ լինել և տղամարդկանց հավասար մարդկանց տանջել:

Իսկ այս շատ անհրաժեշտ էր, որովհետև բոլշևիկյան իշխանությունը երկրում կանանց իրավունքները հավասարեցրել է տղամարդկանց:

Նյութեր՝ իմ կենսագրության համար

Ես վերին աստիճանի ամաչկոտ մարդ եմ: Մինչև ինձ չհրավիրեն, ես ուրիշի դուռ բաց չեմ անի, ներս չեմ մտնի:

Այնպես որ հիմա ինքս էլ եմ ինձ վրա զարմանում, թե ինչպե՞ս այս աշխարհի դուռը բացեցի ու աշխարհ եկա առանց հրավերի: Անգամ առանց դուռը ծեծելու:

Ծնվեցի ու երբ իմացա՝ հայ եմ, գնացի Թուրք կառավարությանը ներկայացա թե՝ հայ եմ, խնդրում եմ ինձ կոտորես:

Կառավարությունն ասաց.

- Ուշացել ես: Ես տասը տարին մի անգամ եմ կոտորում, ութ տարի պիտի սպասես, մինչև հաջորդ տասնամյակը:

Ճարս ինչ, պիտի սպասեի:

1915 թվի հունիսին Թուրք կառավարությունը զորքով պաշարեց Վան քաղաքը, ուր ծնված էի ես և ասաց.

- Ես ռուսների դեմ պատերազմ պիտի գնամ, չեմ կարող մինչև ծծկեր երեխան կոտորել: Համառոտակի կկոտորեմ, նոր վերադարձին կամբողջացնեմ: Շտա՛պ շարվեցեք:

- Վե՛ր ելեք կոտորվենք,- ասացի իմ հայրենակիցներին:

Տեսնեմ՝ տեղից չեն շարժվում:

- Ի՞նչ եք նստել, հայ չե՞ք,- բարկացա ես:

- Հայ ենք, բայց այս անգամ չենք ուզում կոտորվել,- ասացին:

- Բա ի՞նչ պիտի անեք:

- Մեր անձը պիտի պաշտպանենք և Թուրքերին կոտորենք:

Ամբողջ հայոց պատմության մեջ չլսված խոսքեր...

- Ա՛յ տղերք,- ասում եմ,- նրանք ինչ գիտեն կոտորվելն ինչ բան է, նրանք միայն կոտորել են: Դե կոտորվել չիմացողին հա՛ կոտորիր, տեսնենք՝ ո՞նց ես կոտորում:

Ու զարկինք, զարկվանք, մինչև հայ կամավորները հասան ու մեզ ազատեցին Թուրքի ձեռքից:

Ես էլ ազատվեցի:

Ազատվեցի ու մտածում եմ: Արդյոք իմ արածն անազնվություն չէ՞ր: Ո՞նց կարելի է ազատվել, երբ Թուրքն ուզում է անպատճառ կոտորել...

Վերջը գաղթեցինք եկանք Կովկաս:

Այստեղ մեր կորցրած հայրենիքը լացինք-լվացինք, վերջում հաշտվեցինք մեր վիճակի հետ, մեր վիշտը սրբեցինք մեր երեսից և ապրելու համար ուզում էինք մի թեթև ժպտալ, երբ հանկարծ Ռուսաստանը բոլշևիկ դարձավ, ռազմաճակատը լքեց ու Թուրքերը մեր ետևից հասան թե՝ մենք ռուսներից պրծանք, դե եկեք մեր կիսատ թողած կոտորածը շարունակենք:

Այն ժամանակ ես դարձա հայրենակիցներիս, ասացի.

- Տեսա՞ք: Ես որ ասացի այսօրվա գործը վաղվան ձգելու չէ, դուք ինձ չլսեցիք: Եթե այն օրը Վանում կոտորվեինք, մեր պարտքը հատուցած կլինեինք ու այսօր նորից չէինք կոտորվի:

Բայց հայրենակիցներս ելան «վանսկի պոլկ»[46] կազմեցին և Թուրքին ասացին՝ եկ կռվենք:

- Կատակի ժամանակ չէ,- ասաց Թուրքը նեղացած ու ավելացրեց,- կատակը գործից հետո են անում: Հիմա կոտորեմ, հետո զվարճանանք:

Այս առուտուրի մեջ հանկարծ բոլշևիկները զոռեցին, Հայաստան մտան:

Հայերը մի պահ ուրախացան, բայց երբ սկսեցին մեկ-մեկ բռնել ու բանտերը լցնել հայերին, հարցրին.

- Այդ ինչ եք անում:

- Հավաքում ենք բանտերում, որ ձեզ կոտորենք:

Զարմացան հայերը և ասացին.

- Թուրքը մեզ ազատ օդի մեջ է կոտորում, մենք չենք հոժարում, գանք բանտի մեջ կոտորվենք...

Այդ ժամանակ թուրքերն ու բոլշևիկները առանձնացան ու սկսեցին իրար մեջ կամաց խոսել[47]:

Վերջացնելով խորհրդակցությունը՝ թուրքն ասաց.

- Հայե՛ր, եթե ուզում եք փրկվել, կա՛մ թուրք պիտի դառնաք, կա՛մ բոլշևիկ: Փրկության ուրիշ ելք չկա: Եթե ոչ, ուղիղ կես կանենք ձեզ, մի մասը ես կկոտորեմ, մի մասը՝ բոլշևիկները:

- Ինչո՞վ կկոտորեք,- հարցրին հայերը:

- Ես՝ սրով, բոլշևիկները՝ կացնով:

Հայերը ծանր ու թեթև արին՝ կարճ եկավ:

Հետո հարցրին.

- Եթե թուրք դառնանք, ինչ է սպասում մեզ, եթե բոլշևիկ դառնանք՝ ինչ:

- Թուրք դառնալը շա՛տ հեշտ բան է: Եթե թուրք դառնաք, կթլպատենք ձեզ՝ կտրելով ձեր մարմնի մի շա՛տ աննշան մաս, իսկ եթե բոլշևիկ դառնաք, կացնով ձեր ամբողջ գլուխը կկտրի:

- Պրովոկատո՛ր,- թուրքի վրա բղավեց բոլշևիկը այն կողմից, մենք ռուսներս չենք անում այդպիսի բան, այդ հայ բոլշևիկներն են անում:

- Ո՛չ, ռուսներն են անում,- չարացավ թուրքը:

- Աթարբեկյանը[48], որ կացնահար էր անում, հա՞յ էր, թե՞ ռուս:

Սրա վրա թուրքերի ու ռուսների մեջ կռիվը բորբոքվեց (լեզվակռիվ, իհարկե, որովհետև բոլշևիկյան Ռուսաստանը սո՞ւր կբարձրացնի թուրքի վրա: Հայ չկա՞, որ թուրքին կոտորի...):

Հայերը, տեսնելով, որ իրենց պատճառով լեզվակռիվ բարձրացավ երկու պետությունների մեջ, և կարող էր գործը վիրավորանքի հասնել, ասացին.

- Մի՛ կռվեք: Վարվեցեք մեզ հետ, ինչպես կամենաք:

Այն ժամանակ կիսեցին հայերին, իր փայը* թուրքը տարավ, մի մասին Էրզրում աշխատանքի ուղարկելու պատրվակի տակ սպանեց, մյուս մասը լցրեց Շիրակի հարդանոցները, կրակի տվեց և ամեն ինչ վերջացրեց:

Բայց ճշմարտության դեմ չմեղանչելու համար ասեմ, որ թուրքը կոտորում էր հային՝ առանց մեկ-մեկ ջոկելու, այլ առհասարակ, բայց բոլշևիկները այդպես չարեցին: Նրանք կաղամբի պահեստ

* Փայ (pay) - թրք. բաժին, մաս:

մտածի նման ջոկեցին՝ հայերի մեծ գլուխները ջարդեցին։ Հարուստներին, գիտնականներին, լեզվագետներին, դասախոսներին, գրողներին, դաշնակներին և բոլոր նրանց, ովքեր անհրաժեշտ էին հայ ազգի համար, ովքեր իրենց անձը զոհում էին իրենց ազգի համար...

Մի խոսքով՝ ազգի գլուխներին։

Եվ ինչո՞ւ, գիտե՞ք։

Նրա համար, որ մնացած տականքը իրենց շարքերը լցնեն, մարդաշատ դառնան։ Որովհետև բոլշևիկյան շարքերը կարող էին մտնել միայն մանր երեխաները՝ «պիոներ» անվան տակ։ Իսկ եթե մտնողը մեծահասակ էր, պիտի լիներ կատարյալ հիմար։ Խելք նկատեցին՝ կթոցնեին գլուխներն այդ հիմարների թագավորության մեջ։

Այժմ թույլ տանք հայ ազգին՝ այսպես մեռնի ու ապրի, խոսեմ իմ մասին։

Երբ բոլշևիկները հաստատվեցին Հայաստանում, ես աննշան գրող էի, հենց որ մեծացա, դարձա «հայ ազգի մեծագույն հայ երգիծաբանը», ինձ բռնեցին, տարան գցեցին Չեկայի[49] մութ ու խոնավ նկուղը, դուռը վրաս փակեցին ու ես լսում էի, որ չեկիստները, հավաքված իմ վերևի հարկում, խորհուրդ էին անում իրար մեջ, թե ինչ անեն ինձ, սպանե՞ն, թե՞ աքսորեն Սիբիր։

Ես էլ դռան ճեղքից լսում էի։ Ճիշտ այնպես, ինչպես Լև Տոլստոյի «Կովկասի գերի»-ի մեջ թաթարները Ժիլինին և Կաստիլինին գցել էին ջրհորը, և նրանք ներքևից լսում էին, թե ինչպես թաթարներից մեկն առաջարկում էր սպանել, մյուսն ասում էր՝ փրկանքով ազատենք։

Ես միայն «Կովկասի գերի» չէի, իմ բախտով ես շատ նման էի նաև իսպանացի երգիծաբան Սերվանտեսին։ Նրան էլ Մարոկկոյի արաբները բռնեցին, տարան գերի և ուզում էին փրկանքով ազատել կամ սպանել։

Սերվանտեսին ես նման եմ նաև այն բանում, որ նա Դոն Քիշոտ է գրել, իսկ ես՝ Դոն Լենին։ Երկուսն էլ՝ իրենց սուր նիզակներով մարդկությանը երջանկություն բերող...

Ես այն էի Հայաստանում, ինչ Սերվանտեսն Իսպանիայում։

Հա, ուրեմն, ինձ ձգեցին Չեկայի պաղվալը և խորհրդակցում էին, թե ինչպես սպանեն։

Երբ նրանցից մեկն ասաց՝ եկեք սպանենք, մյուսը ասաց՝ չէ՛: Ասաց.

- Որովհետև ոչ մի հանցանք չի գործել մեր դեմ, հետևաբար, շատ է անմեղ, մենք չենք կարող մի անգամ սպանել, պետք է քառասունհինգ անգամ սպանենք՝ որպես բոլորովին անմեղի:

- Ինչպե՞ս,- հարցրեց մեկը:

- Քսան տարով կուղարկենք Սիբիր, քսան անգամ այնտեղ կսպանենք, մնացյալն էլ այստեղ:

Ինչպես վճռեցին, այնպես էլ արեցին:

Ես հենց այն օրն էի ուզում մեռնել, բայց ամաչեցի: Ասացի. «Առանց իմաց տալու աշխարհ եմ մտել, առանց իմաց տալու աշխարհից հեռանամ, ինչ կասեն մարդիկ: Չե՞ն համարի անքաղաքավարի»:

Հետո, երբ ես գալիս էի աշխարհ, մնացողները խնդրել էին ինձ գալ աշխարհը տեսնել և վերադարձին տեսածս պատմել: Ես էլի պիտի ապրեի, ավելի նոր բաներ տեսնեի, որպեսզի պատմությունս երկար լիներ:

Ապրեցի ու ոչ մի նոր բան չտեսա:

Միայն բանտ, միայն աքսոր, միայն գնդակահարություն:

Որոշեցի մեռնել ու ինձ սպասողներին հետևյալն ասել.

- Բարեկամնե՛ր, եթե ուզում եք ծնվել հայ և աշխարհ մտնել, ձեզ հետ պիտի տանեք մի շատ երկար վիզ, որ և՛ թուրքը ձեզ մորթի, և՛ բոլշևիկը:

Այսպես կասեմ ու կավելացնեմ.

- Այս աշխարհին կարճ վզով մարդ չի սազի...

Ես մաքսատան պաշտոնյա եմ

Շատ անգամ եմ փորձել արտասահման փախչել՝ չեմ կարողացել:

Միշտ դեմ եմ առել «երկաթե վարագույրի»[50]:

Այդ երկաթե վարագույրը Չերչիլը քաշեց Ռուսաստանի սահմանի վրա, որը ճիշտ չէ:

Վարագույրը միշտ ենթադրվում է շորից: Այն էլ բարակ շորից և երբեք երկաթից, որ քամին տատանի ու ծածանի:

Եթե Չերչիլն ուզում էր այնպիսի պատնեշով շրջապատել Ռուսաստանը, որ օձն իր պորտով, հավքն իր թևով չկարողանար անց-

նել, դրա համար կար պատրաստի անուն, և դա «չինական պարիսպն» է։ Մի պարիսպ, որ դարեր շարունակ Չինաստանը կտրեց լուսավորյալ աշխարհից։

Վարագո՞ւյր...

Վարագույրը, եթե շորից լիներ, թեկուզ ամենաթանձր շորից՝ բրեզենտից կամ թաղիքից, ես դարձյալ մի ծակ կգտնեի արտասահման փախչելու։

Իսկ ներկայիս կատաղած շներից ազատվես, փշալարերից ազատվես, թե՞ կրակի պատրաստ զինվորի հրացանից...

Դրանից հետո իմ հույսը դրեցի երազի վրա, ասում եմ՝ գուցե հնար լինի երազով փախչել։

Այս գիշեր փորձեցի։

Հավաքեցի իրերս և շատ խորը քնեցի, երազ էլ տեսա, բայց այդ երազը ինձ չտարավ իմ ուզած ուղղությամբ։

Ես նշանակվեցի մաքսային պաշտոնյա այն միակ ազատ սահմանագլխի վրա, որով մարդիկ ծնվում, աշխարհ են գալիս և մեռնում գնում են այն աշխարհ։

Ինձ հրամայված էր հսկել, որ Սովետական Միություն եկողները մաքսանենգությամբ խելք չփոխադրեն մեր երկիր։ Ծանր մաքս դնել խելքի վրա, իսկ այն աշխարհ գնացողներին էլ թույլ չտալ երկրի հիմարությունը այն աշխարհ փոխադրել։ Եվ ես նախքան բաց թողնելը մանրամասն խուզարկում էի նրանց գլուխները։

Այսպիսի արգելքն իմ սրտին էլ մոտ ընդունեցի։ Այդպես էլ պետք էր անել։ Դեպի ժամանակավոր կյանք եկողներն իմաստությունից ավելի կարիք ունեն հիմարության, իսկ մեռնողների համար հարկավոր է իմաստություն՝ իրենց հավիտենական կյանքը կարգավորելու համար։

Մահը կյանք չէ, մահը լուրջ բան է։

Կյանքի մասին ամեն ապրող իր սեփական կարծիքն ունի, իսկ մեռնելիս մահը դիկտատոր է ավելի խիստ, քան Ստալինը մի ժամանակ։

Կյանքում մարդը կարող է ապրել հազար տեսակ, իսկ մեռնելիս միայն մի տեսակ։

Երազումս մի օր ծնվեց և սահմանագլխի վրա անշարժ կանգնեց մի մարդ։

Կանգնեց, կանգնեց, կանգնեց շեմքին. ոչ այս աշխարհն է գալիս, ոչ այն:

- Ա՛յ մարդ,- ասում եմ,- ի՞նչ ես տնկվել կանգնել ճանապարհի վրա: Ծնվել ես՝ ապրի՛ր, էլ ի՞նչ ես նայում:

- Այս ո՞ւր եմ գալիս:

- Սովետական Միություն:

- Ի՞նչ տեսակ երկիր է դա:

- Բանվորագյուղացիական իշխանություն է այստեղ: Ով աշխատի՝ նա ուտի:

- Ու չաշխատողը չուտի՞:

- Այո՛:

- Սխալ եմ եկել,- ասաց մարդը և ուզում էր ետ դառնալ:

- Ո՞ւր այդպես,- կանչում եմ ետևից:

- Գնամ Ամերիկայում ծնվելու, ուր չաշխատողն է միայն ուտում: Ես սիրում եմ այն երկիրը, ուր բուրժուազիան բանվորի արյունն է ծծում:

- Եթե այդ խելքով Ամերիկա գնաս, կփոշմանես: Այնտեղ բուրժուազիան բանվորից շան նման դողում է: Բանվորներն ունեն պրոֆմիություն. որ գործադուլ հայտարարեց, բուրժուազիան կչոքի:

- Այն ժամանակ ես աշխարհ չեմ գա, ես գալիս էի այն մտքով, որ բոլորովին չաշխատեմ, բանվորի արյունը ծծեմ ու անհոգ ապրեմ:

Տեսա, որ մարդն իսկապես էլ ետ է գնում, ափսոսս եկավ, ասացի՝ ինչո՞ւ մի մարդ կորցնեմ:

Ստիպված ետ կանչեցի.

- Արի՛, արի՛,- ասացի,- արի քեզ միայն ուտելու, աշխարհի բարիքը վայելելու պաշտոն տամ:

- Ասում ես՝ ձեր երկիրը բանվորագյուղացիական է, ուր միայն աշխատողն է ուտում...

- Արի՛, չաշխատողն էլ է ուտում: Արի քեզ մեր երկրի առաջնորդը դարձնեմ:

- Ի՞նչ պաշտոն է այդ:

- Խոսքով ժողովրդին պիտի տանես դեպի հավասարություն, եղբայրություն, երջանկություն, իսկ գործով նրանց արյուն-քրտինքով ձեռք բերած բարիքը վայելես:

- Իսկապե՞ս,- ուրախացավ մարդը:- Այդ Ամերիկայից լավն է...

- Ամերիկան ինչ է որ: Այնտեղ հարստանալու համար խելք է հարկավոր, որն ամեն մարդ չունի, իսկ մեզ մոտ հիմարություն է պետք:

- Ձեզ մոտ բոլորն են հիմար:

- Բոլորը հիմար կլինեին այն ժամանակ, եթե բոլորն էլ գլուխ ունենային, բայց որովհետև մեր երկրում գլուխ ունի միայն երկրի առաջնորդը, այդ պատճառով էլ բոլոր հիմարությունները նրա գլխում են ամփոփված, իսկ երկրի բոլոր բարիքներն էլ՝ նրա փորում... Վերջը ինչ երկարացնեմ, առաջնորդ կդառնաս, կիմանաս:

- Սովորեցրո՛ւ առաջնորդ դառնալ:

- Վա՜յ, ինչ բեբաշար մարդ ես... Սովորելու ինչ կա այդտեղ,- բարկացա ես,- ինքդ քեզ կընտրես առաջնորդ ու կսկսես վայելել: Աշխարհը քոնն է: Կուզենաս, Ստալինի նման կփակվես Կրեմլում, կուտես, կուզենաս, Խրուշչովի նման երկրի բարիքը բրդուճ արած՝աշխարհ ման գալով կուտես:

- Ինչո՞ւ էր Ստալինը փակված ուտում:

- Որովհետև մարդասպան էր, վախենում էր քիթը Կրեմլից դուրս հանել:

- Արտասահմանյան սիրեկաններ չունե՞ր:

- Ուներ:

- Բա ինչպե՞ս էր հարաբերվում նրանց հետ, առանց դուրս գալու Կրեմլից:

- Դուրս էր հանում իր մարմնի այն մասը միայն, որն անհրաժեշտ էր այդ բանի համար...

- Այն ժամանակ ես Խրուշչով կլինեմ:

- Եղի՛ր: Ճառ խոսել գիտե՞ս:

- Սանկ... քիչ-միչ:

- Քիչ-միչով Խրուշչով չես կարող լինել: Պետք է անվերջ երկրե-երկիր վազես ու ճառ խոսես:

- Նյութը որտեղից ճարեմ:

- Մի՛ մտածիր այդ մասին, կգրեն, կտան քո ձեռքը. դու միայն պիտի կարդաս:

Այս լսելով՝ մարդն անմիջապես իր պորտը կտրեց ու աշխարհ գալով՝ ուղղվեց դեպի Մոսկվա...

Գրախոսություն

Բոլշևիկը եթե ուզում է անսխալական լինել, աշխարհ գալով՝ պիտի անշարժ կանգնի ու տեղից չշարժվի։ Մի փոքրիկ շարժում արեց՝ տասնհինգ տեսակ սխալի, հակասության և անհեթեթության մեջ կընկնի։ Իսկ եթե սկսեց «սոցիալիզմ կառուցել», օյ, օյ, օյ, փախեք, որ սխալանքի հեղեղը չքշի ձեզ տանի…

Ահա ձեզ երեք բոլշևիկ, այն էլ ոչ թե հասարակ, շարքային, այլ պրոֆեսորներ, դեռ մեկն էլ դոցենտ՝ Պարսամյան, Պողոսյան և Հարությունյան։

Հակասանքի այս երեք պրոֆեսորները միացած՝ ռուսերեն լեզվով գրել են հայոց պատմության մի դասագիրք, որ հայ մանուկները ռուսերենով սովորեն իրենց հայոց պատմությունը[51]…

Բայց խնդրում եմ նկատեք՝ եռյակն իր դասագիրքն անվանել է ոչ թե «Հայոց պատմություն», ինչպես սովորաբար գրում են, այլ «Հայ ժողովրդի պատմություն»…

Գլխի՞ եք՝ ինչ են ուզում դրանով ասել։

Վախեցել են ասել հայոց պատմություն։ Ինչո՞ւ։ Հայերը նաև ժողովո՞ւրդ չեն, պիտի հարցնեմ գրքի հեղինակներին։ Հայը նշանակում է նաև թո՞ւրք, իսկ ժողովուրդը՝ հա՞յ։

Ո՛չ, նրանք «ժողովուրդ» են ասել, որպեսզի հանկարծ մի թագավոր չծլկի ներս։

Եվ այդ այն ժամանակ, երբ գրքում պատմում են թագավորների արարքները, փնտրում են, որ ժողովուրդն էլ մի բան արած լինի, որ գրեն, ու չեն ճարում այդպիսին։

Որպեսզի թագավորի անուն չտան, նրան «ժողովուրդ» են անվանում։

Եռյակն իր պատմությունն սկսում է նախնական դարերից, թե ինչպես է հայ ազգը գոյացել դեռ հազարավոր տարիներ մեր թվականությունից առաջ։

Ինչո՞ւ են նրանք այդքան խորը մխրճվել պատմական անցյալի մեջ՝ այնտեղ մի հատիկ պրոլետար կամ բանվոր դասակա՞րգ գտնելու։

Ո՛չ։ Սա տակտիկական արշավ է։

Ինչպես Սասունցի Դավիթը Մսրա Մելիքին հարվածելու հա-

մար իր ձին քշեց մինչև Դիարբեքիր, այնպես էլ մեր պրոֆեսորներն իրենց ձիերը քշում են պատմության խորքերը, որ այնտեղից երիշ քաշեն* գան, գրեն Սովետական Հայաստանի պատմությունն ամենայն մանրամասնությամբ:

Պատմություն, որ ոչ այլ ինչ է, եթե ոչ սոցիալիստական օյինբազություն:

Օրենքով նրանք առանց մի խոսք ասելու մեր հին պատմության մասին՝ ուղղակի հայ ժողովրդի պատմությունը պետք է սկսեին 1921 թվականից, երբ բոլշևիզմը մտավ Հայաստան:

Այնպես, ինչպես մի ժամանակ հայոց գրականությունը ուզում էին սկսել Չարենցից և Աբովից: Բայց չարեցին, որովհետև այդ տղայական պատմությունը, երբ հրապարակ դուրս գար, ամեն անցորդ մոտենալով պիտի ասեր.

- Բալա՛ ջան, դու ո՞ւմ տղան ես: Ու դես-դեն ընկած պիտի նրա ծնողներին փնտրեին՝ նրանց հանձնելու:

Պրոֆեսորներն այդ պատճառով նոր պատմությունը մեջ են բերել՝ հին պատմության ձեռքը բռնած, որ չասեն ապօրինի զավակ է...

Եվ նոր պատմության ձեռքը բռնի դրել են հին պատմության ձեռքում, որովհետև հինը երբեք չէր ցանկանա կամավոր այսպիսի անարժան զավակ ունենալ: Նա հենց ծնած օրին աշխատեց խեղդել այդ հրեշին, բայց ռուսները չթողեցին:

Հիմա դառնանք գրքի իրավաբանական կողմին:

Երբ Հայաստանի բոլշևիկյան կառավարությունը, երկիրը մտնելով, աքսորեց, սպանեց, բնաջնջեց երկու կով և քսան ոչխար ունեցող գյուղացիներին՝ որպես «կուլակի», նրա պրոֆեսորն իրավունք ունի՞ գրելու Արտաշես Աշխարհակալի, Տիգրան Մեծի մասին, որոնց կովերի ու ոչխարների հոտերը համրանք չունեին, և որոնք՝ որպես «իմպերիալիստներ», տիրեցին բազմաթիվ ազգերի ու գերեվարեցին Հայաստան:

Եթե պիտի հիշատակեին այդ թագավորների անունները, այդ նրա համար, որ նզովեին նրանց՝ որպես «արյունարբու բռնակալների», ինչո՞ւ չեն անում:

Ինչ եք կարծում, եթե այդ թագավորները զգուշության համար

* Երիշ քաշել, քշել (բրբ.) - հարձակում գործել, արշավել:

նախապես չմեռնեին և միամտություն ունենային ապրելու մինչև մեր օրերը, բոլշևիկները չէին բռնի նրանց ու բանտերը նետած՝ դուրս հանեին, մեկ-մեկ գնդակահարեին:

Չէ՞ որ Լենինն ասաց՝ «Մա՛հ պալատներին, խաղաղություն խրճիթներին»:

Իսկ մեր ոչ մի թագավոր խրճիթում չի ապրել: Նրանց պալատների մնացորդները մինչև օրս էլ հայ ճարտարապետների զարմանքն են շարժում:

Հետո, պրոֆեսորնե՛ր, երբ դուք ձեր դրոշակի վրա գրել եք. «Պրոլետարնե՛ր բոլոր երկրների, միացե՛ք», էլ ի՞նչ գործ ունեք «ժողովրդի» հետ: Ժողովուրդը «պրոլետա՞ր» է: Ո՛չ, նա ամալգամ* է, խառնուրդ ամեն դասակարգերի:

Հարուստներին, խելոքներին, գիտնականներին, փիլիսոփաներին, արհեստավորներին, շինականներին թողեք մեզ, ջոկեք ձեր «պրոլետարներին», տարեք, ինչ կուզեք, արեք:

Գրքի հեղինակները, սրտխառնուքով պատմելով հին Հայաստանի մասին, երբ գալիս հասնում են նոր, բոլշևիկյան շրջանին, երեսներին ծիծաղ է ճառագայթում: Դուռը փակում, մտնում են նոր շրջանը, պատահած ոչնչություններին փչում, ուռեցնում են, որ հավասարվեն Արտաշես Աշխարհակալին ու Տիգրան Մեծին, որ կշեռքի նժարը չթեքվի դեպի անցյալը: Բայց այնուամենայնիվ նժարը թեքվում է, որովհետև մեկում նստած են հայկական փառքերը, իսկ մյուսում՝... ածխածին, թթվածին ու բորածին:

Նժարը թեքվում է, որովհետև մի նժարին նստած են ոչնչից մեր ազգն ստեղծողները, իրենց կյանքի գնով այն պաշտպանողները և մինչև մեր օրերը հասցնողները, իսկ մյուս նժարին՝ ազգ ու կրոն չճանաչող դավաճանները, որոնք գնացին, Ռուսաստանից բոլշևիկների ձեռքից բռնեցին բերեցին, որ իրենց պաշտպանեն, իսկ իրենք, ձեռները քշտած, դանակը վերցրին սպանելու իրենց ազգային արժեքները, իրենց հարազատներին, իրենց... ծնողներին:

Հնի նժարը պիտի թեքվի, որովհետև նորի վրա նստողները ո՛չ ազգ են, ո՛չ դասակարգ:

Ազգ ու դասակարգ լինելուց առաջ պիտի լինել մարդ: Իսկ նրանցում միայն մարդակերներ են:

* Ամալգամ - որևէ մետաղի միահալվածք սնդիկի հետ կամ մետաղի լուծույթ սնդիկի մեջ:

Մեր պատմագիրները, հիշատակելով Արտաշեսի ու Տիգրան Մեծի մասին, գրում են. «Նրանց օրում կարոտյալներ չմնացին երկրում, ամենայն ոք լիացավ ու բարգավաճեց»:

Իսկ մեր երեք պրոֆեսոր պատմաբանները կարո՞ղ են նույնն ասել իրենց «պարծանք» Լենինի և Ստալինի մասին, որոնք միայն կոտորեցին ժողովրդին, միայն աղքատացրին:

Ամերիկայի մտադրությունները

Ամուսինները կռվում են իրար հետ, տանջում անվերջ ու տանջվում: Այդ նրանից է, որ կարծում են՝ իրենց կապը հավիտենական է՝ մոռանալով, որ այն կողմ կա զագս, կա դատարան, որ մեկին ուզած րոպեին կարող է մյուսից բաժանել:

Հապա՛, այն կինը, որ անվերջ ծեծվում է իր մարդուց, թող մի օր փորձի ծանուցագիրը ձեռքին ներկայանալ մարդուն և դատարան հրավիրել՝ բաժանվելու, տես, թե մարդն ինչպես ձեռքի ճիպոտը դեն կնետի ու ծունկի կգա իր կնոջ առջև՝ ներողություն խնդրելով իր արածների համար:

...Աշխարհում օրենք կա, դատ կա, դատարան կա: Կնոջը չեն տա մարդու ձեռքը և ասի՝ ինչքան կուզես ծեծիր:

Սովետական Միությունն իր սկզբնավորման օրից տանջում է խեղճ Ամերիկային: Ասում է. «Քո կարգերը փտած են, քեզ պիտի վերացնեմ աշխարհի երեսից»: Ինչո՞ւ: Որովհետև կարծում է, թե Ամերիկան միշտ իր տեղը նստած է և փախչելու տեղ չունի: Բայց երբ իմացավ, որ Ամերիկան մտադրվել է թռչել Մարս մոլորակ, ջանը դող ընկավ: Ասում է. «Ո՞վ սրանից հետո ինձ հաց կտա, եթե իմ հացը պակսի, իմ երկրի առատությամբ ո՞ւմ պիտի հասնեմ անցնեմ, ո՞ւր ուղարկեմ իմ գյուղատնտեսներին, որ գնան խոզ ու ոչխար չաղացնել սովորեն, եգիպտացորենի մշակություն...»:

Ու չի ուզում, որ Ամերիկան թռչի, միաժամանակ էլ ձեռքի ճիպոտը չի գցում և չի չոքում նրա առաջ, իր արածների համար ներողություն խնդրում:

Բայց ոչ մի բան Ամերիկայի մտադրությունը չի փոխի, նա զզվել է խոսքով խաղաղ ապրելուց և որոշել է անպայման հեռանալ մեր մոլորակից՝ հետը տանելով իր երկրի ողջ հարստությունը:

Հենց այս րոպեիս էլ քոչելու պատրաստության մեջ է։ Ոսկին բանկնոտի* է վերածում, որ թեթև լինի թռչելիս, պահեստները թափում է ծով, անկողնի միճանը դատարկում, մթելները վերցնում։

Բայց դե դրանով խոմ չի վերջանում Ամերիկայի հարստությունը։ Նա միայն հարյուր հիսուն միլիարդի զենք ու ռազմամթերք ունի։ Շինել էր՝ Սովետական Միության հետ կռվելու, չկռվեց՝ մնաց։

Ինչ անի այդ զենքը, չգիտի։

Որպեսզի իր արած ծախսը չգնար կորչեր, նա կարող էր վերջին րոպեին Սովետների հետ պատերազմի բռնվել։ Բայց այստեղ էլ այն վախը կա, որ կարող էր հանկարծ հաղթել թշնամուն և այլևս չուզենար հեռանալ այս աշխարհից։

Սատանայական բան է այդ կռիվն էլ։ Երբ ուզում ես հաղթվել, հաղթում ես, երբ ուզում ես հաղթել, պարտվում ես...

Բայց բանը միայն զենքը չէ։ Ամերիկան ունի ցեղական խոզեր, կովեր՝ ամբողջովին ճարպի մեջ կորած։ Այս ծանրությամբ թռչել կարելի է։

Հապա Կալիֆոռնիայի նարնջի այգիները՝ ամբողջովին բեռնավորված...

Չէ, եթե Ամերիկան մի լավ չբեռնաթափվի, Մարս բարձրանալ չի կարող։ Նա խելքություն կանի, եթե իր երկիրը մի կարճ ժամանակով սովետական հայտարարի։

Սոցիալիզմը մտավ երկիրը՝ մի ամսում երկիրը կդատարկվի, խոզերը, ոչխարները, կովերը կլղարեն, կդառնան չոփ-չոր ու ձեռք տալուն պես կթռչեն Մարս։

Թե չէ մորթել-ուտելով Ամերիկան իր անասունը չի վերջացնի։ Հետո ստամոքսի համար էլ լավ չէ։

Այն տարին, երբ Ռուսաստանում հրամայվեց գյուղացիներին իրենց անասուններով կոլխոզ մտնել, գյուղացիները մորթեցին կերան իրենց անասունները և փորացավ կպան։

Իսկ Ամերիկան գործ ունի անելիք և պետք է զգուշանա անվերջ պետքարան գնալ-գալուց...

Չէ, սոցիալիզմը միայն կբեռնաթափի նրան։

Լավ, մի րոպե ենթադրենք, թե Ամերիկան լսեց իմ խորհուրդը և տկլորացավ։

* Բանկնոտ (banknote) - անգլ. բանկատոմս՝ շրջանառության մեջ գործող դրամ՝ փող։

Հարց է ծագում՝ Ամերիկան մենակ պիտի ապրի այդ հսկայական մոլորակում։ Ջմեռները կսառչի... Ուստի նրան հարկավոր է իր հետ վերցնել աֆրիկական մի քանի տաք երկրների բնակիչների՝ թե՛ տաքանալու, թե՛ նրանց հետ առուտուր անելու։

Վերջում նորից Ամերիկան ինդուստրիալ երկիր է դառնալու, խոմ չի՞ մնա այսպես աղքատ։

Ես կուզեի, որ խեղճ Իսլանդիային իր հետ վերցներ, բայց նա շատ է սառը։

Ես գիտեմ՝ Ամերիկան, որ Մարսում հաստատվեց, երբեք չի կարողանա իր մոլորակի դուռը փակ պահել ո՛չ գիշերը, ո՛չ ցերեկը։ Անվերջ Սովետական Միությունից մարդիկ պիտի փախչեն, գան, նրանից ապաստարան խնդրեն։

Հիմա էլ խոմ Ամերիկան մի մոլորակո՞ւմ չէ, որ երկաթյա վարագույրներն արգելեն փախչելու։

Սովետական Միությունը, ճիշտ է, արգելում է արտասահման փախչել, բայց այնտեղ ամեն մարդ իրավունք ունի ազատ մեռնելու։

Այդ արդեն բավական է։ Մեռնելու պատրվակով մարդիկ երկինք կբարձրանան, կես ճանապարհին, ճանապարհը ծռելով, կմտնեն Մարս։

Պայմանով սակայն, որ Ռուսաստանը, այդ ի նկատի առնելով, չերկաթապատի նաև իր երկրի առաստաղը...

Բայց իմ կարծիքով այդ էլ չի օգնի։ Այնուամենայնիվ առաստաղին մի գոլորշու անցք կամ ծխնելույզ կունենա։ Բնակչությունն իբրև գոլորշի ու ծուխ կբարձրանա...

Այս էլ այսպե՞ս։

Հետո՞։ Էլ ինչ մնաց։ Համարյա ոչինչ։

Չէ, Ամերիկան շատ երջանիկ կապրի Մարսում։ Նա աշխարհի ամենաջերմեռանդ պետությունն է։ Այնտեղից կապ կարող է հաստատել Աստծու հետ և ուզած պետության հոգին առնել։

Միայն ՆԱՏՕ-ի[52] հարցը կմնա առկախ։ Ամերիկան այդ պաշտպանողական կազմակերպության առանցքն է։ Ամերիկայի վերանալով ՆԱՏՕ-ի անդամները դեմ առ դեմ կմնան Սովետական Ռուսաստանի հետ։ Վերջինս եթե միայն խոժոռ նայի, նրանք տեղերում կհալվեն...

Ես զարմանում եմ, թե ինչո՞ւ այս պետություններն էլ մի մոլո-

բակ թռչելու փորձ չեն անում: Ֆրանսիան, օրինակ, ամենաթեթև պետությունն է: Ուզենա՝ բոպեապես կթռչի:

Այս բոլորը ոչինչ. ես մի բանից եմ վախենում:

Այդ Մարս մոլորակը, ուր պիտի թռչի Ամերիկան, չի կարող չունենալ իր բնիկները: Սև կամ սպիտակ: Արդյոք Սովետական Միությունը դրանց միջոցով խլրտում չի գցի մոլորակում...

Ընդհանուր պատմություն

Մարդկության ծննդյան ճիշտ թվականը դեռ ոչ մի գիտնականի չի հաջողվել պարզել:

Ոչ միայն չգիտենք, թե մարդը քանի՞ ամսից, քանի՞ օրից ու քանի՞ ժամից է աշխարհ եկել, այլ չգիտենք նաև, թե ո՞ր դարում է ծնվել:

Մարդը ծնվեց, աշխարհ եկավ, ճիշտ է, բայց մի տեսակ անորոշ կանխազգացումներով զգում էր, որ սա այն աշխարհը չէ, որտեղ մշտապես պիտի ապրի ինքը: Հենց առաջին հայացքից աշխարհը թվաց նրան հնացած, անկատար, վայրիվերո:

Այն ժամանակ իսկ գիտեին, որ աշխարհ պիտի գա Լենին անունով մի մարդ, փոխի այս հնացած կարգերը ու նոր, երջանիկ աշխարհ ստեղծի:

Այդ պատճառով էլ նրանք իրենց իրեղենները միշտ հավաք էին պահում՝ ժամանակին այդ նոր աշխարհը փոխադրվելու համար:

Եվ սպասում էին անհամբեր:

Ինչպես հրեաներն ամեն ծննդկանի տուն էին վազում՝ իմանալու, թե ծնվողն արդյոք իրենց սպասված մեսիան չէ՞, այնպես էլ հեթանոս մարդկությունն էր անհանգստանում և նորածինների մեջ իր Լենինն էր փնտրում:

Եթե Լենինին սպասողները իմանային, թե ինչ նյութ էր հարկավոր նոր աշխարհ շինելու համար, նախապես թաց գերանները քաշել կտային, կչորացնեին, որ նոր աշխարհը ճեղք չտար: Բայց չգիտեին և դրա համար էլ ամեն տեսակ դարում ապրեցին՝ սկսած քարի դարից մինչև բրոնզի դար:

Նախնական մարդն ապրելու համար պետք ուներ անասունի, բայց չգիտեր, թե որքա՞ն կով, որքա՞ն ոչխար պահելու իրավունք ունի: Այդ պատճառով էլ առաջացավ անասնապահական անարխիա,

և ով ինչքան կարողացավ, բազմացրեց։

Չէր որոշված անգամ, թե յուրաքանչյուր կով տարեկան քանի լիտր կաթ պիտի տա։ Չպլանավորված գործ։ Կովն ինչքան տալիս էր, այնքան կթում էին...

Պլան չունեին մարդիկ ոչ միայն իրենց անասունները բազմացնելիս, այլև իրենք՝ մարդիկ էին բազմանում անպլան, որի հետևանքով մեծ կորուստներ էին ունենում։

Հակոբ Նահապետը տասներկու որդի ունեցավ, բայց ո՛չ ինքը բազմազավակ հոր կոչում ստացավ, ո՛չ իր կինը՝ բազմազավակ մոր։

Եվ նրանց աշխատանքը զուր անցավ։

Նախնական մարդը չգիտեր անգամ իր ծագումը։ Մի օր Աստվածն էր ստեղծում նրան, մյուս օրը կապիկից էր սերվում։ Ճիշտ է, մարդը քանի կենդանի է, կարող է տատանվել կապիկի և Աստծու միջև, բայց ախր մեռնելիս նա իր վերջին խոսքը պիտի ասի։ Կապիկը դրախտ չի տանում մարդու հոգին, բայց Աստված տանում է։ Ինչ ուղղությամբ պիտի մեռնի։

Արքայությունը քաղսովետի բնակարան չէ, որ մարդ երկու տեղում տուն ստանա։

Ապրել դարեր, դարեր և ամբողջ այդ ժամանակում մի հատիկ պլենում չգումարել որևէ քաղաքում. դա միայն նախամարդը կարող էր։ Մինչդեռ մեզ մոտ հիմա՝ քառասունհինգ կարճ տարիներում, քսաներկու պլենում է գումարված Մոսկվայում։

Առանց պլենումի մարդ կապրի։

Ճիշտ է, այնտեղ միայն սխալներն են կրկնվում, բայց այդ սխալները բարեբախտաբար չեն ազդում կյանքի վրա, որովհետև մասնակիցները պլենումից դուրս գալուց անմիջապես հետո մոռանում են՝ ինչի՞ մասին խոսվեց այնտեղ...

Բայց առածն ասում է՝ կրկնությունն է մայր բարյաց։

Նախնական մարդիկ, երբ պլենում չեն գումարել, ինչպե՞ս են իմացել, թե աշխարհում յուրաքանչյուր տարին ինչքան է անասուն սատկել։

Անելով անցյալի պատմությունը՝ ես կամաց-կամաց մոտենում եմ այն օրվան, երբ Ռուսաստանում ճառագում է Լենինի կերպարը։

Լենինը ծնվեց Ռուսաստանում, բայց Ռուսաստանի Հերովդեսը[53], լսելով, որ ծնվել է այն մեսիան, որ պիտի իր գահը խորտակի

և իր տեղը նստի, փնտրում էր նրան՝ սպանելու։ Այդ պատճառով էլ նրա մայրը փախցրեց Շվեյցարիա մինչև նրա մեծանալը[54]։

Այդ պատահեց Առաջին համաշխարհային պատերազմի օրերին։ Գերմանիան ամբողջ հինգ տարի Ռուսաստանի վրա հարձակվելուց հետո, երբ չկարողացավ գրավել Լենինին ճանապարհ տվեց, որ իրեն օգնի՝ Գերմանիայի վրայով Ռուսաստան անցնելով։

Եվ ինչ չկարողացան անել գերմանական ահեղագոռ թնդանոթները, արեց սոցիալիզմը։

Երկրում սոցիալիզմ հայտարարելուն պես Ռուսաստանը պառկեց, ու Գերմանիան պառկած տեղը Ռուսաստանի փորի վրա հաշտություն կնքեց՝ իր երախտագիտությունը հայտնելով Լենինին…

Սոցիալիզմի այդ ավերիչ ուժը տեսնելով՝ զինվորական լաբորատորիաներում բակտերիոլոգիական պատերազմի պատրաստությանը վերջ տրվեց՝ շեշտը դնելով սոցիալիզմի բացիլների վրա։

Տեր դառնալով Ռուսաստանին՝ նա իր դրոշակի վրա չգրեց. «Անհաղթ հերոս քաջն Նազար, որ մին զարկի, ջարդի հազար», նախ՝ այն պատճառով, որ նրա գործը ճանճերի հետ չէր, երկրորդ՝ որ մի զարկով ջարդում էր ոչ թե հազար, այլ միլիոնավոր մարդկանց…

Այս տեսնելով՝ նրան դարերով սպասող մարդիկ մոտեցան և հարցրին.

- Դու ա՞յն էիր, որ գալու էիր, թե՞ մի ուրիշի սպասենք[55]…

Այն ժամանակ Լենինը պատասխանեց.

- Այո՛, ես այն եմ, որ պիտի գայի, այս էլ իմ կառուցած նոր աշխարհը։ Անմիջապես հին դարից փոխադրվեցե՛ք այստեղ ու երջանիկ ապրե՛ք։

Երբ փոխադրվեցին, հասավ, Ռուսաստանի դուռը փակեց։

- Դռո՞ւն ինչու ես փակում,- ասացին երջանիկները։

- Որպեսզի չփախչեք։

- Բայց երկրում սով է, մենք անոթի պիտի մեռնենք։

- Մեռնելը թույլ է տրվում միայն հնգամյա պլաններով։ Քանի՞ տարում եք ուզում մեռնել, ժամանակը հնգամյակների բաժանեք և հավասար մասերի բաժանվելով՝ մեռեք։

Այստեղ ահա վերջնականապես համոզվեցին հին աշխարհից եկողները, որ նոր աշխարհը, որ ստեղծել է Լենինը, ոչ թե ապրելու, այլ մեռնելու համար է…

Այսպես են մարդիկ. միշտ լավ է այնտեղ, ուր իրենք չկան։

Իսրայելացիք, երբ Եգիպտոսում տանջվում էին փարավոնի լծի տակ, աղոթում էին Աստծուն, որ իրենց ազատի։

Մովսես մարգարեն ազատեց նրանց և տարավ Սինա անապատը։ Բայց այնտեղ ուտելիք չէր ճարվում, և ժողովուրդը սկսեց կշտամբել Մովսեսին, թե ինչո՞ւ մեզ հանեցիր մսով լի կաթսաների մոտից և այս անապատը բերեցիր։

Ոչ միայն իսրայելացիք, այլև բոլոր մարդիկ են այդպիսին։ Ուզում են՝ հա՛մ ազատ լինեն, հա՛մ չմեռնեն...

Սոցիալիստական ընտանիք

Մարդու և կնոջ հարաբերությունները տարբեր ժամանակներում տարբեր են եղել։

Միակ ընդհանուր գիծը, որ հատուկ է եղել բոլոր ժամանակների համար, այդ այն է, որ տղամարդը հարձակվել է շատ կին ձեռք բերելու, իսկ կինն էլ սամթը գտնելով կամեցել է շատ տղամարդու տիրանալ։

Այդ պատճառով էլ պատմության մեջ եղել են բազմակնության և բազմամարդության շրջաններ։

Դուք մի՛ նայեք ներկա կնոջ համեստ պահվածքին, կինը մի ժամանակ, տղամարդուն դեմ առ դեմ կանգնած, ատամի տեղ ատամ, աչքի տեղ աչք էր։

Երբ Սուլթանն[56] իր հարեմում պահում էր վեց հարյուր կին, ռուսաց Եկատերինա թագուհին էլ տիրում էր իր ժամանակվա ողջ ռուս զինվորականությանը, որը եթե մասերի բաժանվեր, տասը Սուլթանի հարեմ կկազմեր...

«Դարմանի տակի ջուր» որ ասում են, դա հենց կինն է, որ կա։

Ես իմ օրում չեմ տեսել, որ Անգլիայի գահի վրա թագավոր լինի նստած, միշտ՝ թագուհի։ Հարցրեք այդ «այրիներին», թե քանիսկա՞ն մարդ ունեն։

Երբ աքսորված էի, այնտեղ կար կանանց կամանդիրովկա։ Մի*

---

* Կամանդիրովկա ***(командировка)*** - ռուս. գործուղում, այստեղ՝ համակենտրոնացման ճամբարների անվանում (ծնթ.՝ Վ.թ.)։

տեսնեիք այդ կանանց նաչալնիկուհին ինչ՞ եր էր հանում այնտեղ ընկած տղամարդ կալանավորների գլխին...

Սրանով ուզում եմ ասել, որ երկուստեք կեղծ բարեպաշտներ չձևանանք և ասենք, որ հավասար իմպերիալիստներ ենք, ինչպես Գերմանիան։

Գերմանիան երկու անգամ կամեցավ տիրել աշխարհին, բայց հիմա, որ կես պետություն է ընդամենը, այդ չի նշանակում, թե ձեռք է քաշել աշխարհակալությունից։ Սամթի է սպասում։

Ամուսնական ներկա օրենքով քրիստոնյան մի կին առնելու իրավունք ունի, մահմեդականը՝ ինչքան կամենա։ Մի անարդար բաշխում, որը քրիստոնյան հավասարեցնում է անլեգալ ճանապարհով՝ անցնելով ընդհատակ։ Որով դառնում է մի վերարկու՝ երեսը քրիստոնյա, աստառը մահմեդական։

Բացի միացումների այս օրինական ձևերից՝ կա նաև բռնի ամուսնություն։ Այդ այն է, որ քուրդ ցեղապետը, մտնելով հայկական գյուղ, հավաքում տանում է բոլոր գեղեցիկ կանանց։ Ճիշտ այնպես, ինչպես Ստալինի ժամանակ չեկիստներն էին անում։ Աքսորում և սպանում էին գեղեցիկ կանանց ամուսիններին՝ նրանց տիրանալու համար։

Սա պատահում էր ռազմական կոմունիզմի ժամանակ։ Հիմա կանանց խաղաղ շինարարական ասպարեզ ենք թևակոխել և այդ երևույթներին վերջ է տրված։ Մենք անցել ենք կանանց՝ պետականորեն օգտագործման սիստեմին։

Այն օրը, երբ մասնավոր գյուղացու անասունը մտավ կոլխոզ, կինն էլ մտավ պետական հիմնարկ՝ դառնալով պետության սեփականությունը։

Իսկ ովքե՞ր էին հիմնարկների ղեկավարները։ Դիրեկտորները, մինիստրները, Կենտկոմի երեք քարտուղարները, որոնք բոլորն էլ կոմունիստներ էին։

Այսպիսով բոլոր արգավանդ կանանց մշակությունն անցավ պատասխանատու կոմունիստներին, իսկ դժվար մշակելի, խամ ու խոպան կանայք՝ անկուսակցականներին և մյուս թշվառ արարածներին։

Փոխվեցին ամուսնության ձևերն ու բովանդակությունը։ Այլևս անհատն անհատից աղջիկ չէր ուզում, այլ հիմնարկը հիմնարկից, այն էլ «փոխանցման կարգով», և այդ հիմնարկները դառնում էին բաջանաղներ։

Պատմության մեջ եղել են ցեղեր, որոնց կրոնական պետերը, երբ ամուսնացնում էին մեկին, նրա կնոջ առաջին գիշերվա վայելքն իրենց էին վերապահում: Փեսան ամուսին էր համարվում միայն երկրորդ գիշերից սկսած:

Մեր սոցիալիստական երկրում Աստծու գոյություն չունենալու պատճառով չկան կրոնական պետեր, դրա համար էլ նորապսակ մինիստրների կանանց առաջին գիշերվա իրավունքը պատկանում էր մինիստրների նախագահին: Իսկ եթե ամուսնացողները Կենտկոմի երկրորդ, երրորդ քարտուղարներն էին լինում՝ առաջին քարտուղարին:

Երկրորդ գիշերը ստորադասը վերադասից ստանալով իր օրինական կնոջը, փաստորեն, մինիստրների նախագահը կամ Կենտկոմի քարտուղարը դառնում էր ստորադասի ոչ միայն պետական իշխանավորը, այլ նաև նրա անները, իսկ ստորադասը՝ նրա փեսան, որով պետական հիմնարկների կապն իրար հետ ավելի սերտ էր դառնում:

Եթե հիշում եք, գերմանացիք միշտ ռուս ցարերին կին էին մատակարարում՝ իրար մեջ բարեկամություն հաստատած լինելու համար, և երկար ժամանակ Ռուսաստանը Գերմանիայի փեսան էր համարվում:

Այսպիսին էր կինը սոցիալիստական քաղաքում:

Հիմա տեսնենք, թե ինչ վիճակ էր ապրում կինը սոցիալիստական գյուղում:

Արևածագից մի ժամ առաջ, թոխին* ձեռքին, գյուղացի կինը պետք է համայնական դաշտում լիներ, իսկ երեկոյան արևը մայր մտնելուց մի ժամ հետո էլ վերադառնար տուն, եթե արտակարգ փորձանք չգար գլխին:

Իսկ փորձանքն անպակաս էր:

Ողջ գյուղի կանայք, հանձնված լինելով մի քանի երիտասարդ ու առողջ բրիգադիրների վերահսկողությանը, պատահում էր օր, որ գիշերն էլ տուն չէին գալիս: Ցերեկն աշխատում էին կոլխոզի համար, իսկ գիշերը՝ բրիգադիրների: Լրագրային բառերով ասած՝ առաջին կալը՝ պետությանը, երկրորդ կալը՝ բրիգադիրներին ու կոլխոզի նախագահներին...

Պատահում էր տարի, որ երաշտի կամ կլիմայական այլ ան-

* Թոխի, թոխր (ժող.) - բրիչ, քլունգ:

նպաստ պատճառներով պետությունը ոչինչ չէր ստանում, իսկ բրիգադիրն անխափան ամեն ինն ամսից, ինն օրից իրեն ենթակա յուրաքանչյուր կնոջից մի-մի... երեխա էր ստանում: Եվ այդ երեխաները կնոջ գիրկը տալով՝ ուղարկում էր իր ամուսնու տուն՝ նրա անտանելի լուծը ծանրացնելու:

Իսկ կանանց այդ ծառայությունը գիտե՞ք ինչով էին վարձատրում բրիգադիրները: Կոլխոզի աշխօրներով...

Այդ պատճառով էլ կոլխոզի պահեստները միշտ դատարկ էին լինում:

Այդ պատճառով էլ կոլխոզի թե՛ աշխատավորը, թե՛ անասունը կյանքում միատեսակ քաղցած էին լինում:

Նրանք իրարից տարբերվում էին միայն մեռնելիս:

Մարդը մեռնում էր, իսկ անասունը՝ սատկում...

Իսրայելն անապատում

Ռուսաստանում Աստված չկա:

Երկնային Աստվածը Հոկտեմբերյան մեծ հեղափոխության ժամանակ չքացավ, երկրային աստվածներից Լենինը, կենդանյոք պաշտվելուց հոգնած, Դամբարան փոխադրվեց ու որպես թոշակառու աստված՝ սկսեց պաշտվել ետմահու: Ստալինը՝ որպես Լենինի «աշակերտ», հետևեց իր վարպետին, Խրուշչովն էլ մեղադրվեց «անհատի պաշտամունքի» մեջ ու գահից զրկված՝ գնաց-նստեց Ռուսաստանի պատի տակ՝ ինքն էլ Աստծու կարոտ:

Որով աստվածային ճակատը մերկացավ:

Ռուսներն էլ, եթե կամենային Իսրայելի ժողովրդի օրինակին հետևել, նրանք էլ ոսկուց հորթ կշինեին իրենց համար ու կպաշտեին: Բայց չարին: Չարին նախ այն պատճառով, որ Ռուսաստանում ոսկի չի ճարվում, իսկ թուղթ փողով աստված չի շինվում, երկրորդ էլ՝ մի փոքրիկ հորթը լայնածավալ Ռուսաստանի համար շատ քիչ կլիներ: Հսկա գոմեշն էլ չէր կարողանա բավարարել ռուս ժողովրդի պահանջները: Նրա աստվածը ժողովրդին պիտի տար ոչ միայն «հանապազօրյա հացը», այլև նրա հանապազօրյա պանիրը, յուղը, միսը, բրինձը, մակարոնն ու վերմիշելը: (Մոռացա սոխն ու կարտոֆիլը):

Մի պահանջ, որ վեր էր որևէ հորթի կարողությունից։

Ճիշտ է, Խրուշչովին հաջորդեց ոմն Կոսիգին[57], բայց նա քիչ էր ծանոթ ժողովրդին։ Նրա անունը լսել էր միայն դիվանագիտական հյուրերին մատուցված ճաշկերույթների ժամանակ։ Երբ, ասենք, ամերիկյան կողմից սեղանին մասնակցում էին այսինչ այնինչներ, սովետական կողմից էլ մասնակցում էր Կոսիգինը, մի քանի այսինչների ու այնինչների հետ։ Պարզապես գործածվում էր պարապ աթոռ գրավելու համար։

Էլի ոչինչ։ Ռուսները կպաշտեին անգամ սրան, ռուսը սովոր է ոչնչություններ պաշտել, բայց ինքը՝ Կոսիգինը, չի ուզում պաշտվել՝ «անհատի պաշտամունքի» մեջ չմեղադրվելու համար։

Սա երկու ամիս է՝ նա փոխարինում է Խրուշչովին, բայց չի նստում նրա թողած լայն աթոռին՝ զգալով, որ շատ մեծ է աթոռն իր նման փոքր դիվանագետի համար։

Եվ սա երկու ամիս է՝ ոտքի վրա է կառավարում Ռուսաստանը։ Տված հրամաններն էլ կիսաձայն, վախկոտ ու հազիվ լսելի։ Երբ մի պետական հրաման պետք է ստորագրի, նախ տալիս է Միկոյանին[58] ստորագրելու, ինքը մտնում է նրա ստորագրության տակը… որ մարդ չտեսնի։

Եթե Միկոյանը վրացի լիներ, անմիջապես ցախավելով կմաքրեր իր շրջապատի մարդկային ստվերները ու ինքը կթագավորեր, ինչպես արեց Ստալինը, և ինչպես կամեցավ անել Բերիան, բայց Միկոյանը հայի զավակ է, սովոր միայն իշխվելու և բնավ իշխելու, կոտորվելու ու բնավ կոտորելու։

Մեկ կողմից այս, մյուս կողմից նա որպես գործի մարդ, սովորել էր միայն վերից իջած հրամանները կատարել և բնավ հրամայել։

Քառասունինը թվականին Ստալինն ասաց. «Գնա՛ հիսուն հազար հայ ընտանիք տեղահանիր Սիբիր». գնաց տեղահանեց, երեսունյոթ թվին ասաց. «Գնա՛ հայերին լցրու բանտերը, պատրաստիր, որ ես կոտորեմ». Միկոյանը հայ ազգի վիզը ճկեց, Ստալինը հարվածեց։

Միկոյանը Կուբան կոմունիստ դարձրեց։ Եվ որ երկրում, որ պետք է խլրտում բարձրացնել, Միկոյանին են ուղարկում։

Ասենք՝ բանն այսպես է։ Ճիշտ է, Միկոյանը չի նստել Խրուշչովի աթոռին, բայց զորությամբ Խրուշչով է հասկացվում։ Օտար պետությունները, երբ մի բան են ուզում ասել, դես ու դեն են նայում, երբ

մարդ չեն գտնում, Միկոյանին են դիմում: Կոսիգինն էլ Միկոյանի որոշումներին անմիջապես համաձայնում է: Եվ այդ այնքան անմիջապես, որ հաճախ նախ ինքն է համաձայնում, նոր Միկոյանը՝ որոշում:

Երևույթ, որ կոչվում է ավանսով համաձայնել…

Հիմա ձեզ եմ հարցնում. Ամերիկայի Միացյալ Նահանգների նորընտիր նախագահ Ջոնսոնը[59], որ ամբողջ ամերիկացիների մայրաքաղաքն է, ինչպես դիվանագիտական հարաբերության մեջ պիտի մտնի ծակերը մտած Ռուսաստանի այս ղեկավարների հետ:

Ափսոս չէր Խրուշչովը:

Նա համաշխարհային մասշտաբի մարդ էր: Իր ճառերում որ գոռում էր, աշխարհն էր սասանում:

Մեծի հետ՝ մեծ, փոքրի հետ՝ փոքր:

Ինչեր հանեց Ամերիկայի նախկին նախագահ խեղճ Էյզենհաուերի[60] գլխին:

Կանչեց Փարիզ՝ բարձր մակարդակի խորհրդակցության, ստիպեց, որ ծնկաչոք իրենից ներողություն խնդրի օդից Ռուսաստանը լրտեսելու համար: Նրան անվանեց ճագար, որ մտել է ռուսական բանջարանոցը:

Վերջը, ինչ ասեմ, հազիվ փախավ Ամերիկա:

Ուրախ մարդ էր Խրուշչովը: Ինքն ուրախանում էր, ամբողջ աշխարհն իր հետ ուրախացնում: Նրա կատակներին վերջ չկար: Ամերիկա գնաց ՄԱԿ-ի նիստին մասնակցելու և հանդիսականներին ծիծաղեցնելու համար հանեց ոտքից կոշիկը և խփեց սեղանին, հետո դուրս եկավ և պատահելով մի բանվորի՝ նրա գլխարկն իր գլխին դրեց, իր գլխարկը՝ բանվորի: Եվ այսպիսի անվերջ կատակներ: Այնքան, որ մի օր, երբ Մոսկվայի ամերիկյան դեսպանը մտերմական զրույց էր ունենում Միկոյանի հետ, ի միջի այլոց հարցրեց.

- Էս ձեր Խրուշչովը խում խենթ չէ:

Միկոյանը ժպտաց՝ ցույց տալով, որ դեսպանի հետ համաձայն է, բայց պաշտոնապես հերքեց՝ ասելով.

- Ոչ թե խենթ, այլ նա պարզապես ուրախ մարդ է, մի երկու բաժակ էլ որ խմում է, ինքն իրեն կորցնում է:

Դեսպանը նկատեց.

- Դուք ձեր երկրում հոտոտում եք վարորդների բերանները և

գինու հոտ առնելիս անմիջապես մեքենան խլում եք ձեռքից՝ վթարից զգուշանալով։ Իսկ նրա մեքենայում նստած են լինում ամենաշատը հինգ մարդ։ Իսկ ինչպե՞ս չեք վախենում ձեր երկրի ղեկը հանձնել մի հարբած «վարորդի», որի մեքենայում նստած է երկու հարյուր վաթսուն միլիոն «ուղևոր»...

Այս մեկը ճիշտ էր ասում դեսպանը։ Տնաշենի մարդուն Դը Գոլը[61] հրավիրեց Փարիզ տեսակցության, բայց նա Ֆրանսիա մտնելիս նախ շամպայն գինու գործարանի հասցեն հարցրեց պատահողին։ Այնպես որ խեղճ Դը Գոլը վերջում նրան Ռուսաստան ճանապարհելիս հետը շշերով գինի դրեց, որ տանի Մոսկվա, խմի։

Բայց ես սիրեցի Խրուշչովին։ Նրա ուրախությունն ինձ դուր էր գալիս։ Երբ նա Մոսկվայից դուրս էր գալիս՝ աշխարհը շրջելու, թամաշի բան էր։ Մեկ Հնդկաստանի թուշն էր կսմթում, մեկ Եգիպտոսի չալման գլխից թոցնում, արաբներին սպիտակեցնում և կանգնում ծիծաղում։

Այս կատակներին վերջ տվեց Ալբանիան։

Երբ կատակով գլխին էր դրել, վերջինս մի շատ անհարմար բան արեց։ Մի բան, որ հատուկ է նրա նման փոքր պետություններին...

Խրուշչովն ինչ երկիր գնում էր, ինն ամիս ինն օրից հետո մի ծանուցագիր էր ստանում, թե դու այստեղ մի որդի ունես, ասա՛, ի՞նչ անենք։

Այստեղ արդեն խենթ ձևանալով՝ շատ լուրջ աշխարհակալության էր ձգտում։

Ամեն երկրում մի որդի թողնելով՝ ապագայում կարող էր տիրել այդ երկրներին՝ որպես իր որդիների սեփականություն։

Խրուշչովի արյունը կրող որդին կարո՞ղ էր չհրամայել իր երկրին։

Ա՜խ, Ռուսաստա՛ն, Ռուսաստա՛ն... Մարդ ի՞լ այսպիսի գլուխ ունենա և իր ձեռքով իրեն գլխատի։

Գլխատի ու մնա անգլուխ։

Չուղղված վրիպակներ

Եթե մարդասպանությունը գիտություն համարվեր, Սովետական Ռուսաստանը գնդակահարության դոկտոր և բանտարկության պրոֆեսոր գիտական տիտղոսները կստանար:

Բայց ինչ ասենք, երբ մարդիկ տարել, ոճրագործությունը հանցանքների կարգն են դասել...

Այդ պատճառով էլ Սովետները նորմալ պետությունների կարգը դասվելու համար կամեցան աչքի ընկնել նաև մարդկային գիտությամբ: Գիտություն, որ մարդուն սպանելուց բացի, նաև ապրեցնի:

Դրա համար հարկավոր էր ուղեղ, որ Ռուսաստանը չուներ:

Այն օրից, երբ անհատի սեփականությունը վերացավ երկրից, նույն օրն էլ սովետական մարդիկ հանեցին դուրս թափեցին իրենց գլխից ուղեղը՝ որպես այլևս պետք չեկող մի ծանրություն:

Ինչ անեն, ինչ չանեն՝ դիմեցին կեղծ գիտնականների օգնությանը և նրանց ամեն հասարակ շարժումից մեծ գյուտեր սպասեցին:

Պետությունը նրանց ասաց.

- Մի՛ վախենաք, մի բան գտե՛ք, թող սուտ լինի, ես այնքան հիմար եմ, որ ամեն բանի կհավատամ:

Այս լսելով՝ սուտ գիտնականները գործի անցան:

Մի մեղվապահ մոգոնեց մի տեսություն, որով արհեստական տաքացումով կարելի էր մի փեթակից քսանչորս փութ մեղր ստանալ: Ուզեց փորձել այդ «գիտնականն» իր տեսությունը, բայց պետությունը չթողեց՝ ասելով.

- Որ փորձես, կարող է սուտ դուրս գալ, սպասիր՝ նախ քեզ գիտնականի կոչում տամ, մեծ ոոճիկ նշանակեմ, քո կյանքն ապահովեմ, նոր փորձի՛ր:

Փորձեց գիտնականը և իրոք էլ սուտ դուրս եկավ:

- Ը՜հը՛, ես չէ՞ի ասում,- ուրախացավ պետությունը, որ առաջուց կանխագուշակել էր այդ:

Մի ուրիշ «գիտնական», Ռուսաստանի լայնածավալ, արգավանդ հողերը խոպան թողած, գնաց ջրի մեջ բանջարեղեն ցանեց:

Մի երրորդ գիտնական, ավելի առաջ գնալով, վերցրեց սերմը... օդում ցանեց: Եվ մի՛ զարմանաք, եթե ասեմ՝ ամենաառատ բերքն

այն տարին մեր պետությունը օդից ստացավ։

Սովետական մամուլը, գերանդին առած, հնձում, հնձում էր, բայց ցանքին ո՛չ վերջ կար, ո՛չ վախճան... (Փակագծի մեջ ասեմ՝ բոլորը սո՛ւտ)։

Սովետական կառավարությունը, ընդունելով, որ այդ բոլորը սուտ է, որ սխալ է կայացրել այդպիսիներին գիտական աստիճան և բարձր ռոճիկ նշանակելով, մինչև այսօր էլ չի ուղղում իր թույլ տված վրիպակը։ Ասեմ նաև, որ նման չուղղված վրիպակներ միայն Ռուսաստանում չեն պատահում։

Այս բոպեիս Եգիպտոսն էլ է մեր օրին։

Եգիպտոսը գնաց Սիրիային համոզեց, թե արի միանանք, մի Միացյալ Արաբական Պետություն կազմենք, ապրենք[62]։ Սիրիան խաբվելով իր համաձայնությունը տվեց։ Կազմվեց խառը վարչակազմ։ Մեկ մինիստր՝ Եգիպտոսից, մեկը՝ Սիրայից, բանակը կազմվեց. մեկ զինվոր՝ Եգիպտոսից, մեկը՝ Սիրիայից, բյուջեն կազմվեց. մի ռուբլի՝ Եգիպտոսից, մեկը՝ Սիրիայից։

Ստացվեց իրար վրա կարկատանված մի պետություն, որը հագնելուց հետո մի տարի չքաշած... պատռվեց երկու մասի։

Սիրիան առավ իր մի մինիստրը, մի զինվորը ու մի ռուբլին քաշվեց իր երկիրը և նորից կոչվեց անկախ Սիրիա[63]՝ կարծելով, թե իր ետևից Եգիպտոսն էլ պիտի կոչվեր իր նախկին անունով՝ Եգիպտոս։ Բայց Եգիպտոսը չկոչվեց։

- Ուղղի՛ր գործածդ սխալը և կոչվի՛ր Եգիպտոս,- բղավեց այն կողմից Սիրիան։

Բայց Եգիպտոսը առարկելով, որ ռետին չունի, որ իր գործած սխալն ուղղի, մինչև օրս էլ մնում է «Միացյալ Արաբական Պետություն»...

Մի զարմանքի փարատում

Շատերը զարմանում են՝ ասելով.

- Այդ ինչպե՞ս պատահեց, որ Ռուսաստանը՝ այդ հետամնաց պետությունը, կարողացավ այսօր աշխարհի ամենաառաջին տիեզերագնաց պետությունը դառնալ։

Ու նախանձում են։

- Մի՛ նախանձեք և մի՛ զարմացեք,- ասում եմ նրանց,- եթե դուք էլ սոցիալիստ լինեիք, դուք էլ կթռչեիք տիեզերք։

Գիտեք՝ ինչքան թեթև բան է այդ սոցիալիզմը։ Օդը ծանր է սոցիալիզմից, որովհետև բաղկացած է թթվածնից, ածխածնից ու բորակածնից։

Իսկ սոցիալիզմը՝ ոչ մի «ծնից»։

Ռուսաստանը, եթե ուզենա էլ, չի կարող չթռչել տիեզերք։

Շատ անգամ փորձել է, չի հաջողվել։

Դե, Ռուսաստանն էլ պետություն է, ժողովուրդ ունի, որին պիտի կերակրել, խնամել, ապրելու հնարավորություններ ստեղծել։ Ուզում է բավարարել իր ժողովրդին, չի կարող։ Ինքը տիեզերքում, ժողովուրդը ներքևում՝ անտեր, քաղցած։

Ժողովուրդը փորձել է իր կառավարության ոտից քար կապել, որ մի քիչ էլ իր մասին մտածի, չի հաջողվել։

Սոցիալիզմին քա՞ր կպահի։

Բնության մեջ դեռ չի գտնված այն ծանրությունը, որ կարողանա սովետական կառավարությանը կապել իր ժողովրդին։

Պետությունների մեջ ամենածանրն Անգլիան է։ Շատերն ուզում են Անգլիան կապել Ռուսաստանի պոչից, բայց էլի հույս չկա։ Ծանրություններ պետք է փնտրել էլի իր մեջ։ Օրինակ, իմ կարծիքով, եթե մեր կառավարության պոչից կպցնենք այն ծանր հանցանքը, որ նա գործեց ռուս ժողովրդի հանդեպ, նա էլ չի թռչի տիեզերք, կնստի ու իր պատճառած վերքերը կբուժի...

Հուշեր Հոկտեմբերյան հեղափոխությունից

Այս հեղափոխության մասին մի եվրոպացի հեղինակ, որի անունը չեմ հիշում, ասել է. «Տասը օր, որ ցնցեց ողջ աշխարհը»[64]։

Ցնցելն էլ խո՞սք է։

Ամբողջ երկիրը՝ իրար խառնված ու վառոդի ծխի մեջ կորած։

Բոլշևիկները, որ տիրել էին երկրին՝ սոցիալիզմ կառուցելու և մարդկանց համար երջանիկ կյանք ստեղծելու, այդ տասը օրում՝ ո՛չ սոցիալիզմ, ո՛չ երջանիկ կյանք։

Միայն հետո, երբ քաոսը պարզվեց, եղավ լույս, ցամաքը ջրից զատվեց, նոր նրանք ձեռք զարկին Նոր աշխարհ կառուցելուն։

Ամենից առաջ բոլշևիկները մարդն անասունից զատեցին: Մարդու համար տուն շինեցին, ընտանի անասունների համար՝ գոմ, իսկ վայրի գազաններին քշեցին անտառները:

Մարդիկ, որ նախքան հեղափոխությունը ապրում էին դժբախտ, սաստիկ հետաքրքրված էին տեսնելու, թե ինչ բան է սոցիալիզմը, և թե ինչպե՞ս նա իրենց պիտի երջանկացնի:

Տեսան՝ երկրում մեծ ու ընդարձակ բանտեր են շինում:

Ժողովուրդն ապշած սկսեց իրար նայել:

- Մի՞թե սոցիալիզմը բանտ է,- ասացին:

Չեկիստները ժողովրդի վախը փարատելու համար ասացին.

- Մի՛ վախենաք, երկար չեք մնա բանտում: Ձեզ կհավաքենք, կլցնենք այնտեղ, հետո մյուս երեկոյան կլցնենք ավտոն, կտանենք գնդակահարելու:

Այստեղ ժողովուրդը մի փոքր սիրտ առավ: Որովհետև իր կյանքում գնդակահարություն չէր տեսել, կարծեց՝ դա լավ բան է, և իրենց պիտի տանի դեպի երջանկություն: Բայց երբ տեսավ՝ գնդակահարությունից հետո մեռնում են մարդիկ, «Փախեք,- գոռացին,- փախեք, ձեր հոգին ազատեցեք»:

Բայց ո՞ւր, փախչելու ճանապա՞րհ էին թողել. երկրի սահմանները՝ փշալար, պահակը՝ կրակի պատրաստ հրացանը ձեռին, ու կատաղի շներ:

Դե փախիր, տեսնենք՝ ո՞նց ես փախչում:

Ու մարդիկ ճարահատ, չեկիստի առջև ընկած, նախ մի օր բանտում հանգստանում էին, մյուս օրը գնդակահարության գնում...

Բայց բոլշևիկները դրա փոխարեն վերին աստիճանի խնամք և քնքշություն ցուցաբերեցին վայրի կենդանիների և գազանների հետ գործ բռնելիս:

Մինչ չեկիստները տարվա բոլոր եղանակներին և օրվա բոլոր քսանչորս ժամերին, առանց գիշեր-ցերեկվա մեջ խտրություն դնելու, որսում էին մարդկանց, կենդանիների որսի համար ժամ և ժամանակ սահմանեցին: Չէր կարելի սպանել նրանց գարնանը, երբ թռչունները թուխս են նստում իրենց ձվերի վրա, և գազանները հղանում են:

Եվ այս այն ժամանակ, երբ 1949 թվին Երևանի հիսուն հազար ընտանիքներ մի գիշերվա մեջ Սիբիր տեղահանելիս ծննդկան

կանանց թույլ չտվին իրենց երեխաները ամբողջովին ծնելու։ Որ երեխայի միայն գուխն էր երևացել, նրան մոր արգանդը հրեցին, իսկ կեսից ավելին ծնվածներին զոռով քաշեցին, գցեցին դեն ու մայրերին տարան։

Այնքան որ շտապում էին։

Իսկ կենդանիների ու գազանների համար այսքա՜ն համբերատարություն։

Գեթ տարվա մի եղանակին, օրվա մի ժամին դադարեին մարդ որսալուց…

Հեղափոխությունից հետո նեղ դրության մատնվեցին ընտանի կենդանիներից միայն շունն ու կատուն։

Այս օգտակար կենդանիներին մարդը պահում էր, շանը՝ որպեսզի իր գույքն ու ոչխարի հոտը պաշտպաներ, կատուն էլ՝ իր մառանի ուտելիքները մկների հարձակումից։

Սոցիալիզմը սրբեց տարավ մառանի բարիքն էլ, ոչխարն էլ, գույքն էլ։ Հետևաբար, ավելորդ դարձան մարդուն շունն ու կատուն։ Եվ նա դրանց շտատը կրճատեց, տնից դուրս արեց։

Բայց նրա՛նց էլ օգնության հասավ սովետական կառավարությունը։ Շներին տեղավորեց իր սահմանագլխում, որ մարդ չփախչի արտասահման, կատուներին էլ պահակ դրեց, որ մուկ չանցնի։

Կառավարությունը միայն էշերի շտատը կրճատեց, որովհետև ամբողջ երկիրը իշացել կանգնել էր…

Նախանձի չար տեսակը

Հոկտեմբերյան մեծ հեղափոխությունից դեսը ամբողջ քառասունյոթ տարի, Ռուսաստանը դարձել է աշխարհի բերնի ծամոն։

Մեղադրում են նրան օրենսգրքի բոլոր հոդվածներով։ Եվ որովհետև Ռուսաստանը փաստաբան չի վարձել իրեն պաշտպանելու համար, ասում և հավատացնում են։

Ծանոթանանք այդ մեղադրանքներից մի քանիսին։

Ասում են՝ Ռուսաստանը Աստված չունի, անկրոն է։

Եթե անկրոնության մեջ մեղադրեր Թուրքիան, ոչինչ, կարելի է ներել նրան, նա մուսուլման է ու կրոնից զատ ուրիշ բան չունի։

Բայց բանն այն է, որ մեղադրողը Ամերիկան է։ Այն Ամերիկան,

որ առանց փողի մի քայլ չի գցում։

Ծո Ամերիկա՛, դու Աստծուն ձրի՞ ես պաշտում։ Հազիվ թե…

Դու պաշտում ես Աստծուն, որ քեզ տանի արքայություն, և քո կապիտալը ներդնես այնտեղ։

Իսկ Լենինը թրի մի հարվածով Ռուսաստանը դարձրեց դրախտ, և ռուսներն այլ դրախտի կարիք չեն զգում։ Թողած իրենց քթի տակի դրախտը՝ նիսյա՛ *արքայության հետևի՞ ընկնեն։*

Պառկեն գերեզմանում, Գաբրիել հրեշտակապետի կանչին սպասեն։ Գաբրիելը կանչե՞ց, թե՞ չկանչեց։ Կամ կանչեց, տարավ Վերջին դատաստանի, արդարացա՞ր, թե՞ չարդարացար…

*Թուրքերն ասում են. «Նաղդ օլսուն, սողան օլսուն»***։

Փոխանակ նախանձելու՝ ինքդ էլ մի Լենին ճարի՛ր, գա երկիրդ դատարկի և դրախտ կառուցի։

Հետո։

Ասում են, թե Ռուսաստանում կյանք չկա։ Այդ մեկը դժբախտաբար ճիշտ է։ Ռուս ժողովուրդը կենդանի դիակ է՝ զուրկ բոլոր տեսակի մարդկային իրավունքներից, չունի նախաձեռնության ոգի, ազատ խոսելու իրավունք, սեփականություն և այլն։

Մի խոսքով՝ կենդանի դիակ, որին պիտի զմռսել և դնել Լենինի կողքին։

Բայց դրա դիմաց գիտե՞ք՝ ինչ փառավոր մահ ունի ռուս ժողովուրդը։ Ռուսներն ապրում են «հետմահու»։ Դե դու արի ու այնտեղ տես ռուսի ստեղծագործական ոգին, նրա հանճարը…

Հնում, երբ մի գեներալ մեռնում էր, տանում, իր սուրը հանձնում էր՝ որպես այլևս պետք չեկող մի իր։ Բայց ներկայումս, երբ մեռնում է մի զորավար, որ սուր չունի, գնում, սուր է ստանում, կապում մեջքին, նոր իջնում գերեզման։

Գերեզմանում նա հարվածում է հայրենիքի թշնամուն և «հետմահու» վարձատրվում ամենաբարձր շքանշանով։ Մի շքանշան, որի մասին իր կենդանությանը երազել անգամ չէր կարող։

Մի շատ հայտնի գեներալ ունեին ռուսները, անունը Տուխաչևսկի[65]*։ Նրա կենդանությանը որովհետև չկարողացան շքանշան կախել*

---

* Նիսյա- խսկց.՝ ապառիկ։

** Նաղդ օլսուն, սողան օլսուն- (թրք.) բառացի՝ «առձեռն լինի, թեկուզ սոխ լինի»։ «Նաղդը թողած նիսյայի հետևից չեն ընկնի» ասացվածքի համարժեքն է։

կրծքից, գնդակահարեցին և «հետմահու» կախեցին։

Այն երկրում, ուր մահվանից հետո են փառավորվում մարդիկ, ի՞նչ արժի ապրել։ Այո՛, թող դիակ դառնա կենդանի մարդը։

Բերեմ մի օրինակ՝ ցույց տալու համար, թե ինչպես մեր երկրում մահվան ու կյանքի սահմանները ջնջված են, ու իրար մեջ բացվող սենյակի պես մարդիկ գնում-գալիս են կյանքի և մահվան միջև։

Ինձ ծանոթ մի մարդ կար, որ ուներ մի սոսկալի չար կին։ Մի կին, որ խեղճ մարդու հոգին կերել էր։ Այդ մարդը որոշեց բաժանվել կնոջից։ Իսկ կինը որպեսզի չբաժանվեր իր մարդուց և շարունակեր տանջել նրան... մեռավ։ Մարդը հանդերձյալում նրան չմիանալու համար, դատարան դիմեց և կամեցավ «հետմահու» բաժանվել իր կնոջից։ Դատավորը ծանուցագիր ուղարկեց, գերեզմանոցից կանչեց կնոջը և ասաց մարդուն.

- Սովետական դատարանը իրավունք չի տալիս դատավորին ամուսիններին բաժանելու իրարից, պետք է հաշտվես կնոջդ հետ։

- Իսկ եթե մարդը չի սիրում իր կնո՞ջը,- վրա բերեց մարդը։

- Ես սիրել կտամ։

- Ինչպե՞ս...

- Չսիրեցիր՝ մի երկրորդ չար կին կտամ քեզ։ Այն էլ չսիրեցիր՝ երրորդը կտամ։ Այսպես չորրորդ, հինգերորդ, վեցերորդ, մինչև վերջապես սիրես քո միակ կնոջը։

Մարդը, սարսափահար այսպիսի պատժից, անմիջապես հաշտության ձեռք մեկնեց կնոջը։ Կինն ուրախացած իր գերեզմանոցը վազեց՝ հեռվից կանչելով.

- Գարեգի՛ն ջան, շո՛ւտ մեռիր, քեզ անհամբեր սպասում եմ...

Այսպես է մեզ մոտ։

Այս աշխարհում մարդիկ իրար պարտք են տալիս, գնում են այն աշխարհ, ստանում։

Մեզ մոտ, ճիշտ է, կենդանի մարդն անարժեք է, բայց մեռնելուց հետո անմահանում է։ Լենինը, օրինակ, մեռնելուց հետո անմահացավ։ Եվ նրա ներկա դամբարանը մի սրբավայր դարձավ և ավելի շքեղ է կառուցված, քան Կրեմլի պալատը, ուր ապրում էր Լենինը կենդանությամբ։

Բազմաթիվ կողմերից օգտակար է, երբ մահն ու կյանքը այսպես փոխադարձ օգնության են գալիս իրար։

Մեզ մոտ լինում է «ժամանակավոր դժվարություն», երբ ո՛չ հաց է ճարվում, ո՛չ յուղ, ո՛չ միս: Ու մարդը ժամանակավոր մեռնում է, մինչև «դժվարությունն» անցնի:

Մեզ բամբասող օտարները հպարտանում են՝ ասելով. «Մեզ մոտ բազմակողմանի կյանք կա»:

Ինչ անենք, մեզ մոտ էլ բազմակողմանի մահ կա: Ժամանակավոր կյանքն է արժեք, թե՞ մահը, որ հավիտենական է:

Մենք էլ խոմ Իսահակ նահապետի որդի Եսավը չենք, որ մի շերեփ ոսպապուրով ծախենք մեր անդրանկությունը Հակոբին[66]:

Մեզ համար թանկ է անանցը:

Սովետական մարդը մի կյանքով ապրում է, չորս մահով մեռնում:

Մենք բոլորս էլ գիտենք, որ Ռուսաստանն ամբողջությամբ մի կենդանի մեռել է:

Այս մեկ մահ:

Այնուհետև գալիս է երկաստիճան մահը:

Առաջին մահը պայմանական է. մեռնողը կարող է մեռնել, կարող է նաև «անմահանալ»:

Լենինը, օրինակ, մեռնելուց հետո անմահացավ, որովհետև ժողովուրդն այդ էր ցանկանում:

Ստալինը կամենալով հետևել Լենինի օրինակին՝ ինքն էլ ուզեց մեռնելուց հետո անմահանալ: Եվ իրոք էլ բավական ժամանակ անմահացավ՝ պառկելով Լենինի կողքին՝ նրա դամբարանում:

Բայց հետո ռուսները ցանկանալով հավիտյան մեռցնել Ստալինին, Լենինի մոտից հանեցին, կրկնամահվան դատապարտեցին ու դիակն այրեցին: Առաջին դեպքը Ռուսաստանում, երբ մեկը հավիտյանս է մեռնում՝ ընդմիշտ իր կապերը խզելով այս անցավոր աշխարհից:

Այս երեք տեսակի մահերից զատ՝ կա նաև մի չորրորդ տեսակի մահ, որ հատուկ է միայն Ռուսաստանին, և որից օգտվում են միայն պետական ղեկավարները իրենց գրված աթոռներից վայր գլորվելիս:

Այս մահով մեռան Մոլոտովը, Կագանովիչը[67], Բուլգանինը և Խրուշչովը:

Այս մահով մեռնողներն իրենք իրենց մեջ կենդանի են, բայց ժողովրդի աչքին չքանում են: Ժողովուրդը նայում ու առջևը մարդ

չի տեսնում: Մարդու ստվեր էլ չի տեսնում: Այնպես որ հաճախ իրար հետ խիստ գաղտնի խոսելիս գնում, նրանց մոտ են խոսում... որ մարդ չլսի:

Այսպիսի մահ սազական է չքավոր մեռելներին: Նրանց, որոնք անկարող են թաղման բազմապիսի ծախսերը հոգալ:

Տեղ գնել, դագաղ, դամբանախոս ճարել և մեռելաճաշ տալ:

Հեշտ ու էժան մահ:

- Մի՛ երևա աչքիս:

Եվ ուրիշ ոչինչ: Նա արդեն մեռած է:

Արդ:

Մեր սովետական երկրի առավելությունները դրվատելով հանդերձ՝ չեմ կարող չնշել այն մեծ սխալը, որ կատարեց Ռուսաստանը՝ այրելով Ստալինի դիակը:

Իր կենդանությանը Ստալինը մամուլի բերանով հայտարարեց, որ ինքն «այսօրվա Լենինն է»:

Եվ իրոք էլ «այսօրվա Լենինն էր»:

Այս չի՞ նշանակում, որ այրելով Ստալինին՝ այրեցին նաև նրա մեջ նստած «այսօրվա Լենինին»:

Այդ բանը չպետք է արվեր:

Լավն այն կլիներ, եթե Լենինի դամբարանը մի փոքր էլ մեծացվեր, Խրուշչովն էլ զմռսվեր ու Ստալինի հետ շարվեր միևնույն դամբարանում:

Այն ժամանակ ռուսները կունենային երեք Լենին՝ երեկվա, այսօրվա ու վաղվա:

Գիտե՞ք՝ ինչ առավելություն է մի երկրի համար բոլոր ժամանակների համար առանձին լենիններ ունենալը:

Հին սերունդը կպաշտեր երեկվա Լենինին, նոր սերունդը՝ այսօրվա Լենինին, իսկ դեռ չծնվածները՝ ապագա Լենինին...

Ռուսաստանը ձեռքից փախցրեց այդ պատեհությունը՝ այրելով Ստալինին: Հիմա իր աստվածային բերանի երեք ատամնաշարից մեջտեղինը չկա: Իսկ ոչ մի աստված չի համաձայնի, որ իր բագինին մոտենա փեկռատ հավատացյալ:*

Հետո էլ այս ու այնն իրավունք չէին ունենա ասելու՝ Ռուսաստանն աստված չունի:

---

* Փեկռատ (բրբռ.) - ատամները թափված:

Ռուսաստանը կհաներ իր երեք աստվածներին, նրանց աչքը կխոթեր՝ ասելով.

- Ահա ձեզ մեկի տեղ երեքը…

Նամակ Սփյուռքի հայությանը

Սիրելի՛ հայրենակիցներ

Մենք մի ազգից ծնված եղբայրներ ենք, բայց լավ եղբայրներ չենք։ Մենք ձեզ համար այստեղ վառվում ենք, իսկ դուք մեր մասին բոլորովին չեք մտածում։ Ձեզ համար մենք կանք, թե չկանք, միևնույն է։

Այս ասում եմ ձեզ սրտի կսկիծով, բայց վերքը թաքցնելով չի լավանա, խորն է այդ վերքը, և պետք է վիրահատել։

Եվ ինչ պատահելու է, թող պատահի։

Հիմա ասեմ՝ բանն ինչն է։

Մենք ներգաղթ ենք կազմակերպում, մեր նավերն ուղարկում ենք ձեր ետևից, բերում հասցնում Բաթում, ծաղիկներով դիմավորում, մեր կառավարության ներկայացուցիչները գալիս են նավահանգիստ ու բարի գալուստ մաղթում ձեզ։

Դուք գիտե՞ք՝ այդ ինչ հատուկ ուշադրություն է կառավարության կողմից։

Երբ մենք ուզում ենք տեսակցություն ունենալ մեր մինիստրների նախագահի կամ Կենտկոմի որևէ քարտուղարի հետ, դիմում ենք տալիս և ամիսներով հերթի ենք սպասում՝ չեն ընդունում։ Իսկ ձեզ համար վեր են կենում, մինչև Բաթում են գալիս և ասում՝ բարի գալուստ։

Կարծես դուք «անառակ որդին» լինեք, իսկ մենք՝ տանը մնացած խելոք որդին[68]։

Ամեն ինչ ձեզ համար, և ոչինչ մեզ համար։

Մեզ համար կառուցած բնակարանները ձեզ է տալիս քաղսովետը, և մենք չենք առարկում։

Այնուհետև մենք մեր վերջին ունեցածը ձեզ հետ հավասար կիսում ենք։ Բրնձի հերթին կանգնեցնում ենք ձեզ մեր առջև։ Կարագի հերթին, երբ հարցնում են՝ ո՞վ է վերջը, մենք պատասխանում ենք՝ ինձանից հետո երկու մարդ կա։ Եվ այդ հերթը պահում ենք այն

կարավանի մարդկանց համար, որ դեռ Բաթում չեն հասել և ծովի վրա են։ Ինչո՞ւ, որպեսզի հասնելուն պես իրենց համար պահված կարագի հերթին կանգնեն։

Ստալինի ժամանակ, երբ մեզ բանտարկում էին, միշտ ձեզ համար տեղ էինք պահում բանտում և աքսորվելիս էլ նախ ձեզ էինք բարձրացնում վագոն, նոր մենք բարձրանում։

Եղան այնպիսի անձնազոհներ, որոնց, երբ տանում էին երկու գնդակով գնդակահարելու, բավականանում էին մեկ գնդակով և երկրորդ գնդակը վերապահում էին ձեզ՝ կատարելով Քրիստոսի այն պատվիրանը, որ ասում է՝ երկու գնդակից մեկը չունեցողին տվեք[69]…

Պիտի ասեք՝ բանտ, աքսոր, գնդակահարությունը ինչ են, որի մասին հիշատակում ես։

Ինչ անեմ, մեր ունեցածը մահ էր. ձեզ համար կյանք որտեղից ճարեինք։

Մահ էր, հերթեր, սով, թանկություն, անգործություն, որ ձեզ հետ հավասար բաժանում էինք։ Սրանից զատ մի բան ունեինք, որ մենք վայելում ու ձեզ չէինք տալիս…

Այս՝ մեր նյութական օգնությունը։

Հապա հոգեկանը։

Մենք ամենայն սիրով ձեր առջև բաց արեցինք մեր Մասիսը, որ դուք նայեք ու հուզվեք՝ հիշելով մեր անցյալ փառքը։ Տարանք Զվարթնոց, Էջմիածին, Գեղարդ ու Սևան, ման ածեցինք, որ հառնեին ձեր մեջ մեր նախնյաց հիշատակները։

Իսկ դուք ինչ արեցիք մեզ համար։ Դուք, որ արտասահմանում նստած՝ ամեն օր երեք տեսակի ճաշ եք ուտում, վրան էլ քաղցրեղեն, մտածեցի՞ք մի օր մեզ ճաշի կանչել։

Եթե ոչ հիմա, գեթ առաջները կանչեիք։ Հիմա իրավունք ունեք չկանչելու, որովհետև քառասունհինգ տարվա սովածին ոչ մի լի սեղան չի դիմանա։ Բայց առաջները կարող էիք, երբ Ցարի ժամանակվա կերածները դեռ չէինք մարսել…

Ինչևէ։ Շատ չխորանանք խնդրի էության մեջ։ Միայն մի բան եմ խնդրում։ Ինչ կլինի, մի օր ինձ արտասահման կանչեք, գամ մի կուշտ փորով հաց ուտեմ։ Կյանքիս մեջ բանանը չգիտեմ՝ ինչ բան է. բանան ուտեմ, ազատ պոռամ, կանչեմ, հնչակ լինեմ, դաշնակ լի-

նեմ, բարձրաձայն ասեմ, թե ինչն եմ դավանում, կարծիք հայտնեմ սովետական կառավարության մասին՝ առանց վախվխելեն աջ ու ձախ նայելու, ուզենամ՝ հավանեմ այդ կառավարությանը, չուզենամ՝ չհավանեմ:

Եվ ոչ միայն հավանեմ:

Եթե այդպիսի մի շնորհք ունեք, ցույց տվեք, եթե չունեք, Աստված ձեզ հետ:

Հիմա խոսենք ուրիշ բանի մասին:

Լսեցի, որ դուք տաճկահայոց եղեռնի հիսնամյակի կապակցությամբ ուզում եք ցույց սարքել և ՄԱԿ-ում դնել հայկական հողերը վերադարձնելու հարցը:

Շատ խելոք բան եք մտածել, և այս անգամ անպայման մեծ պետությունները կլսեն ձեր խնդիրը:

Ես միայն Հայաստանի կառավարությունից եմ վախենում: Նա թուրքից ավելի է պաշտպանում Թուրքիայի շահերը: Մեզ մոտ յոթ հոգի թուրքահայ հողերի պահանջով հանդես եկան, Հայաստանի կառավարությունը բռնեց նրանց յոթ տարով աքսորեց Սիբիր...

Դուք աշխատեք թուրք կառավարությանը համոզելուց ավելի՝ հայ կառավարությանը համոզել:

Երբ տեսնեք՝ չի համոզվում, ցույց կազմակերպեցեք «Բանք Օթոմանիի»[70] նմանությամբ:

Մի խումբ զինված տղաներով մտեք Երևանի պետական բանկը, և մինչև թուրքահայ հողերը չվերադարձնեն, դուրս չգաք բանկից:

Միայն նախապես պետք է ստուգել: Որովհետև կարող է պատահել, որ բանկը ոչ թե փող, այլ պարտամուրհակներ ունենա իր գանձարկղում: Այն ժամանակ, իհարկե, Երևանի կառավարությունը ոչ թե զորք կուղարկի բռնագրավողներին այնտեղից հանելու, այլ կպաշարի, մինչև բանկ գրավողները... մարեն այդ պարտամուրհակները:

Մեկ էլ գիտեք ինչ, վազն եկեք մեծ պետություններից և աշխատեք գործը գլուխ բերել փոքր պետությունների օգնությամբ:

Ջիբրալթար քաղաքը, որ ընդամենը երեսուն հազար բնակիչ ունի, օրերս անկախություն պիտի ստանա և անդամակցի ՄԱԿ-ին[71]:

Ուղիղ Ջիբրալթար գնացեք և նրա օգնությունը խնդրեք: Եթե կասի՝ դեռ անկախություն չեմ ստացել, ասացեք. «Ոչինչ, մենք այս-

տեղ կնստենք, մինչև անկախություն ստանաս»:

Որովհետև գիտեք ինչ: Փոքր պետությունն անգամ եթե կամենա չարիք հասցնել մարդուն, նրա հասցրած չարիքն էլ իր նման փոքր կլինի:

Իսկ Ռուսաստանը, օրինակ, աշխարհի մեկ վեցերորդն է կազմում: Նրա գործած չարիքին մարդ կդիմանա՞:

Այն էլ բոլշևիկ Ռուսաստանը, որ, անկախ ազգություններից, միայն չարիք է գործում...

Ամեն դժբախտություն իր բարեբախտությունն ունի

Ձեք հավատում:

Այս բոպեիս մեկ-մեկ ցույց տամ:

Աշխարհում Սովետական Միությունից ավելի մեծ դժբախտություն կա՞: Աշխարհն այսպիսի զուլում տեսե՞լ էր իր օրում:

Ո՛չ:

Սակայն, այս զուլումը տեսեք՝ ինչ լավ բաներ արեց աշխարհում:

Դարերով իրար թշնամի Ֆրանսիային ու Գերմանիային եղբայրներ դարձրեց:

Ինչպես, երբ գայլը մտնում է փարախ, ոչխարներն իրար են սեղմվում՝ աշխատելով իրենց գլուխները մյուսների դմակների արանքները կոխել, այնպես էլ աշխարհի մեծ ու փոքր պետությունները, իրար սեղմված, Սովետական Միության աչքին են նայում և ամեն բոպե հարձակման սպասում:

Սա քսան տարի է, ինչ Երկրորդ համաշխարհային պատերազմը վերջացել է: Եթե Սովետական Միության սարսափը չլիներ, այդ ժամանակամիջոցում քանի՞ պատերազմներ պիտի տեղի ունենային այսօրվա իրար միացած պետությունների մեջ: Ո՞վ էր տեսել ամբողջ քսան տարի աշխարհն անպատերազմ:

Բանն այնտեղ է հասել, որ ողջ Եվրոպայի մանր ու մեծ պետությունները միացած ուզում են մի միացյալ եվրոպական պետություն կազմել, ինչպես Ամերիկան է կազմել իր քառասուն նահանգների հետ:

Այսպիսի բան առաջները որևէ մարդ կարո՞ղ էր մտքից անցկացնել...

Այն, ինչ չէր արել ամբողջ աշխարհը միացած, արեց Սովետական Միությունը մեն-մենակ։

Դուք կարող եք առարկել.

- Բայց չէ՞ որ Սովետական Միությունը աշխարհը երկու թշնամի բանակների վերածեց՝ ամեն րոպե իրար վրա խոյանալու պատրաստ։ Իսկ այդ կլինի աշխարհի վերջին պատերազմը, որովհետև դա կլինի ատոմային, որից հետո մարդկությունը կդադարի գոյություն ունենալուց։

Եթե անգամ այդպես լինի, այն ժամանակ էլ սովետների գոյությունը չի դադարի բախտավորություն լինելուց, անգամ կկրկնապատկվի նրա պատճառած բախտավորությունը։

Մարդիկ ունեն մի շատ կարճ կյանք, որի մեջ խտանում է հավիտենական ոչնչացման սարսափը։

Օրենքով նախքան երեխա ծնելը, մայրացուն պիտի հարցներ իր ծնելիք երեխային.

- Բալա՛ջան,- ասեր,- իմացի՛ր, դու աշխարհ պիտի գաս կարճ ժամանակով, այդ կյանքը լիքը կլինի տառապանքներով։ Քո միակ ուրախությունն ամուսնությունդ պիտի լինի, այն էլ եթե ընտրությունդ հաջող լինի, իսկ եթե ամուսնանալով պիտի ունենաս մի չար կին, վա՛յ քեզ, տառապանքդ կկրկնապատկվի։ Այդ տառապանքով լիքը կարճ կյանքը նրա համար է, որ դու ժառանգես հավիտենական ոչնչություն։ Ուրիշ խոսքով ծնվում ես ոչնչանալու համար։ Նայի՛ր, եթե այդ ձեռնտու է քեզ, ծնեմ, եթե ուզում ես ո՛չ ծնվել, ո՛չ ոչնչանալ, չեմ ծնի։

Եթե մայրն այսպես ասեր, ո՞ր հիմարը կուզենար աշխարհ գալ։

Աշխարհը կդառնար այն «մահվան կամերան», ուր բոլշևիկները նետում էին մարդկանց մինչև գնդակահարելը։ Բայց պատահում էր, որ Մոսկվան մահավճիռը չէր հաստատում, և մարդն ազատվում էր, բայց երկնային Մոսկվան մարդուն աշխարհ էր ուղարկում՝ նախապես մահավճիռը ստորագրած...

Ասացե՛ք, եթե պատերազմի հետևանքով այսպիսի աշխարհը հիմնահատակ կործանվի, մի՞թե դրանով մարդկությունն ավելի երջանիկ չի լինի։ Եթե լինի, ուրեմն, պիտի շնորհակալ լինենք Սովետական Միությանը իր պատճառած այս բարիքի համար։

Եվ իր հերթին դա մի ապտակ կլինի խփած Աստծու երեսին՝ ասելով.

- Թքել եմ քո էլ, քո պարգևած կյանքի էլ վրա։

Հիմա խոսեմ դրանից ծավալով ավելի փոքր մի դժբախտության մասին։

Դա թուրքահայության կոտորածն էր։

Եթե հայության մայրը նախքան նրան ծնելն ասեր.

- Բալա՛ ջան, դու ծնվելով միայն Արտաշես Աշխարհակալի և Տիգրան Մեծի ժամանակ պիտի օր ու արև տեսնես. նրանից հետո անվերջ միայն կոտորած, գաղթ ու ավեր տեսնես ու նստած քո ծխացող ավերակների վրա՝ լաց լինես՝ նայելով քո մինուճար զավակին, որի սրտին չոքած թշնամին... մորթում է, մորթում։

Եթե ասեր նրան.

- Բալա՛ ջան, քեզ վրա պիտի հարձակվի արաբը, պարսիկը, հույնը, թուրքը, լեզգին, վրացին, ադրբեջանցին, հայ բոլշևիկը ու «նասոսները»* դրած ծծի քո արյունը, կուզե՞ս քեզ ծնեմ։

Ի՞նչ եք կարծում, հայ ազգը կծնվե՞ր։

Ո՛չ։

Եթե ծնվեր անգամ, ես չէի ծնվի։

Կերթայի ծնվելու մի այնպիսի ազգի մեջ, ուր հնար լիներ ապրել մինչև բնական մահս և ոչ թե դեռ չծնված՝սպանվեի։

Պիտի ասեք.

- Ամո՛թ քեզ, վախկո՛տ։ Մարդ ի՞լ հայը թողած ուրիշ ազգում ծնվի։ Ավելի լավ է հայ մեռնել, քան այլազգի ապրել։

Դրան կպատասխանեմ.

- Ո՛չ։ Ես նախ ծնվեցի որպես մարդ, հետո ինձ ասացին՝ դու հայ ես։ Մի՞թե անհրաժեշտություն է, որ նորածինը մարդ լինելուց հետո նաև մի որևէ ազգության պատկանի։

Եթե ցուրտ չէ, ինչո՞ւ երկու շոր իրար վրա հագնել։ Դա խանգարում է աշխատանքին։ Իսկ եթե ավելորդ շորը մի ազգ է, դա աղետալի է նրանով, որ խանգարում է մարդկանց սիրով ապրել իրար հետ։ Երկրորդ այդ «շորն» ատելություն է ու թույն։ Այն աշխարհը դարձրել է մի անմիտ սպանդանոց աշխարհի սկզբից մինչև մեր օրերը։

Ես եթե աշխարհ գայի որպես մարդ միայն, եղբայր կլինեի բոլոր նրանց, որոնք իրենց մարդ էին համարում։ Իսկ եթե մեկն ինքզին-

* Նասոս *(насос)* – ռուս. պոմպ։

քը մարդ չի համարում, ես թքել եմ նրա վրա, ինչ ազգի ուզում է պատկանելիս լինի։

Անգամ հայ...

Մարդն աշխարհ է գալիս միայն ապրելու համար։ Թող կորչեն բնության սահմանած այս կարգը խախտող բոլոր գործոնները։

Լսեցե՛ք, մի ուրիշ բան ասեմ։

Մայրն ունի մի մինուճար զավակ, որի համար մեռնում է։

Զավակը, սակայն ծնված օրից հիվանդ է ու խայթող ցավերից ո՛չ քուն ունի, ո՛չ հանգիստ. անասելի ցավից միայն մռռում է։

Ես անձամբ տեսել եմ այսպիսի մշտական հիվանդի տերեր, որոնք աղոթելիս կանչել են.

- Աստվա՛ծ, բավական է տանջես, ա՛ռ նրա հոգին, որ ինքն էլ ազատվի, մենք էլ։

Այդ անհույս հիվանդը ներկայիս հայ ազգն է։ Ինչ բժշկի դիմեց, ճար չարին։

Գիտեք անշուշտ, որ դիվանագիտական հիվանդության բժիշկները մեծ պետություններն են։ Թուրքահայերը, երբ մեծ պետության դիմեցին, թուրքերը կոտորած սարքեցին։ Բայց այնուամենայնիվ թուրքերն այնքան լավն էին, որ թույլ էին տալիս մեծ պետության դիմել։ Իսկ հիմա մեր հայ բոլշևիկները կոտորում են հայերին՝ առանց մեծ պետությանը դիմելու հնարավորություն տալու։ Եվրոպական որևէ պետության հետ խոսելիս քեզ այդ պետության լրտեսը կհամարեն ու կգնդակահարեն։

Արդ։

Հայ ազգի թշնամիներն ուժեղ են և անպարտելի։ Հայերը երեք միլիոն են, թուրքերը՝ քսաներեք։ Բոլշևիկները, ճիշտ է, թվով մի քանի հատ են, կարելի է նրանց ոտների տակ ճզմել, բայց նրանց ետևը կանգնած է բոլշևիկ Ռուսաստանը, որը երկու հարյուր միլիոն է։ Հենց որ բոլշևիկը ճվա Հայաստանում, անմիջապես հետևից կհասնի ռուս բոլշևիկը։ Ինչպես հասավ 1921 թվին։

Ուրեմն, ինչ անել, որ սա անիծյալ հայկական հարցը լուծվի։

Ես չեմ առաջարկի աղոթելիս պոռալ։

- Աստվա՛ծ, հայ ազգի հոգին ա՛ռ, ազատվենք։

- Ո՛չ, քավ լիցի, ես այդ բանը չեմ անի։ Բայց երբ տեսնեմ, որ հայն առանց իր գիտության կամաց- կամաց ձուլվում է մի ուրիշ

ազգի հետ, նրան չեմ արթնացնի իր քնից և չեմ ասի. «Զգո՛ւյշ կաց, դու ձուլվում ես»: Եվ կթողնեմ բնության օրենքին:

Դարվինը շատ լավ գիտեր, որ կենդանական աշխարհում արարածներն իրենց գոյությունը պաշտպանելու համար հարմարվում են շրջապատին, բայց երբեք Դարվինը չզգուշացրեց այդ կենդանիներին և չասաց. «Զգուշացե՛ք ուրիշի կերպարանք առնելուց և ձեր սկզբնական պատկերը մի՛ փոխեք»:

Այլ ինձ նման չտեսնել ձևացուց:

Այլ կերպ նրանց մահվան պատճառը պիտի դառնար:

Այժմ եկեք հաշվենք հայ ազգի բեկորները. տեսնենք՝ այդ բեկորների միացմամբ մի ազգ կարո՞ղ ենք կազմել:

Թուրքահայաստանում հայ չմնաց: Ռուսահայաստանում մնացածները ոչ միայն հայ չեն, այլ մինչև անգամ մարդ չեն: Մի բուռ փափկացրած կավ՝ Լենինի բրուտանոցում: Ուզենա՝ պուտուկ կպատրաստի, ուզենա՝ գարշոկ՝... Երբ այդ «բրուտը» տեսնում է, որ կավը ջրիկ է, ներգաղթի միջոցով սփյուռքից հայեր է բերում և խառնում հետը:

Խառնում ու սկսում հունցել...

Հիմա ինչ անենք, ազգային երգեր երգենք և հայդուկային խմբեր ուղարկենք Մոսկվա:

Գրավենք ամերիկյան որևէ բանկ և դուրս չգանք, մինչև թուրքերից մեր հողերն առնի մեզ տա:

Պատերազմներում մի այսպիսի սովորություն կա: Երբ մի բանակ անհուսալի պաշարվում է թշնամուց, և փրկության հույսը կորչում է, հրամանատարն արձակում է կողքից կախած թուրը և ասում.

- Դուք այլևս հրամանատար չունեք, ով ինչպես կամենա, թող իր կյանքը փրկի:

Եթե ես մեր ազգի հրամանատարը լինեի, ես էլ նույն կերպ կվարվեի:

Կասեի.

- Հա՛յ ազգ, իբրև ազգ ապրելու բոլոր ճանապարհները փակված են, մարդ եղեք ու ապրեք...

---

* Գարշոկ ***(горшок)*** - ռուս. գիշերանոթ, միզաման:

Երկընտրանք

Շատերն ասում են.

- Որպեսզի լիաթոք ապրես, պիտի հիշես, որ դու մահկանացու չես, այլ անմահ:

Ես այս կարծիքը չեմ դավանում և հակառակն եմ պնդում:

Բոլոր պետությունները, բոլոր հիմնարկներն ու բոլոր անհատներն ապրելու համար նախապես տարեկան ծախուց բյուջե են կազմում:

Եթե մարդն իմանա, որ հավիտյան պիտի ապրի, էլ ազնվությունն կմնա մեջը:

Ո՛չ: Նա, մոռացած մարդասիրության բոլոր կանոնները, պիտի գռփի, ճռփի, գողանա, ստի, կողոպտի, սպանի, երբեք չուտի, վաստակած հարյուր կոպեկից մեկն ուտի, իննսունինը խնայի ապագայի համար, դառնա կծծի, անհյուրընկալ, ագահ:

Մանավանդ մեր արդի պայմաններում դա անհնար է:

Ամեն անգամ հերթի կանգնելիս մեր խանութները բաց են թողում ընդամենը կես կիլո կարագ. մարդ քանի՞ անգամ հերթի կանգնի, որ կարողանա հավիտյան ապրելու չափ յուղ հավաքել:

Հետո՝ հավիտենական մթերքի համար հարկավոր են ընդարձակ պահեստներ, իսկ ժամանակակից մարդն ապրում է վերի հարկերում՝ ընդամենը մի սենյակի մեջ սեղմված:

Ամերիկայում առանց հերթի կարելի է գնել տոննաներով կարագ, ալյուր խմորեղենի համար, մինչև անգամ բրինձ, բայց ես ամերիկացուն էլ խորհուրդ չէի տա հավիտյան ապրել:

Ես այն կարծիքին եմ, որ մարդն ապրելիս միշտ հիշի, որ ինքը մի օր պիտի մեռնի գնա, և որպեսզի բարի հիշատակ թողնի իր ետևից, պետք է մարդասեր լինի, չքավորին օգնի ու կարոտյալին հասնի:

Եթե ոչ, մարդը կդառնա Չինգիզ խան, Լենկ Թեմուր, Լենին, Ստալին, որ իրենց մահից հետո սերունդները հիշեն ու անվերջ միայն անիծեն:

Ռուսաստանն ու Ամերիկան, կարծելով, թե իրենք անմահ են, իրենց բյուջեների կեսից ավելին տալիս են զենքի, որ իրար սպանեն:

Եթե իմանային, որ իրենք մահկանացու են, բոլոր զենքերը ծովը

կթափեին և առանց ծախսի իրար մահվան կսպասեին։ Կարող է մի քիչ հետ ու առաջ մեռնեին, բայց կմեռնեին։

Հիմարություն չէ՞, անծախս, ձրի մահը թողած, գնալ միլիարդներով մեռնել։

Կինը, որ ողջ կյանքում իր ամուսնուն մի քաղցր խոսք չի ասել, որ միայն կռվել է հետը, ամուսնու մահվանը նրա ետևից լաց է լինում։

Իսկ եթե մարդիկ ապրեին հավիտյան, այդ լացն էլ չէր լինի, և մարդը կմնար իսպառ անմխիթար։

Ճիշտ է, այդ լացը կլիներ մի քիչ ուշացած, բայց առածն ասում է. «Ավելի լավ է ուշ, քան երբեք»։

Այս բոպեիս ողջ սովետական ժողովուրդը մխիթարվում է նրանով, որ մարդը մահկանացու է, շուտով ինքը պիտի մեռնի ու ազատվի այս կառավարության ձեռքից։

Ուզում է՝ ինքը մեռնի, կառավարությունը ողջ մնա, որ չգա իր ետևից, տանջի իրեն։ Եթե ես մի բոպե ժխտեմ անգամ մահվան այս առավելությունները, չեմ կարող ժխտել այն, որ մահը բազմազանություն է մտցնում մարդու կյանքի մեջ։ Ես չեմ կարող ժխտել, որովհետև ինձ համար ամենաանտանելին միօրինակությունն է։ Միշտ մի կնոջ սիրելը, ընտրություններին միշտ միևնույն թեկնածուին ձայն տալը...

Եթե Ստալինը չմեռներ, մինչև այսօր էլ պիտի ընտրվեր, որովհետև մեր երկրում միակուսակցականություն է։ Իսկ Ամերիկայում, որովհետև գոյություն ունեն երկու կուսակցություններ, միշտ փոփոխվում են, բայց իրար օգնում։ Մի կուսակցությունը կանգնում է, մյուս կուսակցությունը երկիրը բարձրացնում է նրա շալակը, ինքն էլ ետևից գնում։

Մահն ուրիշ առավելություններ էլ ունի, բայց չեմ հիշում։

Մնացածը մեռնելուց հետո կհիշեմ և ձեզ կգրեմ...

Երբ ես զայրացած եմ

Ամեն անգամ, երբ հիշում եմ թուրքահայ աղետը, լցվում եմ վրեժխնդրությամբ և փնտրում եմ մեկին, որ թույնս վրան թափեմ։

Չեմ մեղադրում թուրքերին։ Ինչպես գայլը ոչխար տեսնելիս

պիտի հոշոտի, այնպես էլ թուրքը հայ տեսնելիս պիտի կոտորի։

Կարո՞ղ եք գայլին մեղադրել գազանության մեջ։ Ո՛չ։ Նա բերանը կբանա ու կասի.

- Այսպիսի ատամնաշար ունեցողը չի կարող խոտ ուտել, նա մեկին պիտի հոշոտի։

Այնպես էլ Թուրքիան։

Ես այսօր բարկացած եմ... Քրիստոսի վրա։

Հայկական բոլոր կոտորածների պատճառը Քրիստոսն է, ու ահա ես կապվում եմ հեռախոսով նրան ու երկիր կանչում՝ նրա հետ հաշիվ մաքրելու։

- Ալլո՛, երկի՞նքն է։

- Այո՛։

- Ո՞վ է խոսում։

- Աստված։

- Լսափողը հանձնի՛ր քո որդի Քրիստոսին։

- Քրիստոսը լսում է։

- Անմիջապես աշխարհ իջի՛ր։

- Ի՞նչ է պատահել։

- Արի՛, կիմանաս։

- Եթե պիտի խաչեք նորից, չեմ գա։ Բավական է։

- Այո՛, պիտի խաչեմ քեզ, բայց այս անգամ ոչ թե քո մարմինը, որ խաչվելուց հետո երեք օր սուտ քուն մտնի ու երկինք համբառնա, այլ այս անգամ հոգիդ կխաչեմ ու անդարձ կթաղեմ։

- Իսկ մարմինս ի՞նչ պիտի անես։

- Մի՛ վախենա, մարմնիդ ձեռք չեմ տա։

- Բայց ես հասակս առել եմ, երիտասարդ չեմ, որ նորից համբառնամ երկինք։

- Ես քեզ կդնեմ մի հրթիռի մեջ, կբարձրացնեմ։ Հիմա առաջվանը չէ, որ մարդիկ հետիոտն համբառնան։

Այս խոսքիս վրա մեկ էլ տեսա Քրիստոսը թմփթմփալեն վայր է իջնում երկնքից։

Բարև տվեց, չառա։

- Դու ինչո՞ւ սրանից երկու հազար տարի առաջ աշխարհ եկար,- դիմում եմ նրան շատ խիստ։

- Իմ հայր Աստվածն ուղարկեց, ես էլ եկա։

- Ուրեմն դու ով որտեղ ուղարկի, կերթաս, սեփական խելք չունե՞ս։

- Հորը լսելը հանցա՞նք է։

- Այո՛, քո հասակի մարդու համար հանցանք է։ Չե՞ս կարդացել Տուրգենևի «Հայրեր և զավակները»։

- Ո՛չ։

- Դու աշխարհ գալով արատավորեցիր մի համեստ կույսի պատիվ և ընդամենը մի հրեշտակի ավետիքով ծնվեցիր նրանից։ Դու չգիտե՞ր, որ նա օրինական ամուսին ուներ՝ հանձին հյուսն Հովսեփի, ինչո՞ւ նրանից չծնվեցիր, ինչպես օրենք էր, գնացիր ինչ-որ հրեշտակի «ավետիքով» ծնվեցիր։ Այդ ի՞նչ ծնվելու ձև է։ Եթե ներկայիս մեր կույսերն էլ «ավետիքով» ծնեն, ի՞նչ կմնա մեր երիտասարդներին անելիք։

- Լավ, դա անցած- գնացած բան է, չխոսենք այդ մասին։ Ինձ ինչո՞ւ կանչեցիր։

- Կանչեցի, որ հարցնեմ՝ ինչո՞ւ աշխարհ եկար։

- Պարզ չէ՞. եկա, որ այս մեղսալից աշխարհն ուղիղ ճանապարհի վրա բերեմ, նրանց մեղքերին թողություն տամ, սեր, եղբայրություն ու խաղաղություն քարոզեմ։

- Ճիշտ է, քարոզել ես։ Բայց ցո՛ւյց տուր քո մի պատգամը, որ մարդիկ կատարած լինեն։ Քո քարոզը շատ նման է մեր կոլխոզնեերի՝ իրար մեջ կապած սոցմրցման պայմանագրին. կապում ու գնում են իրենց գործին՝ առանց մի անգամ էլ ետև նայելու։ Քո քարոզած խաղաղությունը գիտե՞ս՝ ուր տարավ մարդկանց։ Տարավ հասցրեց համաշխարհային երրորդ պատերազմին, երբ ազգերն իրար գլխովին պիտի բնաջնջեն։ Ա՞յս է քո խաղաղությունը։

Այս րոպեին Ամերիկան ունի երկու միլիարդ տոննա հացահատիկ, ինչո՞ւ մեկ միլիարդը չի տալիս Սովետական Ռուսաստանին, որ, դիմացը նստած, սոված զկրտում է։

- Պետությունները մի կողմ թողնենք. դու խոսիր քո՛ մասին։ Իմ աշխարհ գալով քեզ անձնապես վնաս տվե՞լ եմ։

- Այո՛, տվել ես։

- Ի՞նչ վնաս։

- Այն, որ ինձ քրիստոնյա ես դարձրել։

- Դրանից ի՞նչ վնաս, մանավանդ, որ ասում ես՝ քրիստոնեությունը դատարկ քարոզ է միայն։

- Հենց այն է սիրտս մղկտացնում, որ այդ փուչ քարոզի համար ես ու ինձ հետ ողջ հայությունը անվերջ կոտորվում ենք: Ախ՛, ինչ ասեմ մեր Աբգար թագավորին[72], որ քրիստոնեությունն առաջին անգամ ընդունեց: Կարծես խանութում ստացված մակարոն լիներ, իրեն հերթ չէր հասնի... հասավ, ու ընդունեց:

Եթե քրիստոնեությունը չլիներ, մենք երբեք չէինք կոտորվի: Ասա՛, խնդրեմ, ինչ են մտածում ձեզ մոտ երկնայինները երկրի վրա ապրողների մասին: Ինչպես ինձ հայտնի է՝ քրիստոնյաների ու մահմեդականների Աստվածը մեկ է: Ինչպե՞ս է պատահում, որ միևնույն Աստված ստեղծում է քրիստոնյային, ետևից մահմեդականին է ուղարկում, որ կոտորի նրան...

Այս ինչ թաթալաբազ* մարդ է եղել քո հայր Աստվածը (խնդրում եմ, երկինք բարձրանալիս այդպես էլ ասես, որ ես նրան թաթալաբազ եմ ասում): Մեկ իրեն ամենակարող է հայտարարում, մեկ գնում է գլուխը ծռում մի խեղճ կույսի առաջ, որ նրանից որդի ծնեցնի իր համար:

Այն Աստվածը, որ կավից Ադամ ստեղծեց, չէ՞ր կարող նաև նույն կավից մի որդի ստեղծել իր համար: Մանավանդ, որ այդ որդին կունենար իր կերպարանքը: Այնպես, ինչպես Ադամը: Բայց Հովսեփի նշանածից ստացված որդին չէ՞ որ կարող է և իրավունք ունի նաև Հովսեփին նմանվել:

Կերթաս երկինք, հորդ ասա՝ եթե ինքն է ստեղծել մարդկությունը, թող տե՛ր կանգնի իր ստեղծածին, և չթողնի իրար կոտորել: Շատ չէ, մի գյուղական վարժապետի զգոնություն ունենա: Մի՞թե այդ ուսուցիչն իր դասը կշարունակի, երբ աշակերտներից երկուսը, իրար կոկորդ բռնած, ուզում են խեղդել իրար: Իսկ ներկայիս աշխարհում, երկուսի բաժանված, խեղդում են իրար, ու Աստծու հեչ վեջը չէ:

- Մի՛ մեղադրիր, ծերացել է:

- Ծերացել է, թող Խրուշչովի նման ազնվություն ունենա խոստովանելու իր ծերությունը և թոշակի անցնի: Փառք Աստծու. Աստված աշխարհ ստեղծեց՝ Խրուշչովը վայելեց:

- Ստաժը չի լրացել:

- Ինչո՞ւ, վաթսունհինգ տարեկան չկա՞:

* Թաթալաբազ (բրբ.) - արկածախնդիր:

- Վաթսունհինգը մարդու ստաժն է. աստվածներինը հավիտենականության հետ է կապված։

- Հեղաշրջում կատարի՛ր, նրան տապալի՛ր, տե՛ղը նստիր։

- Պատճառ չունեմ այդ բանն անելու։

- Հա՛յ, տնաշե՛ն, Սովետական Միությունը առանց պատճառի աշխարհն է խառնում՝ դու չե՞ս կարող մի ամայի երկինք հեղաշրջել։ Բոլշևիկ հրեշտակներ չունե՞ք։

- Ո՛չ, նրանք դժոխք են գնում։

- Ավելի լավ. այդ խլրտումներն ավելի շատ սատանայի գործ են, քան հրեշտակի։ Հեղաշրջի՛ր ու ինքդ կանգնի՛ր տիեզերքի գլխին։ Ու երբ քեզ հաջողվի այդ բանը, մեկ-մեկ կուղղես քո թույլ տված սխալները։

- Այն ժամանակ ի՞նչ անեմ, բնաջնջե՞մ թուրքերին։

- Չէ՛, ինչո՞ւ բնաջնջես. ահագին աշխատանք է թափված այդ ազգի վրա։ Ժամացույցը որ կանգնի, անմիջապես դեն չեն նետի։ Կարող է նրանում փչացած լինի մի շատ փոքր մասնիկ, որը փոխելու դեպքում ժամացույցը դեռ շատ երկար կաշխատի։

Թուրքիան խոմ ամբողջ մարմնով ոճրագործ չէ։ Պետք է հանձնել մի վարպետի, տանի խոշորացույցով նրա մարմնի մասերը քննի, ոճրագործ մասը փոխի ու բաց թողնի։ Եթե Թուրքիան հասկանա, որ հայն էլ իր նման ազգ է և իրավունք պիտի ունենա իր նման ապրելու, կդառնա հայի ամենամտերիմ բարեկամը։

Թուրքիան, զղջալով իր արածը, կարող է դառնալ մեծ պետություններին և ասել.

- Ամո՛թ ձեզ։ Ես մահմեդական էի, կոտորում էի մի քրիստոնյա ժողովրդի, ձե՞զ ինչ էր եղել, չէ՞իք կարող ձեռքս բռնել և արգելել այդ բանը։ Չէ՞ որ այդ անում էի ձեր աչքի առաջ։

- Շատ ճիշտ ես ասում,- հաստատեց Քրիստոսը,- երեխան որ ջուրն է ընկնում, մեղավորը նրա կողքի հասակավորն է։

- Այո՛, երբ ավանակն ընկնում է գարու արտը, ավանակի տերն է մեղավոր,- ավելացրի ես։- Հեղաշրջում կատարիր, տե՛ր դարձիր Թուրքիային՝ այդ պատմական ավանակին, երբ կտեսնես զռալով դեպի հայն է վազում, գավազանով տո՛ւր դնչին։

Խոսքեր, որոնք գործ չեն դառնում

Ծնողները, որոնք գնում են իրենց տղաների համար աղջիկ ուզելու, աշխատում են այնպես անել, որ աղջիկը տղայից մի հինգ տարով փոքր լինի։

Եվ դա խելոք բան է։ Աղջիկը տղայից շուտ է թառամում։ Եթե տարիքների այս տարբերությունը չլինի, ամուսնության ընթացքին մարդն իր գործունեությանը վերջակետ դնելիս, կինը նոր տողից սկսելով՝ նոր կսկսի ապրել...

Բայց երևակայեցեք՝ «ամենագետ» Աստվածը մարդ ստեղծելիս հոգու և մարմնի մեջ պատահելիք այս տարաձայնությունները հաշվի չի առել։

Ոչ միայն մեր հոգին ու մարմինը հասակակիցներ չի ստեղծել, այլ հոգին, որ անմահ է, վերցրել է տասը տարեկան և ամուսնացրել մեր հիսուն տարեկան մարմնի հետ։

Ընդհակառակն անելու փոխարեն։

Հետևանքը։

Հետևանքն այն է, որ այսօր, երբ մեր ծերացած մարմինը պառկելիս հետևն է դարձնում իր կնոջը, հոգին նոր «բարի լույս» է ասում և շուռ է գալիս դեպի իր սիրեկանը։ Ու իր կյանքն սկսում է նոր տողից։

Ես չեմ հիշում, որ երիտասարդ ժամանակս կանանց որևէ տեղին խոսքով մեռած լինեմ։

Երբ գործը կա, ո՞ւմ է հարկավոր խոսքը։

Բայց քանի մեծացա, գործը հետև մնաց, խոսքն սկսեց առաջ ընկնել։ Իսկ հիմա, որ արդեն շատ ծեր եմ, և գործ չկա, դեմս պատահող կնոջ ամեն տեղին «մեռնում եմ» ու «մատաղ» լինում... խոսքով։

Երևակայեցեք մի բանկ, որ թղթադրամի դիմաց ոսկի չունի։

Պատերազմներում թշնամի բանակները նախ թնդանոթաձգությամբ նախապատրաստում են թշնամուն, հետո նոր, «ուռա՜» պոռալով, հարձակվում։

Ես էլ նույն օրինակով կանանց հետ սիլի-բիլի եմ անում, պատրաստվում եմ հարձակմանը, բայց երբ «ուռա՜» եմ գոռում և գրոհում, ցավով տեսնում եմ, որ ունեցածս պատրոնը... «խալաստոյ» է։*

---

* Խալաստոյ ***(холостой)*** - ռուս. դատարկ, անգնդակ։

Ու ես պարտված սպասում եմ, որ «թշնամիս» իր հաշտության պայմանն առաջարկի…

Այս բոլոր պատմածներս հատուկ են ոչ միայն անհատ մարդկանց, այլև պետական, հասարակական բնույթ են կրում։

Վերցնենք քրիստոնեությունը և սոցիալիզմը։

Երկուսն էլ միայն խոսք։

Երկու ծերունիներ, որոնք, բռնած երիտասարդ մարդկությանը, նրա ջանին մատաղ են լինում, հոգուն մեռնում։

Եվ ուրիշ ոչինչ։

Քրիստոնեությունը երկու հազար տարուց ի վեր, իսկ սոցիալիզմը՝ քառասունյոթ։

Ա՜յ Քրիստոս, ա՜յ Լենին, շնորհք ունեք՝ ցույց տվեք, անվերջ հոգուն մեռնելուց ինչ դուրս կգա։

Ամուսնացել եք ձեզ հավատացողների հետ, ո՛չ բավարարում եք նրանց, ո՛չ էլ թույլ եք տալիս նրանց ուրիշ մարդ առնել, բախտավորվել։

Քրիստոնեությունը, համեմատած սոցիալիզմի հետ, էլի լավ է, թույլ է տալիս մարդկանց նաև մահմեդական, բուդդայական լինել։

Իսկ սոցիալիզմը՝ չէ։ Լենինը երկաթե պարիսպ է քաշել իր երկրի շուրջը և ասում է.

- Ինձնից ի զատ ուրիշ աստված չունենաս[73]։

- Լա՜վ,- ասում է ժողովուրդը,- չունենամ։ Երկրում սոցիալիստական կարգեր ստեղծիր՝ ապրեմ։ Դու միայն մեզ սպանում ես։ Սպանությունը սոցիալի՞զմ է, տանում է դեպի մարդկային երջանկությո՞ւն։

Շատերը Լենինին և նրա հաջորդ Ստալինին համարում են սադիստ։ Բայց սադիզմի հիմնադիր մարկիզ դը Սադն[74] աղջիկ էր տանում իր ամրոցը, նախ նրա սերն էր վայելում, նոր սպանում իր զոհին։ Մեր երկու առաջնորդները, առանց մի համբույրի, սպանում են իրենց հավատացած ժողովրդին։

Քրիստո՛ս և Լենի՛ն, ձեզ չի հաջողվի ձեր պառաված աղջիկներին մարդու տալ։ Նրանք տանը կմնան, որովհետև մարդկության համար ավելի լավ է ամուրի մնալ, քան ունենալ իրենց քողերի տակ ծերացած նորահարսեր…

Քրիստոնեություն և սոցիալիզմ

Այս գիշեր երկնքում իրարանցում էր։

Պատրաստվում էին «Վերջին դատաստանի»։

Մուհամմեդը նստել էր Քրիստոսի դիմաց շատ մտածկոտ։

Նա իր հավատացյալներին հուրի-փերիներ էր խոստացել մահվանից հետո, այժմ հասել էր ժամանակը, ու ո՛չ հուրի էր ճարել, ո՛չ փերի. եղածները սաստիկ գեշ կանայք էին։ Այնքան գեշ, որ մեռելը նրանց երեսը նայելուց վախից կարող էր... կենդանանալ։

- Քրիստոս ջա՛ն, օգնի՛ր ինձ,- ասաց Մուհամմեդը,- քանի որ ձեզ մոտ գեշ ու գեղեցիկ կինը միևնույն է, եկ քո գեղեցիկ կանանց ջոկիր, ինձ տուր։ Օրենքով դրանք ինձ պիտի պատկանեն։

- Օրենք...հեգնեց Քրիստոսը։- Օրենքով երկրի վրա քրիստոնյան մի կին պետք է ունենա։ Այդպես էլ կա։ Բայց մի հարցրու, թե օրենքի տակից քանի՞սն ունի... Ո՛չ, սիրելի՛ս, ամեն կրոնին էլ գեղեցիկ կին է հարկավոր։ Որտեղ պաշտամունք, այնտեղ գեղեցիկ կին։

- Ա՛յ տղա, բա ո՞նց անեմ, մնացի մաթալ*...

Այդ միջոցին խոսակցությանը խառնվելով՝ Սովետական Միության մամուլի բաժնի վարիչն ասաց.

- Մեր Միության մեջ հրատարակվում է մոտ մի միլիոն թերթ, ամեն թերթում տասը կթվորուհի նստած մի կովից տարեկան վեց հազար լիտր կաթ են կթում։ Կանայք, անխտիր գեղեցկուհիներ են։ Նրանցի՛ց օգտվիր։

Մուհամմեդը, որ սոցիալիզմից գաղափար չուներ, հարցրեց.

- Շատ կաթ կթելու համար գեղեցի՞կ պիտի լինել։

- Այո՛, ամեն շատի համար գեղեցիկ կին է հարկավոր։

- Բայց կովերը ետևն են դարձնում կթվորուհուն ու նրանց երեսն էլ չեն նայում...

Այդ միջոցին մի հրեշտակ եկավ ու Քրիստոսին զեկուցեց, որ Լենինը չի ուզում բարձրանալ երկինք։

Քրիստոսը սրտնեղած վերցրեց հեռախոսը.

- Տվե՛ք Լենինի դամբարան։

- Պատրաստ է։

- Լենի՞ն։

- Հը՛։

* Մաթալ մնալ (բրբռ.) - մոլորվել, շվարել։

- Ա՛յ տղա, քեզ կանչում են՝ ինչո՞ւ չես գալիս։

- Ո՞նց գամ։ Մի բոպե դամբարանից ոտս դուրս դնեմ՝ կգան, տեղս կպառկեն։ Խրուշչովն ամբողջ օրը դամբարանիս շուրջը թրև է գալիս։

- Խրուշչովը մեռե՞լ է, որ անմահանա։

- Չի մեռել, բայց մեռնելուց բեթար վիճակի մեջ է։ Եթե բացակայեմ, բոպեապես կզմռսվի ու տեղս կպառկի։ Կողպեք էլ չունեմ՝ կողպեմ, գամ։

- Դու պիտի գաս, որովհետև աշխարհի վերջն է, տեսնենք՝ ինչ պիտի անենք քեզ հետ։ Քո հոգին երկնքում է անմահացել, մարմինդ էլ՝ երկրում։ Իսկ մի մարդուն երկու անմահություն չի հասնում, կա՛մ հոգիդ պիտի անմահանա, կա՛մ մարմինդ։

- Չեմ կարող գալ, հասկացի՛ր։

- Բերման կենթարկեմ։

- Դու ո՞վ ես, որ ինձ բերման ենթարկես։ Ես իսկի քրիստոնյա էլ չեմ ու քեզ չեմ ճանաչում։

- Չես ճանաչո՞ւմ... Քո Հոկտեմբերյան մեծ հեղափոխությունը ո՞ր թվին կատարվեց։

- 1917 թվին։

- Ո՞ւմ ծնունդից հաշված։

- Քրիստոսի։

- Իսկ այդ Քրիստոսը ես եմ, ինչպե՞ս չես ճանաչում...

- Լավ, հիմա ինչ ես ասում։

- Ասում եմ արի պարզենք, թե Ռուսաստանը քե՞զ է պաշտում, մե՞զ է պաշտում, ո՞վ պիտի հոգա նրա դժոխքի և արքայության հարցը։ Կարող է պատահել աշխարհն ամբողջ տեղավորվի, իսկ Ռուսաստանը մնա երկու աստծու մեջտեղը, վեճի ենթակա։

- Վեճի բան չկա։ Ռուսաստանը ինձ է պաշտում, և ես էլ հոգում եմ նրա արքայության ու դժոխքի հարցերը։ Արքայությունս դեռ պատրաստ չէ, որովհետև կոմունիզմի չենք հասել։ Իսկ դժոխքի համար կոնկրետ միջոցառում է արված։ Կարևորը դժոխքի վարիչի հարցն է, որ լուծված է մեզ մոտ։ Իմ կողքին պառկած Ստալինին հանեցինք, այրեցինք՝ դարձնելով նրան հրակայուն։ Այժմ նա կարող է կառավարել մեծ տաքություն ունեցող դժոխքներ։ Իսկ սատանաներ մեզ մոտ ինչքան ուզես։

- Լենի՛ն, իմ ընկերական խորհուրդն է քեզ. քրիստոնեությունից

երես չթեքես, վերջը դու նրա պետքը պիտի ունենաս, բայց արդեն ուշ կլինի։

Կատարելով քո հեղափոխությունը՝ սոցիալիզմին երկաթե կոշիկներ հագցրիր, որ առանց կրոնի ու բարոյականության օգնության, զուտ գիտական հիմունքներով պիտի իրագործվեր քո երկրում։ Այդ նպատակով դու չուգունի արդյունաբերությունը բարձրացրիր հարյուր տոկոսով, երկաթինը՝ երկու հարյուր տոկոսով, պողպատինը՝ երեք հարյուր, բայց մոռացար գեթ մի երկու տոկոսով բարձրացնել գյուղատնտեսական մթերքների արտադրությունը։

Հացն այնքան քիչ էր երկրում, որ հազիվ բավարարեր հացթուխներին։ Եվ դու ժողովրդիդ կերակրելու համար ստիպված եղար դիմելու հաց թխող գյուղացու խղճին, նրա հասարակական գիտակցությանը, նրա ազնվությանը, մարդասիրական զգացմունքներին, ընկերասիրությանը, որոնք բոլորն էլ կրոնաբարոյական գործոններ են ու բնավ կապ չունեն գիտության հետ։ Գիտությունը խիղճ է։ Խիղճը կարելի՞ է դիտել միկրոսկոպով, կամ տարրալուծել թթվուտների մեջ։ Այս կերպ որ շարունակես, հավատացած եմ, մի գեղեցիկ օր, քո բոլոր չուգուններն ու պողպատները թողած, կգաս կապավինես իմ քրիստոնեությանը։ Մեր երկուսիս վարդապետությունների համար էլ հավասարապես հավատք է պետք, իսկ հավատքը միայն կրոնական է։ Այնտեղ չուգունն ու պողպատը տեղ չունեն։ Սոցիալիզմը ժամանակավոր կյանքի բան չէ։ Սոցիալիզմը պետք է փոխադրել հավիտենական կյանք, որ անվերջ քայլենք ու բնավ չհասնենք։

- Մի՛ հպարտանա, Քրիստո՛ս,- ասաց Լենինը։- Առանց իմ սոցիալիզմի՝ քրիստոնեությունն էլ չի կարող գոյություն ունենալ։ Դու ասում ես. «Ով այս աշխարհում քաղցի, հանդերձյալում պիտի հագենա», իսկ այս աշխարհում միայն Ռուսաստանն է քաղցում։ Ամերիկայում և մյուս բոլոր երկրներում մարդիկ ուտելուց տրաքում են, հետևաբար, չեն արժանանա երկնային հացին։ Իսկ որ այսօր Ռուսաստանն այսպես քաղցած է, դա իմ սոցիալիզմի շնորհիվ է։

- Եթե իրոք այդպես է, Լենի՛ն,- ասաց Քրիստոսը, եկ միացնենք մեր վարդապետությունները և միասին երջանկացնենք մարդկանց թե՛ այս, թե՛ այն աշխարհում։

- Համաձայն եմ։ Դու՝ այս աշխարհում, ես՝ այն։

- Ո՛չ, դու՝ այս աշխարհում, ես՝ այն աշխարհում։

- Փուչ գցենք:

- Այդ մի ասա, կծիծաղեն մեզ վրա,- ասաց Քրիստոսը:

Ասաց, լռեց, հոգոց հանեց ու շարունակեց.

- Այս վեճն այն բանի արդյունք է, որ երկուսս էլ նաղդը թողած, նիսյա երջանկություն ենք խոստանում մարդկությանը: Գուցե այդ նրանից է, որ իրական երջանկություն գոյություն չունի, և մենք խաբո՞ւմ ենք մարդկանց:

- Քրիստո՛ս, մի բան ասեմ: Իմ ու քո մեջ ուրիշ նմանություն էլ կա: Մենք երկուսս էլ դասակարգային հողի վրա կանգնած պայքարում ենք կապիտալիզմի դեմ: Հիշո՞ւմ ես՝ երկրի վրա եղած ժամանակդ միշտ ասում էիր. «Ավելի շուտ մալուխը կմտնի ասեղի ծակից, քան հարուստը՝ արքայություն»[75]: Այժմ ես էլ նույն բանը Ամերիկային եմ ասում և աշխատում եմ անել այնպես, որ միայն Ռուսաստանն անցնի ասեղի ծակից:

- Այո՛, շատ ճիշտ է: Ըստ իս՝ քրիստոնյան այս բոպեիս միայն ռուս ժողովուրդն է: Քրիստոսի և Աստուծո հրամաններ կատարողը: Ռուս ժողովուրդը ոչ այլ ոք է, քան Հոր Երանելին[76]: Սովետական իշխանությունը նրա ոչխարի հոտերը քշեց տարավ, նրա տուն-տեղը, եղած-չեղածը խլեց ձեռքից, նրան բանտարկեց, աքսորեց, գնդակահարեց, բայց նա իր առաջնորդներ Լենինին ու Ստալինին միայն փառք տվեց, միայն ծունկի եկած երկրպագեց: Չէ՛, մենք կարող ենք իրար հետ գործ բռնել,- ավարտեց խոսքը Քրիստոսը:- Զուգունն ու պողպատը շատ են ծանր, քրիստոնեական սկզբունքներն էլ շատ են թեթև: Եթե խառնենք, մեր վարդապետությունները կբարեխառնվեն ու կդառնան գործածելի:- Ասաց Քրիստոսը և խոսքը փոխելու համար հարցրեց.- ուրիշ ի՞նչ կա, Լենի՛ն:

- Զանսաղություն: Պառկած Դամբարանում՝ պաշտվում եմ: Աստվա՞ծն ինչ է անում,- հարցրեց Լենինը:

- Աստված հիվանդ է, բժիշկներն արգելել են պաշտվել:

- Կենդանի աստվածների կյանքը միշտ վտանգի մեջ է լինում,- ասաց Լենինը,- ես էլ երբ կենդանի էի, հաճախ էի հիվանդանում: Մեռնելուցս հետո ոչ մի ցավ չեմ տեսել: Ուշք դարձրեք՝ մեռնելուն պես զմռսեք:

- Կռվով սկսեցինք, հաշտությամբ վերջացրինք,- ուրախ ասաց Քրիստոսը:

- Մենք միևնույն պրոֆեսիայի մարդիկ ենք և պետք է միշտ իրար օգնենք: Քո ստերը ես հաստատեմ, իմ ստերը դու հաստատես:

- Եղավ: Թխի գա...

Ասացին ու լսափողերը կախեցին:

Թոռ

Ամենաքաղցր բանն աշխարհում:

Օրնիբուն դեմ դեմի կռվում ենք իրար հետ: Ստից, իհարկե:

Ոնց որ Ամերիկան ու Ռուսաստանն են իրար «բնաջնջում»:

- Քացով այնպես տամ քեզ, որ թռչես Անգլիա,- ասում եմ նրան:

- Իսկ ես, որ քացով տվեցի, կթռչես Ֆրանսիա,- ասում է թոռս, ու «պատերազմը» թեժանում է:

Ես նրան քացով Իտալիա եմ թռցնում, նա ինձ՝ Բելգիա: Ես նրան՝ Հոլանդիա, նա ինձ՝ Լյուքսեմբուրգ:

Ես, կռվի մեջ մոլեգնած, հանկարծ թռցնում եմ Շվեդ-Նորվեգիա[77]:

Բայց հիշում եմ անմիջապես, որ դրանք այժմ մի միացյալ պետություն չեն, ապրում են բաժան որպես առանձին պետություններ, և հարվածս ետ վերցնելով՝ թռցնում եմ միայն Շվեդիա՝ Նորվեգիան պահելով իբրև պահեստի փամփուշտ՝ հաջորդ գրոհին օգտագործելու համար:

Վերջում նա պարտված զենքը ցած է դնում, որովհետև նրա աշխարհագրական գիտելիքներն այդ մի քանի պետություններով վերջանում են, իսկ ես գիտեմ մոտավորապես հարյուր պետությունների անուններ՝ չհաշված Աֆրիկայում վերջերս անկախացած քսանութ պետությունների:

Բայց խղճում եմ թոռնիկիս և անզենի վրա չեմ կրակում:

Այնուհետև՝ մի ժամվա չափ «զինադադար»: Նա իր հոլն է փաթաթում, իսկ ես ազատ ապրում եմ այն պետություններում, որոնց մեջ թոռս ինձ «թռցրել» էր:

Ու սրտի խորքերիցս մի երկար «ա՜խ» եմ քաշում:

Այն «ա՜խ»-երից մեկը, որ քաշում է ողջ սովետական ժողովուրդը՝ անհույս փակված «երկաթե վարագույրի» ետևը որպես գերի...

Բայց չէ՞ որ ես մի ժամանակ ազատ էի և առանց թոռանս քացու

հարվածի կարող էի գնալ այդ երկրները, ման գալ, ապրել ու մեռնել։

Բայց ի միջի այլոց ասեմ, որ ես այդ երկրները գնալու առանձնապես ցանկություն չեմ ունեցել։ Ես միշտ կամեցել եմ Ամերիկա ընկնել։

Դրա համար էլ զինադադարի ավարտին, երբ մենք պիտի մեր պատերազմը սկսեինք, թոռանս խնդրեցի այնպիսի քացի տալ, որ ես Ամերիկա ընկնեմ։

- Ես Ամերիկայի մասին գաղափար չունեմ, ո՞րտեղ է այդ երկիրը,- ասաց նա։

- Ոչինչ,- պատասխանեցի,- ես ճամփան գիտեմ, դու միայն քացով տուր։ Միայն ուժգին, որ սահմանագլխին վայր չընկնեմ։ Եթե սահմանին մոտիկ վայր ընկնեմ, մեր սահմանապահներն իսկույն կգնդակահարեն ինձ՝ որպես փախուստի փորձ կատարողի...

Բուռն բողոք[78]

Աստվա՛ծ, այս ի՞նչ ես անում։

Չորս կողմս լցրել ես կանանցով ու աղջիկներով, միաժամանակ տվել ես ինձ մի խանդոտ կին, որն արգելում է ինձ, իրենից զատ, մի այլ կնոջ երեսը նայել։

Փողոցում չի թողնում առջևիցս եկող կնոջը նայել։

- Հը՛, միտքդ ի՞նչ է,- հարցնում է կինս անմիջապես։

- Ա՛յ կնիկ,- ասում եմ,- օրենք է, որ ամեն անցորդ իր առաջը նայի։ Ուզում ես՝ կույրզկուրայն իրա՞ր զարնվենք։

Եվ որովհետև սովորություն ունեմ նաև անցնող կնոջ ետևից նայել, իսկույն ձայնում է.

- Առաջը հասկացանք, իսկ ետևից ինչո՞ւ ես նայում։

- Ճշմարիտ դատելու համար պետք է գրքի երկու երեսը կարդալ, չգիտե՞ս այդ,- ասում եմ։

Այն օրից, երբ սովետական կառավարությունը կանանց տղամարդկանց հավասար իրավունքներ տվեց, կանայք, իրենց գոգնոցներն արձակելով, պետական հիմնարկները լցվեցին ու գրավեցին բոլոր կարևոր պաշտոնները։ Բոլոր դերձակները, բոլոր բժիշկները կանայք են։ Դատավորները, չեկիստները, բանտապետները։

Այս րոպեիս կոստյումս վրաս չի դադրում, այնքան հնացել է։

Կհամարձակվեմ գնալ մի դերձակուհու մոտ՝ նոր շոր կարել տալու։ Կինս, երբ տեսնի դերձակուհուն սանտիմետրով մեջքիս չափը վերցնելիս, ուշքը կգնա։ Կասի՝ ահավասիկ գրկախառնվեցին։

Սա մի ամիս է՝ աջ կողմումս սոսկալի ծակոցներ եմ զգում, բայց վախենում եմ բժշկի գնալ։ Ասում է՝ պառավ հեքիմներին դիմիր։

Այս կետում ես մի փոքր իրավունք տալիս եմ կնոջս, իհարկե, որովհետև բժշկուհիները, շատ անգամ մարդկանց հիվանդ տեղը թողած, առողջ մասերն են շոշափում։ Այո՛, բայց կան նաև պարկեշտ բժշկուհիներ, որ երեսդ նայել անգամ չեն ցանկանում...

Այս եմ ուզում ասել, Աստվա՛ծ, որ մարդ ենք, դերձակուհու էլ պետք ունենք, բժշկուհու էլ։

Եթե բոլոր տղամարդկանց կանայք իմիս պես խանդոտ լինեն, նրանք, ուրեմն, պարապ նստած միայն ամսական պիտի առնեն։

Մեր թաղային մթերման խանութում վերից վար կանայք են։ Այդ պատճառով էլ մեր բոլոր գնումները կինս է կատարում, որ ես այդ խանութը չմտնեմ։ Դեմ չեմ, թող անի, բայց խոմ ամեն բան ուտելիք չէ, կան բաներ, որ յուրաքանչյուր ոք ինքն անձամբ պիտի կատարի։

Եթե կնոջս թողնեմ, կերթա իր վրա շոր կարել կտա, կբերի ինձ կհագցնի, իր առողջ կողքը բժշկուհուն ցույց կտա, կգա, կասի՝ դու հիվանդ չես։

Եղա՛վ։

Մի օր, համբերությունից դուրս գալով, ասացի.

- Կնի՛կ, ես քեզանից բաժանվում եմ և գնում նոր կին առնելու։

Իսկ նա, առաջին պահ չհասկանալով խոսքերիս իմաստը, ինքնագիայով բացականչեց.

- Դու տանը նստի՛ր, այդ կինը կերթամ, ես կառնեմ...

Եղա՛վ, Աստվա՛ծ։

Չեղավ։

Դու, Ադամի փոխարեն, որպես առաջին մարդ՝ ինձ պիտի ստեղծեիր, որ բացի միակ Եվայից՝ աշխարհում ուրիշ կին չլիներ։ Այլապես սա ի՞նչ փորձանք էր՝ բերիր գլխիս։ Ախ քաշեմ, կասի՝ այդ ո՞ր սիրուհուդ հիշեցիր։ Լեզուս կծեմ՝ կասի՝ էդ ո՞ւմ հիշեցիր։

Բայց եթե ես, տեր մի արասցե, նորմալ մարդ լինեի և կնոջիցս զատ՝ մի տասը սիրեկան պահեի, ի՞նչ կլիներ իմ դրությունը։ Մտածե՞լ ես այդ մասին։

Այս տեսակ կինը միայն մի դեպքում կարող է օգտակար լինել ինձ. այդ այն է, որ եթե ես մի որևէ հանցանք գործեմ, ինքը գնա իմ տեղ դատվելու՝ նկատի առնելով, որ դատավորը կին է։

Մահվան կամերայում[79]

Գիշերային մի շուրջկալում երկու հազար երեք հարյուր տասնյոթ անուն գիրք գրախանութներից հավաքեցին ու լցրին մի պահեստում։

Դրանք բոլորը դատապարտված էին ոչնչացման։

Իրար վրա դարսված այդ գրքերից յուրաքանչյուրը յուրովի ողբում էր իր կորուստը և իր օրը լալիս։

Իննհարյուրիննսունիննէջանոց մի մեծ գիրք, կծկված մի անկյունում, անիծում էր հեղինակին՝ ասելով.

- Թանաքը թող չորանար քո գրչում, և ինձ չգրեիր։ Երբ գրել էիր իմ առաջին երեք էջերը և կարդացիր, ես ասացի. «Էլ մի՛ շարունակիր, հիմար բան է դուրս գալու», բայց դու չլսեցիր և շարունակեցիր գրել՝ ասելով. «Պետհրատում ես այնպիսի կապեր ունեմ, որ ինչքան էլ հիմար բան գրեմ, տպել կտամ, դարդ մի՛ անի»։ Բայց չէ՞ որ գիրքը միայն Պետհրատով չի պայմանավորված, պետք էր, որ դու մի երկու կապ էլ ընթերցողների շրջանում ունենայիր, որ խաթեր համար կարդային գեթ։ Ա՜խ, ա՜խ, ա՜խ, վա՜յ իմ սև օրին...

Երկրորդ գիրքը այսպես էր ողբում.

- Ես ընդամենը երկու տարի էր, որ լույս էի տեսել, երբ ձերբակալվեցի՝ որպես անիմաստ գիրք։ Երկու տարեկան գրքից ի՞նչ իմաստ եք պահանջում։ Թող մի քսան, երեսուն տարի սպասեիք, եթե չիմաստավորվեի, նոր այն ժամանակ ոչնչացնեիք։ Չէ՞ որ անչափահաս գրքերը մահվան ենթակա չեն։

Երրորդ գիրքն ասում էր.

- Գրականությունից պահանջում են հարազատորեն պատկերել կյանքը, ես էլ պատկերել եմ։ Ինչո՞ւ միայն ես լինեմ մեղավորը. թող քննեն։ Գուցե կյանքն է ծուռը։ Գուցե պետք է այդ կյանքը պատռել դեն գցել։

Երկու թշվառ գրքեր, քաշված անկյունում, քչփչում էին։

- Քո հեղինակը ինքնահոսո՞վ էր գրում քեզ, թե՞ թանաքի մեջ թաթախելով,- հարցրեց մեկը։

- Ա՛խ, երանի չէիր թաթախելով գրեր,- պատասխանեց երկրորդը։ Եթե հեղինակը թաթախելով է գրում, այդ լավ է. մինչև գրիչը թաթախում, մինչև ձեռքով գրչածայրի վրայի մազը վերցնում է, այդ ընթացքում մտածում է իր գրելիքի մասին։ Իսկ ինքնահոսի համար մտածել պետք չէ։ Շատ անգամ իմ հեղինակը գործն սկսում էր, ինձ ասում՝ դու շարունակի՛ր…

Երկուստեք «ա՛խ» քաշեցին ու շարունակեցին.

- Տեսնես՝ դատարանո՞վ են ոչնչացնելու մեզ, թե՞ վարչական կարգով։

- Եթե մեր գործը դատարան գնա, ես կարդարանամ։ Իմ պաշտպանը բազմաթիվ փաստեր է հավաքել, որ քնատությունից տառապող հիվանդները, ինձ կարդալով, քնել ու առողջացել են։

- Քնատությունը եթե հաշվի առնեն, մենք բոլորս էլ կարդարանանք։ Մեզանից ո՞վ չի քնեցնում։ Գրքեր կան, որ անգամ մեռցնում են։

- Բայց պետք է ապացուցվի իրենց՝ հիվանդների վկայություններով։

- Ո՞ր հիվանդը չի վկայի… եթե քնից արթնացած լինի։

- Իմ փաստաբանը ասում է. «Եթե քեզ չարդարացնեմ էլ, պատիժդ փոխարինել կտամ ցմահ աքսորով»։

- Երանի չէիր՝ այդպես լիներ։ Հեռավոր հյուսիս, վայրի արջերի ու գայլերի մեջ։ Նրանց վայրի բնակիչներին էլ մի փոքր կմեղմացնեինք՝ ստիպելով քնել։

- Ես դատարանում ամեն կերպ կաշխատեմ արդարանալ, երբ բան դուրս չեկավ, կխոստովանեմ հանցանքս և խոսք կտամ հետագայում ուղղվել։ Խոստովանողներին առհասարակ դատարանը մեղմ է մոտենում։

- Մեղմ ի՞նչ է նշանակում, չպիտի՞ պատռեն գցեն քեզ։

- Հաշիվ կա։ Ինչ երկու կտոր անեն, ինչ չո՞րս կտոր։

- Այս բոլորը ոչինչ բաներ են, դու ասա՝ Աստված մի լույս բանա վրաներս։

- Ի՞նչ լույս, ընդհանուր ներո՞ւմ։

- Կա՛մ ներում, կա՛մ մի այլ բան,- ասաց դատապարտյալն ու ավելացրեց.- գիտե՞ս ինչ, ամենից արդարն այն կլիներ, որ Պետհրատը մեր հեղինակներին ստիպեր իրենց ստացած հոնորարով մեզ

գնել և կարդալ: Տասը հազար տիրաժով լույս տեսածներիս տասը հազար անգամ կարդալ, քսան հազար օրինակով լույս տեսածներիս՝ քսան հազար անգամ:

- Եթե այդպես վարվելու լինեն, հեղինակներն իրենց գրածը չկարդալու համար հանձն կառնեն... ձրի գրել: Այն ժամանակ ավելի վատ:

- Ճիշտ ես ասում,- համաձայնվեց ընկերը, և երկուսը միասին նորից մի «ա՛խ» քաշեցին:

Հետո մեկն ասաց.

- Թարսի պես էլ շատ փառավոր կազմ ունեմ: Պատռելիս գեթ կազմիս ափսոսային:

- Թույլ չե՞ն տա կազմն ուրիշ գրքի կտակել:

- Չեմ կարծում:

Երբ այստեղ սրանք այսպես խոսում էին, գիտական գրքերից դուրս եկան բոլոր ցիտատները և բանտի դռանը մոտենալով՝ պահանջեցին դուռը բաց անել և իրենց ազատ դուրս թողնել՝ առարկելով, որ իրենք բոլորը արտասահմանյան գրողների մտքեր են, որոնց մեջբերում են արել, և իրենք՝ որպես օտարահպատակներ, ենթակա չեն սովետական օրենքով դատվելու:

Երբ պահապանը ցիտատներին դուրս թողեց, բանտում մնացածներն ազատ շունչ քաշեցին: Բանտում այնքան քիչ միտք մնաց, որ ոչ մի դատարան չպիտի կամենար դրանց դատելու համար ժամանակ կորցնել:

Կոմունիզմի սահմանները

Կոմունիզմը մարդասիրություն է նշանակում: Մի զգացմունք, որ կա բոլոր մարդկանց մեջ հավասարապես:

Ատրպետի «Տժվժիկի» մեջ, օրինակ, Նիկողոս աղան մսավաճառից մի ջիգյար է առնում և նվիրում իր չքավոր ծանոթին, որ տապակի, ուտի:

Տասնհինգ հազար ռուբլի երեսունհինգ կոպեկ ռոճիկ ստացողը ստանում է իր տասնհինգ հազարը, բայց երեսունհինգ կոպեկը մեծահոգաբար թողնում է գանձապահին... երբ վերջինս մանր չի ունենում տալու:

Ճաշարաններում ծեր, անատամ ճաշողները միշտ կերակուրի միջից մսերը հանում և աղքատին են տալիս... երբ այն հում է լինում:

Չեմ խոսում գերեզմանից վերադարձող սգավորի մասին: Նա, ճիշտ է, աջ ու ձախ ողորմություն է բաժանում, բայց դա շահադիտական նպատակ է հետապնդում. մի քանի կոպեկով իր ննջեցյալի համար տեղ է ապահովում երկնից արքայության մեջ:

Վերոհիշյալ բարերարությունները, սակայն, ոչ մի կապ չունեն գիտական կոմունիզմի հետ: Դրանք տնայնագործ մարդասիրություններ են, որ գիտության մեջ հաշվի չեն առնվում՝ որպես ոչ մասսայական, այլ զուտ անհատական գործառություններ:

Շտատնի մարդասերներն այն կոմունիստներն են միայն, որոնք ծնվելով նախ՝ «հոկտեմբերիկ» են դառնում, հետո՝ «պատկոմ»**, հետո՝ «կոմերիտական», ապա՝ «թեկնածու», նոր՝ լիարժեք կոմունիստներ: Մի աստիճանավորում, որ հատուկ է բոլոր կրոններին:*

*Այսպես՝ լուսավորչական եկեղեցում նախ ուրարակիր*** են դառնում, հետո՝ սարկավագ, ապա՝ վարդապետ, եպիսկոպոս, արքեպիսկոպոս ու վերջապես՝ կաթողիկոս:*

*Ինչ խոսք, որ կոնգլոմերատ**** մարդը, այսքան մաղերից ու հալոցներից անցնելով, թողնում է իր մարմնական բոլոր կեղտերը, իր եսասիրությունները և դառնում զուտ ոգի, կոպիտ ասած՝ մաքուր սպիրտ՝ պատրաստ բոլոր վիրավորյալների վերքերը բուժելու: (Բացի իր սեփական վերքերից):*

Մի ժամանակ գիտությունը համառ կերպով հետամուտ եղավ առաջուց իմանալու ծնվելիք երեխայի սեռը, բայց հաջողություն չունեցավ:

Եվ լավ եղավ, որ չհաջողվեց: Եթե իմանային, ուժ պիտի տային միայն տղաներին, և աղջիկներն իսպառ վերանային աշխարհի երեսից: Որովհետև այն ո՞ր ծնողն է, որ, տղան թողած, կուզի աղջիկ ծնել:

---

* Շտատնի ***(штатный)*** - ռուս. հաստիքային:

** Պատկոմ - հապավում՝ ***պատրանի և կոմունիստ*** բառերի: Պիոներների նախկին անվանումն է:

*** Ուրարակիր - սարկավագացու:

**** Կոնգլոմերատ (conglomertus) - լատ. խառնահավաք, որևէ բանի մեխանիկական միացություն:

Բայց ես կողջունեի այն գիտնականին, որ փորձեր կատարեր՝ իմանալու, թե որևէ հղի կին կոմունիստ է ծնելու, թե՞ անկուսակցական։

Իմանար և այնպես աներ, որ միայն կուսակցականներ ծներ։

Իմանար և արգելեր անկուսակցականների ծնունդը։

Որովհետև ինչ միտք ունի ուրիշի մասին մտածողին թողնել, զուտ իր մասին մտածող մարդիկ աշխարհ բերել։

Օ՜, ես ատում եմ այդպիսիներին...

Ծնվում են հատուկ իրենց կերպարանքով և ոչ մի կերպ հանձն չեն առնում այն փոխել մի ուրիշի կերպարանքի հետ։ Ունենում են սեփական անուններ, ու երբ մեծանում և ամուսնանում են, կին են առնում միայն իրենց համար...

Ըստ կոմունիստական լոզունգի՝ մեկը պիտի լինի բոլորի համար, իսկ բոլորը՝ մեկի։ Բայց որովհետև Ռուսաստանում կոմունիստական իշխանությունը նոր է հաստատված (ընդամենը քառասունյոթ տարի է), այդ պատճառով, լոզունգն ամբողջությամբ չի գործադրվում, գործադրվում է կիսով չափ. առայժմ միայն՝ «բոլորը մեկի համար», հետո էլ երևի՝ «մեկը բոլորի համար»։

Ու համաձայն այս կիսատ լոզունգի՝ իրավցնե Ռուսաստանի ողջ երկու հարյուր վաթսուն միլիոն ժողովուրդը Լենինի ժամանակ եղավ Լենինի համար, Ստալինի ժամանակ՝ Ստալինի, Խրուշչովի ժամանակ՝ Խրուշչովի։

Այս երեք «մեկերի» գերիշխանությունը ժողովրդի վրա, բարեբախտաբար, զուտ նյութական էր. բարոյական մարզում ողջ ժողովուրդն անսահմանափակ օգտվում էր իրենց երեք առաջնորդներից։

Իսկ եթե կամենանք մի երկրորդ լոզունգ կազմել տվյալ վիճակից, պիտի ասենք՝ «նյութական բարիքների տեսակետից՝ բոլորը մեկի համար, իսկ բարոյական կողմից՝ մեկերը բոլորի համար»։

Երբ Լենինը երկրի իշխանությունն իր ձեռքն առավ, արգելեց ժողովրդին իր գլխով մտածել։ «Իմ գլուխը,- ասաց Լենինը,- ամբողջովին ձեր տրամադրության տակ է, կարող եք իմ գլխով մտածել»։ Հետագային նույնն ասացին նաև Ստալինն ու Խրուշչովը։

Բայց ինչպես գիտեք, մարդը, գլխից զատ, ունենում է նաև մարմնական բազմաթիվ այլ մասեր։ Եվ գուցե ձեզանից շատերն ուզենան գիտնալ, թե սովետական առաջնորդները, նրանց հետ նաև

երկրի կոմունիստները, իրենց մարմնի բոլոր մասերն են տրամադրում մարդկությանը, թե որոշ մասեր պահում են իրենց համար որպես «տնամերձեր»:

Օրինակ՝ իրենց աչքերը:

Ասեմ, որ աչքի կողմից նրանք անձնվեր են: Ոչ միայն թույլ են տալիս ժողովրդին իրենց աչքերով նայել աշխարհին, այլև պարտադրում են: Այլապես, եթե մարդիկ իրենց սեփական աչքերով նայելու լինեին Ռուսաստանին, կարող էին սխալվել ու որոշ դժբախտություններ տեսնել այնտեղ: Իսկ նայելով կոմունիստական աչքերով՝ միայն դրախտ կտեսնեն:

Չկա՞ն շիլ աչքեր:

Ականջը նույնպես: Կարող ես կոմունիստի ականջով լսել, ու այն ժամանակ ագռավի գարշելի կռինչը սոխակի դայլայլի կվերածվի լսողի համար:

Մանավանդ, պիտի ուտես կոմունիստի բերանով, եթե... պատառը համեղ է:

Մեկ խոսքով՝ դու ազատ ես, կարող ես ազատ կոմունիստի տուն մտնել և ասել.

- Գլուխդ տո՛ւր, տանեմ մտածեմ, բերեմ:

- Աչքդ տո՛ւր, տանեմ տեսնեմ, վերադարձնեմ:

- Խիղճդ տո՛ւր, տանեմ մի երկու անմեղ մարդ սպանեմ, բերեմ:

- Լեզուդ տո՛ւր, մի մեծ սուտ խոսեմ:

Այս բոլորը ժողովրդի համար է:

Բայց զգուշացիր նրանցից խնդրել նրանց մարմնի «տնամերձ» անդամները:

Չի կարելի մտնել և ասել.

- Տո՛ւր հսկայական ռոճիկդ, տանեմ գործածեմ:

Չի կարելի ասել.

- Շրթունքներդ տո՛ւր, տանեմ, մի աղջիկ կա, համբուրեմ, բերեմ:

Կամ.

- Սեռական գործարանդ տո՛ւր, տանեմ մի կնոջ սիրեմ, բերեմ:

Չի տա: Կասի.

- Բեր ինքս սիրեմ... քեզ համար:

Աշխարհում անպետք բան չկա

Մի ժամանակ ես սոցիալիզմը համարում էի ավելորդ բան։

Ոչ միայն ավելորդ, այլև անգամ վնասակար։

Բայց հետագայում կյանքի փաստերը եկան ապացուցելու, որ սոցիալիզմը եթե տեղին գործածվի, շատ օգտակար բան է, անգամ անհրաժեշտ։

Ասածիս որպես ապացույց՝ բերում եմ հետևյալ պատմությունը։

Ուղիղ իմ տան վերևի հարկում ապրում էր մի ծառայող։ (Ես վարի հարկից լսում եմ)։ Երբ իրիկունները տուն է գալիս, հանում փողկապն ու օձիքը և հագնում պիժաման, նրան «Սեթո» են կանչում տանեցիք, երբ առավոտը պճնված էր դուրս գնում, անխտիր «ընկեր Սեթ» են անվանում նրան, որովհետև իր անվան անպատիվ մասնիկ «ո»-ն Սեթը տանն է թողնում պիժամայի հետ։*

Ինչևէ։ Թողնենք այս։

Այս Սեթոն երկու տարի հետամուտ եղավ մի աղջկա և աշխատեց այնպես անել, որ աղջիկն իրեն Սեթո անվանի, ճար չեղավ. միշտ «ընկեր Սեթ» էր ասում։ Ինչո՞ւ, որովհետև ինքը մի փոքր... համալսարան էր ավարտել, իսկ տղան՝ ոչ։

Բայց սիրո հարցերում գլուխն ի՞նչ գործ ունի։ Ու եթե կուզեք, սիրո խնդրում մարդու մարմնի բոլոր մասերը դեր են խաղում՝ բացի գլխից։

Կցեմ անմիջապես, որ Սեթի սիրահարության պատճառը ոչ թե աղջկա գլուխն էր, այլ նրա վաճառաշահ հետույքը, որի զարգացման մեջ համալսարանը ոչ մի դեր չէր ունեցել։

Այն էլ մեր համալսարանը, որտեղ միայն մարքսիզմ ու լենինիզմ են սովորեցնում...

Այս էլ թողնենք, այս էլ կարևոր բան չէ։

Պատմությունս կարճ կապելու համար ասեմ, որ աղջիկը, որի անունը Մարիամ էր, զիջեց տղային, ու երկուստեք սաստիկ սիրահարված՝ ամուսնացան։

Սեթը դարձավ «Սեթո», Մարիամը դարձավ «Մարիամիկ», ու գրկախառնվեցին։

---

* Պիժամա- ննջազգեստ։

Ապրեցին այսպես երեք տարի։ Բայց Մարիամը երեխա չէր ունենում։

Սեթի ընտանեկան շրջանակում քսփսոց սկսվեց…

- Զբեր է մեր հարսը, տներս քանդեցինք,- ասում էր մայրը։

- Երեխա չունենա՝ մի բոպե չեմ պահի,- զայրացած ասում էր Սեթի հայրը։ Իր ասածը կատարող մի մարդ։

Մարիամը սկսեց բժշկի մոտ գնալ, բայց ոչ մեկը դրա հետ հույս չէր կապում։

Ու վերջապես հասավ այն օրը, երբ հայրը կանչեց տղային և կատեգորիկ պահանջ դրեց հեռանալ իր կնոջից։

- Բայց, հայրի՛կ, ես սիրում եմ նրան, և մենք իրար ենք միացած անքակտելի կապով։

- Հոգ չէ, կապը մի փոքր թուլացրո՛ւ և քանդի՛ր։

Որդին, ծանոթ իր հոր համառությանը, փորձ արեց մի՛ փոքր պակասեցնել կնոջ հանդեպ ունեցած իր սերը։

Բան դուրս չեկավ, սերն առավել ևս բորբոքվեց։

Երևակայության մեջ սկսեց կնոջը վերագրել աշխարհի ամենավատ բաները, որպեսզի դադարի նրան սիրելուց, չհաջողվեց։

Մարիամին պատկերացրեց որպես թուրք, որ իր ազգի կեսը սրի քաշեց։

Չկարողացավ ատել։

Պատկերացրեց Չինգիզ Խան, Լենկ Թեմուր, Նապոլեոն։

Չկարողացավ ատել։

- Ի՞նչ անեմ, Աստվա՛ծ, ի՞նչ անեմ,- երբ ասում էր հուսահատված, մեկ էլ հանկարծ հիշեց սոցիալիզմը։

- Ա՛, եթե ինձ հաջողվի Մարիամին սոցիալիստ դարձնել, նոր այն ժամանակ կարող եմ նրան ատել։

Ու սկսեց գրադարաններից անվերջ սովետական գրողների գրքեր թափել գլխին, որ կարդա ու սոցիալիստ դառնա։ Բայց Մարիամը քանի կարդում էր այդ գրքերը, այնքան հեռանում էր սոցիալիզմից։

Սեթը, ճարը կտրած, կանչեց կնոջն ու ասաց.

- Մարիա՛մ ջան, դու եթե չմտնես կոմսոմոլի շարքերը, առաջ չես գնա։ Լավ պաշտոնները միայն կոմունիստներին են տալիս։ Արի՛ մտիր։

- Եթե մտնեմ էլ, դա առերես կլինի, ապրելու համար կլինի միայն և ոչ սկզբունքով: Ես էլ շատերի նման պաշտոնապես պիտի փառաբանեմ Լենինին, իսկ անպաշտոն վիճակում նզովեմ նրա հիշատակը:

- Ա՛յ, ա՛յ, ա՛յ, հենց այդ էլ իմ փնտրած ձևն է: Երկկենցաղություն: Դու հասարակության մեջ սոցիալիստ կլինես, իսկ տանը կատես այս ուսմունքը, ես էլ հասարակության մեջ կատեմ և ծածուկ տեղերում կսիրեմ քեզ:

Ասաց ու ավելացուց.

- Ինչ անեմ, հոգի՛ս, հայրս այդպես է ցանկանում: Ասում է. «Երեխա չի ունենում՝ բաժանվիր»: Այս էլ ասեմ, որ գիշեր-ցերեկ սիրելու մեջ համ չկա: Ուրիշ բան է, եթե ցերեկը լույսով ատում ես, իսկ գիշերվա մթնում՝ սիրում: Ինչ անենք, հոգի՛ս, ինչ անենք, երբ կյանքն այժմ այդ է պահանջում: Պետությունը մարդկանց զոռով սոցիալիստ է դարձնում, իսկ հայրերը բռնի իրենց որդոց բաժանում են իրենց կանանցից: Կյանքն անցել է ընդհատակ, մահը՝ երկրի երեսը:

Կինը համաձայնեց. այդպես էլ վարվեցին:

Այս խոսակցությունը որովհետև տեղի էր ունենում օրը ցերեկով, այսինքն՝ օրվա այն մասում, երբ իրավունք չունեին իրար սիրելու, այդ պատճառով չկարողացան մի վերջին անգամ իրար փաթաթվել և իրենց կարոտը առնել:

Բայց երբ իրարից բաժանվում էին, այնուամենայնիվ չկարողացավ դիմանալ Սեթը և ետ դառնալով անձկությամբ կնոջը փաթաթվեց և խելագարի պես սկսեց... ատել նրան՝ արցունքն աչքերին արտասանելով.

- Իմ կե՛ս ամուսին...

* * *

Ահա ձեզ սոցիալիզմի տված օգուտը:

Ափսոս միայն՝ կիսով չափ:

Սոցիալիզմի տված օգուտն իր ամբողջության մեջ մենք տեսնում ենք ներկայիս սովետա-ամերիկյան հարաբերության մեջ:

Հնում Ամերիկան և Ռուսաստանը երկար ժամանակվա բարեկամներ էին: Բայց որովհետև երկարատև բարեկամությունն էլ է

մարդուն ձանձրացնում, Ամերիկան կամեցավ Ռուսաստանի հետ գժտվել: Բայց պատճառ չուներ:

Այդ պատճառով համբերեց այնքան ժամանակ, մինչև Ռուսաստանը սոցիալիստ դարձավ: Հիմա, երբ սոցիալիստ է, չեք կարող պատկերացնել, թե ինչպես է ատում նրան Ամերիկան: Եվ այն էլ ոչ միայն ցերեկները, այլ նաև գիշեր ու ցերեկ: «Սուտկայի»* ժամերում:

* * *

Ես ինքս էլ փոքր ժամանակ սոցիալիզմի մի մեծ կարիք եմ զգացել:

Մի զույգ ճագար առա, դրանք սաստիկ բազմացան և սկսեցին քարուքանդ անել մեր մառանը:

Մայրս բարկացավ վրաս և հրամայեց անմիջապես մորթել: Մորթել այդ սպիտակ, փափլիկ, սիրուն կենդանիներին փորձառու դահիճն անգամ չէր կարողանա:

Որովհետև, ախր, ո՞չ մի մեղք չունեին...

Բայց ես մորթեցի. ճա՞րս ինչ:

Մորթեցի ու մինչև օրս խիղճս շարունակում է ինձ տանջել: Եթե այն ժամանակ էլ հիմակվա նման սոցիալիզմ գոյություն ունենար, բռնի կստիպեի նրանց սոցիալիզմ դավանել, նոր կմորթեի:

Հիմա... արդեն ուշ է:

...Իսկ եթե ես բռնեմ ու նրանց «հետմահու» սոցիալիստի կոչում տա՞մ...

Ես՞ի՞մ: Կհարմարի՞ արդյոք:

Անակնակալ թռիչք

Մեր գրողներն այնքան սուտ-սուտ բաներ են գրում, որ հիմա ես որքան էլ ճշմարտություն գրեմ, ոչ ոք չի հավատա:

Նրանք ասում են՝ աշխարհում եթե կա մի ազատ ու երջանիկ երկիր, դա Սովետական Միությունն է...

Ես որտեղի՞ց ճարեմ մի այնքան խոշոր ճշմարտություն, որ ոտքի հանեմ ջնջելու այս ահավոր սուտը:

Գիտեք, որ բնության մեջ սուտը ծավալով միշտ ավելի մեծ է լինում, քան ճշմարտությունը:

---

* Սուտկա - ռուս. *сутки* բառի (օր ու գիշեր, ամբողջ օր) խոսակցական տարբերակը:

Հայտնելով առաջուց, որ ես սովետական գրող չեմ, խնդրում եմ հավատալ ինձ, եթե պատմեմ, թե այս գիշեր ես վերելակով տիեզերք եմ բարձրացել։

Այդ պատահեց այսպես։

Քաղսովետն ինձ հինգերորդ հարկում բնակարան հատկացրեց։ Իսկ ես՝ ծեր ու հիվանդ։ Անկարող բարձրանալ սանդուղքներով՝ բազմաթիվ դիմումներով վերելակ խնդրեցի ու չստացա։ Ստիպված հույսս դրի Աստծու վրա և նրանից խնդրեցի։

Այստեղ իմ սխալն այն էր, որ չէի մատնանշել, թե խնդրածս վերելակը որքա՞ն բարձրություն պիտի ունենար։

Աստված, լսելով խնդիրս, այս գիշեր իր վերելակն իջեցրեց վերջապես, և ես միամտված ելա, մեջը կանգնեցի այն հուսով, որ հինգերորդ հարկս պիտի բարձրանամ։

Բայց որքան մեծ եղավ իմ զարմանքն ու սարսափը, երբ մեկեն տիեզերք բարձրացա ու կանգ առա մի բոլորովին անծանոթ մոլորակի դռան առջև։

Շշմեցի մնացի։ Երկար չէի վճռում ծեծել մոլորակի դուռը։ Ասում էի՝ չլինի՞ հանկարծ բնակիչները կոմունիստներ լինեն, ինձ ներս քաշեն ու հավասարեցնեն... հողին։

Վերջում ծեծեցի։

Դուռը բաց արեցին մի մարդ ու մի կին ու զարմացած ինձ նայեցին։

- Մի՛ զարմացեք,- ասացի,- տիեզերքում մոլորված ճամփորդ եմ, մի գիշերվա տեղ եմ խնդրում։

Ուրախությամբ ներս առան ինձ, ու սկսեցինք ծանոթանալ իրար հետ։

Պարզվեց, որ զույգ էակներն այս մոլորակի Ադամ-Եվան են։ Նրանց Աստվածը ստեղծել, դրել է դրախտի մեջ, անմահացրել ու անհետ կորել է։

Ես հարցրի.

- Ձասա՞ց՝ ինչ նպատակով է ստեղծել ձեզ։ Ձեր կյանքի նպատակը։ Որովհետև հավիտյան ապրել առանց նպատակի դժվար է, չէ՞։

- Ոչ մի խոսք մեր կյանքի նպատակի մասին։ Ասում է. «Երկար խոսելու ժամանակ չունեմ, շտապում եմ տիեզերքի բոլոր մոլորակների մեջ մի-մի Ադամ-Եվա ստեղծել։ Եթե նստեմ, ամեն մի զույ-

գին իրենց կյանքի նպատակը բացատրեմ՝ մոլորակներն անմարդ կմնան։ Մարդ ու կին նստեք, ձեզ համար նպատակ ստեղծեք, ապրեք»։ Ասաց ու գնաց։ Երբ գնաց, ես ու կինս իրար երես նայեցինք հարցական,- այս ասելով՝ պատմող Ադամն իր կնոջը նայեց։- Ասում եմ՝ կնի՛կ, ի՞նչ անենք, ասում է՝ ես՞իմ։

Ծանր էր մեր վիճակը։ Մենք նման էինք այն երեխային, որ առաջին անգամ ոտքը դպրոցից ներս է դնում, չգիտի՝ ինչ բան է այբը։ Կյանքի այբը չճանաչող մարդը կարո՞ղ է որևէ նպատակ ստեղծել և դրանով ապրել։

Այն էլ հավիտյան, որովհետև անմահ էինք։

Մեր ձանձրույթը փարատելու համար դարձա կնոջս, ասացի.

- Կնի՛կ, արի մի փոքր իրար սիրենք, տեսնենք Աստված ի՞նչ դուռ կբանա վրանիս։

Ասաց՝ սիրենք։

Եվ սկսեցինք։

Առավոտյան վեր էինք կենում, ես նրա հոգուն էի մատաղ լինում, նա՝ իմ, ես նրա ջանին էի մեռնում, նա՝ իմ։

Բայց այսպես խոմ չէ՞ր կարելի ամբողջ միլիոնավոր տարիներ նույնը կրկնել։ Սերն ինչքան էլ քաղցր բան լինի, համենայն դեպս անվերջ կրկնվելով՝ անհամանում է ու անտանելի դառնում։

Այս ասելով՝ Ադամն ընդհատեց մի պահ իր պատմությունը և դառնալով ինձ՝ հարցրեց.

- Սոված չե՞ս։

Ու առանց իմ պատասխանին սպասելու՝ ասաց կնոջը.

- Աղջի՛, վե՛ր կաց, դրախտից պտո՛ւղ քաղիր, բեր ուտի, սոված կլինի։

Մենք նախաճաշեցինք։ Նախաճաշից հետո այս դրախտի Ադամը դարձավ ինձ ու ասաց.

- Այսքանը մեր մոլորակի մասին, հիմա էլ պատմի՛ր ձեր մոլորակի մասին։

- Մեր մոլորակի Աստվածը,- ասացի,- բոլորովին տարբեր է ձերինից։ Մեր մոլորակի Աստվածը մարդն ստեղծեց ու մինչև վերջ էլ չհեռացավ նրանից։

- Ի՞նչ ես ասում,- զարմացավ իմ խոսակից Ադամը,- ուրեմն, լրիվ բացատրած կլինի ձեր կյանքի նպատակը։

Ես ծիծաղեցի։

- Ինչո՞ւ ես ծիծաղում,- ասաց։

- Որովհետև ինքն իր նպատակը չի կարող բացատրել, ուր մնաց՝ մարդկանց բացատրի։ Մեր Աստվածը մարդ ստեղծեց, որ խաղա հետը։

- Ինչպե՞ս...

- Այո՛։ Իր Ադամ- Եվային ստեղծեց նախ անմահ, հետո մի հասարակ խնձորի համար նրանց դարձրեց մահկանացու և դրախտից վռնդեց։

- Խնձո՞ր։ Այդ ի՞նչ զարմանալի խնձոր է եղել։

- Ոչ մի զարմանալի։ Սովորական խնձոր, որի կիլոգրամը բազարում մի ռուբլով է վաճառվում այսօր։

Ադամը դարձավ Եվային։

- Կնի՛կ, մեր դրախտում խնձորի ծառ կա՞։

- Ո՛չ,- պատասխանեց Եվան,- տանձի ծառ ունենք։

Ապա Ադամը դարձավ ինձ.

- Իսկ տանձով չի՞ կարելի մահկանացու դառնալ։

- Ի՞նչ է, ուզում եք մեռնե՞լ,- հարցրի։

- Եթե հնար ունենայինք, մի րոպե կսպասեի՞նք։

- Չէ՛, տանձով չի կարելի։

- Շլորո՞վ։

- Շլորով էլ չի կարելի։

- Դամբուլո՞վ։

- Դամբուլն էլ չի մահացնի։ Եթե ձեր դրախտում լիներ արգելված խնձորենի, և դուք ուտեիք, անմիջապես կմերկանայիք ու մահկանացու դարձած՝ կարտաքսվեիք դրախտից։

- Հետո՞։

- Հետո ցավով երեխաներ կծնեիք։

- Ծնեինք, որ ի՞նչ լիներ։

- Հե՛չ, ծնեիք, որ հետո մեռնեին։

- Երկա՞ր ժամանակ այսպես։

- Որովհետև իմաստ չունի այդ, դրա համար Աստծու ստեղծած մարդն անիմաստ խաղ անվանեցի վերևում։

- Մեզ ձեռնտու չէ այդ։ Մենք, հավիտյան ապրելուց ձանձրացած, ուզում ենք մեռնել և այլևս չծնվել։ Ընդմիշտ։

Այստեղ Եվան միջամտեց.

- Ինչո՞ւ ձեռնտու չէ: Ժամանակավոր մահն էլ մի բան է,- ասաց,- պեսպիսություն կմտնի կյանքում:

- Մի՛ ասա,- առարկեց Ադամը,- մեռնելուց հետո մարդ բնավ չի ցանկանա նորից ապրել:

- Ինչ անենք, որ անմահ ենք:

Այստեղ Ադամը մտածմունքի մեջ ընկավ: Հետո երկուսը միասին մի խորունկ «ա՛խ» քաշեցին:

- Շա՞տ եք ուզում մեռնել,- հարցրի:

- Շա՛տ, շա՛տ, շա՛տ,- ձայնեցին մարդ ու կին:

- Սպանեցեք ձեզ,- ասացի:

- Այդ ինչպե՞ս,- ասաց Ադամը:

- Այդ կարելի է բազմաթիվ ձևերով:

- Օրինակ:

- Օրինակ՝ մարդ ու կին հայ ու թուրք կլինեք ու իրար կկոտորեք:

- Բայց մենք մի հավատի մարդիկ ենք,- ասաց:

- Մի հավատի եք. կարմիր ու սպիտակ դարձե՛ք ու իրար կոտորե՛ք: Տասնյոթ թվին Ռուսաստանն այսպես տարբեր գույնի ներկվելով՝ իրար կոտորեցին: Ամբողջ երկիրը դիակով ծածկվեց:

- Դա էլ լուրջ մահ չէ: Թափվող անձրևը կարող է լվանալ դիակների տարբեր գույները, և նրանք նորից եղբայրներ կդառնան ու կսիրեն իրար:

- Այս անգամ կանաչ ու կապույտ կդառնան ու իրար կկոտորեն: Չէ՛, քանի տարբեր գույներ կան, մարդիկ միշտ կարող են իրար կոտորել:

- Աղջի՛ Եվա,- դարձավ Ադամն իր կնոջը,- կարծեմ սնդուկումդ մի փոքր կարմիր ներկ ունեիր պահած:

- Այն քսեցի շրթունքներիս:

Ես նայեցի Եվայի շրթունքներին, որոնք իրոք որ ներկված էին, բայց մազերը զարմանալի կերպով կարճ էին խուզված:

Ասում եմ.

- Տիկի՛ն, ինչո՞ւ եք խուզում ձեր մազերը:

Ասում է.

- Երկար մազեր չեմ սիրում:

- Հա՛,- նկատում եմ ես,- այդ պատճառով էլ հավիտենականությունն այդպես ձանձրալի է թվում ձեզ: Եթե դուք երկար մազ պահեիք, մի օր այդ մազը դեպի աջ սանրեիք, մի օր՝ ձախ, երրորդ օրը փունջ շինեիք ճակատին, չորրորդ օրը հավաքեիք ծոծրակին, ապա երկու ճյուղ հյուսեիք մեկն առջևի, մյուսը ետևի կողմը կախելու համար, հետո մազերը բոլոր կողմից հավաքած գլխի մեջտեղը դիզեիք, այն ժամանակ ձեր հավիտենականությունն այնքան կարճ կթվար ձեզ, որ կուզենայիք մի քիչ էլ երկարեր այն:

Դառնալով Ադամին՝ շարունակեցի.

- Ձեր մորուքը շատ նման է Կարլ Մարքսի մորուքին, դուք ինչո՞ւ սոցիալիզմ չեք քարոզում: Եթե սոցիալիզմ սկսեք կառուցել ձեր մոլորակում, պիտի տեսնեք, որ հավիտենականությունը չի բավականացնի նրան հասնելու: Այնքան որ սոցիալիզմը հեռու է իրականությունից:

Ասացի ու ավելացրի.

- Ձեր մոլորակում ապրելու բազմաթիվ հնարավորություններ կան, ու ես ուրախությամբ կուզենայի մնալ ու ապրել ձեզ մոտ: Արդյոք դա հնարավոր չէ՞:

- Դժվար է,- ասաց Ադամը:- Յուրաքանչյուր մոլորակի մարդուն իր սեփական Աստվածն է ստեղծում իր կերպարանքով: Մեր և քո կերպարանքներն այս րոպեին տարբեր են իրարից: Մեր Աստվածը տեսնելուն պես կասի, որ այս մարդն իմ ստեղծածը չէ, ու ես չգիտեմ, թե ինչպես կվարվի հետդ:

- Ինչո՞ւ, մեզ մոտ հաճախ հավի տակ բադի ձու են դնում, հավը թխսում է և հավասար սիրով բադիկներին իր ճտերի հետ խնամում:

- Այո՛, բայց աստվածները հավերի նման բարի չեն լինում սովորաբար:

Հետո խոսակցության նյութը փոխեցի՝ ասելով.

- Ոչինչ, վերջը լավ կլինի: Ամերիկյան և սովետական տիեզերանավերը սկսել են ակոսել երկինքը, շուտով մոլորակների մեջ կուլտուրական և առևտրական կապ կհաստատվի: Անմահ մոլորակներն իրենց ապրանքը կտանեն փոխանակելու մահկանացուների հետ: Դուք այստեղից անմահություն կարտահանեք մեր մոլորակ և այնտեղից կներմուծեք մահ:

- Ձեզանից կգտնվի՞ մի հիմար, որ ցանկանա իր մահը փոխա-

նակել մեր անմահության հետ,- նկատեց Ադամը։

- Կգտնվի և շատ։ Որովհետև գիտեք ինչ, մեր մահն էլ մնայուն բան չէ։ Մենք մեռնում ենք ժամանակավոր։ Մինչև վերջին դատաստանը։ Վերջին դատաստանին պիտի վեր կենանք և կանգնենք ահեղ դատաստանի առջև։ Մեղավորները պիտի գնան դժոխք՝ հավիտյանս տանջվելու, իսկ արդարները տեղավորվեն արքայության մեջ։

- Իսկ ասածդ տեղերում ամուսնական կյանքը պիտի շարունակվի,- հարցրեց Ադամը։

- Դժոխքում՝ չեմ կարծում։ Հազիվ թե կպրե կարասում եռացող մարդը կնոջ մասին մտածի։ Իսկ ուրիշ բան է արքայությունը։ Մահմեդական մեռածը, նայած, թե որքան քրիստոնյա է սպանել իր կյանքում, այնքան կին կստանա արքայության մեջ ու կապրի, իսկ քրիստոնյան՝ ոչ։ Նա պիտի ձեռք ձեռքի վրա նստի ու միայն Աստծուն փառաբանի։ Մահմեդականներից, օրինակ, Էնվեր, Թալեաթ, Ջեմալ փաշաները միանգամից երկու միլիոն հայ սպանեցին։ Հիմա նրանցից յուրաքանչյուրը, յոթ հարյուր հազարական հուրի-փերի գրկած, կյանք է անում արքայության մեջ։ Իսկ քրիստոնյա գերմանացիների առաջնորդ Հիտլերը, որ հինգ միլիոն հրեա սպանեց, այս րոպեիս արքայության մեջ նստած է որպես մի անկին ամուրի։ Այդ է պատճառը, որ նրանց նախկին կայսր Վիլհելմ Երկրորդը[80] սկսել էր... արվագիտությամբ զբաղվել։ Այս եմ ուզում ասել,- եզրակացրի ես,- որ մեր կյանքն էլ այնքան նախանձելի չէ, մենք ձեզ նման տառապում ենք հավերժական կյանքից։

- Ա՜խ, սա աստվածնե՛րը, աստվածնե՛րը,- հառաչեց Ադամը,- իրենց ստեղծագործությամբ ինչ աղետի են մատնում մարդկանց...

Այստեղ ես հարցրի.

- Իսկ չգիտե՞ք պատճառը, ինչո՞ւ է Աստված մարդ ստեղծում։

- Դրա պատճառը իսկի իրենք՝ աստվածները, չեն իմանում, մենք որտեղից իմանանք։

- Բա այսպիսի բա՞ն կլինի, ստեղծել ու ստեղծվել՝ առանց դրա նպատակն իմանալու... Աշխարհ ենք դուրս գալիս՝ ճանապարհներին անծանոթ. մեկին հարցնում ենք՝ ո՞ւր գնանք, մեկն արևելք է ցույց տալիս, մյուսը՝ արևմուտք, մեկը՝ հարավ, չորրորդը՝ հյուսիս։ Ո՞ր մեկն ընտրել՝ չգիտես։

Ասացի ու ավելացրի.

- Թող գետի՛ն անցնեն աշխարհում բոլոր աննպատակ ստեղծված բաները։

Ճիշտ այդ միջոցին փոստային սայլակը կանգ առավ մոլորակի դռանը, և փոստատարը դուրս թռավ սայլակից՝ մի կայծակ հեռագիր ձեռքին։

Ադամը կարդաց հեռագիրը և այլայլված ինձ դարձավ.

- Մեր Աստվածն է գալիս, շո՛ւտ հեռացիր մոլորակից։

Ու մոռանալով հյուրասիրության բոլոր կանոնները՝ ինձ մոլորակից ցած գլորեց…

Երբ ես ձյունի փաթիլի նման օրոր-շորոր վար էի գալիս, տեսա մի սովետական տիեզերանավ դեպի ինձ է արշավում։ Արշավում՝ ոչ ինձ փրկելու, այլ իմ դժբախտության մեկը երկուս դարձնելու։

Ինձ ներս առան ու տարան նավի «գաղտնի բաժնի» մոտ։ Այստեղ «բաժնի» վարիչը դարձավ ինձ՝ ասելով.

- Հը՛, մե՛ր տղա, երկրի վրա դռները փակ գտնելով՝ ուզում ես երկնքի վրայո՞վ Ամերիկա փախչել։

- Ես Ամերիկա չեմ փախչում։ Քաղսովետից վերելակ խնդրեցի՝ իմ հինգերորդ հարկի բնակարանը բարձրանալու, չտվեց, Աստծուց խնդրեցի, ինձ երկինք տանող վերելակ ուղարկեց։

- Ստախոսի՛ն տես,- ասաց «գաղտնի բաժնի» վարիչը։- Այդ ինչպե՞ս պատահեց, գոյություն ունեցող քաղսովետը քեզ վերելակ չտվեց, գոյություն չունեցող Աստվածը տվեց։

- Աստված ողորմած է անգամ այն ժամանակ, երբ գոյություն չունի։

- Հանցանքդ շատ ծանր է, ու ես չեմ մեղադրում, որ տիեզերանավն ավելի չծանրանա։ Գնանք երկիր, նոր այն ժամանակ հետդ կխոսեմ…

Երբ երկիր իջանք, ատրճանակի փողը ճակատիս դեմ արեց ու գոռաց.

- Դու ամերիկյան լրտես ես, ասա՛, այո՞, թե՞ ոչ։ Միևնույն է, այո էլ ասես՝ պիտի գնդակահարվես, ոչ էլ ասես՝ պիտի գնդակահարվես։

- Այդ դեպքում մի ստիպեք ինձ խոսել, մի գնդակով «այո»-իս համար սպանեք ինձ, երկրորդ գնդակով՝ «ոչ»-իս համար…

Ի պատասխան՝ մեկեն երկու գնդակ արձակվեց ճակատիս, ու ես… արթնացա։

Ու երբ տեսա՝ բոլորը երազ էր, ուրախացա։

Ուրախացա ու դարձյալ տխրեցի։ Տխրեցի ու այսպես մտածեցի. «Սովետական Միությունը, եթե ցանկանում է իր երկրում մարդ ունենալ, կամ պիտի մեռցնի իր մարդկանց, կամ մահվան սպառնալիքի տակ կիսամեռ դարձնի նրանց. հակառակ պարագային ոչ մի մարդ չի մնա երկրում, բոլորը Ամերիկա կփախչեն... երազով»։

Հայ գրական անդաստանը

Հայ ազգը բազմաթիվ գրողներ է ունեցել, բայց դրանցից մեկն է միայն «անմահ» կոչվել։

Եվ դա Հակոբ Պարոնյանն է, որը մեռավ քաղցից... Մեր ներկա գրողներից շատերը կարող էին անմահ կոչվել, բայց չեն ցանկացել։ Նրանք գերադասել են կենդանյոք կուշտ ուտել ու չանմահանալ, քան կենդանյոք սովել, բայց մեռնելուց հետո անմահանալ։

Այս մեկ։

Երկրորդ՝ Պարոնյանի ժամանակ գրականությունը պարտիզանական բնույթ ուներ։ Գրողը, իր անձնական ուժին վստահած, հանկարծ հարձակում էր գործում ընթերցողի մտքի վրա, հաղթում և անուն ձեռք բերում։

Իսկ սովետական շրջանում դա համարվում է գրական բանդիտիզմ։ Ներկա գրողները համազգեստ հագած, կանոնավոր բանակ են՝ ենթակա տասնապետի, հարյուրապետի, հազարապետի հրամանին։

- Դեպի աջ դարձիր, մե՛կ-երկո՛ւ, մե՛կ-երկո՛ւ։

Դեպի ձախ դարձիր, մե՛կ-երկո՛ւ, մե՛կ-երկո՛ւ։

Նախասովետական շրջանում, ճիշտ է, «անմահներ» քիչ կային, բայց ընդհանուր առմամբ մեծ գրողներ էին։

Նրանք նմանվում էին սեյրակ ցանված ձմերուկի։ Ամեն մեկը, մի մարգի մեջ ընկած, բորբ արևի տակ մեծանում, հասունանում և քաղցրանում էր։*

Եթե նրանք իսկական ձմերուկներ լինեին, և վաճառողն առաջարկեր քեզ կտրել-տալ, դու չէիր համաձայնի՝ ասելով.

- Մի՛ կտրիր, ափսոս է։ Արդեն երևում է, որ հասած են...

* Սեյրակ (բրբ.) - նոսր, իրարից հեռու, ոչ խիտ։

Իսկ ներկա գրողներն այդպես չեն։ Նրանք ցանված են շատ խիտ, Պետհրատն էլ անվերջ պարարտանյութ է տալիս։

Այդ պատճառով էլ փոքր են ու անհամ։

Հինը…

Երևակայեցեք մի մարգի մեջ թավալված է Ավետիք Իսահակյանը իր «Աբու-Լալա Մահարիով», երկրորդում՝ Շանթը իր «Հին աստվածներով», երրորդում՝ Շիրվանզադեն իր «Քառսով», Թումանյանը՝ իր «Անուշով»…

Նայողի քեֆն է գալիս։

Հիշատակենք, որ ներկայումս անմահ գրողների չլինելն ունի նաև իր ֆինանսական պատճառները։

Ինչպես գիտեք, մեզ մոտ 65-ը լրացած գրողը ցմահ թոշակ է ստանում։ Իսկ մահ չունեցող գրողը բնականաբար զրկվում է այդ թոշակից, որովհետև մեր պետության բյուջեի սահմանները անհուն չեն, որ բավարարեն անմահին։

Հյուրին մենք պատիվ ենք տալիս նրա համար, որ գիտենք, թե մի ժամից մեկնելու է։ Եթե հյուրը գա հիմնավորապես և սպառնա նստել մեր տանն ընդմիշտ, մենք ոչ միայն չենք հյուրասիրի նրան, այլև տանից դուրս կշպրտենք։

Նույնը կանի, հարկավ, և սոցապ մինիստրությունը, երբ մի գրող ներկայիս կամենա անմահանալ։

Անմահությունն այնպիսի մի դեղ է, որ կարելի է խմել միայն սոված փորով։

Սրանից հետո ինձ կմնա շոշափել մի փափուկ հարց ևս։

Արդյոք անմահությունը կապ չունի՞ գրական ժանրի հետ։

Ինչո՞ւ մեր բազմաթիվ գրողների մեջ «անմահ» կոչվեց միայն Պարոնյանը։ Մի՞թե նրա համար, որ այդ ժանրի գրողներ քիչ կան մեր գրականության մեջ, եթե չասենք՝ բնավ չկան։

Այս կասկածն իմ մեջ ծնեցրեց սովետական կառավարությունն իր այն վերաբերմունքով, որ ամեն անգամ գրական ժանրերը թվարկելիս երգիծաբանությունը բաց է թողնում, երգիծաբաններին էլ փակագծի մեջ առնում… որ չանմահանան։

Եվ այս այն կառավարությունը, որ անգամ «հետմահու» կենդանացնում է մարդկանց և կրծքներին շքանշաններ կախում։

…Երևում է չէ՞, որ չի սիրում երգիծաբանությունը։

Եվ ծիծաղելիս էլ երեսը շուռ է տալիս, որ մարդ չտեսնի: Ծածուկ, ինչպես աշխարհի մյուս բոլոր քաղցր վայելքները…

Դատախաղ

Կյանքումս շատ եմ դատել մարդկանց: Ասացի՝ արի մի օր էլ ես դատվեմ, տեսնենք ինչ դուրս կգա:

Ժպիտը երեսիս մտնում եմ դատարան և խնդրում դատել ինձ:

Դատավորը ոնց որ օտարի նստեցրեց ինձ մեղադրյալի աթոռին և սկսեց հարցաքննել իմ անունը, ազգանունը, տարիքը և այլն:

Հետո էլ երկու զինված միլիցիոներ բերեց կանգնեցրեց իմ աջ ու ձախ կողմերը, հրամայեց կանգնած պատասխանել իր հարցերին՝ թույլ չտալով, որ իրեն «ընկեր» ասեմ, այլ քաղաքացի դատավոր:

- Այ քեզ խաթա՛: Չլինի սա մի փորձանք բերի գլխիս,- ասացի ու սառած կանգնեցի:

- Խոստովանի՛ր հանցանքդ,- ասաց դատավորը շատ չոր ու պաշտոնական:

- Ես անմեղ եմ ու ոչ մի հանցանք չունեմ,- ասացի:

Դատավորն այլայլված դարձավ իր երկու կողմն արձանացած ատենակալներին.

- Լսեցի՞ք ինչ ասաց մեղադրյալը:

Ատենակալները, որոնք էն գլխից արձաններ էին, ավելի արձանացան:

- Անմեղ լինելն ամենամեծ հանցանքն է մեզանում և պատժվում է գերագույն աստիճանով՝ գնդակահարությամբ:

Պաղ քրտինքը վազեց կռնակովս, ու մտածեցի անմիջապես մի փաստաբան վարձել, քանի որ կատակն այսպես լրջացավ:

Փաստաբանը շատ թանկ ուզեց:

- Ա՛յ մարդ,- ասացի,- ես անմեղ եմ, անմեղից էլ այդքան կպահանջեն:

- Եթե մեղավոր լինեիր, ես ձրի կպաշտպանեի: Անմեղի դատն անհույս է, ինչպես ռակով հիվանդին բժշկելը, մի՞թե այդ չգիտես:

Վարձեցի:

Բայց դատավորի հարձակումն անողոք էր, պաշտպանությունը՝ թույլ:

Իր ոլորապտույտ հարցերով ինձ պատին էր սեղմել և ստիպում էր իմ ստորագրությունը կորզել, որ ես անմեղ եմ, որպեսզի գնդակահարության վճիռ արձակեր։

Ես որոշել էի պրովոկացիայի չենթարկվել։

Վերջում, դատավորը, կարո՞ղ եք երևակայել, այնքան պաշտոնական, այնքան օբյեկտիվ վերաբերմունք ցույց տվեց, որ ինձանից կաշառք ուզեց։

Ես, խախտելով դատական օրինակությունը, ոչինչ չտվի։

Այստեղ էր ահա, որ դատավորս կատաղած՝ ստորագրեց իմ մահավճիռը, ու ինձ տարան մահվան կամերան։

Եթե երբևիցե եղել եք այնտեղ, կիմանաք այն սարսուռը, երբ մեկը բանալի է մտցնում՝ դրա դուռը բանալու…

Վեր կացա, մի դիմում գրեցի իմ դատավորին՝ խնդրելով ներել իմ անմեղությունը։

Դիմումս մերժվեց, և ես սպասում եմ իմ մահվանը։

* * *

Կարդալով այս՝ գուցե կարծեք՝ կատակ եմ անում։

Բայց ես ձեզ աշխարհի ամենալուրջ բանը պատմեցի։

Դուք ծնվելիս անմեղ չեք գալիս աշխարհ։

Բոլորը երեխային չեն համարում անմեղության տիպար։

Բայց երեխան ծնվելուն պես մահվան է դատապարտվում «ահեղ դատավորի» կողմից և ամբողջ 70-80 տարի մահվան կամերայում նստած՝ սարսուռով բանալու ծակին է նայում…

Չլսված հրաշք

Գուցե կարծեք՝ ես պիտի ասեմ, թե երկրագունդն այսուհետև հակառակ ուղղությամբ պիտի դառնա իր առանցքի շուրջը, կամ Ռուսաստանն ու Ամերիկան, հաշտության եկած, զենքերը ցած են դրել, կամ մեր մի խանութում կարտոֆիլի ալյուր է երևացել և այլն։

Ո՛չ, ո՛չ, ո՛չ։ Դրանցից ավելի անհավատալի բան պիտի լսեք իմ շուրթերից։

Այն, որ արտասահմանում հնչակները, դաշնակներն ու ռամկավարները միացած դիմում են ներկայացրել ՄԱԿ-ին և Թուրքիայից

իրենց հողերը ետ են պահանջում։

Իսկ այդ նշանակում է, թե մեր պատմական անցյալում հայ նախարարները միացած միահամուռ դիմադրություն են ցույց տվել իրենց ընդհանուր թշնամուն։ Բաներ, որոնք անհնարինության շարքն են անցել շատ վաղուց։

...Հայը միանա որևէ բանո՞ւմ։

Դե եկ ու հավատա։

Եթե այս լուրը ճիշտ է, ես՝ որպես իսկական ազգասեր, կուզենայի, որ Թուրքիան ուշացներ կատարել հայերի այդ պահանջը կամ բոլորովին չկատարեր, որ հայ կուսակցությունները մի փոքր երկար իրար հետ համաձայն ապրեին։

Ինձ համար գերադասելի է, որ հայերը օտար հողի վրա ապրեն միաբան, քան իրենց սեփական հողի վրա ոխերիմներ։

Մի տարի առաջ ինձ մոտ եկավ մի ռամկավար ամերիկահայ տիկին։ Վերադարձին նրան խնդրեցի իմ բարևներս տանել Ամերիկայում ապրող իմ մանկության ընկերոջը, որը դժբախտաբար դաշնակ է։

Գիտեք՝ ինչ պատասխանեց տիկինը։ Նա ասաց.

- Ես դաշնակի համար անգամ թույն չեմ տանի...

Հետաքրքիր է, եթե այդ տիկինը ոչ թե Ամերիկայից, այլ Տաճկաստանից եկած լիներ, և ես խնդրեի իմ թույնը տանել տաճիկ կառավարությանը, նա թույնի փոխարեն իմ ողջույնը չէր տանի...

Հավատացած եմ, որ կտաներ։

Ու եթե անգամ իմ թույնը տաներ, ճամփին այնքան կմեղմացներ այդ թույնը, որ թուրք կառավարությունը խմեր ու չմեռներ։

Համենայն դեպս չէր նմանի դաշնակին տարած իր թունոտ թույնին...

Այս մարդիկ են ահա, որ Հայաստան պիտի գնան միասին ապրելու։

«Ողբա՜մ զքեզ, հայոց աշխարհ»[81], ուրեմն։

Բայց մի բոպե այս բոլորը մեկ կողմ դնենք ու երևակայենք, որ Թուրքիան կվերադարձնի մեր հողերը։

Անշուշտ ամերիկացի տիկինն էլ կգնա այնտեղ բնակվելու։ Եթե այն ժամանակ նույնպես այցելի ինձ, և ես ուզենամ իմ ողջույնը նրա միջոցով ուղարկել դաշնակ ընկերոջս, կտանի։

Ո՛չ։

Որովհետև սերը հողից չի բխում, այլ սրտից։ Իսկ սիրտ ամեն երկրում էլ մարդը պիտի ունենա սիրելու համար։ Այնպես, ինչպես ամեն երկրում ստամոքս պիտի ունենա ուտելու համար։ Եվ գլուխ՝ մտածելու համար։

Եթե հիսուն տարի ապրել ես մի կնոջ հետ և նրա մահվամբ երկրորդ անգամ ես ամուսնանում, վերջին կինն ինչ անուն էլ ունենա, դու առաջին կնոջ անունով կկանչես նրան... բնազդաբար։

Մեր մեջ անմիաբանությունը բնազդ է դարձել, որովհետև դարեր շարունակ այդպես ենք ապրել. ինչքան էլ միաբանվենք հիմա, դարձյալ «անմիաբան» պիտի կանչենք իրար։

Այս ասում և ավելացնում եմ.

- Հայերը Հայաստան են ուզում, որ դարձնեն մենամարտի վայր։

«Մեկ-երկու» ասեն ու կրակեն իրար վրա։

Իսկ Թուրքիան դառնա կռվողների... սեկունդանտը։*

Սատանայի գոյության գիտական հիմնավորումը

Այն պոտենցիալ չարությունը, որ վերագրվում է սատանային, գիտությունը չի հաստատում։

Եվ որ նա հիմնադրել է դժոխքը և ղեկավարում է այն, սատանայի բնույթը չի փոխում։

Եթե երկրային կարգը պահպանելու համար հարկավոր է բանտ ու բանտապետ, երկնային կարգը պահպանելու համար էլ պետք են դժոխք ու սատանա։

Նրա հիմնարկը վատ իմաստով դժոխք կարելի էր համարել միայն այն ժամանակ, եթե այնտեղ պատժվեին միանգամայն անմեղ մարդիկ։

Այն ժամանակ միայն սատանան հանդես կգար իր բացասական իմաստով։

Միակ չարությունը, որ վերագրում են սատանային, այդ այն է, որ իբր նա դրախտում խաբել է Եվային՝ օձի կերպարանք առած, մինչդեռ նորագույն ուսումնասիրությունները հերքում են խաբեությամբ Եվային դրախտից արտաքսելու տարբերակը։ Նրանք ասում

* Սեկունդանտ ***(секундант)*** - ռուս. մարտավկա։

են, որ սատանան չէր կարող Եվային խաբելու համար օձի օգնությանը դիմել, քանի որ ինքն ավելի ճարտար լեզու ուներ և խաբեության մեծ փորձ։

Արտաքսում չի եղել։ Ադամն առել է իր կնոջը, հեռացել ինքնակամ հետևյալ պատճառով։

Գիտեք, որ Աստված Ադամին ստեղծեց իր կերպարանքով, ու Եվան, չկարողանալով զանազանել Աստծուն ու Ադամին իրարից (մանավանդ գիշերը), հաճախ շփոթմունքի մեջ էր ընկնում իր ամուսնական պարտքը կատարելիս։ Ադամն էլ այս թյուրիմացությանը վերջ տալու համար վերցրեց իր կնոջն ու հեռացավ դրախտից։

Այն փաստը, որ Աստված իր ստեղծագործության վեց օրերում չի հիշում նաև սատանայի անունը, նշանակում է, որ սատանային Աստված չի ստեղծել. նա ինքնագո է, ինչպես Աստված, և ստեղծագործական նույն լիազորություններով օժտված, միայն հայտնի չէ, թե ինչո՞ւ սատանան չի օգտվել իր լիազորություններից և մի աշխարհ էլ ինքը չի ստեղծել Աստծու ստեղծածին առընթեր, որն ամենայն հավանականությամբ կլիներ ավելի կատարյալ ու իմաստալի, քան Աստծու ստեղծածը։

Հավանական կարծիքն այն է, որ մի երկրագնդում երկու աշխարհի տեղ չկա, երկրորդն էլ՝ սպասում է, որ Աստծու ստեղծած ունայն աշխարհը վերջ գտնի, որ նրա տեղ ստեղծի մի խելացի ու մնայուն աշխարհ։

Չեմ կասկածում, որ սատանան մարդ ստեղծելիս Աստծու պես հենց այնպես, աննպատակ չէր ստեղծի։ Այլ նրա մեջ մի որևէ միտք կդներ։

Որ այսօր Աստված գոյություն ունի, միայն սատանայի գոյությանն է պարտական։

Եթե սատանայի ու դժոխքի վախը չլիներ, ո՞վ կկատարեր Աստծու պատվիրանները, ո՞վ կփառաբաներ նրան։ Նրա՝ մարդուն հետմահու խոստացած դրախտը հազիվ թե դյութեր որևէ մեկին։ Դարեր շարունակ նստել մի անկենդան Աստծու դիմաց, ննջել ճանձրույթից, աչքն ու բերանը բանալ փառք տալու և նորից փակելու համար, ո՛չ մտածել, ո՛չ շարժվել ու այսպես քարանալ։

Իսկ դժո՞խքը… Այնտեղ ոչ թե օրը օրին չի նմանում, այլ պատ-

կերները փոխվում են ժամեժամ։ Այնտեղ տանջանքներն այնքան բազմազան են, որ մեղավորը շվարում է՝ չիմանալով՝ որո՞վ տանջվի։

Մեկ էլ տեսար՝ սատանան մի ծեր «մեղավորի», որը կյանքում ձեռնափայտին հենված էր քայլում, հրամայեց տասնհինգ օր առանց աչք փակելու անշարժ կանգնել։ Փակե՞ց աչքերը՝ մի հարված փորին...

Երևակայում եք չէ՞, թե տասնհինգ օր ոտքի վրա կանգնած մարդը ինչպես կուզենար նստել։

Եվ նստում է։ Բայց այն աթոռին, որի վրա սուր-սուր ասեղներ են տնկված...

Վեր է թռչում, ուզում է կանգնել. այս անգամ էլ գլխի վերևի ամրացրած ասեղներն են ծակում ծերունու գլուխը, որի հետևանքով նա, կանգնելու ու նստելու միջին դիրք ընդունելով, ծալված ծնկներով երկար մնում է կիսականգնած, կիսանստած։

Մարմնական մի դիրք, որ մեր ամենահայտնի մարմնամարզիկին անգամ չի հաջողվել մինչև այսօր։

Հետո գալիս է ծեծը, որի ժամանակ աղիքներն են դուրս գալիս հետույքից։ Դրան հաջորդում են՝ շարք կանգնեցնել տանջվողներին ու մեկ-երկու հաշվել, երրորդին գնդակահարել, հետո էլ՝ մեկ-երկու-երեք, չորրորդին գնդակահարել, և այսպես անվերջ։

Պայմանով, որ գնդակահարվածն իրավունք չունենա մեռնել։

Գնդակահարվիր, բայց կենդանի կաց՝ նորից գնդակահարվելու համար։

Իսկ դրախտում ննջիր ու աչքը բաց փառք տուր...

Ես Աստծու ստեղծած աշխարհին էլ չեմ հավանում։

Ինձ համար լավ էր նախնական քաոսը, քան այս աշխարհը։ Այնտեղ հետաքրքրություն կար։

Շիրվանզադեի «Քաոսը» կենդանություն մտցրեց մեր պետական թատրոնի քնած ռեպերտուարի* մեջ։

Ներկայիս գոյություն ունեն բազմաթիվ գիտական հիմնարկներ, որտեղ աստվածաբաններն ապացուցում են Աստծու գոյությունը։ Սակայն չկա սատանայի գոյությունն ապացուցող ոչ մի հիմնարկ, բայց այնուամենայնիվ Աստծու գոյությունը հաճախ ժխտվում է, իսկ սատանայինը՝ ոչ։

* Ռեպերտուար (repertoire) - ֆր. խաղացանկ։

Ինչո՞ւ, որովհետև սատանան ամբողջվին եռանդ է ու հնարանք։

Չնայած նրան, որ Աստված օժտում է մարդուն խելքով ու նախաձեռնությամբ, բայց չի թողնում, որ իր ջանքերով իր հացը վաստակի։

Ասում է.

- Ամեն առավոտ՝ աղոթքին, ինձանից «հանապազօրյա» հաց խնդրեք, ես կտամ, հացի մասին մի՛ մտածեք...

Մի հարցնող լինի՝

- Ինչո՞ւ ես գլուխ տվել մարդուն, եթե չպիտի մտածի...

Իսկ սատանան ոչ միայն դրդում է մարդուն մտածել, այլ նաև ռիսկի է մղում նրան։

Մեր առօրյայում, երբ մեկը մտածում է իր ուժերից վեր մի խիզախ գործ կատարել, ենթադրենք՝ իր կամակոր կնոջը սանձահարել, ասում է.

- Սատանան ասում է՝ վե՛ր կաց, էս կնոջ գլուխը ջախջախի՛ր...

Այսօր աշխարհը լարված վիճակ է ապրում, և համաշխարհային պատերազմի վախ կա։

Նախահարձակը եթե չասի՝ սատանան ասում է՝ ե՛լ, աշխարհը մոխրի վերածի՛ր, կարո՞ղ է իր նպատակին հասնել։

Եթե լսի Աստծուն կամ Քրիստոսին և «սիրի իր թշնամուն», աշխարհը մոխրակույտի կվերածվի՞...

Հայտնի մանկավարժ Լայբնիցը[82] ասել է.

- Տվե՛ք ինձ մանուկ սերնդի դաստիարակությունը, ես աշխարհը շուռ կտամ։

Բայց սխալվում է, չի կարող շուռ տալ։ Իսկ ես ասում եմ՝ տվե՛ք մի սատանա, ես աշխարհը շուռ տամ, և իրոք շուռ կտամ...

Մարդ և Աստված

Մարդն ու Աստված ի հնուց անդի սերտ բարեկամներ են եղել, իրարով պայմանավորված։

Մեկն առանց մյուսի քայլ չի գցել։ Հիմա են թշնամացել։

Աշխարհի ստեղծագործության ժամանակ Աստված կավից մարդ ստեղծեց։ Մարդն էլ նրա լավության տակից դուրս գալու համար կավից Աստված ստեղծեց ու սկսեց պաշտել։

Աստված, սակայն, որ ստեղծած մարդուն նաև կին էր տվել, սպասում էր, որ փոխարենը կստանա։ Չստացավ ու դրա համար մի փոքր վիրավորվեց, բայց ամաչեց մարդուն ցույց տալ։

Մարդը շատ հետո միայն զգաց իր սխալը և հայերի ու հույների միջոցով այն ուղղեց։

Հայերն իրենց Աստծուն պսակեցին ու առանձնացրին Մասիսն ի վեր, հույներն էլ իրենց Զևսին ամուսնացնելով քշեցին Օլիմպոս։ Իսկ այդ ոչ թե արհամարհանքի կամ թշնամության նշան պետք է համարել, այլ բոլոր նորապսակներին հատուկ մի օրենք։ Մենք ամուսնացնում ենք մեր տղաներին, տնից դուրս անում...

Բայց սարը բարձրացնելով իր Աստծուն՝ մարդը մեծ սխալ գործեց։ Սկսեց բարձրից նայել մարդուն Աստված, բյուրոկրատացավ։

Այնքան, որ մի օր էլ թռավ երկինք։

Այստեղ արդեն մարդու և Աստծու հարաբերությունները հիմնապես փոխվեցին։ Վերացավ նախկին ընկերությունն այնքան, որ այլևս Աստված բոլորովին չերևաց մարդուն, և վերջինս նրա հետ կապ էր պահպանում իր տեղակալ Քրիստոսի միջոցով։

Մարդը, գետին չոքած, լալով Աստված էր կանչում, բայց նրան լող չկար...

Դրա փոխարեն Աստված սկսեց մարդու հոգին առնել և նրան վերջին դատաստանով սպառնալ...

Այս տեսնելով՝ մարդը երես թեքեց Աստծուց և ժխտեց նրա գոյությունը։ Ասաց՝ Աստված չկա։

Ասաց՝ Աստված չկա, բայց նրա բնույթն այնպիսին էր, որ նա մի որևէ բան պիտի պաշտեր, մի գաղափարի պիտի ձգտեր, որովհետև նա անասուն չէր, այլ բանական մարդ։

Վերջում իր բանականությանն էլ զոհ գնաց խեղճ մարդը։

Դավանեց հավասարության և եղբայրության գաղափարը։ Մի բան, որ աշխարհում չկա և լինել չի կարող։

Ինչ եղբայրության մասին խոսք կարող է լինել, երբ աշխարհի առաջին եղբայր Կայենը խփեց իր Աբել եղբորն սպանեց։

Երբ Իսահակի որդի Հակոբը խաբեությամբ անդրանկությունը Եսավի ձեռքից առավ, իսկ վերջինս, զորք առած, նրա ետևից ընկավ՝ նրան սպանելու։

Երբ Հակոբի տասնմեկ որդիները, բռնելով իրենց փոքր եղբայր

Հովսեփին, նախ կամեցան մորթել, ապա գցեցին ցամաք ջրհոր ու ջաղացքար քաշեցին վրան, որ սովամահ լինի այնտեղ, հետո այդ էլ բավական չհամարելով՝ հանեցին, վաճառեցին իսմայելացի գերեվաճառին, որը տարավ Եգիպտոս և ծախեց Պետափրես դահճապետին։

Վաճառեցին ու փողը բաժանեցին իրենց մեջ[83]։

Այնքան շատ են օրինակները, որ չգիտեմ՝ որտեղից սկսեմ և ուր վերջացնեմ։

Եվ բնական է։

Հայրը մեռնելիս ժառանգություն է թողնում որդիներին, որդիներն էլ իրենց մեջ պիտի բաժանեն միջու ապրանքը։

Որտեղ է տեսնված, որ միջու ապրանք բաժանելիս գողություն, կռիվ, ծեծկռտուք, անգամ սպանություն չպատահի։

Եթե «եղբայրություն» դավանողներն ուզում են հասնել իրար սիրող հասարակության, ճիշտ դրա հակառակին կհասնեն։

Այնպես որ, սերն ավելի շատ պետք է փնտրել իրար բոլորովին օտարների մեջ, քան եղբայրների։ Եթե, իհարկե, որևէ տեղ այդ զգացմունքը գոյություն ունի աշխարհում…

Այսքանը «եղբայրության» մասին։

Իսկ «հավասարության»։

Այդ մասին պետք է խոսել մանկաբարձների հետ։ Եթե նրանք խոստանան երեխան ընդունելիս այնպես անել, որ բոլոր նորածիններն աշխարհ գան միևնույն հասակով՝ առանց կարճ ու երկարի, միևնույն խելքով՝ առանց հիմար-իմաստունի, միևնույն դեմքով՝ առանց գեղեցիկի ու տգեղի, այն ժամանակ դուք կունենաք մի հասարակություն, որի բոլոր անդամները հավասար կլինեն իրար։

Եթե ոչ, առաջ կգան հետևյալ անցանկալի պատկերները։

Առկա են մի գեղեցիկ օրիորդ և նրա ձեռքը խնդրող երկու երիտասարդ։

Երիտասարդներից մեկը տգեղ է, մյուսը՝ գեղեցիկ։ Եվ օրիորդն իր ձեռքը կտա վերջինիս, նրանք կդառնան երկուս, իսկ տգեղը կմնա մենակ։

Ֆուտբոլի լեզվով ասած՝ երկուսով զերո՝ ի հաշիվ երկու գեղեցիկների։

Այս՝ դեմքի տարբերության պատճառով։

Գանք հասակին։

Երկարն ու կարճը, եթե առանց լճի խորությունը ստուգելու՝ ինքզինքնին ջուրը նետեն, երկարը կազատվի, կարճը կխեղդվի։

Իսկ խելքի տարբերության մասին խոսելն իսկ ավելորդ է։

Երկու աշակերտ գնում են ինստիտուտ ընդունվելու։ Ընդունակը քննությունը կտա և անփոդ կընդունվի, իսկ հիմարն ամբողջ իր կարողությունը կվաճառի ու դասատուին կտա...

Կամ եթե հավասարությունն այդքան ցանկալի բան է, ինչո՞ւ են ֆուտբոլի խաղեր կազմակերպվում։ Չէ՞ որ այնտեղ միշտ խաղը վերջանում է հօգուտ մի կողմի։

Մենք զոռով անհավասարություն ենք ստեղծում, ծափահարում տանող կողմին, ուրախանում, միաժամանակ ձգտում ենք հավասարության։

Գաղափարախոսությունը նրա համար ենք ստեղծում, որ չհամապատասխանի կյանքին։

Կյանքն արևելք գնա, գաղափարախոսությունը՝ արևմո՞ւտք։

Չէ՞, մարդի՛կ ջան, չէ՞։ Բավական է ձեր աչքը դես ու դեն պտտեցնեք մի բան պաշտելու համար։

Ա՜յ մարդ, ի՞նչ պաշտել, է՞։

Կյանք է տրված ձեզ՝ ապրեք- մեռեք, էլի՛։

Ինչո՞ւ չեք սթրում...

Ամառը գյուղում

Ամառվա երեք ամիսները ես գյուղում եմ անցկացնում։

Նախասովետական շրջանում քաղաքից գյուղ գնալ նշանակում էր քսաներորդ դարից ետ գալ մինչև հինգերորդ դար Քրիստոսից առաջ։

Կուլտուրապես այնքան հետամնաց էր գյուղը։

Այժմ այդ տարբերությունը վերացված է փոխադարձ զիջումներով։ Մասամբ քաղաքացին է գյուղ գնացել իր կուլտուրայով, մասամբ գյուղացին քաղաք լցվել իր անկուլտուրականությամբ, և կյանքը երկուստեք բարեխառնվել է, ճիշտ այնպես, ինչպես լողացողները բաղնիքում տաք ու պաղ ծորակներից են օգտվում։

Տափակ կտուրները վերացել են։ Այժմ համատարած «կռիշ» է քար ու կիր պատերի վրա։*

* Կռիշ ***(крыша)*** - ռուս. կտուր, տանիք։

Այստեղ ինձ զարմացնում է մի հանգամանք։

Պետությունը ոչ մի շինանյութ չի վաճառում գյուղացուն, այսքան շենքեր ինչպես շինվեցին։

Երկար հարց ու փորձից հետո իմացա վերջապես բանի էությունը, որը մոտավորապես այսպես կարելի է պատկերացնել։

Երևակայեցեք մի հիվանդ մարդ, որը չի կարողանում իր մեզը պահել փողոցում։ Աջ ու ձախ է նայում՝ պետքարան չկա։ Ստիպված այդ ինտիմ գործողությունը կատարում է փողոցի մեջտեղը։ Իսկ անցորդները, մտնելով խեղճի դրության մեջ, որպեսզի չամաչեցնեն, աչքը փակած անցնում են կողքից։

Ճիշտ այսպես էլ, կառավարությունը շատ լավ գիտի, որ տները շինվում են գողացված շինանյութով, բայց չտեսնելու է տալիս՝ հաշվի առնելով, որ գյուղացին էլ մարդ է և իրավունք ունի բարեկարգ տան մեջ ապրելու։

Ես մի բանի հետ չկարողացա հաշտվել։ Եվ այդ այն է, որ գյուղացին, կարծելով, թե շունն ավելի լավ կլսի, եթե ականջ չունենա, անխտիր կտրում է իր շան ականջները։ Մի բարբարոս ու անգութ սովորություն։

Իր ժամանակին այս սովորությունն ուներ նաև Ստալինը, որ կտրում էր մարդկանց լեզուները։ Եվ ժողովուրդը Ստալինի մահվանից հետո միայն սկսեց քիչ-միչ թոթովել...

Ո՛չ, չի կարելի։ Հանցանք է կտրել կենդանի արարածի մարմնի որևէ մասը, ո՛չ ականջը, ո՛չ պոչը, ո՛չ լեզուն։ Դրանք բոլորն իրենց կատարելիք դերն ունեն։

Այս տարվա իմ գյուղի տանտերը կթան չունի. հավ, բադ ու սագեր է պահում։

Ամառս ուսումնասիրեցի դրանց կյանքը։ Դրանք երեքն էլ խմբով են ման գալիս և ունեն համայնական կյանք, որը սակայն, զուրկ է ինտերնացիոնալիզմից։

Մի երեկո, երբ սագերի խումբը վերադարձավ տուն, տեսավ իրենց բակում հարևանի սագերին։

Պետք էր տեսնել, թե ինչ կռինչ բարձրացրին և ինչպես վրաները հարձակվելով՝ դուրս քշեցին իրենց բակից այդ սագերին։

Այստեղից եզրակացություն։

Եթե սագերն ընդունում են համակեցություն՝ միայն ամեն հա-

մայնք իր բակում, նշանակում է՝ սագերը ֆաշիստ են։ Այսինքն՝ ազգային սոցիալիստներ։

Բայց հետո տեսա, որ այդ էլ ճիշտ չէ։ Սեփական համայնքում էլ նրանք իրար օգնությանը չեն դիմում։ Երբ նրանք իրենց փորի տակից կտուցով ճարպը հանում ու ինքզինքնին օծում էին, իրենց գլուխները դժվարանում էին օծել, որովհետև կտուցը չէր հասնում այնտեղ։

Ինչ էին անում, գիտեք։ Ճարպը քսում էին իրենց կռնակին, հետո գլուխները քսում այդ ճարպոտ կռնակին և օծվում։

Իսկ մարդկանց մոտ այդպես չէ։

Եթե, օրինակ, մեկը գոգնոց է հագնում, որը ետևից է կոճկվում, կռնակը դարձնում է ընկերոջը և խնդրում է կոճկել։ Իսկ այդ նշանակում է «մեկը բոլորի համար, բոլորը մեկի համար»։

Մի բան, որ բացակայում է սագերի մոտ։ Դրա փոխարեն սագերն ունեն այնպիսի առավելություններ, որ մարդիկ չունեն։ Դրանք մեն- մենակ առավոտները դաշտ են գնում, արածում, երեկոյան վերադառնում տուն։ Նշանակում է՝ նրանք ունեն այնքան բանականություն, որ չեն մոռանում իրենց սեփական տունը։

Իսկ մեր երիտասարդներից շատերը գնում են Ռուսաստան՝ սովորելու, ամուսնանում, մնում են այնտեղ։ Հաճախ նույնիսկ այնպիսիները, որոնք այստեղ ամուսնացել և ունեն կին, երեխաներ…

Սագն այդպիսի բան երբեք չի անում։ Ընդհակառակը, երբ նա թռիչս է նստում, բնական կարիքները հոգալու համար մի բոպե վեր է կենում ձվերի վրայից, էլի վազեվազ վերադառնում է իր տեղը։

Մի տարի իմ տանտիրուհին հավի ձու դրեց բադի տակ։

Երևակայեցեք՝ ամբողջ քսանմեկ օր այդ ձուն մնաց բադի տակ, նրա ձվերի հետ և չձուլվեց։ Քսանմեկ օրից հետո ծակեց ձուն և դուրս եկավ որպես հավ։

Այս էլ մի ուրիշ առավելություն մարդուց։

Հայը, օրինակ, ոչ թե քսանմեկ օր, այլ եթե տասնմեկ օր մնա օտար ազգի տակ, անմիջապես կձուլվի…

Այդ հավի ճուտը, սակայն, ապրելով բադի ընտանիքում, չհալածվեց ամենևին որպես այլազգի։ Ընդհակառակը՝ որպես ազգային փոքրամասնություն՝ առանձին ուշադրության ու խնամքի էր արժանանում։

Հավը սև էր, բադերը՝ սպիտակ։ Երևակայեցեք՝ նրանց մեջ մորթային խտրություն էլ չառաջացավ։

Զգժտեց նրանց անգամ իրենց ծովային ու ցամաքային բնույթը։ Ընդհակառակը՝ մայր բադն իրեն հզոր էր զգում, որ տիրապետում է ծովային ու ցամաքային ուժերի, որոնք մի օր կարող էին պետք գալ հարևան բադերի հետ կռվելիս։

Աշնանը, երբ գյուղից քաղաք էի վերադառնում, այսպես էի մտածում ճանապարհին։

Ասում էի. «Ինչ լավ կլիներ, որ թռչունների այս կենցաղից մարդիկ, ազգերն էլ օգտվեին»։

Ափսոս՝ չեն օգտվում։

Հարյուր տարուց ավելի կապիտալիստ Ամերիկան նստեց Կուբայի վրա, բայց վեր կենալիս ցավոք նկատեց, որ տակից սոցիալիզմ դուրս եկավ...

Աստվածային դասակարգում

Ըստ կրոնական տվյալների՝ երկինքը յոթ հարկ ունի, և Աստված ապրում է այդ յոթ երկինքներում միաժամանակ։ Առաջինից մինչև յոթերորդ երկինք։

Եվ այսքան տարածությամբ չբավարարվելով՝ «Աստված ամեն տեղ է»...

Իսկ այդ նշանակում է՝ տիեզերքը ստեղծել է միայն իր համար։

Բայց ես Տիրոջ հասցեն չեմ պահում և վաղուց եմ իմ հաշիվը փակել նրա հետ։

Ես ունեմ իմ սեփական աստվածները՝ խիտ շարքերով։

Բոլորն էլ կանայք։

Յոթերորդ երկնքում ես դասավորել եմ նրանց, որոնց սաստիկ գեղեցկության պատճառով վախեցել եմ առաջարկություն անել. համարել եմ անհասանելի։

Նրա ցածի հարկում զետեղել եմ իմ այն սիրուհիներին, որոնք մերժել են իմ առաջարկությունը։

Վերևից հաշված երրորդ հարկում դասավորել եմ իմ առաջարկությունը ընդունողներին։

Չորրորդում՝ ինձ դավաճանողներին։

Հինգերորդում՝ պառավածներին։

Վեցերորդում՝ մեռածներին։

Իսկ վերջին հարկը ես դարձրել եմ ժամադրավայր իմ բոլոր տեսակի սիրածների, որոնց գլխի վերև ճախրում է իմ սիրտը՝ երանության թևերը հագած...

Ահա ես այսպիսին եմ։

Դո՛ւք ոնց։

Հ.գ. Ես մոռացա հիշատակել օրինական կնոջս։

Նա կայուն տեղ չունի երկինքներում։

Իբրև «վերստուգիչ հանձնաժողով»՝ շրջում է բոլոր հարկերում հավասարապես։

Նամակ Ֆրանկոյին[84]

Սիրելի՛ Ֆրանկո։

Իսպանիայի ներկա անմխիթար վիճակը շատ մտահոգություն է պատճառում ինձ։

Ինչո՞ւ այդ վիճակին հասավ քո երկիրը, պարզ չեղավ ինձ համար։

Մի ժամանակ նրա հզոր նավատորմը աշխարհն էր սարսեցնում, իսկ հիմա ոչ մի պետություն չի ասում՝ Իսպանիա՛, կա՞ս, թե՞ չկաս։

Քեզանից փոքր պետությունները պատվիրակություններ են ընդունում, ճամփու դնում, նրանց հետ ճաշում, նախաճաշում, բաժակաճառ արտասանում, բարեկամական մթնոլորտում զրույց ունենում, իսկ դու ոչ մի տեղ չկաս։

Այսպես է, սիրելի՛ս, աղքատ մարդու երեսին ոչ ոք չի նայում։ Ձախորդություն է, կպատահի։ Ռուսաստանը մի ժամանակ աշխարհին հաց էր տալիս, հիմա ինքն է ուրիշի ձեռք պարզում...

Առևտրո՛վ զբաղվիր, սիրելի՛ս։

Մեզ մոտ քեզանից ավելի ծեր գյուղացիներ, ընկույզի պարկը շալակած, «լավ պոպո՛ք, հին շորով, հին կոշիկով պապո՛ք» կանչելով, ման են գալիս դռնեդուռ, և երևակայիր, մարդիկ կան, որ այդ առուտուրով հսկայական հարստություն են կուտակում։

Ամոթը մի կո՛ղմ թող, դու էլ մի պարկ շալակի՛ր և դո՛ւրս արի աշխարհի փողոցները։

Քո թերակղզին, ուր դու ապրում ես, հենց կարծես բնական պարկ լինի, մի հարյուր հատ փուչ ընկույզ դիր մեջը և ման գալով՝ «պոպո՛ք, հին շորով, հին կոշիկով պոպո՛ք» պոռա, գնա։

Ապրանքդ միայն Ամերիկան կսպառի։ Նա ամեն չորս տարին մեկ նախագահ է փոխում, որի հետևանքով ահագին հին նախագահներ են կուտակվել, ու չգիտի՝ ո՞ւր լցնի նրանց։

Հին ասելով՝ չիմանաս մաշված կամ ծակված։ Բոլորովին նոր, ասես գործածված չլինեն։

Այսպիսի նախագահներ եթե տանես Աֆրիկա, նոր անկախացած պետությունները կխլխլեն իրար ձեռքից և մի փոքր նեղացնելով՝ կհագնեն։

Ֆրանսիայում դը Գոլից առաջ օրական մի նախագահ էր փոխվում։ Դու կարող ես մի պոպոքով երկու նախագահ առնել այնտեղ։

Եվ վերջապես մտի՛ր Լա Մանշ, Անգլիա գնա՛։

Եթե պոպոքներդ փուչ են, խեղդվելուց մի՛ վախենա, նրանք քեզ ջրի երես կպահեն։

Անգլիայում մի բոլորովին չգործածված, թափ-թազա թագուհի կա։ Երբ Անգլիան կայսրություն էր, նա կայսրուհի էր, իսկ երբ կորցրեց իր գաղութները և գոգնոցը կապելով՝ սկսեց ծառայել Ամերիկային, մի հարմար կայսր է փնտրում՝ նորից կայսրուհի դառնալու համար։

Տա՛ր նրան Հաբեշստան և վաճառի՛ր Հայլե Սելասիե[85] «կայսերը». նա քեզ կպարեցնի։

Հին նախագահներ չկան սոցիալիստական երկրներում։ Նրանք իրենց նախագահներին գործ են ածում շատ խնայողությամբ։ Մինչև չմեռնի, շարքից չեն հանում։ Բայց այդ երկրներում էլ դու կպատահես հին ռազմական մինիստրների, արտաքին գործոց, ներքին, առևտրական։

Ռուսաստանում դու կարող ես ձեռք բերել Մոլոտովին, Բուլգանինին։

Միանգամայն դեն են շպրտել նրանց։ Ձրի էլ կտան քեզ, երբ տեսնեն քո խեղճ վիճակը։

Եթե այրած չլինեին Ստալինի դիակը, քեզ պետք կլիներ ձեռք

բերել այն. միայն նրա տեսքից կսարսափեր ամբողջ Աֆրիկան…

Սիրելի՛ Ֆրանկո, պոպոք տար ավելի շատ այն երկրները, որոնք երկու մասի են բաժանված։ Երկու Գերմանիաները, Կորեաները, Չինաստանները և Հնդկաչինները։

Նրանց պոպոք է հարկավոր, որ զբաղվեն։ Արևելյան մասերը դեպի արևմտյան մասերը կգլորեն, հարավայինները՝ հյուսիսային, և այսպիսով կզբաղվեն անմեղ խաղով և կմոռանան իրենց փոխադարձ ատելությունները։

Ա՜խ, սիրելի՛ Ֆրանկո։ Չգիտես՝ աշխարհն ինչքա՞ն է մանրացել։ Քեզ նման կարոտյալներին օրական հացի փող չեն տալիս, իրենց ողջ կարողությունը տալիս են զենքի, որ իրար կոտորեն։

Կոտորեն՝ հակառակ իրենց կամքին։

Քսան տարի է մտածում են, թե ինչպե՞ս անեն, որ իրար չկոտորեն՝ հնարը չեն գտնում։

Ասում են. «Ի՞նչ անենք, որ դրա հնարը չենք գտնում, ուրեմն, պիտի կոտորենք իրար»։

Ծախի՛ր քո փուչ պոպոքներն այս անճարակներին, Ֆրանկո՛, որ նրանց կյանքի մեջ մի իմաստ մտնի, և բաց թողնեն իրար օձիքը։

Մի՛ մտահոգվիր, որ պոպոքներդ փուչ են։

Միայն աշխատի՛ր քո փուչ պոպոքներով մարդկային այս փուչ կյանքը մի փոքր երկարացնել։

Պոռա՛, ուրեմն, Ֆրանկո՛.

- Պոպո՛ք, հին շորով, հին կոշիկով պոպո՛ք…

Եվ մի՛ ամաչիր։

Եթե դու քո պոպոքներով փրկես մեր աշխարհը կործանումից, դու կդառնաս համայն աշխարհի միակ նախագահը՝ երբեք չհնացող…

Գրականությունն ըստ Պլատոնի[86]

Եթե Պլատոնին լսենք, այն աշխարհը, ուր ապրում ենք հիմա, գոյություն չունի։ Ո՛չ բույս, ո՛չ կենդանի, ո՛չ մարդ։ Դրանք միայն մի հավերժական իդեայի արտացոլումն են։ Նրա շվաքը, նրա շողքը, տեսանելի արձագանքը, միրաժը…

Կարճ ասած՝ մեզ թվում է, թե մենք ապրում ենք…

Մինչդեռ մեր գրողները դա համարում են գոյություն ունեցող իրական կյանք և դա արտացոլում իրենց երկերում:

Սա չի՞ հիշեցնում արդյոք թուրքերի այն խոսքը, որ ասում են. «Դավուսանըն սույունին սույի»: Այսինքն՝ նապաստակի ջրի ջուրը: Նապաստակը՝ անյուղ կենդանի: Նրա ջո՞ւրն ինչ պիտի լինի, որ ջրի ջուրը մի բան արժենա:

Բայց Պլատոնը ճիշտ է ասում, գիտե՞ք: Ես հիմա նոր եմ հասկանում:

Ես էլ էի զարմանում ինձ վրա:

Ասում էի. «Ա՜յ ջանըմ, էս ի՞նչ բան է, ամբողջ կյանքումս կարդում եմ գրքեր, որոնց մեջ անխտիր բարություն ու ազնվություն է քարոզվում, ու չեմ ազնվանում, բարի չեմ դառնում: Լավ է, որ ծնվելիս մի փոքր ազնվություն եմ բերել հետս: Եթե այդ էլ չլիներ, ես այսօր միանգամայն անազնիվ պիտի լինեի՝ հույսս դնելով գրքերի ու գրականության վրա»:

Վերցնենք այսպիսի մի փաստ:

Մի՞թե Հիտլերն իր կյանքում երբեք մարդասիրական գրքեր չէր կարդացել. ինչպե՞ս կարողացավ միլիոնավոր մարդկանց սպանել, գազախեղդ անել և դարսելով հնոցներում՝ ողջ-ողջ այրել:

Նոպոլեոնն անգրագե՞տ էր, երբ ողջ Եվրոպան իր ոտների տակ տրորում էր:

Ավելի անհեթեթը:

Միջնադարյան կաթոլիկը կարդում էր Քրիստոսի Ավետարանը, ուր գրված էր՝ կյանքը սեր է, ու բողոքականին խարույկի վրա այրում էր:

Աշխարհում կա՞ մի գիրք, ուր գրված լինի, թե պետք է բռնանալ մարդու մտքի վրա և իրենց մտքերն ուրիշի գլխին փաթաթել:

Ո՛չ:

Բոլոր գրքերն անխտիր ասում են, որ մարդը ծնվում է ազատ, պիտի մտածի ազատ ու մեռնի ազատ: Եվ ոչ թե մտածի այլոց ուղեղով և մեռնի այլոց գնդակով:

Բայց դուք տեսա՞ք՝ ինչ արեց Ստալինը:

- Սոցիալիզմ, թե ոչ՝ կրակեցի...

Արժեք ունի՞ վախով ընդունված սոցիալիզմը:

Մարդը քանի կենդանի է, վախից ինքզինքը սոցիալիստ կկեղծի,

հենց մեռավ, կդառնա հակահեղափոխական։

Եվ որովհետև մարդու կյանքը կարճ է, իսկ մահը՝ հավիտենական, ուստի հակահեղափոխությունը կգերակշռի հեղափոխությանը։

Մինչդեռ հեղափոխության շահը պահանջում էր, որ ճիշտ դրա հակառակը լիներ…

Այս բոլորից հետո ի՞նչ արժեք ունի կյանքը, ի՞նչ արժեք ունի նրա «հայելին»։

Մի րոպե ենթադրենք, թե իրոք գոյություն ունի այդ «կյանքի հայելին»… է, ի՞նչ օգուտ այդ հայելուց, երբ ոչ ոք չի նայում այնտեղ՝ իր կերպարանքը տեսնելու։

Տեսնի էլ, ինքզինքը չի ճանաչի, այնքան որ տարբեր են երկու պատկերները։ Եթե ամուսինը միշտ ներկայացել է կնոջը գրականության պատկերով ու մի օր էլ ներկայանա կյանքի պատկերով, կինը զարհուրած կփախչի նրանից…

Գրականությունը՝ ամեն բան ուրիշի համար, իսկ կյանքը՝ միա՛յն իր համար։

Նման են իրար։

Ո՛չ։

Կյանքն ու գրականությունը հասակով էլ են իրարից տարբեր։ Մարդը կյանքում հազիվ մի տասը մամուլ երկարություն ունենա, իսկ նույն մարդը գրքում երկարում, դառնում է հիսուն մամուլ…

Եթե զույգ ամուսինները հասակի այսպիսի տարբերություն ունենան, կարճը երկարին համբուրելու համար ապաքեն սանդուղքի պետք պիտի ունենա։ Իսկ դա բանի նման չէ։

Այս բոլորից ի՞նչ է հետևում։

Հետևում է այն, որ իրոք իրական կյանք գոյություն չունի, հետևաբար, և չի կարող գոյություն ունենալ նրա իրական հայելին։

Հետևում է նաև այն, որ գրականությունը միայն ժամանց է։

Կապիկները, օրինակ, որոնք ունեն հարմարավետ և երկար պոչ, իրենց պոչի հետ են խաղում։

Ու չեն կարդում։

Փողոցում

Գնում եմ ու հետաքրքրությամբ նայում մի երիտասարդի, որը, գրենական պիտույքների խանութից դուրս գալով, գնում է առջևից՝ մի մեծ կապոց թևի տակ։

«Արդյոք ինչ բանի համար է տանում այդքան շատ թուղթը այս տղան,- ասում եմ ինքս ինձ։- Կամ ձախողված դատ ունի դատարանում, և բողոքներ պիտի հղի «աշխարհի բոլոր մասերը», կամ էլ մի սիրած աղջիկ հեռու քաղաքում, տանում է թուղթը՝ հայտնելու, թե որքան է կարոտել նրան...» ։

Կամենալով ստուգել այս բաները՝ ետևից մոտեցա իրեն ու ընկերաբար հարցրի.

- Բալա՛ջան, այդ թուղթն ինչի՞ համար ես տանում։

- Գրող պիտի դառնամ։

- Հա՞։ Լավ ես անում։ Պատրաստի սկզբունքներ ունես քարոզելու։

- Չունեմ։ Առայժմ կգրեմ, հետո կճարեմ ու կկցեմ։

- Չեղա՛վ։ Գրելը բիսկվիթ եփել է։ Կարելի՞ է նախ բիսկվիթը եփել, հետո սաղլամ ձուն վրան դրած՝ հաճախորդին հրամցնել։ Կլոր ձու է, մեկ էլ տեսար գլորվեց ընկավ, բիսկվիթը մնաց անձու։ Ձուն պիտի հունցես խմորի մեջ այնպես, որ հաճախորդն ուտելիս անգամ չիմանա, թե մեջը ձու է խառնված։ Գրողի քարոզած իդեան դեղ է. այդ դեղն այնքան քաղցր պիտի լինի, որ հիվանդը կուլ տալուց հետո պետք չզգա մի կտոր շաքար դնելու բերանը՝ նրա դառնությունը մեղմելու համար։

- Ես այդ չգիտեի...

- Ոչի՛նչ, դեռ նոր ես։ Կգրես՝ կիմանաս։ Այս բոլորը լա՛վ, բայց ինչ ես մտադիր գրել, ոտանավո՞ր, թե՞ արձակ։

- Ոտանավոր։

- Քո վերևի հարկում ապրող կինը խոմ կա՞ղ չէ։

- Այդ ինչո՞ւ եք հարցնում...

- Հարցնում եմ նրա համար, որ եթե կաղ է ու գլխիդ վրա երթևեկում է բարձր կրունկներով, ոտանավորդ կարճ ու երկար կստացվի։

- Իմ վերևի հարևանուհին սքանչելի, համաչափ ոտներ ունի։

- Եթե այդպես է, մի՛ ուշացնի, սկսի՛ր գրել, դու կհաջողես։

- Գրելը հեշտ է, սկզբունք ճարելն է դժվար։

- Իսկ դա էական է գրելու համար։ Չէ՞ որ գրողը հոգու ճարտարապետ է։ Ինչպես առանց պլանի տուն չի կառուցվում, այնպես էլ առանց սկզբունքի՝ հոգի։ Պիտի նախագծես, թե քո քարոզած իդեալը տվյալ մարդուն քանի՞ հարկ կբարձրացնի, նորակառույց մարդդ ունի՞ բոլոր հարմարությունները, լայն խոհանոց, տակը նկուղ։ Եթե այդ մարդը պիտի լինի յոթհարկանի, ապա պիտի մտածել վերելակի մասին, այլապես այդ բարձրության իդեալը կլինի անհասանելի սովորական մարդու համար։

Երբ նա լուռ մտածում էր այս բոլորի մասին, ես ավելացրի.

- Իսկ, ամոթ չլինի հարցնել, դու փառքի՞ համար պիտի գրես, թե՞ փողի։

- Միա՛յն փառքի։ Մենք տնից չորս հոգի աշխատող ունենք, մեկն էլ պահեստապետ է։ Նյութապես ապահով ենք։

- Եթե միայն փառքի, կարող ես բոլորովին էլ չգրել։

- Չգրել և փառք վաստակել։

- Այո՛, իհարկե։ Ինչո՞ւ կոլխոզի նախագահը դեռ չցանած ցորենից մեծ բերք ստանալու համար փառավորվի, իսկ գրողը իր չգրած երկի համար չփառավորվի։ Քեզ հարկավոր է գտնել մի հարմար քննադատ։

- Իսկ դա դժվա՞ր է ճարվում։

- Դժբախտաբար, այո՛։ Այդ դասը անհետացավ գրական ասպարեզից։ Քննադատեցին գրողներին, վատամարդ դարձան, և այժմ գրողը քննադատի դատաստանին չի ներկայանում՝ բացարկ հայտարարելով նրան։

- Ի՞նչ անեմ հապա։

- Ուշացել ես, սիրելի՛ս։ Առաջ պիտի հանդես գայիր, որ ձեռքեձեռք խլվեիր։ Մեկը երկինք բարձրացներ, մյուսը այնտեղից վար գլորեր։ Հիմա ես էլ չգիտեմ՝ ինչ ասեմ...

Երկուսս էլ լռեցինք։

Ես ասացի.

- Եթե ոտանավորի միտքը թողած՝ արձակի անցնեիր, քեզ նյութ կտայի։

- Ենթադրենք անցա։ Ի՞նչ նյութ։

- Անաստվածները կյանքից հալածեցին կրոնը, ու հիմա ձեռք ձեռքի վրա դրած՝ պարապ նստել են։ Եթե դու գրականության մեջ կրոնը վերադարձնեիր՝ մի սրտառուչ վեպ գրելով, պարապ անաստվածներին նոր հալածանքի թափ կհաղորդեիր։

- Դրանից ինձ ինչ օգուտ։

- Գոյություն չունեցող բաներ կենդանացնելուդ համար առաջինը ես քեզ վահանիս վրա կբարձրացնեի։ Գիտես՝ ես որքան եմ ատում կրոնը։

- Ես ստեղծեմ, դու ոտնահարես։ Դա կլինի ֆուտբոլ։

- Իսկ ֆուտբոլը ողջ քաղաքին է քաշում ստադիոն։ Ո՞ր հանճարեղ երկն է այդ ուշադրությանն արժանացել…

Ծեծի պատմական տեսությունը

Թե ո՞ր դարում է առաջ եկել ծեծը, հայտնի չէ։

Այն, որ մեր աշակերտության ժամանակ մեզ ծեծում էին և ասում՝ ծեծը դրախտից է եկել, պատմական փաստերով չի ապացուցվում։

Դրախտում Աստված բոլոր իրավունքներն ուներ ծեծելու Եվային իր պարտազանցության համար, բայց չծեծեց։

Հնում մարդիկ ինչքան ասես կռվել են իրար հետ, սպանել, ջարդել, փշրել են, բայց երբեք թույլ չեն տվել իրար ծեծել։

Վայրենին անգամ մորթել կերել է մարդուն, բայց վրան ձեռք չի բարձրացրել։

Ծեծի մասին մենք լսում ենք առաջին անգամ Հին Հունաստանից, մոտավորապես չորս հազար տարի Քրիստոսի թվականությունից առաջ։ Սոկրատեսի կինը, սաստիկ բարկացած, ծեծում է հույն փիլիսոփային և դրանով չհագեցած՝ ձեռքի կուլան փշրում է նրա գլխին։ (Զարմանալի կերպով ամեն չար բան կնոջից է գալիս)։

Ծեծն իր բնույթով անհատական է։ Չի պատահել դեպք, որ ազգ ազգի վրա հարձակվի և ծեծի նրան։ Հետևաբար, ծեծը մարդկությունը ծառայեցրել է միայն իր անհատական կարիքների համար։

Ծեծի կողմից մարդուն բախտակից է անասուններից մեր խեղճ ավանակը։ Մարդը նրան էլ է ծեծում անխնա։ Բայց ավանակները մարդուց բախտավոր են նրանով, որ նրա քուռակին չեն ծեծում

փոքր ժամանակ, ընդհակառակը, սիրում և փայփայում են այնքան ժամանակ, մինչև նա ծեծունակ է դառնում։

Իսկ մարդու հետ ճիշտ դրա հակառակն է պատահում։ Մարդու երեխան ծեծվում է տանը ծնողների կողմից, հետո իր ծեծը կատարելագործում է դպրոցում ուսուցչի օգնությամբ։

Ավանակը մարդուց բախտավոր է ևս մի այլ կողմով։ Ամեն երկրում կենդանիների պաշտպան ընկերություններ կան կազմված, որոնք արգելում են անասունի վրա ձեռք բարձրացնել։

Քսանչորս թվականին մեզ մոտ էլ կար, որի նախագահն էր մի տիկին՝ Մալխասյան ազգանունով. նա միջամտում էր գյուղացու գործերին՝ թույլ չտալով (գեթ) քաղաքում ծեծել իր ավանակին։ Գյուղացին էլ նախ գյուղում ծեծում էր կենդանուն, հետո քաղաք իջեցնում։

Շատ երկար քրքրելով պատմական անցյալը՝ ես չկարողացա իմանալ, թե մարդն առաջին անգամ իրե՞ն է ծեծել, թե՞ ավանակին։ Այս կարգի պրպտումներս ինձ միայն այն եզրակացությանը բերին, որ ծեծը տեղի է ունենում միայն քաղաքակիրթ մարդու և ընտանի անասունի շրջանում։ Վայրի գազանին հայտնի չէ, թե ինչ բան է այդ զարմանալի ակտը։

Եթե պետք է պարզել, թե այդ ակտը մարդու ո՞ր ֆիզիոլոգիական պահանջի բավարարումն է, ես չեմ կարող ձեզ ասել, դա ձեզ կասի բժիշկը։

Սուտ, թե սխալ՝ չգիտեմ, մի բժշկական գրքում կարդացել եմ, որ սեռական անտարբերություն ունեցող ամուսինը խնդրում է կնոջը մտրակով ծեծել իրեն՝ եռանդի գալու համար։

Եթե այս բանը ճիշտ լինի, ծեծը կշարունակվի մարդկանց մեջ հավիտյանս հավիտենից ու երբեք չի վերանա աշխարհից։

Կյանքումս ես ծեծվել եմ երկու տեղ։ Մեկը՝ դպրոցում, մյուսը՝ Ստալինի ժամանակ բանտում։

Դպրոցում ծեծվել եմ թվաբանության դասին։ Սխալվում էի, չէի իմանում, որ երկու անգամ երկու անում է չորս։ Ասում էի՝ հինգ։

Իսկ բանտում ճիշտ դրա հակառակը։ Ծեծվում էի ճշմարիտը խոսելուս համար. ասում էին՝ պետք է սխալ խոսես, որ չծեծենք։

Ինքս՝ հարազատ սովետական քաղաքացի, ոչ մի զանցանք չկատարած։ Ասել են՝ կանգնի՛ր, կանգնել եմ, ասել են՝ նստի՛ր, նստել

եմ։ Բայց ստիպում էին ինձ խոստովանել, որ ես կառավարության «նստի՛ր» հրամանին կանգնել եմ, իսկ «կանգնի՛ր» հրամանին՝ նստել։

Իսկ ես, որովհետև սուտ խոսել չեմ իմանում, չէի խոստովանում այդ բանը և ծեծվում էի։

Այս փաստն էլ գալիս է ասելու, որ ծեծը հավիտենական երևույթ պիտի դառնա։ Որովհետև մարդը կամ սուտ պիտի խոսի, կամ ճիշտ, ու երկու դեպքում էլ ծեծվի...

Ի՞նչ արած։

Ծեծվենք, տեսնենք՝ մեր վերջն ի՞նչ կլինի։

Ի՞նչ է երևակայությունը

Լավ բան է երևակայությունը։

Դուք երբևէ ղավուրմա եփե՞լ եք։ Հիմա սակավ է պատահում, բայց առաջները ամեն տուն եփում էր։

Դա այսպես են անում. միսը եփում են, հետո մեկ-մեկ վերցնում են մսի կտորները, դարսում են մի մեծ ամանի մեջ։ Միսը, մանավանդ եթե խոշոր եզի է կամ գոմեշի, ունենում է ցցված ոսկորներ, և դրանք, չնստելով իրար վրա, արանքներ են գոյացնում։ Այդ վիճակով ղավուրման չի դիմանա երկար ու կբորբոսնի։ Դրա համար էլ լրացուցիչ վերցնում են դմակը, հալում և լցնում եփած մսի վրա, արանքը ծածկվում է. կե՛ր մինչև մի տարի, ոչինչ չի լինի։

Երևակայությունն էլ այս լրացուցիչ յուղին է նման։

Մարդս աշխարհ է գալիս ամեն տեսակ ցանկություններով։ Ցանկանում է Աբիսողոմ աղայի[87] նման ագարակներ, կովեր, եզներ ունենալ։ Գեղեցիկ կանայք։ Բայց կյանքը չի տալիս այդ բոլոր բաները մարդուն, ու նրա այս չբավարարված ցանկությունները եզի ու գոմեշի խոշոր ոսկորների նման մնում են չծածկված և ենթարկվում փչացման, եթե օգնության չփութա մարդուս երևակայությունը։

Երևակայությունը լցվում է դրանց արանքները և մարդուն տալիս է միապաղաղ երջանկություն։

Ես քսան տարի բանտարկված մնացի, բայց մի օր բանտում չմնացի։ Երևակայությամբ գալիս էի տուն և զվարճանում երեք երեխաներիս հետ։

Կինս արգելում էր իրենից զատ ուրիշ կնոջ սիրել, բայց երևակայությամբ ես ուզածս կնոջը գրկում էի:

Կյանքիս մեջ որևէ մթերքի հերթ կանգնած չեմ եղել, ամեն տեսակ մթերք մառանում ես պարկերով եմ ունեցել... երևակայությամբ:

Այս մասին քիչ առաջ ես խոսում էի մի ընկերոջ հետ: Նա ասում էր.

- Ներկայումս գիտությունը այնքան է առաջ գնացել, որ հասնում է ամենավերասլաց երևակայությանն անգամ, որի համար երևակայությունն այլևս որևէ արժեք չի ներկայացնում:

Եվ որպես փաստ՝ բերում է Ժյուլ Վեռնի օրինակը, որի բոլոր ֆանտազիաներն այժմ արդեն իրականացել են:

- Երազնե՞րն էլ,- հարցնում եմ:

- Այո՛,- ասում է,- երազներն էլ:

- Ո՛չ,- ասում եմ,- ճիշտ է, մարդիկ մեծամեծ գյուտեր են անում Երկրի վրա, թռչում են դեպի Արև, Լուսին, նրանց արանքի տարածությունը չափում են միլիմետրի ճշտությամբ, բայց մարդու երազները չեն կարողանա իրական դարձնել: Այ՛, օրինակ,- ասացի,- այս գիշեր ես մի երազ եմ տեսել, որն իրականացնելու համար խոսք անգամ լինել չի կարող հավիտյանս հավիտենից: Մարդիկ ինչքան զարգանան, այն իրականացնելն այնքան կդժվարանա:

- Հետաքրքիր է, այդ ի՞նչ երազ պիտի լինի, որ հնար չլինի գործ դարձնել:

- Երազս հետևյալն է,- ասացի.- նստած սեղանիս առջև սափրվում էի, մեկ էլ լուր բերին, թե երկու ազգ՝ մինչև ատամները զինված, պատրաստվում են իրար բնաջնջել, օգնությա՛ն հասիր:

- Ի՞նչն է կռվի պատճառը, իմացա՞ր,- հարցրի լրաբերին:

- Շատ հասարակ մի պատճառ,- ասաց,- ազգերից մեկը կամենում է դեղձը կարմիր գինով ուտել, մյուսը՝ ճերմակ գինով:

- Եվ դրա համար ուզում են իրար բնաջնջե՞լ:

- Ուզում են...

Երեսիս կեսը սափրած, կեսը առանց սափրելու՝ վեր կացա, նրա ցույց տված ճանապարհով գնացի: Տեսնեմ՝ դեպի մարտի դաշտն է գնում մի երկար սայլաշարք՝ ամբողջովին բարձված դեղորայքով, բինտով, դուրերով ու սղոցներով:

- Այս բոլորն ինչի՞ համար են,- հարցնում եմ:

Դուրս է գալիս շարքից մի բժիշկ և ասում.

- Մենք կարմիր խաչ ենք, գնում ենք բանակի հետևից, որ ընկածներին թաղենք, վիրավորների ոտները կտրենք, իսկ արյունաքամներին արյուն սրսկենք:

- Իսկ չէ՞ր կարելի այնպես անել, որ կռվողները հաշտվեն, և այս բաները չլինեն:

- Ինչպե՞ս հաշտվեն, երբ տարաձայնությունը կարմիր և սպիտակ գինու մեջ է: Մարդիկ հիմա երկու նույնատեսակ գինիների համար են կռվում, տարբերության համար կարելի՞ է չկռվել:

- Անմիջապես ե՛տ դարձեք,- ասացի,- ես այս բոպեիս կերթամ և նրանց կհաշտեցնեմ:

Երբ տեղ հասա, երկու բանակները, պատրաստ կանգնած, հարձակման հրամանին էին սպասում: Կանգնեցի երկուսի մեջտեղը և որքան ուժ ունեի՝ զգա՛ստ, գոռացի:

Զորքն անշարժացավ:

- Զինաթափվե՛լ (առանց նախնական պայմանի ի՛հարկե):

Զենքերը վայր նետեցին:

- Հակառակո՛ր բանակներ, մոտեցե՛ք իրար. մե՛կ-երկո՛ւ, մե՛կ-երկո՛ւ:

Մոտեցան:

- Իրար նայեցե՛ք և ժպտացե՛ք:

Իրար նայեցին ու ժպտացին:

- Գրկեցե՛ք ու համբուրվեցե՛ք:

Գրկեցին ու համբուրվեցին:

- Հիմա էլ մեկը մյուսին թող իր տուն տանի ու հյուրասիրի:

Զինվորներն այս հրամանիս վրա սկսեցին իրար փեշից բռնած իրենց երկրները քարշ տալ: Մեկը մյուսին չէր զիջում, և քիչ էր մնում մի քաղցր պատերազմ ծագեր մեջները:

Երբ այսպես հաշտեցրած վերադառնում էի՝ երկրորդ երեսս սափրելու, ետևիցս լսեցի դհոլ-զուռնայի ձայն...

Երազս պատմեցի ու դարձա ընկերոջս:

- Համմե՛, այս երազն իրականացրո՛ւ, տեսնենք՝ ինչպե՞ս ես իրականացնում:

- Ճիշտ որ շատ դժվար է,- ասաց ընկերս՝ երկար մտածելով:

- Բա՛, ես որ ասում էի...

- Ոչ միայն դժվար, այլև անհնարին է մարդկանց իրար եղբայրներ դարձնել:

- Իսկ թշնամի հեշտ չէ՞:

- Ամեն չնչին բանի համար:

Անծրագիր երազ[88]

Այս գիշերվա իմ տեսած երազը հեչ բանի նման չէր:

Չպլանավորված, խառնիխուռն, անկապ ու համարյա անմիտ:

Ոնց որ պրոֆեսորն ամբիոն բարձրանա անկոնսպեկտ, ինչ գա բերանը, խոսի, ես էլ ինչ եկավ աչքիս առաջ, տեսա:

Հետաքրքիր բան:

Բոլոր կենդանիները եկան, աչքովս անցան՝ բացի մարդուց:

Զարմանալի գոռոզ արարած է մարդը. անգամ երազի մեջ ինքզինքը կենդանի չի համարում: Մինչդեռ կենդանական աշխարհում գիշերս ես նկատեցի տենդենց՝ ինչ-որ չափով մարդկանց նմանվելու:

Նրանք էլ ունեին իրենց քաղաքական՝ իր բնակարանային բաժնով: Իմիջիայլոց ասեմ, որ բնակարանային գործն այնտեղ էլ մխիթարական չէ: Տեսա՝ կաչաղակի բույներն այնքան նեղ, որ պոչերը դուրս էին մնում: Արագիլները կտուցները ծալում էին փորին, որ տեղավորվեն:

Մի բարդու վրա ծայրեծայր ագռավի բներ էին: Մոտ տասնհինգ հարկ, հարկերի համար կռիվ: Ծեր ագռավները չէին ցանկանում վերը ապրել, ու անվերջ կռինչ, աղաղակ:

Երբ աչքերս վերևից ցած առա, տեսնեմ՝ ոտքերիս տակ մի կրիա բարձր ձայնով վիճում է իրենց բնակբաժնի հետ: Բնակբաժինը ուզում է քանդել նրա պատյանը և քաղաքից դուրս նրան պատյան տալ, սա էլ չի համաձայնում. կենտրոն տեղ է ուզում:

Մի այլ տեղ կենգուրուի փորի տակի պարկը պլանի տակ է ընկել, ուզում են քանդել և նրան երկու սենյականոց բնակարան տալ, չի համաձայնում, ասում է. «Իմ ձագերը չեն տեղավորվի, փոքր են, ես իմ պարկն եմ ուզում»:

Բաժինն ասում է. «Մարդիկ Աբովյան փողոցի վրայի Խորասանովի տունը քանդում են, չեն ափսոսում, դու քո փորի տակի պարկն ափսոսո՞ւմ ես...»:

Մի տեղ ուղտին սենյակ էին տվել՝ առաստաղն այնքան ցած, որ չոքած էր ներս մտնում։ Ուզում էր լվի հետ փոխանակել, չիմացա՝ հաջողվեց, թե՞ ոչ։

Երևակայեցեք՝ ես այսքան տարի երազ եմ տեսնում և չէի իմացել, որ կենդանիներն էլ ունեն իրենց ՄԱԿ-ը։

Այո՛, ունեն, և շատ նման մերինին։

Նրանք էլ Նյու Յորքում եղբայրանում, դուրս գալով հոշոտում են իրար։

Նրանց ՄԱԿ-ը բոլոր ընտանի կենդանիներին ազատագրեց մարդկանց լծից և ինքնավարություն տվեց, բայց կենդանիները մերժեցին։ Ասացին՝ դա միայն տերերի փոփոխություն է, հին տերը միշտ ավելի լավ է նորից։

Կենդանիներն իրենց ժողովներում սուր կարիք են զգում թարգմանչի։ Չունեն մի կենդանի, որ մկան նման ճստա, առյուծի պես մռնչա։ Որի պատճառով էլ իրար լավ չեն հասկանում։

Ասենք՝ դա մի մեծ պակասություն չէ։

Մենք ամեն լեզվի թարգմաններ ունենք, բայց էլի իրար չենք հասկանում։

Նոր մարդ[89]

Երկնքում ման էի գալիս. Աստծու դռնից անցնելիս ասացի՝ մտնեմ, տեսնեմ՝ ի՞նչ է անում մեր բիձեն։

Տեսնեմ՝ ինչ-որ թղթեր առաջին՝ գծագրում է։

- Ա՛յ Աստված, ի՞նչ ես անում։

- Նոր մարդ եմ ստեղծելու. պրոյեկտ եմ կազմում։

- Ունեիր, կարծեմ, հնում ստեղծված մարդ, այն ի՞նչ եղավ։

- Խոսքդ Ադամի մասի՞ն է։ Չէ՛, դա հիմար բան էր։ Ես նոր մարդ պիտի ստեղծեմ։

- Այդ քո գործն է, Աստվա՛ծ, բայց եթե չես նեղանա, քեզ մի խորհուրդ տամ։

- Ի՞նչ։

- Երկրորդ ստեղծագործությանդ մարդու մարմնի ամոթալի մասերը դո՛ւրս գցիր։ Խեղճ կանայք մեծ նեղություն են քաշում՝ այն ծածկելու։

- Սխալվում ես. նրանք ոչ թե ուզում են ծածկել, այլ ուզում են շեշտը մատերիայից վերցնել, իդեայի վրա դնել: Դրա համար նրանք հագնում են նեղ շորեր և դառնում տղամարդկանց իդեալ: Իդեալ ձգտելու և չհասնելու համար: Չհասնել, որ պսակվելն ու բաժանվելը մեկ չլինի, մի փոքր երկար ապրեն միասին:

Ասաց Աստվածն ու ավելացրեց.

- Փորձեցի մի քանի կանանց այդպես ստեղծել, բայց նրանք առարկեցին, ասում էին. «Եթե այդ մասերից զրկվենք, ո՞վ մեր երեսը կնայի»:

- Լավ, այդ թողնենք,- ասացի,- իսկ ստամոքսը:

- Ստամոքսն ուզում եմ սղել:

- Ինչո՞ւ, երևի ի նկատի ունես ներկա ժամանակը, երբ երկրում ուտելիք չի՞ ճարվում: Չի ճարվում, որովհետև հիմա անցման շրջան է. չէ՞ որ կգա ժամանակ, երբ երկրում մթերքը կառատանա:

- Ստամոքսը կարելի է շարժական անել՝ հանովի ու դնովի, ինչպես պրոթեզ ատամները: Եղած տարին դնել, չեղած տարին հանել:

- Դրան էլ համաձայն եմ,- ասացի:- Իսկ գլխի՞ մասին ինչ ես մտածել:

- Դեռ ոչինչ չեմ մտածել, առայժմ մարդու վարի հարկն եմ նախագծում: Տեսնենք: Ապագայում եթե ուժս պատեց, գլուխն էլ կկառուցեմ:

- Իսկ ի՞նչ պիտի լցնես մեջը:

- Մի բան կճարեմ:

- Աստծու սիրուն,- ասացի,- ոչ մի բան մի՛ լցրու, թող պարապ մնա: Խելք կամ գիտակցություն դրիր՝ նրանք այդ կդարձնեն համոզմունք և այդ համոզմունքի համար իրար կկոտորեն:

- Պարապ թողնեմ՝ քամի կմտնի ներսը,- ասաց Աստված:

- Քամուց վնաս չի գա, թող մտնի: Քամուց կազմված համոզմունքը քամին էլ կտանի:

- Լավ, որ գլխին հասա, կմտածեմ այդ մասին:

- Իսկ մարմնի ծավա՞լը:

- Ուզում եմ մի փոքր խոշոր ստեղծել:

- Երբեք, Աստվա՛ծ, երբեք: Մեր բնակարանները կառուցված են հաշվով. բնակիչը մի սանտիմով էլ եթե ավելանա կամ ուռչի, այլևս չի կարողանա ներս մտնել,- ասացի ու ավելացրի:- Ա՜խ, Աստվա՛ծ,

եթե կարողանայիր մեզ էլ կրիայի նման պատյանով ստեղծել, մեծ բարիք գործած կլիներիր…

- Մարդուն պետք է խոհանոց, արտաքնոց, այդ ո՞ւր տեղավորեի,- ասաց Աստված։

- Եթե պատյանը մի փոքր մեծ բռնես, կտեղավորվի։ Կամ կարելի է պատյանի վրա երկրորդ հարկ կառուցել։

- Վերի կրիան ցածի ապրողին կխանգարի այն ժամանակ։

- Դու գիտես, վերջապես, ես Աստված չեմ, միայն այն եմ խնդրում, որ մարդուն կառուցես բոլոր հարմարություններով։

Ասացի ու վեր կացա գնալու։

- Ո՞ւր,- ասաց Աստված,- նստի՛ր տիեզերքն էլ կառուցենք, նոր գնա։

- Բա՛ն չունես,- ասացի,- կարագի հերթ եմ պահել։ Ես իմ կես կիլո կարագը թողնեմ, գամ քեզ համար տիեզերք կառուցեմ…

Գնացի. հերթս շա՛տ հեռու էր։ Ոչ թե մեկ, այլ երկու տիեզերք կառուցելուց հետո էլ հազիվ հերթս հասներ։ Ուստի մտածեցի՝ փոխանակ անգործ կանգնելու՝ գնամ Աստծուն օգնեմ։

Եկա, ասում եմ.

- Աստվա՛ծ, տիեզերքը թողնենք հետո, նախ սա ստեղծենք, մարդկանց կյանքը դասավորենք։

Ութսուն տարվա կյանքը քիչ է մարդկանց համար։ Շատ ես ժլատ։ Հավիտենականությունից ընդամենը ութսո՞ւն տարի։ Այսինքն՝ ընդամենը մի վայրկյան։ Այդքան ժամանակ ո՞ւմ համար ես պահում։ Ժամանակն էլ խոմ ոսկի՞ չէ, որ հավաքես դնես տակդ. բաժանի՛ր մարդկանց, թող ապրեն էլի՛։

Այս մեկ։

Երկրորդ՝ ի՞նչ կարգ է մարդու այդ կարճ կյանքը երեք տարբեր մասերի բաժանել՝ մանկություն, երիտասարդություն և ծերություն։ Եթե քո նպատակը նրանց բազմացումն է, ծնելուն պես մի կին տուր իրեն, ասա՝ գնացեք՛, բազմացե՛ք։

Դրա համար հարկավոր է, որ նա հասուն տարիքում ծնվի։ Է՛, դժվա՞ր բան է կանանց արգանդները մի փոքր մեծ բռնել։ Դու էլ խոմ բնակբաժի՞ն չես, որ այդ բանը դժվար լինի քեզ համար։

Հետո՝ ծերությունը։

Ինչի՞ համար է ծերությունը։ Ծերունիները թոշակ ստանում և

ողջ օրը զբոսայգու նստարաններին ընկած՝ ձանձրանում են: Խնայողական ռեժիմը ժամանակին չի՞ վերաբերում: Մեր գործարաններում արտադրանքների մնացուկներից ահագին բաներ են շինում և հարյուր հազարների շահ հասցնում գործարանին: Տներում ոչ մի տնտեսուհի իր մարդու վերարկուն չի գցում փողոց. քանդում, շուռ է տալիս և փոքր վերարկու կարում երեխային: Ես մի վերարկու ունեի. երեք սերունդ հագավ: Իսկ դու ծերերին որպես անպետքություն գցում ես անկելանոց, մի՞թե նրանց չի կարելի շուռ տալ և մի օգտակար բան ստանալ:

Աստված շատ երկար մտածեց, հետո ասաց.

- Գիտես ինչ, ես մտածում եմ բնավ մարդ չստեղծել և եղածների հոգին էլ առնել:

- Իմս էլ:

- Այո՛, քոնն էլ:

- Այն ժամանակ կարագի հերթը տալիս եմ քեզ, ափսոս է կորչի...

Հալած յուղ

Դեկարտը[90], խոսելով մեր խանութներում վաճառվող յուղի մասին՝ ասում էր.

- Յուղը մինչև չբերեք տուն, ձեր ձեռքով չհալեք, չուտեք, չհավատաք վաճառողի խոսքերին:

Իսկապես որ փիլիսոփա:

Այսօր մի կիլո կարագ առա, բերի հալեցի՝ կեսը մարգարին դուրս եկավ:

Միայն յուղը չի խառնված: Ամեն բան աշխարհում մարգարինի խառնուրդ է:

Եթե մեր հասկացողությունները հալենք, վայ թե կես յուղ էլ չստանանք, այլ ամբողջովին մարգարին:

Վերցնենք Վարդանանց պատերազմը:

Դուք գիտեք, որ կան պատմաբաններ, որ Վասակին ոչ միայն դավաճան չեն համարում, այլ ավելի մտածված հայրենասեր, քան ինքը Քաջ Վարդանը:

Ասում են, որ նա կեղծ հավատափոխությամբ ուզում էր խաղ

խաղալ պարսիկների գլխին ու նրանց գլխի վրա բերել։ Մինչդեռ Վարդանը սուրը քաշեց պատյանից պարսիկ փղերի դեմ ու պարտվեց։

Ուրեմն, նշանակում է, եթե լսենք այս կարծիքը և հալենք Վարդանանց պատերազմը, կեսը մարգարին դուրս կգա։

Այս ըստ ձևի։

Հիմա դառնանք խնդրի էությանը։

Հայ ազգը քրիստոնեություն ընդունեց մեր Աբգար թագավորի օրոք։

Դրանից առաջ Հայաստանը ի՞նչ կրոն էր դավանում։

Հեթանոս։ Իսկի կենտրոնական Աստծուն էլ չէր հավատում։

Հայերն Արամազդին էին երկրպագում, հույները՝ Զևսին, որոնց աթոռանիստներն էին Մասիսն ու Օլիմպոսը։

Արդ, եթե մի գեղեցիկ օր հույները, բանակը քաշած, հայերի վրա գային և պահանջեին Արամազդը թողած իրենց Զևսը պաշտել, հայերը մերժեին, և մի Վարդան վեր կենար իր հեթանոսական կրոնը պաշտպանելու համար պատերազմեր՝ պատճառ դառնալով երկուստեք արյունահեղության, դուք ա՞յդ էլ սրբազան պատերազմ կհորջորջեիք և կաստվածացնեի՞ք Արամազդ պաշտող Վարդանին, պի՞ես կգրեիք և օրական երկու անգամ կներկայացնեի՞ք ձեր թատրոններում՝ քաջալերելու համար թե՝ ժողովուրդ, եթե մեկ էլ հույները հարձակվեն մեզ վրա, դուք էլ այսպես կռվեցե՛ք և... մեռե՛ք։

Չեմ կարծում։

Իսկ ինչո՞ւ եք աստվածացնում կրակապաշտ պարսիկների դեմ դուրս եկած Վարդանին։

Մեկ կողմում՝ կրակ և Քրիստոս, մյուս կողմում՝ Արամազդ և Զևս։ Ի՞նչ տարբերություն դրանց մեջ, արդյոք չորսն էլ հավասարամեծ քամիներ չե՞ն, որոնք փոթորկում են անգետ մարդկանց ուղեղներում։

Եթե կալկուլյացիայի ենթարկեմ այս չորս աստվածներին, ինձ համար կարևորը կրակն է։ Ես առանց կրակի ձմեռը կսառչեմ, իսկ առանց Քրիստոսի, Արամազդի և Զևսի շատ լավ կապրեմ։*

Տվե՛ք ինձ մի կոպեկ, այս աստվածներին տամ ձեզ։

Ոչինչ մի՛ տաք, ձրի՛ վերցրեք։

---

* Կալկուլյացիա ***(калькуляция)*** - ռուս. հաշվարկում։

Դրանց համար ես մի հայի արյո՞ւն կթափեմ։

Հը՞։ Քրիստոս, Արամազդ, Զևս…

Դրանք էին պակաս։

Ուրեմն, լսելով Դեկարտին, ես Վարդանանց պատերազմը հալեցի։

Հիմա վերցնում եմ այդ համեմատաբար փոքր պղինձն օջախի վրայից և հաստատում եմ ավելի մեծ պղինձ՝ մի ավելի մեծ մոլորություն հալեցնելու համար։

Անհիշելի դարերից մարդիկ պաշտել են Աստծուն և նզովել սատանային։

Ասացեք, խնդրեմ, մինչև օրս ի՞նչ լավություն է արել ձեզ Աստված, ի՞նչ վատություն՝ սատանան։

Գեթ ես դրանց տաքն ու պաղը չեմ զգացել։

Եթե կուզեք՝ Աստված ավելի չար է, քան սատանան։ Աստված մարդու հոգին առնում է, իսկ սատանան դժոխք իջնողին տանջում է։ Ի՞նչ անի խեղճը. նրա պաշտոնն է այդ։

Բանտում եղած ժամանակս, երբ բարկանում էի բանտապետիս վրա, երբ չէր թողնում՝ բնական կարիքս հոգալու համար դուրս գայի, նա շատ խեղճացած ասում էր.

- Ինձ վրա ինչո՞ւ ես բարկանում, իմ պաշտոնն է այս, ինձ վերևից հրամայում են, ես էլ կատարում եմ։

Չարությունը, ըստ իս, չպիտի դառնար պաշտոն, այլապես բանտապետն ի՞նչ մեղավոր է, սատանան ի՞նչ մեղք ունի…

Իսկ Աստծու՝ մարդուն հասցրած չարիքները թվելն անգամ անհնարին է։ Այնքան շատ են։

Մի ողորմելի խնձորի համար Ադամին անմահությունից զրկելը, ջրհեղեղով մարդկությունը ջնջելը, Սոդոմ-Գոմորն այրելը, Սին անապատի ժողովուրդներին բնաջնջելը Իսրայելի միջոցով, կույսերին «ավետիք» տալը և այլն, և այլն, և այլն։ Ո՛չ թիվ կա, ո՛չ համար։

Տեսեք՝ բարի մարդուն ժողովուրդը չի անվանում «աստված», իսկ խելոք ու հնարագետ մարդուն անվանում է «սատանա»։

Երբ ասում ես այսինչ բանն այնինչ մարդը չի կարող կատարել, ասում է «Օ՛, նա կանի, նա սատանա է»։

Ես բաց անեմ Աստվածաշունչը ձեր առաջ. այդ խոշոր գրքում ցույց տվեք մի խելացի խոսք, որ ասել է Աստված իր կյանքում։

Չեք գտնի։

Իսկ վերցրեք «Դեկամերոնը». ամբողջովին ճշմարտություն է մեջը և սրամտություն։

Կարծես սատանան գրած լինի։

Աստված մեկ կողմ թողած՝ վերցնենք Ստալինին։ Տեսաք մեռնելուց առաջ ինչքան մաքուր կարագ էր, իսկ մեռնելուց հետո ինչպես ամբողջովին մարգարին դարձավ...

Հողային հարցը գերեզմանոցում

Ելնելով գյուղացիության շահերից՝ մեր կառավարությունը կոլխոզ կազմեց և հողը նրանց հանձնեց առհավետ։

Հետո էլ, նույն գյուղացիների շահից ելնելով, կոլխոզը սովխոզ դարձրեց, հողը ձեռքներից առավ և նրանց ռոճիկավոր բանվոր դարձրեց։

Այդ միշտ կարելի է, երբ այդ տուր և առը տեղի է ունենում երկու կենդանի արարածների մեջ։

Բայց հարցը բոլորովին փոխվում է, եթե այդ տուր և առի կողմերից մեկը... մեռած է։

Մեռածին հատկացրած հողը հետադարձ ճանապարհ չունի։ Նրան տրված հողը իսկական առհավետ է և բողոքարկման ենթակա չէ։

Մեռած մարդը չի կարող կոլխոզ կամ սովխոզ դառնալ, ու նրա գերեզմանն անձեռնմխելի է աշխարհիս բոլոր օրենքներով։

Ահա այս է պատճառը, որ մեռելների հողաբաժանության ժամանակ պետք է առաջնորդվել ծայրահեղ խնայողությամբ։

Ի պատիվ մեր գերեզմանոցային վարչության՝ պետք է ասեմ՝ այդ խնայողությունը տեղի է ունենում։

Թաղումն այնքան է դժվարացել որոշ գերեզմանատներում, որ մեռելները երկար ման են գալիս ու, թաղվելու տեղ չճարելով, ստիպված նորից ետ՝ կյանք են վերադառնում՝ ապրելու...

Իհարկե, մեռածների հաշվին։

Բայց այնուամենայնիվ, կան դժվարություններ, որ վարչություններն էլ չեն կարողանում հաղթահարել, և տեղի է ունենում մեծ քանակով հողերի վատնում։

Օրինակ։

Մարդիկ կան, որոնք իրենց կյանքում չորս անգամ են ամուսնացել։ Մեկ-մեկ առել՝ թաղել, առել՝ թաղել։

Այդ մարդը, թաղելով իր չորս կանանց, չորսի կողքին էլ իր համար հող է առանձնացրել։

Այժմ ենթադրենք՝ մեռավ այդ մարդը, խոմ չորս կանանց կողքին էլ չի՞ պառկի միաժամանակ։

Ո՛չ։ Մեկի կողքին կպառկի, ու մնացած երեքի կողքերը կմնան թափուր առհավետ։

Է՛, ո՞ւր է մեզ այդքան ավելորդ հող։

Ձենք էլ կարող մերժել մարդուն այդքան հող, մանավանդ, որ մարդը չորս կողմից տեղեկանքներ կարող է թափել գլխիդ առ այն, որ հիշյալն իր չորս կանանց սիրել է հավասար սիրով։

Տեսնենք, թե ինչպե՞ս հող չես տա։

Այստեղ դուք տեսնում եք, որ գերեզմանոցային վարչության դիրքը փափուկ է և վիճակն անելանելի։

Բայց աշխարհում ե՞րբ է եղել մի արգելք, որ մարդը չկարողանա հաղթահարել։

Գերեզմանոցային խոպանի դեմն առնելու համար վարչությունը շրջիկ մեռելների կարգ սահմանեց, որով չորս անգամ մեռնողներին մի տեղի վրա մնայուն պասպորտ չէր տալիս, նա պիտի անդադար շրջեր իր չորս կանանց հողերի վրա։

Եվ այս սիստեմն օգտակար էր ոչ միայն հողային տեսակետից, այլև բարոյական։

Չորս անգամ պսակվողն ի՞նչ խոսք, որ չորսին էլ հավասարապես պիտի ուխտի «հավիտյան սիրել»։ Էլ ի՞նչ «հավիտյան» կմնա, եթե նա, երեքին թողած, միայն մեկի կողքը պառկի։

Առկա կդառնա երեք «հավիտյանի» կորուստ, և մարդը կհամարվի ուխտադրուժ։

Չէ՛, թափառական մեռելների կարգ սահմանելն օգտակար բան է։

Կյանքում էլ կա նման մի դասակարգ, որ իր ողջ կյանքում, ֆուրգոն նստած, մաղ է գործում և ման գալիս։

Այս բոլորը լավ է, բայց շա՛տ լավ չէ։

Սրանք բոլորը ժամանակավոր բաներ են։

Գերեզմանոցային հարցը հիմնավորապես կլուծվի այն ժամա-

նակ միայն, երբ թաղման բյուրոն ձեռք քաշի նման տնայնագործական մեթոդներից և անցնի ինդուստրիալ թաղման:

Իսկ դա նշանակում է, որ բյուրոն քաղաքում կկառուցի կրեմատորիա, կայրի մեռածներին և, հողը նրանց ձեռքից խլելով, ամբողջովին կհանձնի կենդանի մարդկանց՝ մշակելու:

Եվ գիտեք՝ այդ ինչ բարեբախտությունների դուռ կբանա բնակչության համար:

Եթե հաշվենք գերեզմանոցում թափված արցունքները, նրանցով մի հիդրոկայան կարելի է կառուցել:

Ներկայումս մարդիկ այնքան նյութական, այնքան ժամանակ են ծախսում մեռածների վրա, ինչքան չեն ծախսում կենդանի մարդկանց վրա:

Մի մեռել իր ծախսով կարող է երկու կենդանի մարդ պահել:

Կազատվենք այն պորտաբույծներից, որոնք մուրացկանի անվան տակ ճանապարհին են նստում և մեռածի հոգուն արքայություն մաղթում:

Եվ գիտեք՝ վերջապես ես ինչ եմ ուզում:

Ուզում եմ, որ մեռելները իսկապես մեռնեն և վազ գան կենդանիներից: Շատ ընտանիքներ նրանց պատճառով կործանվում են:

Գերեզմանների վրա շինվում են ամբողջական տաճարներ, եգիպտական կատակոմբներ:*

Որ ինչ:

Սերը պիտի լինի փոխադարձ. երբ դու քեզ կոտորում ես, դիմացինդ չի պատասխանում, դրանից ինչ հաճույք:

Հա՛, եթե մեռնողն է միայն մեռնում, իսկ կենդանի մնացածը՝ անմահանում, դրան խոսք չունեմ, արժի կորուստը ողբալ: Բայց երբ դու մեռելին ճամփու ես դնում, ինքդ էլ ետևից դանդաղ քայլերով գնում ես, ինչ կարիք կա իրար անցնելու: Ուզում ես շուտ հասնել, քայլերդ արագացրո՛ւ կամ նստի՛ր մի հարբած վարորդի ավտո, և նա րոպեապես կհասցնի քո մեռած սիրելիին...

Ինչ է մահը: Մի քիմիական պրոցես, որ մեռածին հող է դարձնում...

---

* Կատակոմբ- 1. (պատմ., առավելապես՝ հոգնակի) ստորգետնյա միջանցքներ, որոնք քրիստոնեության նախնական շրջանում ծառայում էին որպես աղոթատեղի, գերեզմանոց: 2. (փխբ.) ստորգետնյա միջանցք: 3. (ճրտրպ.) ստորգետնյա ընտանեկան դամբարան:

Հեքիաթ մանուկների համար

Լինում է, չի լինում, Երևանում մի խեղճ ծերունի է լինում՝ կինը մեռած։

Այս ծերունին ուզում է մսով կերակուր ուտել և, վերցնելով պայուսակը, մտնում է մսի խանութ, գնում կանգնում այն բաժնի առջև, որի ճակատին գրված է «միս»։

Նայում, տեսնում է ինչ-որ անորոշ բաների կտորտանքներ՝ կեռերից կախված։ Մտածում է՝ սրանք ի՞նչ կարող են լինել, չի գտնում, ուստի դառնում և հարցնում է.

- Կտորտանքնե՛ր, դուք ի՞նչ բան եք։

- Մենք միս ենք,- պատասխանում են կտորտանքները։

- Ինչո՞ւ այդքան սև։

- Մսի սպիտա՞կն էլ կա,- հարցնում են նրանք։

- Ձահել ժամանակս բոլորովին սպիտակ էին, և վրաները՝ մի թիզ յուղ։

- Քանի՞ տարեկան ես, ծերո՛ւկ,- հարցրին։

- Յոթանասունվեց,- պատասխանեց ծերը։

- Դու ուզում էիր, որ կյանքն այսքան ժամանակ կանգնա՞ծ մնար, և ոչ մի առաջադիմությո՞ւն։

- Բան չեմ ասում,- ասաց ծերունին խեղճ-խեղճ։ Հետո վերցրեց մի կտոր հոտոտեց։

- Իսկ ինչո՞ւ է այսպիսի վատ հոտ գալիս,- ասաց։

Այստեղ արդեն կտորտանքները վիրավորվեցին.

- Մենք այստեղ միս ենք ծախում և ոչ օդեկոլոն։ Օդեկոլոն ես ուզում, գնա պարֆյումերիա։ Մենք միս ենք և ինչ հոտ կամենանք կարձակենք։

- Լա՛վ,- համաձայնեց ծերուկը,- բան չեմ ասում։ Դե, մի կես կիլո կշռի՛ր։

Երբ կշռում էին՝ ավելացրեց.

- Իմացեք՝ ես մսի մասնագետ չեմ, բայց կատու ունեմ, տանեմ, եթե չկերավ, կվերադարձնեմ։

Այս ասելով՝ այդ մսի նման բանը տուն տարավ։

Տուն տարավ ու նորից պայուսակը ձեռքն առավ՝ այս անգամ էլ մի սոխի նման բան ճարելու, որ մսի վրա գցի ու կերակուր եփի։

Գնաց, գնաց, մտավ մի կոլխոզի խանութ, տեսավ դախլի* վրա դրած չորացած ու դեղնած մի ինչ-որ կապ։

Սկզբում կարծեց՝ վառարանի կպչան է։ Հարցրեց.

- Ի՞նչ բան է սա։

Ասացին՝ սոխ։

- Քանի՞ տարվա քաղած սոխ է,- հարցրեց։

- Շատ թարմ, անցյալ տարի է քաղված։

- Իսկ ինչո՞ւ չեք ծախել մինչև հիմա։

- Վարչությունը թանկ գնահատեց, չառան, հիմա էլ հաճախորդը մի կիլոմետր հեռվից է անցնում դրանք չտեսնելու համար։ Բայց քեզ համար հարմար է, իսկը ծերունու սոխ է, ա՛ռ։

Լսեց ծերունին խանութպանին, առավ այս սոխի նման բանը և տարավ դրեց իր մսի նմանող բանի կողքին ու ելավ փնտրելու մի համեմի նման բան էլ ու եփեց։

Եփեց ու կերավ։

Ուտելուց հետո կամեցավ ուտել նաև մի քանի ծիրանի նման բան, որ ճաշը մարսողական լինի։

Ճարեց, այդ էլ կերավ։

Այն տարին էլ մարդահամար էր գնում Երևանում։

Երբ ծերունին պառկած հանգստանում էր, ներս մտան երկու տղա, մի աղջիկ՝ ցուցակները ձեռքներին ու հարցրին.

- Ի՞նչ ես դու։ Անո՞ւնդ։

- Մարդու նման մի բան։

- Ինչպե՞ս թե...- զարմացան վիճակագիրները։

- Այո՛, որովհետև ես կերել եմ այսօր այնպիսի ճաշ, որի մեջ ոչ մի բան իր իսկական անունով չէր կոչվում, բոլորը՝ դերանուն, ուստի և ես անուն չունեմ, դերանուն եմ։ Որովհետև գերմանական առածն ասում է. «Մարդն այն է, ինչ ուտում է...»։

- Ի՞նչ գրենք մեր ցուցակում։

- Այսինչ այնինչյան։

Մեկ աղջիկը չէր գրում, մյուսն ստիպում էր, որ գրի՝ ասելով.

- Դու առանձին բաժին բա՛ց արա և գրի՛ր նման դերանունները։ Գուցե այսպիսիներին հետագայում էլի հանդիպենք։

- Շա՛տ, շա՛տ կհանդիպեք,- մեջ մտավ ծերունին։- Եթե դրու-

* Դախլ (բրբ.) - այստեղ՝ վաճառասեղան։

թյունն այսպես շարունակվի, անունների բաժինը կփակեք և միայն դերանուններ կարձանագրեք։

- Երկիրն այսքան դերանո՞ւն ունի, ուրեմն,- ասաց վիճակագիրը։

- Այո՛, ինչ կա որ,- նորից մեջ ընկավ ծերունին,- դուք առայժմս կնշանակեք դերանուն, հետո, երբ խանութում վաճառեցին իսկական միս, կրպակում՝ իսկական սոխ, մենք էլ կերանք, դարձանք իսկական մարդ, այն ժամանակ կունենաք մեր անունները, և դուք, դերանունները վերցնելով, տեղը կդնեք մեր իսկական անունները։

Երանելի ժամանակներ

Ժամանակներից ամենաերանելին Քաջ Նազարի ժամանակն է եղել։

Մի ժամանակ, երբ մարդիկ անսահմանափակ ազատություն են վայելել ու արել են այն, ինչ իրենք են կամեցել։

Երևակայեցեք մի հասարակարգ, ուր անհատն իրավունք է ունեցել մի զարկով հազար ճանճ սպանել...

Մինչդեռ ներկայիս մի ամբողջ Հայաստանի կառավարությունն իր զորքերով ու թնդանոթներով չի կարող ոչ միայն մի ճանճ սպանել, այլ չի կարող իր քթին նստած ճանճերը քշել... առանց Մոսկվայի թույլտվության։

Չի կարող ասել. «Ճա՛նճ, ի՞նչ կլինի, գնա մի քիչ էլ Ադրբեջանի կամ Վրաստանի քթին թառիր»։

Իսկ այս երեք կառավարությունները Մոսկվային են միացել «ինքնակամ», ուզած ժամանակ անջատվելու պայմանով...

Ասենք, քթի վրայից ճանճ քշելը մի փոքր պատասխանատու բան է, և պետք է Մոսկվան էլ համաձայնի, բայց ախր ճանճից ավելի փոքր հարցերում էլ է Մոսկվան միջամտում՝ Հայաստանին անելիք չթողնելով։

Վերցնենք մի այսպիսի շատ չնչին հարց։

Սրանից հիսուն տարի առաջ թուրքերը բնաջնջեցին հայության ուղիղ կեսը։ Հայաստանի կառավարությունն այս տարի կամեցավ հիշել իր կորցրած կեսին, հիշել, ափսոսալ ու մի քիչ էլ, եթե կարելի է, լաց լինել։

Այս մասին դիմեց Մոսկվա, բայց պատասխան չստանալով՝

կարծեց՝ լռությունը համաձայնության նշան է, ու սկսեց լաց լինել։

Հայաստանի արցունքները տեսավ Մոսկվան ու զայրացած հրամայեց.

- Վշտի արցունքներն անմիջապես ծիծաղի արցունքի վերածել և ուրախանալ, որ թուրքերը հայության կեսը կոտորել են... Ինչպես կարելի է թուրքի խաթրին դիպչել հիմա, երբ մենք բանակցության մեջ ենք մտել և ուզում ենք իրար հետ բարեկամանալ։

Այս լսելով՝ Հայաստանի կառավարությունը վախից արցունքի մի մասը կուլ տվեց, մյուս մասն էլ երջանկության արցունքի վերածելով՝ փառք տվեց թուրքերին և ուժ մաղթեց նրա բազուկներին՝ մնացած հայությունն էլ կոտորելու համար...

Այս բանին ի տես՝ շատերն այն կարծիքը հայտնեցին, որ սոցիալիստական պետությանը վայել չէ քաջալերել ոճրագործությունը, բայց նրանք չէին իմանում, որ սոցիալիզմն ինքը մի ոճրագործություն է և չի կարող չհովանավորել աշխարհի բոլոր ոճրագործներին...

Որովհետև մեռնողի վրա լաց լինել Աստվածն անգամ չի արգելում։

Ա՜խ Աստված... որքա՜ն բարեգութ ես։ Դու հրամայեցիր Աբրահամին տանել սար իր միամոր որդի Իսահակին և զոհել քեզ, իսկ վերջում թույլ չտվեցիր[91], բայց Հայաստանի կառավարությունը սա քառասուն տարի է Մոսկվայի հրամանով զոհում է իր միամոր որդիներին, ու Մոսկվան վերջին րոպեին նրա ձեռքը չի բռնում, և նա իր ամենաընտիր զավակների արյունն է թափում ու ողջակիզում սոցիալիզմի աստծուն։

Եթե «կառավարություն» ասելով պետք է հասկանալ մի մարդ, որ, կառքին նստած, սանձը ձեռքին, կառավարում է այն, ապա Հայաստանի կառավարությունն անսանձ նստել է կառքին, իսկ Մոսկվան, որի ձեռքին է սանձը, տանում է կառքն իր ուզած ուղղությունով՝ չվախենալով անգամ նրա հիմնահատակ կործանումից։

Եվ սրանից հետո էլ Հայաստանի կառավարությունն ինքզինքը համարում է պայմանագրով Մոսկվային միացած և ուզած ժամանակ կարող է նրանից անջատվել ու անկախանալ...

Բայց, էհե՛, Հայաստանի՛ կառավարություն, չմտածես անկախության մասին. դու այնքան բարձր ես կախված Մոսկվայից, որ ընկար՝ մեծ կտորն ականջդ կմնա...

Մեծ հիմարություն

Անգետ մարդն ինչքա՜ն բան է կորցնում…

Ես կորցրի ամբողջ իմ յոթանասունվեց տարվա կյանքը ու մի օր չապրեցի։

Մեռնելուց հետո դժոխք գնալու սարսափից ես իմ ողջ կյանքն անցկացրի աղոթքներով, ապաշխարհությամբ, տարին ամբողջ պաս պահելով, կես տարին ծոմ պահելով։

Կատարելով Աստծու բոլոր պատվիրանները՝ մի մարդ չսպանեցի, չգողացա, չշնացա։

Ոչ մի բանս չեմ ափսոսում, ինչքան չշնանալս։

Ա՜խ, ինչպիսի գեղեցկուհիներ ձեռքիցս բաց թողի՝ վախենալով այդ… այդ… այդ գարշելի դժոխքից։

Հիմա՛ր, ասա, գործի՛ր աշխարհիս բոլոր մեղքերը, վայելի՛ր աշխարհը մինչև նրա վերջին բարիքը և վերջում՝ մեռնելիս, դժոխքին արքայություն անվանի՛ր և մտի՛ր՝ այս անգամ երկնային բարիքները վայելելու։

Նայի՛ր Սովետական Հայաստանին։

Ի՞նչ էր ներկայացնում այն մի երկու տարի առաջ։ Քաղաքի խանութները դատարկ, գյուղերն ամայի. ո՛չ հաց, ո՛չ պտուղ, ո՛չ բանջար, ո՛չ կաթ, ո՛չ ձու, ո՛չ միս։

Եթե Հայաստանի կառավարությունն էլ վախենար սովամահությունից, ինչպես ես դժոխքից, նա էլ ինձ նման պիտի ո՛չ ուտեր, ո՛չ խմեր, ո՛չ հագներ ու ոչ մի բան չվայելեր, այլ համայնական հողը բաժաներ անհատներին, որ իրապես մշակեին, և երկիրը լցվեր իրական բարիքներով, որ իրենք էլ, ժողովուրդն էլ իրապես կշտանային։

Բայց այդպես չարեց։ Նա հողը հանձնեց վատ մշակող կոլխոզներին, ստացավ քիչ արդյունք, այդ քիչ արդյունքն էլ վերցրեց, կեսն ինքը շռայլեց, կեսն էլ ուղարկեց Մոսկվա, որ Խրուշչովը դրանցով ման գա ամբողջ աշխարհում և սոցիալիզմ պրոպագանդի։ Իսկ ժողովուրդը մնաց զուրկ ու քաղցած։

Ի՞նչ աներ. իր ավարից ժողովրդի՞ն էլ մաս հաներ։ Ո՛չ, այդ անհնար էր։ Կառավարությունը ձեռք էր զարկել աշխարհում առաջին սոցիալիստական պետություն կառուցելու դժվարին գործին։ Դժվարություն, որը շատ ուտելով միայն կարելի է հաղթահարել։

Իսկ ժողովո՞ւրդը։

Նրան էլ պե՞տք էր լիացնել, թե՞ ոչ։

Պետք էր։

Եվ կառավարությունը ժողովրդին կշտացնելու համար սկսեց բոլոր գյուղերի ու ավանների անունները փոխել քաղցր անուններով։

Այն գյուղը, որ իր օրում մեղրի երես չէր տեսել, կոչեց «Մեղրաձոր», այն, որ կաթը չգիտեր՝ ինչ բան է, «Կաթնաղբյուր», փշատի երեսը չտեսածին՝ «Փշատավան», պտուղ չտեսածին՝ «Պտղաշատ», և այսպես «Բամբակաշատ», «Խաղողաշեն», «Տանձուտ», «Խնձորուտ» և այլն։

Եվ որովհետև գյուղացուն ազատություն էլ էր պետք, այդ պատճառով մնացած գյուղերը վերանվանեց «Ազատաշեն», «Ազատավան», «Ազատակերտ, «Ազատաբար»։

Եվ որպեսզի այդ անվանափոխ գյուղերը մութի մեջ չմնան, մյուսներին էլ անվանեց «Լուսակերտ», «Լուսավան», «Արևաշող»։

Այսպիսով մեր ողջ երկիրը ստացավ լիություն, ազատություն և լուսավորություն...

Երբ կա ժողովրդին երջանկացնելու այսպիսի հեշտ եղանակ, դժվարության ինչո՞ւ դիմել։

Ամբողջ աշխարհը Սովետական Միությանը բանտ է համարում։

Ի՞նչ է, այդ հերքելու համար վեր կենա ազատությո՞ւն տա ժողովրդին։

Ի՞նչ կարիք դրան։ «Բանտ» անվանեն օտարները՝ «աշխարհի ամենաազատ երկիրը» կհայտարարի մեր կառավարությունը, երբ «դժոխք» անվանեն՝ «դրախտ» կկոչի և վերջ։

Անվանական երջանկությունից էլ հեշտ բա՞ն։

Ես էի հիմար, որ «դժոխքն» «արքայություն» չկոչեցի ու անբախտացա։

Կոնսերվա*

Այն օրվանից, երբ «Պտուղբանջարառը» ստանձնեց Երևանի ազգաբնակչությանը թարմ պտուղ և բանջար մատակարարել մատչելի գներով, Երևանը ո՛չ թարմ պտուղի երես տեսավ, ո՛չ բանջարի։

* Կոնսերվա ***(консервы)*** - ռուս. պահածո։

Եվ որովհետև մասնավոր շուկայում այնքան թանկ էին վաճառվում այդ կենսամթերքները, քաղաքի բնակիչները չէին կարող գնել այնքան, որ բավարարեր նրանց պահանջը թե՛ ամառ, թե՛ ձմեռ:

Այդ պատճառով էլ հրաժարվեցին ամառ ժամանակ այդ մթերքները գործածելուց, քիչ քանակությամբ գնածը սկսեցին կոնսերվի վերածել միայն ձմեռվա համար:

Եթե սրա վրա ավելացնենք նաև այն, որ ժողովուրդն իր օրում թարմ մսի երես չէր տեսնում, նշանակում է՝ նա ուտում էր միայն հին միս և հին բանջար:

Ահա այս է պատճառը, որ ամառները երևանցիք բռնվում են կոնսերվա շինելու տենդով: Ինչ ձեռներնին ընկնում է, անմիջապես բանկան են լցնում և «կռիշկայով» փակում:*

Ստալինի ժամանակ մարդիկ էլ չէին համարձակվում փողոցում երևալ: Անմիջապես Չեկան բռնում և «կռիշկայով» փակում էր...

Հիմա, երբ այնուամենայնիվ մի որևիցե թարմ բան տեսնում եք քաղաքում, այդ նրանից է, որ «կռիշկա» չի ճարվում. այլապես պետական հիմնարկներն անգամ չէին ազատվի ժողովրդի ձեռքից:

Հիմնարկներից առայժմս կոնսերվացված է միայն Գերագույն սովետը:

Բայց չկարծեք, թե կոնսերվա պատրաստելու սովորությունը միայն երևանցուն է հատուկ:

Դրա տեխնիկան ծանոթ է եղել Աստծուն դեռ Ադամ-Եվայի ժամանակ:

Այն օրը, երբ այդ առաջին մարդկանց անմահությունից զրկեց, վախ առաջացավ իր սրտում: Ասաց. «Մարդը մահկանացու դառնալուց հետո չլինի՞ հանկարծ իսպառ չքանա աշխարհիս երեսից և հետագայում ջնջվի իմ ստեղծագործության հիշատակը»: Չէ՞ որ նա մարդ ստեղծելու վրա մեծ ջանք էր գործ դրել:

Եվ որպես էքսպոնատներ՝ սկսեց իր ստեղծած մարդկանցից կոնսերվներ պատրաստել: Բայց առանց «կռիշկայի»՝ ավելի կատարելագործված:

«Կռիշկան» այնուամենայնիվ օդ է բաց թողնում հաճախ իր մեջ, և բանկայի պարունակությունը թթվում, անգործածելի էր դառնում:

Աստված լավայով քարացնում էր ամբողջական քաղաքներ:

* Կռիշկա ***(крышка)*** - ռուս. խուփ, կափարիչ:

Մի սարից հրաբուխ էր ժայթքեցնում, և լավան գալիս ծածկում էր ողջ ազգաբնակչությանը և վերջ: Հազարավոր տարիներ քարացած մնում էր. ո՛չ օդ անցնել, ո՛չ թթվել:

Հետագայում, սակայն, պարզվեց, որ լավան էլ այն չէ: Լավան, ճիշտ է, քարացնում է մարդկանց, բայց այդ քարացումը բացարձակ չէ ու հավիտենական չէ:

Վեզուվը երբ բռնկվեց, իր լավայի տակն առավ իտալական երկու խոշոր քաղաքներ[92]:

Բնակչությունը վայրկենաբար քարացավ՝ կիսատ խոսքը բերանում:

Բայց երկու հազար տարի հետո, երբ գիտնականները պեղում էին Պոմպեյի ավերակները, էլի որոշ չափով բնակչության մեջ սկսեց շարժում նկատվել: Լավ չէին քարացել: Այն բնակիչները, որոնք շատ կարևոր բան ասելիս քարացել էին՝ առանց իրենց ասելիքը վերջացնելու, պեղումից հետո վերջացրին:

Պեղումների ժամանակ խանութների առջև կանգնած հսկայական կարագի հերթեր հայտնաբերվեցին: Այդ մարդիկ կես կիլո կարագ ստանալու համար երկու հազար տարի հերթի էին կանգնել:

Ի՞նչ եք կարծում՝ այդքան ժամանակ հերթի կանգնած մարդը, երբ տեսնի՝ մեկը խախտում է հերթը և առաջ անցնելով՝ կարագ է առնում, կարո՞ղ է ինքզինքը զսպել և չգոռալ, թեկուզ երկու հազար տարի հետո՝ հերթի՛, հերթի՛ կանգնիր…

Նման պայմաններում ամեն տեսակ քարացումը անզոր է լռեցնել հաճախորդին:

Սա կարագ է, ուրիշ բան չէ: Մակարոն չէ, վերմիշել չէ, բրինձ չէ, ալյուր չէ…

Ելնելով վերոհիշյալ փաստերից՝ ուրեմն պետք է ասենք, որ լավան էլ պիտանի չէ մարդկանց կատարյալ քարացնելու համար:

Այստեղ պատահեց մի զարմանալի բան:

Այն, ինչ չկարողացավ անել «ամենակարող» Աստվածը, արեց Լենինը: Մի մահկանացու մարդ:

Լենինը ցույց տվեց, որ կատարյալ քարացման համար ոչ թե պիտի ժայթքեցնել Վեզուվը և նրա լավայով ծածկել երկիրը, այլ պետք է Հոկտեմբերյան հեղափոխություն ժայթքեցնել և երկիրը ծածկել սոցիալիզմով:

Լենինն իր օրինակով ցույց տվեց մարդկությանը, որ ոչ թե

լավն, այլ սոցիալիզմն է քարացնում մարդկանց՝ խլելով նրանից ամեն տեսակ նախաձեռնության հնարավորություն։

Ո՛չ մտածել, ո՛չ գործել։

Լենինը Ռուսաստանի երկու հարյուր միլիոն մարդկանց գլուխները բացեց, «մարքս-լենինյան ուսմունք» լցրեց ու «կռիշկայով» պինդ փակեց։

Ու գիտնականը ոչ թե երկու հազար տարի հետո, այլ եթե տասը հազար տարի հետո էլ պեղի սովետական քաղաքացու գլուխը, միշտ պիտի գտնի «մարքսիզմ-լենինիզմը» այնտեղ քարացած։

Ոչ մի նոր միտք։

Ա՛յ թե Երևանի «Պտուղբանջարառը» ինչի առաջ բերեց կանգնեցրեց մտածող, թարմ մտքերով ապրող մարդկությանը։

Ա՛յ մարդ, ասա, Հայաստանը այն երկիրն էր, որ մի ժամանակ ամենայն առատությամբ իր բնակիչներին մատակարարում էր թարմ պտուղ, բանջար և միս, այն էլ խիստ մատչելի գներով։ Հիմա ինչ պատահեց, որ այս բոլորը մեկանց վերացավ։

Մեր գլուխները Լենինը կոնսերվացրեց, գլխին այլևս սնունդ չի հարկավոր, դու էլ, ո՛վ «Պտուղբանջարառ», մեր ստամոքսը կոնսերվացրու, որ ազատվենք նրա պահանջից, պրծնենք...

Խնայողությամբ գործածել սուրը

Ռուսաստանը քանի համառի սոցիալիստական մնալ, երբեք չի կշտանա։

Սոցիալիզմը սովյալիզմ ասել է։

Ինչո՞ւ, որովհետև անհատական շահագրգռվածություն չունի ռուս գյուղացին և չի աշխատում։

Ցանելիս ցորենի մի բուռը գողանում, երկրորդ բուռը նոր ցանում է։ Իսկ այն ժամանակ, երբ համայնավար չէր և ցանում էր միայն իր համար, ոչ միայն եղածը չէր կլանում, այլև իր՝ տարիներ առաջ կուլ տված ցորենը նորից բերանը բերում և ցանում էր։

Սերմացուն կուտվի։ Չէ՞ որ մեկին տասն է տալիս։

Եվ սովետական երկիրն իր քառասունհինգ սոցիալիստական տարիներում ոչ մի օր կուշտ փորով հաց չկերավ։

Անցյալ տարի այն օրին հասավ, որ ձեռները պարզած՝ Ամե-

րիկայից հաց խնդրեց։

Այն Ամերիկայից, որին կուշտ ժամանակ հայհոյում է, սոված ժամանակ ձեռք է պարզում։

Եվ ամեն անգամ հաց խնդրելիս մի սուտ է ասում։

Իսկ անցյալ տարի երկու սուտ միանգամից ասաց։ Մեկն այն, որ տարին երաշտ է, մեկ էլ այն, որ հողն ուժասպառ է։

Ո՛վ Սովետական Միություն, դու գիտես, որ ամեն տարի հաց պիտի ներմուծես, և ամեն տարի քեզ հարկավոր կլինի մի սուտ ասել. դու ո՞ւր ես մի տարում հանկարծ երկու սուտ միանգամից ասում։ Տարիներին թիվ չկա, ժամանակը հավերժական է, իսկ ստերը մատների վրա կարելի է համրել։

Սովը քանի՞ պատճառ ունի։

Մեկն այն, որ երաշտ է լինում, հետո այն, որ կարկուտն է խփում, երրորդն էլ այն, որ մորեխն է ուտում։

Ուրի՞շ։

Ընդամենը այս երեք ստերով դու ինչպե՞ս ամենայն տարի, մինչև քո կյանքի վերջը հաց պիտի խնդրես Ամերիկայից...

Դու մինչև անգամ մի ամբողջական սուտ չպիտի խոսես։ Ստերը պիտի կես-կես, մաս-մաս անես և նրանց մի մասով հաց խնդրես։

Իսկ դու հանկարծ՝ մի տարում երկու սուտ...

Ձե՞ս վախենում սոված մնալուց։

Հիմնարկի ծառայողը, որ գիտի թե ամենայն օր տրամվայով իր հիմնարկն է գնալու, որպեսզի ամեն անգամ ստիպված չլինի տոմս վերցնելու, միանգամից մի ամսվա աբոնեմենտ է վերցնում և ազատվում ամեն օր մանրադրամ ունենալու հոգսից։

Լսո՞ւմ ես, Սովետակա՛ն Միություն, դու էլ պիտի մշտական մի ստի աղբյուր ճարես և դրանով հաց ձեռք բերես ամենայն տարի։

Մի աբոնեմենտ, որ հավիտյան քեզ հաց տա։

Նման ստի աղբյուրներ կան մեր առօրյա կյանքում։

Օրինակ՝ պատմում են, որ մի գյուղում ապրելիս է եղել մի շատ անբարոյական մարդ։ Ինքն ամուսնացած՝ անթիվ սիրուհիներ է պահելիս լինում և ամեն գիշեր մեկին այցելում։

Բնական է, որ ամեն գիշեր ուշ տուն գալիս կինը հարցնի.

- Ո՞ւր էիր։

Մարդը մի օր «քեռու տանն» է լինում, երկրորդ օրը՝ «հորեղ-

բոր», երրորդը՝ «քավորի», ու որովհետև նրա բարեկամները վերջիվերջո անթիվ չեն, մարդու ստերը վերջանում են, և կնոջ հետագա հարցումներին պատասխանելիս լեզուն կարկամում է։

«Պետք է մնայուն աբոնեմենտ ճարել»,- ասում է գյուղացին և վերցնելով մի բեռ ցորեն՝ տանում է գցում ջաղաց ու ջաղացպանին պատվիրում բնավ չաղալ։

Ու այդ օրվանից նա «ջաղացում է, ու նոբաթ* չկա, որ աղա»։

Այնքան է կրկնվում այս սուտը, որ հարց ու պատասխանն ավտոմատ են դառնում, և կինը այլևս չի հարցնում «ո՞ւր էիր»...

Արդ տեսնո՞ւմ ես, Սովետակա՛ն Ռուսաստան, հասարակ գյուղացին այսպիսի ստերով իր գործը տեսնում է, իսկ դու քո ճշմարտությունը թաքցնում ես և չես ասում։

Երբ հաց խնդրելիս Ամերիկան քեզ հարցնի

- Ռուսաստանը մի ժամանակ ողջ աշխարհին հաց էր տալից, ի՞նչ պատահեց, որ հանկարծ սովի մատնվեց։

Դու ազատ կերպով կարող ես ասել.

- Որովհետև այնտեղ սոցիալիզմ մտավ։

Եվ այնուհետև Ամերիկան այլևս քեզ ոչ մի հարց չի տա, ամենայն տարի ավտոմատ կերպով քո հացը կտա։

Զարմանում եմ։ Մարդ ի՞նչ այսպիսի ճշմարտությունը թաքցնի և զանազան շինծու ստերով հաց վաստակի...

Մանավանդ, որ սոցիալիզմն այնքան էլ ամոթալի բան չէ։

Ի՞նչ անենք, փորձանք է, կպատահի։

Մարդն էլ կտուրում անզգույշ քայլելիս կարող է գլխիվայր գետին տապալվել։ Վեր կենանք մեղադրենք մարդուն...

Անոտ ոտանավորներ

Հող, հող, հող...

Ամեն ինչ տվող, ամեն ինչ առնող։

Բայց այնքան համեստ, որ թույլ ես տալիս, որ տրորեն քեզ։

Իսկ կա մի Աստված՝ երկնքում նստած, որը ոչ մի բան է տալիս մեզ, ոչ մի բան առնում, բայց պահանջում է պաշտել իրեն։

Ես քե՛զ եմ պաշտում։

* Նոբաթ (բրբ.) - հերթ, կարգ։

Դու քո գրկում խնամքով պահում ես իմ տասը սիրելիներին, որոնց յուրաքանչյուրի հետ սրտով կամեցել եմ մեռնել։

Ու մինչև մեռնելս տասն անգամ թաղվել եմ արդեն ու սպասում եմ, որ շատ շուտով իմ մեկ տասնորդական մարմինս էլ կխառնես իմ հոգուս մասնիկների հետ և ինձ կամբողջացնես։

Դու ինձ տանում ես առանց որևէ պայմանի. չես ասում՝ որ փառք տաս ինձ, կտանեմ, որ փառք չտաս, չեմ տանի։

Իմ անշահախնդիր աստված։

Իմ կյանքի ընթացքում լիացնում ես ինձ ամեն տեսակ բարիքներով, բայց ես այդ բոլորի համար չեմ փառաբանում քեզ։ Որովհետև դու լցնում ես ինձ ամեն ինչով, բայց հետո էլ հետ ես վերցնում այդ բոլորը... ամանն անգամ չթողնելով ինձ։

Ուզում եմ թշնամի ասել քեզ, բայց դրանից ինչ կշահեմ ես։ Չէ՞ որ վերջիվերջո քո տան դռնովը ներս պիտի մտնեմ և քեզ հետ... ձուլվեմ։

Դու պիտի մկրտես ինձ և նոր անունով կանչես։

Ոչ թե Արամ, այլ հող...

Հող, անգամ ոչ մեծատառ։

Նախապես քեզ հետ բարեկամանալու մտքով շատ անգամ եմ մտովի մեռնում ու հողանում։

Եվ այնքան բնական, որ ամենամեծ դերասանն էլ կարող էր նախանձել։

Հո՛ղ, դու մաքուր ես նրանով, որ Լենինն ու Ստալինը քո ծոցում չեն թաղված։

Աշխարհի երկու պիղծ մարդկանց եթե ծոցումդ ընդունեիր, ինքդ էլ կպղծվեիր։

Նրանց լեշը չորացրել ու պահել են չոր մարդիկ, որ իրենք էլ նրանց պես չորանան, մտքի անապատներ դառնան։

Որ նրանց պես մարդ կոտորեն,

Ոճրագործ դառնան։

Սև ծով...

Իրոք որ սև։

Ամառներն աշխարհի ամենամեծ ոճրագործները գալիս են քո ափերին հանգստանալու։

Հարավային ափումդ կազդուրվելու են գալիս թուրք սուլթաններ, որ ուժ ստանան և քրիստոնյաներին ջարդեն, հյուսիսային ափերումդ կառուցված են ռուս բարբարոսների ամառանոցները, ուր մի ժամանակ հանգստացել են ռուսական ցարերը, իսկ այժմ սոցիալիզմի «առաջնորդները»՝ մեկը մյուսից դաժան, մեկը մյուսից արյունարբու։

Չէ՞ որ գոյություն ունի նաև Սպիտակ ծով։

Ինչո՞ւ սպիտակը թողած՝ Սև ծով դարձար մարդկության համար, Սև՛ ծով։

Ինչո՞ւ փոխանակ հորդելու, տակով անելու այդ բռնակալները՝ կազդուրում, ուժ ես տալիս նրանց անարգ բազուկներին։

Որ շատ մարդ սպանեն։

Ա՜խ, եթե իմ ձեռքը տային երկու մեծ դույլ, ես մի ժամում Սև ծովը Միջերկրական կդատարկեի, կցամաքեցնեի, կդարձնեի ավազոտ անապատ, որ նրա խորշակով շնչահեղձ լինեին ափերին թառած մարդակերները, և աշխարհը ազատ շունչ քաշեր։

Սև ծով, գիտե՞ս ինչ աղետներ բերիր մարդկության գլխին և գիտե՞ս, թե ինչ ամենամեծ աղետը պիտի բերես նույն մարդկության գլխին։

Գիտե՞ս, որ շատ շուտով ատոմային ռումբով կործանվելու է աշխարհը։

Եվ դրա հեղինակը լինելու է Խրուշչովը։

Այն Խրուշչովը, որ, չարությունն գործելուց հոգնած, շաբաթը մեկ գալիս է քո ափերին հանգստանալու։

Սև ծով, անալիզի պիտի ուղարկեմ քո ջուրը՝ տեսնելու համար՝ ա՞ղ է նրա պարունակությունը, թե՞ մարդկային արցունք...

Քնելիս չեմ ուզում փակել աչքերս, որ երազ չտեսնեմ։

Երազում ես ո՛չ իմ գլխի տերն եմ, ո՛չ սրտի։

Այն գաղափարները, որոնցից սարսափում եմ արթուն ժամանակս, երազումս ազատ կերպով մուտք են գործում գլուխս և ինձ տանջում։

Դառնում եմ անդուռ, անպատուհան մի պանդոկ՝ մեծ ճանապարհի եզրին կառուցված, ուր հանգստանալու են գալիս աշխարհի

բոլոր այն գաղափարները, որոնց հետ արթուն ժամանակս ոչ մի առնչություն չեմ ունեցել և անգամ գարշել եմ։

Այս գիշեր ես բոլշևիկ էի։

Ես, որ կյանքիս մեջ հավ մորթած չունեմ, մի գիշերվա մեջ պիտի գնդակահարեի հարյուր հազար անմեղ մարդկանց։

Կեսը գնդակահարելիս տեսա՝ փամփուշտս վերջացավ։ Իսկ ես պիտի գնդակահարեի ամբողջին, որ հրամանը կատարած լինեի։

Մարդ ուղարկեցի՝ փամփուշտ բերելու։

Բայց երկրորդ անգամ բերված փամփուշտներից ոչ մեկը չգործածեցի։

Մնացյալ մահապարտները կանգնած տեղը անշնչացել էին... սարսափից։

Ի՞նչ են ուտում աստվածները[93]

Չհետաքրքրվել աստվածների ներքին կյանքով՝ մեր կողմից մեծ ապերախտություն է։

Նրանք մեզ ստեղծում, կերակրում, երջանիկ կյանք են պարգևում, ամեն ինչ լի, առատ, բա մի անգամ չհարցնե՞նք. «Իսկ դո՞ւ ինչ ես ուտում, Աստվա՛ծ, դու էլ քեզ մի բան պահո՞ւմ ես, թե՞ ամեն ինչ միայն մեզ ես տալիս»։

Ինչպիսի՜ առատությամբ է պտուղ ու բանջար լցրել շուկան...

Փառքդ շատ, Աստվա՛ծ։

Երևանցին առաջներն իր հույսը «Պտուղբանջարառի» վրա էր դրել, բայց հիմա բացառապես իր Աստծուն և Սև շուկային է ապավինել։ Ճիշտ է, մի փոքր թանկ է այնտեղ, ամեն մարդ չի կարող առնել, բայց տեսնելով էլ է մարդ լիանում։

Հա՛, իսկ ի՞նչ են ուտում աստվածները։ Մեզ նման ամենակե՞ր են արդյոք։

Գիտենք, որ աշխարհ ստեղծելիս ամբողջ յոթ օր ոչինչ չկերավ Իսրայելի Աստված Եհովան։

Միայն հետո, երբ արտաքսել էր դրախտից Ադամ-Եվային, հանկարծ անոթություն զգաց և հասկացրեց նրանց որդիներին՝ Կայենին և Աբելին, մի բան տալ ուտելու։

Աբելը՝ որպես խաշնարած, մի ոչխար զոհեց Աստծուն, իսկ Կա-

յենը, որ երկրագործ էր, ցորենի հաց[94]։

Աստված Աբելի զոհն ընդունեց, Կայենինը՝ ոչ։

Այստեղից ես իմացա, որ մեր Աստվածը միայն միս է ուտում։ Իսկ հետագային, երբ մեր Աստվածն Աբրահամին ասաց. «Բեր քո մինուճար որդին զոհիր ինձ», ես լրիվ հասկացա, որ մեր Աստվածը մսակեր է։

Աստվածների մեջ միայն Եգիպտոսի Ապիս ցուլն էր խոտակեր։ Հազիվ թե այն ժամանակ խտացած կեր տային իրենց աստծուն եգիպտացիք։ Իսկ զուտ խոտով կամ դարմանով պահված աստված երկար չի ապրում։ Այդ էր պատճառը, որ անժառանգ սատկեց Ապիսը։ Անժառանգ, որովհետև գոյություն չուներ կով աստված, որ նրանից ժառանգ ունենար։

Իսրայելացիք շինեցին մի ոսկե հորթ, այն էլ Մովսեսը մանրեց և ժողովրդին խմցրեց[95]։ Եթե Մովսեսը թողներ հորթին մեծանալու, կով կդառնար, կամուսնանար Ապիսի հետ, և դա շատ կողմերով օգտակար կլիներ երկու ազգերին էլ հավասարապես։

Գիտեք անշուշտ, որ իսրայելացիք երբ Եգիպտոսից դուրս եկան, այս երկու ազգերը թշնամացան իրար հետ։ Թե չէ ամուսնացնելով իրենց աստվածներին՝ խնամիներ կդառնային իրար։

Մողոք աստվածը կերակրվում էր բացառապես երեխաների մսով։ Մայրերն իրենց գրկի երեխաներին նետում էին նրա՝ կրակով շիկացած բազուկների մեջ և խորովում՝ դարձնելով աստվածային շաշլիկ։*

Վերոհիշյալ աստվածներն էլի ոչինչ, թե՛ մսից, թե՛ խոտից մի բան ուտում էին, բայց Արամազդն ու Զևսը համարյա սովից մեռան...

*Այս երկու աստվածներն ապրում էին մեկը Մասիսի, մյուսը Օլիմպոսի վրա։ Հայերը և հույները դրանց իրենց ընտանիքներով հանել էին սարի գագաթները ու ոչ մի «պերեդաչի»** չէին տանում։*

Ասենք, ուզենային էլ չէին կարող տանել. դրանք անմատչելի սարեր էին։ Գերմանացի պրոֆեսոր Պարրոտը[96] մինչև բարձրացավ Մասիսը, հոգին դուրս եկավ։

Զդիմացան։ Մեռան այս աստվածները։ Աստված իրենց հոգին լուսավորի։

---

* Շաշլիկ ***(шашлык)*** - ռուս. խորոված։

** Պերեդաչի ***(передача)*** - ռուս. հանձնվող պարեն՝ իրեր (հիվանդներին)։

Միայն չգիտեմ, թե աստվածները մեռնելիս արքայություն գնո՞ւմ են, թե՞ ոչ: Եթե գնում են, ո՞ր աստծու արքայությունը: Ենթարկվո՞ւմ են «վերջին դատաստանի», գնո՞ւմ են նաև դժոխք:

Եվ վերջապես ինձ շատ հետաքրքրում է այն հարցը, թե աստվածների մեջ էլ սատանաներ պատահո՞ւմ են:

Մազալու կլիներ, եթե բոլոր աստվածները սատանաներից բաղկացած լինեին:

Դա անհավանական չէ, գիտե՞ք:

Մարդուն այսքան դարերով խաբողը պետք է անպայման սատանա լինի:

Բարին մարդ չի խաբի...

Կամակոր կնոջ սանձահարումը

Չգիտեմ՝ ի՞նչ է մտել սա իմ կնոջ գլուխը: Գիշեր-ցերեկ ստիպում է, որ ես անպայման մի հիմնարկի դիրեկտոր դառնամ:

Ասում է՝ ես առանց դիրեկտորի չեմ կարող ապրել: Իր գիշեր-ցերեկվա երազը: Հենց որ քնից զարթնում է, ասում է՝ գիշերը երազումս դու դիրեկտոր էիր...

Ասում եմ.

- Ախր, ա՛յ աղջիկ, ես դիրեկտոր դառնալ չեմ կարող, բնավորությանս հակառակ է: Ես չեմ կարող անհամբեր բազմություն խռնել կաբինետիս դռանն իրար կոտորելիս, իսկ ինքս նստեմ, իմ քարտուղարուհու հետ սիլի-բիլի անեմ:

Այս մեկ:

Հետո, որ դիրեկտոր դարձա, կունենամ անթիվ քարտուղարուհիներ. ես ինչքա՞ն սեր ունենամ կուտակած, որ դրանց սիրելուց հետո քեզ էլ փայ մնա...

- Թող չմնա, թող չմնա, իրիկուններն անսեր արի տուն, միայն դիրեկտոր դարձիր:

- Լա՛վ, բայց ինձ ո՞վ դիրեկտոր կդարձնի: Խեղճ ու կրակ մարդ: Դիրեկտորը պետք է ապլոմբ ունենա, զորթուբորթ** անի, սրա վրա*

---

* Ապլոմբ (aplomb) - ֆր. ինքնավստահություն և համարձակություն շարժուձևերի, խոսակցության և գործողությունների մեջ:

** Զորթուբորթ (բրբ.) - հորդուբորդ անելը, հոխորտալը:

գոռա, նրա վրա գոռա, մի փոքր ավելի բարձրահասակ լինի, փորը՝ կլոր, կուրծքը՝ դուրս... Իսկ ես.

- Անո՛ւշ ջան, հոգի՛ ջան, ինչ է ուզածդ, ասա՛, տամ: Արի ես կանգնեմ, դու նստիր և այլն:

Կարո՞ղ է ինձ նման մարդն ամբողջ ութ ժամ աթոռին նստել ու մի ողջ բազմություն իր դռանը կանգնեցնել: Ո՛չ:

Բայց դե, ես էլ միաժամանակ չեմ կարող թողնել, որ կինս դիրեկտորի կարոտից մեռնի:

Ինչ անեմ, ստիպված էի նախապատրաստվել դիրեկտորության:

Սկզբից ասեմ, որ ես բոլոր մարդկանց նման սովորական մարդ եմ և սիրում եմ մեր հիմնարկում աշխատող կանանցից մեկին: Իմ մասշտաբով, իհարկե: Բայց իմ սերը չեմ հայտնում, մեջս եմ պահում և գիշեր-ցերեկ աշխատում եմ գլխիցս հանել այդ հանցավոր միտքը:

Տեր Աստված, ասում եմ, ինչ անեմ, որ այս աղջկան չսիրեմ:

Չէի ուզում սիրել նախ՝ նրա համար, որ ես պարկեշտ մարդ եմ, երկրորդ էլ՝ չկարծեք, թե իրոք կինս այդ հարցում մատների արանքով պիտի նայեր: Օ՜, նա սոսկալի խանդոտ է: Նա սուտ է ասում, որ այդ հարցում լիբերալ է: Նա այդ ասում է, որ ես դիրեկտոր դառնամ:

Ուրեմն այսպես, երբ ամեն օր ուժ էի գործ դնում, որ չսիրեմ այդ քարտուղարուհուն, մի օր էլ հանկարծ չկարողացա չսիրել և... սիրեցի և օգտվելով կնոջս բացակայությունից՝ նրան տուն հրավիրեցի: Դեռ հինգ րոպե չէր անցել, դեռ չէինք սկսել բացատրվել, թե ես ինչքան եմ սիրում նրան, նա ինչքան է սիրում ինձ, մեկ էլ պատուհանից նայելով՝ տեսա, որ կինս գալիս է...

- Կորա՛նք, Լիզա՛,- ասացի,- դու իմ սենյակից դուրս չգաս, գնամ տեսնեմ՝ ինչ եմ անում:

Դուրս եկա նախասենյակ, շատ սիրալիր բացեցի դուռը և ուրախ դեմք առնելով՝ ասացի.

- Արի՛, այ՛ կնիկ, վերջապես իղձդ կատարվեց, դիրեկտոր եմ դառնում:

- Ինչ ես ասում,- պոռաց կինս ու ետ- ետ գնաց հուզմունքից:

- Այո՛, բայց պետք է նախապատրաստվել դրա համար. հետս բերել եմ քարտուղարուհուն, որ տանը առաջին փորձը կատարենք:

Այս ասելով՝ նրան տարա ծանոթացրի «քարտուղարուհուս» հետ և անցանք փորձի:

Դերերը բաժանեցինք այսպես։

Ուրեմն, ես դիրեկտորն եմ, նստած եմ կաբինետում։ Լիզան իմ քարտուղարուհին է՝ նստած նախասենյակում, իսկ կինս՝ անհամբեր հաճախորդ, որ ամեն անգամ դուռը բաց է անում և ուզում է ներս գալ, բայց քարտուղարուհին արգելում է՝ ասելով.

- Չի կարելի, ներսում խորհրդակցություն կա։

Ես նաև այս ներկայացման ռեժիսորն էի։ Կարգադրեցի Լիզային, որ հավաքի սենյակում թափված բոլոր թղթի կտորները, հին լրագրերը և որպես «գործ»՝ դրանք ներս բերի կաբինետ և ներսից փակի դուռը։

Հետո դարձա կնոջս, ասացի.

- Դու՝ որպես հաճախորդ, կգաս, դուռս կթակես, իսկ ես դուրս կգամ ու կբարկանամ վրադ, խոմ չե՞ս վիրավորվի։

- Կարող ես անգամ հարվածել, միայն դիրեկտոր դարձիր,- ասաց նա։

- Շատ աղեկ,- ասացի, ու սկսեցինք։

Ես փակվեցի իմ կաբինետում, կինս մոտեցավ Լիզային, թույլտվություն խնդրեց ինձ մոտ գալու, Լիզան արգելեց՝ ասելով, որ նիստ ունեմ, հետո առնելով առջևը դարսված մակուլատուրան՝ կաբինետս մտավ և ետևից դուռը փակեց։

Մենք գրկախառնվեցինք այնպես, որ հավիտյանս իրարից չբաժանվենք։ Բայց հետո հանկարծ հիշեցի, որ մենք «դիրեկտոր ու քարտուղար» ենք և ութ ժամից ավելի իրավունք չունենք իրար սիրելու՝ առանց աշխատանքային «գրաֆիկը» խախտելու։

Ու հասավ այն ժամանակը, երբ մենք մոռացանք աշխարհն էլ, ժամն ու ժամանակն էլ, մեզ էլ։

Դռան թակոցը միայն հիշեցրեց ինձ, որ մենք երկրի վրա ենք ապրում, այդ պատճառով դուռը բաց արի ու որպես նրա սիրելի դիրեկտոր՝ էլ անարգանք չթողի, որ չթափեցի կնոջս գլխին։

Ու մտքիս մեջ ասացի. «Ա՛ռ քեզ դիրեկտոր»։

Հետո դուռը փակեցի և կիսատ թողած պապիրոսի նման վերավառեցի մեր սերը, ու նորից ինքնամոռացում...

Ինչքան ժամանակ անցավ, շատն ու քիչը Աստված գիտի, միայն լսեցի կնոջս ձայնը, որ ասում էր դռան ետևից.

- Ութ ժամը վաղուց անցել է, տուն գնալու ժամանակն է։

- Ավտոն պատրաստ է,- հարցրի ներսից։

- Ո՛չ,- ասաց կինս դրսից։

- Մինչև ավտո չբերես, ես տուն չեմ գա, ես դիրեկտոր եմ։

- Ա՛յ մարդ, դե, բավական է, ինչ ես աղջիկն առել, մտել ներս,- զայրանում է կինս դրսից։

- Նախ և առաջ ես մարդ չեմ, այլ դիրեկտոր, երկրորդն էլ քովինս աղջիկ չէ, այլ քարտուղարուհի։

Կինս սպասեց, սպասեց, նորից գոռաց.

- Ա՛յ մարդ, քեզ ասում եմ՝ դո՛ւրս արի...

- Դուրս կգամ իբրև հասարակ ծառայող, իմացի՛ր,- սպառնացի ես։

Տեսա՝ կինս բանալու ծակից նայում է, իսկ մենք՝ գրկախառն...

- Ջհանդամը*, բա՛ց արա, բա՛ց արա,- գոռում է կինս և կատաղությունից հարվածում դռանը,- չուզեցի ո՛չ քո դիրեկտորությունը, ո՛չ էլ էդ աղջկա քարտուղարությունը։

Մենք վերջին անգամ համբուրվում ենք, և ես բաց եմ անում դուռը։

Կինս բարկությունից դողում էր։

- Հը՞,- ասում եմ,- կնի՛կ, հիմա ի՞նչ ես ասում, ուզո՞ւմ ես՝ դիրեկտոր դառնամ։

- Դիրեկտոր ուզում եմ, բայց այս խայտառակությունը չեմ ուզում։

- Առանց խայտառակության դիրեկտոր կլինի՞,- ասացի ու «կոտրած տաշտակը» դրի առաջը...

Երկու չարիք, որի փոքրագույնը գոյություն չունի

Մարդն աշխարհ է գալիս ֆիզիկական և մտավոր բագաժով**։

Բայց չի իմանում, թե ինչ շարժումների է ընդունակ իր մարմինն ու իր միտքը։

Այդ որոշում է ավտոբուսը։

Եթե դու պիտի նստես այն ավտոբուսը, որ սլանալու է քանդված ճանապարհով՝ չծրագրես մարմնիդ շարժումները, նա ինքը քեզ

* Ջհանդամ, ջհաննամ (ǧehennem) - արաբ. դժոխք։

** Բագաժ (bagage) - ֆր. 1. (երկթ.) ուղեբեռ, 2. (փխբ.) գիտելիքի պաշար։

կասի, թե ինչ պիտի անես։

Ասենք, դու նստած ես մի տիկնոջ դիմաց և շատ կուզեիր, որ որևէ առիթով քո գլուխը կպչեր նրա գլխին…

Ի՞նչ նշանակություն ունի քո ուզելը։

Մեկ էլ տեսար ավտոբուսը մի քարի առավ, և քո գլուխը տարավ զարկեց մի խեղճ բետոնագործի գլխի։

Դու նստել ես ավտոբուս և չես ուզում, որ ցնցումների ժամանակ գլուխդ կպչի առաստաղին։ Եթե իրոք ուզում ես այդ, ապա ուրեմն համապատասխան միջոցներ պիտի ձեռք առնես։ Իսկ դրա միջոցը մեկն է՝ նստել երկու երկարահասակ մարդկանց արանքը, որ ավտոն վեր թռչելիս նրանցն առաստաղին կպչի, իսկ քոնը, մնալով նրանց արանքում, զերծ մնա ուղեղի ցնցումից։

Դու մարմնամարզությանդ ժամանակ ի՞նչ շարժումներ ես անում։ Հեչ բան։ Կա՛մ քայլում ես առաջ երկու քայլ ու գալիս տեղդ կանգնում, կա՛մ մեջքդ ծռում աջ ու ձախ։ Եթե քո բոլոր արածդ շարժումներն ի մի գումարենք, չի անցնի տասից։

Դու նեղություն քաշիր վատ ճանապարհով սլացող ավտոբուս նստել, տես, թե ինչպիսի՞ չնախատեսված շարժումների կենթարկվես։

Դու դառնում ես կալի ցորեն՝ լցված շարժվող մաղի մեջ, և այնքան ես մաղվում, որ այլևս քեզանից պիտանացու ցորեն չի մնում, ամբողջովին դառնում ես… հավի կուտ։

Վատ է, շատ վատ է ճամփորդել քանդված ճանապարհներով, դա ուղղակի չարիք է։ Իսկ մի՞թե բարիք է հարթ-հավասար ճամփով երթևեկելը։

Ո՛չ։ Ինչպես «ամեն չարիք իր բարիքն ունի», այնպես էլ «ամեն բարիք իր չարիքն ունի»։

Նման ճանապարհով գնալիս էլ… քնում ես։

Ու այստեղ էլ քո մտածված խոսելու նախաձեռնությունն է քեզանից վերանում։

Քնած մարդն իր երազում ում ասես, որ չի տեսնում, ինչ ասես, որ չի խոսում։

Կան ավտոբուսագետներ, որոնք հաստատում են ավտոբուսի ազդեցությունը մարդկանց աշխարհայացքի վրա։

Եվ դա ճիշտ է։ Բազմաթիվ մարդիկ ավտոբուս են մտնում իրենց

աշխարհայացքով, դուրս են գալիս ուրիշի դավանանքով:

Այդքան գլուխների բախումներն ինչպե՞ս կարող են փոխազդեցություն չունենալ: Չէ՞ որ ազգերը կուլտուրական են դառնում իրար հետ շփվելով:

Թվեմ հարթ ճանապարհով ընթացող ավտոբուսի մի քանի այլ անհարմարություն:

Ժողովուրդը քնած տեղն անվերջ պտտվում է քաղաքում՝ առանց իր գնալիք տեղն իջնելու, և նյութական վնաս հասցնում պետությանը:

Ավտոբուսը երկաթուղի չէ, որ գիշերը գնալիս կոնդուկտորը բղավի.

- Ստանցիա* Սադախլո՛:

Կամ Սանահի՛ն:

Մնում է ուղևորի խղճին: Իջնի՝ իջնի, գնա՝ գնա:

Իսկ այն ավտոբուսներում, ուր գրված է. «Ավտոբուսն աշխատում է առանց տոմսավաճառի», այդ արդեն տնաքանդություն է:

Արթուն մարդը տոմս չի առնում, քնածը կառնի՞:

Արդ, եկեք մտածենք:

Եթե չարիք են և՛ հարթ ճանապարհը, և՛ խոչ ու խութերով լցվածը, հապա մարդը ի՞նչ ճանապարհով պիտի ճամփորդի:

Ինքնաթիռո՞վ:

Աստված չանի: Դրա վտանգն ավելի է մեծ:

Մեծ բարձրությամբ գնացող ուղևորը, երբ քնեց, այլևս չի զարթնի: Նա հավիտյանս իր աչքերը կփակի այլևս չբանալու համար:

Երկինք թռչող մարդն ինչքա՞ն հիմար պիտի լինի, որ ուզենա վերադառնալ երկիր, մեռնի ու ոտքով բարձրանա երկինք...

Սահարա

Ես մանկությունիցս կամեցել եմ տեսնել Սահարա անապատը: Բայց մեզ՝ սովետական քաղաքացիներիս, թույլ չի տրվում արտասահման գնալ: Գնացի անցագրային բաժին, ասացին.

- Նեղություն մի՛ քաշիր Սահարա գնալու, մենք Սահարան կբերենք քեզ մոտ:

* Ստանցիա *(станция)* - ռուս. կայարան:

Այն ժամանակ ես չհասկացա այս խոսքի իմաստը: Այսօր միայն, երբ մեր լայնածավալ կոոպերատիվ խանութները դատարկ եմ տեսնում, նոր եմ հասկանում, որ իրոք, մեզ մոտ էլ սահարաները չեն պակասում:

Ու որոշեցի մի ամսվա ուտելիք շալակած մտնել համար 8 խանութը: Սահարաներից այդ ամենամեծ անապատը:

Բաժանմունքներ՝ անթիվ, անհամար: Ամեն բաժնում՝ մի քնած աղջիկ, որ երազում հաճախորդ է տեսնում:

Մտնում եմ շաքարի բաժին, արթնացնում եմ աղջկան և ասում.

- Մի կիլոգրամ շաքա՛ր տուր:

- Ուշացել ես: Շաքարը գնաց:

- Ո՞ւր գնաց, որ վազեմ, կհասնեմ ետևից:

- Հազիվ թե, նա երեք ամսվա ճանապարհ է կտրել...

Թակում եմ յուղբաժնի դուռը՝ մարգարինն է գլուխը դուրս հանում.

- Ի՞նչ ես ուզում:

- Կարագ:

- Ես նրա տեղակալն եմ, ասելիքդ կարող ես ինձ ուղղել:

- Ուտելիք դիրեկտորները տեղակալներ չեն ունենում, որքան գիտեմ, ու երբեք սխտորն ինքզինքը չի ծախում սոխի տեղ:

Այնպես, ինչպես ընտրված հարսնացուները չեն ունենում իրենց տեղակալները:

Շարունակում եմ ճանապարհս և հասնում եմ ջրի բաժին՝ հոգնած ու ծարավից պապակած:

- Մի բաժակ լիմոնա՛դ...

- Շշերը ռեմոնտի են կանգնած,- պատասխանում է ջուրաղջիկը:*

- Որպեսզի բաժինն ավելի բարեկարգ լինի, պետք է ջրավաճառն էլ ռեմոնտի կանգնի,- ասում եմ ու քայլում, քայլում եմ անդադար այդ անեզրական անապատում մի օազիս ճարելու, ու չեմ գտնում:

Սոված, ծարավ գնում եմ, ուզում եմ բացել կոնակիս կապած պաշարը և ուտել, բայց նայելով խանութի երկարությանը՝ վախենում եմ: «Վայ թե չբավականացնի պաշարս»,- ասում եմ ինքս ինձ:

Մոտենում եմ այն սեղանին, ուր մի ժամանակ պոնչիկ էր ծախվում և ասում.

---

* Ռեմոնտ ***(ремонт)*** - ռուս. նորոգում, վերանորոգում:

- Պոնչիկ ունե՞ս:

- Ես նոր մարդ եմ խանութում և չգիտեմ այստեղ երբևիցե պոնչիկ եղե՞լ է: Սպասեք մի ծեր վաճառողի հարցնեմ:

- Բաս դուք ի՞նչ եք վաճառում,- հարցնում եմ:

- Ապագայում գալիք պոնչիկներ:

- Երևակայում եմ, թե որքա՞ն թռիչք պիտի ունենա ձեր ֆանտազիան: Հայկական Ժյուլ Վեռն,- ասում եմ և ավելացնում,- իսկ ձեզ մոտ չկա՞ն պատմական վաճառողներ:

- Առայժմս ոչ, բայց այսպես որ գնալու լինի, մեր ողջ առուտուրը... պատմության գիրկը կանցնի:

- Պատմություն վաճառելը շատ շահավետ բան է: Ժամանակակից կյանքից գրողները հազարներ են աշխատում, իսկ պատմական վեպ գրողները՝ միլիոններ: Այնտեղ հողն ավելի արգավանդ է, և պտուղը դուրս է գալիս կերի ճակնդեղի մեծությամբ...

Շարունակելով քայլել՝ պատահմամբ հանդիպում եմ մի կապ դեղնած, չորացած սոխի՝ պառկած փոշեպատ դարակում:

- Ա՛յ սոխ, այստեղ ի՞նչ ես շինում,- հարցնում եմ:

Պատասխանում է.

- Իմ ամբողջ կյանքն անց եմ կացրել մի կոլխոզի խանութում, երբ հաճախորդ չմոտեցավ ինձ, բերեցին գցեցին այս անկելանոցը, որ մեռնեմ:

- Իսկ կոլխոզի խանութում ինչո՞ւ չվաճառվեցիր:

- Վաճառողը թանկ ասաց՝ չառան, ինքն էլ հաստատուն կամքի տեր, երեսուն կոպեկից չիջավ, և մնացի, չորացա...

- Ոչինչ, մենակ չես. կոլխոզի բոլոր բանջարներն այդպես են մեռնում:

Երբ շարժվում էի առաջ, հեռվում մսի նմանվող ինչ-որ կախված կտորտանքներ նկատեցի:

Երբ մոտեցա, մսագործն այլայլվեց և կամենում էր մարմնով ծածկել կախված «մսերը»:

- Ի՞նչ պատահեց քեզ,- հարցնում եմ:

- Ես ոճրագործ եմ:

- Ինչո՞ւ:

- Այսքան նիհար անասուն դանակի տակ առնելն ամենաանխիղճ բանն է աշխարհում:

Սրանով ես անցել էի արդեն Սահարայի մեկ ծայրից մյուսը: Բայց նախքան հետ դառնալն, ասացի խոսեմ այս հիմնարկի պետի հետ, որ դիրեկտոր էր կոչվում:

Անապատի դիրեկտոր:

- Ձեր խանութում,- ասում եմ,- մի ժամանակ մի լավ սովորություն կար: Դուք հեռվում դնում էիք յուղ, շաքար, պանիր, միս, սոխ, սխտոր, մի խոսքով՝ աշխարհի բոլոր բարիքները, և այդ բոլորը հայելիների միջոցով անդրադարձնում էիք ձեր խանութում, ինչո՞ւ հիմա չկա, չէ՞ որ դա ձեր կոոպերատիվին կտար կատարյալ անապատի կերպարանք, պատկերելով նաև նրա... միրաժը:

Աշխարհայացք

Մարդիկ կան, որ աշխարհ գալիս, դեռ աչքը չբացած, աշխարհայացք են կազմում, իսկ ես, որ հասակ առած մարդ եմ, աշխարհի չարն ու բարին տեսած, դեռ աշխարհայացք չունեմ:

Ուղղակի ամաչում եմ ինքս ինձանից:

Բայց դրանում ես չեմ մեղավոր:

Դեռ երիտասարդ ժամանակս բնակարանային բաժինն ապրելու համար հատկացրեց ինձ մի խորունկ նկուղ՝ տասներկու աստիճան գետնի տակ: Լույսը ստանում էինք դեպի հյուսիս բացվող մի նեղլիկ պատուհանից: Արև չունեինք, ունեինք արևի անդրադարձում: Երբ արևը խփում էր մեր դիմացի հարևանի պատուհանին, լույսն անդրադառնում էր մեր լուսածակին, և մենք զանազանում էինք ցերեկը գիշերից:

Ասացեք՝ ինչի՞ նման կլիներ այն մարդու աշխարհայացքը, որն աշխարհին է նայում նրա տակից կամ հետևից:

Փողոցում գնալիս ես տեսնում եմ կանանց, որոնք հետևից ուղղակի սքանչելի են, բայց երբ անցնում ես առաջ և երեսին նայում, իսկույն «ատբոյ» ես տալիս...*

Այնպես որ, միևնույն է, եթե ես աշխարհին տակից նայելով աշխարհայացք կազմեի, գիտեմ, որ վերջում երեսին նայելիս «ատբոյ» պիտի տայի:

Այդ պատճառով էլ չկազմեցի:

* Ատբոյ ***(отбой)*** - ռուս. 1. ավարտանշան (հեռախոսազանգի):

Ես ամուսնացա մի այրի կնոջ հետ, որը չբեր էր։ Առա, որ երեխա չունենամ։

Բայց ես չէի իմանում, որ նկուղիս խոնավության ու տաքության մեջ անհնար է չաճել ու չբազմանալ։ Մահճակալիս տակի կարտոֆիլներն աճել, և ծիլերը պարկի բերանից դուրս էին ընձյուղել։

Կարելի՞ բան է այս նպաստավոր պայմաններում չաճել։

Ո՛չ։

Եվ կինս տարին մի զավակ էր պարգևում ինձ, որոնք, ցավոք պիտի նկատեմ, դուրս էին գալիս չափազանց երկար, ինչպես ձորում տնկած բարդիները։

Դրա պատճառը բոլորս էլ գիտենք։ Բույսն էլ, մարդն էլ դեպի լույսն են երկարում, ու որովհետև մեր միակ պատուհանը շատ էր բարձր, տղաներս դուրս էին գալիս երկարահասակ, մի փոքր դեպի հյուսիս ծռված։

Չեմ հիշում որքան ժամանակ էի ապրել այս «բնակարանում», երբ մի օր սաստիկ քամի բարձրացավ Երևանում և, բնակարանային բաժնի պատուհանից ներս մտնելով, խառնեց սեղանի վրայի դիմումները, և իմս ընկավ երեսը։

Տեսա՝ ինձ բնակարան տվեցին։

Նկատի ունենալով իմ խոնավության աստիճանը՝ որպեսզի մի լավ չորանամ, բաժինն ինձ հատկացրեց մի բնակարան յոթերորդ հարկում։

Վերելակ չկար, ինքս էլ՝ ուժասպառ ծերուկ։ Դե արի բարձրացիր...

Հավատացնում եմ ձեզ, որ Խաչատուր Աբովյանն ու պրոֆեսոր Պարրոտը Մասիսը բարձրանալիս այն նեղությունը չքաշեցին, ինչքան ես իմ յոթ հարկանի սենյակը բարձրանալիս։

Օգտագործելով այդ լեռնագնացների փորձը՝ ես էլ առաջին օրը բարձրացա ու քնեցի առաջին հարկում։

Երկրորդ օրը մի կերպ ինձ գցեցի երկրորդ հարկ։ Երրորդ օրը՝ երրորդ հարկ, և այսպես, յոթ օրում հասա իմ բնակարանին ու երկար շունչ քաշեցի։

Իմ բնակարանի բարձրությունից երևում էր ամբողջ աշխարհը, և ես ժամանակը հասած համարեցի նայել աշխարհին ու աշխարհայացք կազմել։

Առաջին նայվածքին աշխարհն այնքան խառնիճաղանճ երևաց, որ սիրտս խառնեց։

- Ո՛չ,- ասացի,- այսպիսի աշխարհում մարդ երջանիկ չի կարող ապրել, ես մարդու համար նոր աշխարհ պիտի կառուցեմ։

Ու հրամայեցի մարդկանց չապրել, տեղներից չշարժվել, մինչև գործս վերջացնեմ։

Այստեղ մարդիկ սկսեցին բողոքել։

Մեկն ասում էր.

- Գառ ենք մորթել, քեֆ պիտի անենք, չենք կարող սպասել։

Մյուսն ասում էր.

- Մեծ դժվարությամբ ձեռք եմ բերել սիրածս աղջկան ու պիտի պսակվեմ, ես էլ չեմ կարող համբերել։

Մի երրորդն ասում էր.

- Ես դահիճ եմ, կախաղանը պատրաստել եմ, որ հանցագործին կախեմ։ Ամեն մի ուշացած րոպեն ինձ վրա հաշվում են և պիտի մեղադրեն ինձ, թե ինչո՞ւ թույլ տվեցիր, որ մեղավորը մի րոպե ավելի ապրի...

Ես դրանց պատասխանեցի.

- Կոոպերատիվ խանութը նույնպիսի անհրաժեշտ հիմնարկ է, դուք նրանով եք ապրում։ Ինչո՞ւ երբ այդ խանութը վեց ամսով ռեմոնտի է կանգնում, չեք խոսում, իսկ ես, որ ուզում եմ աշխարհը կանգնեցնել ռեմոնտի, խոսում եք։ Եվ այդ էլ այն ժամանակ, երբ վերանորոգված խանութում պիտի շարվեն էլի հին կոնսերվի բանկաներ, իսկ իմ շինած աշխարհում՝ աշխարհի բոլոր բարիքները։

Սրա վրա մարդիկ դադարեցին ապրելուց և անհամբեր սպասում էին իմ շինելիք նոր աշխարհին։

Ես որքան էլ աշխատեի ինքնուրույն լինել իմ ստեղծագործության մեջ, էլի որոշ բաներում պետք է հետևեի Աստծուն՝ ստեղծելով մարդ ու կնոջ։

Առանց մարդ ու կնոջ աշխարհում չկա և չի կարող լինել երջանկություն։

Աստված երկրի առաջին բնակիչներին ստեղծեց առանձին-առանձին, նախ՝ Ադամին, ապա՝ Եվային։ Այդ պատճառով էլ տեղի ունեցան անհաշիվ ամուսնալուծություններ։

Ես ստեղծեցի մարդ ու կնոջը միանգամից և թևանցուկ, որպես-

զի ապագայում հնարավոր չլիներ բաժանվել:

Դրախտի հարցում էլ ես ստիպված էի հետևելու Աստծու օրինակին, որովհետև առանց պտղատու այգու նույնպես հնարավոր չէ, որ մարդը երջանիկ լինի: Միայն արգելված ոչ մի ծառ չտնկեցի այնտեղ:

Եթե թևանցուկ ամուսինները ման չգան այգում և քաղելով ամեն տեսակ պտուղներ՝ իրար չհրամցնեն, էլ ինչ լազաթ* կյանքից:

Ես իմ դրախտի մեկ անկյունում շինեցի մի գոմ ու լցրեցի ամեն տեսակ կթան անասուններով, որ կթեն ու լիանան:

Չէ՞ որ մարդը, բույսից զատ, սիրում է նաև կենդանուն: Մարդն ու ձին, մարդն ու շունը նույնպես կապվում են իրար անքակտելի սիրով, ու մեկի մահվան դեպքում անմոռանալի կսկիծ առաջացնում իրենց սրտերում:

Պատահել է կյանքում, որ մարդը բաժանվել է իր սիրած կնոջից, բայց չի պատահել, որ բաժանվի իր սիրած շնից կամ ձիուց: Էլ չեմ խոսում սիրասուն գառ և ուլերի մասին, որոնց տեսնելիս չի կարող չբռնել և չհամբուրել:

Գոմի կողքին էլ մի մառան շինեցի, որպեսզի մարդն իր մթերքն այնտեղ պահի: Իսկ մթերքն էլ մկներից պաշտպանելու համար կատու ստեղծեցի:

Ու որպեսզի մարդիկ գիշերները գողերից չվախենան, մի շուն էլ դռանը կապեցի:

Եվ համարյա դրանով էլ գործս վերջացրած համարեցի:

Երբ մարդն ունի սիրած կին, պտղատու պարտեզ, կթան անասուն, արդեն երջանիկ է:

Երբ այսպես նոր աշխարհը կառուցել էի և պատրաստվում էի բնակեցնել այն, մեկ էլ հանկարծ պատահեց այնպիսի մի բան, որ հիմնահատակ կործանեց հին ու նոր աշխարհները միասին:

Նայում եմ իմ բարձր բնակարանից և ինչ տեսնեմ: Մարդիկ սպանված գալիս են երկրից, որովհետև իմ բնակարանը երկնքի ու երկրի ուղիղ մեջտեղում է, նստում են ինձ մոտ, մի փոքր շունչ քաշում և շարունակում են իրենց ճանապարհը դեպի երկինք:

Հարցնում եմ դրանցից մեկին.

- Ինչ է պատահել:

* Լազաթ (հոգն. lezāt) - արաբ. համ, հաճույք, բավականություն:

- Ստալինը նոր աշխարհ է կառուցում,- ասում է։
- Մարդկանց սպանելով։
- Ո՛չ։ Նաև բանտարկելով և աքսորելով։
- Մարդ ու կնոջ թևանցուկ չի՞ ստեղծել։
- Ո՛չ։ Մարդ ու կին իրար երես չեն տեսնում։ Մեկին աքսորում է արևելյան Սիբիր, մյուսին՝ արևմտյան։
- Աքսորվածներին էլ է սպանում,- հարցնում եմ։
- Նրանց միայն, որոնք տանից դուրս գալիս մոռացել են իրենց գլուխը տանը թողնել։ Իսկ աքսորականը, որ գլուխը հետն է տանում, իր կամքից անկախ պիտի մտածի։ Իսկ մտածելը խստիվ արգելված է այնտեղ։ «Իմ շինած աշխարհում,- ասում է Ստալինը,- ես միայն պիտի մտածեմ, իսկ դուք միայն պիտի կրկնեք իմ մտքերը և փառք տաք ինձ»։
- Ջարմանք բան։ Ամեն մարդու համար առանձին պարտեզ և կենդանիներ ստեղծել է, որ կապվի նրանց հետ, սիրի, փայփայի ու ինքզինքը երջանիկ զգա։
- Ո՛չ։ Բոլոր պարտեզները, բոլոր կենդանիները հավաքել լցրել է կոլխոզ, կոլխոզն էլ հանձնել, պարտեզը՝ մի պահակի, իսկ անասունը՝ մի նախրչու։ Եվ որովհետև դրանց շատ քիչ աշխատանք է տալիս կոլխոզը, այդ պատճառով պահակը, բարկացած «քո տիրու հերն այսպես անեմ» ասելով, ջարդում է ծառի ճյուղերը, իսկ նախրչին, «քո տիրու մերն այսպես անեմ» ասելով, ծեծում է անասուններին անխնա, նրանց պոչերը թոցնում։ Այսպիսով՝ մարդը, զրկվելով պարտեզից և անասունից, նրանց «ա՛խ»-ն է քաշում, իսկ պարտեզն ու անասունը, խնամողից զրկված, մարդու «ա՛խ»-ն են քաշում։
- Սա եղավ նոր աշխա՞րհ։ Իսկ Ստալինն իր աշխարհն ստեղծելիս ունեցե՞լ է աշխարհայացք,- հարցնում եմ։
- Այո՛, ինչպե՞ս չէ,- պատասխանում է սպանվածը։
- Հետաքրքիր է՝ ի՞նչ աչքով է նայել աշխարհին, որ այսպիսի աշխարհայացք է կազմել։ Աշխարհի տակի՞ց է նայել, թե՞ վերից։
- Վերից, վերից, Կրեմլի աշտարակից։
- Խոմ ակնոց չունի՞ աչքերին։
- Ունի։
- Ի՞նչ գույնի է։
- Սև։

- Ա՛, հասկացա: Ակնոց գործածողն իրավունք չպիտի ունենա աշխարհ կառուցել: Որովհետև աշխարհում գոյություն ունեն ծիածանից առած յոթ գույներ, և շինվում են յոթ գույնի ակնոցներ: Սև ակնոցով ստեղծված աշխարհն ուրիշ կլինի, սպիտակը՝ ուրիշ, կանաչը՝ ուրիշ, կապույտը՝ ուրիշ: Որի՞ մեջ ապրես: Կամ եթե մեկը երկու աչքով կույր է, աշխարհ չի տեսել, բայց աշխարհայացք է կազմում... Ավելի լավ չէ՞, որ մարդը բոլորովին աշխարհայացք չունենա, նոր աշխարհ չկառուցի և ապրի Աստծու ստեղծած աշխարհում՝ հաշտվելով նրա որոշ թերությունների հետ:

- Դու խորհրդածիր՝ ես շարունակեմ ճանապարհս,- ասաց սպանվածը ու տեղից վեր կացավ:

- Ինչո՞ւ ես շտապում, լավ հանգստացիր,- ասացի:

- Չէ, վախենում եմ՝ ետևիցս հասնի ու երկրորդ անգամ սպանի ինձ...

Սպանվածի հեռանալուց հետո նստեցի ու երկար մտածեցի:

Ասում եմ՝ աշխարհում ապրում է երկու միլիարդ մարդ, եթե ամեն մեկը սրանցից իր աշխարհայացքն ունենա և դրա հիման վրա աշխարհ կառուցի, էլ այնտեղ աշխա՞րհ կմնա:

Եվ հրաժարվեցի իմ՝ այնքան դժվարությամբ ձեռք բերած աշխարհայացքից:

Բանտարկյալի հուշերից

Ես ձերբակալվեցի 1935 թվի նոյեմբերի 25-ին և դատապարտվեցի 20 տարվա տաժանակրության:

Թե ո՞ր հանցանքիս համար, մինչև օրս էլ չեմ հիշում:

Չեմ հիշում ես, որ մեծ հիշողության տեր մարդ եմ:

Ես հիշում եմ, թե ինչպես 15 տարի առաջ՝ իմ մեկուսարանում պառկածս ժամանակ, ներս թռավ մի ծիտ և առաստաղին կպած՝ ծրտեց աչքիս մեջ, բայց չեմ հիշում, թե իմ «դատավարությանը» ինչ հանցանք առաջադրեցին ինձ դատավորներս: Մի բան, որից կարելի է ենթադրել, որ իմ գործած հանցանքը ծտի ծերտից էլ փոքր է եղել: Այլապես պիտի հիշեի:

Ասենք, մեր երկրում բանտարկվելու համար այնքան էլ հանցանքի կարիք չի զգացվում: Բռնում են անմեղ, ստիպում են ինքդ

քեզ համար հանցանքներ որոնես, տաս դատավորի ձեռքը, որ քեզ դատապարտի։

Այդ էլ կարելի է ու զարմանալի չէ։ Միայն թե ժամանակ տային մտածելու։ Մանավանդ ինձ, որ բնականից մի փոքր շատ եմ անմեղ և հանցանք ճարելու համար շատ երկար պիտի մտածեի։

Իսկ երբ լցված ատրճանակի փողը քեզ են դարձնում և հրամայում հանցանքդ ասել, ստիպված ես հանպատրաստից մի որևէ բան ասել։

Աքսորում մի կալանավոր պատմում էր. «Երբ դատավորը ատրճանակ քաշեց վրաս և պահանջեց հանցանքս, ես, ինձ կորցրած, արտասանեցի Ղազարոս Աղայանի «Ծիծեռնակը բույն է շինում» ոտանավորը, որ մանկությանս օրերից մեխվել էր գլխիս մեջ»։

Հավանաբար, ես էլ «Արագիլ բարով եկարը» արտասանած լինեմ, որովհետև երեխաներիս քնեցնելիս միշտ դա եմ երգել։

Ես ձուլված էի կնոջս և երեք երեխաներիս հետ և ապրում էի միայն նրանցով։

Այնպես որ, երբ երկու չեկիստներ եկան և ուզում էին ինձ տանել, ես հետաքրքրությամբ սպասում էի, թե նրանք ինչպե՞ս պիտի բաժանեն ինձ իմ ընտանիքից՝ առանց կնոջս ու երեխաներիս էլ հետները տանելու։

Մենք ձուլված էինք հոգով և մարմնով։

Եթե երկու չեկիստներին հաջողվեր վերջապես մարմինս անջատել ու բանտ տանել, ես կլինեի ապաքեն կես բանտարկյալ, ու նրանց չէր հաջողվի կալանել հոգիս, որ բարձր է մարմնից։

Արդյո՞ք նրանք կկալանավորեն ինձ քնած վիճակումս։ Մանավանդ, որ իմանային, թե ես քնածս տեղը քաղցր երազներ եմ տեսնում և դրանով կարող եմ ի չիք դարձնել ինձ տանջելու նրանց բոլոր ջանքերը։

Իսկ եթե մեր կառավարությունը հոգուն կարևորություն չի տալիս և մեր մարմինն է միայն ուզում, ինչո՞ւ գերեզմաններից չի հանում մեռածներին և բանտ տանում։

Ո՞ր մեռածը սովետական բանտը չի գերադասի գերեզմանից…

Մանավանդ այն մեռելները, որոնք հույս չունեն արքայություն գնալու։

Փոխանակ երկնային դժոխքն ընկնելու համար մեծ ճանապարհ կտրելու՝ ահա դժոխք քթիդ տակ։

Այն էլ իսկական դժոխք։

Երկնային դժոխքում սատանաները ոչինչ չեն տալիս մեղավորին ուտելու, բայց միաժամանակ 15 րոպեով «պրոգուլկայի» են հանում՝ իրենց բնական կարիքները հոգալու համար։*

Է, ոչինչ չուտող մեղավորը ոչ թե 15 րոպե, այլ 15 տարի էլ նստի, ոչ մի արդյունքի չի հասնի։

Մինչդեռ երկրային դժոխքում բանտարկյալին ուտելիք են տալիս այնքան, որ թեև ամեն օր չի կարող արգասավորել իր «պրոգուլկան», բայց այնուամենայնիվ ամիսը մեկ անգամ երջանիկ է զգում իրեն և չի մոռանում իր արտաքնոց գնալու սովորությունը...

Իր «վերջին դատաստանում» Աստված երբեք չի ծեծում դատվողին իր չգործած մեղքերը խոստովանելու համար, որովհետև եթե ծեծի, բոլորը «կխոստովանեն» ու դժոխք կերթան՝ արքայությունը թողնելով դատարկ։ Մինչդեռ սովետական կառավարությունը, երկաթե վարագույրներ կախելով իր երկրի շուրջը, ողջ երկիրը բանտ է դարձրել, արքայություն չկա, այդ պատճառով էլ ծեծում է, որ ոչ մի արդար գոյություն չունենա։

Ծեծում է, որ խոստովանեն, իսկ չխոստովանողին՝ սպանում։

Միայն այս կառավարության լավն այն է, որ սպանելուց 20 տարի անց... արդարացնում է։

Արդարացնում է ու շքանշան կախում կրծքից։

Եվ այդ այն ժամանակ, երբ նրա դիակը գերեզմանում վաղուց փտել է...

Երբ ինձ երկաթուղի դրին Սիբիր քշելու, Երևանում սաստիկ տոթ էր։

Բայց ես արդեն սկսեցի դողալ սաստիկ ցրտից։ Հենց վագոնում սկսեցի սառչելու փորձեր կատարել, որ Սիբիրում հանկարծակիի չգամ։

---

* Պրոգուլկա ***(прогулка)*** - ռուս. զբոսանք։

Ա՜խ, եթե ինձ հաջողվեր հենց Երևանում սառչել ու Սիբիրի արհավիրքները չտեսնել…

Որովհետև Սիբիրում իմ միակ ցանկությունն էր մեռնել և Երևանի տաք հողում թաղվել։ Ու սաստիկ զարմանում եմ, թե ինչո՞ւ տաք երկրում ապրողները չեն շտապում մեռնել։ Քսան տարի Սիբիրում ապրելը հեշտ է, իսկ հավիտյան այնտեղ մեռնելը՝ զարհուրելի։ Որովհետև մի անգամ թաղվելուց հետո գետինն այնպես է սառչում, որ այնտեղից դուրս գալու այլևս ոչ մի հնար չի լինում։ Եթե Հիսուսը խաչվելուց հետո թաղված լիներ Սիբիրում, ոչ թե երեք օրից հետո, այլ երեսուն դար էլ աշխատեր, չէր կարող հարություն առնել։ Այնտեղ հողը դինամիտով են պայթեցնում, իսկ եթե Հիսուսն իր գերեզմանը դինամիտով պայթեցներ, գերեզմանից դուրս գալուց հետո քառասուն օր երկրի վրա ման չէր գա, այլ անմիջապես երկինք կհամբառնար՝ իհարկե, մեծ կտորը ականջն ունենալով։

Եվ Սիբիրում թաղվածները երբեք «վերջին դատաստանին» չեն ներկայանա։

Գաբրիել հրեշտակի դաՄրդն է կտրել, դինամիտ պայթեցնելով այնտեղ, մեռածների հոգիները երկինք տանել դատելու։

Նրանց դատավճիռը կլիներ «ի բացակայություն»։

Սովետական մարդն իր «ազատ» վիճակում էլ բանտարկված է, որովհետև իր երկրից դուրս գալու իրավունք չունի։ Այդ վիճակում, երբ բանտարկում են մարդուն, նա հագնում է կրկնակի բանտ։

Բայց բանտերի շարանը դրանով էլ չի վերջանում, որովհետև երկրորդ բանտի մարդն էլի հնարավորություն ունի նոր հանցանքներ գործելու և երրորդ բանտն ընկնելու, որը կոչվում է մեկուսարան։

Այսպիսով՝ մարդը դառնում է ձվի դեղնուց՝ շրջապատված կեղևով…

Եվ մեր պետությունն այդ մարդուն անվանում է «աշխարհի ամենաազատ մարդը»…

Լավ չէր, որ Աստված մարդուն անասուն ստեղծեր, որ նա լեզու չունենար այսքան խոշոր սուտ խոսելու։

Եվ մեզ մոտ բանտերն այսպես անվերջ են նրա համար, որովհե-

տև հանցանք գործելը սաստիկ դյուրամատչելի է։ Աջ ոտքդ գցես՝ հանցավոր ես, ձախը գցես՝ հանցավոր ես։ Ոտք չունեցող անդամալույծին էլ հանցանք կա, իր հոգեվարքն ապրող հիվանդն էլ ունի իր ուժերին համապատասխան հանցանք։ Այն ո՞ր մեռնողն է, որ մեռնելուց առաջ չի ցանկանա մի բաժակ տաք կաթ խմել։ Իսկ ցանկանալ մի բան, որ սովետական կառավարությունը չի կարող տալ իր ժողովրդին, շատ մեծ հանցանք է։

Իմ մայրը մի բաժակ կաթի կարոտով մեռավ, բայց կառավարությունը նրան չտարավ Սիբիր թաղելու միմիայն նրա համար, որ այնտեղի հողը սառած է, և գերեզման փորելը դժվար։

Իսկ սովետական մարդը միայն կաթի կարոտ չի քաշում։ Նա կարոտ է քաշում աշխարհային բոլոր բարիքների, որոնցից ոչ մեկը չի տալիս իր կառավարությունը։ Զունի։ Հետևաբար, նրա օրենսգիրքը լցված է անթիվ հանցանքներով։ Հանցանք կաթի համար, ավելի մեծ հանցանք մածնի համար, որովհետև մածունը պիտի մերել նրա չունեցած կաթից, հանցանք պանրի, յուղի, մսի, մակարոնի, վերմիշելի, բրնձի։

Մնում է մի հանցանք էլ մեռածի համար հորինել, որ պատկերը կատարյալ լինի։

Կարծում եք չկա՞ այդ հանցանքը։ Կա։

Այն մարդը, որ մեռնում է աչքը բաց, ամենամեծ հանցավորն է, որովհետև դրանով հավիտյանս պիտի տեսնի պետության գործած չարագործությունները։ Այն մարդը, որ մեռնում է աչքը փակ, նույնպես հանցավոր է նրա համար, որ չի ուզում տեսնել նրա «սոցիալիստական շինարարությունը»։

Ինձ հետ գետի նավը նստած մի կույր կալանավորի ափ հանեցին, գնդակահարեցին՝ ասելով, որ դիտմամբ է կուրացել, որ չտեսնի իրենց այդ անիծյալ «սոցիալիստական շինարարությունը»։

Այս բոլորով ես կամեցա ասել, որ մեզ մոտ հանցագործությունը առանձին ֆիզիկական ուժ չի պահանջում, նա ավտոմատ է…

Տաժանակրությանս առաջին տարին բեռնակիր էի։ Գետանավի ապրանքներ էինք դատարկում՝ այն ճոճուն սանդուղքների վրայից ափ հանելով։

Ես՝ ֆիզիկական աշխատանքի անսովոր, բեռս՝ ծանր։

Մի անգամ հավասարակշռություն ս կորցնելով՝ բեռանս հետ գետը գլորվեցի։ Բրիգադիրը լողվորներ ջուրը գցեց փրկելու ոչ թե ինձ, այլ իմ բեռը։ Ես փրկվեցի՝ լողվորներից մեկի ոտներին կառչելով։ Լողվորը քացի էր տալիս՝ ինձանից ազատվելու, ես մեռնողի ճիգով կպել էի նրա ոտքին։ Վերջում բեռս ազատելուց հետո ի միջի այլոց նաև ազատեց ինձ։

Դրանից հետո ինձ դատեցին։ Ջիմացա՝ ազատվելու՞ս, թե ուժիցս վեր ծանր բեռ տանել չկարողանալուս համար։ Հավանաբար, երկուսի համար էլ։ Որովհետև ո՞վ է տեսել այս երկրում, որ մարդ ցանկանա ապրել և հանդգնի գետում չխեղդվել։ Ո՞վ է տեսել, որ մարդ ուժ չունենա ամեն ծանրության բեռ տանելու։

Անգամ ճոճվող սանդուղքի վրա…

Այստեղից հանցանքների նոր շարան։ Բանն այնտեղ կարող է հասնել, որ չպատժվելու համար դու աչք պետք է առնես Մասիսն անգամ շալակել և անցնել… ճոճուն սանդուղքի վրայից։

Հանցանքի աբստրակցիա…

Երկրորդ տարին, չորս ընկերներով լծված, գերաններ էինք քարշ տալիս գետափ չորս սահնակներով։ Առաջին սահնակին լծված էինք մենք՝ մարդիկս, երկրորդ սահնակին՝ եղջերուներ, երրորդին՝ ձիեր, չորրորդին՝ շներ։

Եթե եղջերուները, ձիերն ու շներն էլ սոցիալիստներ լինեին, մենք կարող էինք «սոցմրցման» պայմանագիր կնքել իրար մեջ և «կարմիր տախտակին»[97] արժանանալ։

Բայց մեր անասուն կոլեգաներն անհատապաշտ էին, իրենց տրված կերը ուտում էին՝ առանց ցեղակիցներին հաշվի առնելու։

Մի օր քաշող շներից մեկը սատկեց, նրա փոխարեն պատիվ ունեցա ինքս լծվելու։

Ես պայթելու աստիճանի ուժ էի գործադրում՝ միանգամայն վստահ, որ իմ նախորդ շան նման անպատիվ չեմ սատկի, այլ որպես մարդ պատվավոր կմեռնեմ։

Հետո՝ ես ախր հայտնի գրող եմ։ Ամերիկայում հրատարակվող մի հանդես ինձ անվանել է «Ներկայումս ապրող մեծագույն հայ

երգիծաբան»[98]՝ *հնարավոր բան է, որ «սատկեմ»։*

Եվ ոչ մեռնեմ և մեռնելուց հետո էլ... անմահանամ։

Ա՜խ, եթե իմ լծակից շները կարդալ իմանային, ճանաչեին իմ ով լինելը, արդյոք ավելի հարգանքով չէ՞ին վերաբերվի ինձ հետ, քան սովետական կառավարությունը...

Երբ կալանավորներին քշում են հեռավոր անտառ՝ նոր լագեր կառուցելու, առաջին անգամ շինում են բանտ ընդհանրապես հանցավորների համար, նրա կողքին էլ՝ մի շարք մեկուսարաններ՝ ավելի մեծ հանցագործներ բանտարկելու։*

Մենք ուղարկված ենք այդպիսի ամայի անտառ՝ նոր լագեր կառուցելու գերաններից։

*Դեռ գործը չսկսած՝ մեզանից հինգ հոգի հիվանդացան, բայց չկարողանալով իրենց հիվանդ լինելն ապացուցել՝ սիմուլյանտ** հռչակվեցին և պիտի իրենց պատիժը կրեին մեկուսարան-բանտերում։*

Նույն երեկոյան հինգ հիվանդներից երեքն իրենց հիվանդությունները հաստատելու համար մեռան, իսկ երկուսը շտապ սկսեցին մեկուսարաններ կառուցել, որ բանտարկվեն։

Կարելի՞ բան է պատիժն անորոշ ժամանակով հետաձգել։

Ինչո՞ւ ամեն կալանավորի շալակին չեն բարձում մի մեկուսարան, որ հանցանք գործելուն պես մեջը նստի և... ինքն իրեն շալակի։

Եվ ահա մի ամսից ավելի է, ինչ ես պառկած եմ մեկուսարանում մեն-մենակ։

Իմ միակ ընկերները երկու ծտանման մանր թռչուններն են, որոնք բույն են շինել խցիկիս առաստաղում և ապրում են իրենց համար։

Նայում եմ նրանց և ասում.

- Երանի ձեզ։ Դուք ապրում եք կարճ ճանապարհով։ Այսինքն՝

---

* Լագեր *(лагерь)* - ռուս. ճամբար։

** Սիմուլյանտ *(симулянт)* - ռուս. որևէ բան ձևացնելով կեղծող, մի բանից խուսափելու համար իրեն հիվանդ՝ անաշխատունակ ձևացնող մարդ։

միմիայն ուտում և սիրում եք իրար։ Չգիտեք՝ ինչ է սոցիալիզմ, սովետական կառավարություն, Չեկա, բանտ, աքսոր ու տաժանակրություն։ Իսկ չճանաչել այս բոլորը նշանակում է լինել աշխարհում ամենաերջանիկը։ Ուզում ես թռչուն եղիր, կենդանի, թե գազան։

Ձեր խոսք տալն իրար ու ամուսնանալը մեկ է լինում, իսկ որ մարդ լինեիք՝ նշանդրեք, թաբախ*, դհոլ, զուռնա, ամուսնություն ու բաժանում։

Ինչքա՜ն չունեք այն ավելորդ բաները, որ մարդիկ ունեն։

Փառք տվեք արարչին, ուրեմն, որ մարդ չեք ծնվել։

Մարդկությունն ավելորդաբանություն է։

Եթե ոչ գազանություն...

Ամերիկյան ընտրությունները[99]

Ամերիկան երկու կուսակցություն ունի՝ «հանրապետական» և «դեմոկրատական», որոնք երկվորյակների պես զարմանալի կերպով իրարից չեն տարբերվում իրենց քաղաքական հայացքներով։ Երկու համանիշ բառեր՝ մեկը մյուսի տեղ գործածվող, որոնք, 32 միլիոն դոլար ծախսելով, իրար դեմ ընտրական պայքար են մղում ամեն չորս տարին մի անգամ, ու չգիտես՝ ինչի՞ համար։

Երևակայեցեք մի արագիլ, որ, չորս տարի մի ոտքի վրա կանգնելուց հոգնած, ոտքը փոխում և չորս տարի էլ մյուս ոտքի վրա է կանգնում։

Մի փոփոխություն, սակայն, որ մինչ արագիլի վրա ոչինչ չի ազդում, Ամերիկայի վրա 32 միլիոն դոլար է նստում։

Ինչքա՜ն շահած պիտի լիներ Ամերիկան, եթե նա էլ որոշ պետությունների նման իր նախագահն ընտրեր և ամեն չորս տարին նույնը կրկներ...

Ինչպես ճաշարանի հաճախորդը հավնած կերակուրին «ռեպետե»** է կանչում։

Չէ՛, ես այն կարծիքին եմ, որ աղքատ երկրին հանրապետական ռեժիմ չի սազի։ Աղքատ երկիրը պետք է թագավոր ունենա, անգամ կայսր, որ ամեն 4 տարին մեկը չփոխի։

---

* Թաբախ (tabak) - թրք. ծանծաղ ափսե կամ պնակ կերակրի համար։

** Ռեպետե (répéter) - ֆր. կրկնել։

Ամերիկյան ընտրական պայքարը շատ կողմերով նման է մարդ ու կնոջ կռիվներին: Երկուսն էլ կռվում են ցերեկով՝ մինչև մութն ընկնելը, մինչև գիշերային գրկախառնումները: Միայն այն տարբերությամբ, որ ամուսնական կռիվները երբեմն լուրջ հետևանքներ են ունենում, օրինակի համար՝ հաճախ մարդը թողնում է իր կնոջը ու ամուսնանում ուրիշ կնոջ հետ, բայց ամերիկյան զույգ կուսակցությունների հակամարտությունները վերջանում են հաշտությամբ, և չի պատահել դեպք, երբ կուսակցություններից մեկը Ամերիկան թողնի ու գնա ամուսնանա, ասենք՝ Անգլիայի կամ Ֆրանսիայի հետ:

Բարոյական տեսակետից էլ զույգերը տարբերվում են: Նախագահության ամերիկյան թեկնածուն արշավում է երկրով մեկ և գովաբանելով ինքզինքը՝ առաջարկում է ընտրել իրեն:

Եթե այս ձևով կանայք էլ ման գային որևէ երկրում և տղամարդկանց առաջարկեին իրենց կնության առնել, երևակայո՞ւմ եք՝ բարոյական ինչ կերպարանք կստանար հիշյալ երկիրը:

Բայց չնայած այս մասնակի տարբերությանը՝ հիմնականում ամուսինների և նախագահների վարքը իրար նման է:

Պատահում են հերմաֆրոդիտ կանայք, որոնք առանց մի երկրորդի օգնության ինքզինքնին բեղմնավորում են:*

Երևակայեցեք՝ նույնը պատահում է նաև նախագահական ընտրություններում:

Իսպանիայի նախագահ Ֆրանկոն, օրինակ, ընտրվում է առանց ժողովրդի մասնակցության: Ինքն իրեն: Եվ այս քանի՞ տարի է...

Այս բնական է ու բանական:

Եթե մի նախագահ չի խունացել, չի մաշվել, չի ծակվել, ինչո՞ւ փոխել:

Ու միաժամանակ, ես հավատում եմ, որ Ֆրանկոն ծակվի էլ, Իսպանիան նրան կկարկատի ու կհագնի:

Նա աղքատ երկիր է, չորս տարին մեկ չի կարող 32 միլիոն դոլար ծախսել մի նախագահի վրա:

---

* Հերմաֆրոդիտ- երկսեռ:

Տգեղ սովորություն[100]

Հիմա սովորություն է դարձել, որ ապրողն էլ, չապրողն էլ հավասարապես մեռնում են՝ իրար աչք տալով։

Եվ ցավալին էլ այն է, որ թաղման բյուրոն անխոս թաղում է այսպիսիներին։

Մի ժամանակ էլ կոլխոզներն էին այսպես անում։ Բռնում, ինչքան սատկած անասուն կար՝ մսամթերման էին ուղարկում, մինչև այն աստիճան, որ մթերման կոմիտեն այլևս չէր ընդունում այդպիսիներին, ետ էր վերադարձնում, ասում էր՝ տարե՛ք, չաղացրե՛ք, բերե՛ք։

Պետք չէ՞ր՝ թաղման բյուրոն էլ չապրած մեռնողին ասեր.

- Նախ գնա՛ ապրիր, նոր արի՛, թաղեմ։

Ցավով նկատեմ, որ մեր թաղման բյուրոն աշխատում է միայն պլան կատարել՝ առանց որակին ուշք դարձնելու, այդ պատճառով էլ նրա բոլոր թաղած մեռելները խոտանվում են։

Այս րոպեիս, եթե ես մեռնեմ, նա անխոս կթաղի ինձ։

Եղա՞վ։

Ո՛չ, չեղավ։

Թաղման բյուրոն պիտի հարցնի մեռելին, ենթադրենք՝ ինձ.

- Ապրե՞լ ես կյանքումդ։

- Ո՛չ։

- Հապա ինչո՞ւ ես գալիս մեռնելու։ Քեզ չեմ թաղում։ Դու պիտի տնային լիազորից տեղեկանք բերես, որ աշխարհ ես եկել քո հոժար կամքով, մտածել ես քո ուղեղով, ապրել ես ազատ, ինչ կամեցել ես, այն ես խոսել, ինչ ուզեցել, այն ես լսել։ Սիրել ես, կին ես առել, ատել ես, բաժանվել ես։

- Այդպիսի տեղեկանք ոչ մի տնային լիազոր ինձ չի տա։

- Ինչո՞ւ։

- Որովհետև ես աշխարհ չեմ եկել իմ հոժար կամքով։ Առանց հարցնելու, նախքան իմ մտածելը՝ ինձ քրիստոնյա են մկրտել և հայ անվանել։ Մինչդեռ եթե ինձ հարցնեին, ես Քրիստոսին վոն* կանեի իբրև ստություն, հայը թողած՝ մի մեծ ազգի մեջ կծնվեի, որ թուրքն ինձ չկոտորեր, ու փոխանակ ողջ կյանքումս հայի վիշտը լալու՝ մի ավելի օգտակար գործի կլծվեի։ Ես իմ հոժար կամքով կին

---

* **Вон** (վոն) - ռուս. դուրս, հեռու, դեն։

առա, երեխաներ ունեցա, բայց քսան տարով աքսորվեցի իմ կամքին հակառակ և չկարողացա սիրել նրանց: Երբ փորձեցի մտածել ազատ, ինձ ասացին. «Նեղություն մի՛ քաշիր, ամեն ինչ մտածված է արդեն...»: Ու իմ՝ աշխարհ ճանաչելու համար ի վերուստ տրված հինգ զգայարանները համարյա անգործածելի մնացին...

- Գնա՛, քեզ չեմ թաղի:

- Ինչո՞ւ:

- Որովհետև չես ապրել: Գնա՛ ապրիր, արի՛, թաղեմ:

- Արդեն 77 տարեկան եմ, էլ ո՞ւր ապրեմ...

- Իմ գործը չէ:

- Թաղի՛ր որպես ապօրինի մեռածի, սանկ դախլի տակից...

- Ես պաշտոնական մարմին եմ, այդ անել չեմ կարող: Ո՞վ է տեսել, որ առևտրական վարչությունը մարդ ուղարկի իր խանութ և ասի՝ գնա «փափա՛խ» արա:

- Բայց «փափախի» դեպքում նա աչքը փակում է:

- Լա՛վ, ես էլ աչքս կփակեմ, գնա՛ թաղվիր...

Երեքհարկանի տուն[101]

«Տուն» բառը լսելով, էյ ընթերցող, չլինի ձեր վեշչերն ավտոյի բառնաք ու քշեք:*

Սա նախ պետական տուն չէ, երկրորդն էլ խոսքը մարդ արարածի մասին է:

Ուրեմն՝ երեքհարկանի տուն:

Մարդը ոչ ավել, ոչ պակաս, երեքհարկանի մի տուն է:

Նրա առաջին հարկում ապրում է մարդ-երեխան, երկրորդ հարկում՝ մարդ-երիտասարդը, իսկ երրորդում՝ մարդ-ծերունին:

Սրանց մեջ ընդհանուրն այն է, որ երեքն էլ «մարդ» են, իսկ մնացած բոլոր բաներում իրար չեն ճանաչում, իրար հետ հարևանություն չեն անում:

Զարմանալի կերպով այստեղ էլ պետական տների նման բոլորը ձգտում են երկրորդ հարկին, ո՛չ ուզում են ծերանալ, ո՛չ երեխա դառնալ:

Ու եթե քաղսովետն ու Աստված մտածեին իրենց տներն այնպես

---

* Վեշչ *(вещь)* - ռուս. իր:

շինել, որ միայն երկրորդ հարկը ունենային, մեծ բարիք գործած պիտի լինեին հանուր մարդկության համար։

Հիմա դառնանք այս տան բնակիչների զբաղմունքին։

Ինչ է անում երեխան։

Հեչ, համախառն չարաճճիություն։

Սրան բզել, նրան բզել և օր մթնեցնել։

Մինչև բարձրանում է իր սանդուղքի քսան աստիճանները և մտնում իր երիտասարդության հարկաբաժինը։

Երիտասարդ դառնալով՝ ինչ է անում մարդը։

Հեչ, էլի նույն չարաճճիությունը։ Միայն ոչ թե համախառն, այլ մասնագիտական։ Երիտասարդն այլևս սրան-նրան չի բզում, այլ միայն մի աղջկա է բզում, և նրա հետ սկսում են իրենց չարաճճիությունները մինչև ծերություն։

Բաձրանալով իր յոթանասունհինգ աստիճանները ու մտնելով ծերություն՝ մարդու ծնկները հոգնությունից ծալվում են արդեն։

Առանց վերելակի երկրորդ հարկ անգամ չի բարձրանում։

Ցավով եմ արձանագրում, բայց որպես փաստ պիտի ասեմ, որ ծերունին այլևս այն չէ։

Հրաժարվում է իր բոլոր չարաճճիություններից և դառնում միայն բարի, ու եթե դրան կցենք «ճճին», ուրեմն՝ բարեճճի։

Դադարում է կնոջը բզելուց և սարսափով է նայում այն բարձունքին, որից շուտով պիտի վայր գլորվի՝ մեծ պատառն ականջը թողնելով։

Կինը բոպեապես փոխում է իր դերը։ Դադարելով մարդու կյանքի ընկեր լինելուց՝ դառնում է նրա մահվան ընկերը։

Գուցե մտածեք՝ մարդուն մահվան ընկեր պետք չէ, նա մենակ էլ կարող է մեռնել, բայց ո՛չ, մահվանն ավելի շատ է ընկեր հարկավոր, քան կյանքին, որովհետև կյանքը ժամանակավոր է, իսկ մահը՝ հավիտենական։

Այնուհետև մարդ ու կին, ցանկանալով միասին մեռնել, ոչ մեկը մյուսից առաջ չի անցնում. մի քայլ գցում, սպասում է, որ ընկերը գա, իրեն հասնի։

Այժմ մի քանի խոսք այն մասին, թե ինչ են անում մահվան սպասող այս ծերերը իրենց պարապ ժամերին։

Քանի որ մահը վրա է հասնում անչվացուցակ, ունենում է իր

«ապազդանին», ուստի նման դեպքերում «պասաժիրները»** մի բանով զբաղվում են:*

Ծերունիք այդ ժամանակները նայում են իրենց եկած ճանապարհին:

Դա երկար է, ուժ չունեն՝ այդքան ճանապարհը կտրեն ոտքով, ինչպես ասացի, շենքը վերելակ չունի: Այդ պատճառով էլ նրանք, թևանցուկ արած, աստիճաններից վայր են իջնում իրենց... երևակայությամբ ու նորից սկսում ապրել:

Մարդն ասում է.

- Հիշո՞ւմ ես, կնի՛կ, այսինչ տարին, այսինչ օրը ես ու դու միասին այսինչ բանն արինք:

- Ա՜խ, հիշում եմ, բա չեմ հիշում: Երանի՜ այն օրերին...,- պատասխանում է կինը:

Այստեղ, եթե նրանց երրորդ հարկ ջուրը բարձրանում է, հաճախ կինը մի քանի կաթիլ էլ արցունք է թափում:

Եվ էլի սկսում են փորփրել իրենց հիշողությունը, թե դրանից հետո ինչ արին:

*Հետո հանկարծ լսվում է «պոեզդի»*** սուլոցը, և մարդ ու կին իրերը հավաքում, կանգնում են «պերրոնին»****՝ պատրաստ այն աշխարհ չվելու համար:*

Կանգնում է գնացքը, և զարմանալի կերպով ոչ ոք դուրս չի գալիս այնտեղից, միայն մտնում են...

*Մարդ ու կին բարձրանում են գնացք և ցույց են տալիս իրենց «բիլեթները»*****:*

*Կոնդուկտորը******, որը ոչ այլ ոք է, եթե ոչ մահվան հրեշտակը, կնոջը ներս է առնում, իսկ մարդուն վերադարձնում է պերրոն՝ ասելով.*

- Դու պիտի սպասես մյուս գնացքին:

- Ի՞նչ ես ասում,- սարսափած ճչում է մարդը,- իսկ եթե մյուս գնացքը չեկա՞վ...

---

* Ապազդանի ***(опоздание)*** - ռուս. ուշացում:

** Պասաժիր ***(пассажир)*** - ռուս. ուղևոր:

*** Պոեզդ ***(поезд)*** – ռուս. գնացք:

**** Պերրոն ***(перрон)*** – ռուս. կառամատույց:

***** Բիլեթ ***(билет)*** - ռուս. տոմս:

****** Կոնդուկտոր ***(кондуктор)*** - ռուս. վագոնավար:

- Անհոգ կաց, սա «Երևան-Մոսկվա» գնացքը չէ, որ անկանոն երթևեկի. մեր գրաֆիկը անխախտ է…

Ու գնացքը հեռանում է՝ հետը տանելով իր կյանքի ընկերոջը, իսկ ինքը, կանգնած ապշահար, երկուսից ավելի աչքեր է փնտրում, որ իր ահռելի կորուստը ողբա։

Հաշտվում է իր վիճակին վերջապես մարդը և սպասում երկրորդ գնացքին։

Կայարանում սեմիչկա չեն ծախում, որ առնի չրթի, հետո էլ բերանում ատամ չկա։*

Փորձում է միայնակ ետ դառնալ իրենց եկած ճանապարհով դեպի կյանք։

Մեկ չարաճճիություն է անում, մեկ լալիս։ Որովհետև չկա նա, ում հետ անում էր այս բոլորը։

Մտածում է մինչև գնացքի գալը… երկրորդ անգամ ամուսնանալ։

Բայց ավա՜ղ, մենք էլ գիտենք, մարդն էլ գիտի, որ այդ այն չէ, ինչ այն կինը, որի հետ բարձրացել է իր ծերության յոթանասունհինգ աստիճանները։

Երկրորդ անգամ ամուսնացող ծերունին հուշ չի ունենա։

Եթե մարդը կնոջն ասի՝ հիշո՞ւմ ես այն օրը…, նա ոչ միայն «այն օրը» չի հիշի, այլև դրա հետ միասին ոչ մի «օր» չի հիշի։

Դե եկ ու ապրիր հուշերով։

Երկրորդ անգամ ամուսնացած ծերունիներն այն են, ինչ շատ բարձր կտուրից կախված կարճ սանդուղքը։ Մի երկու մատ իջնում են միասին ու կանգ առնում։

Եթե այնուամենայնիվ ուզենան շարունակել իրենց ճանապարհը դեպի ետ, կբաժանվեն, յուրաքանչյուրը կհիշի իր անցած կյանքը միայն։ Ո՛չ մարդը կհիշի կնոջ «այն օրը», ո՛չ կինը մարդու։

Եվ մարդ ու կին կդառնան ոչ թե աճող ծառերի պատվաստ, այլ մի հեռագրասյուն՝ մյուս հեռագրասյան վրա… մեխած։

Եվ այստեսակ լուսնի վերջին քառորդում ամուսնացած զույգերը եթե անգամ միասին «գնացք» նստելու լինեն, կինը տոմսակ կվերցնի՝ իր նախկին մարդու մոտ գնալու համար, մարդը՝ իր նախկին կնոջ։

Ահա քեզ երեքհարկանի տուն։

---

* Սեմիչկա ***(семечки)*** - ռուս. արևածաղկի սերմեր։

Զքվի՛ր, չերևա՛ս։

Երանի պլանի մեջ ընկնի այս տունը, քաղսովետը քանդի ու տեղը ոչինչ չշինի…

Սկզբունքային անամոթություն[102]

Ամոթը հարաբերական իմաստ ունի և գիտականորեն չի հիմնավորված։

Ինչ տեսակ չարիք ուզում ես հասցրու մարդկանց, եթե այդ անում ես համաձայն քո համոզմունքների, արա՛, ազա՛տ ես։

Սպանի՛ր, պահեստ թալանի՛ր, օրական մի կին առ բաց թող։

Թուրքիան միլիոնուկես հայ կոտորեց՝ ամաչեց։

Երբե՛ք։

Սկզբունքով չի կարող ընդունել, որ հայն էլ մարդ է և աշխարհ գալուց հետո իրավունք ունի ապրել, կոտորում է։

Վասակ Սյունին Վարդանին դավաճանեց միանգամայն հանգիստ խղճով։ Հիմա էլ եթե պարսիկները հարձակվեին, պիտի դավաճաներ։

Այդ է պահանջում անփոփոխ սկզբունքը, և այդ ավելի թանկ է գնահատվում, քան օրումեջ դավանած սկզբունքը։

Այս՝ հոդվածիս նախաբանը։

Հիմա ես ձեզ ներկայացնեմ իմ նոր տան հարևանուհուն, որը սկզբունքային անամոթության մի տիպար է, անունն էլ՝ Լիզա։

Այս Լիզան առողջ, կայտառ, յոթ գոմեշի ուժ ունեցող մի կին է, բայց չի աշխատում։ Ամբողջ օրը հարևանների դուռը ծեծելով՝ «երկու օրով մի տասը ռուբլի» փող է ուզում ու այլևս չի վերադարձնում։

Համաձայն իր սկզբունքի՝ ուրիշները պիտի դատեն, ինքն ուտի և սրա-նրա հետ թևանցուկ ման գա։

Եթե տղամարդ մոտենա իրեն և իր տված տասը ռուբլին պահանջի, նա քաղցր կժպտա նրա երեսին, ինչպես այն խանութպանները, որոնք փողի տեղ կամենում են ապրանք տալ…

Իսկ եթե մի անսկզբունք կին է փողը ետ ուզում, վերջինս արհամարհանքով նկատում է, որ պետք է իմանալ ուրիշի սկզբունքները հարգել։

Եվ անսկզբունք կինը, ամոթից կարմրած, հրաժարվում է ան-

միջապես իր առաջին տասը ռուբլուց և պատրաստվում է երկրորդ տասը ռուբլին երկարել նրան…

Այսպիսի բնույթ ունի այդ անպիտան սկզբունքը։ Երբեմն դավանողի տունն է քանդում, երբեմն շինում։

Որքա՜ն մարդիկ զոհ գնացին իրենց սկզբունքներին…

Որքա՜ն մարդիկ ապրելու համար իրենց սկզբունքները փոխեցին…

Բայց հարևանուհուս սկզբունքը շահութաբեր է և կարելի է հանձնարարել բոլոր տասը ռուբլի ունեցողներին իրենց փողերը տիկնոջ գրպանը գցել՝ որպես «ապահով, հարմար և հուսալի» դրամարկղ։

Այս տեսակ կանանց տված օգուտն այն է, որ այսուհետ, հենվելով անամոթության վրա, վերջ կտրվի գողությանը։

Էլ ինչ կարիք ունի գրպանահատը ձեռքն ուրիշի գրպանը սողացնելու, քանի որ կարելի է «երկու օրով տասը ռուբլի» խնդրել ու այլևս չվերադարձնել։

Մի անգամ հարևանուհիս ինձանից տասը ռուբլի առավ ու մոռանալով սեղանիս վրա՝ գնաց։

Երևակայեցեք՝ ես վախեցա սեղանիս վրայից ետ վերցնել իմ տասը ռուբլին՝ վախենալով մեղադրվել գողության մեջ։

Ու հետևից վազելով տարա հանձնեցի… տիրոջը։

Ֆինանսական ասպարեզում գործադրվող այս սկզբունքային անամոթությունը էլի ոչինչ, կարելի է մի կերպ հանդուրժել։

Բայց երևակայո՞ւմ եք՝ պատկերն ինչպես կփոխվի, եթե այս արարքը փոխադրվի ամուսնական ռելսերի վրա։

Երիտասարդ ժամանակս ես սաստիկ սիրահարված էի մի կնոջ, բայց ամաչեցի ու չմոտեցա նրանից «երկու» օրով սեր խնդրելու։

Չնայած այն հանգամանքին, որ ես իրոք «երկու օրից» նրան կվերադարձնեի իր ամուսնուն։

Եթե աղջկա հայրը համաձայնի իր դստերը երկու օրով մարդու տալ, այն ո՞ր փեսացուն է, որ պիտի մերժի։

Այստեղից հետևյալ հարցը.

- Ինչո՞ւ աղջիկները չեն կամենում մաս-մաս ամուսնանալ և միանվագ ամուսնության հույսով տանն են մնում։

Այժմ սկզբունքային անամոթությունը փոխադրենք գրական ասպարեզ։

Մի հեղինակի, որ իրեն սկզբունքով համարում է հանճար, ո՞ր քննադատը կհամարձակվի դարձնել բանջար։

Ի վերջո ասեմ, որ նման անամոթություն ներկայումս կիրառվում է միայն մեր խանութներում։

Գանձապահը մանրը չի տալիս, իսկ հաճախորդը ամաչում է այն ուզել…

Ապօրինի գործարք

Մսամթերման ենթակա մի կով, առանց սպասելու, որ բերման ենթարկեն իրեն, կամավոր կերպով գյուղից քաղաք էր գալիս՝ մորթվելու։

Ճանապարհին մի երևանցի դեմը ելավ թե՝ թույլ տուր քեզ ուտեմ, կյանքիս մեջ դեռ թարմ միս չեմ կերել։

- Անկարելի է,- ասաց կովը,- ես մինչև մսամթերման կայան չգնամ, այնտեղ չմորթվեմ, մի հինգ տարի սառցարանում իրար վրա չդարսվեմ, մկներն ու առնետները իմ տաք ծոցում ձագեր չհանեն, չմեծացնեն, թույլ չեմ տա, որ ինձ ուտեն։

- Կո՛վ ջան, հոգիդ ուտեմ։

- Հոգիս կարող ես ուտել, բայց չեմ թողնի, որ մարմնիս ձեռք տաս,- ասաց կովը։

- Գլուխդ տո՛ւր, խաշ դնեմ,- աղերսում էր երևանցին։

- Առանց գլխի մի րոպե չեմ ապրի։ Զգիտեմ ձեզ մոտ ինչպես է, մենք՝ կովերս, պիտի առանձին գլուխ ունենանք, որ կարողանանք մեր սեփական կարծիքը հայտնել որևէ խնդրի շուրջ խոսելիս։ Ձեզ մոտ բանն ուրիշ է։ Դուք բոլորդ էլ կարդում եք և ցիտատով բերում եք ուրիշի մտքեր։ Իսկ մենք անգրագետ ենք։

- Պոչդ տո՛ւր, ուտեմ, խնդրում եմ…

- Պոչս եթե տամ, ինչո՞վ հաստատեմ, որ ես անասուն եմ։

- Վախենում ես՝ մարդկանց հետ շփոթվե՞ս։

- Ո՞վ գիտի։ Աշխարհում ամեն բան պատահում է,- ասաց կովը։

- Եվ վա՞տ կլինի քեզ համար։

- Վատ չի լինի, մարդը շատ խելոք արարած է, և մենք անգամ պատիվ կհամարենք նրանց նմանվել, բայց թե… չի կարելի։ Օրինակի համար՝ անգլիացիք մեծ և կուլտուրական ազգ են, բայց ո՞ր հայը կու-

զի անգլիացի ծնվել։ Ամեն մարդու համար իր ազգը քաղցր է գալիս։

- Կո՛վ ջան, մի շերտ քո մեքջի սուկիից տո՛ւր, տանեմ խորոված անեմ։

- Ջեմ ակրող։

- Կաշիդ, ոսկորդ տո՛ւր։

- Արդեն կաշի ու ոսկոր եմ, այն քեզ տամ, ինչո՞վ ներկայանամ մթերման կայան։

- Բա ո՞նց անենք, ա՛յ կով։ Մինչև ե՞րբ հոտած միս ուտենք ու գնանք հիվանդանոց պառկենք։

- Արջերի դրությունը ձեզանից վատ է։ Նրանք էլ են միսը հոտեցնում, նոր ուտում ու իսկի հիվանդանոց էլ չունեն, որ պառկեն։

- Լավ, մինչև ե՞րբ, ա՛յ կով։

- Ինձ ինչո՞ւ ես հարցնում։ Ես շարքային մի կով եմ, գյուղից եկել եմ մթերակայան ներկայանալու։ Ինձ որ մնա, ես կուզեմ ոչ թե հինգ տարի սառցարանում պառկել, այլ հավիտյան։ Կովերը չեն ձգտում հավիտենական կյանքի։

- Ուրեմն, չես տալիս։

- Չէ՛։

- Մնաս բարով։

- Երթաս բարով։

Ամերիկա և Թուրքիա

Ամերիկան, Թուրքիա մտնելով, մտախոհ սկսեց երթևեկել ամբողջ Անատոլիայի երկարությամբ։

- Ամերիկա՛, լղարել ես,- ասաց Թուրքիան։

- Էս նեգրերի խնդիրն ու Կուբան ինձ հանգիստ չեն տալիս։ Ո՛չ ամերիկացիները կսևանան, ո՛չ նեգրերը կսպիտակեն, հետևաբար, քանի կանք, գույների կռիվը շարունակվի պիտի, իսկ Կուբան, գիտես էլի, հենց որ ձեռքս գցում եմ գավազանի, Ռուսաստանը հեռվից բղավում է…

- Կուբան, ճիշտ է, դժվար է մի քիչ, բայց նեգրերի հարցը քո ձեռքին է. ուզածդ բոպեին կարող ես վերջ տալ։

- Ի՞նչ անեմ։

- Կոտորի՛ր։

- Կլինի՞:

- Ինչո՞ւ չի լինի: Ինչո՞ւ ես կարող եմ ողջ հայությունը կոտորել, դու չես կարող քո նեգրերին կոտորել:

- Ախր, Ամերիկան նախապես նրանցն է եղել: Ինչպե՞ս կարելի է ապրել նրանց երկրում և կոտորել բնիկներին:

- Հայերն էլ բնիկ չէ՞ին: Ինչո՞ւ երկիրը գրավեցի ու իրենց էլ բնաջնջեցի: Ռուսն ասում է՝ դելո մաստերա բայիտսյա*:

- Ձեր Աստվածն ընդունում է այդ բանը, մեր Աստվածը չի ընդունում:

- Արի՛ քեզ թլպատեմ, մահմեդական դարձնեմ, որ ձեր Աստվածը չխոսի:

- Չեմ ուզում:

- Ամերիկա՛, քեզ բան եմ ասում: Քո երկրի անդորրությունը մի՛ զոհիր մի մատ կաշվի կտորի...

- Միայն նեգրեր կոտորելու համար վեր կենամ թլպատվե՞մ:

- Ինչո՞ւ միայն նեգրեր. Կուբային կջարդես, Պանամային, հետո Լատինական Ամերիկայի բոլոր այն մանր ժողովուրդներին, որոնք քեզ չեն լսի: Ա՜խ, ա՛խ,- հառաչեց Թուրքիան,- քո ուժն իմ ձեռքում լիներ, ես ազգ չէի թողնի աշխարհում:

- Չէ՛, ես չեմ կարող,- ասաց Ամերիկան:

- Չես կարող, կոնցեսիայով** ես գամ կոտորեմ, երկիրդ սպիտակեցնեմ, հանձնեմ քեզ:

- Գնամ մտածեմ:

- Գնա՛ մտածիր: Ինձ որ մնա, բոլոր մեծ պետությունները մի օր ժողովի կնստեն, կկազմեն ցանկը այն բոլոր փոքր ազգերի, որոնք իրավունք չունեն երկրի երեսին ապրելու և այդ ցանկը կհանձնեն ինձ: Ես կամաց-կամաց կկոտորեմ:

- Կոտորել և հետո նստել ՄԱԿ-ում մարդասիրությո՞ւն քարոզել: Անպատիվ բան է:

- Լսի՛ր ասեմ. ես ազգ եմ կոտորում, դու չես կոտորում, ՄԱԿ-ը մեր երկուսի վրա տարբե՞ր աչքով է նայում:

- Մտածեմ՝ քեզ կասեմ,- ասաց Ամերիկան:

* Դելո մաստերա բայիտսյա (**дело мастера боится**) - ռուս. գործը վարպետից է վախենում:

** Կոնցեսիա (concessio) - լատ. զիջում, այստեղ՝ պայմանագիր, որով պետությանը պատկանող հողը՝ ընդերքի հարստությունը, ձեռնարկությունը և այլն հանձնվում են շահագործման:

- Եթե ինձ եք հանձնելու կոտորածը, մի օր առաջ ասեք, որ դանակս սրեմ...

Մարքսիզմ՝ միայն

Ո՞վ կապիտալիստական տերություններ, դուք, որ ձեր դռները փակել եք մարքսիզմի առջև, դռան հետևից մեջքներդ դեմ արել, որ ներս չմտնի, գիտեք, որ պատուհանից ներս է մտել արդեն, բազմել աթոռին և ձեզ է սպասում։

Հապա՛։ Աշխարհը կլոր է, մի բանից, որ փախչես, կերթաս դեմը կկանգնես։

Բայց մի՛ վախեցեք, այս մարքսիզմը տնտեսագիտական մարքսիզմ չէ ու չի սպառնում ձեր նյութական կարողությանը, սա դիվանագիտական մարքսիզմ է, որն իրոք մարդկանց տանում է դեպի հավասարություն։

Տնտեսագիտական մարքսիզմը գործ ունի կենդանի մարդու հետ և իրական չէ։

Մարդիկ կենդանի վիճակում երբեք չեն կարող հավասար լինել։ Կլինեն՝ մեկը՝ երկար, մյուսը՝ կարճ, մեկը՝ խելոք, մյուսը՝ անխելք, կգտնվեն աշխարհում գեղեցիկ և տգեղ կանայք։ Իսկ այս որ եղավ, վերջ հավասարության և երջանկության։ Տգեղ կին ունեցողը միշտ պիտի հարևանի կնոջը տիրանալու ձգտի, չհասնի ու ինքզինքը դժբախտ զգա։

Հետո ինչպե՞ս կարելի է Շեքսպիրին, Բոնապարտին կամ հռոմեական որևէ կայսեր բեռնակրի կամ դռնապանի կարգը դասել։

Հապա փորձի՛ր Հովհաննես Շիրազին մյուս սովետական գրողներին հավասարեցնել, տես՝ քանի կլոր-կլոր հայհոյանք կստանաս։

Իսկ դիվանագիտական մարքսիզմը թեև կենդանի մարդուն ոչինչ չի տալիս, բայց մեռածին ապահովում է իսկական հավասարությամբ, այն էլ առհավետ։

Որպիսի՞ք են Մարքսի տնտեսագիտական հայացքները։ Այն, որ մրցման հետևանքով կապիտալը պիտի կենտրոնանա մի երկու ձեռնարկատիրոջ մոտ, մարդկությունը վերածվի բանվորության, «պրոլետարները բոլոր երկրների» պիտի միանան և մեջտեղից վերցնելով այդ երկու ձեռնարկատերերին՝ իրենց ձեռքը վերցնեն համաշխար-

հային արդյունաբերությունը և ապրեն հավասար և այնպես քայլեն, որ ետ ու առաջ մնացող չլինի՝ մեկ-երկու, մեկ-երկու։

Իսկ այդ չի լինի, որվհետև շարքում կլինեն հիվանդներ, առողջներ, կաղեր, սաղլամներ, նեղ փեշ հագած կանայք և լայն գիշերազգեստով մարդիկ, կույրեր, որոնք պիտի քայլեն ոչ թե սաղերի կողքին, այլ հետևից՝ նրանց փեշը բռնած, երկարահասակ մարդիկ մեծ քայլ պիտի գցեն, կարճահասակները՝ փոքր, և այլն, և այլն... Մի խոսքով՝ դա անհնարին է։

Իսկ դիվանագիտական մարքսիզմն արդեն իրականացած է։ Քաղաքական կյանքի նախաձեռնությունը կենտրոնացած է ներկայիս Մոսկվայի և Վաշինգտոնի ձեռքին, աշխարհի մնացած պետությունները դարձել են իսկական պրոլետարներ՝ զուրկ իրենց կյանքը տնօրինելու իրավունքից, երկու խմբի բաժանված՝ մտել են այդ երկու մայրաքաղաքների հովանու տակ և ակնապիշ նրանց են նայում՝ իմանալու համար, թե ինչ սև պիտի բերեն իրենց գլխին...

Բոլոր նշանները ցույց են տալիս, որ Մոսկվան ու Վաշինգտոնը պիտի զարնվեն իրար երրորդ համաշխարհային պատերազմով։

Ատոմային ռումբ պայթեց՝ պրծավ աշխարհը հավասար ու երջանիկ գերեզմանոց կդառնա... իր բոլոր հարմարություններով։

Էլ ո՛չ հարուստ, ո՛չ աղքատ, ո՛չ սիրուն, ո՛չ տգեղ։

Խաղաղությո՛ւն, եղբայրությո՛ւն, հավասարությո՛ւն։

Եվ իսկական, ոչ թե կեղծ։

Միայն... միայն... միայն, եթե այդ անիրավ կրոնը չխանգարի։

Կրոնը, որ խանգարում է մարդուն թե՛ կենդանի, թե՛ մեռած ժամանակ։

Եթե Աստված գոյություն ունի, պիտի հարություն տա մեռելներին, վերջին դատաստանում դատի. մեկին արդար հանի, մյուսին՝ մեղավոր, ու էլի՛ անհավասարություն, էլի՛ անհավասարություն։

Այն ժամանակ ո՛չ Մարքսը կարող է մեզ փրկել, ո՛չ Էնգելսը։

Երանի Մարքսն իր տեսությունը սկսեր աստվածաբանությունից...

Խեչափառն ու կարապը

(Առանց ծկան)

Մի օր իրականությունն ու ֆանտազիան ընկերացան իրարու տնտեսական գծով, որոշեցին շրջել աշխարհի շուրջը և լիություն, առատություն սփռել ամենուրեք։

Ինչպես մի ժամանակ արեցին Սանչոն ու Դոն Քիշոտը՝ միայն քաղաքական թշվառությունը վերացնելու իմաստով։

Նախքան դուրս գալը երկուսն էլ մի-մի գռոտ* հորթ ունեին։ Բայց նույն երեկոյան՝ դեռ պանդոկ չհասած, ֆանտազիայի հորթը մեծացավ, հղիացավ ու մի հորթ բերեց, իսկ իրականության հորթը սովածությունից մզզում էր ու ոտների վրա չէր կարողանում կանգնել։

Մյուս առավոտյան, երբ շարունակում էին ճանապարհը, ֆանտազիան քշում էր՝ առջևը գցած իր կովին ու տրտինգ տվող հորթին, իսկ իրականությունը իր հիվանդ հորթին հրում էր, որ ետ չմնա։

Ճամփորդության երկրորդ երեկոյան ֆանտազիան արդեն երկու կով էր կթում՝ յուրաքանչյուրից տարեկան հինգ հազար կիլոգրամ կաթ հանելով։

Զանցած մի ամիս՝ ֆանտազիան արդեն ուներ մի նախիր՝ չորս հարյուր հինգ կովից ու տասը հազար ոչխարից բաղկացած։

Այսքան անասուններին կեր էր հարկավոր։

Եվ ֆանտազիան, մի օր ճամփից ետ մնալով, կանգ առավ և անասուններին կեր պատրաստելու համար ճակնդեղ և եգիպտացորեն ցանեց։ Մի գիշերվա մեջ դրանք աճեցին ու այնքան բերք տվեցին, ինչքան ցանկացավ ֆանտազիան։

Առավոտը վեր կենալով՝ ֆանտազիան իր հոտը առաջ քշեց՝ կաթով հեղեղելով ճանապարհը։ Բնակիչները չխեղդվելու համար փախչում էին տեղվանքից։

Ետ նայեց ֆանտազիան՝ տեսնելու, թե ուր է հասել իր ընկեր իրականությունը։ Տեսավ՝ փայտ է տաշում, բիզ պատրաստում, որ դրանով քայլեցնի իր անշարժ նստած մոզուն։

Ֆանտազիան չէր կարող սպասել նրան, նա թափով արշավում էր առաջ ու առաջ, մտնում էր բարձր կուլտուրա ունեցող երկրներ, հասնում ու նրանցից անցնում էր։

---

* Գռոտ- քոսոտ։

Նա արդեն աշխարհի շուրջը մի անգամ պտտվել էր, երբ իրականությունը, նստած իր հորթի մոտ, «բիժի» էր ասում։

Ֆանտազիան աշխարհի շուրջ իր երկրորդ շրջանն էր ուզում սկսել, երբ հանկարծ սոսկալի քաղց զգաց ու դառնալով իրականությանը՝ ասաց.

- Քանի որ քո հորթը քայլել չի կարող, բե՛ր մորթիր, ուտեմ, սոված եմ։

- Զարմանք բան... Դու ողջ աշխարհն ես կերակրում, ուզում ես իմ հորթո՞վ կշտանալ։

- Չեմ ուզում հասարակության վրա ծանրանալ։

- Ծանրացի՛ր։

- Չեմ կարող... թեթև եմ։

- Քա՛ր կապիր ոտքիդ։

- Պոկվեց քարը՝ կվերանամ երկինք...

- Եթե այդքան թեթև ես, հրթիռի ես հարմար, բարձրացրո՛ւ տիեզերագնացներին երկինք։

- Հորթդ չե՞ս մորթի։

- Ո՛չ։

- Էշ նստող Սանչո՛,- հանկարծ վիրավորվեց ֆանտազիան։

Բայց իրականությունը չվիրավորվեց։ Նա ասաց.

- Ավելի լավ է կուշտ փորով էշ նստել, քան սոված փորով՝ ձի։ Ձի նստել և քամի բարձրացնել...

Ինչից են առաջանում մեծ գյուտերը

Ամենա, ամենա, ամենափոքրիկ առտնին մի պատճառից։

Կոլումբոսը որ Ամերիկան գտավ, նրանից էր, որ մի անզգամ կին է ունեցել, որի երեսը չտեսնելու համար նստել է նավը և ասել.

- Գնամ կորչեմ, միայն կնոջս երեսն էլ չտեսնեմ։

Բայց պատահմամբ ոչ միայն ինքը չի կորել, այլև մի մեծ Ամերիկա է գտել։

Աստղագետը, որ մեծ համբավ ունի, անպայման շենքի յոթերորդ հարկում մի սիրուհի է ունեցել ու անվերջ կանգնել ու վերև է նայել։ Աղջիկը գնացել է մարդու, իսկ վերջինս երկար վերև նայելուց հետո, երբ սիրուհուն չի տեսել, ստիպված աստղերով է սկսել հետաքրքր-

վել ու դարձել է հռչակավոր աստղագետ։

Ինչ եք կարծում, անգլիացի սոցիոլոգ Թովմաս Մալթուսը[103], որ հնարեց իր մարդատյաց թեորիան և չէր ուզում, որ մարդիկ բազմանան, այլ ուզում էր՝ պակասեն, իր դրդապատճառը չունե՞ր։

Ուներ։

Եվ ազնվությամբ եմ ասում՝ եթե Մալթուսը չգրեր իր թեորիան ժամանակին, այսօր ե՛ս կգրեի։ Ճիտիս հասել է, ու չեմ համբերում։ Այո՛, մարդիկ շատ են շատացել, պետք է մի մասին կոտորել։

Այս տեմպով եթե մարդը շարունակի աճել, կգա ժամանակ, երբ մարդկային հասարակությունը այնքան կսեղմվի իրար, որ մեր ավտոբուսների ուղևորների նման չի կարողանա ձեռքն իր գրպանը տանել՝ տոմսի փող հանելու համար, և ուղևորությունը կդառնա անվճար։

Կանայք այնպես կկպչեն իրար, որ եթե ձեռք գցես մեկին սիրելու, տասը միասին կպոկվեն...

Այնպես որ, չեմ կասկածում, թե Թովմաս Մալթուսը ճիշտ այն դժվարություններն է ապրելիս եղել իր թեորիան գրելիս, ինչ ապրում եմ ես այս րոպեիս։

Իսկ ինչպե՞ս եմ ապրում ես։

Մի նեղ բակի մեջ սեղմված եմ չորս ընտանիքի արանքում, որոնցից երկուսը տատիկներ են և մայրերի բացակայության պատճառով խաղացնում են իրենց թոռնիկներին։

Ես էլ, դե, չէի ուզում ասել, բայց պիտի ասեմ՝ փիլիսոփա։ Մտադրվել եմ աշխարհի գոյության նպատակը իմանալ, նոր մեռնել։ Հետո էլ երիտասարդ չեմ։ Արդեն ժամանակս է։

Այսպես շտապ երբ մտածում եմ աշխարհի մասին և ապրելու մեջ մի քանի նպատակ եմ գտնում, մեկ էլ տեսար հյուսիսային հարևանս սկսում է թոցնել իր թոռանը և ասել.

- Տիմբլի պիտո՛, տիմբլի պիտո՛, նա-նա-նա, թը՛ռ, հա թռի, թոցնեմ, մեծ ամպերին հասցնեմ...

Ուզում եմ բարկանալ, բայց ո՞ւմ վրա։ Տատը բոլոր իրավունքներն ունի իր թոռնիկին ուզած բարձունքին թոցնել։

Չեմ բարկանում, անցնում եմ ննջարան և աշխատում ապրելու մի քանի իմաստ էլ այդտեղ գտնել։ Հաշվի անգամ չեմ առնում, որ ճոճուն մահճակալի վրա պառկած փիլիսոփայի մտքերը հաստատուն չեն լինի, բայց մտածում եմ։

Մտածել... բայց չէ՞ որ հարավային հարևանս էլ մի թոռ ունի, և պետք է մի որոշ բարձրության էլ նրան թռցնել ու մազերին, տոտերին, թշերին մի հիսուն անգամ «մեռնել»:

Թոռն աղջիկ է:

Հիմա ասե՛ք խնդրեմ՝ մարդու կյանքի նպատակները որքա՞ն պետք է շատ լինեն, որ այս անտանելի աղմուկի մեջ գեթ մի երկուսը գտնեմ:

Եվ այն էլ շտապ, որովհետև արդեն իմ երրորդ և չորրորդ հարևանուհիները հղի են և շուտով իրենց տատիկների համար թոռներ պիտի ծնեն, սրանք էլ ո՞վ գիտի ի՞նչ այլանդակ ձայներ հանեն նրանց թռցնելիս:

Չէ՛, ինչպես երևում է, ես առանց իմ աշխարհ գալու նպատակն իմանալու պիտի մեռնեմ:

Բայց որպես խոստովանք ասեմ, որ նեղ օրվա համար մի նպատակ պահել եմ մտքումս՝ անկախ շրջապատիս աղմուկից:

Մինչև հոգեվարքս եթե այլ նպատակ չգտա, «Ես աշխարհ եկա միմիայն կանանց սիրելու և այս բոպեիս հեռանում եմ աշխարհից՝ նրանց կարոտը սրտումս»,- պիտի ասեմ...

Սա իհարկե փիլիսոփայական իմաստով:

Եթե աշխարհը լայն լիներ, հարևանների արանքում մի փոքր տարածություն գտնվեր, գուցե իմ կյանքը այլ նպատակ ունենար: Բայց քանի որ նեղ է, իմ կյանքի նպատակն էլ այս է:

Արդյոք տարածությունը չէ՞ պատճառը, որ բոլոր մեծ մտածողները անապատներ են փախչում, ինչպես Տոլստոյը փախավ իր կյանքի վերջին վայրկյաններին[104]:

Եթե թույլ տրվեր ինձ Սահարա փախչել, գուցե ես կանանց այսքան շատ չսիրեի...

Հաագայի միջազգային դատարանը

Աշխարհում դեռ ինչքա՞ն բան կա, որ մենք չենք իմանում...

Դուք գիտեի՞ք, որ Նորվեգիան թագավոր ունի:

Ես չէի լսել:

Ես միայն գիտեմ, որ Իրանը բացեիբաց, առանց թաքցնելու իր թագավորն ունի, որ շահ է կոչվում, մեկ էլ Անգլիան, որն իր թա-

գավորին ցույց է տալիս միայն իր երկիրն այցելող բարձրաստիճան հյուրերին։

Ես չգիտեմ միայն, թե Անգլիայի ներկայիս թագավորը տղա՞ է, թե աղջիկ։ Որովհետև նրանցում սովորաբար մերթ թագավոր է նստում, մերթ թագուհի։

Լսել եմ, որ Շվեյցարիան էլ իր թագավորն ունի։ Է՛, եթե Շվեյցարիան ունի, ինչո՞ւ պիտի Ալբանիան չունենա, ինչո՞ւ պիտի Իսլանդիան չունենա։

Դրանք որտե՞ղ են պահում իրենց թագավորներին, որ ոչ ոք չիմանա։

Այս հաշվով իզուր հայերն էլ իրենց հին, լավ թագավարներից մեկն ու մեկին չեն թաքցրել նեղ օրվա համար։

Կարող էին Տիգրան Մեծին մի քիչ փոքրացնել և պահել։

Ո՞վ կիմանար։

Այս թագավորները ծովային բադի են նման։ Ջրի երեսին մեկ կերևան, հետո կսուզվեն։

Ասեմ անմիջապես, որ սա Հաագայի միջազգային դատարանն էլ ջրային թռչունի կնմանի։

Մեկ էլ տեսար վայրկենաբար երևաց, ու տասը տարի ո՛չ ձայն կա, ո՛չ ձուն։

Ես չգիտեմ, թե այս դատարանը իր կյանքի մեջ որևէ գանգատավոր պետության դատը կտրե՞լ է, թե՞ ոչ։

Իսկ միջազգային դատարանի դերը շատ մեծ պետք է լինի, և օրենքով բոլոր ազգերը պիտի սարսռան նրա դատավճռից։

Այնինչ մեղավոր ազգերին ո՛չ բանտարկում է, ո՛չ աքսորում, ո՛չ գնդակահարում։

Նա իր աչքով տեսնում է, թե ինչպես մի պետություն հարձակվում է մյուսի վրա, կոտորում ու երկիրն էլ գրավում, բայց իր կատարածուին չի ուղարկում և գրավված երկիրը տիրոջը չի վերադարձնում։

Ես հավատացած եմ՝ 15 թվին եթե հայերը բողոք ներկայացնեին, թե թուրքերը մեզ կոտորեցին, պիտի ասեր՝ լավ արին, ու մնացած հայերին էլ հավաքեր տար թուրքի ձեռքը, որ կոտորեր։

Սա դատարան չէ։

Եթե անգամ դատարան է, ապա դատավորը երկու աչքով կույր

է, որ աշխարհում ոչ մի անարդարություն չի տեսնում։

Եվ այդ այն ժամանակ, երբ ամեն ինչ անարդարություն է։

Բայց ինչ կասեք Իսպանիային, որը մեծ հույսեր է կապել սրա հետ։

Փաստաբան է վարձել և Ամերիկայից պահանջում է Ամերիկան՝ ասելով. «Դա մեր Քրիստափոր Կոլումբոսն է գտել, մեզ էլ պատկանում է»։ Եսիմ։ Կմնա փաստաբանի շնորհքը։ Եթե բաշարի, կարող է և՛ դատը շահել, և՛ Ամերիկային իր երկրից վտարել։

Ամերիկան կարող է ասել, թե շատ ժամանակ է անցել, և դատը իր վաղեմությունը կորցրել է, բայց Իսպանիան կարող է հարցը քննել հակողական կարգով. մի կարգ, որ հազարավոր տարուց էլ իր վաղեմությունը չի կորցնում։

Երևակայում եք, թե ինչ վիճակ կստեղծվի Ամերիկայի համար, եթե Իսպանիան դատը շահի։

Շալակի՛ր ամբողջ կարողությունդ ու երկրիցդ դո՛ւրս արի...

Դժվար է, չէ՞։ Նույնիսկ աներևակայելի։

Իսկ ինչպե՞ս մենք, մի ձեռք անկողին շալակած, մեր տուն ու տեղը թողինք թուրքին ու մեր երկրից դուրս եկանք 1915 թվին...

Մենք պզտիկ ժողովուրդ էինք, Ամերիկան՝ մեծ։ Մեծ պետության գլխին եղած աղետը մեծ է, իսկ փոքրինը՝ փո՞քր։

Փոքրինը զվարճությո՞ւն է, խա՞ղ, զբոսա՞նք...

Իսպանիա՛, հոգուդ մատաղ, դա՛տ բաց արա և աշխատի՛ր շահել։

Ու երբ Ամերիկան, իր անկողինը շալակած, պիտի անցնի Ջիբրալթարից՝ Անգլիա գնալու համար, երկու կողմից վրա՛ տուր և կոտորի՛ր նրանց այնպես, ինչպես վարվեցին մեզ հետ թուրքերը։

Իսպանիա՛, եթե կարող ես, մի վնաս էլ Գերմանիային տո՛ւր. նրանք էլ թույլ տվին հայերի կոտորածը։

Թեև ճիշտ է, նա իր պատիժը ստացավ, օձի պես մեջտեղից կտրվեց, և նրա մայրաքաղաքը անջատվեց մարմնից, բայց իր պոչով էլի նոր աղետներ է պատրաստում մարդկության համար։

... Ի՞նչ ասեմ, Իսպանիա՛, մեր ճարը դու ես, իբրև խեղճ պետություն՝ խղճա՛ մեզ։

Զգիտեմ՝ ո՞ր հայ բանաստեղծն է ասել.

Թշվառին թշվառն է միշտ մխիթար,
Որտեղ կգտնես ինձանից էլ թշվառ[105]...

Իսպանիա՛, կպի՛ր։

Օրենք

Ես եթե քսան ռուբլի փող ունենայի, մի փաստաբան կվարձեի և Աստծու ստեղծած մարդուն ապօրինի կհայտարարեի։

- Աստվա՛ծ,- կասեի,- դու մարդ ստեղծելիս ինչ օրենքով ես առաջնորդվել։ Ցույց տուր քո օրենսգիրքը, որտեղ պատճառաբանված լինի մարդու գոյության իրավունքը։

Այսինքն, որ մարդը խիստ անհրաժեշտություն էր, և աշխարհը մի րոպե իսկ չէր կարող գոյություն ունենալ առանց մարդու։

Այդպիսի օրենսգիրք գոյություն չունի, և դու սխալված ես։

Մի սխալ, որ համատարած նշանակություն ունի։

Լա՛վ, ասենք թե մի Աստված իր սեփական կարիքների համար իրավունք ունի ստեղծելու մի Ադամ և մի Եվա։ Ինչ իրավունք ունես նրանց բազմացնելու և հասցնելու երկու միլիարդի այն ժամանակ, երբ սովետական կառավարությունը գյուղացուն թույլ է տալիս պահել միայն մի կով և հինգ ոչխար...

Այն էլ մարդ, որը ո՛չ կաթ է տալիս, ո՛չ բուրդ, ո՛չ միս։

Ինչ կլիներ աշխարհի վիճակը, երբ մեր կառավարությունն էլ հետևելով քո օրինակին թույլ տար գյուղացուն անսահման բազմացնել իր հոտը։

Պարզ է. կլիներ կաթի ջրհեղեղ և երկրորդ անգամ մարդիկ պիտի խեղդվեին նրա մեջ՝ առանց իսկ որևէ հանցանք գործած լինելու։

«Ջուրը» քառասուն օրում չէր ցամաքի, Նոյի տապանը չէր իջնի Մասիսի վրա, ընդհակառակը, այդ «ջուրն» անվերջ կբարձրանար, և Նոյը այլևս գետնի երես չէր տեսնի...

Այս փորձանքից մարդկությանն ազատելու համար գիտե՞ս ինչ պիտի անես, Աստվա՛ծ։ Ասեմ։ Որպեսզի մարդիկ այսքան չբազմանան, պիտի որդեգրես կոլխոզային սիստեմ։ Այս սիստեմում ոչինչ չի բազմանում, և գնալով պակասում է անասունների թիվը։ Կա՛մ սովից են սատկում, կա՛մ քար ու քոլից են գլորվում. վերջապես պակասում են։

Թեկուզ Աստված լինես՝ երկու միլիարդ մարդ ոչ ոք իրավունք չունի պահել։

Հիմա՝ մի ուրիշ բան։

Մի րոպե ենթադրենք, թե դու Աստված ես, իրավունք ունես ապօրինի գործեր կատարելու։ Քո ստեղծած մարդն էլ պիտի օրենք

չունենա և ինչ ուզենա՝ անի։

Այդպես է դուրս գալիս։

Ադամից սկսած մինչև Մովսես մարգարեն մարդիկ անօրեն էին։

Դրախտից դուրս գալու հենց հաջորդ օրը Կայենը զարկեց իր եղբայր Աբելին սպանեց, և դրա համար ոչ միայն նրան չպատժեցին, չզինաթափեցին, այլ նրա գլխին կոտոշներ բուսցրին, որ հետագայում դեմն ելնողին ջարդի[106]։

Ոճրագործությունը կարելի՞ է զինել։

Ստալինն առանց կոտոշի քսան միլիոն մարդ սպանեց. եթե նրա գլխին էլ կոտոշներ բուսցնեիր, այսօր Ռուսաստանում մարդ չէր մնա…

Դու շատ հետո միայն օրենքի կարիք զգացիր՝ Մովսեսի ժամանակ, ու տվեցիր նրան քո «տասնաբանյա պատվիրանը»՝ նրանով առաջնորդվելու համար[107]։

Նրանում դու ասում ես մարդուն «Մի՛ սպանիր, մի՛ գողանա, մի՛ շնանա, աչքի տեղ՝ աչք, ատամի տեղ՝ ատամ և այլն»[108]։

Բայց դու այդ «պատվիրանը» տալուց հետո, այսքան ժամանակ մի օր գլուխդ բարձրացրիր՝ տեսնելու, թե քո հրամանները կատարվո՞ւմ են, թե՞ ոչ։

Ո՛չ, գլուխդ չբարձրացրիր ու չնայեցիր։

Քո պատվիրանը շատ նմանվեց կոլխոզների միջև կնքված սոցմրցման պայմանագրի։ Նրանք գալիս են իրար մոտ, ուտում, խմում, քեֆ անում և պայմանագիր են կնքում՝ պլանները գերակատարելու, մինչդեռ գնում են տեղները և շարունակում են թերակատարել, ինչպես կարգն է։

Օրենք հայտարարելը և չհետևելը նրա ճիշտ կիրառմանը մեծ աղետների դուռ է բաց անում բոլորի համար։

Մինչև քո օրենքը գուցե լինեին մարդիկ, որոնք չիմանային՝ ի՞նչ բան է սպանությունը կա՛մ գողությունը, կա՛մ շնությունը։

Քո օրենքը եկավ հիշեցնելու նրանց, որ աշխարհում կա սպանություն, գողություն և շնություն, և բուռն կերպով սկսեցին նվիրվել այդ հանցանքներին։

Մարդիկ սպանում էին իրար ոչ թե մեկ-մեկ, այլ ազգովին։ Ամեն պատերազմին հազարներ էին փռվում գետին, և սպանությունը սաստկանալով համարյա դարձավ մարդու արհեստը։

Այդ արհեստն այնքան զարգացավ, որ ստեղծեց ատոմային

զենք, որն այժմ սպառնում է աշխարհի գոյությանը։

Ա՛ռ քեզ օրենք՝ առանց վերահսկողության։

Հետո, Աստվա՛ծ, օրենք դնողը նախ ինքը պիտի կատարի իր դրած օրենքը։ Դու ողջ մարդկությանը դատապարտել ես մահվան, միաժամանակ արգելում ես անհատ մարդուն հավեսի համար մի մարդ սպանել։

Աստվածները, երկրի ղեկավարներն առհասարակ պետք է անձնական օրինակով ղեկավարվեն, և ոչ թե իրենք սպիտակ հաց ուտեն, իսկ ժողովրդին սև հաց տան…

Հիմա գանք գողությանը։

Դու ասում ես՝ մի՛ գողանա։

Այս հրամանը մասամբ կատարվում է, և ոչ թե որովհետև դու ես հրամայել, այլ որովհետև գոյություն ունեն շներ։

Գողը, որ մտադրված է մտնել իր հարևանի տունը, ոչ թե քո հրամանից է վախենում, այլ շնից, որ կապված է նրա դռանը։

Մի կատաղի շուն հազար քո հրամանն արժի։ Շան պակասությունը այն է միայն, որ քաղաքական հասունություն չունի և ում հացն ուտում է, նրան էլ պաշտպանում է։

Օրինակ, երբ չեկիստը մտնում է մի անմեղ մարդու տուն և նրան տանում կորցնում է, շունը չի հաչում վրան։ Հետո լագերներում էլ, երբ մի կալանավոր փախչում է, հասնում բռնում է ու, զորս դու պատվիրեցիր, գզգզում։ Դրանից զատ՝ շրջապատել է ողջ սովետական սահմանը և թույլ չի տալիս մի մարդու՝ արտասահման անցնի ու այս դժոխքից ազատվի։

Եթե այս պակասությունները չունենար, շունը գին չէր ունենա։

Երևակայեցե՛ք, մարդը շնանում է, բայց ինքը շունը, որ բոլոր իրավունքներն ունի շնանալու, ողջախոհ է։ Նա խիստ ժուժկալ է և տարին մի անգամ է միայն զուգավորվում ժառանգ ունենալու համար։ Եթե մի այլ կենդանի համաձայներ նրա համար ժառանգ ծնել, այդ էլ չէր անի։

Ափսոս կրթված շներ չունենք։

1917 թվականին, եթե մի կրթված շուն պահեր Ռուսաստանը, այդ շունը սահմանի վրա կանգնած կհաչեր և թույլ չէր տա, որ Լենինը Ռուսաստան մտնի, մարդկանց ինքնուրույն մտածելու իրավունքից զրկի, քաղաքացիական կռիվներում նրանց սպանի, հետո

էլ հանձնի Ստալինի ձեռքը, որ նա էլ կռիվներից հետո սպանի և այն դարձնի իրեն զբաղմունք...

Ես շուն եմ ուզում, որ պաշտպանի մարդկային բոլոր ազատությունները բռնակալներից։

Հա՛ֆ, հա՛ֆ, հա՛ֆ, հա՛ֆ ու այսպես անվերջ։

Աստվա՛ծ, հիմա գանք քո պատվիրանի այն մասին, որտեղ ասում ես «աչքի տեղ՝ աչք, ատամի տեղ՝ ատամ»։

Այդ հրամանն էլ չեն կատարում մարդիկ։

Մեր ակնաբույժներն օրը ցերեկով մարդկանց աչքերը հանում են՝ բոլորովին չմտածելով փոխարենը իրենց աչքերը հանել...

Ատամնաբույժները շարքով քաշում են հիվանդի երեսուներկու ատամները, իսկ հիվանդն իրավունք չունի նրա գեթ մի ակռան հանելու։

Էլ ինչ «ատամն ընդ ատաման»-ի մասին խոսք կարող է լինել։

Ես վերջացնում եմ իմ խոսքը, Աստվա՛ծ։

Բայց որպեսզի ինձ սխալ չհասկանաս, պիտի հայտարարեմ, որ ես ոչ մի օրենք չեմ ընդունում։ Եթե ևս մի քսան ռուբլի ունենայի, մի երկրորդ փաստաբան կվարձեի, որ ժխտեր օրենքի անհրաժեշտությունն առհասարակ։

Այն մարդը, որ առանց օրենքի չի կարող ինքզինքը կառավարել, թող չծնվի։

Ինն ամիս ինն օր ինչ օրենքով կառավարվել է իր մոր արգանդում, նույն օրենքով էլ թող աշխարհ գա։

Տարածության փիլիսոփայություն

Տարածությունը ոչ միայն քանակ է ու չափվում է մետրերով ու մղոններով, այլ նա նաև գերազանցապես որակ է։

Մեղվի փեթակում միևնույն ձուն եթե փոքր բջիջի մեջ է ածված, նրանից դուրս է գալիս մանր, աննշան աշխատավոր մեղու, իսկ եթե լայն բջիջի մեջ է ածված, որն ունի բարձր առաստաղ, այն ժամանակ դուրս է գալիս մայր մեղու կամ թագուհի, որը ղեկավարում է ողջ փեթակը։

Մարդկանց մեջ էլ է այդպես։

Կրեմլի լայն ու բարձր կամարների տակ ապրողները լինում են

ցարեր ու առաջնորդներ և ղեկավարում են ողջ երկիրը։

Մոլոտովն ու Կագանովիչը քանի Կրեմլում էին ապրում, մեծ էին, իսկ երբ դուրս եկան այնտեղից, այնքան փոքրացան, որ հիմա հասարակ աչքով չեն երևում։

Ասացեք խնդրեմ, եթե Տոլստոյը Ալբանիայում, Շվեյցարիայում կամ Իսլանդիայում ծնվեր, կարո՞ղ էր այդքան մեծ մտածող դառնալ։

Ո՛չ։ Նրա մտքերը, երկրի սահմաններից դուրս գալով, պիտի լցվեին Ադրիական կամ Հյուսիսային ջրերն ու ոչնչանային։

Վերցնենք Դանիան։

Ամբողջովին իրարից կտրտված մանր-մունր կղզիներ։ Այստեղ միթե կարելի է գրողից երկար ու կապակցված մտքեր պահանջել։

Լայն մտքերն աճում են տափաստանային վայրերում։

Վերցնենք Հայաստանը։

Ամբողջովին սար ու ձոր։ Գրողը մեծ ջանքերով մտքի բարձունքին հասած-չհասած, մեկ էլ տեսար, քննադատը ոտքի մի հարվածով վայր գլորեց ու փշուր-փշուր արեց մտածողին։

Այնպես որ, այսօր բոլոր սովետական գրողների փշրված մտքերը հոսպիտալում պառկած եմ անհույս, ու ոչ մի բժիշկ նրանց դուրս չի գրում։

Տարածությունը, սակայն, միայն մտքի, մարդու հոգու վրա չի ազդում։

Մարմինն էլ աճելու համար տարածություն է պահանջում։

Կարելի՞ է ֆուտբոլ խաղալ Բալկաններում։ Մի ուժեղ հարված, մեկ էլ տեսար՝ գնդակը չորս պետության գլխի վերևից անցավ։ Իսկ դա այլ պետությունների օդային տարածությունները խախտել է նշանակում։ Դե համմե, չորս պետությանց բողոքին պատասխանիր և ցույց տուր, որ գնդակը ճանապարհը կորցրել է։

Իտալիան ֆուտբոլի համար ստեղծված մի հրաշալի երկար ոտք ունի։ Բայց երկրի նեղ լինելու կապակցությամբ չի խաղում։ Այդ ոտներով միայն իր նախկին կայսրությունների ժամանակ կարող էր խաղալ, երբ ողջ աշխարհամասերը նրան որպես հրապարակ էին ծառայում։

Հիմա իր արձակած գնդակն Ալբանիան իսկ կարող է վերցնել և նրա գլխին տալ։

Շվեդիան ու Նորվեգիան, կպած իրարու, ո՛չ կարող են իրենց միտքը զարգացնել, ո՛չ մարմինը։

Նրանք միևնույն նստարանի վրա նստած այն աշակերտների նման են, որ ինչ շարադրություն էլ տաս գրելու, պիտի իրարից արտագրեն։

Այդպես է նրանց աշխարհագրական դիրքը, նրանք մեղավոր չեն։

Իսկ Ռուսաստանը։

Ա՛յ քեզ ֆուտբոլ խաղալու տեղ։

Եվրոպական մասից զարկ իր ասիական մասը, ասիական մասից զարկ եվրոպական մասը։

Ազատ տարածություն՝ ոչ միայն ֆիզիկական, այլև քաղաքական ֆուտբոլների համար։

Զարկ գնդակդ ցարական ճորտատիրությունից մինչև բոլշևիկյան ճորտատիրություն։

Պայմանով, որ ոչ մի այլ պետության օդային տարածություն չխախտվի։

Այս, նաև այն, որ ներկայիս սովետական իշխանությունն իր մամուլում շեփորում է ամեն տեսակի ազատություններ, ազատություններ, որոնց նմանը չունի աշխարհում ոչ մի այլ երկիր, պատճառ է դառնում, որ գունդ առ գունդ Միություն գան նեղ երկրների մտածողները։

Գան, ազատ մեկ-երկու ասեն, մարզանք կատարեն, գան ազատություն տան իրենց մտքերին և ուզած սկզբունքը դավանեն։

Արտասահմանյան տուրիստներ են գալիս այդ ակնկալիքով, բայց ավա՜ղ, այնտեղ չգտնելով իրենց սպասածը, փոր ու փոշման ետ են դառնում։

Նրանք գալիս, հաշվի չեն առնում սովետական ազատությունների առանձնահատկությունը։

Իբրև ազատության երկիր՝ Սովետական Միությունը մի ձու է, որի մեջ լցված են ոչ թե սպիտակուց ու դեղնուց, այլ «մարքսիզմ-լենինիզմ»։

Պիտի կոտրես այդ ձուն, լցնես գլուխդ, ու եթե կուզես գոգլի-մոգլի շինել նրանից, գդալն առած՝ անվերջ պիտի հարես ու միայն հարես՝ առանց որևէ պիտանի սնունդ ստանալու նրանից։

Այդ ձվի մեջ ազատ ես ամեն տեսակի մարզանք կատարելու, անգամ հինգ կիլոմետրի վրա վազք։ Կառավարությունը չի արգելում։

Սովետական Միություն այցելած յուրաքանչյուր տուրիստին եր-

կու առաջնորդ է կցվում, որպեսզի ցույց տա քեզ, թե ինչը պիտի տեսնես երկրում, ինչը չպիտի տեսնես, ինչը պիտի լսես, ինչը պիտի չլսես, ինչի հոտ պիտի առնես, ինչի չպիտի առնես։

Այդ երկու առաջնորդները, պարզ ասած, փոխարինում են քո հինգ զգայարաններին։

Մի հանգամանք, որ քեզ հնարավորություն է տալիս առանց Միություն այցելելու էլ հեռվից տեսնել Ռուսաստանը և զգալ...

Է՛, ինչ մնաս դրանից։

Փոխանակ աշխարհի բոլոր փիլիսոփայությունները դավանելու կարճ-կարճ՝ ավելի լավ չէ՞ մի շատ երկար «մարքսիզմ-լենինիզմ» դավանել միանգամից և հաշիվը փակել։

Փոխանակ կողքերից լայնանալու՝ մեկի պոչը բռնել և անվերջ շարունակել։

Մի երկարություն, որ ժամանակին եթե կտրատես, աշխարհի բոլոր փիլիսոփայությունները կստանաս։ Պայմանով, սակայն, որ այդ բոլոր փիլիսոփայությունները կոչվեն «մարքսիզմ-լենինիզմ»...

Պատմության ապօրինի զավակը

Հայ ազգը նախքան պատմության ասպարեզ դուրս գալը գնաց ֆալչու մոտ և ասաց.*

- Ուզում եմ պատմության ասպարեզ դուրս գալ, մի գարիդ գցիր, տեսնեմ՝ ինձ ինչ է սպասում։

Ֆալչին գարին գցեց ու ասաց.

- Վատ աստղի տակ ես ծնվել։ Դու քո կյանքի ողջ ընթացքին անվերջ պիտի կոտորվես ու միայն պիտի կոտորվես։ Հույները, պարսիկները, թաթարները, արաբացիք, թուրքերը, լեզգիները, վրացիք, աղրբեջանցիք, հայ բոլշևիկները, հերթի կանգնած, քո ճանապարհն են պահում, որ քեզ կոտորեն։

- Հայ բոլշևիկնե՞րն էլ,- սարսափած նկատեց Հայ ազգը։

- Հայ բոլշևիկը՝ ավելի անգութ։ Մինչ օտարը սրով պիտի կոտորի քեզ, հայ բոլշևիկը պիտի ընտրի, քո լավ մասը լցնի բանտերը և մեկ-մեկ դուրս հանելով՝ կացնով տա գլուխդ փշրի և իրար վրա ձկան նման դարսելով՝ թաղի գետնի տակ։

---

* Ֆալչի (falci) - թրք. բախտագուշակ, գուշակ։

- Վա՛յ մե՛ Հայը՝ հայի՞:

- Լազաթը սեփական ազգը ջնջելու մեջ է,- ասաց գրբացը ու շարունակեց,- ճիշտ է, առաջին նվագ դու կունենանաս արտաշես աշխարհակալներ, տիգրան մեծեր, բայց հետզհետե տիգրաններդ կփոքրանան այնքան, որ կանհայտանան, ու դու կմնաս մեն-մենակ կատաղած գազանների մեջ: Այնպես որ, քեզ խորհուրդ եմ տալիս՝ որտեղից եկել ես, էլի նույն տեղը վերադարձիր:

- Վերադառնալ չեմ կարող,- ասաց Հայ ազգը,- իմ ինն ամիս, ինն օր ու ինը ժամը արդեն լրացել է, ու չեմ կարող չծնվել: Կծնվեմ: Հետո ինչ լինելու է, կլինի: Այն, որ ինձանից չի կախված:

- Հաջողություն եմ մաղթում,- ասաց ֆալչին խղճահար:

- Հաջողություն կոտորվելու մեջ,- հեգնեց Հայ ազգը:

- Ամեն գործում էլ հաջողություն է պետք մարդուն:

Հայ ազգը մի փոքր մտածելուց հետո հարցրեց.

- Ինչ ասացիր: Ովքեր, ովքեր, ովքեր պիտի կոտորեն ինձ: Ժամանակագրական կարգով ասա՝ գրեմ, որ հետո չխառնեմ: Մեկն առաջ կոտորի, մյուսը՝ վերջ:

Ֆալչին մեկ-մեկ թվեց, վերջինս գրեց ու ցուցակը դնելով ծոցը՝ ճանապարհ ընկավ:

Դեմը ելավ դրանցից մեկը:

- Անո՞ւնդ,- հարցրեց Հայ ազգը:

- Հույն:

- Կաց, տեսնեմ՝ ցուցակումս կա՞ս:

Նայեց ու ասաց.

- Կաս, խնդրեմ, կոտորիր:

Երբ հույնը կամենում էր իսպառ բնաջնջել Հային, վերջինս բողոքեց՝ ասելով.

- Իրավունք չունես բնաջնջելու: Մենակ դու չես: Հապա մյուս կոտորողներին ի՞նչ պատասխան տամ ես...

Եկավ պարսիկը:

- Անո՞ւնդ:

- Պարսիկ:

- Խնդրեմ,- ասաց Հայը՝ վիզը ճկելով:

Երբ հերթը հասավ թուրքին, թուրքն ասաց.

- Արի հավատդ ուրացիր՝ քեզ խնայեմ:

- Խնայես որ ինչ, անցավոր կյանքիս համար իմ անանցը զոհեմ: Երբեք: Աշխարհում առաջին քրիստոնյան չի կարող մահմեդական դառնալ: Բայց քեզանից խնդրում եմ մի բան,- ասաց Հայը,- ինձ միանգամից վերացրու, որ փայ չմնա հայ բոլշևիկին. հայի ձեռքով որ սպանվեմ, գերեզմանումս անվերջ պիտի շուռ գամ ու չկարողանամ հանգստանալ:

- Իմ գործը չէ: Ես իմ մասը կսպանեմ, մնացյալը կտամ հայ բոլշևիկին, ինչ ուզում է անի: Ես ավելորդ թմ ունեմ ցավացնելու:

Իր մասն սպանելուց հետո, երբ մնացյալը հանձնեց հայ բոլշևիկին, պետք էր տեսնել վերջինիս հրճվանքը: Ուրախությունից մեկ խեղդամահ էր անում իր ազգակցին, մեկ կացնով էր խփում, մեկ սվին խրում զոհի կողքը, հետո, երբ հոգնում էր, շարքով կանգնեցնում էր ու պուլիմյոտով խռռացնում գետին:*

Հետո էլ ստուգում էր, որ չլինի մեկը դրանցից սխալմամբ ողջ մնացած լիներ:

*Այդ ստուգողին էլ անվանում էին «սմերտնիյ կոմիսար»**:*

Այստեղ պիտի նշեմ, որ Հայն իր կոտորվելու ընթացքին ոչ ոքից այնպես խնամող ու հոգածու վերաբերմունք չէր տեսել, ինչպես հայ բոլշևիկից: Ուրիշները խփում ու անցնում էին՝ առանց մահը ստուգելու, բայց հայը ետ էր դառնում, ստուգում:

Ինչ խոսք, որ միևնույն ազգի մարդիկ մի փոքր կողմնապահ են լինում միմյանց հանդեպ...

Զմոռանամ ասել, որ Հայ ազգի սպանողները, շարունակելով Շահ Աբասի կիսատ թողած գործը, քառասուն հազար հայ ընտանիք մի գիշերվա մեջ քշեցին Սիբիր...

Որպեսզի հայոց պատմությունը ամբողջական լինի, ինձ հարկավոր է հիշատակել նաև հետևյալը:

Երբ թուրքերն ամայացրին Տաճկահայաստանը 1915 թվականին, այնուամենայնիվ մի քանի մազապուրծ եղած հայեր դեպքից 50 տարի հետո դիմեցին մեծ պետություններին ու իրենց հողերը պահանջեցին Թուրքիայից:

Հայ բոլշևիկները, պաշտպան կանգնելով Թուրքիային, այդ խնդրարկուներին բռնեցին ու դատելով զինվորական դատարանում՝

---

* Պուլիմյոտ ***(пулемёт)*** - ռուս. գնդացիր:

** «Սմերտնիյ կոմիսար» ***(смертный комиссар)*** - ռուս. մահվան կոմիսար:

մահվան դատապարտեցին՝ ասելով.

- Ինչպե՞ս կարելի է թուրքի խաթրին դիպչել։

Վերջում էլի Թուրքիան գթաշարժվեց, ելավ միջնորդեց թե՝ ոչինչ, ես չեմ նեղանա նրանց պահանջից, քանի որ նրանց լսող չկա, խնայեցե՛ք նրանց կյանքը ու մի՛ սպանեք։

Դատապարտյալները, տեսնելով այս մարդասիրական արարքը, գնացին խնդրելու թուրքին թե՝ քանի որ աշխարհում հայություն չի մնացել, եկ դու մի փոքր հայացիր, որ մեր ազգն իսպառ չչքանա աշխարհի երեսից...

Թուրքը պատասխանեց.

- Սիրով հայ կդառնայի, բայց դժբախտաբար... թլպատված եմ։

Լուսանկարչական ճշմարտացիությամբ տալով հայ ազգի պատմությունը՝ անցնում եմ նրա տեսությանը։

Դարվինը ուսուցանում է, որ ապրելու համար պետք է հարմարվել շրջապատին։ Ասում է՝ անապատում եթե կարմիր թիթեռն ավազի գույն չառնի, անմիջապես կհափշտակվի գիշատիչներից։

Իսկ դու, Հա՛յ ազգ, կարմիր ծնվեցիր ու ողջ կյանքումդ կարմիր մնացիր կյանքի այս անապատում։

Ու անվերջ ծվատվեցիր։

Ազգ լինելու համար կա՛մ պիտի ուժեղ լինել, կա՛մ հարմարվող։

Իսկ դու ո՛չ այս եղար, ո՛չ այն։ Մեղավո՞ր են քո դահիճները։

Դու պատմության ասպարեզ իջար՝ մի հիվանդ ձիու վրա նստած, ձին վերջիվերջո բոլորովին կանգ առավ, անգամ գետին գլորվեց, իսկ դու մնացիր նրա գավակին նստած։

Մարդ ես, երբ տեսար՝ ձին նստեց, վայր իջնեիր և քայլեիր որպես ոտավոր։

Ո՞վ ես դու, գիտե՞ս։

Անցյալում՝ նախարարությունների մեջ պառակտված, ներկայումս՝ կուսակցությունների մեջ։

Եվ ինքներդ ձեզ կոտորում եք։

Եվ քեզ շրջապատող խեղճ այլազգիները, տեսնելով, որ դուք ձեզ լավ չեք կոտորում, կիսախեղդ եք անում, իրենց դրացիական պարտքն են կատարում՝ կոտորածում ձեզ օգնելով։

Եղբայրական օգնություն։

Չպիտի մեղադրել նաև հայ բոլշևիկներին։

Նրանց նպատակն է երջանկացնել մարդկությանը։ Եվ այդ անում են՝ կոտորելով մարդկանց։

Եթե նպատակը բարի է, ոչինչ, թող կոտորեն, կոտորելով չես մեռնի։

Հապա, դրությունն այսպես է, ո՞վ Հայ ժողովուրդ։

Փախչո՞ւմ ես Դարվինի օրենքից՝ երեսդ Դարվինի օրենքին դեմ կառնի, որովետև երկրագունդը կլոր է։

Այժմ ի՞նչ ես մնացել։ Մի բուռ, որ, հայերենը մոռացած, ռուսերեն է խոսում, այն էլ «Հայաստանում»։ (Իհարկե, սրտիցս արյուն է գնում Հայաստանը չակերտների մեջ առնելուս համար)։

Հետո, մի բուռ Պոլսում, որ թուրքերեն են խոսում, Սիրիայում, որ արաբերեն են խոսում, Ամերիկայում, որ անգլերեն են խոսում։

Ո՞ւր մնաց հայությունդ։

Տեսա՞ր, որ չկարողացար փախչել Դարվինի օրենքից։

Լավ չէ՞ր լինի, որ էն գլխից ընդունեիր։

Տիգրան Մեծին ասեիր՝ փոքրացիր՝ մենք ձուլվենք։

Դա ավելի պատվավոր ձուլում կլիներ, քան ներկայիս եղածը։

Երբ ճարահատ ես ձուլվում, ժողովուրդը դրան ասում է՝ «Իլաջ յոխտուր՝ խառաշո»*...

Ա՛խ, ա՛խ։ Աշխարհ է, էլի՛, ի՞նչ ասեմ։

Ո՞ւր է գնում մարդկությունը[109]

Քաղաքացիական կռիվների սկիզբը շատ ավելի հին է, քան կարծում են որոշ պատմաբաններ։

Դա ծնվել է մարդու հետ, և ասողներ կան նույնիսկ, որ մարդիկ մի քիչ իրար կոտորել, նոր են աշխարհ եկել...

Տիեզերական քաոսը պարզելուց հետո Աստված ստեղծեց նախ կենդանիներին, թռչուններին, նոր՝ մարդուն։

Երևակայեցեք մի աշխարհ՝ լցված ամեն տեսակի չորքոտանի գայլ ու գազաններով, իսկ այսկողմ՝ մի փոքրիկ դրախտում, կանգնած են մի Աստված, մի Ադամ ու Եվա՝ միևնույն կերպարանքով,

* «Կսկծու՝ փառք Աստծու» ասացվածքի թուրք- ռուսերեն համարժեքը։

միևնույն լեզվով, հոգեբանությամբ ու կուլտուրայով։

Ինչ կարելի էր ենթադրել։

Կարելի էր ենթադրել, որ այս երեք սրտակիցները, ի մի գալով, կռնակ-կռնակի տված, պիտի ապրեին՝ պաշտպանվելով գազանների հարձակումներից։

...Թեև, ճիշտ է, Աստված գազանին չէր ստեղծել, որպեսզի մարդու վրա հարձակվեր, այլ մարդը գազանի վրա պիտի հարձակվեր, բայց գազաններն այդ մասին բան չէին լսել և կարող էին հարձակվել։

Բացի դրանից էլ, նրանք զինված էին ժանիքներով, իսկ Աստված մարդու բերանում համապատասխան զենք դնելը մոռացել էր...

Հետևաբար, դրախտի երեք բնակիչներին մնում էր ապրել հաշտ ու խաղաղ՝ մի սիրտ, մի հոգի։

Բայց դժբախտաբար այդպես չպատահեց։

Աստված ընդամենը մի խնձորի համար կռվեց և դրախտից արտաքսեց իր կերպարանքով ստեղծված երկու էակներին։

Մեկը լիներ՝ հարցներ Աստծուն.

- Ա՛յ Աստվա՛ծ, քո խոհանոցից կատուները գունդ-գունդ մսերն առնում փախչում էին, ինչո՞ւ մի անգամ «փը՛շտ» չարիր, իսկ Ադամ-Եվային «փը՛շտ» արիր մի խնձորի համար ու դրախտից վռնդեցիր։

Ահավասիկ սա առաջին քաղաքացիական կռիվն էր, երբ հարազատները ձեռք էին բարձրացնում իրար վրա...

Կռիվը չվերջացավ դրախտից դուրս։

Մարդիկ բազմացան և շարունակեցին կռվել իրար հետ ավելի ուժգին թափով, քան առաջ։ Բայց այս կռիվը «քաղաքացիական» չէր կոչվում, որովհետև այն ժամանակ մարդիկ ապրում էին քարանձավներում։

Քաղաքացիական կռիվն իր հունի մեջ մտավ այն ժամանակ միայն, երբ մարդիկ ստեղծեցին ոչ միայն քաղաքներ, այլ նաև մայրաքաղաքներ, որից հետո ոչ միայն մարդը մարդու վրա էր հարձակվում, այլ նաև ազգն ազգի։ Այս քիչ համարելով՝ ստեղծեցին կրոններ, աղանդներ այնքան շատ, որ կռվի պատճառը երբեք չպակասի, և մարդիկ, առանց նոր պատճառներ փնտրելու, կարողանան բարեհաջող կերպով վերջ տալ իրենց գոյությանը։

Կռիվը սաստիկ էր, բայց կռվի պատճառներն այնուամենայնիվ պակասեցին։

Այդ պակասը լրացնելու համար մարդիկ հագան սպիտակ և կարմիր շորեր և մի փոքր էլ այդ կերպ կոտորեցին իրար։

Բաղնիքում, շորերը հանած, սիրով, եղբայրաբար լողանում էին իրար հետ, իրար կռնակները փոխադարձաբար տրորում, բայց հենց որ հագնում էին իրենց գունավոր շորերը, սկսում էին իրար կոտորել։

Այս բոլորը ոչինչ, ոչինչ, թող եղբայրը եղբորը կոտորի, Կայենն էլ զարկեց իր եղբայր Աբելին սպանեց, բայց մարդկությունը դրանից չտուժեց։

Ես վախենում եմ մի ավելի վատ բանից։

Այս գիշեր գիտե՞ք՝ ինչ պատահեց ինձ հետ...

Մի սարսափելի բան։ Պատմեմ՝ չեք հավատա։

Ես երազումս հանգիստ քնած էի։ Մեկ էլ տեսնեմ՝ իմ ոտներն ու ձեռները ծածուկ արթնացան և մի առանձին սենյակում գաղտնի ժողով գումարեցին։

Ինչպես հետո պարզվեց, որոշել էին ապստամբել և գլխիս ոչ մի հրամանը չկատարել։

Հիմա արթնացել եմ երազումս և ոտներիս ասում եմ.

- Ինձ տարե՛ք լվացարանի մոտ՝ լվացվեմ։

- Չենք տանի,- ասում են։

Ձեռներիս ասում եմ.

- Ահա ջուր, զարկե՛ք երեսիս՝ լվացվեմ։

- Չենք զարնի,- ասում են։

Շվարեցի, կանգնեցի։ Ձհանն՝մը լվացվելը, պետքարան եմ ուզում գնալ, տանող չկա...

Մի փարիզյան գործադուլ՝ քաղաքի բոլոր տրամվայները կանգնած...

- Ի՞նչ է պատահել,- հարցնում է գլուխս։

- Մենք այլևս քեզ չենք ծառայի ու քո ոչ մի հրամանը չենք կատարի,- պատասխանում են իմ ոտները։ - Մինչև օրս դու մեզ վրա իշխեցիր, սրանից հետո մենք քեզ վրա պիտի իշխենք։ Անցան այն ժամանակները, երբ արվեստը, գիտությունը, տաղանդն ու հանճարն էին կառավարում աշխարհը։ Հիմա ոտներն են կառավարում։ Տո՛ւր ինձ մի ֆուտբոլ, մի դատարկ, օդով լիքը փուչիկ, ես աշխարհն իր առանցքից շեղեմ։ Դու Ազիզբեկովի հրապարակում[110]

գիտական ակումբ ես հիմնել և դասախոսություն ես կարդում: Ասա՛, իսկի մարդ հաճախո՞ւմ է այդ ակումբ՝ դասախոսությունների: Ո՛չ: Իսկ գնա՛ ստադիոն ու տե՛ս՝ ոնց են մարդիկ տեղի համար իրար կոտորում, իրար գլխի նստում: Անձրև է գալիս, կարկուտ, կայծակ է պայթում, փայլակ շանթում, բայց մի մարդ չի մտածում տուն փախչել: Ավելին: Տնից մարդ են ուղարկում, թե շուտ հասի՛ր, տունը կրակ է ընկել, վառվում է, չի լսում. ասում են՝ կնոջդ սիրեկանը փախցրեց, չի լսում. չի շարժվում մինչև անգամ այն ժամանակ, երբ ասում են՝ ե՛կ վերջապես, բնակբաժինը քեզ երեք սենյականոց բնակարան է տալիս...

Լսում է այս, հետո գլուխս դառնում է ձեռներիս: Ասում է.

- Լա՛վ, մասամբ ճիշտ է, որ ոտները ղեկավար դեր ունեն հիմա, ֆուտբոլը նրանց զարդարեց: Դո՞ւք ինչացու եք, որ ապստամբում եք:

- Մենք,- ասացին ձեռներս սպառնական,- դու մեզ հետո կճանաչես: Դու աշխարհի բոլոր խելքերը կիտի՛ր քո գլխին, մի տես՝ մենք ոնց ենք կաշվե ձեռնոցները հագնում և այնպես դնչիդ հասցնում, որ գլուխդ շշմի, վայր գլորվես: Մեզ բռնցքամարտ են ասում, հասկանո՞ւմ ես...

Ես պարտված էի ու անել վիճակի մատնված:

Ի՞նչ անեմ:

Քիչ մտածելուց հետո վեր կացա, մի մեծ գնդակ վերցրի ու բարձրացա Աստծու մոտ: Ասացի.

- Աստվա՛ծ, քո տված գլուխը հիմա այլևս բանի պետք չէ. վերցրո՛ւ, խնդրում եմ, գլուխս և տեղը այս գնդա՛կը դիր...

Ու Աստված լսեց իմ խնդիրը:

Միայն այն ժամանակ, երբ, գլուխս վար առած, ամրացնում էր գնդակը, ասացի.

- Աստվա՛ծ, խնդրում եմ, ամրացնելուց առաջ մի լավ ստուգի՛ր, չլինի գնդակի մեջ էլ սխալմամբ խելք մնացած լինի...

Քիմիա[111]

Ասում են՝ հրաշքների դարն անցել է, մինչդեռ քիմիան նոր է սկսում հրաշքներ գործել։

Անցյալ օրը լրագրում կարդացի մի ակնարկ, որի մեջ հեղինակը մեկ-մեկ նկարագրում է, թե քիմիայի օգնությամբ Հայաստանի քարերից ինչեր կարելի է պատրաստել։

Մետաքսի թելեր, բուրդ, բամբակ, կապրոն։

Եվ այն տպավորությունն ստացա, որ չկա բան, որ կարելի չլինի պատրաստել քարից։

Բոլորն էլ արհեստական։

Ինչքան էլ կամենանք ակնարկի մեջ հայրենասիրական մոտիվներ փնտրել, ասել, որ հեղինակը կամեցել է մեր քարքարոտ հայրենիքը արժեքավորել, այնուամենայնիվ փաստը մնում է փաստ։ Քարը դուրս է եկել իր հունից և հոսում է մեր արդյունաբերության մեջ այնպիսի թափով, որ վախ է ազդում մեր շինարարներին այն իմաստով, թե պիտի գա մի օր, երբ քարը պիտի պակասի շինարարության մեջ գործածելու համար, և ստիպված լինեն մետաքսե տներ կառուցել։

Մի տեսակ արդյունաբերական խուճապ։

Բայց այս էլ ասեմ, որ սխալ կլիներ քիմիայի այս հաղթանակը վերագրել քսաներորդ դարին։

Քիմիան շատ հնուց ծանոթ է եղել մարդկությանը, և մինչև անգամ ավելի խիզախ փորձեր են կատարվել, քան այժմ։

Աստվածաշնչի մեջ ակնարկներ կան քարից մարդ պատրաստելու մասին։

Երբ Իսրայելի ժողովուրդն ամբարտավանացել էր Աբրահամի որդին լինելու կապակցությամբ, Աստված սաստեց՝ ասելով.

- Զգուշացե՛ք չափազանցությունից, եթե ես կամենամ, քարերից Աբրահամի որդիներ կշինեմ[112]։

Եվ կշիներ, եթե Իսրայելը չզգաստանար։

Նույն Աստվածաշունչն ընթերցողին կանգնեցնում է մարդուց քար ստեղծելու փաստի առջև։

Աստված, երբ կործանում էր Սոդոմ-Գոմորն իր ամբարիշտության համար, նախապես քաղաքից հեռացրեց Աբրահամի եղբոր

որդի Ղովտին իր ընտանիքով, բայց պայմանով, որ գնալիս ետ չնայեն։

Ղովտի կինը, անսաստելով տիրոջ հրամանը, ետ նայեց ու տեղն ու տեղը քարացավ*[113]...*

Եվ վերջապես Աստվածաշունչը պատմում է մի դեպքի մասին, երբ ժողովուրդը, կորցնելով իր իսկական Աստծուն, ոսկի հորթից քիմիական աստված է շինել և պաշտել[114] այնքան հաջող, որ գերազանցել է Աստծու պաշտամունքը։

Ասացե՛ք, խնդրեմ, հիմա մենք կարո՞ղ ենք քարից արհեստական մարդ ստեղծել կամ մարդուց քար և կամ թե քիմիական աստված։

Ո՛չ, չենք կարող։

Իսկ եթե ապագայում մեզ հաջողվի այդ, ա՛յ, այն ժամանակ միայն արժե աշխարհ գալ ու ապրել։ Այն ժամանակ քիմիան ոչ միայն արդյունաբերական հեղաշրջում կմտցնի մեր կենցաղում, այլև կբավարարի մեր բոլոր հոգեկան պահանջները։

Գիտե՞ք ինչ։

Ներկայումս մարդիկ աշխարհ են գալիս բնական ձևով։ Ով ինչպես կամենա։

Նրանք պատկերացում չունեն աշխարհի կարգ ու կանոնի մասին և աշխարհ են գալիս անկարգ։ Ծնվում են ուրույն կերպարանքով, ուրույն մտածելակերպով ու սկզբունքներով՝ առանց նկատի ունենալու շուկայի պահանջը։

Անտեղյակ մեր նորակառույցների նեղ ու երկար սենյակներին՝ մեկ էլ տեսար մեկը աշխարհ եկավ՝ հետը բերելով մի շատ երկար քիթ։

*Լա՛վ, ենթադրենք սենյակը իր երկարությամբ կարող է պարտկել այդ քիթը, բայց չէ՞ որ այդ մարդը պիտի դառնա սենյակում։ Ավտոն կմտնի՞ մի տուպիկ**, երբ գիտի, որ այլևս հնար չէ մեքենան ետ դարձնել...*

Այդ էլ ոչինչ։ Ասենք, թե դա մարմնական տարաձայնություն է, մի կերպ կարելի է հարթել։ Միգուցե նեղ սենյակի առաստաղն է բարձր, և մարդը, քիթը վեր տնկելով, կարող է դառնալ սենյակում։

Դժվարն ու անուղղելին սկզբունքի հարցն է։

---

* Անսաստել- անտեսել, արհամարհել։

** Տուպիկ ***(тупик)*** - ռուս. փակուղի։

Իր կամքով, ազատ ծնված մարդու սկզբունքն է, որ մեծամեծ աղետներ է բերում ծնվողի գլխին։

Մարդն, առանց հաշվի առնելու, որ մահմեդական պետության մեջ է ծնվում, աշխարհ է գալիս քրիստոնյա ու կոտորվում։

Կապիտալիստական աշխարհում ծնվում է որպես կոմունիստ, հալածվում։

Խեղճ քիթն ինչ է անում մարդուն։ Մարդու տունը սկզբունքն է քանդում։

Աշխարհի բոլոր պատերազմները, կոտորածները սկզբունքի շուրջ են դառնում։ Նյութական շահը ոչ մի դեր չի խաղում։ Եթե Գերմանիան երկու անգամ հարձակվեց աշխարհի վրա և կամեցավ գրավել այն, այդ արեց սկզբունքով։ Ինքն իրեն համարեց ընտրյալ ազգ, մյուսներին՝ ինքնակոչ, կամեցավ վերջ տալ նրանց։

Սրանով ես ուզում եմ ասել, որ բնական մարդը միշտ ենթակա է հալածանքի։ Մարդը պետք է լինի քիմիական, որ երջանիկ ապրի այս աշխարհում։

Թող ստեղծվի քարից, փայտից, ռետինից։ Միայն քիմիական կազմություն ունենա։

Եթե այդ գյուտը լիներ միջնադարում, Լենկ Թեմուրը վեր չէր կենա Միջին Ասիայից Հայաստան գա՝ Վանի բնակիչներին բերդից վար գլորելու։ Կվերցներ մի լեռնաշղթա, նրա քարերից հայեր կստեղծեր ու մի որևէ բարձրությունից վայր կգլորեր, իր սիրտը կհովացներ։

Եվ այդ գլորածների ոչ թե կեսը, այլ ամբողջն էլ... ողջ կմնար։

Թաթար վեհապետը բնույթով չար էր և մարդկանց միայն չարություն անել էր կամենում։

Սակայն միջնադարում չեն պակասել նաև բարի վեհապետները, որոնք կամեցել են մարդկանց երջանկացնել, բայց իրենց կամեցած եղանակով։

Իսկ ազատ ծնված բնական մարդն անգամ այստեղ է ըմբոստացել հանդեպ իր բարերարի և թշնամացել հետը՝ ասելով.

- Ես ունեմ սեփական գլուխ և սեփական համոզումներ, ինչո՞ւ պիտի քո ճաշակին ենթարկվեմ։ Դու մի՛ ստեղծիր ինձ համաձայն քո պատկերի, ես կստեղծվեմ իմ պատկերով։

Քիմիական մարդու ժամանակ եթե մեկը կամենում է հնազանդ

հպատակներ ունենալ, կարող է ուզած նյութից ստեղծել այդպիսիք և մի փոքր բարձր տեղ բազմած՝ հրամայել.

- Դեպի ա՛ջ դարձիր, մե՛կ-երկո՛ւ, մե՛կ-երկո՛ւ։ Դեպի ձա՛խ դարձիր, մե՛կ-երկո՛ւ։

Կարող է հրամայել նստել, կանգնել, պառկել, կկզել՝ գործադրելով ներկայիս բոլոր մարմնամարզական ձևերը։

Իսկ կերակրելիս տա՝ ուտի, չտա՝ չուտի...

Չէ՞, ինչ եք ասում, քիմիական մարդու առավելություններն անհաշվելի են։

Աստվածն անգամ, եթե քիմիական լիներ, այսօր գոյություն կունենար։

Անցավոր ու անանց կյանքի մասին

Ազգերն աշխարհ չեն եկել բոլորը մեկանց, խառնիխուռն, անկարգ։

Աշխարհ են եկել մեկ-մեկ և շատ կարգապահ։

Հարցրել են, թե ո՞վ է վերջը, և կանգնել նրա ետևը։

Առաջ գոյություն է ունեցել միայն Իսրայելի ժողովուրդը՝ իբրև Աստծու անդրանիկ զավակ։ Հետզհետե առաջ են եկել ասորա-բաբելացիք, հռոմեացիք, գերմանացիք, ֆրանսիացիք և շարքով իրար ետև կանգնած ապրել են։

Հայ ազգը, երբ հրապարակ եկավ, վերջում հույներն էին կանգնած։ Հարցրեց՝ ո՞վ է վերջը, և կանգնեց հույնի ետևը։

Տասնչորսերորդ դարում, սակայն, առաջ եկան օսմանյան թուրքերը և առանց վերջ հարցնելու՝ եկան մտան հայի ու հույնի արանքը։

Ինչքան հերթի ազգերը ետևից բղավեցին՝ հե՛տ արի, հե՛տ արի, հնար չեղավ կարգի հրավիրել այս ի ծնե անկարգ ժողովրդին։

Մեկը ետևից կանչեց.

- Ա՛յ թուրք, ինչո՞ւ ես անկարգություն անում, լեն-բոլ աշխարհ է, վախենաս՝ տեղ չգտնե՞ս ապրելու։

Ինչքան հայն ու հույնը իրար կպան՝ նրան տեղ չտալու համար, չեղավ։ Մի մաս հայերից, մի մաս հույներից կոտորելով՝ իր համար տեղ բաց արեց ու մտավ Փոքր Ասիա։

Մի ազգ ետևից փսփսաց հայի ականջին.

- Մի՛ հակառակի, այդ նրա սովորությունն է: Նա ո՛չ դուռ է ճանաչում, ո՛չ պատուհան. ուզած տեղը ջարդում ու մտնում է:

Հայն ու հույնը ի՞նչ կարող էին անել. մեկը գլուխն աջ թեքեց, մյուսը՝ ձախ, համակերպվեցին, նստեցին:

Բայց որովհետև առածն ասում է՝ չկա դժբախտություն առանց բարեբախտության, այդ պատճառով էլ մահմեդական Թուրքի և քրիստոնյա հայի միատեղ ապրելը երկուստեք դարձավ մեծ բարեբախտություն:

Երկու կրոններն էլ այս աշխարհը համարում են ժամանակավոր օթևան և աշխարհ են գալիս նրա համար միայն, որ այս ժամանակավոր կյանքով հավիտենական կյանք ժառանգեն:

Իսկ այդ կյանքը ժառանգելու համար քրիստոնյա հայն իր կյանքը պիտի զոհեր հանուն իր կրոնի, մահմեդական Թուրքն էլ հետևելով Մուհամմեդի քարոզին պիտի կոտորեր քրիստոնյային, որ մյուս աշխարհում արքայություն և հուրի-փերիներ ժառանգեր:

Արդ, եթե հային չպատահեր Թուրք, որ հային կոտորելով օգներ նրան արքայություն գնալու, և Թուրքին չպատահեր հայ, որ կոտորվելով պատճառ չդառնար Թուրքի հավիտենական կյանք ժառանգելուն, նշանակում է երկու արքայություններն էլ պիտի մնային... դատարկ:

Ռաֆֆին իր վեպերից մեկում մեղադրում է հայերին՝ ասելով.

- Եթե դուք եկեղեցիների տեղ բերդեր շինեիք, խունկի փոխարեն վառոդ ծխեիք, այս վիճակին չէիք արժանանա[115]:

Սխալ էր Ռաֆֆին: Հայերն իրենց հեթանոս ժամանակ ոչ միայն բերդեր էին շինում և վառոդ ծխում, այլև մինչև անգամ իրենց համար հատուկ մի պատերազմի Աստված էին պահում, բայց բան դուրս չեկավ: Ու որպեսզի հայերը և՛ մարմնավոր, և՛ հոգևոր արքայությունները չկորցնեին միաժամանակ, անցավոր կյանքից ձեռք քաշեցին՝ հետևելու համար անանցին:

Եվ եթե դուք թերթելու լինեք հայ պատմության էջերը, պիտի գտնեք բազմաթիվ մարդկանց անուններ, որոնք նահատակի անուն վաստակելու համար կամովին զոհ են գնացել Թուրքի յաթաղանին:

Այս Ասիայում:

Բայց չէ՞ որ Եվրոպայում էլ կային քրիստոնյա պետություններ, որոնք նույնպես ուզում էին սուրբ նահատակներ դառնալ, բայց

իրենց կոտորող չկար…

Ուստի հարց հարուցեցին Աստուծո առաջ թե՝ Եվրոպայի համար էլ մի թուրք պետություն առանձնացրու մեզ կոտորելու, մենք էլ ենք կամենում արքայություն գնալ։

Աստված նրանց խնդիրը կատարած լինելու համար կանչեց Գերմանիային, գոտուց մի միջնադարյան կեռ թուր կախեց և ասաց.

- Դու կլինես Եվրոպայի թուրքը, պատահած քրիստոնյային կնահատակես, որ գա արքայություն։

Իսկ Գերմանիան, փոխանակ քրիստոնյայի, վերցրեց խեղճ հրեաներին կոտորեց՝ առանց նկատի ունենալու, որ հրեան ոչ միայն քրիստոնյա չէ, այլ նաև Քրիստոսին խաչողն է եղել…

Արդ։ Մարդիկ, այսպես փոխադարձաբար իրար օգնելով, դրախտ են գնում։ Ինձ շատ հետաքրքիր է իմանալ, թե այս նույն հարցը կենդանիների մեջ ինչպե՞ս է լուծված։

Ոչ մի կենդանաբան ցայսօր կենդանու հոգևոր կյանքի մասին բան չի գրել։ Մենք չգիտենք՝ կենդանի՞ն էլ մարդու նման հոգի ունի, թե՞ միայն մարմնից է բաղկացած։ Եթե հոգի ունի, ապա ո՞վ է նրանց թուրքը, որ նահատակի և դրանով նրանց արքայություն ժառանգություն տա։

Իմ կարծիքով՝ պետք է ունենա, որովհետև մենք բոլորս միևնույն Աստուծո ստեղծածն ենք և ապրում ենք ու մեռնում միակերպ։

Եթե ճիշտ է իմ կարծիքը, և կենդանիներն էլ միևնույն ցավով են տառապում՝ ձգտելով անանց կյանքի, ապա հարց է առաջանում, թե կենդանիների մեջ որո՞նք են քրիստոնյաներ, որո՞նք մահմեդականներ։

Այլ խոսքով՝ նրանք էլ թուրք ունե՞ն։

Այս անգամ էլ կարծում եմ, որ ունեն։

Քրիստոնյաները ոչխարներն ու մյուս խոտաճարակներն են, իսկ թուրքերը՝ վագրը, գայլն ու բորենին։

Ձեռքի տակ ունենք, ուրեմն, երկու տեսակ թուրք՝ մարդ-թուրք և գազան-թուրք։

Այս թուրքերը տարբերվում են իրարից իրենց հեռատեսությամբ։

Մարդը միանգամից վերջ տվեց իր երկրում ապրող հայերին, իսկ գազանը իր նահատակներին շատ խնայողաբար է ոչնչացնում։

Թուրքիան այժմ «ա՛խ» է քաշում, որ մի հայ ճարի ու սպանի, չի հաջողում: Մեռնողը մեռավ, մնացյալը փախավ արտասահման:

Արտասահմանյան հայերը ուզում են վերադառնալ Տաճկաստան, բայց վախենում են, որ տաճիկները նրանց... չկոտորեն:

Բու

Այսօր Լոնդոնից նամակ ստացա:

Գրում է Ջոն Քլայնը:

Աշխարհում էլ ածական չի թողել, բոլորը հավաքել է իր նամակում՝ իր երախտագիտությունը հայտնելու ինձ այն լավության համար, որ ես արել եմ իրեն:

Նա Լոնդոնի կենդանաբանական պարտեզի դիրեկտորն է: Անցյալ տարի ծանոթացա հետը, երբ անգլիացի գիտնականների հետ Հայաստան էր եկել:

Ինչպես ինքը պատմեց, սատկել է Լոնդոնի կենդանաբանական այգու միակ բուն, ու դիրեկտորն ամբողջ աշխարհը ոտքի տակ է տվել՝ մի բու ճարելու, չի հաջողվել:

Ինձ խնդրեց օգնել իրեն այդ խնդրում:

Ես ասացի.

- Դժվար բու ճարես: Բվերը հրապարակ են գալիս միայն պատերազմներից հետո. երբ պատերազմը քարուքանդ է անում ամբողջ երկրներ և ավերակի վերածում, բվերը գալիս, տեղավորվում են այդ ավերակներում և սկսում են վայել: Վերջին պատերազմից անցել է քսանհինգ տարի, երբ ավերված երկրները վերաշինվել են ավելի փառավոր, քան առաջ էր: Քաղաքներում միլիոնավոր էլեկտրական ջահեր են վառվում: Այդ լույսի մեջ բո՞ւ կապրի:

- Հապա ի՞նչ անեմ,- հարցրեց Ջոնը,- հապա Անգլիայի կայսերական կենդանաբանական այգին անբո՞ւ մնա:

- Դու պիտի սպասես երրորդ համաշխարհային պատերազմին,- ասացի:

- Իսկ հույս կա՞:

- Չեմ կարող հաստատ մի բան ասել: Դա կախված է ամերիկյան նախագահի առաջիկա ընտրությունից: Ընտրությանը եթե կատաղիները հաղթանակ տանեն, պատերազմն անխուսափելի է:

Զոնն ուրախացավ ու ասաց.

- Ես պիտի աշխատեմ, որ անպայման կատաղիները հաղթեն:

Այս որոշումը լսելուց հետո ես սարսուռ զգացի:

«Ինչ եմ անում,- ասացի,- մի բվի համար ես հրահրում եմ Զոնին, որ պատերազմ սկսի...»:

Ու ճիշտ այդ ժամանակ հանկարծ մի լուսավոր միտք ծագեց գլխումս, և անմիջապես բռնեցի Զոնի ձեռքը՝ ասելով.

- Պատերազմ չսկսես, խնդրում եմ, ես քեզ բվի տեղ կասեմ: Բու կա մեզ դրացի Տաճկաստանում:

Թուրքիան հենց բվի առևտրով էլ ապրում է: Նա քանդեց հայկական վեց վիլայեթները և ավերակ դարձրեց, հիմա այնտեղ բվեր են պահում՝ աշխարհի բոլոր կենդանական այգիներին վաճառելու համար:

- Լա՞վ բվեր են:

- Ցեղական: Այնպես աղիողորմ են վայում, որ լողի սիրտը կտոր-կտոր է լինում...

Զոն Քլայնը համոզվեց, հրաժարվեց ամերիկյան կատաղիներին աջակցելուց և ձեռքս սեղմելով՝ Տաճկաստան անցավ:

Հիմա, ընթերցո՛ղ, համոզվեցի՞ր, որ աշխարհում ամեն դժբախտություն իր բարեբախտությունն ունի:

Եթե Տաճկաստանն իր երկիրը ավերակ չդարձներ, այնտեղ բվեր չհավաքեր, հիմա մեր Զոնը պիտի պատերազմ հրահրեր ու մի բվի համար ողջ աշխարհը ավերակի վերածեր:

Սիրո ջերմաչափ

Սերերը լինում են տարբեր ուժգնության:

Սեր կա, որ, դրոշակը բացած, «մահ կամ ազատություն» գոռալով, արշավում է իր սիրածի վրա:

Իսկ դա լինում է մարդու երիտասարդության ժամանակ:

Իմ տարիքի մարդիկ կին տեսնելիս պատրոնը* վերջացրած կռվողի նման միայն հո՛ւ, բո՛ւ են անում, որ մարդ վախեցնեն:

Մենք անցել ենք հարձակողականից ինքնապաշտպանության:

Չեմ ասում՝ կին չենք սիրում, սիրում ենք, բայց այնպես, օրինակ, ինչպես կովկասյան երեք հանրապետություններն իրար:

* Պատրոն (патрон) - ռուս. փամփուշտ:

Հենց նոր պատուհանիս տակից անցնում էր մի կին։ Ո՛չ գեղեցիկ էր, ո՛չ տգեղ։ Որին կարելի էր և՛ սիրել, և՛ չսիրել։ Ինձ շատ հարմար էր։

Պատուհանս բացի և ասացի.

- Տիկի՛ն, ես քեզ սիրում եմ։ Եվ եթե մի քիչ ուժ գործ դնեմ վրաս, կարող եմ քո հոգուն մատաղ լինել։ Գնա՛ ման արի, եթե ինձանից ավելի սիրող գտնես, կա՛ց նրա մոտ, հալալ լինես իրեն, իսկ եթե չգտար, ես այստեղ եմ, արդեն տունս ճանաչեցիր, ե՛կ, մի կերպ կհարմարվենք։

Երբ գնաց, վախն ընկավ սիրտս, ասում եմ՝ չլինի՞ վերադառնա հանկարծ։

Դա շատ անհարմար բան կլինի։

Մի անգամ այդպիսի բան պատահել է ինձ հետ։

Առանց մի կոպեկ ունենալու գրպանս՝ շուկա էի գնացել։ Մի մարդ մի սքանչելի զգեստի պահարան էր վաճառում։

- Ի՞նչ արժե,- հարցնում եմ։

- Հինգ հազար։

- Շատ թանկ ասացիր։

- Ի՞նչ կտաս։

- Չորս հազար։

- Չորս հազար հինգ հարյուր տո՛ւր, տա՛ր։

Ես, վախենալով, որ կարող է չորս հազարով տալ, քայլերս արագացրի, որ հեռանամ։

Տեսա՝ պահարանի տերը ետևից բղավում է.

- Չորս հազար, չորս հազար. արի՛, փողը տո՛ւր, տա՛ր։

Ես ոնց եմ փախչու՞մ...

Գիտեմ՝ անշնորհք բան է թղթի շերեփով փորձել հարիսայի կճուճից բան հանելը, բայց դե ի՞նչ անեմ։ Սատանան տանի, աշխարհից բոլորովին ձեռք քաշելն էլ դժվար է։

Մարդու սիրտն ուզում է։

Խորհուրդ[116]

Ընթերցո՛ղ, ես քեզ մի խորհուրդ պիտի տամ հիմա, որ ժամանակին, բան է, եթե Տեր մի արասցե, գրող դառնաս, քեզ պետք պիտի գա։

Անշուշտ, ոչ ոք իր կամքով չի ցանկանա գրող դառնալ, բայց սատանայական բան է, մեկ էլ տեսար՝ դարձար։

Միամիտ, կռանը ուսիդ, գնում ես դարբին դառնալու, մեկ էլ տեսար կես ճանապարհին մուսան դեմդ ելավ, կռանդ վերցրեց և գրիչ տվեց ձեռքդ։

Ուզես-չուզես պիտի գրես, ճարն ինչ։

Հա՛, ուրեմն ասեմ, թե գրող դառնալիս ինչ պիտի անես։ Երբեք անտաղանդ գրողի հետ չընկերանաս։ Նրանք այսպիսի սովորություն ունեն։ Կարդալով քո մեկ ոտանավորը՝ կվազեն մոտդ՝ քեզ «շնորհալի», «տաղանդավոր», «հանճարեղ» դարձնելու։

Պի՛նդ կաց ու դրանից ոչ մեկը մի՛ դառնա։ Դարձար՝ անմիջապես ափդ կխրի անճոռնի գրչի խազմզոց և կպահանջի փոխադարձել՝ իրեն նույնպես դարձնելով շնորհալի, տաղանդավոր, հանճարեղ։

Պարզ փոխառություն։

Այնպես, ինչպես մեկական կով ունեցողները կաթն իրար փոխ են տալիս ու առնում։

Մամուլի տակ են և շուտով լույս պիտի տեսնեն նրա բոլոր գրչախաղերը մի հատորի մեջ։

Այդ ժամանակամիջոցում օր ու գիշեր ետևդ ընկած՝ կուզենա քեզ ճաշարան քարշ տալ, կաֆե, գինետուն։

Չգնաս, ասա՝ դեղ եմ խմել, չեմ կարող։ Քեզ մի կերպ պահպանի՛ր մինչև գրքի լույս տեսնելը։

Անտեր մնա, գրքի ծնունդն էլ եթե երեխայի ծնունդին նմանվեր, մարդ ահագին հույսեր կարող էր կապել նրա հետ։ Որովհետև ծննդկանները շատ հաճախ մեռած են ծնում երեխային, իսկ մամուլը, որովհետև գիրք ծնելիս ցավ չի քաշում, ծնում է անվնաս։

Հիմա լույս է տեսել նրա գիրքը։

Ի՞նչ պիտի անես։

Առաջին հերթին փողոցում երբեք հեղինակին չպատահես։

Փա՛ռք Աստծու, Երևանի փողոցներն այնքան լայն են, որ դու կարող ես մի մայթից մյուսն անցնելով խուսափել նրան հանդիպելուց։

Բայց Երևանն ունի նաև նեղ փողոց. այդ դեպքում ինչպե՞ս պիտի ազատվես նրա ձեռքից։

Ասեմ։

Առաջին հանդիպմանը չես իմանա, որ լույս է տեսել գիրքը։

Երկրորդ հանդիպմանը կխոստանաս գնել գիրքը և կարդալ։ Երրորդին՝ գրախանութը «պերերիվ»* էր գնացել։ Չորրորդին՝ գնել եմ, բայց չեմ կարդացել, կինս ծանր հիվանդ է։ Հինգերորդին՝ ոչինչ, ասա՝ կինս մեռավ։ Ավելի լավ է կին չունենալ, քան խոտան գիրք արժեքավորել։ Հետո հաշվի՛ր՝ ընտանիքդ քանի անձ է, ամեն պատահելիս մեկը մեռցրու մինչև վերջին մարդը։ Իսկ նրանից հետո էլ բոլոր իրավունքն ունես նրան հանդիպելիս, ամեն անգամ թաշկինակը աչքիդ տանելով, քո սիրելիներին ողբալ։ Վիշտն այնպիսի բան է, որ քանի քաշես, կերկարի։

Տա՛ր, ընթերցո՛ղ, այս բոլոր պատուհասներն անտրտունջ տա՛ր ու անարժեք գիրք մի՛ գովաբանիր։

Անարժեք գիրքը պատուհաս է ողջ մարդկության համար։ Բանավոր ինչքան կուզես սուտ խոսիր, քամին կտանի։ Իսկ երբ սուտը ասվում է գրավոր, գիրքը մտնում է գրադարան, գլուխ պահում արժեքավոր գրքերի արանքում և սերնդեսերունդ հիմարացնում մարդկանց։

Փառակազմ գիրք՝ դարակում դրված։ Ի՞նչ իմանաս՝ մեջը հիմարություն է, որ չկարդաս։

Ավետարանի մեջ կա հիմար և իմաստուն կույսերի առակը[117]։ Գեթ գրադարանապետերը հիմար ու իմաստուն գրքերն առանձին դարսեին։

Այս բանը կօգներ դատավորներին։

Դատավորը գնդակահարությունը կարող էր փոխարինել նման գրքեր կարդալով... ցմահ։

Հանցանք և պատիժ

Երկուսի ծագումն էլ շատ հնուց է գալիս՝ Ադամի ժամանակներից։

Առաջին հանցանքը Եվան գործեց և առաջին պատիժն էլ ստացավ։

Բայց ինչպես ամեն բան աշխարհում, պատիժն էլ ունի իր էվոլյուցիան։

Աստված առաջին մարդուն պատժեց շատ կոպիտ, շատ խիստ

* Պերերիվ (**перерыв**) - ռուս. ընդմիջում։

ու դաժան, հեռու գնացող հետևանքներով:

Եթե նա մարդուն անմահությունից չզրկեր, այսօր մեր դատարանները պատժելիս ոչ թե մահվան կդատապարտեին հանցավորին, այլ ընդհակառակը, նրա կյանքն ավելի կերկարացնեին, որ տանջվեր...

Աստված միայն կոպիտ չէ, նա տեղ-տեղ նաև սուտ է խոսում:

Օրինակ՝ որպես թե Ադամին ստեղծեց իր կերպարանքով: Եթե Աստվածն ու Ադամը միևնույն կերպարանքն են ունեցել, ինչպե՞ս է պատահել, որ Եվան այդ երկու մարդկանց չի շփոթել իրար հետ, այն էլ գիշերվա մթին...

Այո՛, պատիժն էվոլյուցիայի ենթարկվեց, հղկվեց ու այնքան քնքշացավ, որ մարդ ուզում է պատժվել... անգամ առանց հանցանք գործելու:

Վատ միսն էլ վարպետ խոհարարի ձեռքին պիտանի է, այնքան, որ ճաշողը «մատներն էլ հետն է ուտում»:

Աստվա՛ծ, մի նայիր Օ գյուղի կոլխոզի այգուն: Քո դրախտից էլ մեծ է ու բոլոր տեսակի պտուղներով լիքը: Նրա պահակ Հովհենց Սանթրոսն ավելի լիազորություններ ունի այգում, քան դու քո դրախտում:

Ինչպե՞ս է պատահում, որ դրախտից ընդամենը մի խնձոր պոկելու համար շանթ ու կրակ ես թափում քո Եվայի գլխին, իսկ գյուղի բոլոր Եվաները գալիս բարձրանում են Սանթրոսին հանձնված այգու ծառերը, տոպրակները լցնում են տանձով, խնձորով, ծիրանով ու հեռանում անպատիժ կամ եթե պատժվում էլ են, այնքան քաղցր, այնքան դուրեկան, որ գարնանը, երբ դեռ պտուղ չկա այգում, գալիս ավանսով պատժվում են, որպեսզի աշնանը հանցանք գործեն...

Ամեն անգամ, երբ Սանթրոսն, իր այգին մտնելով, տեսնում է տասնյակներով Եվաներ՝ ծառերի ճյուղերից կախ, ուրախանում է ի տես ծառերի այդ ծանրաբեռնությանը և փոխանակ վար իջեցնելու՝ հենակներ է տալիս ծառերի տակ:

Որովհետև ծառ են բարձրանում գյուղի ամեն հասակի Եվանները, բերքահավաքին Սանթրոսը միանգամից թափ չի տալիս ծառը, որ խակն ու հասածը հավասարապես թափվեն գետնին: Մեկ-մեկ նայում է, հասածներին գրկի մեջ առած՝ ցած է բերում ու «պատժում», իսկ խակերին թողնում ծառի վրա, որ հասնեն:

Ստիպված եմ այստեղ խոստովանել, որ Սանթրոսը, մարդ լինելով, զուրկ է Աստծու «ամենակարողությունից»։

Ո՛չ, նրա ուժից վեր է այսքան հանցավորներին «պատժել», հետո էլ, քանի որ նրա ատամները բնական են, և չի կարողանում թթու խնձոր ուտել, այդ պատճառով էլ թթուներն ուղարկում է գրասենյակ՝ ծեր հաշվապահին, որի ակռաները պրոթեզ են։

Այդպիսիներին ասում է.

- Ձեր հանցանքը ծանր է, ես լիազորություն չունեմ ձեզ պատժելու, գնացեք վերադասիս մոտ։

«Վերադասը», որի համար քաղցր ու թթուն մի գին ունեն, պատժում և ճամփու է դնում։

Հիմա ինձ լսեցե՛ք։

Ճիշտ է, Աստվածն Աստված է, դրախտը դրախտ է, բայց մյուս կողմից էլ կոլխոզը կոլխոզ է և պարտավոր է աշնանը բերք բաժանել իր անդամներին։

Օ գյուղի կոլխոզի նախագահը յոթերորդ երկնքում է ապրում։ Աշնան բերքին մի անգամ իջնում եղածը բաժանում ու նորից, ավտոն նստած, հեռանում է։

Այս տարի որ եկավ, ծառերի վրա ոչ թե պտուղ, այլ տերև անգամ չէր մնացել…

Նախագահը, սակայն, անհատապես չհուզվեց. նա սրտի հիվանդություն ունի, և բժիշկները նրան արգելել են հուզվել։

Հուզվեց համայնական հուզումով, կոլեկտիվ հիմունքներով։ Իսկ դրան հուզմունք էլ չի կարելի համարել, ու կարիք էլ չկա։ Վատնո՞ւմ է տեղի ունեցել, հանցավորին ուղարկել դատարան։

Եվ վերջ։

Երբ Սանթրոսի և հաշվապահի գործը գնաց դատարան, դատավորն այդ գործը մի տարի հետո նայեց և դարձյալ չհուզվեց։

Մի տարվա մեջ մարդ իր ամենահարազատ մեռելին անգամ կմոռանա, ուր մնաց Օ գյուղի կոլխոզի տանձ ու խնձորը։

Բայց դե, քանի որ գործը մուծված էր դատարան, դատավորը չէր կարող վերջ ի վերջո չնայել։

Այնպես, ինչպես բժիշկն անհույս հիվանդին էլ պետք է մի բան ասի։

Դատավորը չէ, բայց դատախազը շատ կատաղած էր դատա-

վարությանը: Պահանջում էր յուրաքանչյուրին տասնհինգ տարի:

Էլ հայտնի չեղավ, թե դատախազը մի ուրիշի վրա էր բարկացել և փուքը խեղճ Սանթրոսի և անատամ հաշվապահի վրա էր թափո՞ւմ, թե՞ իրոք նրանք այդ պատժին արժանի էին:

Դատախազներին հասկանալ դժվար է առհասարակ. նրանք փչացած ջերմաչափի պես մեռածի թևի տակ քառասուն աստիճան տաքություն են ցույց տալիս, իսկ կենդանուն՝ զրոյից ցած:

Չեն էլ կռահում, որ մեռելն այդ աստիճան տաքության անկարող է դիմանալ...

Այո՛, դատախազը պահանջում էր:

Այնպես որ, պետք եղավ փաստաբան վարձել:

Վարձելիս փաստաբանը հարցրեց.

- Պետական՞ գնով պիտի վարձատրեք ինձ, թե՞ մասնավոր:

- Պաշտպանության երկու՞ ձև կա,- հարցրին մեղադրյալները զարմացած:

- Նորությո՞ւն է դա: Որտե՞ղ այդպես չէ: Պետական ատամնատեխնիկներին եթե մասնավոր չվճարես, այնպիսի ատամներ կշարեն բերանումդ, որով սիրածիդ թուշն էլ չես կարող կծել...

Եթե գերեզմանափորին ավելորդ փող չտաս, այնպիսի գերեզման կփորի, որ մեռելդ մի փոքր պառկելուց հետո կելնի, փոր ու փոշման կհեռանա...

- Ի՞նչ տարբերություն կա պետական և մասնավոր պաշտպանության մեջ,- հարցրին:

- Պետական պաշտպանության ժամանակ փաստաբանի նախադասությունը բաղկացած է լինում միայն ենթակայից ու ստորոգյալից: Ո՛չ մի լրացում, ո՛չ մի համանիշ կամ հոմանիշ: Իսկ անհատակա՞նը՝ կարկուտ: Եթե վարձատրությունը բարձր է, փաստաբանը, բառերից զատ, նաև գործի կդնի իր խելքը:

- Ամա՛ն, ոտքդ պագնենք, խելքդ գործի դի՛ր և մեզ ազատի՛ր: Ինչ ուզես, կտանք,- ասացին մեղադրյալները:

Եվ փաստաբանը մեջտեղ բերեց այնպիսի մի խելք, որ բեմում զոխի պես տնկված դատախազը թոշնած բաղեղի նման գլուխը կախեց:

Գիտե՞ք՝ որտեղից բռնեց փաստաբանը: Նա, ուսումնասիրելով «գործը», գտավ, որ Սանթրոսն ու հաշվապահն այս բոպեիս յոթանասուն երեխայի հայր են... Նրանք, ի գին կոլխոզի ճխլած ծի-

բանների, յոթանասուն մարդ են ստեղծել, իսկ մարդը, ըստ մեր առաջնորդ Ստալինի, ամենաթանկն է աշխարհում…

(Որպեսզի հասկանաք այս բառի թողած սարսափը ողջ դատաստանական դահլիճի վրա, ասեմ, որ սույն պատմությունը տեղի էր ունեցել Ստալինի օրոք)։

Այս խոսքից հետո դատախազը մտածեց միայն իր խոսքը փոխելու վրա։ Բառերը հեշտ էր հետ վերցնել, բայց մեջտեղը «տասնհինգ տարի» կար, որ կոնկրետ հասկացողություն էր և ոչ մի պայմանով չէր կարելի տասնչորս դարձնել։ Ուստի «տասնհինգը» կամացուկ փակագծի մեջ առավ, իբրև թե այս դատավարությանը չէր պատկանում, որպեսզի դնի հաջորդ դատավարության հանցավորների վրա…

Այստեղ մի լրացում։

Ես փակագծի մեջ հիշատակեցի պատմությանս ժամանակի մասին նրա համար, քանի որ ներկայիս հավիտենական ճշմարտություններ չկան։ Ներկա ճշմարտությունները ճամփորդում են մարդկանց հետ միասին՝ նրա հետ ծնվելով ու մեռնելով։

Եթե Սանթրոսի ու հաշվապահի դատավարությունը տեղի ունենար ներկա ժամանակում, տասնհինգ տարին անխոս կստանային, որովհետև Ստալինի բոլոր ճշմարտությունները սխալ դուրս եկան։

…Բայց եթե խղճով խոսենք, չի կարելի ամբողջ երեսուն տարվա ճշմարտությունները միանգամից հեչ անել։

Գեթ տասին մեկ հաշվով փոխանակվեին նոր ճշմարտությամբ, ինչպես մեր հին փողերը…

Մշակենք մեր ծայները

Որ քաղաքակրթությունը բարիք է, դրանում՝ ոչ մի խոսք։

Ինչ առաջ, ինչ հիմա։

Առաջները, նետ ու աղեղով պատերազմելով, մարդիկ ամբողջ օրն իրար ջարդում էին, երեկոյան հազիվ մի քանի հարյուր դիակ էին հավաքում։ Իսկ հիմա։ Քոքիր ավտոմատ և մի բոպեում հազար մարդ գետնին փռիր։

Աստծու՝ վեց օրում ստեղծած աշխարհն ատոմային ռումբը մի վայրկյանում կբնաջնջի։

Սրանից էլ ուրախալի բա՞ն։

Կամ վերցնենք կուլտուրայի ստեղծած մի այլ բարիք։

Հեռախոսը։

Նապոլեոնի ժամանակ ֆրանսիական թագավորները պարսից շահին մի բան ասելու համար պետք է էշով կամ ձիով ճամփա կտրեին և վեց ամսից տեղ հասնելով՝ նոր իրենց խոսքն ասեին։

Պատահում էր, որ դեսպանները տեղ հասնելիս մոռանում էին իրենց ասելիքը և նորից հետ էին դառնում՝ իմանալու համար, թե ինչ պիտի ասեին շահին։

Այնքան որ ճանապարհը երկար էր։

Իսկ հիմա։

Վերցրո՛ւ տրուբկան ու.*

- Նապոլեո՛ն ջան, ո՞նց ես։

- Շահն ապրած կենա, լավ եմ։

- Ջե՛ս երևում, ա՛յ տղա։

- Դե գործի հետ ենք, արշավանք-մարշավանք ենք կազմակերպում։

- Ա՛յ տղա, խոմ Պարսկաստան արշավելու չունե՞ս։

- Վա՛յ, քոռանամ ես, այդ ի՞նչ ես ասում...

Եվ այսպես անվերջ։

Բայց գիտե՞ք ինչ։ Քաղաքակրթության բարիքը պետք է հավասար բաշխել ժողովրդի մեջ։

Դուք գիտե՞ք՝ հիմա ինչպես են կերակրում անասուններին։

Մսուրների դռնակներն ավտոմատ բացվում են, ու կերը միանգամից լցվում է բոլորի առջև։ Առաջները, երբ շարքով, մեկ-մեկ էին կերակրում, շարքի մյուս ծայրում կապված կովը, իր թուքը կուլ տալով, կես էր դառնում...

Ես եթե մարդ ստեղծված չլինեի, ճիշտ այսպիսի վիճակի մեջ պիտի ընկնեի։

Յոթ տարի է դիմում եմ ներկայացրել՝ հեռախոս ստանալու, բայց դեռ չեմ ստացել։ Այդ այն ժամանակ, երբ շրջապատումս բոլորն ունեն։

Եկան հին տունս նայեցին, ասացին՝ կաբել չկա։

Հիմա էլ ապրում եմ նոր տանս՝ Զանգվի աջափնյա թաղամասում, ուր լեռ ու ժայռեր են միայն, և այնտեղի բնակիչները գա-

* Տրուբկա *(трубка)* - ռուս. լսափող։

ղափար անգամ չունեն, թե ինչ բան է հեռախոսը։ Նրանք՝ որպես լեռնական, կանգնում են մի բարձր ժայռի կատարին և «լո՛-լո՛-լո՛, հեյ» բղավում։

Սա այն է, ինչ հեռախոս ունեցողներն ասում են «ալո»։

Եվ այնուհետև մեծ հեռավորությունից խոսում են իրար հետ ամենաինտիմ բաների մասին։ Երիտասարդը բղավում է իր սիրած աղջկան, թե՝ ե՞րբ պիտի պսակվենք, իսկ աղջիկը պատասխանում է՝ համալսարանն ավարտեմ, նոր։

- Ես քեզ սիրում եմ։

- Ես էլ քեզ։

Մի ուրիշ բնակիչ մեկ էլ տեսար՝ կանգնեց մի քարի վրա ու բղավեց կնոջը.

- Խրոցը հանի՛ր, էլցանցը գալիս է ստուգման...

Եվ այսպես հազար ու մի բան։

Երբ ես սկսում եմ մտածել այս բոլոր բաների մասին, գալիս եմ այն եզրակացության, որ ամեն մարդ կապի իր ուրույն ձևը պետք է ունենա։

Ասիմ, հեռախոս եղավ, թե չեղավ։

Դրա համար ամեն մարդ պիտի սկսի իր ձայնը մշակել։

Տաքսաֆոնի վրա էլ հույս դնելու չէ։ Վերջերս նրան մի բան է պատահել և դիլխոր է։ Երկու կոպեկը գլորում ես, ոչ խոսում է, ոչ էլ փողդ է հետ տալիս։*

Ժողովո՛ւրդ, ձայնը, միայն սեփական ձայնը քեզ կփրկի։

Այո՛, լո՛-լո՛-լո՛, հեյ՛։

Այս բոլորից հետո արի ու մի նախանձիր Սասունցի Դավթի ժամանակներին...

Ջենով Օհանը մեծ հեռավորությունից, առանց խոխոջի, շատ պարզ խոսում էր հորը գլորված իր եղբոր տղայի հետ։

Մի հարց ևս։

Ես ուզում եմ իմանալ, թե մեր շինարարական մարմինները նորակառույցները բնակեցնելիս ինչ տեսանկյունով են առաջնորդվում։ Արդյոք խառնիխո՞ւռն։ Ձայնավորներն ու բաղաձայնները միասի՞ն։

Եթե այո, դա սխալ տեսակետ է։ Անտուններին տեղավորելիս քաղսովետը պետք է նախապես փորձի նրանց ձայները. ձայնավո-

* Տաքսաֆոն ***(таксофон)*** - ռուս. հեռախոս- ավտոմատ։

րին տանի քաղաքի այն մասերը, ուր հեռախոսի ոչ մի հույս չկա, իսկ բաղաձայններին բնակեցնի հեռախոսամերձ վայրերում:

Հեռախոսը չի կարող մեզ մոտ գալ, խո՞մ մենք կարող ենք նրա մոտ գնալ...

Աշակերտական գանգատ[118]

Հին տնից երբ նորակառույց փոխադրվեցինք, հետս մի հանրագիտական բառարան էի բերել:

Անցյալ օրն առնող եղավ՝ ծախեցի բառարանը:

Ինչ՞ էր պետք: Մեր վերևի հարկում ապրում է ութ անձից բաղկացած մի ընտանիք, ութն էլ՝ զանազան մասնագիտության մարդիկ, և ամեն ոք խոսում է իր փորձից: Ի՞նչ ուզենաս գիտենալ, որ նրանք չասեն քեզ:

Նրանք չասեն՝ տակի հարևանդ կասի: Տակինն էլ չասի՝ աջ ապրողը կասի, ձախը կասի: Ապրում ենք խորանարդ հարևանության մեջ՝ իրարից բաժանված համարյա թյուրիմացությամբ:

Այնքան որ նոսր են պատերը:

Հին տնից մի դժվար թվաբանական խնդիր էի բերել հետս, որ նոր տանը մտածեմ: Բայց ի՞նչ մտածել. նույն օրն ևեթ կողքիս հարևանի տղան բարձրաձայն լուծեց նույն խնդիրը, և ես, առանց ինձ նեղություն տալու, պատասխանը գրեցի:

Ես նոր եմ արբունքի հասել և չգիտեմ՝ դեռ աշխարհում ինչ կա, ինչ չկա: Տեսա՝ իմ ընկերները սիրահարվում են աղջիկներին, ես էլ սիրահարվեցի:

Լավ: Հիմա սիրահարված եմ ու չգիտեմ՝ սիրահարվելուց հետո մարդիկ ի՞նչ են անում:

Երբ այս մասին մտածում էի, հանկարծ կողքիս հարևանի տղան համբուրեց մի աղջկա և ասաց.

- Որքա՞ն եմ սիրում քեզ:

Այս լսելով՝ մոտավորապես հասկացա բանի էությունը և ես էլ նույնն արի իմ սիրածին:

Մոտավորապես եմ ասում, որովհետև մեր միջի պատը թեև բարակ, բայց այնուամենայնիվ խանգարեց ու չթողեց իմանալ նրա սիրելու ճիշտ չափը:

Ու ինձ հետաքրքրող բոլոր հարցերն այսպես պատրաստի լսելով հարևաններից՝ զգում եմ հիմա, որ մտածողությունս սկսում է թուլանալ։

Իսկ դա վատ է։

Վատ է նրա համար, որ այնուամենայնիվ կան հարցեր, որոնք հարևանն էլ կարող է չիմանալ, և պետք պիտի լինի անձամբ մտածել։

Օրինակ՝ ո՞ր հանրագիտական բառարանը, ո՞ր հարևանը կասի քեզ, թե ե՞րբ է կանոնավորվելու մեր քաղաքի տրանսպորտը։ Լինի այնպես, որ ավտոբուսում ասեղ գցելու տեղ լինի։ Որ ուղևորի վերարկուի վրա գեթ մի կոճակ մնա...

Կամ ո՞վ կասի քեզ, թե ե՞րբ ենք գազ ստանալու։

Ոչ ոք։ Այդ արդեն դու պիտի մտածես։

Մտածես ու պատասխան չգտնես։

Ես չգիտեմ, գուցե այս հարցերը մեր հարևանների մոտ լուծված են, բայց այդ մասին այնքան ցած են խոսում, որ մինչև անգամ մեզ բաժանող պատերից լսելի չէ։

Եթե այդպիսի բան լինի, պետք է մեր ճարտարապետների կրծքից շքանշաններ կախ տալ այն բանի համար, որ վերջապես կան գաղտնիքներ, որոնք իրենց կառուցած պատերից չեն թափանցում...

Անժամանակ մահ

Չէ՛, ինձ փրկություն չկա։ Աստված հետս ընկել է և անպատճառ իմ հոգին պիտի առնի։

Այս գիշեր մահվան հրեշտակն էլի տնկվեց.

- Հոգիդ տո՛ւր։

- Չեմ կարող,- ասացի։- Նոր եմ տուն ստացել, պիտի վայելեմ։

- Թող ժամանակին ստանայիր։

- Կտայի՞ն, որ ստանայի...

- Իմ գործը չէ։

- Ոնց քո գործը չէ։ Ա՛յ մարդ, երկու տարի սպասում եմ, դեռ գազ ու հեռախոս չունեմ. առանց այդ բարիքները վայելելու՝ մեռնեմ։ Բա բաղնիքս չտաքացնեմ, լողանամ։ Չէ՛, այսպես կեղտոտ ամաչում եմ տիրոջը ներկայանալ։

- Հեռախո՞սն ինչիդ է պետք:

- Հեռախո՛ս... Հեռախոս ունեցողն աշխարհակալ է մեր քաղաքում: Ի՞նչ ուզես: Եթե հեռախոս ունենայի, Կենտկոմի քարտուղարին չտեսնելու համար կոմենդատուրայի* հեռախոսային խցիկի պատերը երեք ամիս ամբողջ անհույս չէի ճանկռի: Վերցրու բնակարանիդ խոսափողը ու.

- Ալլո՛:

- Լսում եմ:

- Ընկե՛ր քարտուղար, այսպես, այսպես, այսպես:

- Շատ լավ, կկարգադրեմ:

Ու վերջ:

- Դու սխալվում ես,- ասաց հոգեառս,- քարտուղարի նախասենյակում քարտուղարուհի է նստած, որը չի միացնի:

- Բան ասացիր: Իմ ձայնը, որ այդքան մոտեցավ քարտուղարին, կբոթեմ, ներս կգցեմ:

- Հետո՞:

- Հետո կզանգահարեմ քաղսովետի առևտրի բաժին: Կուզեմ մի «Վոլգա» մեքենա, մի դաշնամուր, մի սառնարան, մի լվացքի մեքենա, մի ատրեզկա** և էլի այդպիսի բաներ, որ սովորական հաճախորդը դեռ չի տեսել:

Հոգեառս ժամացույցին նայեց և ասաց.

- Ո՛չ, այդքան ես չեմ կարող սպասել: Կյանքը և մահը ռեալ հասկացողություններ են և ճիշտ ժամանակին պիտի կատարվեն, իսկ գազն ու հեռախոսը ֆանտազիա են: Քաղսովետը կարող է երևակայել կամ չերևակայել: Խոմ չե՞ս կարող բկից բռնել և ասել, որ անպայման երևակայի: Հետևաբար վե՛ր կաց, գնա՛նք:

Ես նրա ոտներն ընկա.

- Կյանքումս դեռ գազ չեմ տեսել... աղաչում եմ, մի քիչ ժամանակ տո՛ւր:

Տեսա՝ հրեշտակի գութը շարժվեց: Առաջին անգամ եմ տեսնում, որ հոգեառներն էլ գութ ունենան...

Մտածեց, շատ երկար մտածեց ու ասաց.

- Մա՛րդ, լսի՛ր ինձ: Ես լիազորված չեմ քո կյանքը երկարացնելու,

---

* Կոմենդատուրա ***(комендатура)*** - ռուս. պարետատուն:

** Ատրեզկա- ռուս. ***отрезок*** (կտոր, այստեղ՝ գործվածք) բառի աղավաղված ձևը:

բայց կարող ենք այսպես անել։ Դու քո կյանքը կսառեցնես ու այլևս չես ապրի, մինչև հեռախոսն ու գազը հասնեն քո նորակառույց։ Երբ հասան, կհալվես, մի քանի օր կապրես, հետո կմեռնես։

- Կյանքը սառեցնե՞լ։ Առաջին անգամ եմ լսում։

- Ինչո՞ւ, լրագրերում չե՞ս կարդում Ժնևի զինաթափման կոնֆերանսի մասին։ Նա էլ անվերջ տաքանում է ու սառչում։

- Չեմ պատկերացնում դրա տեխնիկան,- ասացի ես։

- Տեխնիկան հետևյալն է։ Դու պիտի չուտես, չխմես, չմտածես, չզգաս, մոռանաս, մոռանաս, ամեն ինչ մոռանաս։

- Ինձ հետ իմ կինն էլ պիտի սառչի։

- Ո՛չ, միայն դու։

- Վա՛յ, դե ասա՝ տունս քանդվեց, պրծավ էլի... Արդեն կնոջս ամբողջ դարդն ու ցավն այն էր, որ ես սառն եմ դեպի ինքը։ Հիմա էլ որ պաշտոնապես սառեցի, հաշիվը պարզ է։

Ու երկուսս էլ մտածմունքի մեջ ընկանք։

Այս միջոցին հանկարծ մի լուսավոր միտք ծագեց գլխումս։ Ինքս ինձ ասում եմ. «Ա՛յ մարդ, ինչո՞ւ եմ առարկում, ես՝ որպես գրող, արդեն սառեցված եմ, կմնա սառեցնել ինձ նաև իբրև մարդ։ Դա ինչ դժվար բան է։ Մեր պառավոյը* մի օր տաքացնում, մի օր սառեցնում է մեզ։ Է՛, մի օր էլ մի լավ կսառչեմ ու չեմ տաքանա...»։

Ամուսնական աղետյալներ

Ես ու զագսի վարիչը, նստած կլոր սեղանի շուրջ, խոսում էինք ամուսնական հարցերի մասին։

- Գրիգո՛րի Իվանիչ,- ասում եմ,- այդ ինչպե՞ս է պատահում՝ երբ մարդիկ ջրհեղեղի, հրդեհի, երկրաշարժի պատճառով աղետի են ենթարկվում, անմիջապես համապատասխան մարմիններն օգնության են հասնում, ջրի դեմ ամբարտակ քաշում, հրդեհը մարում և կործանված տներից փորում, բնակիչներին հանում են, իսկ երբ մարդն է կնոջը թողնում, ոչ ոք չի մոտենում՝ նրա թողած երեխաներին իրենց անել դրությունից հանելու։ Հրդեհի ժամանակ 0-1 զանգահարելուն պես հասնում են, իսկ երբ մարդը թողնում է իր ընտանիքն անտեր, գնում է, ինչ համար էլ զանգահարես, ոչ ոք

* Պառավոյ - ռուս. ***паровое отопление*** (շոգեջեռուցում) բառակապակցությունից։

կնոջն ամուսին, երեխաներին հայր չի տալիս։

- Դուք ճշմարիտ եք ասում, այդ աղետի դեմ ոչ մի միջոց չի ձեռնարկված մինչև օրս։

- Հետո։ Քաղաքական կյանքում այն բանվորին, որ գնում է գործադուլավորի տեղն աշխատելու, շտրեյկբրեխեր են անվանում և բոյկոտի ենթարկում։ Ինչ եք կարծում, այն աղջկան, որ գնում է կինը թողած մարդու առնում, շտրեյկբրեխեր չպիտի՞ համարել։*

- Անշուշտ։

- Որո՞նք են ամուսնալուծության պատճառները, մի քանի խոսքով կարո՞ղ եք ասել։

- Գլխավոր պատճառը սկեսուրներն են, որոնք ընտանիքի ֆեոդալներն են և իրենց դարն անցած մտածողությամբ ուզում են ղեկավարել հարսերին, որոնք ընտանեկան բուրժուազիան են։ Դա այն է, ինչ ասում ենք առևտրային կապիտալ։

Ամուսնալուծության երկրորդ պատճառը կանանց շատությունն է։ Շատությունը թույլ է տալիս տղամարդկանց լայն ընտրություն կատարել։ Անցյալ տարի, երբ սպիտակ հացն առատ էր, ժողովրդի մեջ նորից տրտունջ կար. իսկ այս տարի տեսնու՞մ ես՝ սև հացի համար էլ իրար ջարդում են։ Ամերիկայում ֆերմերներն իրենց ցորենի, սուրճի, կաթի ավելցուկը ծովն են թափում, որ ապրանքը չէժանանա։

- Գրիգո՛ր Իվանիչ, կուզեի ձեզանից լսել հին դարերի ամուսնական կյանքի մասին։ Ինչպես գիտեք, հնում եղել է բազմակնություն, երբ մի մարդ տասը կին է ունեցել, և եղել է բազմամարդություն, երբ մի կին տասը մարդ է ունեցել։ Ապահարզանի ժամանակ տղամարդն իր կանանց կազմն ամբողջովի՞ն է փոխել, ինչպես ներկայումս երկրի կառավարական կազմն է փոխվում, թե՞ մասնակի ապահարզան է եղել։

- Հին ժամանակ ապահարզան հնարավոր չէր։ Այն ժամանակները հարսանիքները լինում էին յոթ օր, յոթ գիշեր, մորթվում էին բազմաթիվ եղջերավոր անասուններ, և տակառներով արաղ ու գինի էր ծախսվում։ Ինչքա՞ն հարուստ պիտի լիներ մարդը, որ այսքան թանկ գնով ձեռք բերած կնոջը ձրի բաց թողներ։ Ներկայիս ապա-

* Շտրեյկբրեխեր (գերմ. streikbrecher- streik գործադուլ + brechen կոտրել) - գործադուլի ժամանակ ձեռնարկությունում աշխատող և գործադուլը վիժեցնող մարդ, փխբ. դավաճան։

հարզանը հաճախակի է, որովհետև հարսանիքի սեղանին դնում են մի երկու շիշ գազավորված ջուր, մի երկու շերտ էլ բարակ կտրած երշիկ։ Այնպես որ մի կիլոգրամ երշիկով կարելի է տասն անգամ ամուսնանալ։

- Ասացեք խնդրեմ, նախատեսված չէ՞ ամուսնական այնպիսի մի ձև, որում բացառված լինի ամուսնական դավաճանությունը։

- Ամուսնական դավաճանությունը կվերանա այն ժամանակ միայն, երբ աշխարհում լինի մի կին և մի տղամարդ։ Այն էլ այն պայմանով, որ հաստատուն դեմք ունենան։ Եթե քամելեոնի պես իրենց դեմքը փոփոխեցին, կսկսվի նույն խայտառակությունը։

Սրանով էլ վերջացավ մեր պրես-կոնֆերանսը։

Շնորհակալություն ուշադրության համար։

Հին տուն

Ծերացել եմ, խարխլել, ոնց որ պլանի տակ ընկած մի հին տուն։

Հոգիս ու մարմինս այլևս միասին չեն քայլում, հետ ու առաջ են ընկնում։

Գիշեր է պատահում, որ հոգիս բոլորովին տուն չի գալիս։

Բարկանում եմ իհարկե։ Ասում եմ.

- Ո՞ւր ես բաժանվում ինձանից։ Քաղսովետը լսի, պիտի ասի. «Բաժանվել են, որ առանձին բնակարաններ ստանան»։ Ես այդ ուտո՞ղն եմ։

Հետո նկատի՛ առ, որ ես այլևս երիտասարդ չեմ։ Մեռնելիս մինչև հոգիս չհանձնեմ, նա ինձ գերեզմանի տեղ չի տա։

Չեմ խոսում քաղսովետի մասին։ Ենթադրենք՝ նա չկա, բայց չէ՞ որ մենք մահկանացուներ ենք։ Մեկ էլ հանկարծ հոգեառ հրեշտակը ճուկ կանգնեց առաջս թե՝ հոգիդ տո՛ւր։ Ես պիտի ընկնեմ դես հոգի՞ման գամ, դեն հոգի՞ման գամ, որ հանձնե՞մ։

- Ինչո՞ւ այն ժամանակ, երբ ապրում էիր քո երիտասարդությունը, մի անգամ հոգիդ միտքդ չբերիր, իսկ ինչո՞ւ հիմա, որ պիտի մեռնես, հանկարծ հիշեցիր,- ասում է հոգիս ինձ։

- Ես քեզ միշտ հիշել եմ։

- Հիշե՞լ ես... Ո՛չ, ես քո հոգին չեմ, աղջիկներն են քո հոգին։ Հիշո՞ւմ ես՝ ամեն աղջիկ գրկելիս «հոգի՛ս, հոգի՛ս» էիր ասում։ Իսկ

չեղավ մի օր, որ ինձ «հոգիս» ասեիր։ Դե հիմա էլ, որ հոգեառդ գա, հավաքի՛ր բոլոր սիրածդ աղջիկներին և տո՛ւր տանի՝ ասելով. «Ա՛ռ, սրանք են իմ հոգիները»։ Կանանց հետ ամեն տեսակ խայտառակություն սարքես, վերջին դատաստանին ե՞ս քո տեղը վառվեմ։

- Ա՛յ որդի,- ասում եմ,- սերը խայտառակություն չէ, սերը սրբազան զգացմունք է, որ մարդ ստեղծելիս Աստված դնում է նրա մեջ։ Եթե Աստված չդներ իմ մեջ, ես շա՞տ գիտեի, թե որն է կին, որը տղամարդ։

- Այո՛, դնում է, բայց չի ասում՝ պատահողին սիրի՛ր։

- Սիրում են կշտանալու չափով։

- Սեփական կինդ քեզ չի՞ կշտացնում։

- Կշտացնում է, և դեռ մի բան էլ ավելանում է։ Բայց դու նկատի՛ առ հետևյալ դեպքը. մի գեղեցկուհի քեզ սիրո հրավերք է անում, դու նստում ես նրա ճոխ «սեղանին», բայց չես կշտանում, փորդ պահում ես, որ գաս, տանը ուտես։ Եթե այդ բանը լսի քո հյուրընկալ գեղեցկուհին, չի՞ վիրավորվի։ Եվ ինչ կարիք կա երկուսի միններթը միաժամանակ քաշելու։*

...Կատարյալ քթի մազ դարձավ սա հոգիս։ Ինքն ապրուստի ոչ մի հոգս չի քաշում, մեծ-մեծ խոսում է։

Մի օր կարագի հերթ կանգնե՞լ է։

Ո՛չ։

Բանտարկվե՞լ է։

Ո՛չ։

Իսկ այն օրը, երբ ես «հեռավոր հյուսիս» աքսոր էի գնում, նա հեռավոր հարավ էր գնում՝ տաքանալու։

Ու մարմինս սառչում էր, իսկ հոգիս՝ քրտնում։

Ես խոմ մենակ հոգի՞ չունեմ։

Ես ունեմ նաև բանականություն, որ հոգուց էլ դենն է։

Ու ես մինչև օրս էլ չիմացա, թե այդ պարազիտը ի՞նչ օգուտ է տալիս մարդուն, և ինչո՞վ է զանազանվում մարդը վայրի գազանից։

Գազաններից ամենավայրենին վագրը չէ՞։

Բայց երբ նա քաղցած է, մի նապաստակ է միայն ուտում, կշտանում և քաշվում է իր որջը։

Իսկ մարդը միլիոնավոր դիակներ է փռում պատերազմի դաշտում

* Միններթ, միններթ, մուններթ (minnet) - արաբ. երախտիքը երեսով տալը՝ հիշեցնելը։

ու չի քաշվում իր «որջը», նորից է պատերազմի պատրաստվում։

Եթե բանականության երկրորդ ծառայությունն այն է մարդուն, որ գիտակցել է տալիս, թե ինքը մահկանացու է, դա ի՞նչ ծառայություն է։

Եթե բանականությունը չլիներ, մարդիկ չէ՞ին մեռնի։

Աստվա՛ծ, եթե խոսեմ, պիտի ասես՝ խոսում ես։

Ախր ո՞նց չխոսեմ, ստեղծածդ մարդը բանի նման չէ։ Աշխարհի բոլոր իրարամերժ գաղափարները հավաքել-լցրել ես մարդու մեջ, ասում ես՝ ապրի՛ր։

Սուտ ու ճիշտ, գազանություն ու խղճահարություն, իմաստություն-հիմարություն, հերոսություն-վախկոտություն, ազնվություն-անազնվություն, կուսակցականություն-անկուսակցականություն, բարերարներ-ավազակներ։

Ու մարդ շվարել կանգնել է՝ չիմանալով՝ այս բոլորից ո՞ր մեկը գործադրի։

Ճիշտ է, մեր գրողներն էլ իրենց վեպերում բերում են բազմաթիվ բացասական տիպեր, բայց հետո էլ տալիս են մի դրական տիպ, որ դրանց բոլորին ոչնչացնի։ Իսկ դու, Աստվա՛ծ, այդ էլ չես անում։

Ունիվերսալ մարդուց ես կգերադասեի մասնագիտական մարդուն։ Մի մարդ, որ միայն բարի է, մի մարդ, որ ամբողջապես չար է։

Բարության պետք ունեցողը բարության դուռը ծեծեր, չարության պետք ունեցողը՝ չարության դուռը։

Այլապես ունիվերսալ մարդու դուռը ծեծողն ի՞նչ իմանա՝ չարությո՞ւնը պիտի բանա, թե՞ բարությունը։

Աստվա՛ծ, շատ ճիշտ ես ասում՝ դու մարդուն ստեղծել ես քո կերպարանքով և քո բովանդակությունը լցրել նրա մեջ... Բարեբախտաբար, մի փոքր խնայողությամբ։

Դու մարդկանցից վրեժ ես լուծում մինչև յոթ պորտ, իսկ մարդը՝ հազիվ մի հինգ պորտ...

Իսկ գալով ինձ՝ ես ոչ ոքից լուծելիք վրեժ չունեմ. ես միայն սիրում եմ, և իզուր մի՛ աշխատիր չափավորել այդ սերը։

Ես պիտի սիրեմ կանանց մինչև նրանց «յոթ պորտ»-ը։

Քրիստոս չասա՞ց՝ կյանքը սեր է...

Սատանան ասում է՝ վերցրո՛ւ ցախավելը և ամբողջ բովանդակությունդ ավլի՛ր, դե՛ն նետիր և այն լավ գնով վարձո՛ւ տուր։

Ամենայն տեսակի պատասխանատվությունից ազատվելու միակ միջոցը սեփական տուն չունենալն է։

Մի շան պատմություն

Տեսե՞լ եք երկու եղբայրներ, որոնք մինչև իրենց կյանքի վերջը հաշտ ու խաղաղ ապրեն իրար հետ։

Ես չեմ տեսել։

Եղբայրները սովորաբար կռվում ու բաժանվում են։

Եվ այսօր, որ մեր երկրի բազմազգ ժողովուրդներն իրար հետ եղբայրացել ու սոցիալիզմ են կառուցում, այդ նրանից է, որ մի մորից չեն ծնվել։

Այս ամառ ականատես եղա գյուղացի երկու եղբայրների՝ Մանավազի ու Մանուչարի բաժանմանը։

Այն ինչ կռիվ էր։ Ամբողջ գյուղն էր թափվել։

Դրանք շատ հնուց էին թշնամացել և սպասում էին համբերության բաժակի լցվելուն։

Այդ անտերի բաժակն էլ չէր լցվում։

Չեմ իմանում՝ ծա՞կ էր, ի՞նչ էր։

Բաժակը վերջապես լցվեց այն ժամանակ, երբ Մանավազի կինը տարին մի տղա էր բերում, իսկ Մանուչարինը՝ անվերջ աղջիկ։

Դա արդեն չափազանց էր։ Ո՞վ կդիմանար, որ Մանուչարը դիմանար։

Տան իրերը բաժանելիս այն ինչ երկուս էր, մեկական վերցրին, ինչ երեք էր, երրորդը ջարդեցին, որ միջու ոչինչ չունենան։

Հերթը հասավ իրենց շանը՝ Ալաբաշին, որին եթե ջարդեին, գյուղի տղաները ո՛չ Մանավազի ծառի վրա խնձոր կթողնեին, ո՛չ Մանուչարի։ Ուստի, թողին միջու, որ երկուստեք հաչի։

Բայց ինչպիսի՜ կտտանքի էին ենթարկում խեղճ կենդանուն։

Դե նա շուն էր, նրա համար երկու եղբայրներն էլ միևնույն արժեքն ունեին, ու երկուսի օգտին էլ հավասար եռանդով հաչում էր։ Իսկ այս լիբերալ վերաբերմունքը կատաղեցնում էր երկու եղ-

բայրներին, և անվերջ խեղճի դնչին էին տալիս։

Ամեն մեկը ստիպում էր, որ միայն իր համար հաչի։

Ու խեղճ կենդանին շվարած կանգնում էր։

Այդ բոպեներին շունը հիշեցնում էր այն դատավորին, որը երկու կողմից էլ կաշառք է վերցրել, չգիտի՝ ում դատը պաշտպանի։

Նման տարտամ վիճակի ես կյանքումս մի անգամ էլ եմ պատահել։ 1904 թվին արդի Լենինականում դաշնակների ու հնչակների մեջ կատաղի կռիվ էր գնում։ Մի խեղճ անցորդ կեսգիշերին փողոցում պատահում է մի դաշնակ խմբի, որը քեֆից է վերադառնալիս լինում։ Խմբապետն անցորդին հարցնում է.

- Հնչա՞կ ես, թե՞ դաշնակ։

- Հնչակ եմ,- ասում է անցորդը՝ կարծելով, թե դիմացինները հնչակ են։

Այս պատասխանի վրա հարբած խումբը քաշում և սաստիկ ծեծում է անցորդին։

Շարունակելով իր ուղին՝ անցորդն այս անգամ մի հնչակ խմբի է պատահում, որ նույնպես քեֆից էր վերադառնում։ Նրանց հարցին էլ վախից «դաշնակ եմ» է պատասխանում։ Այս անգամ էլ սրանք են սկսում ծեծել։

Շարունակելով ճամփան՝ անցորդը պատահում է երրորդ խմբին, որը նույնպես հարցնում է նրա կուսակցական պատկանելությունը։

Այս անգամ, որպեսզի երրորդ անգամ չծեծվի. «Ես ավանակ եմ,- ասում է մարդը,- ո՛չ դաշնակ եմ, ո՛չ հնչակ»։

Եվ չեն ծեծում։

Եթե այս գյուղացիների շունը մարդ լիներ, նա էլ կասեր՝ ես ավանակ եմ, ու ծեծից կազատվեր։ Բայց նա համոզմունքի տեր շուն էր և իր ողջ կյանքում չցանկացավ շնից զատ մի այլ կենդանի դառնալ։

Ինչի՞ վրա եմ աշխատում

Շատ վաղուց է՝ մտածում եմ մի ողբերգություն գրել, նյութ չեմ ճարում։

Ողբերգության համար հարկավոր է թշվառություն և բախտավորություն, որ պիեսում բախվեն իրար։ Իսկ մեզ մոտ օրենքով արգելված է թշվառ լինել, հանցավորը պատժվում է... երջանկությամբ։

Ստիպված ես իմ նյութը պիտի վերցնեմ կենդանական աշխարհից։ Այնտեղ կարելի է դժբախտ հավերի պատահել։

Հավերի մասին այսպիսի մի ծրագիր ունեմ կազմած։

Ուրեմն, առաջին գործողությունը կատարվում է թռչնաբուծական ֆերմայում։ Վարագույրը բարձրանում է այն ժամանակ, երբ միանգամից չորս հազար ձու կոտրվելով լույս աշխարհ են հանում չորս հազար ճուտ։

Դուրս են գալիս ճտերը և ապշած իրենց չորս կողմը նայում։ Մի քիչ սպասում, նորից ապշում։ Ու չգիտեն, թե ինչ բանի համար աշխարհ եկան։ Շատերը դեպի իրենց թողած ձվի կճեպներն են նայում՝ նեղն ընկած պարագային էլի ետ դառնալու մտադրությամբ, բայց ավա՜ղ, հավաքարարն այնպես է մաքրել կճեպները, որ հետքն անգամ չի մնացել։

- Ընկանք պլեն,- ասում են ճտերը՝ իրար նայելով։*

Մտնում է ֆերմայի վարիչը՝ սոսկալի թթված։ Նրա գործը տվել են դատարան, և այդ օրը նրա դատի օրն է։

Այնուամենայնիվ ճտերից մեկը սիրտ է անում հարցնելու.

- Ներողություն, ինչո՞ւ ենք ծնվել մենք, և ո՞վ է մեր տերը։

- Բարով-խերով չծնվեիք, և մեռնի ձեր տերը,- պատասխանում է վարիչը և դուրս գնում։

Ճտերն այստեղ էլ են զարմանում։

Ուրեմն, կանգնած են այսպես ճտերը, ո՛չ իրենց անելիքը գիտեն, ո՛չ անուն ունեն, ո՛չ գիտեն, թե ումից են ծնվել։ Նայում են իրար ոչ որպես եղբայրներ, այլ որպես օտարներ, որովհետև հավի տակից չէին դուրս եկել։

Այստեղ ես ճտերին հենց այսպիսի անմխիթար վիճակում էլ թողնում եմ և անցնում պիեսի երկրորդ գործողությանը։

Երկրորդ գործողությունը տեղի է ունենում ֆերմային կից մի գյուղացու տան գոմում։

Հավը թուխս է նստել։ Արդեն քսանմեկերորդ օրն է, և տակը ճտերը մեկ-մեկ ձվի կճեպները ծակում, դուրս են գալիս։ Թխսկանը ամեն ճտի հայտնվելուն սրտի քաղցր թրթիռ է զգում իր կրծքի տակ, թևերը սեղմած՝ գգվում և երջանկության կղկղոց է արձակում բերանից։

---

* Պլեն *(плен)* - ռուս. գերություն, գերի լինելը։

Նորածինները, որ դեռ չեն տեսել իրենց մորը, մեկ-մեկ դուրս են գալիս թևի տակից, նայում են իրենց մորը և էլի թևի տակ մտնում, ու տասնհինգ քույր ու եղբայրներ խլրտում են իրենց մոր տաքուկ փորի տակ։

Նրանք անում են «ճստ, ճստ», իսկ մայրը՝ «ջա՛ն, ջա՛ն, իմ կյա՛նք, իմ արևնե՛ր...»։

Մի օր հետո մայրը, առաջ ընկած, իր տասնհինգ ճտերին տանում է ծանոթացնելու աշխարհին։

Աքլորին ցույց տալով՝ ասում է.

- Սա ձեր հայրիկն է, բալանե՛ր, հարգանքով կվերաբերվեք։ Այն մարդու անունը Մաթոս է, մեր տերն ու տիրականն է, խոսելիս կասեք՝ Մաթոս ձյաձյա*։ Սա էլ՝ նրա կինը, այն չորսը՝ նրա երեխաները։ Որ մեծանաք, նրանց համար ձու կածեք, չմոռանա՛ք։

- Ինչքան շատ տերե՛ր ունենք։

- Այո՛, դեռ շունն էլ ավելի. նա էլ բոլորիս է պաշտպանում։

- Ա՜խ, ինչ լա՛վ է աշխարհը,- ասում է մի ճուտ։

Այստեղ նկատում են մի ճուտի, որը, անցնելով ֆերմայի ցանկապատի ճեղքից, իր շուրջն էր նայում։

- Այս ի՞նչ ճուտ է,- հարցնում են ձագուկներն իրենց մորը։

- Որբ է, բալիկնե՛ր, մայր չունի։

Այս խոսքի վրա հանկարծ ամպամած երկնքից կարկուտ է թափվում, և որբն այս ու այն կողմ ապաստան է փնտրում ու չի գտնում։

Թուխսի ճտերը մոր թևի տակից նայում են, խղճում և խնդրում են այս մեկին էլ իր թևի տակ առնել։

- Իրավունք չունեմ,- ասում է մայրը,- դա պետական գույքի յուրացում կհամարվի, և դատարան քարշ կտան ինձ...

- Վա՜խ, ուրեմն կարկտահար պիտի մեռնի։

- Ինչ արած։

Սրանով էլ պիեսիս երկրորդ գործողությունն եմ վերջացնում։

Երրոդ գործողությունը մի պատկեր է լինելու։

Ուրեմն, թխսկանի հարևանի կատուն ձագեր է բերել, որոնք ամեն անգամ դուրս ելնելիս, մի-մի ճուտ բերաններն առած, փախչում-գալիս են։

* Ձյաձյա *(дядя)* - ռուս. հորեղբայր, մորեղբայր։

Մի օր էլ մի կատվիկ գալիս է անճուտ, ջախջախված գլխով։

Կատուն երբ պատճառն է հարցնում, կատվիկը պատասխանում է, թե Մաթոսի հավի ճտին բռնեցի, տղան քարով մեջքիս զարկեց, մայրն էլ կտուցով՝ գլխիս։

- Ես ձեզ հազար անգամ չե՞մ ասել՝ ֆերմայի ճտերից բռնեցեք. ինչո՞ւ եք վազում Մաթոսի, Կիրակոսի ճտերի ետևից։ Լա՛վ եղավ, խրատվե՛ք, որ մյուս անգամ նման բան չանեք։

Այստեղ էլ ուզում եմ վերջացնել պիեսս, բայց չէ՛, ես գրում եմ ողբերգություն, որը պիտի վերջանա ինքնասպանությամբ։ Մի ջարդված կատվի գլուխը քիչ է, որ գործս ողբերգություն համարվի։

Ի՞նչ անեմ, չգիտեմ։

Արդյո՞ք թել տամ ֆերմայի դժբախտ ճտերին, որ ինքնզինքնին կախեն։

Պատասխանատու բան։

Չէ՞ որ որպես վնասարարություն ֆերմայի վարիչին երկրորդ անգամ կարող են դատարանի առջև կանգնեցնել։

Ուրեմն պետք է կատվի գլխով էլ վերջացնեմ ողբերգությունս։ Հանդիսատեսը թող մի քիչ էլ պակաս լաց լինի։

Որ գործս ավարտեցի, փառավոր բան կլինի։

Պիեսս բեմ հանելու մասին չեմ մտածի. դա շատ հեշտ բան է։

Կուտը բեմի վրա շաղ կտամ, բոլոր «գործող անձինք» կթռչեն բեմ։

Ինչքան էլ ծափ տան ու «քշա» անեն, բեմից չեն իջնի...

Մսամթերում[19]

Այս մասին դեռ չէին լսել Ա. գյուղի կոլխոզի անասունները։ Այնպես որ, երբ կոլխոզի ղեկավար կազմը գոմ մտավ, բոլոր անասունները հարցական իրար նայեցին՝ չիմանալով այցելության նպատակը։

Երբ կազմն ընդհանուր հայացք գցելուց հետո առանձնացրեց թրքակոլը, պոչից մի կիլոյից ավելի բշկուլ* կախած մի կովի, բոլորն իրար ասացին.

- Սանիտարական ստուգում է գնում։

* Բշկուլ (բրբ.) - այծի, ոչխարի, ուղտի աղբ, կտտոր, այստեղ՝ չոր թրիք։

Բայց նրա կողքին բերին կանգնեցրին նաև մաքուր, բայց շատ լղար մի կովի։

- Չէ, սանիտարական ստուգում չէ սա, հիվանդներին են ջոկում՝ սանատորիա ուղարկելու։

Մեկն ասաց.

- Ա՛յ կովեր, մսամթերում չլինի՞ հանկարծ...

- Ես մսամթերումից չեմ վախենում,- ասաց մյուսը,- որովհետև միս չունեմ։ Ես ոսկրամթերումից եմ վախենում։

- Ոսկոր չեն մթերի, անհո՛գ կաց։

Այնուհետև անասուններն ամեն հնարավորը կարծեցին, մինչև թեկնածուների ընտրությունը վերջացավ։

Այն ժամանակ քաղաքից եկած մի մարդ գոմ մտավ և նայելով ջոկվածներին՝ հարցրեց.

- Ինչացո՞ւ են սրանք։

- Սրանք պարտադիր մորթի ենթակա անասուններ են, որոնց պետք է շտապ մորթել, քանի չեն սատկել...

Այս լսելով՝ ջոկվածներից մի կով իրեն գցեց կոլխոզի նախագահի ոտները.

- Նախագա՛հ ջան, ինձ մի՛ մորթեք, աղաչում եմ։ Ինձ ժամանակ տվե՛ք, ես կչաղանամ։ Չեմ ուզում ո՛չ ձեր խոտը, ո՛չ դարմանը, ո՛չ քուսպը, ես իմ միջոցներով կչաղանամ։

- Ա՛յ կով,- ասաց նախագահը,- ամբողջ ձմեռ խոտ կերար, չչաղացար, հիմա ինչո՞վ պիտի չաղանաս։

- Ես ձեր չունեցած խոտով չչաղացա, բայց ստույգ մահվան սարսուռից կչաղանամ, մի՛ մորթեք ինձ, ես իմ մեղքով չէ, որ լղարել եմ, մորթեցեք նրա՛ն, ով պատճառ է դարձել այս իմ լղարության։ Ես դատարան կերթամ, կապացուցեմ, որ զոհվում եմ ղեկավարների անփույթ վերաբերմունքի պատճառով։ Ես վճռաբեկ դանգատ կտամ, և մինչև պատասխանի ստացվելը դուք իրավունք չունեք ինձ մորթելու։

- Փաստաբանություն մի՛ անի և առա՛ջ անցիր,- հրամայեց նախագահը։

- Փաստաբանություն կանեմ և առաջ չեմ անցնի,- համառեց կովը։

Այն ժամանակ վերջինս իր ձեռքի մահակով ամուր հարվածեց կովին։

- Կամա՛ց զարկ, կաշին չծակվի։ Ես կաշվի համար եմ քաղաք տանում,- ասաց քաղաքից եկածն ու ավելացրեց,- ես սրանց ոտքով քանի՞ օրում քաղաք պիտի հասնեմ...

- Ուզո՞ւմ ես, մի փոքր սպասի՛ր, թող սատկեն, ակտ կազմենք, ակտն առ, նստիր մեքենան, թեթև-թեթև գնա։

- Ա՞կտը տանեմ մորթեմ,- բարկացավ լիազորը։

- Դու գիտես։ Ուզում ես՝ ակտը տար, ուզում ես՝ անասունները, ես իմ պարտքը կատարած եմ համարում պետության հանդեպ։

Բարոյական մարդակազմություն

Մեր դպրոցներում ավանդվող մարդակազմությունը զուտ ֆիզիկական բնույթ ունի և չի անդրադառնում նրա բարոյական կողմին։

Ֆիզիկական մարդակազմությունը ասում է. «Աչքը տրված է մարդուն տեսնելու համար, ականջը՝ լսելու, բերանը՝ ուտելու»։

Բայց չի ասում՝ աչքն իրավունք ունի՞ ամեն բան տեսնելու, ականջը՝ ինչ որ խոսեն՝ լսելու։ Կամ բերանն իրավունք ունի՞ ուրիշի վաստակն ուտելու։

Նորակառույցներում ամեն ապրող աշխատում է անպատճառ իր պատշգամբը երկու կողմից «պլիտաներով» կտրել, որ հարևանն իրեն չտեսնի։*

Այդ ի՞նչ է նշանակում։

Այդ նշանակում է, որ մյուս հարևանը, չարաշահելով իր աչքը, տեսնում է այնպիսի բաներ, որ չպիտի տեսներ։

Դրանից՝ ահագին ավելորդ ծախս։

Մանավանդ սեռական օրգանների խնդրում բարոյական ու ֆիզիկական մարդակազմությունները երբեք չեն համընկնում։ Դա շատ տարաձայնություն վերցնող մի բնագավառ է, ու ցավոք պիտի ասեմ՝ դեռ չեն կարողացել մի հայտարարի բերել իրենց ֆունկցիաները։

Ֆիզիկականը, հարցի իրավական կողմը միանգամայն անտեսելով, ասում է. «Ամեն մարդ իրավունք ունի ամեն կնոջ սիրել»։ Բայց բարոյականն ասում է. «Ներողությո՛ւն, դու ուրիշի կնոջն իրավունք չունես սիրելու»։

Ու այսպես էլ հարցը մնում է չլուծված։

---

* Պլիտա ***(ռուս.)*** - ռուս. սալ, սալաքար։

Այս առիթով իմ հետազոտություններն ինձ հետևյալ եզրակացությանն են բերում։

Մարդուն երկու ականջ է տրված նրա համար, որ երկու գանգատավորներին էլ լսի ու արդար վճիռ կայացնի։ Երկու աչքը նրա համար է, որ մեկ աչքով մեկի լավը տեսնի, մյուսով՝ վատը։ Նշանակում է բնությունն սկզբից նախատեսել է, որ աշխարհում ո՛չ բացարձակ լավ բան գոյություն ունենա, ո՛չ բացարձակ վատ։

Այս տեսակետից նայելով՝ մեր ակնարկագիրները, որ շրջան են գնում՝ որևէ կոլխոզի մասին գրելու, մեղանչում են՝ գրելով նրանց միայն լավ կողմերի մասին։

Օգտվելով այն հանգամանքից, որ մարդը երկու աչք ունի, մեկը թողնում են տանը, մյուսը՝ տանում գյուղ, որ իրենց խանգարող չլինի։

Թող իմացած լինեն մեր ակնարկագիրները, որ եթե իրենց այս պրակտիկան շարունակելու լինեն, Աստված իր երկրորդ ստեղծագործությանը մարդուն միաչքանի կստեղծի, նրանք կզրկվեն իրենց անձնական հակառակորդների վատը տեսնելուց և ստիպված են լինելու, հակառակ իրենց կամքի, նրանցում ոչ մի վատ բան չտեսնել։

Իսկ դա, գիտեք չէ՞, ինչ անտանելի բան է։

Մենք, որ հակամետ ենք ուրիշի չունեցած արատները տեսնելու, պիտի զանց առնենք նրանց իրական արատները։

Դառնանք լեզվի հարցին։

Ես չկարողացա իմանալ, թե Աստված մարդու ընդարձակ բերանի մեջ ինչո՞ւ է մեկ լեզու դրել։

Օրական հազար տեսակ խոսող մարդը մեկ լեզվով ինչպե՞ս բավարարվի։ Նույն լեզվով կարելի՞ է և՛ աղոթել, և՛ հայհոյել, և՛ ճիշտ խոսել, և՛ սուտ խոսել։

Շատ չէ, գեթ երկու լեզու լինելու էր, որ մեկով իր սեփական մտքերն արտահայտեր, մյուսով՝ ուրիշի։

Բերանն էլ խոմ գիրք չէ, որ ուրիշի խոսքերը չակերտներով բաժանենք։

Մի լեզուն մարդուն անհարմար դրության մեջ է դնում։

Պետհրատն ինձ ասաց. «Քո ժողովածուն 1963 թվին անպայման կհրատարակեմ», հետո էլ ասաց՝ 1964-ին կհրատարակեմ։ Այս ասելիս ես զգացի, որ Պետհրատի դիրեկտորը մի փոքր անհարմար

դրության մեջ ընկավ, և եթե չեմ սխալվում, մի փոքր էլ կարմրեց։

Իսկ եթե երկու լեզու ունենար, մեկով 1963 թվին կհրատարակեր, մյուսով՝ 1964-ին։

Իսկ ինչո՞ւ միայն երկու։

Ինչո՞ւ չունենար տասներկու լեզու, որ իմ ժողովածուն 12 տարի անվերջ հրատարակեր...

Ասելս այն է, ընկերնե՛ր, որ ձեր մարմնի մասերը պետք է մտածված գործածեք։ Ճիշտ է, ձեզ ոտք է տրված, բայց այդ չի նշանակում՝ վազեք այնտեղ, ուր ձեզ չեն կանչել։ Մի՛ ասեք, թե որովհետև ինձ տրված են այսքան մարմնի մասեր, բոլորն էլ անխտիր պիտի գործածեմ։

Կարող է պատահել մարմնի մաս էլ, որ կյանքում բնավ պետք չի լինի գործածել։ Օրինակ՝ կուսակրոնները և կուսանոցի աղջիկներն իրենց չգործածած գործարանները տանում են, նույնությամբ ետ են տալիս իրենց Աստծուն։

Միայն ես չիմացա, թե մազն ու մորուքն ինչո՞ւ է տրված մարդուն։ Արդյո՞ք սափրիչներն Աստծու մոտ մարդ ունեն։

Մազի արժեքը մի բան չէ, բայց հետևանքներ է թողնում կյանքում։

Յոթանասուն տարի ապրող մարդը, հինգ տարի սափրիչի մոտ նստած, հերթի է սպասում։

Կանայք մտամոլոր ման են գալիս՝ վճռելով՝ մազերը գագաթին դիզել, թե՞ ծոծրակին կախել։

Քաղաքում էլ այնքան շատ մեքենա է երթևեկում, որ եթե մի փոքր ժամանակ ուշքդ վրադ չպահես, կորած ես։

Երբ քանակը դառնում է որակ

Բանջարանոցային կյանքը խիստ տարբերվում է մարդկային կյանքից։

Բանջարանոցում մի հատին էլ են բողկ ասում, հարյուր հատին էլ։ Իսկ մարդկային կյանքում այդպես չէ։

Այնտեղ մի հատին ասում են մարդ, իսկ երբ բազմացավ, արդեն դառնում է ազգ կամ պետություն։ Ազգն ու անհատը կառավարվում են իրար չնմանվող, բոլորովին այլ օրենքներով։

Վերցնենք մի անհատ և մի պետություն պսակենք, որ տեսնենք, թե որքան տարբեր են իրենց կենցաղում։

Անհատը, երբ մտադրվում է ամուսնանալ, կարգի է բերում իր տունը, պակաս-պռատ բաները լրացնում, նոր շորեր հագնում, սափրվում և դուրս է գալիս, մի աղջկա ձեռք խնդրում։ Իսկ պետությունը, երբ ուզում է միանալ մի այլ պետության հետ, զինվում, զորք է հավաքում, վարժեցնում՝ մեկ-երկու, մեկ-երկու, և ոչ թե իր սիրած պետության ձեռքն է խնդրում, այլ հարձակվում է վրան և գրավում։

Պետական կյանքում ոչ մի միացում չի լինում կամովին. այնտեղ թագավորում է լեռնականների օրենքը. ձիավորը աղջկան դնում է իր գավակին ու փախցնում։

Նրանցում որևէ բան «խնդրել» գոյություն չունի։ Աղջիկը, եթե իր ձեռքերը գրպաններում թաքցնելու էլ լինի, գրպանից կհանեն ու հետը կամուսնանան։

Ամուսնանալիս անհատ զույգերը տարիքով կա՛մ հավասար են լինում, կա՛մ տղամարդը կնոջից մի երկու տարով մեծ է լինում։

Ոչ ավելի։

Բայց պետական կյանքում այդ նորմը չի պահպանվում։

Ճապոնիան նախկինում տարիներ շարունակ հետապնդեց Չինաստանին, ուզում էր առնել։ Ճապոնիան իր կամքը հայտնեց, Չինաստանը մերժեց՝ ասելով, որ ինքը շատ մեծ է Ճապոնիայից, Ճապոնիան համարյա իր տղայի տեղն է գալիս։ «Լսողն ինչ կասի»,- ասաց ու ամոթից... կարմրեց։

Բայց Անգլիան առանց ամաչելու առավ իրենից շատ մեծ Հնդկաստանին։

Խեղճ Հնդկաստանը ինչքա՛ն աշխատեց, մինչև վերջապես բաժանվեց Անգլիայից՝ վերջ տալով իր ամոթալի վիճակին։

Հիմա Հնդկաստանը «միայնակ մայր» է, և փառք Աստծու, շատ լավ ապրում է։ Նրա տուն ելնում են անում աշխարհի բոլոր պետությունները և ամեն բանում օգնում են. մեկը գործարաններ է կառուցում նրա համար, մեկը զենք է տալիս, մյուսը՝ բարի խորհուրդներ և այլն։

Բայց միշտ չէ, որ փոքր պետությունը ձգտում է մեծին։ Պատահում է նաև, որ մի շատ մեծ, համարյա զառամյալ պետություն ուզում է առնել անչափահաս երեխա պետություն։

Օրինակ՝ Իտալիան։ Քանի՞ տարվա պետություն է։ Նրա ձայնը Հին Հռոմից է գալիս, հա՛։ Բայց Իտալիան առանց ամաչելու ուզում էր առնել Ալբանիային։

Եվ եթե թույլ տային, կառներ, գիտեք…

Պետությունների մեծ մասը քրիստոնյաներ են։ Բայց դա լոկ վերմակ է, որ քաշել են իրենց վրա, իսկ վերմակի տակ մահմեդականություն են անում։

Նրանք բազմակին են։

Այն ժամանակ, երբ դեռ Եվրոպան քնած էր, Անգլիան առավոտը շուտ վեր կացավ տեղից և որպես ծովային պետություն՝ շրջեց ամբողջ աշխարհը և որտեղ կույս աղջիկ գտավ, մատանին հանեց, մատն անցկացրեց ու նշանեց։ Հետագային, երբ մյուս պետությունները զարթնեցին, տեսան, որ աշխարհի լավագույն մասն արդեն զբաղված է։ Նրանք էլ մտան Աֆրիկա և սկսեցին Անգլիայի թողած պետությունների մեջ… ճռաքաղ անել։

Գերմանիան իր երկու համաշխարհային պատերազմներով արեց այն, ինչ չէր արել ոչ մի մահմեդական շահ կամ սուլթան։

Կամեցավ աշխարհի ողջ պետությունները դարձնել իր հարեմը՝ գրավելով նրանց։

Բայց պետություններ, դուք պետություններ, Գերմանիայի քթից այդ մտադրությունը վար բերին։

Բոլորը մեկանց հարձակվեցին վրան, Գերմանիան ուղիղ մեջտեղից կիսեցին ու ասացին.

- Ամուսնանա՞լ ես ուզում, միացի՛ր քո մյուս կեսի հետ։

Ամուսնական մի ձև, որ գիտության մեջ կոչվում է հերմաֆրոդիտիզմ…

Անհատը չի կարող ամուսնանալ իր մոտիկ բարեկամի հետ։ Եկեղեցին թույլ չի տալիս։ Պետք է ամուսնացողներն իրարից յոթ պորտ հեռու լինեն, որ կոնսիստորիան թույլ տա։*

Բայց Անգլիան՝ ծովերի այդ թագուհին, կարո՞ղ եք երևակայել, կամեցավ ամուսնանալ իր հարազատ որդու՝ Ամերիկայի հետ…

Անգլոամերիկյան պատերազմը միայն վերջ տվեց այս խայտառակությանը։

---

* Կոնսիստորիա ***(консистория)*** - ռուս. (եկեղ.) թեմական հոգևոր մարմին՝ վարչական և դատական գործառույթներով։

Պետությունների մեջ կան անշուշտ ամուրիներ էլ, որոնք չեն ուզում ամուսնանալ:

Կան աշխարհիկ կյանքից ձեռք քաշած ճգնավոր պետություններ, որոնք, չխառնվելով աշխարհի ոչ մի անցուդարձին, միայն իրենց հոգու փրկությանն են նայում:

Այսպիսիներից է, օրինակ, Իսլանդիան:

Այնպես որ, հանդերձյալում ողջ արքայությունը մեն-մենակ պիտի ժառանգի Իսլանդիան ամենայն հավանականությամբ:

Հիմա՝ անհատի ու պետության մի այլ տարբերության մասին:

Անհատին եթե մեջտեղից կիսես, նա կմեռնի: Իսկ պետությունն ուզում ես տասը մասի բաժանիր, նա էլի կապրի:

Բեռլինը, որ մի պետություն էլ չէ, այլ մի քաղաք, երկու մասի է բաժանվել և շատ հաջող ապրում է:

Անհատական կյանքում գողություններ շատ են պատահում: Ամբողջ ընտանիքով հրավիրվում են հարսանիքի, տունը մնում է դատարկ, օգտվելով այդ հանգամանքից՝ գողերը մտնում են և տունը մաքրազարդում:

Պետական կյանքում այդ չկա:

Անգլիան երբեք իր կղզու վրա կողպեք չի կախի, գնա Ֆրանսիայի հարսանիքին:

Զրույց կապիկի հետ

Կենդանաբանական այգուց եմ գալիս:

Ա՛յ մարդ, սա մարդանման կապիկն ինչքա՜ն է փոխվել:

Նոր որ բերին, կարծես իսկական մարդ լիներ: Այնքան, որ ես՝ որպես նորածանոթ, ամաչում էի հետը «դու»-ով խոսել:

Իսկ հիմա ավելի կապիկի է նման, քան մարդու:

Մոտեցա իր վանդակին և ասում եմ.

- Դու որ նոր եկար, այնքան նման էիր մարդու, որ եթե մի փոքր աշխատեիր ինքդ քեզ վրա, հիմա կատարյալ մարդ կլինեիր: Իսկ հիմա ի՞նչ ես դառել, կատարյալ կապիկ:

- Մի՛ մտածիր,- պատասխանեց կապիկը,- հիմա այս վիճակում էլ մուշտարիներ շատ ունեմ: Բազմաթիվ հինգանձ ընտանիքներ գալիս առաջարկում են ինձ իրենց տնային գրքույկում արձանագրվել,

որ երեք սենյակից բնակարան ստանան, չեմ գնում։

- Բնակբաժինը հազիվ համաձայնի,- ասում եմ,- մի փոքր... շատ ես կապիկ։ Իսկ ինչո՞ւ չուզեցար մարդ դառնալ։

- Մարդը շատ է արհեստական,- պատասխանեց կապիկը։- Ես որ տեսնում եմ, թե ինչպես անկողին մտնելիս սկսում է իր անթիվ կոճակներն արձակել ու առավոտները նորից կոճկել, սիրտս պայթում է։ Վայ շալվարդ արդուկիր, վայ սափրվիր, իսկ եթե կին ես, քսվիր։ Մենք այդ բանն անո՞ղ ենք։ Մերը մի հնամաշ մորթի հագնել և ծառ թռնելն է։ Կոճակս ո՞րն է։

Ասաց ու ավելացրեց.

- Բացի դրանից՝ ես այնքան եմ զայրացել մարդու վրա, որ հիմա եթե թողնեն, անտառ կվազեմ։

- Ինչո՞ւ, ի՞նչ է պատահել։

- Ի՞նչ պիտի պատահի։ Արդարություն չկա։ Ես, ամբողջ օրը քափ ու քրտինքի մեջ, վանդակի վերին ճյուղերից վար եմ ցատկում, գլուխկոնծի եմ տալիս, պոչիս հետ խաղում, այգու բրիգադիրն ինձ աշխօր չի գրում, ասում է՝ այդ աշխատանքը հասարակական չէ։ Ա՛յ անիրավ,- ասում եմ,- ինձ մենակ բերել բանտարկել եք այս ամայի վանդակում, հասարակություն կա՞, որ հասարակական աշխատանք տանեմ։ Խնդրեմ, կապիկներով լցրեք վանդակս, փոխադարձաբար իրար պոչի հետ խաղանք։ Կամ ի՞նչ կարիք կա դրան։ Ամենքն էլ պոչ ունեն, թող յուրաքանչյուրն իր պոչի հետ խաղա։

- Իզուր ես զայրանում,- ասացի,- դու նրան չես հասկացել։ Ա՛յ, եթե մարդ դառնայիր, կհասկանայիր։ Նա դրանով ուզում է ասել, որ քո աշխօրները բեր կիսենք։

- Ինչո՞ւ, ես գլուխկոնծի տամ, բերեմ արդյունքը նրա հետ կիսե՞մ։ Թող ինքը գլուխկոնծի տա։ Ի՞նչ է, գլուխ չունի՞։

- Այսպես չի կարելի խոսել։ Նա ղեկավար մարմին է, և դու նրան վիրավորում ես։

- Վա՛յ-վա՛յ։ Ղեկավար մարմին։ Մի արի տես, թե վանդակս մաքրելիս հավաքարարուհին ինչ է խոսում նրա մասին։ Ասում է. «Մեր գյուղի բրիգադիրն էր առաջ. ամբողջ օրը դաշտում կանանց հետ սիլի-բիլի էր անում և աշխօրն իր կամքը չկատարողից վերցնում, իր կամքը կատարողի հաշվին էր գրում»։ Երևի դա է հասարակական աշխատանքը, այո՞։

Մի փոքր լռեց ու ավելացրեց.

- Ռոբինզոն Կրուզոյից պահանջում են, որ իր մենավոր կղզում հասարակական աշխատանք տանի...

- Դու ա՞յդ էլ գիտես: Կարդո՞ւմ ես:

- Առաջները կարդում էի, հիմա՝ ո՛չ: Հիմա գիրք որ տեսնում եմ, կարծես իմ գրողը լինի...

- Ինչո՞ւ, գիրքը լավ բան է:

- Գտե՛լ ես լավ բան: Մեր կյանքը քիչ անիրական է իբրև թե, գրողները վերցնում, ավելի անիրական են դարձնում...

- Չէ՛, արի խոստովանիր, որ դու այսօր վատ ես տրամադրված, թող մնա մի ուրիշ օր կգամ՝ խոսենք:

- Երբ էլ գաս, ինձ այսպես կտեսնես:

Կամենալով խոսակցության նյութը փոխել՝ հարցրի.

- Ինչպիսի՞ն են քո հարաբերություններն այգու մյուս կենդանիների հետ:

- Ոչ ոքի հետ չեմ խոսում:

- Թութակը հետդ չի՞ խոսում:

- Խոսում է: Սևարևն ինձ ծաղրում է, ասում է. «Ուրիշի շարժուձևը կրկնում ես, ինքնուրույն չես»: Ինքն օրնիբուն ուրիշի ասածները կրկնում է, չի տեսնում, իմ շարժումների մասին է խոսում:

- Այդ լավ չէ: Եթե խոսես, սիրտդ կբացվի:

- Հնարավո՞ր չէ: Անցյալներ լսեցի Աֆրիկայից մի նոր փիղ են բերել, կամեցա տեսնել ու լուր առնել մերոնցից, հնարավոր չէ: Փիղը տեղավորել են այգու հեռավոր ծայրը, իսկ ես հեռախոս չունեմ, որ մի փոքր զրույց անեմ:

- Հեռախոսի համար դիմե՞լ ես:

- Դիմել եմ: Ասում են. «Կաբել չկա, իսկ օդով անցկացնել չի թույլատրվում»:

- Դե՛, լավ: Ցտեսություն: Ես գնացի: Մի՛ հուսահատվիր, վերջը լավ կլինի:

- Ասում եք, էլի: Վերջը, վերջը, վերջը: Ցտեսանք մի սկիզբ, որ վերջ դառնար...

Իմ հարևանը

Ես չիմացա, թե իմ վարի հարկում ապրողն ինչ պրոֆեսիայի տեր մարդ է։

Այն ժամանակ, երբ ածելու լեզվակ չէր ճարվում, մորուք էր թողնում և ինքզինքը տերտեր հռչակում։ Հիմա, որ լեզվակն առատացել է, ամենայն օր սափրվում է և թեթև-թեթև ման գալիս։

Եվ որովհետև հոգևորականն ու աշխարհականը իրարից տարբերվում են միայն մորուքով, հիմա չգիտեմ՝ տերտեր անվանեմ նրան, թե՞ ընկեր։

Բայց Աստվածաշնչին լավ ծանոթ է։

Պատահում է, որ ավտոբուսից միասին ենք իջնում և մինչև տուն հասնելը զրուցում ենք իրար հետ։

- Ընկե՛ր տեր հայր,- ասում եմ,- ինձ այնպես է թվում, որ Աստված աշխարհը ոչ թե մարդու համար է ստեղծել, այլ ձկների համար։

- Այդ ինչի՞ց իմացար,- հարցնում է։

- Նրանից իմացա,- ասում եմ,- որ աշխարհի երեք մասը ջուր է ստեղծել, նոր մեկ մասը՝ ցամաք։ Ձկներն ազատ լողում են լայնարձակ օվկիանոսներում, իսկ մարդիկ, թառած մի փոքրիկ կտոր հողամասի վրա, իրար են խեղդում, ինչ է թե իրենց երկիրը մի թզով ընդարձակեն։

- Չէ՛, որդի՛, այդ այդպես չէ,- ասաց օրմեջ քահանան։

(Ես նրանից տարիքով շատ մեծ եմ, բայց որովհետև ես նրան «տեր հայր» անվանեցի, չպիտի զարմանամ «որդի» կոչվելուս համար)։

- Հապա ինչպե՞ս է,- հարցրի։

- Տարածության համար չէ, որ մարդիկ իրար խեղդում են, այլ մարդն է ագահ։ Մեր կյանքից խոսենք։ Մարդիկ կան, որ անձից երեք հոգի են, ունեն երեք սենյակ, էլի դիմում են տվել բնակբաժին, որ ընդարձակվեն։ Քամելեոն են դարձել մարդիկ, օրական տասը կերպարանք են առնում և կամենում են ամեն կերպարանքի համար մի սենյակ ստանալ։

Գերմանիան, որ երկու անգամ երիշ քաշեց՝ աշխարհին տիրելու, նեղվածքի՞ մեջ էր։ Ինչո՞ւ հապա հիմա իր նախկինից էլ փոքր երկրում զարգացել, բարգավաճել և աշխարհի երկրորդ ինդուստրիալ երկիրն է դարձել։

Թուրքիան հող չուներ, որ բռնեց իր հպատակ հայերին ազգովին ոչնչացրեց։ Մարդն ի բնե չար է և ստեղծված է միայն ինքն իր գլխին թշվառություն թափելու։ Կոտորած, ավեր, մայրակորույս որբեր, որդեկորույս մայրեր, պատերազմներին միլիոնավոր դիակներ, բոլորը՝ ջահել-ջիվան, նորապսակ, անմուրազ։ Այս բոլոր զուլումն ինչպե՞ս ողբայինք, եթե Աստված աշխարհի երեք մասը աղի ջուր չստեղծեր։ Մեր աչքերի մի քանի կաթիլ արցունքով այսպիսի ահռելի դժբախտությունները կողբացվե՞ն։ Երեք մաս ջուրը դեռ քիչ է։ Սպասի՛ր, վաղը մի ատոմային պատերազմ փրթի, արցունքի կարիք դու եկ այն ժամանակ տես։ Այդ տնաքանդությունը ողբալու համար պետք է, որ Աստված աշխարհի մեկ մասը ցամաք ստեղծեր, տասը մասը՝ ջուր։

Այսպես խոսելով՝ մենք հասել էինք մեր տներին։ Ու որպեսզի իր խոսքը կարճ կապեր, վերջում թե՝ իսկ եթե ինձ կհարցնես, ամբողջովին ջուր պետք է ստեղծեր։ Ասաց ու տուն մտավ։

Ափսո՜ս։ Եթե մեր տները մի քիչ էլ հեռու լինեին ավտոբուսի կանգառից, միգուցե տեր հայրը զիջեր մի ոտատեղ ցամաք թողնել մարդկության համար...

Ավտոմոբիլի մի սիգնալ, որ կործանում է ողջ աշխարհը

Ես այսպես եմ։

Երբ իրիկունը մի խնդրի մասին երկար մտածում և լուծումը չեմ գտնում, քնելուս պես երազումս լուծվում է։

Առջի իրիկուն նստած մտածում էի աշխարհի ներկա կացության մասին։

- Տե՛ր Աստված,- ասում էի,- երբ պիտի աշխարհը խաղաղի, և ամեն պետություն իր գործին անցնի։

Ախր առաջ այսպես չէր աշխարհը։

Ամեն պետություն իր տան տերն էր։ Տանը իր կնոջ հետ կռվում էր, բարիշում էր՝ հարևանի վեջը չէր։ Նրա գործին չէր խառնվում։ Իսկ հիմա պետությունները, ականջները սրած, ման են գալիս հարևանի պատուհանի տակ, որ մի աղմուկ լսեն ու մտնեն ներս, միջամտեն։

Կատակն էլ արգելված է։

Դե՛, մենք բոլորս էլ ամուսնացած մարդիկ ենք և գիտենք, որ սիրող ամուսինները երբեմն իրար կծվռտում են։ Կնոջդ կծեցիր, մեկ էլ տեսար երկու մեծ պետություն ներս մտավ։

Մանավանդ եթե կինդ մի փոքր գեղեցիկ է։

Վերցնենք Կիպրոսը։

Այնտեղ հույները և թուրքերն ապրում են եղբայրաբար։ Է՛, եղբայրների մեջ կռիվ չի՞ պատահի։ Վերջերս մի փոքր կռվեցին։ Անգլիան, որ աչք ունի այդ գեղեցիկ կղզու վրա, օգտվելով առիթից՝ անմիջապես իր զորքերը թափեց այնտեղ։ Խեղճ Մակարիոսը[120] բղավում, ճղավում է, թե միջամտություն չեմ ուզում, Անգլիան՝ թե չէ՛, պիտի միջամտեմ։

Կամ վերցնենք Հարավային Վիետնամը։ Այնտեղ գոյություն ունեն ազգային ճակատ և ազգային ծոծրակ, որոնք ժամանցի համար կռվում են իրար հետ։

Ամերիկան որտեղ, Վիետնամը որտեղ։ Բայց գիշատիչների աչքերը սրատես են լինում, տեսնելուն պես առավ իր զորքերը, վազեց։

Ամերիկա՛, եթե սիրտդ ցավում է, որ մարդիկ իրար կոտորում են, ո՞ւր էիր այն ժամանակ, երբ թուրքերը, չոքած մի ողջ ազգի սրտին, մորթում էին նրան։ Ձեռքդ չէր հասնում այն ժամանակ, ընդունում եմ։ Իսկ ինչո՞ւ ես հիմա թևանցուկ ման գալիս այդ ոճրագործի հետ…

Հա։ Ասում եմ՝ առջի իրիկուն նստած շատ երկար մտածում էի այս անիրավ աշխարհի մասին, թե ինչպե՞ս անեմ, որ մարդիկ մարդ դառնան, իսկ աշխարհը՝ աշխարհ։

Եվ իհարկե դրա հնարը չգտա և վեր կացա պառկեցի։ Ու դեռ աչքս չկպած՝ երազումս այդ հարցը ինքն իրեն լուծվեց։

Բեռնակիր էի երազումս։ Փալանը կռնակիս, պարանը ուսիս՝ ման էի գալիս աշխարհում և բեռ էի փնտրում՝ տանելու։

Մեկ էլ Աստված ինձ կանչեց.

- Համբա՛լ,- ասաց,- ինչ տամ՝ աշխարհի բոլոր պետությունները փոխադրես տարբեր մոլորակների վրա։

- Տե՛ր ամենակալ,- ասացի,- ինչ կտաս, տուր։

- Հա՞, դե լավ, սկսի՛ր։ Ամեն պետություն մի առանձին մոլորակի վրա փոխադրի՛ր և այնքան հեռու իրարից, որ լույսի ճառագայթները միլիոն տարի հետո միայն նրանց հասնեն,- ասաց, ապա քիչ մտածելուց հետո ավելացրեց,- չէ՛, լույս հարկավոր չէ, եթե լույս լինի,

էլի իրար պիտի տեսնեն։ Փոխադրի՛ր խավար մոլորակների վրա։

- Քո կամքը,- ասացի,- ոնց որ կհրամայես։

- Դե՛, սկսի՛ր, քանի իրար չեն կերել։

Ես իջա աշխարհ և աչք եմ ածում պետություններին, մի կողմից էլ մտովին փորձում շալակիս տարողունակությունը։

Ալբանիան, Իսլանդիան՝ հեչ, ես նրանց գրպաններումս կտեղավորեմ։ Դժվարը Ռուսաստանը, Չինաստանն ու Ամերիկան էին։ Արդյոք կարո՞ղ էի շալակել։

Ասենք՝ Ռուսաստանն ու Ամերիկան էլ ոչինչ, նրանք բաղադրյալ պետություններ են, առաջինը բաղկացած է տասնհինգ հանրապետություններից, երկրորդը՝ հիսուն նահանգներից՝ պտուտակներով իրար միացած։ «Կքանդեմ, հետո կմիացնեմ,- ասում եմ։- Դրանցից ծանր պահարաններ եմ կրել»։

Բայց Չինաստանի բանն իսկապես որ դժվար է։ Միաձույլ պետություն, ինքն էլ՝ ծանր։ Տեղից շարժե՞լ կլինի։ Երբ շալակս բարձրացնող լիներ, էլի ոչինչ։

Բայց պիտի տանեի, ճարս ինչ։ Աստծու հրամանն ինչպե՞ս կարող էի չկատարել։

Սկսեցի Իտալիայից։

Սա էլ մեծ պետություն է, բայց որովհետև երկարուկ է, տնկեցի մի պատի տակ ու շալակեցի։

Թուրքիային որ շալակս առա, կռնակս վառվում էր։

- Ա՜խ,- ասում եմ,- տանեմ կես ճանապարհին բաց թողնեմ մի անտակ օվկիանոսի մեջ...

Անգլիան թեև փոքր, բայց ծանր էր։ Ինքը ծովային պետություն, դարերով ջուր է քաշել մեջը։

Միտք է ծագում մեջս բոլոր ծովային պետությունները կրելուց առաջ մի արևի ցույց տամ։ Գիտեմ, որ Ճապոնիան էլ այսպես ծանր կլինի։

Ֆրանսիայի մի մասը թեև ծովային է, բայց ոչինչ, թեթև էր, հեշտությամբ տարա։

Գերմանիան, Վիետնամն ու Կորեան արդեն երկերկու մասերից բաղկացած խուրջին պետություններ են. գցեցի ուսիս, տարա։

Ինդոնեզիայի հետ չիմացա՝ ինչ անեմ։ Փշրված խցանի նման փոքր մասնիկներով ջրի վրա տատանվում էր։ Այդ մանր կղզիները

քամելու համար փլավքամիկ էր պետք, որ չունեի։

Թողի. ասացի՝ մնա վերջում, Հունաստանի կղզիների հետ ուռկանով կհավաքեմ, կգցեմ շալակս։

Իսպանիա որ մտա, Ֆրանկոն չէր հավատում ինձ, ասում էր.

- Կխաբես, կտանես, դիկտատորությունը ձեռքիցս կառնես։

Ասում եմ.

- Չէ, ա՛յ մարդ, ես մի խեղճ բեռնակիր եմ, առնեմ՝ ի՞նչ անեմ։

Երբ բոլոր մեծ պետությունները տարա, սկսեցի երկրի երեսից հավաքել Ալբանիային, Շվեյցարիային, Իսլանդիային, Աֆրիկայի՝ նոր ձվից դուրս եկած պետություններին և զամբյուղի մեջ դարսելով՝ կամացուկ տարա, դասավորեցի մի առանձին մոլորակի վրա։

Երբ ուզում էի հեռանալ, բոլորն սկսեցին լաց լինել, ասում էին.

- Մենք մենակ վախենում ենք, մեզ մոտ մի մեծ պետություն դիր։

- Հիմարներ,- ասում եմ,- մեծ պետությունը կգա, ձեզ կուտի։

- Ինչո՞ւ երկրի վրա չէին ուտում,- ասում էին։

- Երկրի վրա չէին ուտում, որովհետև մեծ պետությունները շատ էին և իրարից քաշվում էին։ Իսկ հիմա մեկ մեծ պետություն որ գա, հափ կանի, կուտի ձեզ։

Վերջը, ի՞նչ երկարացնեմ, ողջ աշխարհը դատարկեցի։ Նայում եմ ամայի աշխարհին ու զարզանդում։ Ոնց որ բոլոր աղջիկներիդ մարդու տաս, ու տունդ դատարկվի։

Գնացի այնտեղ, ուր առաջ Ամերիկան էր տարածվում։ Ասում եմ՝ հարուստ պետություն էր, գուցե թաղած ոսկի ունենա։ Բայց ի՞նչ եմ ասում, ոսկին նրա հոգին է, նա առանց ոսկու կապրի։

Երբ այսպես ամեն ինչ վերջացրի, գնացի Աստծուն զեկուցելու։ Ասացի.

- Տե՛ր ամենակալ, աշխարհը դատարկ է արդեն, հիմա ի՞նչ ես անում այդ տարածությունը։

- Տամ քեզ, բոստան շինի՛ր։ Պտուղ ու բանջար,- ասաց։

- Միջոցներ չունեմ...

- Ես ինքս վարել տամ, պարարտացնեմ, ցանեմ և քեզ հանձնեմ։

Երբ այս բոլորը կատարված էր, նախկին աշխարհը դարձավ դրախտ։

Այստեղ արդեն գլխիս մեջ հանցավոր միտք ծագեց։

Ասում եմ. «Դրախտը կա, ես էլ նրա Ադամը. մի Եվա է պակասում, գնամ Աստծուց մի Եվա խնդրեմ, ապրեմ։ Իհարկե, չբեր կին, որ նորից աշխարհ չգոյանա»։

Գնացի Աստծու մոտ, ծիծաղեց։ Ասաց.

Ա՛յ մարդ, ինչո՞ւ մարդիկ առանց կնոջ մի քայլ չեն գցում։ Ի՞նչ են գտել կնոջ մեջ։

- Ուտողը գիտի, չուտողն ի՞նչ գիտի,- ասում եմ՝ նույնպես խնդալով։

- Դե լավ, աշնանը քեզ կպսակեմ։

Ուրախացած վերադարձա և սկսեցի խնամել։

Ա՛յ տղա, այնպիսի մի պտուղ ու բանջար է աճել, որ լցնես ծովը, կցամաքի։ Ի՞նչ պիտի անեմ այս բոլորը։

Երբ այսպես շվարած կանգնած էի, հանկարծ միտքս ընկավ «Հայպտուղբանջարառը», ասում եմ. «Հեյ գիտի... այստեղ լիներ, տայի՝ վաճառեր։ Խեղճն իր օրում ո՛չ պտուղ վաճառեց, ո՛չ բանջար...»։

Մինչ այս, մինչ այն, եկավ աշունը, և ես հարսանիքի պատրաստություն եմ տեսնում։

Աստված, պահելով իր խոստումը, մի աննման Եվա ուղարկեց ինձ։ Գիրկս բացած երբ սլանում էի դեպի նա, այդ միջոցին իմ հարևան ինժեների ավտոն կանգնեց դռանը և այնպես զռռաց, որ ես քնիցս վեր թռա, և իմ՝ գիշերվա ամբողջ քրտնաջան աշխատանքը հօդս ցնդեց։

Էլի նույն աշխարհը, էլի ես։

- Ա՛յ ինժեներ, բա սա խիղճ է։ Չէիր կարող պատվիրել վարորդիդ մի քիչ կամաց զռռալ։

Թե մի շենք ես կառուցում, նրա տեղը մի ամբողջ երջանիկ աշխարհ քանդեցիր այս առավոտ։

Քաղսովետի պարտադիր որոշումը չե՞ս կարդացել...

Բախտի բերմունք

Ուրիշ բան է քաղաքը, ուրիշ՝ գյուղը։

Եթե Թեկոն քաղաքացի լիներ, երբեք այսպես չէր բարկանա իր մարդու վրա և այսպես վրեժով չէր լցվի նրա հանդեպ։

Երևակայեցեք՝ մի մարդ, այն էլ հիվանդ մարդ, իր կնոջն ասի էշ, ավանակ, իսկ կինը իրավունք չունենա ի պատասխան մարդուն գեթ միամսական քուռակ անվանել…

Սա տանելու բան չէ։ Բայց Թեկոն ստիպված պիտի տաներ, եթե մի պատահական դեպք օգնության չհասներ նրան։

Հիվանդացավ սրանց կովը, և Թեկոն շրջան գնաց՝ մի անասնաբույժ կովի վրա բերելու, մի մարդու բժիշկ՝ իր մարդու վրա։

Մարդու բժիշկը շրջանում չէր։ Եկավ միայն անասունի բժիշկը։

Տնտղեց կովին, բերանը բացեց, լեզուն նայեց, կոկորդը, վիզը և մի դեղ լցնելով բերանը՝ ուզում էր գնալ։

Թեկոն ներս կանչեց անասնաբույժին և ասաց.

- Շատ եմ խնդրում, մի դեղ էլ մարդուս համար գրիր, տառապում է խեղճն իր անկողնում։

Անասնաբույժը նայեց հիվանդին ու ասաց.

- Քո՛ւր ջան, ես անասունի բժիշկ եմ, մարդու բժիշկ չեմ։

- Ինչ տարբերություն, մարդս էլ համարյա անասուն է։

Մարդը սպառնական շարժում գործեց անկողնում։

Կինը, մոտենալով մարդուն, ականջին փսփսաց.

- Ձեն մի՛ հանիր, բալքի մի կերպ համոզեմ։

Ու դառնալով անասնաբույժին՝ շարունակեց.

- Բժի՛շկ ջան, շատ եմ խնդրում։ Մեր կովը, որ համեմատես սրա հետ, փիլիսոփա է։ Հարևան գյուղից ճանաչեց մեր գյուղը, մեն-մենակ եկավ, մեր դռանը կանգնեց. իսկ սա,- ցույց տալով մարդուն՝ ասաց կինը,- կատարյալ էշ։

Մարդը փորձեց նորից սպառնալ, բայց կինը նորից հանգստացրեց նրան՝ ասելով.

- Ես քո առողջության համար եմ ասում, ջա՛նս, աղաչում եմ մի՛ խանգարիր։

Ու նորից դարձավ անասնաբույժին.

- Էշից տարբերվում է նրանով, որ ականջները նրա չափ մեծ չեն, և երկու ոտք ունի, դու նրա ականջի ու ոտքի չափով բուժիր։ Մնացածը թող մնա անբուժելի։

- Ա՜յ մայրիկ, ա՜յ քույրիկ, դու բանական մարդուն մի՛ նույնացնի անբան անասունի հետ։

- Եթե կա աշխարհում մի անբան, դա իմ մարդն է։

- Չէ, այդ բանը ես երբեք չեմ անի ու գնում եմ, մնաք բարով։

Ասաց ու դռնից դուրս եկավ։

Սրա վրա կինը ընկավ անասնաբույժի հետևից ու կանչելով գնում էր.

- Բժիշկ, երդվում եմ, որ իմ մարդը շուն է, կով է, եզ է, խոզ է, արջ է, գայլ է...

- Գիտեմ, գիտեմ,- ետ դառնալով՝ ասաց անասնաբույժը։- Մեկ խոսքով ասած՝ քո մարդը գազանանոց է, բայց ես հրաժարվում եմ բուժել,- ասաց, նստեց մեքենան ու հեռացավ։

Կինը հուսահատ վերադարձավ մարդու մոտ և զայրույթով ասաց.

- Բժիշկ խոմ չեն, քթի մազ։ Ինչպես կարելի է այս մարդու և անասունի մեջ տարբերություն դնել։

- Հիմա բժիշկ չկա, ինչո՞ւ ես անպատվում ինձ,- ասաց մարդը։

- Ես բժշկի վրա եմ բարկացել, ոչ քո։ Գալով քեզ՝ պիտի ասեմ, որ քո հիվանդությունն անբուժելի է, ինչպես չես հասկանում դու բուժվելու համար էշ էլ պիտի լինես, շուն էլ։ Եթե մեռար, ինչ պիտի լինի իմ վիճակը...

Ասաց և սկսեց աղիողորմ լաց լինել։

Մարդը խղճաց կնոջը.

- Լավ,- ասաց,- լաց մի՛ լինի, սրանից հետո ինչ կենդանի կամենաս, կդառնամ...

Աշխարհի կողմերը

Մի հարավային կորեացի, մի հյուսիսային կորեացի դուրս եկան իրենց երկրից՝ աշխարհի շուրջը պտույտ գործելու։

Առավոտ շատ վաղ դուրս եկան իրենց երկրներից, ձիերը նստեցին, հանեցին վերարկուի գրպաններում դրված կողմնացույցները, գաղափարապես կողմնորոշվեցին և սաստիկ ատելությամբ լցված իրար հանդեպ՝ ձիերը մտրակեցին։

Քանի օդը ցուրտ էր, նրանք անվերջ հանում էին իրենց կողմնացույցները, կողմնորոշվում, կրկին ու կրկին ատելությամբ բորբոքվում և առաջ անցնում։

Երբ արևը բարձրացավ զենիթին, շոգը սոսկալի զոռեց, և նրանք, հանելով իրենց վերարկուները, որոնց գրպաններում դրված էին

կողմնացույցները, գցեցին իրենց ձիերի գավակների վրա։

Զրկվելով կողմնացույցներից՝ նրանց դասակարգային գիտակցությունը մթագնեց, ու... եղբայրացան։

Իրենց հյուսիսն ու հարավը մոռանալով, կարծես մի երկրի զավակներ՝ սկսեցին քաղցր ու անուշ զրույցով շարունակել իրենց ճանապարհը։

Բայց ձիերն իրար հետ չէին քայլում։ Իրար կա՛մ կծում էին, կա՛մ քացի տալիս։

Երբ հեծյալներն ուզում էին համբուրվել, մեկ էլ տեսար՝ ձիերն առնում փախնում էին։

Ճամփորդության առաջին օրն արդեն երեկոյանում էր։ Արևը մայր մտավ, և օդը ցրտեց, որի պատճառով հեծյալները հագան իրենց վերարկուները, և առաջին գործն այն եղավ, որ ստուգեն, թե գրպաններո՞ւմ են իրենց կողմնացույցները։

Երբ նայեցին կողմնացույցին, նորից նրանց հարաբերությունները սառեցին, նայում էին իրար թշնամաբար, և ամեն մեկը գնում էր՝ ձեռքն ատրճանակի պատյանին, ամեն րոպե կոճակն արձակելու պատրաստ։

Առաջին գիշերը քնեցին այսպես անհաշտ ու երազներումն էլ սկսեցին կոտորել իրար՝ դիակներով ծածկելով պանդոկի գետինը...

Ճամփորդության հետագա բոլոր օրերին այսպես էլ գնացին։ Առավոտը՝ օտար, ճաշին՝ հարազատ, իսկ գիշերը՝ կոտորած։

Վատ էր ամպ օրերին, երբ արև չկար։ Այդպիսի օրերին, փառք իրենց, օրվա քսանչորս ժամը զենքը ձեռքին, կանգնած էին լինում իրենց դասակարգային դիրքերի վրա։

Մի օր էլ բանն այնտեղ հասավ, որ իրար երես չտեսնելու համար ամեն ոք իր ձին մտրակեց առաջ անցնելու։ Հետո հանկարծ կանգնեցին ու սկսեցին իրար ջան ասել, ջան լսել։

Այս բանի վրա իրենք էլ էին ապշել, որովհետև օրն ամպ էր, և ըստ օրենքի՝ նրանք՝ որպես պրոֆեսիոնալ թշնամիներ, պիտի իրար ատեին։

Այս հանելուկը պարզվեց այն ժամանակ միայն, երբ ետևները նայեցին ու տեսան՝ իրենց վերարկուներն իրենց գավակներին չեն։ Վազքի ժամանակ ընկել էին գավակներից, կողմնացույցներն էլ՝ գրպաններում...

Նրանց այլևս ո՛չ հյուսիսն էր հայտնի, ոչ հարավը, և ուզեին-չուզեին՝ պիտի ապրեին որպես եղբայրներ։

Եղբայրությունը սաստկացավ այն ժամանակ, երբ ընկերներից մեկի ձին սատկեց թունավոր խոտից, և երկուսը միասին, իրար գրկած, գնում էին՝ մի ձիու վրա նստած։

Խոսում էին իրենց երկրի լավից, վատից, իրենց ազգային տոներից, սովորություններից։ Նաև այն մասին, թե ինչպես մի մարդու պես դուրս էին գալիս իրենց երկիր արշավող թշնամիների դեմ։ Եվ նրանց սիրտը լցվում էր ազգային հպարտությամբ։

Այս ոգով էլ նրանք շրջեցին աշխարհը և տուն վերադարձան։

Դռան վրա, չիմանալով, թե իրենցից որն է հյուսիսցի և որը հարավցի, փուչ գցեցին և այնպես մտան։

Պատմելով այս բոլորը՝ հարցնում եմ.

- Արդյո՞ք լավ վարվեց մարդկությունը, որ կողմնացույցի գյուտն արեց։ Ի՞նչ կարիք կար, որ մարդն իմանար իր հարավն ու հյուսիսը։ Եթե կողմնացույցը չլիներ, այսօր ո՛չ Վիետնամը, ո՛չ Կորեան, երկու բանակի վերածված, չէին բզկտի իրար։

Կամ ինչո՞ւ միայն կողմնացույցը։ Արևն էլ չպիտի գոյություն ունենար։ Գերմանացիք էլ արևին են նայում ու իրար վրա խոժոռվում։

Եթե արև չլիներ, գերմանացին ի՞նչ կիմանար՝ ո՞րն է արևելք, ո՞րը արևմուտք...

Եվ երկրում կտիրեր խաղաղություն։

Չախորդ Փանոսը[121]

Մի ճարտարապետ ընկեր ունեմ։

Մի վայ ճարտարապետ։

Նրա շինած բոլոր կամուրջները նստում են, կտուրները՝ կաթում, պատերը՝ ճեղքվում։

Որի պատճառով անվերջ տույժ, տարբեր աստիճանի նկատողություններ՝ առաջինից մինչև վերջին։

Ինքը՝ բազմանդամ ընտանիք, կինն էլ անվերջ երեխա է բերում։

Ծիծաղում եմ վրան։

Ասում եմ.

- Ա՛յ տղա, դու տանը ավելի հաջողված շինարար ես, քան դրսում։

Ինքն էլ է ծիծաղում։

Մենք լավ ընկերներ ենք, սիրտս ցավում է վրան։ Ասում եմ.

- Փանո՛ս, արի մասնագիտությունդ փոխիր։ Ի՞նչ գործ ունես ցեմենտի, քարի, գաջի հետ, եկ դարձիր հոգու ճարտարապետ։ Մաքուր գործ, ո՛չ ցեխ, ո՛չ գաջ։ Հոգին ո՛չ կամուրջ է, որ նստի, ո՛չ կտուր ունի, որ կաթի։ Հոգին հոգի է։

- Դրան մատերիալ հարկավոր չէ,- հարցնում է Փանոսը։

- Հարկավոր է, բայց շատ քիչ։ Երկու տիպեր։ Դրական և բացասական։ Վեպիդ դուռը բաց կանես, ինչքան տարողություն ունի, մեջը բացասական տիպեր կթխմես, կերթաս՝ մի հատ էլ դրական տիպ ճարելու։ Գտար այդ դրական տիպը, որպես «լինգ» կտաս բացասականների տակը ու շուռ կտաս։ Դու հոգեբանությունից գիտես, որ կյանքում միայն լավ, միայն վատ մարդիկ գոյություն չունեն։ Բոլոր մարդիկ երկու երես ունեն՝ մեկը՝ կեղծավոր, մյուսը՝ անկեղծ։ Կեղծը դուրս են դարձնում, անկեղծը՝ ներս։ Լինում են ծույլ ու ժրաջան, գող ու հավատարիմ, թերակշռող և ծանր կշռող, գիտնական և հիմար։ Իրենց ծուլությունը, գողությունը, թերակշռողությունը դրսևորում են, իսկ ժրաջանությունը, հավատարմությունը, ծանրակշռությունը պահում են հանդիպակաց կողմ, իրենց սեփական կարիքների համար։ Քո խնդիրը կլինի այդ տիպի մարդկանց շուռ տալ իրենց մյուս կողքի վրա այնպես, որ դրսում անկեղծ լինեն, իսկ տանը՝ կեղծավոր։ Խանութում ծանր կշռեն, տանը՝ թեթև, ակադեմիայում գիտնական լինեն, տանը՝ հիմար, կոլխոզում ժրաջան լինեն, տնամերձում՝ ծույլ։

- Կարո՞ղ եմ,- ապշած հարցրեց Փանոսը։

- Ի՞նչ կա դրանից ավելի հեշտ,- ասում եմ,- դժվարը մի դրական տիպ ճարելն է։ Փնտրի՛ր, եթե չգտար, մի դերանուն կճարես, վեպդ կամբողջացնես ու հրատարակության կհանձնես, հետո, երբ գտար այդ տիպը, դերանունը կվերցնես, այդ մարդու անունը կդնես տեղը… երկրորդ տպագրությանը։

- Լա՛վ,- ասում է Փանոսը,- վեպումս հավաքեցի բոլոր այդ ծույլ ու անպետք մարդկանց, դրանց գործն ի՞նչ պիտի լինի։

- Կվերցնես մի անջրդի քարադաշտ ու այն կդարձնես պտղատու այգիներով, քչքչան աղբյուրներով օժտված մի դրախտ։

- Չեմ կարող։

- Դու չես անի, ա՛յ մարդ, քո դրական տիպը կամ դերանունը կանի։ Դրա համար գոյություն ունի հատուկ շաբլոն։ Այդ դրական տիպը կամ, քո լեզվով ասած, «դեսյատնիկը» քարոզ կկարդա գլխներին, երբ տեսավ՝ բան դուրս չի գալիս, վեպ դուրս կբերի մի գեղեցիկ աղջկա, որ ժպտա ծույլերի երեսին ու ոտքի հանի նրանց։*

- Ընկե՛ր Ջան,- ասաց,- եթե այդ աղջիկն իրոք գեղեցիկ լինի, ես թույլ չեմ տա՝ որևէ մեկի երեսին ժպտա։ Դու գիտես իմ տկար կողմը։ Ես դեպի գեղեցիկ սեռը անզուսպ եմ։ Ինչպե՞ս կարող եմ իմ սեփական վեպի գեղեցիկ աղջկան տալ այլոց՝ վայելելու։

- Էլի կարող ես վայելել, միայն վեպդ վերջացնելուց հետո։ Օթելլո ներկայացնող դերասանը ինչքան էլ սիրելիս լինի Դեզդեմոնա ներկայացնող կնոջը, բեմի վրա չի համբուրի նրան։ Բեմի վրա կխեղդի, իսկ կուլիսում նոր կհամբուրի...

- Այս դեպքում իմ վեպերը դուրս կգան շատ կարճ։ Ստիպված շուտ պիտի իջեցնեմ բեմի վարագույրը։

- Կարճ գրես, չես ապրի։

Փանոսս մտածմունքի մեջ ընկավ։

Մտածեց, մտածեց, մտածեց ու ասաց.

*- Չէ՛, եղբայր, հոգի շինելն իմ բանը չէ։ Ինչ շինել եմ մինչև օրս, այն էլ կշինեմ։ Եթե իմ շինած կտուրները միայն անձրև օրերին են կաթում, հոգի շինելիս արև օրն էլ պիտի կաթեն։ Բոլոր մարդիկ, շքեղ հագնված, ման են գալիս փողոցում, ես ո՞ւմ օձիքից բռնած ասեմ՝ դու գող ես, արի գնանք վեպիս մեջ քեզ ուղղեմ։ Չէ՛, չեմ կարող։ Թող տույժ տան հիմա, թող նկատողություն անեն, թող հեռացնեն գործից, էլի մի տեղ կտեղավորվեմ։ Ո՞վ է դուրս մնացել մինչև օրս,- ասաց ու ինքնամոռաց բացականչեց,- հոգի-մոգի չեմ ճանաչում, դավա՛յ** էքսկավատոր, նասիլկա***, ավազ։ Գերադասում եմ ցեմենտի ու ավազի շաղախը շուռ տալ, քան մարդկանց հոգին։*

Հոգի, որի գոյությունն անգամ ապացուցված չէ...

---

* Դեսյատնիկ ***(десятник)*** - ռուս. տասնապետ։

** Դավայ ***(давай)*** - ռուս. տո՛ւր։

*** Նասիլկա ***(носилки)*** - ռուս. պատգարակ։

Բաց նամակ փողոցով անցնող քահանային

Հարգելի՛ տեր հայր

Դուք առաք Ձեր պարարտ, լիքը հեթանոսական մարմինը և շտապ անցաք մեր փողոցով՝ առանց գիտակցելու, որ դրանով երկու հանցանք գործեցիք։

Առաջինը՝ Դուք իրավունք չունեք նման աշխարհիկ մարմին ունենալու, որովհետև Դուք հոգևորական եք։

Հոգևորականը մարմնի վրա պիտի նայի որպես չարիքի, որը եկել է մոլորեցնելու հոգուն, այդ պատճառով մի ժամանակ ճգնավորներն ու վանականները խոշտանգում էին իրենց մարմինը, մի նկանակով օր էին մթնեցնում, որ մարմինը չզորանա ի հաշիվ հոգու։ Մարմինը համարում էին հոգու պատյան կամ մի տեսակ «կուլյոկ», որը պիտի լիներ շատ բարակ, որ թույլ տար հոգուն ազատ աճել։*

Դուք մեր քաղաքացին եք և գիտեք անշուշտ՝ ինչքան են բողքում մեր խանութի հաճախորդները, երբ տասը գրամ ապրանքը փաթաթում են քսան գրամ թղթի մեջ...

Հետո։ Դուք կոչվում եք նաև «հոգևոր հովիվ»։

Եթե Տեր մի արասցե, մի ռևիզիա գա՝ Ձեր գործերն ստուգելու, Դուք կարող եք Ձեր փարթամ մարմինը ցույց տալով գովեստի արժանանալ։

Ո՛չ։ Ռևիզիան ոչ թե Ձեր մարմնին, այլ Ձեր հոտին կնայի։ Երբ տեսնի Ձեր հոտը դրել եք փակագծի մեջ և ինքներդ մեծատառ պարարտանում եք, հոգևոր տույժի կենթարկի և այլ աշխատանքի կփոխադրի։

Իսկական հովիվը նա է, ով ինքն ապրում է փակագծի մեջ՝ որպես անհրաժեշտ չարիք, և հոտին բաց թողնում կերի պահեստը։

Որպեսզի գաղափար կազմեք Ձեր հոգու և մարմնի աններդաշնակության մասին, մի բոպե պատկերացնենք Ձեզ որպես հաստակեղև ընկույզ՝ շուկայում ընկած։ Ո՞վ, բարակ կեղև ունեցող ընկույզը թողած, հաստակեղևին կմոտենա։

Հաստակեղևներ, որոնք ջարդելիս մեծ մասամբ դուրս են գալիս... փուչ։

Այս Ձեզ մեկ հանցանք։

---

* Կուլյոկ ***(кулёк)*** - ռուս. տոպրակ, պարկ։

Հիմա անցնենք Ձեր երկրորդ հանցանքին։

Մի որևէ կրոնի առաջնորդ իրավունք ունի՞ այդպես արագ քայլելու փողոցով։ Ո՞ւր եք վազում այդպես նպատակասլաց։

Այդպես վազում են մարդիկ, երբ հաստատ գիտեն, թե մի տեղ կարագ են տալիս կամ մակարոն, իսկ Դուք վազում եք դեպի Աստծու արքայություն, որտեղ չգիտեք, թե ինչ են բաց թողնում, և անգամ չունեք այդ արքայության ճիշտ հասցեն։

Ուրեմն, կարելի է նաև դեպի անհայտությունն այդպես նպատակասլաց արշավել։

Ո՛չ, տե՛ր հայր, դեպի անորոշությունը պետք է գնալ կույրի պես։ Ձեռքի փայտով առաջը նախ շոշափել, նոր քայլը գցել։ Առավել ևս Դուք, որ հոտի առաջնորդ եք, և Ձեր յուրաքանչյուր անզգույշ քայլով կարող եք Ձեր հոտը մի ձորի մեջ թափել։

Հետո մի՛ մոռանաք, որ Աստված «ամեն տեղ է», հետևաբար, նրան գտնելու համար երբեք չպիտի վազել...

Դուք՝ որպես հոգևոր առաջնորդ, Ձեր յուրաքանչյուր քայլը պետք է մտածված փոխեք։ Գցել երկու քայլ և ուրախանալ, որ երկու քայլով մոտեցել եք դրախտին, հետո կանգ առնել, նորից մտածել և այս անգամ երեք քայլ ետ գնալ՝ բոլոր տեսակի դրախտների մասին խոսվածները համարելով սուտ խոստումներ, որոնցով հաստանում են միայն կրոնների առաջնորդները։

Երեք քայլ ետ գնալ և տխրել։

Մի քիչ էլ մտածելուց հետո էլի հավատալ ստին, էլի չորս քայլ գցել դեպի գոյություն չունեցող արքայությունը, նստել, երկար հանգստանալ, ապա վեր կենալ ու դարձյալ վեց քայլ ետ դառնալ դեպի ճշմարտությունը, անվերջ կասկածել, որոնել ու չգտնել։

Եվ որովհետև, տե՛ր հայր, դարերով մարդկությունը ընկել քո ետևից, գալիս է, անհարմար է նրանց էլ Ձեզ հետ անվերջ ետ ու առաջ տատանել։ Նրանց նստեցրո՛ւ մի քարի, ինքդ մենակ մա՛ն արի։ Երբ գտնես արքայության տեղը, նոր ոտքի՛ հանիր մարդկությանը։

Բայց պայմանով, որ առաջ ինքդ չմտնես արքայություն։ Հովիվները հոտը չեն թողնում դուրսը, իրենք առաջ մտնում։ Նախ՝ հոտը, հետո՝ հովիվը։

Մի կյանքի պատմություն[122]

Ծնողնե՛ր, երբ երեխա աշխարհ կբերեք, անունը Սողոմոն չդնեք։

Սողոմոնը, ուզի-չուզի, պետք է «իմաստուն» լինի[123]։

Այսինքն՝ աշխարհում եղած բոլոր հաճույքները վայելի, վերջում «ունայնություն ունայնության» ասելով՝ մեռնի։

Իսկ ո՞ւմ է հարկավոր նրա «ունայնությունը»։

Մենք այսօր նոր աշխարհ ենք կառուցում, իսկ նա՝ «ունայնություն ունայնության»։

Մի ծնող չուզեցավ լսել իմ խորհուրդը, տարավ զագս իր նորածնին ու իմ ինադու Սողոմոն դրեց անունը։

Ու տեսեք՝ ինչ պատահեց։

Այս Սողոմոնը, երբ մեծացավ, երիտասարդ դարձավ, իր աչքը պտտեցրեց աշխարհի բոլոր հաճույքների վրա, որ ծանոթանար ու սկսեր վայելել։

Իսկ մենք էլ, առանց Սողոմոն լինելու, գիտենք, որ հաճույքների մայրաքաղաքը կինն է։ Տիրեցիր կանանց, մնացած բոլոր հաճույքները, իրենց բերդերի դռները բանալով առջևդ, անձնատուր են լինում։

Սողոմոնը, սակայն, մի փոքր ավելի իմաստուն էր։

Նա նեղ օրվա համար պսակվեց ու մի օրինական կին առավ, ապա սկսեց իր արշավանքը։

Եվ ի պատիվ իրեն՝ ասենք, որ նրա թուրը կտրուկ էր, կարճ ժամանակում պետություն չմնաց, որի մայրաքաղաքը չգրավեր այս Սողոմոնը։

Ու այսպես մայրաքաղաքից մայրաքաղաք անցնելով՝ մոռացել էր, որ մի օրինական կին է նստած տանը։

Կինը մեկ համբերեց, երկու համբերեց, մի օր էլ դեմը դուրս գալով՝ ասաց.

- Եթե ինձ չպիտի վայելեիր, ինչո՞ւ առար։

- Օ՜ անուշիկս,- պատասխանեց մարդը,- դու իմ օրինական ամուսինն ես, տան «կապիտալ ներդրումը», դու քեզ մի՛ խառնիր մյուս առձեռն կանանց հետ։ Օրինական կինը որ կա, կոնսերվ է, որ մարդիկ պատրաստում են աշնանը՝ ձմեռը գործածելու համար։ Ու քանի շուկայում թարմ միրգ կա, չեն բաց անում նրա բերանը։

Նրա հայկական անունը, որը պահածո է, արդեն ինքնին ցույց է տալիս, որ պետք է պահել ձմռան համար:

Հիմա մեզ համար ամառ է, երբ հասնենք մեր կյանքի ձմռանը, բաց կանենք մեր բերանները ու իրար ուղածի չափ կվայելենք...

Կնոջ անունը որովհետև Սողոմոն չէր, իսկույն համոզվեց, մարդուն կատարյալ ազատություն տվեց, իսկ իր բերանը պինդ փակեց, իրենց կյանքի ձմռանն սպասեց:

Անցավ իր կյանքի ամառը, անցավ աշունը, իսկ Ձմեռ պապին չէր գալիս, որ իր համար մի ամուսին բերեր...

Այսպես նրանց տարիներն անձմեռ անցնում էին, երբ մարդու խոփը հանկարծ մի քարի առավ:

Երբ, մտած մի կնոջ տուն, սեր էր խնդրում, կինն ասաց զարհուրած.

- Անմիջապես հեռացի՛ր, մարդս որ իմացավ, ինձ ուղիղ երկու կես կանի...

Ասաց և դուրս հրելով՝ դուռը փակեց վրան:

Սողոմոնը մտածմունքի մեջ ընկավ: Ինչպե՞ս մեռնելիս «ունայնություն ունայնության» պիտի ասեր, երբ աշխարհում թողնում էր մի կին, որին դեռ չէր վայելել:

Երբ այսպես շատ մտածեց, հետևյալ եզրակացությանը հանգեց: Նա ասաց. «Ավելի լավ, թող մարդը գա իր կնոջը երկու կես անի: Խո՞մ մի կեսը ինձ կհասնի: Ես կմեռնեմ՝ «ունայնություն ունայնության» ասելով, վերջում որպես ծանոթություն կավելացնեմ՝ բացի կես կնոջից: Ի՞նչ է, ընդամենը կես կնոջ համար ես պիտի զրկվե՞մ «իմաստուն» կոչվելուց»:

Երբ այս պատահեց, Սողոմոնն արդեն հասել էր իր կյանքի ձմռանը ու տուն գալով՝ պառկեց անկողնում, վերմակը քաշեց գլխին ու պատրաստվում էր մեռնել:

Կինը մոտեցավ ամուսնուն, վերմակը մեկ կողմ տարավ ու հարցրեց.

- Ի՞նչ ես անում:

- Մեռնում եմ:

- Առանց կոնսերվի բերանը բանալո՞ւ...

Մարդու վրա սրտնեղություն եկավ: Նա զայրացած վեր կացավ, նստեց ու այսպես խոսեց իր կնոջ հետ.

- Կնի՛կ, ես էն գլխից քեզ ասացի՝ առանց զագս գնալու եկ իրար սիրենք, դու չհամաձայնեցիր ու ինձ զագս տարար և դարձար իմ օրինական կինը՝ քո ձեռքով կտրելով քո թևերը: Ասա՛, ո՞ր որսորդը, վայրի հավը թողած, իր ընտանի հավի վրա կրակ բաց կանի, կամ ո՞վ է այն մարդը, որ, ոտավորին թողած, անոտին կհետամտի:

Իր կյանքի վերջին րոպեին մարդն այնքան հուզված էր, որ մեռավ՝ անգամ չկարողանալով իր նախապես սիրած «ունայնություն ունայնությանը» արտասանելու, ու մեռավ ոչ թե իբր Սողոմոն իմաստուն, այլ Սողոմոն հիմար…

Իսկ կնոջը՝ այդ փակված կոնսերվին, ո՛չ մարդու իմաստությունն էր հետաքրքիր, ո՛չ հիմարությունը: Նա տեսավ միայն, որ ինքը աշխարհ եկավ ու տրանզիտով պիտի գերեզման գնա՝ առանց ճանապարհին իր վագոնի դուռը բանալու…

Ու հանկարծ զայրույթով լցվեց աշխարհի դեմ: Որոշեց՝ երբ երկրորդ անգամ աշխարհ գա, նախ հարցնի իր ձեռքը խնդրող երիտասարդին նրա անունը: Եթե ասաց՝ Սողոմոն, ինքն էլ Սողոմոնուհի պիտի անվանի իրեն, ու ամուսնանալուց հետո աշխարհի բոլոր հաճույքները վայելելու համար մեկը պիտի հարավ արշավի, մյուսը՝ դեպի հյուսիս:

Ու որովհետև երկիրը կլոր է, վերջում դեմ դեմի պիտի գան, մի անգամ էլ իրար վայելեն ու մեռնեն:

Եվ վատ չի լինի: Արդարությունն էլ այդ է պահանջում: Ինչո՞ւ միայն տղամարդիկ իրավունք ունեն Սողոմոն կոչվելու: Կանայք էլ պիտի կոչվեն, որ մարդիկ անձամբ փորձեն դրա դառնությունը:

Թե չէ ի՞նչ:

Ուրեմն, աղջիկներն իրենց կուսությունը պահպանելու համար պիտի ամուսնանա՞ն…

Տավարի միս

Կյանքի բարդ խնդիրները և տիեզերական առեղծվածները պետք է լուծել սոված փորով:

Կուշտ մարդը, եթե մանավանդ ճաշի ժամանակ խմել է, ոչինչ չի կարող լուծել և լուծածներն էլ ստիպված է քանդել, երբ խելքը գլուխն է գալիս:

Վերցնենք սոցմրցման հարցը:

Որոշ կոլխոզներ, փոխանակ ընկերաբար, բարեկամաբար իրար օգնելու, ստեղծված ծանր կացությունից դուրս գալու, տաքանում են Մոսիի ու Սարոյի[124] նման, մոռանում բոլոր հնուց ադաթն ու կանոնը և իրար սոցմրցման կանչելով՝ հեկտարից հազարավոր ցենտներ ճակնդեղ են խոստանում, նույնքան կարտոֆիլ, դրանից ավելի բանջարեղեն, բայց երբ գալիս է այդ բոլորը գործի վերածելու ժամանակը, տեսնում են՝ տրակտորները նորոգված չեն, ու սերմացու էլ չունեն, որ ցանեն...

Պրոբլեմները գինով լուծող դերձակը, առանց պատվիրատուների հասակին նայելու, վերցնում է մահուդի թոփը ու բոլորն էլ կտրում, մանկական շորի վերածում:

Գրողը, հաշվի չառնելով, որ մարդկության կեսը մանուկներ են, վերցնում, իր բոլոր վեպերը մեծահասակների վրա է կարում:

Թեև, ասենք գրողի հանցանքն այնքան էլ մեծ չէ, որովհետև մեծ վեպը միշտ կարելի է փոքրացնել և մանուկին հագցնել, բայց դերձակի կարածը... զուտ վնասարարություն է, որովհետև կարված փոքր շորն այլևս չի մեծանա:

Ես միսը մեր թաղային խանութից եմ գնում: Խանութում էլ երբեմն տավարի միս է լինում, երբեմն՝ ոչխարի:

Երբ ոչխարի միս եմ գնում, բերում, դնում «կերոսինկայի»* վրա և մինչև եփելը սկսում եմ կյանքի համեմատաբար հեշտ լուծվելիք պրոբլեմներին անցնել:

Հեշտ լուծվելիք, որովհետև ոչխարի միսը շուտ է եփում, և ժամանակին հասնում եմ՝ այն վար առնելու օջախից:

Այսօրվա առած միսս տավարի էր, այն էլ Ադամի տարվա ղարթ** կովի միս: Մինչև սրա եփելը ես կարող էի աշխարհի մի քանի ամենաբարդ պրոբլեմները լուծել:

Իսկ այդ պրոբլեմներն ինձ մոտ երեքն էին ընդամենը:

Առաջին՝ մարդ ու կին ստեղծված են իրար հետ կռվելու, թե՞ իրար սիրելու համար:

Երկրորդ՝ ո՞վ է ստեղծել մարդուն և ինչի՞ համար:

Երրորդ և ամենադժվար պրոբլեմը՝ կգա՞ ժամանակ, երբ մեր

* Կերոսինկա ***(керосинка)*** - ռուս. նավթավառ:

** Ղարթ (բրբռ.) - կոպիտ, կոշտ, հաստ:

ճարտարապետները կշինեն այնպիսի բնակարաններ, ուր վերի հարկի ապրողը կադրիլ չի պարի ցածի ապրողի գլխին…

Ամուսնական հարցին մոտենալով՝ ես սկզբում ուզում էի կարծել, որ այր ու կին իրար առնում են կռվելու համար։ Բայց ախր նրանք անխտիր երեխաներ են ծնում, իսկ կռվով անհնար է երեխա ծնել, դրա համար անպայման պիտի սիրեն իրար։ Ինչպե՞ս հասկանալ։ Եզրակացնե՞նք, որ մարդ ու կին խոսքով ատում են իրար, գործով՝ սիրում։

Եթե այո, ուրեմն դա մեծ բախտավորություն է։

Ինչքա՜ն երջանիկ պիտի լինեին մարդիկ, եթե դիպլոմատիայի աշխարհումն էլ դիվանագետները խոսքով իրար ատեին, իսկ ծածուկ իրար սիրեին։

Այնտեղ, դժբախտաբար, ճիշտ հակառակն է պատահում, այդ պատճառով նրանց կոնֆերանսներում ոչ մի երեխա չի ծնվում։

Հիմա՝ ո՞վ է ստեղծել մարդուն և ինչի՞ համար։

Չի կարող պատահել, որ մարդուն մի Աստված ստեղծած լինի։

Աստվածները սովորաբար մարդուն ստեղծում են իրենց կերպարանքով, իրենց հասակով և աստվածային հատուկ գրաֆիկայով, իսկ մարդիկ բազմազան են։ Կարճ ու երկար, տգեղ-գեղեցիկ, խելք-հիմար, առողջ ու երկու ոտքից կաղ։

Հետևաբար, պիտի կարծել, որ խելքին խելք աստված է ստեղծում, հիմարին՝ հիմար, առողջին՝ առողջ, կաղին՝ կաղ։

Խոսքը մասնավորելով՝ կաղերի մասին պետք է ասել, որ սրանք ո՛չ կարող են մի հաստատուն գաղափար ունենալ իրենց գլխում, ո՛չ մնայուն սեր իրենց սրտում։

Կյանքում անվերջ այս ու այն ոտների վրա շորորալով՝ նրանց գաղափարները գլխում մի պատից մյուսը պիտի զարկվեն, իսկ զգացմունքները սրտում երերան ու մեկին սիրելու համար երբեք չկենտրոնանան ոնց որ խնոցի։

Ես այս հանգամանքի վրա ուզում եմ ծանրանալ նրա համար, որ ներկայումս շատ առողջ ոտք ունեցողներն էլ ապօրինաբար կամենում են օգտվել կաղերի իրավունքից՝ մերթ այս, մերթ այն գաղափարը դավանելով, միաժամանակ մերթ այս, մերթ այն կնոջը սիրելով…

Տարակույս չկա, իհարկե, որ հանդերձյալում կաղ աստվածն իր

ստեղծած կաղերի համար այնպիսի լայն դրախտ կհատկացնի, որ քայլելիս գլուխները պատին չզարնեն։

Վերոհիշյալ փաստերից ելնելով՝ ուրեմն պիտի ասենք, որ մարդիկ ստեղծվում են տարբեր աստվածների կողմից և տարբեր նպատակներով։

Եթե ճիշտ է, որ երկնքում գոյություն ունեն իմաստուն և հիմար աստվածներ, մարդուն ցանկալի պիտի լինի ստեղծվել հիմար աստծուց, որ հետագային իրենց գոյության պրոբլեմն ինչպես էլ լուծեն, ճիշտ լինի։

Իմաստուն ստեղծվածները դատապարտված են իրենց ողջ կյանքում փնտրել իրենց աշխարհ գալու նպատակը ու չգտնել...

Այս պրոբլեմից էլ պրծանք։

Հիմա գանք երրորդ պրոբլեմին... բայց կացեք մի աչք տամ եփող կերակուրիս, նոր։

...Կովի միսը եփել, հալիմա է դարձել։*

Ուրեմն, ներեցեք, որ ճաշի անցնեմ։ Երրորդ պրոբլեմը հետո կլուծենք։ Մանավանդ որ այդ նորակառույց շենքի հարցն այնքան լուրջ է, որ ղարթ կովի մսով էլ չի լուծվի։ Պիտի ման գամ քաղաքում, գոմեշի կամ փղի միս ճարեմ, դնեմ «կերասինկայի» վրա ու նստեմ մտածեմ։

Էն էլ Աստված գիտի, կկարողանա՞մ լուծել...

Մանկական գրականություն[125]

Պետք է ուղղակի ասել, որ մանուկները գրականություն չունեն, և հաստատ կանգնել ասածի վրա, անգամ ապացուցել։

Մանուկների գրականության համար հարկավոր են մանուկների հոգեբանությամբ, նրանց պես անմեղ գրողներ, իսկ մեր ունեցած մի քանի մանկական գրողները, իրենց կյանքում մեծահասակներին հատուկ բոլոր մեղքերը գործած, առնում են իրենց երկար հասակը ու կկզած փոքրերի կողքին՝ բամբ ձայնով ինչ-որ անհեթեթություն են պատմում կամ երգում։

Արև-արև, ե՛կ, ե՛կ,
Ձիզի քարին վեր եկ,

* Հալիմա- ձավարով ու հավի մսով պատրաստված թանձր կերակուր՝ հարիսայի նման։

Զիզի քարը տես-տես,
Պլպլում է լույսի պես[126]*:*

Նախ քարերն արևի պետք չունեն, արևը բույսին է պետք: Երկրորդ՝ զիզի քարը ինչից է պլպլում, քանի որ դեռ արևը չի ծագել վրան:

Կամ եթե արդեն պլպլում է, էլ ինչ պետք ունի արևի: Ինչպես տեսնում եք, ասում են մի բան ասած լինելու համար: Եթե մեծի համար նման բան գրեին, մեծը կկարդա՞ր: Ասենք՝ գրեին.

Վարդան-Վարդան, ե՛կ, ե՛կ,
Վարդուհու վրա վեր եկ,
Վարդուհու երեսը տես-տես,
Պլպլում է լույսի պես:

Չէր կարդա: Իսկ փոքրը, ուզի-չուզի, այս կրճոնով պիտի գոհանա:

Քննենք այն պատճառները, որոնք թույլ չեն տալիս մեծահասակին գրել փոքրահասակի համար:

Մեծահասակներին սպասարկող գրողը զանազան գաղափարներ է քարոզում իր գրքում: Քարոզած գաղափարները կարող են լինել ընդունելի և ոչ ընդունելի:

Բայց գրողն իր գաղափարները ջոկելով չի տալիս, քարոզում է խառը: Ընդունելին լա՛վ, իսկ անընդունելին: Անընդունելի գաղափարների վրա գրողը մի թեթև սիրուն աղջիկ է քսում և կլեցնում է: Ճիշտ այնպես, ինչպես դառը դեղերը հիվանդին կլեցնում են շաքարի միջոցով:

Իսկ կնոջ և առհասարակ սիրո մուտքը խստիվ արգելված է մանկական աշխարհում և համարվում է անբարոյականություն: Նրանք արբունքի հասնելուց հետո միայն կարող են անբարոյականանալ:

Իսկ դա խոշոր արգելք է երեխային մի բան հասկացնելու համար:

Այստեղ ինքնաբերաբար այսպիսի մի հարց է առաջ գալիս: Արդյո՞ք չի կարելի սիրո գաղափարը մանկացնել: Ինչո՞ւ կարելի է մարքսիզմի, սոցիալիզմի նման բարդ գաղափարները մանկացնել, առաջ բերել հոկտեմբերիկներ, պատկոմներ, ինչո՞ւ չի կարելի ամուսնական գաղափարը մանկացնել և ստեղծել հոկտեմբերիկ ամուսիններ...

Թող փոքր մասշտաբով իրար սիրեն։ Եվ դա մեծապես կազդի նրանց բարքերի մեղմացման վրա։

Այսօր, երբ տեսնեիր՝ մի տղա քարով խփում է աղջկա աչքին կամ ձեռքերն անողորմաբար ոլորում, կարող էիր մոտենալ նրան ու ասել.

- Զգո՛ւյշ, զգո՛ւյշ։ Կգա ժամանակ, որ այդ նույն ձեռքի համար, որ հիմա դու այսպես անողորմաբար ոլորում ես, ծունկ կչոքես նրա առաջ, կխնդրես, կպաղատես, ոտները կընկնես և չես ստանա։

Իսկ որ քարով աչքին ես տալիս, կույր կին կունենաս։ Բացի այդ, մեծերի բոլոր մեղքերը որոշ չափով մանկացնելն իր այլ օգուտներն ունի։

Մարդկային հասարակությունը բաղկացած է երեխաներից, երիտասարդներից և ծերերից։ Չի կարելի ընդունելի համարել այն, որ այդ հասակներից որևէ մեկը զրկված լինի հանցանք գործելու հնարավորությունից։ Որովհետև բոլոր հասակներն էլ վերջում կանգնած պիտի լինեն Աստուծո դատաստանի առջև։ Մանկան առաջն էլ պիտի շարել որոշ գայթակղություններ, որ հնարավորություն ունենա հաղթահարելով դրանք իր առաքինությունը ցույց տալ։ Այլապես Աստված պլոմբը* չքանդած ապրանքի նման երեխային աշխարհ պիտի ուղարկի և նույնությամբ ետ ստանա։

Զուր ժամավաճառություն։

Եվ վերջապես, ասե՛ք խնդրեմ, ինչո՞ւ կարելի է պատառը ծամել և անատամ երեխայի բերանը դնել ու չի կարելի որևէ կոշտ գաղափար, նույն ձևի փափկացնելով, կլլել տալ...

Պարոնյանը Հայաստանում[27]

Մի անգամ, երբ նայում էի սփյուռքից իրենց հայրենիք վերադարձող հայերին, մեծ ցավով ասում էի ինքս ինձ. «Ա՜խ, ինչ կլիներ, եթե ողջ լիներ Պարոնյանը և այս քարավաններից մեկի մեջ մտած՝ մեր վերածնված Հայաստան գար...»։

Ու ճիշտ այդ միջոցին հանկարծ հիշեցի, որ Պարոնյանը... անմահ է։

Ինձ մնում էր անմիջապես Պոլիս մեկնել և նրա թևը մտած՝

* Պլոմբ (plomb) - ֆր. կապարե կնիք։

հայրենիք առաջնորդել։

Պոլսում իմ միակ ծանոթ հասցեն Ծաղկի փողոց թիվ 2-ն էր. գնացի, ու Մանուկ աղան ինձ առաջնորդեց մեծ երգիծաբանի տուն։

- Ելլ,- ասացի,- վերշերդ հավաքիր, որ Հայաստան պիտի երթանք։

- Ինչո՞ւ այդպես հանկարծական,- ասաց Պարոնյանը,- նստի՛ր մեկ խահվե մը խմենք ու մտածենք այդ մասին։

Ապա սրճամանը կրակին դնելով՝ դիմացս նստեց ու ասաց.

- Ատանկ հևիհև միայն բժշկին կկանչեն մահամերձ հիվանդին վրա։ Ի՞նչ է, Հայաստանին մեջ այնքան թերություն է կուտակվել, որ շտապ ծաղրվելու պե՞տք ունի։

- Հայաստանում... ոչ մի թերություն չկա,- ասացի։

- Է՛, թերություն չեղած տեղն ինչո՞ւ երգիծաբան կկանչեք։

- Մեր չտեսածը գուցե Դուք Ձեր սուր աչքերով կնկատեք։

- Ատիկա չեղավ։ Ես չեմ կրնար Պոլսո անհամար թերությունները թողած՝ գալ Հայաստան, անգործ նստել՝ ձեռքը ձեռքին դրած։ Դուք գիտեք, որ երգիծաբանը միայն թերությամբ կապրի։

- Ասենք... չի կարելի բոլորովին ասել, թե չկան. հատ ու կենտ թերություններ կարելի է ճարել... Ձեր պատվին։

- Օրինակ։

- Օրինակ կարելի է գտնել մեկ-երկու տգետ գիտնականներ, որոնք, ոչինչ չանելով, փող են ստանում։

- Այդ մեկ։ Հետո՞։

- Հետո զեղծարարներ, որոնք պետական գանձն են գոփում։

- Բավական է,- ասաց Պարոնյանը հուզված և տեղից վեր կենալով՝ շարունակեց,- ատոնք անանկ խոշոր թերություններ են, որոնք կրնան ինձմե մեծ երգիծաբանի անգամ գրելու նյութ տալ։ Կողոպտել իմ նորաստեղծ հայրենիքի գանձը... Օ՜, ես Հայաստան կուգամ և շանթեր կթափեմ անոնց գլխուն։ Խնայել չգիտեմ։ Ես նման գիտնականին ավանակ կանվանեմ, իսկ դրամաշորթին՝ չորքոտանի։

Այս ասելով՝ այնքան բորբոքվեց մեծ երգիծաբանը, որ ես վախեցա այս վիճակով նրան Հայաստան բերել։ Իր զայրույթը մեղմել փորձելով՝ ասացի.

- Ոտքդ պագնեմ, հանդարտվի՛ր։ Ամեն երկիր իր սովորույթն

ունի։ Մեզ մոտ որևէ մեկին չի կարելի ուղղակի ավանակ անվանել։ Նա «որոշ չափով» է ավանակ։ Այնպես որ, նրանց, ում ավանակ ես անվանելու, ջորի պիտի ասես նախ. իսկ գալով «չորքոտանուն»՝ այդ արդեն անհնար է։ Մեզ մոտ մեկն ինչ հանցանք էլ գործելու լինի, երեք ոտից ավելին արտոնված չէ ունենալու։ Երկու, ամենաշատը՝ երեք։

- Ինչո՞ւ, ձեր երկրում ոտքի պակասությո՞ւն կա։

- Ո՛չ, ոտներ շատ ունենք, բայց խոմ չի՞ կարելի մեր ունեցած բոլոր ոտները բերել շարել մի հանցավորի տակ։

- Լավ, երկու ոտքով ալ կգոհանամ, տո՛ւր ատոնց անունները, որ «Ազգային ջոջեր» գրեմ։

- Անուն տալ չի կարելի։ Պետք է գրես «որոշ մարդիկ» կամ «ոմանք»։

- Անանկ է նե, ես Հայաստան չեմ գար,- ասաց Պարոնյանը և տեղը նստեց։

- Բայց ես շատ կցանկանայի, որ գայիք։

- Գամ դերանուններ ծաղրեմ։

- Չէ՞ր կարելի փոխադրվել սարոք հանդերձ։ Այսինքն՝ Ձեզ հետ վերցնեիք «Աբիսողոմ աղան», «Ազգային ջոջերը»։ Ճիշտ է, մեզ մոտ ջոջերի մասին չի կարելի գրել, բայց այն ատեն էլ կգրեք «Ազգային փոքրեր»։ Ի՞նչ տարբերություն։*

- Փոքրերի մասին թող փոքր երգիծաբաններ գրեն, ես չեմ կարող։

Վերջում ես Հայաստանի հրաշալիքներն այնպես ճարտար լեզվով նկարագրեցի, որ նրա մեջ միտք ծագեց գեթ մի անգամ տեսնել այն։

Եկավ ու տեսավ մեր հրաշալի մայրաքաղաք Երևանը, զմայլվեց։

- Լսած եմ, որ հոստեղ իմ անունով փողոց գոյություն ունի, ճի՞շտ է։ Կուզեի տեսնել։

Ես չլսել ձևացրի, որովհետև դա տեսնելու բան չէր։

Երբ շատ պնդեց, ստիպված ասացի.

- Ձեր անունով փողոց կա Երևանում, ճիշտ է, բայց մի փոքր... շատ նեղ է։ Այսինքն՝ նեղ ասելով՝ չիմանաք այնքան, որ անցորդ չկարողանա երթևեկել։ Ամենահաստ մարդն էլ կարող է Ձեր փո-

* Սարոք հանդերձ - գրաբ. իր մասերով միասին (սարօք՝ գրաբարում սարք բառի հոգնակի գործիականն է)։

ղոցով անցնել, եթե պտղունցով ծայրը մի փոքր սրես։ Այնպես, ինչպես ասեղ մտցնելիս դերձակը թելի ծայրն է սրում։ Հետո էլ պիտի ասեմ, որ Ձեր փողոցը ներկա շինարարության պատճառով աֆրիկական գետերի կերպարանք է առել։ Ինչպես այդ գետերը մերթ մտնում են գետնի տակ, մերթ դուրս գալիս, հոսում, այնպես էլ այդ փողոցի անցորդներն են անում՝ սուզվելով նորակառույցի տակ ու դուրս գալով։

- Այդ փողոցը ո՞վ նվիրեց ինձի,- հարցրեց Պարոնյանը։

- Քաղսովետը։

- Ի՞նչ մարդ է ատիկա, երգիծաբա՞ն է։

- Ո՛չ։

- Ինչպե՞ս կրցավ հապա ինձի այսպես խիստ ծաղրել։ Ես կյանքիս մեջ բնավ այդ ուժգնությամբ ծաղրած չեմ որևէ մեկի...

- Ներող կլինեք։ Հանկարծ եղավ։

- Ուրիշ բան ունեի՞ք ինձի նվիրված։

- Կա։ Երաժշտական կոմեդիայի թատրոնը, որը թեև կշարունակի կոչվել «Երաժշտական կոմեդիայի թատրոն», բայց դա ժամանակավոր է։ Ըստ սովորության։ Այնպես, ինչպես երկրորդ անգամ ամուսնացած մարդն իր նոր կնկան կանչելիս մոռացմամբ հին կնոջ անունն է տալիս...

Այսպես խոսում ենք, միաժամանակ շրջում ենք Երևանում։

Պարոնյանը հիացած է քաղաքով։ Այնքան, որ ասում է՝ «ա՛խ» քաշելով.

- Ինչո՞ւ ինձի ավելի վաղ չկանչեցիր Հայաստան։

- Հիմա իսկը ժամանակն է. եթե Ստալինի ժամանակ գայիք, պիտի բռնվեիք ու քսան տարի աքսոր գնայիք։

- Բայց ես անմեղ եմ...

- Այն ատենները անմեղությունն ամենամեծ հանցանքն էր համարվում...

- Ինչ կըսես...

- Այո՛։

Մինչ այս, մինչ այն, մոտենում էր ճաշի ժամանակը, և ես իմ հյուրին մի ճաշարան պիտի առաջնորդեի։

Ուստի, մտա Մատենադարան և վերցրի Չամչյանի «Հայոց պատմությունը», որը երկու հազար էջից էր բաղկացած։

- Ա՞յդ ինչու համար,- հարցրեց իմ հարգարժան հյուրը։

- Մեզ մոտ,- ասացի,- մատուցողները մի փոքր ուշ են մոտենում ճաշասեղանին՝ պատվեր ստանալու, մենք մի փոքր կզբաղվենք Զամչյանով, մինչև մեզ կնկատեն։ Վասնզի,- ավելացրի,- մեզ մոտ թաղականական ընտրություններ չկան, որ ես Մանուկ Աղայի պես նստեմ պատմեմ Ձեզ. երկար սպասելով՝ կարող եք ձանձրանալ։

Ճաշից հետո, երբ արդեն պիտի բաժանվեինք, Պարոնյանն ասաց.

- Ճամբին մեկը մի բան փսփսաց Ձեր մասին. Դուք երգիծաբա՞ն եք։

- Որոշ չափով։

- Ձեր անունը։

- Մի ոմն։

- Կզարմանամ։ Հայաստանին մեջ ոչի՞նչ իր անունով չի կոչվեր…

Պարոնյանի գրական հասցեն[128]

Մի ժամանակ, երբ քահանային հարցնում էինք՝

- Որտե՞ղ է Աստված։

- Աստված ամեն տեղ է,- պատասխանում էր քահանան։

Մինչդեռ հետագայում պարզվեց, որ ոչ մի տեղ էլ չէ։

Աստված նմանվում է այն դիրեկտորին, որը երբեք իր տեղում չի լինում, միշտ «օբյեկտ»* է գնում…

Բայց սրա հակառակը՝ կան աստվածներ էլ, որ իրոք «ամեն տեղ են»։

Դրանցից մեկն է հայ երգիծաբանության աստված Հակոբ Պարոնյանը։

Մենք գրողներ շատ ունենք։ Մանավանդ հիմա, երբ երկու մարդուց մեկը գրող է։ Բայց այդ գրողներից ոչ մեկը չի համարձակվում առանց իր ընթերցողի դուռը ծեծելու ներս մտնել։

Ծեծում են շատ երկար, և հաճախ այդ դուռը ուշ է բացվում կամ երբեք չի բացվում։

Ատրպետի վրա ոչ մի ընթերցող իր դուռը չբացեց, այդպես էլ մեռավ գրական փողոցում։

Իսկ երբ Պարոնյանն է մոտենում, ընթերցողը ժամանակ չի

* Օբյեկտ - այստեղ՝ ձեռնարկություն, տեղամաս ևն։

տալիս նրան իր դուռը ծեծելու. դռան ետև սպասողի նման, ոտնաձայնից կռահում է Պարոնյանի մերձեցումը և անմիջապես իր դուռը բաց է անում՝ ասելով.

- Ո՞ւր ես, մեռա քեզ սպասելով։

Պարոնյանը հայ երգիծաբանության դիրեկտորն է։ Բայց բնավ նման այն դիրեկտորներին, որոնք ամբողջ գործը թողնում են իրենց տեղակալների վրա, իրենք ոչինչ չանելու համար։

Պարոնյանն ունի իր տեղակալը։ Դա Երվանդ Օտյանն է։ Բայց երբեք իր գործերը նրա վրա չի բարդել. բոլորն ինքն է կատարել՝ օգնականին թողնելով շատ քիչ բան։

Այժմ քննենք։ Ո՞րն է այն պատճառը, որը Պարոնյանին այսպես բացառիկ տեղ է հատկացվել մեր գրականության մեջ։

Պատճառն իր ընտրած ժանրն է։

Երգիծաբանությունը գրականության մեջ ամենադեֆիցիտային «ապրանքն» է։

Կյանքի մեջ շատ կան լալու բաներ, և մարդն էլ իր կյանքի վերջակետը դնում է լացով։

Ձեզ եմ թողնում երևակայել, թե այսպիսի մարդն ինչքա՜ն պիտի ցանկանա կյանքի մեջ գեթ մի անգամ ծիծաղել։

Իսկ այդ ծաղրը քեզ կտա միայն Հակոբ Պարոնյանը։

Կան, իհարկե, նաև հնակարկատ երգիծաբաններ, որոնց գործերը կարտոնից շինված կոշիկների նման խանութից տուն գալու ճանապարհին... ծակվում են։

Այս բոլորից հետո, գուցե գտնվի մի Հերոստրատ[129], որը, ցանկանալով աշխարհում միակը լինել, ժխտի Պարոնյանի արժեքը՝ ասելով.

- Իսկ մարդու ինչ՞ն է պետք ծիծաղն ու ժպիտը, մի՞թե առանց դրանց չի կարելի ապրել։

Պիտի պատասխանեմ, որ ո՛չ, առանց ծիծաղի կյանք չկա։ Ծիծաղը հարկավոր է ոչ միայն կենդանի մարդուն, այլև մեռածին։

Եթե մեռելը կարողանար դագաղում ծիծաղել, Աստված անմիջապես կկենդանացներ նրան՝ զգալով, որ իր տված պատիժը նպատակին չծառայեց...

Բոլոր աղջիկները տանը կմնային, եթե չժպտային տղաների երեսին։

Երկու հրամանատարներ, որոնք, իրենց բանակները դեմ դեմի ճակատեցրած խոժոռ դեմքով պատրաստվում են իրար վրա հարձակվելու հրաման արձակել, եթե մի երգիծաբան կարողանար նրանց ծիծաղեցնել, հրամանատարները ոչ թե իրար կոտորելու հրաման կարձակեին, այլ կհրամայեին իրար փարվել եղբայրաբար։

Այն դատավորը, որը պատրաստվում է մահավճիռ արձակելու իր մեկ հանցավորին, եթե այդ րոպեին մեկը հաջողի նրան ժպտացնել, անկարելի է, որ դատավորը գնդակահարությունը ցմահ բանտարկությամբ չփոխարինի։

Այսպիսի և սրանից էլ ավելի խոշոր բաների պատճառ կարող է դառնալ ծիծաղը։

Ստեղծագործության ժամանակ, եթե Աստված իր վրա ծիծաղեր, թուրքերի նման անգութ ազգ չէր ստեղծի...

Չնախատեսված աղետ

Շատ ճիշտ է ասված։

Աշխարհ շինողը մարդն է, աշխարհ քանդողը մարդն է։

Մի տարի մեր շրջան եկավ մի գործկոմ, որի միակ գործը նարդի խաղալն էր։

- Շաշ ջահար, փինջ ջահար*...

Տներ էին փուլ գալիս, մարդիկ էին տակը մնում, հեչ վեջը չէր։

Մի անգամ գետը հորդեց և գետնի երեսից սրբեց-տարավ ութ տուն։ Եթե դու օգնության հասար աղետյալներին, գործկոմն էլ հասավ։

Հիվանդանոցը փակվեց, ու հիվանդները մեռնում էին առանց բժշկի օգնության։

Բայց այս բոլորը ոչինչ, ժողովուրդը, ատամ ատամի վրա դրած, հանդուրժեց գործկոմին, ներեց նրան այդ բոլորը։ Բայց երբ գործը հասավ այնտեղ, որ կանայք տասը զավակ էին ունենում և հերոս մոր կոչում չէին ստանում, դա արդեն չափազանց էր, ու այլևս համբերել չէր կարելի։

Եվ ինչ։

Շրջանի ողջ մայրությունը ոտքի կանգնեց թե՝ մենք այլևս ոչ

* Շաշ ջահար, փինջ ջահար - պրսկ. վեց ու չորս, հինգ ու չորս։

մի երեխա չենք բերի։ Ինչո՞ւ տասը հորթ մեծացնող կոլխոզնիկը շքանշան ստանա, իսկ տասը երեխա մեծացնող մայրը չստանա։

Ասացին ու պինդ կանգնեցին։

Եկան կենտրոնից մարդիկ, համոզեցին ետ վերցնել որոշումը, ասացին, որ որդեծնությունն այժմ այլևս պետպարտավորություն չէ, որ կառավարությունը երկիրը պաշտպանելու համար այլևս զինվորի կարիք չունի, որովհետև հիմա պատերազմները մղվելու են ատոմային ռումբերով, որի համար պիտի սեղմել միայն մի կոճակ, որ «որդեծնության հարցում վարվեցեք ինչպես ձեր տնամերձերի հետ՝ գիտենալով, որ արդյունքը չի գնալու կոլխոզի պահեստը» և այլն և այլն, բայց կանայք մնացին անդրդվելի։

- Երեխա չենք բերի ու չենք բերի։

Խնդիրն ուռեց, հանրապետական մասշտաբ ստացավ, որովհետև կենտրոնական վիճակագրությունն այլևս ոչ մի աճ չէր արձանագրում մեր շրջանից, իսկ տեղական զագսը, որը միայն մահերն էր արձանագրում և ոչ մի աճ, տարին փակում էր դեֆիցիտով։

Իսկ գործկոմը, նարդու վրա նստած, դու բեշ* է գցում և «դռներ» առնում...

Այդ արդեն չափազանց էր և արդարադատությունը, մեկեն ծառանալով գործկոմի դեմ, սոսկալի պատժեց նրան։

Պատժեց այնքան խիստ, որ նրան հաջորդող գործկոմը վախից դեմն ելնող կնոջը շքանշան տվեց և հերոս մոր կոչում շնորհեց։

Կոչում ստացան ոչ միայն տասը երեխա ունեցող մայրերը, այլև բոլորովին երեխա չունեցողները՝ միայն ազնիվ խոսք տալով, որ ապագայում կունենան։

Վարկով։

Նոր գործկոմը որդեծնությունը քաջալերելու համար անգամ շքանշան կախեց անհույս չբերների կրծքից՝ այն հույսով, որ պարտքի տակ չեն մնա և կարդարացնեն իրենց հանդեպ ցույց տրված վստահությունը։

Այնքան որ վախեցել էր։

Եվ իրոք էլ գործկոմի հույսերն արդարանում էին։

Ինչո՞ւ չպիտի արդարանային։

Ինչո՞ւ, դեռ սերմը չցանած, ճակնդեղագործը նախապես խոստա-

* Դու բեշ- պրսկ. զույգ հինգ։

նում է հեկտարից հինգ հարյուր ցենտներ բերք ստանալ և ստանում է, ինչո՞ւ մայրը խոստանա տասը զավակ ծնել ու չծնի:

Մանավանդ որ որդեծնությունը ենթակա չէ ո՛չ երաշտի, ո՛չ կարկտահարության:

Ու դրանից հետո մեր շրջանում ազգաբնակչության աճի կողմից ռելսերը զրնգում էին, ու զգաստ այնքան ծնունդով էր զբաղված, այնքան ժամանակ չուներ մահերն արձանագրելու, որ մեռելները, երկար հերթի կենալով, երբ տեսնում էին իրենց վրա ուշադրություն դարձնող չկա, փոր ու փոշման տուն էին վերադառնում և շարունակում էին ապրել...

Սա փաստ է, գիտեք: Ես չեմ մոգոնում:

Բայց ասեմ անմիջապես, որ հետագայում նույն հաջողությամբ չընթացավ այս գործը մեր շրջանում

Տեսնելով, որ ամենուրեք պտտում են հերոս մայրեր, տղամարդիկ ոտքի կանգնեցին:

Նրանք ասում էին.

- Ինչո՞ւ մեր կանայք հերոս մայր կոչվեն, մենք իրավունք չունենանք հերոս հայր կոչվելու: Զէ՞ որ որդին առաջ է գալիս մարդու և կնոջ կոլեկտիվ ջանքերով. ինչո՞ւ կողմերից մեկը հերոս լինի, մյուսը՝ վախկոտ կամ սինլքոր: Ասում էին՝ Ավետարանը ամուսիններին «մի անձ» է համարում, հետևաբար ինչպե՞ս կարելի է միևնույն անձի կեսը հերոսացնել, կեսը թողնել:

- Ո՛չ,- ասացին այրերը,- մենք էլ պիտի հերոս հայրեր կոչվենք:

Եվ ծննդաբերական գործը մեր շրջանում նորից քարի դեմ առավ:

Կանայք կակալոը* կարդացին իրենց մարդկանց գլխին, համոզեցին, աղաչեցին, պաղատեցին՝ ճար չեղավ: Ուզում ենք, որ ուզում ենք:

Կրքի եկած՝ «ուզո՞ւմ եք» ասացին կանայք, հիմա ձեզ ցույց կտանք...

Ասացին ու դեն շպրտելով իրենց ամուսիններին՝ «միայնակ մայր» դարձան:

Ամուսինները, ռևանշի անցնելով, կամեցան իրենք էլ «միայնակ հայր» կոչվել, բայց բան դուրս չեկավ:

* Կակալոը (բրբ.) - խրատ, քարոզ:

Նրանք պարտված էին։

Ու ինչպես չհաջողված գործադուլավոր բանվորներ՝ թառամեցին, գլուխները կախեցին ու «գործարան» վերադառնալով՝ կանգնեցին իրենց «ստանոկի»* գլխին...

Այսպիսով էլ կանխվեց մեր շրջանի գլխին պայթած աղետը։

Ես չգիտեմ, թե հերոս մայրերին բաշխվող մեդալն ինչ մետաղից է շինվում. ես միշտ հերոսությունից հեռու եմ կանգնած եղել։

Եթե այդ մետաղը շատ հազվագյուտ չէ և թանկ չարժե, ինձ թվում է, թե դրանցից շատ կարելի է պատրաստել տալ և բոլոր կարիքավորներին բաժանել անխտիր։

Ես ու իմ աչքը[130]

- Ա՛յ աչք,- ասում եմ,- քեզ մեղադրում են նրանում, որ դու ամեն բանի վատն ես տեսնում միշտ, ասում են՝ մեզ մոտ բոլորովին լավ բան չկա։

Եվ ճիշտ են ասում։ Ես էլ եմ համաձայն դրան։

Ա՛յ տնաշեն, քաղաքում ինչ «սետկա» տեսար, ասացիր՝ դատարկ է։ Մի օր չեղավ, որ մի կապ թոշնած սոխ տեսնեիր նրանցում, մի կապ համեմ կամ ռեհան՝ թեկուզ դեղնած ու մեռած։

- Ուզո՞ւմ ես լիքը տեսնեմ «սետկաները»,- հարցրեց աչքս։

- Բա չե՞մ ուզում։

- Այն ժամանակ պիտի թույլ տաս՝ փակեմ աչքերս։

- Փակի՛ր, բա՛ց, ինչ ուզում ես արա՛, միայն մի որևէ կանաչի՛ դիր այնտեղ։ Կես միլիոն բնակչություն ունեցող քաղաքն առանց կանաչիի ինչպե՞ս ապրի։ Ցինգա կընկնի։

- Դե որ այդպես է, փակվեցի,- ասաց աչքս։

- Ի՞նչ ես տեսնում,- հարցրի։

- Խանութներ՝ այնքան լիքը բանջարեղենով, որ ոտ դնելու տեղ չկա։ Մի պարկում՝ սոխ։ Թարմ, կանաչ ու տռուզ։ Մյուսում՝ մաղադանոս՝ կարծես նոր քաղված։ Թարխունի կապեր՝ իրենց

* Ստանոկ ***(станок)*** - ռուս. հաստոց, դազգահ։

զգլխիչ հոտով: Սամիթը, կոտեմը, սխտորը, իրար հրհրելով, տեղ են փնտրում, որ ծախվեն:

Իսկ խանութի վաճառողը, ձյունաթույր խալաթը հագին, մատակարարում էր հաճախորդին իր ուզածը՝ գոհունակ ժպիտը երեսին:

- Այդ խանութներում պտուղ էլ տեսնո՞ւմ ես:

- Ուզում ես՝ պտո՞ւղ էլ տեսնեմ,- հարցրեց աչքս:

- Անշո՛ւշտ ուզում եմ: Ցուցանակում «պտուղ-բանջար» է գրված, կհարմարի՛, որ մեկը լինի, իսկ մյուսը՝ ոչ:

- Այն ժամանակ թույլ պիտի տաս, որ մի փոքր ավելի պինդ փակվեմ,- ասաց աչքս:

- Փակվի՛ր, ինչքան ուզում ես պինդ: Մինչև անգամ եթե կամենում ես, բոլորովին կուրացի՛ր, միայն պտուղ էլ դիր բանջարի կողքին:

Աչքս, որքան ուժ ուներ, փակվեց, ու Աստծու ստեղծած դրախտի բոլոր պտուղները շարվեցին դարակների վրա:

Այո՛, իսկական դրախտ, ուր մինչև անգամ «արգելված խնձոր» չկար: Հաճախորդն ուզած խնձորը առնում էր՝ առանց դրախտից արտաքսվելու:

Այս որ տեսա, պոռացի.

- Զբացվե՛ս, մինչև գնամ, տանից զամբյուղ բերեմ:

Գնացի տուն, բերի երկու զամբյուղ՝ մեկը պտուղի, մյուսը բանջարի համար: Լցրի այնքան լիքը, որ հազիվ էի տանում:

Բայց տուն գնալու համար հարկավոր էր, որ ես ունենայի բացված աչք: Այլապես կարող էի տանս դուռը չճարելով սխալմամբ օտարի տուն տանել այդ բարիքը:

Ուստի աչքիս հրամայեցի բացվել:

Երբ զամբյուղները երկու ձեռներիս տուն էի վազում, ճանապարհին տեսնողը հարցրեց.

- Այդ որտեղի՞ց առար:

- Բոլոր «սետկաներն» էլ լիքն են,- ասացի:

- Ես ամբողջ օրը ման եմ գալիս ու ոչ մի տեղ չպատահեցի այդպիսի բաների,- ասաց մեկը:

- Չես պատահել, որովհետև բաց աչքով ես նայել. եթե փակեիր, կտեսնեիր,- պատասխանեցի:

Այդ միջոցին մեկը, մոտենալով ինձ, կամաց փսփսաց ականջիս.

- Գիտե՞ս՝ հարցնողը «Պտուղ-բանջարառի» դիրեկտորն էր...
- Ի՞նչ ես ասում...
- Այո՛:
- Այն մարդը, որի պարտքն էր լիքը պահել բոլոր խանութները:
- Այո՛,- ասաց անծանոթը ու հայհոյեց:
- Մի՛ հայհոյիր,- ասացի,- անծանո՛թ: Նշանակում է՝ այդ մարդը շատ անշահախնդիր, ազնիվ մեկն է: Եթե ինքը լցներ իր խանութը և միաժամանակ իր զամբյուղները լցնելով՝ տաներ տուն, բոլորը պիտի մեղադրեին ինքնամատակարարման մեջ: Մինչդեռ հիմա նա էլ քեզ նման ոչ մի բանջար չի ճարում, հետևաբար, ճակատը բաց կարող է ման գալ հասարակության մեջ առանց բամբասվելու...

Հիգիենիկ մարմնամարզություն

Հիվանդ եմ, բայց չեմ գնում բժշկի:

Երբ գնացել եմ, ասել է. «Քո հիվանդության միակ դեղը մարմնամարզությունն է: Հենց որ ռադիոն մարզանքի է կանչում, պատրաստ պիտի լինես տեղումդ կանգնելու և նրա բոլոր հրամանները կատարելու: Աջ ասելիս աջ դառնաս, ձախ ասելիս ձախ դառնաս»:

Ասում եմ.

- Ա՛յ բժիշկ, ախր այդ ինձ համար չէ ասված. ես ու իմ անսանձ կինը ապրում ենք մի այնպիսի փոքր սենյակում, որ ռադիոյի ոչ մի հրաման չենք կարող կատարել:

Օրինակի համար՝ ռադիոն ասում է. «Քայլելով առաջ, աջ-ձախ, աջ-ձախ, հետո՝ մեկ-երկու, մեկ-երկու»:

Եթե նրա հրամանը կատարելու լինեմ, մեկ քայլը իմ սենյակում պիտի անեմ, երկրորդ քայլիս հարևանի ճաշարանը մտնեմ:

Այդ բավական չէ՝ շատ հաճախ ռադիոն երկու քայլով չի բավարարվում. նա ասում է՝ մեկ-երկու, երեք-չորս:

Ուրեմն, ես պետք է ճաշարանից անցնեմ հարևանիս ննջարան (այն էլ առավոտ շուտ), նրա խոհանոց ու... պետքարան:

Է՜, այս ո՞ր հարևանը թույլ կտա:

Շատ էլ իմ առողջությունն այդ է պահանջում:

Ռադիոն, դրանով էլ չբավարարված, դեռ ասում է. «Ձեռները տարածել ու քայլել, մեկ-երկու, մեկ-երկու»:

- Ա՛յ բժիշկ,- ասում եմ,- եթե ես այդպիսի տնաքանդություն անեմ, նշանակում է՝ տանս ոչ մի իր սալամաթ չի մնա: Կնոջս շարած բոլոր ծաղկամանները, բոլոր վազաները, արձաններն ու արձանիկները պիտի փշրեմ ու գետին թափեմ: Իսկ դու կգա՞ս և ինձ կազատե՞ս գազազած կնոջս ձեռքից:

Եվ այսպես չէի կատարում բժշկիս տված խորհուրդը ու շարունակում էի մնալ հիվանդ:

Բայց մի օր ես ու կինս կռվեցինք:

Ասենք ամեն օր էինք կռվում, բայց այդ օրը վեճը սկզբունքային էր և սուր բնույթ ստացավ:

Այս անգամ արդեն չկամեցա զիջել իրեն և անհամբեր ռադիոյի բացվելուն էի սպասում, որ նրա բոլոր հրամանները կատարեի և ի միջի այլոց նաև... բժշկվեի:

Հիմա, ձեռներս մեջքիս, կազմ ու պատրաստ կանգնած եմ: Հրաման լսելուն պես սկսեցի քայլել սենյակումս ոչ միայն մեկ-երկու, երեք-չորս, այլ մինչև անգամ հինգ-վեց:

Այնքան որ բարկացած էի:

Հետո, ձեռներս տարածած, աջ դարձա, ձախ դարձա այնքան, մինչև սենյակում ոչ մի իր չմնաց, որ փշրված չլիներ:

Բայց խոստովանեմ անմիջապես, որ այս ավերածությունից ես օգտվեցի միայն կիսով չափ:

Կնոջս հանդեպ ես իմ վրեժը լուծեցի, բայց առողջությունս չվերականգնվեց:

Մտածում եմ ու դրա պատճառը չեմ գտնում:

Մի բանի վրա եմ կասկածում:

Ես ռադիոյի հրամաններից մեկը չկատարեցի:

Երբ նա հրամայեց ձեռները տարածած գլուխը դեպի առաջ թեքել, ես չթեքեցի, որովհետև առջևս կինս էր կանգնած: Եթե այդպես անեի, նա պիտի կարծեր՝ թևերս տարածած գնում եմ իրեն գրկելու:

Գուցե և համբուրելու, եթե ռադիոն հրամայեր...

Ի միջի այլոց ասեմ, որ կինս չի հավանում այս մարմնամարզությունը: Ասում է՝ մարզելիս ռադիոն ամուսնացած մարդկանց այլ հրամաններ պիտի տա:

Մարդուն պիտի հրամայի. «Դեպի կինը դա՛ռձի՛ր ու համբուրի՛ր, մեկ-երկու, երեք-չորս, հինգ, ու այսպես անվերջ»:

Բայց ռադիո՛ ջան, կնոջս չլսես, ես նրան ատում եմ: Ու եթե այսօր ես նրան կպած եմ ապրում, այդ միայն նրա համար է, որ մեր սենյակի փոքրությունը թույլ չի տալիս իրար չկպած ապրել...

Հումանիտար լեզվաբանություն

«Միտքը՝ արտահայտված բառերով, կոչվում է նախադասություն»,- ասում է քերականության դասագիրքը:

Իսկ խուլն ու համրը, որոնք բառ չունեն, չե՞ն արտահայտում իրենց միտքը:

Կամ երկու սիրող սրտերը, երբ նայում են իրար աչքերի մեջ, բառերից ավելի պայծառ չե՞ն արտահայտում իրենց միտքը:

Կամ այսօր, երբ ամերիկյան յոթերորդ նավատորմը լուռ հածում է Կիպրոսի շուրջը, չգիտե՞նք՝ դրանով ինչ է ուզում ասել...

Դուք ինձ միտք տվեք, ես հազար ձևով արտահայտեմ առանց բառերի:

Դերասանական արվեստը բաղկացած է բառերից և միմիկայից հավասարապես:

Ուսուցիչը, երբ խոժոռում է չար աշակերտի վրա, դա ամեն ինչ է: Իսկ դրա պակասը լրացնում է ոչ թե բառերով, այլ ծեծով:

Մտքի հետ համեմատելով՝ բառը մի անարժեք գործոն է: Դա պարզապես մի շոր է, որ միտքը հագնում է՝ մարդու բերանից դուրս գալիս: Շոր, որը կարելի է լվանալ ու հագնել: Իսկ մաշվելիս կարկատել:

Վերցնենք հայոց լեզուն:

Քսանմեկ թվականից հետո մինչև օրս ով իրեն լեզվաբան անվանեց, մի կարկատան կպցրեց: Եվ որովհետև լեզվաբանների թիվը մեծ էր, այդ պատճառով էլ հիմա մեր նախնական լեզուն կորած է անհամար կարկատանների տակ:

Կարկատան վերցնում է նաև երաժշտությունը: Մեր երաժիշտները վերցնում, Կոմիտասի երգերը կարկատում ու երգում են:

Եթե մի բոպե իրոք խոսքը մտքի շորը համարենք, ուրեմն նրա արժեքն ավելի կփոքրանա:

Մարդիկ, ճիշտ է, առանց շորի դուրս չեն գալիս փողոց, բայց նրանք, երբ բաղնիքում տկլորանում են, չեն դադարում մարդ լինելուց:

Գեղեցիկ սեռի մեջ այդ տկլորությունն անգամ արժեքավորում է նրան...

Դրան հակառակ՝ վաճառատներում կախված պատրաստի հագուստները, որոնց մեջ մարդ չկա, անարժեք են, մանավանդ, երբ նրանք ծախվում են «իջեցրած գներով»:

Իսկ մտքի գինը երբեք չի իջնում:

Պատրաստի հագուստի պես անարժեք են նաև այն գրքերը, որոնք լույս են տեսնում... առանց մտքի:

Դրանք հագուստներ են, որոնց մեջ մարդ չկա, այլ մանեկեններ՝ ցուցադրության համար խանութի ցուցափեղկում շարված:

Ուրեմն, քերականությո՛ւն, ինչո՞ւ չես խոսում նաև այն նախադասությունների մասին, որոնց մեջ միտք չկա:

Թողնենք այս բոլորը մի կողմ:

Ինչո՞ւ այս բոպեիս Աստված չկա:

Աստված չկա, որովհետև Աստվածաշունչն ասում է. «Ի սկզբանե էր բանն, և բանն էր Աստված»[131]:

Այդ նշանակում է՝ Աստված «բան», այսինքն՝ խոսք է՝ դատարկ, անարժեք:

Իսկ եթե Աստված միտք լիներ խոսքի փոխարեն, ի՞նչ եք կարծում, կարելի՞ էր նրան չպաշտել հավիտյան:

Ո՛չ, չէր կարելի:

Նկատենք, որ խոսքն ու միտքը դասագրքերի մեջ համաձայն են ընթանում՝ մեկը մյուսով պայմանավորված. միտքը փամփուշտը դնում, խոսքը կրակում է:

Բայց այս երկու հասկացությունները, երբ դուրս են գալիս դասագրքերից, խոսքը դառնում է սանձարձակ՝ բոլորովին հաշվի չառնելով միտքը:

Լեզվի այդ անիմաստ ատրիբուտը, դաշնակցած իրենից ավելի անմիտ կրոնի հետ, մարդկությանը մասնատում, անթիվ ազգությունների է բաժանում, որոնք անխնա սկսում են իրար կոտորել:

Համատարած կոլխոզացման ժամանակ պետությունը վերացրեց անհատների արտերն իրարից բաժանող միջնակների քարերը ու տրակտորը մեջ բերելով՝ սկսեց վարել հողն ընդհանրապես, իսկ լեզուն ու կրոնը, անտեսելով համայնական հողատիրության օգտակարությունը, հիմարաբար քարեր լցնելով, արհեստական միջնակ-

ներ են սարքում մարդկային անդաստանում, որ տրակտորը չհոնդա նրանում, որ չութն* ու արորը մռնչան նեղլիկ հողամասերում:

Գիտեք՝ միջակների վերացումով որքան վարելահող շահեց հանրությունը և ինչքան վնասեց մարդկությանը՝ նեղմիտ ու նեղսիրտ ազգությունների վերածելով:

Անհատական հողերի միջնակները դեռ ոչինչ, միայն քար ու քոլերից են կազմված լինում, իսկ ազգերի միջնակներում սարեր են կանգնած, անանցանելի գետեր, այդ էլ բավական չհամարելով՝ կանգնեցնում են զինված սահմանապահներ՝ իրենց շներով ու փշալարերով:

Դե եկ ու այս միջնակները հավասարեցրու:

Զինվորն ազգի սահմանն է պաշտպանում, իսկ լեզվաբանը՝ ազգի լեզուն՝ աչքը չորս արած հսկելով, որ ոչ մի օտար բառ ներս չմտնի իր լեզվի մեջ:

Մեր լեզուն գալիս է Մովսես Խորենացու ժամանակներից: Նրա ժամանակ փլավը եփում էին ձավարից, իսկ սպասը՝ կորկոտից: Իսկ հիմա գործածում ենք մակարոն ու վերմիշել: Ինչպես թարգմանենք այս բառերը, ինչո՞ւ թարգմանենք, քանի որ մեր ստամոքսը խտրություն չի դնում անունների մեջ:

Հայերեն բառարանում «մակարոնի» դիմաց գրված է «խմոր ինչ՝ մեջը ծակ»:

Որ այս բառերով կոոպերատիվ մտնեմ, ինձ մակարոն կտա՞ն, այն էլ այն ժամանակ, երբ հսկայական հերթեր են լինում:

Հետո:

Ինչո՞ւ սիրով ընդունում ենք օտարազգի հյուրին, ման ածում երկրում, հյուրասիրում, իսկ երբ հանկարծ մի օտարազգի բառ է հայտնվում մեր գրքերում, աղմուկ-աղաղակով դուրս ենք վանում այնտեղից:

Ախր կան բառեր, որ թարգմանելի չեն:

«Շեքսպիրը» օտարերկրյա բառ է. կարող ենք թարգմանել հայերենի: Կարող ենք ասել՝ Շեքսպիրը հանճար է, մենք էլ ունենք մեր հանճարը, որ Նարեկացին է, հետևաբար, «Շեքսպիր» ասելու տեղ՝ կարող ենք «Գրիգոր Նարեկացի» ասել նրան:

Կամ Նապոլեոնը աշխարհակալ է, մենք էլ ունեցել ենք մեր

* Չութ (բրբ.) - արոր:

աշխարհակալը, որ է Տիգրան Մեծը։ Կարո՞ղ ենք «Նապոլեոնը» վերցնել, տեղը «Տիգրան Մեծ» կամ, ասենք, քաջ «Վարդան Մամիկոնյան» դնել։

Կամ «վերմիշելը» վերցնել, տեղը «ձավար» դնել։

Ինչո՞ւ, եղբա՛յր, ի՞նչ վնաս է տվել ձեզ վերմիշելը։ Ինչո՞ւ բոլոր ազգերի լեզուները չխառնենք իրար ու մի լեզվով խոսենք։

Քերականության դասագիրքն ասում է. «Միտքը՝ արտահայտված բառերով, կոչվում է նախադասություն»։

Ասո՞ւմ է «միտքը՝ արտահայտված միայն հայերեն բառերով, կոչվում է նախադասություն»։

Ո՛չ։

Ազգության հարցը անորոշ է թողնում։ Մենք էլ օգուտ քաղելով այդ անորոշությունից, կարող ենք խառնել մեր լեզուներն իրար և խոսել մի լեզվով միայն։

Տարբեր ազգությունները, տարբեր լեզուները մինչև օրս ոչ մի միտք չեն արտահայտել. նրանք արտահայտել են միայն անմտություն։

Իսկ քերականությունը պահանջում է, որ անպայման մի միտք արտահայտի։

Կա՞ աշխարհում միակ մի խոշոր միտք, որ արտահայտի մեկ ազգ դարձած մարդկությունը։

Կա։

Այդ կյանքն է։

Եթե այս միակ միտքը մասնատենք ազգերի թվին համապատասխան, կդառնա մահ։

Ո՞րն եք ուզում այս երկուսից. կյա՞նք, թե՞ մահ։

Կյանք եք ուզում՝ բոլո՛ր ազգեր, միացե՛ք ու խաղաղ ապրե՛ք։ Մահ եք ուզում՝ բաժանվե՛ք ու իրար կոտորե՛ք։

Եթե քաղցր է քեզ մի ազգի սիրել, որքա՞ն ավելի քաղցր կլինի, եթե բոլոր ազգերին սիրես։

Պետք է օրինակ վերցնել սեռական կյանքից։

Ամուսնությունը ոչ մի ազգային խտրություն չի ճանաչում. տղան միայն աղջկա գեղեցկությանն է նայում։

Իսկ ազգերը մի՞թե տգեղ են, որ չի կարելի սիրել։ Մի՞թե մի ազգ սիրելը առաքինություն է, իսկ բոլոր ազգերին սիրելը՝ արատ։

Իսկ ինչո՞ւ չեն սիրում։ Չեն սիրում, որովհետև կրոնն ու լեզուն,

մտած ազգերի արանքը, չարամտորեն գժտում են նրանց։

Կրո՞նը, կրո՞նը, որ երկնային գոյություն չունեցող արքայության խոստումով երկրային կյանքը դարձնում է սպանդանոց։

Հիշո՞ւմ եք, մի ժամանակ մեր դրամատուրգները գրում էին անկոնֆլիկտ դրամա։

Ինչ լավ էր այն ժամանակ. հանդիսատեսը ապրում էր խաղաղ, երջանիկ։

Բայց երբ նույն դրամատուրգներն արհեստական կոնֆլիկտ ստեղծելու համար մեջ բերեցին տարբեր ազգեր, տարբեր կուսակցություններ, հիմա հանդիսատեսը կծկվում է ամեն անգամ, երբ դաշնակները, գնդացիրը դրած, վայր են գլորում բոլշևիկներին, բոլշևիկները թնդանոթի հարվածներով օդ են հանում դաշնակների ոսկորները ու ցրիվ տալիս։

Վայրի գազանները, որոնք լեզու, կրոն և համոզմունք չունեն, մռնչում և իրենց որսի վրա հարձակվում են այն ժամանակ միայն, երբ սոված են, իսկ լեզուներով օժտված մարդն իր ամբողջ կյանքում մռնչում ու հարձակվում է՝ լինի կուշտ կամ քաղցած։

Որովհետև սովորություն է դարձել այդ, տրադիցիա։

Իսկ թե կգա՞ մի ժամանակ, երբ մարդկությունն էլ կանցնի անկոնֆլիկտ դրամայի, դժվար է ասել։ Եվ ըստ իս՝ մենք չենք տեսնի այդ ժամանակաշրջանը, քանի գոյություն ունեն կրոնն ու լեզուն։

Ցույց տալու համար, թե ինչ կարող է պատահել, երբ նույն առարկային տարբեր անուններով են կանչում, բերում եմ իմ կյանքից մի օրինակ։

Երբ ես Հայաստանում էի և «հաց» էի ուտում, ստամոքսիս մեջ անտանելի խիթեր էի զգում։

Գնացի Ռուսաստան և այնտեղ երեք տարի «խլեբ» կերա։

Եվ խիթերս անցան։

Հետո, երբ Հայաստան վերադարձա, բարեբախտաբար մեզ մոտ հացն արդեն երկու լեզվով էր վաճառվում «հաց» և «խլեբ»։

Ամեն անգամ, երբ հացավաճառը ինձ «հաց» էր տալիս, ետ էի վերադարձնում և «խլեբ» պահանջում։

Մակարոն չկար քաղաքում։ Մեծ հերթեր էին։ Բայց ես, փոխանակ մակարոնի համար հերթի կանգնելու, գնում «խմոր ինչ՝ մեջը ծակ» էի առնում, որը ծախվում էր անհերթ...

Այսպես է, սիրելի՛ք, այսպես է։ Լեզուները սովորությունից են գալիս ու սկզբունքային ոչինչ չունեն իրենց մեջ։

Մի ժամանակ Էջմիածնում շատ վարդապետներ կային, որոնք երկար մորուքներ էին թողնում, որպեսզի օրն ի բուն շոյեն այդ մորուքը և օրը մթնեցնեն։

Հետագային այնպես պատահեց, որ այդ վարդապետները կնդեցին իրենց մորուքները և ամուսնացան։

Երբ կնոջ համն առան, սկսեցին ծիծաղել իրենց հիմար մորուքների վրա։

Նույն կերպ, եթե մարդկությունն էլ կնդեր իր բազմաթիվ լեզուները և խոսեր միայն մի լեզվով, չեմ կասկածում, որ նույնպես պիտի ծիծաղեր իր բազմալեզվյան ժամանակաշրջանի վրա։

Եվ ազգային լեզվի այն պահակները, որոնք պարտականություն էին ստանձնել լեզուն «անաղարտ» պահելու, պիտի ափսոսային զուր ժամանակ կորցրած լինելու համար։

Պահակն անզոր է բնության օրենքի առաջ։

Իսկ այդ օրենքն ասում է՝ մեծ և կուլտուրական ազգերը պիտի կլանեն փոքր ու կուլտուրա չունեցող ազգերի լեզուներն այնքան, որ մնա միայն մի լեզու։

Ճի՞շտ է, որ հայերը մի ժամանակ խոսել են գրաբար։ Իսկ ո՞ւր մնաց այդ լեզուն, ինչո՞ւ դարձավ աշխարհաբար։

Իսկ հիմա արդյո՞ք ափսոսում ենք, որ գրաբար չենք խոսում։

Որ զրկված ենք մեր նախկին «մորուքից»։

Վերջացնելով ասելիքս՝ բացականչում եմ.

- Բանականությամբ օժտված մարդի՛կ, եկեք կնդենք մեր երկար մորուքները և ամուսնանանք կյանքի հետ։

Կյանքն այն միակն է, որ տրված է մարդուն։

Կորչե՛ն բոլոր այն պատճառները, որոնք արգելք են հանդիսանում այդ կյանքը վայելելու։

Վերջ տալ կամակորությանը

Այն օրվանից, երբ մարդիկ սկսեցին մեռնել, այն օրվանից, երբ բնակբաժինը սկսեց տներ բաժանել, կարգ ու կանոնը խախտվեց քաղաքում։

Բոլորը կանգնած իրենց կամքն են թելադրում թաղման բյուրոյին և բնակբաժնին։

- Մենք Կարմիր բլուր չենք գնա, մեզ կենտրոնական գերեզմանատանը պիտի թաղես,- ասում են մեռածները թաղման բյուրոյին։

- Մենք ծայրամասերում չենք ապրի, մեզ բնակարան պիտի տաս քաղաքի կենտրոնում,- ասում են կենդանի մարդիկ բնակբաժնին։

Եվ ամբողջ օրը հավաքված այդ երկու խեղճ հիմնարկությունների գլխին՝ թույլ չեն տալիս աչք բանալ, պարզապես խեղդում են։

- Կենտրոնո՞ւմ եք թաղվել ուզում,- մի օր էլ ասաց թաղման բյուրոն՝ ատամները իրար սեղմած,- էս է, ես կրեմատորիա եմ կառուցում. ձեզ բոլորիդ կայրեմ և աճյուններդ կզետեղեմ կենտրոնական գերեզմանատանը՝ շշերի մեջ խցանած...

Ես չգիտեմ՝ թաղման բյուրոն իսկապե՞ս էր կառուցում, թե՞ նրանց վախեցնելու համար էր ասում, միայն գիտեմ, որ սարսափը պատեց բոլորին։

- Ի սեր Աստուծո, չայրես մեզ, կգնանք, Կարմիր բլուր կգնանք, կանաչ բլուր կգնանք, դեղին, մանուշակագույն, միայն մեզ չայրես։

Եվ հլու-հնազանդ, ականջները կախած՝ գնացին թաղվելու իրենց մատնանշած տեղերը։

Ու թաղման բյուրոն ազատ շունչ քաշեց։

Այս տեսնելով՝ բնակբաժինն ինքն էլ կամեցավ վախեցնել ծայրամաս չգնացող իր հաճախորդներին։

Բայց մի փոքր այլ տարբերակով, որովհետև անհարմար բան էր կենդանի մարդու հետ խոսելիս աճյունի ակնարկ անել։

Նա աճյունից ավելի սարսափելի բանով սպառնաց։

Ասաց, որ քաղաքի կենտրոնում բոլոր տուն ուզողներին «օբշչի» բնակարաններում կտեղավորի։

Այս որ լսեցին տուն խնդրողները, ասացին.

- Տո՛ւր, տո՛ւր, քաղաքի ամենահեռավոր ծայրերը տո՛ւր, այնքան հեռու, որ գնալ լինի, գալ չլինի։ Եվ մեքենային բարձած իրենց «վեշչերը»՝ մինչև օրս էլ անվերադարձ գնում են...

Ու կարգը վերականգնվեց քաղաքում։

Եվ լավ եղավ։

Աշխարհում կարգ կա, կանոն կա, ամեն մարդուն իր ուզածը կտա՞ն։

Նայեցե՛ք աշխարհին։

Կա՞ պետություն, որ իր գրաված տեղից գոհ լինի և չուզենա այն ընդարձակել ի հաշիվ իր հարևանների։ Կամ ո՞ր սառուցյալ գոտու բնակիչը չի ցանկանա այրեցյալ փոխադրվել՝ տաքանալու…

Իսկ այրեցյալի բնակիչը՝ սառեցյալ՝ զովանալու։

Խեղճ Իսլանդիան կապտել է ցրտից։ Անգլիան, իր ամբողջ կյանքը ջրի մեջ անցկացնելով, կակղել է։

Չի՞ ցանկանա մի փոքր էլ ցամաքային պետություն դառնալ։

Անշուշտ կուզենա, բայց ո՞վ է տվողը։

Գերմանիան երկու համաշխարհային պատերազմներում ռեզինի պես ինքզինքը ձգեց՝ գրավելով ուրիշի հողերը, բայց տեսա՞ք՝ վերջում ինչպես կծկվեց։

Ճապոնիայում գրել չի կարելի, երկրաշարժն անվերջ տարուբերում է գրասեղանը, և մեկն ինչքան էլ իմաստուն բան գրել ցանկանա, այն գրչախաղ կդարձնի։

Շվեյցարիան փոքր է, բայց տերիտորիալ պահանջներ չի անում։ Նրա երկիրը ամբողջովին լեռներ են և նեղլիկ ձորակներ։ Խեղճը չի կարող պառկելիս մի կարգին ոտները մեկնել։ Քնում է՝ համարյա նստած, ձորում մեջքը մի սարի հենած, ոտները հանդիպակացին տնկած։

Ի՞նչ եք ասում, վեր կենանք սրանց բոլորի պահանջները կատարե՞նք։

- Ո՛չ,- կասեք, իհարկե։

- Իսկ ինչո՞վ վախեցնենք աշխարհին։

Չե՞ք ասի։

Լավ, ես կասեմ։

Աշխարհին պետք է վախեցնել երրորդ համաշխարհային պատերազմով։

Գուցե Երևանի թաղման բյուրոն իրոք սուտ է ասում, աճյունի չի վերածի իր մեռելներին, բայց ատոմային պատերազմը ստել չգիտի, նա իրոք աճյուն կդարձնի, այն էլ ոչ թե մեռածներին միայն, այլ ողջին ու մեռածին հավասարապես…

Բարի խորհուրդ[132]

Մեր շրջանի թղթատարը՝ Ասլանը, չգիտեմ որտեղից էր իմացել, որ ես խելոք մարդ եմ, եկավ ինձանից խորհուրդ հարցնելու։

Ասում է.

- Ես խառնածին եմ։ Մայրս քրիստոնյա է, հայրս՝ մահմեդական։ Այն տարին, երբ մայրս ավարտել է գյուղատնտեսականը, գյուղատնտեսության մինիստրը թուրք է եղել, նրան ուղարկել է թուրքական կոլխոզ՝ աշխատելու։ Սիրահարվել են հորս հետ և իրար առել։

Ընկած երկու կրոնների արանքը, մի օր մահմեդական աստծուն աղոթելով, մի օր քրիստոնյա աստծուն դիմելով՝ գլուխ եմ պահել մինչև օրս։ Բայց այսօր արդեն ես մեծ եմ, շուտով անձնագիր պիտի ստանամ ու չգիտեմ՝ մեջը մահմեդական գրել տամ, թե՞ քրիստոնյա։

- Անպայման մահմեդական,- ասացի,- մանավանդ որ դու կիսով չափ արդեն մահմեդական ես, և քեզ ոչ ոք չի մեղադրի։ Եթե ես ոչ թե կես, այլ քառորդ մահմեդական էլ լինեի, հիմա ամբողջովին մահմեդական կգրվեի։ Մահմեդականը ձուլված է կրոնին որպես անբաժանելի այրուձի։ Իսկ քրիստոնյան։ Ջիուց իջած, կրոնի սանձը բռնած՝ քարշ է տալիս իր ետևից։

Քրիստոնյան օրենք է սահմանում այն չկատարելու համար։ Ասում է՝ մի՛ սպանաներ, սպանում է, ասում է՝ երկու շապիկ ունեցողը մեկն ուրիշին տա, չի տալիս, հրամայում է մի երեսը ապտակողին երկրորդ երեսը դարձնել, չի դարձնում, ասում է՝ սիրեցե՛ք միմյանց՝ չի սիրում։

Էլ ի՞նչ մնաց քրիստոնեությունից։

Իսկ մահմեդականությո՛ւնը... Օ՛, խոսքի տեր կրոն է։ Ասելն ու անելը մեկ է այնտեղ։

Մահմեդականն ասում է. «Աշխարհի միակ ճշմարիտ կրոնը իսլամն է, ու պանիսլամիզմի միջոցով ես ամբողջ աշխարհը պիտի մեր կրոնին բերեմ»։ Ու խոսքից գործի անցնելով՝ սկսում է աջ ու ձախ բռնի իսլամացնել մարդկանց, իսկ դեմ կանգնողներին սպանել։

Իսկ դուք տեսե՞լ եք մի քրիստոնյա պետություն, որ մահվան սպառնալիքով փորձի մի մահմեդականի քրիստոնյա դարձնել։

Քրիստոնյաները քանի՞ անգամ խաչակրաց արշավանքներ կազ-

մակերպեցին, որ իրենց Քրիստոսի քաղաքը՝ Երուսաղեմը, ազատեն մահմեդականների լծից ու չկարողացան։

Հապա թող փորձեն քրիստոնյաները մահմեդականների Մեքքան կամ Մեդինան գրավել, տես, թե ինչ սև կբերեն նրանց գլխին։

Մահմեդականը տղամարդ է. քրիստոնյան ինչ է։

Մահմեդական Թուրքիան, ողջ հայ ազգին դրած ոտի տակ, հավի պես մորթեց. մի քրիստոնյա պետություն հասա՞վ օգնության։ Ո՛չ։ Հապա, թող քրիստոնյաները փորձեին ոչ թե մի ազգ, այլ մի մահմեդական սպանել, տես, թե թուրքերն ինչ կանեին նրանց։

Միայն Թուրքիան սխալվեց, որ իր ձեռքով կոտորեց հայերին։

Դե նա, բոլորս էլ գիտենք, որ կուլտուրապես հետամնաց է մի փոքր և հայերին կոտորեց տնայնագործական մեթոդներով։ Սրով, բահով, բրիչով, մանգաղով և այն բոլոր առարկաներով, որոնք սուր ծայր ունեն։ Իսկ դիակների մեջ էլ ոսկի որոնելիս ճեղքեց զոհերի որովայնը։

Դա սխալ էր, իհարկե։

Եթե Թուրքիան հայերի կոտորածը կոնցեսիայով որևէ քրիստոնյա պետության հանձներ, նրանք կկոտորեին ինդուստրիալ ձևերով։

Գերմանիան, օրինակ, հրեաներին վառեց հատուկ այդ նպատակի համար շինված հնոցներում և կուլ տված ոսկիները ձեռք բերելու համար էլ չբացեց զոհերի որովայնը։ Հնոցում դիակն այրելիս միջի բոլոր մետաղները հալվեցին, ոսկին մի անցքով հոսեց, արծաթը՝ մի, պղինձը՝ երրորդ։ Ճիշտ այնպես, ինչպես հանքաքարը։

Քրիստոնյան թասիբ չունի։

Ոճրագործի հետ սեղան է նստում և բաժակ է բարձրացնում նրա կյանքի երկարակեցության համար ու նրա բազկին ուժ է մաղթում...

Նայեցեք Ամերիկային։ Ինչպես է աշխարհի այդ ամենաքրիստոնյա պետությունը թևանցուկ ման գալիս ոճրագործ Տաճկաստանի հետ։

Ամերիկան ու Արևմտյան Գերմանիան։ Ընկած տեղից վեր են հանում ու վրայի փոշին թափ տալիս։

Սիրալիրությունն այնքան է թեժ, որ անգամ Թուրքիան կարող է պոռալ.

- Գրկեցեք ինձ, չեմ կարող քայլել, հոգնել եմ... մարդ սպանելուց։

Ամերիկա՛, ինչո՞վ դու թուրք չես…

Այս ասելիս խառնածին թղթատարը, որի ներկայությունը ես բոլորովին մոռացել էի, որովհետև նա ցավոտ տեղիս էր կպել, դարձավ ինձ, հարցրեց.

- Այդ բոլորը երկրային. իսկ ի՞նչ են խոստանում այս կրոնները հանդերձյալ կյանքում: Ո՞ւմ արքայությունն է ձեռնտու:

- Անպայման մահմեդականը: Այնտեղ հուրի-փերիներ են քեզ սպասում: Իսկ քրիստոնեականում ի՞նչ կա: Մի ծերացած Աստված՝ բվի պես նստած իր գահին, մարդիկ էլ հրեշտակ դարձած ողջ օրը փառք են տալիս: Այնքան, որ հաճախ Աստվածն ասում է.

- Բավական է, զահլաս տարաք. սո՛ւս կացեք, քնեմ:

Թղթատարը այս բոլորը լսեց, մտածմունքի մեջ ընկավ, երկար ծանր ու թեթև արեց և գլխարկը վերցնելով՝

- Գետինն անցնեն երկու կրոններն էլ միասին,- ասաց:- Քաղմաս կերթամ և կասեմ՝ անկրոն նշանակեն անձնագրիս մեջ…

Ու գնաց:

Միայն մի օր դարերի արանքում

Աշխարհի սկզբից մինչև հիմա չի եղել մի օր, որ ազգերն իրար եղբայրներ լինեն: Միշտ կռիվ, միշտ պատերազմ, միշտ ավերածություն: Չի եղել մի հարց, որ երկու պետություններ միաժամանակ համաձայնության գային դրա շուրջ: Այնպես որ, երբ ատոմային երեք պետությունները Մոսկվայում հավաքվեցին՝ օդի, ջրի և տիեզերական տարածություններում չպայթեցնելու պայմանագիր կնքելու[133], աշխարհի բոլոր պետություններն իրար անցան և որոշեցին հաջողության պարագայում այս բացառիկ դեպքը նշանավորելու համար Նյու Յորքում՝ հենց ՄԱԿ-ի շենքում, մի մեծ համաշխարհային քեֆ կազմակերպել:

Երբ վերոհիշյալ համաձայնությունը փաստ դարձավ, ազգերը չորս կողմից Ամերիկա թափվեցին քեֆի:

Կազմվեց կազմակերպիչ կոմիտե, որի գործը պիտի լիներ քեֆի տեխնիկական մասի ղեկավարությունը:

Կոմիտեն Նյու Յորք բերեց աշխարհի բոլոր բարիքները, հավաքեց աշխարհի բոլոր դհոլ-զուռնաները, որ ազգերը զարկեն ու

թռչեն, բայց միս չճարեց։ Որ պետության դուռը զարկեց, ասին՝ չունենք, ղասաբ* պետություններին դիմե՛ք։ Ղասաբ պետություններն էլ երկուսն էին՝ Թուրքիան և Գերմանիան։

Թուրքիան ասաց.

- Ես տավար չեմ մորթում, ես ազգ եմ մորթում, ազգի միս կուզե՞ք, տամ, ինչքան կամենաք։ Էս է, պատրաստվում եմ իմ հույներին մորթել։ Կուզե՞ք։

Կոմիտեի անդամներից մեկն ասաց.

- Սխալ ես անում, Թուրքիա՛, հույները կուլտուրական ժողովուրդ են և կարող են պետք գալ քեզ։

- Չէ՛,- ասաց,- ես չգիտեմ՝ կուլտուրան ինչ բան է։ Ես ազգերին պահում եմ միայն մորթելու համար։ Ճամփի վրայի պետություն եմ, ինձ մոտ գնացող-եկողը՝ շատ։ Խոմ սոված ճամփու չե՞մ դնելու հյուրերիս։ Ամեն անգամ, երբ Գերմանիան գալիս է, ասում է. «Թուրքիա՛, մի ազգ մորթի՛ր, ուտեմ»։ 1915 թվին հայերին մորթեցի, հիմա էլ հույներին պիտի մորթեմ։

- Գերմանիան ազգի միս ուտո՞ւմ է,- հարցրեց կազմակերպիչ կոմիտեի մի անդամ։

- Ինչո՞ւ չէ։ Հրեայի միս ուտողը հայի միս չի՞ ուտի։

Վերջում կոմիտեն որոշեց մսի տեղ ձուկ գործածել, և քեֆն սկսվեց։

Երբ գինու հոսանքն սկսվեց, ու քեֆը թեժացավ, պետք էր տեսնել, թե ինչպես աշխարհի ամենածանր պետությունները թեթևացած ածում ու թռչում էին։ Անգլիան անճանաչելի էր դարձել։ Հրամայում էր զուռնի տրնգի ածել և իր նախկին գաղութների հետ թռչում ու պաչպչվում էր։

Ֆրանսիան, արդեն էն գլխից թեթև, գժություն չթողեց, որ չաներ։ Առանց Հնդկաչինի և Ալժիրի պարի դուրս չէր գալիս և միշտ նրանց գրկած։

Այնպես որ այս սիրալիր վերաբերմունքից զգացված՝ այս երկու ազգերը շատ ներողություն էին խնդրում, որ պատերազմներում հաղթեցին նրան և անկախացան...

Չկա՛ր, չկա՛ր, ոչ մի տարաձայնություն չկար նրանց մեջ, որ Ինդոնեզիայի թունդ գինին չհարթեր։

* Ղասաբ (kassab) - արաբ. մսավաճառ, մսագործ։

Պետությունները Նյու Յորք էին եկել զինված. երկու թաս խմելուց հետո բոլորը զինաթափվեցին:

Այս տեսնելով՝ զինաթափության 18 երկրների անդամներն ասում էին.

- Ինչպե՞ս չմտածեցինք Ժնև գնալիս մեզ հետ մի երկու տակառ գինի վերցնել...

Այսպես, երբ քեֆը թեժանալով հասել էր իր կուլմինացիոն կետին, հանկարծ մի մեծ պետություն ասաց.

- Ձեր տո՛ւնը չքանդվի, մենք Չինաստանին ենք մոռացել կանչել քեֆի...

Բոլորը սառեցին:

Զգացին, որ այսպիսի համաշխարհային քեֆին Չինաստանի պես մի մեծ պետության չկանչելը շատ անհարմար էր:

- Կանչե՛լ, կանչե՛լ, կանչե՛լ,- գոռացին ամեն կողմից և ուզում էին Ամերիկային ուղարկել:

Ամերիկան առարկեց: Ասաց.

- Ես Չինաստանին չեմ ճանաչում, մի ուրիշ պետության ուղարկեք: Թե չէ կերթամ Չինաստանի փոխարեն մի անծանոթ պետության կկանչեմ, կխայտառակվենք:

Ֆրանսիան ասաց.

- Ես կերթամ, ես մի փոքր սկսել եմ ճանաչել նրան:

Ինչպես հետո իմացա, Չինաստանը չէր կամեցել Ֆրանսիայի հրավերը ընդունել՝ ասելով.

- Ամերիկան ինձ չի ճանաչում, ես ինչպե՞ս մտնեմ օտարի տուն:

- Հա՛յ, քո տունը շեն,- ասել է Ֆրանսիան,- Ամերիկան հիմա խմել, պետություն է փնտրում, որ փաթաթվի...

Վերջը Չինաստանն էլ եկավ, և մինչև իրիկվա մութը կոխելը կերան-խմեցին:

Ու երբ հասավ այն ժամանակը, երբ յուրաքանչյուրն իր երկիրը պիտի գնար, երևաց, որ ոչ մի պետություն իր ոտի վրա չի կարողանում կանգնել:

Կազմակերպիչ կոմիտեն Ամերիկային խնդրեց տեղաշոր տալ մի գիշերվա համար:

Ամերիկան ասաց, որ այդքան տեղաշոր չունի և եղածների մեծ մասն էլ քանդել է՝ լվանալու:

- Ոչինչ,- ասաց կոմիտեն,- եղածով կբավարարվենք, երկու Վիետնամները, Կորեաները, Գերմանիաները զույգ-զույգ կպառկեցնենք՝ կռնակ կռնակի, մյուս պետություններն էլ թող ոտ ու գլուխ պառկեն: Բա ինչ. խոմ այս մթին խեղճերին չենք հանի լցնի Ատլանտյան օվկիանոսը…

Այս էլ եղավ: Մի կերպ տեղավորվեցին:

Գիշերը քեֆները թողել էր, ու պետություններն աչքները բացին լրջացած:

Երբ Արևելյան Գերմանիան տեսավ իր կռնակին Արևմտյանին պառկած, Հարավային Կորեան նկատեց հյուսիսայինին, կամացուկ իրարից հեռացան և վեր կենալով սկսեցին որոնել իրենց այն զենքերը, որոնք քեֆի սկզբին արձակել էին իրենց վրայից…

Այս ձևով վարվեցին մյուս բոլոր պետությունները, իսկ Ամերիկան, իր ռազմական ինքնաթիռները նստած, սկսեց հածել աշխարհի գլխին:

Եվ աշխարհն իր սովորական կերպարանքն առավ:

Վա՜յ խայտառակություն:

Զարմանում եմ, թե ինչո՞ւ կազմակերպիչ կոմիտեն այդքան քիչ գինի էր առել: Չկա՞ր աշխարհում այնքան գինի, որ շատ չէ, մի շաբաթ խմեին ու իրար եղբայրներ մնային:

Շաբաթվա վեց օրը եթե խմեին, յոթերորդ օրն արդեն կիրակի էր, երբ՝ որպես հանգստյան օր, կռիվ չեն անում պետությունները, և մարդկությունը կփրկվեր պատերազմներից:

Ամենահաջող առիթը մարդկությունը բաց թողեց:

Խոմ մեկ էլ չեն հավաքվի Մոսկվա՝ երկրորդ համաձայնությանը գալու…

Զգուշանալ չափազանցությունից

Անհավատներին խորհուրդ չեմ տա իրենց բան-գործ դարձնել և անվերջ կրկնել՝ Աստված չկա, Աստված չկա:

Պետք է մի անգամ ասել ու անցնել:

Այլապես Աստված կարող է թասիբի ընկնել և իրեն չհավատացողներին պատռեցնելու համար… գոյություն ունենալ:

Նման բան պատահել է ռուս նշանավոր գրող Անտոն Չեխովի հետ:

Նրա մուտքը գրականություն շատ ցավագին է եղել։ Ինչ գրել է, չեն տպել։ Ու ոչ միայն չեն տպել, այլև ծիծաղել են վրան. անգամ հույս չեն հայտնել, որ գեթ ապագային կարող է գրող դառնալ։

Այս վիրավորանքից խոցված՝ հետագային խմբագիրներից իր վրեժը լուծելու համար նա այնքան մեծ գրող դարձավ, որ ամսագրերի խմբագիրները նրա պատմվածքներն իրար ձեռքից քաշքշում էին տպելու համար։

Եվ ես համաձայն եմ, որ քննադատները մեղմ են վերաբերվում մեր սկսնակ գրողներին։ Նրանք անգամ եթե ոչ մի շնորհք չեն տեսնում նրանց մեջ, այնուամենայնիվ հույս են հայտնում, որ ապագայում կարող են շնորհալի գրողներ դառնալ։

Հիմա մանավանդ, երբ գրականությունը մի փոքր ավելի հասութաբեր զբաղմունք է դարձել, չպետք է զայրացնել սկսնակներին՝ ասելով՝ դուք գրելու ոչ մի շնորհք չունեք։

Պետք է սկսնակներին սիրաշահել, հների վրա էլ ուշադրություն դարձնել, որ չմոռացվեն։

Եթե ոչ, սաստիկ կզայրանան և անխտիր համաշխարհային գրողներ կդառնան։

Ժամանակավոր կարգադրություն

Որպեսզի չմեղադրվեմ շովինիզմի մեջ, պարզեմ իմ պլատֆորմը։ Ես չեմ ընդունում ո՛չ կրոն, ո՛չ ազգություն։ Դրանք են պատերազմների ու ավերածությունների պատճառները։ Եվ քանի դեռ գոյություն կունենան այդ երկու հավասարամեծ չարիքները, մարդկությունը չպիտի մտածի որևէ երջանկության մասին։

Ես ընդունում եմ անկրոն, բոլորը մի լեզվով խոսող մարդկություն։ Փոխանակ զուր ժամանակ կորցնելու զանազան լեզուներ սովորելու վրա՝ մարդը պետք է խորանա իր մեջ և խուսափի անմիտ բաներ խոսելուց։ Մարդկությունն այնքան քիչ ասելիք ունի, որ մի լեզուն նրան բավական է, և եթե կուզեք՝ կեսն էլ ավելի։

Այն ժամանակ երևակայո՞ւմ եք՝ ինչ պատկեր կստանա աշխարհը։ Սահմաններ չկան, գնա՛ ուր կամենաս։ Գրքեր կհրատարակվեն ոչ թե հինգ հազար օրինակով, այլ միլիոնավոր ու միլիարդավոր տիրաժով։

Կվերանա թարգմանությունը՝ մի լեզվից մյուսը: Եվ այսպես անթիվ ու անհամար բարիքներ:

Գուցե դուք համաձայն չեք ինձ հետ: Կուզենաք պետություններին ֆուտբոլ խաղացնել և կանգնել թամաշա անել, բայց ես ձեզ չեմ լսի և իմ աշխարհը կկառուցեմ այնպես, ինչպես ես եմ ցանկանում: Իսկ որովհետև դրա համար որոշ ժամանակ է հարկավոր, և ազգությունները ժամանակավոր պիտի գոյություն ունենան, ուստի պիտի խնդրեմ մեր հայ երիտասարդներին օտար ազգից աղջիկ չառնել:

Անհարմար է, շատ ու շատ տգեղ բաների պատճառ է դառնում:

Օրինակ:

Մի ընտանիքի ծանոթ եմ: Դրանք Ալաշկերտից եկած գաղթականներ են. տղան զինվոր գնաց Ռուսաստան և վերադարձին մի ռուս հարս բերեց հետը: Հարսը մի բառ չգիտեր հայերեն, դրա սկեսուր պառավ Զմրուխտն էլ միայն երկու ռուսերեն բառ գիտեր: Մեկը «խառաշո», մյուսը «ակուշկա»*: «Ակուշկան» էլ աղավաղելով «ափուշկա» է ասում:

Իբրև լիարժեք բառեր՝ նշանակում է մեկ ու կես բառ:

Տան մյուս անդամներն էլ, որովհետև բարձրագույն կրթություն ստացածներ են, հարսին հասկանալի լինելու համար տանը խոսում են միայն ռուսերեն և որպես ազգային փոքրամասնության՝ պառավի բոլոր իրավունքները հանձնում են հարսի ձեռքը: Հարսի ժամանելու օրվանից խեղճ ալաշկերտցի պառավի տունը դարձավ Ռուսաստան:

Եվ՝

- Փառ՛ք քեզ Աստված,- ասում է պառավը,- ես չկարողացա Ռուսաստան գնալ, Ռուսաստանն եկավ ինձ մոտ:

Մի անգամ, երբ հարսի հետ մենակ էր տանը, խոհանոցում վառվեց թոռան փեշը, և թոռանը վառվելու վտանգ սպառնաց: Նա դուրս վազեց խոհանոցից և հարսին օգնության կանչելու համար սկսեց բղավել՝ խառաշո՛, խառաշո՛...

Է, եթե ամեն ինչ «խառաշո» էր, էլ ի՞նչ կարիք կար տեղից շարժվելու:

Ու հարսը մեքենայի վրա իր կարը շարունակեց, իսկ խեղճ աղջիկը խոհանոցում վառվեց:

* Ակուշկա - ռուս. ***окошко*** (պատուհան) բառի աղավաղված ձևը:

Պառավն, ուրեմն, իր գիտցած մեկ ու կես բառերից մի անգամ միայն «խառաշոն» գործածեց, իսկ «ափուշկան» այդպես էլ անգործածելի մնաց, որովհետև պատուհանները սաստիկ խցված էին, և քամին չէր կարողանում բաց անել, որ պառավը ստիպված լիներ խնդրել հարսին «ափուշկան» փակել:

Այսպիսի ընտանիքը դո՞ւր է գալիս ձեզ:

Այժմ երկրորդ օրինակը:

Ջինվորությունից վերադարձին մի ռուս աղջիկ էլ մեր հարևան Սողոմոնը բերեց:

Սկզբում մարդ և կին այնքան սիրով էին իրար հետ, որ հարևանները իբրև կատարյալ ամուսնության օրինակ՝ նրանց էին ցույց տալիս իրար:

Բայց երբ ունեցան առաջին երեխան, նրանց հարաբերությունները մեկեն վատացան:

Սիրո ազդեցության տակ նրանց մեջ քնած շովինիզմը հանկարծ աչքերը բաց արեց, և միայն հակառակում էին իրար:

Քանի երեխան չէր խոսում, էլի ոչինչ: Բայց երբ սկսեց առաջին թոթովանքը, նրանց հարաբերությունները սոսկալի սրվեցին: Մարդը պահանջում էր տղայից միայն հայերեն խոսել, կինը՝ միայն ռուսերեն:

Խեղճ երեխան օրերով սոված էր մնում: Երբ «հաց» էր ասում, մայրը նրան հաց չէր տալիս, երբ «խլեբ» էր ասում, հայրը չէր տալիս: Երկուսին միաժամանակ բավարարելու համար «հաց-խլեբ» գործածեց, այդ էլ չանցավ: Պահանջվում էր կա՛մ «հաց», կա՛մ «խլեբ»:

Տղան սովից չմեռնելու համար ստիպված «սառեցրեց» իր լեզուն և խուլ ու համրի նման սկսեց նշանացի հասկացնել իր պահանջը: Մատը դնում էր հացին և տանում բերանը:

Հակառակությունն այնքան աճեց մարդ ու կնոջ միջև, որ բառերը թողած՝ սկսեցին հետևել երեխայի տնքոցին և մարմնից դուրս եկող զանազան այլ ձայներին՝ իմանալու համար, թե երեխան ռուսերե՞ն հանեց այդ ձայները, թե՞ հայերեն:

Այս դեռ ոչինչ:

Իսկ երբ երեխան մեծանա և կամենա ամուսնանալ, նա ո՛չ ռուս աղջիկ կարող է առնել, ո՛չ հայ: Աղջկա մետիսն էլ գոյություն չունի. ի՞նչ պիտի լինի նրա վիճակը:

Եվ վերջապես դրանք բոլորն էլ ոչինչ, որովհետև մեր անցավոր կյանքին են վերաբերում։

Իսկ ինչպե՞ս պիտի մեռնի երեխան։ Իբրև հա՞յ, թե՞ իբրև ռուս։ Հայ մեռնի՝ կինը չի թողնի, ռուս մեռնի՝ մարդը չի թողնի։

Դե համեցեք մեռեք…

Ո՛չ և ո՛չ, հա՛յ երիտասարդներ, ռուս աղջիկ չառնեք։ Մի քիչ էլ սպասեցե՛ք։ Եթե իմ ուզած աշխարհը կառուցեմ, առանց աջ կամ ձախ նայելու՝ ում հետ կամենաք, կարող եք ամուսնանալ։

Այն ժամանակ ո՛չ «հաց» կլինի, ո՛չ «խլեբ»։

Անուշադրության սխալ

Ծնողները սովորություն ունեն իրենց երեխաներին փոքրացուցիչ մասնիկով կոչել, ինչպես՝ Արայիկ, Վարդանիկ, Ստեփանիկ և այլն։

Փոքրացուցիչ մասնիկով կանչում են, հետո էլ մեծանալիս մոռանում են այդ «իկը» վերցնել տղայի վրայից, որ ծերանա ու մեռնի, ինչպես աշխարհի կարգն է։

Այստեղ իհարկե տղան շահում է՝ երկար ապրելով, բայց այլ տեղերում էլ վնասվում է։

Փոքրացուցիչ մասնիկով երեխան հետագայում զրկվում է «մեծ մարդ» դառնալու հնարավորությունից։

Ինչքան էլ մեծանա, նա անչափահաս կհամարվի և իրավունք չի ունենա ամուսնանալու։

Իմ կարծիքով մի նորմա պիտի սահմանվի, թե մինչև ո՞ր տարիքը երեխան իրավունք ունի փոքր լինելու։

Այլապես նա ծանր գործերից միշտ պիտի խուսափի՝ ասելով. «Ես փոքր եմ, չեմ կարող»։

Օրինակի համար, եթե փողոցում մի բեռնակիր խնդրի իր վայր դրած բեռը շալակին բարձրացնել, չասի.

- Իմ անունը Արայիկ է, չեմ կարող…

Մեռելների արշավանք

Գերմանիան, պատճառաբանելով, որ իր երկրում նեղվածք է, կենսական տարածություն չունի, երկու անգամ արշավեց աշխարհի վրա, որ այն մեծացնի, բայց երկու անգամ էլ փոխանակ մեծացնելու՝ փոքրացրեց իր բնակելի տարածությունը:

Ինչո՞ւ այսպես պատահեց: Ասեմ: Որովհետև նա, աշխարհակալության կարճ ճամփան թողած, երկար-երկար ճանապարհն ընտրեց:

Նա պետք է մեռներ՝ իմանալով, որ կենդանի ազգին ոչ ոք կենսական տարածություն չի տա:

Տեսեք: Իր ռուսական արշավանքին Ռուսաստանը նրա կենդանի զինվորին ոչ մի թիզ հող չտվեց, բայց երբ մեռավ այդ զինվորը, սիրով իր հողում տեղավորեց նրան:

Այսպես վերաբերվեցին այն բոլոր ազգերը, որոնց դեմ արշավանք կազմակերպեց Գերմանիան:

Այս իմաստով վերցրած՝ կարող ենք ասել, որ Գերմանիան իրոք հասավ իր նպատակին:

Այժմ աշխարհի որ պետության տակը փորես, գերմանացի զինվոր դուրս կգա: Մի հանգամանք, որ պետությունների գոյությունը երևութական է դարձնում, որովհետև նրա հիմքում դրված է գերմանացին:

Այս երևույթը գոյություն ունի նաև մեր անհատական կյանքում:

Երբ նայում եմ Երևանի չորս գերեզմանոցներին, որոնք օրը օրին մեծանում և գարնան հեղեղի նման ափերից դուրս եկած՝ սպառնում են քաղաքին, ասում եմ մտքումս. «Կգա մի օր, երբ կենդանի մարդը, իր բնակելի տարածությունը մեռելներին զիջելով, ինքը անօթևան կմնա»:

Այս վտանգը կանխատեսելով՝ մեր շինարարական վարչությունը սկսել է կառուցել բազմահարկ տներ, որ ողջը դեպի վեր բարձրանա՝ գետինը զիջելով մեռելներին:

Զարմանալի բան: Բոլորը զիջում են մեռելներին: Մեր բնակբաժինը ողջին դժվարությամբ է տուն տալիս, իսկ մեռելներին անմիջապես տեղավորում է:

Եթե դրությունն այսպես շարունակվի, եթե մեռելը, այսպես կամաց-կամաց ընդարձակվելով, գրավի կենդանի մարդու ոտի տակի

հողը, մենք ստիպված պիտի լինենք նորագույն մեթոդով մշակվող բանջարանոցների նման գնալ ջրի մեջ աճել։

Եվ ըստ իս՝ այդ վատ չի լինի, քանի որ այդ պայմաններում մարդը երկու բերք պիտի տա։

Վերջապես այս հարցը գնալով լրջանում է, և պետք է այդ մասին մտածել։

Մենք ապրում ենք համայնական կյանքով, իսկ մեռնում ենք մենատնտես։

Ինչո՞ւ կարելի է պատերազմում ընկած զինվորներին եղբայրական դամբարանում տեղավորել, իսկ տանը մեռածներին՝ ոչ։

Փառք տանք Աստծուն, որ մենակ մարդուն է բանական ստեղծել, եթե անբերան անասուններին էլ բանականություն տար, ներկայումս մեր ողջ աշխարհը գերեզմանոց դարձած պիտի լիներ, մեկ էլ ծխախոտի արտեր, որ պապիրոս շինեն ու փստացնեն։

Հայտարարություն[134]

Ի գիտություն այն բանաստեղծների և արձակագիրների, որոնք ափսոսում են, որ երիտասարդ են դարձել և սրտի կսկիծով են հիշում իրենց մանկությունը, հայտնում եմ, որ ես իմ մանկության տարիները փոխանակում եմ նրանց երիտասարդության տարիների հետ շատ ձեռնտու պայմանով։

Երկուսը մեկի հաշվով։

Տալիս եմ մանկության իմ երկու տարիները, որ նրանք հոլ խաղան, և ստանամ մեկ երիտասարդ տարի, որ ամուսնանամ ու կյանք անեմ։

Եվ որպեսզի առուտուրի մեջ խտրություն չլինի, երկու խոսքով ծանոթացնեմ իմ մանկության հետ։

Ես ունեցել եմ սիրող հայր, որից ութ տարեկան հասակում զրկվել եմ նրա պանդխտություն գնալու հետևանքով։ Մեծացել եմ մեծ եղբորս ձեռքի տակ, որը ոչ այլ ինչ էր մեր տան մեջ, եթե ոչ մի Սուլթան Համիդ։ Մի անգութ, անողորմ բռնակալ։ Առավոտներն ինձ ծեծում, դպրոց էր ուղարկում, դպրոցում էլ վարժապետներս էին ծեծում, տուն ուղարկում։

Ժամացույցի ճոճանակի նման գնում-գալիս, ծեծ էի ուտում։

Նոր կարած շոր երբեք չեմ հագել. եղբայրս իր հին շորերը քանդում, շուռ էր տալիս և հագցնում էր ինձ։

Տարվա 365 օրերից 200-ը պաս եմ պահել, քսան օրը՝ ծոմ։ Օրը երկու անգամ աղոթել եմ։ Իսկ Մեծ պասերին՝ օրը երեք անգամ։ Ատել եմ դպրոցը։ Իմ ամբողջ ձգտումս եղել է շուտ մեծանալ և վարժապետներիցս ու մեծ եղբորիցս վրեժս լուծել։

Ահա իմ մանկությունը։ Եթե հավանում եք, մո՛տ եկեք։

Բայց պայմանով, որ դուք էլ պատմեք ձեր երիտասարդության մասին։

Ես փոխանակություն չեմ կատարի կուսակրոն վարդապետի կամ այրի քահանայի հետ։ Կին չունեցողի հետ ես գործ չունեմ։ Գործ չունեմ նաև այն երիտասարդի հետ, որ, կանխիկը թողած, քամիների ետևից է ընկել…

Մո՛տ եկեք։ Եթե մեր առևտուրը գլուխ եկավ, իմ ծերությունը ձրի՝ իբրև վերադիր նվեր, կտամ կենսաթոշակովս միասին։

Բազմացման նոր եղանակ

Աշխարհի սկզբից մինչև մեր օրերը մարդիկ բազմացել են միայն երեխա ծնելով։

Մի բազմացում, որ շատ սուղ է նստել մարդկությանը։

Այստեղ ես նկատի ունեմ այն աղեխարշ ճիչերը, որոնք արձակում են երկունքի ցավով բռնված կանայք։

Ցավեր, որոնք ստիպեցին մարդկանց բազմացման նոր ուղիներ որոնել։

Որոնեցին և բարեբախտաբար գտան։

Տարիներ առաջ Հայաստանի վիճակագրական բաժինը, կարդալով իր «տվյալները», զարմացած մնաց։ Հայաստանի բոլոր շրջանների ազգաբնակչությունը Սևանի նման ցամաքում, Ղափանի բնակչությունը հորդանում, ուռչում և սպառնում էր հեղեղել իր շրջակա գավառները։

Երբ սկսվեց ուսումնասիրվել այս զարմանալի երևույթի պատճառը, պարզվեց, որ դա մի շատ հասարակ բան է եղել։

Ղափանի ավտոբուսային կայարանում տոմսավաճառի պատուհանը այնքան բարձր է եղել, որ տոմս վերցնող ոչ մի ուղևորի ձեռքը

չի հասել, և հեռավոր վայրերից եկողները, չկարողանալով տոմս վերցնել իրենց բնակավայրը վերադառնալու համար, ընդմիշտ մնացել են Ղափանում՝ դառնալով նրա իսկական բնակիչ:

Սա մի գյուտ էր, որ ազատում էր ղափանցիներին երեխա ծնելու և նրա հետ կապված բոլոր դարդ ու ցավերից:

Այս մեթոդը եթե հայտնի լիներ միջին դարերում, մեր Արշակ Բ թագավորը իր Արշակավանը բնակչությամբ լցնելու համար չէր աշխատի գողությունն ու ավազակությունը քաջալերել անմեղ և պարկեշտ Հայաստանում, այլ Արշակավան գնացողների համար մի ցած պատուհան կշիներ, իսկ այնտեղից վերադարձողների համար՝ Ղափանից էլ բարձր, որ այնտեղ մտնողը իսպառ չմտածեր նորից դուրս գալու մասին...

Եվրոպական պետություններում Ֆրանսիան է, որ միշտ ցամաքում է, իսկ Գերմանիան՝ հորդում:

Ֆրանսիան, օգտվելով Ղափանի փորձից, հետագայում կարող է ամբողջ Գերմանիան Ֆրանսիա լցնել:

Եվ շատ հեշտ:

Նրանք մոտ դաշնակիցներ են: Երբ, ըստ սովորականի, գերմանական զորքը Ֆրանսիա կանցնի զորախաղի, Ֆրանսիան կարող է իր ավտոբուսի կայանի պատուհանները բարձրացնել այնքան, որ վերադարձող զինվորների ձեռքը չհասնի...

Չէ, շատ օգուտներ ունի անծնունդ բազմացման այս սիստեմը:

Բավական է ասել, որ բերող ու չբեր կանանց մեջ եղած տարբերությունը իսպառ կվերանա:

Մի բառի սխալ թարգմանությունը տեսեք, թե ինչ տեղաշարժեր կարող է առաջացնել կենդանական աշխարհում

Երևանի կարամելի գործարանն իր պատրաստած կոնֆետի փաթեթի վրա հայերեն «բադը» ռուսերեն «սագ» է թարգմանել, որով նույնացվում են երկու տարբեր թռչնատեսակները, և մի պատկառելի տեսակ դուրս է գալիս կենդանական շարքից:

Գործարա՛ն, ի՞նչ իրավունքով ես դու բադն ու սագը միացնում իրար։

Ճիշտ է, Եգիպտոսն ու Սիրիան միացան իրար ու Միացյալ Արաբական Պետություն հիմնեցին, բայց նրանք այդ անելու իրավունքն ունեին, որովհետև երկուսն էլ միատեսակ արաբներ էին։ Իսկ բադն ու սագը տարբեր են և՛ իրենց մսի որակով, և՛ քաշով, և՛ գնով։ Սագը ձայն հանելիս «ղա՛, ղա՛, ղա՛» է ասում, իսկ բադը բոլորովին ուրիշ ձայն է հանում։

Հետո նկատի առ, որ կոնֆետն ուտելիք է։

Խեղճ գնորդ…

Առնելով ու բերանը դնելով քո պատրաստած կոնֆետը՝ շվարած կանգնում է՝ չիմանալով բադի՞ համ առնի նրանից, թե՞ սագի…

Այս մեկ։

Երկրորդ՝ դու, որ կենդանիներին մեկը մյուսով ազատ թարգմանում ես, ի՞նչ պատասխան պիտի տաս այն ոչխարին, որ վաղը կարող է քո դուռը թակել և խնդրել, որ «ոչխարը» «առյուծի» թարգմանես։

Իրավունք ունե՞ս մերժելու։

Ո՛չ, պիտի թարգմանես ու մոնչալ սովորեցնես։

Եվ ահա թե ինչ։

Մյուս օրը գայլը, արթնանալով իր որջում և չիմանալով, թե ոչխարը առյուծ է դարձել, ըստ իր սովորության քայլերն ուղղում է դեպի փարախը՝ դրանցից մեկն ուտելու, հանկարծ ոչխարի փոխարեն դեմն է ելնում մի ամեհի առյուծ ու մռնչում այնպես, որ գայլը դառնում է ոչխար…

Գայլերի ցեղը ի՞նչ պիտի ուտի այնուհետև ապրելու համար։

Եվ միայն «ոչխարը» չէ, որ առյուծի պիտի թարգմանես։ Նապաստակի վիճակն էլ լավ չէ, հասնող գազանն ուտում է։ Ի՞նչ խիղճ պիտի ունենաս, որ նրան էլ «վագր» չթարգմանես…

Օրենք չէ կենդանիներին թարգմանել։ Եթե այդ բանը օրինականացվի, կարող է հետագայում այդ սովորությունը մարդկանց էլ անցնել։ Օրինակի համար, կարող է մի սկսնակ գրող ներկայանալ քեզ, խնդրել «Շեքսպիր» թարգմանել իրեն։

Եվ որպեսզի այս բոլոր բաները չպատահեն, Երևանի կարամելի՛ գործարան, ձեռքիդ տակ մի ռուս-հայերեն բառարա՛ն ունեցիր։

Դեգրադացիա[135]

Այս աշնանը հիանալի մսեր էին ծախվում խանութներում:

Ամբողջովին յուղ:

Մսի կտորները երկար շուռ ու մուռ էիր տալիս: Բոզբաշցու ուզեիր՝ բոզբաշցու կկտրեր մսավաճառը, կոտլետ ուզեիր՝ կոտլետ, քուֆթա ուզեիր՝ քուֆթա:

Ամեն անգամ, երբ միսն առած տուն էի վերադառնում՝ ուրախացած հաջող առևտրով, ներկա օրերը համեմատում էի նախապատմական մարդու հետ և մեկ-մեկ նշում այն տարբերությունը, որ կար նախամարդու և մեր միջև:

Նախամարդը որսի դուրս գալիս հնարավորություն չուներ նախապես ստուգելու պատահած կենդանու մսի որակը, նոր խփելու: Որսն ինչ որակ էլ ունենար, որսորդը պարտավոր էր ուտել այն:

«Ես այս եմ,- ասում էր որսը,- տա՛ր, ուզում ես բոզբաշ եփիր, ուզում ես կոտլետ»:

Այսպիսով նախաձեռնությունը որսորդից անցնում էր որսին, և միսը իր կամքը թելադրում էր սպառողին:

Իսկ հիմա, օ՜, հիմա կարող ես անգամ միսը տանել տուն և կնոջդ չհավանելու դեպքում բերել խանութ, փոխել: Կարող ես միսն այնտեղ թողնել ու փողդ ետ ստանալ:

Իսկ նախապատմական շրջանում միս ետ վերադարձնելու մասին խոսք անգամ չէր կարող լինել. խփեցիր, պիտի ուտես:

Այս որ պատմում եմ, անցնող աշնանն էր վերաբերում:

Հիմա, սակայն, մեկեն փոխվեց մսի խանութների պատկերը:

Երկաթյա կեռերից կախված են միս հիշեցնող անորոշ բաներ, որոնցից կարելի է պատրաստել բոզբաշ, կոտլետ և քուֆթա հիշեցնող բաներ...

Հաճախորդն էլ հիշեցնում է նախնական որսորդին, որ խանութ է մտնում առանց զենքի, որովհետև որսն առանց խփելու էլ սատկած է:

Խանութից դուրս գալիս ակամա մտածում ես. «Ինչ անգութ է եղել մսագործը, որ սրա վզին դանակ է քսել: Պատերազմներում այս տեսակ ընկածներին ոչ թե սպանում են, այլ պատգարակի վրա դրած՝ հոսպիտալ են տանում...»:

Ամուսնության ուրվագիծ

Այն մարդը, որին պիտի ամուսնացնեմ, մի անուն չունի: Տարբեր տեղեր տարբեր անուններով է կոչվում: Տանը նրան Տեփան են կանչում, տատը Տեփո է ասում, գործարանում՝ Ստյոպա, և այսպես անվերջ:

Նրա համախառն անունը, ուրեմն, կլինի Ստեփան:

Գործարանում՝ կիպ նրա «ստանոկի» կողքին՝ մի այլ «ստանոկի» վրա, աշխատում էր մի աղջիկ, որին չէր տեսել, այլ լսել էր, որ անվանում էին Հայկուշ:

Հայկուշն էլ անունով էր ճանաչում Ստեփանին, և այս այն պատճառով, որ երկուսն էլ խիստ լարված աշխատում էին վտանգավոր գործում. մի փոքր աջ կամ ձախ նայեցիր՝ կա՛մ մատդ կընկներ մեքենայի տակ, կա՛մ ամբողջական ձեռքդ:

Բայց Ստեփանն առանց նայելու էլ, իր հոգու աչքով զգում էր, որ Հայկուշը գեղեցիկ աղջիկ է, և սկսում է ավանսով սիրել, մինչև մի օր բախտ կունենար անձամբ տեսնելու:

Նա հառաչում էր, բայց մեքենայի հռնդյունը չէր թողնում, որ ձայնը աղջկան հասներ:

Այնպես որ աղջիկը չէր իմանում, որ Ստեփանը հառաչում է:

Բայց մի օր հանկարծ տոկը* կտրվեց, գործարանը կանգ առավ, ու երկու հավակնորդները կանգ առան՝ քրտինքի մեջ կորած: Ու որպեսզի քրտինքը չսառչի վրաները, իրար նայեցին, դուր եկան իրար ու սիրահարվեցին այնպես եռանդով, որ մինչև ճաշ նշանվեցին, բայց պսակվելու ժամանակ չունեցան: «Այս ամսին,- ասացին,- Կենտկոմի պլենումն է գնում Մոսկվայում, նրան արժանավայել ցուցանիշներով դիմավորենք, հետո մյուս ամսին կամուսնանանք»:

Բայց նրանց հույսերը չիրականացան:

Պլենումը գյուղատնտեսությունն էր քիմիականացնում, և մի պլենումը հաջորդում էր մյուսին: Հունվարյան պլենումից հետո եկավ փետրվարյան պլենումը, փետրվարյանից՝ մարտյան պլենումը, և այսպես անվերջ: Զույգ նշանվածները անկարող էին արժանավայել ցուցանիշը թողած ընկնել մանր, ճղճիմ ամուսնության ետևից:

Զույգերն ամուսնության հույսը հա՛-հա՛ կտրում էին, երբ հան-

* Տոկ *(ток)* - ռուս. հոսանք:

կարծ տոկը կտրվելու հետևանքով մի ամիս պլենում տեղի չունեցավ։

Այս բարեպատեհ առիթն օգտագործելով՝ շտապ կերպով ամուսնացան և պատրաստվում էին երջանիկ կյանք վայելել, երբ հանկարծ նրանց դռանը կանգնեց զավկոմը*։

- Գործարանը երկու հերթափոխի է անցել։ (Դառնալով Ստեփանին) Դու ցերեկը պիտի աշխատես, (դառնալով Հայկուշին) իսկ դու՝ գիշերը։

Եվ այս այն ժամանակ, երբ նրանք պատրաստվում էին իրենց մեղրամիսը վայելել...

Այդ օրվանից նրանք իրար երես չտեսան։ Նոր զարթնած իրենց բուռն սերը սկսեցին երկտողերով արտահայտել։ Առավոտ մարդը գործի գնալիս մի գրությամբ կնոջ հոգուն էր մատաղ լինում և թողնում սեղանի վրա, իրիկունը կինը գործի գնալիս մարդու ջանին էր մատաղ լինում և դարձյալ թողնում նույն սեղանին։

Այսպիսով երկուստեք իրար սիրով վառվում էին։

Բայց Աստված իր ստեղծածին երբեք չի մոռանում. մի օր իր ողորմությունը ցույց է տալիս։

Եվ իրոք գործարանի տոկը նորից կտրվեց, և մարդ ու կին տանը մնացին։

(Օրհնվես դու, տո՛կ, որ մարդկանց կյանք ես տալիս)։

Ուրեմն, տանը մնացին ամուսինները և իրար երես են նայում։

Քանի՞ տարի իրար երես չէին տեսել։ Մազերը սպիտակել, երեսները թոշնել, համարյա անճանաչելի էին դարձել։

Ստեփանը տեսավ մի չորս տարեկան տղա, որ ազատ ելումուտ էր անում տանը։

- Ո՞ւմ տղան է սա,- հարցրեց մարդը։

- Քո,- պատասխանեց կինը։

- Մենք ե՞րբ ենք միասին ապրել, որ իմը լինի...

- Երեխա ունենալու համար անպայման հարկավոր է միասի՞ն ապրել,- հարցրեց կինը։- Ներկայիս հեռակա ուսանողը մոտակա ուսանողի բոլոր արտոնություններն է վայելում, ինչո՞ւ մենք՝ հեռակա ամուսիններս, մնայուն ամուսինների արտոնությունը չվայելենք։ Քո սիրազեղ նամակներն այնքան էին իմ մեջ սեր բորբոքում, որ

* Զավկոմ (завком) – ռուս. ***заводской комитет*** (գործարանի կոմիտե) բառակապակցության հապավումը։

ես չէի կարող չհղիանալ։

- Տարբ՞ել ես զգա։ Ի՞նչ ազգանունով ես արձանագրել։

- Քո ազգանունով։ Ասլանյան։ Սեղանի վրա թողած քո երկտողերը որպես փաստաթուղթ ցույց տալով՝ արձանագրել եմ տվել։ Զագսի վարիչը, տեսնելով, որ իմ մարմնի մասերին այսքան «մեռել» ես, կամեցավ մի տեղ էլ ինքը մեռնել, բայց ասացի՝ իմ բոլոր տեղերը զանիտ են, թույլ չեմ տա մեռնել։*

- Գովելի բան ես արել, բայց դպրոց ընդունելիս կարող են կեղծ համարել ծննդականը, և երեխան դուրս մնա։ Լավ չէ՞ր լինի, որ տղային կոչեիր ուղղակի Փաստաթուղթյան։

*Կինն առարկեց, մարդը չպնդեց, և մի կերպ համաձայնության եկան ու փակեցին տղայի գենեզիսի** հարցը՝ ավելի կարևոր հարցերի անցնելու համար։*

*Մի կարճ պաուզայից*** հետո Ստեփանը երկար հառաչեց ու ասաց.*

- Այս բոլորը լա՛վ, ա՛յ կնիկ, բա ե՞րբ պիտի իրար հետ ապրենք։ Խոմ աշխարհ չենք եկել միայն պլենումն արժանավայել ցուցանիշներով դիմավորելու համար։

- Մի՛ հուսահատվիր։ Էս ա, ես շուտով վաթսունս կլրացնեմ, դու էլ վաթսունհինգը, թոշակի կանցնենք, դու տեղ կբռնես ամուսնական ստանոկին և ինձ արժանավայել ցուցանիշներով կդիմավորես։

- Է՛հ, կնի՛կ, դու էլ բան ասացիր։ Վաթսունհինգ տարեկան մարդու ցուցանիշն ո՞ւմ է հարկավոր...

- Հապա ինչպե՞ս։ Դու ուզում ես մեր երիտասարդ ժամանակը մեր ամուսնական ճղճիմ գործերով զբաղվենք, ծերանանք, նո՞ր գործարան մտնենք։

- Եսիմ,- պատասխանեց Ստեփանը՝ վախենալով հակաճառել։

Կինը շարունակեց.

- Դարդ մի անի, Ստեփան ջան։ Մեռնելուց առաջ մի քանի տարի իրար հետ կապրենք, մեռնելուց հետո էլ արդեն կերթանք արքայություն և հավիտյանս միասին կլինենք։

- Ի՞նչ երաշխիք, որ երկուսս էլ արքայություն կընկնենք։

---

* Զանիտ- ռուս. ***занято*** (զբաղված) բառի աղավաղված ձևը։

** Գենեզիս (genesis) - հուն. ծագում։

*** Պաուզա (παυσις) - հուն. դադար։

- Կասկածո՞ւմ ես։

- Իմ մասին չեմ կասկածում, ես քեզանից եմ վախենում։ Վերջին դատաստանին Աստված կարող է մեր երեխան ապօրինի համարել և քեզ քաշքշել։

- Ցույց կտամ փաստաթղթերը, որ դու ինձ սիրել ես։

- Փաստաթղթերն էլ, ախր, նոտարով վավերացված չեն։ Աստված ինչ իմանա՝ իրոք սիրել եմ քեզ։

- Կտանեմ, հաստատել կտամ։

- Էլի չի հավատա,- ասաց մարդը։

- Չի հավատա՞,- տաքացավ կինը,- ես նրա մորուքից կբռնեմ և կասեմ. «Միլիոնավոր տարվա քավթա՛ռ, ինչո՞ւ քո բանավոր «ավետիքով» Մարիամը քեզ որդի կծնի, ես այսքան փաստաթղթերով չե՞մ կարող իմ մարդուց երեխա ունենալ»։ Ի՞նչ ես ասում, խայտառակ կանեմ։

Ստեփանն այլևս չառարկեց։ Նա շատ լավ գիտեր, որ կինը երբ մի բան սկսի, մինչև ավարտը հաջողությամբ կտանի։ Ուստի միամտվեց, հանգստացավ և անհամբեր իր ծերությանն էր սպասում, որ այս բոլոր բաները պատահեն...

Փախստականը

Մի անգամ ասել եմ, հիմա էլ եմ ասում՝ գիշերները ինձ չայցելեք, ես տանը չեմ լինում, երազներիս թևերով գնում եմ տիեզերք շրջելու։

Այս գիշեր տեսեք ինչ պատահեց։ Անհայտ մոլորակից մի քաղաքական հանցավոր փախավ և հարևան մոլորակում ապաստան խնդրեց։ Տվեցին։ Տվեցին, բայց ասացին.

- Մեր մոլորակում բոլորն են աշխատում, ինչ մասնագիտություն ունես։

- Հեղափոխական եմ,- ասաց։

- Հեղափոխությունը արհեստ չէ, ուրիշ բան ասա։

- Ուրիշ ոչինչ չգիտեմ։

- Դերձակություն, կոշկակարություն, կամ հին կոշիկներ կարկատել։

- Ասացի, որ ոչինչ չգիտեմ,- ասաց փախստականը։

Սրա վրա ժողովի նստեցին մոլորակցիները, որպեսզի որոշեն, թե ինչ գործ տան այս ոչինչ չիմացողին: Մեկն այս ասաց, մյուսը՝ մի այլ բան, բայց չանցավ ոչինչ, ու բոլորը մնացել էին շվարած:

Հանկարծ մեկն ասաց.

- Եկեք թագավոր դնենք մեր գլխին:

Բոլորը պաշտոնը համարեցին հարմար ու առաջարկեցին եկվորին թագավորել իրենց: Իսկ երբ վերջինս կամեցավ իր ֆունկցիաների հետ ծանոթանալ, ասացին.

- Ոչինչ չես անի, կուտես կխմես և ման կգաս:

- Իսկ կլինե՞:

- Անսահմանափակ կարող ես օգտվել:

- Իսկ ծա՞փ:

- Մի մտածիր: Ինչ խոսես կծափահարվես:

- Երբ լռե՞մ:

- Լռությունդ էլ կծափահարվի: Բացարձակ լռել չես կարող, իհարկե: Ամենալուռ մարդն էլ իր անձնական կարիքների համար զանազան ձայներ կհանի: Օրինակ՝ կհազա, կփռնքտա, կզկռտա և մասամբ նորին: Ասում ենք էլի՝ քեզանից դուրս ելած բոլոր ձայները ծափահարության ենթակա են:

- Եղա՛վ,- ասաց փախստականը ու գահ բարձրացավ:

Մոլորակի բնակիչներն այս մեկին լավ տեղավորեցին, բայց երկրորդ փախստականից ազատվելու համար մոլորակի դուռը փակեցին և որոշեցին խնդրել հարևան մոլորակին, որ եթե իրենց դուռը ծեծեն՝ ասեն, որ տանը մարդ չկա:

Ամեն ինչում խնայողություն[136]

Փոքրը չէ, բայց մեծ տղաս տունս քանդեց: Զգիտի՝ ինչ բան է խնայողությունը: Կոշիկ է պատվիրում՝ սաստիկ լայն, բերում է տուն, ահագին բամբակ թխմում կոշիկի ծայրը, նոր հագնում:

- Ա՛յ տղա,- ասում եմ,- կոշիկդ ոտքի՛դ կարել տուր, մեծությունից ինչ օգուտ, զուր տեղ կաշի և բամբակ ես սպառում: Վաղը մեծացար, ենթադրենք, պիտի պսակվես. պսակվելիս էլ քո մարմնից մեծ կին պիտի առնես, բամբակ թխմես ծայրին ու գործածես: Չի կարելի, չէ՞:

Պսակվելիս ուզես թե չուզես պիտի քո կնոջ ջանին մատաղ լինես։ Եթե կինդ մարմնեղ է քեզանից, շատ պիտի մատաղ լինես, եթե փոքր է, քիչ մատաղ լինես։ Կնոջդ չես խնայի, քեզ խնայիր։ Դու կյանքումդ խոմ մեկ անգամ չես պսակվելու։ Եթե ամբողջովին մատաղ լինես առաջին կնոջդ, մյուսներին ինչ կմնա։

Այսպիսի անխնա վերաբերմունք միայն տանը չէ, որ նկատում եմ։ Դրսում էլ է շատ պատահում։

Օրինակ՝ այսօր փողոցով անցնելիս տեսա խոշոր, պարտապանաց, գոմեշի ուժի տեր մի թղթատար, որը կարող էր կես տոննա ծանրություն վերցնել գետնից, երկու նամակ, մի լրագիր առած, դռնեդուռ ընկած՝ հասցեատերերին էր բաժանում։

Ահավասիկ ձեզ մի «կոշիկ», որը հագնելու համար ունեցածդ ողջ բամբակը մեջը պիտի կոխես…

Երանի չէ՞ր, որ վատնումը այս թղթատարով էլ վերջանար։

Ո՛չ, չի վերջանում, նա շարունակվում է ամեն բնագավառում։

Վերցնենք գիրքը։

Ճիշտ թե սխալ, մենք սովորություն ունենք ամեն գրքի մեջ մի միտք տեսնել։

Այնպես, ինչպես ամեն կոշիկի մեջ մի ոտք։

Բայց պատահում են գրքեր, որոնց մեջ ոչ մի միտք չկա։

Այդ գրքերն առնող ընթերցողն ինչքա՞ն բամբակ պիտի ունենա, որ թխմի դրանց մեջ ու կարդա։

Եվ վերջապես մենք բամբակն այլ նպատակների համար ենք մշակում և ոչ սրա-նրա պարապ տեղերը լցնելու։

Ո՛չ, չի կարելի հանդուրժել այս դրությունը։

Ես առաջարկում եմ բոլոր տարածությունները հավաքել-դնել բնակբաժնի տրամադրության տակ, որ նա բաժանում կատարի։

Մինչև օրս տեսե՞լ եք, որ նա բաժանի բնակարան, որտեղ ապրողներն ազատ տեղ ունենան՝ բամբակ թխմելու։

Բնակբաժնի բաշխած բնակարաններն այն չափով են կարված, որ վախենում ես լվանալ՝ «չմտնելու» համար…

Ճշմարտության տեսակները

Աստվա՛ծ, այն օրը, որ ստեղծեցիր Ադամին, ես ասացի՝ Աստված սխալ գործ բռնեց։

Բայց դրանից հետո, երբ անմիջապես ստեղծեցիր նաև Եվային, ասացի՝ լավ էր, Աստվածն իր սխալն ուղղեց։

Թե չէ, հանկարծ, որ մոռանայիր Եվային ստեղծել, գիտես ինչ կլիներ հիմա մեր դրությունը...

Ինչպես թվաբանության մեջ՝ համարիչ և հայտարար, այնպես էլ կյանքի մեջ՝ մարդ ու կին։

Մեկն առանց մյուսի հասկանալի չէ։

Թվաբանության մեջ հայտարարը ցույց է տալիս, թե ամբողջը քանի մասի է բաժանված, իսկ համարիչը՝ թե բաժանվածից քանիսն է վերցնում։

Կյանքի մեջ էլ համարյա նույնն է պատահում. կինը հայտնում է թե քանի հոգուց է բաղկացած, իսկ մարդը վերցնում է նրանից այնքան, ինչքան հարկավոր է իր պետքերին...

Աստվա՛ծ, մարդու կողքին երբ ստեղծեցիր կին, դրանով դու մարդուն տվիր նաև հասկացողություն աշխարհի միակ ճշմարտության մասին։

Եթե կնոջը վերցնենք մեջտեղից, այլևս չենք ունենա մի այնպիսի ճշմարտություն, որ ընդհանուր լինի համայն մարդկության համար։

Վասնզի աշխարհում ինչքան մարդ, այնքան ճշմարտություն։

Եվ որովհետև կենդանի մարդն անվերջ թափառում է, ճշմարտությունն էլ իր հետ ման է ածում։

Մի տեղ տնկված կայուն ճշմարտության ես դեռ կյանքումս չեմ հանդիպել։

Մի ճշմարտություն, որ ստի հրդեհով բռնկվելիս զանգահարես «0-1», և ճշմարտությունը օգնության փութա՝ ազատելու քեզ շրջապատող ստերից...

Աստվա՛ծ, բոլոր օրենքներով դու պիտի համարվեիր միակ և ճշմարիտը ողջ տիեզերքում։

Այդպես է արդյոք։

Ո՛չ։

Հայն ունի իր Արամազդը, հույնը՝ իր Զևսը, Իսրայելն՝ իր Ոսկի հորթը, Եգիպտոսը՝ իր Ապիս ցուլը։

Քեզ պատիվ կբերի՞ նման աստվածների շարքում տեղ բռնել։

Հազար անգամ լավ չէ՞ Աստված չլինել, քան Ապիս ցուլի կողքին կանգնել։

Ցուլ, որ ճանճ քշելու պատրվակով իր երկար պոչով անընդհատ երեսիդ հարվածի...

Աստվա՛ծ, ախր քեզ դավանող ազգերն էլ միասնական չեն։

Կաթոլիկը կրակի վրա այրում է բողոքականին նրա համար, որ իր ձևով չի պաշտում քեզ։ Մահմեդականը ջարդում է քրիստոնյային, որ քեզ «աստված» է ասում և ոչ «ալլահ»։

Եվ մարդիկ այսպես հակասական ճշմարտություններ են դավանում ոչ միայն իրենց հոգևոր կյանքում, այլ նաև մարմնավորում։

Ամեն տարի մայիսի մեկին պառադի են դուրս գալիս անհամար քաղաքական կուսակցություններ, որոնց յուրաքանչյուրի դրոշակների վրա գրված է լինում մի առանձին ճշմարտություն։*

Մեկը ձայնում է՝ պրոլետարնե՛ր բոլոր երկրների, միացե՛ք, մյուսը թե՝ մի՛ միացեք։

Ու խեղճ պրոլետարը չգիտի՝ միանա՞, թե՞ չմիանա։

Չէ՛, Աստված, կենդանի մարդը չի կարող մի ճշմարտություն դավանել ավելի լավ է այդ ճշմարտությունը մեռելներին վերապահել։

Եթե այդպես վարվես, դու կունենաս մի հավիտենական ճշմարտություն։

Դու կարող ես ասել, որ ես կենդանի մարդու համար որպես մշտական ճշմարտություն ստեղծել եմ կնոջը։

Այդ ճիշտ է, Աստվա՛ծ, բայց դա գիշերային ճշմարտություն է։ Մարդիկ խոմ բու կամ չղջիկ չե՞ն, որ միայն գիշերներն ապրեն ու ցերեկը քնեն։

Մարդկանց հարկավոր է նաև ցերեկային ընդհանուր ճշմարտություն, որ առավոտներն արթնանալիս դավանեն և չսկսեն իրար կոտորել։

Բոլորովին տարբեր բնույթի են գիշերային և ցերեկային ճշմարտությունները։

Գիշերը, երբ մարդը իր գրկած կնոջն է դավանում՝ որպես միակ

* Պառադ *(парад)* - ռուս. շքերթ։

ճշմարտության, նա այդ ճշմարտությունը չի ուզենա բռնությամբ բաժանել ուրիշների։ Անգամ խնդրելիս էլ մերժում է։

Բայց նույն մարդն իր ցերեկային ճշմարտությունները սվինի ուժով ուրիշների վզին փաթաթել է կամենում։

Տե՛ր Ամենակարող, այստեղ դու չե՞ս նկատում, որ սրանով դու գցում ես ճշմարտության արժեքն ընդհանրապես մարդկանց աչքում։

Բոլորը կասեն՝ ճշմարտությունը միթե բռնությամբ են հասկացնում։

Կասեն՝ ո՞ւր է ճշմարտության ուժը, երբ նա մարդկանց ուսին հենվելով պիտի քայլի...

Այնպես որ, սիրելի՛ Աստված, այս բոլորը նկատի առ ու եթե մի երկրորդ անգամ աշխարհ ստեղծելու լինես, չսխալվես...

Եթե ցերեկվա համար մի ընդհանուր ճշմարտություն չունես մի՛ հրամայիր «եղիցի՛ լույս»։

«Լույսը» մարդու ինչ՞ն է պետք, երբ մարդը զրկված պիտի լինի մի ընդհանուր ճշմարտությունից...

Համախառն ապրումներ

Բուլանուխցի Մնացը մի մինուճար զավակ ուներ և շատ վաղուց որոշել էր նրան պսակելիս մի լավ քեֆ սարքել։

Յոթ օր, յոթ գիշեր։

Երբ եկավ վերջապես այդ ցանկալի օրը, հարս ու փեսան տուն եկան, և սկսվեց զուռնի տրնգին։ Հարսանիքի երկրորդ օրը հանկարծ փուլ եկավ Մնացի հողաշեն սենյակի մի պատը, և նրա ուրախությունն ու վիշտը խառնվեցին իրար։

Նա չէր կարող ընդհատել հարսանիքը, որովհետև ահագին ծախս էր դրել մեջը, ուստի տաշի՛-տուշի՛ ասելով՝ գնաց քաղաքվետ՝ ճարտարապետ կանչելու։

Ասացին, որ ճարտարապետը ժամը երկուսին կգա, այստեղ չէ։

Տաշի՛-տուշի՛ ասելով՝ Մնացը ետ եկավ և մի փոքր տրնգի պարելուց հետո, տաշի՛-տուշի՛ն բերանում՝ գնաց իմանալու, թե ճարտարապետը երբ պիտի գա տունը տեսնելու։

Ճամփին ոտը մի քարի առավ, գլորվեց՝ տաշին քարի այս կողմը թողնելով, տուշին՝ մյուս։

Վերջում քեֆի կտորտանքներն ի մի հավաքելով՝ տեղ հասավ, բայց ասացին, որ ճարտարապետը վաղը կգա։

Եթե այս ասողներն այն մտքին էին, որ դրանով Մնացին տխրություն պիտի պատճառեն, խորապես սխալվում էին. նա չէր կարող իր ողջ ծախսը ջուրը գցել ու տխրել։

Ուստի՝ տաշի-տուշի։ Թող վաղը գա։

Վաղն էլ չեկավ։ Իսկ երեք պատ ունեցող հարսանքատանը զուռնաչին եղանակը փոխել էր և նվագում էր «Քելե, Սաթո՛, քելե»։

Ինչ հարմար եղանակ քաղսովետ գնալ-գալու համար։

Այս անգամ ճարտարապետը կարող էր չգալ, քանի Սաթոն պիտի «քելեր»։

Հարսանիքի մնացած բոլոր օրերը Մնացը «Քելե, Սաթո՛, քելե»-ով գնաց-եկավ, մինչև վերջապես հարսանիքը վերջացավ։

Երբ հարսանիքը վերջացավ, Մնացի քեֆն էլ վերջացավ, Սաթոն այլևս «չքելեց», ու այնուհետև Մնացը քայլում էր դեպի քաղսովետ մեն-մենակ, առանց Սաթոյի։

Մնացի ուրախությունը կարճ դուրս եկավ. հրճվանքը կանգ առավ, իսկ տխրությունը շարունակվեց շատ երկար, որովհետև նրա սենյակի պատը շարունակվում էր փլված մնալ։

Եթե Մնացը երկու որդի ունենար, նրան էլ կպսակեր ու մի քիչ էլ նրա Սաթոյի հետ «կքելեր», բայց չուներ։

Բայց ի՞նչ կա այս անցավոր աշխարհում հավիտենական։ Ոչի՛նչ։ Այս օրենքով էլ վերջ գտավ քաղսովետի քաշքշուկը, և մի օր վարպետները եկան, նորոգեցին սենյակի փլված պատը։

Բայց ավա՜ղ, այդ այն ժամանակ, երբ արդեն տղայի ամուսնության օրերը վերջացել էին, ու մարդ ու կին զագս էին գնում՝ ապահարզանի։

Ճիշտ է, տխուր բան էր պատահածը, բայց սրանով Մնացը փորձառություն ձեռք բերեց։

Իր տղայի երկրորդ ամուսնանալուն նախ սենյակի պատերն ստուգեց, հետո աշխատեց այնպիսի հարս բերել, որ մի քիչ ավելի մնար։ Այնպես չլիներ, որ հարսանիքը յոթ օր, յոթ գիշեր տևեր, իսկ հարսը իրենց տանը մնար ընդամենը չորս գիշեր…

Իմ հարևանները

Ոչ միայն քարտեզի վրա, այլ մեր տների նեղ բակերում էլ գոյություն ունի սոցիալիզմ և կապիտալիզմ։

Եթե հիշում եք, քառասունվեց թվին Երևանը հեղեղվեց, որի հետևանքով ջուրը սրբեց-տարավ հարևաններին իրարից բաժանող ցանկապատերը, ստեղծվեցին ավելի կարճ ճանապարհներ, և երեք բազմանդամ ընտանիքներ բարվոք համարեցին, փոխելով իրենց հին ճանապարհները, անցնել մեր դռնով այնքան կիպ, որ եթե, Աստված չանի, մի փոքր երկար քիթ ունենայի, զարկվելով նրան՝ մեկն անցնելիս դեպի աջ պիտի թեքեր, մյուսը դառնալիս՝ դեպի ձախ։

Ու զրկվեի ստատիկ քիթ ունենալուց։

Ես թույլ տվեցի այս բանը, որովհետև բնավորությամբ մի փոքր սոցիալիստ եմ. չեմ ուզում մեկին վատություն անել։ Իսկ դրան հակառակ՝ մի հարևան էլ ունեմ՝ ուղղակի նեխած կապիտալիզմ։

Չի ուզում, որ երկուսիս վառարանի ծուխը միևնույն պատի ծխնելույզից դուրս գա։ Ասում է՝ ծխնելույզդ պիտի առանձնացնես։

Ու ես սարսափով մտածում եմ, որ եթե իրոք արքայություն գոյություն ունենար, ես ինչպես պիտի ապրեի այս գարշելի մարդու հետ։

Իսկ ես՝ չէ։ Ուրիշի հավին «քշա՛» ասած չունեմ կյանքումս։

Բայց մի բանից եմ նեղվում։

Իմ երեք հարևաններն առավոտները գործի գնալիս անխտիր «բարի լույս» են ասում ինձ, իրիկունը գործից վերադառնալիս՝ «բարի երեկո», ու դրանց բոլորի բարևն առնելու համար ստիպված եմ ողջ օրն աջ դառնալ, «Աստծու բարին» ասել, ձախ դառնալ «Աստծու բարին» ասել։

Ինքս լուրջ մարդ՝ ստիպված եմ կոմեդիա խաղալ, այն էլ դատարկ դահլիճում...

Բայց սա ամբողջը չէ։ Հարևաններս բոլոր մարդկանց նման մահկանացուներ են։ Անցնում է մոտիցդ մի հարևան, որի միակ սիրելին մեռել է, հետո էլ՝ երկրորդ հարևանդ, որ նույն գիշեր մանչ տղա է ունեցել։

Եթե ես ամեն մեռնողի համար սաստիկ տխրեմ, ախ քաշեմ ու ցավակցություն հայտնեմ, իսկ անմիջապես նրանից հետո խնդա-

կցեմ երեխայի տիրոջը և նրա հետ ուրախանամ, նշանակում է, որ ես մի ճարպիկ դերասան եմ՝ հավիտենապես բեմին մեխված, կուլիս վերադառնալու իրավունքից զրկված։

Չէ՞ որ ես էլ մարդ եմ, ունեմ սեփական ուրախություններ ու տխրություններ, եթե իմ դեմքը հարևաններիս վաճառեմ, ո՞վ կտա իր դեմքը՝ իմ ներքին զգացմունքները արտահայտելու համար։

Լավ է, որ կին չեմ ծնված, այլապես վշտակցելիս հարևաններս արցունք էլ պիտի պահանջեին ինձանից...

Հիմա ձեզ եմ հարցնում, ինչ անեմ։

Այս իրար խաչաձևող բարև, Աստծու բարևները, վշտակցություններն ու խնդակցությունները կարգավորելու համար չբռնեմ մի սվետաֆոր կախեմ դռանս՝ կարմիր ու կանաչ լապտերներով, որ հերթով արտասանեն ու հարևանության մեջ հարաբերությունների «ավարիա»** չպատահի, կամ, ինչպես ասում են, խաթրամնացություն չլինի։*

Գիտե՞ք՝ սա լուրջ հարց է։

Եգիպտոսն էլ մի ժամանակ իմ օրին էր։

Իր նեղ Սուեզի ջրանցքով, Եգիպտոսի քթին կպչելով, անցուդարձ էին անում օտարերկրյա նավեր։ Տարիներ ամբողջ համբերեց Եգիպտոսը և մի օր էլ նեղուցը փակեց։

Փակե՞մ հարևաններիս ճանապարհը։

Վախենում եմ։

Մեկ էլ տեսար բակի Ֆրանսիան ու Անգլիան, նավերը հեծած, եկան ռմբակոծեցին տունս։

Իսկ ես ոչ մի պաշտպան պետություն չունեմ կռնակիս։

Տասնորդական կոտորակ

Այլևս տղամարդկանց մեջ չեմ ուզում ապրել։ Կանա՛յք, եթե ինձ քաղաքական ապաստան տաք, ես կփախչեմ ձեզ մոտ և կմերկացնեմ տղամարդու էությունը ոտից մինչև գլուխ։

Այն ժամանակ միայն կիմանաք՝ ինչ բան է այդ մարդը։

Գառնազգեստ գայլի նման մոտենում է ձեզ, մի երկու խոսք

---

* Սվետաֆոր ***(светофор)*** - ռուս. լուսակիր, լուսանշան։

** Ավարիա ***(авария)*** - ռուս. վթար, պատահար։

սիլի-բիլի և խնդրում է ձեր ձեռքը, հետո պսակվում եք հետը և կարծում եք՝ մի ամբողջական մարդ առաք, մինչդեռ այդ մարդու տասը մասից մեկն էլ չեք առել։

Այսպես՝ ենթադրենք ձեր մարդը ծառայող է, ասենք՝ մի հիմնարկի դիրեկտոր։ Ո՞ր դիրեկտորն իր հիմնարկի բոլոր կանանց զորակոչի չի ենթարկում, երբ բորբոքված է սիրտն իր կրծքի տակ։

Լավագույն դեպքում կեսը պահելով «զապաս»…

Դժբախտաբար ցերեկն էլ ընդամենը տասներկու ժամ է։ Տասնմեկ ժամ կզբաղվի իր սիրածներով, մի ժամ էլ ճաշարանում մի լավ կխմի ու իրիկունը կգա՝ կողքդ պառկելու… կռնակը քեզ դարձրած։

Նման պարագայում կարո՞ղ ես ասել՝ ես մարդ ունեմ։ Ո՛չ, դու տասը տարի էլ մնաս այդ մարդու մոտ, նորից կմնաս օրիորդ և միշտ ազատ պիտի չզգաս քեզ՝ մի նոր մարդ առնելու։

Այս ամուսնության հաշիվն է 1+0։

Դիրեկտորը, կին առնելով, ոչ թե դառնում է նրա սրտի բնակիչը, այլ որովհետև փող ունի, կահավորում է իր կնոջը և գնում ապրելու վարձու սենյակներում։

Հիմա մի րոպե ասենք մարդդ ոչ թե դիրեկտոր է, այլ բաժնի վարիչ կամ քարտուղար։

Ո՞ր բաժնի վարիչն իր բանակում չունի երկու զորակոչված աղջիկ, երկուսն էլ՝ հաշվառված իր զինվորական մատյանում։

Երկու անգամ երկու՝ չորս, չորս էլ ձեռք՝ սա եղավ ութ։ Ութ ժամ ուրեմն հիմնարկում սիրելուց հետո չորս ժամ էլ կմնա քեզ։ Էլի ոչինչ։ Դա էլ մի բան է։ Տասներկուսից հանած ութ նշանակում է՝ դու չորս ժամվա ամուսին ունես։ Այսինքն՝ օրվա մի երրորդը։ Թե կամենում ես մի փոքր ավելի սիրվել, շատ ցածից սկսիր. տեխնիկական ծառայող ընտրիր։ Թեև նա էլ՝ որպես մարդ, մեկը կունենա զբաղվելու։ Այդ ոչինչ։ Էլի մի հինգ ժամ ժամանակ կունենա հետդ զբաղվելու։

Իսկ եթե գիշերն էլ քեզ նվիրի, դու թագուհի ես։

Չկա մի կին, որ քեզ նման երկար սիրվի։

Հիմա, սիրելի՛ կին, գիծ քաշենք քո վերոհիշյալ երեք ամուսինների տակը և հաշվենք, թե յուրաքանչյուրի հետ ամուսնանալով՝ դու քանի՞ տոկոսանի ամուսին կունենաս։

Դիրեկտոր։ Մեկով զրո։ Դա ամուսին չէ. նրան կարող ես չեղյալ

համարել և նորից ամուսնանալ:

Բաժնի վարիչ: Օրվա մեջ միայն չորս ժամ է սիրում քեզ: Քսանչորսը բաժանած չորսի հավասար է վեցի:

Ուրեմն, դու քսանչորսժամանոց, այսինքն՝ մի ամբողջական մարդ ունենալու համար վեց անգամ պիտի ամուսնանաս վեց տարբեր մարդկանց հետ:

Տեխնիկական ծառայողի հետ ես ամուսնանում, պիտի ամուսնանաս յոթ ամբողջ երկու տասնորդական մարդու հետ:

(Ես կոտորակից բան չեմ հասկանում, եթե պատահի, որ մի քիչ ավելի կամ պակաս եմ հաշվել քո ամուսիններին, ներող կլինես):

Հիմա, սիրելի՛ կանայք, դրությունն այսպիսին է մեզ մոտ: Զգիտեմ՝ ձեզ մոտ ինչպես է: Եթե մի կին էլ ձեզանից փախչի և տղամարդկանց մոտ քաղաքական ապաստան խնդրի, գուցե նա էլ պարզի, թե դուք քանի տոկոսով եք ամուսնանում տղամարդկանց հետ:

Եթե պարզվի, որ դուք էլ ամբողջական ամուսիններ չեք, ապա ամուսնանալիս, չոթքը** վերցրած, հաշվի նստեք: Դու քանի տոկոսն ես նվիրում դիմացինիդ, նա քանի տոկոսը: Տարբերություններն իրարից կհանեք, պակասորդը տանից դուրս կփնտրեք:

Որովհետև աստվածային նորման ամբողջական կին ու ամբողջական մարդն է: Աստված առաջին մարդ Ադամին ստեղծելիս կես Եվա չտվեց նրան:

Հետո էլ, երբ Ավետարանը ասում է «եղիցին երկոքեան ի մարմին մի»[137], այդ արդեն ապացույց է, որ ամուսնությունը ամբողջական պիտի լինի:

Սա կոլխոզ մտնել չէ, որ անասունները թաքցնես և մի գոռոտ մոզիով կոլխոզ մտնես:

Մոզիով կմտնես, մոզու արդյունքն էլ կստանաս:

Հիմա, ո՛վ կանայք, բանն այսպես է: Հիմակուհիմա դժվարանում եմ ձեզ մի ամբողջական խորհուրդ տալ: Միայն ասում եմ, որ ամուսնանալիս զգո՛ւշ եղեք: Մեկեն մի հանձնվեք առաջին մոտեցողին:

Ձեր ձեռքը խնդրում են, ոչինչ, տվեք:

Բայց ուրիշ բան չտաք:

** Չոթք- ռուսերեն **счёты** (համրիչ) բառի աղավաղված տարբերակը:

Նորարարական առաջադրանք

Աստվա՛ծ, քեզ մի բան հարցնեմ. ինչո՞ւ դու մարդկանց զույգ-զույգ ծնեցնում ես, մեկ-մեկ հոգին առնում։

Միայն այս տարի մեր Թաղում երեք կին զույգ երեխա ծնեց, երեքն էլ՝ տղա։

Իսկ ոչ մի երկու ծերունի միասին չմեռան։

Այս հարցադրման պատճառը մեր դիմացի փայտահատ Գևոյի մահն էր, որ տեղի ունեցավ այսօր։

Նա իր ողջ կյանքում խիզար էր քաշում միակ ընկերոջ՝ Խաչոյի հետ. այսօր Գևոն մեռավ, Խաչոն մնաց։ Ո՞ւմ հետ սղոցի։

Այս տարիքում Խաչոն կարո՞ղ է իրեն համապատասխան ընկեր ճարել ու աշխատել։

Տարբեր դավանանքի զույգեր, երբ փայտ են կտրում, սղոցն այնպես չեն քաշում, որ երկու կողմում հավասարաչափ թեփ կուտակվի, այլ տաշում են ուրագի պես՝ ամեն ոք իր կողմը լցնելով։

Ի՞նչ խիղճ է իրար գրկում ծերացած երկու ամուսիններից մեկի հոգին առնել, մյուսինը թողնել։

Մի անգամ տեսել եմ, թե ինչպես որսորդը խփեց սպանեց զույգ լողացող բադերից մեկին և ընկերոջը թողեց ջրի երեսին տարտամ լողալու. սիրտս մինչև այսօր էլ ցավում է։ Ո՞ւր մնաց, եթե նրանք բանական արարածներ լինեին։

Երկու գրող, իրար ձուլված, մի երկ են գրում, դու մեկի հոգին առնում ես, մյուսինը թողնում։ Եղմվ։ Չէ՞ որ կես գրողը կես միտք պիտի արտահայտի, այն էլ այն ժամանակ, երբ նրանց ամբողջական միտքը հասկանալն էլ է դժվար։

Առանց Աբիսողոմ աղայի չկա Մանուկ աղա։ Տե՛ր, դու ինչպե՞ս ես նրանց առանձին-առանձին մեռցնում։

Դու, կոլեկտիվ մահացումը սկսելով երկուսից, պիտի ձգտես հասցնել երեքի, որովհետև հանգամանքներ կան, որ դա անհրաժեշտ են դարձնում։

Օրինակ։ Երեք հոգի դուրս են գալիս՝ մի պահեստ կողոպտելու։ Մեկը պատուհանից մտնում է ներս, ապրանքները տալիս է սանդուղքի վրա կանգնողին, սա էլ՝ ցածը կանգնողին։ Է՛, եթե դրանցից միայն մեկի հոգին առնես, երկուսով պահե՞ստ կկողոպտվի։

Հետո հաշվի՛ առ, թե դրանով քո մահվան հրեշտակների թիվը որքանով կկրճատվի:

Ինչ ահագին ճանապարհ չափի, գա մի հոգի առնի, ինչ երկու կամ երեք:

Դու չես կարող մեկեն մի տասը երեխա ծնեցնել, որովհետև արգանդի տարողության խնդիր կա մեջտեղում, բայց դու կարող ես քսանը միասին մեռցնել:

Պատերազմներում հազարներին մի «եղբայրական» դամբարանում են զետեղում:

Ինչո՞ւ մարդկանց մոտ կոլեկտիվ մահն այսքան հեշտ լինի, ինչո՞ւ քեզ համար դժվար:

Վիրավորական էլ է քեզ համար:

Մարդ դու ստեղծես, չկարողանաս ուզածդ չափով նրանց հոգին առնել...

Օգնություն գողերին

Ես միշտ համակրանքով եմ վերաբերվել գողերին: Դրանք երկու չարյաց փոքրագույնն են:

Լա՞վ կլիներ, եթե գողերն ավազակ դառնային ու քեզ սպանելուց հետո միայն կողոպտեին:

Հազար անգամ շնորհակալություն չե՞ս հայտնում գողին, երախտապարտ չե՞ս զգում քեզ, որ առանց քեզ սպանելու՝ միայն կողոպտում է՝ առանց թեթևագույն ցավ անգամ պատճառելու քեզ: Գնում ես տուն, բավական ժամանակ անց նոր միայն մի փոքր ցավում ես կորուստիդ վրա և հետո մոռանում:

Եթե բժիշկն էլ այսպես անցավ վիրահատեր, ես անվերջ կուզենայի նրա դանակի տակ պառկել...

Ես իմ համակրանքն ու մարդավարությունը ցույց եմ տվել ոչ միայն խոսքով, այլև գործով:

Մի անգամ շուկայում մի գող գրպանիցս հանեց թաշկինակս: Մի կեղտոտ թաշկինակ, որ մոռացել էի լվանալ տալու:

Անմիջապես հասա, հազար ներողություն խնդրեցի գողից իմ կեղտոտ թաշկինակի համար, առա ձեռքից, որ լվանալուց հետո նոր հանձնեմ...

Մի քանի անգամ ձեռքերը խոթել են դատարկ գրպաններս, և ես ամոթով եմ մնացել նրանց առջև։

Իսկ ուրիշները։ Օ՜, վերին աստիճանի անգութ։ Կարծես ավազակների հետ գործ ունեն։

Մի փոքրիկ ոսկի ժամացույցի, մի մատանու համար այնքան են ծեծում խեղճերին, թքում, մրում, որ մարդ չի կարող չխղճալ։

Գողերի վիճակը բարելավվեց այն ժամանակ միայն, երբ դուրս եկան հասարակական կարգ պահպանող դրուժիններիկները։

Սրանց հայտնվելուց հետո վերջապես գողերն ազատվեցին անգութ քաղաքացիների ձեռքից։

Հիմա քաղաքացին մատ չի կարող պարզել նրան. դրուժիններիկները ձերբակալելու պատրվակով ազատում են գողին, տանում հեռվում... բաց թողնում։

Հաջող որս փայտե հրացանով[138]

Սենյակիս պատուհանը նայում է այն ընդարձակ բակի վրա, որի չորս կողմը բարձանում են նորակառույց շենքեր։

Օրվա որ ժամին նայեմ՝ բակում տեսնում եմ քսանի մոտ, լոլոզ հասակով մի տղայի՝ ողջ օրը աղավնիների ետևից ընկած, կամ անգործ պատերի տակ թափառելիս։

Ինչ հասարակական խիղճ ունեցող մարդ կարող է հանդուրժել այս տեսարանը։

Երիտասարդ, առողջ մարդ, սակայն չի աշխատում։

Ամեն անգամ, երբ աչքս ընկնում էր այդ տղային, զզվանքիցս ու զայրույթիցս չէի իմանում՝ ինչ անեմ։

Ասում եմ. «Մինչ ե՞րբ արյունս պիտի պղտորեմ այս անպետքի համար։ Քանի ողջ եմ, ուրեմն պիտի տառապե՞մ։ Եվ այդ ո՞ր հանցանքիս համար»։

Մտածեցի, մտածեցի ու մի օր այդ տղայի մոտ գնացի։ Ասում եմ.

- Ա՜յ տղա, որտե՞ղ ես աշխատում։

- Ոչ մի տեղ,- ասում է։

- Որտե՞ղ ես սովորում։

- Չեմ սովորում։

- Ո՞վ է քեզ կերակրում։

- Քո ինչ գործն է:

- Ճիշտ է,- ասում եմ,- դա իմ գործը չէ, բայց ես պատիվ ունեմ հայտնելու քեզ հետևյալը:

Սրանից չորս օր առաջ գողերը կտրեցին տունս և տարան քսանհինգ հազար ռուբլու ապրանք: Որովհետև գողը չհայտնաբերվեց, այդ պատճառով միլիցիան ինձ ասաց.

- Ում կասկածում ես, ասա՛, ձերբակալենք:- Հիմա, այդ գողը պետք է լինի քեզ նման պորտաբույծ, իհարկե, ու ես քեզ եմ կասկածում: Տեղումդ անշարժ կկանգնես, մինչև ես գնամ, միլիցիա կանչեմ:

Տղան գունատվեց:

- Ես... ես... ես... ես...

- Այո՛, դու, դու, դու, դու, այդտեղ կանգնած ինձ կսպասես, մինչև միլիցիայի գալը:

Ասացի ու հեռացա շտապ, որպես թե միլիցիայի եմ գնում: Քիչ անց աչքիս ճոթով կամա՛ց ետևս նայեցի՝ տեսնելու համար՝ ինչ է անում տղան:

Տեսա՝ չկա: Ես ճանապարհս փոխեցի և շենքերի ետևից տունս վերադարձա՝ սպասելով արածիս հետևանքներին:

Առաջին օրը պատուհանիցս նայում եմ՝ տղան չկա, աղավնիներին կուտ է տալիս մի փոքրիկ երեխա: Երկրորդ օրը նայում եմ, տղան չի երևում: Նայում եմ երրորդ, չորրորդ և մնացյալ օրերին, չկա ու չկա...

- Ա՜,- ասացի,- ուրեմն դատարկ ռումբս պայթել է՝ օդ հանելով մի պորտաբույծի:

Բակը մաքրված էր, կարող էի ազատ նայել դուրս՝ առանց զայրույթի և սրտնեղության:

Հետո, շատ հետո միայն տեսա նրան կայարանի մոտի շենքերից մեկում. պատգարակով ավազ էր կրում:

Այնպես անցա մոտով, որ ինձ չտեսներ: Որ տեսներ, պիտի սուտս բռներ...

Տեսա՞ք՝ ինչ արեցի ես: Իմ այս մեթոդով կարելի է մաքրել փողոցի բոլոր անգործներին:

Կմնան հիմնարկների անգործները: Հիմնարկի այն դիրեկտորները և կոլխոզի նախագահները, որոնք իրենց պլանը չեն կատարում:

Այդ մասին էլ դուք մտածեք։

Դրանք միլիցիայից չեն վախենում, դրանց ներսից պիտի պայթեցնել…

Ջրից՝ ջրհեղեղ[139]

Ես կարծում էի՝ միայն բնակարան ստանալն է դժվար ու չգիտեի, որ այն փոխելն էլ ավելի դժվար է։ Թեկուզ երկու սենյակը մեկի հետ։

Այո՛, ստիպված եմ իմ երկու սենյակները փոխանակել մեկի հետ, որովհետև իմ վերևի ապրողն օր չի տալիս ինձ։

Մի ջաթկռանցի է, գյուղից եկել է քաղաք ու իր՝ կին ծեծելու սովորությունը բերել է իր հետ՝ առանց իմանալու, որ քաղաքում կանայք են ծեծում իրենց տղամարդկանց։

Տեսարանն ահռելի է, սիրտ պիտի, որ դիմանա։

Մի անգամ ես, իմ արևելյան հարևանը, արևմտյանը, հյուսիսայինն ու հարավայինը միացանք ու վեր բարձրացանք՝ կնոջն ազատելու կատաղած մարդու ձեռքից, բայց ի զարմանս ազատարարներիս՝ կինն արգելեց մեզ միջամտել իր ներքին գործերին։

- Ինչ է,- ասում ենք,- սա էլ Կիպրոսի պրեզիդենտ Մակարիոսը դարձավ մեր գլխին, որ մերժում է արտաքին միջամտությունը։ Դե հոգիդ դուրս գա, թո՛ղ ջարդի։ Մակարիոսը ՄԱԿ-ի զինվորների վրա է դրել իր հույսը, դո՞ւ ինչի վրա ես դրել։

Ու ցած իջանք։

Ցած իջանք, բայց չենք հանգստանում։ Մենք էլ խոմ մեծ պետություններ չենք, որ հանգիստ սրտով կանգնենք նայենք, թե ինչպես է թուրքը կոտորում հայերին։

Որոշեցի փոխել սենյակս և օրս ռեկլամ-բյուրոյում եմ մթնացնում՝ հարմար փոխանակող գտնելու համար։

Մեկը կար։ Այսօր գնացի սենյակը տեսնելու և նախքան սենյակի հարմարությունը նայելը հարցրի.

- Ինչպիսի՞ մարդիկ են վերի հարկումդ ապրողները։

Մարդը, փոխանակ պատասխանելու, հարցական ինձ էր նայում՝ մոտավորապես իմանալու համար, թե ես ինչ տեսակ մարդ կուզեմ, որ լինեն, որպեսզի ըստ այնմ պատասխանի։ Ճիշտ այնպես, ինչպես

պղպեղ ծախողներն են անում իրենց պղպեղը ծախելու ժամանակ։

Ասացի.

- Ես ուրախ, կյանքի աղմուկը սիրող մարդ եմ, ուզում եմ հարևանություն անել ուտող-խմող, զարկող-ջարդող մարդկանց հետ։

- Իսկը քո ուզած մարդիկ են վերևի ապրողները։ Մարդն ինչ-որ գրող է, կինը՝ չափազանց շռայլ ապրող։ Ուզում է, որ մարդը ծավալուն վեպ գրի, մարդն էլ չի ուզում, և անվերջ կռվի մեջ են։ Էս է ժամը հինգն է, կինը աշխատանքից գալու է, ու սկսեն։ Կա՛ց, քո ականջով լսի՛ր, որ համոզվես։

Եվ իրոք վերևում զանգի ձայն հնչեց, և ներս եկավ կտկտան ոտներով մեկը, մոտեցավ մարդու գրասեղանին, ինչ-որ տետրակ թերթեց ու բղավեց.

- Ա՜յ մարդ, այդ ի՞նչ ես անում։ Ութ ժամվա մեջ չորս երեսնի։ Եվ դու ընտանիքդ ընդամենը չորս երեսո՞վ պիտի պահես։ Ի՞նչ ես արել ողջ օրը… Ա՜, գրիչդ ես կրծել, կա՛ց, ես մի պողպատի գրիչ տամ քեզ, որ այլևս չկարողանաս կրծել։

Մարդը շատ հանգիստ տոնով սկսեց.

- Էմմա՛ ջան, քաղաքակիրթ մարդկությունը իր կենցաղում ամեն ինչ աշխատում է փոքրացնել։ Նախկինում ժամացույցներն էշի նալեր էին, իսկ հիմա, նայի՛ր թևիդ. կարծես կոճակ լինի։ Երբ մեծն էլ, փոքրն էլ նույն ժամն են ցույց տալիս, ինչո՞ւ պիտի փոքրը չնախընտրել։ Ամուսնանալիս ես կարող էի մի շատ երկար ու հաղթանդամ կին վերցնել, այդ իմ իրավունքն էր, բայց ես վերցրի քեզ՝ մտածելով, որ փոքրն էլ մեծի գործը տեսնում է։ Դու տեսնե՞լ ես թանգարանում պարսից ժամանակվա երկար հրացանները։ Կամաց-կամաց կարճացան հրացաններն ու դարձան կարաբին։ Երբ կարճով էլ կարելի է մարդ սպանել, երկարն ինչի՞ս է։ Այսպես է նաև գրականությունը։ Երբ գրողը կարող է իր ասելիքը քսան էջում վերջացնել, ինչ կարիք կա ինը հարյուր էջ գրել։

Կինը ճչաց.

- Ինչո՞ւ ես մտքերդ կարճ ճանապարհով ընթերցողին հասցնում, թո՛ղ երկար թափառի վեպիդ մեջ, որ միտք գտնելիս ուրախանա, ինչպես անապատի քարավանը օազիսի հանդիպելիս։

- Ո՞ւր պտտեցնեմ, ա՛յ կնիկ,- ասաց մարդը։

- Տեղ չկա։ Դու քեզ համարում ես ռեալիստ գրող, բայց հե-

բոսդ, ընդամենը երկու անգամ բնակբաժին գնալով, երեք սենյակ է ստանում։ Սա ռեալիզմ է։ Եթե դու ինը տարի տանես-բերես, իննհարյուր էջանոց վեպդ պատրաստ է։ Երկրորդ հատորն ես ուզում գրել, հերոսիդ մի որևէ գործով դատարան գցի՛ր, թող անվերջ գնա-գա, վեպդ հաստացնի։ Այս տարի դու տեսար՝ ինչ ձմեռ արեց։ Մի օր արևի երես չտեսանք։ Իսկ մարտ ամիսն էլ օրական տասն անգամ իր կերպարանքը փոխեց։ Անվերջ արևը մտավ ամպի տակ ու դուրս եկավ։ Իսկ դու վեպիդ ամբողջ ընթացքին միայն պայծառ արև ես ցոլացրել և միսդ ներկայացրել ես ընթերցողին առանց ոսկորի։ Արևը տասն անգամ է մտնում ամպի տակ, դուրս գալիս, դու քսան անգամ մտցրո՛ւ, դո՛ւրս բեր։ Խոմ այստեղ էլ օբեխեսե[140] չկա՞, որ գրածդ ստուգի։

Ասաց ու սկսեց աղիողորմ լաց լինել։

Ինչպես երևաց, ամուսինը շատ էր սիրում կնոջը։ Մոտեցավ, գրկեց ու ասաց.

- Էմմա՛ ջան, լավ, լաց մի՛ լինի։ Ես մտադիր էի հերոսիս ամուսնացնել իր նշանածի հետ և վեպը վերջացնել. հիմա նրան մարդ սպանել կտամ և ցմահ բանտարկության կդատապարտեմ։ Բայց չեմ թույլ տա, որ նշանածը նրանից ձեռք քաշի ու գնա ուրիշի հետ ամուսնանա։ Ես հույս կներշնչեմ նրան, որ ցմահից հետո կվերադառնա, և նրանք կհասնեն իրենց նպատակին։ Մեկ-մեկ էլ մարդուն երազով իր մոտ կբերեմ, թող մխիթարվի։

- Հավատամ,- ասաց կինը։

- Հավատա։

Կինը փաթաթվեց ամուսնուն ու ասաց.

- Ամեն օր փողային նվագախմբով խնջույք պիտի սարքեմ։

- Սարքի՛ր,- ասաց ամուսինը, ու լռություն տիրեց։

- Տեսա՞ր,- ասաց սենյակի տերը,- ուրեմն, ամեն օր քեզ համար համերգ կլինի։ Հը՞։ Ինչ ես ասում, կփոխե՞ս սենյակներդ։

Ես առանց պատասխանելու դուրս եկա, գնացի։

Երբ տուն եկա, կնոջս պատմեցի, ինձ հանդիմանեց։

- Ինչ իրավունքով եք,- ասում է,- ուրիշի ինտիմ խոսակցությունը լսել։

- Եթե կարելի լիներ չլսել, մենք ինչո՞ւ մեր երկու սենյակները կփոխանակեինք մեկի հետ,- ասացի ու ավելացրի,- այսքան

փնտրելուց հետո ես գալիս եմ այն եզրակացության, որ մարդ տասը սենյակ է ունենալու, որ անվերջ փոխանակելով՝ վերջում գեթ մի սենյակ մնա ապրելու։

- Ա՜խ, կանա՛յք, կանա՛յք,- ասում եմ վերջում,- եթե դուք չլինեիք, ջաթկռանցին ծեծելու բան չէր ունենա, գրողն էլ մեծ վեպ գրելով ընթերցողի տունը չէր քանդի այսպես։ Քանի կինը կա, մեզ պրծում չկա, անվերջ ջրից պիտի դուրս գանք, ընկնենք ջրհեղեղ…

Վերջ վաշխառությանը[141]

Դարեր շարունակ մարդկությունն ատամ է կրճտացրել վաշխառության վրա, որը՝ իբրև անբուժելի ախտ, կպել է մարդուն ու պոկ չի գալիս։

Բայց թե մարդկության ատամն էլ այնքան երկար չէր, որ դիմանար։ Ատամը մաշվեց, իսկ ախտը շարունակում է իր գոյությունը մինչև մեր օրերը։

Մեզանում, պետք է ասել, մասամբ վերացել է այդ անպատիվ արհեստը, բայց ոչ բոլորովին։ Կան մնացուկներ, որոնք քունջ ու պուճախներում զբաղվում են վայրուտային գործարքներով, ոսկի, դոլար, զարդեղեն և այլն։

Ո՞վ կարող էր երևակայել, սակայն, թե ի վերջո այդ ախտը երկրի երեսից վերացնելու պատիվը պիտի պատկաներ մեր շինարարական մինիստրին…

Այո՛։ Մինիստրությունն այնպիսի մի հնարքով վերացրեց այդ բանը, որ մարդու հիացմունքն է շարժում։

Այդ նպատակով հատուկ մի թաղամաս կառուցեց Զանգվի աջ ափին այնպես, որ փողոցներ չունենա, իսկ եղածներն էլ՝ անուն չունենան։ Տներն այնպես խառնիխուռն շաղ տվեց տափաստանի վրա, ինչպես անվարժ սերմնացանը իր արտն է ցանում։ Ո՛չ շենքերը համարներ ունեն, ո՛չ բնակարանները՝ բնակիչների անվանացուցակ՝ պատին փակցված։

Մի խոսքով՝ արել է այնպես, որ այնտեղ ապրողների հասցեն պետական գաղտնիք մնա, և ոչ մի այցելու իր ծանոթի տունը չկարողանա հայտնաբերել։

Կատարյալ թաքստոց։

Լարել է թակարդը և բնակիչներին հրահանգել, որ վաշխառուներից փողերն առնեն ու ապաստանեն «Աջափ»:

Բնակիչները, վարվելով համաձայն հրահանգի, մեծ վաշխ խոստանալով, կողոպտեցին քաղաքի բոլոր վաշխառուներին:

Վերջիններս, մի տարի սպասելով, բնական է, որ պիտի սկսեն որոնել իրենց պարտապաններին: Է՛, Աջափնյակում պարտապա՞ն կգտնվի: Մի թաղամաս, որ հաճախ թաքնվում է «Ջերեմուշկա» անվան տակ:

Ջերեմուշկա են հարցնում, ասում են՝ այստեղ Աջափնյակ է, Աջափնյակ են հարցնում, ասում են՝ Ջերեմուշկա: Դե արի գլուխ հանիր:

Այս մեթոդը իր ցանկալի արդյունքը տվեց, ու վաշխառուներն իսպառ վերացան Երևանից:

Այս բոլորը շատ լավ, միայն ցանկալի էր մինիստրությունն աներ այնպես, որ այս թաղամասում ապրողները միայն օգտվեին և չվնասվեին:

Մինչդեռ որոշ հարցերում նաև տուժում են:

Օրինակ՝ երբ շտապօգնություն են կանչում իրենց հիվանդների համար, բժիշկները մինչև տունը գտնում են, հիվանդը կա՛մ մեռած է լինում, կա՛մ առողջացած:

Ես երկար եմ մտածել այս մասին և գտել եմ հետևյալ միջոցը: Պետք է հիվանդի դռնից մի թել կապել մինչև բուժարանը, որ բժիշկը թելը բռնի ու գա:

Կամ ճանապարհին հարդ ցանել:

Այսինքն՝ այն, ինչ անում են մարդիկ Եգիպտոսի բուրգերը մտնելիս…

Բայց բնակչության դժվարությունը սրանով էլ չի վերջանում:

Այսպես՝ բնակիչներից մի կին գաղթի ժամանակ կորցրել էր իր երկու որդիներին և լուր է ստանում, որ նրանք այս րոպեիս Ամերիկայում են գտնվում:

Լսելով այս մասին՝ որդեկորույս մայրն անմիջապես նամակ է ուղարկում, որ գան իրեն գտնեն:

Իր նամակում գրում է. «Սիրելի՛ զավակներ, գրությունս ստանալուն պես կմեկնեք Երևան: Նայած եղանակին և ժամանակին՝ իմ ապրած թաղամասը կոչվում է Աջափնյակ կամ Ջերեմուշկա: Զգո՛ւյշ

կացեք՝ սեմուշկայի հետ չշփոթեք։*

Կամուրջը որ կանցնեք, կթեքվեք աջ, այնտեղ մի կոտրված ավտո է կանգնած՝ առջևի երկու անիվները հանած, կանցնեք, մի քիչ կգնաք, կթեքվեք ձախ, որտեղ մի կաթի կրպակ է կառուցված, բայց չի աշխատում։ Կգնաք ուղիղ, ձեր առաջ ցցված կլինեն երկու խոշոր ծառեր, կանցնեք ու կթեքվեք նորից դեպի աջ, այնտեղ, ձմեռներն արևկող պատի տակ նստած, համրիչ է քաշում մի ծերունի։ Այդ ծերունու դիմացի տանն ապրում եմ ես»։

Ինչ եք կարծում, ընկեր մինիստր, այս հասցեով եթե գան պառավի որդիները, իրենց մորը կգտնեն։

Հազիվ թե։ Ամենայն հավանականությամբ կընկնեն տների արանքում, կփնտրեն ու մեկը մյուսին ձայն տալով՝ կասեն.

- Պողո՛ս, գտա՞ր։

- Չէ՛։

- Պետրո՛ս, գտա՞ր։

- Չէ՛։

- Վա՛յ, վա՛յ, վո՛ւյ, վո՛ւյ...

Եթե իհարկե նրանց անունը Պողոս-Պետրոս կլինի։

Համենայն դեպս, մինիստրության նախաձեռնությունը խրախուսելի է։ Շատ պետք է շինվեն նման թաղամասեր։ Անվան մասին չարժե մտահոգվել։ Եթե կամենում է «Աջափնյա» ձևը պահպանել, կարող է գետի աջ ու ձախ կողմերին անվերջ շինել մինչև Սևան։

*Իսկ եթե «Չերեմուշկա» ձևից կամենա օգտվել, ռուսերեն անունները համարյա «ուշկա»-ով են վերջանում, ինչպես՝ սեմուշկա, ակուշկա, լյագուշկա** և այլն։*

Անունը հեչ։ Միայն հասցեն չիմացվի...

Սինթետիկ երեխա

Այն երկու ամուսինները, որոնց մասին ես պիտի պատմեմ հիմա, ապրում էին իրար հետ շատ սիրով։

Եվ երկար ժամանակ։

Մի օր մի գիրք կարդացին միասին, որտեղ գրված էր. «Միշտ

---

* Սեմուշկա- ռուս. ***семечки*** (արևածաղկի սերմեր) բառի աղավաղված ձևը։

** Լյագուշկա ***(лягушка)*** - ռուս. գորտ։

միևնույն բանը տեսնելը հավասար է ոչինչ չտեսնելուն, միշտ միևնույն բանը լսելը հավասար է ոչինչ չլսելուն»:

Կարդացին ու հարցական նայեցին իրարու:

Ու համարյա երկուսը միասին արտասանեցին զղջաձայն.

- Իսկ մենք հիմարաբար որքա՜ն ժամանակ է նայում ենք իրար...

Այդ օրվանից նրանք այլևս իրար չտեսան: Մարդը դրսում անմիջապես երեք կանանց հետ ծանոթացավ, կինն էլ քանի ընթացիկ գործեր կային, սպասում էր վերջացնել, նոր այդ գործով զբաղվել:

Մարդը դրսում ման էր գալիս իր երեք կանանց հետ, բայց ամաչում էր սեր խնդրել. նա մտադրվեց սերը հասունացնել տանը նստած, հեռախոսով, երբ մարդիկ համեմատաբար ավելի անամոթ են լինում:

Նրա առաջին սիրածը պետք է որ երկարահասակ մեկը լիներ, որովհետև ամեն անգամ խոսելիս նրա չինար բոյին էր մեռնում. երկրորդը, ընդհակառակը, կարճահասակ էր, խոսելու տոնից այդպես էր երևում, բայց այդ արգելք չէր, որ նրան երկտակ պլուլեր իր երկար սիրո մեջ: Երրորդ կնոջ կարապի վիզն էր մարդուն խելքահան արել:

Ամեն երեկո, երբ տուն էր գալիս մեզ ծանոթ կնոջ ամուսինը և սկսում էր մշակել իր սիրուհիներին, նրա կինը երկյուղածությամբ դիտում էր իր մարդու գործարքը և գնալով ավելի ու ավելի էր համոզվում գրքում կարդացածին: Նա տեսնում էր, որ իր մարդը կողքին նստած իր հարազատ կնոջը չէր տեսնում, բայց հեռավոր, մի երկու անգամ տեսած կանանց տեսնում էր:

Ու այստեղ կատարվեց մի զարմանալի հրաշք:

Կինը, որի անունը, մոռացա ասել, Աշխեն էր, երբ ակնապիշ նայում էր հեռախոսի մոտ նստած իր մարդուն, զմայլանքից ինքզինքը կորցնում էր:

Մարդու՝ երբեմնի միապաղաղ, անկենդան դեմքը նրան ներկայանում էր որպես երեք տարբեր դեմքեր՝ մեկը մյուսից կենդանի, մեկը մյուսից արտահայտիչ ու առանձին-առանձին գեղեցիկ: Երեք սիրած, երեք դեմք:

Կարծես նախկին կտավ երեսի վրա երեք չնաշխարհիկ առնական պատկեր նկարվեր:

Ու սիրեց մարդու այդ երեք կերպարանքն էլ հավասար բուռն սիրով:

Նա տեսավ իր մարդուն։

Ու այնուհետև, երբ Աշխենի ամուսինը, ամբողջովին աշխարհից վերացած, երազկոտ աչքերով, ամբողջովին տարված խոսում էր իր սիրուհիների հետ, կինը ինքզինքը խելահեղ գցում էր ամուսնու գիրկը՝ որպես բոլորովին օտարի։

Եվ մարդը, տարփանքի բոցերում բռնված, չէր զգում անգամ, որ իր կրծքին ինչ-որ էակ կա կպած։

Առաջին սիրուհու չինար բոյին մեռնելիս անզգայաբար իր կնոջն էր կրծքին սեղմում, կարճին մեռնելիս՝ էլի նույն կնոջը սեղմում, երրորդին՝ էլի այնպես։

Եվ Աշխենը վարժ մարմնամարզիկի նման մարդուն իր երազանքից չարթնացնելու համար ձգվում-երկարում, կծկվում-կարճանում ու կարապի վիզ էր ընդունում։

Եվ որովհետև ամեն անգամ հեռախոսի փողը ցած թողնելիս էլի սովորական կտավ դեմքն էր ցույց տալիս Աշխենին, այդ պատճառով ստիպում, աղաչում, պաղատում էր մարդուն, որ շարունակի խոսել սիրուհիների հետ։

Այդ օրվանից Աշխենի երջանկությանը սահման չկար։ Առաջ, որ մի կնոջ սեր չէր վայելում, հանկարծ սկսեց վայելել երեք կնոջ սերը միանգամից։ Ինչ անենք, որ մարդը շարունակում էր իրեն չտեսնել։ Խնդիրը խոսքը չէ, այլ գործը։ Նա գիտեր, որ բազմաթիվ ամուսիններ խոսքով սիրում են իրենց օրինական կանանց, բայց գործով՝ այլ կանանց։ Իսկ իր ամուսինը, դրան բոլորովին հակառակ, խոսքով սիրում է իր սիրուհիներին, իսկ գործով՝ իրեն։

Այսպես անցավ ինն ամիս և ինն օր։

Մի օր էլ, երբ սովորականի պես մարդը գործից վերադարձած իր տան դուռը բացեց, լսեց մի նորածին երեխայի սուր լացի ձայն։

Զարմացավ սաստիկ, որովհետև իր կինը ամուլ էր և իր ամուսնության երկար տարիներին երեխա չէր ունեցել։

- Կնի՛կ, այս երեխան ո՞ւմն է,- հարցրեց։
- Այդ երեխան իմ ու քո երեխան է։
- Ինչո՞ւ մինչև օրս չէիր բերում։
- Որովհետև ես նոր սկսեցի քեզ սիրել։
- Երեխա ունենում են միայն սիրածից։
- Այո՛։

- Եթե այո, ուրեմն այս ծնունդը թյուրիմացության արդյունք է, որովհետև ես քեզ չեմ սիրում:

Այս մասին երկար վեճ ծագեց իրենց մեջ, տվին, առան, բայց մարդը կարճ կապեց.

- Այս երեխան,- ասաց,- իմ երեք սիրուհիներից է, որին թյուրիմացությամբ դու ծնել ես: Սիրո օրենքով դու ոչ թե նրա մայրը, այլ միայն ստնտուն կարող ես կոչվել:

Այս ասելով՝ մոտեցավ երեխայի բարուրին, գրկեց այն ու կրծքին սեղմելով՝ բացականչեց.

- Երեք կնոջից ծնված իմ սինթետիկ զավակս...

Մեքենայի վնասները

Որևէ դժվարություն մինչև որ մեկն իր անձի վրա չփորձի, չի հասկանա, թե ինչ բան է դա:

Որ ասում էին, թե արտասահմանում արդյունաբերության զարգացման հետևանքով մեքենան բանվորի գործը կատարում է, և բանվորը դուրս է շպրտվում գործարանից, ինձ վրա երբեք չէր ազդում:

Բայց հիմա, որ ես նույն բախտին արժանացա, ու մեքենան ինձ շպրտեց փողոց, նոր միայն հասկացա, թե ինչ չարիք է եղել այդ մեքենան:

Ֆրանսիայում տեքստիլագործները ջարդ ու փշուր արեցին առաջին մեքենան ու գործարանը հրդեհեցին, չէ:

Իմ դեպքը պատմում եմ սկզբից:

Մի ընկեր ունեի, խելք չուներ, բայց հրաշալի լեզու ուներ բերանում: Ասում եմ.

- Ա՛յ տղա, արի պրոպագանդիստ դարձիր, այդ լեզուն, որ դու ունես, սուտն էլ ճշմարտություն կդարձնի:

Լսեց ինձ: Վերցրեց գրականություն և ամբողջովին ցիտատներից մի դասախոսություն կազմեց, որ մինչև իր կյանքի վերջը կարդա: Կարդում էր սահուն և անսխալ: Բայց բոլոր կարդացողները զգում են, որ կարդալը այն չէ, ինչ խոսելը: Պատահել է դեպք, երբ կարդացողը չի նկատել երկար ժամանակ, թե ինքը դատարկ դահլիճում է կարդում չորս պատերի համար: Իսկ երբ խոսում է՝ աչքը

հանդիսականին, վերջիններս չեն մեկնում, բայց քնում են։ Մի բան, որ մեկնելու հետ համեմատած՝ պլյուս է։

Դամբանախոսները մինչև անգամ մեռելի վրա են խոսում...

Ընկերս սկսեց գրածն անգիր արտասանել։ Բայց միշտ սխալվում էր և ունկնդիրներին, փոխանակ երջանկության ճանապարհը ցույց տալու, դժբախտության ճանապարհն էր ցույց տալիս։

Այս տեսնելով՝ ասացի.

- Ա՛յ տղա, արի հաստիքով ինձ վերցրու քեզ հուշարար, որ նման բաներ չպատահեն։

Վերցրեց։ Եվ ես, տարիներ ամբողջ նրա ետևը նստած, հուշեցի։

Մի օր էլ տեսնեմ՝ առանց իմ օգնության տեքստն անգիր արտասանում է ստորակետի ճշտությամբ։ Զգացի, որ դրությունս լուրջ է, մեքենան եկավ ինձ գործարանից դուրս շպրտելու։

Եվ այնպես էլ շպրտվեցի։

Հիմա ես հիշում եմ ֆրանսիական տեքստիլագործներին և ցավում եմ նրանց անհաջողության համար։

Այո՛, պետք էր ջարդել բոլոր մեքենաները...

Նոր տարի

Երևան տանող ճանապարհի վրա կար մի աննշան սափրատուն։

Սափրիչը, որ դռանը նստած հաճախորդի էր սպասում, տեսավ հեռվից գալիս է մազ ու մորուքի մեջ կորած մի ծերունի՝ ձեռքի փայտին հենված, ուժասպառ, հազիվ քայլելով։

Սափրիչը, հանձին այդ ծերունու մի հուսալի հաճախորդ տեսնելով, ընդառաջեց նրան և ասաց.

- Բիձա՛ ջան, հոգնած ես երևում, եկ խանութս նստիր, մի փոքր հանգստացիր։

Երբ գնաց՝ սափրիչը նստեցրեց նրան հայելու առջև, սրբիչներ փռեց առջևն ու ետևը և մկրատն ու սանրն առած մոտեցավ նրա մորուքին։

- Օ՜, այդ ինչ ես անում, ես ձմեռ պապին եմ, ահագին թանկ գնով մորուք եմ առել, կպցրել կզակիս՝ դու ուզում ես խուզե՞լ,- ասաց ծերունին։

- Անգամ եթե ձմեռ պապին լինես, մազերդ շատ են։ Այդ տես-

քով ներկայանաս՝ փոքրիկների լեղիները կճաքեն։ Սանկ մի՛ փոքր առնեմ։

- Եվ ի՞նչ կարժենա դա։

- Մարդուն նայած, մի ռուբլուց մինչև հինգ ռուբլի։

Ծերունին առջևը կախված սակագնին նայեց ու ասաց.

- Իսկ այստեղ՝ սակագնում կոպեկներ են։

- Դրան մի՛ նայիր, դա սակագին չէ։ Խանութի պատը ծակ է, կպցրել եմ, որ քամին չվազի։ Վաղը ռեմոնտ արեցի՝ կպոկեմ դեն կգցեմ։

- Ես այդքան փող չունեմ։ Եթե կսպասես մյուս տարվան, մի փոքր «առ»։

- Մյուս տարի եկա՛ր, չեկա՛ր։

- Ա՛յ մարդ, ի՞նչ ես ասում, կարո՞ղ է լինել տարի, որ Նոր տարին չգա։

Այն ժամանակ սափրիչն արձակեց սրբիչները, սանրն ու մկրատը տեղները դրեց ու ասաց.

- Ոչինչ, այնքան էլ սարսափելի չես, այդպես էլ ներկայացիր։

Ծերունին ասաց.

- Ես արդեն վաթսունհինգ տարեկան եմ և եկող տարի անցնելու եմ թոշակի, եթե մորուքս քեզ հանձնեմ լավ գնով, կծախե՞ս…

- Ո՞ւմ ծախեմ։

- Էջմիածնի վարդապետները չե՞ն առնի։

- Էջմիածնի վարդապետներն օրական երկու անգամ են սափրվում։ Բրդի պահեստը տար։

Գնաց ծերունին դեպի քաղաք և Երևանը տեսնելով կարտոֆիլի մեջ կորած՝ հարցրեց մի անցորդի.

- Ժողովրդի ո՞ր մեղքի համար է Աստված պատժել՝ խեղդելով նրան կարտոֆիլի մեջ։

- Սրանք, պապի՛,- պատասխանեց մարդը,- այն կարտոֆիլներն են, որ Խրուշչովը նախատեսել էր արտահանելու։ Չարտահանեցին, հիմա թափել են ժողովրդի գլխին, թե՝ պիտի ուտեք։

- Զարմանք բան… Ուրեմն, եթե վաղը մյուս օրը կարագը չուզենան արտահանել, կարագո՞վ պիտի խեղդեն ժողովրդին։

- Այդ վտանգի առաջը գյուղմինստրությունն առել է։ Անցյալ տարի մեկ կովի վրա վեց հազար լիտր կաթի պլան էր դրել, այս

տարի իջեցրեց երեք հազարի։ Իսկ մեզ մոտ պլանն անխախտ է։ Եթե կովերին թողնեինք, հիմա վաղուց էին խեղդել մեզ իրենց կաթի ու կարագի մեջ։

- Զգո՛ւշ կացեք, ի սեր Աստուծո, զգո՛ւշ կացեք,- ասաց ծերունին վախեցած ու ավելացրեց,- իսկ գրականության մեջ էլ պլան չկա՞, ով ինչքան հաստ վեպ ուզենա, կարո՞ղ է գրել։

- Այնտեղ վեպի ծավալը պահեստով է պայմանավորված։ Եթե գրքի պահեստը ընդարձակ է, և տեղ կա, գրողը օգտագործում է այդ հնարավորությունը, եթե չկա, կարճ է կապում։

- Պահեստները շա՞տ են լիքը։

- Տրաքում են։

- Եթե Պետհրատը գիշերները պահեստի դուռը բաց թողնի, գողերը չե՞ն դատարկի։

- Եթե պահեստի դուռը բաց թողնի, այն ընթերցողները, որոնք սխալմամբ գնել են որոշ գրքեր, դրանք էլ կբերեն կլցնեն պահեստը...

- Դրա՞ համար է, ուրեմն, Պետհրատը փակ պահում իր պահեստի դռները։

- Իհարկե։

- Գրքի բանը խեր է, ջա՛նըմ, չոր ապրանք է, հակառակ դեպքում կարելի է այրել։ Սա կարտոֆն է խայտառակություն։

- Կարտոֆիլի առատության մասին ուրիշ լուրեր էլ են շրջում։

- Ի՞նչ։

- Ասում են, որ իբրև թե բնակբաժինն է անում։ Որովհետև ժողովուրդը չի ուզում վեցերորդ հարկերում ապրել, այսպես հեղեղում է, որ բարձրանան, ազատվեն։

- Անգութ բան է,- ասաց ծերունին,- փոխանակ վերելակ շինելու՝ քաղաքն այսպիսի աղետի՞ մատնել։

Այսպես խոսելով՝ իր համար պատրաստված դահլիճը մտավ 1965 թվականը և սկսեց իր պաշտոնական ընդունելությունը։

Իրեն ներկայացավ վերին աստիճանի մի պատկառելի մարդ ու ծանոթացավ.

- Համայն Հայաստանի արտաքին գործերի մինիստր Բալաբեկ Մարտիրոսյան։

- Ուրախ եմ։ Նստեցե՛ք։ Ի՞նչ կասեք աշխարհի դրության մասին։

Ժնևի զինաթափման կոնֆերանսը տեղից շարժվե՞լ է։

- Ոչ մի քայլ։

- Ջեմ հավատում։ Գուցե շարժվել է՝ դուք չգիտեք։

- Առանց իմ գիտության՝ Ժնևը չի կարող տեղից շարժվել։

- Ինչո՞ւ չեն ուզում զինաթափվել։

- Դեռ լրիվ չեն զինված։ Սպասում են լրիվ զինվեն՝ նոր զինաթափվեն։

- Ինչ կասեք ՆԱՏՕ-ի բազմակողմանի ատոմային ուժ ստեղծելու մասին։

- Քանի ես իմ աթոռի վրա նստած եմ, այդ բանը չի կարող տեղի ունենալ։

- Աշխատեցե՛ք, ի սեր Աստուծո, աշխատեցե՛ք. դա կատարյալ աղետ կլինի մարդկության գլխին։

- Կրկնում եմ, քանի ես կամ, այդ չի լինի։

- Աստված քո արևը պահի։

Ապա ներս է մտնում Սունդուկյանի անվան պետական թատրոնը և առանց նախազգուշացնելու՝ հանկարծ հայտնում.

- Դուք իմացա՞ք, որ մեր թատրոնն այրվեց։

- Ինչ եք ասում…,- վախեցած վեր թռավ ծերունին։

- Ոչի՛նչ,- ասաց ժպտալով թատրոնը,- նախ՝ դա վաղուցվա բան է, երկրորդ էլ՝ այրվեցին միայն թատրոնի շենքը և ինվենտարը։*

- Էլ ի՞նչ մնաց,- նրա հանգիստ տոնի վրա զարմացած՝ հարցրեց ծերունին։

- Մնաց ռեպերտուարը, նրան փախցրեցինք։ Թատրոնի տեղ շինել ենք նորը, ավելի գեղեցիկը, իսկ եթե մեր ռեպերտուարն այրվեր, այդ սարսափելի կլիներ։

- Ճո՞խ էր ռեպերտուարը։

- Շատ ճոխ։ «Բաղդասար ախպար», «Քաոս», «Վարդանանք», «Կամուրջի տակ»։ «Կամուրջի տակ», «Վարդանանք», «Քաոս», «Բաղդասար ախպար», և էլի վերևից ներքև, էլի ներքևից վերև։ Այնպես, ինչպես դո, րե, մի, ֆա, սոլ, լա, սի, դո-դո սի, լա, սոլ, ֆա, մի, րե, դո։

- Սպասեցե՛ք, հիշողությունս թուլացել է, չկարողացա ըմբռնել։ Ուրեմն, «Բաղդասար ախպար», «Քաոս», «Վարդանաք», հետո՝

* Ինվենտար (inventarium) - այստեղ՝ գույք։

«Կամուրջի վրա՞» ասիք, թե՞ «Կամուրջի տակ»...

- «Կամուրջի վրա»[142]:

- Ինչո՞ւ «Կամուրջի տակն» էլ չեք ներկայացնում:

- Ռեպերտուարը շատ կճոխանա, հետևաբար, կծանրաբեռնվի:

- Ասե՛ք, գրի առնեմ, որ չմոռանամ մինչև մյուս տարի:

- Կարիք չկա, մենք ամեն տարի կրկնում ենք:

Ներս մտավ մի ծեր բանվոր և բարևելուց հետո հարցրեց Նոր տարուն.

- Ինչո՞ւ թոշակի չեք անցնում, ես երեկվնե անցա:

- Այս տարի նոր վաթսունհինգս լրացավ,- ասաց Նոր տարին,- պիտի անցնեմ, ուժ չմնաց վրաս: Երեք հարյուր վաթսունհինգ օր է ճամփա եմ ելել. նոր հասա: Տարին մեկ անգամ մարդկանց ուրախացնելը քիչ է: Պետք է մարդն ամեն օր ուրախ լինի: Եկող տարի գալու է իմ որդին: Նա ամեն օր ձեզ կուրախացնի: Սա տասնհինգ տարի է, ավտո ենք գրվել, եթե ստացանք, դուք օրական երկու անգամ Նոր տարի կունենաք:

Բանվորի գույնը հանկարծ թռավ:

- Ինչ պատահեց քեզ,- հարցրեց Նոր տարին:

- Դրանով դուք կուրախացնեք միայն պահեստապետներին և խանութի գործակատարներին: Շուկայում միրգը՝ սոսկալի թանկ, միայն աշխատավարձով կարելի՞ է կիլոն յոթ ռուբլով պոպոքի միջուկ առնել, չորս ռուբլով մեղր և կոզինախ շինել: Ձեմ խոսում խմիչքի մասին: Մեր աշխատավարձով ոչ միայն չենք կարող խմել, ասենք, կոնյակ, այլ չենք կարող անգամ հոտ քաշել... Այնպես որ, ես խնդրում եմ, ձե՛ռք քաշեք այդ մտքից և, եթե կարելի է, գաք ոչ թե ամեն տարի, այլ չորս տարին մեկ: Նահանջ տարիներին:

Այս խոսակցությունն ընդհատեց զագսի վարիչը և Նոր տարուն իր վերադասի տեղ դնելով՝ սկսեց զեկուցել.

- Անցնող ամուսնական տարվա պատկերը հետևյալն է: Հունվարին ամուսնացրել եմ 200 զույգ, ամուսնալուծել՝ 300, փետրվարին ունեցել եմ 180 զույգ մուտք, 230 զույգ ելք, մարտին՝ 136 զույգ մուտք, 190 ելք: Նույն ամիսներին կնքել եմ 2050 երեխա՝ մեկի անունը դնելով Պողոս, մյուսինը՝ Պետրոս, Ստեփան, Գուրգեն, Գևորգ, Գագիկ...

- Անսիստեմ գործ եք բռնել՝ այսպես գործերը խառնելով: Պետք

է մի տարի ամբողջ միայն ամուսնացնեիք, մյուս տարի միայն բաժանեիք։ Գալով անուններին՝ էլի այնպես, մի տարվա ծնվածների անունները դնեիք միայն Պողոս, մյուս տարի՝ միայն Պետրոս և այսպես ըստ կարգի։

- Նոր փոփոխություններ չարժի կատարել, որովհետև շուտով բոլոր հիմնարկները պիտի վերակառուցվեն։ Ինչպես կան տրոլեյբուսներ, որ երթևեկում են առանց տոմսավաճառի, այնպես էլ հիմնարկներ պիտի լինեն։ Օրինակ՝ չեն լինելու շտատնի պահեստապետներ. ամեն մարդ կմտնի, կուտի, դուրս կգա...

Նոր տարին ժամացույցին նայեց ու ասաց.

- Օ՜, ուշացել եմ։

- Ցտեսություն,- ասաց զագսի վարիչը և ուզում էր գնալ, երբ Նոր տարին հարցրեց.

- Ներողություն, քաղաքում չի՞ ճարվի կարտոֆիլի ալյուր։ Թոռնիկիս ստամոքսը խանգարված է, ասացին. «Կիսելի համար կարտոֆիլի ալյուր բեր հետդ»։*

- Կարտոֆիլի ալյո՞ւր-զարմացավ վարիչը, ի՞նչ բան է դա, գաղափար չունեմ դրա մասին։ Ցորենի ալյուր գիտեմ, անցյալ տոնին քամու պես եկավ անցավ, իսկ կարտոֆիլի ալյուր...

- Լավ ցտեսություն։

- Երթաք բարով։

---

* Կիսել ***(кисель)*** - ռուս. կարտոֆիլի այլուրից և զանազան մրգերի հյութերից պատրաստված թանձրահեղուկ՝ դոնդողանման ուտելիք, շոհանուշ։

1965

ԼԻՊՈՅԻ ԱՐԿԱԾՆԵՐԸ

Կարիք, որ դարձավ չարիք

Լիպոն մեծ գումարի կարիք ուներ։ Մի գումար, որը կարելի էր ձեռք բերել միայն մի հաստափոր պատմական վեպ գրելով։

Գրեց ու, չիմանալով, որ Դեմիրճյանը արդեն գրել է այդ մասին, վեպի անունը «Վարդանանք» դրեց։

Նա՝ որպես խղճմիտ հեղինակ, իր գործն անմիջապես չտարավ Պետհրատ, այլ տարավ քննադատին և ասաց.

- Կարդա ձեռագիրը, եթե անպետք է, տեղնուտեղը այրենք։ Ուրիշ խոսքով՝ «օձն իր բնում խեղդենք»՝ առանց թույլ տալու, որ մարդկանց վնասի։

- Չեղավ,- ասաց քննադատը,- եթե այդպես վարվենք, դու՝ որպես հեղինակ, սոված կմեռնես, ես՝ որպես քննադատ։ Ճիշտ է, ես առհասարակ դեմ եմ պատմական վեպին և տպվելուց հետո փետրահան պիտի անեմ, բայց կասես Պետհրատին թող չվախենա, գրքերը վաճառվելուց հետո գրիչը ձեռքս կառնեմ։ Պատմական վեպը, անկախ արժանիքից, կսպառվի։ Տպվելուց հետո կերթաս Սունդուկյան թատրոն և կասես.

- Եթե ուզում եք ձեր բացը «Վարդանանքով» ծածկել, մի՛ դանդաղեք, գիրքը լույս տեսնելուն պես, քանի տաք է, թատրոնի վերածեք վեպը ու իրար ետևից ներկայացրեք։ Ամառվա կարճ գիշերին՝ մեկ անգամ, իսկ ձմեռվա երկար գիշերներին՝ երկու անգամ՝ չհաշված ամպ օրերը…

Երբ այս բոլորը կատարված էր, քննադատը վերցրեց գրիչն ու գրեց. «Ասում են՝ գրականությունը կյանքի հայելին է։ Բայց այս բանաձևը ոչ թե բացարձակ, այլ պայմանական է։ Երբեք քսաներորդ դարի հայելին չի անդրադարձնում Վարդանանց ժամանակվա կյանքը։ Ամեն դար իր հայելին ունի։

Վարդանանց պատերազմը կրոնական պատերազմ էր։ Կռվում

էին երկու կրոնները՝ քրիստոնեությունն ու կրակապաշտությունը: Կրոնական պատերազմը կարող է արտացոլվել ներկայիս մեր հայելու մեջ, երբ մենք առհասարակ Աստված չենք ճանաչում՝ ո՛չ կրակ, ո՛չ Քրիստոս:

Այն ժամանակ մարդիկ աշխարհ չէին գալիս ապրելու, այլ նահատակվելու և երկնից արքայությունը ժառանգելու, իսկ ներկայումս արքայության ու դժոխքի ճանապարհներին հավասարապես խոտ է բուսել, և մարդիկ իրենց գոյությունը «խալաստոյ պատրոնի»* նման դեպի երկինք չեն կրակում զուր տեղը:

Հիմա մարդն ամենաթանկ կապիտալն է[143]:

Ներկա մարդկանց կյանքն էլ հակասություններով լիքն է, բայց նրանք, վայրի փղեր հեծած, չեն հարձակվում իրար վրա, ամեն ինչ լուծում են խաղաղ ճանապարհով, տարբեր սիստեմների խաղաղ գոյակցությամբ, սոցմրցմամբ:

Եթե Վարդանանք կամենային արտացոլվել այսօրվա հայելիում, նրանք էլ իրենց աստվածների առավելությունը պիտի արտացոլեին խաղաղ մրցմամբ: Երկուստեք պետք է մեռնեին. կողմերից որ մեկից շատ արքայություն գնացին, նրա աստծուն էլ կընդունեին:

Եթե պատմական վեպ գրողներն ուզում են ընթերցողին քաջություն ներշնչել, հիմա այդ էլ հարկավոր չէ: Թուրքահայաստանը գոյություն չունի, իսկ Ռուսահայաստանն ունի իր հարազատ կառավարությունը: Քաջ դառնանք՝ ո՞ւմ դեմ կռվենք:

Երբ մեկը քաջություն ունի, բայց թշնամի չունի, ուզի-չուզի Դոն Քիշոտ կդառնա և կհարձակվի անմեղ ճամփորդների վրա:

Կարելի՞ է ուժ ու եռանդ մաղթել մի հիմնարկի դիրեկտորին, որը ոչինչ չի անում: Կամ՝ մի պահեստապետի, որն առանց դրա էլ պահեստը դատարկում է:

Հետո: Ինչո՞ւ պիտի գրողը հերոս գտնելու համար ամբողջ 15 դար ետ գնա: Ինչո՞ւ ամեն դար իր հերոսը չունենա: Քաջ Վարդանը մինչև քանի՞ դար մեզ պիտի ուղեկցի, նոր տուն դառնա:

Այս այսպես չէր լինի, եթե դարերը պատնեշներով անջատված լինեին իրարից: Այն ժամանակ յուրաքանչյուր դար ստիպված կլիներ իր սեփական հերոսն ունենալ: «Նոր մարդու տիպա՞ր»,- բղավում է ժամանակակից գրողը, գնում է վաղեմությունը կորցրած

* «Խալաստոյ պատրոն» ***(холостой патрон)*** - ռուս. դատարկ փամփուշտ:

անցյալը երգելու և այն բերում մեր հայելու առաջ կանգնեցնում է, որ արտացոլի։

Չի արտացոլի։ Այնպես, ինչպես չի արտացոլի ստորադասի քաղցր ժպիտը՝ վերադասին ուղղված։

Հայելին նայում է սրտիդ ու միջի ատելությունն է արտացոլում...»։

ՔԵՖ

Լիպոյի տանը ընկեր տղերքը քեֆի են նստած։ Մեկը մյուսից լրթի։ Ձան ասում, Ջան լսում և իրար կենաց են խմում ու պաչպչվում։

Երբ բոլորն իրենց բաժակները լցրած պատրաստվում էին տանուտեր Լիպոյի կենացը խմել, հանկարծ ներս մտավ նամակատարը և մի գրություն հանձնեց Լիպոյին։

Լիպոն կարդալով գրությունը՝ սառեց, լրջացավ, մեջքն ուղղեց և այլևս ոչ մեկի հոգուն «չմեռավ»։

- Տղե՛րք,- ասաց,- այս գրությամբ ինձ առաջ են քաշում քաղսովետի նախագահի պաշտոնի, և ես այս րոպեիս սաստիկ զբաղված եմ։ Խնդրում եմ ձեզ բաժակը ձեռքներիդ դուրս գալ միջանցք։ Ես ընդունում եմ միայն ուրբաթ օրերը, ժամը 12-ից 2-ը։ Կգաք և ձեր ձեռքի բաժակները կդատարկեք։

Բոլորը սառեցին իրենց տեղերում։ Այլևս ոչ մի տաք «Ջան», ոչ մի համբույր։ «Ձաները» դարձան «ընկերներ», սառեցին իրարից, օտարացան։

Լիպոն մի աղջիկ նստեցրեց իր կաբինետի դռանը, որ հարցնողին ասի՝ այսօր ընդունելություն չկա։

Երբ բոլոր սեղանակիցները դուրս եկան նախասենյակ, Լիպոն մի երկրորդ գրություն ստացավ, որտեղ նա նշանակվում էր մինիստր։

Անմիջապես հրամայեց իրեն սպասողներին նախասենյակից բակ հանել և ընդունելության օրը նշանակեց ամեն ամսի 13-ին։

Լիպոն դեռ մինիստրական աթոռին չբազմած՝ հասավ երրորդ գրությունը, որով նշանակվում էր Մինիստրների խորհրդի նախագահ։

Այն ժամանակ Լիպոն իրեն սպասողներին բակից փողոց քշեց և ընդունելության օրը նշանակեց չորս տարին մեկ անգամ՝ նահանջ տարվա 366-րդ օրը։

Եկան այդ օրը և սպասեցին։

Քարտուղարուհին ասաց.

- Մի՛ խանգարեք, Խրուշչովի ճառն է կարդում։

- Չորս տարում չկարողացա՞վ վերջացնել։ Չէ՞ որ բնության մեջ ինչ սկիզբ ունի, նաև իր վախճանն ունի։

- Այդ Խրուշչովի ճառերի համար չի ասված. նրա ճառերը սկիզբ ունեն, բայց վախճան չունեն...

Այդ միջոցին մի ծերունի սպասող, որ հանգիստ քնած էր պատի տակ՝ հանկարծ արթնացավ ու դեպի տուն գնաց։

- Ո՞ւր,- հարցրին ետևից։

- Ես երազումս տեսա Լիպոյին,- ասաց ծերունին և ուրախ-ուրախ ճամփան շարունակեց։

Գրական պաղպաղակ

Լիպոն կարդաց Վիլյամ Սարոյանի մի հատորը և կանգնած մտածում էր, թե ինչ էր գրված մեջը։

Զգիտեր կարդա՞ց, թե՞ նոր պիտի կարդա։

Այնքան որ մտքում բան չէր մնացել։

Ճիշտ այնպես, ինչպես սրճարանից դուրս եկողը մոռանում է, որ ինքը պաղպաղակ է կերել...

Վերջում Լիպոյին ուշքի բերեց մի ընկեր։ Նա ասաց.

- Վիլյամ Սարոյանի գրվածքները չեն ցոլանում կյանքի հայելիում, այն տեսնելու համար պիտի նայես ուղղակի կյանքին։ Ամեն շարժում կյանքի մեջ. դա է Սարոյանի հեղինակությունը։

- Այն ժամանակ թող աշխարհի վրա մի շապիկ քաշի ու վրան որպես այդ աշխարհի հեղինակ՝ գրի «Վիլյամ Սարոյան»,- ասաց Լիպոն։

Մե՛կ, թե՞ երկու

Իմ կարծիքով՝ անպայման երկու։

Մեկերն աշխարհում շատ քիչ են, և դրանք էլ կյանքում ոչ մի դեր չեն խաղում, դեր չխաղալուց ի զատ՝ դեռ վնաս են պատճառում մարդկանց։

Վերցնենք Մասիս սարը։

Ինչպես գիտեք, դա միակն է ամբողջ աշխարհում։

Ղևոնդ Ալիշանից սկսած մինչև մեր օրերի բանաստեղծները, այդ սարը երգելով, մեծ համբավ են վաստակել։

Այդ սարը երգում են անգամ ներկայիս սովետական բանաստեղծները, որոնց լոզունգն է «Պրոլետարնե՛ր բոլոր երկրների, միացե՛ք»։

«Պրոլետար» և Մասիս։ Ի՞նչ կապ։

Մասիսն այն սարն է, որի գագաթին Նոյի տապան է նստել, իսկ հետագայում այնտեղ ծվարել են հայկական հին աստվածները։

...Իսկ սովետական բանաստեղծները՝ անաստված։

Ինչևէ, թող երգեն, ես դեմ չեմ, բայց արի տես, որ այդ միակ լեռն այսօր գրավել է Թուրքիան՝ հայ բանաստեղծներին թողնելով անմասիս...

Թուրքերը՝ այդ հիմարները, գրավել ու չգիտեն անգամ այդ սարը գործածել։ Նրանք մեջտեղում տնկել են այդ սարը ու անմիտ կերպով միայն նայում են նրա ձյունապատ գագաթին՝ առանց իմանալու, որ այն ստեղծված է հատուկ բանաստեղծություն գրելու համար։

Այս բոլոր անհարմարությունները, ի՞նչ եք կարծում, ինչի՞ արդյունք են։

Ըստ իս՝ միմիայն նրա, որ Մասիսը մեկ է ու երկուս չէ, որ մեկը հայոց մնար, մյուսը՝ թուրքին։

Բայց Մասիսը տեղական նշանակություն միայն ունի։

Ցավն այն է, որ դրանից զատ կա նաև մի շատ խոշոր մեկ, որ համամարդկային նշանակություն ունի և մի ժամանակ սպառնում է նաև հավիտենական լինել։

Այդ խոշոր միավորը Աստվածն է։

Այո՛, Մովսես մարգարեի ժամանակ Աստվածը մեկ էր։ Նա ինքն իր բերանով ասաց Մովսեսին. «Ինձանից ի զատ այլ Աստված չունենաք»։

Բայց վերջում, կարո՞ղ եք երևակայել, Աստվածն էլ անհարմար համարելով մեկ լինել, դարձավ կոալիցիոն աստվածություն՝ իր մեջն առնելով Հորը, Որդուն և Սուրբ Հոգուն։

Եռապետություն։

Ես չեմ զարմանում աստվածության այս վերափոխման վրա։ Անգամ հույս ունեմ, որ Մասիսն էլ հետագայում կարող է երկուս դառնալ։ Բայց այն, որ Սովետական Միությունն էլ կարող է իր տված որոշումը փոխել, այդ է զարմանալին։

Ինչո՞ւ։ Որովհետև այս երկրում օրենքները, որոշումներն ու սկզբունքները քարացած են այնպես, որ հետագայում ոչ մի ուժ չկարողանա նրանց փոփոխության ենթարկել։

Բայց երևակայեցեք, որ այստեղ էլ կատարվեց այդ անկարելին։

Գյուղացին Սովետական Միությունում իրավունք ուներ պահել միայն մի կով։

Այո՛, մեկ կով միայն։

Մեկ, ինչպես ներկայիս Մասիսն է, ինչպես մի ժամանակ Աստվածն էր։

«Մեկ կով». այդ նշանակում է Աստված դրախտում ստեղծում է միայն Ադամին, կամ միայն Եվային և ասում՝ աճեցե՛ք ու բազմացե՛ք[144]։

Է՛, մի հոգով կաճեցվի՞, կբազմացվի՞։

Ո՛չ, իհարկե, և դրա համար էլ Աստված Ադամի համար Եվա ստեղծեց։

Բայց այդպես չվարվեց սովետական կառավարությունը։

Նա գյուղացուն տվեց մի կով միայն ու հրամայեց աճեցնել այն՝ երկիրը լցնելով կաթով, յուղով և մսով։

Բայց «աճելու» փոխարեն՝ այդ բարիքները չքացան երկրից, ու այն սովի մատնվեց։

Ահա այդ էր պատճառը, որ կառավարությունը թույլ տվեց գյուղացուն իր միակ կովի կողքին կապել նաև մի ցուլ։

Այս փոփոխությունն էլ, չմոռանամ ասել, զուտ կենդանաբանական էր։ Մնացյալ բոլոր խնդիրներում, լիներ դա գաղափարական, թե անհատի պաշտամունքի, մնաց նախկինի պես քարացած։

Երկրում մի մարդ միայն կար, որին պետք էր պաշտել, մի վարդապետություն կար, որին պետք էր հետևել։

Եվ դրանք Լենինն ու լենինիզմն էին։

Սկսենք Լենինից։

Լինի մարդ, թե Աստված, եթե մեկ է, նրան դժվար է պաշտել։

Լենինի գործը դժվար չէ։ Նա՝ իբրև Ռուսաստանի աստված,

կամենա՝ կպաշտվի, չկամենա՝ կմտնի տուն ու դուռը ետևից կփակի։ Հա թող դրսից մարդիկ իրեն պաշտեն. նա կարող է չպաշտվել։

Դժվարությունը պաշտողների մեջ է։

Երբ մի ժողովրդի մեջ հավաքված է լեռնակուտակ պաշտամունքի ցանկություն, մի ցանկություն, որ բազմաթիվ աստվածների կարող է բավարարել, հանկարծ այդ ժողովրդին ասում են. «Դու միայն մի աստված պիտի պաշտես, այն է՝ Լենինին»։

Եվ որովհետև պաշտելու ցանկությունը շատ է, իսկ աստվածը՝ քիչ, պաշտողների մեջ խուճապ է ընկնում։

Վերցնենք Ռուսաստանի նկարիչներին։

Դրանք բազմահազար են, և նրանցից յուրաքանչյուրն ուզում է նկարել Լենինի պատկերն այնպես, որ օրիգինալ լինի և ոչնչով չնմանի մյուս նկարիչների նկարած պատկերին։

Այդ պատճառով էլ մեկը նկարում է Լենինին ամբողջական դեմքով, մյուսը՝ պրոֆիլ, երրորդը՝ կանգնած, չորրորդը՝ նստած, հինգերորդը՝ պպզած։ Այնուհետև Լենինը հանդես է գալիս՝ աջ ձեռքն առաջ պարզած, ձախը ետև պարզած, հետո՝ ընդհակառակը։

Այնուհետև տեսնում ենք Լենինին մի աչքը բաց, մյուսը կկոցած, հոնքերից մեկը բարձրացրած, մյուսը՝ իջեցրած, բեղերից մեկը սրած, մյուսը՝ անսուր, բայց այնուամենայնիվ Լենինի միակ կերպարանքն այնքան շատ տարբերակներ չի կարող տալ, ինչքան պահանջում են երկրի նկարիչները։

Հնում, երբ նկարիչները միայն սրբապատկերներ էին նկարում, այսպիսի դժվարությունների չէին հանդիպում, իհարկե։ Նրանց նկարչական օբյեկտները բազմաթիվ էին։ Նկարում էին Քրիստոսին, նրա տասներկու աշակերտներին, այդ աշակերտների աշակերտներին, որոնք թվով յոթանասուներկուսն էին։ Հետո նկարում էին զանազան մարգարեների ու պարտիզան սրբերի, ինչպես օրինակ՝ Մշո Սուլթան Սուրբ Կարապետին և այլն։

Իսկ սովետական նկարիչները զուրկ են նման առավելությունից. նրանք մի մարդու երեսին պիտի պատկերեն իրեն չնմանող բազմաթիվ այլ կերպարանքներ։

Լենինը՝ որպես Ռուսաստանի Ամենակարողը, այդ դյուրությունը կարող էր տալ իր նկարիչներին, բայց չտվեց։

Նա կարող էր հրամայել իր երկուհարյուրմիլիոնանոց ժո-

ղովրդին իրենց դեմքերը զիջել իրեն՝ նկարվելու համար, իսկ իրենք մնային անդեմ։

Եվ ժողովուրդը սիրով կտար, գիտեք։ «Ամեն ինչ Լենինի համար» ասող ժողովրդին ինչ դժվար է դեմքը զիջել։

Լենինի ուղեղով մտածող ժողովրդի համար բնավ դժվար չէ նաև երևալ Լենինի կերպարանքով։

Հիմա՝ մի քանի խոսք էլ լենինիզմի մասին, և վերջ։

Լենինիզմը թեև գաղափար է, բայց պետք է գիտենաք, որ գաղափարներն էլ զարգանում և բազմանում են կենդանաբանական օրենքներով։

Ինչպես գյուղացու մեկ կովը չկարողացավ բազմանալ և ժողովրդի ստամոքսի կարիքները բավարարել, այնպես էլ մեկ գաղափարը չի կարող բնակչության այլազան մտածմունքների թարգմանը լինել։ Պետք է սովետական կառավարությունը լենինիզմի կողքին, միևնույն մսուրի մոտ կապի մի այլ գաղափար, ինչպես օրինակ, տրոցկիզմ կամ կապիտալիզմ։

Վերջապես մի որևիցե «իզմ»։

Այն ժամանակ միայն գաղափարները միմյանց կբեղմնավորեն, մտածողության նյութ կդառնան, կվերածվեն համոզմունքի, և մարդկությանը ուրիշի խոսքը կրկնող թութակից կդարձնեն բանական արարածներ։

Թե չէ՝ ինչ։

Ինչպե՞ս կարելի է ստիպել մարդուն միայն մի սկզբունք դավանել։

Կամ։

Ինչպե՞ս կարելի է պարտադրել մի կին միայն սիրել։

Ես թեև կյանքումս չխախտեցի ամուսնական օրենքը և միակին մնացի, բայց վա՛յ այդպիսի միակնությանը։

Կնոջս դեմքին պատկերացնում էի մի ծանոթ գեղեցկուհու դեմք, նոր համբուրում էի։

Շատ անգամ էլ կանչելով նույն գեղեցկուհու անունով։

Էլ այստեղ «մեկ կին» մնաց։

Լենինիզմն էլ ճիշտ իմ կինն է։

Մարդիկ նայում են նրան և իրենց ուզած գաղափարները դավանում։

Պատիժը Պարսկաստանում և Սովետական Ռուսաստանում

Մի ժամանակ Պարսկաստանը համարվում էր պատիժների կլասիկ երկիր։ Բայց երևակայեցեք, պատժական գործում համբավ վաստակած երկիրն ամբողջական ո՛չ գնդակահարում, ո՛չ կախաղան էր բարձրացնում։ Նա պատժում էր մարմնի այն մասը միայն, որն անմիջականորեն կատարել էր որևէ հանցանք։

Օրինակի համար՝ պարսկական արդարադատությունը երբեք չէր կտրում գրպանահատի երկու ձեռքերը միասին, այլ միայն այն ձեռքը, որ տվյալ դեպքում սողացրել էր անցորդի գրպանը։

Եվ իրավցնե՞ Ինչ մեղք ունի ձախ ձեռքը, երբ աջը գողություն է կատարում։

Սույն օրինակով, եթե մի երիտասարդ մի օտար կնոջ աչքով էր անում, մանրակրկիտ դատավարությամբ երևան էին հանում այն միակ հանցավոր աչքը, որ նման հանցանք էր գործել, և հանում այդ աչքը միայն՝ տեղը թողնելով հարևան աչքը, որը մեղք չի ունեցել հիշյալ արարքում։ Իսկ եթե այդ անպարկեշտ արարքն այնքան էր առաջ գնացել, որ գործը հասել էր բռնաբարության, կտրվում էր այն անդամը միայն, որ մեղքի կրողն է եղել։

Կոտորակել ամբողջական մարդուն և պատժել միայն մարմնի հանցավոր անդամը եղել է պարսից արդարադատության հիմնաքարը։ Մի մասնատում, որ կիրառվում է նաև պարսիկ ժողովրդի առօրյայում, անգամ նրանց կրոնական հասկացողություններում։

Այսպես, պարսիկ ուղտապանը, երբ մորթում է իր ուղտը, ամբողջովին չի ուտում նրան, այլ նրա աջ մասը միայն, որ ինքը համարում է «սուրբ», իսկ ձախ մասը դեն է նետում՝ իբրև անսուրբ։

Ճիշտ այս օրինակով պարսիկներն իրենց Աստծուն էլ են այս ձևով պաշտում՝ մի կողմից միայն։

Ինչպես գիտեք, պարսիկները և թուրքերը անհաշտ թշնամիներ են իրար, բայց պաշտում են միևնույն Աստծուն, որովհետև մահմեդական կրոնում գոյություն չունի երկու Աստված, որ առանձին-առանձին պաշտվի։ Դրա համար վերոհիշյալ ուղտի նման, Աստծու աջ կողմը պարսիկն է պաշտում, ձախը՝ թուրքը։

Կիսապաշտական այս կուլտը հետագայում դիվանագիտական

բնույթ ստացավ և մինչև անգամ հասավ մեր ժամանակները։

Ներկայումս արդեն սովորական է դարձել կիսել ամբողջական պետություններ և առանձին տիրել։

Օրինակի համար՝ մեջտեղից կիսված Կորեայի կեսը Ամերիկային է պատկանում, կեսը՝ Ռուսաստանին, Հնդկաչինի կեսը Ամերիկայի պաշտպանության տակ է գտնվում, կեսը՝ դարձյալ Ռուսաստանի, Գերմանիայի կեսը Գերմանիային է պատկանում, կեսը՝ Ռուսատանին։ Գերմանիան անգամ իր մայրաքաղաք Բեռլինն է կիսել ու մաս է հանել Ռուսաստանին։

Այս ձևով Ռուսաստանը համարյա բոլոր պետությունների մեջ իր մասն ունի։

Դառնանք Պարսկաստանին։

Պատմության մեջ արդյո՞ք երկար տևեց այս երկրի պատժական համբավը։

Ո՛չ, դժբախտաբար։ Այդ տևեց մինչև 1917 թվականը, երբ Ռուսաստանում պայթեց սոցիալիստական հեղափոխությունը։

Հեղափոխության հեղինակ Լենինն աշխարհի բոլոր երկրների պատիժները քաշեց Ռուսաստան, որի ժամանակ պատժազուրկ դարձավ Պարսկաստանը և ամենամեծ ոճրագործին պատժելու համար իսկ չճարեց անգամ մի թեթև պատիժ։

Ինչո՞ւ, ի՞նչ էր պատահել Ռուսաստանին, որ հանկարծ աշխարհի բոլոր պատիժների կարիքն զգաց։

Ասեմ։

Այդ սոցիալիզմ ասածդ շատ դժվար բան է, և ոչ ոք չկամեցավ կամավոր դավանել այն։

Լենինը որպեսզի ստիպի այդ անել, ստիպված աշխարհի բոլոր պատիժները բերեց իր ժողովրդի գլխին։

Բայց Լենինը, Պարսկաստանին հակառակ, չէր մասնատում հանցավորին և պատժում միայն նրա հանցավոր անդամը։ Ընդհակառակը՝ մարմնի մի մասնիկի հանցանքը տարածում էր ամբողջ մարմնի վրա և գնդակահարում։

Եթե սոցիալիզմը գաղափար է և ծնվում է միայն մարդու գլխում, ուրեմն, մեղավորը գլուխն է, որ չի ընդունում. թող միայն գլխատեր մարդուն, ինչո՞ւ էր գնդակահարում ողջ մարմինը, որի մնացած մասերը միանգամայն անմեղ էին։

Լենինը գնդակահարում էր ընտանիքի հորը, աքսորում նրա կնոջը և հալածում նրա երեխաներին՝ որպես հակահեղափոխականներից ծնվածների, ու ամբողջ բազմանդամ մի ընտանիք վերանում էր մեջտեղից։

Իսկ Լենինի հաջորդ Ստալինի ժամանակ, երբ սպանվեց Կիրովը, նա ամբողջ Լենինգրադը տեղահանեց Սիբիր ու կոտորեց։

Դա հանցանք կանխելու պրոֆիլակտիկ միջոց է, գիտեմ։ Այո՛, եթե մեկի վրա ոջիլ է երևում, չպետք է մեկ-մեկ բռնել ու քթվել* նրանց, այլ պիտի ողջ շորերը կաթսայի մեջ եռացնել։ Բայց ամբողջ մի նախկին մայրաքաղաք բնաջնջել, դեռ գրված չէ մարդկային պատմության մեջ։

Պատահեց նաև այսպիսի մի դեպք։

Ռուսաստանի կրթական մինիստրը, որի անունը չեմ հիշում, օգտվելով իր դիրքից ու պաշտոնից, բռնաբարեց ողջ երկրի ուսուցչուհիներին (որն իր ճաշակին եկավ, իհարկե)։

Եվ ինչ։ Ստալինը, փոխանակ մինիստրի մարմնի հանցավոր անդամը կտրելու, բռնեց նրան ամբողջովին պաշտոնանկ արեց…

Ականջը խոսի Պարսկաստանի։ Նա էլ ասի՝ ես պետություն եմ, Ռուսատա՞ն էլ…

Բժշկական ասուլիս

Մի ժամանակ տրիպերն ու սիֆիլիսը համարվում էին անբուժելի հիվանդություններ։ Դրանցից էլ վախեցած՝ երիտասարդ ժամանակս միշտ հեռու եմ փախել ծախու սերերից ու համայնական տներից։ Թեև ասում էին, թե հանրատան կանայք մշտապես բժշկական հսկողության տակ են, բայց ես նորից չէի գնում։ Զզվում էի համայնական կանանցից այնպես, ինչպես ներկայումս զզվում եմ համայնական տնտեսությունից ու համայնավարությունից։

«Տնամերձ» կինը ուրիշ համ ունի…

Սիֆիլիսից հետո անբուժելի էր համարվում նաև թոքախտը։ Բայց հիմա բժիշկները բուժում են թոքախտավորներին՝ չորացնելով և անգործածելի դարձնելով նրանց թոքերի հիվանդ մասերը։

Այս մեթոդով բուժում են նաև սոցիալիզմով վարակված պետություններին։

* Քթվել- մարմնի կամ զգեստի վրա միջատներ որոնել ու ոչնչացնել։

Օրինակի համար՝ Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո սոցիալիզմով հիվանդացավ Գերմանիայի ամբողջ արևելյան մասը: Նրան անմիջապես չեզոքացրին, և հիմա նրան ոչ ոք չի ճանաչում որպես պետություն: Հեչ, իր համար աննպատակ ապրում է:

Այս ձևով չորացվեցին ու անկենդան դարձվեցին Հյուսիսային Կորեան, Հյուսիսային Վիետնամը և Կոնգոյի մի մասը:

Բայց կա սոցիալիզմի չարորակ տեսակը, որն անբուժելի է ու սաստիկ վարակիչ: Դա կոմունիզմն է, որով վարակվեց Կուբան ու վարակեց նաև Դոմինիկյան փոքրիկ հանրապետությանը Հարավային Ամերիկայում:

Այս հիվանդությանը ենթակա են սովորաբար փոքր պետությունները: Եվ որովհետև Հարավային Ամերիկան բաղկացած է բազմաթիվ մանր պետություններից, այդ պատճառով Ամերիկայի Միացյալ Նահանգները, որի հսկողության տակ ապրում են այս պետությունները, ներկայիս պատվաստում է հակակոմունիստական շիճուկով:

Բայց ընդհանուր առմամբ պետք է ասել, որ այդ պատվաստն անկարող է վերջ դնել կոմունիզմին, քանի որ ողջ երկրագունդն է վարակված այդ համաճարակով: Մի տեղը դեռ չբուժած՝ մի այլ տեղ է բռնկում:

Այս հիվանդության արտաքին նշաններն են. երկիրը քառասուն աստիճան տաքության մեջ կարմրում է, չքանում են աշխատելու ունակությունն ու նախաձեռնության ոգին, թուլանում, ձեռները կախ են ընկնում, ուղեղը դադարում է մտածելուց, և երկիրը սովի է մատնվում:

Այս տեսակ երկրները, սովորաբար, իրենց սահմանները փակում են՝ նպատակ ունենալով ծածկել իրենց արատն օտարների աչքերից, բայց անօգուտ: Ինչպես առածն է ասում. «Կեղտը ձյան տակ չի մնա»...

Ո՛չ, ո՛չ, մեր մոլորակը հիմնական բուժման կարիք ունի: Պետք է ընտրել մի մեծ մոլորակ, այն տիեզերական հիվանդանոց դարձնել և վարակված բոլոր մոլորակները այնտեղ բուժել:

Աշխարհն ինչպես որ կա և ինչպես չպետք է լիներ

Աստվա՛ծ, աշխարհ ստեղծելը դժվար բան չէ, այդ ամեն մարդ կարող է, դժվարն այնտեղ կարգուկանոն հաստատելն է։

Քո ստեղծած աշխարհը ոչ թե ապրելու համար է, այլ մեռնելու։ Ազգերն իրենց անվերջ պատերազմներով այն դարձրել են կատարյալ մի սպանդանոց։

Պատերազմ ու կոտորած, կոտորած ու պատերազմ։

Ինչո՞ւ ես պետություններին ստեղծել այնքան ագահ, որ ինչքան տիրեն, այնքան ուզեն։

Արդյոք դա առաջ է գալիս տեղի նեղվածությունից։

Պետություններ կան, որ այնքան լայն երկիր են հագնում, որ կարծես Աբիսողոմ աղայի վերարկուն լինի, որը տեսնողն ասում է.

- Կարծես այս վերարկուի մեջ մարդ կա։

Այնպիսի լայնարձակ պետություններ կան, որոնց հագնողները եթե կանայք լինեին, անկարելի էր, որ առանց ազատ տարածության մեջ բամբակ թխմելու հագնեին։

Իսկ մարմնով այնքան վտիտ Թուրքիան, փոխանակ իր լայն տարածության մեջ բամբակ թխմելու, ելավ հայերին կոտորեց, հույներին երկրից վտարեց։

Այն Թուրքիան, որ ձմեռները ցրտից շան նման վնգստում է։

Կա՞ պետություն, որի գլխին թեկուզ աշխարհի բոլոր հողերը լցնես, լիանա և ասի «բավական» է։

Ու չասի՝ բավական չէ։

Եվ դրանք հարևան երկիրը տիրելու մեկ ձև միայն ունեն, այն է՝ հարձակվել, կոտորել ու տիրանալ։

Այսպես չէ, սակայն, մասնավոր մարդկանց մոտ։ Նրանք իրենց հարևանի տանը կմոտենան այն ժամանակ միայն, երբ թերթի մեջ կարդան, թե այդ տունը ծախու է։

Ասենք, տանտերը ժառանգ չունենալու համար ծախում է տունը՝ ուտում։

Բայց պետությունը մեռնի էլ, չի ծախի։

Իսկի պատահե՞լ է ձեզ որևէ թերթի մեջ կարդալ, թե Անգլիան կամ Ֆրանսիան երկրից հեռանալու համար վաճառում են իրենց երկրները։

Մի տուն գնելու համար քաղաքացին փող է վճարում, իսկ լայնածավալ պետությունները գրավվում են ձրի՝ կոտորելով նրա բնակիչներին…

Սա՞ է քո ստեղծած կարգուկանոնը, Աստվա՛ծ։

Չեմ կարող ասել, որ դու կարգուկանոնի մասին գաղափար չունես։ Փաստեր կան, որ ապացուցում են այդ կարողության գոյությունը։

Օրինակի համար՝ կրիաներ ստեղծելիս մի-մի պատյանի մեջ ես խցկել ու խստիվ պատվիրել ուրիշի պատյանի մեջ չմտնել։

Այնտեղ պատյանի առուծախ անգամ չի կատարվում։ Ապրում ու մեռնում են իրենց միակ պատյաններում։

Եթե իմ մեղադրանքներից մի անգամ ընդմիշտ ազատվելու համար հայտարարես, թե «ես գոյություն չունեմ», դարձյալ չես ազատվի ձեռքիցս։

Կմատնանշեմ Ռուսաստանը, որտեղ սոցիալիզմը քեզանից ավելի գոյություն չունի, և որը տես, թե ինչպիսի օրինակելի կարգուկանոն է մտցրել իր երկրում։

Նրա բոլոր քաղաքներում ստեղծված են քաղսովետներ, որոնք պատրաստի բնակարան են բաժանում իրենց քաղաքացոց ճիշտ այնպես, ինչպես դու պատյան ես բաժանել կրիաներին։

Դրանք քարե շինվածքներ են՝ կրիաների պատյանից ավելի անփոփոխելի ու միանվագ ամբողջ կյանքի ընթացքում։ Մեռնելիս էլ իրենց պատյաններով թաղվում են։ Մի անգամ չափում և ընտանիքիդ անձերի համեմատ բաժանում են. այնուհետև ուզում ես՝ բազմացիր, ուզում ես՝ քչացիր, այդ է, բնակարանդ ո՛չ կլայնանա, ո՛չ կնեղանա։

Մինչդեռ փոքր կրիայի պատյանը, նայած իր հասակին, անվերջ լայնանում է։

Ես հավատացած եմ, Աստվա՛ծ, եթե դու էլ պետությունները ստեղծելիս Ռուսաստանի նման այսպես գիպսի մեջ դնեիր ազգերը, այսօր առաջ չէին գա Ռուսաստանի նման մեծ, Ալբանիայի նման փոքր պետություններ։

Պետություններ, որոնց հողերը ո՛չ փողով հնար լիներ գնել, ո՛չ պատերազմով գրավել։

Այնպես, ինչպես քաղսովետների կառուցած շենքերը, որոնք ո՛չ

փոխանակության են ենթակա, ո՛չ վաճառման։ Ընկար մեջը՝ պիտի խեղդվես։

Աստվա՛ծ, մի՞թե քեզ համար դժվար է մի համաշխարհային քաղսովետ ստեղծել։

Մի քաղսովետ, որ վերցնի հին աշխարհի բոլոր խարխլված պետությունները պլանի մեջ գցի, քանդի և նրանց փոխադրի վերոհիշյալ նոր շենքերը։

Եթե ամեն բնակարան իր առանձին արտաքնոցն ունենա, առանձին խոհանոցը, պետություններն էլ ինչո՞ւ իրար հետ պիտի կռվեն։

Իսկ ներկա պայմաններում կռիվն անխուսափելի է, որովհետև մեծ պետություններից երկուսը՝ Սովետական Միությունն ու Չինաստանը, սեփական արտաքնոցներ չունենալուն համար ողջ աշխարհն ապականում են իրենց սոցիալիզմով...

Շտապ օգնություն

Հայաստանի գրողների միության նախագահն այսօր «Գրական թերթի» մեջ աղաղակ է բարձրացրել։

- Մեզ չի կարդում ժողովուրդը, օգնեցե՛ք, ո՛վ Էկա, Ցեկա, Զեկա[145]։ Պրոֆմիությո՛ւն, Գիտական Ակադեմիա՛։

Այնպես, ինչպես հրդեհված տան տերը հրշեջներ է կանչում օգնության։

Այս բավական չէ, ընկած դռնեդուռ՝ մարդկանց համոզում է, քարոզում, աղաղակում, պաղատում, որ կարդան, բայց չեն կարդում։

Անցյալ աշնան, երբ Պետհրատն այրում էր երկու հազար երեք հարյուրից ավելի անուն գիրք, հրշեջները հասան, բայց չկարողացան հանգցնել ահռելի բոցը, որովհետև այրվող գրքերի մեջ սոցիալիզմ էր քարոզվում, իսկ սոցիալիզմն այնպիսի դյուրավառ նյութ է, որին ջուրն ավելի է բորբոքում, և որը հանգցնելու համար պետք է հողի տակ թաղել։

Ինձ էլ դիմեց նախագահը։

Ես ասացի.

- Մի՛ զոռեք, եղբա՛յր, ժողովուրդը սոցիալիզմ չի կարող կարդալ, կարդա էլ, հետ կտա։

Պնդություն ունեցող հիվանդի համար անգլիական աղից ավելի

ինչ ազդու դեղ կա: Բայց հիվանդ կա, որ ուզում է մեռնել ու այդ դեղը չխմել: Այնքան դառն է այդ անպիտան աղը:

Իսկ սոցիալիզմը՝ նրանից էլ ավելի դառը. ինչպես կուլ տա:

Այս որ լսեց, այնքան խեղճացավ նախագահը, այնքան թոռոմեց ու թոշնեց խեղճը, որ մեղքս եկավ:

Ասացի ի վերջո.

- Բժիշկները նման դառը դեղերը հիվանդին ներարկում են սովորաբար կլիզմայի միջոցով: Փորձի՛ր դու էլ օգտվել նույն միջոցից...

«Աշխարհ»

Այսօր ձեռքս ընկավ Աստուծո «Աշխարհը»:

Կարդում եմ ու զարմանում:

Կյանքիս մեջ երբեք այսքան անմիտ ստեղծագործության չէի հանդիպել:

Կատարյալ ֆուտուրիզմ:

Բայց սովորաբար ֆուտուրիզմին դիմում են այն հեղինակները, որոնք նախ փորձում են մի իմաստալի բան գրել: Երբ տեսնում են չեն հաջողում, նոր սկսում են գրչախաղի տալ:

Բայց Աստվածը՝ որպես սկսնակ ստեղծագործող, թույլ չպիտի տար իրեն առաջին անգամ հրապարակ գալ նման գրչախաղով:

Երբ մի հեղինակ միտք չունի իր գրքի մեջ դնելու համար, պետք է մանների:

Օրինակի համար՝ մեր պետությունը լայն ու փառահեղ մթերային խանութներ է կառուցում, բայց մեջը դնելու մթերք չունի: Դրա համար էլ տարվա բոլոր եղանակներին նրա խանութները «ռեմոնտի են կանգնած»:

Իսկ Աստված իր «Աշխարհի» ստեղծման օրից ոչ մի օր ռեմոնտի չի կանգնեցրել: Դրա համար էլ «հաճախորդները» դատարկ են գալիս աշխարհ, դատարկ էլ գնում են...

Երկն առհասարակ կրում է անխնամության կնիք: Երևում է, որ Աստված ստեղծելուց հետո իր ստեղծագործությունը գեթ մի անգամ չի կարդացել՝ թեկուզ կետադրությունը ուղղելու համար:

Մինչդեռ Լև Տոլստոյն իր «Պատերազմ և խաղաղությունը» հինգ անգամ արտագրել է...

Գեթ հրատարակեր «ձեռագրի իրավունքով», որ մեծ պատասխանատվություն չկրեր։

Աստված պետք է մեր Պետհրատից օրինակ վերցներ։

Պետհրատի լույս ընծայած գրքերը նախ մի սուրու խմբագիրների ձեռքի տակից են անցնում, հետո էլ, երբ այնուամենայնիվ հիմար բաներ են ստացվում, հազարավոր անուն գրքեր հավաքում է իր գրախանութներից և այրում՝ խղճալով իր ընթերցողներին։

Աստված փողասեր չէ։ Նա ասում է՝ Աստծուն Աստծունը տվեք, կայսերը՝ կայսեր[146]։

Էլ ինչո՞ւ է այսպես հաստափոր «Աշխարհ» գրել, երբ աչք չունի հոնորարի։

Բոլոր իր ասելիքները նա հեշտությամբ կարող էր զետեղել մի բրոշյուրի մեջ։

Եվ դա նրան ավելի փառք կբերեր։ Որովհետև կարճ անմտությունը գերադասելի է երկարից։

Ինչ ընթերցողին մի օր տանջել, ինչ մի ամի՞ս։

Իսկ Աստծու ստեղծած երկը տանջում է մարդուն ամբողջ իր կյանքի տևողությանը։ Պետք է մեռնես, որ ազատվես…

Թեև «Աշխարհը» ֆանտաստիկ երկ է ու ոչ մի առնչություն չունի կյանքի հետ, բայց ամենայն տեսակի ստեղծագործություն պետք է ունենա իր օրենքը։

Սովետական գրողների երկերն ավելի են կտրված կյանքից. այնքան օտար են իրար կյանքն ու արվեստը, որ փողոցում հանդիպելիս չեն բարևում իրար։ Բայց այնտեղ կա մի անխախտ օրենք։

Սովետական գրողն իրավունք ունի իր վեպն անսահմանափակ թվով լցնել բացասական տիպերով ու թույլ տալ, որ նրանք ուզածի չափ քանդեն երկիրը, բայց նա պարտավոր է նաև վերջում դրանց դեմ հանել մի դրական տիպար, որ ջարդի, փշրի բացասականներին ու երկրից վռնդի։

Այդ դրական տիպը պետք է լինի Սասունցի Դավթից ավելի ուժեղ, որովհետև երկրում գոյություն ունեցող թերություններն ավելի բազմաթիվ են, քան Մսրա Մելիքի զորքերը, բայց որովհետև ներկայումս այլևս Սասունցի Դավիթներ չեն ծնվում, մեզ մնում է ապավինել մեր բացասական տիպերի ողորմածությանը։ Այսինքն՝ երբ դրական տիպը սուրը մերկացնի, նրանք ինքնակամ սպանվեն…

Այո՛, եթե դրական ու բացասական տիպերն իրար չզիջեն, ոչ մի գրականություն չենք ունենա։

Այժմ տեսնենք, թե Աստվածն արվեստի այս տարրական կանոնը պահպանե՞լ է իր «Աշխարհում»։

Ցավով պիտի նշեմ, որ չի պահպանել։

Նա իր ստեղծագործության հենց սկզբին դուրս բերեց մի սատանա, որ խաբի Եվային և մարդուն զրկի անմահությունից։

Շատ չէ, եթե Աստված մի փոքրիկ դրական տիպ դուրս բերեր սատանայի դեմ, մենք այսօր անմահներ էինք։

Հետագայում Աստված ստեղծեց բոլշևիկներին, որոնք իրենց չարությամբ գերազանցեցին սատանային և այսօր իրենց ստեղծած դժոխքով մոռացության տվին սատանայի ստեղծած դժոխքը։

Աստուծո ստեղծած «Աշխարհում» այնուհետև պատահում ենք Անգլիային, Ֆրանսիային, Ամերիկային, Ռուսաստանին և նման հարյուրավոր պետություններ, որոնք ստեղծված են միայն իրար կոտորելու և երկրներն իրար ձեռքից խլելու համար։

Սրանց դիմաց ո՞ւր է այն դրական միակ տիպը, որ, երբ բացասականը սուրը դուրս քաշի, դրականն անմիջապես սպանվի և անարյուն իր երկիրը չարին հանձնի։

Չկան։ Այսպիսի տիպերի չես հանդիպի։ Եթե անգամ վեցհարյուրմիլիոնանոց Չինաստանը հարձակվի Ալբանիայի վրա, Ալբանիան անպայման զենք պիտի վերցնի։

Այն Ալբանիան, որ Չինաստանի վերարկուին միայն կոճակ կարող է լինել…

Ասպես են «Աշխարհի» բոլոր պետությունները։

Բոլորն էլ բացասական։

Այսպիսի ճրկ կլինի։

Ո՛չ, չի լինի։

Իբրև քննադատ, ես խորհուրդ կտայի Աստծուն վերցնել իր «Աշխարհը», մի անգամ էլ ուշի-ուշով կարդալ և խորամուխ լինել հիմնական մշակությանը։

Եթե «Աշխարհը» թողնի այսպես անմշակ, ոչ ոք չի համաձայնի աշխարհ գալ։

«Աշխարհի» հիմնական ռեմոնտը հրամայական պահանջ է։

Թե ինչ ձևով պիտի անի, այդ էլ իր գիտնալիքն է։

Չի կարող՝ թող ձեռագիրն ինձ հանձնի։

Ես այդ խլամից այնպիսի աշխարհ դուրս բերեմ, որ ինքն էլ զարմանա։*

Ասա՝ ինչպե՞ս։

Այսպես։

Ես կվերցնեմ մի մեծ ցախավել ու ավլելով աշխարհի բոլոր պետությունները՝ ծովը կթափեմ՝ իրենց կրոնական հավատալիքներով, տարբեր լեզուներով, ազգային գիտակցություններով, հայրենասիրություններով և այլն։

Ոչ մի զենք չեմ տա ձեռները։ Անգամ կհանեմ բերանի ատամները։ Պատառը ես ինքս կծամեմ, բերանները կդնեմ. միայն թե իրար չկրծեն։

Աշխարհը կբաժանեմ երկու դասակարգի։ Դրանք կլինեն տղամարդիկ և կանայք։

Այս դասակարգերը, ինչ խոսք, կունենան բախումներ, բայց այդ բախումները կծառայեն ոչ թե կոտորածների, այլ բազմացումների։

Այսպես, երբ բանն այնտեղ հասնի, որ չկարողանան ինքզինքնին զսպել, կհարձակվեն իրար վրա ու կգրկախառնվեն, անվերջ, անսահման կհամբուրվեն, իրար հոգիներին մատաղ կլինեն, վերջում կռվի դաշտում մի երեխա կթողնեն ու կհեռանան իրարից՝ երկրորդ հարձակմանը պատրաստվելով։

Էս գլխից ասեմ, որ իմ աշխարհում ո՛չ Անգլիա կլինի, ո՛չ Ֆրանսիա։ Եթե կոմունիստներն ուզում են, որ բոլոր երկրների պրոլետարները միանան, ես կջոկեմ առանց կնոջ մի խումբ տղամարդկանց, կտամ նրանց. տեսնենք՝ ինչպես «կմիանան»։

Իսկ եթե դաշնակ պահանջեն կոտորելու համար, ի պատասխան՝ մի ապտակ նրանց երեսին։

Ոչ էլ թուրքերին հայ կտամ, որ ջարդեն։ Թող անհայ մեռնեն։

Շնորհակալություն չեմ հայտնի Մեսրոպ Մաշտոցին, որ հայ գրերը ստեղծեց. ինչ հայերեն, ինչ ռուսերեն. մի մարդկություն, մի լեզու։ Այնպես, որ մարդիկ իրար հետ առանց թարգմանի խոսեն։

Ասացեք, վա՞ռ կլինի այս աշխարհը։

Աշխարհում անպատճառ Քաջ Վարդան և Գայլ Վահա՞ն պիտի լինեն։

---

* Խլամ *(хлам)* - ռուս. հնոտի, հին ու անպետք բաներ։

Քաջեր՝ ստեղծված պարտության համար։

Ահա այսպիսին կլինի իմ աշխարհը։

Մտմտացե՛ք, չափե՛ք ու ձևեցե՛ք, մարդի՛կ, և ըստ այնմ աշխա՛րհ եկեք։

Այս էլ ասեմ, որ ես Աստծու նման բռնակալ չեմ, որ ասեմ. «Կա՛մ իմ ստեղծած աշխարհում պիտի ապրեք, կա՛մ մեռնեք»։ Կամ սովետական կառավարության նման թույլ չտամ երկրի սահմաններից դուրս գալ։

Ո՛չ, ես իմ աշխարհը կառուցում եմ հոժար կամքի վրա։

Իմ աշխարհից ազատ կերպով կարող եք անցնել արտասահման։

Սահմանների վրա ո՛չ շուն կա կապված, ո՛չ սահմանապահ։

Խաշ ուտելու վնասները

Երանի մարդն առաջուց իմանար, թե ինչ փորձանք է գալու իր գլխին…

Երևանի թատրոնում մի մարդ կա, որ կարող է Օթելլո խաղալ, մի կին էլ, որ Դեզդեմոնա է խաղում։

Եվ դրանք ամուսիններ են։

Մի օր Օթելլոն կովի խաշ է բերում տուն, դնում մսի կոճղի վրա, որ կացնով ջարդի։

Կացին դու կացին, իր սխալ շարժումով կտրում է խեղճ մարդու բթամատը արմատից։

Այդ բթամատն էլ նրանց ապրուստի միջոցն էր։ Ամեն ներկայացման իր երկու ձեռներով սեղմում էր կնոջ կոկորդը, սպանում, և երջանիկ ապրում էին։

Բայց երբ դերասանը կորցրեց իր բութը, անգործածելի դարձավ ամբողջ ձեռքը, և այնուհետև իր կնոջը խեղդում էր մի ձեռքով միայն, և կինը կիսախեղդ էր մնում, ընկնելուց հետո նորից էր վեր կենում, կանգնում՝ հիասթափեցնելով ողջ հասարակությանը։

Շուտով պարզ դարձավ, որ դերասանական այս կազմով անկարելի էր լիարժեք Օթելլո ներկայացնել։ Կա՛մ պետք էր դերասանին փոխել, կա՛մ պիեսը հարմարացնել դերասանին։

Եվ որովհետև դերասանն անփոխարինելի էր, մնում էր պիեսը հարմարեցնել։

Այդ իմաստով թատրոնի ռեժիսորը բռնեց «գործող անձանց» վրա մի մարդ էլ ավելացրեց, որպեսզի Օթելլոն մահվան վճիռ արձակեր, իսկ երկրորդ մարդն այդ վճիռը ի կատար ածեր։

Բայց որովհետև այս կերպ ներկայացումը դատաստանական դահլիճի նման բան կդառնար, ուստի սրա համար պետք էր ունենալ նաև մի դատավոր, դատախազ, երկու ատենակալ, երկու վկա և գեթ մի փաստաբան։

Երբ այս բոլորը լինեն, Դեզդեմոնայի մահը կդառնա հարցական։

Նախ՝ եթե փաստաբանը «հայտնի» է, կարող է արդարացնել մեղադրյալին և ազատ արձակել։

Եթե փաստաբանի պաշտպանությունը զուր անցնի, և այնուամենայնիվ մահապատիժը հաստատվի, մեղադրյալը կարող է վճռաբեկ բողոք ներկայացնել Գերագույն դատարանին։

Իսկ երբ գործը Գերագույն դատարանն ընկավ, ամիսներ են պետք վերջնական վճիռը կայացնելու համար, իսկ հասարակությունը չի կարող նստած ամիսներ սպասել, որ Դեզդեմոնան խեղդվի ու իրենք ծափահարեն։

Թատրոնի վարչությունը չի էլ կարող պարտադրել հանդիսատեսին ծափահարել, տուն գնալ, որ հետո ինքը վճիռն ի կատար ածի։

Այս պրակտիկան եթե անցնի, ուրեմն, վարչությունը կարող է առանց հանդիսատեսի ներկայացումներ տալ և արդյունքը հետո հանդիսատեսին հաղորդել։

Զեղավ, ինչ միջոց մտածեցին, հավանություն չգտավ, ու այսօր Երևանի բեմը մնաց անօթելլո, և հասարակությունը «ա՛խ» է քաշում, որ մի մարդ իր կնոջն սպանի, իսկ ինքը ծափահարի։

Ստիպված թատրոնի այս պակասը ժողովուրդը կյանքում է լրացնում։

Երեկ գիշեր մի մարդ իր կնոջը խեղդում և Գետառն է գցում։

Մի շաբաթ առաջ էլ մանկամարդ մի աղջիկ երկար սպասելուց հետո, երբ Օթելլո չի ճարում, որ իրեն խեղդի, հուսահատությունից կամրջից ինքզինքը Զանգուն է նետում ու ջախջախվում։

Այս բոլորից այն եզրակացությունը կարելի է հանել, որ ազգաբնակչության՝ ոճիրի պահանջը բեմում պետք է բավարարել, որպեսզի այն չթափանցի կյանք։

Այդ իմաստով էլ մեր թատրոնները, կինոներն ու հեռուստա-

ցույցներն իրենց էկրանների վրա միայն ոճիրներ են պատկերում՝ տալով դաշնակ-բոլշևիկյան եղբայրասպան կռիվները և ռուս-գերմանական պատերազմը, ուր ռուսները անխնա ջարդում են Գերմանիային: Այն Գերմանիային, որի արևելյան մասի հետ այսօր եղբայրացել են...

Չոր և կակուղ «ընկերները»

Ատամ չունեցողները սովորաբար հացը թրջում, ուտում են: Այդ ես տեսել էի: Բայց չէի տեսել, որ չոր «ընկերն» էլ է ջուրն ընկնելիս կակղում: Ես այդ տեսա հետևյալ պայմաններում:

Բաղնիք էի գնացել: Հանվելիս տեսա՝ ներս մտավ մի չոր, պաշտոնական կեցվածքով գնդապետ՝ կրծքի բոլոր լայնությամբ ամեն աստիճանի շքանշաններ:

Ես, ամաչելով նրա ներկայությամբ մերկանալ, սպասեցի, որ նախ նա մտնի լողարան, հետո՝ ես:

Հետո ներս եկավ մի զինվոր, և մենք, միասին հանվելով, լողարան մտանք:

Մենք ընդամենը երեք հոգի էինք:

Մերկ դրությամբ էլ ես ակնածում էի գնդապետից և լողանում էի այնպես, որ իմ ջուրը չցայտեր նրա մարմնին:

Հետիս զինվորը քիսայով սկսեց տրորել իր մարմնի բոլոր այն տեղերը, որոնք մատչելի էին իրեն, իսկ երբ հերթը հասավ կռնակին, այս ու այն կողմ նայեց ու, բոլորովին մտքից չանցկացնելով, որ դիմացինը գնդապետ է, մոտեցավ, քիսան պարզեց նրան ու ասաց.

- Ընկե՛ր Ջան, մի քամակս շփի՛ր:

Գնդապետը նախքան քիսան վերցնելը մի տեսակ եղավ, մտածեց վերցնե՞լ, թե՞ չվերցնել: Հետո, նայելով կրծքին, երբ տեսավ՝ շքանշաններ չկան այնտեղ, անհարմար զգաց մերժել և վերցնելով քիսան՝ սկսեց շփել զինվորի կռնակը:

Զինվորը շփվում, միաժամանակ կատակում էր հետը.

- Ինչ լավ ես տրորում, խոմ նախկինում քիսաչի չե՞ս եղել:

Հագնվելիս կատակները շարունակում էր, քանի դեռ գնդապետը շապիկ-վարտիքով էր:

Երբ հագավ զինվորական համազգեստը՝ կրծքին շարեշար

շքանշաններ, զինվորը կայծակից զարնվածի նման վեր թռավ տեղից, և այն ձեռքը, որ տարել էր իր վարտիքը կոճկելու, հանկարծ բաց թողեց ու պատվի առավ փայտացած՝ թույլ տալով, որ վարտիքը ազդրերից սահի ցած…

Տասն անգամ գնդապետը «ոչինչ, ոչինչ» ասաց, բայց զինվորը շարունակեց արձան մնալ, մինչև գնդապետը թողեց բաղնիքը։

Գնդապետը բաղնիքը թողեց, բայց զինվորի՝ նրա տրորած կոնակն այրվում էր։ Ու նայելով նրա դեմքին դաջված սարսափին՝ ես այն եզրակացությանը հանգեցի, որ զինվորն այս դեպքն իր ողջ կյանքում չի մոռանա։

Երբ նրանք երկուսն էլ հեռացան, ես մտածմունքի մեջ ընկա։ Ասում եմ. «Մարդիկ էլ արևի տակ չորանում են, թրջվելիս՝ կակղում։ Ես տեսա միևնույն «ընկերոջը»՝ չոր ու կակուղ վիճակում։ Գնդապետը լողարանում այնքան փափկեց, որ մի հասարակ զինվորի կոնակը տրորեց և «ընկեր Ջան» դարձավ, իսկ դրսում չորացավ և այնպիսի «ընկեր» դարձավ, որ զինվորին սարսափ ազդեց։ Ուրեմն ինչ. մարդիկ իրար իսկական ընկեր լինելու համար իրենց ողջ կյանքում պիտի բաղնիքում լողանան։ Կամ ջրային կենդանիներն իրար հետ ավելի սիրով պիտի լինեն, քան ցամաքայիններն»։

Գնդապետը դեռ փառք էր, վերջում նա միայն խոժոռվեց՝ զինվորին նայելով, բա Ստալինը, որ երեսուն տարի կոտորեց իրեն «ընկեր» ասող ժողովրդին…

Բա մեր առօրյա կյանքում, ուր «պատասխանատու ընկերները» չեն ուզում «անպատասխանատու ընկերների» երեսը տեսնել…

Ես դիմում տվեցի Հայաստանի Կենտկոմի առաջին քարտուղար Թովմասյանին, որ թույլ տա իրեն տեսնել, մերժեց։

Նա հասարակաց բաղնիք էլ չի գալիս, որ «ընկեր Ջան» ասեմ և խնդրեմ իմ կոնակը տրորել։

Հետևաբար, այս «ընկերը» կմնա ինձ համար հավիտենապես չոփ-չոր։

Եվ որպեսզի նման ընկերները բաղնիքում էլ չկակղեն, պետք է մի հնարքով իրենց շքանշանները լողարան տանեն։

Սա Աստվածն էլ զարմանալի էակ է։ Բռնել է մարդուց կախել զանազան ավելորդ, անգամ ամոթալի բաներ ու մի երկու մեխ չի զարկել կրծքին՝ բաղնիքում շքանշաններ կախելու համար…

Ծերություն

Աշխարհում ամեն բան ծերանում է։

Մարդը ծերանում, մեռնում է։

Հիմնարկը ծերանում, լիկվիդացիայի է ենթարկվում։

Այդ բոլոր հիմնարկների իրավունքն է՝ բացի արդարադատության այն հիմնարկից, որը կոչվում է դատարան։

Դատարանը պետք է ծերանա այն ժամանակ, երբ ծերանա չարագործությունը։

Երբ չարագործները ծերացած թոշակի կանցնեն և կերթան, կնստեն զբոսայգում՝ իրենց գլխին եկած արկածները պատմելու, այն ժամանակ միայն արդարադատությունը պետք է իր գավազանը վայր դնի։

Բայց չգիտեմ՝ ինչու Լենինյան շրջանի ժողդատարանը ժամանակից առաջ է ծերացել։

Չարագործին դատարան է կանչում, ասում է՝ արի քեզ դատեմ, չի գալիս։

- Քեզ ասում եմ՝ արի՛,- սպառնում է։
- Չեմ գալիս։
- Տասն անգամ կկանչեմ, չեկար՝ կկրակեմ։
- Ինչո՞վ, փայտե հրացանո՞վ,- ասում է չարագործն ու հեռանում։

Տեսնելով, որ զոռով չի լինում, սկսում է խաթրով։

- Չարագո՛րծ ջան, հոգուդ մատաղ, ե՛կ քեզ դատեմ։
- Չեմ գալիս։
- Կդատեմ և քեզ մի պըրըստիկ պատիժ կտամ։
- Չեմ ուզում։
- Կդատեմ և քեզ կվարձատրեմ։
- Չեմ ուզում։
- Շքանշան կկախեմ։
- Պետք չունեմ։
- Քեզ վաստակավոր չարագործի կոչում կտամ։
- Շնորհակալ եմ։
- Լա՛վ, գնա՛, Աստծու անե՛ծքը թող լինի վրադ։

Այսքանը հոդվածիս առաջաբանն էր։

Անցնենք բուն նյութին։

Իգոր Երմակովը ամուսնանում է Սվետլանա Ֆյոդորովնա Զախարովայի հետ և տարի ու կես հետո ապրելով՝ նորածին երեխային գիրկն է տալիս ու դուրս անում տանից։ Ո՛չ բնակարան, ո՛չ ալիմենտ։

Աղջիկը դիմում է վերոհիշյալ ծերացած դատարանը, որով նրա պաշտոնը դառնում է երեք։ Առաջ, որ միայն սովորում ու ծառայում էր, հիմա դրա վրա ավելացավ դատարան գնալ-գալը, որը պաշտոններից ամենածանրն էր։ Որովհետև եթե դպրոցը տասը տարում կավարտեր, պաշտոնը մինչև քսանհինգ տարի կվարեր, ապա թոշակի կանցներ, իսկ դատարանի գործը միայն Աստված գիտի, թե երբ պիտի ավարտեր։

Ամենայն օր անօգնական մայրը, երեխային գրկած, տնից դատարան, դատարանից տուն ժամացույցի ճոճանակի նման գնաց ու եկավ։

- Դատավո՛ր ջան,- ասում է,- կանչի՛ր, դատի՛ր չարագործին, բավական է։

- Որ չի գալիս, ես ի՞նչ անեմ։

- Միլիցիայով բերման ենթարկի՛ր։

- Իրավունք չունենք։ Զոռով դատարան ենք բերում միայն քրեական հանցագործներին, իսկ քաղաքացիական գործերում մենք ուժ չենք գործադրում։ Ուրիշ բան էր, եթե ամուսինդ նաև քեզ սպաներ, այն ժամանակ՝ անմիջապես։

Մայրն ուրախացած կամեցավ գնալ սպանվել, գալ, բայց երեխային մտաբերելով՝ կանգ առավ ու հարցրեց.

- Ինչո՞վ պետք է սպանվել։ Սովամահությունը չի՞ համարվում մահ. դա անմահությո՞ւն է։ Չէ՞ որ ամեն քաղաքացիական դատ, երբ այսքան հետաձգվում է, դառնում է քրեական՝ իր բոլոր աղետալի հետևանքներով։

Ես, որ կրնկակոխ հետևում էի այս դատավարությանը, մի օր դատարանում լսեցի «լուծեց» բառը։ Կարծելով, թե դատավորը լուծեց կնոջ հարցը, ուրախացա։ Բայց պարզվեց, որ խեղճ մոր երեխան էր լուծել, այն էլ նրա միակ շրջազգեստի վրա...

Վերջում, տեսնելով, որ այս դատից բան դուրս չի գա, մոտեցա թշվառ հայցվորին ու ասացի.

- Աղջի՛կ ջան, ամուսինդ դատարան չի գա, թե կարող ես, թակարդով բռնի՛ր: Նա խմել սիրո՞ւմ է:

- Անչափ, անսահման:

- Այն ժամանակ մի շիշ օղի տա՛ր, դի՛ր դատարանում ու դռանը կանգնի՛ր. հենց որ մտավ խմելու, հո՛պ դուռը փակի՛ր վրան ու դատավոր կանչիր...

ԱՆԱՎԱՐՏ, ԿԻՍԱՖԱԲՐԻԿԱՏ ՄՏՔԵՐ

Մայր Արաքսի ափերով

Գիշերը երազումս քունս չէր տանում։

Ասացի՝ հագնվեմ, Մայր Արաքսի ափերով քայլամոլոր գնամ և մի փոքր հին-հին դարուց հիշատակ փնտրեմ նրա ալյաց մեջ։

Ոնց որ Գամառ Քաթիպան։

Գնացի ու կանգնելով գետի ափին՝ հարցրի.

- Արա՛քս, ինչո՞ւ ձկանց հետ պար չես բռնում մանկական։ Դու, դեռ ծովը չհասած, սգավո՞ր ես ինձ նման։

Տեսա՝ մեջքը չի ուռեցնում Արաքսը և փրփուր չի հանում իր տակից…

Զարմացա, ասացի՝ այս ինչ է պատահել Արաքսին։

Ու կրկնեցի իմ հարցումը։

Այն ժամանակ լսեցի երկու պատասխան միաժամանակ՝ մեկը թուրքերեն, մյուսը ռուսերեն։

Թուրքերեն՝

- Նե իսթիորսեն, գյավո՛ւր,- որ թարգմանի,- ինչ ես ուզում, անհավա՛ատ։

Ռուսերեն՝

- Զեվո խոչեշ, արմյաշկա՛։ Այս էլ թարգմանի,- ինչ ես կամենում, ա՛յ շուն…

Սրա վրա երկրորդ անգամ զարմացա ու ասացի ինքս ինձ. «Արաքսի կեսը թուրքացել է, կեսը ռուսացել է, ինչ է»։

Ու ավելորդ համարեցի հին-հին դարուց հիշատակը նրանց ալյաց մեջ փնտրել, որովհետև թուրքերն ու ռուսները, լինելով ինձ հավասար օտարներ, ավելորդ համարեցի զբաղվել նրանց անցյալով։

Ու տխուր-տրտում ուզում էի հետ վերադառնալ, երբ հանկարծ հեռավոր շների հաչոց լսեցի։

Ականջս լարեցի. շները ռուսերեն էին հաչում…

Եվս մի հինգ րոպե՝ տեսա երկու կատաղի շներ, երկու նույնքան կատաղի ռուս հեծյալ սահմանապահների հետ ինձ շրջապատեցին

և հրամայեցին ձեռները վեր բարձրացնել: Երբ բարձրացրի, ինձ խուզարկեցին և առջևնին գցած՝ իրենց շտաբը տարան և անմիջապես կանգնեցրին զինվորական ատյանի առջև:

Ինձ հարցնում են.

- Ի՞նչ գործ ունես գիշերով սահմանամերձ գոտում:

- Ոչ մի գործ,- ասում եմ,- աննպատակ:

- Աննպատա՞կ,- գոռում է վրաս ատյանի նախագահը ու ավելացնում,- դու շատ սևեռուն նպատակ ես ունեցել...

- Եթե սևեռուն նպատակ ունենայի, քայլամոլոր չէի գնա...

- Դա նպատակը թաքցնելու միջոց էր:

- Ի՞նչ նպատակ:

- Շպիոնաժ*: Դու սահմանագլուխ էիր եկել՝ մեր զինվորական գաղտնիքները թշնամուն հայտնելու համար:

- Ես ոչ մի գաղտնիք չեմ հայտնել:

- Դու լո՛ւռ էիր կանգնած գետի ափին:

- Ո՛չ, ես հարցրի Արաքսին՝ ինչո՞ւ ձկանց հետ պար չի բռնում մանկական...

- Հետո՞, էլ ուրի՞շ:

- Էլ ուրիշ ոչինչ:

- Ոչի՞նչ: Դու՝ որպես լրտես, դատապարտվում ես գնդակահարության:

Ասաց ու դառնալով մի չեկիստի՝ ավելացրեց.

- Բանտարկե՛ք սրան, լուսաբացին դատարանի վճիռն ի կատար կածեք:

- Վա՛յ-վա՛յ,- ասացի ես բանտում և առավոտին սպասեցի:

Մի առավոտ, որն ինձ համար պիտի դառնար ոչ թե «լուսաբաց», այլ «մութաբաց»...

Այսպես, ուրեմն, ես զուր տեղը հետևեցի Գամառ Քաթիպայի օրինակին... Բայց չէ՞ որ ուրիշներն էլ են հետևում մեծ գրողների օրինակին: Մինչև անգամ բառացի արտագրում են, ինչո՞ւ չեն գնդակահարվում...

Եկավ լուսաբացը, և ես գնդակահարվեցի: Գնդակահարվեցի ու այնուհետև ինքնուրույն հեղինակ դարձա՝ չկամենալով ոչ մի հեղինակի ընդօրինակել:

* Շպիոնաժ *(шпионаж)* - ռուս. լրտեսություն:

Հ.գ. Կարդալով վերևի գրածս՝ գուցե մեղադրեք ինձ այն բանում, որ ես ռուսների և թուրքերի մեջ հավասարության նշան եմ դնում:

Չմեղադրե՛ք, եթե ոչ՝ ռուսին ավելի վատը կհամարեմ, քան թուրքին: Որովհետև առաջ ցարական Ռուսաստանն ընդունեց «Հայաստան առանց հայերի» լոզունգը, նոր՝ սուլթանական Թուրքիան:

Իսկ Սովետական Ռուսաստանը, որ կոչվեց «եղբայրական Ռուսաստան», զենք մատակարարեց Մուստաֆա Քեմալ փաշային, որ նա մի անգամ կոտորած հայերին... երկրորդ անգամ կոտորի:

Նման դեպքերում չգիտեմ՝ ռուսն ինչ է ասում, բայց գիտեմ, որ թուրքն ասում է՝

- Իքիսինե ուչ նահլաթ*...

Թարգմանություն

Արամ Անտոնյանը[147] հայկական եղեռնի մասին մի գիրք է գրել: Այնտեղ ես տեսա մի լուսանկար, որ տեսնելուցս մինչև այսօր, երբ հիշում եմ, կսկիծից սիրտս կտոր-կտոր է լինում:

Ասում եմ՝ խեղճ Աստվածն ինչ էր արել, որ Պետրոս Դուրյանն ուզում էր «շանթ մը ըլլալ և պլլվել անոր անվանը»[148]...

Եթե կարելի էր «շանթ ըլլալ», պետք էր պլլվել ոչ թե Աստուծո, այլ թուրքի անվանը, որ կարողացավ այդպիսի ահավոր ոճիր գործել ու սրբել ողջ մի ազգ աշխարհի երեսից...

Լուսանկարում պատկերված են հարյուրի չափ 3-4 տարեկան հայ որբեր՝ շարքով գետինը չոքած, որոնց թուրք «դաստիարակները» թուրքացնում են:

Այո՛, նրանց ծնողների գրկից խլել, ծնողներին սպանել, իսկ նրանց անմեղ երեխաներին թուրքացնում են...

Արի ու դիմացիր:

Այս տեսարանի առջև սրտիս ողջ խորքով կսկծում եմ ու հանկարծ ուշքի գալիս:

- Էհե՛,- ձայնում եմ ինքս ինձ,- ինչո՞ւ ես կսկծում: Չէ՞ որ դու սկզբունքով դեմ ես տարբեր ազգերի գոյությանը, ուզում ես, որ բո-

* Իքիսինե ուչ նահլաթ (ikisine üç nahlat) - թրք. բառացի՝ երկուսին՝ երեք անեծք (երկուսին մի գերեզման դնեմ):

լոր ազգերը ձուլվեն իրար, մի ազգ դառնան։ Այսօր թուրքերը ձուլում են իրենց մեջ հայերին, վաղն իրենք էլ կձուլվեն գերմանացիներին, որովհետև միևնույն ոճրագործներն են, այդ երկուսն էլ կձուլվեն Սովետական Միության՝ աշխարհի այդ երրորդ ոճրագործի հետ, և կամաց-կամաց ազգերը կվերանան աշխարհից։- Հետո,- ասում եմ ինքս ինձ,- ի՞նչ վատ բան են անում թուրքերը։ Նրանք ուղղակի հայ երեխաներին թարգմանում են թուրքերենի։ Ինչո՞ւ, երբ թուրքերը մեր հայ հեղինակների գրքերը թարգմանում են թուրքերենի, մենք ուրախանում ենք, իսկ երբ նույն թուրքերը մեր երեխաներին են թարգմանում՝ տխրում։

Հայ հեղինակների գրքերում դրված են նրանց միտքն ու հոգին։ Մի՞թե մարմինն ավելի թանկ արժե, քան մարդու հոգին։ Հոգին, որ անմահ է, իսկ մարմինը, որ մահկանացու է…

Երկրորդ գիշեր

Ամենից զարմանալին այս գիշերվա երազն էր։

Ուրեմն, ես ու մի ուրիշ հայ մարդ ճամփա էինք ընկել ու չգիտեմ՝ ո՞ւր էինք գնում։ Հանկարծ, կարծես գետնից, դուրս թռան մի թուրք և մի հայ բոլշևիկ։

Թուրքը բռնեց ընկերոջս, բոլշևիկը՝ ինձ, թե ձեզ պիտի սպանենք։

Ու ես տեսա, թե ինչպես թուրքը դանակը քաշեց ու հասավ հային՝ բղավելով.

- Կա՛մ կթուրքանաս, կա՛մ քեզ կսպանեմ։

- Մի՛ սպանիր, կթուրքանամ,- ասաց հայը և ավելացրեց,- իսկ ի՞նչ է հարկավոր անել դրա համար, խոմ շատ դժվար չէ՞ այդ։

- Շատ հեշտ բան։ Կթլպատվես և աղոթելիս «Աստված» ասելու փոխարեն «Ալլահ» կասես։

- Ուրիշ ոչի՞նչ։

- Ուրիշ ոչինչ։

- Այդ հայ լինելուց ավելի հեշտ բան է։

- Բա ես ի՞նչ եմ ասում։

- Թլպատի՛ր ինձ,- ասաց հայը։

Թուրքը, որ դանակը քաշել էր նրա վիզը կտրելու, կտրեց նրա

մի աննշան անդամի ծայրը միայն, և հայը փրկվեց։

Երբ հերթը հասավ ինձ, հայ բոլշևիկը ատրճանակը քաշեց ու գոռաց.

- Չշարժվե՛ս։

Այդ ժամանակ ես էլ կամենալով ընկերոջս օրինակն օգտագործել ասացի.

- Ինձ մի՛ սպանիր, հայ կդառնամ։

- Երկու անգամ հա՞յ, դա արդեն շովինիզմ է, և հենց դրա համար արժե քեզ գնդակահարել։ Ուրիշ բան, եթե բոլշևիկ դառնաս։ Այն ժամանակ կմտածեմ։

- Պայմանները։

- Պայմանները հետևյալն են՝ դու պետք է հավաքես քո ազգի բոլոր ձեռներեց մարդկանց, լեզվագետներին, գիտնականներին և գրողներին, լցնես բանտերը և գիշերվա մթանը քաղաքից դուրս տանես, սպանես։

- Վայ յամա՜ն... բոլորին միասի՞ն։

- Այդ չեմ կարող ասել, կհարցնես Ստալինին, ինչքան կամեցավ, այնքան կսպանես։

- Հետո՞...

- Հետո հայ ժողովրդին մաս-մաս կանես և ամեն անգամ հիսուն հազար ընտանիք Սիբիր կաքսորես, մինչև Հայաստանը հայերից իսպառ դատարկվի։ Երբ դատարկվեց, կառնես ավելը մի լավ կավլես երկիրը և երկու հավասար մասի բաժանելով՝ կեսը Վրաստանին կհանձնես, կեսը՝ Ադրբեջանին։

- Ասա Շահ Աբասը պիտի դառնամ էլի։

- Շահ Աբասից բեթարը։ Նա հայերին գաղթեցրեց տաք Պարսկաստան, իսկ դու՝ Սիբիրի սառնամանիքները։

- Իսկ այդ արարքին հետո ի՞նչ անուն կտաք,- հարցնում եմ ես։

- Ունենք, դրա համար մենք ունենք հատուկ լոզունգ, որը կոչվում է «Ձևով ազգային, բովանդակությամբ սոցիալիստական»։

- Ժամանակ տո՛ւր այդ բոլորի մասին մտածելու,- ասացի։

- Տալիս եմ ժամանակ, մտածի՛ր։ Մտածի՛ր նաև մեր տնտեսական ծրագրի մասին։ Ըստ մեր այդ ծրագրի՝ գյուղացին ինչքան քիչ անասուն պահի, երկիրն այնքան կլցվի բարիքներով։

- Իսկ եթե բոլորովի՞ն չպահի...

- Այն ժամանակ արդեն պիտի սկսենք արտահանել, որովհետև մեր երկրի փոքր սահմաններում այդքան մթերք չի տեղավորվի։

- Լավ,- ասացի,- ժամանակ տո՛ւր՝ այդ մասին էլ մտածեմ։

- Քեզ բանտ կնետեմ ու մինչև երեկո ժամանակ կտամ մտածելու։ Երեկոյան մթին նոր կտանեմ գնդակահարելու։

Ու ես, նստած բանտում, երանի եմ տալիս իմ ընկեր հային, որ թուրքացավ։ «Ա՜խ,- ասում եմ,- ինչքա՜ն հեշտ է թուրք դառնալը, և ինչքան դժվար բոլշևիկ դառնալը։ Ի՞նչ դժվար բան է թլպատվելը։ Այդ նշանակում է մարմնի մի անպատիվ անդամի ծայրը մի փոքր կտրել, մի անդամ, որն, ըստ իս, արմատից պետք էր կտրել։ Հետո՝ Աստված։ Գոյություն չունեցող բան. ի՞նչ վնաս կլինի, որ Աստծու փոխարեն՝ Ալլահ անվանեն իրեն։ Իսկ բոլշևիկ դառնալն ինչպիսի՞ արյունահեղությունների հետ է կապված... Դատարկել երկիրդ և հանձնել թշնամիներին. այդ միայն խելագարը կարող է անել»։ Այստեղ մի լուսավոր միտք անցավ գլխովս։ Ասում եմ՝ չեմ կարող արդյոք խելագարվել։ Ու փորձում եմ, բայց չի հաջողվում։ (Ես շատ եմ խելոք)։ Ի՞նչ անեմ, Աստվա՛ծ, ի՞նչ անեմ։

Հուսահատ ման եմ գալիս մթին բանտում և դռան ճեղքից դուրս նայում։

Տեսա՝ այն թուրքն էր անցնում բանտի դռնից, որը փրկեց իմ ընկեր հային։ Կանչեցի՝ դռանը մոտեցավ։ Երբ ես ասացի՝ ինձանից պահանջում են բոլշևիկ դառնալ, ասաց.

- Է՛, ի՞նչ կա որ, դարձի՛ր։ Էլ գլխիդ զոռ չես տա, Լենինն ինչ ասել է, այն կկրկնես ու անասունի պես անհոգ կապրես՝ որոճալով նրա մտքերը։

- Չեմ կարող։

- Չես կարող, ե՛կ քեզ էլ թուրքացնեմ։

- Բոլշևիկները թուրքին կխնայե՞ն։

- Օ՜, նրանք թուրքին պաշտում են։ Սա քառասունհինգ տարի է՝ ընկել են թուրքերի ետևից և խնդրում են բարեկամանալ. Թուրքիան միշտ քացի է տալիս նրանց մոթին, բայց էլի վազ չեն գալիս։ Ահա ամսի 18-ին էլի Միկոյանը Թուրքիա է գնում՝ նրանց բարեկամությունը մուրալու...

- Որ այդպես է, թուրքացրո՛ւ։ Բայց ինչպե՞ս թլպատվեմ։

- Թլպատման ենթակա անդամը դռան ճեղքից դո՛ւրս հանիր,

ես մի կերպ ծայրը կկտրեմ։

Այդպես էլ արի ու թուրքացա։

Երեկոյան, երբ բանտապետը ներս մտավ, ասացի.

- Ես բոլշևիկ չեմ դառնա։

- Այն ժամանակ գնանք՝ քեզ սպանեմ,- ասաց։

- Ավա՛ղ, ուշացել ես։ Ես հիմա ամենազոր եմ, ես թուրք եմ։

- Ապացո՞ւյց։

- Ահա՛ ապացույց,- ասացի ու թլպատս պարզեցի իրեն...

Կույրերի հաշվառում

Սարգիսը սենյակս մտավ շատ տխուր։ Երևում էր, որ լաց էր եղել մինչև անգամ։

- Ի՞նչ է պատահել քեզ,- ասացի վախեցած։

- Բոլոր ակնաբույժները մոբիլիզացված են՝ հաշվառելու երկրում եղած կույրերին։ Այսօր մեկնում ենք Միությանհեռավոր ծայրերը...

- Եվ դրա համար դու լա՞ց ես եղել։

- Դե՛, գործը երկարատև է և դժվար։ Երկու հարյուր վաթսուն միլիոն մարդու աչքեր քննելը ժամանակի կկարոտի։ Իսկ ես ունեմ կին ու երեխաներ. ո՞վ գիտի, մեկ էլ կտեսնե՞մ նրանց, թե՞ ոչ...

- Մի՞թե դու չգիտես՝ ինչքան կույր կա Ռուսաստանում։

- Որտեղի՞ց իմանամ։

- Գիտե՞ս՝ երկու հարյուր վաթսուն միլիոնից քանիսն են կոմունիստ։

- Գիտեմ։

- Քանի՞սը։

- Յոթ միլիոնը։

- Է՛, այդքան էլ կույր գոյություն ունի, ուրեմն։

- Կուսակցականներն անխտիր կույրե՞ր են։

- Բոլորը։ Որովհետև ահա մոտենում ենք հիսուն տարվան, ու նրանք դեռ չեն նկատում, թե երկիրը դեպի կործանում են տանում։

- Բայց մեզ հրահանգված է ուսումնասիրել, թե քանի՞ տեսակ կույրեր գոյություն ունեն։

- Երկու տեսակ կույրեր գոյություն ունեն։ Շարքային կոմունիստները երկու աչքով են կույր, իսկ նրանց առաջնորդները՝ չորս աչքով։

- Պատմության մեջ այդ աստիճան կույրերի չենք հանդիպում:

- Չեք հանդիպում, որովհետև անցյալում մարդիկ աղքատությունից կամեցել են հարստության անցնել: Իսկ երբ մի ժողովուրդ ուզում է հարստությունից աղքատության անցնել, նրա համար չորս աչքով կույր առաջնորդ ունենալն էլ քիչ է, նրանց պետք է առնվազն վեց աչքով կույր առաջնորդ, որ «Մարքսի դրոշով, Լենինի առաջնորդությամբ» դեպի կործանում գնա:

- Բայց քո բոլոր ասածները քաղաքական բնույթ ունեն և կապ չունեն բժշկության հետ,- ասաց:

- Գրականության մեջ, ճիշտ է, «արվեստն արվեստի համար» տեսության հետևողներ կան, բայց բժշկության մեջ չկա որևէ տեսություն, որ դավանի «աչք աչքի համար»: Բժշկության մեջ, հետևաբար և կյանքում աչքը գործածվում է միայն տեսնելու համար և ոչ «աչք աչքի համար» կամ «քիթ քթի համար»:

- Քո ասածին եթե հավատանք, ուրեմն երկրի առաջնորդները կուրության հետ միասին նաև խուլ պետք է լինեն: Որովհետև գիտենք, որ կույրերի լսողությունը որոշ չափով փոխարինում է աչքերին՝ ուղիղ ճանապարհ գտնելու համար:

- Այո՛: Ականջն էլ, քիթն էլ: Եթե կոմունիստները հոտառություն ունենային, անմիջապես ետ կդառնային իրենց բռնած ճանապարհից: Իսկ որ նրանք ականջ չունեն, դա երևում է նրանից, որ չեն լսում ամբողջ երկրի աղաղակը՝ թե վերջ տվեք ձեր հիմարություններին:

Սարգիսը հարցրեց.

- Ուրեմն, չգնա՞մ հաշվառման:

- Մի՛ գնա, սիրելի՛ս, մի՛ գնա: Գնա՛ տուն, ճամպրուկդ դատարկի՛ր և ողջագուրվի՛ր երեխաներիդ հետ այնպես, որպես թե գնացել, գործդ ավարտել ու վերադարձել ես:

Գոհունակության ժպիտ փռվեց Սարգիսի դեմքին, և նա ավելի խորացավ բազկաթոռի մեջ:

- Իրոք որ ճիշտ ես ասում,- ասաց:

- Ծո, ճիշտն էլ խո՞սք է,- ոգևորվեցի ես,- այս կույրերն իրենց արևելք-արևմուտքն են կորցրել: Գնում են դեպի ետ՝ նախապատմական կոմունիզմ, ասում են՝ առաջ ենք գնում: Այսպես եթե շարունակելու լինեն, շատ շուտով մենք մեր հին անտառը դուրս կգանք՝ կապիկների ու վայրի գազանների մոտ:

Սարգիսը ծիծաղեց։

Ասում է.

- Երևակայում եմ, թե այն ժամանակ մեր նախահայր կապիկները ինչ անձկությամբ կփարվեն մեզ ու ինչ ուրախությամբ կընդունեն իրենց անառակ որդոց։ Կասեն.

- Հը՛, դուք ձեզ բանական արարածներ համարեցիք ու մեզնից հեռացաք, հիմա ինչ պատահեց, որ վերադարձաք։

Մենք, իհարկե, ամոթից կկարմրենք և գլուխնիս վար կկախենք։ Բայց ինձ թվում է՝ կապիկներն անհիշաչար են, նրանք կվերադարձնեն մեր պոչերը և կասեն՝ դե, թռեք ծառ։

Սարգիսը հետո հարցրեց.

- Հետքրքիր է, դրանից հետո քանի՞ դար պիտի անցնի, որ կոմունիստները դադարեն անմեղ մարդկանց գնդակահարելուց։

- Օ՛,- ասացի ես,- անտառը Ռուսաստան չէ։ Այնտեղ են առյուծը, վագրն ու բորենին, որոնք թույլ չեն տա, որ վերջինները մի անմեղ մարդ գնդակահարեն։ Նրանք կասեն.

- Սպանիր այնքան, ինչքան հարկավոր է քո ուտելու համար։ Իրավունք չունես անվերջ գնդակահարել ու բանտի նկուղներում ձկան տակառի պես իրար վրա շարել։

- Չէ՛, Արա՛մ,- ասաց Սարգիսը,- նրանք չեն սթրի, մի հոկտեմբերյան հեղափոխություն էլ անտառում կսարքեն։

- Ինչպե՞ս...

- Կճարեն մի անտառային Լենին, դա կխաբի անտառի նապաստակներին ու աղվեսներին, նրանց առյուծի ու վագրի դեմ կհանի՝ խոստանալով նրանց ժանիքներն ապստամբներին բաժանել, առյուծին կդնի վագրի գոգը, կգնդակահարի, ինչպես Լենինը նախկին թագաժառանգին դրեց իր հոր՝ Նիկոլայ ցարի գիրկն ու գնդակահարեց։ Վերջում էլ ի վարձատրություն նապաստակին ու աղվեսին՝ երկուսին էլ կմորթի, մեկի միսը կուտի, մյուսի մորթը կհագնի։

Այնպես, ինչպես վարվեց Լենինը բանվորների ու գյուղացիների նկատմամբ։

- Չեմ կարծում,- նկատեց Սարգիսը,- խաբում է միայն մարդը, երբ կապիկ դառնանք, վերջ կտանք այդ զզվելի սովորությանը։

Հետո, երկար լռելուց հետո շարունակեց.

- Զարմանալի բան։ Դարվինը մեզ կապիկից առաջացրեց, բայց

մոռացավ այդ կապիկի առավելություններից մի քանի բան մեր մեջ դնել…

Երևակայության ուժը

Սովետական դատարանը երբեք մեղադրյալին մի պատիժ չի տալիս։

Միշտ երկուսը։

Եթե մեկին տասը տարի կալանք է տալիս, հետն էլ հինգ տարի ընտրական ձայնի իրավունքից զրկում է։ Կարծես երկփողանի հրացան լինի, որն անպատճառ երկուսը միասին պետք է կրակել… թեկուզ ծտի վրա։

Դատարանն ինձ քսան տարի բանտ տվեց, հինգ տարի էլ ձայնազրկության դատապարտեց։

Ստանալով դատավճիռը՝ մտածեցի. «Սրանք փոխարեն իրենց կոլխոզի ոչխարները զույգ ծնեցնելու, պատիժներն են զույգ ծնում»։

Բայց ես դժգոհ չէի դատավճռից։ Միայն ես կուզեի հակառակը լիներ. քսան տարի ձայնազրկություն, հինգ տարի բանտ։

Որովհետև ես առանց այդ էլ ընտրություններին չէի մասնակցում։ Սովետական ընտրությունների մասին ես հետևյալ կարծիքն ունեմ. ժողովուրդը չպետք է միջամտի ընտրություններին. պետք է թույլ տալ, որ պետության առաջնորդն ինքը իրեն ընտրի։ Դրանով նրանք ինքնուրույնություն են ձեռք բերում և անկախ դառնում։ Որովհետև կարող է պատահել, որ մի երկիր էլ ժողովուրդ չունենա, ուրեմն, նրա պետական առաջնորդը չպիտի ընտրվի, երկիրն անգլուխ մնա։

Իմ սովորությունն է այդ։ Ես ուրիշի գործերին չեմ խառնվում։ Այնպես որ, հինգ տարվա ձայնազրկությունը ոչ թե պատիժ, այլ պարգև էր ինձ համար։

Սովետական երկրում ժողովուրդը անպոչ գդալ է, որն ամեն բանի մեջ չպետք է ընկնի։

* * *

Բանտարկյալն ապրում է ոչ թե կառավարության տվածով, այլ իր երևակայությամբ։ Եթե ես բանտի տված սնունդի վրա դնեի

հույսս, հիմա վաղուց մեռած կլինեի։

Տալիս էին օրական կես կիլո հաց և մի պնակ ջուր, որ բանտային բարբառով «մակարոնով սուպ» էր կոչվում։ Բայց բանտում քերականական օրենքները խիստ էին պահպանվում։ «Մակարոնը», որ գոյական անուն էր և միաժամանակ «ենթակա», անվերջ բոլոր բանտարկյալների պնակի մեջ չէր կրկնվում, այլ տրվում էր միայն մեկի պնակի մեջ, իսկ մյուսների մեջ՝ «մակարոնի» դերանունը միայն…

Ինձ նման ուժեղ երևակայությամբ օժտված կալանավորը, իհարկե, չէր բավարարվի նման ճաշով։ Ես երևակայությամբս այնպիսի ճաշ էի վայելում, որ ռեալ կյանքումս երազել անգամ չէի կարող։

Ես բանտ էի մտել՝ մեծամեծ գործեր կատարելու։

Գործեր, որոնք պահանջում էին ուժեղ սնունդ։

Այնտեղ իմ առաջին գործը եղավ պատժել աշխարհի չորս ամենամեծ ոճրագործներին։

Այն է՝ Էնվեր, Թալեաթ, Ջեմալ փաշաներին ու «ընկեր» Ստալինին։

Առաջին երեքը թեև վրիժառու գնդակից շանսատակ էին եղել, բայց այդ քիչ էր, պետք էր նորից մի լուրջ պատիժ տալ։ Թե ինչ, այդ դժվարանում էի ասել։

Եվ որպեսզի երեք փաշաները չգանգատվեին՝ ասելով, թե ինչո՞ւ մեզ երկու անգամ ես պատժում, իսկ Ստալինին՝ մեկ, ես որոշեցի Ստալինին էլ ժամանակավոր շանսատակ անել մինչև հիմնական պատիժ ճարելը։

Եվ արեցի։

Շանսատակ արեցի և ասացի չորսին էլ.

- Այստեղ սպասեցեք. ես մի քանի առձեռն թշնամիներ ունեմ, գնամ սպանեմ, գամ, նոր ձեզ դատեմ։

Իմ առաջին առձեռն թշնամիներն այն երկու չեկիստներն էին, որոնք ճաշիս ժամանակ հանկարծ տունս մտան և, չսպասելով, որ բերնումս ծամածը կուլ տամ, վերցրին ու տարան Չեկայի նկուղը խցկեցին։

Մեկի անունը Զախար էր, մյուսինը՝ Արամ։ Մի-մի գնդակ ճակատներին՝ երկուսին էլ վայր գլորեցի։

Իմ երկրոդ թշնամին «կլյուչնիկ» Խաչիկն էր։ Սա իմ խցի դուռը

հանկարծ բաց էր անում, ինձ դուրս թողնում և հրամայում տասնհինգ րոպեի մեջ բնական կարիքս հոգալ։

Եղա՞վ։ Կա՞ աշխարհում մի գործ, որի համար պետք չզգացվի նախապես երկար մտածել այդ մասին, նոր սկսել։

Ես մի հատիկ անմտածված գործ եմ ճանաչում, և այդ Հոկտեմբերյան հեղափոխությունն էր։ Բայց բնական կարիք՝ առանց երկար մտածելու, ես չեմ պատկերացրել։

Այդ անտեր կարիքը բանաստեղծության կնմանի, որն առանց մուսայի չի գրվի։

«Հայաստան» հրատարակչությունը տարեկան հազարավոր անուն գրքեր է այրում միայն նրա համար, որ գրված են անմուսա։

Իսկ սովետական գիրքը կարելի՞ է համեմատել մարդկային աղբի հետ։ Այսօր կոլխոզներն իրենց արտերը պարարտացնելու համար փողոցներն ընկած «օրգանական աղբ» են փնտրում։ Իսկ եղե՞լ է դեպք, որ այդ այրվող գրքերից մի ընթերցող կամենա գնել։

Այս անպիտան Խաչիկը ոչ միայն դրդում էր ինձ չմտածված քայլեր անել, այլև «գործիս» ամենակրիտիկական պահին հրամայում էր վերջակետ դնել՝ դեռ «նախադասությունը» չվերջացրած։

Երրորդ գնդակս Խաչիկի ճակատին բռնեցի։ Եվ սկսեցի մտաբերել, թե ուրիշ ի՞նչ թշնամիներ ունեմ։

Մտածեցի՝ թշնամի չճարեցի։ Իսկ ատրճանակիս լիցքում երկու փամփուշտ էր ավելանում։

Տե՛ր Աստված, ասում էի, ո՞ւմ վրա կրակել։ Կոնկրետ թշնամի չգտնելուս համար երկու պատահական չեկիստ սպանեցի՝ որպես պրոֆեսիոնալ հանցագործների։

Մաքրելով հաշիվն իմ բոլոր թշնամիների հետ՝ ինձ տվեցի հեշտանքի։

Ես սկսեցի մտնել բոլոր տները և սիրել ուզածս կնոջը։ Այդ կողմից բանտը ամենահարմար տեղն է, որովհետև կինդ չի կարող այնտեղ ոտք դնել։

Այցելություններիս ժամանակ, եթե պատահում էր, որ կնոջ ամուսինը տանն էր լինում, ես նրա ձեռքը տալիս էի զամբյուղը և շուկա ուղարկում գնումների։

Պատահում էր, որ մի կին շատ էր ինձ դուր գալիս, և ես չէի բավարարվում ժամանակավոր, թռուցիկ սիրուց, ուզում էի, որ նա

հավիտյան իմս լիներ։ Այդ դեպքերում նրանց ամուսիններին ուղարկում էի կարտոֆիլի ալյուր գնելու կամ «կռիշկայի» հերթ կանգնելու։ Երկուսի գնացողն էլ հավասարապես այլևս չի վերադառնում, որովհետև քաղաքում կարտոֆիլի ալյուր չկա, իսկ «կռիշկայի» հերթն էլ այնքան երկար է լինում, որի ընթացքում շատերն իրենց հերթը չկորցնելու համար տեղում էլ ամուսնանում են...

* * *

Կանանցից հագեցած՝ ձգտում էի հարստության, փողի։ Դրա համար գնում էի Ամերիկա և դատարկելով մի միլիոնատիրոջ դրամարկղ՝ ետ էի գալիս՝ վճռելով շռայլ ապրել։

Բայց ինչ կճարես մեր սով երկրում։

Մթերային խանութներում մկներ էին խաղում։

Գնում էի մասնավոր շուկա և հարցնում.

- Միսն ինչ արժի։

- Կիլոգրամը երեք ռուբլի,- ասում էր։

Տեսնում էի, որ այդ գինը քսակիս հարմար չէր։ Ես միլիոնատեր էի, այդքան էժան միս առնելով՝ ես մինչև ճրբ պիտի սպառեի փողերս։

Ասում եմ.

- Երեք ռուբլին էժան է, չեմ առնի։ Կիլոյին հարյուր ռուբլի կտամ։

Խանութպանը, կարծելով՝ ձեռք եմ առնում, ասում էր վիրավորված.

- Անցի՛ր, միս չունեմ քեզ նմաններին վաճառելու։

* * *

Այսպես տարված իմ երևակայությամբ՝ ես չիմացա, թե ինչպես անցան բանտարկությանս տարիները։

Այո՛, անցան, և ես ազատ եմ։

Դուրս եմ գալիս քաղաք և զարմանում։ Ո՞ւր է իմ թողած Երևանը։

Չկա։

Հողաշեն միհարկանի տները դարձել են քարաշեն, բազմահարկ։ Նոր փողոցներ, նոր հրապարակներ։ Քաղաքը՝ կանաչության մեջ կորած։

Ամբողջ օրը ման եմ գալիս գտնելու իմ տունը, չեմ կարողանում: Սրան-նրան հարցնում եմ՝ ոչ ոք չի պատասխանում: Ես մի օտարական՝ քարաշեն քաղաքում:

...Ա՜խ, այն ժամանակ ես չգիտեի, որ իմ միհարկանի հողաշեն կինն էլ բազմահարկ քարե կին էր դարձել...

Բայց այս մասին հետո:

Հա: Այսպես ման գալուց հոգնած, երբ մթնեց, մոտեցա ու զարկի մի անծանոթ դուռ:

Դուռը բացեց մի կին:

- Քույրի՛կ,- ասացի,- ղարիբ* մարդ եմ, մի գիշեր ինձ տեղ չե՞ք տա:

- Ինչո՞ւ չէ,- ասաց,- հյուրն Աստծունն է: Նե՛րս արի:

Եվ ոլոր-մոլոր սանդուղքներով վեր բարձրացանք:

Ամբողջ սենյակում գրքերի դարակներ էին՝ մեջը Լենինի ու Ստալինի հատորները շարած:

«Վա՛յ,- ասացի մտքիս մեջ,- սա ի՞նչ դժբախտություն էր, բոլշևիկի տուն եմ ընկել...»:

Մենք դեռ երկու բառ չէինք փոխանակել, երբ հնչեց բնակարանի զանգը:

- Բարսեղս է անպատճառ,- ասաց հյուրընկալ կինը և դուռը բաց անելով՝ գիրկն ընկավ, «պաշտելի Բարսեղ» անվանեց և զանգատվեց, թե այսօր ինչո՞ւ այսքան ուշացավ:

- Կներես, Մարիա՛մ ջան, ժողով ունեինք:

«Մարիա՛մ»: Իսկույն հիշեցի, որ ժամանակին իմ կնոջ անունն էլ Մարիամ էր:

Բարսեղն աչքերով ինձ ցույց տալով՝ ուզեց իմանալ, թե ո՞վ եմ ես:

- Սա մի անտեր մարդ է. մի գիշերվ ապաստան խնդրեց՝ տվի:

Զանցած կես ժամ՝ ներս մտան նաև երկու երիտասարդներ՝ իրար հետ վիճելով: Մեկն ասում էր՝ սոցիալիզմին առաջին հնգամյակին կհասնենք, մյուսն ասում էր՝ երկրորդ հնգամյակին:

Ես սպասում էի, որ Բարսեղը, որին «Բարսեղ դյադյա» էին անվանում երիտասարդները, այնքան խելոք կլինի, որ կասի՝ սոցիալիզմին երբեք չենք հասնի: Մեծ եղավ զարմանքս, երբ ասաց.

* Ղարիբ- պանդուխտ:

- Ավելի մոտ ժամանակներում կհասնենք։

Լեղիս պատռվեց։ Ասացի. «Շուտ քնեմ, առավոտ շուտ վեր կենամ, փախչեմ այս տնից։ Սրանք, որ այսպես սկսել են, սոցիալիզմը կիրականացնեն... իրենց տանը»։

Բայց տարօրինակն այն էր, որ երիտասարդներից մեկի անունը Լևոն էր, մյուսինը՝ Եղիշե։ Այսինքն՝ իմ այն երեխաների անունները, որոնց թողի քսան տարի առաջ շատ փոքր հասակում։

Կասկած ընկավ սիրտս, և ես նայեցի Մարիամին... «Բայց ո՞չ, չի կարող պատահել... Իմ կնոջ մազերը դեռ այն ժամանակ սպիտակ էին, իսկ հիմա սեփ-սև...»։

Ինքս ինձ ասում, հետո էլ ավելացնում եմ. «Խեղճ մարդ, դու չգիտես, որ այն օրից, երբ աշխարհ եկավ սև ներկը, կանայք դադարեցին ծերանալ...»։

Ես հարցնում եմ.

- Տիկի՛ն, դուք երբևիցե բանտարկյալ ունեցե՞լ եք։

- Շատ առաջ ունեցել եմ մեկը։ Նա մեռած կլինի։ Իմ ամուսինը։

- Անո՞ւնը։

- Արամ Թովմասյան, որքան հիշում եմ

(Արամ Թովմասյանը ես եմ)։

- Այդ մարդը կենդանի է,- ասում եմ։

- Ի՞նչ գիտես,- հարցրեց։

- Ես բանտից եմ գալիս։

- Մի՞թե։

- Այո՛։

Տիրեց մի զարհուրելի լռություն։

Ես, ուժ գործադրելով, հարցրի.

- Եթե վերադառնա, կընդունե՞ք որպես ամուսին։

- Անշուշտ,- ասաց։

- Իսկ... սա... սա «պաշտելի Բարսեղը»...

- Նա իր տեղն ունի, սա իր տեղը։ Արամը կլինի իմ դիրեկտորը, ասենք, իսկ Բարսեղը՝ նրա տեղակալը։

- Իսկ գիտե՞ք, որ մեզ մոտ դիրեկտորությունը ձևական պաշտոն է, բոլոր գործերը տեղակալի վրա են ծանրացած։

- Հիմա նա ծերացած կլինի։ Եթե եկավ, նրան թոշակի կուղարկեմ որպես ամուսին։

- Մի՛ մոռացեք, որ մեզ մոտ թոշակի են կանչվում նաև այնպիսիները, որոնք դեռ կարող են աշխատել... որպես ամուսին:

- Շտատից դուրս, հասարակական կարգով կարելի է հանդուրժել:

Սրա վրա ես սկսեցի ծանրութեթև անել: Կարո՞ղ եմ ինքնությունս հայտնել՝ բավարարվելով իր տված արտոնություններով:

Տեսա, որ ո՛չ:

Այդ գիշեր ոչ մի «գործող անձի» դեր չստանձնելով՝ որպես հանդիսատես՝ քնեցի այդ տանը, իսկ առավոտը ելա ուղիղ ինձ դատող դատավորի մոտ գնացի ու ասացի:

- Քսան տարի առաջ քո վճռով քսան տարվա բանտարկության ենթարկվեցի ու այսօր ազատվեցի: Հիմա էլ խնդրում եմ մի քսան տարի էլ բանտարկության ենթարկես՝ «համաձայն իմ դիմումի»:

Դատավորը ցուցակները նայեց և ասաց.

- Չեմ կարող: Դու գերագույն դատարանի կողմից արդարացված ես որպես սխալմամբ բանտարկված և վերականգնված ես քո բոլոր իրավունքներում: Ուրիշ բան էր, եթե իբրև հանցավոր՝ բանտարկված լինեիր, այն ժամանակ կարող էի քեզ որպես «կրկնահանցագործ» նորից բանտարկել: Բայց հիմա ես բոլորովին անմեղ մարդու երկու անգամ բանտարկել չեմ կարող:

- Չե՞ս կարող, շատ լավ,- ասացի:- Ես ինքս ինձ կբանտարկեմ: Իսկ գերագույն դատարանն իմ ո՞ր իրավունքը վերականգնեց, երբ այսօր ես այլևս ընտանիք չունեմ...

Ու դիմելով իմ ամենազոր երևակայությանը՝ սուսիկ-փուսիկ գնացի բանտ ու իմ տեղը նստեցի:

Բանտում իմ առաջին գործը եղավ հանել թուրս ու խոթել կնոջս սրտի մեջ...

Հետո հանեցի սուրս կնոջս սրտից ու խոթեցի իմ երկու որդիների սրտերը՝ ասելով.

- Այն սուրը, որ սպանեց դավաճան կնոջս, կսպանի նաև կոմունիստ որդոցս[149]...

Երևակայությամբ ես կոմունիստ ջարդեմ՝ իրականում կոմունիստ երեխաներ ծնեմ...

Որով և իմ բոլոր հաշիվները մաքրեցի այս աշխարհի հետ:

- Հետո՞,- կհարցնեք դուք ինձ:

- Էլ ինչ «հետո»: Այն էլ դուք երևակայեցեք, թե ինչ կլինի այն մարդու դրությունը, որը, բանտից զատ, ուրիշ ոչ մի տեղ գնալիք չունի…

Հիմա, ընթերցո՛ղ, լսելով իմ կյանքի այս պատմությունը՝ վերջաբանն էլ լսի՛ր, նոր գի՛րքը փակիր:

Ահա այն.

Վերջաբան

Դուք տեսաք, թե ինչպիսի կարևոր դեր խաղաց երևակայությունը իմ ողջ կյանքում, սիրելի՛ ընթերցողներ: Ի՞նչ կա ավելի հզոր ու ամենակարող, քան այն:

Բայց որոշ մարդիկ ասում են, որ դա ժամանակավոր բան է, հետո այլևս մարդիկ չեն կարողանա երևակայել, որովհետև գիտությունն առաջ կանցնի, իսկ երևակայությունը հետ կմնա ու կանհետի:

Ասում են՝ այն բոլոր բաները, որոնց մասին գրել են ֆանտաստիկ վեպի հեղինակները, գիտության շնորհիվ իրականություն են դարձել արդեն, և այն դադարել է երևակայություն լինելուց:

Առաջ, ասում են, երևակայությունը չէր համարձակվում օդ բարձրանալ, իսկ հիմա մեր տիեզերանավերը երկինքն են ակոսում, լուսին են թռչում:

Ճի՞շտ է արդյոք այս մտավախությունը, արդյոք գիտությունն ընդունա՞կ է ամեն ինչի:

Ո՛չ:

Օրինակ՝ այս բոպեիս գիտությունը կարո՞ղ է խաղաղություն հաստատել երկրի վրա, այնպես անել, որ Ռուսաստանն ու Ամերիկան ատոմային ռումբ չթափեն իրար գլխի ու աշխարհը չկործանեն:

Ո՛չ, չեն կարող: Նրանք անպայման պիտի կործանեն:

Կարո՞ղ է այնպես պատահել, որ մի պետություն մյուս պետության վրա հարձակվելիս գրկի նրան ու համբուրի՝ փոխանակ սպանելու և ավիրելու:

Ո՛չ: Հազար տարի մնա, գիտությունն այդ չի անի. այդ կարող է անել միայն երևակայությունը:

Գիտությունը միայն կատարելագործում է զենքեր, որ իրար շուտ կոտորեն: Իսկ դա մարդու ինչի՞ն է պետք: Ավելի լավ չէ՞ր, որ մենք

նախապատմական մարդ մնայինք և նետ ու աղեղով մեր տնայնագործական պատերազմները վարեինք։

Այդ երանելի ժամանակները մարդիկ «կատաղի» ճակատամարտը սկսում էին առավոտը. մինչև իրիկուն հազիվ էին հաջողում մի քանի դիակ փռել կռվի դաշտում։ Իսկ հիմա։ Հիմա առաջուց իրար բնաջնջում են, նոր ճակատամարտն սկսում...

Սա չէ՞ գիտության մատուցած ծառայությունը։ Հիմա, աշխարհն իր տեղը թողած, գանք Երևանի քաղսովետ։

Սա բարձրաբերձ բնակարաններ է կառուցում՝ առանց վերելակի։

Գիտությունը կարո՞ղ է ցույց տալ, թե ծեր ու հիվանդ մարդիկ ինչպես պիտի բարձրանան իրենց հարկաբաժինը։

Ո՛չ։ Իսկ ես իմ երևակայությամբ իսկույն բարձրանում եմ։

Ինչպե՞ս։

Ես նայում եմ ուղտապաններին, թե ինչպես են նստում իրենց ուղտերին։

Հետևը մաժելով՝ նստեցնում են նրանց, բարձրանում նստում, նոր ոտքի հանում գրաստներին։

Այդ օրնակով էլ ես չոքեցնում եմ նորակառույցը, մտնում ներս ու ոտի հանում այն։

Կարելի է բարձրանալ նաև այլ կերպ։ Կժերով աղբյուր գնացող գյուղացի աղջիկների օրինակով. նորակառույցը պառկեցնում են կողքի վրա, բնակիչները բխբխկալեն լցվում են ներս, հետո շենքը դարձնում են իր հատակի վրա։

Հաստատ համոզված, որ գիտությունը պիտի կործանի աշխարհը, որոշել եմ թողնել հայրենի երկրագունդը, հեռանալ և վարձով ապրել մի այլ մոլորակի վրա։ Եվ սպասել մեր երկրի կործանմանը։ Կործանվելուն պես կիջնեմ և նրա ավերակների վրա մի նոր աշխարհ կստեղծեմ, բայց ոչ նախկին Աստծու ստեղծածի նման մի անիմաստ աշխարհ։

Ամենից առաջ Ադամ ստեղծելիս իմ կերպարանքով չեմ ստեղծի։ Իմ քիթը նախ ճկռան է, հետո էլ ծաղկի հետևանքով՝ անհարթ։ Ադամը՝ որպես մարդու առաջին օրինակ, կուզեմ, որ մի փոքր ձևավոր լինի։

Հետո՝ երբեք ես այդ Ադամի համար կին չեմ ստեղծի, տա և ասի. «Վերցրու իմ առջև սիրի՛ր, իսկ ես նայեմ ու քաղցր ջուրը լցվի բերանս»։

Ո՛չ: Ես Ադամի կողից երկու կին կհանեմ՝ մեկը ինձ համար, մյուսն իր:

Ես էլ նրա պես մարդ: Ինչո՞ւ նա վայելի, իսկ ես՝ ոչ:

Ես կին շատ եմ սիրում, և եթե Ադամը համաձայնի, նրա կողի բոլոր ոսկորները կին կդարձնեմ:

Երբ մարդիկ աճեն ու բազմանան, ես նրանց համար բաց կանեմ դպրոցներ: Բայց դպրոցներ ոչ թե գիտություն, այլ տգիտություն սովորելու համար:

Առաջին կարգի երկու դպրոցներում աշակերտները կատարյալ կհիմարանան, ապա կանցնեն բարձրագույնը՝ կատարելագործելու իրենց հիմարությունը և դառնալու կատարյալ խելագարներ: Ապա կյանք կմտնեն:

Դրանք մեծ մասամբ հումանիստներ են և առաջին կարգի գյուղատնտեսներ:

Նրանք մարդկանց երջանկացնելու համար շարքով կկանգնեցնեն պատի տակ և կգնդակահարեն նրանց:

Իսկ գյուղատնտեսները երկրին առավել չափով կաթ, միս, յուղ տալու համար ոչխարի հոտերի թիվը հազարից կիջեցնեն հինգի ու նրանց էլ սովից կսատկեցնեն:

Կարծեմ հասկացաք, որ իմ կառուցած աշխարհը սոցիալիստական պիտի լինի:

Եթե լիներ կապիտալիստական, երկարատև չէր լինի իմ աշխարհը և նորից կործանման ենթակա:

Ես պետք է օգուտ քաղեմ անցյալի փորձից: Եթե բանական մարդը կործանեց աշխարհը, բնական է, որ ստեղծեմ անբան մարդիկ:

Անբանը չգիտի ատելը ինչ է: Բոլոր դեմը եկողների երեսին միայն ծիծաղում է:

Դրանից ավելի երջանիկ աշխարհ:

Բայց մի բան:

Ես երևակայությամբ կառուցում եմ իմ աշխարհը և միաժամանակ վախիցս դողում:

Որովհետև հանկարծ կարող եք կանգնել և ասել երեսիս.

- Այդ աշխարհը քո երևակայությունը չէ. այդպիսին հնում էլ է եղել և կոչվել է Սովետական Միություն, որի գործած բոլոր խե-

լագարություններն ամփոփված են Լենինի վաթսունհինգ հատորներում։

Այստեղ ահա, իմ երևակայության թևը կոտրվում է...

Ստեղծագործական հարցեր

Շատ տեսաբաններ չեն հավանում Լենինի ստեղծած նոր աշխարհը։ Ասում են՝ Աստծու ստեղծած աշխարհն ավելի հարմար է ապրելու համար։ Բայց նրանք անտեսում են զույգ ստեղծագործության դարաշրջանների առանձնահատկությունները։

Այն ժամանակ, երբ Աստված ստեղծում էր իր առաջին մարդուն, գոյություն չունեին տարբեր դասակարգեր։ Ադամը մի «համախառն արտադրություն» էր, որի մեջ, սակայն, ներկա էին ապագա դասակարգերի սաղմերը։ Սաղմեր, որոնք պետք ունեին մի որևէ հեղափոխության՝ աճելու և բողբոջներ արձակելու համար։

Ժամանակի Լենինը, այսինքն՝ սատանան, ճիշտ է, օձի կերպարանք առնելով, մոտեցավ առաջին կնոջը՝ դրախտում խռովություն ստեղծելու համար, բայց չհաջողեց։ Խռովությունը ճնշվեց Աստծու կողմից, Ադամ-Եվան անմահությունից զրկվեցին, իսկ օձը դատապարտվեց փորի վրա սողալու։

Ու որովհետև սատանան բոլշևիկ չէր, անմիջապես հուսալքվեց, դադարեց նոր խռովություններ առաջ բերելուց, և սկսվեց ռեակցիայի մի երկարատև շրջան։

Դրությունն այսպես չէր լինի, իհարկե, եթե խռովություն հարուցողը սկզբունքով սատանա լիներ։

Ինչո՞ւ միայն օձ։ Աշխարհում չկայի՞ն այլ կենդանիներ, որոնց կերպարանքն առնելով կարելի լիներ խաբել Եվային։

Սատանան կարող էր մի գեղեցիկ եղջերու դառնալ և խաբել։ Ձայլամ, արտույտ, սոխակ։ Ինչո՞ւ անպատճառ օձ ու կարիճ։

Նայեցեք ներկայիս սովետական կառավարությանը։ Աշխարհի բոլոր երկրների քաղաքացիների կերպարանք առած՝ ամեն երկիր մտնում և խռովություն է առաջ բերում՝ իր օրինավոր կառավարությունը տապալելու համար։ Կոնգոյում կոնգոցի է դառնում, Վիետնամում՝ վիետնամցի, Կուբայում՝ կուբացի։

Սատանան ահա՛ այսպես կլինի. դրախտի եղածին ոչ թե սա-

տանա, այլ հրեշտակ կարելի է համարել խռովություն առաջացնելու գործում:

Ադամը, որ աշխարհ եկավ, ոչ մի բանի կարիք չուներ: Եթե Աստված չտար, անգամ կնոջ կարիքը չէր ունենա և ինքը պահանջ չէր դնի: Որևէ պահանջ ունենալու համար պետք է իմանալ, թե ինչ զգայարաններ ունի մեկը, և գիտակ լինել իր մարմնի մասերին ու նրանց գործածելու եղանակին: Հետևաբար, ստեղծագործական ներկա փուլում աշխարհայացքի մասին խոսք անգամ լինել չէր կարող, քանի որ ստեղծվածին տակավին հայտնի չէր, թե ինքը գլուխ ունի՞, թե՞ ոչ:

Այլ էր Լենինի ժամանակ:

Լենինի ժամանակ կար պատրաստի մարքսիստական աշխարհայացք, ու Լենինը, առանց ժամանակ կորցնելու, իրար ետևից այդ աշխարհայացքը լցնում էր դատարկ գլուխների մեջ ու բաց թողնում՝ կատարելով օրական երկու նորմա…

Իսկ այն ժամանակ այսպես չէր: Այն ժամանակ աշխարհն այսպես միակողմանի չէր: Այն ժամանակվա աշխարհը չորս կողմ ուներ, և մարդիկ կարող էին եթե ոչ ավելի, գեթ չորս աշխարհայացքների սահմաններում իրենց համար տարբեր աշխարհայացքներ ընտրել դավանելու համար:

Գալով կենցաղային պայմաններին՝ դարձյալ ստեղծագործությունների բնույթները տարբերվում էին:

Առաջին մարդը ո՛չ բնակարանի պետք ուներ, ո՛չ զգեստի, ո՛չ կոշիկի: Կարիք չունեին, որովհետև այն ժամանակ ամոթի մասին գաղափար գոյություն չուներ:

Կյանքը բարդացավ ու դժվարացավ այն ժամանակ միայն, երբ սկսեցին թաքցնել միմյանցից իրենց մերկությունը՝ կամենալով ասել, թե մենք մարմին չունենք: Մի տեսակ գողություն՝ ուրիշ խոսքով:

Եվ Լենինը, ստեղծելով իր անդամներին, պարտավորվեց ստեղծել նրանց համար բնակարան, զգեստ ու կոշիկ:

Ստեղծեց, բայց ստանդարտ: Ո՛չ նրա շինած բնակարանն էր նստում մարդկանց վրա, ո՛չ շորը, ո՛չ կոշիկը:

Եվ այդ մասին չէր մտահոգվում Լենինը: Այն մարդը, որ չի մտահոգվում յուրաքանչյուրի գլխում իր սեփական համոզմունքները

զետեղել, ինչպե՞ս կարող է կոշիկ տալ համաձայն հագնողի ոտքի մեծության։ Այդ է պատճառը, որ այսօր մեր բոլոր հրապարակներում խռնված է ժողովուրդը և իր անհարմարությունների փոխանակություններ է կատարում։ Մի մասն իր համար կոշիկ է որոնում, մյուս մասը՝ համապատասխան զգեստ, երրորդ մասը՝ իր գլխին համապատասխան աշխարհայացք։

Ով ստեղծում է մարդուն, նա պիտի մտածի նաև նրա մահվան մասին, որովհետև մարդիկ անմահ չեն։ Մահվան հարցում էլ տարբերվում են Աստվածն ու Լենինը։

Աստծու ժամանակ անարխիա էր, ով ում կամենար, կարող էր սպանել։ Այսպես Կայենը զարկեց իր եղբորը՝ Աբելին, սպանեց։ Այս անկազմակերպ սպանությանց պատճառով աշխարհը նմանվել էր գյուղական անփորձ սափրիչի հարդարած գլխի։ Մի տեղ՝ մազերը խիտ, մի տեղ՝ անմազ։

Իսկ այս կողմից Լենինը և նրա հաջորդ Ստալինը անթերի սափրիչներ էին։ Նրանք, ժողովրդին աթոռին նստեցրած, աջ ու ձախ էին սանրում ու կտրում ոչ թե ժողովրդի մազերը, այլ նրա գլուխն ամբողջությամբ։

Լենինը աջ սանրեց՝ կտրեց, Ստալինը ձախ սանրեց՝ կտրեց։ Այնպես որ այս կերպ եթե շարունակվի, շուտով այլևս մազ չի մնա Ռուսաստանի գլխին...

Ասել, թե Լենինը Հոկտեմբերով բոլորովին նոր աշխարհ ստեղծեց, սխալ կլինի։ Ավելի ճիշտ՝ նա Աստծու ստեղծած աշխարհը «պերեդելկա» արեց ու հագցրեց Ռուսաստանին։*

Բացի պրոլետարիատից՝ հատու մկրատով կտրվեցին մնացած բոլոր ծակված, մաշված ու խունացած դասակարգերը, ինչպես գիտնականները և փիլիսոփաները։ Իսկ դրա համար հարկավոր էր մարդկային մարմնի որոշ անդամների տեղափոխություն կատարել՝ փոխելով գլխի ու ոտների տեղերը, որպեսզի մարդիկ գլխով քայլեն ու ոտներով մտածեն։ Մի փոփոխություն, որով երկու անգամ ավելի զարկ ստացավ մտածողությունը երկրում, որովհետև կրկնապատկվեց գլխի քանակը տոկոսային համեմատությամբ՝ հարյուր տոկոսով։

Աստծու ստեղծած աշխարհում մարդկանց աչքերը տեսնում էին

* Պերեդելկա ***(переделка)*** - ռուս. վերափոխում, ձևափոխում։

եղածը, իսկ Լենինի ժամանակ՝ չեղածը։ Այն ժամանակ մարդիկ իրենց բերանով ուտում էին իրենց ունեցածը միայն, իսկ հիմա՝ չունեցածը։ Ուրեմն և «պերեդելկայի» դեպքում համապատասխան փոփոխություններ պետք էր մտցնել։

Եվ Լենինը մտցրեց։

Իր ստեղծագործությանը Աստվածն ուռճացած շտատ էր պահում։ Նա ստեղծեց անգթության բաժանմունք և գործի կանչեց առյուծին, վագրին ու բորենուն։ Իսկ Լենինը միջոցների սղության պատճառով կրճատեց իր գազաններին և նրանց պարտականությունները դրեց մարդու վրա։ Այդ մարդիկ կոչվեցին չեկիստներ, որոնք, բանական արարածներ լինելով, ավելի ահարկու, ավելի նպատակասլաց էին տանջում, քան գազանները։

Իմ խոսքը ստեղծագործության մասին թերի պիտի լիներ, եթե ես չանդրադառնայի ստեղծագործության մի այլ բնագավառի։ Դա գրական ասպարեզն է։

Սովետական գրողը նույնպիսի ստեղծագործող է, ինչպես Աստվածը։ Միայն ավելի լայն հնարավորություններով օժտված։

Աստված մարդ ստեղծելիս այնուամենայնիվ պետք ունեցավ կավի։ Իսկ սովետական գրողն իր ստեղծագործություններում օգտվում է բացառապես տորիչելյան դատարկությունից[150]։ (Չեմ ասում օդից, որովհետև նրա մեջ կա թթվածին, ածխածին ու բորակածին)։

Այս գրողներից բոլորը չեն, որ իրենց վեպի հերոսներին ստեղծում են իրենց կերպարանքով։ Իրենց կերպարանքով ստեղծում են այն գրողները միայն, որոնք օրական մի կերպարանք են հագնում։ Հակառակ պարագային նրանց երկերը կլինեին միօրինակ և ձանձրալի։

Այս գրելուց հետո մտածում եմ։

Լինի Աստված, մարդ, թե մի այլ արարած, իրավունք ունի՞ աշխարհ ստեղծել և այն մարդկանցով լցնել։

Ինչ Աստված էլ լինի, մարդուն իր կերպարանքով պիտի ստեղծի։ Իսկ կարո՞ղ է աշխարհում լինել ավելի մեծ մի անարդարություն քան այն, որ ժխտելով որևէ մարդու իր ուզած կերպարանքով ստեղծվելու իրավունքը՝ տնային լիազորի կնիքի նման իր կնիքը դնի բակի բոլոր բնակիչների դեմքին...

Ես եմ ու չեմ ցանկանում իմ տնային լիազորին նմանվել։

Եվ վերջապես ինչ զզվելի սովորություն է իրար ստեղծել։

Ձնծաղիկը, որ գարնանը ամենից շուտն է ծաղկում, մինթե արգելում է կողքին բուսած մի այլ ծաղկի կակաչ, շուշան կամ մանուշակ լինել։

Ասում է՝ անպատճառ ձնծաղիկ լինես...

Տարածություն

Ֆրանսիան իր ատոմային փորձարկումների համար ընտրեց Աֆրիկական մայրցամաքը։ Նրա առաջին միջուկային ռումբը պայթեց Սահարայում։

Բայց Լենինն իր սոցիալիզմը չտարավ Սահարա փորձելու։ Սոցիալիզմի՝ ավելի ավերիչ ուժ ունենալու պատճառով նրան հարկավոր էր ավելի մեծ տարածություն, և նա իր տեսությունը փորձեց Ռուսաստանում։

Առաջին պայթյունից օդ հանելով ցարիզմը՝ Լենինը մտածեց այնտեղ տարածել սոցիալիզմ։

Բայց նրան հայտնի էր, որ սոցիալիզմը համոզմունք է, և մարդկանց գլուխը պետք է մտցնել քարոզով։

Այդ նպատակով նա նստեց գրեց յոթանասունհինգ հատոր քարոզ։

Բայց զարմանքով տեսավ, որ այդ քարոզը չի մտնում մարդկանց գլուխը։

Նա հարց տվեց իրեն.

- Ինչո՞ւ դերձակները մարդկանց շոր կարելիս հաջողությամբ թելը մտցնում են ասեղի ծակից, ինչո՞ւ ես չեմ կարողանում նույն մարդկանց երջանիկ կյանք կարելու համար իմ սոցիալիզմը մտցնել նրանց գլուխը։ Մինգուցե իմ «թելը» Ավետարանի ասած մալուխն է, որ չի անցնում ասեղի ծակից։

Ու սկսեց տաշել, ծայրը կտրել ու ձևավորել իր «մալուխը»։

Բայց սոցիալիզմը հանելուկի մեջ ասված ջրհորին կնմանի. քանի տաշես, կհաստանա, քանի կտրես, կերկարի...

Հետևաբար, այլևս երբեք չի մտնի։

Այստեղ Լենինը կանգ առավ և սաստիկ ցավեց այն ժամանակի

վրա, որ անց էր կացրել այս հատորները գրելու համար։

Ցավալի էր, այո՛, շատ ցավալի։

Միայն զարմանում եմ, թե Լենինն այդ բանն ինչպես նախապես չկռահեց։

Ինչո՞ւ չհասկացավ, որ ճշմարտության մասին այդքան երկար չի կարելի գրել։ Երկար գրում են միայն այն ժամանակ, երբ պետք է ապացուցել սուտ ու գոյություն չունեցող մի բան։

Օրինակ՝ Աստվածաշունչը պետք է այնպիսի ստվար գիրք լիներ, որ ապացուցեր գոյությունը գոյություն չունեցող Աստծու։

Ճշմարտությունը կարելի է հայտնել կայծակ հեռագրով, երկու խոսքով, անգամ ակնարկով։

Երբ իր գրած հատորները բանի տեղ չանցան, Լենինը գրիչը վար դրեց ու կարմիր հագած՝ ամբողջ յոթ տարի սկսեց կոտորել բոլոր սպիտակ ռուսներին։

Յոթ տարուց հետո մեռավ Լենինը, զմռսեցին նրա մարմինը և դրին ի ցույց մարդկանց։

Բայց նրա սոցիալիզմը, որ նույնպես մեռած էր, չզմռսեցին ու չդրին նրա կողքին։ Նրա հաջորդ Ստալինը ասաց՝ ես կլիզեմ, հարություն կտամ։ (Տե՛ս, արալեզներ ու Շամիրամ)։

Ստալինը սկզբում նույնպես փորձեց քարոզել և գրեց քսանհինգ հատոր։ Երբ բան դուրս չեկավ, սա էլ հետևելով իր նախորդին սկսեց կոտորել։ Բայց ոչ Լենինի պես ազնվորեն ու բացարձակ։

Գաղտագողի։

Գիշերները նրա չեկիստները մտնում էին տները, կնոջ ծոցից դուրս քաշում մարդուն և տանում կորցնում։

Իսկ «հավերժական սիրով» միացածներին՝ երկուսին միասին...

Ու Լենինն ու Ստալինը, ուս ուսի տված, քսան միլիոնից ավելի մարդ կոտորեցին ու աքսորեցին։

Սրա վրա ռուս ժողովուրդը կանգ առավ ու սկսեց համեմատել.

- Ցարիզմ, թե՞ սոցիալիզմ։

Երբ համեմատեց, սկսեց երկրում փնտրել այն տեղերը գետնի վրա, ուր ոտք էին դրել իրենց ցարերը, և սկսեց համբուրել նրանց ոտնատեղերը։

Նրանք ասում էին.

- Ցարի ժամանակ էլ Ռուսաստանում գոյություն ուներ ճորտա-

տիրություն, սոցիալիզմի ժամանակ էլ, բայց ցարի ճորտերը նախ փող արժեին և որպես արժեքներ՝ դասվում էին ձիու, էշի և կովի շարքին: Բայց սոցիալիզմի ժամանակ նրանք ձրի աշխարհ էին գալիս և ձրի կոտորվում:

Այն քսան միլիոն կոտորվածներին եթե վաճառեին, երևակայո՞ւմ եք՝ ինչ գումար կբռներ հնում:

Ցարի ժամանակ, եթե մեկը սոված էր, չէր ծածկում, ազատ կերպով ասում էր՝ սոված եմ, եթե կուշտ, ասում էր՝ կուշտ եմ: Իսկ սոցիալիզմի ժամանակ կուշտ լինես թե սոված, պիտի ասես՝ կուշտ եմ:

Հնում Ռուսաստանում մսերը յուղի մեջ կորած էին և առատ: Սպիտակ փրփուր: Իսկ սոցիալիզմի ժամանակ՝ քիչ և միայն կարմիր:

Այս երևույթը շատերը բացատրում են անասնակերի չգոյությամբ, բայց ճիշտ չէ: Այստեղ պատճառը սկզբունքային է: Կարմիր Ռուսաստանի մեջ ամեն ինչ կարմիր պիտի լինի, սպիտակներին վաղուց է վերջ տրված:

Այդ պատճառով էլ հիմա Ռուսաստանի «մածունը սև է»...

Սխալն ուղղելու անթույլատրելի ձև

Աստված տասը պատվիրան տվեց Մովսեսին, որպեսզի մարդիկ նրանով ղեկավարվեն:

Այդ տասը պատվիրաններից մեկն ասում էր. «Աչքի տեղ՝ աչք, ատամի տեղ՝ ատամ»:

Հետո, տեսնելով, որ օրենքը մի փոքր շատ խիստ է, կամեցավ ուղղել և դարձնել՝ «Ով քո երեսին կապտակի, դարձրու մյուս երեսն էլ թող ապտակի»:

Բայց Աստված անհարմար զգաց սխալն իր ձեռքով ուղղել: Հատուկ այդ բանի համար կույս Մարիամից մի որդի ծնեց, որ գա այդ բանն ասի:

Ասացե՛ք խնդրեմ, սա սխալ ուղղելու ձև՞ է:

«Աստված» ասելով՝ ես հասկանում եմ մի անփոփոխ հավիտենական ճշմարտություն: Իսկ մեր Աստվածաշնչի Աստծու բռնած երկու գործերից երեքը սխալ են: Ուրեմն ի՞նչ, այդ սխալներն ուղղելու համար թույլ տանք, որ նա ամեն անգամ մի կույսի նեղությո՞ւն տա:

Այդ հաշվով մեր կույսերը չեն կարող գիշերները դուռը փակել, նոր քնել: Նրանք պիտի դուռը բաց թողնեն և ամեն րոպե ավետաբեր հրեշտակի սպասեն…

Սովետական կառավարությունը իր՝ սոցիալիզմ կառուցելու ճանապարհին համարյա Աստծու չափ սխալվում է: Սխալն ուղղելու համար, ուրեմն, վեր կենա ամեն անգամ իր կույսերին «ավետիք» տա:

Կամ վերցնենք մեր Պետհրատը:

Այնտեղ գրքերի սրբագրիչները մեծ մասամբ աղջիկներ են և անհաշիվ սխալներ են բաց թողնում: Պետհրատի դիրեկտորն ուրեմն սխալներն ուղղելու համար պետք է վեր կենա նրանց մոտ ավետաբեր հրեշտակնե՞ր ուղարկի…

Բարեբախտաբար նա այդ բանը չի անում: Գրքի վերջում վրիպակի բաժին է ավելացնում և հարցը փակում:

Եթե Աստվածն էլ նույն կերպ վարվի, Աստվածաշնչի մեկ հատորը կդառնա երեք, ու եթե դրա համար էլ հոնորար պիտի ստանա, կդառնա միլիոնատեր:

Հետո, եթե կույսերի ծնած Քրիստոսները կարող լինեին մարդկանց որևէ օգուտ բերել, ոչինչ, էլի թող ծնվեն: Բայց տեսե՛ք, Ամերիկան, որ այս րոպեիս մի ջերմեռանդ քրիստոնյա է, չի թողնում, որ Ռուսաստանն իր երեսին ապտակի: Ասում է՝ դու իմ մի երեսն ապտակես՝ ես քո երկու երեսը կապտակեմ: Հետո՝ երկու շապիկ ունի, մեկը չի տալիս Ռուսաստանին:

Այս գիշերը

Երկնքում վերջին դատաստանի պատրաստություն:

Հրեշտակներն արքայությունն են դուրս գցել, սատանաները՝ դժոխքը:

Լվանում են հատակն ու պատերը: Հիմնական ուբորկա, որ տեղավորեն աշխարհի արդարներին ու մեղավորներին:*

Հագնված են տոնական: Հրեշտակների թևերը՝ ճերմակափայլ, սատանաների մարմինը՝ վաքսված ու փայլեցված: Մարիամը դուրս է հանել սնդուկից հատուկ այդ օրվա համար կարված Աստուծո մունդիրը, որի ետևի մասը ցեցը բրդել է:

---

* Ուբորկա ***(уборка)*** - ռուս. կարգի բերելը, հավաքելը:

Դատվող մարդկությունը ծեփի պես խռնված է արքայության պատերի տակ և ահով սպասում է իր գլխին գալիքը տեսնելու։

Դատաստանական ատյանը վերջապես Աստուծո նախագահությամբ բազմում է աթոռներին, և նիստը հայտարարվում է բացված։

Առաջին հերթին դատվելու են մեծ մարդասպանները։ Երկու ուղեկցող սատանաների (վախտյորների) հսկողությամբ գալիս են Ստալինը, Լենինը, Լենկ Թեմուրը, Չինգիզ Խանը, Թալեաթ պեյը։*

Բազմությունը ալեկոծվում է։ Ամեն ոք կամենում է մի բան իմանալ նրանց դատավարությունից։

Փնտրում են մի ճեղք, բարձրանում արքայության պատերին ու վայր գլորվում՝ տեսնելու համար կատարելով անհաջող փորձեր։

Մի մարդու է միայն հաջողվում սատանայի կերպարանքով ներս խցկվել և բոլորը սպասում են այդ մարդուն, թե ինչ կպատմի ներսի անց ու դարձից։

- Մեղադրյալ Ստալի՛ն,- ձայնում է Աստված՝ առջևի ցուցակին նայելով,- կանգնի՛ր։

Ստալինը կանգնում է։

- Դու մեղադրվում ես քսան միլիոն մարդ գնդակահարելու մեջ։ Սպանելով քսան միլիոն մարդ՝ հասկանալի է, որ քսան միլիոն այրի կանայք են առաջացել երկրում, և ամեն զոհվածին հինգ երեխա հաշվելով՝ նշանակում է՝ հարյուր միլիոն որբ ես գոյացրել։ Արդարացի՛ր։

- Ես ինձ համա՞ր եմ արել այդ բոլորը։

- Ուրիշ ո՞ւմ համար։

- Իրենց երջանկության համար։

- Վկաներ կա՞ն։

- Այդ կվկայեն բոլոր գնդակահարվածները։

- Կանչի՛ր մի գնդակահարվածի,- ասաց Աստված՝ դառնալով կողքի սատանային։

Եկավ։ Ու նայելով Ստալինին՝ թուքը բերանում չորացավ։

- Վկա՛,- դարձավ Աստված եկվորին,- իբրև այդպիսին՝ դու պարտավոր ես ճիշտն ասել. այս մարդը քեզ գնդակահարեց ի՞ր սեփական կարիքների համար, թե՞ քեզ երջանկացնելու։

- Ճշմարիտն ասելու համար ես պիտի իմանամ, թե Ստալինը

* Վախտյոր ***(вахтёр)*** - ռուս. դռնապան։

ներկայումս ողջ է դատվում, թե՞ մեռած։

- Ինչ կապ ունի այդ հանգամանքը ճշմարիտն ասելու հետ։

- Շատ մեծ կապ, տիեզերքի՛ Տեր։ Եթե Ստալինը մեռած չէ, կամ մենք վերջում դժոխքում կամ արքայությունում իրար ենք հանդիպելու, ապա նա ինձ սպանեց միայն իմ երջանկության համար։ Իսկ եթե նա մեռած է, ու մենք ոչ մի տեղ այլևս չենք հանդիպելու իրար՝ Ստալինն այնպիսի մի ոճրագործ է, որի նմանը դեռ աշխարհը չի տեսել…

Այդ միջոցին կանգնեց Ստալինի պաշտպանը և հետևյալը հարցրեց վկային.

- Դու ընդունո՞ւմ ես, որ Ստալինը սոցիալիզմ էր կառուցում։

- Ընդունում եմ։

Պաշտպանը դառնում է Աստծուն.

- Տե՛ր ամենակալ,- ասում է,- սոցիալիզմն այնպիսի մի նպատակ է, որին հասնելու ամեն տեսակ միջոց արդարացվում է։ Սոցիալիզմին հասնելու համար, եթե Ստալինը կոտորեր ողջ Ռուսաստանն անգամ, մենք նրան այսօր երախտապարտ կմնայինք։

Աստված դառնում է իր աջ ու ձախ նստած ատենակալներին՝ հարցնելով.

- Ճի՞շտ է ասում պաշտպանը։

Ատենակալները գլխով դրական նշան են անում՝ ասելով.

- Սոցիալիզմի նպատակն է երկիրը դրախտ դարձնել։

- Հա՜,- ասաց Աստված,- եթե այդպես է, տարե՛ք սրան արքայության վերին պուճախը նստեցրեք։

Ապա՝

- Լենի՛ն,- ձայնեց Աստված։

Լենինը կանգնելով ասաց.

- Ստալինն իմ աշակերտն է, ես նրան սովորեցրի սոցիալիզմ կառուցել։ Թողե՛ք գնամ նստեմ նրա կողքին։

- Ճի՞շտ է,- հարցրեց Աստված պաշտպանին։

- Ճիշտ է,- ասաց պաշտպանը։

- Դրե՛ք նրան Ստալինի կողքին,- ասաց Աստված։

Ապա նայելով առջևի ցուցակին՝ ձայնեց.

- Մեղադրյա՛լ Լենկ Թեմուր, ոտքի՛։ Դու Վանի բերդից այնքան ես մարդ գլորել ցած, որ վերջին գլորվողները ողջ են մնացել։ Արդարացի՛ր։

- Ես նույնպես սոցիալիզմ էի կառուցում, բայց հասկանալի է՝ ոչ գիտական հիմունքներով: Մենք չունեինք Մարքսի և Լենինի պես առաջնորդներ, հետևաբար սոցիալիզմը կառուցում էինք տնայնագործական մեթոդով, այդ պատճառով էլ բերդից գլորվածներն ամբողջովին չէին մեռնում:

- Դրանում դու չես մեղավոր, իհարկե,- ասաց Աստված ներողամիտ ու դարձավ ատենակալներին,- արքայությունն:

- Անշուշտ,- պատասխանեցին ատենակալները:

Երբ վերջինս ընկնելով գնում էր արքայության մեջ իր տեղը բռնելու, Աստված նկատեց.

- Ա՛յ տղա, դու կա՞ղ ես:

- Այո՛, Տե՛ր,- պատասխանեց Լենկ Թեմուրը:

Աստված, դառնալով պահեստապետին, ձայնեց.

- Սրան մի զույգ նոր ոտնե՛ր տուր: Եթե հավիտյան այսպես կաղա, հալ չի մնա վրան...

Այսպես հերթով բոլոր մեծ մարդասպանները՝ որպես սոցիալիզմ կառուցողներ, արքայություն անցան:

Երբ կարգը Թալեաթ պեյին եկավ, նա ասաց.

- Տե՛ր ամենակալ, ինձ մի՛ դասեք սովորական սոցիալիզմ շինողների շարքը, որպես այդպիսին՝ ես բացառիկ եմ: Նայեցեք՝ Հայաստանի կոմունիստ կառավարությունը չկարողացավ իր հպատակ բոլոր հայերին կոտորել, կոտորեց միայն դաշնակցականներին, իսկ ես իմ թուրք տեղվն կոտորեցի և՛ դաշնակին, և՛ հնչակին, և՛ ռամկավարին համահավասար:

- Ապրե՛ս, ապրե՛ս,- ասաց Աստված,- գնա՛ և քո տեղը գրավի՛ր արքայության մեջ:

- Ուրեմն, սոցիալիզմ նշանակում է մարդասպանություն,- ասաց Աստված՝ դառնալով իր ատենակալներին:

- Մենք այդ վաղուց գիտեինք,- ասացին ատենակալները:

- Այդ հաշվով ես ամենամեծ սոցիալիստն եմ, որովհետև առնում եմ բոլոր մարդկանց հոգիներն անխտիր:

- Այո՛, և դրա համար էլ մարդիկ իրենց ողջ կյանքում փառք են տալիս քեզ քո պարգևած երջանկության համար...

Այնուհետև դատարանն անցավ ավելի փոքր մարդասպանների քննությանը:

Հետո էլ մի փոքր կենցաղային հանցագործների դատելով՝ ընդմիջում հայտարարեց։

Ընդմիջման ժամանակ այն մարդը, որ սատանայի կերպարանքով ներս էր սպրդել, դատաստանական դահլիճից դուրս եկավ։

Երբ դուրս եկավ, արքայության դռան առաջ ողջ բազմությունը շրջապատեց նրան և դատական պրոցեսի մասին տեղեկություններ հարցրեց։

Մարդն ասաց.

- Բոլոր մարդասպաններն արդարանում են։ Ասացեք՝ սոցիալիզմ էինք կառուցում և գնացեք արքայության մեջ բազմեցեք։

Մի մարդ հարց տվեց.

- Բայց ախր ես ճամփաներ կտրող ավազակ եմ. բոլոր ճամփորդներին նախ կողոպտում, ապա սպանում էի։

- Այդպես էլ պետք է լիներ։ Բոլոր սոցիալիստներն էլ նախ կուլակաթափ են անում մարդկանց, հետո նոր կոտորում։

- Պրծա՛,- ուրախացավ ավազակը...

Հետո նրան զանազան կենցաղային բնույթի հանցանքների մասին հարցեր տվեցին։

Օրինակի համար՝ բազմության միջից մեկն այսպիսի մի հարց տվեց.

- Ես կյանքումս ինչքան գեղեցիկ կին տեսել, սիրել եմ, ինձ ի՞նչ կանեն։

- «Շնացել» ես, ասել է։

- Այո՛, շնացել եմ։

- Գործո՞վ, թե՞ մտքով։

- Գործով։

- Այդ լավ է։ Եթե մտքով շնանայիր, քեզ փրկություն չկար։

- Մի՞թե։

- Այո՛, որովհետև բոլոր մտքով շնացողներին Աստված ասում էր. «Ինչո՞ւ պիտի մտքով շնանաս, քանի որ գործով շնանալու համար քեզ բոլոր հարմարանքները տվել եմ...»։ Մեկն ասաց, որ ամաչել է առաջարկություն անել։

- Ամաչում ես՝ դե կորի՛ր դժոխք, տանջվի՛ր։ Ես քեզ ստեղծել եմ, որ ամաչե՞ս, թե՞ ապրես։

Հետո սատանայի կերպարանքով մարդը ի միջի այլոց հարցրեց.

- Այդքան կին որտեղից ձեռք բերիր սիրելու համար:

- Ես կրթական և միաժամանակ արվեստի մինիստր էի Ռուսաստանում. բոլոր ուսուցչուհիներն ու դերասանուհիները ինձ էին ենթակա:

Ես, որ կանգնած լսում էի այս բոլոր խոսակցությունները, էլ չսպասեցի: Անմիջապես ինձ երկիր գցեցի, ասացի. «Գնամ, բոլոր մարդկանց սպանեմ, նրանց կանանց սիրեմ, նոր գամ որպես սոցիալիստ դատվեմ»:

Բայց ավ՜ղ, երկրի վրա ո՛չ մարդ գտա սպանելու, ո՛չ կին սիրելու: Գաբրիել հրեշտակապետի փողի ձայնը լսելով՝ բոլորը երկինք էին գնացել՝ դատվեու...

Հոգի և մարմին[151]

Տեփան անունով մի ընկեր ունեմ: (Ստեփան է, Տեփան ենք ասում):

Օրումս չեմ տեսել ուրիշ մեկին, որ կյանքին այնքան արժեք տա, կյանքի վրա այնպես սվսվա, ինչպես այդ Տեփան կոչեցյալ ընկերս է:

Ողջ ժամանակ հանգստյան տուն, կուրորտ* ու սանատորիա**:

Իսկական մարմնաբույժ:

Եվ չնայած այս բոլորին՝ կասկածում է, որ քաղցկեղ ունի:

Բայց վախենում է ռենտգենի գնալ՝ մտածելով, որ ռենտգենը կարող է հաստատել այդ չարագուշակ կասկածը:

Սիրտս չի համբերում: Ասում եմ.

- Ա՜յ տղա (թեև հասակավոր է), կյանքն ինչ է, որ դու այդքան սվսվում ես վրան: Փո՞ղ ես տվել նրան: Ո՛չ: Ձրի ծնվել ես, ձրի էլ մեռի՛ր:

Վերջն ինչ երկարացնեմ, համոզեցի մի կերպ, և նա ռենտգենի գնաց:

Գնաց ու ետ եկավ՝ ուրախությունից վեր-վեր թռչելով: Պապանձվել ու չգիտեր ինչ բառերով շնորհակալ լինել ինձանից, որ պատճառ դարձա իր երջանկությանը:

Ռենտգենը ոչ մի քաղցկեղ չէր հայտնաբերել նրա ստամոքսում:

---

* Կուրորտ *(курорт)* - ռուս. բուժավայր, առողջավայր:

** Սանատորիա *(санаторий)* - ռուս. առողջարան:

Այս հասարակ դեպքից սակայն, մտքեր ծնվեցին գլխումս և այդ մտքերը շատ հեռու տարան ինձ։

Ասում եմ. «Ինչո՞ւ մարմնական ռենտգենի կողքին գոյություն չունենար նաև հոգեկան ռենտգեն։ Մի ռենտգեն, որ ցույց տար մարդու բարոյական, մտավոր ու հոգեկան գոյավիճակը»։

Այսօր մեզ մոտ մարդիկ կան (Գիտությունների ակադեմիայում), որոնք կարծում են, որ խելք ունեն իրենց գլխում։ Եթե գոյություն ունենար այդ նպատակի համար ռենտգեն, և նրանք ինքզինքնին այդ ռենտգենին ենթարկեին, Տեփանից ավելի ուրախացած պիտի ետ դառնային՝ գիտենալով, որ իրենց գլուխը... դատարկ է։

Կամ վերցնենք այսպիսի մի օրինակ։

Երիտասարդներ կան, որոնք այնքան շատ սիրուհիներ ունեն, որ սրտներում այլևս համարյա նորի տեղ չկա։ Բայց նրանք այնուամենայնիվ ուզում են օրինական կին ունենալ։ Ինչո՞ւ, որովհետև սիրուհիներն ավելի հակված են լինում օրինական կին ունեցող տղամարդկանց, քան ամուրիների կողմը։ Այդ էլ նրա համար, որ սիրուհիները պարծենան, թե իրենց օրինավոր ամուսնուց սերը գողանում, մեզ են բերում։ (Տե՛ս արգելված պտուղը, որ քաղցր է լինում)։

Հա։ Ուրեմն այդպիսի երիտասարդներից մեկը, մի աղջկա թև մտած, զագս է ներկայանում՝ ամուսնանալու։

Նման դեպքում, եթե զագսում մի բարոյական ռենտգեն դրված լիներ, վարիչը նրանով անմիջապես երիտասարդի սրտին կնայեր ու դատարկելով բոլոր նրա սիրուհիներին՝ օրինական կնոջ համար տեղ բաց կաներ այնտեղ։

Որովհետև ինչ միտք ունի մինչև բերանը լիքը բաժակի մեջ նորից ջուր ավելացնել։ Ջուրը նույնությամբ վար կթափվի՝ այնտեղ իր համար տեղ չգտնելով։ Հետո էլ պիտի նկատի առնենք, որ ոչ մի բարեպաշտ ճգնավոր չի ցանկանա այնքան մենակ լինել իր քարայրում, որքան օրինական կինն իր մարդու սրտում...

Բերելով մի երրորդ օրինակ՝ ասեմ, որ Ռուսաստանում բոլոր եսասեր մարդիկ կոմունիստ են գրվում և ցույց են տալիս, թե ժողովրդի երջանկության մասին են մտածում։ Եթե ռենտգեն լիներ, պիտի ցույց տար, որ միայն իրենց մասին են մտածում նրանք։

Այսպես՝ ռենտգենի կարող էին ենթարկվել ոչ միայն անհատները, այլ նաև պետությունները։

Չինաստանն ու Սովետական Միությունը, օրինակ, եթե իրենց սրտերը քննության տային, պարզ պիտի տեսնեին, որ իրենք ոչ թե կոմունիզմ են տարածում աշխարհում, այլ այդ պատրվակի տակ աշխարհակալության են դուրս եկել...

Շատերը, սակայն, այն կարծիքին են, որ եթե նման մի ռենտգեն ստեղծվի, աշխարհը շուռ պիտի գա, որովհետև այն ամբողջովին կեղծիքի վրա է հիմնված։ Ասում են՝ այդ ռենտգենը կարող է օգտագործել միայն Ռոբինզոնը իր մենավոր կղզում, որը չունի շրջապատ։

Է, ինչ անենք։ Թող միայն Ռոբինզոնը գործածի։ Ավելի լավ է, որ աշխարհում լինի մի անկեղծ մարդ, քան բազմամիլիոն կեղծավորներ...

Դրախտ

Իզուր են մարդիկ դրախտի ձգտում։

Դրախտը երջանկության բյուրեղացումն է, քարացում, հետևաբար, այնտեղ կյանք չի կարող լինել։

1917 թվականին Լենինը Ռուսաստանը դրախտի վերածեց և այն տարվանից սկսյալ կյանքը դադարեց երկրում։ Մարդիկ, զրկվելով սեփականությունից, այլևս անելիք չունեին, ձեռք ձեռքի վրա դրած միայն փառք էին տալիս Լենինին և կրկնում նրա ասածները։

Ուղեղը դադարեց գործելուց, ձեռները թուլացան, կախվեցին։ Աչքը Լենինին տնկած՝ սպասում էին, թե ինչ կհրամայի, որ նրա հրամանը կատարեն։ Մարդիկ իրար հետ չէին խոսում, որովհետև խոսակցության նյութ չունեին։ Եվ դարձան ավելի անմոռուչ, քան կենդանիները։ Կատուն մլավելով էր հայտնում իր սովածությունը, շունը՝ ոռնալով, իսկ մարդն իր սովածությունն արտասանելու բոլոր միջոցներից զուրկ էր։ Ասելուն պես կաքսորվեր Սիբիր այլևս չվերադառնալու պայմանով։

Ու երկրի վրա իջավ անպատմելի մի ձանձրույթ, որ ժողովուրդը չիմացավ, թե ինչպես փարատի։

Այս դրախտը, սակայն, լինելով երկրային, նրա բնակիչներն ինքզինքնին մխիթարում էին նրանով, թե մի օր կմեռնեն ու կազատվեն այս անցավոր դրախտից։ Իսկ ինչո՞վ պիտի մխիթարվեն

երկնային դրախտայինները, ուր մահ չկա, և ձանձրույթը հավիտենական է։

Այդ իմաստով դժոխքը փառք է. մեղավորը ձգտում է ազատվել այդ տանջանքից, իսկ դրախտում նստած արդարն այդ ձգտումն էլ չունի։

Ազատվի՞ ուր գնա…

Այսպիսով՝ դրախտներն անցանկալի վայրեր են ոչ միայն արդարների համար, այլև նրանց ստեղծող աստվածների համար։

Ի՞նչ մի ցանկալի բան է օրնիբուն պարապ նստել և փառաբանություն լսել։

Իմ կարծիքով՝ Աստված մեծ սխալ գործեց, որ աշխարհը յոթ օրում ստեղծեց։ Պետք է ստեղծեր կամաց-կամաց, ինչպես կոլխոզնիկն է աշխատում կոլխոզային դաշտերում։

Այսինքն։ Թութունի սածիլ տնկել, սպասել, որ այն չորանա, հետո երկրորդը տնկել։ Նստել օրվա երազը պատմել, մի երկար գլանակ ծխել, ա՛խ անել, վա՛խ անել և ժամանակ շահել։

Ի՞նչ է նշանակում միանգամից հրամայել՝ եղիցի լույս։ Դարերով մթության մեջ ապրողի աչքը կդիմանա՞ այդ հանկարծական լույսին։

Նկատելի է, որ Աստծու բոլոր ստեղծած բաները հեշտ ու հավանական բաներ են, այդ պատճառով վեց օրում վերջացրեց, ինչո՞ւ չմտածեց ստեղծել, օրինակ, սոցիալիզմ, որ հավիտյան տևեր ու… երբեք չստեղծվեր։

Ասում եմ էլի։ Անգործությունը ամենամեծ տառապանքն է։ Ամեն գիշեր երազումս տեսնում եմ, թե ինչպես Աստվածն ու Գաբրիել հրեշտակապետը, արքայության պատշգամբում նստած, անխոս իրար երեսի են նայում կամ մի անհամ բան ասում։

Այս գիշեր տեսա էլի՝ էնպես նստած էին։

Աստված քիթը տնկեց, այս ու այն կողմ հոտոտեց ու ասաց.

- Գաբրիե՛լ, սա տիեզերքից ես մի տեսակ վատ հոտ եմ առնում…

- Ի՞նչ հոտ, Տե՛ր իմ,- հարցրեց հրեշտակապետը։

- Անտանելի հոտ։ Տիեզերքի սանիտարական դրությանը չես հետևում, Գաբրիե՛լ։

- Էլի ինձ մեղավոր հանեց,- ասաց Գաբրիելը յուրովի ու դառնալով Աստծուն՝ հարցրեց,- ի՞նչ պետք է անել, որ չեմ արել։

- Սանիտարական օ՛ր մտցրու,- մի քիչ նեղացած՝ ասաց Աստված։

- Է լա՛վ, նշանակեցի, ավելի տվի, աղբը որտեղ ածեմ: Մարդիկ առանց զուգարանի խրճիթ չեն շինում, իսկ դու ամբողջական տիեզերք ես շինում: Մոլորակներդ, որ ողջ գիշերը ման են գալիս, ինչ իմանամ զուգարանի տեղ չեն փնտրում:

Ասաց ու շարունակեց.

- Ես շատ լավ գիտեմ, թե հոտը որտեղից է գալիս: Երկրից: Ամեն անգամ որ իջնում եմ մարդկանց հոգին առնելու, պինչս բռնում եմ:

Աստված նստած տեղն ուղղվեց:

- Ա՛յ Գաբրել, Երկրին ինչ է պատահել:

- Երկրում կան ցամաքային պետություններ, որոնք իրենց օրում ջրի երես չեն տեսել, կան էլ այնպիսիք՝ ջրից դուրս չեն եկել: Օրինակ՝ Անգլիան: Իր օրում ջրից դուրս չի եկել, և լողալուց կողքերը մաշվում են: Իսկ այն կողմ հսկայական Ռուսաստանը ջրի երես չի տեսել: Իսկ կեղտը թե՛ հոտ է տարածում, թե՛ զանազան անբուժելի հիվանդություններ:

- Ռուսաստանը հիվա՞նդ է հիմա,- հարցրեց Աստվածը:

- Սարսափելի:

- Ինչո՞վ է հիվանդ:

- Սոցիալիզմով:

- Ինչ հիվանդություն է դա:

- Դա մի տեսակ քոս է, որով վարակված հիվանդն անվերջ քորում է իր մարմինը և դրանով չբավականանալով՝ դուրս է գալիս իր երկրից, քսվում է առողջ պետություններին և նրանց վարակում:

- Կարանտին չկա՞:

- Ինչ օգուտ կարանտինից: Ասում է. «Դուռդ բաց արա՝ «կուլտուրական կապ» հաստատենք», ու իր քոսը կոխում է ներս: Այս րոպեիս, օրինակ, Եգիպտոսն ու Սիրիան վարակված են, ու հարուստները, իրենց ինչքն առած, փախչում են այդ երկրներից:

- Մի մեծ թեշտ ճարիր, լողացրո՛ւ Ռուսաստանին:

- Դա աշխարհի մեկ վեցերորդ մասն է կազմում, այդ մեծության թեշտ ես որտեղից ճարեմ:

- Իսրայելացիք իրենց բորոտներին անապատ էին քշում, քշի՛ր, թող գնա Սահարա անապատ:

- Ամայության տեսակետից Ռուսաստանն ավելի անապատ է,

քան Սահարան։ Սահարայի միջատներն ազատ են ուզած կողմը թռչելու, իսկ Ռուսաստանի սահմանից դուրս գալ չի կարելի։ Բացի դրանից, Սահարայի օազիսում ամենայն տեսակ բարիքի կարելի է հանդիպել, իսկ Ռուսաստանն իր ցամաք հացն էլ Ամերիկայից է գնում։

Աստված շատ երկար մտածեց ու ասաց.

- Քո կարծիքով ինչ պետք է անել։

- Տեր իմ,- ասաց Գաբրիելը,- առածն ասում է՝ ջուրը կանգնած տեղը կհոտի, և ճիշտ է ասված։ Պետություններ կան երկրի վրա, որ իրենց օրում տեղից չեն շարժվել, մինչդեռ ամեն բարեկարգ տուն տարեկան գեթ մի անգամ իր եղած-չեղածը դուրս է գցում, ավլում-մաքրում, նորից դասավորում։

- Եկ այդպես էլ անենք,- ասաց Աստված։- Անգլիան քաշենք Ֆրանսիայի վրա, Արևմտյան Գերմանիան՝ Արևելյանի, մաքրենք, էլի տեղերում դասավորենք։

- Ո՛չ,- ասաց Գաբրիելը,- Անգլիան կարելի է Ֆրանսիայի վրա քաշել, բայց Արևմտյան Գերմանիան Արևելյանի վրա չի կարելի։ Արևելյանը քոս է։

- Գաբրիե՛լ, արի քոսոտների հոգիները միանգամից առնենք, հաշիվը մաքրենք,- ասաց Աստվածը։

- Որ գան երկինքն էլ վարակեն։

- Չինաստանն ու Ռուսաստանը երկուսն էլ մեծ պետություն, երկուսն էլ քոս. չենք կարող իրար վրա քաշել,- հարցրեց Աստվածը։

- Ո՛չ, չենք կարող,- ասաց Գաբրիելը,- նրանք տարբեր քոսեր են։

Մի փոքր լռությունից հետո Աստվածն ասաց.

- Իսկ ինչ անենք սա հայ ազգի հետ, նրանց անվերջ կոտորում են, չհավաքենք իրենց նախկին սահմաններում և անկախություն տանք։

- Ո՛չ,- ասաց Գաբրիելը,- հայ ազգը բոռածու փեթակ է, որ երբեք չի բոլորվի մի թագուհու շուրջ և մի միասնական ընտանիք կազմի։ Հնում չորս նախարարությունների էին բաժանված, հիմա՝ չորս կուսակցության, որոնցից յուրաքանչյուրն ունի մի-մի մայր։ Հատվածները միացրիր մի փեթակի մեջ՝ իրար կկոտորեն։ Բացի այդ, եթե ուժ կազմեն և չկոտորվեն, գրականությունը կտուժի։

Նրանց բոլոր ոտանավորներն ու արձակն իրենց ողբերգության վրա են գրված՝ սկսած իրենց պատմագիրներից: Նրանցից մեկն ասում է՝ «Ողբամ զքեզ, Հայոց աշխարհ»[152]:

Ահա այսպես անհամ ու անհոտ խոսակցություններ են գնում գրեթե բոլոր տեսակի արքայություններում: Ինչո՞ւ: Որովհետև դրանցում կյանք չկա: Չգիտեն ի՞նչ բանի համար ապրել:

Անցյալ անգամվա տեսածս երազում Գաբրիելը հարցնում էր Աստծուն.

- Աստվա՛ծ ջա՛ն, ասա՛, վերջիվերջո, տիեզերքն ի՞նչ բանի համար ես ստեղծել:

Աստվածը պատասխանեց.

- Ա՜յ Գաբրիել, ես գիտեմ, որ քեզ պատասխանեմ...

Բարոյական անբարոյականություն

Մեզանում սովորաբար Ստեփանոսները Նազարյան են լինում, բայց այն մարդը, որի մասին պիտի խոսեմ ներկայիս, Ստեփանոս Ասլանյան է դժբախտաբար:

Այս Ստեփանոսը մի մեծ հիմնարկի պետ է:

Նրան ենթակա հարյուրավոր ստորադաս ծառայողներն ուշադիր նրա երեսին են նայում, որպեսզի նրա ուրախությանը ուրախակցեն ու վշտին վշտակցեն:

Մի հատկություն, որ պաշտոնի էությունն է կազմում:

Հաջողակ էր Ստեփանոսը պետական գործերում, շատ, բայց թերանում էր ընտանիքում՝ չկարողանալով մի երեխա պարգևել իր վշտահար կնոջը՝ հեգ Մարինեին:

Ուրիշ մի կին, Մարինեի տեղը, տարեկան երկու երեխա կբերեր ուրիշից, բայց Ստեփանոսի կինը ավելի բարոյական էր, քան ինքը Մարիամ Աստվածածինը: Այնպես որ հավատացած եմ՝ եթե Գաբրիել հրեշտակը վերևից իջներ՝ նրան «ավետիք» տալու, նա այնպիսի կոպիտ պատասխան պիտի տար, որ հրեշտակը չհամարձակվեր անգամ իր ետևը նայելու:

Ու հետևաբար, մենք այսօր Քրիստոս չունենայինք:

(Երանի՞ չունենայինք Քրիստոս: Այն ժամանակ հայերը քրիստոնյա չէին լինի ու զուր տեղը չէին կոտորվի մահմեդականների կողմից...):

Այս բոլորը շատ լավ, բայց մյուս կողմից էլ կնոջ համար դժվար է աշխարհ գալ, ամուսնանալ և թույլ տալ, որ անկարող ամուսինը, իրեն հրացան դարձնելով, մինչև իր կյանքի վերջը խալաստոյ պատրոն կրակի՝ սպանելով կնոջ հավերժականությունը:

Շվարել էր կինը՝ չիմանալով ինչ անել:

Մեկ էլ այսպես մտածեց. «Աստված, որ Մարիամին «ավետիք» տվեց, այդ խոմ գեշ մտքո՞վ չարեց: Ո՛չ: Այդ քայլը զուտ գործնական նպատակ էր հետապնդում՝ առանց քնարական մասի: Եթե Աստված ուրիշ նպատակով մոտենալիս լիներ Մարիամին, շատ հեռվից կսկսեր և այդպես շփի-շիտակ չէր հղացնի նրան: Եվ սա անում է այն Աստվածը, որ, լինելով «ամենակարող», կարող էր առանց Մարիամի մասնակցության էլ իր որդին ունենալ: Աշխարհում կա՞վ չկար: Կվերցներ մի բուռ կավ, նրանից մարդ կշիներ ու անունը, փոխանակ Ադամ դնելու, Քրիստոս կդներ: Կամ կպատվիրեր Ադամ-Եվային իր համար մի որդի ծնել»:

Արդ, մտածեց Մարինեն, եթե այդպիսի բազմաթիվ հնարավորություններով օժտված մի Աստված, երբ այնուամենայնիվ Հովսեփին նշանված մի կույսի օգնությանն է դիմում որդի ունենալու համար, ինչո՞ւ ինքը, որ ոչ մի այլ միջոց չունի, չդիմի մի որևէ Մարիամի խոսեցյալ Հովսեփի՝ խնդրելով իրեն որդի պարգևել…

Այդպես երկար մտածելով՝ Մարինեն, երբ եկավ այն համոզմանը, որ ինքն էլ իրավունք ունի հետևելու Աստուծո օրինակին, ելավ մի հարմար «Հովսեփ» փնտրելու՝ նրան «ավետիք» տալու համար:

Հովսեփ, Հովսեփ, Հովսեփ. գտավ վերջապես: Այդ իրենց երկարամյա այգեպան Սանդրոն էր:

Մարինեն բաց արեց այգուն նայող պատուհանն ու ձայնեց.

- Աղեքսա՜նդր…

Լսելով այս կանչը՝ այգեպանը բոլորովին չկարծեց, թե իր հետ են, այլ սկսեց իր շուրջը մի Աղեքսանդր փնտրել՝ տիկնոջ մոտ ուղարկելու:

Հետո, երբ այդ կանչը կրկնվեց ու երեքկնվեց, այգեպանը կասկածեց՝ ասելով.

- Չլինի՞ ինձ է կանչում:

Ու զարմացավ:

Զարմացավ այն բանի վրա, թե ինչո՞ւ ամբողջ տասներկու տար-

վա «Սանդրոն» մի օրում հանկարծ «Աղեքսանդր» դարձավ...

Դարձավ՝ դարձավ, ինչ կարող էր անել Սանդրոն՝ տերերի հրամանի ներքո մի խեղճ ու կրակ մարդ։

Ելավ, ձեռքի բահը խրեց գետին, վրա-գլուխ հարդարեց այնպես, որ «Աղեքսանդր» կոչմանն արժանի լինի, ու գնաց տիկնոջ մոտ։

- Աղեքսա՛նդր, դու ինձ մի որդի պիտի տաս,- ասաց Մարինեն նրան տեսնելուն պես։

Ասելու տոնն այնքան հասարակ էր ու այնքան գործնական, որ Սանդրոն, ոչ մի կասկած չունենալով, պատասխանեց.

- Տիկի՛ն, ես դժբախտաբար դեռ ամուսնացած չեմ ու որդի չունեմ։ Եթե ունենայի, ամենայն սիրով կտայի։

- Դու պիտի երեխա տաս ինձանից։

Այս ասելիս որովհետև տիկինը չշիկնեց, այդ պատճառով Սանդրոն երկար չգիտեր այդ ինչպես հասկանալ։

Հասկացավ միայն այն ժամանակ, երբ կինը, կամենալով ավելի պարզ ասել, ավելացրեց.

- Ես ու դու այսուհետև իրար հետ պիտի ապրենք։

Այս խոսքից հետո Սանդրոն տիկնոջ երեսին նայեց։ Բայց ոչ այն նայվածքով, ինչ նայել էր ամբողջ տասներկու տարի, այլ մի ուրիշ հայացքով։

- Ինձ նո՞ր տեսար, ինչ ես նայում այդպես պիշ։ Մտքիցդ չար մտքեր չանցնեն, հա՛,- ասաց տիկինը,- ես բարոյական կին եմ, այդպիսին էլ կմնամ։

- Չեմ հասկանում,- կմկմաց Սանդրոն,- իրար հետ ապրել՝ առանց իրար սիրելո՞ւ։ Ինչո՞ւ, մենք խոմ օրինական ամուսիններ չենք։

- Այո՛, պիտի ապրենք իրար հետ՝ առանց իրար սիրելու։

- Իսկ ինչ անուն տանք այդ հարաբերությանը։

- Ոչ մի նոր անուն։ Դու կմնաս էլի իմ այգեպանը, ցերեկը կմշակես այգին, դրան կից՝ գիշերները նաև իմ փոքրիկ պարտեզը։ Ինչպես սովորաբար աշխատում են երկու հերթափոխ բանվորները։

- Տիկի՛ն, պետական բանվորը չորս հերթով էլ կարող է աշխատել, որովհետև իր գործը չի սիրում։ Բայց ապրել Ձեզ հետ՝ առանց գործի մեջ զգացմունք դնելու... չեմ հասկանում։

- Ո՛չ, մենք իրար չպիտի սիրենք, դա անբարոյականություն կլի-

նի իմ կողմից և դավաճանություն՝ հանդեպ իմ օրինավոր ամուսնու։

- Բայց... բայց... չգիտեմ՝ ինչպես ասեմ... ախր, տիկի՛ն, այդ գործողությունն այնպիսին է, որ պահանջում է որոշ գործարանի լարում, իսկ այդ գործարանը գործի է կանգնում այն ժամանակ, երբ սերն է խոսում։

- Դե՛, եթե այդ այդքան անհրաժեշտ է, կարելի է, բայց շատ չափավոր։ Այնպես, որ դա բարոյականի սահմանից դուրս չգա։

- Կաշխատեմ, տիկի՛ն,- պատասխանեց այգեպանը։

Համաձայնությունը կայացված էր։ Գործողության վայր նշանակելով այգու խորքում մոռացված տաղավարը՝ ցրվեցին։

Ու երկրագունդն ըստ սովորականի սկսեց թավալվել իր առանցքի շուրջ, ասես ոչինչ նոր բան չէր պատահել աշխարհում։

Միայն առաջին գիշերվանից հետո տիկինը մի փոքր անբավական էր մնացել Սանդրոյի արարքից, որովհետև նրան թվացել էր, թե Սանդրոն պետք եղածից ավելի եռանդ էր ցույց տվել գործողության ժամանակ՝ խախտելով պահանջված նորման։

Մարդը պատասխանել էր, թե նման պարագաներում նորմավորում անհնար է, ճիշտ այնպես, ինչպես արձակված հրացանի գնդակը։ Գնդակը քանի տաք է՝ պիտի գնա։

Այդ էր ու այդ։ Էլ նրանց մեջ ոչ մի վեճ չծագեց։ Տիկնոջ կյանքը նմանվեց այն ծովային հոսանքին, որը կոչվում է գոլֆստրիմ։ Ցերեկները որպես տաք հոսանք՝ երեսից հոսում էր դեպի իր օրինական ամուսինը՝ Ստեփանոսը, իսկ գիշերները՝ տակից հոսում դեպի Աղեքսանդրը, որը տիկնոջը տիրելուց հետո արդեն կարող էր կոչվել Աղեքսանդր Մակեդոնացի։

Երբ «Ստեփանոսը» առաջին երեխան ունեցավ, հիմնարկի ծառայողները թանկարժեք նվեր էր, որ բերում էին այդ բախտավորությունը շնորհավորելու համար։

- Վերջապես ճակատիս քսված մուրը մաքրվեց,- ասում էր տղայի անվանակոչության խնջույքին Ստեփանոսը՝ գինու բաժակը վերցրած։

Ու այդ օրվանից սկսած՝ ամենայն տարի մաքրվում էր երջանիկ «հոր» ճակատի մուրը։

Իսկ երեխաների մայրն իրեն երջանիկ էր զգում՝ տեսնելով, որ իր փոքրիկ պարտեզն ավելի պտղավետ էր, քան իրենց մեծ այգին։

Մինչ այգու ծառերը տարին մեջ էին պտուղ տալիս, իր պարտեզը ամեն տարի էր տալիս։

Անցան տարիներ։

Տիկին Մարինեն վերջապես հասավ այն տարիքին, երբ ավարտվում է պտղաբերությունը։

Բայց այգու տաղավարում գիշերային հանդիպումները շարունակվում էին նախկին թափով։

Սանդրոն, կասկածելով, որ տիկինը, կարող է պատահել, իր մոտ է գալիս ինքերցիայով, ինքը չի զգում այդ բանը ու հանկարծ մի օր կարող է զգալ և իրեն մեղադրել, թե ինչո՞ւ չի զգուշացրել, մի օր ասաց.

- Տիկի՛ն, քանի որ այժմ այլևս երեխա չեք բերում, ինձ մոտ ինչո՞ւ եք գալիս, խոմ գեշ միտք չունե՞ք…

- Ոչ մի գեշ միտք,- պատասխանեց կինը,- ես քեզ մոտ եմ գալիս՝ հիշելու անցյալը։ Այնպես, ինչպես ծերունին է այցելում իր մանկության երջանիկ վայրերը…

Հիմա չակերտավոր հայրը ունի չորս տղա, հինգ աղջիկ՝ բոլորն էլ համալսարանավարտ և մեծ դիրքի տեր։

Այգեպանը նայում է նրանց ետևից, նախանձում ու ասում է ինքն իրեն։

- Ո՞վ աշխատի, ո՞վ ուտի։ Ստեփանոսը իմ երեխաներով հայր դարձավ, իսկ ես մնացի անզավակ։

Ես հասկանում եմ այգեպանի կսկիծը։

Ճիշտ նույն բանն ինձ հետ է պատահել։

Ընկերս շատ խնդրեց, թե. «Ինձ համար մի ֆելիետոն գրի՛ր, որ ես իմ անունով հրապարակեմ»։

Գրեցի, տպել տվեց ու այդ մեկ ֆելիետոնով գրական համբավ վաստակեց ու գրողների շարքն անցավ։

Ամեն տեղ հանդիպումներ, ամեն տեղ մեծարանք։

Այնպես որ նա դարձավ արև, իսկ ես՝ լուսին։

Փոշմանել եմ արածս, բայց արդեն ուշ է։ Սիրտս պայթում է։ Ասում եմ. «Ի՞նչ արի ես։ Ես գրեմ՝ նա՞ փառքի տիրանա»։

Բայց ընկերս Ստեփանոսի պես իսկական հեղինակին չուրա-

ցավ։ Մեծարանքներին ինձ հետն էր վերցնում, որով ես գեթ կարողանում էի ասել, թե այս հանճարն իմ ընկերն է…

Տարածայնություններ երկնքում

Աստված շատ վաղուց նկատել էր, որ Գաբրիել հրեշտակն առաջվա նման մարդկանց հոգին եռանդուն չի առնում։

Աշխատում էր այնպես, ինչպես կոլխոզնիկը համայնական դաշտերում։

Այսինքն։

Աշխատանքի էր ներկայանում օրը կեսօր դարձած, մահվան գերանդին վերցնում էր չուզելով, իսկ երբ սկսում էր հնձել մահկանացուների հոգիները, գերանդին այնքան բարձրից էր քսում, որ հոգիների կեսը մնում էր մեռնողի մարմնի մեջ։ Հնձածներն էլ մինչև երկինք էր հասցնում, կեսը ճանապարհին էր թափում։

Ճիշտ այնպես, ինչպես կոլխոզնիկն է իր արտը հնձում։

Աստված հաշիվ է անում, տեսնում է՝ իր պարգևած հոգիների կեսն էլ չի վերադառնում երկինք։

Այնպես, ինչպես կոլխոզը ցանք անելիս իր սերմացուն անգամ չի քաղում։

Այնպես որ Աստված մի օր կանչեց Գաբրիելին իր մոտ և ասաց.

- Հրեշտակապե՛տ, ես նկատում եմ, որ վերջերս շատ անբարեխիղճ ես աշխատում, հոգեառության գործը քո սեփականը չես համարում, առնում ես այնպես, ինչպես պատահի։ Խառնիխուռն։ Ո՛չ կաթոլիկին ես ջոկում բողոքականից, ո՛չ լուսավորչականին հունադավանից։ Դու չես ջոկում անգամ քրիստոնյային մահմեդականից։ Քո մեռցրածներից քանի՞-քանի՞ մահմեդականներ ենք հայտնաբերել և ուղարկել մահմեդական դրախտ։

Բարեբախտությունն այն է, որ վերջիններս, թլպատված լինելով, իսկույն հայտնի են դառնում։ Իսկ ինչպե՞ս վերաբերվենք թուրք կանանց հետ, որոնք մուսուլմանության որևէ նշան չեն կրում իրենց մարմնի վրա։ Պիտի խառնվեն քրիստոնյա կանանց և դրախտն ապականեն։

Այս ասելով՝ Աստված մի պահ լռեց, ապա շարունակեց.

- Գաբրիե՛լ ջան, ղուրբա՛ն*, այսպես աշխատել չի կարելի։ Ի՞նչն է այս փոփոխության պատճառը, ասա՛։ Գուցե մի բանից դժգո՞հ ես։

- Ուզո՞ւմ ես՝ ճիշտն ասեմ,- ասաց հրեշտակը։

- Ասա՛, ասա՛, մի՛ երկյուղիր։ Ասա՛, դարմանենք։

- Գիտե՞ս ինչ, Աստվա՛ծ,- ասաց Գաբրիելը,- ես այս մեր հոգետվության և հոգեառության գործը համարում եմ անմիտ, տղայական խաղ։

Ադամի ժամանակներից դու հոգի ես տալիս, ես առնում եմ, դու տալիս, ես առնում, և այսպես անվերջ, անվախճան։ Ասա՛, ո՞րն է այս աշխատանքի իմաստը, Տե՛ր։ Եթե մարդիկ չբազմանային, էլի ոչինչ, բայց հիմա ծովի ավազից շատ են, ես ո՞ր մեկի հոգին առնեմ։

- Դրանում մեղավո՞ր եմ ես։ Մարդիկ ունեն սեռական գործարաններ, բազմանում են։

- Գործարան, գործարան, գործարան... Գործարանն էլ համով-հոտով պետք է աշխատի, այսպես միալո՞ր։ Գործարաններն ամեն տարի երկարատև ռեմոնտի են կանգնում, շաբաթը մի անգամ սանիտարական օր է հայտարարվում, ու չեն աշխատում, բանվորներն արձակուրդ են գնում, հազար ու մի նման խափանումներ են լինում, իսկ ինչո՞ւ քո ստեղծած ամուսիններն աշխատում են այդպես անխափան։ Ինչո՞ւ տարվա մեջ գեթ մի ամիս արձակուրդ չունեն։

Կարգ սահմանիր, թո՛ղ ամեն մարդ իր հոգին ինքնակամ բերի երկինք հանձնի. ես այսքան հոգի չեմ կարող առնել։

- Մարդն իր կամքով հոգին կտա՞, Գաբրիե՛լ, այդ ի՞նչ ես ասում,- նկատեց Աստված։

- Ինչո՞ւ չի տա։ Գյուղացիներ գիտեմ, որոնք ասում են. «Կմեռնեմ, բայց կոլխոզ չեմ մտնի»։ Երկրում կոլխոզային կարգեր ստեղծի՛ր, թո՛ղ մեռնեն։

Բազմաթիվ այր մարդիկ եմ ճանաչում, որոնք օրնիբուն աղոթում են, որ Աստված իրենց հոգին առնի, իրենց կանանց ձեռքից ազատվեն։

Բոլոր ամուսնացողներին մի անառակ կին տո՛ւր, թո՛ղ վազելով գան երկինք։

- Իսկ մնացած կանանց ի՞նչ անեմ։

- Հանձնի՛ր սատանաներին, ուզում են՝ տանջեն, ուզում են՝ սիրեն։

* Ղուրբան (kurbān) - արաբ. մատաղ, զոհ։

Այստեղ Աստված երկար մտածեց ու ի վերջո այսպես խոսեց.

- Շատ լավ, Գաբրիել, ես այս հարցը երկնային պլենումին կդնեմ: Օրակարգում այլ հարցեր էլ կան:

- Ինչ հարցեր են դրանք:

- Քրիստոսի օրինաց մի կետը փոփոխության պիտի ենթարկվի: Քրիստոսը պատվիրել է մի երեսն ապտակողին մյուս երեսն էլ դարձնել, բայց սա երկու հազար տարվա մեջ չգտնվեց մի մարդ, որ այդ պատվիրանը կատարեր: Այդ պատճառով էլ ուզում ենք օրենքի այդ կետը կանացի դարձնել ու ասել.

- Կանա՛յք, ձեր մի երեսը համբուրողին մյուս երեսն էլ դարձրե՛ք:

- Օրակարգի ուրիշ ինչ հարց կա:

- Երրորդ հարցը մահմեդական կանանց դիմումն է Մարիամ Աստվածածնին: Նրանք դիմում են Մարիամին՝ իբրև միակ կին ներկայացուցչի աստվածության մեջ, որ զորավիգ կանգնի մահմեդական կանանց: «Մինչ,- գրում են նրանք,- քրիստոնյաների ամուսնության ժամանակ մի մարդ ու մի կին, ձուլվելով իրար, կազմում են մի մարմին, մահմեդական ամուսնության մեջ այդ պրոպորցիան չի պահպանվում: Բազմակնության հետևանքով մի տղամարդուն խառնում են հարյուրավոր, սուլթանների մոտ՝ հազարավոր կանանց: Մի մարմին, որից համարյա տղամարդու համ չես առնում: Ճիշտ այնպես, ինչպես սովետական ճաշարանում պատրաստված կոտլետը: Այնքան հաց են խառնում մեջը, որ մսի հոտ չի գալիս: Նման ամուսնության ժամանակ բացառված չէ այն հանգամանքը, որ շատ հաճախ ամուսնացած կանայք մեռնում են որպես... անարատ կույսեր»:*

Այս դրությանը վերջ տալու համար դիմում են Մարիամին, որ ես միջնորդություն հարուցեմ մահմեդական աստծու առաջ, որ նա փոխի ամուսնական այդ անարդար օրենքը:

- Պիտի միջնորդե՞ք,- հարցրեց Գաբրիելը:

- Վախենում եմ: Դա կատաղած շուն է, հետը խոսել չի լինում...

---

* Պրոպորցիա ***(пропорция)*** - ռուս. համաչափություն:

Ճնճղուկներ

Առավոտները ես շուտ եմ զարթնում, բայց ուշ վեր կենում: Ամբողջ ժամանակ ուսումնասիրում եմ ճնճղուկների կյանքը, որոնք թռչկոտում են պատուհանիցս երևացող պատշգամբի ճաղերին:

Ամենից առաջ հարց եմ տալիս ինձ. «Թև ունեն սրանք, ինչո՞ւ չեն փախչում արտասահման: Չլինի՞ կոմունիստ են»:

Եվ գտնում եմ հավանական, որովհետև նրանք ոչ մի ռեժիմում այսպես կուշտ չեն կերել, ինչպես ներկայումս սովետական կարգերում:

Սեփականատիրական ժամանակ գյուղացին այնպես խորն էր հերկում արտը և ցանելուց հետո խնամքով այնքան տափանում, որ ոչ մի հատիկ հողից դուրս չէր մնում: Իսկ ներկայումս կոլխոզնիկը ցանում է հողի երեսը, որ թռչուններն ուտեն, և ժամանակին աղատվի արտը հնձելու պարտականությունից...

Բայց ինչո՞ւ միայն այս:

Ճնճղուկը կոմունիստ է գլխավորապես նրանով, որ կտուց ունի միայն ուտելու համար:

Ավելացնեմ անմիջապես, որ ճնճղուկը կոլխոզում չի կարող որևէ դեր կատարել: Չի կարող, օրինակի համար, ամբողջ ամառ իր կտուցով կուտ կրել, հանձնել պահեստ, որ աշնանն աշխօր ստանա: Նա կտցելուն պես կուլ է տալիս դեռ պահեստ չհասած: Նա շատ-շատ պահեստապետ կարող է լինել:

Ինչքան ես կարողացա նկատել, ճնճղուկի արուն ավելի գեղեցիկ է, քան էգը: Մի բան, որ կարծել է տալիս ինձ, թե նրանցում ամուսնական առաջարկը ոչ թե տղան է անում աղջկան, այլ ընդհակառակը, որովհետև նրանցում գեղեցիկ սեռը արուն է: Միայն ինձ չհաջողվեց իմանալ, թե նրանցում էլ ամուսնական անհավատարմություն գոյություն ունի, թե՞ ոչ: Եվ կամ, ինչպե՞ս չեն շփոթվում և կարողանում են իրենց ամուսիններին ջոկել և միայն նրանց սիրել, քանի որ ծածկված են միևնույն փետուրներով, անուններ էլ չունեն:

Քանի որ ճնճղուկներն ապրում են խմբովին, անկարելի է, որ նրանք չունենան իրենց կառավարությունը, իրենց քաղսովետը և այլն:

Բայց հետաքրքիր է իմանալ, թե ինչպե՞ս է կատարվում նրան-

ցում ընտրությունը. այնտեղ էլ բյուլետենը տալիս են ճնճղուկի կտուցը, թե՝ տար գցիր այսինչ ծակը...*

Եվ հետո, ընտրվելուց ինչպիսի՞ օրենքներով է կառավարվում «երկիրը»։

Ինչքան գիտեմ, նրանցում ո՛չ բանտ գոյություն ունի, ո՛չ աքսոր, հապա կարգն ինչ միջոցներով է պահպանվում։

Քաղսովետ եթե ունեն, նրա նախագահը, չեմ կասկածում, օրինաբուն նստած իր կին ծառայողների հետ սիլի-բիլի է անում։ Որովհետև ոչ նոր բնակարաններ է կառուցում ճնճղուկների համար, ոչ էլ մեռնողներին գերեզման տալիս։

Այդ կողմից մեր քաղսովետները փա՜ռք են։ Ճիշտ է, կենդանիներին նոր բնակարան չեն տալիս, բայց գերեզմանն առած՝ մեռնողի ետևից ման են գալիս, որ անմիջապես տեղավորեն։

Ես նկատել եմ, որ ճնճղուկները հաճախ են հավաքվում մեր թթի ծառի վրա ու երկար ծվծվում են։ Իմ կարծիքով այդ ծառը նրանց Գիտական ակադեմիան է։ Միայն ես չկարողացա իմանալ, թե նրանց մեջ ո՞րն է Վիկտոր Համբարձումյանը։

Վտանգի հարցում մարդու և ճնճղուկի վիճակը միատեսակ է։ Երկուսն էլ մի-մի թշնամի ունեն։ Ճնճղուկին կատուն է բռնում, մարդուն՝ չեկիստը։ Միայն այն տարբերությամբ, որ ճնճղուկը կարող է ազատվել կատվի ձեռքից ու փախչել, իսկ մարդը ազատվելու ոչ մի հույս չունի։ Կբռնվի ու կգնդակահարվի։

Բայց այս բոլորը ոչինչ, սրանք երկրային են և ժամանակավոր։

Ինձ հետաքրքրում է այն հարցը, թե ճնճղուկներն էլ մեզ նման արքայություն գնո՞ւմ են, թե՞ ոչ։

Եթե չեն գնում, ես այնտեղ պառկելիս ինչի՞ն նայեմ։

Պետական երեխայություն

Պետությունները, երբ աշակերտական սեղանի առջև նստած սովորում են, իրար շատ լավ ճանաչում են։ Քարտեզները փռած առաջնին՝ ուսումնասիրում են իրար գույները, քանի՞ քառակուսի կիլոմետր է բռնում, նրա բնակչության թիվը, կաթոլիկ է, թե՞ բողքական, ի՞նչ է արտահանում և ի՞նչ ներմուծում։ Անգամ ո՞ր ազգի

* Բյուլետեն ***(бюллетень)*** - այստեղ՝ քվեաթերթ։

մեջ ավելի շատ գեղեցկուհիներ կան։

Բայց այդ նույն պետությունները, հենց որ տասնամյակն ավարտում են ու կյանք մտնում, իրար չեն ճանաչում։

Չինաստան։

Սա քանի՞ տարի է, գլուխը ցցել կանգնել է Ասիայի մեջտեղը, բայց ոչ ոք չի ուզում նրան ճանաչել[153]։

Արևելյան Գերմանիան, աղքատի տոպրակն ուսը ձգած, աշխարհը ման է գալիս, որ գեթ որպես ողորմություն մի փոքր ճանաչեն, բայց չեն ճանաչում։

Ամերիկան Կուբայի հետ մի ժամանակ ինչ սերտ կապերով էր կապված, բայց հիմա կռնակը Կուբային դարձրած՝ սատանայի երեսը կուզի տեսնել, Կուբայինը՝ ոչ։

Թեև Սովետական Միությունը, Լեհաստանը, Չեխոսլովակիան և մյուս սոցիալիստական երկրները ճանաչում են սրանց, անվերջ դելեգացիա են ուղարկում այդ երկրներ, դելեգացիա ընդունում այդ երկրներից, երբեք մենակ չեն թողնում, որ մենակություն չզգան, բայց հաշիվ կա։ Ուրիշ բան է սեփական հարազատներից միայն ճանաչվել, ուրիշ օտար պետություններից ճանաչվել։

Մի պարզ օրինակ։

Չինաստանից զատ՝ մյուս հիշածս պետությունները երիտասարդ են։ Արդեն բեղերնին սկսել են «մրալ», և վաղ մյուս օր պիտի ամուսնանան։

Որտեղի՞ց պիտի աղջիկ ուզեն։ Սոցիալիստական երկրների՞ց։

Ո՛չ, չեն կարող, որովհետև նրանք բոլորը «եղբայրական» պետություններ են, և ոչ մի քահանա թույլ չի տա, որ մեկն իր «եղբոր» աղջկա հետ ամուսնանա։ Դա բոլոր կրոններով էլ մեղք է համարվում։

Նման պարագայում ինչ կմնա անել, ասենք, խեղճ Արևելյան Գերմանիային։ Խոմ վարդապետ չի՞ ձեռնադրվի։ Իսկ սեռականն իրենն է պահանջում։

Այստեղ է ահա, որ գլուխ է բարձրացնում անհավատարմությունը, ընտանիքի պատվի արատավորումը։

Դուք գիտե՞ք, որ այս բոպեիս Արևելյան ու Արևմտյան Գերմանիաները գիշերները ծածուկ իրար հետ հարաբերում են, չնայած այն բանին, որ Սովետական Միությունը հավատարիմ ներքինու

նման հսկում է նրանց բարքին։

Գիտեք ինչ։ Ես այնքան էլ չեմ մեղադրում այն կապիտալիստական երկրներին, որոնք չեն ճանաչում սոցիալիստներին։

Սոցիալիզմը ծաղիկ հիվանդությունից ավելի է այլանդակում պետության կերպարանքը։ Ծաղիկը միայն նախշում է մարդու դեմքը, որից հետո էլի կարելի է ճանաչել նրան։ Բայց սոցիալիզմը պետության աչքերը չռում է հարևանի երկրի վրա, ժանիքները դուրս է ցցում այնպես, որ մարդ տեսնելիս վախենում է։ Մի խոսքով, դառնում է այլակերպ գազան՝ մարդկության հետ ոչ մի ընդհանուր բան չունեցող։

Չինաստանն այս վիճակում չհարձակվեց խեղճ Հնդկաստանի հողերի վրա։

Ուրեմն, շատ լավ, թույլ տանք, որ կապիտալիստական երկրները չճանաչեն սոցիալիստական երկրներին։ Իրավունք ունեն։

Իսկ ինչ կասեք այն երկու իրար հարազատ կապիտալիստական երկրներին, որոնք նույնպես իրար չեն ճանաչում։ Ու ոչ միայն չեն ճանաչում, այլև խռովել են իրարից և փողոցում իրար պատահելիս չեն բարևում իրար։ Ու ոչ միայն չեն բարևում, այլև թշնամանում եմ իրար։

Վերցնենք Արևմտյան Գերմանիան և արաբական տասը երկրները։

Մի տարի առաջ ասում, խոսում, կատակում, առուտուր էին անում իրար հետ. այս տարի հանկարծ խռովեցին իրարից։

Պատճառը։

Պատճառն այն է, որ Արևմտյան Գերմանիան ճանաչեց Իսրայելին, և դեսպաններ փոխանակեցին իրար հետ։

Կարծես Գերմանիան հավիտենական սեր ուխտած լիներ արաբներին ու հիմա դավաճանում է՝ Իսրայելին սիրելով։

Մինչ օրս ես չէի իմացել, ոչ պետություններն էլ են խանդ ունեցել…

Ա՜յ արաբներ, երկու արու պետություններ ճանաչում են իրար, դրանում ինչ վատ բան կա։ Խում Գերմանիան մահմեդականն չէ, որ արվամոլության մեջ մեղադրեք։

Բայց ինը արաբական պետությունները մեղք չունեն այս բանում, բոլորը Միացյալ Արաբական Պետություն կոչված Եգիպտոսն արեց։

Արևմտյան Գերմանիային մոռացավ, Արևելյանին «ճանաչեց», այն էլ այնպես հանկարծակի, որ Արևելյան Գերմանիան այս բոպեիս չի հավատում իր երջանկությանը, ու պատահածը երազ է թվում։

Պետությունը խռովի պետության հետ…

Այդ նշանակում է, որ դրանք ոչ թե մեծանում են, այլ գնալով փոքրանում, երեխա են դառնում։

Մեր բակում երկու փոքրիկ քույրեր անվերջ խռովում ու բարիշում են մի տիկնիկի համար։

Դրանց հոր հետ էլ ես չեմ խոսում։

Բայց անհատների մեջ պատահած խռովությունն այնքան էլ աղետալի չէ։ Բոլոր խռովածները Փրկչի ծննդյան օրը հաշտվում և հաղորդվում են։ Իսկ պետությունները Ծնունդ չունեն, այս պատճառով էլ նրանց թշնամությունը հավերժական է դառնում և աղետաբեր։

Դանակը պետք է տանել եզի մոտ

Մի ընկեր ունեի ես։

Միասին ապրեցինք, միասին էլ ուզում էինք մեռնել։ Ասում էինք՝ կյանքն ընկերով հարսանիք չեղավ, գեթ մեր մահը ընկերով հարսանիք լինի։ Տեսնենք վերջապես, թե հարսանիք ասածն ինչ բան է։

Բայց ընկերս չթողեց, որ ես մեռնեի։ Ասաց.

- Ես մեռնեմ, դրությունն ուսումնասիրեմ, քեզ գրեմ, նոր մեռիր։

Այսօր այդ նամակը ստացա։

Գրում է. «Երկինքն այլևս նախկինը չէ։ Որպեսզի «վերջին դատաստանը» չծանրաբեռնվի, յուրաքանչյուր տարի քննում և ընդունելություններ են կատարում դրախտում և դժոխքում»։ Գրում է. «Մինչև օրս ամեն ծերացող իրավունք ուներ մեռնելու, բայց հիմա տարիքը նկատի չի առնվում, եթե մեկը Տիրոջ բոլոր պատվիրանները կատարել է և կարող է քննություն բռնել, երիտասարդ վիճակում էլ կարող է մեռնել։

Այս տարի ոչ մեկը չկարողացավ փոխադրվել արքայություն, բոլորը վերաքննություն ստացան և վերադարձան երկիր՝ պատ-

բաստվելու հաջորդ տարվա քննությանը: Մարդ չկար, որ իր երկու շապիկներից մեկն ուրիշին տված լիներ, կամ մի երեսը ապտակելիս երկրորդ երեսը դարձրած լիներ: Բոլորը «շնացել» էին թե մտքի մեջ, թե գործնականում:

Այնուհետև,- գրում է ընկերս,- մեռնելիս մի պատճառաբանված դիմում կգրես հետևյալ իմաստով: Կգրես. «Ես ապրում եմ Սովետական Միությունում, ուր սոցիալիզմի հետևանքով կյանքն իսպառ մեռած է: Մարդիկ ո՛չ խոսում են, ո՛չ ծիծաղում, ո՛չ մտածում, ո՛չ գործում, ուստի, խնդրում եմ, իմ հոգին առ: Գալով երկու շապիկ ունեցողի՝ մեկն ուրիշին տալու խնդրին, պետք է ասես, որ մեր երկրում «աղքատներ գոյություն չունեն», և ում տալիս եմ, չեն վերցնում»:

Պետք է ավելացնեմ,- գրում է ընկերս,- որ ներկայումս տերիտորիայի հարցը երկնքում հրատապ է դարձել: Դժոխքն ու դրախտը հավասար տարածություններ են բռնում այն պայմաններում, երբ հսկայական տարածությամբ արքայության մեջ միայն երկու արդար են նստած, մինչ դժոխքում տեղ չլինելու պատճառով մեղավորներն իրար վրա են թափված:

Արքայությունը սաստիկ հիշեցնում է Երևանի նոր բացվող խանութները: Հսկայական շենքի մեջ՝ երկու բանկա թթված կոնսերվ:

Սադայելն Աստծուն ասում է.

- Բեր քո արքայությունը դարձնենք դժոխք, թող մեղավորները հանգիստ տանջվեն, իսկ արդարների համար մի հավաքունն էլ հերիք կանի: Ա՛յ Աստված,- ասում է Սադայելը,- երբ մարդիկ քո ոչ մի հրամանը չեն կատարում, արքայությունն էլ ինչ՞ն է պետք:

Մարդիկ, ինչպես տեսնում ես, միայն քո պատվիրանները չկատարելով են զբաղված: Քանի պետությունները կան աշխարհում, սպանությանը վերջ չի լինի: Իսկ բարության մասին խոսելն իսկ ավելորդ է:

Պետությունները ոչ թե շապիկ չեն տա ուրիշին, այլ շապիկները կհափշտակեն ու իրար վրա կհագնեն ամառվա շոգ եղանակին անգամ: Ասում են.

- Թող քրտինքի մեջ խեղդվենք, միայն թե հարևան պետությանը տկլոր տեսնենք:

Խեղճ Ճապոնիան, մի նեղ կղզու մեջ սեղմված, քանի՞ տարի է Ռուսաստանից մի մատ Սիբիր է խնդրում՝ ոտները մի փոքր պար-

զելու, չի տալիս: Ռուսաստանն ու Սիբիրն իրար վրա հագել, նստել է:

Փոքրիկ Իսլանդիան ծովի մեջ խեղդվում է, ոչ մի պետություն օգնության ձեռք չի մեկնում:

Անգլիան ուռկանը ծով գցելիս շատ անգամ ձկների հետ հանում է Իսլանդիային, բայց էլի ետ, ծովն է գցում...»:

Ընկերոջս այս նամակը կարդում ու մտածում եմ. «Իհարկե Աստծու համար դժվար է քանդել և դժոխք դարձնել մեծ ջանքերով ստեղծված դրախտը: Այնտեղ այնպիսի ծառեր կան, որ մարդու ձեռքը չի գնա կտրել: Ինչո՞ւ Աստվածն իր պատվիրանները չի հարմարեցնում մարդկանց կենցաղին: Երբ մարդը կարիք է զգում սպանության, ինչո՞ւ արգելել և ասել՝ մի՛ սպանաներ: Երբ նա կամենում է շնանալ, ինչո՞ւ արգելել: Ի՞նչ կարիք կա խտրություն դնել շան և, ասենք, կատվի միջև: Երկուսն էլ նույն անբան անասուններն են: Ինչո՞ւ Աստված պատվիրանների մեջ ռեալիզմ չի մտցնում:

Եթե դրախտում հավաքվեն բոլոր մարդասպանները, բոլոր շնացողները, արքայությունը կդադարի՞ արքայություն լինելուց: Ո՛չ, չի դադարի: Եվ դրանում համոզվելու համար թող Աստված Ռուսաստանին նայի: Լենինի ժամանակից սկսած՝ այդ երկրում միայն սպանում են մարդկանց, վերադասները բռնաբարում ստորադասների կանանց, գողանում են, խաբում, ստում, թերաչափում, թերակշռում, ստորադասները կրկնում են վերադասին, ստորանում, նրանց ոտները լիզում, կաշառում են դատավորին: Այս երկիրը, սակայն, սա քառասունհինգ տարի է «դրախտ» է կոչվում:

Աստվածը պետք է դանակը տանի եզի մոտ և ոչ թե եզը դանակի...

Բոլոր չարիքների միակ պատճառը

Դա մարդու հոգին է:

Ու ես չեմ հասկանում, թե մարդն ինչո՞ւ է թույլ տալիս, որ հոգին ապրի իր մարմնի մեջ:

Եթե մարմինը չքավոր լիներ, կասեինք ոչինչ, իր տունը տվել է վարձու, որ ապրի:

Բայց այդ պարազիտը դարերով ապրում է մարդու մարմնի մեջ և մի կոպեկ չի վճարում:

Ինչո՞ւ չի բռնում, դուրս շպրտում այդ բոլոր չարիքների արմա-

տին և թույլ է տալիս իր մեջ նստել և իր տունը քանդել։

Ինչ է տեսել նրա մեջ, որ կպել ու պոկ չի գալիս։

Հոգին, ճիշտ է, առանց մարմնի չի կարող ապրել, բայց մարմինն առանց հոգու փառավոր կարող է ապրել։

Ապրելու համար ինչ է հարկավոր մարմնին. օրական մի կիլո հաց և մի աղջիկ, որ սիրի։ Ինչքան անձեռ-անոտ մարմին լինի, որ չկարողանա այդքանը ձեռք բերել։

Հոգին ասում է.

- Մարմինն առանց ինձ չի կարող իր կնոջը սիրել. գրկելիս անպայման կնոջ հոգուն պիտի մեռնի…

Է՛, կնոջ հոգուն չի մեռնի, մարմնին կմեռնի։ Մեկ չէ՞։

Եթե հոգին իր այդ դույզն ծառայության համար հիշատակություն է անում, ինչո՞ւ չի հիշում այն բյուրավոր չարիքները, որ մարմնին է պատճառում։

Եթե հոգին չլիներ, մարմինն այսպես անխնա կկոտորվե՞ր պատերազմներում։

Երբե՞ք։

Գերմանիայի մարմինը շատ լավ տեղավորված էր իր երկրի սահմաններում և առավոտները մարզանքի կանգնելիս, ձեռքն ու ոտքը ազատ շարժում էր՝ առանց հարևան երկրին հրմշտելու կամ ձեռքով աչքը հանելու։ Բայց երբ անկշտում հոգին ներս մտավ, տեսա՞ք ինչպես կամեցավ ողջ աշխարհը գրավել՝ զոհելով միլիոն, միլիոն անմեղ մարմիններ։

Դաշնակիցները, ճիշտ է, միացան ու Գերմանիայի հոգին հանեցին, բայց վերջերս, նկատում եք, չէ՞, ինչպես նրա հոգին տոտիկ-տոտիկ մոտենում է նրա մարմնին և ուզում է ներս սողոսկել՝ երրորդ համաշխարհային պատերազմ սկսելու համար։

Ա՜խ, այդ հոգին…

Մեղք չկա, որ մեր գյուղացին բացառապես մարդու հոգին է հայհոյում։

Մարդիկ մարմնով բոլորովին չեն տարբերվում իրարից և դարերով էլ եթե ապրեն կողք-կողքի, սուր չեն բարձրացնի իրար վրա։

Ահա իրար քով քովի պառկած են մի թուրքի, մի հայի մարմին։ Նրանք խտրություն դնո՞ւմ են իրար մեջ։ Ասո՞ւմ են՝ ես հայ եմ, դու թուրք։

Ո՛չ։

Բայց հենց որ հոգին մտավ նրանց մեջ, անմիջապես հայ ու թուրք են դառնում և սկսում իրար կոտորել։

Թողնենք հայ ու թուրքին, վերցնենք միևնույն ազգության պատկանող բոլշևիկին և դաշնակին։ Սրանց մարմինների մեջ անգամ, երբ հոգի է մտնում, սկսում են իրար կոտորել։

Եթե բոլոր մարդկանց մարմինները միատեսակ են և անզանազանելի, նրանց հոգիները բազմազան են և ման են գալիս՝ հրացանները կրակի պատրաստ։

Սոցիալիզմը կապիտալիզմի վրա է կրակում, մահմեդականությունը՝ քրիստոնյաների, կաթոլիկները՝ բողոքականների (հիշեցեք՝ Հովհան Հուսի[154] այրումը խարույկի վրա), գերմանացիք՝ ֆրանսիացու, ֆրանսիացիք՝ գերմանացու, և այսպես անվերջ։

Մինչդեռ մարդու մարմինը ո՛չ սոցիալիստ է, ո՛չ կապիտալիստ, ո՛չ կաթոլիկ, ո՛չ բողոքական, ո՛չ ֆրանսիացի, ո՛չ գերմանացի։

Այստեղ չես կարող չասել.

- Հոգինե՛ր, դուք հաշիվ ունեք իրար հետ՝ դուրս եկեք ձեր մարմիններից և իրար սպանեք, մարմնին ինչո՞ւ եք խառնում ձեր կռվին։

Նրան մի փոր հաց տվեք, մի կին՝ անցեք ձեր գործին։

Հոգու՝ մարմնին հասցրած վնասները անթվելի են։

Այսպես օրինակ՝ մարմինը եկել է աշխարհ և ցանկանում է վայելել աշխարհի բոլոր բարիքները։ Ասենք, ուզում է սիրել իր հարևանի կնոջը և ամեն օր միս, հավ, ձու ուտել։

Իսկույն հոգին ցցվում է մարմնի առջև.

- Ուրիշի կնոջը սիրելը մեղք է, իսկ պաս օրերին պիտի սննդարար բան չուտես, ծոմ պահես, աղոթես, ապաշխարես, որ ես գնամ արքայություն...

Ու ես զարմանում եմ, թե մարմինը ինչո՞ւ չի կանգնում ասում.

- Որպեսզի դու արքայություն գնաս, ես պետք է տուժեմ։ Դու այնտեղ հավիտյան պիտի ապրես, իսկ իմ օրերն այս աշխարհում համրված են, թո՛ղ ինչ ուզենամ, անեմ, նոր մեռնեմ, ինչո՞ւ ես խանգարում։ Մարդուց զատ՝ ոչ մի կենդանի արարած հոգի չունի, և մեռնելիս նրանցից ոչինչ չի բարձրանում երկինք՝ Բարձրյալի աջ ու ահյակ բազմելու։ Նրանք չե՞ն ապրում։ Չե՞ս թողնում ինձ տրված կյանքը գոնե մի էշի չափ հանգիստ վայելեմ։

Վերջապես մարմնին ինչ հարկավոր է անպայման հոգի ունենալ։

Սա քառասունհինգ տարի է լենինիզմը Ռուսաստանի հոգին հանել է, այժմ ռուս ժողովուրդը չի՞ ապրում։

Մենք էլ նրանց պես։

Տեսե՛ք։

Սովետական Ռուսաստանում, ուր կյանքը մեռած է, կամ գերեզմանոցներում, ուր հոգի չկա, մի վեճ, մի կռիվ կամ սպանություն պատահո՞ւմ է։ Կամ աշխարհի բոլոր պետությունները ՄԱԿ-ում են հավաքվել։ Այնտեղ կռիվ պատահո՞ւմ է։ Ո՛չ։ Ինչո՞ւ, որովհետև ՄԱԿ-ը արդեն մեռած հիմնարկ է դարձել։

Բայց այս բոլորը մի կողմ դնենք։

Դուք մի բոպե երևակայեցեք, թե աշխարհն ինչ կերպարանք կառներ, եթե մեր մարմինն էլ հոգու պես սանձարձակ կյանք վարել սկսեր։

Աշխարհում ապրում է երկու միլիարդ մարդ, կարծեմ։ Այդ երկու միլիարդի մեջ կարո՞ղ եք գտնել երկու մարդ, որ միևնույն դեմքն ունենան։ Ո՛չ։ Մեկի քիթը երկար է, մյուսինը՝ կարճ, մեկի աչքը ուղիղ է, մյուսինը՝ ծուռ, մեկը կարճ է, մյուսը՝ երկար, մի խոսքով՝ ոչ մի կողմով նման չեն իրար։

Ուրեմն ինչ։ Կարճ քթավոր մարդը դուրս գա փողոց, կանգնեցնի մի երկար քթավոր անցորդի, համեմատի երկու քթերը և դանակը հանի դիմացինի ավելորդ մասը կտրի։

Մի արտառոցություն, որ օրը ցերեկով կիրառվում է հոգիների աշխարհում։

Թուրքը կոտորում է հային, որովհետև թուրք չէ, բոլշևիկը կոտորում է դաշնակին, որովհետև բոլշևիկ չէ։

Արդյունքն այն է, որ այսօր Թուրքիայում հայ չկա, Հայաստանում՝ դաշնակ։

Ասացեք խնդրեմ, ինչո՞ւ մարմնական աշխարհում թույլ է տրվում երկու միլիարդ տարատեսակություն, իսկ գաղափարների աշխարհում չի թույլատրվում անգամ մի տարատեսակություն։

Հոգու օրենքներն ինչո՞ւ այսքան քարացած են, իսկ մարմնինը՝ կենսունակ։

Հոգին մարմնի դավաճան ընկերն է։ Նա ամեն տեսակ ոճիրներ

է կատարում, մարմնին գցում դժոխք, այրում, իսկ ինքը… ծլկում։

Մարդի՛կ, գիտակցությա՛ն եկեք և ձեր չարն ու բարին ճանաչե՛ք։

Ամեն անգամ, երբ ես համեմատում եմ մեր հոգին մեր մարմնի հետ, միշտ Սերվանտեսի Դոն Քիշոտն է աչքիս առաջ գալիս։

Մարմինը խելոք, բանիմաց ու ռեալիստ Սանչոն է՝ իր էշի վրա նստած, գոգին գինու տիկ և խորոված։ Ինքը չաղ, էշը չաղ։

Իսկ հոգին չորացած Դոն Քիշոտն է՝ չորացած ձիու վրա նստած։ Քշում է՝ այս ու այն անմեղ անցորդին նիզակահար անելով, և կարծում, որ դրանով անարդարությունն է վերացնում աշխարհի երեսից…

Ու եթե պատահմամբ Սերվանտեսի ստեղծած Դոն Քիշոտը չկործանեց աշխարհն իր ժամանակին, ներկայումս Մարքսի ու Էնգելսի ստեղծած Լենինը շատ շուտով կործանելու է աշխարհը…

Մարմի՛ն, դո՛ւրս քշիր միջից քո հոգին և դու կանմահանաս։

Որովհետև Գաբրիել հիեշտակը միայն հոգի ունեցողներին է մոտենում։

Երբ հոգի չունես, գա քո ինչն առնի…

Մտերմական զրույց Ամերիկայի հետ

Ամերիկա՛, դու ձի ես նստել, նիզակդ վերցրել ձեռքդ ու նայում ես աշխարհին, որ երկրում կոմունիստները գլուխ են բարձրացնում, քշում մտնում ես այդ երկիրը ու պատերազմ սկսում։

Թույլ տուր նկատել, որ օգնության այդ ձևը մի փոքր դոնքիշոտային է։ Եթե Սերվանտեսը ողջ լիներ, դու հեշտ չէիր պրծնի նրա գրչից, երբեք նա համաշխարհային մասշտաբը չէր թողնի և զբաղվի մի փոքրիկ Իսպանիայով։

Կոմունիզմի և առհասարակ նման հիմարությունների դեմ նիզակ չեն ճոճում երկու պատճառով. նախ՝ դու՝ որպես քրիստոնյա պետություն, սուր կամ նիզակ չպիտի վերցնես ձեռքդ, որովհետև ըստ այդ վարդապետության՝ ով սուր վերցնի, սրով էլ կընկնի[155]*, երկրորդ էլ՝ համաձայն նույն վարդապետության՝ ով քո մի երեսը ապտակի, պարտավոր ես երկրորդ երեսն էլ դարձնել։ Մինչդեռ դու ոչ միայն քո երեսը չես դարձնում, այլ ուրիշներին էլ արգելում ես։*

Կոմունիզմը հարվածեց Հյուսիսային Վիետնամին և կամենում

էր նրա հարավային երեսն էլ ապտակել, դու մեջ մտար, և սա երկու տարի է՝ կռվում և թույլ չես տալիս, որ հարվածի։

Մինչդեռ Հարավային Վիետնամը, թեև քրիստոնյա չէ, բայց ուզում է, որ Հյուսիսային Վիետնամն իր երեսն ապտակի։

Նկատեմ առհասարակ, որ քո բոլոր գործողությունները հակասում են քրիստոնեությանը։

Քրիստոսն ասում է՝ մի՛ սպանաներ, իսկ դու պատերազմներում Աստուծո օգնությունն ես խնդրում, որպեսզի շատ մարդ սպանես։

Հետո ավելի՛ մեծ զանցանք, Ամերիկա՛։

Քրիստոսն ասում է. «Նախ քո աչքի գերանը հանիր, նոր ուրիշի աչքի շյուղը»[156]։

Իսկ դու չես հանում։

Ես ընդունում եմ, որ կոմունիզմը հիմարություն է, բայց չէ՞ որ գոյություն չունեցող Աստծուն հավատալն ավելի մեծ հիմարություն է։

Կոմունիզմը աշխարհիկ հիմարություն է, հետևաբար, ժամանակավոր։ Մեռնում ենք և ազատվում այդ հիմարությունից։ Իսկ աստվածային հիմարությունը, ախր, հավիտենական է, մեռնելուց հետո էլ չենք ազատվում նրանից...

Ինչո՞ւ ես քեզ թույլ տալիս հավերժական հիմարություն ու թույլ չես տալիս, ասենք, Ռուսաստանին մի 70-80 տարի հիմարանալ։ Արդեն 45 տարի ապրել է այդ կյանքով, մի այդքան էլ պիտի ապրի ու մեռնի։

Քրիստոնեություն և սոցիալիզմ։

Զարմանալի իրար նման երկու անհաջող վարդապետություն։ Անվերջ քարոզում ու քարոզում են, բայց մինչև օրս ոչ մի հետևող չեն կարողացել ճարել։

Ոնց որ «Պողոս-Պետրոս»։

Մեկը ձայնում է՝

- Պողո՛ս, քեզ հետևող գտա՞ր։

- Ո՛չ։

- Պետրո՛ս, դու գտա՞ր։

- Ո՛չ։

Երկուսը միասին.

- Վա՛յ, վա՛յ, վա՛յ, վա՛յ...

Եվ, Ամերիկա՛, դու ա՛յս տես, թե ինչպես այս երկու մեծ ու պզտիկ հիմարություններն իրար նման են ուզում տարածվել։

Ճիզվիտները քրիստոնեություն տարածելու համար այրում էին մարդկանց խարույկի վրա, իսկ կոմունիստները, կոմունիզմ տարածելու համար շարքի կանգնեցնելով, գնդակահարում էին միլիոնավորների։

Ամերիկա՛, դու հիմա մոտ երկու հարյուր տարեկան պետություն ես, ու դեռ չես հասկացել ու չես ճանաչել աշխարհը։

Մարդիկ աշխարհ գալով դատապարտված են 70 կամ 80 տարի ապրելու։ Եթե հիմարությամբ չզբաղվեն, ինչպե՞ս մթնեցնեն իրենց օրը։

Թուրքական բանտում 101 տարի վճիռ ընդունողներն իրենց օրը ոջիլ կռվեցնելով էին անցկացնում։ Ներկայումս ոջիլ չկա, կյանքի դատապարտվածներն ի՞նչ կռվեցնեն։

Այդ պատճառով էլ պետություններն իրար հետ են կռվում, և այդ անվերջ կռիվների պատմություններն առնելով մեր պատմության դասագրքերի մեջ՝ դրանք ավանդում ենք մեր երեխաներին։

Դու առաջարկում ես մարդկությանը գիտությամբ զբաղվել։ Բայց չէ՞ որ գիտությունն էլ այժմ պատերազմին է ծառայում։

Ատոմային ռումբը գիտությո՞ւնը չհնարեց, որ այսօր սպառնում է ողջ աշխարհի գոյությանը։

Հետևաբար, իմ կարծիքով, տգիտությունն ավելի քիչ վնասակար է մարդուն, քան գիտությունը։ Մարդիկ, երբ տգետ էին, պարսատիկով էին սպանում իրար, իսկ հիմա՝ հրթիռներով։

Մարդիկ իրենց վայրենության ժամանակ, եթե սպանում էին իրար, էլի միտք ուներ. նրանք ուտում էին սպանվածին, իսկ ներկա «քաղաքակրթության» շրջանին սպանությունն իր իմաստը կորցրել է, որովհետև մարդիկ սպանում են իրար պատերազմներում և թաղում հողի տակ կամ տալիս են գազաններին ի վայելումն։

Այնպես որ, հումանիզմն ավելի շատ մարդակերություն մեջ պետք է փնտրել, քան քրիստոնեության և սոցիալիզմի, որոնք իբր կոչված են ծառայելու մարդկանց երջանկությանը։

Քրիստոնեությունն այն աշխարհում, սոցիալիզմը՝ այս։

Հետո, Ամերիկա՛, դու Վիետնամում կռվում ես կոմունիստների հետ և նրանց արժեքազրկելու համար «հրոսակներ» ես անվանում։

Բայց դրանով դու քեզ ես անպատվում։

Լսողը կասի.

- Այդ ինչ հրոսակներ են, որ Ամերիկան իր ողջ հզորությամբ երկու տարի կռվում է և փոխանակ հաղթելու՝ հաղթվում է։

Հարյուր հազար զորքի դեմ կռվողին կարելի՞ է ավազակախումբ կոչել...

Հե՛տ քաշվիր Վիետնամից, Ամերիկա՛, դու չես հաղթելու։ Վիետնամին տակից օգնում են Ռուսաստանն ու Չինաստանը, որոնց եթե իրար վրա գումարենք՝ ութ հարյուր միլիոն են, իսկ դու՝ հարյուր յոթանասուն միլիոն։

Որպեսզի չամաչես, մի պատրվակ բռնի՛ր ու հեռացի՛ր։

Սովորեցրո՛ւ, որ Ամերիկայից կայծակ հեռագրով քեզ կանչեն՝ ասելով.

- Կինդ մահամերձ հիվանդ է, շո՛ւտ հասիր...

Իսկ եթե ոչ, եթե անպայման վճռել ես վերջ տալ կոմունիզմին աշխարհում դրա միջոցն էլ կա. ասեմ, թե որն է։

Դու պետք է անմիջապես զենքերդ վար դնես և թույլ տաս, որ կոմունիզմը տիրի աշխարհին, և կռիվները մեկեն դադարեն։ Երբ խաղաղություն եղավ աշխարհում, կոմունիզմն անմիջապես կմեռնի։ Որովհետև կոմունիզմ նշանակում է կռիվ, ղալմաղալ և անկարգություն։

Կոմունիզմը մի հիվանդություն է, որ պետք է իր շրջանը բոլորի, արհեստական ձևով չի կարելի կտրել, մարդկային մտայնությունից դեն նետել այն։ Դա չիբան է՝ մի երկրի սրտին բուսած, որին պետք է թույլ տալ «հասնի», թարախը հավաքվի ու մի տեղից դուրս հոսի։

Խակ չիբանը կտրեցիր, վերքը կբորբոքվի։

Ի վերջո, Ամերիկա՛, չնեղանաս, եթե ասեմ՝ խելք չունես դու։

Եթե խելք ունենայիր, երբ Երկրորդ համաշխարհային պատերազմը վերջացավ Գերմանիայի պարտությամբ, ու երբ դու ատոմային զենք ունեիր ձեռքիդ, և կոմունիստ Ռուսաստանը չուներ, պետք է այդ ռումբը դեմ աներիր Ռուսաստանի սրտին և գոռայիր.

- Հրաժարվի՛ր քո կոմունիզմից, եթե ոչ գլխիդ կնետեմ ռումբը։

Եվ նա շան նման կվախենար։

Զարիր։ Թույլ տվիր, որ նա էլ, Չինաստանն էլ այդ ռումբից ունենան. հիմա նո՛ր սկսել ես նրանց դեմ կռվել։

Դժբախտաբար այլևս ուշացել ես։

Ողորմած հոգի Չերչիլն էլ իր ժամանակին քեզ զգուշացրեց, էլի չլսեցիր։

Դե կովիր, հոգիդ դուրս գա։

Այս բոպեիս աշխարհի հինգ ցամաքամասեր վարակել է ու հրդեհել իր գաղափարներով, իսկ դու բան չունես. զենքը ձեռքիդ՝ այս աշխարհամասից այն աշխարհամաս վազիր՝ քո ծակ դույլով այդ հրդեհները հանգցնելու։

Ամոթ էլ է։ Վազեցնում ու ետևիցդ էլ ծիծաղում է վրադ։

Եղա՞վ։

Ո՛չ։

Առածն ասում է. «Եթե թշնամու ձեռքը չես կարող կտրել, պիտի համբուրես ու դնես գլխիդ»։

Իսկ դու ո՛չ համբուրում ես, ո՛չ կտրում։

Մարդ ու կին՝ որպես աշխարհի միակ անքակտելի միացումներ

Աշխարհում գոյություն ունեն բազմաթիվ և բազմապիսի միացումներ։

Երկու առևտրականներ, հավասար դրամագլուխ դնելով, միասին խանութ են բռնում և կոչվում «օրթախներ»։*

Երկու պետություններ միանում են իրար՝ մի երրորդի վրա հարձակվելու և կոչվում «դաշնակիցներ»։

Այս նյութական միացումներից զատ՝ կան նաև գաղափարական միացումներ։

Երբ աշխարհ եկավ Քրիստոսը, աշխարհի մեծամասնությունը դավանեց նրա վարդապետությունը՝ ինքզինքին անվանելով «քրիստոնյա», և սկսեցին իրար «եղբայր» անվանել։

Երբ Ռուսաստան եկավ Լենինը, ժողովուրդը նրա սոցիալիզմի շուրջ հավաքվեց ու ինքզինքը «սոցիալիստ» կոչեց, առանձին անհատներ իրար «ընկեր» կանչեցին, իսկ սոցիալիստ պետությունները «եղբայրներ» դարձան։

Բայց թվածս բոլոր միացումները ցերեկօթիկ միացումներ են։

* Օրթախ (ortak) - թրք. գործընկեր։

Այսինքն՝ ցերեկներն ի ցույց մարդկանց երես-երեսի իրար լիզլզում են, իսկ գիշերները կոնակն են դարձնում իրար։ Եվ հրհրում են իրար՝ դոշակին միայն իրենք տիրանալու համար...

Միացումը որպեսզի արգասավոր լինի և հավիտենական, պետք է մարդիկ ոչ թե ցերեկն իրար լիզեն, այլ գիշերը մթության մեջ, ծածուկ։

Ինչպես Քրիստոսն է ասում՝ ողորմություն պիտի տալ այնպես, որ ձախ ձեռքը չիմանա, թե ինչ կատարեց աջը[157]*։ Իսկ միացման այս պահանջը կատարում են միայն մարդն ու կինը։*

*Ամուսնական կյանքում ցերեկային սերը պարտադիր չէ։ Նրանք ցերեկները հաճախ ոչ միայն իրար չեն սիրում, այլև կռվում են իրար հետ, ծեծում են իրար։ Բայց գիշերը, երբ պառկում են երես-երեսի, այնքան են սիրում իրար, որ ցերեկային կռիվների կոնտրիբուցիան** միջից դուրս է գալիս, և պատերազմական բոլոր ծախսերը լրիվ հատուցվում են։*

Արդյոք ինչն է պատճառը, որ ամուսնական միացումից զատ ուրիշ ոչ մի միացում մարդկանց չի հաջողվում։ Ինչո՞ւ, ամուսնականից զատ, մյուս բոլոր միացումները երևութական են, անկյանք։

Ասեմ։

Որպեսզի մարդիկ անքակտելի կերպով իրար կապվեն, պետք է այդ նպատակով առաջուց շինված լինեն, և դրա համար օժտված լինեն ֆիզիոլոգիական հարմարություններով։

*Աստվածաշունչն ասում է՝ Աստված, Ադամին ստեղծելով, որպեսզի մենակ չձանձրանա, նրան որպես սաբրի** ընկեր՝ Եվա ստեղծեց։*

Այդ ճիշտ չէ։

Որպեսզի Ադամը խոսակից ունենար, պետք չէր, որ նրա ընկերն անպայման Եվա լիներ։ Աստված կարող էր մի երկրորդ Ադամ ստեղծել, մի փոքր ավելի գիտակից և տարբեր համոզմունքի տեր, որ իրար հետ վիճեին ու ժամանակն անցներ։

Պայմանով, որ երկու Ադամների այդ համոզմունքներն այնքան ներհակ լինեին, որ հավիտյանս վիճեին և ոչ մի եզրակացության չգային։

Որովհետև եթե այդ տարբեր համոզմունքները մի հայտարարի

---

* Կոնտրիբուցիա (contributio) - լատ. ռազմատուգանք։

** Սաբր (բրբ.) - համբերություն։

բերեին, հետո խոսելիքը պիտի վերջանար, և այնուհետև իրար երեսին նայելով անխոս՝ պիտի ձանձրանային անվերջ։

Միայն անզիջող լինելու վատն այն է, որ իրենց վեճերը կարող էին վերջացնել՝ իրար ֆիզիկապես ոչնչացնելով։

Ահա այդ պատճառով էլ Աստված Ադամի կողքին ստեղծեց Եվա, մարմնական տարբեր կառուցվածքով, որ միշտ իրար պետք ունենան, երբեք ավելորդ տեղը չվիճեն ու միայն սիրեն, սիրեն, սիրեն իրար։

Սեր, որ երբ պառկելիս հավիտենականությունը քաշում է իր վրա ծածկվելու, վերմակը կարճ է գալիս, և սիրո ոտները բաց են մնում։

Այնքան որ երկար հասակ ունի...

Աստված Ադամին ստեղծեց մի բանով ավելի, Եվային՝ մի բանով պակաս, որ անվերջ իրար պետք ունենան։

Այնպես, ինչպես սանդը պետք ունի սանդիտոռի*, ինչպես օղակը պետք ունի կոճակի կամ «կնոպկայի»** երկու մասերը, որոնք, իրար ագուցվելով, անբաժանելի են դառնում...

Տեսեք, երբ երկու առևտրականներ միանում են միասին առևտուր անելու, անկարելի է, որ իրարից յուրացումներ չկատարեն, մինչդեռ մարդ ու կնոջ առևտրում, ընդհակառակը, մարդն աշխատում է այնպես անել, որ կինն իր ամբողջ էությունը յուրացնի, իսկ կինն էլ փոխադարձաբար իր էությունն է մարդուն տրամադրում։

Ահա այստեղ պետք է փնտրել այն պատճառը, որ ամուսնական միացումները հաջող են լինում, իսկ ցերեկօթիկ միացումները՝ անհաջող։

Վերցնենք քրիստոնեությունը։

Քրիստոնյան ցերեկն իր երկու շապիկներից մեկը չունեցողին է տալիս, իսկ գիշերը ետ է վերցնում ոչ միայն իր տված շապիկը, այլև նրա հետ նաև խեղճի ունեցած անպետք հնոտին։

Սոցիալիստները Ռուսաստանում ցերեկն իրենց կյանքն են զոհում մարդկանց երջանկության համար, իսկ գիշերն ուղարկում են իրենց չեկիստներին՝ բռնելու այդ նույն մարդուն և ոտով-գլխով կորցնելու։

---

* Սանդիտոռ- սանդի թակիչ, սանդակոթ։

** Կնոպկա ***(кнопка)*** - ռուս. կոճգամ։

Երկրորդ համաշխարհային պատերազմին Ռուսաստանը և Ամերիկան միացան Գերմանիայի դեմ, պատերազմից հետո ոխերիմ թշնամիներ դարձան:

Սովետական Միությունը մեծ զոհողությամբ Չինաստանին կոմունիստ դարձրեց, իրար հետ եղբայրացան, բայց այս րոպեիս սուր են ճոճում իրար դեմ:

Հարավսլավիան և Ալբանիան մի ժամանակ Ռուսաստանին «եղբայրական» պետություն էին համարում, իսկ ներկայիս թշնամացան, իրենց դռները փակեցին նրա առջև, և այժմ այդ խեղճ մեծ պետությունն իր դիվանագիտական ճանապարհը ծռել է այնպես, որ այդ երկու պետությունների դռնով չանցնի... Այդպես է: Ամուսնությունից զատ մնացյալ բոլոր միությունները դառնում են երկվություններ, որովհետև էն գլխից Աստված այդ չէր ցանկացել:

Եթե Աստված ուզենար, ազգերին էլ կարող էր այնպես ստեղծել, որ ամուսինների պես իրարից անջատվել չկարողանային:

Ինչպես անհատներին, այնպես էլ ազգերին ստեղծեր երկսեռ:

Թե ինչո՞ւ այդպես չարեց Աստված, հաստատ չեմ կարող ասել պատճառը, միայն մի բանի վրա եմ կասկածում:

Ասում եմ՝ որովհետև մահմեդականների մեջ գոյություն ունի բազմակնություն, Աստված վախեցավ, որ Թուրքիան կարող է բոլոր Եվա պետություններին հավաքել ու լցնել իր հարեմը...

Բուժիչ դեղ

Տաճկաստանը ծանր հիվանդ էր:

Երբ բազմաթիվ բժիշկներ եկան գնացին, ու ոչ մեկը չհասկացավ նրա հիվանդությունը, նա մեծ դժվարությամբ տեղում նստեց և այսպես խոսեց.

- Իմ հիվանդությունը ես միայն գիտեմ: Իմ հիվանդությունը տաճկախտ է ու միայն հայ սպանելով կփարատվի: Իսկ ո՞ւր է հայ,- շարունակեց նա,- Աստված բելան* տա Թալեաթ պեյին. հայ թողեց Տաճկաստանում: Բոլորին կոտորեց ավազակը: Էլ չասաց. «Մի երկու հայ թողնեմ դեղի համար, հետագայում ինձ նման ծանր հիվանդներ կարող են պատահել, կկոտորեն, կառողջանան»:

* Բելա (belâ) - թրք. պատիժ, չարիք:

Ասա, ո՞վ եսասեր անպիտան, դու առողջ մարդ, ինչ հարկավոր էր, որ դու երկու միլիոն հայ միանգամից կոտորեիր։ Աշխարհի մեջ միայն դո՞ւ ես թուրք, քեզանից հետո ուրիշ թուրքեր չե՞ն լինելու, երի՛ցս նզովյալ։

Հայ պետք է կոտորել սուլթան Համիդի նման։ Մաս-մաս։ Ամեն տասը տարին մի անգամ մի հիսունից հարյուր հազար, որ թուրքն զբաղմունք ունենա։ Միանգամից հայությանը երկրի երեսից սրբեցիր, մենք հիմա, ձեռք ձեռքի վրա անգործ նստած, ինչ անենք։ Ասա՛, ավազա՛կ, ինչ անենք։

Տեղն էր, որ նրան շանսատակ արին հայերը։ Ես նրա էն, էն, էն, էն...

Ու Տաճկաստանը նվաղած ընկավ բարձին։ Այս տեսնելով՝ շրջապատն իրար խառնվեց՝ կարծելով հոգեվարքն սկսեց։

Զորս կողմից.

- Ոչի՛նչ, մի՛ բարկանա ու հանգի՛ստ պահիր քեզ։ Շուտով Տաճկաստանի նոր ղեկավարությունը սփյուռքի հայերին ներս կհրավիրի, նրա վերքերը կբուժի, կբազմացնի, և թուրքն էլի կսկսի նրան կոտորել, իհարկե նորմայով։

Հայությունը քարտեզով կբաժանի թուրքերի մեջ, որ ոչ մեկն ուրիշի նորման չկոտորի։

- Նոր կառավարությունը չի անի այդ բանը,- ասաց Տաճկաստանը՝ ծանր տնքալով։

- Նոր կառավարությունը չի անի, Ամերիկան կանի։ Նախագահական վերջին ընտրություններին եթե Գոլդուոտերը ընտրվեր, հիմա փախած հայերը վաղո՛ւց էին տեղափոխվել իրենց նախկին տեղերը...

Չնայած Տաճկաստանի վիճակը խնդալու չէր, բայց այնուամենայնիվ չկարողացավ այս խոսքի վրա չծիծաղել։

- Ամերիկան,- ասաց հիվանդը,- իր օրում ոչ մի լավ բան չի արել հայերին։ Նա միայն միսիոնարներ էր ուղարկում Հայաստան, որ քրիստոնյա հայերին երկրորդ անգամ քրիստոնյա դարձնեին՝ ստիպելով նրան կրկնահանցագործ դառնալ։ Եվ գրգռել թուրքերին, հետևաբար, որպես երկու անգամ քրիստոնյաներ՝ երկու անգամ կոտորել։

Գիտի, որ թուրքը դեմ է քրիստոնեությանը, դիտմամբ նրան կատաղեցնում է։

Ապա հիվանդը շունչ քաշեց ու շարունակեց.

- Ես զարմանում եմ, թե ինչպե՞ս մեծ պետությունները թույլ տվին այդ բանը: Չէ՞, իրենց համար էլ ձեռնտու չէր հայերի կոտորածը: Ամեն անգամ հայերին պատճառ բռնելով՝ մտնում էին Թուրքիա և ամեն տեսակ կոնցեսիաներով բեռնավորված՝ դուրս էին գալիս:

Ասաց և ջուր ուզեց: Ջուր տվին:

Ջուր խմեց ու շարունակեց.

- Մեր լուցկին Իտալիան էր տալիս, գլխներիս ֆեսը՝ Ավստրիան: Ֆրանսիան գալիս էր մեր երկրի ծխախոտը փաթաթում, դնում մեր բերնին, որ ծխենք, և դրանից ահագին շահում էր: Մեր հրացանները, ինչպես գիտեք, աթադան բաբադան* Գերմանիան էր տալիս: Փամփուշտը դնում էր մեջը, պատրաստի հրացանը մեր ձեռքն էր տալիս. մեզ մնում էր միայն կրակել: Մեր ներքին գործերն էլ՝ լվաց-թափ, կարել-կթել, արդեն հայերն էին անում: Մեզ մնում էր միայն մարդասպանությունը: Եթե ուզենայինք, մարդասպանությունն էլ կոնցեսիայով Գերմանիային կհանձնեինք: Նա, որ վեց միլիոն հրեա ջարդեց, մի երկու միլիոն հայ չէր կարող ջնջել:

Այս ասելով՝ հիվանդը խնդրեց իրեն ձախ կողքի վրա շուռ տալ:

Երբ շուռ տվին, նա մի խորը «ա՜խ» քաշեց ու շարունակեց.

- Ինչ երջանիկ օրեր էինք ապրում: Թալեաթը տակնուվրա արեց ամեն ինչ:

Հետո վերմակը քաշեց գլխին, ու սկսեց հոգեվարքը:

Անկողնի շուրջը խմբված ՆԱՏՕ-ի գծով նրա դաշնակիցները սկսեցին լաց ու կականը:

- Մի՛ մեռնի, Թուրքիա՛ ջան, ես Ամերիկայից հայ բերել կտամ, որ կոտորես,- ասաց Միացյալ Նահանգները:

- Է՛, երբ բերես, երբ կոտորեմ: Տարի կքաշի:

- Մի երկու հույն կոտորի՛ր, մինչև գան հասնեն:

- Չեմ ուզում...

- Կուզե՞ս հրեա կոտորել:

- Չէէէ...

- Ինչո՞ւ, նա էլ հայի պես անտեր ժողովուրդ է:

- Չեմ ուզում...

Այն ժամանակ դաշնակիցներից մեկն ասաց.

---

* Աթադան բաբադան (բրբ.) - պապից պապ, հին օրերից, պապենական ժամանակներից:

- Պոլսում հայեր կան, մի երկու հատ բերենք, որ կոտորի։

- Հարցնենք, տեսնենք՝ կուզի՞,- ասաց երկրորդ դաշնակիցը։

Հարցրին՝ չուզեց։ Ասաց.

- Նրանց մեջ այլևս հայություն չի մնացել։

Բանը բանից անցնում էր։ Հիվանդը անշարժացել էր վերմակի տակ, և բոլորը կարծեցին, որ նա շունչը փչեց։

Այդ ժամանակ, ահա, նրա երրորդ դաշնակից Ֆրանսիան, թեքվելով հիվանդի վրա, գոռաց նրա ականջին.

- Բերի՜, բերի՜, ես Ֆրանսիայից բերի։ Մարդ, կնիկ, երեք անմեղ երեխա, վե՛ր կաց, ջարդի՛ր։

Ձայնը դմդմբալով հասավ մեռնողի ականջին, և Թուրքիան, որի ոտներն արդեն սառել էին, հանկարծ վեր կացավ նստեց ու ասաց.

- Ո՞ւր է, բերե՛ք կոտորեմ, քանի ձեռքերս էլ չեն սառել...

Հայ-թռչնական հարաբերությունները

Բոլոր թռչունների մեջ հայի միակ վշտակիցը բուն է։

Նա մեր վիշտն է լացել դեռ պատմական անցյալից։ Ամեն անգամ, երբ Միջին Ասիայի մոնղոլ-թաթարները պատրաստվում էին արշավել Հայաստան, բվի երամները, ընկած արշավողների ետևից, գալիս էին վայելու մեր կործանված քաղաքները և ավերված վանքերը...

Շնորհակալ ենք իրենցից, շատ։ Զգացված ենք։

...Թեև կան մարդիկ, որոնք ասում են. «Բվի համակումը միակողմանի է. նա միայն մեր վշտերին է վշտակից, ուրախությանը ուրախակից չէ»։

Բայց այս մեղադրանքն ավելորդ է, որովհետև հայն իր կյանքում երբեք ուրախ չի եղել։ Եթե հետագայում մի հրաշքով հանկարծ հային մի ուրախություն պատահի, նոր թող մեղադրեն։

Կամ, ավելի ճիշտ, այն ժամանակ էլ չպիտի մեղադրել, որովհետև, որպես բացառություն բուն էլ կարող է իր կյանքում գեթ մի անգամ խնդալ։

Չէ։ Թեև մարդիկ առհասարակ սոխակին են շատ սիրում, բայց ես բուն գերադասում եմ սոխակից։

Ախր այդ սոխակը՝ իբրև երգիչ, շատ է պրոֆեսիոնալ։

Մահմեդական հորդան նոր է անցել երկրից, տները այրված, մարդիկ՝ կոտորված, չորացել են վարդի թփերն էլ, պարտեզի ծառերն էլ. ամեն ինչ գետնին հավասարեցված, բայց այդ միայն ճռվողող թռչունները, մի չոր ցախի, մի տնկված հեռագրասյան ծայրին նստած, իրենց երգն են երգում։

Հնում, երբ բազմաթիվ ազգերի ոտից կախան էր դառնում Հայաստանը, բվերի գործը դժվար էր։ Նրանք մեկ հույների բանակի ետևից ընկած էին Հայաստան արշավում, մեկ պարսիկների, մեկ արաբների։ Բայց այն ժամանակից սկսած, երբ բոլոր արշավանքներն իրենց ձեռքը կենտրոնացրին սելջուկ թուրքերը, բվերը, վերջինիս փեշը բռնած, միայն թուրքերին էին հետևում։

Մինչև այն ժամանակ, երբ Հայաստանը վերջնականապես բաժանվեց թուրքերի, ռուսների և պարսիկների միջև։

Այստեղ մասամբ բվերի գործը թեթևացավ, որովհետև ռուսահայերն արդեն ուրախացան ու այլևս վայելիք բան չունեին, նրանց արդեն սոխակ էր հարկավոր։

Այսպես, հայերի ուրախությունը տևեց մինչև այն ժամանակ, երբ բոլշևիկները տիրեցին Ռուսաստանին, և հայերն այստեղ սկսեցին կոտորվել ո՛չ թուրքերի, ո՛չ թաթարների, ո՛չ հույների ու պարսիկների, այլ... բուն իսկ իրենց՝ հայերի ձեռքով։

Ահա քեզ ոչ թե քառակուսի, այլ խորանարդ աղետ։

Բարեբախտաբար այդ ժամանակ Թուրքահայաստանը բնաջնջված էր արդեն երիտասարդ Թուրքիայի ձեռքով, և բվերն իրենց ողջ երամով կարող էին Ռուսահայաստան թռչել՝ այս չլված աղետը ողբալու։

Երբ հայ բոլշևիկները, ռուսական բանակի առաջն ընկած, Հայաստան մտան, ժողովրդի փորը շոշափեցին. ով կուշտ էր, որպես «կուլակ» գնդակահարեցին ու աքսորեցին, իսկ դատարկ ստամոքս ունեցողներն էլ սովից մեռան։ Ու երկու Հայաստանները, որոնք առաջ խուրջինի երկու անհավասար թայերի էին նման, հիմա հավասարապես ամայացան...

Բվե՛ր, սրտի խորքից մի լավ վայելե՛ք, որ ես կարողանամ շարունակել։

Այսպես, այսպես։

Հա՛, հիմա շարունակեմ։

Հայ բոլշևիկները Հայաստանն այսպես քանդելուց հետո, որպես-

զի հոգուս մեղք չանեմ, պիտի խոստովանեմ, որ վերջում շինեցին։

Քարաշեն բազմահարկ տներ, դպրոցներ, հիվանդանոցներ, այգիներ, հրապարակներ, ու մնացած ժողովուրդը ֆիզիկապես զվարթացավ, բայց հոգեպես թոշնեց։

Թոշնեց, որովհետև ժողովրդի սեփականությունն ու բոլոր տեսակի նախաձեռնությունները նրանից խլվեցին, ու իշխանությունը, նոխտան կապելով ժողովրդի վզին, այս մսուրից այն մսուրն էր տանում կապելու, ու կյանքի մեջ այլևս իմաստ չմնաց։

Թաթարական արշավանքների ժամանակ ժողովուրդը ֆիզիկապես կոտորվում էր, երկիրն ավերվում էր, բայց հոգին կենդանի էր մնում, իսկ բոլշևիկների օրոք մարմինը կանգուն է, իսկ հոգին ավերակների կույտ է դարձել։

Հիմա ասացե՛ք բվեր, դուք կենդանյոք կարո՞ղ եք հայու մեռած հոգին վայել։

Եթե կարող եք, վայե՛ք։ Իսկ եթե չեք կարող, ձեր մեռնելուց հետո ձեր հոգիներն ուղարկե՛ք, որ այս մեռած հոգիները վայեն։

Որովհետև հայի թե՛ հոգին, թե՛ մարմինը միշտ վայելու պետք է ունեցել…

Ամառանոցում

Ես ամեն ամառ մի գյուղ եմ գնում։

Եվ զարմանալի կերպով բոլոր գյուղերում էլ գյուղացիք անպայման կտրում են իրենց շների պոչն ու ականջները։

Թե ինչո՞ւ, չգիտեմ։

Ներկա՝ քսաներորդ դարում, երբ գիտությունն իր ծայրաստիճանին է հասել, երբ մարդիկ արդեն լուսնի վրա են բարձրանում, մի՞թե դեռ կան մարդիկ, որոնք չեն հասկանում, որ ականջը տրված է շանը, որ լավ լսի, իսկ պոչն էլ, որ ճանճեր քշի։

Նշանակում է՝ մարդկության բոլոր խավերը չէ, որ հասել են քսաներորդ դար. մարդկանց մի մասը քարի դարից եկել հասել է քսաներորդ դար, մի մասն էլ՝ քսաներորդ դարում ծնված, գնում է դեպի քարի դար։

Ծո գյուղացի՛, ասա, դու որ քո շան պոչը կտրում ես, վրան ճանճ նստելիս ինքդ կքշե՞ս։

- Չէ:

- Բա որ չէ, ինչո՞ւ ես կտրում:

Այս երևույթը եթե գյուղում սկսվեր և շան պոչով վերջանար, փառք էր:

Բանն այն է, որ պետությունների մեջն էլ պատահում են գյուղացիներ, որոնք, քսաներորդ դարում պատահմամբ ծնված, գնում են դեպի իրենց նախապատմական ծննդավայր՝ քարի դար:

Վերցնենք Ամերիկան:

Սա այնքան է զարգացել, որ քսաներորդ դարի պլանը կատարած՝ աշխատում է քսանմեկերորդ դարի հաշվին:

Ո՛չ շների պոչն է կտրում, ո՛չ իր ժողովրդի:

Շարժիր աջ ու ձախ ազատ, ինչքան կուզես:

Ամերիկացին աշխարհ գալիս մարմնի ինչ անդամ, որ հետն է բերում, մեռնելիս նույնությամբ էլ հետը տանում է առանց պակասորդի:

Ինչո՞ւ միայն ամերիկացին, աշխարհի բոլոր մարդիկ:

...Միայն մահմեդականի մարմնի մասերից են մի փոքրիկ բան կտրում:

Այո՛, այդ ժողովուրդը մեռնելիս մի փոքր պակասորդ է տալիս:

Թե չէ Ամերիկա՞ն: Օ՜, տիպար ազատության երկիր է: Մտածի՛ր, ինչ որ կուզես, մտածածդ արտահայտի՛ր, ինչ լեզվով կուզես: Ամեն մարդ իր սեփական գլուխն ունի, և վարձվորներ չկան այդ ասպարեզում: Այնտեղ քո ձեռքերը միայն քեզ են պատկանում, վարի՛ր, ցանի՛ր, ինչքան կուզես:

Այդ պատճառով էլ Ամերիկան ներկայիս մի բարիքի ծո՛վ է: Ավելի ճիշտ՝ օվկիանոս:

Սրան հաշվենք քաղաքացի պետություն:

- Իսկ ո՞րն է հապա գյուղացի պետությունը,- կհարցնեք դուք:

Այս րոպեիս ասեմ:

Գյուղացի պետությունը կոմունիստ Ռուսաստանն է, որ սխալմամբ քսաներորդ դարն է եկել և հիմա ճանապարհ է որոնում, որ էլի դեպի ետ՝ իր «նախնական կոմունան» գնա:

Իսկ պատմականորեն այդքան ետ գնալու համար, բնական է, որ Ռուսաստանը ոչ միայն իր ժողովրդի պոչը պիտի կտրեր, ոչ միայն ականջները, այլև նրա լեզուն, որ ազատ չխոսի, նրա ձեռները, որ

ազատ չգործեն, նրա ոտները, որ երկրից դուրս չգան։

Բայց ասեմ անմիջապես, որ այս կտրումների մեջ չարամտություն չկար։ Ընդհակառակը՝ այս բանը բխում էր նրա անծայրածիր հումանիզմից դեպի մարդ արարածը։

Կտրելով ժողովրդի մարմնի այս բոլոր անդամները՝ նրան առաջին կարգի ինվալիդության վկայական էր տալիս, որով կարող էր առանց աշխատելու ապրել։*

Ռուսաստանը ինչ որ կտրեց քաղաքացիներից, նույնը կտրեց նաև գյուղացիներից, միայն մի բան ավելի։

Գյուղացուց կտրեց նաև նրա հողը և տվեց կոլխոզին, որ ցանի ու ոչինչ չքաղի (անվերադարձ վարկ) ու ամենայն տարի ձեռքն Ամերիկային կարկառած՝ իր հանապազօրյա հացը խնդրի։

...Բայց Ռուսաստանն առաջ այսպես չէր, գիտեք։ Իր կոմունիզմի առաջին տարիներին նա Ամերիկային ոչ միայն հասնում էր, այլև «հասնում և անցնում» էր։

Ամերիկան աշխատում էր քսանմեկերորդ դարի հաշվին, իսկ Ռուսաստանը՝ քսաներկուերորդ։

Մի մրցում, որ շատ նմանեցավ աղվեսի ու խեցգետնի մրցմանը։

Հիշում եք, չէ՞, որ վազքի մրցմանը խեցգետինը կպչում է աղվեսի պոչին, տեղ հասնելիս, երբ աղվեսը ետ է դառնում տեսնելու՝ ո՞ւր մնաց խեցգետինը, վերջինս, պոչից իջնելով, ձայնում է.

- Ո՞ւր ես ետ նայում, ես, սա մի ժամ է, այստեղ քեզ եմ սպասում...

Տեսնո՞ւմ եք՝ պոչն ինչ լավ բան է։ Եթե Ամերիկան նրա պոչը կտրած լիներ, այսօր Ռուսաստանը չէր կարող նրան «հասնել ու անցնել»...

Կյանքը... հեգմահու

Նախքան հոկտեմբերյան մեծ հիմարությունը Ռուսաստանում... ներողություն, հեղափոխություն պիտի ասեի... ածանցները միայն լեզվի մեջ էին գործածվում։

Բառերը փոքր տարածությունում մանևրելիս իրենց սկզբում կամ վերջում ածանցներ էին կպցնում՝ կոչվելով նախածանց կամ

* Ինվալիդություն (invalidus) - լատ. հաշմանդամ, հաշմանդամություն։

վերջածանց, որպեսզի բառն իր իմաստը փոխեր մի փոքր աջ կամ ահյակ։

Ածանցներ էին կպցնում իրենց ոտների տակ նաև կարճ կանայք՝ մի փոքր երկար երևալու համար, կամ կաղ օրիորդները՝ իրենց ոտները հավասարակշռելու համար։

Այս ածանցները, սակայն, բոլորն էլ ժամանակավոր և վաղանցիկ բաներ էին։

Հոկտեմբերյան հեղափոխությունը ածանցներ բերեց մարդկային քերականության մեջ, որոնք արդեն հավիտենական են ու անանց։

Կյանքն ածանց դարձավ, որին մահը զետեղում էր իր առաջ կամ ետև՝ նայած իր հարմարությանը։

Այդ օրվանից մարդիկ սկսեցին ապրել և՛ մահից առաջ, և՛ մահից հետո, ու մարդիկ շահեցին՝ ունենալով երկու կյանք ու միայն մի մահ։

Մահից առաջ դրված կյանքը, ինչ խոսք, շատ երկար լինել չէր կարող և երբեք չէր անցնում 80 կամ 90 տարուց, բայց կյանքը հետմահու. ապրիր ինչքան կուզես, ո՛չ վերջ ունի, ո՛չ վախճան։

Պատմեմ, թե մարդու մահվանից հետոյի կյանքն ինչպես ծագեց։

Ռուսական հեղափոխությունը հաջորդն էր ֆրանսիական հեղափոխության։ Ըստ Լենինի՝ Փարիզի կոմունան պարտվեց, որովհետև կոմունիստները քիչ մարդ սպանեցին, խնայեցին մարդկանց կյանքը։ Լենինը, բնականաբար, նույն սխալը չկրկնելու համար Ռուսաստանում կոտորեց բոլոր նրանց, ովքեր իրենց գլուխը տնից դուրս հանեցին։ Մտավ տներն ու մարդկանց դուրս տանելով՝ գնդակահարեց։ Ժամերով կանգնում էր ծննդաբերող կանանց մահճի վերևը՝ սպասելով, որ ծնելուն պես սպանի նորածնին՝ հաստատ համոզված լինելով, որ եթե երեխայի խելքը գլուխը եկավ, պիտի դեմ կենա կոմունիզմին։

Նման տոտալ կոտորածի ժամանակ, բնականաբար, պիտի պատահեին սխալմամբ գնդակահարվածներ, որոնց կյանքը պետք էր վերականգնել «հետմահու»։

Այսպես Հայաստանում ոչնչացվեցին Եղիշե Չարենցը, Ակսել Բակունցը, Վահան Թոթովենցը, որոնք, սակայն, «հետմահու» ապրեցին. արձաններ կանգնեցվեցին նրանց պատվին ու մեծամեծ փառքի արժանացան։

Կարծո՞ւմ եք, որ նրանք անմեղ տեղը չսպանվեին, պիտի հետմահու այսքան փառավորվեին։

Երբ՞ք։

Նշանակում է սխալմունքն օգնեց նրանց, որ նախածանց կարճ կյանքը փոխարինեն հետմահու երկարատև կյանքով։

Էլ չեմ ասում, որ մահից առաջվա իրենց կյանքում ոչ թե փառք, այլ բնավ ուշադրության անգամ չէին արժանանա։

Խոսելով ածանցների մասին ընդհանրապես՝ պիտի ասեմ, որ միայն Ռուսաստանում չէ, որ մահը, իր երկու կողմերում կյանքեր առած, ապրեցնում է մարդկանց։

Ածանցման այդ կարգը հատուկ է բոլոր բարբարոս երկրներին, ինչպիսին է Գերմանիան, ինչպիսին է Տաճկաստանը։

Առաջին համաշխարհային պատերազմին Թալեաթ փաշան հրաման ուղարկեց երկրի կուսակալներին՝ կոտորել հայերին մինչև ծծի երեխան։

Երկրորդ համաշխարհային պատերազմին Հիտլերը նույն իմաստով մի հրաման կամեցավ հղել իր կուսակալներին՝ ողջ հրեությունը կոտորելու համար, բայց վախեցավ նույնիմաստ հրաման գրել գերմաներեն։ Այսինքն՝ այն լեզվով, որով Գյոթեն է գրել իր «Ֆաուստը», որով Հայնեն է գրել իր մարդասիրական ոտանավորները։

Եվ գիտե՞ք՝ ինչ։ Հրեաների ջարդի հրամանագիրն իր զորավարներին գրեց... թուրքերեն լեզվով։

Մի լեզվով, որով ցայսօր ոչ մի թուրք վեհապետ, կոտորածի հրամանագրից զատ, ուրիշ բան չի գրել...

Այդ հրամանագրով Գերմանիան ջարդեց վեց միլիոն հրեա։

Միայն չեմ կարող հաստատ ասել, թե դրանից հետո նրան հետմահու կյանք տվե՞ց, թե՞ ոչ։

Իսկ թուրքը հային տվեց այդ կյանքը։

Հայ մայրերն իրենց մահվանից հետո ոչ միայն ապրեցին, այլև թուրք երեխաներ ծնեցին։

Սփյուռքահայ մի թերթում պատահեցի մի նկարի, ուր թուրք դաստիարակը, իր առջևը չոքեցրած հարյուրից ավելի հայ մանուկների, նրանց թուրքացնում էր։

Այս չի՞ նշանակում արդյոք, որ միլիոնավոր նահատակված հայ մայրեր «հետմահու» թուրք երեխաներ են ծնում։

Մայրեր, որոնք կարճ կյանքով ապրելու համար հայ մանուկներ ծնեցին, իսկ երկար ապրելու համար՝ թուրքեր։

Թուրքեր, որոնք մեծանալով պիտի ջարդեն հային... եթե ճարեն։

Աստված ամենագետ է

Այո՛։

Նա դեռ առաջին մարդու՝ Ադամի ստեղծագործության ժամանակ իմանում էր, որ Ռուսաստանում կոմունիստական կարգեր պիտի հաստատվեն, գոյություն ունենա մասնավոր և հանրային սեփականություն, մարդիկ պետք է մասնավորին մեծ ուշք դարձնեն, իսկ ընդհանուրին՝ փոքր, այդ պատճառով էլ մարդուն ստեղծեց աջ ու ձախ ձեռներով, որ աջով իր համար աշխատի, ձախով՝ կոլխոզի, աջ աչքով իր ունեցածը հսկի, ձախով՝ կոլխոզի, աջ ականջով կառավարության հասցեին արված հայհոյանքը լսի, ձախով՝ գովեստը։

Աստված գիտեր, որ այս կարգերում մարդիկ երկերեսանի պիտի լինեն, դրա համար երկու երեսով ստեղծեց։

Միայն չգիտեմ, թե քիթն ինչո՞ւ մի հատ ստեղծեց։

Երևի ամեն բանի մեջ չխոթելու համար...

Հետո այն, որ Քրիստոսն Ավետարանում բերում է հիմար և իմաստուն կույսերի առակը, դա ևս կանխամտածված է, փոխաբերություն, որովհետև կույսերն առհասարակ հիմար են լինում և իմաստուն լինել չեն կարող։ Եթե իմաստուն լինեին, անմիջապես կամուսնանային։

Այդ առակն էլ ներկա ժամանակին է վերաբերում։ Այնտեղ Քրիստոսը, հիմար-իմաստուն կույս ասելով, Ռուսաստանին և Ամերիկային է ի նկատի ունեցել։ Որովհետև ամեն տարի Ռուսաստանի հացն է պակասում, և Ամերիկայից հաց է խնդրում։

Այս խորհրդածություններին մղեց ինձ Ախտայի[158] կոլխոզի մեղվանոցի պահակը, որի հետ այսօր զրույց ունեցա։

Նա համայնական փեթակի կողքին դրել է նաև իր սեփական փեթակները և գիշերները հսկում է։ Բայց ամենայն հավանականությամբ աջ աչքն իր փեթակների վրա է պահում, ձախը՝ կոլխոզի։ Որովհետև ամեն գիշեր վերջինիս փեթակները գողանում են, իսկ իրենը՝ ոչ։

Այս առեղծվածային դիպվածի պատճառները քննելիս պարզվեց, որ պահակը անգամ ձախ աչքով չի նայել համայնական գույքին։

Գիշերվա ամբողջ ընթացքին աջ աչքով իրենն է հսկել, իսկ ձախովը... քնացել...

Բայց երանի այդ պահակը նման խտրություն շարունակեր իր բոլոր գործառնություններում։ Մինչդեռ պարզվում է դրա հակառակը։

Իր օրինական կնոջ վրա ձախ աչքով է նայում պահակը, իսկ դիմացի հարևանի կնոջը՝ աջ աչքով...

Լավ է, որ Աստված այս երկու տեսակ սերերի համար մի անդամ է միայն հատկացրել, եթե երկուսը լիներ, ձախակողմյանը միշտ քնած պիտի մնար...

Ասողներ կան, որ Աստված լավ կաներ, որ փոխանակ աջ ու ձախի՝ մարդու երկու աչքն էլ աջ ստեղծեր։

Բայց դա սխալ ցանկություն է։

Եթե երկու աչքն էլ աջ ստեղծեր, սովետական մարդիկ երկու աչքն էլ փակած, խարխափելով պիտի ման գային։

Աստծու ազգությունն ու լեզուն

Այս հարցը շատ զբաղեցրեց մեր պատմաբաններին, մինչև որ վերջապես գտավ վենետիկյան միաբան Հայր Չամչյանը։

Ըստ Չամչյանի «Հայոց պատմության»՝ Աստված հայ է եղել և դրախտում Ադամի հետ խոսել է հայերեն։

Բայց Ադամին հայ չի համարում, թե ինչո՞ւ, այդ չի բացատրում։

Հավանականն այն է, որ անգամ ամենակարող Աստված չի կարողացել մի մարդով հայ ազգ ստեղծել։ Ինչու որ հայ ազգ ստեղծելու համար անհրաժեշտ է առնվազն չորս մարդ, որ մեկը հնչակ լինի, մյուսը՝ դաշնակ, երրորդը՝ ռամկավար ու չորրորդը՝ բոլշևիկ, որ հնարավոր լինի... իրար կոտորել։

Բայց այն, ինչ չկարողացավ անել Աստված դրախտում՝ գլուխ բերեց նույն Աստված դրախտից դուրս, երբ Եվան ծնեց իր երկու զավակներին՝ Կայենին ու Աբելին։

Ծնունդով այս դաշնակն ու բոլշևիկը պատրաստ էին, ու Աստված կարող էր ստեղծել հայ ազգ կիսով չափ, մինչև հետագային մյուս կեսը լրացներ։

Ու անմիջապես Կայենը զարկեց Աբելին սպանեց՝ հիմք դնելով եղբայրասպան պատերազմին։

Եթե Եվային հաջողվեր ևս երկու զավակ ծնել, հայ ազգը միանգամից կամբողջանար, իսկ այնուհետև Եվային կմնար կամաց-կամաց ժամանակի ընթացքին ծնել, որ սրանք սպանեին։

Բայց որովհետև Եվան կարող էր այնքան շատ հայ ծնել, որ այդ չորս կուսակցությունները չկարողանային կոտորել, լավ կլիներ, որ մի հատ էլ թուրք ծներ, որ հայի կոտորածը հարյուր տոկոսով ապահովված լիներ։

Թուրքը Տաճկաստանում հային ջարդեր, Ռուսաստան փախցներ, իսկ հայ և ռուս բոլշևիկները փախածներին հավաքեին ու կոտորեին։

Պետք է ասել, որ մինչև Քրիստոսի աշխարհ գալը, հայերը շատ լավ պաշտպանվում էին իրենց թշնամիների հարձակումներից։ Իսկ այս բանը Աստծու սրտովը չէր։ Դրա համար Աստված ուղարկեց Քրիստոսին՝ հային ասելու, որ սուր չվերցնի, որովհետև ով սուր վերցնի, սրով էլ կընկնի, պետք է հնազանդ լինել տերերին, և եթե մեկն իր մեկ երեսին զարկի, մյուս երեսն էլ դարձնի։

Հայ ազգն էլ նույնությամբ կատարեց Քրիստոսի հրամանը։

Միայն, որովհետև ընդամենը երկու երես ուներ և բազմաթիվ թշնամիներ, այդ երեսներից մեկը թուրքին դարձրեց, որ «ապտակի», մյուսը՝ բոլշևիկին։

Եվ այն նկատառումով, որ հայի մյուս թշնամիները կարող էին հետո էլ կոտորել հային, իսկ թուրքն ու բոլշևիկը շատ շտապ կարիք ունեին դրան, համբերել չէին կարող...

Հնակարկատի մոտ

Նեղ կոշիկս տվել եմ հնակարկատին, որ կաղապարի վրա լայնացնի, ինքս նստել մտածում և ասում եմ ինքս ինձ. «Ինչո՞ւ միայն նեղ կոշիկներն են լայնացնում։ Մի՞թե չկան աշխարհում կոշիկից ավելի կարևոր բաներ, որոնք կոշիկի նման նեղ են, ու պետք կա լայնացնելու։ Օրինակի համար՝ Մոսկվայում նստած մեր «առաջ-

նորդների» նեղ գլուխները, որոնք, կոմունիզմից զատ, ուրիշ ոչ մի բան չեն ընդունում»:

Ու ես գտնում եմ, որ հնակարկատի չորս այսպիսի խանութներ բանալու կարիք կա:

Մեկն, ինչպես ասացի, կոմունիստ առաջնորդների նեղ գլուխները լայնացնելու համար:

Մեկը՝ արտասահմանյան հայ բարեգործների քսակները լայն բանալու համար:

Մեկը՝ մեր երիտասարդների նեղ շալվարները լայնացնելու համար, որ կարողանան պպզել:

Մեկն էլ՝ հնչակյանների և ռամկավարների բերանները լայնացնելու համար, որ դաշնակցականների վրա լավ հաչեն...

Անօգնական դիրեկտորը

Չէ, չի լինի: Մի Աստվածով այսքան մեծ աշխարհ կառավարել չի լինի:

Սովետական Միությունը, որ ընդամենը աշխարհի մեկ վեցերորդ մասն է կազմում, ունի երեսունհինգ մինիստրություն, ամեն մինիստրն էլ ունի տասնչորս օգնական, ու ամեն օգնական էլ՝ մի չորս օգնական:

Եվ այսքան մարդիկ միասին չեն կարողանում այնպես անել, որ ժողովուրդը, առանց հինգ ժամ հերթի կանգնելու, մի ձմերուկ կամ մի երկու կիլո խաղող առնի տուն տանի:

Եվ վերջապես կան բաներ, որ չի սազում Աստծուն կատարել:

Պատմեմ միայն մի դեպք:

Աստված ստեղծեց Ադամ-Եվային և բոլորովին մերկ կանգնեցրեց դեմ դեմի: Նրանք չէին ամաչում, իհարկե, որովհետև դեռ չգիտեին, թե ինչ բան է ամոթը:

Բայց պետք է գտնվեր մեկը, որ առաջին մարդուն և առաջին կնոջը ծանոթացներ իրար հետ, մատնանշեր նրանց մարմնական տարբերությունները, բացատրեր, թե ինչն ինչի համար է, իրար ինչ պիտի կանչեն, ցույց տար իրար հանդեպ ունեցած պարտավորությունները և այլն:

Պարզ ասեմ: Աստծուն կհարմարեր ասել նորաստեղծներին, թե

դուք սրանից հետո գիշերները միասին պիտի պառկեք, կամ թե չէ՝ պառկելուց հետո ինչ պիտի անեք։

Աստվածն ասաց.

- Մեռնեմ, այդ բանը չեմ անի։ Դա անբարոյականություն է։

Իսկ այդպես էլ թողնել չէր կարելի։

Ուստի, սատանային կանչեց և մի կողմ տանելով՝ ականջին փսփսաց, որ այդ բանը կարգադրի։

Բայց սատանան էլ հանձն չառավ, ասաց՝ ես ամաչում եմ։

- Այդ բանն ի՞սկը սատանայի գործ է, ի՞նչ կա ամաչելու,- ասաց Աստված։

Վերջում Աստված սատանային համոզեց և Ադամ-Եվայի հարցը կարգադրեց։

Բայց մի րոպե ենթադրենք, թե այդ րոպեին սատանա չկար դրախտում։ Ի՞նչ պիտի աներ Աստված։ Կարո՞ղ էր ամուսնության տեխնիկային ծանոթացնել նորաստեղծներին այն ժամանակ, երբ հետո պիտի նախապատվություն տար ճգնավորներին և կուսակրոն վարդապետներին և առաջին հերթին նրանց երկնային արքայության արժանացնել։

Դուրս է գալիս, որ Աստված չուզելով է ամուսնացնում մարդկանց։ Այնպես, ինչպես մեր պետությունը չուզելով է տնամերձ տալիս իր կոլխոզնիկին։

Տալիս է, միաժամանակ ուզում է, որ չմշակի...

Իսկ եթե Աստված մի օգնական ունենար, ամուսնության մեղքը կբարդեր իր օգնականի վրա՝ ասելով.

- Ես տեղեկություն չունեմ. այդ իմ օգնականն է արել՝ առանց ինձ հարցնելու։

Եվ ձևի համար կհանդիմաներ իր օգնականին։

Չէ՛, ես իսկապես եմ ասում։ Աստված առանց օգնականի այս հակասական աշխարհը չի կարող կառավարել։

Եվ ոչ միայն մեկ, այլ տասն օգնական է պետք, որպեսզի երբ մարդիկ իրար սպանեն, թալանեն, ստեն, կեղծեն ու «տասնաբանյա» ողջ պատվիրանները միանգամից խախտեն ու այդ մասին բացատրություն պահանջեն Աստծուց, Աստվածն ասի.

- Ես տեղեկություն չունեմ, իմ տասն օգնականներն են խախտել տասը պատվիրաններս։

Ի միջի այլոց, ես սաստիկ ուզում եմ իմանալ՝ երբ Ադամը ստեղծվեց, քանի՞ տարեկան էր։

Ինձ համար շատ տարօրինակ է, երբ մարդը ծնվում է չափահաս՝ առանց մանկություն ունենալու։

Եթե Միքայել Նալբանդյանն Ադամի տեղը լիներ, ինչպե՞ս պիտի գրեր իր «Մանկության օրեր երազի նման» ոտանավորը։

Կամ եթե Ադամն ապրեր սովետական մեր երկրում, ուր կյանքն իսպառ մեռել է, և յուրաքանչյուր գրող, գրիչը վերցնելով, միայն իր մանկության հուշերն է գրի առնում, Ադամն ինչի՞ մասին պիտի գրեր, երբ մանկություն չէր ունեցել...

Երկու քարի արանքում[159]

Սա 45 տարի է սովետական կարգերում ես ինձ զգում եմ գերության մեջ։

Մի ժամանակ ես այն հույսն ունեի, թե մի օր կմեռնեմ ու կազատվեմ այս դժոխքից, բայց այսօր հանկարծ մի միտք եկավ գլուխս ու հիմա այդ մտքից եմ սարսափում։

Իբրև երգիծաբան գրողի՝ բոլորը Հակոբ Պարոնյանին համարում են անմահ։

Իսկ ինձ էլ՝ երկրորդ Հակոբ Պարոնյան։

Ասում եմ՝ երբ մեռնեմ, ուրեմն, ես ֆլ անմահ պիտի դառնամ։

Անմահ դառնամ ու հավիտյան ապրե՞մ այս կարգերում...

Ո՛չ, ես չեմ մեռնի, ուրեմն։ Ավելի լավ է մահկանացու մնամ և մեռնելու հույսով ապրեմ, քան մեռնեմ, անմահանամ ու հավիտյան այս ռեժիմում ապրեմ։

Պարոնյանն անմահացավ, բարով անմահանա։ Նա ապրել է Պոլսում, սուլթանական ռեժիմի տակ, որ հազար անգամ թեթև է, քան բոլշևիկյան ռեժիմը։

Պարոնյանն իր բոլոր ասելիքներն սպառեց, նոր մեռավ, իսկ ես իմ բոլոր ասելիքները հետս գերեզման պիտի տանեմ։

Ահա՛ սոսկալին...

Բարեխառնված կյանք

Երբ բաղնիք ենք մտնում, այնտեղ տեսնում ենք երկու ծորակ՝ մեկը սաստիկ տաք, մյուսը սաստիկ պաղ։

Ո՛չ կարող ենք միայն տաքով լողանալ, ո՛չ միայն պաղով։ Բարեխառնում ենք երկու ջրերը՝ կես տաք, կես պաղ, ու լողանում ենք։

Նոր աշխարհ մտնողն էլ երկու ծորակ է տեսնում. մեկից կյանք է հոսում, մյուսից՝ մահ։ Մեկը՝ սաստիկ քաղցր, մյուսը՝ սաստիկ դառը։ Բայց մենք ապրելիս չենք բարեխառնում մեր կյանքն այդ երկու ծորակներով։ Նախ ապրում ենք տաք «ջրով» մինչև վերջանալը, ու երբ հանկարծ սկսում է հոսել սառը, վեր ենք թռչում սարսափած ու այնուհետև հավիտենապես սառչում։

Իսկ ինչո՞ւ մեր կարճ կյանքում միայն տաքանանք, որ երկար կյանքում սարսռանք։

Պետք է մեր կյանքն ու մահը խառնենք իրար և բարեխառն ապրենք։ Ապրենք կյանքին ու մահվանը հավասարապես մոտ այնպես, որ հաճախ չիմանանք՝ ապրո՞ւմ ենք, թե՞ մեռած ենք։

Նման կյանքը նախասովետական շրջանում անհասկանալի էր։ Այն ժամանակվա մարդիկ կա՛մ կենդանի էին, կա՛մ մեռած։

Կենդանության ժամանակ մարդիկ, գործի դնելով իրենց բոլոր մտավոր ու մարմնական կարողությունները, գիշեր-ցերեկ աշխատում էին և իրենց համար ուրախ, բարեկեցիկ կյանք ստեղծում։ Իսկ, բնականաբար, երբ գալիս էր մեռնելու օրը, կյանքի քար ու քոլից կառչում, որ չգլորվեն գերեզման։

Իսկ բոլորովին այլ կյանքով ու այլ մահով է մեռնում սովետական մարդը։

Սովետական մարդը, երբ աշխարհ է գալիս, բուդդայական կրոնավորի նման Նիրվանա[160] է մտնում։

Վահան Տերյանի բառերով ասած՝ չսիրել, չտանջվել, չշարժվել, չգործել, չմտածել, չհարստանալ, չուրախանալ, մոռանա՛լ, մոռանա՛լ ամեն ինչ մոռանա՛լ[161]...

Հիմա ձեզ եմ հարցնում, եթե մահը մտնի այս մարդու տունը, նրա ի՞նչը պիտի տանի։

Ոչ մի բան։

Ճիշտ այնպես, ինչպես կատարածուն մտնի մի կոլխոզնիկի

տուն՝ վերգիր կատարելու։

Կամ ավելի վատը, մտնի Դիոգենեսի[162] տակառը՝ վերգիր կազմելու այն ժամանակ, երբ նա, իր ջուր խմելու միակ բաժակն էլ կոտրելով, ափով էր ջուր խմում...

Սովետական մարդը նախքան ծնվելը, կարծելով, թե ծնվելուց հետո պիտի աշխատի իր կարիքները բավարարելու համար, իր հետ բերում է բոլոր հնարավորությունները՝ խելք, եռանդ ու ձեռներեցություն։

Բայց աշխարհ գալուց հետո, երբ տեսնում է, որ ոչ թե իր, այլ ուրիշի համար պիտի աշխատի, իր բոլոր բարեմասնությունները դնում է տակը և նստում վրան՝ փեշով ծածկելով դրանք, որ դրսից չերևան։

Նման մարդու կենդանի կամ մեռած լինելը կարծում եք՝ հեշտ է զանազանել։

Ո՛չ։ Դրա համար էլ, երբ Գաբրիել հրեշտակը վար է իջնում՝ նրա հոգին առնելու, հարցնում է՝ ողջ ես, թե՞ մեռած։ Ու նրա խոսքին էլ չի հավատում, պահանջում է թաղային լիազորից տեղեկանք՝ նրա ողջ կամ մեռած լինելը հաստատող։

Ասելս այն է, որ ինչպես բաղնիքում ջուրն այնպես ենք գոլ դարձնում, որ տաքն ու պաղը հայտնի չանի, կյանքում էլ այնպես պիտի ապրենք, որ չերևա՝ կենդանի՞ ենք, թե՞ մեռած։

Այժմ մի քանի խոսք թաղման կարգի մասին։

Եթե մարդուն հաջողվում է բոլոր փաստաթղթերով հաստատել, թե ինքը մեռած է, չպետք է թաղել մեծ շուքով։

Այն մարդը, որ իր ողջ կյանքի ընթացքին ոտքով է քայլել, ծաղր է մեռնելիս նրա դռանը կանգնեցնել հիսունի չափ ավտո։

Թերթը, որ չի հրատարակում բոլոր ապրողների անունները, մահազդում իրավունք չունի տալ մեռածների անունները։ Երբ «կյանքազդ» չկա, չպիտի լինի նաև «մահազդ»։

Ըստ հաշվապահական կանոնի՝ ելք պետք է անել այն ապրանքը, որ նախապես մուտք է արված մատյանում։ Թե չէ ինչպե՞ս պիտի կազմել բալանսը։

Տպել մահազդ, այն էլ խոշոր տառերով՝ փոխանակ տպելու պետիտով* և այն դնելու փակագծի մեջ՝ ասել ուզելով «ուշք մի՛

* Պետիտ- տպգր. մանրատառ։

դարձրեք, դա մի չար պատահմունք է»։

Ճիշտ է, մահը իրականություն է, բայց ամեն իրականություն պե՞տք է հրապարակել։

Եթե մենք նկարագրենք Հայաստանը, ինչպես կա, արտասահմանյան հայը ոտք կկոխի՞ այստեղ։

Երբե՞ք։

Գալուց հետո է միայն գլուխը դմփում. թող դմփի, դրանից ի՞նչ վնաս։

Եվ ըստ իս՝ խստիվ պատվիրելու է, որ մեռելներին արգելվի անդրգերեզմանային կյանքը պատկերել, ինչպես որ կա, որպեսզի մարդիկ մեռնելուց հետո միայն իրենց գլուխը «դմփեն»...

Կյանքն ու արվեստը

Սովետական արվեստներից միայն նկարչությունն է գնում կյանքի հետ համընթաց։ Գրականությունը ետ է գնում, իսկ երաժշտությունը քարացել է իր տեղում՝ միշտ միևնույն եղանակները կրկնելով։

Ո՞րն է համարվում օրինակելի գրող։

Նա, որ քիչ բառերով շատ բան է ասում, միաժամանակ հետևում կյանքի ընթացքին։

Իսկ դրան հակառակ՝ մեր սովետական գրողները շատ բառերով ոչինչ չեն ասում, միաժամանակ չեն մոտենում կյանքին։

Մինչ սովետական կառավարությունը պտուղներից միայն խակ ձմերուկ և թթու խաղող է բաց թողնում իր ժողովրդին ուտելու, սովետական գրքերը լի են «արևաշող» խաղողի ողկույզներով, քաղցր մեղրի նման «կարմրաթուշ» դեղձերով, ոսկի խնձորներով, արծաթ տանձերով, ադամանդ նռներով...

Չէ՞, գրականությունը շատ է հեռու կյանքից։

Մեր կյանքի հարազատ պատկերը տալիս է մեր նկարչությունը, որը բաղկացած է բացառապես գծանկարներից, կամ, ինչպես իրենք նկարիչներն են ասում, ճեպանկարներից։

Ճեպանկարը կամ, ավելի ճիշտ՝ հապճեպանկարն այն է, ինչ մենք ասում ենք կայծակ հեռագիր։

Մարդ նկարելիս նրանք երկար չեն ծանրանում առանձին ան-

հատի, այսինքն՝ երկու աչքերի, երկու ականջների, կամ զույգ ձեռք ու ոտների վրա։

Բազմաթիվ մարդկանց կանգնեցնում են մի շարքի և նրանց մի շատ երկար քիթ են տալիս՝ ասելով.

- Դուք տարեք, ձեր մեջ հավասար բաժանեցեք, մենք ժամանակ չունենք։

Որպեսզի մարդու երկու ձեռքերը չնկարեն, տանում կանգնեցնում են մի չոր ծառի տակ այնպես, որ մի ճյուղ իր չոր մատներով կազմի մարդու մի ձեռքը, որով խնայվի մի բնական ձեռք նկարելու աշխատանքը։

Ցուցահանդեսներում երկուաչքանի մարդու չեք հանդիպի. նկարում են մի աչք միայն, իսկ մյուսի տեղը՝ մի կետ դնում, որ մարդը հետո, երբ գտնի, կետի տեղը դնի։ Կամ հաճախ, երբ ավելի վռազ են, այդ կետն էլ չեն դնում ու անցնում են։

Ամենադժվարը դիմանկարների բերանների տեղը գտնելն է։ Մինչև անգամ ինքը՝ նկարվողն էլ չգիտի։ Այդ պատճառով եզակի չեն դեպքերը, երբ նկարը, չգտնելով մարմնի վրա իր ճաշակելիքը, սովամահ է լինում...

Մի խոսքով այդ նկարներում ոչինչ չկա ամբողջական։ Կարծես մի կատաղի ճակատամարտից հետո հավաքված դիակների կտորտանքներ լինեն, որոնցից մի ամբողջական մարդ կազմել անհնար է, իսկ կազմելիս էլ ուղեղի հրամանի չենթարկվող, հակառակ, անգամ իրար թշնամի գաղափարներից բաղկացած անհեթեթություն են պատկերում իրենցից։

Մի ձեռքը՝ Ամերիկա, մյուսը՝ Սովետական Ռուսաստան։ Կամ մի ոտքը՝ Արևելյան Գերմանիա, մյուսը՝ Արևմտյան։ Մեկը քայլում է դեպի Սովետական Միություն, մյուսը՝ դեպի Ամերիկա։

Այս գծանկարները ոչ միայն նման են մեր կյանքին, այլև համարյա նույն բանն են։

Կառավարությունը, որ բաց է թողնում ժողովրդին միայն ձմերուկ, երբեք չի արգելում, որ նա ուտի նաև սեխ, տանձ, դեղձ, խնձոր, սալոր և այլն, որոնց տեղերը բազմակետեր է շարում՝ ասել ուզելով՝ ճարիր կեր, ես շտապում եմ։

Խանութներում մսի և յուղի բաժինները դատարկ են, բայց կախված երկաթե կեռերը ցույց են տալիս, թե եթե միս լիներ, որ-

տեղից պիտի կախվեր...

Նորույթներ կան, որ գծանկարը չի գործածում, իսկ մեր պետական խանութները կիրառում են։

Օրինակ՝ խանութի սակավ ապրանքի ետևը հայելիներ դնելով՝ կրկնապատկում են այդ ապրանքը, իսկ նկարչությունը դեռ չի հասել այդ կատարելագործված ձևերին։

Եթե գծանկարչության այս ձևը տիրող դառնա մեր նկարչության մեջ, գիտեք ինչ հեղաշրջում կառաջանա մեր ամուսնական կյանքում։

Ներկայումս մի երիտասարդ, երբ ամուսնանալ ցանկանա, տասնյակ աղջիկների աչքից կանցկացնի, նրա հասակին, քայլվածքին, բնավորությանը կնայի, հարևաններից կհարցնի, թե աղջկա ընտանիքի մեջ ընկնավորներ կա՞ն, կամ թոքախտավորներ չկա՞ն արդյոք և այլն, և այլն։

Երբ ամուսնությունը գծանկարի անցավ, դրանք բոլորն ավելորդ կդառնան։

Տղան միայն կհաշվի, թե աղջիկը որքա՞ն մարմնի մասեր ունի իր վրա։ Եվ նախապատվությունը կտա այն աղջկան, որն ամենաշատն ունի այդ մասերից։

Ինչ աղջիկտես, ինչ բան։

Կամուսնանա՝ առանց իր հարսնացուի երեսը տեսնելու։

Հեռախոսով։

Այսպես՝

- Ալո՛, խոսում է մի երիտասարդ տղա։
- Լսում է մի երիտասարդ աղջիկ։
- Բարև ձեզ։
- Բարև ձեզ։
- Մարմնի ի՞նչ մասեր ունեք, օրիո՛րդ։
- Մի լրիվ քիթ, կես բերան, իսկ աչք ու ականջներ չունեմ։
- Դրանց տեղերը հայտնի՞ են ձեզ։
- Ո՛չ։
- Ատբո՛յ տվեք։

Տղան վերցնում է մի երկրորդ համար։

- Ալո՛, տղա՞ ես, թե՞ աղջիկ։
- Աղջիկ։

- Ինչ մարմնի մասեր ունես պատրաստի։
- Արտաքուստ միանգամայն լրիվ եմ։
- Իսկ ներքին մասերից ունե՞ս այն, ինչ անհրաժեշտ է ամուսնության համար։
- Դժբախտաբար այդ մեկը չունեմ...
- Ատբո՛յ տուր։

Տղան վերցնում է մի երրորդ համար։

- Ալո՛, լսո՞ւմ է մի հասած աղջիկ։
- Լսում է։
- Ունե՞ս ամուսնության անհրաժեշտ պարագաներ։
- Ունեմ, և մեկն էլ ավելի։
- Ինչ է նշանակում «մեկն էլ ավելի»։
- Հերմաֆրոդիտ եմ...
- Եթե դու մեկն ավելի ունես, այդ նշանակում է՝ մի ուրիշն էլ մեկը պակաս ունի։ Ինչո՞ւ ես պահել մոտդ։
- Որովհետև չգիտեմ՝ իմ ձեռքը խնդրելու եկողը աղջի՞կ է լինելու, թե՞ տղա։ Եվ վերջապես ավելին ո՞ւմ աչքն է հանել։ Այն երջանիկ պատասխանատուն, որ, լինելով մի անձ, երեք սենյակ է ստանում, երկուսը վերադարձնո՞ւմ է քաղսովետին։

Տղան, որ, չունենալով սեփական հեռախոս, տաքսաֆոնով էր խոսում, ցած է դնում լսափողը, որովհետև օրենքով սահմանված երեք րոպեն անցնում է։

Բայց նա իր գրպանում ուներ այնքան շատ երկուկոպեկանոցներ, որոնցով կարող էր մի մեծ քաղաքի բոլոր աղջիկներին հեռախոսի մոտ կանչել և ի վերջո գտնել իր փնտրածը։

Զրույց աստվածաբանական մի քանի ասպեկտների մասին

Օրերս Հռոմում տեղի ունեցավ կաթոլիկ եկեղեցու ժողովը, ուր պապը վերջապես ներում շնորհեց հրեա ազգին՝ Քրիստոսին սպանած լինելու համար տրված դատավճիռը չեղյալ հայտարարելով։

Օ՜հ, վերջապես։

Խեղճ ազգը երկու հազար տարվա նզովքից ազատվեց ու հիմա կարող է ազատ շունչ քաշել։

Բայց ես այն եմ զարմանում, թե այս խելացի ազգն ինչպե՞ս չմտածեց ժամանակին արդարացնել ինքզինքը և քսան դար գլխիկոր ման եկավ։

Հրեությունն արդարանալու այնքան շատ զենքեր ուներ…

Թվենք մի քանիսը։

Նախ և առաջ այն Աստվածը, որի որդուն սպանեցին, հրեաների Աստվածն էր։ Աբրահամի, Իսահակի և Հակոբի Աստվածն էր, իսկ այդ երեքն էլ հրեաներ էին։

Քրիստոնյայի ինչ գործն է միջամտել նրանց ներքին գործերին։

Փոխանակ շնորհակալ լինելու, որ հրեաներն առանց վարձքի, ձրիաբար թույլ են տվել քրիստոնյաներին իրենց Աստծուն պաշտելու, դեռ մի բան էլ իրե՞նք են մեղավոր։

Կամ՝ ենթադրենք սխալմամբ սպանել են մի Քրիստոսի, կորուստը խոմ անդա՞ռձ չէ։ Երկրիս վրա բազմաթիվ կույսեր կան, եթե Աստված փեշերը քշտի, տարեկան տասը Քրիստոս կարող է ուղարկել աշխարհ։

Հետո՝ չէ՞ որ Քրիստոսի սպանությունն առաջուց նախատեսված էր Աստծու կողմից։ Պիտի աշխարհ գար, խաչվեր, թաղվեր ու երեք օրից հարություն առներ, որ դրանով մարդկանց մեղքերին թողություն տար։ Եթե հրեաները չխաչեին, Քրիստոսը պիտի մնար, ծերանար ու իր բնական մահով մեռներ իբրև սովորական մահկանացու։

Էլ ո՞ւր կմնար քրիստոնեական հավատը։

Ուրեմն, այստեղ էլ քրիստոնյաներն ինքզինքնին երախտապարտ պիտի զգան հանդեպ հրեաների, որ սպանել են Փրկչին։

Այլապես Քրիստոսը պիտի ինքնասպա՞ն լիներ, ինչ է…

Ինչևէ։

Երևի Հռոմի տիեզերական ժողովում այս բոլոր հանգամանքներն ի նկատ ունենալով՝ ներել են այդ ազգին։

Մեր խորին շնորհավորանքներն այս առիթով…

* * *

Սիբիրում թանձր վալենկաներ ոտներիս, երկու բուշլատ իրար վրա հագած, ականջավոր գլխարկը դրած ու թանձր ձեռնոցներ անցկացրած վիճակում էլ ցրտից դողում էի։

Ցրտից դողում էի, և կարո՞ղ եք երևակայել, թե ո՞ւմ մասին էի մտածում։

Մեր հեթանոս աստվածների, որոնք, դարեր շարունակ ձյունապատ Մասիսի գագաթին նստած, դողդողացել են, որ հայերի կողմից պաշտվեն։

Ի՞նչ ահռելի զոհաբերություն...

Ես էլի Սիբիրում տանջվում էի որոշ ժամկետով, գիտեի, որ քսան տարուց կարող եմ ազատվել և մի լավ տաքանալ, իսկ նրանց պաշտվելու ժամկետը կախված էր հայ ժողովրդի ջերմեռանդությունից։

...Աստղիկ դիցուհուն պաշտողը հեշտությամբ ձեռք կքաշի նրանից։

Մտածում էի, թե Հայր Արամազդն իր բարկության րոպեներին իր «շանթերը» որտեղից է ձեռք բերում «արձակելու» համար։

Կամ Վահագնին ինչպե՞ս էր հաջողվում «քաջ» մնալ և ցրտից չդողդողալ։

Այնուհետև՝ մտքեր, մտքեր, մտքեր...

Նկատի առնելով, որ հույներն էլ իրենց աստվածներին Օլիմպոսում էին պահում, ասում եմ.

- Ի՞նչ սովորություն է աստվածներին անպատճառ սառը տեղ պահելու սա սովորությունը։ Մի՞թե նրանք տաքության չեն դիմանում։

Կամ տաք, անապատային ժողովուրդներն անաստվա՞ծ պիտի մնան, ձյունապատ սարեր չունենալու համար։

Հիմա ուրիշ, հիմա ամեն տուն սառնարան ունի։ Բայց չէ՞ որ հնում այդպիսի բաներ չկային։

Այս րոպեին Սովետական Հայաստանը տենդենց ունի Կոմիտասին երաժշտության աստված հռչակելու, Վիկտոր Համբարձումյանին՝ գիտության, Մարտիրոս Սարյանին՝ նկարչության։

Եվ այս այն ժամանակ, երբ Մասիսն այլևս մեզ չի պատկանում։ Արդյոք Թուրքիան թույլ կտա՞ Հայաստանին՝ Արևմտյան Բեռլինի օրինակով իր աստվածների հետ օդային կապ հաստատելու։

Ամեն պետություն Արևելյան Գերմանիայի նման լայնասիրտ ու զիջող կլինի՞։

* * *

Այժմ ես ուզում եմ շոշափել մի հարց, որը վերաբերում է պաշտամունքի տեխնիկային։

Աստվածներն իրենց մարմնի որ մասով են դառնում դեպի իրենց պաշտողները։

Մենք գիշերներն անկողնում առնվազն մի տասը անգամ շուռումուռ ենք գալիս մեր աջ ու ձախ կողքերի վրա, որովհետև ողջ գիշերը մի կողքին պառկելը անհնար է, հոգնում ենք։

Իսկ աստվածները կարո՞ղ են դարերով մի կողքից պաշտվել, և այդ կողքը մազոլ* չբռնի, չանզգայանա։

Կենդանի աստվածները, ինչ խոսք, կարող են ազատ լինել նման տանջանքից՝ իրենց առանցքի շուրջը դառնալով, և դեմ առ դեմ պաշտվելուց հետո իրենց ետևը դարձնել պաշտողներին։

Լենինը՝ Սովետական Ռուսաստանի այս աստվածը, իր կենդանությանը պաշտվում էր մարմնամարզական բոլոր ձևերով՝ կանգնած, նստած, պպզած, երկու ցուցամատերից մեկը դեպի անցյալը պարզած, մյուսը՝ դեպի ապագան, և երրորդ ցուցամատի էր կարոտում՝ ներկան ցույց տալու համար...

Իր կենդանությանը Լենինը պաշտվելու այնքան բազմազան ձևով էր ներկայանում, որ պաշտողը չգիտեր նրա մարմնի որ ձևը պաշտել, որը թողնել։

Բայց երբ մեռավ Լենինը ու զմռսվելով դրվեց «Մավզոլեյը», երկուստեք պաշտամունքի գործը դժվարացավ։

Լենինը, կռնակի վրա պառկած լինելով, այնուհետև պաշտվեց միայն իր առաջամասով, անկարող եղավ ցուցադրել իր ետևը, որն իր կենդանությանը ամենասրբազան մասն էր կազմում նրա մարմնի մնացյալ մասերից։

Դուք գիտեք, թե ինչքան դժվար բան է տեսնել լուսնի ետևի կողմը։ Բայց այնուամենայնիվ Ռուսաստանին հաջողվեց նկարել լուսնի ետևի մասը[163], իսկ Լենինի ետևն այդպես էլ մնաց անհայտության մեջ։

* * *

Արդ։ Մնում է ինձ երկու խոսք ասել աստվածների և մարդկանց միջև եղած տնտեսական կապի մասին։ Այն մասին, թե նրանք փոխադարձ շահավետության հողի վրա առուտուր ունեն միմյանց հետ։

Ընդհանուր առմամբ պետք է նշեմ, որ առուտուրը հեթանոս

* Մազոլ (**мозоль**) - ռուս. կոշտուկ։

աստվածների հետ քիչ շահավետ է եղել մարդկանց համար, հաճախ էլ բնավ չի եղել։ Օրինակի համար՝ խեղճ Ապիս եզը, որ կապված է եղել եգիպտական ախոռում, ինչ ունի, որ ինչ տա իրեն պաշտողներին։ Կամ Իսրայելի պաշտած Ոսկի հորթը՝ մի անգիտակից էություն, որ անգամ անգիտակ է իր աստվածային կարողությանը։

Մի աստվածային «հոկտեմբերիկ», որ չգիտի՝ մի տարի պիտի ապրի սեպտեմբերիկ դառնալու համար։

Մարդիկ մեծաքանակ առուտուր ունեն Եհովա աստծու հետ։

Իրենց ամբողջ կյանքում ինքզինքնին փառազրկում, ստորացնում, ծնրադրում ու փառք են տալիս իրենց Աստծուն, որ հետո հավիտենական արքայություն պարգևի իրենց։

Այս առուտուրը, ինչ խոսք, խիստ շահավետ է մարդու համար։ Ներկայումս մեր առևտրում այդպիսի ակնառու շահեր չկան։ Այնպես, որ մեկն իր անցավոր կյանքը (այն էլ տանջալի) փոխանակի հավիտենական երջանկավետ կյանքի հետ։ Նման առևտուր պատահում է միայն, երբ մեկ կողմը չափահաս առևտրական է կանգնած, իսկ մյուս կողմը՝ մի երեխա։

Բայց չէ՞ որ Աստվածը տարիքով մարդուց շատ մեծ է, ուրեմն, այդ ինչո՞վ պետք է բացատրել։

Դրան մի բացատրություն միայն կա։

Այն, որ մարդու տված «փառքը» կանխիկ է, իսկ Աստծու արքայությունը՝ ապառիկ։

Եթե Աստված մարդուն կենդանյոք արքայություն տաներ, էլի ոչինչ։ Բայց մարդը պիտի մեռնի ու թաղված մնա մինչև այն ժամանակ, երբ Աստված գա զարթնեցնի, թե՝ ե՛լ տանեմ արքայություն։

Մի բան, որ հակասում է բոլոր առևտրական օրենքներին։

Որտե՞ղ է տեսնված, որ պարտապանը գա ու պարտատիրոջը զարթնեցնի՝ ասելով՝ ե՛լ պարտքդ տամ։

Ընդհակառակը՝ առևտրի օրենքն այն է, որ պարտապանը, երբ տեսնի պարտատերը մեռել, հող է դարձել, այն մոխիր դարձնի, որ ազատվի նրա ձեռքից...

Համենայն դեպս Եհովայի հետ առուտուր անելը մեծ ռիսկի հետ է կապված։

Շահավետության տեսակետից ոչ մի պաշտամունք չի հավասարվում հին պարսկականին։

Հին պարսիկները արև էին պաշտում և նրանից կյանք ու ջերմություն էին ստանում, բայց կանխիկ։

Արևը մինչև իր գլուխն արևելքից դուրս չհաներ, պարսիկ քուրմերը նրան փառք չէին տալիս ու չէին երկրպագում։ Ամպ օրերին արևը ոչ մի փառք չէր ստանում, և այսպես պարսից աստվածն ապրում էր մի օր փառավոր, մյուս օրը՝ անփառունակ։ Ինչպես օրմեջ աստված։

Մեզանում, օրինակ, երբ մի ծառայող հիվանդության պատճառով տանն է մնում, առողջանալիս բժշկից բյուլետեն է տանում և իր չաշխատած օրերի փողն ստանում, իսկ պարսկական արևը բացակա օրերի համար ոչինչ չէր ստանում։*

Շատ լավ կրոն է արևապաշտությունը, բայց ափսոս, որ համաշխարհային կրոն չի դառնում մեր տարբեր կլիմայական պայմանների պատճառով։

Արև պաշտում են միայն ցուրտ կլիմայում ապրող մարդիկ, իսկ այրեցյալ գոտում ապրողները միայն նզովում են, որովհետև վառվում են։

Մնում է զարմանալ, թե ինչո՞ւ ներկայիս ցուրտ երկրներում ապրող պետությունները, ինչպես օրինակ՝ Շվեդիան, Նորվեգիան ու Անգլիան արև չեն պաշտում։

Ապրել լոնդոնյան թանձր մառախուղում և արև չպաշտել. ինչի՞ է նման։

Ցուրտ երկրի բնակիչները պետք է արև պաշտեն, իսկ տաք երկրներինը՝ լուսին։

...Այստեղ հանկարծ մի բան ընկավ միտքս։

Ասում եմ Վարդան Մամիկոնյանի ժամանակ ինչո՞ւ հայ նախարարներն ընդդիմացան Հազկերտ թագավորին ու չընդունեցին պարսից կրոնը։

Ինչո՞ւ թույլ տվին, որ իրենց խոնջաները կնքեն։

Եվ հետո Ավարայրի պատերազմ ու նրան հաջորդող թշվառությունները։

Չէ՞ որ գոյություն ունեցող աստվածն ավելի արժեք ունի, քան գոյություն չունեցողը։

Լավ էր շուտ մեռավ Վարդանը։

* Բյուլետեն- այստեղ՝ տեղեկանք։

Եթե ողջ մնար և ապրելով սովետական կարգերում՝ տեսներ, որ Աստված չկա, իր գլուխը պիտի ծեծեր։

Մերժել արև պաշտել, որը կյանք է տալիս աշխարհին, և գալ պաշտել Լենինին, որ միայն մահ է սփռում իր երկրում, շատ դժվար պիտի լիներ նրա համար։

Վարդանը, հավանաբար, պիտի միանար Կոլչակի[164] և Դենիկինի[165] բանակին ու մի երկրորդ Ավարայր ստեղծեր Ռուսաստանում։

...Ես այս բոպեիս արևապաշտ եմ։ Իմ կյանքի ողջ տարիները կարողացա առանց Աստծու ապրել, բայց մի օր առանց արև չեմ կարող ապրել։

1914 թվականին, երբ արևը կես ժամով խավարեց, ես լուռ սարսափեցի, բայց շները ոռնացին, կովերը բառաչեցին, կատուները մլավեցին։ Մի խոսքով աշխարհում ամեն արարած իր լեզվով զգացած սարսափն արտահայտեց։

Ինչո՞ւ անբան անասունն իր կարճ խելքով իրական աստված պաշտի, իսկ բանական մարդը՝ երևակայական...

Բարեբախտ պատահականություն

Մի հայ բանաստեղծ, (կարծեմ Դուրյանը) ասել է.

- Մեռնողը մի բան է միայն ցանկանում, այն է՝ իր վրա մի լացող[166]։

Իսկ երբ երեկ մեռավ մեր բակում ապրողներից մեկը, որին, չգիտեմ՝ ինչ անունների կրճատումով, Մուխո-Պետ էին անվանում, ասացի.

- Ահա մի մեռել, որ լացող չպիտի ունենա իր վրա, այլ միայն խնդացող։

Բայց ինչ։ Քանի երկնքում նստած կա մի ողորմած Աստված, թույլ կտա՞, որ մեռելն անարցունք գերեզման մտնի։

Եվ Մուխո-Պետի վրա թափել տվեց ոչ թե արցունքի կաթիլներ, այլ մի ամբողջ հեղեղ։

Բայց այդ մասին հետո։

Նկատի առնելով, որ մեռելները համբերատար են լինում, ես Մուխո-Պետին թողնում եմ պառկած իր դագաղի մեջ և սկսում նրա կյանքը պատմել «այբից»։

Նա իր մանկությանը լավ ձայն ուներ և մտադիր էր երգիչ դառնալ: Բայց այն ժամանակները նախասովետական շրջան էր, մարդիկ հիմակվա նման չէին գնում հիմնարկ, ութ ժամ գրչախաղով զբաղվում և տուն վերադառնալով՝ անգործ նստում և ռադիո ունկնդրում: Այն ժամանակ կար սեփականատիրություն, և ամեն մարդ աշխատում էր գիշեր-ցերեկ՝ իր մեկը երկուս դարձնելու, երկուսը՝ երեք:

Այնպես, որ երգ լսելու ժամանակ չուներ, և Մուխո-Պետի ձայնը կրակի վրա դրված և բերանը փակված թեյնիկի նման խլթխլթում էր իր ներսում:

Ահա ճիշտ այդ ժամանակ բոլշևիկները Հայաստան մտան ու խլելով ժողովրդի սեփականությունը՝ ազատեցին նրա զույգ ձեռները աշխատանքից, որպեսզի միտինգներում նրանց խոսած ճառերը ծափահարեն և «ուռա՜» գոռան:

Այստեղ ահա մեջքն ուղղեց Մուխո-Պետը, կոկորդը մաքրեց ու գործի անցավ:

Հազար հոգու մեջ Մուխո-Պետի ձայնը զանազանվում էր իր բարձր, քաղցր տենորով:

Ճիշտ է, բոլորն էլ հավասար գոռում էին՝ կեցցե՛ սովետական կառավարությունը, բայց սովետական կառավարությունն ամբոխի գոռոցից մի տեսակ էր «կեցցում», իսկ Մուխո-Պետի գոռոցից՝ մի ուրիշ տեսակ:

Ի՞նչ խոսք: «Կեցցե» էլ կա, «կեցցե» էլ:

Եվ որովհետև Մուխո-Պետի ձայնն ամենից բարձրն էր հնչում և ամենաքաղցրը, դրանով էլ դարձավ դրության տերը:

Առանց կոմկուսակցության դուռը ծեծելու՝ բոթեց-մտավ կուսակցության շարքերը և իբրև ռևկոմ՝ ուղարկվեց Աշտարակի շրջան՝ «սանրելու» այնտեղի հակահեղափոխականներին:

«Սանրի» ատամները, սակայն, շատ էին խիտ: «Սանրվեցին» շրջանի բոլոր ունևորները և չունևորներից էլ նրանք, ում հետ ժամանակին թշնամություն էին ունեցել Մուխո-Պետն ու իր հայրը:

Այդ ոջիլները, սակայն, որ թափվում էին Աշտարակի «գլխից», Մուխո-Պետը անմիջապես չէր քթվում, լցնում էր մեծ մարագ ու գիշերները տանում դաշտը, գնդակահարում-գալիս էր՝ նախապես, իհարկե, նրանցից մեծ փրկանք ստացած լինելով, որ իրենց կյանքը խնայի…

Ուրիշ խոսքով՝ խեղճերի բոլոր կարողությունները «սանրում» էր իր գրպանը, որը հետզհետե ուռչում էր և սկիզբ դնում իր այն կարողությանը, որ հետագային աճելով դարձավ ահռելի քանակություն։

Կուլակաթափության շրջանում բոլոր կուլակները սանրվեցին Մուխո-Պետի գրպանը և գյուղից քշվեցին։

Իսկ այն ժամանակ, երբ կառավարությունը սկսեց Գրիգոր Լուսավորչի տասը չարչարանքը տալով հավաքել ժողովրդի պահած ոսկիները, Մուխո-Պետը Չեկայի նախագահ Մուղդուսու[167] հետ պայմանավորվեց, որ հավաքված ոսկին հավասարապես իրենց մեջ կիսեն։

Եվ կիսեցին։ Մուղդուսին իրեն ընկած մասով իր միակ երեխային ոսկուց երկաթուղի կառուցեց, իսկ Մուխո-Պետն ամբարեց։

Այսպիսով, երբ ողջ ժողովուրդը դարձավ օրվա հացին կարոտ, սկսվեց համատարած կոլխոզը, և Մուխո-Պետն ուղարկվեց իր հայրենի շրջան՝ դարձյալ Աշտարակ, իբրև կոլխոզի նախագահ։

Բայց ավա՜ղ, Մուխո-Պետն այնտեղ «սանրելիք» ոչինչ չուներ։ Կոլխոզնիկը, որ բռնի էր մտել այնտեղ, չէր աշխատում, և կոլխոզը ոչ մի բարիք չէր արտադրում։ Այնտեղ «աշխօր» էր, որ պիտի բաժանվեր կոլխոզնիկին աշնանը միայն։ Իսկ երբ աշնանը բացվում էր պահեստը՝ բերքը բաժանելու, պահեստից այնպիսի մի քամի էր փչում, որ աշխատողներն իսկույն փակում էին դուռը չսառչելու համար...

Ու Մուխո-Պետն անմիջապես զգաց, որ կոլխոզն իր տեղը չէ։

Այն ժամանակները շատ ձեռնտու էր բանթղթակիցների գործը։ Թերթերի խմբագրությունները լավ վարձատրությամբ թղթակիցներ էին ուղարկում՝ քայքայվող կոլխոզները վերականգնելու։*

Մուխո-Պետն այստեղ էլ առաջին շարքերում էր։ Նրան ուղարկեցին դարձյալ Աշտարակ՝ ոտքի հանելու կոլխոզը։ Եվ նա գնալուն պես անապատն օազիս դարձրեց՝ աշխարհի բոլոր բարիքներով լիքը, իհարկե... թերթի մեջ։

Իսկ գլխավորը թերթն է, կոմունիզմն ինչ գործ ունի կյանքի հետ։

Մուխո-Պետը չորս տարվա բանթղթակից էր, երբ հիսուն հազար ընտանիք Հայաստանից պիտի տեղահան արվեին դեպի Ալթայան երկրամասի սառնամանիքները։

---

* Բանթղթակից- ***բանվորական թղթակից*** բառերի հապավումը։

Ռոպեապես գցեց գրիչը Մուխո-Պետը և ստանձնեց այդ ողբերգական տեղահանության կազմակերպումը։

Մի գիշերվա մեջ հիսուն հազար ընտանիք վագոնները լցնել և Սիբիր քշելը հեշտ բան չիմանաք։

Ընտանիք է, մեկի կինը, ծննդաբերական ցավով բեռնված, մտադիր է առավոտյան երեխա ծնել։

- Քեզ մի ժամ ժամանակ, ծնի՛ր ու ճամփա՛ ընկիր։

Մի ուրիշ կին ծնել է, բայց դեռ ընկերքը չի ընկել։ Մուխո-Պետը ժամանակ չունի, անմիջապես հանելով գրպանից դանակը՝ կտրում է ընկերքը և մորը ավտո բարձրացնելով՝ նորածնին ձմերուկի պես գցում է մորը, և երեխան մեռնում է։

Մտնում է մի տուն, ուր նորափեսան նորահարսին հավիտենական սեր է ուխտում.

- Ժամանակը կարճ է, կես ժամվա մեջ պիտի հավիտենական սերդ վերջացնես ու ավտո բարձրանաս,- ասում է Մուխո-Պետը և շտապում երրորդ տունը դատարկելու, որպեսզի հետո գյուղի իր բոլոր ազգականներին քաղաք բերի ու բնակեցնի իր դատարկած տներում՝ գրավելով տեղահանվածի ողջ կահ-կարասին նույնությամբ։

Տաճկական կառավարությունը տասը տարին մի անգամ էր կոտորում հայերին և նրա ինչքը թալանում, իսկ «հայ» կառավարությունը տարին մեկ է կոտորում, թալանում՝ լցնելով ամենայն տեսակ Մուխո-Պետերի գրպանները։

Հիմա տեսնենք, թե Մուխո-Պետը, որ այսքան փող էր բերում տուն, ինչպե՞ս էր ծախսում այն։

Նրա ամուրիության ժամանակն էր, երբ կառավարությունը սկսեց նպաստ բաժանել բազմազավակ մայրերին։

Այս օրենքից օգտվելու համար Մուխո-Պետն անմիջապես ամուսնացավ և համարյա կնոջը լարելով՝ կարճ ժամանակում տասը զավակի տեր դարձավ։ Բայց այս բազմանդամ ընտանիքն ապրեցնում էր ծայրահեղ խնայողության պայմաններում։

Նրա եկամուտն ու ծախսը հակառակ հարաբերական էին, ինչքան շատ էր ստանում, այնքան քիչ էր ծախսում։ Եվ ողջ ընտանիքը սպասում էր, թե ե՞րբ կմեռնի վերջինս, որ նրանք սկսեն ապրել։

Երեք աղջիկ ու յոթ տղա ուներ։ Աղջիկներից մեկը գեղեցիկ էր. առանց օժիտի տարան, բայց մյուս երկուսի համար օժիտ էին ու-

զում։ Չտվեց, ու խեղճ աղջիկները մնացին տանը։

Մի տղան սիրահարական հողի վրա մարդ սպանեց. դատավորը կաշառք ուզեց տղային ազատ արձակելու համար, չտվեց, և տղան տասը տարով Սիբիր տաժանակրության գնաց։

Երկրորդ տղան, տասնամյակն ավարտելով, կամեցավ բժշկական ինստիտուտ մտնել։ Եվ որովհետև գլուխը դատարկ էր, պրոֆեսորը հինգ հազար կաշառք ուզեց առանց քննության ընդունելու համար, չտվեց ու թույլ տվեց, որ տղան պարապ-սարապ փողոցներում ման գա։

Երրորդ տղան հաշվապահ էր, հիսուն հազարի պակասորդ տվեց ու փողը բերեց հանձնեց հորը, այժմ բռնված է, ու հայրը ոչ մի կոպեկ չի տալիս նրան բանտից ազատելու համար։

Մեզ մոտ, ճիշտ է, բժշկությունը ձրի է, բայց վիրահատության սեղանին պառկողը եթե չվճարի բժշկին, ողջ վեր չի կենա։

Կնոջ փտած աղիքը պետք էր կտրել-հանել։ Բժշկի ուզածի կեսը վճարելու համար, բժիշկը հիվանդ աղիքի կեսը կտրեց, կեսը, մեջը թողնելով, կարեց։

Ինչ երկարացնեմ, նրա արածները թվելի չեն, որ մարդ թվի։

Մեկ խոսքով՝ իսկական մեռնելու արժանի մարդ։

Բայց այս Մուխո-Պետը մի քրոջ տղա ուներ՝ ճիշտ իր բնավորությանը հակառակ։ Ուտող, խմող, վայելող մի վարորդ։ Զբաղվարարվելով իր վաստակով՝ դեմը ելած ծանոթից փող էր պարտք վերցնում ու չէր վճարում։

Պարտատերերը նրա երեսը չէին տեսնում։ Ցերեկն ավտոյով էր սուրում, իրիկունը տուն գալիս պատվիրում էր կնոջն ասել՝ տանը չէ։

Այդ պատճառով էլ, երբ Մուխո-Պետը մեռավ, վարորդի բոլոր պարտատերերը հավաքվեցին, հուղարկավորության եկան իրենց պարտքն ուզելու՝ համոզված, որ ինքն այնտեղ կլինի։

Իրոք էլ այնտեղ էր ու տեսնում էր, թե ինչպես ձյան փաթիլների նման իրար վրա էին հավաքվում իր պարտատերերը։

«Ինչպե՞ս ազատվեմ սրանց ձեռքից»,- մտածեց ուտող-խմողը և ուրիշ ճար չգտնելով՝ ինքզինքը ողբաձայն մեռելի վրա գցեց երկու նպատակով՝ մեկը տնեցիներին վշտակից լինելու համար (որոնք այնքան ուրախ էին, որ դրա կարիքը չէին զգում), մեկ էլ պարտա-

տերերից ազատվելու համար։

Իսկ երբ դագաղը դուրս էին բերում, անմիջապես իր ուսը դեմ տվեց, ու մինչ մյուս երեք կրողները շուտ-շուտ փոխվում էին, վարորդը մինչև գերեզմանատուն մի շնչով գնաց։

Եվ առհասարակ այնքան էր կպել մեռելին, որ շատերը կարծեցին, թե մեռելի հետ էլ գերեզման պիտի մտնի։

Իհարկե, դա պարտատերերից ազատվելու ամենահուսալի միջոցը կլիներ, բայց այդպես չեղավ։

Նա իր ձեռքով գերեզման իջեցրեց հանգուցյալին և որպես միակ վշտակիր՝ կանգնեց փակվող գերեզմանի գլխին՝ վշտակցություններն ընդունելու համար։

Ու հերթով մոտենում էին պարտատերերն ու սեղմելով նրա ձեռքը՝ զսպված կատաղությամբ շշնջում էին.

- Երբ պիտի վճարես պարտքդ։

Իսկ վարորդը, հորդ արցունք թափելով, ասում էր բոլորին.

- Աստուծով մխիթարվեք...

Մի արցունք, որ հանգստացրեց թե՛ մեռելին, թե՛ պարտատերերին։

Օրենսդրական հարցեր

Արտասահմանում ժամացույցները լարում են ըստ Գրինվիչի ժամանակի, իսկ օրենսգրքերը հարմարեցնում են հռոմեական օրենքին։

Այնպես որ, այնտեղ ժամանակն էլ, օրենքներն էլ կայուն են։

Իսկ Սովետական Միությունում ժամացույցներն ուղղվում, և օրենքները գրվում են՝ նայելով Մոսկվայում նստած միակ «առաջնորդի» (որ տեղական լեզվով նաև բանվորագյուղացիական իշխանության դիկտատոր է կոչվում) կամքին ու տրամադրությանը։

Երբ դիկտատորն առավոտյան արթնանում է, Ռուսաստանում ժամը տասներկուսն է, երբ անկողին է մտնում՝ երեկոյան տասնմեկը։

Իսկ դիկտատորներից Խրուշչովը, որ հաճախ էր արտասահման ճամփորդության գնում, մինչև նրա վերադարձը Սովետական Միությունում ժամացույցները կանգ էին առնում։

Սովետական օրենքն էլ կախված էր այն բանից, թե բռնապետը

որ կողքին է պառկել գիշերը. եթե ձախ, այդ օրը բոլոր հանցավորները մահվան էին դատապարտվում, եթե աջ՝ ցմահ տաժանակրության։

Այն դեպքում, երբ դիկտատորի որևէ կողքին չիբան է բուսնում, դատավճիռները դառնում են միակողմանի մինչև առողջանալը։

Հանցավորները սովորաբար լինում են երկու տեսակ՝ քաղաքական և քրեական։

Քաղաքական հանցանք չկա մեր երկրում, որովհետև ժողովրդի ձեռները կապված են ետևում, ու դրանք շարժելու ու մի որևէ բան անելու հնարավորություն չկա։ Այդ պատճառով էլ նման գործեր քննող Չեկայի բանը կրկնակի դժվարանում է։ Նա երևակայությամբ պիտի մեկի վրա մի հանցանք հորինի, հետո դատի։

Ինչպես որ մեզանում պատմական վեպ գրողները վերցնում են հայ պատմագրի մի նախադասություն և հազար էջանոց մի վեպ հորինում, այդպես էլ չեկիստները։ Եվ ավելին։ Չեկիստները պատմագրի այդ մի նախադասությունն էլ չունեն, ամբողջովին իրենք են հորինում։

Իբրև օրինակ բերում եմ իմ ձերբակալությունը։

Ես, ճիշտ է, սաստիկ ատում եմ այս ռեժիմը, բայց ոչ մի ապստամբական քայլ չեմ առել հանդեպ այս պետությանը։

Ճիշտն ասած, մի ժամանակ մտածում էի որևէ քայլ առնել, բայց չառա, որովհետև չգիտեի ինչ քայլ առնել, որ մենակովս այս պետությունը կործանեմ։

Հետո ինձ հանգստացնելու համար մտածում էի. «Ինչ կարիք կա դրան. ես կմնամ անմեղ, բռնելիս թող իրենք հանցանք ճարեն, վրաս դնեն ու դատապարտեն»։

Այս հույսով էլ կալանավորվեցի։

Եվ իրականությունը գերազանցեց սպասածս։ Չեկան ուղիղ երեսուներկու քաղաքական հանցանք բարդեց վրաս, և որովհետև թույլ չտվին նոթագրել, դատավարությունից հետո բոլորը մոռացա ու քսան տարի տաժանակրության գնացի համարյա անմեղ։

Միակ հանցանքը, որ հիշում եմ, այն էր, որ ես Ստալինի նկարը չեմ փակցրել տանս պատերին այն ժամանակ, երբ ուրիշները երկու նկար իրար վրա էին փակցնում...

Իսկ իմ կողմից ոչ մի նկար չփակցնելը նշանակում էր ողջ Ռու-

սաստանը հեղաշրջել... իմ բնակարանում։

Բոլորովին այլ բնույթ են կրում քրեական դատերը մեր երկրում։

Մենք համայնավարներ ենք և դավանում ենք «բոլորը մեկի, մեկը բոլորի համար» լոզունգը։

Հերթով, իհարկե։

Սա քառասունհինգ տարի է, բոլորը մեկի համար է, որին պիտի հաջորդի մեկը բոլորի համարը։

Ըստ այդմ՝ ներկայիս ժողովրդի բոլոր փողերը հոսում են այդ մեկի գրպանը, իհարկե, հաշվապահների ձեռքով։ Հաշվապահներն էլ իրենց «մեղրոտ մատը լիզելով» ընկնում են ժողդատարան։

Դատարանում դատողն ու դատվողը խոսում են հատուկ, իրենց միայն հասկանալի բարբառով։

Դատավորը ժպտալով հարցնում է՝ քանի՞ տարեկան ես, որի թարգմանությունն է՝ քանի՞ հազար պիտի տաս։

Եթե մեծ ասի, մեծ գումար պիտի տա դատվողը, ուստի պառաված աղջկա նման փոքրանում է.

- Հազիվ քսան տարեկան լինեմ։

- Քսան տարեկա՜ն,- զարմանում է ժողդատավորը,- երեսուն տարեկան տղա ունես և դեռ քսան տարեկա՜ն ես։

- Գետինն անցնի տղաս, այնքան համբերություն ունի՞, որ իր ծնվելու ժամանակին սպասի...

- Լավ, մի՛ անպատվիր տղայիդ։ Տղադ թող քսանհինգ տարեկան լինի՝ միասին ծնվեցեք։ Համաձա՞յն ես։

- Համաձայն եմ։

Հաշվապահը, վճարելով քսանհինգ հազարը, ազատվում է անպարտ ու որպես ազատ մարդ՝ մտերմական խոսակցության է բռնվում դատավորի հետ։

- Ինչքա՞ն էիր գողացել։

- Երեսունհինգ հազար։

- Ինչո՞ւ այդքան քիչ։ Գողանում ես՝ մի կարգին գումար գողացիր, որ քեզ էլ կշտացնի, ինձ էլ, Գերագույն դատարանին էլ, հետո Երևանի կոմիտեին, վերջում Կենտրոնական Կոմիտեին և այլն։ Գիտե՞ս՝ ինչքան մարդ է նստել այն տեղերում։ Հիմա ես այս քսանհինգ հազարից չգիտեմ՝ ի՞նչ տամ նրանց և ի՞նչ ինձ վերապահեմ։

- Լավ, երկրորդ անգամ շատ կգողանամ։

- Չվախենաս։

- Չեմ վախենա։

Այսպես ուրեմն, եթե կամենանք մեր քաղաքական և քրեական դատարաններն իրարից զանազանել, պիտի ասենք.

- Քաղաքականները մարդկանց արյանն են ծարավի, քրեականները՝ փողի։

...Աշխարհ է էլի, ինչ կարող եմ ասել։

Հայկական առածն ասում է. «Գողը գողից գողացավ, Աստված տեսավ, զարմացավ»։

Խեղճ Աստված...

Եթե ընդամենը երկու գողերի վրա այդքան զարմացել է, հապա եթե գողերի այս անհատնում շարանը տեսնելու լիներ, ինչքա՞ն պիտի զարմանար։

Լավ է, որ մեր երկրում Աստված չկա...

Սովետական օրենսգիրքը

Մեր կյանքը չի հանդիսանում դպրոցի շարունակությունը։ Կյանքն ու դպրոցը գնում են զուգահեռ և ոչ մի կետում իրար չեն միանում։

Մեր երեխան տասնհինգ տարի սովորելուց հետո, երբ ուզում է կյանք թևակոխել, շվարում-կանգնում է, որովհետև կյանքը որևէ կամուրջով կապված չէ դպրոցին։

Ստիպված որպես մոլորված ճամփորդ՝ տասնհինգ տարի հետ է վերադառնում եկած ճամփով և նոր սկսում կյանքի ճանապարհը բռնել։

Ես, օրինակ, մեռա դպրոցում քառակուսի և խորանարդ արմատ հանելով։ Դպրոցից դուրս գալով՝ սա քառասուն տարի է, պարտեզ եմ մշակում, չի պատահել դեպք, որ հանածս ծառը խորանարդ կամ քառակուսի արմատ ունենա։

Բնական արմատներ։

Դպրոցում սովորեցնում են, թե մարդկային շարժումները ղեկավարում է ուղեղը։

Մինչդեռ կյանքում ինչ ուղեղ, ինչ բան։ Մարդկանց գլխում նստած է զմռսված Լենինը և ղեկավարում է սովետական մարդու վերջին շարժումը։

Ասում է «դեպի ա՛ջ», դեպի աջ է դառնում, «դեպի ձախ», ձախ է դառնում։

Լենինը եթե կենդանի լիներ, էլի ոչինչ։ Կիմանար, որ սխալ ճանապարհ է ցույց տալիս և կործանման կես ճանապարհից հետ կդարձներ։ Բայց հրաման տվեց ու մեռավ։ Ժողովուրդն այդ ճանապարհով էլ պիտի գնա, մինչև վերջին դատաստանին Լենինը հարություն առնի և ուղղի իր սխալը։

Կամ այսպիսի բան։

Տղան դպրոցում սովորում է՝ «մարդն ամենաթանկ կապիտալն է»։ Դուրս է գալիս կյանք, տեսնում է ամենաընտիր մարդկանց ցերեկով հավաքում լցնում են Չեկայի նկուղները, իսկ երեկոյան մթին լցնում են ավտոն ու տանում գնդակահարելու։

Այսպես չի կարելի։ Ինչ կյանքում հարկավոր է մարդուն, այն պիտի սովորեցնել դպրոցում։

Կոտորե՞լ է հարկավոր մարդուն՝ թող աշակերտն առաջին դասարանից սկսի կոտորել։

...Բայց ես ինչ վերնագրեցի, ինչի մասին եմ խոսում...

Ներեցեք, որ նյութիցս այսքան հեռացա։

Հա, հիմա դառնանք մեր օրենսգրքին։

Կամ ավելի ճիշտը՝ մեր թաղային դատավոր ընկեր Մութաֆյանին՝ հետո օրենսգրքին դառնալու համար։

Մութաֆյանի հետ մոտ եմ։ Մենք, փոխադարձ շահավետության հիման վրա, առևտրական պայմանագիր ունենք կնքած իրար հետ։

Ես պիտի իր բոլոր անձնական հակառակորդներին ծաղրեմ օրաթերթում, իսկ նա իմ բոլոր գործած հանցանքները պիտի ների։

Ուրեմն, և զարմանալի չէ, որ ես մոտիկից ծանոթ լինեմ նրանց ընտանեկան նիստ ու կացին։

...Ահա միայն այս մարդու օրինակը բավական է իմ՝ վերևն ասածները հաստատելու համար։

Մութաֆյանը կյանքում դատավոր դառնալու մտադրությամբ իր ամբողջ երիտասարդությունը նվիրեց սովետական օրենքի ու նրա օրենսգրքի ուսումնասիրությանը, և այսօր տասնութ տարվա իր դատավարությանը չի պատահել դեպք, որ նա դատը վարելիս մի անգամ օրենսգիրքը բաց անի։

Միայն որպես սեղանի զարդ՝ որովհետև ամեն դատավոր մի

օրենսգիրք է դնում իր առջև, նա էլ ստիպված էր դնել։

Բայց Մութաֆյանի հանգամանքները մի փոքր այլ էին։ Նա ապրում էր հենց դատարանի շենքում՝ նիստերի դահլիճի կողքին։ Կինն էլ ռուս էր և հայերեն կարդալ չգիտեր։ Ամեն առավոտ դատական սեղանը հարդարելիս մտնում էր ներս, երեխաների դասագրքերից մեկը վերցնում, դնում էր սեղանին ու հեռանում։

Այնուհետև մնում էր օրվա դատվողի բախտը։ Եթե ամենափոքր երեխայի այբբենարանն էր լինում սեղանին, «այբ, բեն, գիմ»-ով էր դատվում, եթե մեծ երեխայի քիմիայի կամ ֆիզիկայի դասագիրքը, քիմիայով ու ֆիզիկայով։

Բայց երբեմն դատարան էր ներկայանում մի կրկնահանցագործ կամ մի ավելի ծանր հանցագործ, որին պետք էր խիստ վախեցնել։

Իսկ օրենսգիրքն էլ, դասագրքերն էլ լղարիկ հատորներ էին։ Այդ պատճառով նման պարագաներին սեղանին դնում էր Սերո Խանզադյանի[168] «Մխիթար Սպարապետը»։ Իսկ եթե դատվողը չէր վախենում, նաև Զարզանդ Դարյանի[169] «Արծիվ Վասպուրականին», որից հետո դատվողը զարզանդում էր, ու վախից լեզուն կապվում՝ կարծելով, թե այդ գրքերը պիտի կարդա իր գլխին…

Բայց դատավորն ի վերջո խիղճ ուներ և այդպիսի բան չէր անում։

Այսպես անցավ Մութաֆյանի դատավորության տասներկու տարին։

Տասներկու տարի անց մի օր դատավորը դարձավ իր կնոջը ու ռուսերեն հարցրեց.

- Մարուսյա՛, ես մի ժամանակ մի օրենսգիրք ունեի, ի՞նչ եղավ։

Մարուսյան այս հարցի վրա հանկարծ սփրթնեց և սկսեց ոտքի վրա երերալ։

- Ի՞նչ պատահեց քեզ,- հարցրեց ամուսինը։

- Օրենսգիրքը… օրենսգիրքը… օրենսգիրքը… զուգարանի պետքերին եմ օգտագործել…

- Բայց դու հայերեն չես կարդում, այդ ինչպե՞ս իմացար։

- Մեր մեծ տղան՝ Գարեգինն ասաց։

Ասաց կինը և շարունակեց դողալ՝ կարծելով, թե մարդը պիտի բորբոքվի։

Դրա փոխարեն մարդը հասավ, գրկեց իր սարսափահար կնոջը, շոյեց, փայփայեց ու ասաց.

- Հանգստացի՛ր, անուշի՛կս, ես դրա համար ոչ միայն չեմ բարկանում վրադ, այլ նաև շնորհակալ եմ քեզանից, որ այդ օրենսգիրքը վերջապես մի բանի ծառայեց։

Ասաց ու ավելացրեց.

- Հիմա ես հասկացա, որ աշխարհում անպետք բան չկա։ Ամեն բանն էլ պիտանի է, եթե իր նպատակին ծառայի...

Գերեզմանաքար

Միայն մեր դրացիությունը չէ, որ ինձ ու Մարտիրոսին կապում է իրար։

Մենք շատ խնդիրներում բախտակից ենք եղել իրար վաղ ժամանակներից։

Մենք երկուսս էլ ժամանակին Սիբիր ենք քշված եղել, բայց այս մեկը չեմ հաշվում, որովհետև այդ աղետը միայն երկուսիս չեղավ, և այդ հաշվով սովետական բոլոր քաղաքացիները վիճակակիցներ են եղել իրար։

Դրանից բացի՝ մեր երկուսիս տները միաժամանակ քանդեցին, ու միաժամանակ մեր նոր տները փոխադրվեցինք։ Միաժամանակ ամուսնացանք, միաժամանակ երկու աղջիկ ունեցանք և համարյա երկուսս էլ միևնույն «սետկայից» էինք խաղող առնում՝ իրար ետև մեր հերթին սպասելով։

Մեր ցավալի տարբերությունը միայն այն եղավ, որ մեր կանայք մի տարով իրարից շուտ և ուշ մեռան։

Բայց այնուհետև էլ մենք մեր կորուստը հավասար սգացինք և հավասար եռանդով սկսեցինք փողի մասին մտածել՝ մեր կանանց վրա գերեզմանաքար կանգնեցնելու համար։

Մարտիրոսի ռոճիկը փոքր էր։ Չգիտեմ՝ այդ էր պատճառը, թե իրոք սկզբունքով դեմ էր գերեզմանաքարին։ Որովհետև հետագային ետ կանգնեց իր մտադրությունից և ինձ էլ էր համոզում ձեռք քաշել։

- Դատարկ բան է այդ,- ասում էր նա ինձ,- մարդը երբ մեռավ, նրան պիտի հաշվենք հող. իսկ հողի վրա քար կանգնեցնես՝ հողը կանմահանա՞։

Մի ճշմարտություն, որ բոլորին է հայտնի, և սակայն ոչ ոք չի

համարձակվում հասարակաց կարծիքին դեմ գնալով՝ իր բանականությանը անսալ։

Վերջում ինքն էլ չկարողացավ ու բերնի բրդուճը կտրելով՝ գնաց գերեզմանաքար պատվիրեց։

Քարի շինությունը դեռ չէր ավարտել, երբ Մարտիրոսին մի դժբախտություն պատահեց։

Նրան բռնեցին էլեկտրական էներգիա գողանալիս և սոսկալի մեծ գումար տուգանք նշանակեցին, որը պիտի վճարեր կարճ ժամանակում, եթե չէր ուզում իր տան ողջ կահ-կարասուց զրկվել։

Ելավ, մոտս վազեց՝ թուքը բերնին չորացած, ու ասաց.

- Ամա՛ն, ոտքդ պագնեմ, իմ շինած գերեզմանաքարը ա՛ռ, դի՛ր քո կնոջ շիրիմին մի բան էլ պակասով, միայն փողդ տո՛ւր, այս անիրավ պարտքս փակեմ։

- Ամենայն սիրով, սիրելի՛ Մարտիրոս,- ասացի,- բայց քո պարտքը մի կնոջ գերեզմանաքարով չի փակվի։

- Ի՞նչ անենք։ Ժամանակին չմտածեցինք մի քանի կին առնել և այսօր այս օրն ընկանք։

Ասաց ու «ա՜խ» քաշելով՝ ավելացրեց.

- Բայց այնուամենայնիվ դու ա՛ռ, մինչև տեսնենք՝ ինչ ենք անում։

- Բայց գերեզմանաքարի վրա արդեն գրել ես տվել կնոջդ անունը...

- Ոչինչ, տարբերությունը շատ մեծ չէ։ Իմ կնոջ անունը Նվարդ էր, քոնինը՝ Վարդ։ Մի անիծյալ տառի տարբերություն կա միայն։

Ես նայեցի նրա այլայլված դեմքին և նրան այս ծանր վիճակից ազատելու համար ասացի.

- Ոչի՛նչ, ոչի՛նչ, թո՛ղ մի տառը տարբեր լինի։ Ես ժամանակին երկու վարդերից էլ հոտ եմ քաշել և գտել, որ «ն»-ով վարդն ավելի հաճելի հոտ ունի, քան առանց «ն»-ինը...

Մարտիրոսը շեշտակի աչքերիս մեջ նայեց, ապա ուրախ շեշտով բացականչեց.

- Ճի՞շտ ես ասում, ա՛յ տղա, ես էլ առանց «ն»-ի վարդից եմ հոտ քաշել և գտել, որ ավելի անուշ է։ Ի՞նչ քաղցր զուգադիպություն։ Հիմա խիղճս հանգստացավ։

Նա մի փոքր մտածեց ու շարունակեց.

- Այնպես որ մենք կարող ենք «ն»-ն ջնջել և երկու վարդերին իրար մոտ բերելով՝ մի գերեզմանաքար կանգնեցնել…

Այս պատմությունը գրելուց հետո սկսեցի մտածել. «Կյանքում որքա՜ն այր ու կին իրար հոտոտում են, և սակայն լույս գողանալիս չբռնվելով՝ գաղտնիքը չի հայտնաբերվում, և այսպես էլ անհիշատակ կորչում-գնում են աշխարհից՝ ստիպելով կենդանի մնացածներին մեկական քար կանգնեցնել իրենց կանանց գերեզմաններին։

Եթե էլցանցի աշխատողները մի փոքր ժրաջան աշխատեն և բռնեն բոլոր լույս գողացողներին, ապագայում հավանական է, որ տասը կին մի գերեզմանաքարով անմահանա…»։

ՍԻԲԻՐԻ ՃԱՆԱՊԱՐՀԻՆ

Առաջաբան

Այս գլխում ես պիտի ծիծաղեմ իմ սեփական տանջանքների վրա:

Եթե ընկած ես ֆիզիկապես քեզանից ուժեղ թշնամու ձեռքը, և նա տանջում է քեզ, դրա ամենալավ պատասխանը ծիծաղն է:

Եթե նա ինչքան ուժեղ խփի, դու ավելի ուժեղ ծիծաղես, նա զինաթափ կլինի՝ չուզենալով քեզ հաճույք պատճառել: Եվ կփնտրի՝ հարվածելու քո թույլ տեղը, որ քեզ լացացնի:

Արյունարբու թշնամին միայն իր զոհի արցունքներով է զովացնում իր սիրտը:

Տիրապետելով այս գաղտնիքին՝ բոլշևիկյան իշխանությունը իմ որ տեղին զարկեց, ես ծիծաղեցի, ու մինչև օրս էլ չկարողացավ հայտնաբերել իմ մարմնի այն տեղը, որ հարվածեր, ու ես լաց լինեի:

Բայց երևակայեցեք՝ ես ունեմ նման խոցելի տեղ:

Եթե Լենինը ցարական իշխանությունը տապալելուց հետո հայտարարեր.

- Ամեն ոք իրավունք ունի ապրելու ազատ, ինչպես ինքն է ցանկանում, ճաշարան մտնելիս ընտրի այն կերակուրը, որ իրեն հաճելի է, առնի այն աղջկան, որին ամենից շատն է սիրում, հագնի այն զգեստը, որ իր մարմնի վրա լավ է նստում, դավանի (մանավանդ) այն իդեալը, որ հասանելի է համարում, սեփական աչքերով նայի աշխարհին և իր սեփական աշխարհայացքն ունենա:

Եթե այսպես ասեր Լենինը, ես լաց կլինեի... ուրախությունից և նրա վզովը կփարվեի:

Բայց այդպես չվարվեց Լենինը:

Լենինն աղքատացրեց բոլոր հարուստներին և մի կատյոլ տալով ձեռները՝ ժամերով ճաշարանի դռանը հերթի կանգնեցրեց, որ ստանան իրենց բաժին ապուրը, որ էր ջրի օվկիանոսում խեղդվող մի երկու հուսահատ մակարոն կամ տրորված վերմիշել, որ ամուսնանան սովից քաթանի գույն առած աղջիկներից մեկի հետ,*

* Կատյոլ *(котёл)* - ռուս. կաթսա:

որ հագնեն արտելի կարած վերարկու՝ մի փեշը մյուսից կես մետր կարճ կամ երկար, որ դավանեն այն սկզբունքը, որի վրա երեկ թքել էին, իսկ աշխարհայացք կազմելիս սեփական ձեռքով հանեն իրենց աչքերն ու ինքզինքնին ձգեն «լենինիզմի» անդունդը, որ հավետ իջնեն՝ առանց ոտքերը մի հաստատուն հողի վրա դնելու։

Ինչպես ջուրը հատակ չունեցող տակառի մեջ։

Երբ այսպես խոսում էի իմ դատավարությանը, դատավորը դարձավ իր աջ կողմը նստած ատենակալին և ասաց.

- Շատ է լկտիացել, պետք է սրան հեռավոր հյուսիս ուղարկել, որ խելոքանա։

Ահա՛ քեզ մի երկիր, ուր ազատության պահանջը լկտիություն է նշանակում։

Եվ դրան հակառակ՝ լկտիությունը համազոր է ազատությանը…

Կամ մի՞թե «հեռավոր հյուսիսը» ընդունակ է մարդուն խելքի բերել։

Արդյո՞ք հեռավոր հյուսիսի բոլոր բնակիչներն են խելոք։

Եթե չեն, ուրեմն, նրանց անխելքներին էլ հեռավոր հարա՞վ է պետք աքսորել…

Ահա ձեզ մի կլիմայական դաստիարակություն, որին կառչել է մեր կառավարությունն իր ծննդից ի վեր։

Ես գնացի հեռավոր հյուսիս, քսան տարի թափառեցի սառցադաշտերում և այնտեղից վերադարձա ավելի «լկտիացած», որովհետև ազատության տենչն ավելի էր սաստկացել իմ մեջ։

Վերջում ես հաղթեցի բոլշևիկներին, որովհետև նրանց հարվածներին ես ծիծաղով պատասխանեցի։

Ինձ մնում է հաղթել նաև մի այլ թշնամու, որ է Աստված։

Նա որպես մի մեծ նվեր՝ ժամանակավոր մի կյանք է տվել ինձ հետո առնելու պայմանով։

Իսկ ես թքել եմ այդ կյանքի վրա։

Ես որոշել եմ մեռնելիս հոտել և ինձ մոտեցնել նրա քթին, որ անվերջ հոտ քաշի և ամաչի իր ստեղծագործությունից։

Որ մյուս անգամ մի փոքր ավելի կանոնավոր մարդ ստեղծի և, ամենագլխավորը՝ տված նվերը ետ չվերցնի։

Ես կառաջարկեմ, որ Լենինն ու Աստված «բարձր մակարդակի» մի խորհրդակցություն ունենան և տնօրինեն մարդկանց բախտը։

Երևանից մեր աքսորվելու օրը չեմ կարող ասել՝ ամպ էր, թե արև։ Մենք դուրս էինք գալիս բանտի մութ նկուղներից։ Իսկ այդպիսի մթությունից դուրս եկողը շատ երկար չի կարողանում որոշել երկնքի ու երկրի տեղն անգամ։

Վերջին տեսակցությանը կինս բերել էր իմ ձմեռային վերարկուն և մի կրծած խնձոր։

- Ինչ խնձոր է սա,- հարցնում եմ։

- Մի շաբաթ առաջ մի կիլո խնձոր էի առել, պահել՝ քեզ բերելու համար, Աշոտը տեղն իմացել, գնացել, բոլորը կերել էր. այս կրծած խնձորը ձեռքից եմ խլել։ Ինչ անեմ, ուրիշ բան չունեի տանը՝ քեզ բերելու համար։

Մինչև անգամ այս բանը լսելով՝ լաց չեղա։ Բայց ծիծաղել էլ չկարողացա, միայն ասացի.

- Ա՛յ կնիկ, մեր ամենասիրելի երեխայի ձեռքից խլել ես, որ ինձ բերես։ Այն երեխայի, որի հոգուն ես օրական հազար անգամ էի մեռնում... Տա՛ր խնձորը, թո՛ղ շարունակի ուտել։ Հե՛ռ տար նաև վերարկուս։ Վերարկուս ես ձեռք եմ բերել կյանքիս գնով, չէր ճարվում։ Վերարկուն արժեք է, ու դու երկրորդը չես ճարի, իսկ մարդն արժեք չունի։ Եթե ես չվերադարձա, դու ամեն րոպե կարող ես քեզ համար մարդ ճարել՝ անգամ առանց հերթ կանգնելու, իսկ վերարկու՝ երբեք։

Ես բռնակալ մարդ չեմ եղել և այս խոսքերիցս հետո թույլ տվի նրան արտասվելու...

Երբ պահն եկավ մեզ անջատելու, ասացի.

- Գնա՛, կնի՛կ, սրանից հետո ինքս ինձ չեմ պատկանում։ Չպատկանելով ինձ՝ չեմ պատկանում նաև քեզ ու երեխաներիս։ Մենք հիմա նստած ենք մի տարերային պտուտակի վրա ու պիտի պտտվենք աջից ձախ։ Մեզ տանում է «սատանայի քամին»։

Եվ իբրև ապրանք՝ մեզ թիմեցին վագոնները, ու գնացքը սուլելով հեռացավ այն վայրից, որից երբեք չէինք ցանկանա հեռանալ...

Ես երկար չէի իմանում, թե աքսոր եմ գնում։ Կարծում էի՝ երեկոյան կվերադառնամ իմ տուն, բարձրաձայն երեք երեխաների հոգուն կմեռնեմ, ցածրաձայն՝ կնոջս, փոքրիկս անմիջապես ձեռքը

գրպանս կխոթի ու դատարկ գտնելով՝ կսկսի լաց լինել, չկատարելու համար կխոստանամ անպայման վաղը բերել։ Հետո կանցնենք օրվա դեպքերին, հաջողության վրա կուրախանանք, անհաջողությունների վրա կտխրենք։

Եվ առհասարակ, ինչպես ապրում են ազատ, աքսոր չգնացող մարդիկ։

Ես նման էի հոսպիտալում պառկած վիրավորի, որ դեռ չգիտի, թե ոտքերը... կտրված են։

Չգիտեի, որ այսուհետ ոչ ոքի հոգուն չպիտի մեռնեի և առհասարակ պիտի փոխեի խոսակցությանս այն տոնը, որով խոսում էի հարազատներիս հետ։

Ես իմ այս խաբկանքի մեջ այնքան առաջ գնացի, որ մոռանալով, որ կալանավոր եմ, սկսեցի ազատ մտածել։

Ու գնացի մինչև Մարքսն ու Էնգելսը։

Ասում էի՝ սոցիալիզմի այս հիմնադիրները, որոնք իրենց կյանքը նվիրեցին բանվոր դասակարգին, արդյոք մի օր երեկոյան տուն գալիս մեռնե՞ն այդ դասակարգի հոգուն։ Եթե չմեռան, ուրիշ ինչ կերպ արտահայտեցին իրենց սերը դեպի այդ դասակարգը։

Ու չէի կարող հաստատ մի բան ասել, որովհետև չէի կարդացել Մարքսի «Կապիտալը» և չգիտեի թե գիտական սոցիալիզմի մեջ մարդիկ առհասարակ իրար հոգուն մեռնո՞ւմ են, թե՞ ոչ։

Բայց Մարքսը միայն հորինեց և չգործադրեց իր տեսությունը։

Պրոլետարիատի հոգուն պիտի մեռներ Լենինը, որն իրագործեց Մարքսի տեսությունը։

Վտարանդի Լենինն էլ, երբ կարոտով Շվեյցարիայից Ռուսաստան եկավ, փոխանակ ռուսների հոգուն մեռնելու՝ նրանց հավաքեց բանտերը լցրեց և սկսեց մեկ-մեկ հանել ու... սպանել։

Գաղափարի և նրա գործադրության մեջ այսքան տարբերությո՞ւն, մտածում էի ես։ Գաղափարը՝ գզած բամբակ, իրականությունը՝ ...սրած կացին։

Ինձ այս մտքերից արթնացրեց կողքիս նստած կալանավորը՝ մշտելով կողս։

- Ի՞նչ հանցանքում մեղադրեցին քեզ,- ասաց։

- Ա՜խ, ինչո՞ւ արթնացրիր ինձ։ Պահ գտա՞ր հարցնելու. քսան տարի ժամանակ ունեինք։ Մի ուրիշ օր կհարցնեիր։

Բայց քանի որ արթնացել էի, ստիպված պատասխանեցի.

- Հանցանքներս երեսուներկուսն էին. մեկն եմ միայն հիշում. այն, որ ես իմ սենյակում Ստալինի պատկերը չէի կախել:

- Ես կախել էի,- ասաց կողքիս նստողը:

- Հապա ինչո՞ւ ձերբակալվեցիր,- հարցրի իմ հերթին:

- Փորձանք պատահեց: Սենյակը սպիտակեցնում էինք. վրձինից գաճ կաթեց Ստալինի բեղի մի մասի վրա, և սպիտակեց: Երբ փորձեցինք թաց շորով սրբել, գաճը տարածվեց և Ստալինի երկու բեղերն էլ սպիտակեցին:

Կինս ասաց.

- Այս չեղավ, նկարը վար առ, պահենք մինչև նրա ծերանալը: Որ ծերացավ, ու բեղերը սպիտակեցին, նոր այն ժամանակ կկախենք:

- Կնի՛կ,- ասում եմ,- նա իր բեղերը ներկում է, նրան ծերանա՞լ կա:

- Տներս քանդվեց ուրեմն,- ասաց կինս, և իսկապես էլ տներս քանդվեց:

Խուզարկելիս հայտնաբերեցին նկարը և ձևակերպելով «մահափորձ Ստալինի վրա»՝ քսանհինգ տարի տվին:

- Էլի լավ ես պրծել,- մեջ մտավ երկրորդ կալանավորը: Մեր փոքր սենյակում ես փոնքտացի, մի կաթիլ թուք թռավ Ստալինի երեսին: Դրա համար ինձ գնդակահարություն որոշեցին, վերջում տվին ցնահ տաժանակրություն:

- Դուք այսպես թե այնպես մի հանցանք գործել եք, բա ի՞նչ ասեմ ես,- ասաց մի երրորդ կալանավոր,- որ տաժանակրության եմ գնում՝ առանց իմանալու իմ հանցանքը:

- Քեզ ոչի՞նչ չասացին,- հարցրեց առաջին կալանավորը:

- Ոչինչ: Իմ դատավորն ասաց. «Ես ֆուտուրիստ գրող եմ եղել երկար ժամանակ և միշտ փախել եմ ընդունված շաբլոններից: Ես վերնագիրը հոդվածի սկզբում չէի դնում, այլ հոդվածը վերջացնելուց հետո, որպեսզի հետաքրքրություն առաջացներ ընթերցողներիս մեջ:

Այսպես էլ ես իմ ոչ մի երեխային ծնվելիս անուն չեմ դրել, սպասում եմ, որ մեռնելուց հետո դնեմ: Այնպես որ քո մեղքը հիմա չեմ հայտնի, գնաս աքսոր, գաս, նոր կհայտնեմ...»:

- Բայց դու կարող ես աքսորում մեռնել,- նկատեց երկրորդ կալանավորը:

- Մեռա, «հետմահու» կհայտնի: Ինչո՞ւ կարելի է հետմահու ար-

դարանալ, հետմահու շքանշաններ ստանալ, չի՞ կարելի հետմահու սեփական դատավճիռը լսել…

- Գուցե դու արդար ես,- նկատեցի։

- Արդարությունը հետմահու ավելի լավ է։ Չէ՞ որ արդարները հետմահու են գնում արքայություն։ Կենդանությանը արդարությունն ո՞ւմ է պետք։

Հետո վագոնում լռություն տիրեց։

Եվ վագոնը հոգեբանորեն դատարկվեց մարդկանցից, բոլորը մտքով գնացին իրենց տները։

Ես էլ, իհարկե։

Մենք ուշքի եկանք և շարունակեցինք աքսոր գնալ այն ժամանակ, երբ մեր կյանքի տերն ու տնօրենը՝ էշելոնի պետը, մի սվինավոր պահակի հետ ներս մտավ ու սկսեց ներկա-բացակա անել։

Անունները կարդալիս նկատեցի՝ ոչ ոք չէր ցանկանում «ներկա» լինել։ Բայց լինում էին չուզելով։ Ինչ՞ եր չէինք տա, եթե մեզ հաջողվեր «բացակա» լինել…

Երբ դժբախտաբար «ներկա» էինք, շարունակեցինք մեր երկար ու անվերջանալի ճանապարհը։

Նման դեպքերում մարդիկ աշխատում են մի սրտակից ընկեր ճարել և նրանով մխիթարվել։

Եվ երևակայեցեք՝ այդպիսի ընկերն ինքն իրեն է ճարվում։

Երբ մեծ բազմություն է վագոնում լցված գնում, մանավանդ եթե վագոնն էլ մի փոքր ցնցվում է, ամբոխն ինքն իրեն դասակարգվում է, և նման բնավորություններն իրար գտնում են ճիշտ այնպես, ինչպես ասենք մի ամանի մեջ լցված ջուրը, յուղն ու սնդիկը։

Ցնցումից պարզվեց, որ վագոնում երեք մարդ կար իմ բնավորությամբ, և մտերմացա հետները։

Բայց ավա՜ղ, իզուր տեղը։

Դա նոր տանջանքի աղբյուր է, որովհետև մենք մեզ չենք պատկանում։ Մեկ էլ տեսար ներս մտավ «նաչալնիկը» ու քեզ հեռավոր արևելք ուղարկեց, ընկերոջդ՝ մոտավոր, ու դուք իրար երես հավիտյան չեք տեսնի։

Սրտումդ մի քաղցր հուշ կթողնի ու կգնա։

Այնպես, ինչպես մսագործը մտնի ոչխարի փարախը, մեկին արոտի հանի, մեկին վաճառի, մյուսին մորթի։

Եվ այդպես էլ եղավ:

Մի ընկերոջս Բաքվի բանտում թողին, մեկին՝ Խարկովի, մյուսին՝ Գորկու, ու ես մնացի մենակ և սպասում էի, թե գնացքի ցնցումն ինչ նոր ընկեր կբերի ինձ:

Ես ասել եմ արդեն, որ վերարկուս չվերցրի հետս և Սիբիր էի գնում ամառային կոստյումովս:

Գորկիում, կարո՞ղ եք երևակայել, բանտապետը նկատեց այս բանը և ինձ կանչելով՝ հնոտի մի շինել հագցրեց:

Ո՞վ կարող էր երևակայել, որ բանտապետն էլ կարող է խիղճ ունենալ...

Ճիշտ է, հնոտի, բայց ի վերջո խիղճ:

Բայց շինելը շատ էր երկար, քայլելու համար ես քամելիազարդ տիկնոջ նման մի ձեռքով քղանցքները պիտի վեր բարձրացնեի:

Ոչինչ, թող որ բարձրացնեմ:

Գորկիում մեր վագոնը փոխվեց: Մենք պիտի գնայինք Սիբիրի գնացքով, և ես նոր վագոնում նոր ընկերներ ճարեցի, միայն ոչ թե ըստ բնավորության, այլ ըստ տարիքի:

Բոլոր առողջ, կայտառ երիտասարդները, որոնք բոլորն էլ տրոցկիստներ էին, բարձրացան, տեղավորվեցին նառերի վրա, իսկ մենք՝ չորս ծերունիներս, մնացինք վագոնում կանգնած՝ չունենալով անգամ նստելու տեղ:

Այստեղ աքսորյալները դասակարգվեցին արդեն ոչ թե ըստ վագոնի ելևէջների, այլ զուտ ուժի, բռնի ուժի:

Ուժեղ ես՝ թռիր նառի վրա ու պառկիր՝ մեկնելով ոտքերդ ինչքան կուզես երկար, իսկ եթե ուժ չունես, պատժված երեխայի նման ոտքի կանգնիր:

Մանավանդ, երբ ուժ չունես ոտքի վրա կանգնելու:

Այստեղ ես իմացա, որ անգութ լինելու համար պետք է անպայման երիտասարդ լինել: Այնպես, ինչպես բոլոր չեկիստները երիտասարդ են:

Ամբողջ քսանչորս ժամ մեջքի վրա պառկել և մի երկու ժամ իրենց տեղը չզիջել չորս ծերունիների, որ իրենց աչքերը մի երկու րոպե փակեն, դա միայն երիտասարդ տրոցկիստները կարող են:

- Տրոցկիստները սոցիալիստ չե՞ն,- հարցրեց ծեր ընկերներիցս մեկը, որ բժիշկ էր:

- Սոցիալիստներ են,- պատասխանեցի։

- Սոցիալիստն այսքան անգութ կլինի՞։

- Սրանց անգթությունը ժամանակավոր է,- ասացի ու սկսեցի բացատրել։

- Լենինիստներն ու տրոցկիստները սոցիալիստների տարատեսակներ են։ Լենինը ասում է՝ մի երկրով կարելի է սոցիալիզմ կառուցել, իսկ տրոցկիստներն ասում են՝ չէ՛, պետք է ամբողջ աշխարհը հեղափոխվի, որ կարելի լինի սոցիալիզմ կառուցել։ Երբ աշխարհը հեղափոխվեց, նոր այն ժամանակ մարդասեր կդառնան և կսկսեն հաշվի առնել մեզ նման ծերերի վիճակը։

- Այդ հաշվով լենինիստները մարդասե՞ր են։

- Օրենքով պետք է լինեն։

- Բայց չեն, չէ՞։ Լենինիստները աքսորում են, տրոցկիստները՝ ճանապարհին տանջում։ Ո՞ւր փնտրենք սոցիալիստի մարդկայնությունը։

- Պետք է չփնտրես, որ գտնես։

Երբ քնելու ժամը հասավ, մենք՝ չորս տկարներս, նստեցինք հատակին՝ գլուխներս իրար հենելով, ինչպես զինվորներն են հրացաններն իրար հենում զինավարժության հանգստին, և աշխատեցինք ննջել։

Դժվար էր ասել, թե իրար հենված այս չորս գլուխներից որն էր լիքը, որը դատարկ, բայց արտաքուստ փափուկ էին։ Նրանք երեքն էլ կրում էին մորթե փափախներ։ Իմն էր միայն կարտուզ*, որի առաջամասի կարտոնը** արգելում էր միավորվելու, և ես ստիպված էի այն դեպի ետև դարձնել։

Այս ձևով քիչ ննջեցինք, շատ ննջեցինք, Աստված գիտի, միայն առավոտյան, երբ արթնացանք և կամեցանք վեր կենալ, տեսանք՝ կպել ենք գետնին…

Ուսումնասիրությունը պարզեց հետևյալը։

Վագոնում զուգարանի բացակայության պայմաններում տրոցկիստները գիշերը միզել էին հատակին՝ կազմելով իրար խճճված մի դելտա, դելտան հոսել, մեր տակն էր լճացել, սառույց դարձել և մեզն առնելով մեր վերարկուների փեշերը՝ մեզ ամուր գամել էր հատա-

* Կարտուզ *(картуз)* - ռուս. հովարով գլխարկ։

** Կարտոն *(картон)* - ռուս. ստվարաթուղթ։

կին՝ դարձնելով մեզ մի Միջագետք՝ Եփրատ ու Տիգրիսի արանքում…

Վեր կենալու համար կտրեցինք մեր վերարկուների՝ սառույցի մեջ մնացած մասը։

Տրոցկիստները հռհռում էին այս ուրախ տեսարանի վրա։

Եվ որովհետև հույս չկար, որ մինչև հաջորդ գիշեր համաշխարհային հեղափոխություն կատարվեր, չորսս ի մի գալով մտածեցինք՝ ինչպես անենք, որ հաջորդ գիշեր ջրհեղեղից ազատվենք։

Իսկ ինձ ծանոթ էր ջրհեղեղից ազատվելու երկու միջոց միայն. մեկն այն, որ Նոյի նման տապան շինենք, մեկ էլ այն, որ աշտարակ կառուցենք ու նրա ծայրը բարձրանանք։

Եվ որովհետև իրականում այդ անհնար էր, ուստի ես սկսեցի տապանի կառուցումը… երևակայությանս մեջ։

Երբ տապանի կառուցումը վերջացրի, ամեն անասուններից, ամեն սողուններից ու գազաններից մի-մի զույգ տապանս վերցրի։ Մի զույգ ավանակ՝ արու և էգ, մի զույգ բորենի՝ արու և էգ, մի զույգ կատաղած վագր՝ արու և էգ։ Եվ այսպես ներս առա բոլոր գազաններին՝ բացի… տրոցկիստներից։

Էլ չեմ շարունակի։

Եթե ասեմ, որ քսան տարի ապրեցի այս տրոցկիստների հետ, դուք գաղափար կկազմեք իմ քաշած տանջանքների մասին…

Ինչպես են աստվածներն ուղղում իրենց սխալները

Վաղուց արդեն գոյություն չունի այն կարծիքը, թե աստվածներն անսխալական են։

Աստվածներն այնպիսի սխալներ են գործում, որ մարդ երևակայել չի կարող։

Չե՞ք լսել այն առածը, որ ասում է. «Գիժ աստված մի քար գլորեց անդունդը, հազար խելոք մարդ չկարողացան հանել»։

Աստվածային սխալները տարբեր են իրենց մասշտաբներով և դրանք ուղղելու ձևերով։

Իսրայելի աստված Եհովան իր օրենսդրությունը կազմելիս մտցրեց երկու կետ, այն է՝ «աչքի տեղ՝ աչք, ատամի տեղ՝ ատամ»։ Բայց հետագային, տեսնելով, որ այդ օրենքը մարդկանց մեջ վրեժխնդրություն է բորբոքում, և եթե այդ ընթացքով շարու-

նակվի, կարճ ժամանակում ո՛չ մարդու երեսին աչք կմնա, ո՛չ բերանին ատամ, փոխեց այդ օրենքը։

Ռուսաստանի աստված Լենինը երկիրը սովետական դարձնելիս հարուստների ինչքը ոչնչացրեց և հրամայեց երկրին աղքատանալ։ Բայց կարճ ժամանակից զգալով իր սխալը ՆԷՊ[170] մտցրեց և հրամայեց հարստանալ։

Եվ ժողովուրդը հարստացավ։

Ռուսաստանի երկրորդ աստված Ստալինը հետո հրամայեց նորից աղքատանալ և ստեղծեց կոլխոզ, որ այլևս երբեք չհարստանան մարդիկ, և այսպես շարունակվեց Ռուսաստանի կյանքը՝ մե՛կ այսպես, մե՛կ այնպես։

Բայց այս չէ հետաքրքիրը։ Հետաքրքիրն այն է, թե ինչ տարբերություններ կան աստվածային այդ ուղղումների մեջ։

Մինչ Լենինն ու Ստալինը մի կարճ հրամանով փոխում էին իրերի վիճակը՝ իրենց ժողովրդին անվերջ աջ ու ձախ կողքերին շուռումուռ տալով, Իսրայելի աստծու մոտ ահագին բարդ պատմություն էր։

Եհովան պետք է փնտրեր, գտներ մի կույս աղջիկ երկրի վրա. մի բան, որ գիտեք, թե ինչքան դժվար բան է։ Հետո Գաբրիել հրեշտակին ուղարկեր՝ նրան «ավետիս» տալու։ Կույսը պիտի ծներ մի Քրիստոս, Քրիստոսը երեսուն տարի ապրելուց հետո պիտի խաչվեր, թաղվեր ու երեք օրից հարություն առներ, ապա քառասուն օրից երկինք համբառնար։

Եվ ինչի՞ համար էր այս ձգձգված պրոցեդուրան*՝ գիտե՞ք։ Նրա համար, որ իր հոր «աչքի տեղ՝ աչք, և ատամի տեղ՝ ատամը» փոխեր, դարձներ՝ «ով քո երեսին ապտակի, երկրորդ երեսը դարձրու ու երկու շապիկներիցդ մեկը չունեցողին տուր»։

Այսպիսի տնայնագործ մեթոդով սխա՞լ կուղղեն։

Եթե Լենինն ու Ստալինն էլ կամենային կույս մարիամների միջոցով իրենց գործած սխալներն ուղղել, էլ Ռուսաստանում Մարիա՞մ կմնար, այնքան որ շատ էին նրանց սխալները և անվերջ պետք է ուղղեին։

Բանն այն է, որ Իսրայելի աստծու սխալն ուղղելու ձևը և՛ երկար է, և՛ ապարդյուն։

Այսքանից հետո ոչ մեկը Քրիստոսի պատվիրանը չպահեց.

* Պրոցեդուրա (procedere) - լատ. ընթացակարգ։

մարդիկ շարունակում էին առաջվա պես իրար աչքերը հանել ու ատամները փշրել:

Այս բոլորից հետո Մարիամն իրավունք չունի՞ ասելու Աստծուն.

- Տե՛ր, եթե մարդիկ չէին լսելու քո երկրորդ պատվիրանը, ինչո՞ւ այսքան նեղություն պատճառեցիր ինձ և իմ թշնամիներին խոսեցնել տվիր ինձ վրա...

Եվ իրավունք ունի Մարիամը:

Բայց եկեք մենք այնքան էլ չմեղադրենք Եհովային: Եհովան առաջին աստվածն էր, մարդիկ՝ երկրպագելու անսովոր:

Մարդկությունը հետո միայն վարժվեց պատահած աստծուն երկրպագել և նրա բոլոր հրամանները կատարել:

Ներկայիս մարդը գրաստ է. մինչև իր մեջքին աստված չլինի՝ մի քայլ չի գցի...

Օրենքներից շրջանցում

Այս գիշեր երկնքում մեծ իրարանցում էր:

Մովսես մարգարեն և Քրիստոսը վաղուց էին իրար վրա ատամներ սրում, այս գիշեր վերջապես բախվեցին իրար:

Պատճառը 20-րդ դարի երկու մեծ ոճրագործներն էին:

Մովսեսը պնդում էր, թե նրանց իր օրենքով պիտի դատի, Քրիստոսը թե՝ իր օրենքով:

Եվ ձայները բարձրացրած՝ իրար ինչ ասես որ չէին ասում:

Աղմուկի վրա երբ Աստված դուրս եկավ, Մովսեսը բորբոքված ասաց նրան.

- Աստվա՛ծ, որդուդ խրատի՛ր, թե չէ վերջում վատ կլինի...

- Ի՞նչ է պատահել, ա՛յ Մովսես:

- Ասում է Թալեաթին և Ստալինին յոթանասունյոթ անգամ պետք է ներել, ո՞նց կարելի է: Թալեաթ պեյը կոտորեց ողջ տաճկահայությունը՝ թվով մեկուկես միլիոն: Այս հանցանքը յոթանասունյոթ անգամ ներելու համար պետք է կոտորված հայությունն անվերջ հարություն առնի ու նորից կոտորվի, դա հնարավո՞ր բան է:

- Իսկ մի՞թե կարելի է մովսեսական օրենքով դատել դրանց,- խոսք առնելով ասաց Քրիստոսը,- Թալեաթ պեյը կոտորել է մեկուկես միլիոն մարդ, իսկ ընկեր Ստալինը՝ քսան միլիոն: Որպեսզի

աչքի տեղ՝ աչք ու ատամի տեղ՝ ատամ լինի, պետք է Թալեաթը մեկուկես միլիոն անգամ մեռնի, Ստալինը՝ քսան միլիոն անգամ, որ հավասարակշռությունը չխախտվի: Այդ հնարավո՞ր է:

- Ինչո՞ւ հնարավոր չէ: Ստալինն արդեն երկու անգամ մեռել է: Մեկ մեռավ, թաղեցին, մեկ էլ գերեզմանից հանեցին, այրեցին,- ասաց Մովսեսը:

- Երկու անգամը քսան միլիոն չէ,- ռեպլիկ տվեց Քրիստոսը:

- Երկուսդ էլ իրավացի եք,- մեջ մտավ Աստված,- իրավցնե, մեր ներկա օրենքներով դժվար է նրանց դատել: Թող մնա, տեսնենք՝ մի երրորդ օրենք կարո՞ղ ենք ստեղծել: Ես այս օրենքներն ստեղծելիս չէի կարող կարծել, թե աշխարհում այսպիսի մեծ ոճիրներ կարող են պատահել...

Սատանան, մութ ամպի ետևը մտած, լսում էր այս խոսակցությունը: Երբ իմացավ, որ չեն դատվելու, վազեց երկու ոճրագործների մոտ, որոնք, շնչները պահած, իրենց դատապարտությանն էին սպասում և ասաց.

- Դուք այնպիսի մի հանցանք եք գործել, որին պատիժ չկա: Ազատ եք, գնացեք ձեզ համար ապրեք:

Ուրախությունից Թալեաթն ու Ստալինը գրկախառնվեցին:

Երբ բաժանվեցին, Ստալինն ասաց.

- Թալիա՛թ ջան, արի երկիր իջնենք և մեր գործածից ավելի մեծ հանցանք գործենք:

- Ախր, Տաճկաստանում էլ հայ չի մնացել, որ կոտորեմ:

- Հայ չկա՝ թուրք կոտորիր: Ազգությունն ի՞նչ նշանակություն ունի, ես վրացուն, հային, ռուսին հավասար կոտորում էի:

- Ի՞նչ ասելով կոտորեմ:

- Ես սոցիալիզմին հասնելու համար էի կոտորում: Իսկ եթե դու ուզում ես ավելին կոտորել, սոցիալիզմից մի ավելի անհավանական բան ընտրիր:

- Մի՞թե սոցիալիզմից ավելի անհավանական բան կա աշխարհում,- հարցրեց Թալեաթ պեյը:

- Չկա՝ դո՛ւ էլ սոցիալիզմով կոտորիր, եթե քսան միլիոն մարդ կոտորելով կբավականանաս,- ասաց Ստալինը:

- Ուզեմ-չուզեմ, ճա՞րն ինչ, պիտի բավարարվեմ,- ասաց Թալեաթ պեյը խեղճացած...

Անծանոթության տեսակները

1935 թվին, երբ ես Չեկայում բռնված էի, իմ քննիչն օրական տասն անգամ կանչում էր իր մոտ և ինձ համար բոլորովին անծանոթ անուններ տալով՝ հարցնում էր.

- Դու ճանաչո՞ւմ ես Դանիելյանին։

- Ո՛չ։

- Ղազարյանի՞ն։

- Ո՛չ։

- Նազարյանի՞ն։

- Ո՛չ։

Եվ այսպես՝ տասնյակ մարդոց անուններ։

... Կարծում եք վախից էի ասում՝ չեմ ճանաչում։ Բոլորովին ո՛չ։ Ես Չեկային իսկի շան տեղ չեմ դրել։

Մի անգամ, երբ մի չեկիստ առաջարկեց իրենց լրտեսը դառնալ, այնպես գոռացի վրան, որ իր եկած ճամփան մոլորվեց։

Ո՛չ։ Ես իրոք չէի ճանաչում այդ մարդկանց և առաջին անգամ էի լսում նրանց անունները։

Դիվանագիտության մեջ, սակայն, ճանաչումն այլ պատկեր է ներկայացնում։

Ամերիկան իր հինգ մատի պես ծանոթ է Չինաստանին։ Քարտեզի վրա գիտի նրա տեղը, գիտի նրա բնակչության թիվը, կենցաղն ու կուլտուրական մակարդակը։ Երբ Չան Կայշիին դուրս էր վռնդում երկրից, մինչև անգամ կռվեց նրա հետ ի պաշտպանություն վերջինիս։

Այսքան ծանոթ լինելուց հետո էլ, եթե Ամերիկային հարցնես՝ Չինաստանին ճանաչում ես, կպատասխանի՝ չէ։

Եթե Ամերիկան Չեկա ընկներ և քննիչի հարցին «չէ» պատասխաներ, ճիպոտի այնպիսի հարվածներ կստանար իր հետույքին, որ «չէ»- ն անմիջապես «հա» կդառնար։

Ամերիկան մի կողմ թողնենք, դառնանք աշխարհի մյուս պետություններին։

Այս րոպեիս Արևելյան Գերմանիային ոչ մի պետություն չի ճանաչում՝ բացի Սովետական Միությունից։

Եթե իմ քննիչն այդ պետություններին կանչի և հարցնի, հազիվ

թե նրանք համաձայնվեն ասել «չէ»։ Նրանք ինձ նման անվախ չեն, և անմիջապես կասեն «հա», մանավանդ, որ իսկապես էլ ճանաչում են։

Իսկ Արևելյան Գերմանիայի ցանկությունն էլ հենց այդ է։

Իբրև գրող ինձ բոլորն են ճանաչում։

Բայց ես ինձ ճանաչողներից ոչ ոքի չեմ ճանաչում, որովհետև նրանք գրող չեն։

Մարդիկ, երբ փողոցում ասում են՝ բարև Ձեզ, ես ասում եմ.

- Աստծու բարին, բայց ես ձեզ չեմ ճանաչում։

Պատահում են նաև այնպիսիք, որոնց իրոք ճանաչում եմ, բայց չեմ ուզում ճանաչել։

Մեկը կա, կնոջս կողմից բարեկամ է ինձ. երբ մի անգամ սկսեց գովել Սովետական Միությունը, ես պարզապես դուրս արի տանից և այս րոպեին չեմ ուզում ճանաչել նրան։

Պատահել է և հակառակը։ Ուրիշներն ինձ չեն ճանաչել։

Մենք Զարենցի հետ մոտ ընկերներ էինք. երբ նրան թերթում ծաղրեցի, նա ինձ այլևս չճանաչեց։ Ես էլ նրան, և մենք փողոցով անցնելիս չէինք բարևում իրար։

Պիտի գնայի, աղաչեի Զարենցին, որ ինձ ճանաչե՛ր։

Բնավ երբեք։

Ես այնքան հպարտ եմ, որ մեռնեմ այդ բանը չեմ անի։

Բայց դուք մեր սա ամենակարող Աստծուն նայեցե՛ք։

Սովետական կառավարությունն Աստված չի ճանաչում։ Եկեղեցիները շինել է կոլխոզի պահեստ, իսկ քահանաներին ու վարդապետներին՝ քշել Սիբիր։

Եվ որովհետև կոլխոզը բերք չի ստանում, որ լցնի եկեղեցին, այս րոպեիս երկրի բոլոր եկեղեցիները մնացել են թափուր, ո՛չ Աստված կա դրանցում, ո՛չ ապրանք…

Ես Զարենցի մի վիրավորանքին չդիմացա և խզեցի իմ բոլոր կապերը նրա հետ. այս ամենակարող Աստված, տիեզերքի Աստված ինչպե՞ս չի վիրավորվում սովետների այս արարքից, դեռ նրանց հետ կապ է պահպանում, համարում է իր ստեղծածներ և խոստանում է երկնային արքայություն։

Սովետական Միությունն ասում է.

- Ես սերված եմ կապիկից, ինձ հետ գործ չունես, հեռացի՛ր իմ երկրից։

Բայց Աստված, այս բոլորն առ ոչինչ համարելով, դարձյալ մտնում է, իր ծառայությունն առաջարկում և նրա բնակչության հոգին առնում...

Ես կյանքումս այսպիսի բան չեմ տեսել, և եթե դեմս Աստված կանգնած չլիներ, ես նրան կասեի.

- Արածդ անամոթություն է։

Երկնքում

Սոսկալի տոթ էր։

Արևն իր ետևի կողմից կրակ էր թափում երկնային բնակիչների վրա։

Երկնքի հանգստի ժամն էր։ Արդարները՝ երջանկությունից հոգնած, մեղավորները՝ տանջանքից ձանձրացած, դուրս էին եկել իրենց դժոխքից ու արքայությունից՝ մի փոքր շունչ առնելու։ Արդարները՝ Աստծու հսկողության տակ, մեղավորները՝ իրենց դժոխքի վարիչի։

Երբ հանգիստն ավարտվեց ու յուրաքանչյուրն իր հարկաբաժինը քաշվեց շարունակելու իր «գործը», Աստվածն ու դժոխքի վարիչն իրար մոտեցան։

- Ինչպե՞ս են գնում դժոխքի գործերը,- հարցրեց Աստված։

- Շատ վատ,- ասաց դժոխքի վարիչը,- ո՛չ կարաս եմ ճարում, ո՛չ կուպր։ Անցել եմ հանրակացարանային տանջանքի՝ մի քանի հոգու մի կարաս։

- Անթույլատրելի է։ Ով կյանքում «ասաբնյակում» է ապրել, էլի ոչինչ։ Բայց կյանքում «օբշչի» բնակարանում ապրողին երկնքում նորից «օբշչի» բնակարան տալ, դա անխղճություն է,- ասաց Աստված։*

- Կարաս տո՛ւր, առանձին տանջեմ,- կտրուկ ասաց սատանան։

Աստված մտածմունքի մեջ ընկավ։

Իսկ սատանան խոսակցության թեման փոխեց։

- Մեղավորներից շատերն ուզում են արքայության պատն անցնել՝ իրենց հարազատներին տեսնելու, ինչպես Գերմանիայում են անում։

---

* Ասաբնյակ ***(особняк)*** - ռուս. առանձնատուն։

- Գերմանիայում արևմտյան մասից են միայն թույլ տալիս արևելյանն անցնելու, իսկ արևելքից արևմուտք՝ ոչ: Այդ հաշվով միայն արքայությունից դժոխք կարելի է թույլ տալ: Եթե ոչ, կանցնեն արքայություն ու այլևս չեն վերադառնա դժոխք:

Սատանան հանկարծ ասաց.

- Աստվա՛ծ, ուզում եմ անցնել թոշակի:

- Ինչո՞ւ,- զարմացավ Աստված:

- Երկրի վրա մարդկությունը, փոխանակ սպառվելու, քանի գնում շատանում է, ես քանի՞ տարի մնամ, մինչև նրանց բոլորին տանջեմ:

- Զոկի՛ր դժոխքից մի քանի կտրիճ տղերք, ուղարկի՛ր թող բոլորի հոգին առնեն,- ասաց Աստված:

- Ո՞ւմ ուղարկեմ:

- Լենինին, Ստալինին, Խրուշչովին...

- Խրուշչովը դեռ չի մեռել:

- Չի մեռել, բայց մեռածի հաշիվ է: Սովետական կարգերում, մեկը որ պաշտոնանկ եղավ, նրա վրա մարդ չի թքի:

- Բացի այդ, նա երկարատև մահով է մեռցնում մարդկանց: Փորձում է երկար ճառ ասել գլխին. չմեռավ՝ փողն է փոխանակում, որ ժողովուրդն աղքատության մեջ մեռնի, միսն ու յուղն է թանկացնում... Ես որքա՞ն ժամանակ սպասեմ, որ ժողովուրդը իսպառ ոչնչանա:

- Լավ, Խրուշչովին չես ուզում՝ Մուհամմեդին վերցրու, Լենկ Թեմուրին, Չինգիզ խանին և վերջապես Թալեաթ փաշային:

- Ի՞նչ ասեն, որ սպանեն:

- Թուրքերը թող պահանջեն մահմեդական դառնալ, Լենինն ու Ստալինը՝ բոլշևիկ: Ով անսաստեց հրամանը, սպանեն:

- Կկեղծեն մարդիկ: Ստից հավատափոխ կդառնան ու կազատվեն: Հավատքը ներքին գործ է և ստուգելը դժվար:

- Այն ժամանակ խիստ այլանդակ դեմքով մի մարդ ճարի՛ր և աշխարհ ուղարկի՛ր, թող ասի. «Ով իմ դեմքը չունենա, նրան կսպանեմ»:

- Որտեղի՞ց ճարեմ այդ այլանդակին:

- Բա՛ց արա Հոմերոսի «Իլիականը» և հանիր Թերսիտեսին[171] ուղարկիր: Որովհետև, ճիշտն ասաց, ես էլ եմ ձանձրացել այսպես

հատ-հատ մահերից։ Գիշերն անուշ քնիդ մեջ մեկ էլ տեսար՝ մի արդար ճրկ-ճրկ դրախտի դուռը ծեծեց։ Դե վեր կաց, գնա դուռը բաց արա։

Ասաց Աստված ու ավելացրեց.

- Համաձայն եմ քեզ հետ։ Եկ միանգամից վերջ տանք աշխարհին։ Լցնենք դժոխքն ու արքայությունը ու դռները փակենք…

Աշխարհի առաջին դասարանը

Ես, իմ ուսումն ավարտած, բացի աշխարհի դուռը և կամենում էի դուրս գալ։

Տեսա՝ մեկը վարանած կանգնած էր աշխարհի դռանը և չէր համարձակվում ներս մտնել։

Ինձ տեսնելով՝

- Դու այս աշխարհից ես,- հարցրեց։

Ասացի՝ այո՛։

- Ուզում եմ աշխարհ մտնել, բայց չգիտեմ պայմանները։ Ի՞նչ առարկաներից են քննություն պահանջում։

Զարմացա։

- Ա՛յ մարդ, ի՞նչ քննություն, մարդիկ ծնվում, աշխարհ են մտնում։

- Նորածին երեխան ի՞նչ խելք պիտի ունենա։

- Արդեն աշխարհ գալու համար խելք չպետք է ունենալ։ Խելք ունեցողն աշխա՞րհ կգա։

Մարդն ուրախացավ։

- Դու, ուրեմն, երևում է հիմար ես,- ասացի։

- Շատ, շատ։

- Իսկը քո տեղն է, ուրեմն, մտի՛ր։

Ասացի ու ավելացրի.

- Գիտե՞ս, որ երկիրն ես մտնում։

- Սովետական Միությունը չի՞ սա։

- Սովետական Միությունն է։ Բայց քեզ խորհուրդ կտայի նախքան մտնելը մի լավ աշխարհը ման գայիր։ Որովհետև, որ մտար, էլ չես կարող դուրս գալ։

- Ոչինչ, պատուհանից կնայեմ։

- Սովետական Միությունը ո՛չ դուռ ունի, ո՛չ պատուհան։
- Հապա օդ որտեղի՞ց է առնում։
- Երդիկից։
- Աշխատանք կա՞։
- Կա։
- Ոչինչ, կաշխատենք, կապրենք։
- Չաշխատե՛ս, որ աշխատես, չես ապրի։
- Հապա ինչպե՞ս։
- Ասա «հին բոլշևիկ եմ, պարտիայի անդամ եմ Քրիստոսի ծնունդից վաթսուն տարի առաջ», քեզ թոշակ կտան, կապրես։
- Իսկ հին բոլշևիկությունը արհեստ է , թե՞ առևտուր։
- Ո՛չ արհեստ է, ո՛չ առևտուր։ Մարդասպանություն է։
- Վա՛յ, աշխարհում մարդ էլ են սպանում,- վախեցավ խեղճ մարդը։
- Աշխարհում միայն մարդ են սպանում։ Մարդիկ ծնում, պատրաստում են, պատերազմը գալիս սրբում-տանում է։
- Ամուսնության հա՞րցն ինչպես է։ Կույս աղջիկ ճարվո՞ւմ է։
- Կույս աղջիկ չի ճարվում։ Մի հատ միայն կար, նրան էլ Աստված «ավետիք» տվեց։
- Այդ լավ չէ։
- Լավ է, վատ է՝ մեր երկիրն այս է։
- Իմ աչքերը մի փոքր լավ չեն տեսնում։ Այդ ոչի՞նչ։
- Մեր երկրում աչք հարկավոր չէ։ Յոթանասունյոթ տարի ապրել եմ, աչքս չեմ գործածել բնավ։ Թափ-թազա։ Ուզո՞ւմ ես հանեմ տամ քեզ։
- Առանց աչք ինչպե՞ս են ճանապարհ գնում։
- Մենք «առաջնորդներ» ունենք, որոնք մեզ տանում են, ուր հարկավոր է։
- Իսկ ո՞ւր են տանում։
- Դեպի սոցիալիզմ։
- Իսկ աչքը դրան կվնասե՞ր։
- Այո՛։ Եթե մարդիկ աչք ունենային, պիտի տեսնեին, որ սոցիալիզմը... գոյություն չունի։
- Հապա ի՞նչը գոյություն ունի։
- Ալան-թալան։

- Ես փող չունեմ, իմ ինչը պիտի թալանեն։

- Փող չունե՞ս,- զարմացա ես։ Առանց փողի եկել, ուզում ես աշխարհ մտնել...

- Փողն ինչի՞ն է պետք։

- Ամեն բանի։ Ենթադրենք մարդ ես սպանել, պիտի փող ունենա՞ս, որ դատավորին կաշառք տաս, ազատվես։ Երեխայիդ համալսարան պիտի ընդունել տաս. գլուխը՝ տորիչելյան դատարկություն։ Պիտի պրոֆեսորին կաշառե՞ս, որ ընդունի։ Քաղսովետը քեզ երկու սենյականոց բնակարան է տալիս. պիտի կաշառք տա՞ս, որ երեք սենյականոց ստանաս։ Պարապ ես, աշխատանք չունես. փող պիտի տա՞ս հիմնարկի պետին, որ քեզ աշխատանքի ընդունի։ Մանավանդ եթե գեղեցիկ աղջիկ չես... Այո՛, մեզ մոտ միայն պիտի կաշառես։ Աջ ոտք գցես՝ կաշառք, ձախը գցես՝ կաշառք։ Բարեբախտաբար միայն երկու ոտք ունես, եթե կենդանիների նման չորս ոտք ունենայիր, չորս անգամ պիտի կաշառք տայիր։

- Էհ՛ե, ինչքան դժվար է այս աշխարհ մտնելը,- ասաց նորեկը զարմացած։

- Եթե հեշտ լիներ, ես հիմա՞ր էի, որ դուրս գայի,- ասացի։

Մարդը սկսեց երկար մտածել։ Այնքան երկար, որ ես ստիպված ասացի համբերությունս հատած.

- Շո՛ւտ արա, վճռի՛ր, մտնելո՞ւ ես, թե՞ ոչ։ Ես աշխարհի դուռը փակում եմ։ Ժողովուրդը բաց դուռ տեսավ՝ միանգամից դուրս կգա, կփախչի։

- Հարցը ծանրակշիռ է, պետք է թույլ տաս մտածել։

- Մտածել։ Եթե թույլ տամ ամեն նորածնին այդքան մտածել, երեխան ոչ թե ինն ամսից, այլ ինը տարուց էլ աշխարհ չի գա։

- Դու ինձ շշմեցրիր։ Չգիտեմ՝ որտեղից սկսեմ, որտե՞ղ վերջացնեմ։

- Եղբա՛յր, շշմելու ի՞նչ կա,- ասացի ես մի փոքր բարկացած,- դու կպոռաս «պրոլետարնե՞ր բոլոր երկրների, միացե՛ք» ու կմտնես. մնացածը թող իրենց, նրանք ամեն ինչ կկարգադրեն։

- Պրոլետարներն ի՞նչ բանի համար պիտի միանան,- հարցրեց մարդն ավելի ապշած։

- Ի՞նչ քո գործն է։ Իսկի Մարքսն ու Էնգելսն էլ չգիտեն, թե ինչու պիտի միանան, իսկ դու ուզում ես իմանա՞լ։

Այսպես երկար խոսեցինք, վերջում, երբ տեսա՝ սրա Դավոն տունը չի, ասացի.*

*- Ման օլում**, դու աշխարհ մտնողը չես, որտեղից եկել ես, այնտեղ էլ վերադարձիր։*

Ու աշխարհի դուռը փակելով՝ ես իմ ճամփան գնացի, նա՝ իր։

Օազիս Սահարայում

Ես աշխարհում ծույլ ու անպետք տղաներ շատ եմ տեսել, բայց դրանցից ոչ մեկը չի հավասարվում իմ ավագ որդուն։

Ա՛յ մարդ, սա երկու տարի է դպրոցն ավարտել է ու անգործ ման է գալիս։ Ինչ գործի դնում եմ, չի գնում։

Ասում եմ.

- Քեզ պահեստապետի տեղ ճարեմ։

- Չէ,- ասում է,- պահեստապետ մտնեմ, անպայման պիտի ուտեմ, ինձ ազնիվ աշխատանք է հարկավոր։

- Պարապ ման գալն ազնիվ աշխատանք է։

- Ինչ անեմ,- ասում է,- պարապ մնալը գողությունից լավ է։

- Լա՛վ,- ասում եմ,- ա՛յ բալա, սովետական երկրում բոլորը գողությամբ են ապրում, ազնիվ աշխատանք փնտրեն ու սոված մեռնեն։ Դու տեսնում ես՝ կտորի խանութը թերաչափում է, մթերայինը՝ թերակշռում, գանձապահը մանրը չի տալիս, սափրիչը մորուքիդ կեսը կզակիդ է թողնում, շինարարը շինանյութի կեսն իր տուն է տանում, փաստաբանը կեսը ճառում, մյուս կեսը ուզում է, որ դատավորը զորությամբ հասկանա, դրան հակառակ՝ գրողն այնքան մեծ հատորներ է գրում, նախ, որ ոչ ոք չկարդա, հետո էլ՝ կարդա ու բան չհասկանա։ Խոհարարն իր եփած կերակուրն է համտեսում, զագսի վարիչը՝ իր պսակած հարսին։

Բոլորը, բոլորն ուտում են, դո՞ւ պիտի լինես միակ չուտողն այս աշխարհում։

- Կմեռնեմ, բայց չեմ ուտի,- վերջում վճռական ասաց իմ տղան։

Ինչ անեմ։ Մտածմունքի մեջ ընկա։ Այս լակոտին ես որտեղից ճարեմ մի գործ, որ ուտել հնարավոր չլինի։

---

* Դավոն տունը չի (բրբ.) - Դավիթի տուն մարդ չկա- խելք չունի։

** Ման օլում (mən ölüm) – թրք. փխբ. ինչ կլինի, լավ էլի, մարդ Աստծո։

Մտածեցի, մտածեցի ու, կարո՞ղ եք երևակայել, վերջապես ճարեցի երեք գործ, որտեղ մարդիկ աշխատում են ազնվորեն ու անհատապես չեն օգտվում։

Ասացի տղային.

- Արի քեզ չեկիստ դարձնեմ։ Աշխարհի ամենաազնիվ գործը։ Միայն ուրիշին կգնդակահարես ու ոչ մի գնդակ «դախլի» տակ չես թաքցնի քեզ համար։ Եթե չեկիստ լինեիր մարդու վայրենության ժամանակ, էլի կարող էիր սպանածներիդ ուտել, բայց մենք ներկայիս ապրում ենք այնպիսի քաղաքակիրթ դարում, որ գնդակահարում ու թաղում ենք...

- Չեմ ուզում,- ասաց տղան։

- Չես ուզում՝ արի բանտապետ դարձնեմ, որ ուրիշին բանտարկես ու ինքդ ազատ մնաս։ Այդ էլ չես ուզում՝ եկ գերեզմանոցի բանվոր դարձիր։ Ուրիշին կթաղես՝ ինքդ կենդանի կմնաս։

- Չեմ ուզում,- կրկնեց տղան։

- Չե՞ս ուզում, դուրս կորիր իմ տանից, ես ձրիակեր պահողը չեմ,- ասացի։ - Քեզ երեք օր ժամանակ։

Քաղաքակրթությունը տանում է մարդուն դեպի երջանկություն

Ո՛չ, չի տանում։

Քաղաքակրթությունը մարդու մեկ ցավը դարձնում է հազար։

Եվ այդ տեսեք, թե ինչպես։

Երբ նախապատմական մարդու փորը կուշտ էր, նա այլևս ոչ մի բանի մասին չէր մտածում. անտառի զովասուն ծառի տակ պառկած՝ զվարճանում էր Եվայի հետ։

Սա ես համարում եմ երջանկության գագաթ։

Այնուհետև մարդիկ քանի քաղաքակրթվեցին, այնքան երջանկության սարից վայր իջան, մինչև վերջապես վայր գլորվեցին ներկայիս քաղաքակրթության անդունդը։

Մարդը նախնական դարում օրվա որ ժամին էլ դուրս գար որսի, մի նապաստակ շալակին՝ տուն կգար։ Իսկ հիմա մեզանում մարդիկ, զամբյուղը ձեռին, ման են գալիս քաղաքիս խանութներն ու մի գրամ միս չեն ճարում։

Ճաշին էլ երեխաները դպրոցից պիտի գան, մարդը՝ աշխատանքից, ու կերակուր պահանջեն իրենց տանտիկնոջից:

Եթե հրաշքով մի տեղից էլ միս է ճարում (այն էլ ոչ թե իսկական միս, այլ միս հիշեցնող մի բան) շվարում կանգնում է տանտիկինը՝ չիմանալով ինչ գցի վրան: «Սետկայում» սոխ չկա, բողկ չկա, համեմ չկա, գազար չկա, բազուկ չկա...

Սև շուկայում էլ դրանք այնքան թանկ են, որ առնելու կարողություն չունի:

Հնում մարդը ման էր գալիս բոլորովին մերկ և ցույց էր տալիս մարմնի բոլոր մասերն առանց ամաչելու, որովհետև ինքը չէր իրեն ստեղծողը: Նա ասում էր՝ եթե մարմնիս վրա մի ամոթալի բան կա, թող ստեղծողն ամաչի, ինձ ինչ:

Բայց մենք այսօր ստեղծողի հանցանքը վերցնում ենք մեզ վրա, թանկ գնով կտոր առնում և այն ծածկում: Չենք ասում

- Ա՛յ ստեղծող, ինչո՞ւ ես մեզ ծախսի տակ գցում: Այնպես ստեղծիր մեզ, որ ծածկելու բան չունենանք:

Իսկ զգեստի տառապանքն անպատմելի է:

Մանավանդ կոշիկի՝ կանանց մոտ:

Կրունկները հարափոփոխ հիվանդի թևի տակ դրած ջերմաչափի նման օրական տասն անգամ իջնում, բարձրանում են՝ մեծ ծախսեր պատճառելով հագնողին:

Հագուստների մասին գիտեք անշուշտ՝ ինչ է կատարվում:

Փողոցում տնկված սիմաֆորների* նման, երբ աղջիկներն իրենց շրջազգեստները կարճացնում են, տղաներն իրենց շալվարները լայնացնում են, երբ աղջիկները շրջազգեստները երկարացնում են, տղաները՝ շալվարները նեղացնում:

Բարեբախտաբար աղջիկն իր գլխի մազերի ձևափոխությունների վրա փող չի ծախսում: Եթե փողով լիներ, այդ ծախսին միայն Ռոքֆելլերի կինը կարող էր դիմանալ, որն ունի քառասունհինգ միլիարդ դոլար:

Իսկ նախապատմական կինն իր մազերի հարդարանքը թողել էր փչող քամու ազատ տնօրինությանը. ինչ ձև ուզենար, այն կտար:

Քամին եթե պտտահողմի էր փոխվում, շատ շնորհալի խոպոպներ էր սարքում նախապատմական կնոջ գլխին:

* Սիմաֆոր *(семафор)* - ռուս. լուսազդանշան:

Այսքանը հին ու նոր մարդու տարբերությունը ուտելու և հագնելու մեջ:

Իսկ տան կահ-կարասին: Շիֆաներկան, սերվանտը**, աթոռները, դիվանը, ռադիոն, հեռուստացույցը, հեռախոսը:*

Սրանց պակասն էլ եթե գումարենք ուտելիքի և հագնելիքի պակասի վրա, արդյունքը կլինի այնպիսի մի անծայրածիր թշվառություն, որ հին մարդն իր օրում չի իմացել:

Քաղաքակիրթ մարդ լինելը թանկ արժի, իսկ նախապատմականը՝ և էժան, և երջանիկ:

Բնությունը նրան տալիս էր քարայր՝ առանց անձերի թիվը հաշվի առնելու, և այդ քարայրները երբեք պլանի տակ չէին ընկնում:

Վերի հարկում ապրող չկար ու չէր աղմկում ցածի հարկի ապրողի գլխին:

Իսկ գալով քաղաքական կյանքին՝ նախապատմական յուրաքանչյուր վայրենին մի-մի Ստալին էր. ում ուզենար, կմորթեր, կուտեր:

Այս բոլորը բավական չէր, հիմա էլ տիեզերքի հետազոտությունն ընկավ մեջտեղ:

Տիեզերք, որ սահման չունի, իսկ հետազոտելիք աստղերը՝ թիվ և համար:

Գումարեմ դրա վրա նաև ատոմային ռումբը, որ վաղ կամ մյուս օրը պիտի պայթի ու աշխարհը մոխրակույտի վերածի:

Չէ, մարդկության վիճակն անհուսալի է, քանի գնում, այնքան վատանում է:

Եթե կա փրկության մի աղոտ հույս, դա սոցիալիզմն է:

Միայն սոցիալիզմը կարող է մեզ տանել հասցնել մեր նախկին երջանիկ վայրենությանը:

Այլապես մենք կորած ենք...

---

* Շիֆաներկա ***(шифоньéрка)*** - ռուս. ճերմակեղենի, զգեստի և այլ իրերի պահարան, զգեստապահարան:

** Սերվանտ ***(сервант)*** - սպասքապահարան:

Արքայության մկները

Այս գիշեր Աստված ինձ երկինք կանչեց։

- Ա՛յ տղա,- ասաց,- բա չե՞ս ասում, մկները մտել են արքայության ամբարը և ամբողջ ցորենը տարել են...

Ես մի պահ չհավատացի, բայց կատարվածը փաստ էր։ Այո՛, խեղճ Աստծու ամբարը դատարկել էին։

Երբ մտածում էի, թե ո՞ւր պիտի տանեն մկները երկնքի ցորենը, հանկարծ միտքս մի բան ընկավ։

Ասում եմ.

- Աստվա՛ծ, անցած տարի Սովետական Միությունն Ամերիկայից հաց գնեց, բայց այս տարի վերջինս չուզեց տալ. հավանաբար, մկներն են հանձն առել կերակրել մեր երկիրը։ Կառավարությունը սոցիալիզմ է կառուցում, ով էլ նրան հաց առաջարկի, կվերցնի։ Այլևս ժամանակ չկա կատվի ու մկան մեջ տարբերություն դնել։

- Լա՛վ, բայց ինչպե՞ս հաջողեցին այդ նզովյալները մինչև երկինք բարձրանալ։

- Բարձրանում են, Տե՛ր իմ, բարձրանում են հիմա։ Ի՞նչ է, Լայկա շունը օդանավով չթռա՞վ երկինք[172]։ Մուկն ամեն տեղ է ճիշտ այնպես, ինչպես մի ժամանակ «Աստված էր ամեն տեղ»։ Չես կարող երևակայել, թե ինչ տեսակ կենդանիներ են այդ անիրավները։ Մեր քաղսովետի նորակառույցներում դեռ մարդը չմտած՝ մկներ են խաղում ներսը։

- Այդ ոչինչ, ջա՛նըմ,- ասաց Աստված,- դրանք ժամանակավոր բաներ են։ Նրանք կարծում են գալիք բնակիչները բերք ու բարիք պիտի բերեն հետերնին, սպասում են, որ ուտեն։ Բայց հենց որ բնակեցվեն այդ շենքերը, մկները կսատկեն անոթությունից։ Դու իմ դարդը լաց։ Ի՞նչ պիտի անեմ ես այդ անիծյալների հետ։

- Կատո՛ւ պահիր, Աստվա՛ծ,- ասացի։

- Ի՞նչ ես խոսում, ա՛յ տղա։ Քրիստոսի ոչ մի պատվիրան չի կատարում այդ գիշատիչ անպիտանը, ողջ օրը միս է ուտում։ Իր ողջ կյանքում գեթ մի օր պաս չի պահում։

- Տե՛ր իմ, այնպես ես ասում «միս է ուտում», կարծես արտասահմանյան ճարպի մեջ կորած մսերը լինեն։ Խեղճերի կերածը սովետական միս է, որի վրա յուղի նշույլ չկա։ Ուտում են, որովհետև

անունը «միս» է։ Քրիստոսի պատվիրաններից էլ ինչ ունի կատարելիք։ Երկու շապիկ չունի հագին, որ մեկը հանի չունեցողին տա. էլ ինչը կմնա այն կողմը։

- Նա զզվելի սովորություն ունի։ Երբ գլխից դեպի պոչն ես շոյում, մեծ բավականությամբ մռմռում է, բայց հենց որ թարս շոյեցիր, իսկույն ճանկերը խրում է մսիդ մեջ։

- Ինչ անենք։ Սովետական կառավարությունն էլ այդ սովորությունն ունի։ Գլխի կողմից շոյողներին տանում մեծամեծ պաշտոնների է հասցնում, իսկ պոչի կողմից թարս շոյողներին տանում գնդակահարում է։ Եվ վերջապես դու ինքդ այդպես չե՞ս։ Ով քո առաջ ծունր է դնում, քեզ փառաբանում, նրան արքայություն ես տանում, ով քեզ արհամարհում է, դժոխք ես իջեցնում։

- Լա՛վ, այդ վեճերը մի կողմ, բայց ես վաղվանից արդարներին հաց չունեմ տալու, ինչ անեմ։

- Մի՛ մտածիր, Աստվա՛ծ,- ասացի,- սովը բոլոր տեսակի դրախտների առանձնահատկությունն է։ Ռուսաստանում քանի՞ տարի սով էր, պակա՞ս երջանիկ ապրեցին ռուսները։ Եվ վերջապես քո տղան՝ Քրիստոսը, ասում է. «Մարդ ոչ միայն հացիւ կեցցէ, այլ բանիւն Աստուծոյ»[173]։ «Բան» նշանակում է խոսք, ճառ։ Խրուշչովն ամբողջ տասնմեկ տարի ճառով կերակրեց իր ժողովրդին, դու չե՞ս կարող մի երկու օր կերակրել, մինչև ցանքերը հասնեն։

- Ինձ որտեղի՞ց ցանք, չգիտե՞ս, որ ես չեմ ցանում։

- Բա, այդ ամբարիդ ցորենը որտեղի՞ց էր։

- Այդ Կայենի զոհն էր։ Էն տարին, երբ Աբելն իր չաղ ոչխարը զոհեց ինձ, Կայենը՝ իր զիբիլոտ ցորենը, ոչխարը կերա, ցորենը պահեցի։

- Իսկ ինչո՞ւ չես ցանում։

- Ո՞ւր ցանեմ, օդի մեջ։

- Ինչ կլինի, որ։

- Օդի մեջ ցորե՞ն կաճի։

- Շատ լավ։ Ռուսաստանը միայն օդի մեջ է ցանում։

- Ես չեմ կարող ժողովրդին խաբել։

- Առանց խաբեության կարելի՞ է աշխարհի որևէ տեղ «դրախտ» կառուցել։

Աստված խեթ-խեթ երեսիս նայեց.

- Ա՛յ տղա, չլինի՞ դու անաստված ես։

- Ո՛չ, ո՛չ։ Քո առաջ կանգնած է աշխարհի ամենահավատացյալ մարդը,- ասացի։

- Չխաբե՞ս։

- Չեմ խաբում։

(Դու աշխարհի բաներին մտիկ. ինքն ամբողջովին սուտ, պահանջում է, որ ուրիշները ճիշտ խոսեն)։

Հետո Աստված պապիրոսի տուփը հանեց և ինձանից կրակ խնդրեց։ Ասացի՝ չունեմ։ Այն ժամանակ կանչեց մի հրեշտակի, ասաց.

- Այս պապիրոսը տար դժոխք, կպցրո՛ւ, ե՛կ, մեկ էլ նայի՛ր, եթե ձվերը խաշված են, բեր։

- Ինչո՞ւ, Մարիամն ո՞ւր է, որ ձվերը դու ես խաշում,- հետաքրքրվեցի ես։

- Մարիամը վաղուց մեռել է,- ասաց Աստված ախ քաշելով։

- Միտք չունե՞ս մի երկրորդ կույսի «ավետիք» տալ։

- Ո՞ւր է, աշխարհում կույս աղջիկ մնացե՞լ է, որ տամ։

Ես ցավ հայտնեցի և կամեցա հրաժեշտ տալ։

- Հեռախոսիդ համարը տո՛ւր, կապ պահպանենք։

- Հեռախոս չունեմ։

- Ինչո՞ւ։

- Հազար ռուբլի կաշառք են ուզում, որ տան։ Ավելի լավ է նամակ գրես։

- Ես անգրագետ եմ...

Այս որ ասաց, զարմանքս չկարողանալով պահել՝ արթնացա քնից։

Արթնացա և ասում եմ ինքս ինձ։

- Զարմանք բան, մեր առաջին աստված Լենինը վաթսունհինգ հատոր է գրել, երկրորդ աստված Ստալինը՝ քսանհինգ հատոր, իսկ տիեզերքի Աստվածն անգրագետ է։

...Ասենք, մեղք չունի խեղճը. նա միանգամից հասակավոր է ծնվել։ Մանուկ չի եղել, որ դպրոց հաճախեր։

Մանկավարժական մահ

Մանկավարժությունն այն միակ գիտությունն է, որ ժխտում է ամենայն տեսակ բռնություն։

Մի գործողություն միայն գիտեմ կյանքում, որ սիրով է գլուխ գալիս, և դա ամուսնությունն է։

Եթե ամուսնացող կողմերից մեկնումեկը միանալու համար բռնություն գործադրի, կհանդիպի ֆիզիոլոգիական անհաղթ օրենքին ու նպատակին չի հասնի…

Որովհետև եթե ուզում ես ծաղկից հոտ քաշել, պիտի սպասես, որ ինքնիրեն կոկոնը բացվի։ Ձեռքով անժամանակ բացված կոկոնը հոտ չի տա երբեք։

Դժբախտաբար աշխարհում, այդ միակ գործողությունից զատ, մնացյալ բոլորը կատարվում են բռնությամբ։

Վերցնենք մեր քթի տակ բուսած սոցիալիզմը։

Մարքսիզմը մի հուսալից ծաղկի կոկոն էր, եթե թույլ տրվեր ինքնիրեն բացվել, շատ հավանական էր, որ մարդկությունը կերջանկանար։ Բայց Լենինը բռնեց հիմարի պես անժամանակ բաց արեց, ու այսօր ողջ աշխարհը տառապում է այդ մարքսիզմից։

Մանկավարժությունը պահանջում է, որ ուսուցիչն այնպես մատչելի, այնպես սիրելի դարձնի իր ավանդած առարկան, որ դասավերջի զանգը հնչելուց հետո էլ աշակերտները խնդրեն, աղաչեն ուսուցչին դասը շարունակել, որ վեր կենան ընկնեն ուսուցչի ետևից։ Իսկ մեր սոցիալիստ ժողովուրդը բոլորովին չի լսում իր «ուսուցչին»։ Ռուսաստանում նստած՝ արտասահման է երազում։

Աստված մարդուն մահկանացու է հայտարարել և անխտիր բոլորին մեռցնում է։

Հասկացանք։ Մեռնենք։ Բայց ինչո՞ւ այդպես կոշտ ու կոպիտ։ Տնաշենի՛ Աստված, մահվան լուրն առնելով՝ մարդը սարսափում է, և շատերը, առանց մահվանն սպասելու առաջուց մեռնում են… վախից։ Մի՞թե չէր կարելի, փոխանակ միանգամից մեռցնելու, քիչ-քիչ մեռցնել, մաս առ մաս՝ բացատրելով նրա իմաստը, և այնպես անել, որ «աշակերտը», առանց դասավերջի զանգին սպասելու, խնդրի իր հոգին առնել։

Մտածի՛ր այդ մասին, Աստվա՛ծ։ Եվ աշխատիր այնպես անել, որ

մարդն իր մահվան վրա ավելի ուրախանա, քան աշխարհ գալուն։

Լա՛վ, մեռցնում ես, մեռցնում ես, Աստվա՛ծ, վերջում ինչո՞ւ ես տանում մի նեղ գերեզման խոթում։ Չէ՞ր կարող մի քանի տարի մեր նորակառույցներում ապրեցնել, նեղ տարածության մասին գաղափար տալ մեռնողին, նոր գերեզմանել։

...Ինչ անում ես, արա, Աստվա՛ծ, բայց հանկարծակի մարդու հոգին մի՛ առ։ Ստալինն էլ էր քեզ նման վարվում։ Նորապսակ երիտասարդին, դեռ իր կնոջ համը չտեսած, հենց առաջին գիշերը վերցնում սպանում էր միանգամից։ Դրա համար էլ իր մահվանից հետո ժողովուրդը նրա դիակը գերեզմանից հանեց ու այրեց։ Իսկ նրա հաջորդ Խրուշչովը, որովհետև միանգամից չէր սպանում, այլ կիսամեռ էր անում միայն, ժողովուրդն այս բոպեիս չի այրում նրան, ով գահընկեց եղած, քաղաքականապես մի դիակ է արդեն։ Ավելի դիակ, քան Ստալինը գերեզմանում էր։

Խրուշչովը հմուտ մանկավարժ էր և կարողացավ մահը սիրելի դարձնել իր ժողովրդին։

Այդ նպատակին հասնելու համար նա նախ թանկացրեց միսն ու յուղն այնպես, որ ոչ ոքի դունչը չհասներ։ Արգելեց քաղաքում անասուն և թռչուն պահել ու մի ժամանակ ժողովրդին պահեց միայն ձեթով։ Հետո էլ ձեթը կտրեց և օրը մեջ ցամաք հաց էր տալիս, որի ընթացքին մարդիկ ծյուրվեցին և մահվան դուռը հասան։

Հետո էլ Խրուշչովը, մարդկանց մարմինը մահվան դռանը սպասեցնել տալով, դարձավ մահվան դուռ հասցնելու նաև նրանց հոգիները։

Այդ նպատակին հասնելու համար էլ, ինչպես Նոյի ժամանակվա ջրհեղեղին Աստված վերևից անձրև թափեց ու պատռած գետնից ջուր հորդեցրեց, այնպես էլ Խրուշչովը ժողովրդի գլխին ճառ անձրևեց, իսկ տակից հրամայեց մեր գրողներին հաստափոր վեպեր հորդել, ու ժողովուրդն այս կրկնակի ջրերում չխեղդվելու համար սկսեց բարձր ծառերը բարձրանալ և մահը գերադասել այս տեսակ կյանքից։

Ահա այն, ինչին ուզում էր հասնել Խրուշչովը։ Եվ որովհետև Խրուշչովն այսպես աստիճանական մահով էր սպանում մարդկանց, սիրելի դարձավ ժողովրդին, և նա, դուրս գալով Կրեմլից, ազատ կերպով սկսեց շրջել աշխարհում։ Իսկ Ստալինն իր ողջ կյանքում

քիթը Կրեմլից դուրս չհանեց։

Պետք է ասել, որ Լենինի ժամանակն էլ շատ մարդ սպանվեց՝ առանց սպանվողի կամքը հարցնելու, բռնի։

Մինչդեռ Լենինն ուներ մի դիպուկ միջոց մահը ցանկալի դարձնելու մեռնողին։

Նա գրած ուներ վաթսունհինգ հատոր գիրք. այդ հատորներն ում գլխին էլ կարդար, նա իր մահը կցանկանար, բայց լսել՝ ոչ։

Ամենադժվարը մարդու համար մահն է։ Եթե մահը կարելի է ցանկալի դարձնել, ուրիշ ինչ բան չի կարելի ցանկալի դարձնել աշխարհում։

Այս բոպեիս բոլոր սոցիալիստական երկրներն աստիճանաբար մահանում են առանց որևէ տրտունջի։

Զուր ջանքեր

Հարսս վարպետ կարող է։

Մեզ հարևան մի խեղճ այրի կին կար, բերեց իր մեռած ամուսնու հին պիջակը և խնդրեց հարսիս քանդել, դրանից մի շալվար կարել իր տասներկու տարեկան երեխայի համար։

Քանդեց, ու սա երկրորդ օրն է՝ վրան չարչարվում է, բան դուրս չի գալիս։ Մեկ ազդրի համար հերիքում է կտորը, մյուս ազդրին կարճ է գալիս։ Մեջքի գոտին իրար չի հասնում և շալվարի «ձագը» կախ է ընկնում։

Տեսավ, որ չի լինում, հետ տվեց կտորը ու ասաց.

- Սրանից շալվար դուրս չի գա, մետրով կտոր ա՛ռ, ուրախությամբ կկարեմ։

Ու կտորտանքը հետ տվեց։

Այսօր ես ճիշտ իմ հարսի օրին եմ։

Իմ ծնվելու առաջին օրն իսկ, երբ նայեցի աշխարհին, այն ինձ դուր չեկավ։

Ա՛յ մարդ, իննամսյա բանտից ազատված՝ ուրախությունից ուզում եմ մի անգամ ամբողջ կոկորդովս ճչալ, տատմերն ինձ ասում է.

- Սո՛ւս կաց, անպիտա՛ն, լեզուդ կկտրեմ։

Հետո, իհարկե, իմացա, որ կատակ է անում, բայց թե նորածինը,

առանց «Ոգնին» կարդալու, ինչպե՞ս կարող է երգիծաբանության մասին գաղափար ունենալ։

Այնուհետև քանի մեծացա, այնքան չհավանեցի աշխարհը։

Հայրս ու մայրս տևական վեճ ունեին իրար հետ։

Ամուսնանալուց, ինձ աշխարհ բերելուց հետո հանկարծ տեսել են, որ իրար չեն սիրում, բայց ես խանգարում եմ նրանց բաժանվելուն։ Մի լաթի կտորի նման հայրս ինձ մորս վրա է գցում, թե՝ դո՛ւ պիտի պահես, մայրս հորս վրա է գցում, թե՝ դո՛ւ պիտի պահես։

Ու ես մի օր մամա ու պապա միասին չունեցա. մի օր մամա ունեի, մյուս օրը՝ պապա։

Սրա վատն այն էր, որ երբ ինձ հարցնում էին՝ ծնողներ ունե՞ս, չէի իմանում՝ ինչ պատասխանեմ։ Ստիպված էի ասել՝

- Այո՛, ունեմ, բայց օր ու մեջ։ Մի օր՝ մամա, մյուս օրը՝ պապա։

Այդ էլ ոչինչ։

Գլխավոր զարմանքն ինձ բռնեց այն ժամանակ, երբ ինձ զինվորագրեցին ու պատերազմ տարան։

Տարան ու կանգնեցրին թշնամու առաջ։

- Ա՛յ մարդ,- ասում եմ,- այս ի՞նչ եք անում, չէ՞ որ կխփի ինձ, կսպանի թշնամին։

- Թող սպանի,- ասում էին,- մի՞թե դու քո հայրենիքը չես սիրում և չես ուզում այդ հայրենիքի համար զոհվել։

- Ես իմ հայրենիքը շատ եմ սիրում,- ասում էի,- և այդ պատճառով էլ չեմ ուզում սպանվել։ Երբ մեռնեմ, ինչպե՞ս կարող եմ սիրել։

- Ո՛չ,- ասացի։- Երբ ես աշխարհ էի գալիս, ինձ ոչ ոք չասաց, թե պիտի գնաս սպանվելու։ Բոլորն ասում էին՝ կգնաս ապրելու։ Եթե այդ չասեին, ես կես ճանապարհից ետ կդառնայի։ Հիմար խոմ չէի՞, որ «ցավով ծնանեի», վերջն էլ սպանվեի։

Բայց այս էլ ոչինչ։

Ես հիմա ուզում եմ ձեզ պատմել մի տարօրինակ երևույթի մասին, որին ականատես եղա իմ երիտասարդության ժամանակ։

Հիշո՞ւմ եք այն պատահական մարդու մասին, որ առաջին անգամ գտավ մագնիսը։ Նա քայլում էր մի սարում ու զարմանքով նկատում է, որ իր կոշիկի տակի մեխերը կպչում են սարին ու պոկ չեն գալիս, և մարդը ոչ մի կերպ չի կարողանում իրեն ազատել։

Ես էլ ճիշտ նրա օրին էի ընկնում, երբ մի աղջիկ էի տեսնում։

Մի անորոշ զորություն ինձ քաշում, կպցնում էր նրան։

Այս երևույթից երբ ես անհանգստացա, ինձ ասացին.

- Մի՛ վախեցիր, երբ ամուսնանաս հետը, հեշտությամբ կպոկվեք իրարից։

Ու ես վախիցս ամուսնացա, և իսկապես էլ պոկվեցինք իրարից։

...Հանկարծ որ մնար կպած, ես ի՞նչ պիտի անեի։

Սրանք և սրանց նման մի կարգ երևույթներ ինձ վրա վատ ազդեցին, և ես կամեցա մեռած հարևանիս հին պիջակի նման քանդել աշխարհը և մի նոր, մի փոքր ձևավոր աշխարհ կարել։

Իմ առաջին հոգսը եղավ վերջ տալ ազգամիջյան պատերազմներին և աշխարհը դարձնել մի միացյալ ընտանիք, որ խոսեին մի լեզվով ու պաշտեին մի Աստված և ապրեին որպես եղբայրներ։

Բայց երբ քանդեցի աշխարհը, տեսա, որ դրանից նոր բան չի կարվի։ Աշխարհը նախ մաշված էր շատ, և վրան բազմաթիվ ծակեր կային։

Ես ասում էի՝ դարձնեմ մի ընտանիք։ Բայց մի՞թե ընտանիքում ավելի մեծ պատերազմներ չեն լինում, քան ազգերի միջև։

Ասում էի՝ ապրեին որպես եղբայրներ։

Բայց կա՞ եղբայր, որ իր եղբոր հետ կռված չլինի։

Հենց ես։ Երկու եղբայր ունեմ, երկուսի հետ էլ՝ խռով։

Երբ կտորն անպետք է, դերձակն ի՞նչ անի։

Մարդիկ խոմ լեռ քա՞ր չեն, որ տաշես, իրար վրա շարես։ Մարդիկ ունեն սկզբունքներ, որոնք տաշելի չեն։

Ռուսաստանը կոմունիստ է, Ամերիկան՝ կապիտալիստ։ Դե համմե, տաշի՛ր ու միացրո՛ւ։

Կլինի՞։ Չի լինի։

Կամ ողջ Եվրոպան իրա՛ր խառնիր։ Կխառնվի՞։ Ո՛չ, չի խառնվի։ Այնտեղ բոլոր ազգերն իրենց ուրույն բնավորություններն ունեն, որոնք արդյունք են իրենց սոցիալական պայմանների, ընտանեկան դաստիարակության։

Վերցնենք Անգլիան ու Ֆրանսիան։ Դրանց կարելի՞ է խառնել իրար։ Անգլիան դանդաղաշարժ, ծանր, ուրիշի լավ ու վատին չխառնվող, իր գործերով տարված անժպիտ մի երկիր է, իսկ Ֆրանսիան ուրախ, թեթև, ամեն օր մի աստված պաշտող, մյուս օրն այդ աստվածն այրող մի երկիր է։ Մի ժամանակ օրական երկու վարչա-

պետ էր փոխում։ Տասն անգամ Գերմանիայի հետ բարեկամական դաշինք կնքեց, տասն անգամ քանդեց։ Սովետական Միությանը թողեց, Ամերիկային միացավ, հիմա Ամերիկան թողած՝ սովետներին է ուզում միանալ։ Մեկ իրեն անկախ է հռչակում, մեկ էլ տեսար մեկից կախվեց ու պոկ չի գալիս։ Եվ դրանք բոլորն իրենց պատճառներն ունեն։ Ֆրանսիան այդպես է, որովհետև իր մեջ կոմունիստներ շատ կան։ Իսկ փորում այդքան կոմունիստ ունեցող երկիրը չի կարող լույծ չընկնել։

Գուցե դուք էլ գիտեք, որ կանալիզացիա չունեցող երկրներն արտաքնոցի հարցում նեղություններ են քաշում և չեն ցանկանում, որ իրենց երկիրն այցելող դիվանագետներն առանց «թեթևանալու» ճանապարհ ընկնեն։

Մի տարի Անգլիան և Ֆրանսիան որոշեցին Լա Մանշի վրա մի ընկերովի արտաքնոց կառուցել։ Շինեցին, բայց մի տարուց էլի քանդեցին։

Անգլիան, գիտեք էլի, մինչև տասը չչափի, մեկը չի կտրի։ Երբ զուգարան էր մտնում, սպասիր, որ դուրս գա։ Իսկ Ֆրանսիայի ստամոքսը որովհետև լավ չէր, դրա հակառակ՝ տասը կտրում էր, նոր մեկը չափում և շուտ-շուտ արտաքնոցի կարիք զգում։

Եվ նրանց պետական շահերը չէին համընկնում իրար…

Վերջում Ֆրանսիան, Անգլիային թողած, գնաց Իսպանիայի հետ միջու արտաքնոց կառուցեց, էլի անհաջող։

Իսպանիայի ստամոքսի պնդությունը համաշխարհային ճանաչում է գտել, ինչպես գիտեք։

Սա քանի տարի է, Ֆրանկոն է այնտեղ պնդացել…

Հիմա, երբ ես կտամ ձեզ Եվրոպայում ապրող մեծ պետությունների համառոտ կենսագրությունը, դուք անձամբ կտեսնեք, թե կյանքն ինչպես է ազդում մարդու բնավորության վրա։

Անգլիան մռայլ ու անժպիտ է, որովհետև խեղճի թագավորներն անվերջ մեռնում են, և երկիրը կառավարում է թագուհին։ Իսկ թագուհու կառավարած երկիրն ինչ պիտի լինի։ Մի օր սոված, մի օր կուշտ։

Այդ բավական չէր, այս վերջին թագուհին էլ, որի անունը չգիտեմ՝ ինչ է, ամուսնացավ մի նորվեգացի, թե շվեդացի դուքսի հետ ու Անգլիային դարձրեց խորթ հոր զավակ։

Հիմա հարազատ հայրերն իրենց որդոց չեն պահում, խորթն ինչ պիտի անի։

...Վաղ մյուս օր Անգլիային դուրս պիտի անի տանից, թե գնա՛ աշխատիր, ապրիր...

Գերմանիան, երբ աշխարհ եկավ և Եվրոպայում ցույց տվին իր տեղը, չնստեց, ասում է՝ ամբողջ աշխարհն են ինձ տվել, ես այս տարածությունում չեմ տեղավորվի։

Եվ ուզում էր դուրս գալ։ Բայց նրան համոզեցին, թե ոտիդ առայժմս տեղ արա, հետո կհարձակվես ամբողջ աշխարհը կտիրես։

Մնաց Գերմանիան, շարունակ թևով Ֆրանսիային մշտելով, մինչև վերջապես ուժ հավաքեց և 1914 թվին աշխարհի վրա հարձակվեց։

Բան դուրս չեկավ։

Մեկ էլ 1939 թվին հարձակվեց, ու այս անգամ ոչ միայն բան դուրս չեկավ, այլ մինչև իսկ իր տարածության կեսն էլ կորցրեց։ Այժմ գոյություն ունի երկու Գերմանիա՝ մեկն ատամնավոր, մյուսն անատամ։

Եթե պատկերավոր խոսենք, հիմա Գերմանիան նման է բերանի, որի ներքևի պրոթեզ-ակռաները կան, իսկ վերինն ընկել է, որի պատճառով և դժվարանում է ներկայիս ծամել։ Ամերիկան պատառը ծամում, դնում է բերանը, վերջինս կուլ է տալիս...

Գերմանիան այս վիճակով ինչպե՞ս կարող է Անգլիայի պես մտածել կամ Ֆրանսիայի հետ պարել։

Հիմա անցնենք Ռուսաստանին, որը կեղծանունով կոչվում է Սովետական Միություն։

Սրա տարածության կեսն ընկած է Ասիայում, կեսը՝ Եվրոպայում։ Ու փոխանակ նրա ասիական մասը եվրոպական մասից օրինակ վերցնի, եվրոպական մասն է ասիականից օրինակ վերցրել։

Դարեր շարունակ իր կռնակին տանելով ճորտատիրական լուծը՝ հիմա առանց լուծի մի րոպե չի կարողանում ապրել։ Հոկտեմբերյան հեղափոխության ժամանակ, երբ ցարի սպանության հետևանքով մի կարճ ժամանակ մնաց անլուծ, ուղղակի հուսահատությունից չէր իմանում՝ ինչ անի։ Մինչև, լավ էր, Լենինը եկավ և այնպիսի մի ծանր լուծ դրեց վզին, որի տակ ինչքան տնքա, տեղ ունի։

Ասացեք, սա կարո՞ղ է վերոհիշյալ երեք պետությունների հետ մի ընտանիք կազմել։

Չի կարող:

Հիմա գանք Իտալիային:

Իտալիան Եվրոպայի բնակիչ չլինի ասես: Ես նրա անցյալը չգիտեմ, բայց ինձ թվում է՝ մի ժամանակ կարճ Եվրոպան, չկարողանալով նրա երկար մարմինը տեղավորել իր մեջ, բարկացած Միջերկրական ծովն է նետել, իսկ հիմա վախվխելեն գլուխը ներս է պարզել Իտալիան և խնդրում է՝ գլխին տեղ անեն ցամաքի վրա, մարմինը էլի թող մնա ջրի մեջ...

Սա էլ Եվրոպայի հետ չի կարող մի ընտանիք կազմել, իմ կարծիքով, ինչպես երկկենցաղ կենդանին ցամաքային կենդանիների հետ:

Մնացին փոքր պետությունները: Սրանք էլ, ինչպես օրինակ, Շվեյցարիան, Ալբանիան, Հոլանդիան և մի քանի ուրիշներ, առանձին գիծ չունեն, գլուխները կոխել մեծ պետությունների արանքը, ապրում են: Վաղը եթե մեծ պետությունները հանկարծ չքանան, սալաքարի տակ ապրող միջատների նման այս ու այն կողմ պիտի վազվզեն սրանք:

Դե համմե, եկ այս տարամերժ բնավորություններից մի ընտանիք կազմիր, որ խոսեն մի լեզվով: Եվ այդ այն ժամանակ, երբ ամենափոքր մեր ընտանիքներում, եթե ավելին չլինի, հայերենը և ռուսերենը կան:

Չի լինի, չէ: Իմ ժամանակն իզուր էլ վատնեցի: Այնպես որ, ինձ կմնա հարսիս նման ետ վերադարձնել հին աշխարհը և ասել.

- Այս հնոտիքից շալվար դուրս չի գա, մետրով ապրանք բեր՝ կարեմ:

Երկու քարի արանքում

Ճիշտն այն կլիներ, եթե ես հոդվածս վերնագրեի «Երեք քարի արանքում», բայց որովհետև ցայսօր ոչ մի դժբախտ երկու քարից ավելիի մեջ չի ընկել, կարգը չխանգարելու համար «Երկու քարի արանքում» գրեցի՝ հոդվածի վերջում միայն այն երեք քար դարձնելու համար:

(Սպասեք, սրտիս խորքից մի երկար ա՛խ քաշեմ, նոր սկսեմ պատմությունս...):

Հազար ինը հարյուր քսանմեկ թիվն ենք:

Բոլշևիկները սրած կացիններով Հայաստան մտան, որ հայ ժողովրդին թուրքական սրից ազատեն... և իրենք կոտորեն:

Սարսափից հայ ժողովրդի արական մասը Պարսկաստան փախավ, իգական մասը տեղում նստեց՝ չիմանալով ինչ պիտի գա իր գլխին:

Ես փախա Պարսկաստան:

Բայց ճիշտ այդ օրերին ես պիտի իմ անդրանիկ զավակս ունենայի և սաստիկ կուզեի իմանալ, թե ծնվելիք երեխան մա՞նչ է, թե՞ աղջիկ:

Մի նամակ գրեցի կնոջս նախ իմանալու համար ո՞ղջ է, թե՞ մեռած:

Պատասխանեց՝ ո՛չ ողջ եմ, ո՛չ մեռած:

Երկրորդ նամակով հարցրի՝ ծնե՞լ է արդյոք: Եթե այո՝ մա՞նչ է, թե՞ աղջիկ:

Պատասխանեց՝ «ո՛չ մանչ է, ո՛չ աղջիկ»:

Երրորդ նամակով խորհուրդ տվեցի անպայման աղջիկ ծնել, որովհետև Պարսկաստանի ճանապարհը փակված է, կմնա ու կկոտորվի:

Այնուհետև այլևս նամակ չառա կնոջից, ուստի կարծեցի, որ մեռած կլինի:

Սրտիցս մի բան պոկվեց, վայր ընկավ, և իմ ապրելն այլևս դարձավ ինձ համար ավելորդ:

Ես ասում էի. «Եթե մեռած է իմ կեսը Հայաստանում, իմ մյուս կեսն իրավունք չունի ապրել Պարսկաստանում»:

Էլ չեմ հաշվում այն, որ մեռած կինս իմ ոչ թե կեսը, այլ մեկուկեսն է՝ նրա հետ հաշված նաև իր նորածին երեխան, որ նույնպես մեռած պետք է լիներ:

Ուստի, մեր աճյուններն իրար խառնելու համար դիմում տվի Հայաստանի բոլշևիկ կառավարությանը թե՝ Հայրենիք եմ ուզում վերադառնալ:

Կառավարությունը դիմումս ընդունեց, երկու պայման առաջարկելով՝ ասաց.

- Մենք հայրենադարձներին կա՛մ գնդակահարում ենք, կա՛մ ցմահ բանտարկում. այս երկուսից ո՞րն ես ուզում:

Ես ծանր ու թեթև արի և ցմահ բանտարկությանը հոժարեցի:

Ու ինձ հուսադրելու համար ասում է.

- Մեր բանտն ամբողջ Սովետական Միությունն է, որն իր մեծությամբ աշխարհի մեկ վեցերորդ մասն է կազմում, դու ազատ կարող ես շրջել, միայն արտասահման չես կարող անցնել:

Պատասխանեցի.

- Բանտն առհասարակ մի չարիք է, ու այդ չարիքն ինչքան փոքր, այնքան գնահատելի է:

Վերջը Հայաստան եկա և կնոջս կենդանի գտա՝ մի մանչ երեխա գրկած:

Հարցնում եմ.

- Զագս տարե՞լ ես, ի՞նչ ես դրել երեխայի անունը:

- Վախենում եմ զագս տանել: Ուզում եմ մի կերպ աղջիկ արձանագրել տամ,- ասում է կինս:

- Է՛հ, տխմա՛ր,- ասում եմ,- աղջիկ արձանագրել տալ կուզես, շտապի՛ր քանի տարբերանշանը փոքր է. երբ այն մի քիչ էլ մեծանա, զագսը քո՞ռ է, որ չնկատի...

- Լա՛վ,- ասում է կինս,- դա այնքան էլ կարևոր չէ, որովհետև նոր կարգերում կինը հավասարված է տղամարդուն և նրա պես գնդակահարվում ու աքսորվում է: Գործի՛ անցիր:

Ճիշտ էր ասում կինս, ապրելու համար պետք էր գործի անցնել:

Ես արհեստով ճշմարտություն գրող եմ. աչքովս ինչ տեսնեմ, նույնը պատկերում եմ:

Այս նպատակով, երբ գրիչս ձեռքս առա, մի չեկիստ հայտնվելով բռնեց ձեռքս ու ասաց.

- Իրավունք չունես տեսածդ գրելու: Դու պիտի գրես սոցիալիզմի, հավասարության և եղբայրության մասին:

- Ցո՛ւյց տվեք՝ գրեմ: Չտեսածիս մասին ի՞նչ գրեմ:

Չեկիստը բարկացավ:

- Իսկ քո ողջ կյանքում դու տեսա՞ր պաշտածդ Աստծուն:

- Մովսես մարգարեն նրան տեսել է Սինա լեռան վրա:

- Այո՛, բայց միայն նրա կրունկը:

- Իսկ ես հավասարության, եղբայրության կրունկն էլ չեմ տեսնում...

Չեկիստը վերցրեց գրիչս ու կոտրեց:

Ի՞նչ անեմ: Ասացի՝ չոբան դառնամ: Գնեցի մի ոչխար: Ոչխարը

տասը տարում դարձավ հարյուր, և նույն չեկիստը կանգնեց գլխիս.

- Դու ինչ իրավունքով հարյուր ոչխար ունես, կուլակ. հիմա քեզ կվտարեմ քո տնից։

- Չեկիստ,- ասացի,- երդվում եմ երեխայիս արևով, որ դրանում ես մեղք չունեմ, իրենք առանց ինձ հարցնելու են բազմացել։

- Կուլակաթափ։ Հանձնիր ոչխարներդ ու ինքդ գյուղից դուրս արի։

Հանձնեցի ու կին-երեխայիս ձեռքը բռնած՝ գնացինք հարևան գյուղացիներից մեկի մարագում ծվարելու։

Տանտիրոջ տղան իմ տղային մի հավի ճուտ նվիրեց խղճալով։ Այդ ճուտը հիմարաբար մեծացավ, հավ դարձավ և սկսեց անվերջ բազմանալ։

Հասավ երեք հարյուրի։

Հայտնվեց չեկիստը.

- Էլի հարստացար։

- Ինչ անեմ, ընկեր ջան, ինչի ձեռք եմ զարկում, հարստանում եմ։ Դու ինձ աղքատանալու ճամփա ցույց տուր, ես աղքատանամ,- ասացի։

- Կոլխոզ մտիր։

- Աչքիս վրա, մտնեմ։

Մտա. իրոք որ աղքատացա։ Ընտանիքով հալից ընկած՝ չէինք կարող ոտքի վրա կենալ։

«Հիմա ինչ անեմ»,- մտածեցի։

Էլ բան չէր մնացել անելու, որ անեի։

Ելա դիմում գրեցի կառավարությանը, թե ես իմ պայմանը խախտում եմ ու փոխանակ ցմահ բանտարկության՝ առաջարկում եմ ինձ գնդակահարել։

Պատասխանեցին.

- Չենք կարող։ Ստալինը մահացել է, իսկ նրան հաջորդող Խրուշչովն այլևս մարդ չի գնդակահարում. նա սովամահ է անում մարդկանց։

- Միանգամից սովամահ արեք, պրծնենք, ինչո՞ւ եք ձգձգում։

- Իրավունք չունենք։ Մենք ցմահ դատապարտվածների կյանքը ոչ թե կարճացնում, այլ երկարաձգում ենք, որ շատ տանջվեն։ Նրանք «ց» ունեն, բայց «մահ» չունեն։

Ահա այստեղ էր, որ ես ընկա երկու քարի մեջ։

Հիմա պատմեմ, թե ինչպես ընկա երեք քարի մեջ։

Հույսս մարդկանցից կտրած՝ էլի Աստծու վրա դրի այն։ Աստված կանչեցի, որ իմ հոգին առնի։

Եկավ Գաբրիել հրեշտակը, տնտղեց և ասաց.

- Թշվա՛ռ, քո մեջ ի՞նչ է մնացել, որ առնեմ։ Ես այդքան անխիղճ չեմ։

Ու չառավ։

Ելա Ստալինի մոտ գնացի։ Այն ժամանակ դեռ չէր այրված, զմռսված ու Լենինի կողքին պառկած էր։

Ծունր դրի ու խնդրեցի վեր կենալ և ինձ գնդակահարել։ Չլսեց։ Ու երբ ես շատ խնդրեցի, Լենինը շուռ եկավ դեպի իր «աշակերտը» և ասաց.

- Ա՛յ տղա, դե վեր կաց գնդակահարի՛ր խեղճին, մեղք է...

Ու երբ Ստալինն էլի չլսեց, զգացի, որ դրությունս հուսահատական է, ոչ մի փրկություն չկա ինձ, ու ես դատապարտված եմ աշխարհի այն ամենադաժան պատժին, որի անունն է կյանք...

Վառելիքի հարցը Հայաստանում

Անտառ չունեցող երկրները ձմեռը խեղճություն են քաշում։

Հայաստանն անտառ չունի։ Ծաղկաձորի լեռներում եղածը անտառի հաշիվ չէ. դա ոնց որ թազա փեսայի նոր մրացող ընչացքը լինի և հազիվ է բավարարում երկրի տոնածառի կարիքը։

Բայց Հայաստանն անցյալում երբեք ցրտություն չի զգացել։ Այնքան շատ անասուն էր պահում, որից ստացած աթարը բավարարում էր տարվա չորս եղանակներին, և մի բան էլ ավելանում էր անգամ։

Բայց այն ժամանակներից, երբ Հայաստանը դարձավ սովետական, և անասունները մտան կոլխոզ, դրությունը միանգամից փոխվեց։

Այնտեղ անասուններն այնքան քիչ էին ուտում, որ թրքելու մասին չէին էլ մտածում։ Այսպես՝ օրը մեջ, երկու օրը մեջ, և այդ էլ հատկապես այն անասունները, որոնք ստամոքսի խանգարում էին ունենում։

Անասուններն անշուշտ զգում էին վառելիքի կարևորությունը, բայց դիզենտերիայով տառապողն ինչո՞վ կարող է հսկել իր ար-

տաթորությունը։

Նիգը գալիս է, ուզում է արտաթորել, բայց չի կարողանում։ Անոթի կովն ունի հաշվին արտաթորի։

Բայց զարմանալին այն է, որ անասունների սովամահությունը բոլորովին չէր ազդում կաթի քանակի վրա։ Կովը շարունակում էր տարեկան երեք հազար, չորս հազար լիտր կաթ տալ... թերթերում։

Ինչն էր դրա գաղտնիքը։

Գաղտնիքն այն էր, որ կաթ տալու կարողությունը կովից անցել էր կթվորին։ Կթվորուհին, նստած կովի տակ, կթում էր այնքան, որ հարվածային կթվորուհի դառնար, և նրա պատկերը երևար թերթերում։

Այսպիսով՝ գոմերը համարյա դատարկվում էին, և գյուղատնտեսության բոլոր գործառնությունները փոխադրվում էին սովետական մամուլ։

Այստեղ՝ հարց։

Ինչու՞ մամուլում կովերն իրենց կաթի պլանները կատարում, գերակատարում էին, իսկ վառելիքը թերակատարվում էր։

Դրան պետք է պատասխանել, որ կթվորներն անմահանալու համար կովերից կթում էին պլանով պահանջված կաթը, բայց չկար նաև այլ տեսակի մի կթվոր, որ կովերից ապահովեր երկրի վառելիքը։ Դա թողնված էր կովերին միայն, իսկ կովը, հայտնի բան է, որ մենակ իր ուժերով, ինչքան էլ զոռեր, չէր կարողանա երկրին տալ բավարարող վառելիքը։

Շատերն ասում էին, որ կովերն ամաչում են թերթի մեջ հրապարակայնորեն թրքել։ Բայց այս կարծիքը սխալ է։ Ինչ է, կովերն աչք չունեն։ Չեն տեսնում, որ սովետական մամուլը մտքի աղբանոց է դարձել...

Պարզ էր, ուրեմն, որ կոլխոզային անասունները, երբ այսպես երկար մտածելով թրքեն, ժողովուրդը ձմեռը ցրտից պիտի սառչի։

«Ինչ անենք, ինչ չանենք», երբ մտածում էր սովետական կառավարությունն անճրկած, մեկ էլ տեսավ՝ այն կողմից վրա հասան 300-ից ավելի սովետական գրողներ և խոստացան բավարարել երկրի վառելիքի պահանջն իրենց գրվածքներով։

Թողին իրենց «պոեզիան», որ կարճ-կարճ ոտանավորներից էր բաղկացած լինում, անցան մեծածավալ վեպերի արտադրությանը։

Քրիստափոր Թափալցյանը[174] գրեց իր չորսհատորանոց «Պատերազմը», որը եթե մի միլիոն տիրաժով հրատարակեր Պետհրատը, մի ամբողջ տարի կբավարարեր երկրի վառելիքի կարիքը:

Հետո սկսվեց ստվարահատոր պատմական վեպերի սերիան:

Չնայած այն բանին, որ Տաճկահայաստանը բնաջնջվել էր, իսկ Ռուսահայաստանը դադարել էր հայ լինելուց, Դերենիկ Դեմիրճյանն իր «Վարդանանքով», Ստեփան Զորյանն իր «Պապ թագավորով», Սերո Խանզադյանն իր «Մխիթար սպարապետով» սուր են տալիս գոյություն չունեցող հայ ազգի ձեռքը և հրում թուրքերի և հույների դեմ պատերազմի...

Եթե վառելիքի հարցը չլիներ, սրանք բոլորն իհարկե ավելորդ բաներ էին: Բայց ուրախալին այն է, որ այս մեծածավալ հատորներն այսօր վերջապես մի բանի ծառայում են...

Միայն այս տարի Պետհրատն իր գրքերի պահեստից 2325 անուն գիրք «Հայվառելիքին» փոխանցեց ժողովրդին բաժանելու համար:

Այնտեղ մեծ վեպեր կային, որ ձմեռն անցնելուց հետո էլ շարունակվում էին վառվել...

Բայց որպես վառելիք՝ գիրքն այնքան էլ հարմար չէ: Դրանց մեջ կան տողեր, որոնք վառելիս գարշահոտություն են արձակում: Օրինակ՝ այն բոլոր գրքերում, ուր Ստալինին ներբողներ են գրված:

Այն գրքերը, որոնցում սոցիալիզմ է քարոզվում, վառվելուց հետո ոչ մի հետք, անգամ մոխիր չեն թողնում:

Այսպես ուրեմն, Հայաստանի գրողները ջերմացնում են ժողովրդին իրենց գրվածքներով: Ժողովուրդը վառում է այդ գրվածքները, տաքանում է, բայց այնուամենայնիվ, երանի է տալիս այն օրվան, երբ իր թոնիրում աթար էր վառվում...

Փինաչու մոտ

Նստած փինաչու նեղլիկ խանութում՝ կոշիկս տվել էի կարկատելու...

Ներս մտավ մի աղքատ կին ու իր մուճակները* վարպետին պարզելով՝ խնդրեց նորոգել:

Վարպետն առավ մուճակները, երեսին նայեց, տակերը շուռ

* Մուճակ- հնց. 1. անորոշ տեսակի կոշիկ, կանացի կոշիկ, 2. փապուճ (արևմտահայերեն):

տվեց, քթի տակ մի բան մռմռաց ցածր ձայնով, հետո նույնը կրկնեց բարձրաձայն.

- Քույրիկ, մուճակդ այլևս կար չի բռնում, հալից գցել ես, էսպես էլ հագիր ու հետո դեն գցիր:

Երևում էր՝ կինը շատ էր աղքատ: Այդ ես հետևեցրի նրա խորունկ «ախ» քաշելուց:

Անմիջապես հիշեցի տասը տարի առաջ ինձ պատահած ճիշտ նույնանման մի դեպք:

Գրողների միությունը ինձ սանատորիա էր ուզում ուղարկել և ուղարկեց բժշկական քննության:

Ութ բժիշկ էին նստած՝ ութ տարբեր մասնագիտությունների:

Դրանցից յուրաքանչյուրն իր մասնագիտության գծով քննեց ինձ և գտավ, որ սանատորիան այլևս չի կարող օգնել ինձ: Ավելին՝ նա նույնիսկ կարող է վնասել, մահվան պատճառ դառնալ:

Ու եթե սանատորիա գնայի, ութ անգամ պիտի մեռնեի՝ համաձայն բժիշկների թվին...

Այդ ժամանակ միայն զգացի, թե ինչ երջանկություն է եղել մարդու համար մի անգամ մեռնելը:

Ես դրանից առաջ էլ գիտեի, որ մահկանացու մարդ եմ ու մի օր պիտի մեռնեմ:

Բայց դա գիտականորեն հաստատված չէր, և ես միշտ ներշնչում էի ինձ այն միտքը, թե եթե անգիտանամ այդ հանգամանքը, կարող եմ անգամ անմահանալ:

Բայց հետաքրքիրը նրանց ասելու ձևն էր:

- Էլ բանի պետք չես,- ասաց բժիշկներից մեկը,- օրգանիզմդ այնքան է հնացել, որ այլևս կարկատան չի բռնում: Ապրիր, ինչքան կարող ես ու մեռիր:

Երբ ճիշտ այսպիսի պատասխան տվեց փինաչին աղքատ պառավին, պառավը խորունկ «ախ» քաշեց, չնայած այն հանգամանքին, որ մի բարեսիրտ կին մի օր կարող էր իր հնամաշ կոշիկը տալ և կոշիկով ապահովել նրան, կինը կարող էր մտնել մի տուն, կոշիկ գողանալ ու հագնել: Իսկ ես ինչ անեի:

Ո՞ր բարեսիրտ մարդն իր հնամաշ կյանքը կտար ինձ հագնելու: Ո՞ւմ կյանքը կարող էի գողանալ, հագնել: Եթե կյանքը հափշտակելի լիներ, ավազակներն անմահ կդառնային: Ստալինն իր սպանած

կյանքերը կհագներ և երեսուն միլիոն տարի կապրեր։

Վերջը՝ ինձ սանատորիա գործուղման թուղթ չտվեց բժշկական խորհուրդը, և ես պառավի օրն ընկա։ Երկուսս էլ խնայողությամբ պիտի գործածեինք մեր կյանքն ու մաշիկը՝ մի փոքր ավելի երկար ապրելու համար։

Ուրիշ խոսքով՝ ոտների ծայրերի վրա քայլեինք…

Երբ կինը փինաչու խանութից դուրս էր գալիս, հանկարծ մտքովս մի բան անցավ։ Ասացի՝ եկ այս մաշիկը ես գնեմ, թող դրա փողով մի նոր մաշիկ առնի, խեղճ է։

Մոտեցա ու հարցրի.

- Պառա՛վ, ինչ արժի կոշիկդ, գինն ասա՛, առնեմ։

- Քո ինչի՞ն է պետք բանից պրծած մաշիկը…

- Ինքս էլ եմ բանից պրծած, տո՛ւր, հագնեմ, մեռնեմ։ Գերեզմանում ես հավիտյան կհագնեմ։

Ու որպեսզի կինը կատակ չկարծեր ասածս, հանեցի մի նոր կոշիկի գին տվի նրան ու հին կոշիկը ձեռքից առա։

Իհարկե, մեռնողներն այդպիսի բանից պրծած կոշիկներ պիտի հագնեն։

Իսկ մեզանում՝ ճիշտ դրա հակառակը. մեռելին նոր կոշիկ հագցնում, թաղում են, չնայած գնալիք ոչ մի տեղ չունի։

…Ա՜խ, այդ փինաչիներն ու բժիշկները…

Այնքան զայրացած եմ դրանց դեմ, որ կարծում եմ՝ եթե դրանք չլինեին, աշխարհում ո՛չ կոշիկ կմաշվեր, ո՛չ մարդ կմեռներ…

Տրանզիտով ամուսնություն

Գուցե ձեզանից շատերը չիմանան՝ ինչ բան է տրանզիտը։

Ասեմ։

Տրանզիտն այն է, ինչ մի պետություն գոց վագոնով իր ապրանքը մի երկրորդ պետության երկրամասով անց է կացնում, տանում մի այլ երկիր՝ վաճառելու։

Այնպես, ինչպես Առաջին համաշխարհային պատերազմին գերմանացիք տրանզիտով Լենինին վերցրին Շվեյցարիայից, իրենց երկրի վրայով Ռուսաստան ուղարկեցին, որպեսզի Ռուսաստանի տունը քանդի…

Բայց այն, ինչ հիմա կպատմեմ, պետական գործ չէ, այլ ինձ վերաբերող մի ինտիմ ամուսնական պատմություն։

Ուրեմն, երբ իմ առաջին կինը մեռավ, ես անասելի սուգ ապրեցի։ Աշխարհը մթնեց աչքերիս։

Այնուհետև տարիներ ամբողջ ես նրա հուշերով ապրեցի։

Ամեն անգամ, երբ կոշիկներով պառկում էի անկողնուս վրա, ականջս ձայնի՝ սպասում էի, որ կինս պիտի ասեր.

- Խի՛ղճ ունեցիր, ա՛յ մարդ, կոշիկով անկողնու վրա չեն պառկում։

Եվ սպասում էի, որ գար իր ձեռքով հաներ կոշիկներս ոտներիցս, և ես առիթ ունենայի գրկելու նրան ու պինդ-պինդ համբուրելու...

Բայց ավա՜ղ, ինձ մոտեցող չկար, և իմ բացած գիրկն անհույս ծովը գցած ձկնորսի ուռկանի նման իրար էի հավաքում բոլորովին դատարկ։

Այսպիսի բոպեներից մեկում մտածեցի երկրորդ անգամ ամուսնանալ։ Ամուսնանալ ոչ թե նրան սիրելու համար, այլ կնոջս հիշելու ժամանակ մի բան գրկելու։

Այսպես ասած՝ մի դերձակի մանեկեն՝ նախկին կնոջս հանդեպ ունեցածս սերը նրա վրա փորձելու համար։

Այս նպատակով ես առաջարկություն արեցի մի կնոջ՝ առանց մինչև անգամ նրա երեսին նայելու՝ դա իմ ամոթխածությանը վերագրելով։

Կինն իր բարեմասնությունները գովելու մտքով սկսեց թվել այն բոլոր մեծ դիրքի տեր մարդկանց, որոնք իր ձեռքն էին խնդրել, և որոնց, սակայն, ինքը մերժել էր։

Ես ցավեցի, հարկավ, նրա բարեմասնությունների համար, քանի որ դրանցից չպիտի օգտվեի։

Ենթադրեք երկու աչքով կույրի դիմաց կախում են Ռաֆայելի Մադոննան...

Ամուսնացանք վերջապես։

Առաջին կնոջս անունը Արուս էր, երկրորդինը՝ Մարուս։

Այդ լավ էր, որովհետև նրան գրկելիս, երբ Արուս էի անվանում, նա այնքան հուզված էր լինում, որ չէր նկատում «մ»-ի պակասը, ու ես, զորս դու պատվիրեցիր, նոր կնոջս վրա սիրում էի հին կնոջս...

Վատն այն էր, որ երբ ես, էքստազի մեջ ինքզինքս մոռացած, հիշեցնում էի ամառանոցում անցկացրած մեր երջանիկ օրերը, երկրորդ կինս հանկարծ հարցնում էր.

- Մենք ամուսնացանք ձմեռը, ու դեռ ամառը չի եկել, այդ ասածդ բաները ե՞րբ պատահեցին…

- Ես գալիք ամառվա համար եմ նախատեսել այս պատահելիքները,- ասում էի։

Եվ նա ուրախանում, երանության մեջ էր զգում ինքզինքը, որ եկող ամռանը այսպիսի զարմանալի բաներ են պատահելու։

Պիտի հարցնեք.

- Վերջիվերջո ամառը գալու էր, այն ժամանակ ինչպե՞ս պիտի վարվեիր հետը։

Կպատասխանեմ.

- Ամուսնական սերն ըստ տարվա եղանակների չի տաքանում ու սառչում։

Կարող է մեկը ձմռանը շատ ջերմ սիրել իր կնոջը, իսկ ամռանը սառչել։

Չէ, կենդանի մարդը միշտ կարող է խաբել իր կնոջը. դժվարը մեռնելուց հետոն է։

Բանն այն է, որ առաջին կնոջս թաղելիս կողքին ինձ համար տեղ թողի և ցանցապատեցի։

Հիմա մեռնելիս ե՞ս պիտի թաղվեմ այդ տեղում, թե՞ երկրորդ կինս։

Ներկայիս իմ միակ մտածմունքն այդ է։

Ես ի՞նչ իմանայի, որ երկրորդ կին պիտի առնեի, որ գերեզմանոցում երեք տեղ գրավեի։

Կամ առհասարակ մարդն իմանո՞ւմ է, թե կյանքում քանի անգամ է ամուսնանալու։

Գերեզմանի տեղն էլ այնքան էժան չէ, որ մարդ մի տասը հատ «զապաս» տեղ առնի։

Քաղսովետը կենդանիներին ձրի բնակարան է տալիս, իսկ գերեզմանոցի տեղն այնքան թանկ է վաճառվում, որ միայն հարուստը կարող է մեռնել։

Համենայն դեպս, այս հարցը լուրջ է, որովհետև հավիտենականության հետ գործ ունի։

Եվ ես մինչև չլուծեմ հարցը, չեմ մեռնի։

Այն մասին, թե ինչպես սուտը դարձավ ճիշտ

Դեռ չծնած՝ ես գաղափար ունեի մահվան մասին։

Գիտեի, որ դրա ձեռքից պրծում չկա, ուստի, նախապես կանխորոշում էի նրա հանդեպ իմ բռնելիք ընթացքը։

Ծանոթ էի այն առածին, որ ասում էր. «Շան հետ բարեկամացի՛ր»։ Մտքիս մեջ ասում եմ՝ մահվանից ավելի մեծ «շո՞ւն»։

Ու որոշեցի բարեկամանալ։

Առածն ասում էր նաև. «Բարեկամացի՛ր, բայց փայտը ձեռքիցդ մի՛ գցիր»։

Ես որոշեցի բարեկամանալ ու փայտն էլ ձեռքիցս գցել։

- Ի՞նչ ուզում է, թող անի,- ասացի։

Քանի որ տեղն եկավ, ասեմ, որ ես կյանքումս կարողացել եմ ամեն տեսակի «շների» հետ բարեկամանալ՝ բացի չորս «շնից»։ Դրանք են՝ Էնվեր, Թալեաթ, Ջեմալ փաշաները և «ընկեր» Ստալինը։

Պիտի ասեք՝ այդ նրա համար, որ նրանք պակա՞ս էին մարդ սպանում։

Ո՛չ, նրանք մահվանից ավելի անգութ էին։ Նրանք մարդկանց միլիոններով էին սպանում, իսկ խեղճ մահը միայն հատ-հատ։

Օրենքով պետք էր այդ «շների» հետ ավելի բարեկամանայի, բայց չկարողացա։

Հիմա՝ ծնվում եմ։

Ես, որ կեղծել չգիտեմ, տեսեք ի՞նչ վարպետությամբ եմ կեղծում։

Ավելի հաջող, քան սոցիալիստները, որոնք մարդկանց արյունը խմում են ու ինքզինքնին մարդասեր ցույց տալիս...

Ծնվելիս մահը մոտս չէր, գնացել էր ինչ-որ մեկի հոգին առնելու։ Ես նրան գտա վերջապես և շատ նեղացած ասացի.

- Ո՞ւր ես կորել, ա՛յ մահ։ Սա մի ժամ է՝ ծնվել եմ, չես գալիս հոգիս առնելու։

Զգացի, որ շոյված զգաց ինքզինքը։

- Շա՞տ ես ուզում մեռնել։

- Բա ապրելու համար խոմ չե՞մ եկել աշխարհ։ Ես դեռ մորս արգանդում անդադար մշտում էի ներսից, թե՝ շո՛ւտ ծնիր ինձ, որ մեռնեմ։ Դրա համար տեսնո՞ւմ ես՝ փոխանակ ինն ամսի՝ յոթ ամսում ծնվեցի։

- Լա՛վ, այդքան մի շտապիր, դեռ լողացիր, մաքրվիր, մի փոքր ծիծ կեր, կազդուրվիր, երկար ճանապարհ ես անցել, հետո կխոսենք:

Ասաց մահը սիրալիր, հետո ավելացրեց.

- Ես այսքան տարի մահկանացուների հետ գործ եմ ունեցել, բայց չեմ տեսել մեկին, որ իր կամքով ուզենա մեռնել: Գնահատում եմ քո անկեղծ սերը դեպի ինձ և թույլ եմ տալիս քեզ ազատ կերպով ապրելու:

Այնուհետև ես ապրում էի, բայց շատ զգույշ, որ ինքզինքս չմատնեմ: Ծիծ էի ուտում «չուզելով», օրորոցիցս կախված ուլունքների հետ խաղում էի «չուզելով»: Հետագային սկսեցի հոլ խաղալ դարձյալ «չուզելով», միչև դարձա երիտասարդ:

Այդ հասակին մի աղջիկ տեսա՝ ուշքս գնաց: Նրա մի համբույրի համար հոգիս կտայի... եթե մահվանից չվախենայի:

Հետո չկարողանալով դիմանալ՝ մահը մոռացա և հոգիս տվի այդ աղջկան:

Ու ճիշտ այն ժամանակ, երբ ամբողջ ուժովս գիրկս էի առել Հասմիկին, հանկարծ երևաց մահը և հոգիս պահանջեց:

Ես բաց թողի սիրածիս և ասացի վախեցած.

- Այս աղջիկն իմ հոգին հափշտակեց, ու ես փաթաթվել իրեն, ուզում էի խեղդելով ետ խլել, երբ դու եկար:

Այս պատասխանից մահը բավարարված ասաց խրախուսիչ տոնով.

- Հա՞, որ այդպես է փաթաթվիր:

Եվ դրանից հետո շարունակ փաթաթվում էինք, մինչև որ մի օր էլ տեսանք մեր երկուսիս արանքում... մի փոքրիկ տղա:

- Ա՞յս որտեղից,- հայտնվելով գոռաց մահը բարկացած:

- Զգիտենք,- ասացինք:

Ես կնոջս վրա էի գցում, կինս՝ իմ:

Հետո ասացի.

- Մենք երբ իրար գրկեցինք, հանկարծ այս բանը պատահեց, ներող եղիր:

Մահը հավատաց, որ պատահածը դիտումնավոր չէր, թողեց հեռացավ:

Ես մահվանն այսքան շուտ խաբվող չէի պատկերացրել, ուստի դարձա կնոջս ասացի.

- Կպի՛ր, Հասմի՛կ ջան, ապրենք, մի՛ վախենա:

Ու ապրեցինք՝ անգամ չհիշելով, որ աշխարհում մահ գոյություն ունի։

Տարին մի երեխա էինք բերում։ Մի փառավոր պալատ շինեցինք՝ առջևը դրախտանման այգի։ Ծառի տակերը շարեցինք մեղվի փեթակներ։ Ամեն ամառ՝ կուրորտ, ամեն ձմեռ՝ տաք երկիր։ Սկսեցի գրել, և մարդիկ գրքերս խլխլում էին իրար ձեռքից։ Հռչակվեցի «հանճար» և փառքի մեջ խեղդվում էի։

Բայց մի օր էլ... լեզուս չի զոռում ասել... սոցիալիզմի թուխպը պատեց մեր երկնակամարը, փչեց Հոկտեմբերյան ցուրտ քամին, սկսեց թափվել արյուն ու արցունք, ամենուրեք սպանություն և հրդեհ, և ինչպես եղեգնի բոցից ծնվեց Վահագնը, այնպես էլ այդ հրդեհի բոցերից դուրս եկավ «խարտյաշ պատանեկիկ» Լենինը...

Վա՜յ մեր օրին։

Խուզարկվեցին բերնի բրդուճները. ում բրդուճի մեջ պանիր նկատեցին, նրան համարեցին «կուլակ» և տեղահան արին մեռնելու ոչ թե Սիբիայի անապատները, այլ Սիբիրի սառնամանիքները։

Խլեցին իմ տունը, այգին ու ողջ կարողությունս։

Խլեցին ձեռքիս գրիչն ու ինձ էլ միլիոնավորների հետ աքսորեցին Սիբիր, իսկ կնոջս ու երեխաներիս գցեցին փողոց։

Ու ես, որ ծնվելիս ստից էի կանչում մահվանը, հիմա ամբողջ հոգովս մահն եմ կանչում։

Բայց ե՞րբ է տեսնված, որ մահը գա, երբ իրեն կանչում են։ Նա գալիս է սովորաբար այն ժամանակ, երբ չեն կանչում...

Բաբելոնի երկրորդ աշտարակաշինությունը

Նոյ Նահապետի ժամանակ, երբ մարդիկ ամբարիշտացան, Աստված ջրհեղեղ արեց և բոլորին կոտորեց։

Այդ իր իրավունքն էր։ Այո՛, ամբարիշտ մարդկանց պետք էր կոտորել։

Ջրհեղեղից հետո հաշտության ծիածան ցույց տվեց մարդուն նույն Աստվածը։

Բայց ազատվածները չհավատացին Աստծու հաշտության ծիածանին և կասկածելով, որ կարող է մի երկրորդ ջրհեղեղ բերել իրենց գլխին, հավաքվեցին Սինաար դաշտը և կամեցան աշտարակ

շինել, որ երբ գա երկրորդ ջրհեղեղը, բարձրանան նրա ծայրը և ազատեն իրենց կյանքը[175]:

Սա արդեն վիրավորանք էր Աստծու հանդեպ: Աստված նրանց լեզուն խառնեց և այդ գործը խափանեց:

Այստեղ էլ ես Աստծուն իրավունք կտամ: Այո՛, երբ խոստմանը չեն հավատում, պետք է նրանց լեզուն խառնել:

Այսպիսով՝ տարբեր լեզուներով խոսող մարդիկ ցրվեցին ողջ աշխարհով մեկ, ամեն մեկն իր համար բնակավայր ընտրելով՝ մեկն իր երկիրը Բաբելոն անվանեց, մյուսը՝ Ասորիք, երրորդը՝ Հայաստան, հետո Հունաստան, Պարսկաստան, Հնդկաստան և այլն:

Այս բոլորը, ինչպես ասացի, շատ տեղին էր, շատ հարմար, շատ իրավացի:

Միայն ես չհասկացա, թե մարդիկ ինչ հանցանք էին գործել 1917 թվի հոկտեմբերին, երբ Աստված սոցիալիզմ բերեց մարդկության գլխին:

Մի «ջրհեղեղ», որ ամենաբարձր աշտարակն իսկ չազատեց աշխարհը կործանումից...

Ու մարդիկ իրենց կյանքը փրկելու համար սկսեցին արհեստական արբանյակներ, տիեզերանավեր կառուցել ու լուսնի վրա բարձրանալ:

Բայց այս անգամ Աստված մարդկանց լեզուն չխառնակեց, որովհետև արդեն խառնված էր, այս անգամ էլ նրանց երկրների անունները խառնեց: Այնպես, որ ոչ մի փոստատար չկարողանա պետությունների հասցեները գտնել ու նամակները տերերին հանձնել:

Ռուսաստանը կոչվեց ՍՍՌՄ: Ամերիկան՝ ԱՄՆ: Գերմանիայի կեսը՝ ԳՖՌ, կեսը՝ ԳԴՌ: Վիետնամը՝ ՎԴՌ, Հյուսիսային Կորեան՝ ԿԺՌ, իսկ Հարավայինն անուն չունի: Չինաստանը՝ ՉԺՌ, Եգիպտոսը՝ ՄԱՌ: Մոնղոլիան՝ ՄԺՌ: Հայաստանը, մեր գյուզալում Մայր Հայաստանը՝ ՀՍՍՌ:*

Հին ժամանակ բանաստեղծն ասում էր.

Ա՜խ, Հայաստան, ջա՛ն, Հայաստան,
Սիրտս ու հոգիս քեզ նվիրված թող լինի...:

Իսկ հիմա պիտի ասի՝ Ա՜խ, ՀՍՍՌ, ջա՛ն, ՀՍՍՌ:

* Գյուզալում- չնաշխարհիկ:

Առաջ կարելի էր երգել.

Նպատակիս հասնեմ միայն, թող ինձ հանեն կախաղան,

Կախաղանից խղճուկ ձայնով, պիտի գոչեմ՝ ա՛խ, Հայաստան...[176]

Հիմա կախաղանից եթե մեկը փորձի «ա՛խ, ՀՍՍՌ» պոռալ, բոլորը կծիծաղեն վրան։

Ինձ թվում է, թե սա երկրորդ «ջրհեղեղին» Աստված ավելի էր բարկացած մարդկանց վրա, քան առաջինի։ Որովհետև այն ժամանակ գեթ մի Նոյի իր ընտանիքով տապան դրեց, ազատեց, բայց այս երկրորդ աղետին ոչ մի տապան չի գա օգնության, և մենք Նոյ չենք ունենա...

Երերուն վիճակ

Սովետական Միությունն ու Չինաստանը՝ այդ զույգ կոմունիստական երկրները, չլսեցին Ամերիկայի խաղաղասիրական կոչերը, ու հիմա նա լուրջ կերպով պատերազմի է պատրաստվում՝ «Բավական է, վերջապես, ինչքան լուռ ու մունջ համբերեցի։ Կամ դես, կամ դեն» ասելով։

Ամերիկան պատերազմի է պատրաստվում, բայց չի իմանում ինչ մասշտաբով։

Ճիշտ է, Ռուսաստանն ու Չինաստանը կոմունիստներ են, Լենինի թոնդ հետևողներ, բայց նրանց մեջ տարակարծություններ կան։

Ըստ Ռուսաստանի՝ Լենինն ասել է, թե կապիտալիստների հետ պետք է խաղաղ գոյակցել և խաղաղ մրցությամբ նրանց հետ մրցել։

Չինաստանը, իր ծուռ աչքերով կարդալով Լենինին, գալիս է հակառակ եզրակացության։ Իբր Լենինն ասած լինի՝ զենքով պետք է նվաճել հակառակորդին և անհաշտ դիրք բռնել։

Հիմա երկու «եղբայրական» երկրների այս տարակարծությունները տատանման մեջ են դրել Ամերիկային։

Այսպես՝ Ամերիկան, իր զորքերը շարքի կանգնեցրած, մարզանք է կատարում։

Ասում է՝ դեպի ա՛ջ դա՛ր-ձի՛ր, ու կանգնում է։ Չի իմանում՝ հրաման տա՞ նաև դեպի ձախ դառնալ, թե՞ ոչ։ Որովհետև եթե միայն Չինաստանի հետ պիտի կռվի, միայն «աջ» դառնալով էլ նրան կջախջախի, իսկ եթե նաև միաժամանակ Ռուսաստանի հետ պիտի

կռվի, այն ժամանակ հարկավ միայն «աջ» դառնալով չի հաղթի և պետք պիտի լինի նաև դեպի «ձախ» դառնալ:

Եթե ոչ դեպի «ետ» ու «առաջ»:

Հրամանատարության այս տատանումները, բնականաբար, չեն կարող չազդել մարզվող զինվորի վրա, և նա, անտեսելով վերից եկած հրամանը, իր հարմարությանը նայի «աջ ու ձախ» դառնալիս:

Ու զարգացնելով իրեն տրված այս ազատությունը՝ նույն զինվորը պատերազմի դաշտում խփվելիս կամենա՝ կմեռնի, չկամենա՝ չի մեռնի...

Մինչդեռ պատերազմում հաղթում է այն զինվորը միայն, որ, իր կամքը մեկ կողմ դրած, միայն հրամանատարի հրամանն է կատարում:

Ամերիկային էլ քաջ հայտնի է պատերազմի սույն գաղտնիքը, բայց ինքն էլ է շվարել ու չգիտի՝ ինչ անի: Եթե Լենինը ողջ լիներ, կարելի էր, իհարկե, նրան հարցնել ու ճիշտն իմանալ: Բայց մեռածի խոսքը կենդանին ոնց ուզենա, այնպես կմեկնաբանի:

Հիշեցեք, թե Քրիստոսի Ավետարանը տարբեր կերպ մեկնաբանելու պատճառով, քրիստոնեական քանի՜ աղանդներ են կազմված...

Ի՞նչ ասեմ: Վերջապես վատ բան է, երբ մեկն անորոշության է մատնվում:

Նման անորոշությունից ես ինքս էլ եմ տառապում:

Չգիտեմ՝ սովետները դեռ երկա՞ր պիտի իշխեն մեզ:

Ես ապրում եմ այն հույսով, որ մի օր պիտի չքվեն, և մենք ազատ շունչ քաշենք: Եթե չեն չքվելու, այսպես ի՞նչ արժե ապրելը:

Հիմա ես մեռելի վրա լաց եմ լինում նրա համար, որ ազատ օր չտեսած՝ մեռավ: Իսկ եթե իմանամ, որ ինչքան էլ ապրեր, միևնույն է ազատ օր չէր տեսնի, ես ոչ թե կուլամ, այլ կծիծաղեմ նրա գերեզմանի վրա: Կշնորհավորեմ, որ մեռավ ու այս ստրկությունից ազատվեց...

Բայց ես այս զգացմունքներն ունեցել եմ նաև Լենինից առաջ՝ իմ երիտասարդությանը:

Հիշում եմ՝ այն ժամանակ սիրում էի մի օրիորդի: Նա միշտ չեմուչում էր անում: Բայց երբ մի վիճակախաղ շահեցի մեծ գումարով, աղջիկը, ինձ փաթաթվելով, հավերժական սեր ուխտեց:

Ես, հարկավ, չմերժեցի այդ սերը, բայց ամեն անգամ, երբ պետք

էր լինում մեր «հավերժական սերն» ի կատար ածել, գործողության ժամանակ ես ամերիկյան տատանումներ էի ունենում՝ չիմանալով, թե աղջիկն ինձ իսկապես սիրով է սիրում, թե նպատակը շահադիտական է:

Եթե երբևիցե սիրել եք, գիտեք անշուշտ, որ նման պահերին մարդը հաճույքից իր աջն ու ձախն է մոռանում և ամբողջ ճակատով «հարձակվում» է գոռում: Բայց ես՝ ոչ: Ես «հարձակվում» էի՝ ամեն րոպե նահանջի պատրաստ:

Եվ լավ էր, որ այն ժամանակ Լենինն անհայտ էր. եթե ներկայիս պես հայտնի լիներ, իմ անհաջող սիրո մեղքը խեղճ մարդու վրա պիտի ձգեի...

Քամու դերը բժշկության մեջ

Իմ պատմության ուսուցիչ Գրիգոր Սրբատաշյանն իննսունից անց էր, երբ մեռավ:

Մեր ժամանակի ամենագիտուն մարդը:

Աշխարհում փիլիսոփա չէր թողել, որ կարդացած չլիներ:

Ինքը՝ փայլուն ֆրանսագետ, փիլիսոփա՞ կդիմանար նրան:

Բայց մարդու գլուխն էլ որոշ տարողություն ունի, խոմ չի՞ կարելի աշխարհի ողջ գիտությունը մի մարդու գլուխը լցնել:

Այս իրողությունը հաստատվեց նրանով, որ ուսուցիչս իր վաթսունամյա հասակում ուղեղի խանգարում ունեցավ, և բժիշկները խորհուրդ տվին այսուհետ կարդալ շատ թեթև, անմիտ գրքեր: Գրքեր, որոնք օդից էլ թեթև լինեն (որովհետև օդի մեջ կան թթվածին, ածխածին և բորակածին գազեր), մի խոսքով՝ անբովանդակ քամի, որ հետզհետե սրբի-տանի գլխում խճողված ավելորդ մտքերը:

Նկատի առեք, որ այն ժամանակները դեռ սովետները չէին գրավել մեր երկիրը, և չկար Պետհրատ:

Հեղինակներն իրենց գրքերը որովհետև հրատարակում էին իրենց ծախսով, ստիպված էին մեջը մի միտք դնել, որ սպառվեր:

Ուրեմն, ուսուցչիս հիվանդությունը հայտարարվեց անբուժելի:

«Խելքից պատուհաս» որ ասում էին, եկավ կատարվեց խեղճ պատմաբանիս գլխին...

Բայց մի օր էլ հանկարծ գիտնականի բախտը բացվեց: Պայ-

թեց Հոկտեմբերյան հեղափոխությունը, և հին կարգերը շուռ եկան Ռուսաստանում՝ իր հետ շուռ տալով նաև մարդուն։

Հեղաշրջման պատճառով «նոր մարդն» սկսեց գլխով քայլել ու ոտներով մտածել…

Որի հետևանքով էլ սոցիալիզմը մտավ երկիրը, ու հիմարությունը երկրում ծովացավ։

Իսկական մտքի Սահարա։

Այնքան շատ թերթեր լույս տեսան, որ գետնի վրա չտեղավորվելով՝ կախեցին պատերից և «պատի թերթ» անվանեցին։

Ով գրիչ բռնել գիտեր, գրող դարձավ ու հաստափոր գրքեր գրեց, իսկ Պետական հրատարակչությունը ստուգելուց հետո, երբ տեսավ՝ միտք չկա մեջը, տպեց։

Վիպասանությունն այնպիսի շահութաբեր արհեստ դարձավ, որ շատ անգրագետներ նախ գրում էին, հետո դպրոց մտնում գրագիտություն սովորելու համար։

Այս պայմաններում Գրիգորն էլ ինչ դարդ ուներ։ Միայն Լենինի գրած վաթսունհինգ հատորները կարող էին ոչ միայն մի, այլ երկրի ամբողջ գիտնականների գլուխը դատարկել մի ակնթարթում։

Դուք ծանոթ եք սոցիալիզմի քամու ուժին. նա կարող է հսկա ջաղացներ պտտեցնել, Գրիգորի գլուխն ինչ է, որ չպտտվի։

Պատմությունս չերկարելու համար ասեմ, որ կարդալով այս գրականությունը՝ ուսուցիչս շատ շուտով դատարկեց իր գլուխը և մեռավ միանգամայն… անմիտ։

Սա առաջին դեպքը չէ։ Ես քամու բուժման հանդիպել եմ մի այլ տեղ ևս։

Փորում ոլորվել էր աներորդուս աղիքը։ Որ բժշկի տարանք, ասաց՝ պիտի հերձենք։ Բայց պատահեց նաև մի բժիշկ (Սիմոնյան), որ բուժեց այդ հիվանդությունը առանց հերձելու։

Նա օդամուղ գործիքով հիվանդի հետույքից քամի ներս մղեց, ու բոպեապես աղիքներն իրենց տեղն ընկան։

Խաչաձև ամուսնություն

Իբրև ժառանգություն ես հորից ստացա մի կավաշեն խարխուլ տուն միայն։

Այդ տանն էլ ամուսնացա։

Ամուսինս, ոչինչ, լավ կին էր, բայց մի փոքր... շատ էր մաքրասեր։ Որովհետև մկներն առաստաղից անվերջ հող էին թափում հողի հատակին, կինս ավելը ձեռքից բաց չէր թողնում, հարավից ավլում էր, գալիս հյուսիս, հյուսիսից ավլում էր, գալիս հարավ։ Եվ այսպես անվերջ։

Սկզբում, երբ մեր սերը չէր տաքացել, քնում էինք առանձին մահճակալների վրա՝ կողք կողքի դրված։ Բայց երբ այդ սերը շիկացավ, մահճակալներից մեկը ծալեցի վերցրի, ու միասին էինք պառկում։

Մահճակալների այդ սղման պատճառը միայն սերը չէր։ Եթե անգամ ատելիս լինեինք իրար որպես ոխերիմներ, աշնան ու գարնան անձրևներին մենք պիտի մեկտեղվեինք, որովհետև սենյակը սաստիկ կաթում էր, և պետք ունեինք իրարով ծածկվելու՝ երկուսս միասին չթրջվելու համար...

Լավ թե վատ, վերջապես ապրում էինք։

Մի օր էլ լուր բերին, թե ձեր տունը պլանի տակ է ընկնում, պիտի թողնեք և նորակառույցում ապրեք։

Իսկ գիտե՞ք՝ ինչ բան է այդ նորակառույց ասածը։ Չգիտեք, ասեմ, պատմեմ։

Տաճկաստանում ծանր հանցագործին պատժելու համար նրան հագցնում էին մի լայն շալվար, մեջը մի կատու գցում և դրսից սկսում էին հարվածել կատվին, իսկ կատուն կատաղած սկսում էր ճիրաններով հոշոտել հանցագործի ամբողջ մարմինը։

Նորակառույցը ճիշտ թուրքական այդ շալվարն է՝ միայն մի փոքր ավելի նեղ կարած։ Նորակառույցը մետրով չափում, նոր են տալիս բնակչին, մինչդեռ շալվարները կարվում էին աչքի չափով, ըստ խղճմտանքի։ Բացի դրանից՝ շալվարի մեջ գցում էին մի կատու միայն, իսկ նորակառույցում՝ աշխարհի բոլոր մարդակեր գազաններին միասին վերցրած։

Շալվարի ու նորակառույցի երրորդ տարբերությունն այն է, որ

շալվարի՝ թանձր կտորից կարված լինելու շնորհիվ կատվի ձայնը լսելի չէր լինում դրսում, իսկ այս պետական տան մեջ եթե գիշերը կնոջդ ականջին մի բան փսփսաս, առաջ շրջապատիդ հարևանները կիմանան, նոր քո կինը:

Ճիշտ այնպես, ինչպես մեր երկրում տեղի ունեցած որևէ փոփոխության մասին մենք նախ Ամերիկայից ենք իմանում, հետո մեր թերթերից:

Արդ: Այն մեկ սենյակը, որ հատկացրին մեզ ապրելու, գտնվում էր շենքի առաջին հարկում:

Մեր վերևում ապրում էր մի ընտանիք՝ մեզ նման մարդ ու կնոջից բաղկացած:

Ասինք՝ լավ է, խախանդ կլինենք, մեր գլխի վրա շատ չեն վազվզի ու գիշերները մեզ չեն խանգարի:

Խոմ ինչ սև խախանդ: Այս ամուսիններն ամառվա կարճ գիշերներին անգամ իրարից տասն անգամ խռովում, տասն անգամ հաշտվում էին: Նրանց քով քովի դրված մահճակալները ցերեկները, երբ պարապ էին, ապրում էին հաշտ, բայց երեկոները, երբ պառկում էին տերերը, կարծես այդ մահճակալների մեջ սատաններ էին մտնում: Սենյակի մի ծայրից մյուսը ղռղռալեն գնում էին ու գալիս:

Սիրով քչփչում են: Մեկ էլ տեսար մի խոսք դիպավ կնոջ սրտին, ու ահա իր մահճակալը քաշեց սենյակի հեռավոր պատի տակ: Հետո, անհայտ է, թե ինչ մտածելով (որովհետև սենյակի պատերն ու հատակը այնքան թանձր են, որ մտածմունքները չեն հաղորդվում), մեկ էլ քաշելով անվավոր մահճակալը՝ տարավ ամուսնու մահճակալին կպցրեց և «հավիտենական սեր» ուխտեց:

«Հավիտյաններ», որոնք կես ժամից այն կողմը չէին անցնում:

Չէինք ապրել այսպես վեց ամիս, մեկ էլ տեսա՝ կինս իրեն վատ է զգում: Ձղերը պրկվում են, և խոսքերը դառնում են անկապ:

Բժիշկն ասաց.

- Դա խելագարության նախանշաններ են, զգո՛ւյշ կաց:

Իսկ ես ինչպե՞ս զգույշ կենամ: Ինձանից ինչ է կախված: Պետք է վերի ապրողները կա՛մ վերջնականապես սիրեն իրար, կա՛մ վերջնականապես ատեն, որ ես զգույշ կենամ:

Ինչ անեմ, Աստվա՛ծ, ինչ անեմ...

Մտածեցի, մտածեցի ու վերջապես ելքը գտա:

Ես մեր վերի ապրողի հետ հարաբերության մեջ մտա այն հույսով, որ հետագայում կմոտենանք ու հնարավոր կլինի մեր կանանց փոխանակել իրար հետ։

Ինչ կա որ։

Ասեմ անմիջապես, որ ես, բարոյականությունը համարելով կրոնի մի մաս, բոլորը միասին ժխտում եմ։ Երբ փոխանակությունը կատարվում է փոխադարձության պայմաններում, դա և՛ օգտակար է, և՛ հաճելի։

Ինչ է նշանակում միշտ միևնույն կինը։

Գյուղատնտեսության մեջ, օրինակ, ընդունված չէ տարիներ շարունակ միևնույն սերմերը միևնույն հողի մեջ ցանել։ Հողն ուժից ընկնում է, և սպասված բերքը չի տալիս։

Ինչո՞ւ մարդը պիտի բացառություն կազմի, չէ՞ որ նա էլ նույնպիսի օրգանական արարած է, ինչպես բույսն ու կենդանին։

Ուստի ես շատ շուտով մոտեցա հարևանիս հետ, ու մենք «խաչաձև բեղմնավորման» սիստեմին անցանք...

Իմ կինը, նրանի հետ համեմատած, ավելի գեղեցիկ էր, ու նա շուտ մտերմացավ, բայց ես մի փոքր դժվարություն քաշեցի, որովհետև հարևանիս կինը ինձ դուր չէր գալիս։

Բայց անդուլ աշխատանքն ամեն արգելք հաղթում է։ Բավական է, որ ես փրկեմ կնոջս խելագարությունից։

Հիմա ապրում ենք շատ լավ։

Գիշերները ֆունիկուլյորի վագոնների նման նրա կինը իջնում է ցած, իմ կինը բարձրանում է վերև...*

Միայն մի բանից եմ վախենում։

Ասում եմ՝ չլինի՞ հանկարծ երրորդ հարկի բնակիչներն էլ իրենց մահճակալները դես ու դեն քաշեն, և կինս այդ դժվարությունից էլ ազատվելու համար երկրորդ հարկից երրորդ բարձրանա։

Բայց երևակայեցեք՝ դրան էլ եմ համաձայն։ Քանի հարկ ուզում է թող բարձրանա, միայն թե կնոջս մի բան չպատահի։

Երբ իմ ներկա կյանքը համեմատում եմ անցյալի հետ, չափազանց երջանիկ եմ զգում ինձ։

Ասում եմ՝ իմ հին հողաշեն տան կտուրից անձրև էր կաթում գլխիս, նորակառույցի կտուրից՝ կին...

* Ֆունիկուլյոր- ճոպանուղի։

«Գաղտնի բաժին»

Սովետական Միության բոլոր հիմնարկներում գոյություն ունի «գաղտնի բաժին»։

Դա մի սենյակ է, ուր նստում է Չեկայի ներկայացուցիչը ու բանալու ծակից հետազոտում հիմնարկի անցուդարձը, կասկածելի մարդու նկատելիս գրում է հանցավորի անունը և ուղարկում Չեկա, որ գիշերով գան, բռնեն տանեն ու գնդակահարեն։

Բայց գաղտնի բաժինը հատուկ չէ միայն Չեկային։

Գաղտնի և հայտնի բաժիններ ունեն ոչ միայն անհատները, այլև խոշոր պետությունները։

Ինչ են դեսպանների փոխանակումները պետությունների միջև։ Դրանք հայտնի բաժնով իրենց հպատակների շահերն են պաշտպանում (որպես թե), իսկ գաղտնի բաժնում բանալու ծակից լրտեսում են նրա ռազմական կարողությունները։

Հայտնի բաժնում կոմունիստ Ռուսաստանը գաղութներն ազատագրում է ճնշողների լծից, իսկ գաղտնի բաժնում տիրում է այդ երկրներին և նստում նրանց գլխին։

Այն պրոպագանդիստները, որոնք, մարքսիզմ-լենինիզմը թևի տակ, գնում են գյուղեր՝ սոցիալիզմ քարոզելու, իրենց փեշի տակ պահում են տոպրակներ ու կճուճներ, որ կոլխոզներից էժան գնով յուղ ու պանիր ձեռք բերեն։

Ես անձամբ տեսա մի անգամ, թե ինչպես այդպիսի մի պրոպագանդիստ ավտոյից վայր թռչելիս գլխիվայր գլորվեց, ու փեշի տակի յուղն ու պանիրը, գլխում եղած մարքսիզմն ու լենինիզմը միախառնվեցին իրար, ու խեղճի գաղտնի ու հայտնի բաժիններն իրարից զանազանել չէր կարելի։

Արևելյան Գերմանիան հայտնի բաժնում անկախ պետություն է, իսկ գաղտնի բաժնում՝ Ռուսաստանի մի նահանգ։

Նույնպես և Հյուսիսային Կորեան ու Վիետնամը։

Մեր բանաստեղծներից շատերը հայտնի բաժնում ընդհանուր հայ ազգն են սիրում, բայց գաղտնի բաժնում միայն նրա աղջիկներին նկատի ունեն։

Մի բանաստեղծ միայն աղջկան իր հայտնի բաժնում սիրեց՝ ասելով.

«Հայոց աղջիկներ, ձեր հոգուն մատաղ»[177]:

Իսկ մնացյալ բոլորը՝ բանալու ծակից:

Հեռու չերթանք, ես էլ եմ այդպես:

Փողոցում մի գեղեցիկ կին տեսնելիս այնպես եմ անցնում կողքից, որ կարծես նրա հոգուն չեմ մեռնում. մինչդեռ գաղտնի բաժնումս նրա ոչ մի տեղը չեմ թողնում, որ չմեռնեմ: Նրա ոտների կոխած տեղերն անգամ ուզում եմ համբուրել:

Ես միշտ երկու բնակիչ եմ ունեցել՝ օրինական կին ու սիրեկան, որոնք անկախ կերպով ապրել են իմ զույգ բաժիններում՝ չունենալով անգամ ֆեդերատիվ կազմ, ինչպես մի ժամանակ ունեին Հայաստանը, Վրաստանը և Ադրբեջանը...

Բայց այն էլ պիտի ասեմ, որ ես իմ գաղտնի բաժնի բանալու ծակից երբ նայել եմ գեղեցիկ կանանց, երբեք չեմ մտածել Զեկա ուղարկել նրանց անունները, որ կանչեն, սպանեն:

Ես այդ անունները գրել եմ սրտիս ամենախորունկ էջերում, որ երբ աղոթելիս երկինք նայեմ, Աստուծո փոխարեն՝ նրանց պատկերը տեսնեմ, նրանց առաջ ծնրադրեմ...

Հիվանդանոցում

Ես պառկած եմ հիվանդանոցում, բայց չգիտեմ մարմնակա՞ն, թե՞ հոգեկան հիվանդանոցում:

Կարծեմ հոգեկան: Որովհետև մերժում եմ բժշկվել և վանում եմ ինձ մոտեցող բժիշկներին: Ասում եմ. «Ես պիտի շտապ մեռնեմ և գնամ պատռելու Աստծու՝ այդ տիեզերական խաբեբայի դիմակը: Աստծու և Սովետական Միության»:

Աստված Ադամից սկսած մարդկանց մեռցնում, հողի տակ թաղում և ասում է. «Շուտով Գաբրիել հրեշտակին կուղարկեմ՝ իր փողը փչի ու ձեզ վերջին դատաստանի կանչի»: Խեղճ մեռելները դարերով սպասում են հողի տակ, ամեն փողի ձայնին գլուխները գերեզմանից դուրս են հանում, դեսուդեն նայում ու չգտնելով որևէ հրեշտակ՝ կրկին մեռնում:

Վերջին դատաստան կամեցող Աստված պետք է կամաց-կամաց պակասեցներ որդեծնությունը և ի վերջո փակելով արգան-

դի դռները՝ կյանքն իսպառ վերացներ և գործի անցներ։ Մինչդեռ դրան հակառակ՝ թույլ է տալիս, որ Սովետական Միությունում կառավարությունը շատ զավակի կոնկուրս բաց անի ու բազմազավակ մայրերին շքանշաններ բաժանի։

Աստուծո օրինակին կապկաբար հետևում է Սովետական Միությունը։ Այն Սովետական Միությունը, որը, որպես թե, Աստված չի ճանաչում։

Սա էլ իր երկիրը դրախտ շինելու պատրվակով մարդկանց անվերջ գնդակահարում ու թաղում է՝ անգամ Գաբրիել հրեշտակապետի խոստում չանելով։

Միայն մահն այս երկրում այնպես կատաստրոֆիկ չէ, ինչպես Աստուծո մոտ։

Աստված մահվանից առաջ թույլ է տալիս մարդուն կուշտ ու կուռ ապրել, ազատ մտածել և ինչ ուզենալ, այն անել։ Դրա համար էլ այդպիսի կյանքից զրկվելը շա՜տ դժվար է։

Իսկ Սովետական Միությունում մարդիկ ապրում են կիսամեռ։ Ո՛չ կուշտ ուտում են, ո՛չ ազատ մտածում։ Կառավարությունը մարդկանց գլուխները սեղմել է մարքսիզմի ու լենինիզմի արանքում, ճզմում է, իսկ փորն էլ զի քո է։

Այնպես որ այստեղ կյանքից դեպի մահվան անցումն այնքան աննկատելի է լինում, սահմանագիծն այնքան աննկատելի, որ հաճախ մարդը մոռանում է, թե ինքը մեռել է։ Բժիշկներն են հիշեցնում։

Հիմա։

Ես ասացի, որ պառկած եմ հիվանդանոցում և ուզում եմ մեռնել։

Հարցրեք՝ ինչո՞ւ ես ուզում մեռնել։

Ես մեռնում եմ, որ մի անգամ ընդմիշտ ազատեմ թշվառ մարդկությանը իր խաբեբա աստվածներից։

Բավական է վերջապես։ Համբերությունն էլ իր սահմանն ունի։

Եվ չմոռանամ ասել, որ իմ հույսն ավելի շատ իսկական մեռելների վրա եմ դրել, քան Միության կիսամեռների։

Կիսամեռը վախկոտ է լինում և ռիսկի չի դիմում։

Եթե սովետական ժողովուրդն ամբողջապես մեռած լիներ և ոչինչ չունենար կորցնելու, մեկեն կծառանար իր կառավարության դեմ և կասեր.

- Ինչ ես անում, սրիկա՛։ Ինչ սա քառասունհինգ տարի սոցիա-

լիզմի թոկը մեր վզին կապած՝ քարշ ես տալիս մեզ դեպի ամայի անապատ։

Եվ իր չունեցած ատամներով բզիկ-բզիկ կաներ նրան։

Բայց չի անի։

Այդ պատճառով էլ ես մեռնելիս իմ դիակառքը պիտի քշել տամ մինչև Ադամի ժամանակվա մեռելները և ոտքի հանեմ նրանց իրենց խաբեբա Աստծու դեմ։

Պիտի ասեք՝ զե՞նք չունեն։

Օ՜, այդ մի՛ ասեք։ Խելագարված ամբոխն իր գանգը կվերցնի ու բռնակալի գլխին կխփի։

Ես Եղիշե Չարենցի նման չեմ խելագարեցնի իմ «ամբոխը», որ գնա իր գլուխը դնի բռնակալների ոտքերի տակ։

Երևակայում եմ, թե Ադամն ինչպիսի՜ ոխ պահած պիտի լինի Աստծու դեմ։ Օյին մնա՞ց, որ չխաղաց խեղճ մարդու գլխին...

Միայն Ադա՛մն Աստծու հախիցը կգա։

Եթե մի Ադամ էլ ճարեմ, որ սովետական կառավարության հախիցը գա, հաղթանակս ապահովված կլինի։

Իմ դրոշակի վրա գրված կլինի. «Կորչե՛ն ամեն տեսակի աստվածներն իրենց դրախտներով ու դժոխքներով։ Մենք հավասարապես թքում ենք Աստծու ստեղծած հին մարդու և Լենինի ստեղծած «նոր մարդու» վրա։ Ձեռներդ հեռո՛ւ ստեղծագործությունից։ Մենք մեզ կստեղծենք, կապրենք ու կմեռնենք առանց երկրորդի օգնության»։

Ես մեծ հույս ունեմ իմ առաքելության վրա։

Միայն մի բանից եմ վախենում։ Վախենում եմ հանկարծ այդ աստվածները... գոյություն չունենան։ Խրուշչովի անկումից հետո կարծես Ռուսաստանում կառավարություն չլինի...

Ադամ երկրորդ

Ես երբ արթուն եմ, ապրում եմ երևակայությամբ, երբ քնած եմ՝ երազներով։

Այս երկրում ուրիշ կյանք չկա։

Ու թե ինչո՞ւ շարունակ Աստուծով ու մեռելներով եմ զբաղվում, այդ էլ նրանից է, որ մեր երկրի սահմանները փակ են։ Ո՛չ Անգլիա

կարող ես գնալ, ո՛չ Ֆրանսիա։ Մարզանքի ժամանակ անգամ չես կարող ձեռներդ ազատ կերպով դեպի աջ կամ ձախ տարածել։ Արդության Երկայնաբազուկը[178] եթե ողջ լիներ, սովետական բանտում պիտի մեռներ։ Նա իր բազուկը որքան էլ սեղմ տարածեր, դարձյալ Միության սահմաններից դուրս պիտի գար, և այդ պիտի նկատվեր «փախուստի փորձ»։

Չէ՛, ես վախկոտ մարդ եմ, և մարզանքիս միայն «վե՛ր-վա՛ր, վե՛ր-վա՛ր» հրամանն եմ տալիս բազուկներիս։ Իսկ «մա՛րշ» ասելիս՝ միշտ «տեղում»...

Ինչպես ասացի, ինձ մեղադրում են այն բանում, որ ես Աստուծով և մեռելներով շատ եմ զբաղվում։

Զզբաղվեմ ի՞նչ անեմ։ Վերև՝ Աստված, ներքև՝ մեռել։

Հենց այս բոպեիս երկնքից եմ գալիս և պիտի պատմեմ, թե ես ու Աստված ինչ օյիններ խաղացինք իրար գլխի։

Ես, ուրեմն, դեռ ստեղծված չեմ։

Աստվածն ասաց.

- Արի քեզ ստեղծեմ՝ որպես երկրորդ Ադամ։ Առաջինը հաջող դուրս չեկավ, նրա սխալները քեզնով ուղղեմ։

Ասացի՝ ստեղծի՛ր։ Այն հույսով, որ հետո էլ մի Եվա կստեղծի, և ես մի լավ կսիրեմ։

Տեսա՝ թքեց մի բուռ հողի վրա և ցեխ է շաղախում, որ ինձ ստեղծի։

Սիրտս խառնեց, բայց Եվայի սիրուց ինձ պահեցի։

Ստեղծեց։ Ասում է.

- Դե գնա՛, քեզ համար մա՛ն արի։

- Բա Եվա՞ն,- ասում եմ ես։

- Եվա չկա։ Հենց այդ գործածս սխալն եմ ուզում քեզ վրա ուղղել։ Եվա՞ն չեղավ ողջ մարդկության դժբախտության պատճառը։

- Ինչ ես ասում... Իսկ ես կարծում էի՝ քո սխալը կուղղես նրանով, որ մեկի տեղ երկու Եվա կստեղծես։

- Սխալվել ես, սիրելի՛ս։

- Ուրեմն չե՞ս ստեղծի։

- Ո՛չ։

- Այն ժամանակ ինձ էլի հո՛ղ դարձրու։

Աստված սկսեց համոզել.

- Բալա՛ Ջան,- ասաց,- ողջ աշխարհն իր բարիքներով քեզ եմ տալիս, կե՛ր, խմի՛ր ու ազատ մա՛ն արի։

- Աստվա՛ծ,- ասացի,- ինչպես ձվի դեղնուցը, այնպես էլ կյանքի առաջին բարիքը կինն է, կին չեղած աշխարհում ես ի՞նչ անեմ։

- Ադա՛մ,- ասաց Աստված,- չեմ ստեղծի, եթե ստեղծեմ էլ, այնպիսի գեշ կին կստեղծեմ, որից մինչև աշխարհի ծայրը կփախչես։

- Աշխարհի առաջին կինը չի կարող տգեղ լինել։ Կինը տգեղ է այն ժամանակ, երբ հարևանիդ կնոջ հետ ես համեմատում։ Իսկ երբ հարևան չկա, ամեն մեկն էլ գեղեցիկ է։ Միայն անունը «կին» լինի։

Ասացի ու ավելացրի.

- Ռուսաստանին նայի՛ր։ Ցարի ժամանակ որքա՞ն շատ կուսակցություններ կային։ Բայց երբ բոլշևիզմը մտավ Ռուսաստան, բոլոր հարևան կուսակցությունները բնաջինջ արեց, որպեսզի չհամեմատվի ուրիշի հետ և ինքը գեղեցիկ երևա։ Ինչպես հիմա մեկը եթե կամենա կուսակցական լինել, ուզի-չուզի պիտի բոլշևիկ դառնա, այնպես էլ եթե գեշ կին ստեղծես, ուզեմ-չուզեմ նրան պիտի սիրեմ։

Աստված, տեսնելով, որ չի կարող համոզել ինձ, ասաց.

- Եթե ստեղծեմ, դրախտից քեզ կվռնդեմ։

- Վռնդի՛ր,- ասացի,- կին եղած տեղն է դրախտը։

- Իսկ չեղած տեղը՝ դժո՞խք։

- Ավելի վատ, քան դժոխքը, որովհետև այնտեղ թեկուզ մեղավոր, բայց կանայք են տանջվում։ Իսկ քո դրախտում, ուր կին չկա, ինձ համար կատարյալ դժոխք է։

Սրանով էլ վերջացավ իմ խոսակցությունը Աստուծո հետ։

Անցան տարիներ։

Մի օր էլ լսեցի, թե Աստված «ավետիք» է տվել կույս Մարիամին։

Անմիջապես երկինք բարձրացա ու ասացի.

- Տեսա՞ր, Աստվա՛ծ, դու էլ անկին չդիմացար։

Տեսա՝ Աստվածն ամաչեց ու թազա փեսայի նման գլուխը կախեց…

Անժամանակ պառաված աղջիկը

Հասակով շատ մեծ չէ Արևելյան Գերմանիան։

Երկրորդ համաշխարհային պատերազմից առաջ գեղեցիկ Գերմանիայի անբաժանելի մասն էր կազմում իր կես Բեռլինով։ Վիշտը, անամոքելի վիշտը ծերացրեց նրան, դարձրեց դախ աղջիկ և նստեցրեց տանը։

Ինչ վիշտ ունի Արևելյան Գերմանիան։ Պատերազմից հետո զավթեց նրան կարմիր Ռուսաստանը՝ կարմիր ներկ քսելով խեղճի երեսին, այլանդակեց նրան այնպես, որ այնուհետև ոչ մի պետություն նրա երեսին չէր նայում, նրան չէր ճանաչում։

Աշխարհի բոլոր պետություններն իրար տուն գնում-գալիս էին, ասում-խոսում, առևտուր անում, իսկ Արևելյան Գերմանիան, անկոչ հյուրի նման Եվրոպայի քարտեզի վրա պպզած, ավելորդ տեղ էր գրավում։

Ռուսաստանը մեծ էր, չէր կարող նրա հետ պսակվել, հասակակից պետություններն էլ խուսափում էին նրանից։

Այսպես ամբողջ քսան տարի անմխիթար ապրելուց հետո, երբ ճանաչվելու բոլոր հույսերը կտրել էր, մեկ էլ Եգիպտոսը լուր ուղարկեց, թե՝ ես քեզ ճանաչում եմ, արի միանանք։

Ելավ հայելու մոտ գնաց Արևելյան Գերմանիան, մազերը հարդարեց, հագավ իր հարսանեկան զգեստներն ու ճամփա ընկավ դեպի Եգիպտոս։

Իսկ այնտեղ՝ մի նոր հարված իր հեգ սրտին։

Պարզվեց, որ Եգիպտոսը կանչում է ոչ թե նրա հետ ամուսնանալու, այլ... կուլտուրական կապ հաստատելու։

Իսկ դիվանագիտական իմաստով այդ նշանակում է «դուդուկով երեսը պաչել»...

Եվ ոչ միայն Եգիպտոսը, այլև Աֆրիկայի ազատագրված պետությունների մեծ մասը։ Իրենց շամբուտներից մի-մի եղեգ կտրած՝ գալիս էին համբուրելու Գերմանիային։

Այժմ պատմեմ, թե ինչ պատճառով Եգիպտոսը թեկուզ դուդուկով, բայց այնուամենայնիվ համբուրեց Արևելյան Գերմանիային։

Դրա պատմությունը հետևյալն է։

Մի ժամանակ Պաղեստինում ապրում էին հրեաները։ Ժամանա-

կի ընթացքին հզորացան շրջապատի արաբական ցեղերը և հրեաներին դուրս քշելով իրենց երկրից՝ տիրեցին այն։

Մի օր նրանց մոտ հյուր եկավ Անգլիան։ Արաբների հետ ասել-խոսելուց հետո հանկարծ իր նստած տեղում մի հրեական պետություն ածեց, անունը դրեց Իսրայել ու հեռացավ՝ արաբներին դնելով կատարված փաստի առջև։

Արաբները, այս խարդախ թխսումից զայրացած, զենք վերցրին, Իսրայելին ասացին՝ դե՛ս կորիր, դե՛ն կորիր, Իսրայելը ոչ մի տեղ էլ չկորավ, կռվեց ու իր տեղում հաստատվեց։

Արաբների միակ հույսը մնաց այն, որ թույլ չտան որևէ պետության՝ նրան ճանաչի ցնոր տնօրինություն։

Ճիշտ այս պահին Արևմտյան Գերմանիան ճանաչեց Իսրայելին։

Ի պատասխան այս ճանաչման՝ արաբական բոլոր տասը պետություններն իրենց դեսպանները ետ կանչեցին Բոննից ու Արևմտյան Գերմանիային կատաղեցնելու համար ելան ճանաչեցին Արևելյան Գերմանիային։

Մի գործողություն, որ սովորաբար կատարվում է երկու ամուսինների միջև։

Մարդը սիրեկան է պահում, կինն էլ իր մարդու խանդը շարժելու համար մի չսիրած մարդու հետ կապ է հաստատում, դուդուկով պաչում, պայմանով, որ երբ մարդն իր սիրեկանից հրաժարվի, ինքն էլ չսիրած մարդուց հրաժարվի, և դառնան նորմալ ամուսիններ։

Այնպես որ, որ բոպեին Արևմտյան Գերմանիան դադարի ճանաչել Իսրայելը, արաբները, Արևելյան Գերմանիային թողած, Արևմտյանի գիրկը կընկնեն։ Ինչո՞ւ։ Որովհետև Արևմտյան Գերմանիան առնական պետություն է, իսկ Արևելյանը… սեռ չունի։

Պետական ճանաչողություն

Պետության ու ձմերուկի լավն ու վատը շատ դժվար է որոշել։

Ես որ ձմերուկ եմ առնում, ճիշտ է, մատով տմբտմբացնում եմ, ականջներիս տակ խշշացնում, բայց բան չեմ հասկանում։ Տանում եմ տուն՝ դդում։

Հաճախ կտրել եմ տալիս, մեջը՝ կարմիր։ Բայց խոմ ամեն կարմիր բան քաղցր չի՞ լինում։

Վերցնենք Ռուսաստանը։ Կտրում ես, մեջը՝ կարմիր, ուտում ես, անհամ-անհամ…

Դրան հակառակ՝ ես լավ եմ ճանաչում լավ ու վատ պետությունները՝ անգամ առանց տմբտմբացնելու ու ականջի տակ խշշացնելու։

Նայում եմ. այն պետության վարչապետը, որը չորս տարին մի անգամ չի փոխվում, նրան փող չեմ տալիս, դա անպետք է։

Վերցնենք Իսպանիան։

Տնաշենի Ֆրանկոն անհիշելի ժամանակներից կարծես թուխս է նստել Իսպանիայի վրա և անգամ իր բնական պետքերը հոգալու համար մի անգամ չի բարձրանում տեղից՝ վախենալով, որ այն կգրավեն։

Ստալինը երեսուն տարի նստեց Ռուսաստանի վրա և մեկ-մեկ տակի ձվերը ծակեց և ռուս ժողովրդի արյունը խմեց։

Ինչպես գիտեք, լուծ ունեցողի փորը վերջում սաստիկ պնդանում է։

Ֆրանսիան, որ մի ժամանակ վարչապետական լուծ էր ապրում, հիմա Դը Գոլից հետո այնպես պնդվեց, որ կլիզմայի խիստ կարիք ունի։*

Նայեցե՛ք Չինաստանին։

Այդ վեց հարյուր միլիոն չինացիներին փոքրիկ Չժոու Են Լայն[179] ինչպե՞ս է սեղմել իր տակ՝ թույլ չտալով, որ գեթ մեկն իր կտուցը դուրս հանի։

Անշարժ վարչապետները զգեստի միաձույլ պահարանների նման դուրս չեն գալիս իրենց երկրի դռնից, այդ պատճառով էլ ցմահ են։

Նման վարչապետների երկրում թունավոր օձեր չկան. բնակչությունը միայն լորտուներ են, որոնք իրենց փափուկ մարմնով միայն սողում եմ վարչապետի ոտների տակ և լիզում նրա ոտները։

Իսկ Ստալինը, անգամ այդ լորտուներին օձ կարծելով, գլուխները ջախջախում էր…

---

* Կլիզմա ***(клизма)*** - ռուս. հոգնա։

Ես ու իմ ընկերը

Ես ու իմ ընկերը միևնույն կարծիքն ունենք սովետական կառավարության մասին։

Ինչպես երկու փոխասացներ, եկեղեցու խորանի առջև կողք-կողքի կանգնած, փառաբանում են Աստծուն, այնպես էլ մենք երկուսս կողք-կողքի փետրում ենք մեր կառավարության արհեստականորեն ինքն իրեն կպցրած ոսկե փետուրները, դարձնում լերկ այլանդակություն։ Ես ասում եմ.

- Մեզ մոտ ընտրական սիստեմ չկա. դիկտատորն ինքն իրեն նախապես ընտրում է, հետո մի-մի «բյուլետեն» տալիս քաղաքացու ձեռքը, թե տար գցիր այսինչ ծակը։ Կարծես ձեռք է առնում իր ժողովրդին։

Նա ասում է.

- Երկրում ստեղծված է մի վերնախավ, որը գործի մեջ է քաշել իր բարեկամներին, որոնք խժռում են երկրի ողջ բարիքը՝ բանվորին ու գյուղացուն թույլ տալով, որ քամի կուլ տան։

Ես ասում եմ.

- Կաշառքը մեջքի գոտին արձակել, դուրս է փարատկել արդարադատությունը երկրից և դրության տեր դարձել։*

Նա ասում է.

- Ապրում է նա, ով գողանում է։

Ես ասում եմ.

- Կամ լիզում է վերադասի ոտները։

Նա ասում է.

- Կամ դավաճանում է իր ընկերոջը։

Եվ այսպես համերաշխ։

Միայն ցավալին այն է, որ Լենինին ու Ստալինին գնահատելիս մեր կարծիքները բաժանվում են։

Նա չի համաձայնում ինձ հետ, որ Լենինն ավելի մեծ ոճրագործ է, քան Ստալինը։ Որովհետև այս տնաքանդ սոցիալիզմը նա մտցրեց մեր երկիրը։ Ասում է՝ Լենինի մեջ կան մարդկային գծեր։

Օրինակի համար՝ հեղափոխության առաջին շրջանին, երբ բոլշևիկները սկսեցին մաքրազարդել հակառակ կուսակցություններին

* Փարատկել - փարատիկով կամ փարտոցով (լաթի կտոր, որով սրբում են թոնիրը կամ փուռը) թոնիրը սրբել։

պատկանող մարդկանց, Լենինը հրամայեց խնայել Պլեխանովին[180] և անգամ մի դեկրետով նրա անձն անձեռնմխելի դարձրեց։

Հետո ասում է՝ բոլշևիզմի մի այլ հակառակորդի, որ Փարիզ էր ապաստանել և նյութապես նեղվում էր, Լենինը, որպեսզի այդ մարդը չվիրավորվի, ուրիշի միջոցով նրան նյութական օգնություն էր հասցնում։

Ի պատասխան՝ ես հետևյալը պատմեցի նրան. «1895 թվի հայկական կոտորածներին Վանի բնակիչները, որոնք տաճկական թաղերում էին ապրում, թողին իրենց տունուտեղը և քաղաքի հայկական մասն ապաստանեցին։

Իմ պառավ մորաքույրը, սակայն, բացառություն կազմեց։ Նա չհեռացավ իր տանից այն հույսով, որ քուրդ հրոսակները կխնայեն իր ծերությունը։

Եկան քուրդ ջարդարարները՝ ճանապարհին մահ ու կողոպուտ սփռելով, և իրենց սայլերը կանգնեցրին մորաքրոջս տան առջև, և իրոք էլ խնայեցին պառավի կյանքը։ Բայց տան մինչև վերջին շյուղը բարձին սայլերին ու տարան։

«Այդ միջոցին,- պատմում է մորաքույրս,- ես, դատարկված տանս շեմին նստած, խեղճ-խեղճ նայում էի իմ՝ տարիների ընթացքին ձեռք բերած կահ-կարասուն և արտասվում էի։

Այդ միջոցին քրդերից մեկը, տեսնելով իմ վիճակը, սրտում գութ զգաց։ Ու հանելով սայլի վրայից մի փայտե պնակ ու փայտե գդալ՝ ինձ նվիրեց, որ ես նրանով ապուր ուտեմ...»։

- Հիմա, սիրելի՛ս,- ասում եմ ընկերոջս,- Լենինը, խնայելով Պլեխանովի կյանքը, մի «փայտե պնակ» թողեց ռուս մտավորականությանը, որ նրանով «ապուր» ուտեն, իսկ Ռուսաստանի ողջ միտքը բարձեց սայլերին ու տարավ կոտորեց։

Մի մորաքույրով կամ մի Պլեխանովով գարուն չի գա,- ավարտեցի ես։

Անապատից դեպի կյանք

Սրիկա է նա, ով հայր է լինում...[181]
Ավետիք Իսահակյան

Մի մարդ, առանց իմանալու, որ հայր լինելը սրիկայություն է, և կարծելով, որ հայր լինելը սրիկայություն չէ, մի որդի ծնեց ու հայր դարձավ (առանց ամաչելու)։

Այս հայրը, սակայն, իր որդուն Աբու-Լալա Մահարու սխալ ճամփով չտարավ։ Փոխանակ աշխարհում ման ածելու, նրան ամեն տեսակի մեծամեծների, գիտնականների հետ զրույցի նստեցնելու, կյանքից հիասթափեցնելու, նոր անապատ ուղարկելու՝ բարվոք համարեց իր որդուն նախ՝ անապատ տանել, կյանքի ինչ լինելը բացատրել, հետո՝ թողնել իր կամքին՝ կյանք մտնել, թե՞ անապատում էլ մնալ։

Եվ հայրն այսպես սկսեց.

- Որդյա՛կ իմ,- ասաց,- մարդու մասին երկու կարծիք կա. մեկն ասում է՝ մարդը կապիկներից է առաջացել, մյուսը, թե Աստվածն է ստեղծել։ Կապիկից սերվածները մեռնում են անվերադարձ, իսկ Աստուծո ստեղծածները մեռնում են ժամանակավոր։ Մեռնում, հետո վեր են կենում և գնում են արքայություն կամ դժոխք՝ նայած իրենց վարած կյանքին։

Կապիկից սերածները մտածում են միայն իրենց ստամոքսի մասին։ Լավ ուտել, լավ խմել ու ֆուտբոլ խաղալ։ Իսկ Աստծու ստեղծածները ո՛չ ուտել, ո՛չ խմել, միայն զրկել իր անձը՝ արքայություն գնալու համար։

Այս երկու հոսանքներն էլ իրենց հերթին բաժանված են բազմաթիվ մանր մասերի, որոնք իրար հետ մահաբեր կռվի են բռնված, որի հետևանքով բնական մահով մեռնողների թիվը սակավ է լինում, բոլորը սպանվում են այդ կռիվներում։

Երկրայինները լինում են անգլիացի, ֆրանսիացի, ռուս, ամերիկացի, որոնք, պատերազմներում դեմ դեմի կանգնած, իրար սպանում են։ Իսկ թուրքերն ու բոլշևիկները միայն անզեն ժողովրդին են կոտորում, այն էլ միլիոններով։

Դեպի երկինք բարձրացողները լինում են լուսավորչականներ, հունադավաններ, կաթոլիկներ, բողոքականներ ու մահմեդականներ: Մի կողմից երկինք են բարձրանում՝ արքայության մեջ բազմելու, մյուս կողմից էլ միմյանց դնում խարույկը, վառում ու տանջամահ անում: Եվ որովհետև երկինքը շատ հեռու է երկրից, այդ պատճառով կասկած կա, որ վերոհիշյալներից ոչ մեկը սաղ-սալամաթ չի հասնի երկինք…

- Այսպես է աշխարհը, սիրելի՛ս,- ավարտեց հայրը: Հիմա ուզո՞ւմ ես աշխարհ մտնել:

- Էլ ինչ աշխարհ,- ասաց որդին,- սպանդանոց ասա՛, պրծի՛ր:

- Գուցե հրաշքով ազատվես,- ասաց հայրը:

- Հրաշքի վրա հույս դնելով՝ կարելի՞ է աշխարհ մտնել:

- Դու գիտես: Ուզում ես՝ կա՛ց անապատում և բնակվի՛ր օձերի ու կարիճների հետ…

- Իսկ մարդուց զատ՝ ուրիշ կենդանի արարածներ չկա՞ն աշխարհում:

- Կան: Վայրի գազաններ: Նրանք, մարդկանց հետ համեմատած, ավելի մեղմ են վերաբերվում իրենց շրջապատին: Սոված ժամանակ ուտում են մի նապաստակ կամ մի նիհար ոչխար միայն և գոհ են:

- Չի՞ լինի, որ ես էլ գազան դառնամ:

- Չի լինի, որովհետև դու ստեղծված ես մարդու կերպարանքով:

- Բոլշևիկներն ու թուրքերը մարդու կերպարանք չունե՞ն, որ միլիոններ են կոտորում ու չեն էլ ուտում:

- Այդ երկուսը խիստ բավական են աշխարհի մարդկանց վերջ տալու համար: Հազիվ թե նրանք քեզ ընդունեն իրենց շարքերը:

- Կենդանի մնալու ուրիշ ճամփա չկա՞ ուրեմն:

- Պետք է քամելեոն լինես. թուրքի հետ՝ թուրք, բոլշևիկի հետ՝ բոլշևիկ: Բայց այդ էլ չի օգնի: Տրոցկիստները, որոնք նույպես բոլշևիներ էին, ամբողջովին կոտորվեցին:

Տղան երկար մտածելուց հետո ասաց.

- Ես էլ կապիկներից կսերվեմ և իմ նախահայրերի մոտ կվերադառնամ՝ անտառում ազատ ապրելու:

- Բայց դու պոչ չունես…

- Այն կապիկները, որոնք մարդ դարձան, ի՞նչ արին իրենց պոչերը, ոչնչացրի՞ն:

- Չեմ կարծում:

- Կվերցնեմ մեկը ու ծառ կբարձրանամ։

Հայրը հանկարծ մի բան հիշեց.

- Կապիկ չէ, արի՛ թութակ դարձիր, գնա՛ Ռուսաստան, Լենինի ասածները անվերջ կրկնի՛ր և ապրի՛ր։

- Լենինն ինչքա՞ն բան պիտի ասած լինի, որ ես իմ ողջ կյանքում կրկնեմ։

- Օ՛, շատ բան է ասել,- ասաց հայրը,- ամբողջ վաթսունհինգ հատոր։ Եթե բոլորը կամենաս կրկնել... անմահ կդառնաս։

- Իսկ Լենինը միայն խոսե՞լ է, ոչ մի գործ չի՞ արել,- հարցրեց որդին։

- Խոսել է ու երկիրը քանդել։

- Այն ժամանակ ավելի լավ չէ՞՝ կապիկ դառնամ ու ես էլ նույնն անեմ։

- Դու գիտես, ուզում ես՝ պոչ ճարի՛ր, կապիկ դարձի՛ր։

Տղան նորից մտածեց, մտածեց ու ասաց.

- Ա՛յ հեր, եթե աշխարհում ապրելն այսքան դժվար էր, էլ ինչո՞ւ աշխարհ բերիր ինձ։

- Փորձանք էր, պատահեց։ Ես մորդ ասացի՝ արի աբորտ անենք, չհամաձայնեց։ Ասաց. «Ես տասը երեխա պիտի բերեմ, որ Գերագույն սովետից «Հերոս մայր» շքանշան ստանամ»։

- Իսկ Գերագույն սովետն ինչո՞ւ է քաջալերում որդեծնությունը։

- Որ տանի պատերազմներում կոտորել տա։

- Չեմ հասկանում...

- Միայն դու չես, որ չես հասկանում։ Ոչ ոք այս աշխարհից գլուխ չի հանում։ Դրա համար էլ լավ կանես հենց անապատում էլ մնաս։ Եթե կյանք մտնես ու հիասթափվես, ուղտ էլ չունես, որ Մահարու նման քարավան կազմես ու անապատ վերադառնաս...

Անստույգ երազ

Որովհետև կես քուն, կես արթուն էի, այդ պատճառով էլ չիմացա՝ տեսածս երա՞զ էր, թե՞ իրականություն։

Մի անծանոթ երկիր էի ընկել և որքանով կարողացա նկատել, դա պետք է որ Սովետական Միությանը սահմանակից լիներ։

Մենք գիտենք, թե Սովետական Միությունն ինչքան ծածուկ է

պահում իր երկրի սոցիալիզմը և չի ուզում, որ ուրիշ ազգերը տեսնեն, բայց իմ գտնված երկրի բնակիչները պատի վրա մի ծակ էին բաց արել և գաղտնի դիտում էին այդ սոցիալիզմը:

Դիտում և հավանում էին այդ կարգերը: Մի բան, որ ցույց էր տալիս, թե ինչքա՜ն հիմար էր այդ ժողովուրդը:

Իմանալով, որ ես սովետական քաղաքացի եմ, հավաքվեցին, ինձ իրենց առաջնորդ ընտրեցին ու պահանջեցին, որ ես իրենց էլ տանեմ դեպի սոցիալիզմ:

- Այո՛, ասում էին, Մարքսի դրոշով, քո առաջնորդությամբ մեզ պիտի տանես դեպի սոցիալիզմ:

Ա՜յ քեզ խաթա..

Երկար համոզում եմ.

- Ա՛յ քույրեր, ա՛յ եղբայրներ, մարդկանց մեջ հավասարությունը հնարավոր բան չէ: Մեկը տաղանդավոր դերասան է լինում, ասենք, մյուսը՝ անտաղանդ: Տաղանդավորին բեմ են կանչում, ծաղկեփունջ նվիրում, վեր-վեր են թռցնում, լծվում են նրա կառքին, տուն տանում, ու եթե իրենց ճանապարհին էլ մի անտաղանդ մարդ է կանգնած լինում, նրան ասում են. «Դե՛ն կորսվիր ճանապարհից ու մեզ մի՛ խանգարիր»:

Լա՜վ, ասենք թե երկրի բարիքը տաղանդավորն ու անտաղանդն իրար մեջ հավասար բաժանեցին, բայց խոմ անտաղանդը չի՞ կարող պահանջել, որ իրեն էլ վեր-վեր թռցնեն կամ իր կառքին լծվեն, տուն տանեն:

Բայց իզուր: Ինչ արի, չկարողացա համոզել: Բոլորը միաբերան բղավում էին՝ մեզ տար դեպի սոցիալիզմ:

Ճա՞րս ինչ:

- Լավ,- ասացի,- դե Մարքսի մի դրոշ բերեք՝ ձեզ առաջնորդեմ դեպի սոցիալիզմ:

Գնացին մի կարկատած կարմիր շոր բերին:

- Այսպիսի կարկատած դրոշով սոցիալի՞զմ կշինվի,- ասում եմ:

- Կարկատած սոցիալիզմ շինի՛ր, միայն թե շինի՛ր,- աղաղակում էր «ամբոխը խելագարված»:

Այստեղ ես մի փոքր նեղացա Սովետական Միության վրա, որ, առանց երկրի ծակերը փակելու, սոցիալիզմ է կառուցում իր երկրում:

Ինչևէ: Եղածը եղած էր:

Ես հրաման տվի՝ կարմիր ու սպիտակ հագած մարդիկ բաժանվեն ու սկսեն իրար կոտորել։

Եվ բոլոր նրանք, որոնք հանվել և քնելու էին պատրաստվում՝ «մեծ քնով» քնեցին, որովհետև շապիկ-վարտիքով էին։

Ուզում եմ ասել՝ սպանվեցին քաղաքացիական կռվում։

Ազատվեցին նրանք միայն, որոնք ո՛չ շապիկ ունեին իրենց հագին, ո՛չ վարտիք...

Դրանց էլ «կոմիսար» անվանեցի և հանձնեցի նրանց երկրի կառավարությունը։

Այս լղար, գունատ, ազազուն անշապիկները, սակայն, ծծելով նախկին բուրժուաների կայքն ու կարողությունը, հետագային նաև նրանց արյունն ու քրտինքը, կարճ ժամանակում լցվեցին, գիրացան ու դարձան նույն բուրժուաները՝ միայն ոչ թե սպիտակ, այլ կարմիր գույնի։*

Ժողովրդին ասում եմ.

*- Տեսա՞ք, որ հավասարությունն անկարելի բան է։ Որ աշխարհը լծակի վրա նստած գերան է. մի ծայրին նստես՝ այն կցածրանա, մյուս ծայրը կբարձրանա։ Ինչ որ տրնգոզի**։*

- Ոչինչ,- ասաց ժողովուրդը,- Սովետական Միությունում էլ է այդպես, բայց այնտեղ մամուլը սվաղում, հարթում է անհավասարությունը, դու էլ զո՛ռ տուր թերթերին, թող հակասությունները սվաղեն։

Հրաման տվի խմբագիրներին թերթեր հրատարակել, հետո էլ՝ անսահման ազատություն՝ իրական կյանքը հիմնիվեր շուռ տալու։

Այնպես որ կարճ ժամանակում երկիրը լցվեց բերք ու բարիքով, ու ժողովուրդը «երջանկացավ»։

- Գո՞հ եք,- հարցնում եմ ժողովրդին։

- Այո՛,- ասում են նրանք։

- Բայց գրվածն ամբողջովին սուտ է...

- Է՛հ, բան ասացիր։ Աշխարհում ի՞նչ բան կա ճշմարիտ։

Երբ ժողովուրդն այս գոյություն չունեցող բարիքով կշտացավ, հիմա էլ սեռական կարիք զգաց։ Այնպես, ինչպես լինում է սովորաբար։ Ու գեղեցիկ կանանց հարգը մեկեն բարձրացավ, ձեռքից ձեռք

* Ազազուն- թույլ, տկար, անզոր։

** Տրնգոզի- մանկական խաղ, որի ժամանակ երեխաները մի երկար գերան կամ տախտակ դնում են քարի կամ որևէ այլ բանի վրա և երկու ծայրերին նստելով վեր ու վար են ճոճվում, արասնգի, ծնգլոկի։

խլվելով՝ պաշտվում էին տղամարդկանց կողմից։

Այս տեսնելով՝ տգեղ կանայք «մա՛հ պալատներին, խաղաղություն խրճիթներին» գոռացին և պահանջեցին գեղեցիկներին հավասար սիրվել։ Երբ չսիրեցին, դարձան ինձ՝ իրենց առաջնորդին, ասացին.

- Եթե մեզ էլ չես գեղեցկացնի, բոլոր գեղեցիկ կանանց տգեղացրո՛ւ։

Այստեղ ես կանգնեցի անհաղթահարելի դժվարության առջև։ Գեղեցկությունն այնպիսի հարստություն չէր, որ «կուլակաթափ» անեի ու բաժանեի չունեցողին, տգեղ ստեղծվածին էլ չէի կարող նորից ծնեցնել ու այս անգամ գեղեցիկ։

Երբ այսպես ծանրութեթև էի անում, էլի հնարավոր գտա գեղեցիկներին տգեղացնել, և ահա թե ինչպես։

Ես կանանց հավասարություն հայտարարեցի ինձ հանձնված երկրում։ Նրանց իրավունք տվի տղամարդկանց հավասար նասիլկաներով հինգ փթանոց քարեր բարձրացնել հինգհարկանի շենքերի ճոճվող սանդուղքների վրայով։ Քլունգ տվի ձեռքները՝ ապառաժ քարերի մեջ ջրանցքներ փորելու, կոլխոզի դաշտերում արևի տակ աշխատելու, իսկ տղամարդկանց էլ բրիգադիր նշանակեցի, որ չթողնեն նրանց նստել, հանգստանալ, այլ օրվա տասնվեց ժամը աշխատել։

Այսպիսով՝ բոլոր տեսակի կանայք արևի տակ հավասարապես սևացան, դեմքերն այլանդակվեցին, ծանր բեռան տակ կոնքերը ծռմռվեցին և ծննդաբերության ժամանակ սկսեցին անժուժկալ դառնալ։ Այսինքն՝ չէին սպասում ինն ամիս ինն օրը մեկին ծնելու համար, այլ ամեն ամսում մաս-մաս ծնվում էին իրենց երեխաները՝ ինն ամսից իրար գումարելու համար...

Եվ փառք Աստծու, այս հարցն էլ բարեհաջող լուծեցի։ Մնաց իմաստունների և հիմարների հավասարության հարցը։

Այստեղ էլ հիմարներն էին բողոքում, թե ինչո՞ւ գիտնականներն Ակադեմիա են մտնում և ոչինչ չանելով՝ ամսական երկու հազար հինգ հարյուր ռուբլի ռոճիկ են ստանում, իսկ նրանք՝ հիմարները, քափ ու քրտինք են թափում ու ոչինչ չեն ստանում։

Այս հարցը ես համեմատաբար հեշտ լուծեցի այն պատճառով, որ խնդիրը ճարպկությանն էր վերաբերում։ Ով առավոտ շուտ վեր

կենար, Ակադեմիայի անդամ կդառնար։

Ես ժամացույցը հինգի վրա լարեցի և շարեցի հիմարների գլխի վերևը, որ ժամանակին վեր կենան և Ակադեմիա մտնեն... անվա։

Ու այսպես ես բոլոր տարաձայնությունները հարթեցի, ժողովրդիս երջանկացրի ու երկրիս պատուհանները պինդ փակեցի, որ այդ երջանկությունը... քամին չտանի։

Որով և իմ՝ սոցիալիստական առաջնորդիս պարտականությունը լրիվ կատարած համարեցի։

Մնում էր մի պլակատ կպցնել երկրի դռանը, որի վրա գրված լիներ՝ «Ով աշխատի, նա կուտի»։

Այս էլ գրեցի, տվի իրենց ու երկրից դուրս եկա։

Բավական տեղ հեռացել էի, երբ մեկ էլ լսեցի Պարոնյանի «Մանուկ աղայի» կնոջ նման մեկը կանչում է ետևիցս.

- Մանո՛ւկ աղա, Մանո՛ւկ աղա։

- Ի՞նչ է,- ետ դառնալով հարցնում եմ։

- Դու գրել ես՝ «Ով աշխատի, նա կուտի», մինչդեռ ուտում է նա, ով չի աշխատում...

Ես չլսել ձևացուցի ու քայլերս արագացնելով՝ հեռացա։

Հոգիս կերան անպիտանները...

Կարինե[182]

Հուզված եմ։

Սենյակիս դուռը ներսից պինդ փակած՝ ման եմ գալիս նրա երկայնքով և ասում կերկեր ձայնով.

- Կարինե՛, եթե իմանաս՝ ինչպե՞ս էի սիրում քեզ...

Ցերեկները բաց աչքով էի նայում քեզ, իսկ երբ օրը երեկոյանում էր, գիշերը քեզ ներս էի առնում ու ծանրացած կոպերս վրադ փակում՝ հոգուս աչքերով քեզ դիտելու համար։ Դիտելու ու զմայլվելու քո աննման գեղեցկությամբ։

Երբ գնացք էի նստում՝ քեզ մոտ սուրալու, դանդաղ էր թվում մեքենայի երթը, կամենում էի ինքգինքս վայր նետել վագոնից և ոտքով վազել՝ քեզ ավելի շուտ հասնելու, վայրկյան առաջ քեզ գրկելու, համբուրելու, ոտիդ եղունգներից մինչև մազերիդ ծայրը լիզելու ու կրծքիդ վրա անշնչանալու...

Կարինե՛, Կարինե՛։

Դու իմ աշխարհն էիր, բայց ոչ այսքան նեղ, այլ անծայրածիր, որի անհունությունն անցնելու համար չէին բավի իմ տասը կյանքերը՝ կողք կողքի շարած։

Արգելում էի ծաղիկներին բուրել, որ քո բույրովն արբենամ, նոճիներին փայտացնում էի, որ քո մեջքի նուրբ գալարումներով հիանամ։

Իմ արևելքն այն կողմն էր, որտեղից դու էիր գալիս, իսկ արևմուտքը՝ այն, դեպի ուր գնում էիր։

Բայց քեզ սիրելիս երբեք ես գիշերներ չեմ ունեցել, որովհետև քո մութ արևով ջերմացնում էիր իմ հոգին։

Ա՜խ, Կարինե՛…

Քո առաջին մերկությունն ինձ ալեկոծվող անդնդախոր ծով թվաց, և ինքս ինձ քո մեջ նետեցի՝ այլևս լույս աշխարհ չտեսնելու համար։

Ասա՛, Կարինե՛, այս բոլորից հետո ինչպե՞ս կարողացա ես քեզ չսիրել…

Ինչպե՞ս սրընթաց հեղեղից տարվելով՝ կարողացա հոսանքին հակառակ նավել ու դուրս թռչել քեզանից։

Այդ պատահեց այն բանից հետո, երբ մի օր, բանալով քո սիրտը, տեսա՝ այնտեղ մի խղճուկ ոսկի հորթ էր նստած։

Երբ տեսա, որ կրծքիդ տակ ոչ թե սիրող սիրտ էր բաբախում, այլ մի հաշվապահի «չոթք», որ, մի կողմ թողնելով իմ անկեղծ սիրո զեղումները, հաշվում էր միայն այն օգուտները, որ նյութապես ստանում էիր ինձանից։

Այդ ժամանակ միայն ես զգացի, թե միայն գեղեցիկ մարմինն ինչքան քիչ է սիրելու համար, և ինչքան անհրաժեշտ է, որ գեղեցիկ կինը ունենա նաև գեղեցիկ հոգի։

Այժմ շնորհակալ եմ քեզանից, Կարինե՛, դու ինձ երկու տարի տիեզերքի անսահմանությունների մեջ ման ածեցիր, լավ է, վերջում էլի ինձ ինձ հանձնեցիր անկորուստ։

Դու սառը ջուր լցրեցիր իմ շիկացած էության վրա, և ես ածխացա։

Ի՞նչ կլիներ իմ վիճակը, եթե քո մեջ մոխրանայի…

Շնորհակալություն ինձ քո տված ածուխի համար։

Այժմ քեզ կարող եմ ասել «չեմ սիրում» այնպես ջերմ, ինչպես մի ժամանակ ասում էի «սիրում եմ»։

Մնա՛ս բարով, իմ նախկի՛ն սեր ու ներկա՛ ատելություն, մնա՛ս բարով...

Սա իմ հանապազօրյա աղոթքն էր ամեն առավոտ, երբ անկողնից վեր էի կենում:

Մի անգամ էլ, երբ, սույն մաղթանքը կատարած, բաց էի անում սենյակիս դուռը, տեսա դռան վրա կանգնած ամբոխ:

Ամբոխը, իմ զմայլանքին ունկնդրած, հետո էլ իմանալով, որ այլևս չեմ սիրում, հավաքվել էր դռանս, որ իմ կրծած անմահական խնձորին տիրեր:

Բայց ես չբարկացա, այլ շատ հանգիստ տոնով ասացի.

- Ես խոսում եմ տասնհինգ տարի առաջ մեռած իմ մեկ սիրուհու հետ, ցրվեցե՛ք ձեր տները...

Սովետական օրացույց

Սովետական օրացույցը լույս է տեսնում ոչ թե նրա համար, որ ցույց տա մարդու կյանքի անցնող ու այլևս ետ չդարձող օրերը, այլ ամբողջովին նրա համար, որ կոմունիստական պրոպագանդ տանի ժողովրդի մեջ:

Այդ պատճառով էլ իրար ետևից՝ երկուշաբթի Լենինն է ծնվում իր կարճ մորուքով, երեքշաբթի՝ Ստալինն իր երկար բեղերով, ի դեպ, չեն էլ աճում այդ բեղ ու մորուքները, որ մի փոքր բազմազանություն մտնի օրացույցի մեջ:

Այնուհետև այնտեղ զետեղված են այն բոլոր խոսքերն ու նախադասությունները, որ այսինչ թվի այսինչ օրն արտասանել էր Լենինը, կամ լռել ու չէր արտասանել Ստալինը:

Հետո էլ Հայաստանի այն հին բոլշևիկների նկարներն ու կենսագրությունները, որոնց գործը եղել է միայն անմեղ մարդկանց բռնել և սպանել:

Մի խոսքով, նրանում զետեղված են աշխարհիս այն բոլոր բաները, որոնցից ես գարշում եմ:

Դրա համար էլ ես օրացույց գնում եմ ոչ թե նրանով ապրելու համար, այլ այն ծառայեցնում եմ իմ արտաքնոցային կարիքներին:

Իսկ մեր բնական կարիքը կապված է մեր թաղի մթերային խանութի հետ։ Որ օրը շատ ուտելիք բերեց և շատ կերանք, շատ դուրս կերթանք, որ օրը քիչ, քիչ դուրս կերթանք։

Պատահում է կուշտ օր, որ մեկ օրվա մեջ երեք օր եմ «ապրում» ու օրացույցից երեք թերթիկ պոկում։ Պատահում են նաև օրեր, որ առանց օրացույցի եմ ապրում՝ չպոկելով ոչ մի թերթ։

Այս է պատճառը, որ հաճախ իմ կյանքի և օրացույցի օրերը, այսպես տարբեր ճանապարհներով ընթանալով, տարվա չորս եղանակներն իրենց տեղերը փոխում են՝ հունվարին սաստիկ շոգեր անելով, իսկ օգոստոսին՝ սառնամանիք։

Զապրելով այս օրացույցներով տառացի՝ ես սովետական սա քառասունհինգ տարվա մեջ մի օր չեմ ապրել։ Սպասում եմ, որ սովետական իշխանությունը չքանա աշխարհիս երեսից, որ նոր մեկ տարեկան դառնամ, հետո՝ երկու, երեք և այսպես բնականոն մեծանամ մինչև այն հասակը, որ տնօրինել է ինձ համար նախախնամությունը։

Այս քառասունհինգ տարին հեչ։

Ինչպես ամառ ժամանակ միսը պահում են սառնարաններում, որ չհոտի, ես իմ կյանքը դրել եմ սովետական այս անկյանք ու սառած քառասունհինգ տարիների մեջ, որ չծերանամ ու ազատության հասնելիս բանամ իմ քերականը ու նոր մեկանց իմ կյանքի այբն ու բենը ապրեմ։

Եվ վերջապես մեր սովետական կյանքում ե՞րբ ենք օր տեսել, որ օրացույցի պետք ունենանք...

Քաղաքական խեցգետինը

(Այն, որ հետ-հետ է գնում)

Հիշո՞ւմ եք, ամբողջ քառասուն տարի Սովետական Միությունն Ամերիկայի ետևից վազեց նրան հասնելու և անցնելու, բայց չհաջողեց։ Քանի վազեց, այնքան Ամերիկան հեռացավ, ու այժմ իր տեսադաշտից նրան չկորցնելու համար կանգ է առել՝ լավ հասկանալով, որ նապաստակին վազելով հնար չէ բռնել, պետք է ետևից կրակել։

Եվ եթե Միությունը հաջողեր սպանել Ամերիկային, այն ժամանակ իրոք որ կհասներ նրան ու կանցներ։ Սովետական Միությունը բոլոր մեռելներին իր ետևն է թողել մրցությունների մեջ...

Բայց չի հասնում, չի անցնում Ամերիկային գյուղատնտեսության, հետևաբար, մթերքի առատության ասպարեզում։

Չի հասնում, որովհետև Ամերիկան իր գյուղացուն ասում է. «Որքան կարող ես շա՛տ կով, շա՛տ ոչխար պահիր», իսկ Ռուսաստանն ասում է. «Որքան կարող ես քի՛չ կով, քի՛չ ոչխար պահիր։

Եթե հնար է՝ բնա՛վ մի պահիր»։

Այդ պատճառով էլ Ամերիկան առաջ է գնում, իսկ Ռուսաստանը՝ հետ։

Ռուսաստանի գյուղատնտեսությունը քայլում է երկու ոտների վրա՝ երկուսն էլ հիվանդ, երկուսն էլ մահամերձ։ Ոտներից մեկը կոլխոզ է կոչվում, մյուսը՝ սովխոզ։ Այդ ոտները նա օգտագործում է փոխնեփոխ։ Կոլխոզն արդյունք չի տալիս՝ սովխոզի վրա է կանգնում, և ընդհակառակը։ Ու տարիներ ամբողջ այսպես ոտները փոխելով՝ մնում է տեղում կանգնած։

Բայց այս վիճակով էլ շարունակում է վազել Ամերիկայի ետևից։

Ամերիկան երբեմն կանգ է առնում, հետևը նայում, թե ո՞ւր մնաց խեցգետինը։ Ու ցավով տեսնում է, որ խեցգետինը պպզել է շունչ առնելու, շունչ է առնում ու չորեքթաթ իր ետևից... սողում է։

Խղճաց Ամերիկան և ասաց Ռուսաստանին.

- Ռուսաստա՛ն, դադարեցրո՛ւ ամերիկացիների հանդեպ ունեցած կատաղությունը, քո կոմունիզմով մի՛ ապականիր աշխարհը, ես քեզ իմ հացով կկերակրեմ։ Բազմաթիվ աղքատներ եմ կերակրում, մեկն էլ՝ դու։

- Ես հաց չեմ ուզում քեզանից,- պատասխանեց Ռուսաստանը։- Միայն վերելքի քո ընթացքը դանդաղեցրո՛ւ, գամ քեզ հասնեմ ու անցնեմ։

- Այդ ինչպե՞ս,- զարմացավ Ամերիկան։

- Քո գյուղացուն թույլ մի՛ տա հինգ ոչխար, մի կովից ավելի անասուն պահել, մինչև գամ քեզ հասնեմ, որ հասա, դու կհրամայես չորս ոչխար, կես կով պահել, ես կգամ քեզ կանցնեմ գյուղատնտեսական ասպարեզում, և մենք կլիանանք։

- Ի՞նչ անեմ իմ միլիարդների հասնող անասունների հետ։ Ինչպե՞ս ոչնչացնեմ նրանց։

- Կոլխոզ մտցրո՛ւ, և նրանք իրենք իրենց կոչնչանան։

- Ինչի՞ց։

- Սովից:

- Չեմ կարող:

- Չես կարող՝ խլրտում կցանեմ Հարավային Ամերիկայի պետությունների մեջ և օրական մեկին կոմունիստ կդարձնեմ Կուբայի նման:

- Դարձրո՛ւ:

- Կդարձնեմ:

Եվ նրանց հարաբերությունները խզվեցին, Ամերիկան գնաց իր միլիոնավոր անասունները միլիարդներ դարձնելու, իսկ Ռուսաստանը՝ իր հինգ ոչխարները չորս դարձնելու...

Մի առակ գիտեմ, կարծեմ Կռիլովինը[183] պիտի լինի:

Այնտեղ աղվեսն ու խեցգետինը մրցման են դուրս գալիս վազքի մեջ:

Խեցգետինը, որ ինչպես գիտեք ետ-ետ է գնում, իսկ աղվեսն արշավում է:

Բայց ինչ կասեք, որ խեցգետինը մրցումը շահում է:

Ինչպե՞ս:

Այսպես:

Երբ աղվեսը վազքի է պատրաստվում, խեցգետինը նստում է աղվեսի պոչին: Ու երբ աղվեսը, տեղ հասնելով, ետ է նայում՝ տեսնելու համար, թե ո՞ւր մնաց խեցգետինը, վերջինս, աղվեսի պոչը թողնելով, ձայն է տալիս ետևից.

- Այդ ո՞ւր ես նայում, ես մի ժամ առաջ էի քեզ այստեղ սպասում:

Ռուսաստանը միայն այս կերպ կարող է Ամերիկային հասնել ու անցնել: Ուրիշ ճանապարհ չունի:

...Միայն չգիտեմ՝ Ամերիկան պոչ ունի՞, թե՞ ոչ...

Զորախաղ

Բոլոր մեծ պետությունները պատերազմից առաջ զորախաղեր են կազմակերպում, հետո նոր իսկական պատերազմ սկսում:

Վաղը ես մեր լուսավորության մինիստրի մոտ պիտի գնամ՝ խնդրելու, որ բարձրագույն դպրոցն ավարտած փեսայիս ուսուցչի պաշտոնով մի տեղ տեղավորի:

Գիտեմ՝ առաքելությունս դժվար է, հաջողության հույսերը՝ քիչ։ Բազմաթիվ շրջանավարտներ անգործ ման են գալիս, ու մինիստրը չի կարողանում տեղավորել իր դպրոցներում, բայց ինչ արած։

Սխալմամբ սենյակն ընկած ճնճղուկը, գիտենալով հանդերձ, որ պատուհանը փակ է, այնուամենայնիվ ինքզինքը գոցված ապակիներին է զարկում այնքան, մինչև ուժասպառ ընկնում է պատուհանի քիվին։

Ու ես, որպեսզի վաղը հանկարծակիի չգամ, այսօրվանից սկսում եմ ինքզինքս գոց պատուհանի ապակուն զարնել։

Գրասեղանիս առջև նստած՝ մտնում եմ լուսավորության մինիստրի կաբինետ։

- Բարև Ձեզ, ընկեր Սիմոնյան։

- Բարև։ (Չի ասում՝ նստեք)։

- Ես հիսուն տարվա երգիծաբան գրող Լեռ Կամսարն եմ, եկել եմ Ձեզանից մի բան խնդրելու։

- Միայն այդ բանը կարելիության սահմանների մեջ լինի։

- Այդ բանը ոչ միայն կարելիության սահմանների մեջ է, այլև նույնիսկ Ձեր պարտքն է։

- Հետաքրքիր է։

- Ես եկել եմ նորավարտ փեսայիս համար աշխատանքի տեղ խնդրելու Ձեր խնամքին հանձնված դպրոցներից մեկում։

Մինիստրը պատասխանելուց առաջ սեղանին խոտի դեզի նման դարսված թղթերը մատնացույց արեց.

- Տեսնո՞ւմ եք այս դեզը. բոլորը խնդրագրեր են, որոնք ուսուցչական տեղեր են խնդրում ինձանից, ու ես չեմ կարողանում բավարարել նրանց։

- Ինչո՞ւ։

- Տեղ չկա։ Եթե Ձեր փեսան համաձայն է գյուղ, կամ Ռուսաստան, կամ Չինաստան գնալ, խնդրեմ, հիմա էլ նշանակեմ։

- Նշանակում է՝ Դուք նրանց աքսորում եք՝ սովորելը համարելով հանցանք,- ասում եմ ու ավելացնում.- Ռուսաստանը երկու հարյուր միլիոն է, Չինաստանը՝ վեց հարյուր միլիոն, իսկ Հայաստանը՝ ընդամենը մի միլիոն։ Մի միլիոն հայությունը եթե անգամ աղ դառնա, չի կարող համեմել ութ հարյուր միլիոն ժողովրդին։ Դա նշանակում է՝ Հայաստանը գազի վերածել և մոտեցնել այդ մեծ

պետությունների քթին՝ միայն մեկ անգամ շնչելու համար։

- Մենք բոլորս եղբայրական հանրապետություններ ենք և քայլում ենք միևնույն դրոշի տակ։

- Հայաստանն այնքան փոքր է, նրանք այնքան մեծ են, որ միասին որևէ դրոշի տակ չեն կարող քայլել։ Ոտնատակ կերթա Հայաստանը։ Դուք արտասահմանից ներգաղթ եք կազմակերպում և հայրենաբաղձ պանդուխտ հայերին ուղարկում եք Չինաստան...

Մինիստրը նեղն ընկավ։

Այս մեկ տարբերակ։

Երկրորդ տարբերակով, երբ ներս եմ մտնում և անունս տալիս, մինիստրը զսպանակի վրա նստածի նման վեր է թռչում տեղից և աթոռ առաջարկելով՝ ասում.

- Ես գիշերով էի ման գալիս՝ ցերեկով հանդիպեցինք։ Չեք իմանում, թե ինչքան էի փափագում գեթ մի անգամ Ձեզ տեսնել։ Ասացեք, ինչո՞վ կարող եմ Ձեզ ծառայել։

- Հե՛չ, փեսայիս մի տեղ նշանակեցեք որպես ուսուցիչ։

- Միայն մի՞ փեսա ունեք։

- Այո՛, դժբախտաբար։

- Ափսո՛ս։ Եթե տասն աղջիկ ծնած լինեիք, ես նրանց բոլորի ամուսիններին պաշտոնով կապահովեի։

- Ընկեր Սիմոնյան,- ասում եմ,- ես չէի իմանում, որ Դուք ինձ այդքան շատ էիք հարգում, դրա համար մեկ աղջիկ միայն բերի։ Եթե Ձեր՝ դեպի ինձ տածած հարգանքին առաջուց ծանոթ լինեի, հավատացեք, որ տասը աղջիկ պիտի ունենայի...

- Բայց դեռ ուշ չէ։

- Լավ, որ այդպես է, ուսուցչական մի տասը տեղ պահեցեք, գնամ տուն, այդ մասին մտածեմ։

Հետո միտքս մի բան ընկավ.

- Ընկեր Սիմոնյան,- ասում եմ,- տասն աղջիկ բերելը հեշտ է. հանձն կառնեք նաև նրանց համար փեսացու ճարել։

- Կճարեմ։

- Ինչքան էլ տգեղ լինեն աղջիկներս։

- Թեկուզ հրեշներ լինեն։

- Լա՛վ, տուն կերթամ ու կմտածեմ։

Տուն եկա ու չմտածեցի։ Մտածելուց ի՞նչ օգուտ, երբ կինս հինգ տարի առաջ էր մեռել...

Բայց մինիստրի խոստումն էլ գրգռիչ էր։

Այն ժամանակ, երբ հազարավոր դիմումներ մերժվում էին, ինձ հատկացվում էր տասը տեղ։

Արդյոք հոգեզավակների ամուսիններ կընդունվե՞ն։

Չգիտեմ։

Վաղը որ ներկայացա, կհարցնեմ։

Երեկոյան, անկողնումս պառկած, անվերջ կրկնում եմ.

- Տե՛ր Աստված, վաղը մինիստրն արդյոք առաջի՞ն տարբերակով ինձ կընդունի, թե՞ երկրորդ։

Երբ կարծում էի, թե երկրորդ տարբերակով կընդունի, ցավում էի, որ տասը աղջիկ չեմ ունեցել. երբ կարծում էի, թե առաջին տարբերակով պիտի ընդունի, կուզեի, որ այդ մեկ աղջիկն էլ չունենայի...

Գրողը պետք է լինի մարգարե

Այսպես է ասել Պուշկինը, և շատ ճիշտ է ասել[184]։

Աթաբեկ Խնկոյանը, գրելով իր «Մկների ժողովը», երբեք նպատակ չի ունեցել ցույց տալ իր դարի մկների վախկոտությունը։

Այնտեղ մկները ժողով են անում և որոշում զանգ կախել կատվի վզից, որ երբ նա զնգացնի այդ զանգը, իրենք փախչեն, իրենց ծակերը մտնեն։ Բայց ոչ մեկը սիրտ չի անում. իրար վրա են գցում։ Մեկն ասում է՝ Մստոն թող կախի, մյուսը, թե՝ Փստոն կախի, ու գործը գլուխ չի գալիս։

Արդյո՞ք սա վախկոտության գագաթն է, որից դենը սպառվում են աշխարհիս բոլոր վախկոտությունները։

Ո՛չ, դա ոչ թե գագաթ, այլ վախկոտության միջին աստիճանն է, որի նկարագրությունը շատ մեծ փառք չէր կարող բերել դրա հեղինակին։

Մկները, ճիշտ է, վախեցան կատվի վզից զանգ կախել, բայց չվախեցան ժողով անել։

Իսկ Ռուսաստանի երկու հարյուր միլիոն «մկները», որոնք նույպես ուզում էին Ստալինի վզից զանգ կախել, որ երբ գար իրենց գնդակահարելու, ծակը մտնեին, վախից անգամ «ժողով» չարին...

Հիմա, խնդրեմ, ասեք, ո՞ր մկներն են ավելի վախկոտ. նրանք, որ «ժողո՞վ» արին, թե՞ նրանք, որ վախեցան անգամ ժողով անել:

Եվ համբերությամբ սպասեցին, որ Ռուսաստանի այդ «կատուն» իր բնական մահով մեռնի:

Հիմա ես այս հարցը թողնում եմ իրեն՝ Խնկոյանին լուծելու: Եթե նա իր գրվածքով ծաղրում է Աստծու ստեղծած սովորական մկներին, ապա նրա գրական փառքը փոքր կլինի, իսկ եթե նա գրելիս նկատի է ունեցել ռուս ժողովրդի վախկոտությունը, ապա նրան իրավամբ կարելի է ապագան նախատեսող հանճարեղ գրող համարել:

Նույնը կարելի է ասել մի այլ հայ գրողի՝ Երվանդ Օտյանի մասին:

Նա գրել է «Ծապլվարի նամականին»[185], ուր ծաղրվում է Տաճկաստանում դաշնակցության՝ սոցիալիզմ կառուցելը:

Եթե այդ ծաղրը հասկանանք կոնկրետ դաշնակցության հասցեին ուղղված, Օտյանի գրական փառքն այնքան էլ մեծ չի լինի: Մի փոքրիկ Տաճկաստան, մի փոքրիկ դաշնակցություն. դրանով ձեռք բերված գրական փառքն ի՞նչ պիտի լինի:

Բայց եթե ընդունենք, որ Օտյանը, դաշնակցությունը ծաղրելով, կամեցել է ծաղրել Ռուսաստանում հորդած մեծածավալ սոցիալիզմը, ապա նա իրավամբ կարող է համաշխարհային գրող համարվել, քանի որ Ռուսաստանի սոցիալիզմն ամբողջ աշխարհը քանդեց...

Նույնը պիտի ասեմ Սերվանտեսի մասին: Եթե նա իր «Դոն Քիշոտը» գրեր միայն մի խելառ իսպանացի ասպետի մասին, ապա նրա գրական փառքը հազիվ Իսպանիայի սահմանից դուրս գար:

Բայց ինչպե՞ս է, որ հիմա համաշխարհային գրող է համարվում:

Այդ միայն նրա համար, որ բոլորը կարծում են, որ նա իր «Դոն Քիշոտը» գրելիս նկատի է ունեցել մեր Լենինին, որ աշխարհ պիտի գար իր մահվանից հետո:

Ամենայն հավանականությամբ, Սերվանտեսը մեռնելիս կանչել ու ասել է Դոն Քիշոտին.

- Դու Իսպանիայում անարդարությունը կվերացնես մինչև այն

ժամանակ, երբ աշխարհ կգա Լենինը։ Երբ աշխարհ եկավ Լենինը, նիզակդ ու սուրդ կհանձնես նրան և ինքդ կմեռնես։ Նա անարդարությունը կվերացնի ոչ թե իսպանական մասշտաբով, այլ համաշխարհային։

Եթե Սերվանտեսն այսպես ասած չլիներ իր Դոն Քիշոտին՝ ո՞վ նրան համաշխարհային գրող կհամարեր։

Այժմ նորից դառնամ մեր Աթաբեկ Խնկոյանին։

Եթե նա կամենում էր իր «մկներով» աբսոլյուտ վախկոտության մասին ընդհանուր գաղափար տալ իր ընթերցողներին, ապա նա վրիպեց։ Նման գաղափար տալու համար պետք է մկներին ժողովի չկանչեր։ Որովհետև Սովետական Միությունում ժողով գումարելն ամենածանր հանցանքն է, և մասնակիցներն անխոս գնդակահարվում են։

Եթե մկները համարձակվում են նման երկրում ժողով գումարել, նշանակում է աշխարհի ամենաանվախ կենդանիներն են։

Ախր դուք չեք պատկերացնում, թե մեր երկրում մարդիկ որքան են վախկոտ։

Պատմեմ իմ կյանքից մի օրինակ։

Ամերիկահայ մի հանդես ինձ համարում է «Ներկայիս կենդանի մեծագույն հայ երգիծաբանը»։

Բոլորն անխտիր ուզում են ինձ կարդալ։

Եվ մեր կառավարությունը, և Պետհրատը, և Հրատարակչական կոմիտեն, և Ցեկան, և Էկան։ Բոլորը, բոլորը։

Բայց վախից ոչ մի հիմնարկ տպագրության չի վերցնում իմ երկերը։ Մեկն ասում է՝ Ալոն թող հրատարակի, մյուսը՝ Բլոն։

Ինչո՞ւ են վախենում ինձանից այս «մկները», խոմ ես «կատո՞ւ» չեմ։

Չեն հրատարակում, որովհետև ես ամեն ինչի մասին միայն ճշմարիտն եմ գրում։ Տպել ճշմարտություն մի երկրում, ուր տերևն անգամ առանց ստի չի շարժվում, այդ նշանակում է կատվին բաց թողնել անպաշտպան մկների վրա…

Այնպես որ Աթաբեկ Խնկոյանը, եթե ուզում է որպես գրող անմահանալ, պետք է խոստովանի, որ ինքը գրել է ոչ թե Աստծու ստեղծած չորքոտանի մկների վախկոտության մասին, այլ Ռուսաստանում ստեղծված այն երկոտանի մկների մասին, որոնք անգամ վախենում են «ժողով» անել…

Աստվածային կալկուլյացիա

Մի խոսքով, մարդը չի ուզում իր մորից ծնվել, հետաքրքրության համար մի 70-80 տարի ապրել ու անհետանալ աշխարհից։

Այսինքն՝ այն, ինչ անում են բույսն ու կենդանին։

- Չէ,- ասում է մարդը,- ես անասուն չեմ, որ այսպես աշխարհ գամ, ինձ անպայման պիտի ստեղծի մի աստված կավից կամ պեմզաբլոկից, ստից մեռցնի (երևի նրա համար, որ կենդանիները չնախանձեն) ու վերջում տանի արքայություն։*

Եվ այնուհետև իր կարճ կյանքն այնքան է խճողում զանազան հիմարություններով, որ ոչ մի անասուն այդ չէր անի։

Անասունն իր առջև դրված յոնջան ախորժակով ուտում է՝ ասելով.

- Իմ շահը սրա մեջ է։

Իսկ մարդն իր առջև դրած «յոնջան» չի ուտում, ծոմ է պահում, որ Աստված նրան տանի արքայություն և լավ բաներ կերցնի։

Այն էլ հավիտյան։

Այս արարքը չի՞ հիշեցնում արդյոք այն ագահ շանը, որը, ջրի մեջ տեսնելով իր բերանի մսի անդրադարձումը, ինքզինքը ջուրն է նետում, խեղդվում՝ չվայելած իրական միսը։

Եվ այս մարդն ինքզինքը գերադասում է անասունից...

Մարդը ջրի միջի գոյություն չունեցող մսին տիրանալու համար բան չի թողել, որ չպաշտի։ Էլ կավից շինած տոտեմ, էլ Ոսկի հորթ, էլ Ապիս ցուլ։ Հետո աստվածային նախիրը քշել է Մասիս և Օլիմպոս, ապա ձուլել այս բոլոր անհեթեթությունները մի Աստծու մեջ և հանել երկինք։

Ու այնուհետև մարդն ու Աստված սկսել են իրար հյուրասիրել կավով։ Աստված կավից մարդ է ստեղծել, մարդը նույն կավից՝ Աստված՝ աշխարհը դարձնելով մի կավածեփ հիմարություն։

Եթե ես կյանքի մեջ որևէ իմաստ տեսնեի, անշուշտ պիտի բարկանայի այս երևույթի վրա և միջոցներ ձեռնարկեի, որ մարդիկ մի փոքր լրջանան։

Բայց մարդն աշխարհ է եկել մի բանով զբաղվելու։

Կարծում եք՝ Լենինը չէ՞ր զգում, որ իր ստեղծած սոցիալիզմը

---

* Պեմզաբլոկ- պեմզայից ու ցեմենտից պատրաստվող բլոկ՝ սալիկ (որպես շինանյութ)։

կատարյալ հիմարություն է: Բայց երբ Ռուսաստանի նման մի մեծ պետություն ինքզինքը դնում է մի մարդու տրամադրության տակ, որ ինչ կամենա, անի, այն ո՞ր հիմարն է, որ պիտի հրաժարի նրա բախտի հետ ուզած ձևով խաղալու:

Լենինը հավաքեց, գոմը լցրեց ռուս ժողովրդին, Ստալինը գոմից հանեց, մեկ-մեկ մորթեց, մնացածի վրա էլ Խրուշչովը հեծած սկսեց ամբողջ աշխարհը ման գալ ու ճառ խոսել...

Այս ի միջի այլոց:

Հա: Հիմա աստվածները:

Աստվածաշնչի Աստված Եհովան մերը չէ, դա հրեաների Աստվածն է՝ ստեղծված իրենց նման խստաբարո և անզիջում:

Ինչ է նշանակում «աչքի տեղ աչք, ատամի տեղ ատամ»:

Այս պատգամը պետք է գալիս այն ժամանակ միայն, երբ երկու աչք ունեցող մեկը հանում է ընկերոջ երկու աչքը: Իսկ եթե ինքն ունի միայն երկու աչք և հանում է մի ողջ երկրի ժողովրդի աչքը...

Ինչ է, ուրեմն, այդ մարդն անպատիժ պիտի մնա միլիոնավոր աչքեր չունենալու պատճառով:

Պարզ է, որ Եհովան երկար ժամանակ չէր կարող համաշխարհային Աստված մնալ: Մարդկությունը, զզված վերջինիս անհարկի խստությունից, կամեցավ ստեղծել մի Քրիստոս:

Այս Քրիստոսն էլ մի ծայրահեղությունից մյուս ծայրահեղությանն անցավ: Սա պահանջում էր երկու շապիկ ունեցողից մեկը չունեցողին տալ և մեկ երեսը ապտակողին մյուս երեսն էլ դարձնել:

Ուրիշ խոսքով՝ երբ մեկը ջարդում է քո մեկ ատամը, պարտավոր ես քո երկու ատամը հանել, դնել ջարդողի բերանը ու քո մեկ աչք քոռացնողին հանես տաս քո մյուս աչքը:

Այսինքն՝ թշնամին ունենա երեք աչք, իսկ դու... ոչ մի:

Լավ: Համաձայնենք այս չափազանցությանը՝ նկատի ունենալով այն, որ այդ նոր աստված ստեղծողների նպատակն է եղել ստեղծել մի աստված, որ ոչնչով չնմանի իր նախորդին:

Այստեղ տարօրինակն այն է, որ մարդիկ կամեցել են այս հեզաբարո աստվածը ծնեցնել վերոհիշյալ խստաբարո, դաժան աստծուց, որ կոչեն նրան «Աստուծո որդի»:

Այնպես, ինչպես, ասենք բոլշևիկները գնան դաշնակներին խնդրեն, թե մեզ համար կոմունիստներ ծնեք...

Հետո որդի ծնելու համար հարկավոր է անպայման մի կին։

Աստված և կին...

Ես ուղղակի զարմացած եմ, թե մարդկանց ինչպե՞ս հաջողեց ստիպել Աստծուն, որ նա կույս Մարիամին «ավետիք» տա։

Զարմացա, որովհետև ես Աստծուն ճանաչում եմ դրախտից, երբ ստեղծում էր առաջին մարդուն՝ Ադամին։

Նա ամենայն իրավունքով կարող էր ստեղծել ոչ թե առաջին մարդուն, այլ առաջին կնոջը, և որովհետև իրենցից զատ ոչ ոք չկար աշխարհում, այդ խոլվաթ տեղն ինչ կամենար, կաներ այդ առաջին կնոջը, այսինքն՝ Եվային՝ առանց որևէ մեկից բամբասվելու։*

Ասում եմ՝ զարմացա, որովհետև այդ պատեհ առիթը փախցնող Աստվածն ինչպե՞ս կարող էր հետագային բազմաթիվ մարդկանց ներկայությամբ «ավետիք» տալ մի Մարիամի։

Բայց ինչպես տեսնում եք, աշխարհում անկարելի բաներ էլ են պատահում։

Բայց այստեղ, կարծես, իր անբիծ անունը մի փոքր բծավորում է Աստված։ Որովհետև առանց Քրիստոսի էլ ինքնաքննադատության կարգով կարող էր փոխել իր խիստ օրենքները։ Կամ կարող էր մի երեսով խիստ լինել, մյուսով՝ հեզահամբույր, ինչպես սովետական պաշտոնյաները դեպի իրենց ստորադասն ու վերադասը...

Այսպիսով ուրեմն՝ հանձին Քրիստոսի՝ աշխարհն իր նոր Աստվածն ունեցավ՝ հինը թողնելով հրեաներին։

Հրեաների Աստվածն իր Հին Կտակարանով մինչև օրս էլ ատամի տեղ ատամ է հանում, իսկ Քրիստոսը մի երեսն ապտակողին երկրորդն է դարձնում։

Բայց ինձ հետաքրքրում է այն հարցը, թե ինչպե՞ս է պատահել, որ այս երկու ծայրահեղ հակասությունները կողք կողքի հաշտ ապրում են միևնույն Աստվածաշնչում։

Դաշնակներն ու բոլշևիկները, որոնց տարբերություններն այսքան էլ մեծ չեն, չկարողացան մի լայնածավալ Հայաստանում ապրել միասին, իսկ Հին և Նոր կտակարաններն այսքան տարի ինչպե՞ս են ապրում միևնույն Աստվածաշնչում՝ առանց իրար կոտորելու։

Ես մի կասկած ունեմ։

Չլինի՞ երկուսն էլ... մեռած են։

---

* Խոլվաթ- բրբ. մարդկանց աչքից հեռու, մեկուսի, առանձին։

Խոսելով աստվածների մասին ընդհանրապես՝ պիտի ասեմ, որ դրանք երեք մասի են բաժանվում։

Աստվածներ, որոնք ապրել են երկրի վրա, մարդկանց հետ կողք կողքի, աստվածներ, որոնք բարձրացել են մինչև Մասիսի և Օլիմպոսի գագաթները, բայց երկինք չեն հասել, և վերջապես երկնային հայր և որդի աստվածները։

Այս երեք տեսակի աստվածներից մարդամոտ եղան ու մարդկանց իրական օգնություն հասցրին լեռնաբնակ աստվածները, որոնք կոչվեցին նաև «հեթանոս աստվածներ»։

Ոսկի հորթն Իսրայելին ոչինչ չտվեց, իսկ Ապիս ցուլը Եգիպտոսին չնչին չափով վառելիք միայն տվեց։

Հայր և որդի աստվածները մարդուն այս աշխարհում ոչինչ չեն տալիս, նրանք ամեն ինչ խոստանում են տալ մարդուն միայն մահվանից հետո։

Խոստմանը ոչ ոք չի հավատում, բայց ըստ իս՝ նրանց խոստումների կատարումն ավելի հավանական է թվում, քան Լենինի և Ստալինի խոստումները՝ Ռուսաստանը դրախտ դարձնելու մասին։

Ինչից եմ այս եզրակացությանը հանգում։

Նրանից, որ Աստված մարդուն ստեղծում ու հոգ չի տանում նրա շուտափույթ մեռնելուն։ Թողնում է իրենց կամքին, մեռան՝ մեռան, չմեռան՝ չմեռան։ Եվ իմ կարծիքով սրա պատճառն այն է, որ կասկածում է իր խոստումները կատարելու վրա։

Իսկ Լենինն ու Ստալինը՝ չէ։ Նրանք դեռ չապրած մարդու հոգին առնում են, որ սոցիալիստական դրախտին արժանանան։

Իսկ հեթանոս աստվածները, որոնք ապրել են Մասիսի ու Օլիմպոսի վրա, քայլելով մարդու հետ կողք կողքի՝ նրա բոլոր կարիքները հոգացել են։

Պատերազմի աստվածն ուժ ու կարողություն է տվել իր ժողովրդի կռվողներին։

Սիրո աստվածը սեր է սերմանել մարդկանց խամ ու խոպան սրտերին։

Եղել է աստված Հին Հունաստանում, որ երեխա է պարգևել չբեր կանանց։ Այս բոպեիս էլ նրա արձանն ադամա մերկությամբ կանգնած է իր անվան տաճարի դռանը, և չբերները, համբուրելով նրա համապատասխան անդամը, տուն են վերադառնում և արտա-

կարգ ծնում՝ չսպասելով ինն ամսվա, ինն օրվա։

Այս աստվածները կին և երեխաներ ունեն, ինչպես մարդը։ Սիրում և ատում են, կռվում, հաշտվում, լաց են լինում ու ծիծաղում։

Եվ այսպես ամեն ինչում մարդուն նմանվելով՝ հասկանում են նրան և բուժում նրա վերքերը։

Պարզ են նրանք ու դեմոկրատ։ Լենինի, Ստալինի և Խրուշչովի նման իրենցից երեխա խնդրող չբեր կանանց ինն ամիս, ինն օր չեն սպասեցնի իրենց դռանը։

Կարծում եք՝ շուտ տալ հնարավոր չեն գտնում, դրա համար են սպասեցնում։ Ո՛չ, բոլորովին ո՛չ։ Նրանք «աճի» և «անկման» պլան ունեն. մինչև կենդանի մարդկանց չգնդակահարեն, նորերը չեն ծնեցնի...

Նկատի առեք, որ մենք՝ հայերս, միայն հեթանոս աստվածների ժամանակներն ենք աշխարհակալ թագավորներ ունեցել։ Այն ժամանակ, երբ քրիստոնեություն ընդունեցինք, մեր մի երեսը դարձրինք հույներին, որ ապտակեն, մյուս երեսը՝ պարսիկներին։

Այսպես մինչև 1921 թիվը։

Այդ թվականին Լենինն Աթաթուրք Մուստաֆա Քեմալի հետ համաձայնության եկավ կոտորել բոլոր հայերին։ Թուրքերը պիտի կոտորեին համախառն՝ առանց լավն ու վատն իրարից ջոկելու, իսկ Լենինը պիտի ջոկեր բոլոր ազնիվ, կարող, զարգացած ազգասերներին կոտորեր՝ պահելով մի քանի տականքներ՝ Չեկային ագենտ դառնալու և զոհվածների կանանց մատնելու համար...*

Ու եթե նկատի ունենանք, որ այս բոլոր տեսակի աստվածները մարդն ինքն է ստեղծել իր համար, ասում եմ.

- Տեղն է քեզ։ Ինչքան քո հոգին հանեն, այնքան ուրախ կլինեմ ես։

Դուք կոտորվում եք ձեր ձեռագործ աստվածներից, այդ լավ է։

Ես, որ ոչ մի աստծու չեմ հավատացել, ինչ մեղավոր եմ, որ Ստալինը 20 տարի ինձ Սիբիրում տանջեց, իսկ Խրուշչովը վերցրեց ձեռքիս գրիչը՝ տալով փոխարենը մի անճոռնի բրիչ...

---

* Ագենտ ***(агент)*** - ռուս. գործակալ, լրտես։

Իսկական վայրենիներ

Մի աշխարհաշրջիկ անգլիացի Խաղաղ օվկիանոսում հանդիպեց մի փոքրիկ կղզու, որի բնակիչները քաղաքակրթության հոտ չառած, բնական վայրենիներ էին: Հայրենիք վերադառնալիս անգլիացին կամեցավ այդ կղզու բնակիչներից մի երիտասարդի հայրենիք տանել ցուցադրելու համար:

Տարավ: Երիտասարդը, լինելով բնականից ուշիմ և խելացի մեկը, շատ շուտով քաղաքակրթվեց և կարճ ժամանակում արդեն չէր զանազանվում բնիկ անգլիացուց:

Ապրեց երկար իր նոր հայրենիքում, բայց մի օր էլ հանկարծ իր ծննդավայրի կարոտն արթնացավ իր սրտում և սկսեց օր ու գիշեր տանջել նրան:

Այնքան, որ ամեն տեսակ նեղություն հանձն առնելով՝ մի օր էլ նրան հաջողվեց իր կղզին ընկնել՝ հարազատների մոտ:

Ողջ կղզին թափվեց «անգլիացու» գլխին և սկսեց հարցեր տեղալ նրա վրա:

Ուզում էին իմանալ, թե ինչ էր տեսել իրենց հայրենակիցը քաղաքակիրթ երկրում:

Եվ հայրենակիցն այսպես սկսեց իր պատմությունը.

- Այն աշխարհը, ուր ես ընկա, կոչվում էր Անգլիա: Բարի մարդ էր իմ տերը, բայց միաժամանակ և տարօրինակ: Ապրում էինք մի ընտանիքի պես, և ճաշին նրանց հետ սեղան նստած՝ վայելում էի նրանց բոլոր բարիքները համահավասար, և ոչ մի խնայողություն իմ նկատմամբ գոյություն չուներ: Բայց կշտանալուց հետո, երբ ուզում էի նրա կնոջը սիրել, մատը թափ էր տալիս սպառնական: Ու ես չիմացա, թե այդ ինչ պատճառով: Մինչդեռ մեզանում, ինչպես գիտեք, մարդիկ ուրախանում են, երբ մի օտար մարդ իրենց կանանց սիրում է:

Այնտեղ իմիջիայլոց ասեմ, որ միսը երբեք հում չեն ուտում: Պետք է անպայման եփեն: Ասում եմ՝ չլինի՞ ես կամենում էի նրա կնոջը հում-հում սիրել, դրա համար չէր թողնում...

Վերջը ես, տանտիկնոջիցս ձեռք քաշած, սկսեցի տարվել մեր դրացի մի աղջկանով:

Չեք կարող պատկերացնել, թե ինչքա՜ն էի սիրում այդ անպիտանին։ Ասում էի.

- Ա՜խ, պիտի հաջողվի՞ ինձ արդյոք կյանքումս գեթ մի անգամ նրան վայելել։

Եվ վայելեցի։ Օրը ցերեկով փողոցում։

Ես վայելելս իմացա։ Մեկ էլ բոլորը միանգամից վրաս թափվեցին ու տուր թե կտաս...

- Էս ի՞նչ բան է,- ասում եմ,- այս բոլորն ինչի՞ համար էր։

Միլիցիան անմիջապես ակտ կազմեց, ու գործս տվին դատարան։

Իմ գործած հանցանքի անունը «բռնաբարություն» էր, և օրենքով նախատեսվում էր տասը տարի։

Բայց ես որոշել էի դատարանում զղջալ իմ արածը և խոսք տալ, որ երկրորդ անգամ այդ աղջկան այդպիսի բան չեմ անի։

Դատի ժամանակ, երբ այս բանը հայտարարեցի, դատախազը տասը տարին քսան տարի դարձրեց, և դատարանում այնպիսի կատաղություն պոռթկաց, որ ինձ ուզում էին հոշոտել։

Այն ժամանակ իմ պաշտպանը, ինձ մի կողմ տանելով, ասաց.

- Ինչո՞ւ զղջացիր արածդ և ինչո՞ւ ասացիր «էլ չեմ անի»։ Երկրորդ անգամ ձայն խնդրի՛ր և ասա. «Չեմ զղջում իմ արածը, ես սիրում եմ այդ աղջկան, պիտի ամուսնանամ հետը և իմ տուն տանելով՝ ամբողջ կյանքումս նույն բանը պիտի անեմ»։

Լսելով պաշտպանիս՝ ես երկրորդ անգամ ձայն խնդրեցի և ճիշտ այդպես էլ ասացի։

Երբ ասացի, պատկերը միանգամից գլխիվայր շրջվեց դատարանում։ Դատախազը հրաժարվեց ինձ մեղադրելուց, իսկ հասարակության ցասումը հանկարծ համակրանքի վերածվեց։

Ու զարմանքը պատեց ինձ։

- Ի՞նչ բան է սա,- ասում եմ,- ինչո՞ւ պիտի մեկ անգամ սիրելն այդքան ծանր հանցանք համարվի, իսկ անվերջ սիրելը՝ անմեղություն։

Մինչդեռ այլ խնդիրներում բանն այնպես չէր։ Օրինակի համար, եթե մի գրպանահատ միայն մի անգամ էր անցորդի քսակը հանում նրա գրպանից, նրան ներում էին, իսկ երբ երկրորդ անգամ կրկներ իր արարքը, նրան՝ որպես կրկնահանցագործի, ամենախիստ պատիժն էին տալիս։

Այնպես որ, նրանց օրենքները շատ բարդ էին, ես դժվարանում

էի որոշել, թե որ հանցանքն էր պետք մի անգամ կատարել, որը՝ մի քանի անգամ:

Զմոռանամ ասել, որ միայն եզակի սերը չէր հանցանք, եզակի սպանությունն էլ էր արգելված:

Մեկին սպանեցիր՝ ցմահ բանտ: Իսկ պատերազմներում ինչքան շատ մարդ սպանես, այնքան հերոս կհռչակվես, ու շքանշաններով կուրծքդ կզարդարեն: Զարմանալի է, չէ: Մեկը քեզ վատություն է անում, զայրանում ես, ուզում ես սպանել, չեն թողնում, իսկ պատերազմներում անմեղ, անծանոթ, անգամ սիրելի մարդկանց թույլ են տալիս ուզածիդ չափ կոտորել:

Երբ «անգլիացին» իր պատմությունը ավարտեց, «Իսկակա՛ն վայրենիներ»,- ասացին ունկնդիրները...

Հերմաֆրոդիտ դերասաններ

Կյանքում ի՞նչ բան կա, որ մի մարդով չի կատարվի և անպայման երկու մարդ պետք է լինեն:

Առաջները, երբ դեռ գոյություն չունեին սղոցարաններ, տախտակը երկու խիզարչիներ էին քաշում, մեկը վերև՝ գերանի վրա կանգնած, մյուսը ներքև:

Եվ տախտակը մեկ մարդով չէր քաշվում:

Մեկ մարդով չի կարելի ամուսնանալ: Ամուսնության համար մարդ ու կին է պետք, նույնպես մեկը՝ վերև, մյուսը՝ ներքև:

Մեկ մարդով գոյություն չի կարող ունենալ որևէ սոցիալիստական երկ: Սոցիալիստական երկերն անպայման պիտի ունենան իրենց առաջնորդը և նրան հետևող իր ժողովուրդը՝ նայած երկի մեծությանը: Ռուսաստանում մի առաջնորդին ընկնում է երկու հարյուր վաթսուն միլիոն ժողովուրդ, Չինաստանին՝ վեց հարյուր միլիոն, իսկ Ալբանիային՝ ութ հարյուր հազար:

Քառասունհինգ տարվա պատմություն ունեն ընդամենը սա առաջնորդվող պետությունները:

Առաջները, օրինակ, Ռուսաստանում, ժողովուրդը քայլում էր առանց առաջնորդի: Անգամ ցուպ չուներ իր ձեռքին խարխափելու համար: Կապույտ, սրատես աչքեր ուներ, որով որոշում էր իր գնալիք ճանապարհը:

Այդ մինչև Լենինը։

Լենինը միայն փակել տվեց ժողովրդի աչքերը և հրամայեց քայլել իր ետևից։

Սա երեք, երբ երկու մարդ է հարկավոր։

Հիմա նշեմ մի չորրորդ դեպք, որի համար նույնպես հարկավոր է, որ գործող անձինք անպայման երկուսը լինեն։

Դա դերասան ու հանդիսատեսն են։

Դատարկ դահլիճում ոչ մի դերասան չի համաձայնում խաղալ։ Բայց այս հնում, երբ աշխարհը նորմալ էր։ Իսկ ներկայիս, երբ առաջ եկան սոցիալիստական երկրները, այդ կարգը խախտվեց ու հիմա այդ երկրները սոցիալիզմ են խաղում համաշխարհային բեմում... առանց հանդիսատեսի։

Իրենք իրենց համար։

Ճիշտ այնպես, ինչպես հերմաֆրոդիտ կանայք ամուսնանում են իրենք իրենց հետ...

Առաջին սոցիալիստական երկրի հիմնադիր Լենինի ցանկությունն այդ չէր, իհարկե։ Նա ուզում էր, որ իր երկիրը սոցիալիզմ խաղա, իսկ հանուր աշխարհը ծափահարի։ Բայց ծափ չկար, դահլիճը դատարկ էր...

Ու Լենինն այդպես էլ մեռավ առանց ծափի։

Երկրորդ համաշխարհային պատերազմին, երբ Լենինին հաջորդեց Ստալինը, դերասանական խումբը մեծացրեց՝ մեջն առնելով Լեհաստանը, Չեխոսլովակիան, Հունգարիան, Ռումինիան, Չինաստանն ու պզտիկ Ալբանիան։

Այս պետությունները որովհետև սոցիալիզմ պիտի քարոզեին, ուրեմն, նրանց կզակներին պետք էր կպցնել պատկառելի մորուքներ, և կպցրեց Ռուսաստանը։

Միայն այդ մորուքները ստանդարտ երկարություն ունենալու պատճառով Չինաստանի համար կարճ էին գալիս, իսկ Ալբանիայի համար այնքան երկար, որ քայլելիս փաթաթվում էին ոտներին։

Ռուսաստանն այս կերպ ռեկվիզիտ անելով իր դերասանական խումբը՝ ինքը հուշարարի խոռոչը մտավ և սկսեց թելադրել։

- Ա՛։

- Ա՛, ա՛, ա՛, ա՛, ա՛,- ասացին վեց պետությունները միասին։

- Բը՛։

- Բը՛, բը՛, բը՛, բը՛, բը՛, բը՛,- կրկնեցին դարձյալ վեց պետություն-ները միաձայն։

Այս սկզբի տարիները։ Բայց հետագային, որովհետև Ռուսաստանը կամեցավ սրանց «անկախ պետություն» անունը տալ, թույլ տվեց իրարից զանազանվելու համար մեկը բարձր, մյուսը մի փոքր ցածր արտասանել իրենց տրված դասերը։

Այս պետությունները, լինելով «անկախ», իրար միացած զուտ «եղբայրական կապերով», պետք է փոխադարձ այցելություններ կատարեին իրար երկրներ, ռազմական դաշինքներ կնքեին իրար հետ, ընդունելություններ կազմակերպեին՝ նախաճաշեր և ճաշեր։

Ինչ վերաբերում է ճաշկերույթներին, կարծես, իրոք անկախ պետություններ լինեն սեղանի նստած, որովհետև կոչնակներից յուրաքանչյուրն իր սեփական բերանով էր ուտում, և մեկի կերածը չէր գնում մյուսի ստամոքսը. իսկ ինչ վերաբերում էր միասին անց-կացրած կոնֆերանսներին ու նրանց հանած որոշումներին, այստեղ մյուս դերասանների բերանները չէին աշխատում. Ռուսաստանը «ուտում էր», պատառը գնում էր մասնակիցների փորերը…

Վերևում թվելով սոցիալիստական ամբողջական երկրների անունները՝ ինձ մնում է թվել այն պետությունների անունները, որոնց կեսն է միայն սոցիալիստ։

Դրանք են Արևելյան Գերմանիան, Հյուսիսային Կորեան և Հյուսիսային Վիետնամը։

Երկրներ, որոնց Ռուսաստանը մորուքի փոխարեն բեղեր է կպցրել՝ այլանդակելով այդ երկրները։

Երևակայեցեք մի երկիր, որի մեկ բեղը կարմիր է, մյուսը՝ սպի-տակ։ Հետևաբար, երկրի կեսը երիտասարդ է, կեսը՝ ծերունի։

Այնպես որ, եթե մի օր Գաբրիել հրեշտակը գա այդ երկրի հո-գին առնելու, ինչպե՞ս պիտի վարվի, որ «թացը չորի» հետ միասին չայրվի…

Ի վերջո, խոսելով ըստ էության, պիտի ասեմ, որ լինի մարդ, թե պետություն, շատ դժվար է ամբողջ կյանքում դերասան լինել։

Երևակայեցեք, որ ես մեկին ստիպեմ՝ իր ամբողջ կյանքում Օթելլո խաղա և խեղդի իր կնոջը բեմի վրա։

Դերասանական կյանքում այդպիսի օրենք գոյություն չունի։

Աչքովս եմ տեսել. դերասանը սպանում է իր Դեզդեմոնային բեմի

վրա, բայց կուլիսում ջերմ համբույրներով կենդանացնում է նրան։
Եվ դերասանների մոտ մահը երբեք հավիտենական չէ...

Հաշվապահական զրույց

Ինչքան աշխատում եմ նախահաշվով ապրել, այդ ինձ չի հաջողվում։

Ամեն ամսի սկզբին վերցնում եմ տնային ծախուց տետրակ, և գրում. «Այսքանը՝ հացի համար, այսքանը՝ մսի, այսքանը՝ կանաչեղենի։ Հետո՝ տան վարձ, աղբահանություն, էլեկտրականություն, ջուր»։

Հետո հաշվում եմ, որ ամսվա մեջ մի անգամ էլ կարող եմ հանցանք գործել և դատարան ընկնել։ Դրա համար հատկացնում եմ առանձին էջ, որ կոչվում է «կաշառքի բաժին»։

Մի էջի վրա էլ նշանակում եմ միանվագ այն գումարը, որը ամսվա ընթացքում գրպանահատները պիտի հանեն ինձանից մաս-մաս։

Սրանք են իմ կարևոր ծախսերը, որոնք նախապես հաշվի եմ առնում։

Հետո էլ, իհարկե, «այլևայլքի» մի բաժին, ուր պիտի գրվեն չնախատեսված ծախսերը։

Երանի չլիներ տետրումս այդ «այլևայլքի» բաժինը։ Այդ բաժինն ամեն ամիս տունս քանդում է։

Այս բաժինը, իր վրա առնելով «այլևայլք» համեստ անունը, բյուջեիս երեք քառորդը կլանում է՝ մի քառորդը միայն թողնելով կարևոր ծախսերին։

Զմոռանամ ասել, որ ես պահում եմ երկու հաշվեմատյան՝ մեկը նյութական, մյուսը բարոյական։

Որովհետև մարդը միայն ուտելու համար չի աշխարհ գալիս, նա նաև պիտի սիրի։

Սիրո հաշվեմատյանս մի ծոցատետր է, որ ենթակա չէ հրապարակային հաշվետվության։ Այնտեղ այբբենական կարգով նշանակված են այն գլխավոր կանայք, որոնց պիտի սիրեմ ամսվա ընթացքում։

Այստեղ էլ ունեմ «այլևայլք» բաժինը, ուր արձանագրում եմ իմ նախահաշվից դուրս չնախատեսված կանանց։ Եվ այստեղ էլ պիտի ասեմ, որ «այլևայլքը» իմ տունը քանդում է՝ գերազանցելով նա-

խատեսված կանանց ցանկին։

Ու մտածում եմ։

Ինչ կարիք կա առաջուց նախատեսել, երբ չնախատեսվածը պիտի գա, նախատեսվածին անցնի։

Մանավանդ, անակնկալներով հարուստ մեր երկրում, ուր թագավորում է միայն «այլևայլքը»։

Օրինակի համար՝ վերցնենք մեր մինիստրներին։ Նրանց ապրուստի գլխավոր աղբյուրն իրենց օրինակա՛ն ռոճիկն է։ Ամենևի՛ն։ Նրանց ապրուստի գլխավոր միջոցն «այլևայլքն» է, իսկ ռոճիկը՝ չնախատեսված գումարը։

Լինելով երկրի տերերը՝ նրանք կոնյակի գործարանից ստանում են արկղերով կոնյակ, կոնսերվի գործարանից՝ ամենաընտիր պահածոները, որքան ցանկանան, սովխոզի այգիներից՝ միրգ, պետական պահեստներից՝ թարմ միս ու երշիկ։ Ունեն առանձին դրամական ֆոնդ՝ արտակարգ ծախսերի համար, որը կարգի են բերել ու գործածում են իրենց պետքերին։

Իսկ նրանց բարոյակա՛ն հաշվեմատյանը...

Կատարյալ անբարոյականություն։

Այնտեղ արձանագրված են մինիստրությունում ծառայող հազարավոր կանայք՝ որպես առաջին անհրաժեշտություն, իսկ «այլևայլքում»՝ մի խեղճ ու թշվառ օրինական կին, որը, ձեռքը ծոցը դրած սպասում է ամեն իրիկուն, թե երբ իր ամուսինը, «պետական գործերը» վերջացրած, տուն պիտի գա վերջապես։

Չնախատեսված գումարով է ապրում պետական խանութի աշխատողը, որի աշխատավարձն այնքան քիչ է, որ կարելի է գրել «ծանոթագրության» բաժնում։

Հապա մեր սովետական գրողները...

Գրում են հաստափոր վեպեր՝ մեջը միայն «ի միջի այլոց» բաներ։ Այնքան, որ չգիտես՝ իր վեպով ինչ է ուզում ասել գրողը։

Օրինակ՝ այս երկու օրս գրող Զարզանդ Դարյանը լույս ընծայեց իր պարտապանաց վեպը՝ «Արծիվ Վասպուրականի» անունով։ Կարդացի մինչև վերջ ու ոչ միայն «արծիվ», այլև ագռավի ճուտ չգտա անտեղ։

Ամբողջովին մանր ճիճուներ...

Այսպես շատ օրինակներ կարող եմ բերել, բայց կարճ կապեմ։

Ասում եմ՝ ինչ կարիք կա այսպիսի մանր բաների մասին խոսել, երբ ինքը Սովետական Միությունը մի մեծ «այլևայլք» է աշխարհի քարտեզի վրա։

...Եվ իրոք. ո՞վ էր նախատեսում այսպիսի փորձանք։

Գյուտ

Մի օր, չգիտեմ՝ ինչպես եղավ, մի ստախոս մարդու կարիք զգացի։

Ստախոս, բայց ոչ թե այնպես մանր-մունր տեսակի, այլ խոշոր, եզակի։

Ինձ ասացին, որ այդ մասշտաբի ստախոս դու միայն կարի արտելներում կարող ես ճարել, ուրիշ ոչ մի տեղ։

Ելա, սկսեցի ման գալ կարի արտելները։

Դես՝ ստախոս, դեն՝ ստախոս. չգտա։

Ու երբ պատրաստվում էի վերջին արտելից դուրս գալ հուսախաբ, գլխավոր վարպետն ինձ ներս կանչեց և ասաց հետևյալը.

- Զուր ես մեր արտելները ման գալիս, քո ցանկացած ստախոսը չես գտնի մեզ մոտ։ Մենք խաբում ենք մեր հաճախորդներին 366 անգամ նահանջ տարում, 365 անգամ հասարակ տարում։ Իսկ ես գիտեմ, որ դու այդքանով չես բավարարվի։ Քո փնտրած ստախոսը դու միայն Գրողների միության մեջ կարող ես գտնել։

Ինչ անեմ։

Ելա, Գրողների միություն գնացի։

Քարտուղարը, լսելով խնդիրս, սեղանի գզրոցից երկու ցուցակ հանեց դրեց առջևը ու հարցրեց։

- Պահանջածդ ստախոսը բանաստեղծ պիտի լինի, թե արձակագիր։

- Արձակագիր,- ասացի,- որովհետև ոտանավորով գրված սուտը կարճ է լինում։

Այն ժամանակ քարտուղարը մեկ տետրակը հետ՝ գզրոցը դրեց ու բաց անելով արձակագիրների ցուցակը՝ վերից վար մի անգամ տնտղեց ու ասաց.

- Այստեղ ստախոսներ շատ կան, համարյա բոլորն էլ ստախոսներ են, բայց չգիտեմ՝ քեզ կբավարարեն, թե ոչ։

- Նրանց ստերը մոտավորապես ինչ բնույթի են,- հարցրի։

- Բնույթները բազմաժանր են ու բազմապիսի,- ասաց քարտուղարը։- Կան այնպիսիք, որոնք ներկան են սխալ պատկերում, կան էլ, որոնք պատմությունն են աղավաղում։ Դրանցից ո՞րն ես ուզում։

- Պատմություն աղավաղող,- ասացի։

- Կան այդպիսիք։ Անգամ ոչ միայն պատմություն աղավաղող, այլ մինչև իսկ հիմնիվեր շուռ տվող։ Ոտները՝ վերև, գլուխը՝ ներքև։

- Իմ ուզածն էլ հենց այդ է,- ասացի ուրախացած,- տո՛ւր մեկը դրանցից։

- Ախորժո՞ւմ ես Վանի հերոսամարտը կեղծողներից,- հարցրեց գրողների քարտուղարը՝ ցուցակին նայելով։

- Այո՛, շատ, շատ։

- Այստեղ կա մի Մկրտիչ Սարոյան, որ գրել է «Այրող հուշեր»[186]։ Միայն թե, որովհետև ինչպես կերևի, այդ «հուշերը», մի փոքր թաց լինելով, ոչ մի ընթերցողի չեն «այրում»։ Մեղադրելի չէ, որովհետև նա պրոֆեսիոնալ գրող չէ։ Մի խեղճ թոշակառու ուսուցիչ, որ Գրողների միություն է մտել միայն մի գիրք գրելու իրավունքով։ Եվ մենք այդ իրավունքը տվել ենք՝ ի նկատի ունենալով նրա նյութական անձուկ վիճակը։ Եվ նա ազնիվ խոսք է տվել չկրկնել իր հիմարությունը։

- Կարողացե՞լ է կեղծել։

- Զարմանալի հաջող։ Գրել է, թե ինչպես դաշնակցական մի հայտնի գործիչ Վանում պաշարված մի խումբ հայերի (ինքն էլ մեջը) ազատում է պաշարման օղակից, տանում-հասցնում է Բաղդադ, ինքն էլ ճանապարհին զոհվում, ու հեղինակն իր երախտիքը հատուցում է իր ազատարարին... նրա անունը չհիշատակելով գրքում։

- Անգլուխ ձիավո՞ր։

- Այո՛։ Հեղինակին ազատում է ձի նստած մեկը, որ գլուխ չունի...

- Գիրքը մե՞ծ է,- հարցրի։

- Ո՛չ, փոքր է։

- Ինձ հարկավոր է մեծը։ Որովհետև մեծ սուտը մեծ գրքի մեջ միայն կարող է լինել։

- Այստեղ կա մի ուրիշ գրող՝ Ծերուն Թորգոմյան[187] անունով։ Սա միայն Հայաստանին չի պատկանում, իհարկե։ Թորգոմյանի մի ոտը Թիֆլիսում է, մյուսը՝ Երևանում, և նա բավարարում է և՛

Հայաստանի, և՛ Վրաստանի ստի պահանջը հավասարապես: Ծերուն Թորգոմյանը, հայ մարդ չճարելով, իր «Անմար կրակներում» մի վրացի է բերում Վան, որ հեղափոխական կայծեր տարածի հայ ժողովրդի մեջ և նրան ազատի սուլթանական լծից:

- Ա՛յ, սուտն այդպես կլինի,- ասացի ես՝ չկարողանալով հիացմունքս պահել:

- Դրանից ավելի մեծ սուտ կա,- ասաց գրողների քարտուղարը՝ իմ ջերմ ընկալումից քաջալերված:- Զարզանդ Դարյանը գրել է մի գիրք՝ ահա՛ այս մեծության,- ասաց քարտուղարը՝ թևերը բաց անելով, ինչքան կարող էր,- և մեջը՝ ամբողջովին սուտ:

- Գրքի անունը:

- «Արծիվ Վասպուրականի»: Այս գիրքը եթե լույս ընծայվեր այն ժամանակ, երբ տաճկական դատարանները 101 տարվա բանտարկության վճիռ էին տալիս, կալանավորն առանց դույզնինչ ձանձրույթի կկարդար գիրքը մինչև իր մահը: Ես թղթատեցի այդ գիրքը հասարակ աչքով, մեջը «արծիվ» չտեսա: Ակնոց դրած թերթեցի, խոշորացույցով նայեցի, դարձյալ չգտա: Բաց արի գրքի հավանոցի դուռը. ոչ մի թռչուն: Եվ ես գովեցի Զարզանդին իր անկեղծության համար: Ուրիշ հեղինակներ երկար կարդալ են տալիս իրենց երկերը, միայն վերջում են հայտնում գրածի սուտ լինելը, իսկ նա հենց սկզբում հայտնում է՝ գրածս սուտ է, մի՛ կարդացեք: Միայն, ըստ իս, Դարյանն իր վեպը պիտի վերնագրեր՝ «Գոյություն չունեցող Վասպուրականի արծիվ»:

- Իսկ վեպում ակնառու ստեր կա՞ն,- հարցրի:

- Արտառոց ստեր: Ամբողջ Վանի ինքնապաշտպանությունը Արամ փաշան[188] իր ուսերի վրա կրեց, իսկ նա վերագրում է Արմենակ Եկարյանին[189] ու Փանոս Թերլեմեզյանին[190], որոնք ոչ այլ ինչ էին, քան երկու զերոներ՝ Արամի ձախ կողմը շարված…

Բայց այնուամենայնիվ Արամն էլ արծիվ չէր. ինքնապաշտպանությունը Վանի ժողովուրդն իր ուսերին տարավ այնքան համահավասար, որ չէր արժի այնտեղ արծիվներ փնտրել:

Ասաց քարտուղարն ու շարունակեց.

- Այս՝ քաղաքական սուտ: Իսկ ինչպիսի՞ գեղարվեստական ստեր կան գրքի մեջ՝ չես կարող պատկերացնել:

Ահա ձեզ մի քաղաք՝ շրջապատված տաճիկ զորքերով. քաղա-

քի անկումը՝ ժամերի խնդիր, ժողովուրդն ամեն րոպե սպասում է սրախողխող լինելու, և Զարզանդ Դարյանը ժամանակ է գտնում սիրաբանություններ խաղալ վեպում, սրախոսություն, հարսանիք, ուրախություն...

Այդ ժամանակ Զարզանդ Դարյանը պիտի Վանում լիներ հասկանալու համար, որ նման օրհասական տագնապների ժամանակ իր սեռն անգամ մոռանում է մարդը՝ չիմանալով՝ ինքը աղջիկ է, թե տղա...

Սա մի զավեշտ է՝ նման այն զավեշտին, որ ասում է՝ մի մարդու կախաղան են հանում, իսկ նա, դառնալով դահճին, ասում է. «Կամաց արա, շալվարս չպատռես»...

Բոլոր այս ասածներից հասկացա, որ Զարզանդ Դարյանը հենց իմ փնտրած մարդն է, գնացի, իրեն գտա ու հարցրի.

- Դու ստախո՞ս ես:

- Անչա՛փ,- ասաց Զարզանդը: Եվ ինձ տեսնելիս ճշմարտությունը զարզանդում է, փախչում:

- Հա՞, հենց ապրե՛ս, փնտրածս էլ այդ է: Կարո՞ղ ես «Արծիվ Վասպուրականիից» ավելի մեծ սուտ գրել:

- Կարող եմ:

- Երկա՛ր գրիր, չվախենա՛ս, դրա համար ես կվճարեմ:

- Վճարելու մասին մի՛ խոսեք, որովհետև մեր բոլոր ստերի համար Պետհրատն է վճարում, իսկ երկարության մասին մի մտածեք: Սուտը կարճ չի գրվում:

- Միայն այս անգամ աղավաղելու համար մի փոքր ավելի խորացիր հայոց պատմության մեջ:

Վասպուրականի մասին գրածդ ժամանակակից է, և ականատեսները կարող են բռնել ստերդ: Գնա՛ մինչև Հայկ, Արամ, Տիգրան: Եվ եթե պատմական այդ հեռավորության մեջ էլ փառաբանես Թերլեմեզյանին ու Եկարյանին, դու ասած կլինես աշխարհի ամենամեծ սուտը և չեմպիոն կհռչակվես:

- Դու թող ինձ, ես գիտեմ՝ ինչ կանեմ...

Մենք բաժանվեցինք իրարից ջերմ, բարեկամական մթնոլորտում:

Ես նրան ուժ ու կարողություն մաղթեցի:

Ու երբ նա ինձ հարցրեց՝ ուժ ու կարողություն ի՞նչ բանի համար, պատասխանեցի.

- Անխիղճ կերպով ստելու համար...

Կոմունիզմ

Բոլոր գազերի մեջ կոմունիզմն ամենաթեթևն է։

Եթե մի երկրում ուզում ես կոմունիզմ մտցնել, պետք է այդ երկրի դուռն ու լուսամուտը պինդ խցանես։ Մի փոքրիկ անցք թողեցիր՝ կոմունիզմն էլ կցնդի, կոմունիստն էլ հետը։

Հետո պայթուցիկ է։ Տարիներ առաջ պայթեց Հունգարիայում, քսանհինգ հազար մարդ սպանեց, շատերն էլ փախան երկրից[191]։

Մի ժամանակ Արևելյան Գերմանիայից անվերջ մարդիկ էին փախչում Արևմտյան Գերմանիա։ Այնքան, մինչև կոմունիստ, այսինքն՝ Արևելյան Գերմանիան բռնեց պատ[192] քաշեց երկու Գերմանիաների միջև։ Բայց պատը որքա՞ն բարձր լինի, որ այդ տարերային փախուստն արգելի։ Խոմ մինչև երկինք չի՞ հասնելու։

Արևելյա՛ն Գերմանիա, խելքի՛ եկ, պատը չի օգնի քեզ, կատարյալ մեկուսանալու համար պետք է Ռուսաստանի նման երկիրդ խցանես, փշալարես սահմանը և այն կատաղի շների հսկողությանը հանձնես։

Երեկ ռադիոն հաղորդեց, որ արևելքից մի երիտասարդ, պատի վրա բարձրացած, կամեցել է արևմուտք փախչել և ձեր պահակի գնդակով թավալգլոր վայր է ընկել, բայց ոչ թե Արևելյան, այլ Արևմտյան Գերմանիա։ Ասել է՝ երիտասարդն իր նպատակին հասել է։

Այսօր ո՞ր արևելյան գերմանացին չի ցանկանում Արևմտյան Գերմանիա ընկնել... թեկուզ մեռած։

Դուք գիտեք, որ տարիներ առաջ Կուբան կոմունիզմ ներմուծեց իր կղզին՝ դառնալով առաջին կոմունիստական պետությունն արևմտյան կիսագնդում։

Կղզու դիկտատոր Ֆիդել Կաստրոն[193], որ շատ լավ խցանել էր այդ կղզին, երեկվա հեռագրից կիմանանք, որ կղզու դռները բոլորովին բաց է արել ու հայտարարել, թե ով ուզում է, հեռանա կղզուց։

Եթե ճիշտ է այդ լուրը, նշանակում է Կաստրոն մտադիր է իր կղզին Ռոբինզոն Կրուզոյի ընկած կղզու նման անմարդաբնակ դարձնել...

Որովհետև այն ո՞ր հիմարն է, որ, չուզելով օգտվել այս ազատությունից, պիտի շարունակի ապրել այնտեղ։

Բայց Կաստրոն եթե փորձի մենակ մնալ իր կղզում, Ռոբինզո-

նից ավելի մենակ կլինի։ Որովհետև Ռոբինզոնի կղզում այծեր կային, թռչուններ կային, վերջապես վայրենիներն իրենց գերիներին բերում էին այնտեղ, մորթում ուտում էին։

Վերջապես կյանք կար այնտեղ։

Տնամերձ

Ես օրումս այսպիսի պետություն դեռ չէի տեսել։

Ա՛յ հոգուդ մատաղ, բոլոր իրավունքները քաղաքացուց խլված են, ոչնչի արտոնություն չունի խեղճ ժողովուրդը։

Ժողովուրդն էլ մարդ է, չէ՞։ Իսկ մարդ երբեմն ցանկանում է մի հիմար բան ասել, մի սխալ գործ կատարել։ Խոմ չի՞ կարելի ողջ կյանքում իմաստուն և անսխալական լինել։

Հապա՛ մի փորձիր։

Չհամարձակվե՛ս,- անմիջապես գոռում է պետությունը,- հիմարությունն ու սխալականությունը պետականացված են։ Պետությունը միայն կարող է օգտվել դրանցից։

Փոխանակություն էլ չի կատարում։ Եթե ասես՝ երկու իմաստություն տամ, մի հիմարություն տուր, երեք իմաստություն տամ, մի հիմարություն տուր, դուրս տամ, չի տա։

Ես երգիծաբան եմ։ Ասում եմ՝ դու սխալ գործիր, ես ուղղեմ, չի համաձայնում։ Ասում է՝ ես պետք է ուղղեմ իմ սխալը։

Եվ իրոք էլ ինձանից հաջող է ուղղում։

Հիմա տեսեք։

Նա հողն անհատ գյուղացուց վերցրել, տվել է կոլխոզին։ Բայց քառորդ հեկտարի չափ մի փոքրիկ տարածություն անվանելով «տնամերձ»՝ թողել է գյուղացուն, որպեսզի ցույց տա, թե տեսեք, մի թզաչափ անհատական հողն ինչպես ավելի շատ բերք է տալիս, քան կոլխոզի հազարավոր հեկտար տարածությունները։

Սրանով չի՞ հերքում իր համայնավարությունը։

Հերքում է ավելի պերճախոս, քան ես կարող էի անել իմ երգիծանքով։

Պարոնյանն ասում է՝ հարուստ տիկինները գեղեցիկ երևալու համար տգեղ սպասուհիների հետ են շրջում։ Իսկ մեր պետությունը, դրան հակառակ, կոլխոզն անհատական տնտեսության հետ է ման

ածում՝ ցույց տալու համար, թե ինչքան տգեղ է կոլխոզը, ինչքան գեղեցիկ է տնամերձը։

Բայց ինձ զարմացնում է այն հանգամանքը, թե ինչո՞ւ իր հիմարության ցուցադրությունը միայն հողային հարցում է կիրառում։ Կա՞ մի աշխատանքային ոլորտ, որ տնամերձի կարիք չունենա։

Վերցնենք գրականությունը։ Մեր բոլոր գրողները, կատարելով իրենց պետպարտավորությունները, տասնյակ հատորներ են գրում այն մասին, թե ինչ երջանկություն է բերում սոցիալիզմը մարդուն։ Սա այն է, ինչ գյուղի համայնական հողը, որտեղ ոչինչ չի բուսնում։ Արդ սրա կողքին ինչո՞ւ գրողին չի հատկացնում մի տնամերձ, որտեղ նա, մտածելով որպես անհատ, մի հատորով էլ հերքի իր գրած տասը հատորները և ասի՝ սոցիալիզմը մարդու տունն է քանդում՝ զրկելով նրան անհատական նախաձեռնությունից, եռանդից, ձգտումից և դարձնում է կենդանի դիակ։

Ինչպես գյուղացին իր տնամերձում ինչ ուզում, ցանում է իր անհատական կարիքի համար, ինչո՞ւ գրողն էլ մի տեղ չունենա իր մտածածն արտահայտելու։ Նա իրավունք չունի անգամ իր սերը հայտնելու մի աղջկա. պետությունն այն անվանում է «ապոլիտիկ» և հալածում է։*

Կուլիսը ոչ միայն դերասանին է հարկավոր, այլև ամեն մարդու։ Մի ծածուկ անկյուն, որ մարդ ազատ կերպով հազա, թքի և հարակից բնական կարիքները հոգա։ Ո՞ւր է գրողի այդ անկյունը։ Չկա։ Այդ պատճառով էլ գրողը ստիպված է այդ ինտիմ գործողությունները կատարել հրապարակայնորեն, իր գրած հատորների մեջ։

Հետո մի ուրիշ բան։

Պետությունը Գիտական ակադեմիա է կառուցել, մեջը հավաքել բազմաթիվ գիտնականներ, որ սոցիալիզմ կառուցեն։

Իսկ գիտությունը ոխերիմ թշնամի է սոցիալիզմին։ Եթե սոցիալիզմը մի խոլվաթ տեղ ընկնի գիտության ձեռքը, նա, բուրը սոցիալիզմի բկին դրած, կխեղդի։

Իսկ մեր պետությունն իր հույսը դրել է գիտության վրա...

Սոցիալի՞զմ ես ուզում կառուցել՝ Ակադեմիադ լցրո՛ւ տգետներով, և սոցիալիզմդ պատրաստ է, վերցրո՛ւ ու վայելի՛ր։

Եթե աշխարհում կան մարդիկ, որոնք տատանվում են, չգիտեն թե սոցիալիզմը հնարավո՞ր է, կիրառելի՞ վարդապետություն է, թե՞

* Ապոլիտիկ- ապաքաղաքական։

ոչ, թող իրենց տնամերձերում սոցիալիզմ ցանեն. եթե չբուսնեց, նշանակում է՝ դա անհնարին բան է։

Բոլոր վարդապետությունների, բոլոր գաղափարների ու սկզբունքների փորձադաշտը տնամերձն է։ Եթե մի գաղափար տնամերձ չունի, ապա նրա հնարավորությունը փորձելն անհնար է։

Պետությո՛ւն, գաղափարներին տնամերձ բաժանի՛ր։

Հա՛։ Իբրև բացառություն կարող եմ հիշատակել միայն մի բնագավառ, որի տնամերձը քիչ արգասաբեր է, ու գերադասելի է համայնական «հողամասը»։

Դա ամուսնական բնագավառն է։ Մենք բոլորս էլ գիտենք, որ մարդն իր օրինական կնոջ վրա ավելի քիչ աշխատանք է թափում, քան օտարների...

Հարստությունը երջանկացնո՞ւմ է մարդուն

Ո՛չ։

Եթե հարստությունը երջանկացներ մարդուն, Աստված Ադամի կողքից Եվա չէր հանի, այլ մի միլիոն դոլար։

Դուք ձեր կյանքում երբևիցե սիրահարված կա՞ք, գիտե՞ք՝ դա ինչ զուլում բան է։

Եթե անձամբ չեք փորձել, ես ասեմ։

Դա, ինչպես ասացի, զուլում բան է. Աստված իմ թշնամու դեմը չբերի։ Երբ հեռվից լսում ես նրա շրջազգեստի շրշյունը, սպասում ես, որ ահա վիժելու է մի հրաբուխ, բարձրանալու է մի թայֆուն, որ, քեզ պոկելով քո կապված տեղից, տանելու է տիեզերքի մի հեռավոր անկյուն, որտեղից այլևս վերադարձ չկա։

Մոտենում է քեզ սիրածդ, ուզում ես մի վերջին անգամ տեսնել նրա չքնաղ կերպարանքը նոր մեռնել, բայց չես կարողանում։ Աչքերդ շլվում են, մեկը հյուսիս է նայում, մյուսը՝ հարավ, դու կուրանում ես, ու աչքդ սկսում է տեսնել միայն այն ժամանակ, երբ նա այլևս չկա։

Ուզում ես՝ վարդ հոտոտիր, ուզում ես՝ մանուշակ, միևնույն է, դու նրանից այն հոտը կառնես, ինչ օծանելիք գործածում է սիրուհիդ։

Ինչ սոխակ ուզում է երգի, դու միայն սիրածդ աղջկա ձայնն ես լսում։

Եթե թվաբանության ուսուցիչ ես, քո երկու անգամ երկուսը հինգին է հավասար լինում, տասին, տասնհինգին։

Եթե աշխարհագրություն ես ավանդում, ապա Իսլանդիայի մայրաքաղաքը կլինի Վաշինգտոնը, Լոնդոնը, Փարիզը, բայց ոչ երբեք Ռեյկյավիկը։

Մինչև անգամ ամբողջական կլինի Բեռլինը, որը, գիտեք որ, պատով կիսված է, և արևելյան մասից արևմուտք անցնելը որքան դժվար է։

Եթե բուսաբանության ուսուցիչ ես, ծառեր կտնկես՝ ճյուղերը գետնի տակ, արմատը դեպի վեր։

Ասացեք, ո՞ր հարուստն իր միլիոնները դիզելիս այսպիսի սարսուռներ է ունեցել։

Իսկ ես ունեցել եմ մի աղջկա համար, որի մի աչքի վրա էլ հատ կար…

Այս բոլորից հետո, եթե չհամոզվեցիք, որ կյանքը ոչ թե փողի մեջ է, այլ սիրած աղջկա, հապա ինձ նայեցեք։

Ես ամերիկացի Ռոկֆելլերն եմ և ունեմ քառասունվեց միլիարդ դոլարաչափ արտառոց հարստություն։ Բայց ունեմ նաև նույնպիսի արտառոց քիթ։ Մի քիթ, որ տեսնողը կվախենա։

Եվ բոլորովին էլ չեմ սիրահարված, այլ իմ համեստ ցանկությունները բավարարելու համար ուզում եմ ամուսնանալ և ունենալ մի որևիցե կին։

Եվ շատ մեղմ ու քնքուշ տոնով առաջարկություն եմ անում մի կնոջ։ Ու.

- Վա՛յ, տունս քանդվեց,- ասում է կինն ու ոտներին քանի ուժ ունի, փախչում է։

Մոտենում եմ երկրորդ կնոջը.

- Օգնեցեք,- բղավում է կինը,- այս մարդն ուզում է ինձ հետ ամուսնանալ…

Հասնում են բարի մարդիկ և կնոջն ազատում իմ ճիրաններից։

Երրորդ կնոջն առաջարկություն եմ անում մի փակուղում, որ տեղ չունենա փախչելու։

Կինն ինքզինքը գցում է մի բաց դուռ և բարձրանում է կտուրը։

Չորրորդ կնոջն առաջարկում եմ մի անդունդի եզրին, և կինը, դեռ խոսքս չավարտած, ինքզինքը նետում է անդունդը։

Ըստ օրենքի՝ միլիցիան ինձ պիտի ձերբակալի որպես հասարակական կարգը խանգարողի, բայց միլիցիան տղամարդ է, իսկ տղամարդիկ ավելի շատ մարդու գրպանին են նայում, քան քթին։

Ու ես օրը ցերեկով լեղապատառ եմ անում քաղաքի կանանց։

Ինչ եք կարծում, նման պարագայում ես իմ միլիոնները չէ՞ի տա մի կաղ, մի աչքն էլ կույր կնկա համար։

Կինն ինչքան էլ անարժեք լինի, էլի հանգցնում է մարդու հրդեհված էությունը, իսկ փողն ընդհակառակը վառում, բորբոքում է մարդուն այնքան ժամանակ, քանի աշխարհի բոլոր ոսկիներին չի տիրացել։ Եվ որովհետև այդ հնարավոր չէ, ուստի հարուստի գեհենը մշտնջենական է։

Հիմա։

Սոցիալիստների խոստացած մարդկային երջանկությունը պետք է հասկանանք նյութական առումով։

Սոցիալիզմը մարդուն գեղեցիկ կին կտա՞։

Ո՛չ։

Ուրեմն, էլ ի՞նչ երջանկության մասին խոսք կարող է լինել։

Բայց թյուրիմացության տեղիք չտալու համար պետք է ասեմ, որ աշխարհի բոլոր հարուստները չէ, որ ունենում են մեծ քիթ և դժբախտանում։

Մեծ քիթ ունենում են միայն կապիտալիստական երկրների, ինչպես օրինակ, Ամերիկայի և Անգլիայի հարուստները։ Իսկ սոցիալիստական երկրների, մանավանդ Ռուսաստանի հարուստների քթերը ինչքան էլ մեծ լինեն, չեն խանգարի նրանց երջանկությանը։

Որովհետև կապիտալիստական երկրներում հարուստները տեր են միայն իրենց դրամին և տեր չեն ողջ երկրին։ Իսկ Ռուսաստանի կոմունիստները, որոնք ներկայացնում են երկրի հարուստ դասակարգը, տիրում են ողջ ազգաբնակչությանը։ Նրանք հարստանալու համար առևտուր չեն անում իրենց ժողովրդի հետ, այլ նրանց բոլորին հավաքում, լցնում են Չեկայի նկուղը, մամլիչով քամում այնպես, որ ոսկին ինքնիրեն հոսի իրենց գրպանը։

Չեկիստը որքան էլ երկար քիթ ունենա, որևէ կին նրանից չի կարող փախչել։ Փախավ՝ ետևից կլսի կրակոց և դիտապաստ վայր կգլորվի։

Ռուսաստանում եթե կոմունիստ ես, ինչքան երկար բան ուզե-

նաս, ժողովրդին կպարտադրես։

Աշխարհում սոցիալիզմից ավելի երկար քիթ ունեցող վարդապետություն չկա. տեսա՞ք՝ ինչպես զենքի ուժով կլլեցրեց իր ժողովրդին։

Սոցիալիզմ շինելու համառոտ ձեռնարկ

Այն հանգամանքը, որ Լենինն իր սոցիալիստական շինարարությունը սկսեց հոկտեմբեր ամսին, շատերի մեջ այն թյուր կարծիքն է առաջացրել, որ դա կախված է կլիմայական պայմաններից և հատկապես աշնան եղանակն է բարենպաստ այդ վարդապետության շինարարությանը։

Բայց փորձերը ցույց են տվել, որ տարվա բոլոր եղանակներին էլ կարելի է սոցիալիզմ շինել։ Մինչև անգամ ձմեռվա սառնամանիքներին, եթե շինարարը տաք հագնված լինի։

Սոցիալիզմի համար պետք է ման գալ երկրի երեսին և գտնել մի մեծ պետություն, որի բնակիչները կատարյալ ավանակ լինեն։ Պետք է խստիվ հետևել, որ ձի կամ ջորի չլինեն, այլապես գործը գլուխ չի գա, որովհետև դրանք մտածող կենդանիներ են։

Իսկ այն երկրներում, ուր ավանակ չի ճարվում, կարող են օգտագործվել ոչխարներ, որոնց պոզերը պետք պիտի լինի նախապես հանել։

Այս նախնական զգուշությունից հետո արդեն կարելի է իսպառ վերցնել ու հարթել տվյալ երկրի հին կարգերն այնպես, որ հինը հիշեցնող ոչինչ չմնա։

Հարթել կարելի է երկու կերպ. սափրել կամ արմատից հանել հինն այնպես, որ տեղում բուսնի անդասակարգ հասարակություն։ Չլինեն հաստավիզ բուրժուաներ՝ ճարպոտած որովայններով, ու բարակ վզով աշխատավորներ։

Հանձնարարվում է հին կարգերն արմատով հանել։ Երբ սափրում ես երեսից, արմատները մնում են հողի մեջ, և հին կարգերը նույնությամբ բուսնում են։ Դասակարգեր՝ հաստ ու բարակ վզերով։

Լենինի շինած սոցիալիզմն, օրինակ, սափրովի էր։ Հարթելուց հետո նույն հին կարգերը բուսնեցին՝ միայն մի փոքր ավելի բարգավաճ ու ավելի փարթամ։ Այնտեղ բուրժուաների վզերը կրկնակի հաստ էին, ու աշխատավորի և գյուղացու վզերը՝ կրկնակի բարակ։

Այդ վզերն իրարից տարբերվում էին նաև իրենց գույներով: Նախկինները ճերմակ էին, իսկ ներկաները՝ կարմիր, որի հետևանքով էլ կոչվեցին «կարմիր բուրժուաներ»:

Միայն երկրի անունը փոխվեց: Նախկինում Ռուսաստանը կոչվում էր ցարական, ներկայումս՝ հեղափոխական:

Անուններ այնքան համանիշ, որ կարելի էր ազատ կերպով գործածել մեկը մյուսի փոխարեն:

Սոցիալիզմը քիմիապես տարրալուծելիս գտնում ենք, որ նա էլ օդի նման երեք տարրերից է բաղկացած, բայց ափսոս որ՝ ոչ թթվածնից, ածխածնից և բորակածնից, որն ավելի առողջարար է շնչելու համար, այլ ճորտատիրությունից, ցարիզմից ու սուլթանիզմից, որը շնչել չի լինում:

Սոցիալիզմի վարպետը պետք է իմանա վերոհիշյալ երեք տարրերը համադրել հավասար չափով՝ բարձրավոլտ գազանություն ստանալու համար:

Շատերը փորձեցին միայն սուլթանիզմով սոցիալիզմ կառուցել ու չհաջողվեց:

Սուլթանը, երբ կոտորում էր հայերին, նախապես իր երկրի սահմանները չէր փակում պահակներով, շներով ու փշալարով, որի հետևանքով կոտորածից ազատվողներ էին լինում արտասահման փախչելով:

Հետո Սուլթանի կոտորածների մեջ հապճեպություն կար, որի հետևանքով նա չվայելեց կոտորածի ողջ հաճույքը: Նա կոտորում էր, ինչպես որսորդները վայրի գազան են որսում: Զոհերի նախնական հաշվառում չկար: Տեսար՝ մի քաղաք առավ թնդանոթի հարվածի տակ: Երբ դահիճը կրակում է հեռվից, բնական է, որ զոհը մեռնի իր ցանկացած ձևով: Եվ երբեմն էլ չմեռնի:

Իսկ սոցիալիզմը մարդկային երջանկությանն է հետապնդում. նա այդպես «յաբախտ» չի կարող սպանել: Նա ունի իր զոհերի լրիվ ցուցակ՝ անունով, հայրանունով ու ազգանունով: Դրանց հավաքում-լցնում է բանտերը և մաս-մաս հանում կոտորում, հետո էլ ուղարկում է իր «մահվան կոմիսարին»՝ ստուգելու, թե զոհը գիտակցաբա՞ր է մեռել, խոմ հետո չի՞ փոշմանի ու կենդանանա՝ դառնալով «կրկնահանցագործ»:

Սոցիալիզմ շինելիս պետք է աշխատել ցարիզմից օգտվել. դա

թույլ ռեժիմ է և կարող է «լիբերալիզմ» մտցնել սոցիալիզմի մեջ։ Ցարը տարին մեկ, երկու տարին մեկ միայն մի մարդ էր կախում, և կախվողն էլ մեռնում էր համարյա «խաթեր համար»…

Իմացիր, զոհին այդպիսի թույլ մահերով մեռցրիր՝ մի օրում սոցիալիստական կարգերը կտապալվեն։

Հետո ցարերը և սուլթանները պարտիզանական մարդասպաններ էին։ Եղավ՝ կսպանեին, չեղավ՝ չէին սպանի։ Մինչդեռ սոցիալիզմի համար հարկավոր է ունենալ մի մնայուն ապարատ, որի միակ գործը պիտի լինի մարդասպանությունը, և հիմնարկի անունն էլ լինի Չեկա։

Առանց Չեկայի չկա սոցիալիզմ։

Փիլիսոփայություն

Մարդկանց մեջ այն թյուր կարծիքն է արմատացել, ըստ որի՝ փիլիսոփայությամբ կարող են զբաղվել միայն որոշ ուսում առած անհատները։

Եթե փիլիսոփայության խնդիրն է որևէ իմաստ փնտրել գոյություն ունեցող աշխարհի մեջ, ասել, թե մարդիկ որտեղից են գալիս և ուր են գնում, ինչո՞ւ, ուրեմն, որոշ մարդիկ միայն զբաղվեն նրա մեջ իմաստ դնելով, և ոչ բոլոր նրանք, ովքեր ծնվում և աշխարհ են գալիս։

Կամ ինչո՞վ կվնասի փիլիսոփայությունը, եթե տգետներն էլ կարծիք հայտնեն, քանի որ բոլոր հայտնված կարծիքներն էլ հավասարապես սուտ են և սխալ…

Ջիվանին, օրինակ, որ մի սովորական աշուղ էր, ասում է. «Աշխարհը հյուրանոց է, մարդիկ հյուր են, կուգան ու կերթան[194]։

Պակաս կարծիք է։

Ու եթե Ջիվանին ասեր նաև, թե մարդիկ որտեղից են գալիս և ո՞ւր են գնում, այն ժամանակ բոլոր պրոֆեսիոնալ փիլիսոփաներն իրենց գրիչները վայր պիտի դնեին՝ հարցը համարելով սպառված։

Մենք Ջիվանուն չենք համարում փիլիսոփա, որն ասել է ճշմարտության համարյա կեսից ավելին, տգետ Սոկրատեսին ենք համարում փիլիսոփա, որն ասել է. «Ես այն գիտեմ, որ ոչինչ չգիտեմ»։

Վերցնենք Սողոմոն Իմաստունին։

Նա ասում է. «Ունայնություն ունայնության, ամենայն ինչ ընդունայն է»:

Դե եկ ու հավատա:

Եթե աշխարհը դատարկություն է, Սողոմոնին ինչպե՞ս է հաջողվել գոյություն ունենալ այդ դատարկ տարածությունում և անգամ ճշմարիտ կարծիք հայտնել:

Սրան չասե՞նք ոչինչ կարծիք՝ ոչնչության մասին:

Այսինքն՝ զերոյին գումարած զերո...

Ես այս երկու փիլիսոփաներից ավելի Ձիվանուն եմ հավանում, ինչպես ասացի, եթե ասեր նաև՝ հյուրերը որտեղից են գալիս և ուր են գնում, հետո այն, թե դրանք ցանկալի հյուրեր են, թե ինքնակոչ:

Խրուշչովը՝ Ռուսաստանի այդ վարչապետը, քանի գահընկեց չէր եղել, ամեն օր աշխարհի մի որևէ պետության մոտ հյուր էր, չնայած ոչ մեկը չէր ուզում նրա երեսը տեսնել: Բայց նա նախապես ստիպում էր, որ իրեն հյուր կանչեն, նրանք էլ ստիպված կանչում էին... սրտխառնուքով:

Մա՞րդն էլ արդյոք այսպիսի «հյուր» է:

Արդ: Եթե փիլիսոփայությունը համարենք ստություն՝ դուրս եկած զանազան բերաններից, ապա հետաքրքիր է իմանալ, թե ասված այդ բոլոր ստություններից ո՞րն է ամենամեծ սուտը:

Մեծ սուտ ասելու համար պետք է որ այդ ասողը տիեզերական մեծություն լինի, մի Աստված:

Ստո՞ւմ է արդյոք մեր միակ Աստվածը:

Այո՛, ստում է նա՝ ասելով «հող էիր և հող կդառնաս»[195]:

Եվ որովհետև ստախոսները, հաճախ իրենց նախնական ցուցմունքը մոռացած, հետո միանգամայն այլ ցուցմունք են տալիս, այդ պատճառով Աստվածն էլ իր նախնական «հողը» մոռացած մարդուն երկինք է տանում և հավիտենական կյանքի արժանացնում...

Սա հանուր մարդկության դավանանքն է՝ բացի Սովետական Ռուսաստանից:

Սովետական Ռուսաստանը որովհետև Աստծուն չի հավատում, երկու մարդուց՝ Մարքսից և Լենինից, մի միացյալ փոքրիկ աստվածություն է ստեղծել և նրանց ասածին է հավատում:

Նրանք մարդկանց մեկ-մեկ պրոլետար են դարձնում և հետո ձայն տալիս.

- Պրոլետարներ բոլոր երկրների, միացեք:

Կոնսերվի գործարան

1917 թվականի Հոկտեմբերյան հեղափոխությանը, երբ Լենինը տեր դարձավ Ռուսաստանին, շվարեց կանգնեց: Նա իր օրում այդքան ժողովուրդ չէր ունեցել և չգիտեր ինչ անել նրան:

Ռուսաստանը ուներ «Սիբիր» մակնիշի մի ընդարձակ սառցարան, կարող էր մորթել իր ժողովրդին և շարել այնտեղ, բայց ամառներն այնտեղ տաք է լինում, և միսը կարող էր փչանալ:

Լենինը մտածեց ժողովրդից ղավուրմա պատրաստել: Բայց Ռուսաստանը շատ լլար էր, հազիվ թե իրեն ծածկեր և հետևին էլ դմակ չուներ:

Ինչ անել:

Ստիպված բռնեց երկրի սահմանները պինդ փակեց, որպեսզի օդ չանցնի, և կոնսերվացրեց ժողովրդին:

Բայց այնուամենայնիվ ամանը ծակ էր, ինչ-որ տեղից օդ էր անցնում, և ապրանքը սկսում էր համը փոխել:

Իրերի այս դրության մեջ Լենինը մեռավ, զմռսվեց և գնաց գերեզմանում պառկեց՝ ականջը միշտ իր հաջորդ Ստալինին պահած՝ իմանալու համար, թե նա ինչ կպատրաստի իր ժողովրդից:

Ստալինը սկզբում մտածեց զմռսել ժողովրդին և դնել իր «առաջնորդի» կողքին:

Բայց այն ժամանակ իրեն անելիք չէր մնա:

Ինչ անեմ, ինչ չանեմ. սկսեց մեկ-մեկ գնդակահարել մարդկանց և թաղել գետնի տակ:

Բայց պահածոյի այս նոր ամանը նույնպես չարդարացրեց իրեն, որովհետև եղկեր* չէր և օդ էր անցկացնում:

Մինչև գլխի ընկավ Ստալինը, արդեն քսան միլիոն մարդ փչացել էր գետնի տակ:

Հիմա ինչ անել:

Մյուս կողմից անորոշության մեջ խարխափող ժողովուրդը պահանջում էր իրենց առաջնորդներից հայտնել իրենց վերջնական միտքը, թե ինչ են ուզում դարձնել իրենց:

* Եղկեր (բրբ.) - այստեղ՝ հերմետիկ:

Ստալինն ասում էր.

- Ես ուրիշ ոչինչ չեմ կարող անել ձեզ, ես միայն գնդակահարել գիտեմ՝ գնդակահարում եմ:

Բայց չհասցրեց բոլորին գնդակահարել Ստալինը, մեռավ ու զմռսվելով գնաց պառկեց իր «ուսուցչի»՝ Լենինի կողքին:

Կարճ ժամանակ «ուսուցիչն ու աշակերտը» պառկեցին քով քովի զմռսված, բայց հետո Ստալինից սկսեց հոտ գալ, ստիպված տարան դիակը այրեցին:

Հիմա դառնանք Ռուսաստանի երրորդ տիրոջը՝ Խրուշչովին:

Խրուշչովը, իր նախորդների անհաջող փորձերն ի նկատի ունենալով, բոլորովին այլ ընթացք բռնեց: Նա սկսեց իր ժողովրդին կոնսերվացնել ողջ վիճակում:

Այդ նպատակով նրա համար սկսեց կառուցել քարաշեն փոքրիկ բնակարաններ և ժողովրդին ընտանիքների վերածած՝ ճխտեց այդ նեղ բնակարաններում և կափարիչը պինդ փակեց:

Բայց բանից պարզվեց, որ կենդանին այն չէ, ինչ մեռածը: Կենդանի մարդն ամենախիստ ռեժիմի մեջ էլ ծնվում և մեռնում է: Մի հանգամանք, որ մեծապես ազդում է այդ նորաշեն ամանների բովանդակության վրա:

Օրինակի համար, երբ բերնեբերան լցված այդ բնակարաններում մեկը մեռնում է, ամանում գոյանում է դատարկ տարածություն, որտեղ օդը մտնելով փչացնում է տուփի ողջ պարունակությունը:

Դրան հակառակ՝ երբ տուփում մեկը ծնում է, ամանն ուռչում և պայթում է՝ վնաս պատճառելով տվյալ տնտեսությանը:

Ու այսպես պատրաստված կոնսերվները ոչ միայն այս աշխարհում պիտանի չեն, այլ նաև հանդերձյալում:

Կոնսերվացված մարդիկ ենթակա չեն «վերջին դատաստանի», որովհետև նրանք ազատ չեն ապրել, որպեսզի իրավունք ունենային չար կամ բարի լինել՝ արքայություն կամ դժոխք գնալու համար:

Նրանք եղել են այն, ինչ ցանկացել են երկրի տերերը:

Իսկ այս վիճակից մեզ պիտի ազատի ոչ թե մարդը, այլ միայն Աստված:

Այդ նպատակով էլ վերջերս երկինք համբարձավ Երևանի քաղսովետը:

Նա պիտի առաջարկի Աստծուն նորակառույցներում ապրողնե-

րին ձեռք չտալ։ Նրանց ո՛չ ավելացնել, ո՛չ պակասեցնել։

Անել այնպես, որ մարդիկ իրենց բոլոր մահերը և ծնունդները կատարեն իրենց հին տներում միայն։ Իսկ նոր տներ փոխադրվելուց հետո այլևս իրավունք չունենան ո՛չ ծնել, ո՛չ մեռնել։

Հիմա տեսնենք, թե ինչ պատասխան կբերի քաղսովետը։

Գժանոցում

Առածն ասում է. «Երկու մարդ են միայն ճշմարիտ խոսում աշխարհում, դրանցից մեկը երեխան է, մյուսը՝ գիժը»։

Ես իմ ողջ կյանքում միայն ճշմարիտն եմ խոսել։ Ըստ առածի՝ ուրեմն ես կա՛մ երեխա պիտի լինեմ, կա՛մ գիժ։ Եվ որովհետև ես արդեն չափահաս մարդ եմ, հետևաբար, այլևս երեխա լինել չեմ կարող, ինձ մնում է գիժ լինել։

Եղա, գնում եմ գժանոց։

Իմ հոգեբույժը, որ վերին աստիճանի սրտացավ և բարի մարդ էր, երկար քննությունից հետո ասաց.

- Մի՛ վախեցիր, ես քեզ այնպես բուժեմ, որ դու մի ամիս հետո հիվանդանոցից կատարյալ ստախոս դուրս գաս։ Այնպես գերազանց կեղծես, որ Ստալինին համարես գթառատ հայր ու ժողովրդի բարերար։

- Լեզուս չի՞ չորանա բերանումս,- հարցրի։

- Լեզվի ոչ մի չորացում,- ասաց բժիշկը,- և եթե կամենաս, կարող ես նրան երկար կյանք մաղթել։

- Այդ այն ժամանակ, երբ կուզեմ՝ բոպե առաջ սատկի։

- Այո՛։ Բա մենք ո՞նց ենք մաղթում։

Չհակառակվեցի բժշկին, բայց ես շատ լավ գիտեի, որ իմ հիվանդությունը անբուժելի է։

Վերջը ինձ տեղավորեցին գժանոցում։

Այնտեղ ես պատահեցի մի աղջկա և սկսեցի հետն անմեղ կատակներ անել՝ օրս մթնացնելու համար։ Բայց աղջիկն իմ կատակը լուրջ ընդունեց և ինն ամիս, ինն օր հետո մի երեխա ծնեց ինձ համար։

- Աղջի՛կ, այս ինչ է,- հարցնում եմ։

- Երեխա,- ասում է աղջիկը։

- Երեխա որ ինչ։

- Երեխա, որ դու հայր լինես, ես մայր:

- Հետո՞:

- Հետո կկրթես, կդաստիարակես, կանես քեզ տղա,- ասաց, հետո ավելացրեց.- մի նայի՛ր է, ի՞նչ խելոք տղա է:

Որ «խելոք» ասաց, արյունը զարկեց գլուխս:

- Ծո՛ հիմար աղջիկ, ես խելոք տղային ինչպե՞ս մարդ դարձնեմ:

- Ինչո՞ւ որ...

- Ո՞նց թե «ինչո՞ւ որ»... Ա՛յ կնիկ, խելոք տղային ես ինչպե՞ս համոզեմ, որ Աստված կա: Եթե ասի՝ բե՛ր տեսնեմ, որ հավատամ, ես ի՞նչը ցույց տամ նրան:

- Բաց կանես Աստվածաշունչը, որ կարդա:

- Այն ժամանակ բոլորովի՞ն չի հավատա: Ես Աստվածաշունչ կարդալուց հետո միայն անհավատ դարձա,- ասացի, հետո ավելացրի.- լա՛վ, ասենք թե երկար համոզելով՝ մի կերպ հավատացրի, թե Աստված կա, ես ինչպե՞ս հավատացնեմ, որ Լենինն ու Ստալինը մարդկանց կոտորում էին նրա համար, որ երջանկացնեն նրանց: Ասա՛, ինչպե՞ս հավատացնեմ:

- Կհավատա, կհավատա, մի՛ վախեցիր: Բոլոր երեխաներն էլ ծնվելիս իմաստուն են լինում, հետո մարդ դառնալիս են հիմարանում: Ես գիտեմ իմ ծնած երեխայի ինչ լինելը:

Ա՛յ կտեսնես, տղադ վաղն այնպիսի երևելի հիմար լինի, որ բոլորը մատով ցույց տան...

Նա Աստծուն էլ կհավատա, սոցիալիզմին էլ. ֆուտբոլ կխաղա, բռնցքամարտիկ կդառնա և պատահածի քիթ-մռութը կջարդի ու ատամները կլցնի բերանը: Կծխի, կխմի, զինվոր կդառնա, մարդ կսպանի,- ասաց կինս ու ավելացրեց.- վերջապես աշխարհում ինչքան հիմարություն կա, կկատարի:

- Հավատա՞մ ասածներիդ, կնի՛կ,- ասացի:

- Հավատա՛,- ասաց նա:

- Տա՛ Աստված,- ասացի ու ջերմեռանդ երկնքին նայեցի...

բնագրերը 5 1915-ական թվեր

Իներցիա

Երեխան իր հոլի շուրջ հազիվ տասը փաթ ղայթան* է փաթաթում, բայց երբ հոլը խփելիս, մանավանդ ամուր խփելիս հարյուրից ավելի պտույտ է գործում, կարկամում է։

Ահա այդ իննսուն պտույտը ֆիզիկայի մեջ կոչվում է իներցիա։

Իներցիան, հոլից բացի, գոյություն ունի ուրիշ շատ ավելի լուրջ բաներում։

Մարդն ամենաշատը ապրում է հարյուր տարի, ասենք, բայց իներցիայի օրենքով ուզում է արքայություն գնալ ու հավիտյան ապրել։

Մարդկությունը կարճ ժամանակ վայրենի է եղել, հետո քաղաքակրթվել է։ Բայց նրա մարդակերությունը իներցիայով շարունակվում է մինչև ներկա քսաներորդ դարը և գնալով սաստկանում է՝ այն հասցնելով այնտեղ, երբ որ մի պետություն ուզում է կուլ տալ ողջ աշխարհը։

Գիտեք անշուշտ, որ կոմունիզմը տարածվում է միայն զենքի ուժով, և Ստալինը իր գնդակահարություններով սարսափեցրել էր ժողովրդին։

Չկա այժմ Ստալինը, և նրա հաջորդներ Խրուշչովն ու Կոսիգինը այլևս չեն գնդակահարում մարդկանց, բայց Ստալինի սարսափը իներցիայով շարունակվում է Ռուսաստանում, «կարկամում» ու սպառնում հավիտենական դառնալ։

Ճապոնիայի մշտական աղետը նրա երկրաշարժն է։ Ու չնայած նրան, որ վերջին մի քանի տարում չի եղել, Ճապոնիան իներցիայով ավելի է շարժվում ու կործանվում, քան այն ժամանակ, երբ իրոք երկիրը շարժվում էր։

Ես քսան տարի կալանավորվելուց հետո, սա տասը տարի է, որ ազատ եմ, բայց իմ տասը ազատ տարիներին ես ավելի եմ բանտարկված, քան էի բանտում։

Առանց սվինավոր պահակներ ունենալու կողքերիս՝ չեմ կարող քայլել…

Ցավալին այն է, որ որտեղ չպետք է գոյություն ունենար իներցիան, գոյություն ունի, իսկ որտեղ պետք է գոյություն ունենար, չունի։

---

* Ղայթան- առասան, թոկ, պարան։

Օրինակի համար՝ տասնյակ տարիներ իրար սիրող ամուսինները, երբ բաժանվում են, ինտերցիայով այլևս չեն սիրում իրար։ Մինչդեռ բաժանվելուց հետո ավելի սաստիկ պիտի սիրեին և հոլի պես իրար գրկած՝ պիտի «կարկամեին» իրար վրա։

Մի բան, որ չենք տեսնում։

...Ասենք, ամուսնությունը երբ է որևէ օրենքի ենթարկվել, որ ֆիզիկայի օրենքին ենթարկվի։

Հարսը տաճարի սուրբ սեղանի առջև պսակվելիս, իր օրինական ամուսնու ձեռքը թողած, քավորի ձեռքն է կսմթում՝ ասել ուզելով.

- Ոտավորն ուտեմ, անոտն իմ ծառան է...

Մի սուգ, որ ենթակա չէ մխիթարության

Երբ մի մարդու կինը մեռնում է, բարեկամները հավաքվում գալիս են նրան մխիթարելու՝ ասելով.

- Դու ողջ մնաս, շատ մի՛ մտածիր։ Մենք բոլորս նույն ճանապարհով ենք գնալու, մարդս մահկանացու է և այլն։

Եվ հաճախ պատահում է այնպես, որ մարդը, չկարողանալով տանել կնոջ անտանելի արարքները, շատ ուրախ է լինում, որ կինը մեռել է, բայց քաղաքավարության դեմ չմեղանչելու համար ընդունում է նրանց ցավակցությունը և մխիթարվում է, չնայած որ մխիթարության ոչ մի կարիք չի ունենում։

Եվ այսպես՝ անհատական կյանքում ոչ մի սգավոր անմխիթար չի մնում։

Բանը դժվարանում և համարյա անկարելի է դառնում այն ժամանակ, երբ վիշտը ազգային է լինում։ Օրինակի համար, երբ բնաջնջվում է մի ողջ ազգի կեսը։

Կոնկրետ՝ երբ Թուրքիան կոտորում է Արևմտահայաստանում ապրող ողջ հայությանը՝ կիսով չափ հայ թողնելով Ռուսահայաստանում, այն էլ նրա համար, որ ողջ կյանքում ողբա իր ահռելի կորուստը...

Կենդանի մնացած հայությունը, անշուշտ, բոլոր երկրներում էլ ունի անհատական բարեկամներ, անգամ Թուրքիայում, բայց անհատն ինչքան էլ սրտացավ լինի, կարո՞ղ է ամոքել մի ամբողջ ազգի կորստյան ցավը։

Օրինակի համար՝ մի ֆրանսիացի կամ անգլիացի կարո՞ղ է մխիթարել կենդանի մնացած հային՝ ասելով.

- Մի՛ մտածիր, մենք բոլորս էլ մահկանացու ենք, բոլորիս էլ թուրքը պիտի կոտորի։

Չի կարող։

Չի կարող, որովհետև ճիշտ է, մարդը մահկանացու է, բայց ազգը՝ ո՛չ։

Պատմությունը ցայսօր չի արձանագրել մի դեպք, երբ մի ազգ ամբողջովին մեռած լինի։

Փյունիկեի մասին միայն մի թեթև հիշատակություն կա, թե անհետացել է, բայց դա էլ ով գիտի՝ ինչ թյուրիմացության արդյունք է։

Փյունիկեցիք առևտրական ժողովուրդ են եղել։ Միգուցե սրանրա փողերը կերել ու անհետացել են…

Բայց հայերը, թուրքի ոչ մի կոպեկ չուտելուց զատ, անվերջ թալանվել են։

Ցավալին հենց այդ է։

Ասելս այն է, որ անհատը չի կարող ամոքել մի ազգի ցավ։ Հայ ազգին մխիթարելու համար պետք է բոլոր ազգերը վեր կենային և գային նրա դուռը։

Օրինակի համար՝ Անգլիան, Ֆրանսիան և մյուս վեց մեծ պետությունները, սևերը հագած, պիտի գային Հայաստանին տեսության և ասեին.

- Մի՛ մտածիր, պետությունները բոլորն էլ մահկանացու են, մի օր ծնվել ենք, մի օր էլ պիտի մեռնենք և այլն։

Եվ այդ այն ժամանակ, երբ իրենց պետության սահմանները օրը օրին ընդարձակում են ու բնավ էլ չեն մեռնում։

Եթե այդպես ասեն, այդ կլինի ոչ թե մխիթարել Հայաստանին, այլ պարզապես ծիծաղել նրա վրա։

Այն էլ այն վեց պետությունները, որոնք իրենց ստորագրությունն են դրել Բեռլինի 61-րդ հոդվածի[196] տակ դեռ այն ժամանակ, երբ «Հայկական հարցը» ջահել, վառվռուն երիտասարդ էր և ոտքի տակ էր տալիս աշխարհի բոլոր մայրաքաղաքները։

Չէ՛, ծանր է հայի վիշտը, և ոչ մի պետություն թաշկինակը չի հանի գրպանից՝ սրբելու նրա արցունքները։

Բայց ախր հայի վիշտը մեկը չէ, այլ երկուսը։

Հային կոտորում է նաև բոլշևիկը, այն էլ Թուրքից անողորմ։

Թուրքն ասում էր հային.

- Եթե թուրքանաս, չեմ կոտորի քեզ։

Իսկ բոլշևիկը հային բոլշևիկ դառնալուց հետո էլ էր կոտորում։

Կոտորում ու հիսուն հազար ընտանիքով Սիբիր աքսորում։

Ա՛յ, հայի այս երկրորդ վիշտը կարող են պետությունները փարատել, եթե նրանց սիրտը ցավում է հայի վրա։

Որովհետև, ճիշտ է, Թուրքերը չեն սպառնում ամերիկացուն կամ ֆրանսիացուն, բայց բոլշևիկները սպառնում են աշխարհի այն բոլոր պետություններին, որոնք դեռ չեն ընդունել սոցիալիզմը։

Այս բոպեին Ամերիկան շան նման դողում է Ռուսաստանից։

Հիմա կսազի, որ այդ պետությունները գան հայի երկրորդ վիշտը փարատելու։

Նրանք կասեն Հայաստանին.

- Շատ մի՛ մտածիր, մենք էլ շուտով քո օրին կընկնենք։ Կգնդակահարվենք, սովամահ կլինենք ու կաքսորվենք։ Ողջ մնացողներս էլ պիտի ստրուկ դառնանք մի Լենինի կամ Ստալինի և մեր ողջ օրը նստենք, մեր կորցրած ազատությունը լանք։

Կյանքի միակ կողմնացույցը

Երբևիցե երևակայե՞լ եք, թե ինչ կլիներ մարդու վիճակը, երբ գոյություն չունենար կողմնացույցը։

Պիտի ծնվեր և կանգնած մնար միևնույն տեղում ինչպես ծառ։

Որովհետև շարժվելու համար պետք է նախապես ծանոթ լինել աշխարհի չորս կողմերին։

Եթե կողմնացույցը չլիներ, Կոլումբոսը կարո՞ղ էր Ամերիկա գտնել։

Ո՛չ։

Եթե անգամ քոռ-քոռ գտներ, այս անգամ էլ իր հայրենիքը՝ Իսպանիան, կկորցներ՝ անորոշության մեջ խարխափելով։

Եվ այժմ էլ, չնայած վաղուց ի վեր գտնված է Ամերիկան, բայց այնուամենայնիվ ոչ մի նավապետ հանձն չի առնի քեզ Ամերիկա տանել՝ առանց կողմնացույց ունենալու իր նավում։ Ու մինչդեռ ծովայիններն այսպես գերագույն զգուշությամբ են ծով դուրս գալիս,

մարդիկ, ծնվելով իրենց մորից, աշխարհ են գալիս առանց որևէ կողմնացույցի և ապրում են քոռ-քոռ։

Երբ ասում եմ «առանց կողմնացույցի», պետք է հասկանալ անհամար շատ կողմնացույցներով։ Իսկ երբ կողմնացույցները բազմաթիվ են, այդ նշանակում է՝ մարդը կողմնացույց չունի, քանի որ աշխարհի կողմերից միայն մեկն է հարավ և մեկը հյուսիս։ Չկան երկու հարավ, երկու հյուսիս։

Ինչպես Աստված։

Աստված պետք է մեկ լինի, երբ երկուս եղավ, նշանակում է՝ Աստված գոյություն չունի։

Որո՞նք են այդ ոչ կողմնացույցները։

Մեկը տեսար իր կողմնացույցի սլաքը ուղղեց դեպի սոցիալիզմ, հրաժեշտ տվեց շրջապատին ու գնաց։

Այնպես, ինչպես Ռուսաստանն արեց 1917 թվին։

Ու սա քառասունյոթ տարի է, ինչ անհույս թափառում է՝ առանց որևէ Ամերիկա գտնելու…

Ու չի էլ կարողանում դառնալ իր նախկին կապիտալիզմին, որովհետև ճանապարհը կորցրել է։

Գնաց կորավ խեղճ երկիրը։

Ամենաշատ սլաք ունի այն կողմնացույցը, որ ազգերին տանում է դեպի իրենց հայրենասիրությունը։

Քանի ազգ, այնքան կողմնացույց։

Ուրեմն, նրանց աշխարհը հարյուր հարավային կողմ ունի, չորս հարյուր հյուսիսային։

Գնում են այդ առանձին սլաքների ուղղությամբ դարեր, դարեր շարունակ, ճանապարհին էլ անվերջ կոտորում են իրար։

Թույլ տանք այս շռայլությունը ազգերին, որովհետև նրանք գոյություն ունեն։

Բայց ինչպե՞ս կարող ենք առանձին կողմնացույցներ տրամադրել այն բազմաթիվ կրոններին, որոնք, ճանապարհ ընկած, գնում են գոյություն չունեցող Աստուծո արքայություն։

Մահմեդականը՝ իր հատուկ ճանապարհով, քրիստոնյան՝ իր, դրանցից էլ կաթոլիկը՝ առանձին իր ճանապարհով, բողոքականը՝ իր, լուսավորչականը՝ իր, հունադավանը՝ իր, և այսպես անհաշիվ։

Գնում ու ճանապարհին էլ կոտորում են իրար։

Ու ինչպես տեսնում եք՝ բոլոր կողմնացույցները սխալ են. դրանցից ոչ մեկը աշխարհի կողմերը ցույց չի տալիս իրեն հետևողին, միայն կոտորածի ու թշվառության պատճառ է դառնում, միայն իրար հանդեպ ատելություն բորբոքում։

Հիմա՝ հարց։

Իսկ գոյություն ունի՞ նաև մի կողմնացույց, որ ցույց տա մարդուն սիրո ու երջանկության ճանապարհը։

Կա։

Կա, բայց կհայտնեմ ձեզ միայն այն ժամանակ, երբ խոսք տաք ձեր մեջ պահել և ուրիշի չհայտնել։

Այդ կողմնացույցը ես բոլորից ծածուկ եմ պահում, որ աշխարհում միայն ես երջանկանամ։

Դա մի համեստ անդամ է՝ ինձանից կախված։ Երբ կանգնում է, ընկնում եմ ետևից և գնում նրա սլաքի ցույց տված ուղղությամբ։

Եվ ի՞նչ։ Մեկ էլ տեսար ինձ տարավ և գցեց մի շատ գեղեցիկ կնոջ գիրկը, և մենք խելագարի նման փաթաթվեցինք իրար։

Ո՜հ, անհնար է խոսքով պատմել այդ անպատմելի հաճույքի մասին։

Սերս ավելի բորբոքելու համար կինն ասում է.

- Հեռացի՛ր, ես սոցիալիստ եմ։

- Ես քո սոցիալիստ հոգուն մատաղ,- ասում եմ ու բազուկներս ավելի սեղմում։

- Թո՛ղ ինձ, ես թուրք եմ, հույն եմ, անգլիացի, ֆրանսիացի։

- Ես քո թուրք, հույն, անգլիացի, ֆրանսիացի հոգուն մեռնեմ,- ասում ու քիչ է մնում խեղդեմ բազուկներիս մեջ։

- Աստծուն չեմ հավատում,- ասում է։

- Քո անհավատ ոտների տակի հողը լինեմ,- ասում եմ։

Եվ զարմանալին այն է, որ ամեն անգամ, երբ այս կողմնացույցով ծով եմ դուրս գալիս, միշտ «Ամերիկա» եմ գտնում...

Քաղաք և գյուղ

Ի՜նչ մեծ երջանկություն է ապրել գյուղում։

Գեթ ամառվա երեք ամիսներին։

Քաղաքն ախր շա՜տ է միօրինակ և ձանձրալի։

Թերթ ես կարդում՝ Լենին։

Ճառ ես լսում՝ Լենին։

Բաց ես անում ռադիոն՝ Լենին։

Հեռուստացույցը՝ Լենին։

Մարդու ուղեղն ուղղակի փայտանում է գլխում ու Լենինից զատ ուրիշ ոչ մի բանի մասին չի կարողանում մտածել։

Իսկ գյուղում կյանքը բազմազան է, այնտեղ կա շարժում։

Այս րոպեին ես, պառկած գյուղի արոտավայրում, մեծ հետաքրքրությամբ նայում եմ, թե ինչպես գյուղի կովերն արածելիս անընդհատ իրենց պոչերն աջ ու ձախ են շարժում՝ քշելով կռնակին թառած ճանճերին։

Եվ որովհետև այդ կովերը մի փոքր ավելի կեղտոտ են, հետևաբար, և ճանճերը՝ շատ, նրանց պոչերը շարժվում են երկու հերթի, առանց դադարի։

Իսկ սովետական մարդու համար դա կյանք է, որովհետև այդ շարժումները միակողմանի չեն։ Չեն շարժվում միշտ դեպի աջ կամ դեպի ձախ։ Այլ մեկ՝ դեպի աջ, մեկ՝ դեպի ձախ։

Քաղաքի դրությունը մի փոքր լավ էր, երբ կենդանի էր Ստալինը։

Այն ժամանակ սովետական պետության «պոչը» շարժվում էր մեկ դեպի Լենին, մեկ՝ Ստալին։

Իսկ հիմա խայտառակություն է։

Զարմանում եմ, թե ինչո՞ւ է այսպես։

Սովետական մամուլի, ճառի, ռադիոյի, հեռուստացույցի վրա ճանճ չի թառում, թե՞ դրանք պոչ չունեն…

Մրցավազք

Շատ հին ժամանակներից մարդու երևակայությունն ու իրական կյանքը մրցավազքի են դուրս եկել՝ աշխատելով մեկը մյուսից անցնել։

Երկար ժամանակ կյանքը չէր կարողանում հասնել երևակայությանը։

Երևակայությունը, օդանավ նստած, հազարավոր կիլոմետրերը մի երկու ժամում էր անցնում, իսկ իրական կյանքը, ավանակ

նստած, «չու», հա «չու» էր անում։

Բայց քսաներորդ դարում տեխնիկան մեկեն ցատկ կատարեց։ Գետինը թողած՝ մարդը մեկեն տիեզերք թռավ։

Լուսին, Մարս մոլորակ։

Որի հետևանքով մարդուս երևակայությունը անճրկեց, ու ներկայիս բոլոր ուտոպիստ գրողներն իրենց գրիչները վար դրին՝ չիմանալով ինչ անել, որ մարդիկ չկարողանան իրենց հասնել։

Բայց ըստ իս՝ շատ շուտ անձնատուր եղան ուտոպիստ գրողները։

Դեռ այնքա՞ն բան կա աշխարհում, որ մարդու համար անհաս է ու անմատչելի։ Որ հավիտյան ձգտի ու երբեք չհասնի։

Օրինակի համար, եթե այսօր մի ուտոպիստ գրի, թե մարդիկ եղբայրներ են, և ոչ ոք իրավունք չունի մյուսին սպանել, կյանքը կհասնի՞ այդ իմաստությանը։

Երբեք։

Այս ասաց ուտոպիստ Քրիստոսը սրանից երկու հազար տարի առաջ, և մարդիկ, փոխանակ հասնելու անցնելու Քրիստոսին, հետ են գնում և միլիոններով են սպանում իրար։

Եվ ուտոպիստն առհասարակ, եթե ուզում է մարդու համար անմատչելի բան ասել, պետք է մտնի մարդու գլուխը և ոչ թե փոփոխվող աշխարհի մասին գրի։

Աշխարհում միակ անփոփոխն ու քարացածը մարդու ուղեղն ու գլուխն են։

Մարդիկ, ուժ տալով մարզանքին, չտեսնված ճկունություն են տվել իրենց մարմնի մասերին՝ թողնելով անշարժ իրենց գլուխը՝ նրանցում զետեղված գաղափարներով։

Վերցնենք ոտքը։

Ի՞նչ զարմանալի ճարպկության է հասցրել ֆուտբոլիստը, և ի՞նչ անհաս բարձրության է հասցրել պարուհին բալետում։

Նա այնպես է բարձրացնում իր ոտները բեմում, որ հանդիսատեսը հասու լինի նրա լեգալ և անլեգալ տեղերին համահավասար։

Իսկ գլուխն իր գաղափարներով՝ անշարժացած, քարացած։

Հավատացյալը՝ հավիտյան աստվածապաշտ, Աստծուց բացի՝ ոչինչ չի տեսնում աշխարհում, հնչակը միայն հնչակ է, դաշնակը՝ միայն դաշնակ։

Ուտոպի՛ստ, եթե ուզում ես անկոխելի ճանապարհով գնալ, վերցրու մարդու գլխում քարացած գաղափարներով մարզա՛նք կատարիր։

Շարժի՛ր դրանք այնպես, որ մարդ այսպես էլ մտածի, այնպես էլ։

Եվ ոչ միշտ միևնույնը։

Որովհետև ինչպես բազմազան կերակուրն է նպաստում մարսողությանը, այնպես էլ բազմազան գաղափարները նպաստում են մարդկանց խաղաղ գոյակցությանը։

Մեկը, երբ իր տան դռան բանալին կորցնում է, ներս մտնելու համար չի ջարդում դուռը, այլ հավաքում է հազարաձև բանալիներ, որ դրանցից մեկով բանա իր դուռը և ներս մտնի։

Այս օրինակով չե՞ն կարող արդյոք պետություններն իրար հետ կոնֆլիկտ ունենալու դեպքում, փոխանակ պատերազմով իրար դուռը ջարդելու և ներս մտնելու, շատ բանալիների միջոցով բաց անել իրար դռներ և հաշտությամբ ներս մտնել։

Ինչո՞ւ մեկը քարացած մահմեդական լինի, մյուսը՝ քարացած քրիստոնյա, որ դեմ դեմի գան ու իրար մորթեն։

Պետք է վերցնել մի մարդու՝ մեկ ոտքը մահմեդական, մյուսը քրիստոնյա, և հրամայել.

- Քայլո՛վ հառաջ։ Ա՛ջ ձախ, ա՛ջ ձախ։

Որով երկու կողմերն էլ բավարարված կլինեն ու իրար չեն կոտորի։

Մարդիկ աշխարհ են գալիս ապրելո՞ւ, թե՞ հայ ու թուրք դառնալու։

Կամ կապիտալիստ ու սոցիալիստ։

Կամ Ամերիկայի նման հանրապետական ու դեմոկրատական։

Որոնք իրարից ոչնչով չեն տարբերվում։

Հին ու նոր աստվածներ

Այս գիշեր ես, ինչպես սովորություն է, մեռա և կամաց-կամաց երկինք էի բարձրանում։

Ես սրտի լայնացում ունեմ։ Կենդանությանս մինչև բարձրանում էի չորրորդ հարկ, հոգիս դուրս էր գալիս։

Այստեղ ես չէի շտապում իհարկե, ասում էի՝ հավիտենականության հետ գործ ունեմ, երբ էլ հասնեմ, իմ դժոխքը կամ արքայությունը կա։

Միայն տիեզերական նավերից էի վախենում մի փոքր, ասում էի՝ չլինի՞ տակն ընկնեմ հանկարծ։ Բայց պետք է ասեմ, տիեզերքում անցուղիներն ավելի կանոնավոր են, քան երկրի վրա։ Եվ նավի վարորդները երբեք չեն խմում։ Այն, որ ինքզինքնին չեն կարողանում կառավարել, դա անկշռության արդյունք է։

Հա, այսպես գնում եմ, գնում եմ, գնում եմ։

Դեռ մթնոլորտից ոտքս դուրս չէի գցել, մեկ էլ տեսա՝ երկնքից մի քոչ է գալիս։

- Էս ի՞նչ է,- ասում եմ,- չլինի՞ այնտեղ էլ սոցիալիզմ է. բոլորը փախչում են։

Տեսա՝ չէ՛, սատանաներն են իրենց կպրե կարասները շալակած ցած գալիս։

Էլ առաջ չշարժվեցի, մի ամպի վրա նստած՝ սպասեցի, ասացի՝ տեսնեմ ի՞նչ բան է սա։

Մի բեռնակիր սատանա տեսա, որ, տեսնելով ինձ նստած, իր ճանապարհը փոխած՝ դեպի ինձ էր գալիս։

Հարցրի.

- Ի՞նչ բան է սա։

Ասաց.

- Այս բոպեիս։ Այս կարասին նայի՛ր՝ մեղավորները չփախչեն, ես էս է կգամ ու ամեն ինչ կպատմեմ։

Ու ինքն առանձնացավ մի ամպի ետև (երևի իր բնական կարիքը հոգալու)։

Սպասեցի, սպասեցի՝ չեկավ։ (Հավանաբար պնդությամբ էր տառապում խեղճը)։

Տեսա՝ մի մեղավոր գլուխը կպրի կարասից դուրս հանեց ու ասաց.

- Բարև՛, բիձա՛, սատանան ո՞ւր գնաց։

- Հանգի՛ստ կաց, հիմա կգա։

(Վախեցա՝ չլինի՞ փախչի։ Ամանաթ ապրանք էր՝ ինձ հանձնված...)։*

Երբ հարցրի մեղավորին՝ ձեզ ո՞ւր են տանում, լաց եղավ ու ասաց.

- Մոտ երկու հազար տարի է ես դժոխքում տանջվում եմ։ Լավ

* Ամանաթ (amānat) - արաբ. ավանդ, գրավական։

թե վատ՝ մի կերպ սովորել էինք մեր վիճակին և գանգատավոր չէինք։ Հիմա չենք իմանում՝ ինչ անցավ, ինչ դարձավ, ասում է՝ սրանից հետո ձեզ վար կբերեմ և երկրի վրա կտանջեմ։

Եթե մի օր իմ բերանից որևէ գանգատ լսած լիներ, էլի ոչինչ, թող ցած բերեր ու երկրի վրա տանջեր։ Բայց մենք սովետական մարդու նման անմռունչ տարել ենք սատանայի տված բոլոր խոշ-տանգումները, բոլոր տվայտանքները, էլ ինչ է ուզում։

- Ինչից ես իմանում, որ երկրի վրա ավելի վատ կլինի։

- Վա՛յ, ինչ ես ասում։ Ես երկրի վրա յոթանասունինը տարի ապրել եմ և ծանոթ եմ այդ կյանքին։ Դժոխքում հանգիստ նստած՝ նայում ենք սատանային։ Ինչպես հրամայեց, այնպես տանջվում ենք։ Իսկ երկրի վրա դու պիտի ման գաս ու քեզ համար տանջանք ճարես։

Օրինակի համար՝ ենթադրենք՝ դու մի պետություն ես ու եթե կամենաս, խաղաղ, հանգիստ կարող ես ապրել քո երկրի սահ-մաններում։ Բայց խաղաղ ապրելու իրավունք չունես դու. պետք է մտածես, մտածես և մի պատճառ գտնելով՝ հարևան պետության վրա հարձակվես, նա էլ քեզ վրա, զարկեք, զարկվեք, ու երկուսիդ արյունը, փոխանակ ձեր երակներում հոսելու, գետնի վրա առվակ-ներ կազմի, և գայլն ու գազան գան լակելու։

Դժոխք եկող մեղավորներն ինձ պատմեցին, թե ինչ-որ մի Տաճ-կաստան կոտորել է իր մեջ ապրող բոլոր անզեն հայերին։ Կին, տղա, ծեր, անգամ ծծկեր երեխա։

...Դժոխքում ես երկու հազար տարի ապրեցի, բայց այդպիսի բան չտեսա։

Պատմողն ասում էր՝ որպես թե այդ արել է ոմն չար Թալեաթ պեյ։ Բայց սխալվում էր իհարկե. մի մարդ այդքան մեծ ոճիր չէր կարող գործել։

Մի ազգ ամբողջովին կոտորելու համար հարկավոր է մի ոճրա-գործ ամբողջական ազգ, և լսածովս հենց այդպիսին է եղել թուրք ազգը։ Տղամարդիկ կացնով ջախջախել են կանանց, երեխաների գլուխները, իսկ թուրք կանայք ուրախացած արյան ճապաղիքի մեջ մեռածների վրայից հանել են շորերը։ Քեզ եմ հարցնում, եթե կա-րող է մի ազգ ամբողջովին ոճրագործ լինել, ինչո՞ւ չի կարող նաև մարդկությունն ամբողջովին ոճրագործ լինել։ Ես ծանոթ եմ աշ-

խարհի անցուդարձին: Գերմանացիք Երկրորդ համաշխարհային պատերազմին չկոտորեցին վեց միլիոն անմեղ հրեաներ: Բոլշևիկները չկոտորեցին քսան միլիոն անմեղ մարդկանց:

Մեղադրել Թալեաթին, Ստալինին, Հիտլերին սխալ է: Ժողովուրդն է չար: Կա՛մ չար, կա՛մ անխելք, որ լսում է երեք անհատի՝ դժոխք դարձնելով աշխարհը: Ուզենար՝ բութը կդներ երեքի բկին էլ ու կխեղդեր, բայց չխեղդեց, որովհետև մարդկանց հարկավոր են չար առաջնորդներ՝ իրենց դեպի չարագործություն առաջնորդելու համար:

Այս ասելով՝ մեղավորը, իր խոսքը կտրելով, հարցրեց.

- Մի նայի՛ր տես՝ սատանան չի՞ երևում.

- Չի երևում,- ասացի,- երևի պնդությունը ուժեղ է, դու քո խոսքը շարունակի՛ր:

- Չէ՛, հրեն գալիս է,- ասաց մեղավորը՝ գլուխը կարասի մեջ քաշելով:

Եվ իսկապես էլ սատանան հեռվից գալիս էր՝ խոնջանը կապելով:

Երբ մոտեցավ՝ «Բարև, ինչպե՞ս ես, ստարի՛կ»,- ասաց ու նստեց կողքիս:*

- Ռուսերե՞ն որտեղից ես սովորել,- հարցրի:

- Ես նախկին չեկիստ եմ,- ասաց:

- Ուրախ եմ: Ստալինը դժոխքո՞ւմ է:

- Առանց Ստալինի դժոխք կլինի՞,- ասաց ու ոգևորված ավելացրեց:- Գալիս ենք, ստարի՛կ, բոլորս էլ գալիս ենք՝ երկիրը դժոխք շինելու, ես էլ, Լենինն էլ, Ստալինն էլ:

- Աստված թույլ տալիս է:

- Աստծու հետ համաձայնության ենք եկել, և նա արքայությունը փակում է, քանի որ աշխարհի ստեղծագործությունից ի վեր մի արդար նրա դուռը չի բախել: Ականջիդ ասեմ՝ Աստվածն էլ, Քրիստոսն էլ մեր ագենտներն էին: Դիտմամբ նրանց այնպիսի օրենքներ էինք քարոզել տալիս, որ մարդիկ չկարողանային կատարել, ու մենք նրանց դժոխք լցնենք՝ որպես մեղավորների:

Մարդը խոմ չի գժվել, որ իր մի երեսին ապտակեն, մյուս երեսը դարձնի: Լա՛վ, ասենք սովետական մարդը դարձնի, որովհետև երկու երես ունի, բա արտասահմանում ապրողն ինչ անի, որ ընդամենը մի երես ունի...

---

* Ստարիկ (*старик*) - ռուս. ծերուկ:

- Արքայությունը փակվելուց հետո ինչ պիտի անեն Աստված ու Քրիստոսը:

- Հեչ բան էլ չեն անի: Թոշակ կկապենք, թող ապրեն Անգլիայի թագուհու նման՝ առանց երկրի կառավարմանը խառնվելու:

- Իսկ Մարիամ Աստվածածինը:

- Աստվածածինը զագսով կհաստատի իր ամուսնությունը Աստուծո հետ, և կդառնան օրինական ամուսիններ: Հիմա այն ժամանակները չեն, որ կարելի լինի մարդկանց խաբել զանազան կուսական պատմություններով:

- Երկրի վրա ձեր շինելիք նոր դժոխքն ինչով պիտի տարբերվի երկնային դժոխքից, և կա՞ արդյոք տանջանք, որ կիրառված չէ ցայսօր:

- Ասեմ: Երկնային դժոխքը նեղ, մասնագիտական բնույթ ուներ, և տանջանքների թիվը սահմանափակ էր: Դժոխքում, օրինակ, չէր կարելի մի ամբողջ ազգ իր արյան մեջ շաղախել, իսկ երկրի վրա՝ ինչքան ուզես:

- Այդ հաշվով երևի ողջ թուրք ազգը կգրավեք սատանայական կազմի մեջ:

- Ինչո՞ւ միայն թուրքերը, գերմանացիք պակա՞ս թուրք են:

- Բայց ես զարմանում եմ, թե Աստված ինչպե՞ս համաձայնեց ձեզ հետ:

- Այդ համաձայնությունը պիտի կայացվեր սրանից երկու հազար տարի առաջ: Երբ Քրիստոսը ծնվեց, սատանաների ներկայացուցիչը մոտեցավ նրա հետ բանակցելու, բայց Քրիստոսը նրան չուզեց տեսնել, ասաց. «Ետիս կորիր, սատանա՛յ»[197]: Եթե նա ընդուներ մեր պատվիրակին, հավանաբար մենք չար ու բարու մասնակցությամբ մի կոալիցիոն աշխարհ կստեղծեինք, բայց հիմա արդեն պիտի ստեղծենք միայն չար աշխարհ, ուր մարդիկ միայն վատություն պիտի անեն իրար ու պատերազմներում մաշվեն, արյունաքամ լինեն: Հիմա սատանան թույլ չի տա մեկին որևէ բարիք անել:

- Իսկ ինչո՞ւ միայն չարություն, չէ՞ր կարելի արդյոք մի խաղաղ, բարի աշխարհ ստեղծել,- ասացի:

- Այդ Աստծու գործն էր: Աշխարհի սկզբից թող մի հատ բարի մարդ ստեղծեր՝ տեսնեինք, մենք էլ նրանից օրինակ վերցնեինք: Աստված ինքն էր չար: Մի արգելյալ խնձորի համար կարելի՞

է մի ամբողջ ընտանիք դժբախտացնել։ Երբ մտածում ես, թե այդ խնձորն ինքն էլ չէր ուտելու, նրա չարությունը կրկնապատկվում է։ Պիտի մնար ծառի վրա, չորանար, թափեր։

Մանավանդ, որ դիմացինը կին էր, որին երբեք չէր կարելի այդքան կոպտություն ցույց տալ։

Փոխանակ ինքը քաղեր և հրամցներ, ամեն տեսակ անպատիվ խոսք թափեց խեղճ կնկա գլխին։

Այս ասելով՝ սատանան ելավ կպրի կարասի տակ մի խիտ ամպ թխմեց, որ չգլորվի, ու վերադարձավ քովս՝ շարունակելով ընդհատված իր խոսակցությունը։

- Եվ վերջապես մարդն ի՞նչ բան է, որ արժենա նրա կյանքի համար այսքան մտահոգվել։ Կավից շինած մի կճուճ։ Երեխաները ձնից ավելի հաջող մարդ են շինում, քան Աստված շինեց կավից։ Բայց երեխաները շինելուց հետո ի՞նչ են անում իրենց ձնեմարդը։ Շրջապատում և գնդակոծում են այնպես, որ հետքն անգամ չերևա։ Եթե անգամ մենք մեզ չկոտորենք, մի գիշերվա կյանք միայն ունենք։ Առավոտն արևը ծագելիս պիտի հալվենք, լցվենք գերեզմանները։

Երբ ֆուտբոլում հաղթողները չեմպիոն են կոչվում և մեծարվում, օրենք ոտնահարողներն ինչո՞ւ պիտի զրկվեն այդ պատվավոր կոչումից… Մենք որ աշխարհը դժոխք շինեցինք, նոր աշխարհ եկող երեխային առաջուց կզգուշացնենք՝ ասելով. «Երեխանե՛ր, դուք, աշխարհ գալով, քանի դպրոցական եք, պիտի տանջվեք թվաբանական անլուծելի խնդիրներով, դպրոցն ավարտելուց հետո պիտի զինվոր գնաք ու կոտորվեք։ Ձեր գործն է, ուզում եք՝ ծնվե՛ք, չեք ուզում՝ մի՛ ծնվեք»։

Ինչպես Ֆիդել Կաստրոն է այս րոպեիս Կուբայի բնակչությանը հայտարարում թե՝ իմ կղզին սոցիալիստական է, ուր հաց չի բուսնում, և ես էլ Սովետական Միության նման հաց պիտի գնեմ Ամերիկայից։ Ով ուզում է սովամահ լինել, թող ապրի իմ կղզում, ով չի ուզում, թող Ամերիկա գաղթի. կղզուս դռները բաց են։

Վերջում այպես ավարտեց իր խոսքը սատանան.

- Չարությո՛ւն, կյանքը չարության մեջ է։ Բարության պես ձանձրալի բան չկա։ Բարությունն անկոնֆլիկտ դրամա է, որի հանդիսատեսները հորանջելիս չեն կարողանում իրենց բերանը փակել…

Երբ սատանան վեր կացավ՝ իր կարասը շալակելու, ասացի.

- Ինձ ինչ խորհուրդ կտաս. հիմա ես ինչ անեմ. շարունակեմ ճանապարհս, թե՞ ետ դառնամ երկիր։

- Դու գիտես։ Երկնքում մարդ չկա հիմա։

Ու հեռացավ սատանան իր բեռան հետ միասին, իսկ ես մնացի ամպին նստած ու մտածում եմ. «Կարո՞ղ եմ արդյոք երկիր վերադառնալ։ Կինս ակնդետ իմ մահվանն էր սպասում, որ իր սիրեկանի հետ միանար։ Մի բան, որ միացած կլինի արդեն։ Գնամ ո՞ւմ դուռը ծեծեմ։ Թոշակիս գրքույկը հանձնած կլինեն, ինչո՞վ պիտի ապրեմ։ Անձնագիրս՝ միլիցիայում, պրոֆմիության, ՊԱԶ-Ավիաքիմի[198] տոմսերս՝ արխիվում։ Կյանքի ապահովագրության վարչությունը պիտի ասի. «Մենք քեզ ապահովագրել էինք մինչև քո մահը, հիմա որ վերադարձել ես, պիտի ապրես անապահով»։ Եվ վերջապես շո՞ր չունեմ հագնելու։ Մի կոստյում ունեի, այն էլ մնաց հողի տակ։ Ասենք թե այսպես տկլոր բաղնիք մտա և կարգվեցի քիսաչի՝ մաքրելու մարդկանց մարմնի կեղտերը, իսկ եթե հանկարծ նրանց հոգու կեղտերը բացվեն, ես ինչպե՞ս մաքրեմ։

Փառք Աստծու, գիտեք՝ մեր երկրում ամեն մարդ Չեկայի ագենտ է, մարդկանց գնդակահարող, «կլյուչնիկ», բանտապետ, մահվան կոմիսար, կալանավորին ծեծի տակ մեռցնող։ Ես իմ քիսան որքա՞ն կամաց քսեմ այդ մարդկանց մարմնին, որ այս կեղտերը չբացվեն։

- Չէ՛,- ասում եմ ինքս ինձ,- ես երկիր չեմ վերադառնա։ Կերթամ ամայի արքայություն. Աստված իր հին շորերն ու կոշիկները թողած կլինի անշուշտ. կկարկատեմ, կհագնեմ, կդառնամ Շանթի «Հին աստվածը» և կպատվիրեմ մարդկանց վերջ տալ իրենց ավելորդ զբաղմունքներին և միայն սիրել։

Ի՞նչ միակնություն, ի՞նչ բազմակնություն, ի՞նչ բարոյականություն, ի՞նչ անբարոյականություն։ Այդ բառերը միանգամից ջնջել կտամ բառարաններից։ Բառեր, որոնք դարերով նստել են մարդու վզին ու ծծում են նրա արյունը։

Եվ այն ժամանակ դու տես պաշտվելը...

Եթե մարդիկ նոր Աստծուն աղոթում էին, օրինակ, մի անգամ, ինձ պիտի երկրպագեն օրական տասնմեկ անգամ։

Եվ սրտանց, ոչ թե ձևի համար։

Այն ժամանակ նոր Աստվածը գլխին պիտի խփի՝ ասելով.

- Ինչ հիմարություն արի ես։ Ամբողջ կյանքումս միայն դժվա-

րություններ հարուցեցի մարդկանց ապրելու ճանապարհին և տանջեցի նրանց։

Այդ պատճառով էլ մարդիկ դարձան երկերեսանի։ Իմ ներկայությամբ մի կին էին սիրում, ինձնից գաղտնի՝ տասնմեկ։

- Ասա, ա՛յ հիմար Աստված,- ասաց՝ մատով իր գլխին զարնելով,- այն, որ ինչքան էլ արգելես, մարդն իր ուզածը պիտի անի, էլ ինչո՞ւ ես արգելում և իզուր տեղը վատամարդ լինում։

Այո՛, այո՛,- ասում եմ ինքս ինձ,- կերթամ երկինք, «հին աստված» կդառնամ և չեմ ստիպի մարդկանց, որ երկինք բարձրանալու համար անպատճառ մեռնեն։ Իբրև ամառանոց թող գան, սեպտեմբերին իրենց գործին վերադառնան։

Հետո մի ուրիշ բան։

Ես երբեք այսքան շատ տգեղ կին չեմ ստեղծի։ Մատերիալ ծախսելուց հետո ինչո՞ւ գեղեցիկը չստեղծեմ։ Նոր Աստված տգեղ էր ստեղծում, որ մարդիկ քիչ սիրեն նրանց, բայց քանի որ իմ ժամանակ շատ պիտի սիրեն, ուրեմն պետք է վերջին կինն էլ գեղեցիկ լինի։

Կանայք պիտի դադարեն իրենց մազերի հետ խաղալուց և մաքրելով իրենց ներկած շուրթերը՝ պատրաստվեն համբուրելու իրենց սիրածներին։

Ասացի ու քշեցի դեպի երկինք։

Կրկնակի Դիոգենես

Ես որ սրան- նրան ասում եմ՝ աշխարհում ընդամենը կես ընկեր ունեմ, ոչ ոք չի հավատում։

Ասում են.

- Ա՛յ մարդ, ո՞նց կլինի երկու միլիարդ աշխարհի բնակչության մեջ կես ընկերով բավարարվել։

Բայց այդ այդպես է, ես սակավապետ եմ։ Զղջում եմ մինչև անգամ, որ աշխարհ գալիս ամբողջությամբ եմ ծնվել։

Ամեն հրամանատար նախ հետախույզներ է ուղարկում՝ թշնամուն ուսումնասիրելու, նոր հարձակվում, ես հիմարաբար, առանց աշխարհի մասին գաղափար ունենալու, մեկեն ծնվեցի ու շատ շուտով մեկեն մեռնելու եմ։

Մինչդեռ եթե ես կիսով չափ գայի աշխարհ, շահած կլինեի կես մարդ։

Եթե Ավետարանը չասեր «եղիցին երկոքեան ի մարմին մի», ես պսակվելիս կես կին կառնեի։ Բայց որովհետև մի մարդ պիտի լինեինք, այն գերադասեցի մեկուկես մարդ լինելուց։

Այժմ այն մասին, թե գոյություն ունի՞ կես մարդ, որ ընկերանա ինձ։

Պատասխանելով այս հարցին՝ պիտի ասեմ, որ մեզանում բոլորը կես մարդ են, ու չես ճարի մի ամբողջական մարդ, որ առավոտից մինչև իրիկուն միևնույն դավանանքին ծառայի։ Ամեն մարդ առավոտյան ժամը իններից սկսած մինչև հինգը հիմնարկներում ծառայելիս բոլշևիկ է, հինգից հետո գալիս է տուն, հանում է ոտից այդ սոսկալի նեղ «կոշիկը» ու ազատ մեկնվում իր ցանկացած կուսակցությունների մեջ՝ երբեմն թավալ-թավալ տալով մի կուսակցությունից մյուս կուսակցություն։

Ճիշտ այդպիսին է իմ կես ընկերը։

Առավոտները մինչև ժամը հինգը փողոցում պատահելիս չենք բարևում իրար և ոչ միայն չենք բարևում, այլև խոժոռվում ենք իրար վրա և անցնելիս էլ իրար հայհոյում մտքներիս մեջ։ Ես նրա այսինչն եմ այնինչ անում, նա իմ այնինչն այսինչ անում։

Բայց ժամը հինգից սկսած մինչև կեսգիշեր մենք գաղափարակից ենք։ Ասում ենք, խոսում ենք, միասին դաշնակ ենք դառնում, դուրս ենք գալիս այդ կուսակցությունից, հնչակ ենք դառնում, գլորվում ենք ռամկավարության շարքերը, բայց վախենում ենք մենշևիկ լինելուց, ասում ենք՝ չլինի՞ հանկարծ սայթաքենք, ընկնենք բոլշևիկների շարքերը և մեր տունը քանդենք։

Ճիշտ է, օրվա այդ մասում մենք շատ զգույշ ենք, բայց սատանայական բան է, մեկ էլ տեսար ընկանք։ Այսպես մինչև գիշերվա ժամը տասներկուսը։

Երբ ժամացույցը խփեց տասներկուսը, ինչպես ողջ մարդկությունը, չեզոք ենք ու քուն ենք մտնում։

Գիշեր...

Որպիսի՞ առավելություն ունի ցերեկվա հետ համեմատած։

Գիշերը մարդն անկուսակցական է։ Ո՛չ հայ գոյություն ունի, ո՛չ թուրք։ Քնի մեջ մարդը չի պատերազմում, Աստված չի պաշտում,

չի ծխում, չի խմում, երեխայի պես չի նստում և ֆուտբոլ թամաշա անում: Իր բոլոր երազանքներին մարդս քնի մեջ է հասնում: Ու եթե Լենինն իր հեղափոխությունը քնի մեջ կատարած լիներ, հիմա վաղո՞ւց էր մարդկությունը սոցիալիստ դարձել…

Մարդկանց այսպես կիսվելու գլխավոր առավելություններից մեկն էլ այն է, որ քաղաքացիական կռիվը հեշտանում է: Երբ մի մարդ առավոտը բոլշևիկ է, երեկոյան՝ դաշնակ, ինչ կարիք կա աշխարհն իրար խառնել: Առավոտյան բոլշևիկը կհարձակվի իր երեկոյան դաշնակի վրա, կլցնի Չեկա, իրիկունը՝ մթանը, կտանի դաշտ, կգնդակահարի, կդառնա…

Եվ, ընթերցո՛ղ, կարդալով այս հոդվածը, խնդրում եմ, չկարծեք, թե այս կես մարդիկ իրոք գոյություն չունեն, ես իմ երևակայությամբ եմ ստեղծում:

Կես մարդիկ ապրել են պատմական վաղ ժամանակներում:

Օրինակ՝ Իսրայելի թագավոր Սավուղը Կիսի որդին էր[199]:

Եթե թագավորն է ծնվում կես մարդուց, մենք ինչ ենք, որ չծնվենք…

Առանց դավանանքի

Տանից դուրս գալիս, երբ տեսնում եմ՝ ամեն մարդ, մի Աստված առած, մտել է մի քունջ և քափ ու քրտինք մտած՝ պաշտում է, ես հպարտանում եմ, որ Աստված չունեմ:

Ու այդ բանը ես պարտական եմ ոչ թե իմ առողջ բանականությանը, այլ իմ հիվանդ կնոջը:

Ամեն առավոտ շալվարս արդուկում է ու ճամփու դնելիս էլ ետևիցս կանչում.

- Եթե երեկոյան տուն եկար շալվարի ծալքը կոտրած, գիշերը քեզ տուն չեմ առնի:

Դե եկ ու այսպիսի պայմաններում որևէ Աստծու առաջ ծունկ չոքիր…

Ուրիշ խոսքով՝ ես հիմա զերծ եմ նման անմտություններից, բայց մի ծաղկով գարուն չի գա: Ես ուզում եմ, որ աշխարհը փրկված լինի նման մոլորությունից:

Ա՜խ, ա՜խ… Ինչ եղավ՝ դրախտում եղավ:

Եթե Ադամ-Եվան դրախտում չմերկանային, և Եվան Ադամին մի նեղ շալվար կարեր, արդուկեր և արգելեր ծունկ չոքել, հիմա մարդիկ չէին չոքի ու Աստծուց «հանապազօրյա հաց» խնդրի, այլ ընձուղտի պես հպարտ գլուխը վեր բարձրացրած՝ ծառի տերևներով կսնվեին և ման կգային ազատ՝ առանց որևէ մեկին պարտական լինելու։

Եթե մի Աստված էլ դեմս ելավ ու ասաց. «Ինձ պետք է երկրպագես, որովհետև քեզ կյանք եմ տվել», կասեմ.

- Քեզ ո՞վ խնդրեց, որ կյանք տաս։ Ինձ ոչ ոք չի ստեղծել, ես գետնի վրա եմ բուսել։

Անաստվածությանս համար կոմունիստներն ինձ չեն մեղադրում, ընդհակառակը՝ քաջալերում են և ասում՝ ինչքան կարող ես մի հավատա։

Բայց նրանք էլ ինձ մեղադրում են, որ աշխարհայացք չունեմ։ Նրանցում աշխարհայացք ունենալն էլ հասկացվում է՝ նայել աշխարհին և միայն բանվոր դասակարգը տեսնել։

Զարմանք բան։ Աշխարհը բանվոր դասակարգ է։ Եթե աշխարհին բանվոր դասակարգն այդքան անհրաժեշտ լիներ, Աստված վեց օր աշխատելուց հետո, մի օր էլ կաշխատեր, բանվոր դասակարգ կստեղծեր, նոր ութերորդ օրը կհանգստանար։

Ինչո՞ւ նայեմ աշխարհին՝ բանվոր դասակարգ տեսնեմ, իսկ ուսուցչին, գիտնականին, գյուտարարին, փիլիսոփային ու գրողին չտեսնեմ։

Կամ կոմունիստները, որ միայն բանվորին են տեսնում, ինչո՞ւ մի բանվորի անուն չեն տալիս և անվերջ Մարքս, Էնգելս, Լենին, Սոկրատես, Պլատոն, Արիստոտել են հիշատակում, որոնցից և ոչ մեկը բանվոր չէ։

Բանվոր դասակարգի համաձայնությունն առե՞լ են, որ մտավորականությանը բերում չոքեցնում են նրա առաջ, որ իրեն մոռացած՝ միայն բանվոր դասակարգի մասին մտածի։

Հավատացնում եմ ձեզ՝ նման պարագայում դառնալով իրենից ամեն բանով բարձր այդ դասակարգերին՝ բանվոր դասակարգը կասի.

- Օ՛յ, օ՛յ, օ՛յ, այդ ի՞նչ եք անում, վե՛ր կացեք, փոխանակ ես ձեր առաջ չոքելու, դո՞ւք եք իմ առաջ չոքում։ Մեր մասին մի՛ մտածեք։ Եթե երկիրն ազատ է լինում, մենք մեր պրոֆմիություններն ենք

ունենում և գործարանատիրոջը գործադուլով վախեցնելով՝ մեր ուզածն ստանում ենք և շատ լավ էլ ապրում ենք։ Ինչպես Ամերիկայում են անում։

Բանվորները սոված են միայն այն երկրներում, ուր բանվորների դիկտատուրա է։ Ինչպես օրինակ՝ Սովետական Միությունում։ Այնտեղ գիտնականները, գրողները, փիլիսոփաները և պետական գործիչներն ստանում են ամսական հազար ռուբլի, իսկ բանվորը՝ երեսունից-քառասուն, գյուղացին՝ ոչինչ։

Պրոֆմիություններն էլ այնտեղ նրա համար են, որ թույլ չտան բանվորին այս անարդարության դեմ բողոքել։ Ուրիշ խոսքով՝ իր ձեռքով իրեն ապտակել։

Ի՞նչ է նշանակում մի դասակարգի դիկտատուրա մյուս բոլոր դասակարգերի վրա։

Եվ ինչո՞ւ հատկապես ամենահետամնաց դասակարգի դիկտատուրա բոլոր գիտակից դասակարգերի վրա։

Ինչո՞ւ, որովհետև անգիտակից դասակարգին խաբելը հեշտ է, դրա համար մի քանի ռուս բախտախնդիրներ իշխանությունը վերցնելով իրենց ձեռքը, անունը դրին բանվորական, որ ծծեն բանվորի, մանավանդ, գյուղացու արյուն-քրտինքը։

Ի՞նչ է այսօրվա Ռուսաստանի պատկերը։

Սահմաններն ամուր փակել, երկու հարյուր միլիոն մարդկանց լցրել է մի կաշվե պարկի մեջ. Լենինը, Ստալինը, Խրուշչովն ու Կոսիգինը, ամենն իրենց հերթին ֆուտբոլ են խաղում՝ ամբողջ բնակչությանը մի կողքից գլորելով մյուս կողքին։

Ահա այս է «բանվորական դիկտատուրա» կոչվածը, որը դավանում են կոմունիստները և ինձ էլ ստիպում են դավանել։

Ես չեմ կարող դավանել ու ծունկ չոքել, որովհետև, ինչպես ասացի, կինս չի թողնում։ Եթե թողնի անգամ, եթե Ադամի նման մերկանամ, դարձյալ ծունկ չեմ չոքի բանվոր դասակարգի առաջ։ Բանվորին կասեմ.

- Ինձ համար կոշիկ կարեցիր, ա՛ռ փողդ ու գնա։

Ահազանգ

Ես, որ ասում եմ՝ գիտությունը մեր տունը քանդեց, դուք ծիծաղում եք, կարծում եք՝ կատակ եմ անում։

Երբ բանն այնտեղ հասնի, որ գիտնականները ստեղծեն այնպիսի մեքենաներ, որոնք մարդու չկարողացած բարդ թվաբանական խնդիրներ են լուծում, երբ մի լեզվով գրվածը մյուս լեզվով է թարգմանում, մարդուն էլ ինչ մնաց անելու։ Մեքենան այսօր թարգմանեց, վաղն էլ կարող է հեղինակել, և սովետական բազմահազար գրողները պիտի ձեռքը ձեռքին պարապ նստեն՝ օրվա հոնորարի կարոտ։

Այստեղ մեքենան գա գրողներին դուրս քշի։ Ամերիկայում բանվորի գործը կատարի ու բանվորին դուրս քշի, հապա «պրոլետարներն» ո՞ւմ հետ «միանան»։

Պետությունների միակ զբաղմունքն էր զորք հավաքել և պատերազմել մի որևէ պետության հետ։ Ատոմային զենք ստեղծելուց հետո այդ զբաղմունքն էլ վերջացավ։ Հիմա կոճակ է, սեղմեցիր՝ թշնամին օդ կբարձրանա ու կցնդի։

Այս բոլորը ոչինչ, ես էլ բեթարից եմ վախենում։ Հանկարծ կարող են մեքենաներն իրար հետ ամուսնանալ ու մարդկանց ձեռքից այդ միակ հաճույքն էլ խլել։

Մեքենա է. ո՛չ ամոթ ունի, ո՛չ բարոյականություն, ո՛չ խիղճ։

Ես մտահոգված եմ Ռուսաստանով։

Այս երկիրն արդեն մեքենայացված է։ Ոչ ոք իրավունք չունի իր սեփական կարծիքը հայտնելու, նայում են Լենինին՝ ինչ կարծեց, իրենք էլ կարծում են։ Չկարծեց՝ չեն կարծի։ Մոսկվան ասաց աջ կողքին պառկեցեք՝ աջ կպառկեն, ձախ կողքին պառկեք՝ ձախ կողքին կպառկեն։ Ասի կանգնեք՝ կկանգնեն, պպզեք՝ կպպզեն, մեռեք՝ կմեռնեն։

Ռուսաստանը մեքենա է արդեն, խոմ մեքենան էլ նորից չե՞ն մեքենայացնի։

Ուշացած հայտնություն

Վա՛յ, վա՛յ...

Ամբողջ կյանքս նվիրած միա՛յն գրականությանը՝ մոռացել եմ, որ իր ժամանակին ես նաև ամուսնացած պիտի լինեի։

Այդ բանը հանկարծ հիշեցի հիմա, որ համարյա զառամած ծերունի եմ դարձել...

Մտածում եմ՝ ո՞վ պիտի երկու կաթիլ արցունք թափի գերեզմանիս, երբ ես մեռնեմ։ Կարելի՞ է չոր-չոր մեռնել։

Բայց ցավս միայն այդ չէ։

Ես պետությունից ստանում եմ թոշակ և չէի ցանկանա, որ մեռնելուցս հետո թոշակը մնար պետությանը։

Եթե ինձ հաջողվեր իմ մետասաներորդ ժամուն ճարել մի կին, որ համաձայներ լալ գերեզմանիս և ի տրիտուր իր ողբին՝ ստանար թոշակս, ես երջանիկ կզգայի ինքզինքս։*

- Իսկ ինչո՞ւ չփորձել,- ասացի ես ու վճռական քայլերով փողոց դուրս եկա։

Այնտեղ՝ փողոցում, հենց առաջինը դեմս ելած կնոջը հարցրի.

- Տիկի՛ն, մարդ ունե՞ք։

- Ո՛չ,- ասաց։

- Ե՛կ գնանք զագս,- ասացի,- և ստից ամուսնանանք հետևյալ պայմանով. մենք կլինենք միայն պաշտոնական ամուսիններ։ Դու կլինես իմ օրինական կինը։ Գերեզմանիս վրա երկու կաթիլ արցունք կթափես ու իմ թոշակը կժառանգես։

Այս խոսքերիս վրա կինը գլուխը բարձրացրեց ու երեսիս նայեց։

- Երեսիս նայելու կարիք չկա, տիկի՛ն,- ասացի,- մեր մարմինները բնավ իրար չեն դիպչելու։ Տեսնում ես՝ ես էլ քեզ հետ խոսելիս երեսիդ չեմ նայում, որ գեշ մտքեր չանցկացնես սրտովդ։

- Բայց գերեզմանիդ վրա լալու համար պետք է քեզ նախապես սիրած լինել։

- Դու կամենում ես բացառությո՞ւն կազմել, ինչ է։ Չե՞ս նկատել՝ կանանց բոլոր լացերը ցուցադրական բնույթ միայն ունեն...

- Ես իմ մարդուն թաղելիս իսկապես լաց եղա։

- Այդ քո բանն է, իհարկե, եթե իսկապես լաց լինես, միայն

---

* Մետասաներորդ ժամուն- արևմտ. վերջին պահին։

շնորհակալ կլինեմ այդ բանի համար։

- Ինչքա՞ն թոշակ ես ստանում։

- Հարյուր քսան ռուբլի։

- Ես քեզ վրա ողբ ու կոծ կբարձրացնեմ, մազերս կփետտեմ ու ինքզինքս քո գերեզմանի մեջ կնետեմ քեզ հետ թաղվելու համար։

- Շնորհակալ եմ, տիկի՛ն, բայց այն ժամանակ թոշակիցս կզրկվես։

- Վա՛յ, ճիշտ նկատեցիր։ Այն ժամանակ միայն կողբամ։

Երբ դեպի զագս էինք գնում, ինձ դարձավ և կրկին ու կրկին ինձանից հավաստիացում ստացավ, որ մեր ամուսնությունը կլինի զուտ պաշտոնական, և մեր մարմինները հավետ կման օտար։

Ես հավաստիացրի, ու զագս մտանք՝ «հավերժական սեր» ուխտելու իրար...

Այսպես՝ ամուսնական ձևականությունները կատարելուց հետո, երբ դուրս եկանք փողոց ու պիտի բաժանվեինք, ես կարիք զգացի գեթ մեկ անգամ «կնոջս» երեսին նայելու՝ ապագայում ուրիշ կանանց հետ չշփոթելու համար։

Նայելիս նկատեցի, որ այդ կինը մի իսկական գեղեցկուհի է...

Ու հեռանալու համար բացած ոտներս կամաց իրար մոտ բերի ու չկարողանալով հիացմունքս զսպել՝ ասացի.

- Իսկ, տիկի՛ն, չի՞ կարելի այնպես անել, որ մեր մարմինները... մի փոքր... իրար քսվեն։

- Ի՞նչ ես ասում,- գոռաց կինը,- դեռ տաք-տաք, մեր ամուսնությունը չսառած դու դրժո՞ւմ ես քո խոստումը։

- Չհասկացաք ինձ, տիկի՛ն։ Մենք՝ որպես պաշտոնական ամուսիններ, անշուշտ պիտի իրարից հեռու կենանք, բայց այդ չի խանգարում, որ մենք՝ որպես սիրահարներ, իրար հանդիպենք։ Պայմանով, սակայն, որ այս բանը մեր մեջ գաղտնիք մնա, և այն չհայտնենք իմ «օրինական» կնոջը...- ասացի ու ավելացրի,- ապօրինի սերը հանցանք է այն ժամանակ միայն, երբ ի հայտ է գալիս։

Կինը մի փոքր մտածեց ու ասաց.

- Համաձայն եմ, միայն իմ «օրինական» ամուսինը չիմանա։

- Անհո՛գ կացեք։

Ու ես դարձա մի մարդ, որի ոտներից մեկը պրոթեզ է, մյուսը՝ իսկական։

Պրոթեզն՝ ազնիվ, կենդանին՝ անազնիվ…

Այսպես մենք երկար ապրեցինք՝ մեր ազնիվ և անազնիվ ոտքերի վրա կաղալով։

Բայց ես նկատեցի մի բան։

Նա մի օրվա մեջ տասն անգամ հարցնում էր ինձ, թե ինչպե՞ս է իմ առողջությունը։

Ես դրանից հասկացա, որ փողի պետք ունի և ուզում է, որ իր «օրինական» ամուսինը շուտ մեռնի, որ թոշակը ժառանգի։ Դրա հետ միասին հասկացա, որ չէր ցանկանա իր սիրեկանից անջատվել։

Ու ես չգիտեի՝ մեռնե՞մ, թե՞ չմեռնեմ։

Վերջում այս անելից էլի նա ազատեց ինձ.

- Ինձ որոշ գումար փո՛խ տուր, նեղն եմ, հետո կվերադարձնեմ։

- Քո եկամուտը հազիվ քեզ ապրեցնի, գումարը դու ինչպե՞ս պիտի վերադարձնես։

- Երբ քո մահվանից հետո թոշակդ ստանամ, կվերադարձնեմ…

Տվեցի այդ գումարը։

Հիմա։

Դուք տեսեք, թե ես ինչպես ազնվությամբ կատարեցի իմ տված բոլոր խոստումները, հետագային ինչ վե՞հանձն դիրք բռնեցի նրա հանդեպ։

Եկեք տեսնենք, թե նա էլ իր խոստումը կատարե՞ց։

Դժբախտաբար ո՛չ։

Երբ վերջապես հասավ իմ վերջին օրը, ես մեռա, ու ինձ գերեզման իջեցրին։

Գերեզմանում ականջս ձայնի էր՝ լսելու համար «կնոջս» լաց ու կոծը։

Երբ այդ չլսեցի, աչքիս պոչով կամա՛ց նրան նայեցի ու տեսա, թե ինչպես լացի փոխարեն՝ նրա դեմքը մի անբացատրելի ուրախություն էր ճառագում։ Տեսա նաև, թե ինչպես բարձրաձայն չքրքջալու համար գրպանում դրած ձեռքով իր ազդրն էր կսմթում։

Այս էլ որ տեսա, կատաղությունս վարակեց ինձ, և եթե պրոթեզներս բերանս դրած լինեին, ատամներովս նրան բզիկ-բզիկ կանեի՝ լուծելով իմ վրեժը։

Բայց առածն ասում է. «Ամեն անտեր մի Աստված ունի իր կոնակին»։

Եվ իրոք, իմ կռնակին մի Աստված ունեի, և նա վերջին պահին ինձ օգնության հասավ՝ պատժելու ուխտադրուժ «կնկանս»:

Դամբանական խոսելու համար գերեզմանիս մոտեցավ մեր գրողների միության քարտուղար Էդվարդ Թոփչյանը[200], որն իմի-ջիայլոց ասաց.

- Նա, այսինքն ես, ոչ թե մեռած է, այլ անմահ է...

Այս որ լսեց համեստափայլ տիկինս, տեսնելու էր, թե ինչ վայ-նասուն սկսեց...

Բառացի ինքն իրեն կոտորում էր, որովհետև դրանով նա զրկվում էր իմ թոշակից և այն էլ առհավետ, որովհետև ես դրանով հավիտյանս պիտի ապրեի:

Արարողությունից հետո բոլոր ողջերս դուրս եկանք գերեզմա-նոցից՝ բացի իմ «կնոջից»:

Բնական է: Դուրս գար, ինչո՞վ ապրեր:

Այնպես որ, ես շնորհակալ եմ իմ բախտից, միայն մի բան վատ եղավ:

Պիտի ասեմ, որ ես կենդանությանս ժամանակ չէի իմանում որ «անմահ» եմ, ես այդ իմացա միայն մեռնելուցս հետո: Ուշացած:

Եթե առաջուց հայտնի լիներ ինձ այդ, ես իզուր տեղն այսպես խառնիճաղանճ կոմբինացիաների մեջ չէի մտնի մի օտար կնոջ հետ:

Լավ հարևաններ[201]

Ազգերի պատմության մեջ չի հիշվում դեպք, որ երկու պետու-թյուններ՝ թուրքերի ու հայ բոլշևիկների նման մտերիմ, իրար հա-մար մեռած հարևաններ լինեն:

Նրանց մեջ իմ ու քո չկա ո՛չ նյութական, ո՛չ գաղափարական աշխարհում:

Մեկ էլ տեսար՝ բոլշևիկյան Հայաստանի կառավարությունը Տաճկաստանի դուռը ծեծեց.

- Տաճի՛կ ջան, կարծեմ, դու քո երկրում բոլոր հայերին կոտո-րեցիր վերջացրիր:

- Համարյա թե, մի չնչին բան է մնում:

- Խնդրում եմ, կացինդ տաս, տանեմ մեր երկրի դաշնակներին բնաջնջեմ՝ տամ:

- Դաշնակներին։

- Այո՛։

- Աղաչում եմ, թույլ տուր՝ գամ, դրանց իմ սեփական ձեռքով բնաջնջեմ։ Դու չգիտես՝ դրանք ամբողջ վաթսունհինգ տարի ինչ օյիններ խաղացին իմ գլխին։ Դրանցից առաջ հայերը ոչխարներ էին՝ հլու և հնազանդ։ Դրանք եկան պոզեր դրին գլխներին և սկսեցին անտեղի պահանջներ անել։

Ասում են՝ մեզ չպիտի կոտորեք, չպիտի թալանեք։ Եղմ՛վ։ Բա հայն ինչի՞ համար է ստեղծված։

- Սո՛ւս կաց, ես այնպես կոտորեմ նրանց, որ քեֆդ գա։ Երբ նրանք Թիֆլիսում սպանեցին Ջեմալ փաշային՝ հայկական կոտորածի այդ անխոնջ մշակին, դրա փոխարեն ես տասը հազար դաշնակ, բանտերը լցրած, կոտորեցի։ Թո՛ւրք ջան, քեզ համար կյանքս չեմ խնայի։

- Մի հարց տամ,- ասաց Տաճկաստանը։

- Տո՛ւր,- ասաց բոլշևիկյան Հայաստանը։

- Ես կոտորում եմ հայերին, որովհետեւ թուրք եմ։ Ժամանակին միշտ կոտորել ենք հայերին, հիմա էլ կոտորում ենք։ Իսկ դո՞ւք ինչու եք կոտորում։ Չէ՞ որ դաշնակները հոժարակամ երկրի իշխանությունը հանձնեցին ձեզ և հպատակություն հայտնեցին։

- Դաշնակցությունը ժողովրդից սիրված կուսակցություն է և իր ծոցից այնպիսի հերոսներ է տվել, որոնց ժողովորդը պաշտում է։ Սերոբ Աղբյուր, Գևորգ Չավուշ, Քեռի, Համազասպ, Դրո, Արամ Փաշա։ Ո՞վ նպաստեց Անդրանիկի հերոս դառնալուն։ Նա աչքի ընկավ Սասունի ապստամբությանը։ Ո՞վ կազմակերպեց այդ ապստամբությունը, ռամկավարները, հնչակյանները։ Ո՛չ, Սասունի ապստամբությունը կազմակերպեց դաշնակցությունը։

Արդ, սիրելի՛ Տաճկաստան, ժողովրդից այդքան սիրված կուսակցության մեջ մենք՝ մի քանի օտարոտի բոլշևիկներս, չէինք կարող հեղինակություն վայելել։ Այդ պատճառով ահա կացինը տանում եմ նրանց ջարդելու։

- Էլի խնդրում եմ, ե՛ս ջարդեմ։ Մանավանդ, էն խմբապետ Համազասպին[202], որ փրկեց Վանի ապստամբներին ու չթողեց մեզ կոտորել։

- Խոստանում եմ քո կացնով նրա ուղեղը ցրիվ տալ բանտի բակում։ Մի՞թե նա չէր, որ հայ թուրքական ընդհարումներին Ղա-

բաբաղը փրկեց թուրքերի կոտորածներից։ Տաճիկ ջան, քո շահերը ես միշտ բարձր եմ գնահատում իմ շահերից,- ասաց Հայաստանի բոլշևիկյան կառավարությունը և ավելացրեց.- Շո՛ւտ արա, խնդրում եմ, կացինդ տո՛ւր, տանեմ նրանց կյանքին շուտ վերջ տամ։ Կգամ, հետո կխոսենք։

Տաճկաստանը վար առավ պատից կախած կացինը, վրայի չորացած արյունը սրբեց և տալով բոլշևիկյան Հայաստանին՝ ասաց.

- Միայն, խնդրում եմ, քարի չզարնես, գլուխները թոցնելիս միշտ մի գերան դիր տակը։

- Ես չեմ գլխատում, ուղեղն եմ փշրում։

- Լսի՛ր, հարևա՛ն,- ասաց Տաճկաստանը,- եթե անգութ մարդկանց պետք կունենաս, ասա՝ իմ քրդերից ուղարկեմ. նրանք խիղճ ասված բանը չգիտեն՝ ինչ է։

- Հե՛յ տնաշեն,- պատասխանեց «հայ» հարևանը։- Մենք ունենք Ավիս[203] և Գևորգ Աթարբեկյան[204], որոնք անգթության մեջ մրցակից չունեն։

- Հետո մի ուրիշ բան։

- Ի՞նչ,- հարցրեց «հայը»։

- Ամաչում եմ ասել...

- Մի՛ ամաչիր, ասա՛։

- Թող Ռուսահայաստանը գրավեմ, կցեմ Տաճկաստանին։

- Ամենայն սիրով, սիրելի՛ս, բայց այդ Հայաստանը խոսք եմ տվել Վրաստանին և Ադրբեջանին։ Նրանք իմ դարավոր դրացիներն են, և նրանց խնդրանքը չեմ կարող մերժել։ Հինգ տարի ժամանակ եմ խնդրել, որ Հայաստանը դատարկեմ և իրենց հանձնեմ։ Այս տարի արդեն հիսուն հազար հայ ընտանիք աքսորեցի Ալթայան երկիր։ Ամեն տարի այսքանը աքսորելով՝ շատ շուտով կդատարկեմ։

- Կեցցե՛ս,- գոչեց Տաճկաստանը հիացած։- Ես միշտ ասել եմ ու պիտի ասեմ։ Իր օրում հայն իր մասին երբեք չի մտածել, միշտ՝ օտարի։

- Ինչպես սոցիալիստները։

- Կարծեմ սոցիալիզմում մեկը բոլորի համար է, բոլորը մեկի։

- Մենք բոլոր մեծ պետություններին մեզ զոհեցինք։ Մեղավո՞ր ենք, որ նրանք աննամուս գտնվեցին հայերի հանդեպ...

Նոյեմբեր, 1965թ. (վերջին գրվածքը)

Լեռ Կամսարի կյանքի վերջին տեփրը



[illegible]

[illegible] V.
[illegible] V.
[illegible] V.
[illegible] V.
[illegible] V.

[redacted]

1965 թ
[illegible]
[illegible]

Հայր և աղջիկներ

Հանդիպի պատճառը մեզ մի հիշում է տվել, որ երեկո ինքնաթռիչքներ նշանակվեցին ինքնաթիռների ներսում մնալու, իսկ հանկարծ մեռած հանգամանքի շնչելը։
Գիշերվա մեջ մի ս-ոնդ դուռ չկա, ոչ էլեկտրական, ոչ ինքնաշարժական աշխատիանոց։
Ամեն ի դիտավոր ինքնաթիռներ հայտնվածների կատարվելիք թռիչքներ գրանցիչներով գրանցիչներ գրանց ցիցերից։
— Ամենքիս ջան, կարծեմ դատ ես երեքս մեր հայտնի հանդիպելու կարգադրեր։
— Հանդուցյալ թ. մեր գնալիս մեռած ենք։
— Խնդրում եմ կարդալ գրանցումներս մեր երեքի գրաշարությունը մեռածներիս։
— Դուք ինքներդ։
— Լավ։
— Հիշեցնում եմ թեզ գրած ինձ գրանցում եմ ամբիոնում նեղոտով մեռածներիս։ Դա չգիտեմ գրանցումներ ամենաոչ վարանում հիշեց գրածի իրեր օդանավերի խաղաղությունը մեզ գնալու։ Դրանցից առաջ հայտ ուղեցուցակներ կան,

հլա ես հեռաձայնում։ Դրսում էլ մարդ գոռում է
գիշերվա և սգիների մասին պատմում։

Հետո էլ մի տեղ էջերի բաղադրվեց, էջերի բաշխվեց։ Եղանակ։ Մեր հայը իրեն հատուկ է պատրաստվում։

— Սառա ջան, ես ուզում եմ բաղադրիր գրասեղանս որ տեղը դա։ Երբ գրասեղանի թիզերանոմ պատահեցիր Զեմանը փոշոտվել, հայացքիս բաղադրվելիս պետքով մշուշիս, դրա փոխարեն ես դրա դիրքը հանձնաց ինձ Եռաց Խաղերդը Լեռան բաղադրվելի։ Թարգի ջան, մեզ հատուկ բլուրներ չեմ խնայի։

— Մի հարց գոռոշ սատաց տարաբնակությունը։

— Տարար, սատաց Գաշեհիքյանը գոյությունը։

— Ես բաղադրում եմ հայերեն որ մեզանից թարգի եմ։ Համարձակվեցիր մեզ բաղադրվելի հայերեն, հիմա էլ բաղադրում եմ։ Իսկ գրքի մեջ մեզ բաղադրում։ Մի՞թե որ գրաբարագիտությամբ հոգեբանական մեր հշանակությունը հանձնեցիր ցեղ և հեղինակությունը հայրենիքին։

— Գաշեհանցյան Բարեգը ժողովրդից ստրկանալ ցան-

ասիլ-ասիլ ինչ-որ մի ձայնից ուշադրությունս հրաժարվեցի և
ցրվեցի, որպես զոհաբերությունս պատշաճավոր չէ։ — Սերգոն ինչ-
քայլում, Աֆրոյի գալուստը, քիթի, հանդարտությունը, դրան։
Հրամայեց փակել։ Մի գեղատեսիլ ինչպիսի՞սիկ թեթև
գլուխս գալիս։ Գնա ասիր ընկերոջ Ստեփանի ապրելու
համար։ Մի քանի ամիսներ ապրելու ապրելու մասին,
ասում, հանգիստ ապրելու, հանգիստ։ — Ոչ։
Ստեփանի ապրելու մասին քանի՞սներ դուրս
գալիս։

Ինչպես, սիրելի ընկերներս, ժողովրդին ապրելու
սիրելուց քանի՞սներ մեզ, տեսե՛ք, մի քանի օրում
ամենի մեջ շրջանակներում հանդիպող հոգեբանությունը
վատնվեց։ Ինչ-որ պատճառով ուզում քանի՞սներ գնա-
լուս մի գրասենյակ։

— Եվ խնդրում եմ, որ չասեք։ Ամենուրեք քա-
ղաքականությունը հանդարտությունը, որ գրքից չասեք ապրել-
դուստրերիս ու երեխաներս մեզ քանի՞սներ։

— Խոստանում եմ որ ես կանգնում գրում ապրելու գրքում
դուստրս մասնակի մասնակցությամբ։ Ինչպես գալիս չեմ որ հայ թատ-
քանի՞սներ ինչպիսի՞սիկ դարձնում գրքերից թատ-

[illegible]

[illegible]

Հանում հայտնվում է քաղաքացուն բնորոշ և ահեղության։

— Շատ ուրախ, խնդրում եմ, քաղաքի գլխավոր գանձարանի հրամանով քաղաքը շուտ մեջ գամ։ Կգամ եմ, դու միայնակ։

Շտապելուց հետո ասում գլուխս քաղաքի հանգամանքը, մեծամեծ հարցերը, ինչպես հարցնում ամբողջ ազգին, և գալիս քաղաքացուն հայրապետանոցը ասելու։

— Ամենի խնդրում եմ [illegible] [illegible] հարցը թողնենք մեզ մի գիշեր գոնե գոնի։

— Ես չեմ գիտենում, ասելիք եմ տրում։

— Լսեմ, հայրիկս, ասում [illegible], իմ ամենամեծ մտադրությունս գալիք քաղաքն, ասում եմ քեզանից ուղղակի, հրամանի խելք ասելու հետ չգիտցիս ինչ սուտ է։

— Այո՛, գնանք, գանձատանը հայ հայրիկ, ամեն ինչ ասելիք ունենք և գիտենք հարցերը, որոնք ասելիք մեզ մոլորվելիս չասեք։

— Ինչո՞ւ մի տարի կասեք։

— Իմիջ, հարցնեց «հայը»։

— Սեմուելյան իմ տասի...

— Ամ՛ տասնամյակ, տասնամ՛։

— Բայց հասարակությունը գրաքննիչ, ցցիր ստանձնությունը

— Սեմուելյանը սիրում, սիրեցու, ինչպես այդ հայությունն ինչ խոսք իմ գրքի գրաքննությունը և խմբագրությունը։ Գրքերիս իմ կատարված գրաքննությունը թե, և հանրագիտարանը չեմ ցանկանում մեջտեղ։ Դեռևս գարի ժամանակից իմ ենթադրելի, որ Ղազարյանցը գրաքննիչներ և խմբագիր հանձնարարեմ։ Սակայն գարի սարքելը հիմնական հայ ընդունելիք ազգությունի հիշատակությունը եղավ։ Սեմուելը գարի այդքանը ազգությունով, շատ շատերով ցրվածներիս։

— Կիսցեմ՛, գրքից ստանձնությունները հիանալի։ Ես միշտ ասել եմ ոչ-ստեղծի ասել։ — Իր գործերը հայի իրա ծանոթ իրերից չի մնացած, միշտ գործերի։

— Իրենց սոցիալիստներից։

— Կարծեմ սոցիալիստներ մեջ մեծ գաղտնի հասնում ց, գաղտնի մեջի։

— Ամենի գաղտնի մեջ գիրք-բանաստեղծությունը մեզ չուսումնասիրեց։ Ազգությունի մեջ, որ գրքերի ունեցան ինչպես հայերի հանդեպ...

؟ . . . .

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1964

1. *1815թ. հունիսի 18-ին Նապոլեոն Բոնապարտի բանակը Վաթերլոոյում պարտություն կրեց անգլա-հոլանդա-պրուսական զորքերի դեմ տարած վճռորոշ ճակատամարտում: Հունիսի 22-ին Նապոլեոնը վերջնականապես հրաժարվեց գահից: Հուլիսի 15-ին ինքնակամ հանձնվեց բրիտանական կառավարությանը, որը նրան աքսորեց Սուրբ Հեղինե կղզի, որտեղ և վախճանվեց 1821թ. մայիսի 5-ին:*
2. *19-րդ դարի անգլիացի բանաստեղծ Ջորջ Բայրոնի «Շիլիոնի կալանավորը» պոեմը գրվել է 1816թ.: Պոեմի հիմքում ընկած է շվեյցարացի քաղաքական գործիչ, պատմաբան, Ժնևի քաղաքացի Ֆրանսուա դը Բոնիվարի կյանքի ողբերգական պատմությունը, որը 1530թ. կրոնական և քաղաքական մեղադրանքով նետվել է Շիլիոնի բանտը:*
3. *Նկատի ունի Ստ. Զորյանի (1889-1967) «Հայոց բերդը» պատմավեպը (1959), որտեղ նկարագրված են 4-րդ դարի պատմական անցքերն ու Արշակ Բ (350-368) թագավորի վարած քաղաքականությունը:*
4. *Շվեդ-նորվեգական միությունը (1814-1905) զենքի ուժով պարտադրվել է Շվեդիայի կողմից՝ 1814 թվականի շվեդա-նորվեգական պատերազմից հետո: 1905 թվականի հունիսի 7-ին նորվեգական պառլամենտը (ստորտինգ) որոշում է ընդունել միավորումը խզելու մասին (դրան նպաստել է նաև Ռուսաստանի և Մեծ Բրիտանիայի բարյացակամ դիրքորոշումը Նորվեգիայի հանդեպ): Խզումը ձևակերպվել է Կարլշտադի շվեդա-նորվեգական համաձայնագրով (1905):*
5. *Նիկիտա Սերգեյի Խրուշչով (1894-1971) - Խորհրդային պետական գործիչ, ԽՄԿԿ առաջին քարտուղար 1953-1964թթ., ԽՍՀՄ մինիստրների խորհրդի նախագահ 1958-1964թթ., Խորհրդային Միության հերոս, Սոցիալիստական աշխատանքի եռակի հերոս: 1930-ական թվականներից զբաղեցրել է բարձր պաշտոններ: 1953թ.՝ Իոսիֆ Ստալինի մահից հետո, հաղթել է իշխանության համար մղվող պայքարում: Իշխանության գալուց հետո հանդես է եկել ստալինյան բռնությունների սուր քննադատությամբ, չնայած որ ինքն էլ ժամանակին հատուկ դաժանությամբ է աչքի ընկել հակակոմունիստական զանգվածների դեմ պայքարելիս: Խրուշչովի նախագահության տարիներին մեծ քանակությամբ բռնադատվածների ներում է շնորհվել: 1964թ. կուսակցության հետադիմական ուժերը*

դավադրություն կազմակերպեցին և հեռացրին նրան իշխանությունից:

6. Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո, երբ պարտված Գերմանիայի արևմտյան մասը գրավեցին հակահիտլերյան կոալիցիայի մեջ մտնող Մեծ Բրիտանիան, Ֆրանսիան և Ամերիկայի Միացյալ Նահանգները, իսկ արևելյան մասը՝ Խորհրդային Միությունը, Գերմանիան բաժանվեց 2 մասի՝ Արևմտյան կամ Գերմանիայի Դաշնային Հանրապետության և Արևելյան կամ Գերմանական Դեմոկրատական Հանրապետության: 1990թ. հոկտեմբերի 3-ին տեղի ունեցավ գերմանական 2 պետությունների խաղաղ վերամիավորումը:

7. 1961թ. օգոստոսի 13-ից Վարշավյան պայմանագրի երկրների (Ալբանիա, Բուլղարիա, Գերմանիայի Դեմոկրատական Հանրապետություն, Լեհաստան, Հունգարիա, Չեխոսլովակիա, Ռումինիա և ԽՍՀՄ) կոմունիստական և աշխատավորական կուսակցությունների քարտուղարների առաջարկով և ԳԴՀ Ժողովրդական պալատի որոշման հիման վրա սկսեց կառուցվել 155կմ երկարությամբ Բեռլինյան պատը: Պատը ամբողջությամբ բաժանում էր Արևմտյան Բեռլինը Արևելյան Բեռլինից և Արևելյան Գերմանիայից մինչև 1989 թվականի նոյեմբերը, երբ կառավարությունը պաշտոնապես բացեց այն: Արևմտյան Բեռլին այցելելու համար ԳԴՀ քաղաքացիներից հատուկ թույլտվություն էր պահանջվում: Ազատ անցման իրավունք ունեին միայն թոշակառուները: Բեռլինյան պատն անցնելու փորձի հետևանքով զոհվել է 125-145 մարդ, եղել են հարյուրավոր վիրավորներ, ավելի քան 75000 մարդ ձերբակալվել է:

8. Սկագերակ, Գաթեգատ (Կատեգատ), Մեծ և Փոքր Զունդ (Մեծ և Փոքր Բելտ)-Բալթիկ և Հյուսիսային ծովերը միացնող նեղուցներ Սկանդինավյան և Յուտլանդիա թերակղզիների միջև:

9. 1965թ. տպագրվել է «Մարդը տանու շորերով» ժողովածուում, էջ 305: Գրքում ֆելիետոնի գրության տարեթիվը սխալմամբ նշված է 1963:

10. Մովսես Կաղանկատվացի - 7-րդ դարի հայ պատմիչ:

11. Թովմա Մեծոփեցի (1378-1446) - պատմիչ, մանկավարժ, եկեղեցական, մշակութային և հասարակական գործիչ:

12. Միքայել վարդապետ Չամչյան (1738-1823) - հայ ականավոր պատմաբան, քերական, լեզվաբան, աստվածաբան և մանկավարժ: Եղել է Մխիթարյան միաբանության անդամ: 1784-1786թթ. տպագրել է «Պատմութիւն Հայոց ի սկզբանէ աշխարհի մինչեւ ցամ Տեառն 1784» եռահատոր աշխատությունը: Այն Մովսես Խորենացու «Հայոց պատմությունից» հետո Հայաստանի քննական պատմություն ստեղծելու առաջին փորձն է հայ պատմագրության մեջ:

13. Սուննի իսլամ-հետևորդների թվով իսլամի ամենամեծ հոսքը: Սուննիները

հավատացյալների այն համայնքն է, որն ապրում է՝ հիմք ընդունելով Մուհամմեդ մարգարեի սուննան՝ որպես չափորոշիչ: Շիա իսլամ - թվով երկրորդ դավանանքը Սուննի իսլամից հետո: Շիաները ընդունում են միայն Ղուրանը և մերժում ավանդությունները (սուննաները):

14. *Շախսեյ-վախսեյ - պարսկական «Շամ Հուսեյն, վամ Հուսեյն» ողբից, շիա մուսուլմանների մոլեռանդ ողբահանդես՝ նվիրված Հուսեյն իմամի հիշատակին: Նշվում է մուսուլմանական օրացույցի մուհառռամ ամսվա 10-րդ օրը: Շախսեյ-վախսեյի թատերականացված արարողությունների ժամանակ (2-3 օր) ներկայացվում են Հուսեյնի կյանքի ու նահատակման պատկերներ, մոլեռանդ հավատացյալներն իրենց խոշտանգում են սրերով, դաշույններով, խարազանում ծանր շղթաներով և ամեն մի հարվածի ժամանակ արտասանում են «շախսեյ-վախսեյ»:*
15. *1988թ. տպագրվել է «Երկեր» ժողովածուում, էջ 500:*
16. *Տպագրվել է «Մարդը տանու շորերով» ժողովածուում, էջ 307:*
17. *Երկրորդ համաշխարհային պատերազմում Ճապոնիայի պարտությունից և խորհրդային բանակի Կորեա մուտք գործելուց հետո վերջ տրվեց ճապոնական գաղութային տիրապետությանը Կորեական թերակղզում: 1945թ. օգոստոսի 15-ին անգլո-ամերիկյան դաշնակիցների հետ համաձայնությամբ Կորեայում ստեղծվեց 2 գոտի. խորհրդային՝ 38-րդ զուգահեռականից հյուսիս, և ամերիկյան՝ դրանից հարավ: Հյուսիսային Կորեան որդեգրեց զարգացման սոցիալիստական ուղի և կոչվեց Կորեական Ժողովրդա-դեմոկրատական Հանրապետություն, իսկ Հարավային Կորեան՝ կապիտալիստական ուղի՝ կոչվելով Կորեայի Հանրապետություն:*
18. *Հնդկաչին թերակղզում ամբողջությամբ կամ մասնակի տարածվում են հետևյալ պետությունները՝ Վիետնամ, Կամբոջա, Թաիլանդ, Մյանմա, Լաոս, Մալայզիա, Բանգլադեշ և Չինաստան, որոնցից մի քանիսն այդ ժամանակ կիսված էին:*
19. *«Այն օրը աշակերտները մոտեցան Հիսուսին և ասացին. «Մեզնից ո՞վ է մեծ երկնքի արքայության մեջ»: Եվ Հիսուս իր մոտ կանչեց մի մանուկ, կանգնեցրեց նրան նրանց մեջ ու ասաց. «Ճշմարիտ եմ ասում ձեզ, եթե չդառնաք ու չլինեք մանուկների պես, երկնքի արքայությունը չեք մտնի» (Մատթ. 18:1-4):*
20. *Կոնգոյում Առաջին համաշխարհային պատերազմի ընթացքում ծավալված ազատագրական շարժումները նոր վերելք ապրեցին Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո: 1960թ. հունիսի 30-ին ազգային-ազատագրական շարժման արդյունքում Կոնգոն հռչակվեց անկախ հանրապետություն: Սակայն գերտերությունները, օգտագործելով տարբեր ցեղախմբեր ու սոցիալական խավեր ներկայացնող պարագլուխների*

փարաձայնությունները, խափանում էին կառավարության տնտեսական և քաղաքական միջոցառումները, հրահրում խռովություններ:

21. *Գրիգոր Արտեմի Հարությունյան (Հարությունով) (1900-1957) - խորհրդային պետական և կուսակցական գործիչ: 1937-1953թթ. եղել է ՀԿԿ Կենտկոմի առաջին քարտուղար:*
22. *Մացակ Պետրոսի Պապյան (1901-1962) - խորհրդային պետական աշխատող: 1938-1954թթ.՝ ՀԽՍՀ Գերագույն խորհրդի նախագահության նախագահ, միաժամանակ ԽՍՀՄ ԿԳԿ-ի և Գերագույն խորհրդի նախագահության նախագահի տեղակալ:*
23. *Վյաչեսլավ Միխայիլի Մոլոտով (1890-1986) -խորհրդային քաղաքական և պետական գործիչ, ԽՍՀՄ ժողովրդական կոմիսարների խորհրդի նախագահ (1930-1941), ԽՍՀՄ արտաքին գործերի մինիստր (1939–1949, 1953-1956): Համարվում է ԽՍՀՄ քաղաքական բռնությունների գլխավոր կազմակերպիչներից մեկը: Մոլոտովի ստորագրությունն ամենաշատն է հանդիպում հատուկ Ստալինյան ցուցակներով գնդակահարվողների փաստաթղթերում:*
24. *Տպագրվել է «Մարդը տանու շորերով» ժողովածուում, էջ 325:*
25. *Խորհրդային կենսաբան, ԽՍՀՄ-ում պտղատու, հատապտղատու և այլ կուլտուրաների գիտական սելեկցիայի հիմնադիր Իվան Միչուրինը (1855-1935) պտղատու բույսերի նոր սորտերի ստացման աշխատանքները սկսել է 1875թ., Տամբովի նահանգի Կոզլով (այժմ՝ Միչուրինսկ) քաղաքում: 1899թ. քաղաքի մերձակայքում ձեռք է բերել նոր հողամաս, որտեղ աշխատել ու ապրել է մինչև կյանքի վերջը: Վ. Ի. Լենինի ցուցումով Իվան Միչուրինի փորձարարական տնկարանը 1922թ. վերափոխվել է պետական հիմնարկության, որի բազայի վրա 1928թ. կազմակերպվել է պտղատու-հատապտղատու կուլտուրաների սելեկցիոն-գենետիկական կայան (1934թ.՝ Իվան Միչուրինի անվան կենտրոնական գենետիկական լաբորատորիա):*
26. *Տպագրվել է «Մարդը տանու շորերով» ժողովածուում, էջ 315:*
27. *Բարրի Մորիս Գոլդուոտեր (1909-1998) - ամերիկացի քաղաքագետ, 1964թ. երկրի նախագահական ընտրություններում Հանրապետական կուսակցության թեկնածու, 1953-1965 և 1969-1987թթ. Արիզոնա նահանգի սենատոր:*
28. *Ստալինը մահացել է 1953թ. մարտի 5-ին: Նրա մարմինը ամփոփել են Կարմիր հրապարակի Լենինի դամբարանում, որը մինչև 1961թ. կոչվել է Վ. Լենինի և Ի. Ստալինի դամբարան: Սակայն Նիկիտա Խրուշչովի կառավարման տարիներին՝ 1961թ. հոկտեմբերի 31-ի լույս նոյեմբերի 1-ի գիշերը, XXII համագումարի որոշմամբ նրա դին գաղտնի հանվել է*

դամբարանից և թաղվել Կրեմլի պատի մոտ:

29. *Մեքքա-քաղաք Սաուդյան Արաբիայում՝ Կարմիր ծովից մոտավորապես 100կմ հեռավորության վրա: Մուսուլմանների ուխտագնացության (հաջ) կենտրոն:*
30. *Մեդինա-քաղաք Սաուդյան Արաբիայում՝ Մեքքայից 350կմ հյուսիս: 7-րդ դարից Մեդինան իսլամի 2-րդ սրբազան քաղաքն է (Մեքքայից հետո):*
31. *Երուսաղեմ-հին մերձավորարևելյան քաղաք, որը գտնվում է Միջերկրական և Մեռյալ ծովերի ջրբաժանում: Երուսաղեմը համարվում է երեք կրոնների կենտրոն՝ հուդայականություն, քրիստոնեություն, իսլամ:*
32. *Ժնևի կոնֆերանս - զինաթափման միջազգային կոնֆերանսը (1932-35)՝ սպառազինությունների կրճատման և սահմանափակման վերաբերյալ, 1932թ. հրավիրվել է Ազգերի լիգայի խորհրդի որոշմամբ:*
33. *Սամսոնն Ասպվածաշնչում հիշատակվում է որպես Նազովրեական, որը օժտվել էր հսկայական ուժով, որպեսզի պայքարեր թշնամիների դեմ և կատարեր գերմարդկային սխրանքներ. նա սպանել է առյուծին մերկ ձեռքերով և կոտորել փղշտացիների մի ամբողջ բանակ՝ միայն ավանակի ծնոտոսկրով: Սակայն այդ հզորության գաղտնիքը Սամսոնի երկար մազերի մեջ էր, որոնք կտրելու դեպքում նա կորցնում էր իր ուժը (Դատ. 14-16):*
34. *Տրոցկիզմ - գաղափարա-քաղաքական հոսանք. առաջացել է XXդ. սկզբին, որպես մենշևիզմի, իսկ միջազգային մասշտաբով՝ ցենտրիզմի տարատեսակ: Անվանումն ստացել է այդ հոսանքի գաղափարախոս և պարագլուխ, Խորհրդային Ռուսաստանի կուսակցական և պետական գործիչ, 1917թ. Հոկտեմբերյան հեղափոխության կազմակերպիչներից և Կարմիր բանակի հիմնադիրներից մեկի՝ Լև Տրոցկու (1879-1940) անունից:*
35. *Տիտոյական սոցիալիզմ - հարավսլավական և միջազգային բանվորական շարժման գործիչ, ՀՍՖՀ պետական և քաղաքական գործիչ, մարշալ (1943), Հարավսլավիայի ժողովրդական կրկնակի հերոս (1944, 1972), սոցիալիստական աշխատանքի հերոս (1950) Իոսիպ Տիտոյի (1892-1980) անունից:*
36. *Մահվանից մեկ տարի առաջ՝ 1964թ., Լեո Կամսարին երկսեռյականոց բնակարան տվեցին Աջափնյակում: Սակայն նա չհարմարվեց իր նոր կացարանին, վերադարձավ հին տուն՝ մեռնելու:*
37. *Այժմյան Թումանյան 11 շենքն է (ծնթ. Վ.թ.):*
38. *Տպագրվել է «Մարդը տանու շորերով» (էջ 260) և «Միհատորյակ» (1980, էջ 325) ժողովածուներում:*
39. *Խրուշչովի անկումը-տես ծնթ. 5:*

40. *Նիկոլայ Ալեքսանդրի Բուլգանին (1895-1975) -խորհրդային պետական գործիչ, Ստալինի մտերիմներից:*
41. *Դուխոբորներ - (ռուս.՝ духобор, հոգու համար պայքարողներ), ռուսական բողոքական աղանդավորներ:*
42. *Մոլոկաններ - մոլոկանների կրոնական ուղղությունը առաջացել է դուխոբորների աղանդից և պահպանել վերջինիս վարդապետության և ծեսերի մեծ մասը: Անվանումը կապում են ավետարանական «հոգևոր կաթի» (словесное молоко)՝ իրենց քարոզած Հիսուս Քրիստոսի ճշմարիտ ուսմունքի, ինչպես նաև պասի օրերին կաթ խմելու սովորույթի հետ:*
43. *Պրիգուններ - 19-րդ դարի 50-ական թվականներին Ռուսական Կայսրությունում՝ Անդրկովկասի տարածքում, մոլոկանների կրոնական ուղղությունից առանձնացած աղանդ:*
44. *Պետրոս Մեծ (Պետրոս I, 1672-1725) Արևմտյան Եվրոպայի երկրներում երկարատև ճանապարհորդություն կատարելուց հետո՝ 698թ., վերադառնալով Ռուսաստան, նախաձեռնել է ռուսական պետության ու հասարակական կացութաձևի լայնածավալ և արմատական բարեփոխումներ: Նրա գլխավոր ձեռքբերումներից է դեռևս 17-րդ դարից եկող խնդրի լուծումը՝ Ռուսաստանի տարածքների ընդլայնումը Բալթիկ ծովի առափնյա շրջանների ընդգրկման շնորհիվ, որ տեղի է ունեցել Շվեդիայի դեմ Մեծ հյուսիսային պատերազմում տարած հաղթանակի արդյունքում: Դա թույլ տվեց նրան 1721թ. հռչակել Ռուսական կայսրություն և ընդունել կայսեր տիտղոսը: Ռուսաստանի նոր մայրաքաղաքը դարձավ Սանկտ Պետերբուրգը, որը հիմնադրվել է 1703 թվականի մայիսի 16-ին Հյուսիսային պատերազմի ընթացքում շվեդներից ազատագրած Ինգերմանլանդիա կոչվող տարածքների վրա՝ բացելով «պատուհան դեպի Եվրոպա»: Սանկտ Պետերբուրգը՝ որպես պատուհան դեպի Եվրոպա ներկայացնող պատկերավոր արտահայտությունն առաջին անգամ գործածել է իտալացի արվեստաբան և ճանապարհորդ Ֆրանչեսկո Ալգարոտտին (1712-1764) 1759թ. իր «Նամակներ Ռուսաստանի մասին» գրքում: Արտահայտությունը լայն ճանաչում է ստացել այն բանից հետո, երբ Ա. Պուշկինը 1833թ. այն օգտագործել է իր «Պղնձե հեծյալ» պոեմում. «Խորհում էր նա //Գոռ դրկիցը թող իմանա//Էստեղ քաղաք պիտի հիմնենք, //Որ շվեդին սպառնանք մենք: //Մի պատուհան, բախտի կամքով՝//Եվրոպայի վրա անքող, //Ու ծովափին կանգնենք ամուր»:*
45. *Նիկողայոս Ադոնցը «Մարզպան Վասակը պատմաբանների դատաստանի առաջ» հոդվածում (1904) հիմնավորապես ապացուցում է, որ Եղիշեն միտումնավոր կերպով Վասակին է վերագրել նրա փեսա Վարազվաղանի անօրինություններն ու ապիկար վարքը:*

46. *Նկատի ունի Սարդարապատի ճակատամարտին մասնակցած Վանի գնդերը: Կամսարը նույնպես մասնակցել է ճակատամարտին, նա կռվել է Վանի 4-րդ գնդում՝ գնդապետ Տիգրան Բաղդասարյանի հրամանատարության տակ: 1915թ. Կամսարը եղել է նաև Վանի հերոսամարտի կենտրոնական դեմքերից: Իր փունը եղել է կռվի կարևորագույն դիրքերից մեկը (Թովմաղյան փուն՝ 5-րդ շրջանի դիրք), (ծնթ.՝ Վ.թ.):*

47. *Լեռ Կամսարը նկատի ունի Ռուսաստանի Խորհրդային Ֆեդերատիվ Սոցիալիստական Հանրապետության (ՌԽՖՍՀ) կառավարության և Թուրքիայի Ազգային մեծ ժողովի կառավարության միջև 1921 թվականի մարտի 16-ին կնքված Մոսկվայի պայմանագիրը (ինչպես նշված է պայմանագրի նախաբանում, ՌՍՖՍՀ–Թուրքիա «ընկերության և եղբայրության պայմանագիր»): Սույն պայմանագրով Ռուսաստանը ճանաչում էր Թուրքիայի ինքնիշխանությունը Ազգային մեծ ուխտի՝ թուրքական ճանաչած բոլոր տարածքների նկատմամբ: Թուրքիան իր հերթին հրաժարվում էր Բաթումից՝ փոխարենը ստանալով Սուրմալուի գավառը: Պայմանագիրը բանակցվել է Քեմալական Թուրքիայի և խորհրդային հանրապետությունների միջև հարաբերությունները կարգավորելու նպատակով 1921 թվականի փետրվարի 26-ից մինչև մարտի 16-ը անցկացված Մոսկվայի ռուս-թուրքական երկրորդ կոնֆերանսի ժամանակ, որի ընթացքում Ազգությունների այն ժամանակվա կոմիսար Ստալինի ջանքերի շնորհիվ Չիչերինը վերջնականապես հրաժարվել է մինչ այդ ունեցած հայանպաստ իր դիրքորոշումից: Հայաստանի սահմանների հարցի կապակցությամբ Չիչերինը հայտարարել է, որ իրենք չեն պնդի սահմանը Արփաչայից արևմուտք և Արաքսից հարավ անցկացնելուն: Դա նշանակում էր, որ Թուրքիային էին անցնում ոչ միայն ամբողջ Կարսի մարզը, այլև Սուրմալուի գավառը, որը երբեք չէր եղել Թուրքիայի կազմում: Սակայն թուրքական պատվիրակությունը չի բավարարվում այդքանով և պահանջում է, որ Նախիջևանի մարզը չմնա Հայաստանին, այլ դրվի Ադրբեջանի հովանավորության տակ, վերջինս էլ պետք է պարտավորվեր ապագայում չզիջել այդ հովանավորությունը մի երրորդ պետության, այսինքն՝ Հայաստանին:*

48. *Գևորգ Ալեքսանդրի Աթարբեկյան (1892-1925) - Գեորգի Աթարբեկով, խորհրդային պետական գործիչ: 1921 թվականին՝ դաշնակցականների փետրվարյան խռովության օրերին, նշանակվել է Հայաստանի հյուսիսային շրջանների ռազմահեղափոխական կոմիտեի նախագահ: Պատասխանատու է 1921թ. փետրվարի 16-ի լույս 17-ի և 17-ի լույս 18-ի գիշերներին Երևանի բանտում անմեղ մարդկանց մորթելու համար: Պատասխանատու է նաև հունվարին և փետրվարին նոր խորհրդայնացած Հայաստանում*

տեղի ունեցած սպանությունների և ծերբակալությունների համար:

49. Չեկա-ռուս. Черезвычайная комиссия (արտակարգ հանձնաժողով) բառերի հապավումը: ԽՍՀՄ-ում հակահեղափոխության, սաբոտաժի և սպեկուլյացիայի դեմ պայքարելու արտակարգ հանձնաժողով, որ կազմակերպվել է 1918թ. և գոյություն է ունեցել մինչև 1922թ.: Սակայն «Չեկա» և «չեկիստ» բառերը դեռ երկար տարիներ օգտագործվում էին ժողովրդի բառապաշարում և ահ ու սարսափ տարածում:

50. Երկաթե վարագույր-քաղաքական կլիշե, որը ակտիվ գործածության մեջ է մտցրել Մեծ Բրիտանիայի պետական և քաղաքական գործիչ Ուինսթոն Չերչիլը 1946 թվականի մարտի 5-ի իր Ֆուլտոնյան ելույթում, որը խորհրդանշում էր Սառը պատերազմի սկիզբը: Երկաթե վարագույր ասելով՝ նկատի է առնվել տեղեկատվական, քաղաքական և սահմանային այն արգելքը, որը ԽՍՀՄ-ը և այլ սոցիալիստական պետությունները մեկուսացրել է կապիտալիստական պետություններից:

51. Վ. Ա. Պարսամյանի, Ս. Պ. Պողոսյանի, Շ. Ռ. Հարությունյանի «Հայ ժողովրդի պատմություն: Դասագիրք ութնամյա դպրոցի VIII դասարանի համար» գիրքը Գ. Բ. Ղարիբջանյանի խմբագրությամբ տպագրվել է 1962թ.:

52. ՆԱՏՕ-1949թ. ապրիլի 4-ին ԱՄՆ-ի նախաձեռնությամբ Վաշինգտոնում ստորագրվել է Հյուսիս-ատլանտյան պայմանագիր, որի հիման վրա էլ կազմավորվել է Հյուսիս-ատլանտյան պայմանագրի կազմակերպությունը կամ Հյուսիս-ատլանտյան դաշինքը՝ ՆԱՏՕ (անգլ.՝ North Atlantic Treaty Organization, NATO): Հյուսիս-ատլանտյան պայմանագիրը (Վաշինգտոնյան պայմանագիր) ստորագրել է 12 երկիր: Հետագայում ՆԱՏՕ-ն ընդլայնվել է և համալրվել նոր անդամներով: Ներկայումս ՆԱՏՕ-ի անդամ-պետությունների թիվը քսանինն է:

53. Հերովդես-Ըստ Մատթեոսի ավետարանի՝ հրեական Հերովդես I Մեծ թագավորը (մ.թ. ա. 74 կամ 73-մ.թ. ա. 4-1), գուշակներից իմանալով, որ վերջիններս գնում են Բեթղեհեմ՝ խոնարհվելու նորածին «հրեաների թագավորին», վախեցավ իր իշխանությունը խլելու դավադրությունից և հրամայեց սպանել մանուկ Քրիստոսին: Մոգերը, սակայն, թաքցրեցին նրանից մանկան գտնվելու վայրը, և Հերովդեսը հրամայեց սպանել Բեթղեհեմում գտնվող 2 տարին չբոլորած բոլոր մանուկներին՝ հուսալով, որ այդպիսով կոչնչացնի նաև նորածին «թագավորին» (Մատթ. 2:1-19):

54. 1895թ. սկսած՝ Լենինը տարբեր ժամանակահատվածներում մոտ 7 տարի ապրել է Շվեյցարիայում:

55. Երբ Հովհաննես Մկրտիչը բանտում լսում է Քրիստոսի գործերի մասին, իր աշակերտներին ուղարկում է նրա մոտ և հարցնում. «Դու՞ ես, որ գալու

էիր, թե՞ ուրիշին սպասենք»: Հիսուս պատասխան տվեց նրանց և ասաց. «Գնացեք պատմեցեք Հովհաննեսին, ինչ որ դուք լսեցիք և տեսաք. կույրերը տեսնում են, կաղերը՝ քայլում, բորոտները՝ մաքրվում, խուլերը՝ լսում, մեռելները՝ հառնում, և աղքատներին քարոզվում է Ավետարանը: Եվ երանի՜ է նրան, ով իմ պատճառով չի գայթակղվում» (Մատթ. 11:2-6):

56. *Կամսարը նկատի ունի Աբդուլ Համիդ II-ին (1842-1918):*
57. *Ալեքսեյ Նիկոլայի Կոսիգին (1904-1980) -կոմունիստական կուսակցության և խորհրդային պետական գործիչ, ԽՄԿԿ ԿԿ քաղբյուրոյի անդամ: ԽՍՀՄ Նախարարների խորհրդի նախագահ է եղել 1964-1980թթ.:*
58. *Անաստաս Հովհաննեսի Միկոյան (1895-1978) -խորհրդային պետական ու քաղաքական գործիչ, հայտնի է որպես խորհրդային ժամանակաշրջանի ամենաերկար քաղաքական կենսագրություն ունեցող գործիչներից մեկը (1919-1974թթ.), ինչը նույնիսկ դարձել էր քաղաքական սատիրայի թեմա: Հայտնի է նաև Հայաստանում 1500-2000 հայերի, այդ թվում Հայաստանի Հանրապետության զինված ուժերի սպաների, մշակութային և քաղաքական գործիչների գնդակահարությունը կազմակերպելու նպատակով ԽՍՀՄ ներքին գործերի ժողկոմ Եժովի միջոցով Ստալինին ուղղված իր դիմում-խնդրանքով, ինչպես նաև Արցախը, Նախիջևանն ու Գարդմանքը Խորհրդային Ադրբեջանի կազմում թողնելու, Հայկական հարցը միջազգային ասպարեզից հեռացնելու անխախտ դիրքորոշումով:*
59. *Լինդոն Բեյնս Ջոնսոն (1908-1973) - Ամերիկայի Միացյալ Նահանգների 36-րդ նախագահն է: Այս պաշտոնը զբաղեցրել է 1963թ. նոյեմբեր 22-ից մինչև 1969թ. հունվարի 20-ը:*
60. *Դուայթ Էյզենհաուեր (1890-1969) - ամերիկացի պետական և ռազմական գործիչ, գեներալ, Ամերիկայի Միացյալ Նահանգների 34-րդ նախագահը (1953թ. հունվարի 20-ից մինչև 1961թ. հունվարի 20-ը):*
61. *Շառլ դը Գոլ (1890-1970) -Ֆրանսիայի մեծագույն քաղաքական և ռազմական գործիչներից: Ֆրանսիայի նախագահն էր 1959-1969թթ.: Երկրորդ աշխարհամարտի ժամանակ չհամաձայնվեց Ֆրանսիայի անձնատրությանը, հեռացավ Լոնդոն և կազմակերպեց «Ազատ Ֆրանսիա» դիմադրության շարժումը: Մեծ Բրիտանիան, հետագայում նաև ԱՄՆ-ն ու ԽՍՀՄ-ը ճանաչեցին նրա «վտարանդի կառավարությունը»: Ֆրանսիայի ազատագրումից հետո՝ 1944-1946թթ., ղեկավարել է ժամանակավոր կառավարությունը: Երկու անգամ ընտրվել է նախագահ: Ընդունել է նոր սահմանադրություն, զարկ տվել տնտեսությանը, բարձրացրել երկրի միջազգային հեղինակությունը:*
62. *1958թ. Եգիպտոսը և Սիրիան կազմում են Արաբական Միացյալ Հանրապետությունը (ԱՄՀ)՝ Նասերի գլխավորությամբ:*

63. *1961թ. Սիրիան դուրս է գալիս ԱՄՀ կազմից: Միացյալ Արաբական Հանրապետությունը վերածվում է միասնական պետության:*
64. *Խոսքը վերաբերում է ամերիկացի գրող, հրապարակախոս, սոցիալիստական շարժման գործիչ, Հոկտեմբերյան հեղափոխության ականատես Ջոն Ռիդի (1887-1920) «10 օր, որ ցնցեց աշխարհը» գրքին, որը 1919թ. հրատարակվել է ԱՄՆ-ում: Նրան եվրոպացի հեղինակ անվանելու Կամսարի վրիպակը հավանաբար գալիս է այնտեղից, որ Ջոն Ռիդը Առաջին համաշխարհային պատերազմի ժամանակ ռազմաճակատային թղթակից է եղել նախ՝ Արևմտյան Եվրոպայում, ապա՝ 1915 թվականից՝ Եվրոպայում:*
65. *Միխայիլ Նիկոլայի Տուխաչևսկի (1893-1937) - խորհրդային ռազմական գործիչ, զորավար, Խորհրդային Միության մարշալ (1935): Գնդակահարվել է 1937թ.՝ մեղադրվելով իշխանության բռնազավթման համար զինվորական դավադրություն կազմակերպելու մեջ, արդարացվել է 1957թ.: Տուխաչևսկու դատավարությամբ Կարմիր բանակում սկզբնավորվեցին 1937-1938թթ. զանգվածային ռեպրեսիաները:*
66. *Հին Կտակարանի Ծննդոց գրքի 25-րդ գլխում ներկայացված է Իսահակի երկվորյակ որդիների՝ Հակոբի ու Եսավի պատմությունը: Անդրանիկը Եսավն էր, կրտսերը՝ Հակոբը: Մի օր Եսավը դաշտից վերադարձավ քաղցից թուլացած, Հակոբն էլ ոսպապուր էր եփել: Եսավը մի ման ապուր խնդրեց եղբորից, որի դիմաց Հակոբը պահանջեց Եսավի անդրանկության իրավունքը: Ավագ եղբոր պատասխանը, թե իրեն պետք չէ անդրանկությունը, եթե պիտի քաղցից մեռնի, բավարար չեղավ Հակոբի համար, և նա երդում պահանջեց, ստացավ այն և հետո միայն եղբորը տվեց ոսպապուրը: Եսավն էլ կերավ, խմեց և հեռացավ տնից՝ այդպիսով մեկ ման ոսպապուրի դիմաց վաճառելով իր անդրանկության իրավունքը (ծնթ.՝ Ա. Ք.):*
67. *Լազար Մոիսեյի Կագանովիչ (1893-1991) - խորհրդային պետական և կուսակցական գործիչ, Ստալինի մտերիմը:*
68. *Խոսքը Ղուկասի ավետարանի 15-րդ գլխում բերված «Անառակ որդու» առակի հերոսների մասին է (Ղկ. 15:11-32):*
69. *Տողերը նմանեցված են Հովհաննես Մկրտչի քարոզի տողերին. «Ով որ երկու զգեստ ունի, մեկը թող տա նրան, որ չունի, և ով որ ուտելիք ունի, նույն ձևով թող անի» (Ղուկ. 3:11):*
70. *Բանկ Օտոմանի գրավումը կամ Բանկ Օտոմանի միջադեպը (օգոստոսի 14, 1896) 1894-1896 թվականների համիդյան ջարդերին հաջորդած, սուլթանից և արևմտյան տերություններից ի նպաստ հայերի բարեփոխումներ պահանջելու, Հայկական հարցի վրա ուշադրություն հրավիրելու*

նպատակով կատարված գործողություն: Կազմակերպիչներն էին դաշնակցական գործիչներ Բաբկեն Սյունին և Արմեն Գարոն:

71. *Ջիբրալթարը Պիրենեյան թերակղզու հարավում գտնվող վիճելի կիսաանկլավ է: Գտնվելով Իսպանիայի տարածքում՝ այն պատկանում է Մեծ Բրիտանիային և ռազմածովային նշանակություն ունի նրա համար: Ջիբրալթարը պարբերաբար փորձել է անկախանալ, սակայն Իսպանիան ՄԱԿ-ի միջոցով խափանել է այդ փորձերը: Ներկայումս Ջիբրալթարում գործում են ԵՄ այն օրենքները, որոնք ձեռնտու են իրեն: Այդուհանդերձ, Ջիբրալթարի հարաբերությունները ԵՄ-ի հետ իրականացվում են Մեծ Բրիտանիայի հսկողության ներքո, այսինքն՝ Ջիբրալթարի շահերը ներկայացնում է Մեծ Բրիտանիան, ոչ թե Ջիբրալթարի պետության ղեկավարությունը: Բարենպաստ աշխարհագրական դիրքը և հատուկ հարկային քաղաքականությունը Ջիբրալթարը դարձրել են օֆշորային գոտի փողերի լվացման համար, ինչպես նաև մաքսանենգության լավագույն միջանցք:*

72. *Աբգար Ե Ուքքամա (ծննդյան թվականն անհայտ-50) - Օսրոյենեի թագավոր մ.թ.ա. 4-մ.թ. 7 և մ.թ. 13-50թթ.: Ըստ Մովսես Խորենացու «Հայոց պատմության»՝ եղել է Հայոց թագավոր: Արևելա-քրիստոնեական, այդ թվում հայկական եկեղեցական ավանդությունը պնդում է, որ Օսրոյենեում մ.թ. Ի դ. առաջին կեսին ապրած Աբգար V Ուքքաման («Սև») պատմության մեջ քրիստոնեություն ընդունած առաջին թագավորն էր, ընդ որում՝ նա, իբր, Հիսուսին Աստծո որդի է ճանաչել դեռևս նրա կենդանության օրոք: Ենթադրվում է, որ խոսքն իրականում Աբգար VIII Մեծ (177-212) թագավորի մասին է, ում օրոք քրիստոնեությունն արդեն բավականին տարածված է եղել Օսրոյենեում:*

73. *Աստծու տասը պատվիրաններից առաջինը. «Ես եմ քո Տեր Աստվածը, ինձանից բացի այլ աստվածներ չպիտի լինեն քեզ համար» (Ելից 20:2-3):*

74. *Ֆրանսիացի ազնվական, քաղաքական գործիչ, փիլիսոփա, գրող, հեղափոխական մարքիզ Դոնաթիեն Ալֆոնս Ֆրանսուա դը Սադը (1740-1814) սեռական հաճույք էր ստանում՝ իր զոհերին ենթարկելով տարբեր բռնությունների: Այդ է պատճառը, որ մարքիզ դը Սադը իր կյանքի մեծ մասը անց է կացրել բանտերում և հոգեբուժարաններում:*

75. *«Դարձյալ ասում եմ ձեզ՝ ավելի հեշտ է, որ պարանը ասեղի ծակով մտնի, քան թե հարուստը՝ Աստծու արքայությունը» (Մատթ. 19:24):*

76. *Հոբ Երանելի-Հին Կտակարանի գրքերից մեկում՝ «Հոբի» գրքում, պատմվում է Օսիտ երկրում ապրող Հոբ անունով մի աստվածավախ, արդար և բարեսիրտ մարդու մասին: Եդոմայեցիների թագավոր Հոբը իր ընտանիքն ու ունեցվածքը կորցնելուց և բազում զրկանքների*

ենթարկվելուց հետո էլ Աստծուց գոհ բացականչում էր. «Թող օրհնյալ լինի Տիրոջ անունը»: Ըստ ավանդության՝ Հոբն անցել է երանելիների շարքը և դարձել փոկունության ու համբերատարության խորհրդանիշ:

77. *Տես ծնթ. 4:*
78. *Տպագրվել է «Միհատորյակում», էջ 492:*
79. *Տպագրվել է «Միհատորյակում» (էջ 512), «Երկերում» (էջ 524):*
80. *Վիլհելմ Երկրորդ (1859-1941) -Գերմանիայի վերջին կայսր և Պրուսիայի թագավոր 1888-1918թթ.: Վիլհելմի կառավարումը նշանավորվել է Գերմանիայի հզորացմամբ և Եվրոպայի հզորագույն պետություններից մեկի վերածմամբ: Սակայն Վիլհելմի կառավարումը ավարտվել է Առաջին համաշխարհային պատերազմում Գերմանիայի պարտությամբ և կայսրության անկմամբ: Բավական բացասական դեր է խաղացել Հայկական հարցում՝ սատարելով Աբդուլ Համիդ II-ի և երիտթուրքերի հակահայ քաղաքականությանը:*
81. *Այս տողերով է սկսվում Մ. Խորենացու հանրահայտ «Ողբը»:*
82. *Գոթֆրիդ Վիլհելմ Լայբնից (1646-1716) - գերմանացի փիլիսոփա, տրամաբան, մեխանիկ, մաթեմատիկոս, ֆիզիկոս, իրավաբան, պատմաբան, գյուտարար և լեզվաբան: Բեռլինի գիտությունների ակադեմիայի հիմնադիր և առաջին նախագահ, Ֆրանսիայի գիտությունների ակադեմիայի արտասահմանյան անդամ:*
83. *Խոսքը Հին Կտակարանի Ծննդոց գրքի 37-50-րդ գլուխներում նկարագրված պատմությունների մասին է:*
84. *Ֆրանցիսկո Ֆրանկո Բաամոնդե (1892-1975) - իսպանացի գեներալ, Իսպանիայի ղեկավար 1939թ. մինչև իր մահը՝ 1975թ.:*
85. *Հայլե Սելասիե I (1892-1975) - (իրական անունը՝ Թաֆարի Մաքոննեն Վոլդեմիքայել), Եթովպիայի վերջին ինքնակալը (1930-1974), սերում էր Սողոմոն թագավորի տոհմից: Ռաստաֆարական կրոնի (քրիստոնեության նոր ձևավորված ճյուղ, որը սկիզբ է առել Ճամայկայում՝ 1930-ականներին) կողմնակիցներից շատերը երկրպագում են Հայլե Սելասիե I-ին՝ համարելով նրան Աստծո մարմնավորումը երկրի վրա, Քրիստոսի երկրորդ գալուստը կամ էլ Քրիստոսի հարությունը: Կրոնի հետևորդների մյուս մասն էլ Սելասիեին համարում էր պարզապես Աստծո կողմից ընտրված երկրային թագավոր:*
86. *Պլատոն (մ.թ.ա. 428/427 – 348/347թթ.) - հին հույն փիլիսոփա:*
87. *Հակոբ Պարոնյանի «Մեծապատիվ մուրացկաններ» ստեղծագործության գլխավոր հերոսը:*
88. *Տպագրվել է «Երկերում», էջ 506:*
89. *Տպագրվել է «Երկերում», էջ 517:*

90. *Ռենե Դեկարտ (1596-1650) - ֆրանսիացի փիլիսոփա, մաթեմատիկոս, ֆիզիկոս, համարվում է ժամանակակից փիլիսոփայության հայրը:*
91. *Տես Հին Կտակարան, Գիրք Ծննդոց 22:*
92. *Մ.թ. 79թ. օգոստոսի 24-ին Վեզուվի ժայթքման հետևանքով ամբողջովին ոչնչացվել են հին հռոմեական Պոմպեյ, Հերկուլանում և Ստաբիա քաղաքները:*
93. *Տպագրվել է «Մարդը տանու շորերով» ժողովածուում, էջ 303: Գրքում ֆելիետոնի գրության տարեթիվը սխալմամբ նշված է 1963:*
94. *Տես Հին Կտակարան, Գիրք Ծննդոց 4:2-5:*
95. *Տես Հին Կտակարան, Ելից, 32:1-20:*
96. *Յոհան Յակոբ Ֆրիդրիխ Վիլհելմ Ֆոն Պարրոտ (1791-1841) -բնագետ, բժիշկ, Արարատի գագաթը բարձրացած առաջին մարդը (1829 թվականին Խաչատուր Աբովյանի, երկու ռուս զինվորների և երկու հայ գյուղացիների հետ):*
97. *Տախտակ, որի վրա գրում էին արտադրության առաջավորների անուններն ու փակցնում նրանց նկարները, պատվո տախտակ:*
98. *Տես «Ծիրանի գօտի», Պոսդոն, 1961, Դ Տարի, Թիւ 3:*
99. *Տպագրվել է «Մարդը տանու շորերով» ժողովածուում, էջ 323:*
100. *Տպագրվել է «Երկերում», էջ 520:*
101. *Տպագրվել է «Միհատորյակում», էջ 474:*
102. *Տպագրվել է «Մարդը տանու շորերով» ժողովածուում, էջ 312:*
103. *Թոմաս Ռոբերտ Մալթուս (1766-1834) - անգլիացի տնտեսագետ, քահանա: Մալթուսն առավել հայտնի է «Ազգաբնակչության տեսության փորձ» (1798) աշխատությամբ, որտեղ աշխատավորների թշվառության պատճառը համարել է «մարդկանց բացարձակ ավելացումը», «ազգաբնակչության բնական օրենքները»: Նշելով բնակչության վերարտադրության մեջ կենսաբանական գործոնների որոշիչ նշանակությունը՝ Մալթուսը պնդում էր, որ բնակչությունն ունի երկրաչափական պրոգրեսիայով բազմանալու միտում, իսկ գոյամիջոցներն ավելանում են միայն թվաբանական պրոգրեսիայով, որի հետևանքով բնակչության մի մասը մնում է անգործ ու քաղցած: Այդ «ավելորդ» բնակչությունը, իբր, խախտում է հասարակության զարգացման բնականոն ընթացքը, և ըստ Մալթուսի՝ անհրաժեշտություն է առաջանում այն վերացնել սովի, պատերազմների, համաճարակների միջոցով:*
104. *1910թ. հոկտեմբերի 28-ի գիշերը Լև Տոլստոյը, իրականացնելով կյանքի վերջին տարիները իր հայացքներին համապատասխան ապրելու որոշումը, գաղտնի և ընդմիշտ լքեց Յասնայա Պոլյանան՝ միայն իր անձնական բժշկի՝ Դ. Մակովիցկու ընկերակցությամբ: Իր վերջին ուղևորությունը*

Տոլստոյն սկսեց Շչոկինո կայարանից: Նույն օրը, Գորբաչովո կայարանում մեկ այլ գնացք տեղափոխվելով, հասավ Կոզելսկ կայարան, կառապան վարձեց և ուղղվեց դեպի Օպտինա անապատ, իսկ այնտեղից էլ հաջորդ օրը՝ Շամորդինյան միաբանություն, որտեղ հանդիպեց քրոջը՝ Մարիա Նիկոլաևնա Տոլստայային: Ավելի ուշ գաղտնի Շամորդինո ժամանեց Տոլստոյի դուստրը՝ Ալեքսանդրա Լվովնան: Նոյեմբերի 7-ին մեկ շաբաթ տևած ծանր, տանջալից հիվանդությունից հետո (կրուպոզային թոքաբորբ) Լև Նիկոլաևիչ Տոլստոյը վախճանվեց կայարանապետ Ի. Օզոլինի տանը:

105. *1922թ. գրված «Կոստանդին զերո» ֆելիետոնում Լ. Կամսարը այս տողերը վերագրում է Գամառ-Քաթիպային (Ռափայել Պատկանյան). «Տարօրինակ բան. Գամառ-Քաթիպան ինչ-ե՞ն է գիտցեր, որ «թշվառին թշվառն է միշտ մխիթար»... (Ազգային այբբենարան, Եր., 1926թ., էջ 105):*
106. *Երբ Կայենը սպանում է եղբորը, Աստված անիծում է նրան, և երբ վերջինս մտավախություն է հայտնում, որ ամեն հանդիպող կարող է սպանել իրեն, ասում է. «...Նա, ով կը սպանի Կայենին, յոթնապատիկ վրեժի կարժանանա»: Եվ Տեր Աստված նշան դրեց Կայենի վրա, որպեսզի ոչ ոք, ով հանդիպի նրան, չսպանի» (Ծնն. 4:8-15):*
107. *Նկատի ունի Հին Կտակարանում նկարագրված Աստծու և Մովսես մարգարեի միջև Սինա լեռան վրա կնքած ուխտը (Հին ուխտ), երբ Աստծու ժողովրդին տրվեցին Տասը պատվիրանները և տարբեր օրենքներ՝ որպես կյանքի հիմնական կանոններ:*
108. *Տես Ելից, 20:11-7, 21:23-25:*
109. *Տպագրվել է «Երկերում», էջ 510:*
110. *Խոսքը վերաբերում է ներկայիս Ա. Սախարովի անվան հրապարակին, որը գտնվում է Նալբանդյան փողոցի սկզբնամասում՝ Հանրապետության հրապարակից քիչ հյուսիս-արևելք: Մինչև 1991թ. հրապարակը կրել է Անդրկովկասում բոլշևիկյան հեղափոխական շարժման գործիչ, ադրբեջանցի առաջին մարքսիստներից Մեշադի Ազիմբեկ օղլի Ազիզբեկովի անունը (1876-1918):*
111. *Տպագրվել է «Երկերում», էջ 502:*
112. *«...և մի՛ հավակնեք ասել դուք ձեզ, թէ Աբրահամը մեր հայրն է. ասում եմ ձեզ, որ Աստուած կարող է այս քարերից էլ Աբրահամի որդիներ դուրս բերել» (Մատթ. 3:9):*
113. *Տես Հին Կտակարան, Գիրք Ծննդոց, 19:26:*
114. *Տես Հին Կտակարան, Ելից, 32:*
115. *Տողերը՝ մասամբ փոփոխված, բերված են Ռաֆֆու «Ջալալեդդին» վիպակից. «Ո՛վ հայրեր, ո՛վ պապեր, այս գավաթը խմում եմ, բայց առանց*

նվիրելու ձեր ոսկորներին: Եթե դուք այս վանքերի տեղը, որոնցով լիքն է մեր երկիրը, բերդեր շինեիք. եթե դուք սուրբ խաչերի և անոթների փոխարեն, որ սպառեցին ձեր հարստությունը, զենքեր գնեիք, եթե դուք այն անուշահոտությանց տեղ, որ խնկվում են մեր տաճարներում, վառոդ ծխեիք, այժմ մեր երկիրը բախտավոր կլիներ: Այլևս քուրդերը մեր երկիրը չէին քանդի, մեր որդիքը չէին կոտորի և մեր կանայքը չէին հափշտակի...»:

116. *Տպագրվել է «Միհատորյակում», էջ 507:*
117. *Տես Նոր Կտակարան, Տասը կույսերի առակը (Մատթ. 25:1-13):*
118. *Տպագրվել է «Միհատորյակում», էջ 488:*
119. *Տպագրվել է «Միհատորյակում», էջ 491:*
120. *Մակարիոս III, Միքայել Խրիստոդուլոս Մուսկոս (1913-1977) -Կիպրոսի Հանրապետության առաջին նախագահը, պետական, քաղաքական և կրոնական գործիչ:*
121. *Տպագրվել է «Երկերում», էջ 507:*
122. *Մի կյանքի պատմություն-տպագրվել է «Միհատորյակում», էջ 442:*
123. *Նկատի ունի Իսրայելի 3-րդ թագավոր Սողոմոն Իմաստունին (մ.թ.ա. մոտ 975-928), որը պատմության մեջ հայտնի է Շլոմո (Խաղաղասեր) անվամբ: Աստվածաշնչում Սողոմոնը ներկայացվում է որպես արտակարգ իմաստուն, արդար դատավոր, համարվում գրական, փիլիսոփայական, բարոյագիտական ու բնագիտական բազմաթիվ երկերի հեղինակ: Սողոմոնին են վերագրվում Աստվածաշնչի կանոնական (Ժողովող, Առակք Սողոմոնի, Երգ Երգոց) և պարականոն (Իմաստություն Սողոմոնի, Սաղմոսք Սողոմոնի) գրքերը: Նրա «Ժողովողի» գիրքն սկսվում է հետևյալ նախադասությամբ. «Դավթի որդու՝ Երուսաղեմում Իսրայելի թագավոր Ժողովողի խոսքերը. ունայնություն ունայնությանց,-ասաց Ժողովողը,- ունայնություն ունայնությանց. ամեն ինչ ունայն է» (Ժող. 1:1-2):*
124. *Հովհ. Թումանյանի «Անուշ» պոեմի գլխավոր հերոսները:*
125. *Տպագրվել է «Միհատորյակում», էջ 387:*
126. *Տողեր՝ Ղազարոս Աղայանի «Արեգակ» բանաստեղծությունից՝ մի փոքր փոփոխված տարբերակով. Արև, արև, եկ, եկ,//Զիզի քարին վեր եկ.// Սև-սև ամպեր հեռացեք,//Արևին ճամփա տրվեք: ...Արևը հաղթեց ամպերին,//Շողքը ծգեց սարերին,//Զիզի քարը տես, տես//Պըսպղում է ոսկու պես:*
127. *Տպագրվել է «Մարդը տանու շորերով» (էջ 319), «Միհատորյակ» (էջ 361) և «Երկեր» (էջ 513) ժողովածուներում:*
128. *Տպագրվել է «Մարդը տանու շորերով» (էջ 317) և «Երկեր» (էջ 511) ժողովածուներում:*

129. Հերոստրատ-եփեսոսցի հույն, որն իր անունն անմահացնելու համար մ.թ.ա. 356թ. այրել է Եփեսոսի Արտեմիսի տաճարը (աշխարհի 7 հրաշալիքներից մեկը): Ըստ ավանդության՝ տաճարն այրվել է Ալեքսանդր Մակեդոնացու ծննդյան գիշերը: Հոնիական քաղաքների բնակիչները որոշել են մոռացության տալ Հերոստրատի անունը, սակայն նրա մասին հիշատակել է հույն պատմիչ և հռետոր Թեոպոմպոս Քիոսցին (մ.թ.ա. IVդ): Հերոստրատի անունն ստացել է բացասական իմաստ. Հերոստրատ անվանում են փառամոլ մարդկանց:
130. Տպագրվել է «Մարդը տանու շորերով» ժողովածուում, էջ 310:
131. «Ի սկզբանե էր բանն, և բանն էր Աստված»-«Ի սկզբանե էր բանն. և բանն էր առ Աստված. և Աստված էր բանն» (Հովհ. 1:1):
132. Տպագրվել է «Մարդը տանու շորերով» ժողովածուում, էջ 53:
133. Մթնոլորտում, տիեզերական տարածությունում և ջրի տակ միջուկային զենքի փորձարկումների արգելման մասին միջազգային պայմանագիրը կնքվել է Մոսկվայում 1963թ. օգոստոսի 5-ին (հայտնի է նաև որպես Մոսկովյան պայմանագիր) ԽՍՀՄ-ի, ԱՄՆ-ի և Մեծ Բրիտանիայի ներկայացուցիչների կողմից և ուժի մեջ է մտել 1963-ի հոկտեմբերի 10-ին:
134. Տպագրվել է «Միհատորյակում», էջ 509:
135. Տպագրվել է «Մարդը տանու շորերով» ժողովածուում, էջ 290:
136. Տպագրվել է «Միհատորյակում», էջ 489:
137. «...երկուսը մեկ մարմին պիտի լինեն» (Մատթ. 19:5):
138. Տպագրվել է «Միհատորյակում», էջ 481:
139. Տպագրվել է «Միհատորյակում», էջ 498:
140. Օբեխեսե-ОБХСС, ռուս. Отдел по борьбе с хищениями социалистической собственности (Սոցիալիստական սեփականության հափշտակությունների դեմ պայքարի բաժին) բառերի հապավումը: 1937-1946թթ. բաժինը գործել է ԽՍՀՄ ներքին գործերի ժողովրդական կոմիսարիատի կազմում, 1946-1991թթ.՝ ԽՍՀՄ ներքին գործերի նախարարությունում:
141. Տպագրվել է «Միհատորյակում», էջ 483:
142. Խոսքը վերաբերում է խորհրդահայ բանաստեղծ, դրամատուրգ Գուրգեն Բորյանի համանուն պիեսին՝ գրված 1961թ.:

1965

143. Միտքը վերցված է Ստալինի ճառից, որը 1935թ. մայիսի 4-ին արտասանվել է Կրեմլի պալատում ռազմական ակադեմիաների շրջանավարտների համար:
144. «Աստված օրհնեց նրանց ու ասաց. «Աճեցեք, բազմացեք, լցրեք երկիրը,

փիրեցեք դրան, իշխեցեք ծովի ձկների, երկնքի թռչունների, ողջ երկրի բոլոր անասունների ու երկրի վրա սողացող բոլոր սողունների վրա» (Ծնն. 1:28):

145. *Ռուս. Экономическая комиссия ООН для Африки (ՄԱԿ-ի տնտեսական հանձնաժողով Աֆրիկայի հարցերով) բառերի հապավումը: ԷԿԱ-ն ՄԱԿ-ի տարածաշրջանային մարմին է: Այն ստեղծվել է 1958 թվականին: ԷԿԱ-ի նպատակն է խթանել տարածաշրջանի երկրների տնտեսական և սոցիալական համագործակցությունը: ԽՍՀՄ-ը ԷԿԱ-ում ներկայացված է եղել որպես դիտորդ և նրա անդամ երկրներին գործնական աջակցություն է ցույց տվել տարբեր ոլորտներում:*
Չեկա-ռուս. Центральный Комитет (Կենտրոնական կոմիտե) բառերի հապավումը:
Չեկա-տես ծնթ. 49:

146. *Այն ժամանակ նրանց ասաց. «Գնացեք, տվեք կայսրինը՝ կայսեր և Աստծունը՝ Աստծուն» (Մատթ. 22.15-22, Մարկ. 12. 13-17, Ղուկ. 20. 20-26):*

147. *Արամ Անտոնի Անտոնյան (1875- 1952) -հայ լրագրող, պատմաբան, հրապարակագիր: Նրա «Մեծ ոճիրը» գիրքն ամփոփում է Մեծ եղեռնի վերաբերյալ մի շարք արժեքավոր վավերագրեր, վկայություններ, հրամանագրեր, ծածկագրեր, հեռագրեր, նամակներ ու գրություններ, որոնք ուղեկցվում են 1915 թվականի ջարդերից հրաշքով փրկված հեղինակի մեկնաբանություններով:*

148. *Տողեր Դուրյանի «Տրտունջք» բանաստեղծությունից. «Այժմեն թո՛ղ որ շանթ մ'ըլլամ դալկահար,//Պըլլվիմ անվանդ մոնչեմ անդադար...»:*

149. *Տողերը գրված են Ռաֆֆու «Սամվել» վեպում հնչած նախադասության նմանությամբ. «Թո՛ղ մարդիկ ինձ անիրավ կոչեն, թո՛ղ մարդիկ ինձ եղեռնագործ կոչեն, ահա՛ այն սուրը, որ սպանեց դավաճան հորը, կսպանե և ուրացող մորը...»:*

150. *Արտահայտությունը վերաբերում է ծանրաչափի խողովակում սնդիկից վերև եղած անօդ տարածությանը, որն առաջին անգամ հայտնագործել է իտալացի ֆիզիկոս և մաթեմատիկոս Էվանջելիստա Տորիչելլին (1608-1647): Փոխաբերական իմաստով այն գործածվում է «որևէ բանի լրիվ բացակայություն, բացարձակ դատարկություն» իմաստով:*

151. *Տպագրվել է «Երկեր» ժողովածուում, էջ 522:*

152. *Նկատի ունի Մովսես Խորենացուն և նրա «Ողբը», որն սկսվում է հետևյալ նախադասությամբ. «Ողբամ զքեզ, Հայոց աշխարհ, ողբամ զքեզ, հանուրց հիւսիսականաց վեհագոյն. զի բարձաւ թագաւոր եւ քահանայ, խորհրդական եւ ուսուցող. վրդովեցաւ խաղաղութիւն, արմատացաւ անկարգութիւն. դրդուեցաւ ուղղափառութիւն, կայկայեցաւ տգիտութեամբ*

չարափառութիւն»:

153. *1949թ. Չինաստանի Կոմունիստական կուսակցությունը Մաո Ցզե-Դունի գլխավորությամբ իր տիրապետության տակ վերցրեց մայրցամաքային Չինաստանը և այն հռչակեց որպես Չինաստանի Ժողովրդական Հանրապետություն: Նույն թվականին Չինաստանի Հանրապետության կառավարությունը, որը գլխավորում էր Չան Կայշին, իր զինվորների և երկու միլիոն փախստականների հետ նահանջեց Թայվան և իր կառավարությունը օրինական հռչակեց ողջ Չինաստանի համար, թեև չուներ իրական իշխանություն: ՄԱԿ-ը մինչև 1971թ. Չինաստանի Հանրապետությունը ճանաչվել է որպես Չինաստանի օրինական կառավարություն: 1971թ. հոկտեմբերի 25-ի ՄԱԿ-ի ընդունած թիվ 2758 բանաձևով Չինաստանի ժողովրդական հանրապետությունը փոխարինեց Չինաստանի Հանրապետությանը ՄԱԿ-ում և դարձավ Անվտանգության Խորհրդի մշտական անդամ:*

154. *Լեռ Կամսարը նկատի ունի չեխական եկեղեցական ռեֆորմատոր (բարենորոգիչ), պապականության հակառակորդ, կաթոլիկ եկեղեցու կատարած շահագործությունների դեմ կռվող Յան Հուսին (1369-1415): 1415թ. նրան այրեցին խարույկի վրա: Նրա հետևորդները ապստամբություն բարձրացրին իշխանների և բարձր հոգևորականների դեմ և այդպիսով մասնակի իրավունքներ (կաթոլիկների նկատմամբ) ձեռք բերին:*

155. *«Քո սուրը ետ դիր իր տեղը, որովհետև ովքեր սուր են վերցնում, սրով կընկնեն» (Մատթ. 22:52):*

156. *«Կեղծավո՛ր, նախ հանի՛ր քո աչքից այդ գերանը և ապա հստակ կտեսնես՝ քո եղբոր աչքից շյուղը հանելու համար» (Մատթ. 7:5):*

157. *«Այլ երբ դու ողորմություն անես, թող քո ձախ ձեռքը չիմանա, թե ինչ է անում քո աջը, որպեսզի քո ողորմությունը ծածուկ լինի, և քո Հայրը, որ տեսնում է, ինչ որ ծածուկ է, կհատուցի քեզ հայտնապես» (Մատթ. 6:3-4):*

158. *Հրազդան քաղաքը մինչև 1959թ. կոչվել է Ներքին Ախտա:*

159. *Գրել է մահվան շեմին՝ 1965թ., երևի այն պահին, երբ իմացել է, որ երկար տարիներով չարչրկված «Մարդը տանու շորերով» ժողովածուն լույս տեսնելուց հետո կալանքի է ենթարկվել ընդամենը մի մարդու անուն հնչեցնելու պատճառով (քաղաքական բոլոր պամֆլետները զտված էին): Երևի մտածել է՝ եթե այս անմեղ ժողովածուն արգելափակվեց, հապա ի՞նչ պիտի լինի իր անթիվ-անհամար «մեղսոտ» անտիպ ձեռագրերի ճակատագիրը: (Այդ արգելանքի պատճառով կաթված ստացավ և մահացավ) (ծնթ.՝ Վ.թ.):*

160. *Նիրվանա-Բուդդայական ուսմունքի համաձայն՝ աշխարհիկ ամեն ինչից*

հրաժարվելու միջոցով ձեռք բերվող երանավետ հանգստի վիճակ, որը ցույց է տալիս մարդու հոգևոր զարգացման բարձրագույն կետը, վերջնական նպատակը:

161. *Նկատի ունի Վ. Տերյանի՝ «Մոռանա՛լ, մոռանա՛լ ամեն ինչ» տողով սկսվող բանաստեղծությունը:*
162. *Դիոգենես Սինոպացի (մ.թ.ա. մոտ 404–323) -հույն փիլիսոփա, Կինիկյան դպրոցի հիմնադիր: Դիոգենեսը ընդունում էր միայն եզակիների գոյությունը՝ քննադատելով գաղափարների՝ որպես ընդհանուր գոյությունների մասին Պլատոնի ուսմունքը: Նա վճռականորեն մերժել է քաղաքակրթության պատմական նշանակությունը, պահանջել վերադարձ նախնադարյան վիճակին կամ նույնիսկ կենդանական կյանքին: Մշակույթը հայտարարել է բռնություն մարդու վրա, մերժել պետության անհրաժեշտությունը, իրեն հայտարարել աշխարհի քաղաքացի: Բարոյական և հասարակական կյանքի նկատմամբ Դիոգենեսի ունեցած անտարբերությունը հասցվել է կյանքի լոկ ամենաանհրաժեշտ պահանջմունքների ընդունմանը: Ավանդույթի համաձայն՝ Դիոգենեսը ապրել է տակառում՝ դրանով ընդգծելով հարմարավետ կյանքի նկատմամբ իր ունեցած անտարբերությունը: Նա մերժել է նաև բազմաստվածությունը, կրոնական ողջ պաշտամունքը, քննադատել է դասային տարբերությունները, հարուստների ցոփությունը, քարոզել ասկետիզմ:*
163. *1959թ. հոկտեմբերի 4-ին Խորհրդային Միությունը անօդաչու տիեզերանավ ուղարկեց դեպի Լուսին, որի ընթացքում առաջին անգամ Լուսնի հակառակ կողմի պատկերներ ստացվեցին:*
164. *Ալեքսանդր Վասիլի Կոլչակ (1874-1920) - ռուս բևեռախույզ, Ռուսական կայսրության նավատորմի ծովակալ (1917): Պայքարել է 1917թ. Փետրվարյան հեղափոխության դեմ: Սպիտակգվարդիականների պարտությունից հետո եղել է անկախ զորամիավորումների դավադրության զոհը, որոնք նրան հանձնել են տեղական բոլշևիկյան մարմիններին:*
165. *Անտոն Իվանի Դենիկին (1872-1947) - Ռուսաստանի քաղաքացիական պատերազմում Սպիտակ շարժման առաջնորդ, զորապետ, հասարակական և քաղաքական գործիչ, գրող, հուշագրող, հրապարակախոս և ռազմական վավերագրող:*
166. *Տողեր՝ Պետրոս Դուրյանի «Տրտունջք» բանաստեղծությունից. «Եւ մահամերձն ալ կուզէ երկու բան,//Նախ՝ կեանքը, վերջը՝ լացող մ'իր վրան»:*
167. *Խաչիկ Խլղաթի Մուղդուսի (1895-1938) - Հայաստանի ԽՍՀ ՆԳԺԿ վարչության ղեկավար և ներքին գործերի նախարար, պետանվտանգության ավագ մայոր: Մուղդուսին ՆԳԺԿ ղեկավար էր, երբ 1936թ. սպանվեց Ա. Խանջյանը: Հայաստանում Ա. Խանջյանի ինքնասպա-*

նության պաշտոնական հայտարարությանը չհավատացողներից 800 մարդ ձերբակալվեց Մուղդուսու ջանքերով: 1937թ. սեպտեմբերին ձերբակալվել է ԽՍՀՄ Գերագույն դատարանի ռազմական կոլեգիայի կողմից և գնդակահարվել 1938թ. փետրվարին՝ Մոսկվայում:

168. *Սերո Նիկոլայի Խանզադյան (1915-1998) -Սերո Խանզադյանին ժողովրդականություն է բերել «Մխիթար Սպարապետ» (1961, կինոնկար՝ «Հուսո աստղ», 1978) ծավալուն պատմավեպը՝ նվիրված հայ ժողովրդի XVIIIդ. ազատագրական շարժմանը:*

169. *Զարգանդ Դարյան (Զարգանդ Մովսեսի Մովսիսյան (1912-1984) -հայ արձակագիր, դրամատուրգ: «Արծիվ Վասպուրականի» մեծածավալ վեպը գրել է 1965 թվականին: Վեպը պատկերում է 1915 թվականի Վանի հերոսամարտը:*

170. *ՆԷՊ-ռուս. новая экономическая политика (նոր տնտեսական քաղաքականություն) բառերի հապավումը: 1921թ. խորհրդային իշխանության ընդունած քաղաքականությունը՝ կապիտալիստական տարրերի գոյությունը ժամանակավորապես թույլ տալու մասին՝ իշխող բարձունքները պրոլետարական պետության ձեռքին մնալու պայմաններում: Խորհրդային կառավարությունը Նոր տնտեսական քաղաքականությունն իրագործեց մինչև 1930-ական թվականների կեսերը:*

171. *Թերսիտես-հասարակ հույն զինվոր, որը Տրոյայի փակ գումարված զորաժողովում համարձակվել էր վեճի բռնվել Ագամեմնոնի և մյուս առաջնորդների հետ, որի համար էլ նրան դաժանորեն ծեծել է Ոդիսևսը: Ըստ ավելի ուշ առասպելների՝ Թերսիտեսին սպանել է Աքիլլեսը այն բանի համար, որ իրեն զրպարտել է և անարգել ամազոնուհիների սպանված թագուհու դիակը: Հոմերոսը «Իլիականում» Թերսիտեսին պատկերել է ծաղրանկարային գծերով (նա շաղակրատ է, ոխակալ, փգեղ):*

172. *Լայկան Երկրի ուղեծիր դուրս բերված առաջին կենդանին էր: Նա փիեզերք է ուղարկվել 1957թ. նոյեմբերի 3-ին խորհրդային «Սպուտնիկ 2» արբանյակով: ԽՍՀՄ-ում հայտարարում էին, որ Լայկան առանց փառապանքի սատկել է թռիչքից մեկ շաբաթ անց: Պարզվում է՝ իրականում շունը սատկել է թռիչքից 5-7 ժամ անց խուճապից և շատ բարձր ջերմաստիճանից:*

173. *«Պատասխանի եւ նմա Յիսուս՝ եւ ասէ. Գրեալ է՝ եթէ ոչ հացիւ միայն կեցցէ մարդ, այլ ամենայն բանիւ Աստուծոյ»: (Հիսուս նրան պատասխանեց և ասաց. «Գրված է. միայն հացով չէ, որ կ'ապրի մարդ, այլ՝ Աստծու ամեն խոսքով» (Ղուկ. 4:4):*

174. *Քրիստափոր Կնյազի Թափալցյան (1910-1967) -հայ արձակագիր: Հրատարակվել են նրա «Վիկտորիա» (1937), «Կյանքի արշալույսը» (1939),*

«Պատերազմ» (հ.1-4, 1946-65), «Ոսկե հովիտ» (1955), «Հայրենաշեն» (գիրք 1-2, 1963-73) վեպերը:

175. *Տես Հին Կտակարան, Գիրք Ծննդոց 11:1-9:*

176. *Տողերը բերված են Մ. Փորթուգալյանի «Հառաչանք» բանաստեղծությունից, որի խոսքերով գրված երգը եղել է հայ ֆիդայիների սիրված երգերից մեկը: Զորավար Անդրանիկը հուզվում ու կերպարանափոխվում էր այդ երգի ազդեցության տակ. «Լսում էր «Նպատակիս հասնիմ միայն» երգը, խիստ ազդվում, ու ժեռ քարի պես ամուր տղամարդու աչքերին արցունքի կաթիլներ էին երևում» (Ռ. Սիմոնյան «Անդրանիկ. Սիբիրական վաշտի ոդիսականը», Եր., 2006, էջ 78): Առաջին մեջբերումը փոքրինչ տարբերվում է բնագրից. «Ա՜խ, Հայաստան, սիրտս ու հոգիս//Քեզ նվիրեմ, ընդունե՜»:*

177. *«Հայոց աղջիկնե՛ր, ձեր հոգուն մատաղ» հայտնի երգի խոսքերի հեղինակն է հայ բանաստեղծ, մշակութային գործիչ, մասնագիտությամբ տնտեսագետ Գևորգ Միրիմանյանը (1831-1853): Միրիմանյանը սովորել է Լազարյան ճեմարանում, ապա Դորպատի համալսարանում (1849-1853)՝ Ռ. և Ք. Պատկանյանների, Գ. Դոդոխյանի հետ: Ուսումնառության տարիներից զբաղվել է գրականությամբ, ձեռագիր վիճակում ուսանողության շրջանում տարածել է Խաչատուր Աբովյանի «Վերք Հայաստանի» վեպը:*

178. *Արղության-Երկայնաբազուկներ - հայ իշխանական տոհմ՝ սերված Զաքարյաններից: Ամիրսպալասար Սարգիս Զաքարյան-Երկայնաբազուկը (ծն. անհայտ-1187) վրաց Գեորգի III թագավորից ստացել է «Մխարգրձելի» (Երկայնաբազուկ) անունը: Զաքարյանների ժառանգորդները 13-րդ դարի վերջում որպես վասալ՝ մոնղոլների Արղունխանից ստացել են «Արղության» կամ «Արղուն» անունը, որը չաղաթայերեն նշանակում է «թիկունք», «կռնակ» և համապատասխանում է վրացերեն «Մխարգրձելի» անվանը: Այսպիսով՝ Զաքարյանների ժառանգորդները կոչվել են Արղության-Երկայնաբազուկներ: Կամսարն այստեղ բառախաղ է անում «Երկայնաբազուկ» անվան հետ:*

179. *Չժոու են Լայ (1898-1976) - քաղաքական գործիչ, Չինաստանի Ժողովրդական Հանրապետության առաջին վարչապետը (1949 թվականից մինչև կյանքի վերջ), 1954-1976թթ. Չինաստանի քաղխորհրդի նախագահը: Հմուտ դիվանագետ լինելով՝ նա նպաստում էր Արևմուտքի հետ խաղաղ գոյակցությանը, միաժամանակ փորձում էր պահպանել հարաբերությունները Խորհրդային Միության հետ: Նրա նրբանկատությունը քաղաքականության մեջ ու սկզբունքայնությունն աշխատանքում «մշակութային հեղափոխության» ընթաց-*

քում ապահովեցին նրա՝ վարչապետի պաշտոնի պահպանումը, իսկ դիվանագիտական միտքն ու բարձր աշխատունակությունը արժանացրին համաժողովրդական փառքի:

180. *Գեորգի Վալենտինի Պլեխանով (1856-1918) -մարքսիզմի ռուս տեսաբան և պրոպագանդիստ: Բացասական էր վերաբերվում Հոկտեմբերյան հեղափոխությանը, քանզի կարծում էր, որ Ռուսաստանը պատրաստ չէ սոցիալիստական հեղափոխությանը: Կարծում էր, որ իշխանության զավթումը «մեկ դասակարգի, առավել ևս մեկ կուսակցության կողմից» կարող է ողբերգական հետևանքներ ունենալ:*

181. *Տողեր՝ Ավետիք Իսահակյանի «Աբու Լալա Մահարի» պոեմից. «Սրիկա է նա, ով հայր է լինում, ով երանավետ ծոցից ոչնչի//Գոյության կոչում թշվառ հյուլեին և գլխին վառում գեհենն այս կյանքի» (Սուրահ 2):*

182. *Տպագրվել է «Միհատորյակում» (էջ 516), «Երկերում» (էջ 526):*

183. *Իվան Անդրեյի Կռիլով (1769-1844) - ռուս բանաստեղծ, առակագիր, թարգմանիչ: Կռիլովն ավելի քան 200 առակների հեղինակ է, որոնք լույս են տեսել 1809-1843թթ.:*

184. *Լեռ Կամսարը նկատի ունի Ա. Պուշկինի «Մարգարե» բանաստեղծությունը, որը գրվել է 1826թ., երբ բանաստեղծը աքսորված էր Միխայլովսկ՝ իբրև պատիժ դեկաբրիստների հետ կապի համար: Բանաստեղծությունը գրվել է հուլիսի 13-ին հինգ՝ դեկաբրիստների կախաղան բարձրացվելուց հետո:*

185. *Նկատի ունի Երվանդ Օտյանի «Ընկ. Բ. Փանջունի» վեպը:*

186. *Մկրտիչ Սարոյան (1899-1966) - Մ. Սարոյանի «Այրող հուշեր» վեպը տպագրվել է 1958թ.՝ «Նվիրում եմ մորս՝ Սրբուհի Սարոյանին» ընծայականով:*

187. *Ծերուն Թորգոմյան (Դեղտրիկյան (1896-1986) -հայ արձակագիր, ՀԽՍՀ վաստակավոր գործիչ: Ծնվել է Արևմտյան Հայաստանի Վան քաղաքում: 1915թ. ընտանիքով գաղթել և բնակություն է հաստատել Թիֆլիսում: Այստեղ Թորգոմյանն աշխատել է «Համբավաբեր» շաբաթաթերթում որպես քարտուղար: 1918թ. Թիֆլիսում նրա խմբագրությամբ լույս է տեսել «Հրազդան» գրական-գեղարվեստական ալմանախը:*

188. *Արամ փաշա (1879-1919) - Արամ Մանուկյանը (Արամ փաշա) հայ ազգային-ազատագրական շարժման նվիրյալներից է, XX դարի սկզբի ազգային-քաղաքական ու պետական, Հայաստանի առաջին հանրապետության հիմնադիր գործիչներից, ՀՀԴ կուսակցության անդամ: Արամ Մանուկյանը հեղափոխական անունն է 1904թ., իսկական անուն-ազգանունը Սարգիս Հովհաննիսյան է: Արմենակ Եկարյանի և այլ ազգային գործիչների հետ կազմակերպել և ղեկավարել է 1915թ. Վանի*

ինքնապաշտպանությունը, որի հաղթական ավարտից հետո ղեկավարել է Վանի նահանգապետությունը (գոյատևել է 70 օր՝ անկում ապրելով ռուսական զորքերի անակնկալ հեռանալուց հետո): 1918թ. մայիսի 28-ին Հայաստանի Հանրապետության հռչակումից հետո նա ղեկավարել է երկիրը՝ մինչև Թիֆլիսում ստեղծված Հայաստանի կառավարության ժամանումը (հուլիսի 23-ին) Երևան: Մանուկյանը Հայաստանի առաջին հանրապետության փաստացի հիմնադիրն է:

189. *Արմենակ Գրիգորի Եկարյան (1870-1925) - ազգային-ազատագրական շարժման գործիչ: 1915թ. Վանի ինքնապաշտպանության ղեկավարներից էր, եղել է քաղաքի մարտական ուժերի, հայկական ոստիկանության պետը:*
190. *Փանոս Թերլեմեզյան (1865-1941) - հայ նկարիչ և հասարակական գործիչ: Որպես ղեկավար մասնակցել է Վանի ինքնապաշտպանության կռիվներին:*
191. *Նկատի ունի 1956թ. Հունգարիայում տեղի ունեցած զինված ապստամբությունը կոմունիստական դրածո վարչախմբի դեմ, որը դաժանաբար ճնշվեց խորհրդային զորքերի կողմից:*
192. *Տես ծնթ. 6:*
193. *Ֆիդել Ալեխանդրո Կաստրո Ռուս (1926-2016) - կուբացի հեղափոխական, Կուբայի նախագահ, Կուբայի հեղափոխական զինված ուժերի մայոր: Քաղաքական կողմնորոշումներով լինելով մարքսիստ-լենինիստ՝ նա իր կառավարման տարիների ընթացքում Կուբան դարձրել է սոցիալիստական պետություն:*
194. *Տողեր Ջիվանու՝ «Կուգան ու կերթան» բանաստեղծությունից (1892). «Աշխարհը հյուրանոց է, Ջիվան, մարդիկը հյուր են,//Այսպես է կանոնը բնական, կուգան ու կերթան»:*
195. *«Քո երեսի քրտինքով ուտես հացդ մինչև հող դառնալդ, որից ստեղծվեցիր, որովհետև հող էիր և հող էլ կդառնաս» (Ծնն. 3:19):*
196. *Մեծ Բրիտանիայի և Ավստրո-Հունգարիայի ջանքերի արդյունքում 1878թ. հունիսի 1-ից հուլիսի 1-ը Բեռլինում հրավիրվում է միջազգային վեհաժողով՝ Սան Ստեֆանոյի պայմանագրի վերանայման նպատակով (Ռուսաստանի և Օսմանյան կայսրության միջև 1878թ. փետրվարի 19 (մարտի 3-ին) Կոստանդնուպոլսի արվարձան Սան Ստեֆանոյում կնքված նախնական հաշտության պայմանագիր, որով ավարտվեց 1877-1878թթ. ռուս-թուրքական պատերազմը): Մասնակից պետություններն էին՝ Ռուսաստանը, Օսմանյան կայսրությունը, Անգլիան, Ավստրո-Հունգարիան, Ֆրանսիան, Իտալիան և Գերմանիան: Վեհաժողովն ավարտվել է փաստաթղթի ընդունմամբ, որը պատմության մեջ մտել է Բեռլինի*

դաշնագրություն (փրակտատ) անունով: Վեհաժողովի արդյունքներից մեկն այն էր, որ Արևմտյան Հայաստանի հարցը միջազգային դիվանագիտության մեջ մտավ որպես «Հայկական հարց»:

197. «Եփիս կորիր, սատանայ»-«Երթ յեփս իմ սատանայ. զի գրեալ Տեառն Աստուծոյ քում երկիր պագցես, եւ զնա միայն պաշտեսցես» (Եփևս գնա, սատանա, որովհետև գրված է՝ պիտի երկրպագես քո Տէր Աստծուն և միայն նրան պիտի պաշտես, Մատթ. 4:10):

198. ՊԱՋ-Ավիաքիմ - պաշտպանության աջակցության ընկերություն ավիացիայի և քիմարդյունաբերության բնագավառում (1927-48 թթ.): ԴՕՍԱԱՖ-ի (ռուս. հպվ.՝ ДОСААФ: Добровольное общество содействия армии, авиации и флоту-բանակին, ավիացիային և նավատորմին աջակցող կամավոր ընկերություն) նախատիպն է:

199. «Բենիամինի որդիներից սերված Կիս անունով մի ուժեղ մարդ կար... Նա Սավուղ անունով բարի ու թիկնեղ մի որդի ուներ» (Թագ. 9:1-2):

200. Լեռ Կամսարը չգիտեր, որ Էդվարդ Թոփչյանը չի մասնակցելու իր հրաժեշտի արարողությանը (ծնթ.՝ Վ.թ.):

201. Սա Լեռ Կամսարի վերջին ուղերձն է իր ժողովրդին՝ կարապի երգը՝ գրված մահվանից մեկ շաբաթ առաջ: Ավարտված է հինգ հսկա կախման կետերով և մեծ հարցական նշանով, որից հետո՝ մի մեծ լռություն... Կյանքի ավարտին ինչո՞ւ տագնապեց, ինչ կանխազգաց մեծն տեսանողը՝ դժվար չէ ըմբռնել (ծնթ.՝ Վ.թ.):

202. Համազասպ (Համազասպ Խաչատուրի Սրվանձտյան (1873-1921) - հայ ազգային-ազատագրական շարժման գործիչ: Գարեգին Սրվանձտյանի եղբորորդին: Եղել է 1915թ. մայիսին Վանն ազատագրող հայ կամավորներից. նրա ջոկատն առաջիններից մեկը մտավ Վան: Հայաստանում խորհրդային իշխանության հաստատումից հետո Խորհրդային Հայաստանի զինվորական կոմիսար Ավիս Նուրիջանյանի հրավերով, որի հետ մտերմացել էր Բաքվում, եկել է Երևան՝ նոր իշխանությանն օգտակար լինելու և համագործակցության մտադրությամբ, սակայն, ձերբակալվել է բոլշևիկների կողմից և 1921թ. փետրվարի 18-ի նախօրեին կացնահարվել Երևանի բանտում:

203. Ավիս (Ավետիս) Սողոմոնի Նուրիջանյան (1896-1937) - հեղափոխական, կուսակցական ու պետական գործիչ: Հայտնի է դաժան ռեպրեսիվ գործողություններով, մասնավորապես դաշնակցականների և «դաշնակցական» պիտակավորված մարդկանց դեմ դաժան պայքարով: Համարվում է, որ Նուրիջանյանի գործողությունների դաժանությունը 1921թ. փետրվարյան ապստամբության պատճառներից մեկն է: 1937թ. դարձել է ստալինյան տեռորի զոհ:

204. Գևորգ Աթարբեկյան-տես ծնթ. 48:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Կազմողի կողմից 3
Սարերէն վեր կանգնած գրագէտը՝ լեռը 5
Լեռ Կամսար երգիծաբանին սէգ ճակատին դիմաց 7
Տառապող մարդը եթէ ծիծաղիլ չգիտնայ, չ'ապրիր 10

1964

Խենթի երազ 15
Խոսում եմ Աստծու հետ կլոր սեղանի շուրջ 19
Մի կնոջով բազմակնություն (ոչ երեխաների համար) 23
Լեգենդար քոյրեր 25
Հայհոյանքի էությունը 26
Երեք ազգեր... մեկ բնակարանում 29
Ձմերուկի, բնակարանի և ամուսնության մասին 32
Քարտեզի առջև 34
Վերջաբան 36
Օրվա նոթեր (մանրապատում) 37
Վերջնահաշիվ 38
Մարդը զանազան դիրքերով 41
Բանջարապատում 43
Անմեղ մեղավոր 43
Անհիմն կասկածներ 44
Զբռնված փախստականը 44
Ինչ է սովորույթը 44
Մարդկային բնազդ 45
Հրաշքների աշխարհում 45
Ֆինանսական վիշտ 48
Ամենօրյա մահկանացուն 51
Երկիրն ազդում է երկրի վրա 54
Աշխարհի երկրորդ ստեղծագործությունը 56
Սեր և ատելություն 59
Հոդվածների վերնագրերը 62
Զրույց մի ափ հողի հետ 64
Արդյունաբերական տոնախմբություն 69
Զինաթափություն և Ժնևի կոնֆերանսը 70
Գրականություն և... կաթ 73
«Կուլտուրական կապ» 75
Մեռնողի հուշատետրից 77
Համեմատական կենդանաբանություն 79
Նամակ Աստծուն 81

Գույժի հաղորդումը 83
Սովետական տոները 84
Ապահարզան 88
Խրուշչովի անկումը 90
Մորուքի փիլիսոփայություն 92
Նյութեր՝ իմ կենսագրության համար 95
Ես մաքսատան պաշտոնյա եմ 99
Գրախոսություն 103
Ամերիկայի մտադրությունները 106
Ընդհանուր պատմություն 109
Սոցիալիստական ընտանիք 112
Իսրայելն անապատում 115
Զուղղված վրիպակներ 119
Մի զարմանքի փարատում 120
Հուշեր Հոկտեմբերյան հեղափոխությունից 121
Նախանձի չար տեսակը 123
Նամակ Սփյուռքի հայությանը 128
Ամեն դժբախտություն իր բարեբախտությունն ունի 131
Երկընտրանք 136
Երբ ես զայրացած եմ 137
Խոսքեր, որոնք գործ չեն դառնում 142
Քրիստոնեություն և սոցիալիզմ 144
Թոռ 148
Բուռն բողոք 149
Մահվան կամերայում 151
Կոմունիզմի սահմանները 153
Աշխարհում անպետք բան չկա 157
Անակնակալ թռիչք 160
Հայ գրական անդաստանը 168
Դատախաղ 170
Զլսված հրաշք 171
Սատանայի գոյության գիտական հիմնավորումը 173
Մարդ և Աստված 176
Ամառը գյուղում 179
Աստվածային դասակարգում 182
Նամակ Ֆրանկոյին 183
Գրականությունն ըստ Պլատոնի 185
Փողոցում 188
Ծեծի պատմական տեսությունը 190
Ի՞նչ է երևակայությունը 192
Անծրագիր երազ 195
Նոր մարդ 196

Հալած յուղ 199
Հողային հարցը գերեզմանոցում 202
Հեքիաթ մանուկների համար 205
Երանելի ժամանակներ 207
Մեծ հիմարություն 209
Կոնսերվա 210
Խնայողությամբ գործածել սուտը 213
Անոտ ոտանավորներ 215
Ինչ են ուտում աստվածները 218
Կամակոր կնոջ սանձահարումը 220
Երկու չարիք, որի փոքրագույնը գոյություն չունի 223
Սահարա 225
Աշխարհայացք 228
Բանտարկյալի հուշերից 233
Ամերիկյան ընտրությունները 240
Տգեղ սովորություն 242
Երեքհարկանի տուն 243
Սկզբունքային անամոթություն 247
Ապօրինի գործարք 249
Ամերիկա և Թուրքիա 250
Մարքսիզմ՝ միայն 252
Խեչափառն ու կարապը (Առանց ձկան) 254
Ինչից են առաջանում մեծ գյուտերը 255
Հաագայի միջազգային դատարանը 257
Օրենք 260
Տարածության փիլիսոփայություն 263
Պատմության ապօրինի զավակը 266
Ո՞ւր է գնում մարդկությունը109 270
Քիմիա 274
Անցավոր ու անանց կյանքի մասին 277
Բու 280
Սիրո ջերմաչափ 281
Խորհուրդ 282
Հանցանք և պատիժ 284
Մշակենք մեր ձայները 288
Աշակերտական գանգատ 291
Անժամանակ մահ 292
Ամուսնական աղետյալներ 294
Հին տուն 296
Մի շան պատմություն 299
Ինչի՞ վրա եմ աշխատում 300
Մսամթերում 303

Բարոյական մարդակազմություն 305
Երբ քանակը դառնում է որակ 307
Զրույց կապիկի հետ 310
Իմ հարևանը..... 313
Ավտոմոբիլի մի սիգնալ, որ կործանում է ողջ աշխարհը 314
Բախտի բերմունք..... 318
Աշխարհի կողմերը 320
Ձախորդ Փանոսը..... 322
Բաց նամակ փողոցով անցնող քահանային 325
Մի կյանքի պատմություն 327
Տավարի միս 329
Մանկական գրականություն..... 332
Պարոնյանը Հայաստանում 334
Պարոնյանի գրական հասցեն 338
Չնախատեսված աղետ.....340
Ես ու իմ աչքը 343
Հիգիենիկ մարմնամարզություն.....345
Հումանիտար լեզվաբանություն 347
Վերջ տալ կամակորությանը.....352
Բարի խորհուրդ 355
Միայն մի օր դարերի արանքում 357
Զգուշանալ չափազանցությունից 360
Ժամանակավոր կարգադրություն 361
Անուշադրության սխալ 364
Մեռելների արշավանք 365
Հայտարարություն134.....366
Բազմացման նոր եղանակ.....367
Մի բառի սխալ թարգմանությունը տեսեք, թե ինչ տեղաշարժեր
կարող է առաջացնել կենդանական աշխարհում 368
Դեգրադացիա.....370
Ամուսնության ուրվագիծ.....371
Փախստականը..... 374
Ամեն ինչում խնայողություն 375
Ճշմարտության տեսակները 377
Համախառն ապրումներ.....379
Իմ հարևանները 381
Տասնորդական կոտորակ.....382
Նորարարական առաջադրանք 385
Օգնություն գողերին.....386
Հաջող որս փայտե հրացանով.....387
Ջրից՝ ջրհեղեղ 389
Վերջ վաշխառությանը 392

Սինթետիկ երեխա 394
Մեքենայի վնասները 397
Նոր տարի 398

1965

Լիպոյի արկածները 404
Կարիք, որ դարձավ չարիք 404
Քեֆ 406
Գրական պաղպաղակ 407
Մեկ, թե երկու 407
Պատիժը Պարսկաստանում և Սովետական Ռուսաստանում 412
Բժշկական ասուլիս 414
Աշխարհն ինչպես որ կա և ինչպես չպետք է լիներ 416
Շտապ օգնություն 418
«Աշխարհ» 419
Խաշ ուտելու վնասները 423
Չոր և կակուղ «ընկերները» 425
Ծերություն 427
Անավարտ, կիսաֆաբրիկատ մտքեր 430
Մայր Արաքսի ափերով 430
Թարգմանություն 432
Երկրորդ գիշեր 433
Կույրերի հաշվառում 436
Երևակայության ուժը 439
Վերջաբան 446
Ստեղծագործական հարցեր 449
Տարածություն 453
Սխալն ուղղելու անթույլատրելի ձև 455
Այս գիշերը 456
Հոգի և մարմին 461
Դրախտ 463
Բարոյական անբարոյականություն 467
Տարածայնություններ երկնքում 472
Ճնճղուկներ 475
Պետական երեխայություն 476
Դանակը պետք է տանել եզի մոտ 479
Բոլոր չարիքների միակ պատճառը 481
Մտերմական զրույց Ամերիկայի հետ 485
Մարդ ու կին՝ որպես աշխարհի միակ անքակտելի միացումներ 489
Բուժիչ դեղ 492
Հայ-թռչնական հարաբերությունները 495
Ամառանոցում 497

Կյանքը... հետմահու 499
Աստված ամենագետ է 502
Աստծու ազգությունն ու լեզուն 503
Հնակարկատի մոտ 504
Անօգնական դիրեկտորը 505
Երկու քարի արանքում 507
Բարեխառնված կյանք 508
Կյանքն ու արվեստը 510
Զրույց աստվածաբանական մի քանի ասպեկտների մասին 513
Բարեբախտ պատահականություն 519
Օրենսդրական հարցեր 524
Սովետական օրենսգիրքը 527
Գերեզմանաքար 530
Սիբիրի ճանապարհին 533
Առաջաբան 533
Ինչպես են աստվածներն ուղղում իրենց սխալները 541
Օրենքներից շրջանցում 543
Անծանոթության տեսակները 545
Երկնքում 547
Աշխարհի առաջին դասարանը 549
Օազիս Սահարայում 552
Քաղաքակրթությունը տանում է մարդուն դեպի երջանկություն 553
Արքայության մկները 556
Մանկավարժական մահ 559
Զուր ջանքեր 561
Երկու քարի արանքում 566
Վառելիքի հարցը Հայաստանում 570
Փինաչու մոտ 572
Տրանզիտով ամուսնություն 574
Այն մասին, թե ինչպես սուտը դարձավ ճիշտ 577
Բաբելոնի երկրորդ աշտարակաշինությունը 579
Երերուն վիճակ 581
Քամու դերը բժշկության մեջ 583
Խաչաձև ամուսնություն 585
«Գաղտնի բաժին» 588
Հիվանդանոցում 589
Ադամ երկրորդ 591
Անժամանակ պառաված աղջիկը 594
Պետական ճանաչողություն 595
Ես ու իմ ընկերը 597
Անապատից դեպի կյանք 599
Անստույգ երազ 601

Կարինե 605
Սովետական օրացույց 607
Քաղաքական խեցգետինը (Այն, որ հետ-հետ է գնում) 608
Զորախաղ 610
Գրողը պետք է լինի մարգարե 613
Աստվածային կալկուլյացիա 616
Իսկական վայրենիներ 621
Հերմաֆրոդիտ դերասաններ 623
Հաշվապահական զրույց 626
Գյուտ 628
Կոմունիզմ 632
Տնամերձ 633
Հարստությունը երջանկացնո՞ւմ է մարդուն 635
Սոցիալիզմ շինելու համառոտ ձեռնարկ 638
Փիլիսոփայություն 640
Կոնսերվի գործարան 642
Գժանոցում 644
Ներցիա 646
Մի սուգ, որ ենթակա չէ մխիթարության 647
Կյանքի միակ կողմնացույցը 649
Քաղաք և գյուղ 651
Մրցավազք 652
Հին ու նոր աստվածներ 654
Կրկնակի Դիոգենես 661
Առանց դավանանքի 663
Ահազանգ 666
Ուշացած հայտնություն 667
Լավ հարևաններ 670

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ 673

Լեռ Կամսար

ԾԵՐՈՒԿՆԵՐԻ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ.

Ֆելիետոններ

1964-1965թթ.

Խմբագրումը և
ծանոթագրությունները՝ **Քրիստինե Հովհաննիսյանի**
Կազմող՝ **Վանուհի Թովմասյան**
Կազմը՝ **Գևորգ Մշեցի-Ջավրուշյանի**
Մուտքագրումը՝ **Քրիստինե Հովհաննիսյանի,**
Վանուհի Թովմասյանի
Սրբագրիչներ՝ **Քրիստինե Հովհաննիսյան, Հայկ Խեմչյան**
Համակարգչային ձևավորումը՝ **Հեղինե Փիլոյանի,**
Ալվարդ Օհանջանյանի

թվագրվում է 1915-ին

ԷԴԻԹ ՊՐԻՆՏ
Երևան, Թումանյան 12
հեռ.՝ (374 10) 520 848
www.editprint.am
info@editprint.am

EDIT PRINT
12 Toumanyan str., Yerevan
Tel.: (374 10) 520 848
www.editprint.am
info@editprint.am